

Գիրքը նրատարածվել է
Ֆրիդրիխ Էբերտի
հիմնադրամի
միջոցներով:

«ՆԱԻՐԻ»
հրատարակչություն



ԱՇՈՏ ՀԱՅՐՈՒՆԻ

**ՅՈՐՁԱՆՆԵՍ
ԼԵԹԱԻՈՒՄԻ
ԿՈՎՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

Խմբագիր՝

*պատմ. գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

Բ. Յ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ե Ր Լ Ա Ն
2002 թ.

Հեղինակը շնորհակալություն է հայտնում ՖՐԻԴՐԻԽ ԷԲԵՐՏԻ հիմնադրամի՝ Հարավային Կովկասի և Միջին Ասիայի երկրներում իրագործվող ծրագրերի համակարգող Վինֆրիդ Շնայդեր - Դետերսին և հիմնադրամի՝ Հայաստանի ներկայացուցչության անօրեն Նաիրա Գևորգյանին գրքի հրատարակմանն աջակցելու համար:

Der Verfasser spricht dem für die Regionen von Südkaukasus und Mittelasien verantwortlichen Projektkoordinator der Friedrich Ebert-Stiftung Herrn Winfried Schneider-Deters und der Büroleiterin der Stiftungsvertretung in Armenien Frau Naira Geworkjan seinen ausdrücklichen Dank für die freundliche Übernahme der Druckkosten des Buches aus.

Հայրունի Ա.
Հ 300 Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը: / Աշոտ Հայրունի.- եր.: Նաիրի, 2002.- 544 էջ:

Աշխատությունում առաջին անգամ գիտական համակողմանի քննության է ենթարկվում և ամբողջականորեն լուսաբանվում է դր. Յոհաննես Լեփսիուսի ու նրա կողմից ստեղծված՝ «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հայանվեր գործունեությունը, որը սկիզբ առնելով 1895 թ.-ին՝ անընդմեջ շարունակվել է մինչև 1943 թ.-ը: Ուսումնասիրության միջոցով, որ կատարված է աղբյուրագիտական լայն հենքի վրա, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում բազմաթիվ արժեքավոր սկզբնաղբյուրներ: Աշխատությունը նախատեսված է Մերձավոր Արևելքի, հայ-գերմանական փոխհարաբերությունների պատմությանը զբաղվող մասնագետների, մտավորականության, ուսանողության և ընթերցող լայն հասարակայնության համար:

Հ 0503020913 2002
705 (01) 2002

ՊՄԴ 63.3 (27)

ISBN 5-550-01270-7

© Աշոտ Հայրունի, 2002

ՆԿԻՐՈՄ ԵՄ ՏՆՈՂՆԵՐԻՍ՝
ՆՈՐԱՅՐ ԲԱԿՈՔԻ
ԲԱՅՐՈՒՆՈՒ
ԵՎ ԼՈՒՍԻԿ ԱԼԵՔՍԱՆԻ
ՄԿՐՏՉԱՆԻ
ՊԱՅՏԱՌ ԲԻՇԱՏԱԿԻՆ

ՆԵՐՎԾՈՒԹՅՈՒՆ

Դր. Յոհաննես Լեփսիուսի և նրա՝ «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության երկարամյա հայանվեր գործունեությունը հանդիսանում է հայոց նոր պատմության ամենաուշագրավ էջերից մեկը, որի համակողմանի լուսաբանումն ունի գիտական մեծ կարևորություն: Սկիզբ առնելով 1895-96 թթ. համիդյան կոտորածներից արյունաքամ արևմտահայությանը փրկելու թելադրանքով՝ այն անընդմեջ շարունակվեց շուրջ կես հարյուրամյակ՝ իր հարկադիր ավարտին հասնելով միայն 1943 թ-ին: Դժվար է գերազնահատել այն համապարփակ նյութական, քաղաքական և բարոյական աջակցությունը, որ հայ ժողովրդին ցուցաբերվեց Լեփսիուսի և նրա ընկերության կողմից. որբախնամ աշխատանքների ծավալում,¹ արտադրական ձեռնարկությունների և աշխատատեղերի ստեղծում, համալիր անհատույց բուժսպասարկում. թեժ գրապայքար Գերմանիայում արմատավորված հակահայկական ըմբռումների դեմ, հետևողական քարոզչություն հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման և Հայաստանում տիրող իրադրության համակողմանի լուսաբանման համար. Հայկական հարցի, հայ ժողովրդի իրավունքների հրապարակային պաշտպանություն Գերմանիայում և Եվրոպայում, Մեծ եղեռնի շրջանում առևանգված երեխաների և կանանց ազատագրում, մեծարժեք գրական-մշակութային փոխանակություն...

Համագործակցության, պայքարի և ձեռքբերումների մի ամբողջ դարաշրջան բեկող այդ տարեգրության ուսումնասիրությունը. բնականաբար, ունի ոչ միայն գիտական, այլև, ինչպես շուտով հանգամանալից կլուսաբանվի, քաղաքական և մշակութաբանական կարևոր նշանակություն. իրողություն, որն առանձնակի հնչեղություն

1. Լեփսիուսը և իր ընկերությունը հայօգնության համալիր աշխատանքներից զատ մինչև առաջին աշխարհամարտը Պարսկաստանում (Ուրմիա) հիմնել էին նաև մի ասորական որբանոց: Մեր խնդիրը չի եղել կատարել այդ որբանոցում տարված աշխատանքների մանրագնին քննությունը, ուստի դրանք ներկայացրել ենք հիմնականում վիճակագրական տվյալների և անփոփոխ պարզաբանումների միջոցով:

և արդիականություն է ձեռք բերում հատկապես մեր օրերում, երբ հայ ժողովուրդը դարձյալ ձեռք է բերել իր անկախությունը և տեր է դարձել իր անլուր ողբերգություններով և կորուստներով լի սակայն միջազգային հանրության կողմից դեռ միանշանակ գնահատական չստացած և ըստ այդմ նենգափոխումներից ու կեղծումներից չձերբազատված պատմությանը:

Զնայած Լեփսիոս հրապարակախոսի և հասարակական-քաղաքական գործչի հանդեպ հայ և արտերկրի գիտական շրջաններում շարունակ ի հայտ եկած հետաքրքրություններին և այդ առթիվ հրապարակված մի շարք արժեքավոր հոդվածներին ու մենագրություններին, նրա ու նրա ընկերության հայանվեր գործունեությունն առայսօր ըստ էության մնացել է չուսումնասիրված, և սույն աշխատությունը, որ նվիրված է այդ մեծ տարեգրության համակողմանի լուսաբանմանը. նպատակ ունի լրացնել այդ բացը:

Հայ պատմագիտության կողմից մինչ այժմ գերազանցապես ուսումնասիրության առարկա են դարձել հայոց մեծ ողբերգությունների առնչությամբ Լեփսիոսի կողմից հրատարակված փաստաթղթերն ու փաստագրական նյութերը, որոնք հիմնականում ամփոփված են նրա «*Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland*» (Berlin, 1896), «*Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke*» (Potsdam, 1919) և «*Bericht über die Lage des Armenischen Volkes*» (Berlin, 1916)² ժողովածուներում: Այդ առումով առանձնահատուկ գնահատանքի է արժանի Վիեննայի Մխիթարան միաբանության անդամ Գ. Յակովբոս Տաշյանի՝ դեռ 1921 թ-ին հրատարակված «Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագիրներու համեմատ» աշխատությունը, որտեղ հեղինակը, փորձելով Մեծ եղեռնի իրադարձությունները դիտարկել թուրք-գերմանական դիվանագիտական փոխհարաբերությունների հենքի վրա, Լեփսիոսի կողմից հրապարակված փաստաթղթերի վերաբերյալ կատարել է արժեքավոր պարզաբանումներ համապատասխան հղումների հետ միասին: Այդ աշխատության միջոցով հայ ընթերցողը թերևս առաջին անգամ հնա-

2. Այդ աշխատությունը նոր՝ «*Der Todesgang des armenischen Volkes*» («Հայ ժողովրդի մահուղին») վերնագրով հրատարակվեց նաև 1919 թ-ին:

րավորություն ստացավ ի թիվս այլ օտարալեզու աղբյուրների որոշակի իրազեկում ունենալ նաև մեծ եղեռնի վերաբերյալ Լեփսիուսի կողմից հրապարակված դիվանագիտական փաստաթղթերի և փաստագրական նյութերի վերաբերյալ:³

Յոհ. Լեփսիուսի վերոնշյալ հրապարակումների առնչությամբ արժանահիշատակ ուսումնասիրություններ են կատարվել նաև նորագույն շրջանում: Պրոֆ. Ս. Ստեփանյանն իր ուսումնասիրություններում Լեփսիուսի «*Deutschland und Armenien...*» ժողովածուի թղթակցությունների, ինչպես և մի շարք այլ փաստաթղթերի հիման վրա կարողացել է լուսարանել թուրք-գերմանական զինակցության նշանակությունն ու հետևանքները 1915 թ-ի եղերական իրադարձությունների ու արևմտահայության բնաջնջման գործում՝ միաժամանակ տալով տեղեկություններ այդ իրադարձությունների առնչությամբ առանձին գերմանական դիվանագետների և պետական գործիչների ցուցաբերած դիրքորոշման մասին:⁴

Հայկական հարցի և ցեղասպանության վերաբերյալ 1913-19 թվականներն ընդգրկող՝ գերմանական դիվանագիտական փաստաթղթերի ուսումնասիրությունը նոր փուլ մտավ առանձնապես ՀՀ ԳԱԱ ակադ., պրոֆ. Վ. Միքայելյանի կողմից կայսերական Գերմանիայի ԱԳ նախարարության քաղաքական արխիվում պահված՝ փաստաթղթերի⁵ հրապարակումից հետո, որով փաստորեն ի հայտ եկան նաև Լեփսիուսի ժողովածուի առավել ստույգ և ամբողջական արժևորման հնարավորություններ: Մասնավորապես պարզ դարձավ, որ, ինչպես

3. Ցավոք, հեղինակն աչքերի վիրահատության հետևանքով հարկադրված էր այդ ուսումնասիրությունն անավարտ թողնել:

4. Տե՛ս Մեդանյան Ս., *Армения в политике империалистической Германии, Ереван, 1975*. Հմնտ. Ստեփանյան Ս., Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Երեվան, 1998, էջ 19-39: Հմնտ. Մեդանյան Ս., *Геноцид армян и пособничество кайзеровской Германии*. Տե՛ս «1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր», հոդվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 47-64:

5. Տե՛ս *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии*. Сборник под редакцией В. Микаеляна, Ереван, 1995.

նաև հետազոտողն է իր լույս ընծայած ժողովածուի առաջաբանում նշում, Լեփսիուսին ժամանակին ոչ բոլոր դիվանագիտական փաստաթղթերն են մատչելի եղել, և որ բավականին մեծ քանակությամբ նյութեր դեռ սպասում են իրենց ուսումնասիրողին:⁶ Նոր ժողովածուի բացառիկ կարևոր արժանիքներից մեկը նաև այն է, որ Վ. Միքայելյանն այն կազմել է գերազանցապես այն նյութերի հիման վրա, որոնք Լեփսիուսի ժողովածուում տեղ չեն գտել, իսկ առանձին արժեքավոր բացառությունները վերաբերում են այնպիսի փաստաթղթերի, որոնք Լեփսիուսի ժողովածուում ամբողջությամբ լույս չեն ընծայվել: Ուստի ինքնին հասկանալի է, որ Լեփսիուսի կողմից կատարված հրապարակումն ի դեմս նոր ժողովածուի ձեռք է բերել բացառիկ կարևոր համալրում, և որ դրանց համատեղ և համակողմանի հետազոտությունը կարող է գիտական նոր եզրակացությունների հանգեցնել: Դրա առիավատյան դարձան հենց իր Վ. Միքայելյանի՝ «Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում»:⁷ «Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին»⁸ ուսումնասիրությունները և վերոհիշյալ ժողովածուի առաջաբանում ներկայացված քննական վերլուծությունը:⁹ որտեղ հեղինակը, գերազանցապես հենվելով իր կողմից հրապարակված վավերագրերի վրա, միանգամայն նոր և արժեքավոր լուսաբանումներ է կատարում ինչպես ցեղասպանության և հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին գերմանական դիվանագիտական թղթակցություններում տեղ գտած հիշատակությունների, այնպես էլ այդ իրողությունների վերաբերյալ գերմանական պետական շրջանների և առանձին դիվանագետների ցուցաբերած դիրքորոշման մասին՝ զուգահեռաբար կատարելով ուշագրավ կռահումներ նաև Թուրքիայի ներքաղաքական զարգացումների վերաբերյալ:

Չնայած Լեփսիուսի նշված ժողովածուների և դրանց առնչվող

6. Անդ, էջ 6:

7. Տե՛ս «1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր» հոդվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 21-35:

8. Տե՛ս Միքայելյան Վ., Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին, Երևան, 1997:

9. Տե՛ս Армянский вопрос и геноцид армян..., էջ 10-26:

մյուս դիվանագիտական ու փաստավավերագրական նյութերի շուրջ կատարված վերոհիշյալ արժեքավոր ուսումնասիրություններին, մեծ գործչի և նրա ընկերության վիթխարածավալ հրապարակախոսական ու կազմակերպական գործունեությունը, ինչպես նշվեց, դեռևս հիմնականում դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Այդ ուլորտին վերաբերող՝ առկա փոքրաթիվ հրապարակումները լավագույն դեպքում անդրադառնում են միայն առանձին իրողությունների լուսաբանմանը: Խոսքը վերաբերում է մասնավորապես պրոֆ. Գ. Գոլթցի և պրոֆ. Գ. Կորխմազյանի կողմից հրապարակված՝ «Доكتور Иоганнес Лепсуус. Страницы жизни» հոդվածին,¹⁰ որտեղ հակիրճ փորձ է արվել լուսաբանել հիմնականում 1890-ական թվականներին և առաջին աշխարհամարտի տարիներին Գերմանիայում և եվրոպական արտերկրում Լեփսիուսի կողմից հրազորված հայանվեր կազմակերպական ձեռնարկումները: Հոդվածի անվիճելի արժանիքներից մեկը պետք է համարել այն հանգամանքը, որ հեղինակները ստույգ փաստագրական աղբյուրների, հարկ եղած դեպքում նաև բնութագրական դրվագների միջոցով կարողացել են, ինչպես հարկն է, ներկայացնել տվյալ ժամանակահատվածներում Հայկական հարցի առնչությամբ Գերմանիայում տիրող աննպաստ ներքաղաքական իրադրությունը և դրա անմիջական ազդեցությունը Լեփսիուսի և հայ ժողովրդի մյուս բարեկամների գործունեության վրա:

Հրապարակում առկա մյուս, Ս. Ստեփանյանի՝ արդեն հիշատակված մենագրությունում Լեփսիուսի և նրա ընկերության հայանվեր գործունեության վերաբերյալ միայն թռուցիկ տեղեկություններ են հաղորդվում, որոնք ծձգրիտ սկզբնաղբյուրների բացակայության հետևանքով, ցավոք, զերծ չեն մնացել որոշ անճշտություններից: Հեղինակն, օրինակ, Արևելքի և Հայաստանի հանդեպ Լեփսիուսի ունեցած՝ առանձնահատուկ շահագրգռություններով է բացատրել նրա ընկերության ԳԱԱ-ի հիմնադրումը. «...Յո. Լեփսիուսը մշտապես հետաքրքրություն և հոգատարություն էր ցուցաբերում Արևելքի, այդ աշխարհամասի երկրների ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի նկատմամբ. - նշում է նա: - Նրա նման տրամադրությունները

10. Տե՛ս «Страны и народы ближнего и среднего Востока», т. XII, Ереван, (1985), стр. 116-142.

հաստատվում են այն փաստով, որ 1895 թ-ի աշնանը Ֆրիզդորֆում տեղի է ունենում միսիոներների հավաք և ստեղծվում է Գերմանա-արևելյան առաքելությունը»:¹¹ ԳԱԱ-ի ստեղծումը, սակայն, վերոնրջյալ իրողություններով պայմանավորված չէր և չէր էլ կարող լինել, քանի որ, ինչպես շուտով կպարզաբանվի, Լեփսիուսն այդ շրջանում Հայաստանի հետ դեռ որոշակի ծանոթություն և հայկական շրջանների հետ առնչություններ չուներ. իսկ իր ընկերությունը նա հիմնադրել էր բացառապես Արևելքի մահմեդական շրջաններում ավետարանական քարոզչության իրականացման նպատակով:

Ս. Ստեփանյանի աշխատությունում, որտեղ Լեփսիուսի՝ կեսդարյա տարեգրություն ունեցող այդ ընկերության գործունեության մասին այլևս գրեթե տեղեկություններ չեն հաղորդվում, և ուղղակիորեն անցում է կատարվում Գերմանա-հայկական ընկերությանը, առկա են այլ անձնություններ ևս, որոնց զգալի մասն ի հայտ է եկել ոչ գիտական գրականության օգտագործման հետևանքով: Օրինակ, հեղինակը Յոհ. Լեփսիուսի և Էնվեր փաշայի հանդիպումը լուսաբանում է Ֆր. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի տեղեկությունների հիման վրա, ինչը բնականաբար հանգեցրել է պատմական իրողության թերի և աղավաղված ներկայացմանը:¹²

Թվում է, թե հարցի ուսումնասիրությունն անհամեմատ ավելի մեծ ձեռքբերումներ պետք է արժանագրեր Գերմանիայում, քանի որ սկզբնաղբյուրների մեծագույն մասը, գերմանալեզու լինելուց զատ, նաև այնտեղ էր գտնվում, և գերմանացի հետազոտողներն ազատ էին այդօրինակ հետազոտությունների համար խորհրդային Հայաստանում:

11. Տե՛ս Ստեփանյան Ս.. Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Երևան, 1998, էջ 3: Նույնիսկ կարծիքներ են ի հայտ եկել, որ ընկերության հիմնումը կատարվել է հայերի դրոմանք և մասնակցությամբ: Տե՛ս Ալահայտոյան Հ., «Գերման-Արևելյան միսիոներությունը» տեղեկագիրը Ա. Ալեքսանյանի՝ «Դիւցազնական Ուրֆան եւ իր Հայրդղիները» գրքում, Բեյրութ, 1955, էջ 493-494:

12. Տե՛ս Ստեփանյան Ս.. Յոհաննես Լեփսիուսը..., էջ 12-14: Այդ իրողությունն ի հայտ է եկել հեղինակի այլ աշխատություններում ևս: Տե՛ս Степанян С., Армения в политике империализмической Германии, Ереван, 1975, էջ 171-172: Հմմտ. Степанян С., Геноцид армян и пособничество каизеровской Германии. Տե՛ս «1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր», հոդվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 60-61:

տանում տասնամյակներ շարունակ առկա քաղաքական արգելքներից: Այսուհանդերձ, չնայած դրան և չնայած այն բանին, որ գերմանական պատմագիտությունն իրոք այդ ոլորտում ավելի էական հաջողություններ է արձանագրել, Լեփսիուսի և նրա ընկերության հայանվեր գործունեությունն այստեղ ևս հիմնականում մնացել է չլուսարանված: 1986 թ-ին Չալլեի համալսարանում կազմակերպվեց Լեփսիուսին նվիրված միջազգային գիտաժողով, որտեղ ընթերցված զեկուցումները հրատարակվեցին նաև առանձին գրքով:¹³ Դրանց մեծագույն մասը, սակայն, վերաբերում էր այնպիսի խնդիրների, որոնք որևէ ուղղակի առնչություն չունեին Լեփսիուսի և ԳԱԱ-ի հայանվեր գործունեության հետ: Բացառություն էր կազմում միայն պրոֆ. Դ. Գոլթցի «*Helper und Anwalt des armenischen Volkes*» հոդվածը,¹⁴ որն արժեքավոր տեղեկություններ էր հաղորդում Լեփսիուսի պատանեկան տարիների և 1895-96 թթ. ու մեծ եղեռնի շրջանում նրա գործունեության առանձին դրվագների մասին: Նույն հեղինակի գրչին են պատկանում նաև երեք այլ «*Zwischen Deutschland und Armenien*»,¹⁵ «*Armenien gedenkt des „Anwalts der Armenier*»,¹⁶ և «*Erinnerungen an den Vater*»¹⁷ հոդվածները, որոնք միասին թերևս պետք է դասել Լեփսիուսի գործունեության հիշյալ երկու ժամանակափուլերի մինչ-այժմյան ամենաակնառու լուսարանումների շարքում:

Մեծ գործչի և նրա ընկերության վերաբերյալ առաջուր կատարված ամենաարժեքավոր և ընդգրկուն ուսումնասիրությունն, այնուամենայնիվ, պատկանում է Ու. Ֆայզելի գրչին: Խոսքը վերաբերում է վերջինիս 1989 թ-ին Գյոթինգենում հրատարակված «*Das evangelische Deutschland und Armenien*» գրքին. որտեղ հեղինակը գերմանաթուրքական քաղաքական հարաբերությունների համատեքստում փորձում է ներկայացնել Չայաստանի հետ գերմանական ավետարանական շրջանների փոխառնչությունների ընդհանուր պատմությունը: Աշխատությունում, ի թիվս այլ անհատների և ընկերությունների, նո-

13. Stü Akten des internationalen Dr. Johannes-Lepsius-Symposiums an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Halle (Saale), 1987:

14. Անդ. էջ 19-52:

15. Stü „Theologische Literaturzeitung“, Berlin, (1983), S. 865-886:

16. Stü „Standpunkt“, Berlin, (1981), S. 109-111; 162-166; 327-331:

17. Stü „Standpunkt“, Berlin, (1976), S. 18-20:

րովի են ներկայացվում մասնավորապես Լեփսիուսի և նրա ընկերության 19-րդ դարի վերջին և առաջին աշխարհամարտի ընթացքում ունեցած հայանվեր կազմակերպական նախաձեռնությունները. որոնք որպես կանոն ուղեկցվում են դարաշրջանի ընդհանուր քաղաքական զարգացումների ամփոփ լուսաբանմամբ: Հարցերի մեծ ընդգրկումը, սակայն, Ֆայգելին հարկադրել է, որոշ բացառություններով հանդերձ, գերազանցապես հետևել այսպես կոչված «գլխաբառային» շարադրանքի սկզբունքին. այն է՝ իրողությունները ներկայացնել ընդհանուր կողմերով, առանց խորամուխ լինելու դրանց պատճառահետևանքային կապերի. ներքին զարգացումների և երբեմն շատ կարևոր մանրամասների մեջ: Ինչ վերաբերում է այն բաժիններին, որոնք նվիրված են Հայաստանում իրականացված աշխատանքների և Լեփսիուսի հետպատերազմյան շրջանի հայանվեր հրապարակախոսական-կազմակերպական գործունեության լուսաբանմանը, ապա այն կատարված է ոչ միայն ընդհանուր գծերով, այլև մասնակիորեն և բուն իրողության վերաբերյալ ամբողջական պատկերացում տալ չի կարող: Բացի այդ, ինչպես վերը հիշատակված մյուս հետազոտողներն, այնպես էլ Ու. Ֆայգելը բոլորովին չեն անդրադարձել Լեփսիուսի ընկերության հայանվեր գործունեության երկրորդ շրջանին, որն ընդգրկում է 1926-1943 թվականներն ընկած ժամանակահատվածը և իր նշանակությանը նախորդին ամենևին չի զիջում:

Դժվար չէ վերոբերյալից եզրակացնել, որ չնայած կատարված արժեքավոր աշխատանքին, հիշյալ խնդիրը կարոտ է նոր ուսումնասիրությունների: Հայ պատմագիտության կողմից առայսօր հիմնականում քննության առարկա են դարձել Լեփսիուսի կողմից հրապարակված դիվանագիտական փաստաթղթերն ու մյուս փաստագրական նյութերի ժողովածուները: Գերմանիայում այդ առումով ավելի մեծ հաջողություններ են արձանագրվել, քանի որ այնտեղ, չնայած ոչ ամբողջական և լիարժեք, այնուամենայնիվ որոշակի ուսումնասիրության է ենթարկվել 1895-97 և 1914-18 թթ. ընթացքում Լեփսիուսի և ԳԱԱ-ի իրականացրած հայանվեր կազմակերպական և հրապարակախոսական գործունեությունը: Ընկերության տարեգրության՝ այդ շրջափուլերի միջև, ինչպես և 1918-26 թվականներն ընկած ժամանակահատվածները, նաև Հայաստանում կատարված՝ ընդհանուր օգնության աշխատանքները, ցավոք, միայն խիստ մասնակիորեն են

լուսաբանվել: Ամենևին չի ուսումնասիրվել ընկերության շուրջ կեսդարյա գործունեության երկրորդ քառորդ դարը:

Այն հանգամանքը, որ դր. Յոհ. Լեփսիուսի և նրա ընկերության գործունեությունն առայսօր դեռ ամբողջականորեն չի լուսաբանվել, ումանց հնարավորություն է ընձեռել հարցին առնչվող զանազան կարևոր իրողությունների վերաբերյալ կատարել միանգամայն թյուր մեկնաբանություններ՝ ակամա կամ գիտակցված կերպով նենգափոխելով պատմական իրականությունը: Խոսքը վերաբերում է մասնավորապես մեր օրերում զգալի տարածում ստացած այն տեսակետին, որ Լեփսիուսն իր՝ 1919 թ-ին հրապարակված գերմանական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուում կատարել է մեծաքանակ «սրբագրումներ» հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցությունը «կոծկելու» նպատակով, որի հետևանքով ի հայտ են գալիս նաև նրա պատմական դերի վերագնահատման առաջարկներ: Քանի որ խնդիրը հայագիտության համար գիտական և պատմաքաղաքական կարևոր նշանակություն ունի, մենք կփորձենք ստորև փոքր-ինչ հանգամանալից դրան անդրադառնալ: «Յոհաննես Լեփսիուսը ոչ միայն հայերի մեծ բարեկամ էր, այլև գերմանացի մեծ հայրենասեր,- նշում է այդ տեսակետի հեղինակ և ջատագով՝ գերմանացի հրապարակախոս Վ. Գուստը,¹⁸ որն, ի դեպ, կազմել է նաև Լեփսիուսի կողմից հրապարակված նյութերի ամբողջական ժողովածուն:¹⁹ -Փաստաթղթերի հրապարակման հարցում, թվում է, թե նրան հայերի հանդեպ տածած սիրուց զատ դեկավարել է նաև իր հայրենիքը հնարավորինս լավ գույներով ներկայացնելու միջոցով

18. Վ. Գուստը (ծնվ. 1935 թ-ին Դանովերում) Ֆրայբուրգի, Բոննի և Դամբուրգի համալսարաններում ուսանելով ռոմանիստիկա և արտադրական հարաբերություններ՝ 1965 թ-ին ստացել է վաճառականի մասնագիտություն, որից հետո մինչև 1993 թ-ը աշխատել «Der Spiegel» ամսագրում իբրև «Տնտեսություն և արտերկիր» բաժնի խմբագիր և այնուհետև նույն ամսագրի փարիզյան գրասենյակի ղեկավար: 1993 թ-ից զբաղվում է ազատ հրապարակախոսական գործունեությամբ: Տե՛ս Internet-ում ներկայացված նրա կենսագրական տվյալները, <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>:
19. Տե՛ս ինտերնետային ցանցում Gust W.: Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>:

Գերմանիայից աղետը ետ մղելու հույսը. մի հանդուզն արարք, որը նրան հաճախ դրդել է համարձակորեն կամրջել Գերմանիայի հանդեպ և հայերի հանդեպ տածած իր սերը: ... Որպես կանոն նա դուրս է հանել այն հատվածները, որոնք մատնանշում էին գերմանական մեղսակցությունը, նաև, եթե խնդիրը վերաբերվում էր միայն չճշգրտված լուրերի և ենթադրությունների»: ²⁰

Նա մոտավորապես նույն միտքն է արտահայտում նաև Թաներ Աքչամի աշխատակցությամբ հեղինակված իր մեկ այլ՝ «Magisches Viereck» անվանումը կրող հրապարակման մեջ՝ տեղեկացնելով, որ կրճատումները կատարվել են որոշակի «մեթոդով». «Վանվել են ցեղասպանության խնդիրների առնչությամբ գերմանական կայսրության քաղաքականությանը վերաբերող կարևոր մատնանշումները, գերմանական մեղսակցությունը. ինչպես, օրինակի համար, գերմանացի սպանների մասնակցությունը հայերի հալածանքներին...»: ²¹

Չթերագնահատելով փաստաթղթերի ամբողջական ժողովածուի վերակազմման ուղղությամբ Վ. Գուստի կատարած մեծարժեք աշխատանքը՝ մենք, այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ Լեփսիուսի միջամտություններին վերաբերող նրա վերոնշյալ պարզաբանումները միանգամայն առարկելի են: Եթե փորձենք Լեփսիուսի կատարած կրճատումներն ու փոփոխությունները, որոնք խիստ բազմաբնույթ են, մեթոդաբանական դասակարգման ենթարկել, ապա պարզ կդառնա, որ դրանցում խիստ մեծ թիվ են կազմում հայերի հակապետական, հեղափոխական ձգտումների, դավաճանությունների և դասալքությունների վերաբերյալ թուրքական պաշտոնական քարոզչության ազդեցությամբ գերմանական արձանագրություններում տեղ գտած հիշատակությունները, որոնք հաստատման կամ հերքման ենթակա չլինելով՝ Հայկական հարցին և հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող՝ հետզինադադարյան քննարկումների

20. Տե՛ս ինտերնետային ցանցում՝ Gust W.: Vorwort der revidierten Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke: Անդ:

21. Տե՛ս ինտերն. ցանցում Gust W.: Magisches Viereck. Johannes Lepsius, Deutschland und Armenien, [http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/GuidesView/MagischesViereckDe?OpenDocument.:](http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/GuidesView/MagischesViereckDe?OpenDocument.)

ընթացքում կարող էին ապակողմնորոշիչ և վնասակար նշանակություն ունենալ.²² Բացի այդ Լեփսիուսը, հենվելով իր հետազոտությունների արդյունքների վրա, կատարել է նաև փաստաթղթերում տեղ գտած առանձին տեղագրական. ժամանակային և թվական տվյալների ճշգրտումներ. որոնք այլ նպատակ չեն ունեցել. քան ճշմարտությանը հավատարիմ մնալ և, մյուս կողմից, եղելությունների ու դրանց հետևանքների՝ փաստաթղթերից արտածվող ընդհանուր պատկերը դարձնել հնարավորինս կուռ և անխոցելի.²³ Կատարված բազմաթիվ այլ փոփոխություններ ունեն սոսկ ռճական նշանակություն և այլ՝ ավելի առարկայական միտում չեն հետապնդել.²⁴ Եվ վերջապես. կրճատումների մյուս խմբաքանակն իրոք վերաբերում է եղերական իրադարձություններին գերմանական կողմի մասնակցության խնդրին. որը, սակայն, գերազանցապես բովանդակելով բնակչության շրջանում արտահայտված ընդհանուր տեսակետներ և ենթադրություններ. Գերմանիայի մեղսակցության հաստատման համար հիմք դառնալ չէր կարող.²⁵

Անշուշտ. միամտություն կլիներ կարծել. թե պաշտոնական Գերմանիան հայոց ցեղասպանության հարցում պատասխանատվության իր բաժինը կրելու վտանգին իրազեկ չէր (առավել ևս, երբ, ինչպես բազմիցս հաղորդում էին հյուպատոսական տեղեկագրերը, ոչ միայն Անտանտի և չեզոք երկրների, այլև թուրքական ոչ պաշտոնական քարոզչությունը ջանում էր ցեղասպանության ողջ պատասխատվությունը բարդել Գերմանիայի վրա) և դրա դեմ ժամանակ առաջ անհրաժեշտ քայլեր չէր ձեռնարկել: Կ. Պոլսի գերմանական դեսպանությունն այդ նպատակով դեռ աքսորի շրջանում հանդես էր եկել Բ. Դռանն ուղղված՝ մի շարք ամուլ բողոքարկումներով և նախազգուշացումներով. որոնք, «հավաստելով» Գերմանիայի անհամաձայնությունը հայ ժողովրդի զանգվածային տեղահանման առըն-

22. Gust W.: Revidierte Ausgabe...: Այդ ժողովածուում տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 9, 15, 18, 25, 26, 99, 116, 126, 129, 132, 143, 149, 185, 193, 226, 246, 300, 306, 317, 333, 377, 425, 426, 432, 435 թղթակցությունները:

23. Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 7, 9, 10, 12, 47, 51, 165, 193, 218, 226, 279, 302, 345, 356 թղթակցությունները: Անդ:

24. Տես, ի թիվս այլոց, թիվ 4, 15, 19, 34, 80, 114, 132, 137, 174, 176, 187, 192, 226, 242, 307, 370, 377, 405, 413, 430 փաստաթղթերը: Անդ:

25. Տե՛ս, ի թիվս այլոց, թիվ 11, 13, 18, 129, 297, 426 փաստաթղթերը: Անդ:

չությամբ. «վկայում էին» նաև այն կանխելու՝ Թուրքիայի զինակցի «անկարողությունը»: 26 Մյուս կողմից, ինչպես հենց ինքը Վ. Գուստն է իր կազմած ժողովածուի առաջաբանում տեղեկացնում, փաստաթղթերը, դեռ նախքան Լեփսիուսին տրամադրվելը, Գերմանիայի ԱԳՆ-ի և Կ. Պոլսի գերմանական դեսպանության կողմից բազմաթիվ անգամներ ենթարկվել էին «զտումների»: 27 Հետևապես զարմանալի չէ, որ, ինչպես ցույց է տալիս փաստաթղթերի ամբողջական ժողովածուի ուսումնասիրությունը, Լեփսիուսի տրամադրության տակ մնում էր միայն երեք քիչ թե շատ առարկայական հիշատակություն ընդհանուր թվով մեկ գերմանացի զինվորականի վերաբերյալ, որը մասնակցել էր հայկական կոտորածներին: 28 Դրանք, անկասկած, Գերմանիայի մեղսակցության հաստատման համար բավարար հիմք չէին հանդիսանում, սակայն դառնալով շահարկումների առարկա կարող էին ստվերել երիտթուրքերի հանցավորության միանշանակությունը և վնասել հայ ժողովրդի հատուցմանը և Հայկական հարցին վերաբերող՝ սպասվելիք բանակցազործընթացը: Մեր համոզմամբ Լեփսիուսն իր ժողովածուն կազմելիս առաջնորդվել է այդ՝ միանգամայն քաղաքական նկատառումներով. ինչը վկայում է նաև նրա ժողովածուի և փաստաթղթերի բնօրինակների համեմատական քննությունը. և նրա վարքագծի պայմանավորումը Գերմանիայի հանդեպ նրա տածած «սիրով» առնվազն իրատեսական չէ: Ինչ վերաբերում է հիշյալ ենթախմբին պատկանող մյուս կրճատումներին. որոնք Վ. Գուստի կողմից մեկնաբանվում են «Գերմանիայի մեղսակցության» վանման միտումով. ապա դրանցից և ոչ մեկը մեղսակցության որևէ փաստացի հիմնավորում չէր պարունակում՝ լավագույն դեպքում հնարավորություն ընձեռելով խնդիրը դիտարկել սոսկ բարոյական շահագրգռությունների ոլորտում:

26. Տե՛ս, ի թիվս այլոց, 106, 116, 144, 201, 215, 216, 273, 284, 417 փաստաթղթերը: Անդ:

27. Անդ, Vorwort....

28. Խոսքը վերաբերում է մայրո կոմս Վոլֆ ֆոն Վոլֆսկիլին, որը 1915 թ-ի գարնանն Այնթապում, Մարաշում և Ջեթունում «տեսչական ստուգումներ» կատարելու ժամանակ ուղեկցել էր Ֆահրի փաշային, սեպտեմբերին նրա հետ միասին մասնակցել Մուսա լեռցիների դեմ իրագործված ռազմական գործողություններին, իսկ այնուհետև օգնել նրան ճնշելու Ուռիայի ապստամբությունը: Տե՛ս թիվ 25, 188 և 193 թղթակցությունները: Անդ:

Ի դեպ, ակնհայտորեն դժգոհ լինելով Լեփսիուսի կողմից հրատարակված և իր կողմից վերանայված փաստաթղթերում հայկական կոտորածներին գերմանական կողմի մասնակցությանը վերաբերող փաստերի սակավությունից՝ Վ. Գուստը նաև այն ենթադրությունն է արտահայտում, որ Լեփսիուսը որոշ փաստաթղթեր, որոնք «նրա կողմից հետապնդված քաղաքական գծին» չէին համապատասխանում, գիտակցաբար ամենևին չի ներառել իր ժողովածուում:²⁹

Այն հանգամանքը, որ ժամանակին ԱԳՆ-ի կողմից Լեփսիուսին ոչ բոլոր դիվանագիտական փաստաթղթերն են մատչելի դարձվել, Վ. Միքայելյանի կողմից կազմված ժողովածուի հրատարակումից հետո, անշուշտ, այլևս կասկած հարուցել չի կարող: Ավելին, այնտեղ ամփոփված առանձին ուշագրավ թղթակցություններ վկայում են, որ Լեփսիուսն իրեն չհանձնված մի շարք փաստաթղթերի մասին (Յալեպի նախկին հյուպատոս Վալտեր Ռուլերի միջոցով) իրազեկվել է միայն իր ժողովածուի հրատարակումից հետո, և որ ԱԳՆ-ն նույնիսկ նրա բավական հնարամիտ հիմնավորումներից հետո հրաժարվել է այդ փաստաթղթերը կամ դրանց պատճենները նրան ուղարկել:³⁰

29. Sten Gust W.: Vorwort...: Ինքնին հասկանալի է, որ «քաղաքական գիծ» ասելով՝ Վ. Գուստը նկատի ունի Գերմանիայի մեղսակցության առնչությամբ իր կողմից Լեփսիուսին վերագրվող միտումը:

30. Sten այդ մասին Վ. Միքայելյանի սպառիչ պարզաբանումն իր ժողովածուի առաջաբանում. տե՛ս Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)...., էջ 5-6: Լեփսիուսի և գաղտնի խորհրդական Օստո Գյոպերտի միջև կատարված թղթակցությունների ամբողջական տեքստը տե՛ս անդ, էջ 603-604 և 607-608: Այդ ավելի հասկանալի դարձնելու համար հարկ է նշել, որ ժողովածուի կազմման հարցում ԱԳՆ-ի և Լեփսիուսի դիրքորոշումները միանգամայն տարբեր էին: Ինչպես վկայում է Գյոպերտի՝ Լեփսիուսին ուղղված վերոհիշյալ նամակը, ԱԳՆ-ին հետաքրքրում էր ոչ միայն հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության՝ Անտանտի և չեզոք երկրների մամուլում մեծ տարածում ստացած պնդումների հերքումը, այլև, որչափ որ թուրքական կառավարության հանցավորության ներկայացումը դրան չէր նպաստում, նաև այդ հանցավորության պարտակումը: Տե՛ս անդ, էջ 607: Մինչդեռ Լեփսիուսը ձգտում էր լուսաբանել հայ ժողովրդի դեմ իրագործված ոճրագործությունները, մերկացնել դրանց բուն կազմակերպիչներին և նպաստել հայության արդարացի հատուցմանը: Ընդ որում, ԱԳՆ-ն բնականաբար խիստ շահագրգռված էր, որ այդ առաջադրանքը կատարեր ոչ այլ ոք, քան Լեփսիուսը, որն իբրև անձնուրաց հայանվեր գործիչ մեծ վստահություն էր վայելում ոչ միայն հայկական շրջաններում, այլև Գերմանիայի հակառակորդ երկրներում: Տե՛ս այդ մասին նաև ԱԳՆ-ի պատասխա-

Ուստու աշխատակցի վկայությունը: Անդ, էջ 593: Իսկ Լեփսիոսն իր նպատակին հասնելու համար պարտավոր էր ըստ հարկի պահպանել ԱԳՆ-ի հետ փոխընթացումը, ինչն, իհարկե, խիստ ղեվար էր, սակայն ոչ անհնար, քանի որ նա իր տրամադրության տակ գտնվող փաստաթղթերի միջոցով պետք է համոզվեր, որ Գերմանիայի՝ իբրև ցեղասպանության «կազմակերպչի» կամ «մեղսակցի»՝ Անտանտի երկներուն ի հայտ եկած համարումը փաստաիրավական լուրջ հիմքեր չուներ և, ինչպես արդեն նշվեց, խնդրո առարկա՝ կրճատված կամ փոփոխման ենթարկված հատվածները (որոնք կրճատումների և փոփոխությունների ընդհանուր զանգվածի մեջ միայն մի փոքր թիվ են կազմում) կարող էին Գերմանիայի մեղսակցության հարցը լավագույն դեպքում սոսկ բարոյական հարթության վրա դիտարկելու հնարավորություն ընձեռել, հանգամանք, որի քաղաքական շահարկումները հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին կարող էին անկամխատեսելի հետևանքներ ունենալ, և որն, անկասկած, ժողովածուն կազմելիս ըստ հարկի գիտակցում և արժևորում էր նաև Լեփսիոսը: Ուստի հասկանալի է, որ նա հիշյալ հատվածները ժողովածուում չի ներառել: Թերևս ավելորդ չէր լինի նաև նշել, որ կարծես հեռագրամով ապագայում իր ժողովածուի վերաբերյալ առանձին կասկածների առաջացման հնարավորությունը՝ Լեփսիոսն ինքը հարկ է համարել կատարել հետևյալ պարզաբանումը (նա այդ ժամանակ բնականաբար պատկերացում իսկ չուներ ԱԳՆ-ի կողմից իրեն չհանձնված նյութերի մասին), որով վերոնշյալը լրացուցիչ ուշադրավ հիմնավորում է ստանում. «Ես ստանձնում եմ փաստաթղթերի ընտրության և Յայկական հարցի առնչությամբ գերմանական կառավարության դիրքորոշման ճշմարիտ ներկայացման հետ կապված՝ ողջ պատասխանատվությունը: Բացառելու համար ցանկացած կասկած, թե իբր ինչ-ինչ տեսանկյուններից գերմանական կառավարությանը, դեսպաններին և հյուպատոսներին կամ զանազան գերմանացի սպաների, պաշտոնյաների ու անհատների ծանրաբեռնող փաստաթղթերը կարող են իմ կողմից վանված լինել, ես դիվանագիտական փաստաթղթերի այնպիսի լիարժեք ընտրություն եմ կատարել (որոնք նաև բազմաթիվ, հարցի առնչությամբ միանգամայն աննշանակ բյուրոկրատական նյութեր են ամփոփում), որ թղթակցությունների ներքին շարունակականությունը երաշխավորում է դրանց առարկայական ամբողջականությունը»: Տե՛ս Lepsius J., Mitteilungen, „Der Orient“, 1919, էջ 40: Իսկ ինչ վերաբերում էր Լեփսիոսի բուն նպատակին, այն է՝ ոճրագործությունների փաստացի լուսաբանմանը և դրանց պատասխանատուների մերկացմանը, ապա նա այդ պատշաճ կերպով կարողացավ իրագործել, չնայած թուրքական կողմին ծանրաբեռնող փաստաթղթերի առնչությամբ ԱԳՆ-ի որդեգրած՝ վերոհիշյալ դիրքորոշմանն ու դրանով պայմանավորված բոլոր խոչընդոտներին: Այն, որ Լեփսիոսն այդ հարցում ևս բավականաչափ ազատություն չէր վայելում, կարող էր վկայել, օրինակ, Գյուպերտին ուղղված՝ նրա հետևյալ բազմանշանակ պարզաբանումը. «Ես միանգամայն անհնար եմ համարում ...փաստաթղթերից դուրս հանել կոտորածների կազմակերպիչների վերաբերող այն ամենը, ինչը ոչ վաղուց, և ավելին, հարյուրավոր վկաների միջոցով հայտնի է դարձել...»: Տե՛ս Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)...., էջ 604: Լեփսիոսի ժողովածուի առնչությամբ ի հայտ եկող տեսակետներն ու գնահատումներն անվերապահորեն կսպառքեն, եթե անտեսեն այդ բարդ իրադրությունը, որը նա, ինչպես հարկն է, հաղթահարեց՝ կարողանալով հայոց եղբերական ողբերգություննե-

Կարելի էր ենթադրել, որ Գուստի հիշյալ տեսակետը բխել է պարզապես այդ իրողության թերարժևորումից, ինչը, սակայն, քննություն բռնել չի կարող, քանի որ նա բավականաչափ իրազեկ էր ինչպես ԱԳՆ-ի կողմից Լեփսիուսին բոլոր փաստաթղթերը չհանձնելու իրողությանը, այնպես էլ ժողովածուի կազմման խնդրում ԱԳՆ-ի և Լեփսիուսի դիրքորոշումների զանազանությանը և դրա հետևանքով Լեփսիուսի համար ստեղծված ծանր իրավիճակին, որ բավական հրստակ ձևակերպվել է նաև իր Լեփսիուսի կողմից. «Եթե ես ...ինձ տրված թույլտվությունը անխնա չօգտագործեի,- նշում էր նա Գյոպերտի վերաբերյալ բարեկամներին ուղղված մի նկատառման մեջ,- ապա կարևորագույն փաստաթղթերի կեսն անգամ լույս աշխարհ չէր գա: - Այդ գաղտնի խորհրդականը, որ հետ ես համուն պատշաճության լավ փոխհարաբերություն էի պահպանում, միշտ փորձում էր (ժողովածուից - Ա. Յ.) ամենակարևորը դուրս բերել, քանի որ նա ուզում էր թուրքերի մոտ լավ համարում ունենալ, գլխավոր ոճրագործներին խնայել և նաև թուրքական զեռուներին դեսպանների կեղծամների միջից սանրելով դուրս թափել»:³¹

Պետք է նշել, որ Վ. Գուստին, ցավոք, իրատեսական գնահատումներ կատարելու համար խոչընդոտել է սեփական վարկածը ցանկացած գնով, մինչև իսկ պատմական իրողությունների թյուր ներկայացման միջոցով հնարավորինս հիմնավորելի դարձնելու միտումը: Օրինակ, ինչպես ստորև շուտով կ'ուսաբանենք, Լեփսիուսը Յոլանդիայում գործում էր նաև ԱԳՆ-ի համար կանոնավոր կերպով Գերմանիա ուղարկելով պատերազմին և խաղաղության հաստատման

րը, դրանց ծրագրայնությունը, իրագործման եղանակներն ու հետևանքները միանշանակորեն փաստող՝ այդ խիստ երախտավոր գործը գլուխ բերել: Ավելորդ չէր լինի մեկ անգամ ևս նշել, որ չնայած ժողովածուի պատրաստումը (որը Լեփսիուսը հույս ուներ իրապարակել նաև անգլերեն և ֆրանսերեն լեզուներով) չխափանելու համար Լեփսիուսը պարտավոր էր գործել ԱԳՆ-ի հետ փոխըմբռնման պայմաններում, սակայն, բնականաբար, չհայտնվելով կատարածուի դերում՝ նա ԱԳՆ-ի լիարժեք վստահությունը երբևէ չի վայելել, և պատահական չէ, որ նույնիսկ իր անհատական իրազեկման պատճառաբանությամբ դեռ չուսումնասիրված՝ հիշյալ փաստաթղթերն իրեն հանձնելու՝ Գյոպերտին ուղղված նրա դիմումն ուղղակիորեն մերժվեց: Ամդ: Յմտ. ամդ, էջ 607:

31. Sten Gust W., „Magisches Viereck“ ...:

խնդիրներին վերաբերող՝ հուլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները: Այդ իրողությունը, որ նրան հնարավորություն էր ընձեռում իր բազմանդամ ընտանիքի ապրուստը հայթայթելուց զատ շարունակել նաև հայօգնության աշխատանքները Գերմանիայում, արդեն բազմիցս հստակ պարզաբանում է ստացել թե Լեփսիուսի, թե նրա աշխատակիցների և թե հետագայում նրա՝ հուլանդական տարիների գործունեությամբ զբաղվող մի շարք հետազոտողների կողմից: Վ. Գուստը, սակայն, իր «Magisches Viereck» հոդվածում լռությամբ շրջանցելով այդ առթիվ առկա տեղեկությունները՝ փորձում է Լեփսիուսի հիշյալ գործունեությունը մեկնաբանել մեծ մարդասերի կերպարին հակասող և նրան իբրև մեծապետական կուսակցական գործիչ և «ազգայնական» ներկայացնող շարժառիթներով: Ամենաուշագրավը, սակայն, այն է, որ նա ընթերցողի մոտ այդ առթիվ անհրաժեշտ նախատրամադրվածություն ստեղծելու և, ոչ վերջին հաշվով, նաև սեփական տեսակետը հիմնավորելու համար իր շարադրանքը սկսում է Լեփսիուսի և նրա ընկերության հոգաբարձության միջև 1917 թ-ին գոյություն ունեցած «տեսակետների անհամապատասխանության» խորհրդավոր ծանուցմամբ և Լեփսիուսի գլխավոր ընդդիմադիր՝ ԳԱԱ-ի տնօրեն Ռյոդենբեքի կողմից կատարված մի հայտարարությամբ, որտեղ վերջինս առաջին նախագահին անվանել էր «դավաճան»:³² Ընդ որում, Վ. Գուստն ամենևին հարկ չի համարում պարզաբանել, թե որո՞նք էին այդ անհամաձայնության դրդապատճառները, և ինչու՞ էր Ռյոդենբեքը նման հայտարարություն կատարել: Չնայած այդ ամենը մեր աշխատության մեջ ըստ ամենայնի կպարզաբանվի, սակայն այստեղ ավելորդ չենք համարում նշել, որ Լեփսիուսի և իր ընկերության հոգաբարձության անհամաձայնությունը պայմանավորված էր առաջին աշխարհամարտի տարիներին հոգաբարձության և մասնավորապես տնօրեն Ռյոդենբեքի՝ պետական քարոզչության պահանջներին համակերպվելու և հայ ժողովրդի եղերական դրության վերաբերյալ պատերազմի տարիներին կատարյալ լռություն պահպանելու դիրքորոշմամբ: Ռյոդենբեքը, դրանով չսահմանափակվելով, փորձում էր կասեցնել նույնիսկ Լեփսիուսի անձնական նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ

32 Անդ:

յամբ իրականացվող հայոցնության աշխատանքները և չէր խուսափում Գերմանիայի պետական քարոզչությանը հակասող Լեփսիուսի հայանվեր գործունեությունը որակել որպես «դավաճանություն» հայրենիքի շահերին: Եթե Գուստն այդ փակագծերը բացեր, ապա նրա փաստարկները պարզապես կուղղվեին իր դեմ: Ուստի հասկանալի է, որ նա ամենակին հարկ չի համարել անդրադառնալ հիշյալ «անհամաձայնության» և Ոյոդենբերգի հայտարարության բուն շարժառիթներին՝ փոխարենն անցնելով իր հաջորդ «փաստարկին», որն իրենից այլ բան չէր ներկայացնում, քան մի ժամանակակցի՝ Ա. Բարոնիկյանի կողմից Լեփսիուսի հասցեին կատարված հետևյալ հայտարարությունը. «Պատերազմի ժամանակ Յուլանդիայում գտնվելու ընթացքում դր. Լեփսիուսն անցել է գերմանական կառավարության ծառայության ներքո և բառի տառացի իմաստով վարել է լրտեսական ծառայություններ չեզոք Յուլանդիայի հյուրընկալման իրավունքը լայնորեն չարաշահելով գերմանական ծովային և ռազմական ղեկավարությանն ամեն օր թշնամական բանակների և նավատորմերի մասին տեղեկացնելու և այդ տեղեկությունները գերմանական ղեսպանի միջոցով Բեռլին ուղարկելու համար»³³

Ընթերցողին փոքրիշատե իրազեկում տալու համար նշենք, որ խոսքը վերաբերում է ժամանակի ամենահայտնի սկանդալիստներից մեկին, որը 1920 թ-ին Լյոսնից գրունդում հիմնել էր մի այսպես կոչված Չայաստանի օգնության կոմիտե և իր «Das neue Armenien» պարբերականի միջոցով զանազան բանասարկությունների և մտացածին մեղադրանքների միջոցով ձգտում էր վարկաբեկել ու կաթվածահար անել ԴՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեի, Լեփսիուսի և նրա ընկերության, ինչպես և Գերմանիայում գործող մյուս հայոցնության ընկերությունների գործունեությունը՝ զայրույթի մեծ ալիք առաջացնելով նաև սփյուռքի հայկական շրջաններում, որոնք անվերապահորեն հանդես եկան նրա գործունեության հրապարակային քննադատմամբ³⁴ Ահա

33. Անդ:

34. Զնայած վերջիններս շարունակ հարկադրված էին հանդես գալ իրենց հասցեագրվող մեղադրանքների հրապարակային հերքմամբ, որոնք Գերմանական ավետարանական միսիաների հանձնաժողովի կողմից ձեռնարկվող հետաքրքրությունների արդյունքում նույնպես մշտապես անհիմն էին ճանաչվում, այնուհանդերձ Բարոնիկյանը չէր դադարեցնում իր՝ մշտապես անձնական վիրավո-

րանքների մեծ պաշարով ուղեկցվող զրպարտչական քարոզչությունը, որ, քննականաբար, զգալի բարոյալքիչ դեր էր խաղում հայ ժողովրդի և Հայաստանի օգնության գործում ներգրավված հասարակական շրջաններում վրդովմունքով ու զայրույթով համակելով նաև հայկական շրջաններին: Տե՛ս Zur Kenntnismahme, „Der Orient“, 1925, էջ 125-126: Հմմտ. Aufklärung, անդ, էջ 108: Հմմտ. Fleischmann P., Erklärung, „Orient im Bild“, 1928, էջ 67: Հմմտ. Erklärung, „Der Orient“, 1928, էջ 192: Հմմտ. Erklärung, „Orient im Bild“, 1929, էջ 8: Հմմտ. Mitteilungen, անդ, էջ 16: Հարկ է հիշատակել, որ դեռ 1925 թ-ի վերջին գերմանական Ավետարանական եկեղեցական հանձնաժողովի կողմից մի գրություն ուղարկվեց բոլոր տեղական եկեղեցական իշխանություններին, որտեղ նրանց կոչ էր արվում հասարակայնությանը նախազգուշացնել Բարոնիկյանի կողմից կատարվող հանգամանկություններից: Տե՛ս Aufklärung, „Der Orient“, 1925, էջ 108: Վերջինիս գործունեությունն անվերապահորեն խիստ քննադատության էր ենթարկվում նաև սպիտակի հայկական մամուլի կողմից: Տե՛ս Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1932, „Orient im Bild“, 1933, էջ 14: Բացի այդ, 1926 թ-ի հունվարի 13-ին, ելնելով այն հանգամանքից, որ Բարոնիկյանի գործունեության հետևանքով «հայ ժողովրդի վարկը Գերմանիայում վնասվում էր», Գերմանա-հայկական ընկերությունը նրան վտարեց իր շաղբերից, իսկ Բեռլինի հայ համայնքը հանդես եկավ նրա գործունեությունը դատապարտող՝ համապատասխան հայտարարությամբ: Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1926, էջ 32: Հմմտ. Aufklärung, „Der Orient“, 1925, էջ 108: Ի վերջո, քանի որ այդ ամենն ամեննին չսթափեցրեց Բարոնիկյանին, որը համառոտե՛ն շարունակում էր իր զրպարտչական քարոզչությունը, 1929 թ-ի ապրիլի 4-5-ը Այգենախում կայացած՝ Գերմանական ավետարանական միսիաների հանձնաժողովը նրան պարտավորեցրեց հայօգնության ընկերությունների հասցեին իր անհիմն մեղադրանքները և զրպարտությունները նույն ծավալով, ինչ ծավալով որ դրանք կատարվել էին, ետ վերցնել և այդ ամենի համար հրապարակային ներողություն խնդրելով՝ հրաժարվել իր՝ «Das neue Armenien» պարբերականի խմբագրի պարտականություններից՝ դրանք համարելով միակ նախապայամանը, որի դեպքում միայն նա կարող էր ազատվել մյուս ընկերությունների կողմից իր ելույթների համար պատասխանատվության ենթարկվելուց: Տե՛ս Mitteilungen, „Orient im Bild“, 1929, էջ 40: Իսկ ևս որոշ ժամանակ անց, երբ նաև պարզ էր դարձել, որ այդ պարտավորեցումը նույնպես, ինչպես հարկն է՝ իր նպատակին չէր հասնում, Դեզդեմուն իշխանությունների կողմից որոշում ընդունվեց նրան արտաքսելու մասին, որից հետո միայն նա տեղի տվեց՝ հրաժարվելով հիշյալ ընկերության պարբերականի խմբագրի և տնօրենի պարտականություններից: Տե՛ս Erklärung, „Orient im Bild“, 1932, էջ 16: Ինչ վերաբերում է Լեվիհուսին և նրա ընկերությանը, ապա հարկ է նշել, որ, ինչպես վկայում են վերոհիշյալ աղբյուրները, նրանք Բարոնիկյանի վիրավորանքների և զրպարտությունների հանդեպ մշտապես ձգտում էին հնարավորինս զուսպ դիրքորոշում ցուցաբերել՝ բավարարվելով միայն այդ հերյուրանքները հերքող հակիրճ ելույթներով: Իսկ 1925 թ-ին, երբ Գերմանական ավետարանական միսիաների հանձնաժողովը կատարել էր եկեղեցական իշխանություններին

այդ անձնավորությանն է, իբրև խիստ արժանահավատ աղբյուրի, վկայակոչում Վ. Գուստն առանց որևիցե տեղեկություն հաղորդելու նրա և նրա գործունեության մասին, ինչն. անշուշտ, միանշանակորեն հասկանալի է. չէ՞ որ որևէ լրացուցիչ տեղեկության դեպքում նրա հրդուհը կդադարեր արժանահավատ լինել: Ընդհակառակը, Վ. Գուստը փորձել է Բարոնիկյանի շուրջ ստեղծել նույնիսկ որոշակի խորհրդավորություն նշելով, որ «Լեփսիուսն իր կյանքի վերջին շրջանում նրա հետ թշնամացած էր». տեղեկություն, որն, ինչպես ապացուցում են վերոհիշյալ ծանոթագրությունում բերված փաստագրական տեղեկությունները, միանշանակորեն սխալ և հերքելի է:

Սեկ այլ առիթով նա, օրինակ, նշում է. որ «որքան ավելի էր ռազմական և քաղաքական իրադրությունը կայսերական պետության համար աննպաստ դառնում, այնքան ավելի էր Լեփսիուսի համար առաջին պլան մղվում ընդհանրապես պատերազմի բռնկման և մասնավորապես հայերի ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցության խնդիրը».³⁵ Ասվածից ինքնին բխում է, որ Գերմանիայի համար նպաստավոր ռազմաքաղաքական իրադրությունում հայոց ցեղասպանության հար-

ուղղված՝ վերոհիշյալ նախագուշացումը, և Բարոնիկյանին սպառնում էր քրեական պատասխանատվության վտանգը, Լեփսիուսը նրա հիվանդագին նախատրամադրվածության հոգեբանական հիմնավորումը կատարելու և այդ կերպ վերդրված հասարակական կրքերը հանդարտեցնելու նպատակով մանրազնի հետազոտության ենթարկեց Բարոնիկյանի կյանքն ու գործունեությունը և այնուհետև հեղինակեց ու հրատարակեց մի ուսումնասիրություն, որը կոչվում էր «Արմենակ Ս. Բարոնիկյանի կյանքը, գործերն ու տարօրինակ տեսակետները»: Տե՛ս Zur Kennntnisnahme, „Der Orient“, 1925, էջ 126: Հատկանշական է, որ Բարոնիկյանի հեռացումից հետո Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունն իր՝ տարիների զսպվածությունից հրաժարվելով՝ դատական գործ հարուցեց նրա գործընկերոջ՝ քահ. Ռիտտեի դեմ, որն իբրև ընկերության նախագահը իր ստորագրությունն էր դրել Լեփսիուսի ընկերությանը դրամական յուրացումների մեջ մեղադրող՝ Բարոնիկյանի զրպարտչական հրապարակումների ներքո: Տե՛ս „Orient im Bild“, 1933, էջ 40: Ռիտտեն 1933 թ. հունիսի 14-ին դատարանում հրապարակայնորեն ընդունեց այդ մեղադրանքների անարդարացիությունը և կարճ ժամանակ անց մի շարք այլ՝ նմանապես զղջմամբ հանդես եկած աշխատակիցների հետ միասին հեռացավ իր ընկերությունից, որն այնուհետև, այլևս չկարողանալով իր աշխատանքը վերականգնել, հարկադրված էր լուծարվել: Տե՛ս „Orient im Bild“, 1933, էջ 44: Դմմտ. Erklärung, անդ, էջ 64:

35. Տե՛ս Gust W., Magisches Viereck....

ցում Գերմանիայի մեղսակցության խնդիրը Լեփսիուսին առանձնապես չէր հետաքրքրում: Հանգամանք, որի հիմնավորման համար Գուստը որևէ փաստարկ չի ներկայացնում և չէր էլ կարող ներկայացնել, քանի որ դա իրականությանն ամենևին չի համապատասխանում:

Լեփսիուս մարդասերի ու հայամվեր գործչի հանդեպ անվստահության մթնոլորտ ստեղծելու նպատակով իրողությունների նենգափոխման և աղճատման այդ արտառոց մեթոդը, ցավոք, Վ. Գուստին չի դավաճանում նաև իր շարադրանքի հաջորդ հատվածներում՝ հասնելով մինչև իսկ անսքող անհեթեթության: «Օսմանյան կայսրությունում իր հիացումը վայելող հայերի հետ շփումների ընթացքում նրա ձեռք բերած ցավագին փորձառությունները,- նշում է Գուստը,- նրա մեջ գերմանական կայսրության փոքրամասնությունների ճակատագրի հանդեպ ըմբռնում չձևավորեցին: Երբ ժողովրդական ուժեղ ալիքը Գերմանիայում տեսանելի դարձավ, Լեփսիուսն իրեն ապահովագրեց մի ձևական փորձագիտական տեղեկագրով, որը «նրա» հայերին հռչակում էր արհմեր»³⁶

Մեկնաբանություններն, ըստ էության, ավելորդ են: Նման հայտարարություն կատարելուց առաջ Վ. Գուստը պարտավոր էր գոնե տեղյակ լինել, որ այդ «ժողովրդական ուժեղ ալիքի» (ինչպես նա անվանում է նացիոնալ-սոցիալիզմի քաղաքական վերելքը) ի հայտ գալուց մոտ մեկ տասնամյակ առաջ Լեփսիուսն արդեն վախճանվել էր, իսկ իր մահից հետո հայերին արհմեր հռչակելու և հրեա փոքրամասնության ճակատագրով մտահոգվելու հնարավորություն չուներ:

Ինչևէ, հավուր պատշաճի ըմբռնելով պատմագիտության մեջ հեղաշրջիչ նորարարություն կատարելու գալթակողության ուժը և ըստ արժանվույն գնահատելով հայոց ցեղասպանության հարցում Գերմանիայի մեղսակցությունը փաստելու՝ գերմանացի հրապարակախոսի անկեղծ ձգտումները՝ մենք, այնուամենայնիվ, նման աշխատառժը ոչ միայն գիտական, այլև բարոյական համարել չենք կարող: Ինչ վերաբերում է Լեփսիուսի «հայրենասիրության»՝ հիշյալ շահարկումներին, ապա մենք, բնականաբար, ամենևին հակված չենք նրան համարելու ոչ հայրենասեր անձնավորություն: Դա նույնքան սխալ և անհեթեթ կլիներ, որքան անհեթեթ վերը նշված շահարկումները:

36. Անդ:

Հայրենասիրությունը, սակայն, բարոյականությունը և խղճին ծառայող այդ մեծ անհատին երբեք երկընտրանքի առաջ չի կանգնեցրել, այլ, ընդհակառակը, նրան մշտապես զորավիզ է եղել հայ ժողովրդի ողբերգությունների հանդեպ հանցավոր հանդուրժողականություն որդեգրած՝ գերմանական պետական շրջանների քաղաքականության դեմ իր պայքարում՝ ձգտելով փրկել գերմանացի ժողովրդի՝ այդ քաղաքականության հետևանքով «ամարզված» արժանապատվությունը: Մենք այդ վիճարկողներին խորհուրդ կտայինք նաև փոքր-ինչ ուսումնասիրել Լեփսիուսի կյանքի և գործունեության նախորդ շրջանները՝ համոզվելու համար, որ նման շահարկումները միանշանակորեն հերքելի լինելուց զատ հակասում են նաև փորձությունների, մարտահրավերների և զոհաբերումների բովում ինքնահաստատված և հայրենասիրության «փորձաքննությունը» բազմիցս, նույնիսկ անհամեմատ ավելի ծանր իրավիճակներում աներկբայորեն հաղթահարած գործչի կերպարին:

Մեր կողմից օգտագործված առավել կարևոր և ընդգրկուն սկզբնաղբյուրների թվում նախ անհրաժեշտ է հիշատակել դր. Յոհ. Լեփսիուսի և նրա ընկերության կողմից հրատարակված պարբերական մամուլը, որը բաղկացած է 1897-1943 թթ. ընկած ժամանակահատվածում հաջորդաբար, մասամբ, սակայն, նաև զուգահեռ լույս ընծայված՝ թվով 14 պարբերականներից: Դրանց թվում ժամանակային և, բնականաբար, նաև ծավալային առանձնակի լայն ընդգրկում ունեցան *«Der Christliche Orient»*, *«Der Orient»* և *«Orient im Bild»* ամսագրերը, որոնցից առաջինը լույս է տեսել 1897 և 1900-1922, հաջորդ երկուսը՝ համապատասխանաբար 1919-1939 և 1927-1939 թվականներն ընդգրկող ժամանակահատվածներում, իսկ 1898-1999 թվականներին հրատարակվեց *«Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes»* ամսագիրը: Բացի այդ, առանձին ժամանակափուլերում լույս էին ընծայվում մի շարք այլ պարբերականներ ևս, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատուկ գործառույթը Լեփսիուսի և նրա ընկերության հայանվեր աշխատանքների լուսաբանման հարցում: Ըստ այդմ, 1903 թվին հրատարակվում և հասարակական շրջաններին էր առաքվում *«Ex Oriente Lux»*, 1903-1908 թթ.՝ *«Der Stern der Weisen»*, 1917-18 թթ.՝ *«Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius»*, 1925-26 թթ.՝ *«Für unsere kleinen Armenierfreunde»*,

իսկ 1929-1939 թթ.՝ «*Der kleine Orient*» ամսագիրը: Ընկերության պարբերական տեղեկատվությունը չդադարեց նույնիսկ երկրորդ աշխարհամարտի բռնկումից հետո ստեղծված առանձնակի ժանր պայմաններում: 1939 թ-ին այն իրագործվում էր «*Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!*» պարբերականի միջոցով: 1940-41 թթ. աշխատանքների լուսաբանման նպատակով հրապարակվեց «*Geschäftsbericht 1940/41 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission*» տեղեկագիրը, իսկ 1943 թ-ին ևս մի տեղեկագիր, որը դարձավ վերջինը և կոչվում էր «*Geschäftsbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1942/1943*»: Այդ ամենից գատ, 1898-1911 թվականներին լույս ընծայվեց մեկ այլ ամսագիր ևս՝ «*Das Reich Christi*»-ն, որը չնայած հիմնականում նվիրված էր գիտա-աստվածաբանական խնդիրների պարզաբանմանը, այդուհանդերձ կարևոր տեղեկություններ էր պարունակում նաև հայօգնության աշխատանքների վերաբերյալ:

Որպես ԳԱԱ-ի գաղափարախոսական, տեղեկատվական և քարոզչական գործունեության կազմակերպման կարևորագույն միջոց՝ հիշյալ ամսագրերն ունեին անփոխարինելի նշանակություն ընթացիկ աշխատանքների լուսաբանման, բարեկամների հետ կապի ամրապլնդման և հասարակայնության համակողմանի իրազեկման հարցում: Այնտեղ պարբերաբար լույս էին տեսնում Լեփսիուսի և նրա գործընկերների հողվածները, ընկերության՝ արտերկրի աշխատակիցների և բարեկամների թղթակցությունները, կատարվում էին իրադրության համակողմանի վերլուծություններ, տպագրվում էին փաստագրական, վիճակագրական տեղեկություններ, հաշվետվություններ, ուղեգրություններ, ակնարկներ և բազմաբնույթ ու բազմաժանր այլ ստվարաբանակ նյութեր, որոնք բնականաբար աղբյուրագիտական անզերազնահատելի նշանակություն ունեցան մեր ուսումնասիրության համար:³⁷

37. ԳԱԱ-ի պարբերականներում հրապարակված նյութերի բնույթի, քվանդակության, ժանրային առանձնահատկությունների, հեղինակային պատկանելության, տարբեվերի և այլ հարակից իրողությունների վերաբերյալ որոշակի իրազեկում ունենալու համար տե՛ս տողերիս հեղինակի կողմից կազմված՝ համապատասխան մատենագիտական ցանկն ու տեղեկացույցը: *Sb'u Deutschland, Armenien und die Türkei 1895-1925, Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv, München, 1998, Teil 3:*

Հնայած պարբերական մամուլի միջոցով իրագործվող համալիր տեղեկատվությանը, ԳԱԱ-ին և Գերմանիայի ներքաղաքական իրադրությանը վերաբերող մի շարք կարևոր մանրամասների ամբողջացման հարցում մեզ մեծ ծառայություն մատուցեցին Հալլեի համալսարանի՝ Յոհ. Լեփսիուսի արխիվում պահպանվող նյութերը:

Սկզբնաղբյուրների մյուս նշանակալից խումբը ներառում է ընկերության դրսի աշխատակիցների և այլ ժամանակակիցների, մասնավորապես Յակոբ Կյունցլերի, Բրունո Էքարտի, Ինգեբորգ Մարիա Ջիկի, Աննա Մ. Ֆրիդեմանի և այլոց՝ առանձին հրապարակումներում ամփոփված հուշերն ու վկայությունները, որոնք մեզ օգնեցին մեր թեմայի հետ կապված մի շարք խնդիրների լուսաբանման հարցում: Այդ առումով գնահատալից հիշատակման է արժանի նաև Արամ Սահակյանի՝ 1955 թ-ին Բեյրութում հրատարակված «Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները» աշխատությունը. որտեղ ամփոփված են ուռհայեցի հայ ժամանակակիցների արժեքավոր վկայությունները Ուռհայում կատարված իրադարձությունների և ԳԱԱ-ի՝ Ուռհայի մասնաճյուղի ու նրա աշխատակիցների մասին:

Մեր ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեն 30հ. Լեփսիուսի երկարամյա վաստակաշատ աշխատակցի՝ Ռիխարդ Շեֆերի՝ 1932 թ-ին Պոտսդամում հրատարակված «*Geschichte der Deutschen Orient-Mission*» գիրքը, որտեղ հեղինակը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Լեփսիուսի, ԳԱԱ-ի և նրանց կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ: Այդ աշխատությունն առանձնանում է նաև Լեփսիուսի և նրա գործընկերների փոխհարաբերությունների ու ընկերության ներքին խոհանոցում տեղի ունեցած զարգացումների հանգամանալից, տեղ-տեղ մինչև իսկ խիստ մանրամասն պարզաբանումներով, որոնք, բնականաբար, ընկերության զանգվածային տեղեկատվության մեջ մուտք չէին գործում, և որոնց հաճախ բավարար չափով իրազեկ չէին դառնում նաև դրսի աշխատակիցները:

Ինչևէ, այն հանգամանքը, որ ինչպես Շեֆերն, այնպես էլ վերոնշյալ մյուս հեղինակներն իրենց շարադրանքի ընթացքում հիմնականում առաջնորդվել են սեփական փորձառության և ընկալումների թելադրանքով, մեզ հնարավորություն է ընձեռել առանձին իրողությունների ամբողջական լուսաբանման համար կատարել նաև տարբեր սկզբնաղբյուրների տեղեկությունների արդյունավետ համեմատական քննություն:

Մեր թեմայի ամբողջական լուսաբանման հարցում որոշակիորեն կարևորվեց Հայաստանի օգնության գերմանական միության՝ Ֆրանկֆուրտի կոմիտեի պարբերական մամուլի, մասնավորապես «*Sonnenaufgang*» պարբերաթերթի ուսումնասիրությունը. որի հետ Լեփսիուսը և ԳԱԱ-ն, հատկապես սկզբնական շրջանում, համագործակցում էին: Նրանց գործունեությանն առնչվող որոշ մանրամասների, ինչպես և հասարակական շրջաններում Հայկական հարցին վերաբերող գաղափարական ներհակությունների պարզաբանման առումով զգալի կարևորություն ունեցան նաև մի շարք այլ եկեղեցական և միսիոներական կազմակերպությունների պարբերականներում պահպանված փաստագրական նյութերը: Մասնավորապես «*Das notwendige Liebeswerk*» կազմակերպության համանուն պարբերականի ուսումնասիրությունը մեծ դեր խաղաց Լեփսիուսի ընկերությանն անդամակցող կամ նրա հետ սերտ համագործակցության մեջ գտնվող մի շարք երախտավոր այրերի, զորօրինակ Պ. Ռոիրբախի, Է. Շթիրի, Ս. Ռադեի և այլոց հայանվեր ձեռնարկումների մյուս՝ ԳԱԱ-ի հետ անմիջականորեն չառնչվող ոլորտներին իրազեկվելու առումով:

Սկզբնաղբյուրների մեկ այլ՝ մեր ուսումնասիրության համար եապես կարևորվող խումբը ներառում է Հայկական հարցի զարգացումներին, Հայոց ցեղասպանությանը և թուրք-գերմանական փոխառնչություններին վերաբերող՝ տարբեր ժամանակահատվածներում լույս ընծայված փաստաթղթերի և փաստագրական նյութերի ժողովածուները:³⁸ Այդ շարքում, բնականաբար, մեր ուսումնասիրության համար առանձնակի կարևորություն ունեին դր. Յոհ. Լեփսիուսի կողմից հրատարակված՝ փաստաթղթերի և փաստագրական նյութերի վերոնշյալ ժողովածուները, ինչպես և Վ. Միքայելյանի կողմից Հայկական հարցի և ցեղասպանության վերաբերյալ կայսերական Գերմանիայի ԱԳ նախարարության քաղաքական արխիվում պահպանված փաստաթղթերի՝ արդեն հիշատակված ժողովածուն, որն իր փաստավավերագրական համակողմանի նշանակությունից զատ հնարավորություն է ընձեռում նորովի և առավել ստույգ արժևորել նաև Լեփսիուսի համապատասխան հրապարակումը: Բացի այդ, մեր ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեցավ Լեփսիուսի լույս ընծայած դիվանագի-

38. Տե՛ս օգտագործված գրականության ցանկը:

տական արձանագրությունների՝ Վ. Գուստի կողմից վերանայված ժողովածուն. որտեղ ներկայացված են նաև այդ արձանագրությունների՝ Լեփսիուսի հրապարակման մեջ չընդգրկված հատվածները:³⁹

Լեփսիուսի կողմից հրապարակված մյուս ժողովածուն, որ կրում էր «Der grüne Tisch» խորագիրը,⁴⁰ ունենալով թեմատիկ այլ ընդգրկում և բովանդակելով նրա և նրա գործընկերների միջև առանձին ժամանակահատվածներում փոխանակված թղթակցություններն ու նամակագրական նյութերը. մեզ համար դարձավ կարևոր աղբյուր ԳԱԱ-ի ներխուհանոցային որոշ ուշագրավ գարգացումների, մասնավորապես 1907-1908 թվականներին ԳԱԱ-ում առաջացած գաղափարական հակասությունների, ինչպես և 1917 թվականին Լեփսիուսի և իր ընկերության հոգաբարձության տարածայնությունների ու պառակտման ենթատեքստը պարզաբանելու համար:

Սկզբնաղբյուրների հաջորդ բավականին ստվար հատվածը վերաբերում է մեր ուսումնասիրությանն ուղղակիորեն առնչվող կամ հարակից խնդիրների պարզաբանմանը նվիրված՝ արդեն իսկ կատարված հետազոտություններին. որոնք ներկայացված են օգտագործված գրականության ցանկում: Հայերի մյուս՝ շվեյցարացի, դանիացի, ամերիկացի և այլ երկրների բարեկամների գործունեությանը, Լեփսիուսի ընկերության հետ նրանց համագործակցությանը, հայոց պատմությանը, Հայկական հարցին, ցեղասպանությանը, Թուրքիայի ներքաղաքական իրադարձություններին և հարակից խնդիրների լուսաբանմանը նվիրված այդ աշխատությունները մեր աշխատության ամբողջացման հարցում բնականաբար ունեցան կարևոր նշանակություն:

Եթե նկատի առնենք, որ մեր ուսումնասիրությամբ իր ամբողջական լուսաբանումն է ստանում հայոց նոր պատմության դեռևս մութ մնացած էջերից մեկը. որը մինչ այսօր միայն թերի և խիստ մասնակիորեն է մեկնաբանվել, ապա այն գալիս է հայագիտության մեջ տեղ գտած այդ բացը լրացնելու: Եվ եթե նկատի ունենանք, որ Լեփսիուսի ու նրա ընկերության համապարփակ հայանվեր առաքելությունն իրագործվեց հայ ժողովրդի համար մեծագույն կորուստներով և ողբերգություններով հատկանշվող ժամանակաշրջանում, որի շատ հիմնահարցեր ներկայումս էլ զերծ չեն կեղծարա-

39. Տե՛ս ինտերն. ցանցում Gust W.: Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>:

40. Տե՛ս Der grüne Tisch, Sammlung von Aktenstücken über die Gründe meines Austritts aus der Deutschen Orient-Mission, Herausgegeben von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1920.

րությունից և նենգափոխումներից, այն ձեռք է բերում նաև կարևոր քաղաքական նշանակություն: Ներկայացված հարուստ փաստագրական նյութերի միջոցով աշխատությունը կարող է զգալի նպաստ բերել ոչ միայն հայոց ցեղասպանության ուսումնասիրման, այլև վերջինիս ճանաչման և Հայկական հարցի արծարծումների նորոթյա գործընթացներին՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով օտար աղբյուրների հիման վրա հերքելու այդ շրջանի պատմական իրողությունների վերաբերյալ թուրքական պատմագիտության և այլոց կողմից կատարվող կեղծումներն ու աղավաղումները: Աշխատությունը միաժամանակ կարող է ծառայել որպես աղբյուրագիտական ձեռնարկ և արժեքավոր ուղեցույց հիշյալ խնդիրներով, հայ-գերմանական պատմա-մշակութային և քաղաքական փոխհարաբերություններով ու հարակից հարցերով զբաղվող պատմաբանների համար:

Յոհ. Լեփսիուսի և նրա ընկերության համապարփակ հայանվեր գործունեությունը դարակազմիկ նշանակություն ունեցավ հայ-գերմանական փոխհարաբերությունների պատմության մեջ, և այդ առաքելության լուսաբանմանը նվիրված մեր ուսումնասիրությունն անկասկած խթանիչ դեր կխաղա նաև երկու ժողովուրդների մերօրյա կապերի ամրապնդման ու զարգացման հարցում: Բացի այդ, այն հնարավորություն է ընձեռում ճշգրտել և ուղղել նաև գերազանցապես սիրողական աղբյուրների և ոչ գիտական գրականության միջոցով ի հայտ եկած ու ներկայումս էլ ավանդաբար գոյատևող որոշ թյուրըմբռումներ առանձին պատմական իրադարձությունների կամ գործիչների վերաբերյալ: Բազմաթիվ օրինակներից այստեղ առաջին հերթին կկամենայինք հիշատակել Լեփսիուսի և էնվեր փաշայի պատմական հանդիպումը (որի մասին հայ հասարակական և գիտական շրջաններն առայսօր տեղեկացել են միայն Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» գեղարվեստական վեպի միջոցով), Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, որի վերաբերյալ լիարժեք իրազեկում դեռևս չի կատարվել, դր. Պաուլ Ռոհրբախի, ԳԱԱ-ի Ուռհայի մասնաճյուղի տնօրեն Ֆր. Էքարտի և այլոց շուրջ զանազան շրջաններում ի հայտ եկած իրարամերժ տեսակետները, որոնք մեր կողմից քննության ենթարկվելով՝ ստացել են ըստ ամենայնի ամբողջական և սպառիչ պարզաբանում:

Լեփսիուսը և իր ընկերությունը, չսահմանափակվելով միայն օգնության աշխատանքներով, բոլոր հնարավոր միջոցներով ձգտում էին նպաստել նաև հայ և գերմանացի ժողովուրդների բազմակողմ և այդ թվում նաև մշակութային կապերի խորացմանը: Այդ նպատակով տասնամյակների ընթացքում ԳԱԱ-ի աշխատակիցների ուժերով թարգմանվել և հրատարակվել է հայ քնարերգության և արձակի, պատմագրության և ժողովրդական բանահյուսության

ստեղծագործությունների մի հոծ ընտրանի՝ գերմանական հասարակայնությանը ծանոթացնելով հայ հանձարի և արարչագործ մտքի նվաճումներին: Քանի որ ուսումնասիրողների տեսադաշտից դեռևս դուրս մնացած գրական-մշակութային այդ արդյունավետ փոխառնչությունների պատմությունը հարուստ հույժ է մատակարարում նաև բանասիրական հետազոտությունների համար. աշխատությունն այդ ոլորտում ևս կարող է ուսումնասիրողների համար ուղեցույց ծառայել՝ օգտագործվելով նաև որպես բուհական ձեռնարկ ոչ միայն պատմության. այլև բանասիրական և գերմանիստիկայի ֆակուլտետներում սովորող ուսանողների համար: Այն բաղկացած է երեք զլուխներից, որոնցից առաջինում լուսաբանվում է Լեփսիուսի և նրա ընկերության նախապատերազմյան շրջանի հայանվեր գործունեությունը: Երկրորդ զլուխը նվիրված է աշխարհամարտի տարիներին կատարված աշխատանքներին. իսկ երրորդն ընդգրկում է մնացյալ 1919-1943 թթ. միջև ընկած ժամանակաշրջանը:

Աշխատությունում մանրամասնորեն ներկայացվում են այն վիթխարի ծառայությունն ու վաստակը, որ ունեցան Լեփսիուսն ու իր ընկերությունը մահվան ծիրաններում գտնվող հայությանը զորավիգ լինելու և նրա դեմ իրագործված ոճրագործությունները հրապարակայնորեն դատապարտելու հարցում: Նրանց գործունեության լուսաբանումը կատարվում է ներխոհանոցային այն բազմազան կապերի և փոխառնչությունների հենքի վրա, որոնք հաճախ արդյունավետ համագործակցության. իսկ երբեմն էլ ներհակությունների պատճառ էին դառնում: Ընդ որում մենք փորձել ենք ըստ որոշակի ժամանակափուլերի Գերմանիայում և մասնաճյուղերում կատարված աշխատանքները լուսաբանել զուգահեռաբար, որ օգնում է ոչ միայն պահպանել դրանց ժամանակագրական հաջորդականությունը. այլև հնարավորինս ընկալելի է դարձնում երկուստեք տեղի ունեցող զարգացումների փոխառնչություններն ու ներքին պատճառահետևանքային կապերը:

Հատկանշական է, որ վտանգված հայությանը սատարելու ընդհանուր ձգտումներն առաջ բերեցին նաև բազմաթիվ այլ, հատկապես շվեյցարացի, դանիացի, հոլանդացի և ժամանակ առ ժամանակ նաև ամերիկացի բարեկամների մի յուրօրինակ համախմբում, ինչը հնարավորություն ընձեռեց ջանքերի միասնացմանը և պարտականությունների հստակ սահմանազատմանը առավելագույն արդյունքների միտել: Աշխատությունում, բնականաբար, իր հանգամանակից լուսաբանումն է ստանում նաև այդ երկրների գործիչների հետ Լեփսիուսի ու իր աշխատակիցների համագործակցությունը. որոնք հայ ժողովրդի արտերկրի բարեկամների հետ մշտապես սերտ կապի մեջ գտնվելով՝ ձգտում էին հասնել գործողությունների առավելագույն միասնացման և համախմբման:

Հարկ է նշել, անշուշտ, որ Լեփսիուսի ծրագրերը չէին սահմանափակվում միայն հայ ժողովրդին ցուցաբերվող օգնության աշխատանքներով. քանի որ նա հույս ուներ երբևէ նվիրվել նաև Արևելքի մահմեդական շրջաններում ավետարանական քարոզչության ծավալմանը: Եվ չնայած հայօգնության աշխատանքները մշտապես մնում էին ընկերության գործունեության կիզակետում, ու այն իր նյութական ու մարդկային ռեսուրսների մեծագույն մասը հատկացնում էր այդ նպատակին, Բուլղարիայում և Պարսկաստանում ժամանակ առ ժամանակ փորձեր էին ձեռնարկվում նաև այդ աշխատառուրտի զարգացման ուղղությամբ: Մենք այդ աշխատանքներին, որոնք ընդհանուր առմամբ աննշան արդյունքներ ունեցան, անդրադառնում ենք միայն մասնակիորեն, այն չափով, որքան անհրաժեշտ է մեր բուն թեմայի ամբողջական լուսաբանման համար: Նմանապես հպանցիկ են լուսաբանվում նաև Լեփսիուսի աստվածաբանական գիտական գործունեությունն ու նրա կողմից հեղինակված թատերգությունները, որոնք ունեն թեմատիկ-բովանդակային այլ ընդգրկումներ և կարող են առանձին քննության առարկա դառնալ:

Օգտվելով առիթից ես կկամենայի իմ ջերմ շնորհակալությունը հայտնել դր. Յոհաննես Լեփսիուսի դստերը՝ Վիոլա Լեփսիուսին, նրա որդուն Մանֆրեդ Աշկեին, ինչպես և մեծ գործչի տոհմի մյուս շառավիղներին, առանձնապես պրոֆ. դր. Մ. Ռայներ Լեփսիուսին և Կարլպետեր Լեփսիուսին այն արժեքավոր նյութերի և տեղեկությունների համար, որ նրանք տրամադրեցին ինձ իմ հետազոտական աշխատանքի ընթացքում: Աշխատությունը գրելիս ինձ մեծ աջակցություն են ցուցաբերել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի և ՀՀ ՊԱԱ աշխատակիցները, մասնավորապես ակադ. Վլադիմիր Բարխուդարյանը, ակադ. Վարդգես Միքայելյանը, պրոֆ. դր. Հրաչիկ Սիմոնյանը, պրոֆ. դր. Բաբկեն Հարությունյանը և շատ ուրիշներ, որոնց խորհուրդները մեծ դեր ունեցան ուսումնասիրության ընթացքում, և որոնց նույնպես այստեղ իմ անկեղծ երախտագիտությունը կկամենայի հայտնել: Գերմանիայում իմ հետազոտական աշխատանքն իրագործվեց, ի թիվս այլոց, պրոֆ. դր. Բերնդ Բոնվեջի, պրոֆ. դր. Հերման Գոլթցի, դր. Խաչիկ Ղազարյանի, դր. Դանիել Մյուլլերի, դր. Ազատ Օրդուխանյանի, դր. Ակսել Մայսների և նրանց բազմաթիվ աշխատակիցների հետ արդյունավետ համագործակցության պայմաններում, որոնց ևս իմ ջերմ շնորհակալությունն են հայտնում: Առանձնահատուկ երախտիքով են կամենում նշել նաև հանգուցյալ ակադեմիկոսներ Հրանտ Թամրազյանի և Լենդրուշ Խուրշուդյանի անունները, որոնց խորհուրդներն ու աջակցությունը խիստ կարևոր նշանակություն ունեցան հետազոտության սկզբնավորման և զարգացման հարցում:



Ուռնայի որբանոցում



ՅՈՂԱՆՆԵՍ
ԼԵՓԻՈՒՄ



ԿԱՐԵՆ ՅԵՄԵ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ
ՏԱՐԻՆԵՐԸ
(1895-1914 թթ.)



ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՅԻՄՆԱԳԴՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՆՔՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿՎՈՐՈՒՄԸ

Կազմակերպության ստեղծման գաղափարը ծնվեց Գերմանիայի մի փոքրիկ, մեկուսի գյուղում՝ Ֆրիզդորֆում, որտեղ ավետարանական քահանա Յոհաննես Լեփսիուսը հայտնի եգիպտաբան և լեզվաբան Կարլ Ռիխարդ Լեփսիուսի որդին, 1887 թ-ի հունվարից ստանձնել էր ծխական համայնքի քահանայությունը:⁴¹ Նրա և հարևան համայնքների քահանաների միջև, որոնց թվում էր նաև Լեփսիուսի աներորդի Ֆրիդրիխ Ցելերը, ստեղծվել էին սերտ և մտերմիկ փոխհարաբերություններ, մի «հոգևոր միություն», որի առօրյան հագեցած էր հավաքույթներով, ընթերցումներով, հոգևոր թեմաների շուրջ կատարվող զրույցներով ու քննարկումներով: Կրոնական, հասարակական շահագրգռություններով և գաղափարական ներշնչանքով լի այդ առօրյան 1895 թ-ի սեպտեմբերի 29-ին նշանավորվեց Ֆրիզդոր-

41. Յոհ. Լեփսիուսը ծնվել է 1858 թ-ի դեկտեմբերի 15-ին Բեռլինում: Տեղի գիմնազիան 1878 թ-ին ավարտելուց հետո նա Էրլանգենի համալսարանում մի կիսամյակ սովորեց աստվածաբանություն, որից հետո ուսումը շարունակեց Մյունխենի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում 1880 թ-ին այնտեղ ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այնուհետև նա 1881 թ-ից նախ Բեռլինի և Գրայֆսվալդի, ապա նաև Շտետինի համալսարաններում շարունակեց ուսանել աստվածաբանություն և 1884 թ-ին Շտետինում հանձնելով ավարտական քննությունները՝ նույն տարվա հոկտեմբերին պալատական քարոզիչ Կոզելի դրոմանթ մեկնեց Երուսաղեմ, որտեղ ստանձնեց գերմանացի քարոզչի օգնականի և գերմանական դպրոցի տնօրենի պարտականությունները: 1886 թ-ին, ամուսնանալով Մարգարետ Ցելերի հետ, Լեփսիուսը Երուսաղեմից վերադարձավ Գերմանիա և մի քանի ամիս Ֆրանկֆուրտի Քրիստոսի եկեղեցում քահանայի տեղապահ աշխատելուց հետո, 1887 թ-ից ստանձնեց Վիպրայի մոտ, Դարցի հարավային լանջեզրին գտնվող Ֆրիզդորֆ գյուղի քահանայական ծառայությունը: Sten Lepsius M. R., Die Nachkommen von Richard und Elisabeth Lepsius, Weinheim, 1984, էջ 118-119:

Ֆուն կազմակերպված մի հանդիսավոր հավաքությո՞վ, որի նպատակն էր Արևելքի մահմեդական շրջաններում քարոզչության իրականացման հետ կապված հիմնախնդիրների քննարկումը, և որին, հարևան համայնքների քահանաներից և ուսուցիչներից զատ, մասնակցում էին նաև հեռավոր վայրերից հրավիրված բազմաթիվ բարեկամներ: Երեկոյան հավաքությո՞ի մասնակիցներից երեքը հրապարակեցին իրենց վճիռը միսիոներական գործունեության նվիրվելու մասին: Նրանց միացավ ևս 100 մարդ, և ի դեմս այդ միության հիմնադրվեց «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը:⁴² Վերջինիս հիմնական խնդիրը, ինչպես տարիներ անց նշում էր Լեփսիուսը, Արևելքի մահմեդական շրջաններում քարոզչական գործունեության ծավալումն էր: Սակայն ուշագրավ զուգահեյությունը մեկ օր անց, սեպտեմբերի 30-ին. Կ. Պոլսում սկսվեցին հայերի առաջին զանգվածային կոտորածները, որոնց վերաբերյալ լուրերը թափանցեցին աշխարհի տարբեր երկրներ՝ հասնելով նաև Ֆրիզդորֆ: Ընկերության սկզբնական ծրագիրն այդ իրադարձությունների թելադրանքով մղվեց երկրորդ պլան, և առաջնահերթ նպատակը դարձավ հալածանքների ենթարկվող հայ ժողովրդին օգնության կազմակերպումը: «Կարելի էր ճակատագրի ցուցումը համարել,- նշում էր Յ. Լեփսիուսը,- որ «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության հիմնադրման հաջորդ օրը սեպտեմբերի 30-ին. մեզ համար միանգամայն անակնկալ կերպով Կ. Պոլսում սկսվեց հայերի առաջին կոտորածը, որին հաջորդեցին նոր ջարդեր: Դրանց հրահրողն անձամբ Աբդուլ Համիդ II-ն էր: 1895 և 1896 թվականներին նրա նրստավայրից էին դուրս գալիս քրիստոնյաների կոտորածներն սկսելու վերաբերյալ հրամանները, որոնք աննկարագրելի ցասում առաջ բերեցին ողջ Եվրոպայի և Ամերիկայի քրիստոնյաների մեջ: ԳԱԱ-ի ծրագիրը, որ սկզբնապես վերաբերում էր մահմեդականների շրջանում քարոզչության կազմակերպմանը, փաստերի տրամաբանությամբ կանգնեց մի այլ առաջադրանքի առջև՝ օգնության կազմակերպում հարյուր-հազարավոր մորթված հայերի այրիներին և որբերին»:⁴³

Կ. Պոլսի եղերական իրադարձությունները. սակայն, միայն նախեր-

42. Schäfer R., *Geschichte der Deutschen Orient-Mission*, Potsdam, 1932, էջ 3:

43. Lepsius J., *30 Jahre Deutscher Orient-Mission*, „Der Orient“, 1925, էջ 111:

զանքն էին այն մեծ զանգվածային սպանդի, որն այնուհետև շարունակվեց Աք Չիսարում (հոկտ. 3-ին), Տրապիզոնում (հոկտ. 8-ին), Երզրնկայում (հոկտ. 21-ին), Բաբերդում (Բայքուրթ) (հոկտ. 25-ին), Բաղեշում (Բիթլիս) (հոկտ. 27-ին), Կարինում (Էրզրում) (հոկտ. 30-ին), Արաբկիրում (նոյ. 1-5-ին), Խարբերդում (Խարպուս) (նոյ. 10-ին), Սեբաստիայում (Սվաս) (նոյ. 12-ին), Դիարբեքիրում (նոյ. 1-ին), Մալաթիայում (նոյ. 4-9-ը), Ամասիայում (նոյ. 15-ին), Սարգվանում (նոյ. 15-ին), Մարաշում (նոյ. 18-ին), Կեսարիայում (նոյ. 30-ին), Ուռհայում (դեկտ. 28-29-ին), իսկ 1896 թ-ին նաև Ակնում (Էգիմ), Վանում և այլ վայրերում:⁴⁴ Իրադրությունը նորաստեղծ ընկերությունից պահանջում էր ժամ առաջ ձեռնամուխ լինել օգնության կազմակերպմանը. մի առաջադրանք, որի իրականացման համար, սակայն, Գերմանիայում դեռ բավարար նախադրյալներ չկային: Եվրոպական տերությունները բավականաչափ իրազեկ էին Հայաստանում կատարվող ոճրագործություններին: Այդ էր վկայում դեռ 1896 թ-ի փետրվարին Բ. Դռանը ներկայացված «վեց մեծ տերությունների դեսպանների կուլեկտիվ նոտան», որտեղ կար ծավալուն վիճակագրական տեղեկատվություն 1895 թ-ին տեղի ունեցած ջարդերի վերաբերյալ:⁴⁵ Չնայած դրան, սակայն, նրանք ազդու միջամտություններ կատարելու դիտավորություն համղեծ չէին բերում՝ ավելին, ձգտելով հասարակայնությունից զաղտնի պահել նույնիսկ նշված փաստաթուղթը:

44. Lepsius J., Die armenischen Reformen, „Der Christliche Orient“, 1913, էջ 214: Առանձին շրջաններում կոտորածների մանրամասների մասին տե՛ս Պողոսյան Ս.: Պողոսյան Կ., Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ.1, Երևան, 2000, էջ 405-478:

45. Չնայած այդ տվյալները միայն մասնակիորեն էին արտացոլում իրականությունը, բայց և այնպես լիուրի բավական էին իրադարձությունների պատկերը պարզ դարձնելու համար: Ըստ այդ տեղեկագրի, 1895 թ-ին կոտորածներին զոհ էին գնացել 88243 հայեր, ավերվել ու թալանվել էին 2493 գյուղեր և 568 եկեղեցիներ, բռնի մահմեռականացվել էին 646 գյուղեր, իսկ 328 քրիստոնեական եկեղեցիներ վերածվել էին մզկիթների: Իրազեկվում էր նաև 12 բարձրաստիճան հայ հոգևորականների և 179 քահանաների ու քարոզիչների եղերական սպանության մասին: Վիճակագրության համաձայն անօթևանների և օգնության կարիք ունեցողների քանակությունը կազմում էր 546 հազար: Տե՛ս Lepsius J., Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896, էջ 243:

Նման թողտվությունը նպաստավոր հող էր ստեղծում թուրքական քարոզչամիջոցների գործունեության համար, որոնք փորձում էին խոչընդոտել իրադարձությունների հրապարակայնացումը և ապակողմնորոշել միջազգային հանրությանը կատարվածը ներկայացնելով որպես հայ հեղափոխականների «ծրագրված ապստամբության» կանխման միջոցառում: «Այն, ինչ Կ. Պոլսի դեսպանությունում և Բեռլինի ԱԳՆ-ում գիտեին,- այդ կապակցությամբ նշում էր Յոհ. Լեփսիուսը,- գերմանական հասարակայնությունը դեռ երկար ժամանակ չգիտեր: Անգլիայում և Ֆրանսիայում ևս երբևէ լիարժեք հասարակական կարծիք չստեղծվեց: Ոչ մի տեղ դիվանագետներին ճշմարտությունը հաճելի չէր: Թուրքիայի մամլո գործակալությունները տենդագին աշխատում էին ճշմարտությունը կոծկել, և «հայկական հեղափոխության» հեքիաթն ըստ հնարավորին շահարկվում էր»:⁴⁶

1896 թ-ի սկզբին, սակայն, ճշմարտությունը եվրոպայում սկսեց տեղ-տեղ երևան գալ: Շվեյցարական և անգլիական լրագրերում ի հայտ եկան հողվածներ, որտեղ կոտորածների ծավալն ու իրական պատկերը չէին թաքցվում:⁴⁷ Գերմանիայում նույնպես որոշ կիրակնօրյա եկեղեցական պարբերականներ սկսեցին տեղեկություններ արտատպել անգլիական մամուլից,⁴⁸ իսկ առանձին շրջաններում սկսվեց նյութական հանգանակությունների կազմակերպումը հայ տառապալների օգտին:⁴⁹ Ինչ վերաբերում էր զանգվածային լրատ-

46. Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 130:

47. Feigel U., Das evangelische Deutschland und Armenien, Göttingen, 1989, էջ 70:

48. Schäfer R., Geschichte..., էջ 6:

49. Հանգանակությունների կազմակերպման առաջին նախաձեռնություններն ի հայտ եկան Հանրակցական շարժման և Ավետարանական միության կողմից, որոնցից առաջինն իրենից ներկայացնում էր մի նոր-պիեթիստական հոսանք, որն ի տարբերություն երկրամասային եկեղեցիների պաշտպանում էր Աստվածաշնչյան հավատի հիման վրա պարտադիր ավետարանականացման գաղափարը, իսկ երկրորդը բողոքական քրիստոնյաների՝ Անգլիայում սկզբնավորված մի միություն էր, որտեղ միավորվել էին մաև ազատ եկեղեցիներն ու աղանդները: Sten Lepsius M. R., Die Nachkommen..., էջ 121: Հանրակցական շարժման ներկայացուցիչ, հետագայում Հայաստանի օգնության գերմանական միության Ֆրանկ-Ֆուրտի կոմիտեի նախագահ պաստոր Էռնստ Լոնմանը՝ 1896 թ-ի փետրվարի 2-ին, և Գերմանական ավետարանական միության նախագահ, հետագայում ԳԱԱ-ի տնօրեն Անդրեաս ֆոն Բեռնշտորֆը՝ մարտին, հանդես եկան օգնության կոչերով,

վությանը, ապա այն բավարարվում էր միայն պաշտոնական կցկտուր տեղեկությունների հրապարակմամբ և թուրքական լրատվության արտատպմամբ՝ առավել ստեղծելով թյուրըմբռնումներ, քան լուսաբանելով կատարվածը և այդ կերպ, ինքնըստինքյան, դառնալով ոչ միայն Գերմանիայի պետական շրջանների, այլև Թուրքիայի ծայնափողը: Ավելին, Գերմանիայի զանգվածային մամուլը անգլիական աղբյուրների տեղեկությունները բնութագրում էր որպես «Անգլիական կեղծիք»՝ պնդելով, որ չի կարելի աջակցություն ցուցաբերել բարեկամ կառավարության «ներքին թշնամիներին», և որ հայերին օգնել՝ կնշանակեր աջակցել անգլիական քաղաքականության «մեքենայություններին»:՝⁵⁰ «Գերմանական պահպանողական մամուլը կարծում էր, թե կառավարությանը ծառայություն է մատուցում, եթե հանդես է գալիս հայերի դեմ՝ պաշտպանելով սուլթանի կուսակցությանը».- գրում էր այդ առթիվ Լեփսիուսը:⁵¹

Այսպիսով, Յոհ. Լեփսիուսի համար կասկածի ենթակա չէր, որ ցանկացած կազմակերպված հայանպաստ գործունեություն կհա-

որոնցից առաջինին հետևող հանգանակությունների արդյունքը՝ 14000 մարկ, ուղարկվեց Կ. Պոլսի ամերիկյան միսիոներական ընկերությանը, իսկ երկրորդի եկամտի հիմնական մասը՝ 10 000 մարկ, ինչպես ստորև կտեսնենք, իր նպատակին ծառայեցվեց Լեփսիուսի միջոցով: Տե՛ս Feigel U., Das evangelische... էջ 71-72: Հմմտ. Lepsius J., Graf Andreas von Bernstorff, „Der Christliche Orient“, 1907, էջ 65: 50. Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 130: 51. Անդ: Այդ շրջանում և հետագայում ևս Լեփսիուսի ու նրա մերձավորների հայանդվեր գործունեության համար Գերմանիայում առկա աննպաստ ներքաղաքական միջավայրն առավել հստակ ընկալելու համար հարկ է նկատի առնել, որ թուրք-գերմանական փոխհարաբերությունների սերտացումը, որ նկատելի էր դեռ 1889 թ-ին Վիլհելմ II կայսեր՝ Կ. Պոլիս կատարած առաջին այցելությունից հետո, կայսեր երկրորդ՝ 1898 թ-ի ճանապարհորդությունից հետո դարձավ Գերմանիայի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը: Տե՛ս Kampen W. von, Studien zur deutschen Türkeipolitik in der Zeit Wilhelms II., Kiel, 1968, էջ 20-21: Թե այդ որքան անշրջելի և միանշանակ էր, կարող էր վկայել հենց կայսեր՝ երկրորդ ճանապարհորդության արդյունքներն ամփոփող հետևյալ նկատառումը. «Ես հույս ունեմ..., որ իմ ճանապարհորդությունը նպաստել է այն բանին, որ գերմանական էմբրգիայի և գերմանական եռանդի համար նոր վաճառահանման շուկաներ բացվեն, և որ ինձ հաջողվել է ամրացնել փոխադարձ կապերը մեր երկու թուրք և գերմանացի ժողովուրդների միջև»: Տե՛ս Mirbach E. F. von, Die Reise des Kaisers und der Kaiserin nach Palästina, Berlin, 1899, էջ 403:

րուցներ Գերմանիայի զանգվածային լրատվամիջոցների թշնամանքն ու կղատապարտվեր ծախողման, եթե դրա համար անհրաժեշտ հող չնախապատրաստվեր: Ավելին. նա քաջ գիտակցում էր, որ եթե որևէ հայանպաստ շարժում հենվեր միայն լրագրային աղմուկի, այլ ոչ թե իրադարձությունների փաստացի ներկայացման. «թուրքական կառավարության մեղավորության» ու «հալածվող քրիստոնյա ազգաբնակչության անմեղության հիմնավորման» վրա, ապա գերմանական կառավարությունն իր թուրքամետ քաղաքականության հիման վրա ոչ միայն իրավունք, այլև պարտականություն կհամարեր ճնշել այդ շարժումը. իսկ եկեղեցական իշխանությունների հետ համագործակցելու մասին խոսք անգամ լինել չէր կարող:⁵²

Նշված խոչընդոտների և օտար աղբյուրների հանդեպ Գերմանիայում տիրող թերահավատության բարդույթի հաղթահարման առնչությամբ գերմանական Չանրակցական շարժման ղեկավարների հետ մի շարք խորհրդակցություններ անցկացնելուց հետո (Լեփսիուսը նրանց հետ սերտ հարաբերությունների մեջ էր գտնվում) Լեփսիուսն ի վերջո հանգեց այն կարծիքին, որ նախքան հասարակական կարծիքը և եկեղեցական իշխանություններին հայանվեր գործունեության համար «ջերմացնելը». անհրաժեշտ էր պարզել իրադարձությունների ենթատեքստը և հաղորդել սեփական հետազոտությամբ ճշգրտված տեղեկություններ, որոնք այլևս թերահավատություն չէին կարող ծնել: Միակ ելքն այն էր, որ Արևելքին ոչ անծանոթ որևէ մեկը մեկնել Թուրքիա և տեղում պարզեր եղերական իրադարձությունների բնույթն ու դրդապատճառները: Լեփսիուսը վճռեց անձամբ ստանձնել այդ առաջադրանքը. «Քանի որ.՝ նշում էր նա այդ առթիվ.՝ ես այն նույն օրերին, երբ Թուրքիայում տեղի էին ունենում քրիստոնյաների հալածանքները, հիմնադրել էի «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպությունը, իմ պարտականությունն էր դառնում նետվել այդ վիհի մեջ»:⁵³

Ծանապարհորդությունը Լեփսիուսի համար պետք է դառնար նաև հայ ժողովրդի հետ անձնական ծանոթություն հաստատելու՝ առաջին հնարավորությունը, քանի որ. չնայած Երուսաղեմում աշխատելու տարիներին նա եղել էր Սիրիայում, Եգիպտոսում ու Կ. Պոլսում և

52. Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 131:
53. Անդ:

որոշակի ճանաչողություն ձեռք բերել Արևելքի վերաբերյալ, նաև գործնականում ծանոթացել միսիոներական աշխատանքի առանձնահատկություններին, այնուամենայնիվ ԳԱԱ-ի հիմնադրման նախօրեին նա հայկական շրջանների հետ անձնապես դեռ կայուն շփումներ չուներ: Ժնևի գերմանական համայնքի քահանա պաստոր Ադոլֆ Յոհաննի միջոցով նա ծանոթացել էր նրա աներորդու՝ պրոֆ. Կարապետ Թումայանի և պաստոր Վիլհելմ Ֆաբերի միջոցով Ջեյմս Գրինֆիլդի հետ, որն այն ժամանակ ուսանում էր Բեռլինում:⁵⁴ Այդքանով սահմանափակվում էին նրա անձնական փոխառնչությունները հայերի հետ:

1896 թ. մայիսին Յ. Լեփսիուսը Ջեյմս Գրինֆիլդի հետ միասին, որը տիրապետում էր գերմաներենին և մի շարք արևելյան լեզուների, մեկնեց Կ. Պոլիս:⁵⁵ Քանի որ նա Ֆրիզդորֆում ուներ մի սեփական գորգագործական ֆաբրիկա, ճանապարհորդության համար արտաքուստ պատրվակ էին հանդիսանում գորգի արդյունագործության խնդիրները:⁵⁶ Թուրքիայի գորգարդյունաբերության կենտրոնները հիմնականում նույնանում էին այն շրջանների հետ, որտեղ կատարվել էին ամենաեղերական իրադարձությունները, և գորգարդյունաբերության ղեկավարի համար շատ ավելի դյուրին էր մուտք գործել այնտեղ, քան քահանայի, որի ճանապարհին կարող էին խոչընդոտներ հարուցվել: Այսպես թե այնպես, նրանք չկարողացան խուսափել խոչընդոտներից՝ ճանապարհորդության ընթացքում մշտապես զգալով ոստիկանության, զինվորականների և լրտեսների հսկողությունը:⁵⁷ Նախ մեկնեցին Կ. Պոլիս, որտեղ հանդիպեցին գերմանական դեսպանության ներկայացուցիչներին: Այնուհետև Անկարա, որտե-

54. Ջ. Գրինֆիլդը, որի մայրը հայ էր, ծնվել է 1874 թ-ի մարտի 30-ին Թավրիզում և յոթ տարեկանում տեղափոխվել Գերմանիա, որտեղ, ավարտելով Գյութերսլոհի գիմնազիան, սովորել է Լայպցիգի, Բեռլինի և Տյուբինգենի համալսարաններում: 1898 թ-ին աբաշտպանել է իր դոկտորական ատենախոսությունը քաղաքագիտությունից: Հրատարակել է «Պարսկական պետության սահմանադրությունը» (1904), «Առևտրի իրավունքը Պարսկաստանում» (1906) և մի շարք այլ աշխատություններ: 1918-21 թթ. եղել է Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Բեռլինում: Տե՛ս Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 131:

55. Անդ:

56. Schäfer R., Geschichte..., էջ 5:

57. Անդ:

ղից նպատակ ունեին հասնել Ջեյթուն: Սակայն այդպես էլ չկարողացան մուտք գործել այնտեղ: Թուրքիայի կառավարությունն արգելեց նրանց ճանապարհը դեպի արևելք: Կեսարիայում նրանք հարկադրված փոխեցին իրենց ուղղությունը, մեկնեցին դեպի հարավ և Կիլիկիայի դարպասներով իջնելով Կիլիկյան հարթավայր և Ադանա ու Տարսուս այցելելուց հետո վերադարձան Կ. Պոլիս:⁵⁸ Ճանապարհորդները շարունակ հանդիպում էին մարդկանց, որոնք ականատես էին եղել կոտորածներին, և նրանց միջոցով ամբողջացնում իրենց տեղեկությունները: «Մի երկրում,- նշում էր այդ առթիվ Յ. Լեփսիուսը,- որտեղ թերթեր չկան, անձնական շփումներն իմացարժան ամեն բանի ամենավստահելի աղբյուրն են»:⁵⁹ Նրանք հնարավորություն ունեցան ծանոթանալ նաև Թուրքիայում գործող ամերիկացի միսիոներների մոտ գտնվող մեծաքանակ փաստաթղթերին, որտեղ եղելությունները փաստացի ներկայացված էին: Վերջիններս նրանց պատմեցին նաև իրենց ապրածն ու տեսածը:⁶⁰

Իր տպավորությունները Լեփսիուսը հետագայում ամբողջացնում էր հետևյալ կերպ. «Մենք կարողանում էինք ամենուրեք քրիստոնյաներից և մուսուլմաններից տեղեկություններ քաղել տեղի ունեցած կոտորածների սոսկալի մանրամասների մասին և շարունակ հաստատված տեսանք այն փաստը, որ ոչ մի տեղ հայերի կողմից ապստամբություն կամ պրովոկացիա տեղի չի ունեցել, այլ ջարդերի ողջ պատասխանատվությունը ծանրանում է բացառապես թուրքական իշխանությունների ադմինիստրատիվ միջոցառումների վրա»:⁶¹

Ճանապարհորդությունը ձեռնարկելուց առաջ Լեփսիուսն այդ մասին տեղեկացրել էր գերմանական ավետարանական շարժման մի քանի ղեկավարների. և Ավետարանական միության նախագահ իշխան Անդրեաս ֆոն Բեռնշտորֆը նրան տրամադրել էր 10 000 գերմանական մարկ տուժածներին օգնություն ցուցաբերելու և առաջին որբերին հավաքագրելու համար:⁶² Այդ գումարն իր նպատակին ծա-

58. Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 132-133:

59. Անդ, էջ 133:

60. Անդ:

61. Schäfer R., Geschichte..., էջ 5:

62. Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 133:

ռայեց թալասուն (Կեսարիայի մոտ) և Ուռնայում, որտեղ Լեփսիուսն իր խնամառության տակ վերցրեց ընդհանուր թվով 100 հայ որբերի: Թալասուն 1896 թ. մայիսի 12-ին հավաքագրված 50 երեխաները սկզբնապես տեղավորվեցին ամերիկյան «*American Board*» ավետարանական միսիոներական կազմակերպության մոտ:⁶³ Իսկ ինչ վերաբերում էր Ուռնային. ապա պրոֆ. Ռենդել Չարիսը՝ Ուռնայի կոտորածների առաջին ժամանակագիրը, իր բարեկամների միջոցներով այնտեղ բացել էր մի որբանոց և հավաքագրելով 50 երեխայի նրանց հանձնել ամերիկացի քարոզչուհի օր. Կորինա Շատուկի խնամքին: Լեփսիուսը. Մերսինից նամակով կապվելով ամերիկուհու հետ և ուղարկելով համապատասխան դրամը, նրան խնդրեց խնամքի տակ վերցնել ևս 50 որբերի. ինչը և անմիջապես իրագործվեց:⁶⁴ Հունիսի 18-ին վերադառնալով Գերմանիա՝ Լեփսիուսն օր. Շատուկից ստացված մի նամակով տեղեկացավ, որ վերջինս արդեն երկու որբանոցներ էր դեկավարում «*Հարիսյան*» և «*Լեփսիուսյան*»:⁶⁵

Այսպիսով, Լեփսիուսի վեցշաբաթյա ճանապարհորդության ընթացքում հիմնվեցին «*Գերմանական առաքելություն Արևելքում*» կազմակերպության առաջին երկու որբանոցները: Միաժամանակ առկա էր նաև Հայաստանում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների ստույգ պատկերը, որին անհրաժեշտ էր հաղորդակից դարձնել գերմանական լայն հասարակայնությանը: Դա դժվարին և կարևոր մի խնդիր էր. առանց որի լուծման անհնար կլինեին հասարակական շրջաններում հայ որբերի և այրիների համար «համակրանք շահել» և հայթայթել բավականաչափ նյութական միջոցներ: Նույնիսկ ստույգ և հիմնավորված լրատվության դեպքում իրադրությունը հա-

63 Անդ:

64 Անդ: Ու. Ֆայզելն այն տեսակետն է արտահայտում, որ Յոհ. Լեփսիուսը մեկնել է Ուռնա և անձամբ իրականացրել որբերի հավաքագրումը: *Sb'u Feigel U., Das evangelische...*, էջ 75: Այդ, սակայն, իրականությանը չի համապատասխանում: Լեփսիուսին, ինչպես պարզ է դառնում նրա տեղեկություններից, ճանապարհորդության ընթացքում չէր հաջողվել այցելել Ուռնա, սակայն Տարսուսում տեղեկանալով այնտեղ տիրող ծանր կացության մասին՝ նա վճռել է նամակով կապվել օր. Շատուկի հետ և իր օգնությունն այնտեղ ցուցաբերել: *Sb'u Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 133:*

65 Անդ:

յանպաստ աշխատանքների կազմակերպման համար աննպաստ էր: Գերմանիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների համար խիստ անհաճո էր տեղի ունեցած իրադարձությունների մասին բարձրածայն խոսելը: Արևելքում Գերմանիայի արտաքին քաղաքականության հարցում առաջնային դեր ունեին նրա շահերը, և Թուրքիայի իրականության ճշգրիտ իմացությունը կարող էր այդ տեսակետից ունենալ խանգարիչ նշանակություն: Այն շրջանները, որոնք առաջնորդվում էին այդ ելակետով, մեծ դժգոհություն էին տածում ցանկացած հայանպաստ գործունեության հանդեպ, և բնականաբար նրանցից հնարավոր չէր հուսալ որևէ աջակցություն: Չանգվածային մամուլից ևս օգնության ակնկալիքներ ունենալ հնարավոր չէր: «Գերմանական զանգվածային մամուլը հետևում էր Գերմանիայի քաղաքականությանը,- նշում էր Յ. Լեփսիուսի երկարամյա գործընկեր, ԳԱԱ աշխատակից Ռ. Շեֆերը,- այսինքն հայերին և հետևապես նրանց ցուցաբերվող աջակցության հակառակորդն էր: Յ. Լեփսիուսն օգնությունը, մասնավորապես օգնության դրամի հայթայթումը պետք է կազմակերպեր ոչ միայն առանց զանգվածային մամուլի աջակցության, այլև պետք է քաղաքական բացատրական աշխատանքներ իրականացներ ճշմարտությանը ճանապարհ բացելու համար, ինչը պետք է լիներ քրիստոնյա Գերմանիայի մամուլի խնդիրը»:⁶⁶

Լեփսիուսին մտահոգում էր նաև այն հանգամանքը, որ հայանպաստ լրատվության հրապարակման պարագայում թուրքական կառավարությունն իր հերթին կձգտեր վիժեցնել հայերին օգնություն ցուցաբերելու՝ ԳԱԱ-ի ծրագրերը: «Ինչպե՞ս պետք է հնարավոր դառնար շահագրգռություն արթնացնել Արևելքում գերմանական աշխատանքի կազմակերպման հարցում,- նշում էր նա,- ինչպե՞ս կարող էր գործը կյանքի կոչվել, երբ տարակույս իսկ չկար, որ նույնիսկ միայն Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների փաստացի հրապարակումը ոչ միայն փոթորիկ կառաջացներ, որն այնուհետև հեշտությամբ չէր հանդարտվի, այլև մեզ հակասությունների մեջ կդնե՞ր գերմանական քաղաքականության հետ (որն, ըստ իրադրության, միայն թուրքամետ կարող էր լինել) և առավել ևս թուրքական կառավարության հետ, որի բարյացակամությանը պետք է ապավինի

66 Schäfer R., Geschichte..., էջ 6:

թուրքական կայսրության տարածքում յուրաքանչյուր բարեսիրական գործունեություն»:⁶⁷

Իրադրությունը ծանր էր, և Լեփսիուսը, իր իսկ խոստովանությամբ, որոշ ժամանակ գտնվում էր հոգեկան երկվության մեջ վարանելով անմիջապես նետվել «խաչածն կրակի տակ»: Կամ պետք էր հրաժարվել հասարակական ուշադրությունը Հայաստանի վրա բեռնելու ծրագրից. որի դեպքում օգնության գործը ցանկալի ծավալներով չէր կարող իրագործվել, կամ պատրաստ լինել այն բանին, որ այն, իրեն և իր բարեկամներին հակասության մեջ դնելով գերմանական իշխանությունների հետ, կվիժեցվեր: Այդ երկընտրանքից դուրս գալու համար նրան անփոխարինելի ծառայություն մատուցեց «*Die Christliche Welt*» ամսագրի խմբագրի պրոֆ. Մարտին Ռադեի հոդվածներից մեկը. որտեղ հեղինակը պիեթիստական շրջաններին. որոնք կամենում էին բավարարվել հայությանը միայն թույլ և սահմանափակ չափերի օգնությունն ցուցաբերելով, կշտամբում էր, որ նրանց պակասում է ճշմարտությունը հրապարակայնորեն իրազեկելու քաջությունը:⁶⁸ Ռադեի հրապարակումը Լեփսիուսին օգնեց մեկընդմիջտ հաղթահարել իր երկվությունը: Եվ այնուամենայնիվ նա վճռեց իր տեղեկություններն անմիջապես չհրապարակել, այլ ուղարկել միայն մերձավորագույն շրջաններին՝ պահպանելով գաղտնիությունը, ինչն անշուշտ խորապես կշռադատված էր. «Նախքան նոր շրջանների մերձենալը կամ օրաթերթերի հետ կապ հաստատելը,- նշում էր Ռ. Շեֆերը,- հարկավոր էր բացառել թուրքամետ շրջանների հակագործողությունների հնարավորությունը և իրազեկել ու գրավել մի շարք հեղինակավոր անձանց, որոնք օգնության աշխատանքներին հենարան կդառնային և կկարողանային հասարակայնության առջև ներկայացուցչական դեր խաղալ»:⁶⁹

Օգնության գործն արդյունավետ վարելու համար նախ հարկավոր էր այն դնել կազմակերպական հիմքերի վրա: Ուստի Լեփսիուսը Թուրքիայից վերադառնալուց հետո պաստոր է. Լոհմանին առաջարկեց մի

67 Lepsius J., *Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit*, „*Der Christliche Orient*“, 1900, էջ 4:

68 Անդ:

69 Schäfer R., *Geschichte...*, էջ 8-9:

շարք բարեկամների հրավիրել Ֆրանկֆուրտ և ստանձնել հիմնվելիք՝ Հայաստանի օգնության գերմանական միության նախագահությունը:⁷⁰ Միությունը, որի հիմնադիր նիստը տեղի ունեցավ 1896 թ. հուլիսի 2-ին Մայնի Ֆրանկֆուրտում, կազմավորվեց երկու՝ Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտեների հիմքի վրա:⁷¹ Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահ ընտրվեց Է. Լոհմանը. իսկ կենտրոնական Բեռլինի կոմիտեի նախագահ՝ Ա. ֆոն Բեռնշտորֆը:⁷² Լեփսիուսն իր ցանկության համաձայն դարձավ Բեռլինի կոմիտեի քարտուղարը՝ այդ պաշտոնում հետագայում ծխական համայնքներում. հանրակցական և եկեղեցական համաժողովներում օգնության աշխատանքների հետ կապված խնդիրներ ներկայացնելու նպատակով:⁷³ Բեռլինի կոմիտեի կազմում էին ընդգրկվել նաև այնպիսի ազդեցիկ եկեղեցականներ, ինչպես, օրինակ, դր. Բերմանը, պաստոր դր. ֆոն Բոդելշվինգը, պրոֆ. Կրեմերը, Վիլհելմ Ֆաբերը, «*Der Reichsbote*» պարբերականի գլխավոր խմբագիր պաստոր Էնգելը, «*Die Christliche Welt*»-ի հրատարակիչ պրոֆ. Մ. Ռադեն և ուրիշներ:⁷⁴

Այդ ժողովում, մինչև հետագա քայլերի ծեռնարկումը, վճռվեց հրատարակել Լեփսիուսի տեղեկագիրը և սպասել արծագանքների: Հոդվածը «Ծշմարտությունը Հայաստանի վերաբերյալ» վերնագրով, լույս տեսավ 1896 թ. օգոստոսին Բեռլինի «*Der Reichsbote*» օրաթերթում:⁷⁵

70 Lepsius J., *Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit*, „Der Christliche Orient“, 1900, էջ 5:

71 Schäfer R., *Geschichte...*, էջ 9:

72 Ա. ֆոն Բեռնշտորֆը ծնվել է 1844 թ-ի մայիսի 20-ին: Վարել է զանազան պետական բարձր պաշտոններ: 10 տարի Ռայխստագում որպես պետական կուսակցության անդամ ներկայացրել է Լաուենբերգի դքսությունը: Ծառայել է կայսրին որպես սենեկապետ և միաժամանակ Բեռլինում և Լաուենբերգի դքսությունում աշխատակցել եկեղեցական սինդոներին: Այնուհետև աշխատել է 27 տարբեր միություններում, որոնց մեծ մասի նախագահն է եղել: Եղել է նաև Ավետարանական միության գերմանական մասնաճյուղի նախագահը: Բեռլինի կոմիտեում իր գործունեությանը զուգահեռ՝ նա վարում էր նաև գերմանական ավետարանական գրքերի և տրակտատների ընկերության նախագահի պարտականությունները: *Stiu Rede bei der Trauerfeier für den Grafen Andreas von Bernstorff im Christlichen Verein junger Männer*, „Der Christliche Orient“, 1907, էջ 67-68:

73 Schäfer R., *Geschichte...*, էջ 9:

74 Անդ:

75 Անդ:

Լա այդ պարբերականում օգոստոսի 12-ից 27-ը ընկած ժամանակամիջոցում հրատարակեց բազմաթիվ այլ հոդվածներ ևս, որոնք օգոստոսի վերջին վերոնշյալ հոդվածի հետ միասին ամփոփ լույս տեսան նաև առանձին գրքով՝ «Հայաստանը և Եվրոպան. մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային» վերնագրով:⁷⁶ Այդպիսով գերմանացի քրիստոնյաների մի զգալի հատված իրազեկ դարձավ Արևմտյան Հայաստանում կատարված իրողություններին, և եկեղեցական շրջաններում ծայր առան հուզումներ:⁷⁷ Գիրքը, որ շուտով հայտնվեց բազմաթիվ գրախանութներում. հետագայում ունեցավ վեց նոր հրատարակություն, թարգմանվեց անգլերեն ու ֆրանսերեն և մեծ դեր խաղաց նաև առհասարակ եվրոպական հասարակայնությանն իրազեկելու գործում, ավելի ընդգրկելու էր ներկայացնում 1895 թ-ի կոտորածների ընդհանուր պատկերը: Փաստական և թվական տվյալների կողքին այնտեղ ներկայացված էին նաև ականատեսների վկայություններ՝ սոսկալի մանրամասներով:⁷⁸

Ուշագրավ է, որ երբ սկսվեցին Կ. Պոլսի նոր հայկական կոտորածները (1896 թ-ի օգոստոսի 28-ին), Լեփսիոսի հրապարակումներն արդեն իրենց «գործը» կատարել էին, և երբ 1896 թ. Գերմանիայում նյութեր տպագրվեցին Կ. Պոլսի Բանկ օտոմանի վրա հայ հեղափոխականների կատարած հարձակման մասին, դրանք գրեթե ազդեցություն չգործեցին: «Եթե հենց 1896 թ-ի օգոստոս-սեպտեմբերին հասարակությունը Լեփսիոսի գրքով իրազեկված չլիներ,- գրում էր այդ առթիվ Ռ. Շեֆերը,- այդ հեղափոխական միջադեպը կարող էր ամբողջո-

76. Sbn Lepsius J., *Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland.*, Berlin, 1896.

77. Schäfer R., *Geschichte...* էջ 9:

78. Գրքում զետեղված էր նաև վեց մեծ տերությունների դեսպանների վերոհիշյալ տեղեկագիրը, որը, հակառակ այն գաղտնի պահելու՝ կառավարական շրջանների ջանքերին, մի ֆրանսիացի դիվանագետի միջոցով փոխանցվելով հայերի ֆրանսիացի բարեկամ Պիեռ Շարմետտոսին՝ 1896 թ-ի գարնանը հրապարակվել էր նրա «Martyrologe armenien» աշխատությունում: Լեփսիոսն, այն հայտնաբերելով, թարգմանեց գերմաներեն՝ ներառելով իր աշխատությունում: Sbn Lepsius J., *Armenien und Europa...*, էջ 208-243: Հմնտ. Lepsius J., *30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“*, 1925, էջ 130:

վին մարել հայ ժողովրդի հանդեպ համակրանքը: Մինչդեռ տվյալ դեպքում հակառակը տեղի ունեցավ. դժբախտ ժողովրդի բարեկամների թիվը բազմացավ: Գերմանիայի ավետարանական եկեղեցին, նույնիսկ պաշտոնական եկեղեցական մարմինները, ինչպես և պրուսական զլխավոր սինոդն ու զավառային սինոդները միացան կատարելով համատեղ հայտարարություններ, չնայած պաշտոնական մանուլն իր բոլոր ուժերով ծառանում էր հայակողմ շարժման դեմ»:⁷⁹

Շեֆերի տեղեկություններից, անշուշտ, չպետք է միանշանակ եզրակացություն կատարել: Գերմանիայի ավետարանական քրիստոնյաների շրջանում այդ օրերին և հետայդու ևս հայկական կոտորածներին վերաբերող հարցերում երբեք միասնական մոտեցում չդրսևորվեց, և քրիստոնեական բարոյականության ու պետական-քաղաքական շահե-

79. Schäfer R., Geschichte..., էջ 10: Հարկ է նշել, որ իրազեկվելով Չայաստանում տիրող իրադրությանն ու հայ ժողովրդի ողբերգական վիճակին՝ վճռականաբար ի պաշտպանություն հայ ժողովրդի հանդեպ եկավ նաև գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության հայտնի գործիչ և ղեկավար Ռոզա Լյուքսեմբուրգը: «Կուսակցական մամուլում չափազանց հաճախ է երևան գալիս Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունները բացառապես իբրև (հատկապես Ռուսաստանի) դիվանագիտական ինտրիգային խաղերի արդյունք ներկայացնելու ձգտումը. նշում էր նա 1896 թ-ի հոկտեմբերին «Sächsische Arbeiterzeitung»-ում լույս տեսած իր հրապարակումներից մեկում: Մամուլում որոշ ժամանակ կարելի էր նույնիսկ տեսակետների հանդիպել, թե թուրքական ոճրագործություններն առհասարակ միայն հնարանքներ են, բաշի-բոզումները՝ քրիստոնյաների օրինակելի տիպարներ, իսկ հայերի տառապանքները՝ ռուսական ռուբլով վճարված գործակալների գործը...»: Տե՛ս Luxemburg R., Gesammelte Werke, Bd. 1, Berlin, 1970, էջ 57: Ինչպես «Չայ հեղափոխականների» խաղաքարտի շահարկումների, այնպես էլ Չայկական հարցի առնչությամբ Ռ. Լյուքսեմբուրգի դիրքորոշումը միանգամայն հստակ և միանշանակ էր. «Ինչպիսի՞ն կարող է լինել սոցիալ-դեմոկրատիայի դիրքորոշումը Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ, զրոն էր նա մեկ այլ անգամ: Սոցիալ-դեմոկրատիան սկզբունքորեն կանգնած է ազատագրական ձգտումների կողքին: Քրիստոնյա ազգերը, տվյալ դեպքում հայերն ուզում են ազատագրվել թուրքական տիրապետության լծից, և սոցիալ-դեմոկրատիան պարտավոր է անվերապահորեն հանդես գալ ի պաշտպանություն նրանց»: Տե՛ս Brentjes B., Humanistische und revolutionäre Bande zwischen Deutschen und Armeniern, s. Akten des internationalen Dr. Johannes-Lepsius-Symposiums an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Halle (Saale), 1987, էջ 187: Ինչպես ստորև կապրդաբանվի, Լեփսիուսի տեղեկատվական գործունեության շնորհիվ հետազայում ի նպաստ վտանգված հայության ակտիվ դիրքորոշում ցուցաբերեց նաև այդ կուսակցության մյուս ղեկավարն ու ականավոր գործիչը՝ Կարլ Լիբկնեխտը:

րի գերակայությունները մշտապես զուգահեռ գոյատևում էին,⁸⁰ այսուհանդերձ Լեփսիուսի հրապարակումների միջոցով գերմանական հասարակական և եկեղեցական շրջաններում տեղի էր ունեցել տրամադրությունների նկատելի բեկում ի նպաստ հայ ժողովրդի:

Օգնության կազմակերպման առաջին նախադրյալներն այդպիսով արդեն առկա էին, և ՅՕԳՄ-ի 1896 թ-ի օգոստոսի 28-ին Ֆրանկֆուրտում կայացած նիստում վճռվեց բոլոր հնարավոր միջոցներով սկսել լայնածավալ ազիտացիա և հանգանակությունների կազմակերպում: Ըստ այդմ սեպտեմբերից սկսեցին կազմակերպվել բազմաթիվ հասարակական հավաքույթներ, որտեղ կոչ էր արվում օգնություն ցուցաբերել հայերին: Ի նպաստ հայ ժողովրդի ակտիվ դիրքորոշում հանդես բերելու կոչեր էին հղվում նույնիսկ կայսերը:⁸¹ Կատարվում էին հանգանակություններ, որոնք որպես կանոն ստանում էին սինդոների և եկեղեցական մյուս իրավասու մարմինների թույլտվությունը: Ծավալվող հայանվեր քարոզչության ամենաակնառու ձեռքբերումներից մեկը դարձավ պրուսական Գերագույն սինդոի՝ 1897 թ-ի նոյեմբերի 29-ի հռչակագիրը, որտեղ ավետարանական եկեղեցու՝ այդ ավագագույն մարմնի կողմից երկրամասային եկեղեցիներին կոչ էր արվում օգնություն ցուցաբերել «դաժանագույն հալածանքների ենթարկված և դեռ շարունակ ենթարկվող Չայաստանի քրիստոնյա եղբայրներին..., աղոթել, որ նրանք կարողանան փորձությանը դիմակայել..., հոգ տանել սպանված ծնողների երեխաների համար... և հավատի ընդհանրության ապացուցմամբ ու գործադրմամբ զորացնել» հայ ժողովրդին:⁸²

Ինչ վերաբերում էր պետական կառույցներին, ապա վերջիններս չափազանց զգայուն էին դարձել հասարակական տրամադրություն-

80. Այդ մասին ուշագրավ դիտողություն է կատարում նաև պրոֆ. Գ. Գուլթը. «Նույնիսկ Գերմանիայի ավետարանական քրիստոնյաների շրջանում պառակտում առաջացավ հայկական կոտորածների առնչությամբ,- նշում է նա:- Գերմանացի քրիստոնյաների քաղաքական դիրքորոշումներում քրիստոնեական մարդասիրության տեսակետը նկատելիորեն տարորոշվում էր քրիստոնեական բարոյականության գիտակից նվազեցմամբ հատկանշվող՝ ազգային-սոցիալական քաղաքականությունից: Stin Goltz H., Zwischen Deutschland und Armenien, „Theologische Literaturzeitung“, 108, 1983, էջ 870:

81. Feigel U., Das evangelische..., էջ 76:

82. Կոչի ամբողջական տեքստը տես՝ Schäfer R., Geschichte..., էջ 17-18:

Ների՝ այդ նոր զարգացումների հանդեպ: Հավաքությունները մշտապես վերահսկվում էին գաղտնի ոստիկանության և ՆԳ նախարարության աշխատակիցների կողմից և նվազագույն իսկ պատրվակի դեպքում արգելվում:⁸³ Հաճախ իշխանությունների կողմից տարբեր պատճառաբանություններով արգելվում էին նաև հանգանակությունները:⁸⁴ Կազմակերպվում էին մինչև անգամ այլընտրանքային հավաքություններ, որտեղ մտավորականությանը կոչ էր արվում զերծ մնալ հայամապաստ միջոցառումներից մասնակցելուց:⁸⁵

Այն, թե Լեփսիուսը և իր բարեկամները քաղաքական ինչպիսի աննպաստ պայմաններում պետք է իրականացնեին իրենց հայօգուտ գործունեությունը, կարող են վկայել Կ. Թումայանի հետ կապված իրադարձությունները, որին Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահ պաստոր Է. Լոհմանը 1896 թ-ի սեպտեմբերին քարոզչության կազմակերպման նպատակով հրավիրել էր Գերմանիա:⁸⁶ Երբ նա և Լեփսիուսը 1896 թ-ի սեպտեմբերին Բեռլինում կազմակերպված մի միտինգում կանոնում էին ելույթով հանդես գալ, պրուսական ՆԳ

83. Lohmann E., Nur ein Leben, Schwerin, 1933, էջ 30: Այն, թե կառավարությունը Լեփսիուսի և նրա գործընկերների հայամապաստ հասարակական քարոզչության հանդեպ որքան զգայուն էր, կարող էր վկայել հենց իր՝ կայսրուհու վարքագիծը, որը 1896 թ-ին Բեթելի՝ Բուժքույրերի քրիստոնեական միությանն արգելեց ընթերցել „Der Reichsbote“ օրաթերթը (այն դեպքում, երբ նա դրանից կարճ ժամանակ անց, 1898 թ-ի աշնանն իր ամուսնու՝ արևելյան ճանապարհորդության ընթացքում այցելեց նաև Պաղեստինի հայկական որբանոցը): Տե՛ս *Ä üöö Ä; Êïðïàçýí Ð. Ն., Áïèðïð Êïááííáíí Êáïíèèð. Նòðáíèðð Æèçíè, հլ.* „Նòðáíí è íáðíáí áèèèáíáí è հòáá-íááí Áïíèðíá“, ò. XII, *Áðáááí*, (1985), էջ 117: Այդ պարբերականը, որտեղ, ինչպես նշվեց, Լեփսիուսի բազմաթիվ հրապարակումների շարքում լույս էր տեսել նաև նրա «Ծննդաբանությունը Հայաստանի մասին» հոդվածը, այն փոքրաթիվ թերթերից մեկն էր, որոնք չէին խուսափում բացեիբաց խոսել հայկական կոտորածների մասին:

84. „Die Christliche Welt“, 1896, էջ 958-959:

85. Goltz H., Zwischen..., էջ 869:

86. Schäfer R., Geschichte..., էջ 10: Մարզվանի ամերիկյան միսիայի աշխատակից, հայ ավետարանական քահանա պրոֆ. Կ. Թումայանը երկու տարի առաջ Թուրքիայում հեղափոխական գործունեության մեղադրանքով մահվան էր դատապարտվել, սակայն իր քեռայրի՝ պաստոր Դոֆմանի (ժնկ) միջոցով կալանքից ազատվելով՝ երկրից արտաքսվել էր: Տե՛ս Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, էջ 5:

նախարարությունը Կ. Թումայանին արգելեց հրապարակային ելույթներ ունենալ, իսկ Լեփսիուսին սպառնաց զրկել հայանպաստ գործունեության իրավունքից:⁸⁷ Կարճ ժամանակ անց, սեպտեմբերի 24-ին Բեռլինում մի նոր հավաքույթ կազմակերպվեց, որտեղ, ըստ Լեփսիուսի և իր բարեկամների միջև նախապես կայացած պայմանավորվածության, Թումայանը չպետք է ելույթ ունենար, սակայն նրա զեկուցման տեքստը բազմացվելով պիտի բաժանվեր ներկաներին: Պայմանավորվածությանը նախապես տեղեկացած՝ միջոցառմանը ներկա գտնվող զաղտնի ոստիկանությունը այդ փաստն օգտագործեց հավաքույթը ցրելու և մի «ուժգին քաղաքական պտտահողմ» բարձրացնելու համար, որն այնուհետև հեշտությամբ չհանդարտվեց: Ժողովի աշխատանքներին Թումայանի ներգրավման պատասխանատվությունը բարդվեց Յ. Լեփսիուսի վրա, և նա հարկադրված էր գործ ունենալ ՆԳ և ԱԳ նախարարությունների հետ: Կարողանալով հիմնավորել իր Գերմանիայի քաղաքականության դեմ չգործելու, այլ միայն հայ տառապյալներին օգնություն ցուցաբերելու նպատակները, նա կարողացավ հարթել բարդությունները, թեպետ Թումայանն այնուհետև հարկադրված էր տեղափոխվել Անգլիա:⁸⁸

Լեփսիուսը հետագայում դառնությամբ էր հիշում այդ ծանր օրերը. «Չազվադեպ է բարեգործությունը հարկադրված եղել պայքարել այդքան մեծ դժվարությունների դեմ: Չնայած «ուսանելի» չէր, երբ Գերմանիայի բոլոր շրջաններում Չայաստանի օգնության նպատակով կազմակերպվող հավաքույթներն ամենուր ոստիկանության խիստ հսկողության տակ էին վերցվում, երբ արգելվում էր բարեկամ դաշինքի դեմ

87. Goltz H., Zwischen..., էջ 870:

88. Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, էջ 5: Այդ դեպքի շուրջ հարուցված աղմուկը եզրափակվեց պրուսական պառլամենտում: Պատգամավոր Արտլֆ Շթյոկերն այնտեղ 1897 թ-ի փետրվարի 11-ին ներկայացնելով միջադեպը և Թումայանի հանդեպ ցուցաբերված վարքագիծը համարելով անարդարացի՝ ՆԳ նախարար էբերհարդ ֆոն դեր Ռեկեից պահանջեց հարցի վերաբերյալ պարզաբանում տալ, և վերջինս Թումայանին պարտադրված արգելքի համար վկայակոչեց Բ. դաան հետ Գերմանիայի ունեցած բարեկամական փոխհարաբերությունները, որոնք իբրև թե տուժել էին Թումայանի ելույթների պատճառով: Sbn Thoumajan und die preussische Regierung, „Der Christliche Orient“, 1897, էջ 188-189:

ինչ-որ բան ասել, երբ հավաքույթները խոչընդոտվում կամ լուծարվում էին, իշխանությունների կողմից արգելվում էին հանգանակությունները սովահար ժողովրդի համար, և հանգանակողները ուստիկանական տույժեր էին ստանում, սակայն, ընդհանուր առմամբ, այդ արտառոց միջոցառումներն ունեցան հակառակ ազդեցությունը և հասարակայնության ուշադրությունը միայն ավելի ու ավելի բևեռեցին բարու իրավունքի վրա, հավանաբար տեղ-տեղ նաև ամոթի որոշ զգացողություն առաջացրեցին այն կապակցությամբ, որ Գերմանիայում բարեգործության ազատությունը դեռ պետք է պայքարով ձեռք բերվի»:⁸⁹

Բեռլինի ժողովն ունեցավ նաև այլ հետևանքներ: Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահը Լեփսիուսին տեղեկացրեց, որ ժողովի մասնակիցներից ոմանք դժգոհ էին ստեղծված քաղաքականացված մթնոլորտից, ուստի նպատակահարմար էին գտնում, որ Լեփսիուսը բաժանվեր Ֆրանկֆուրտի կոմիտեից: Հետևանքը եղավ այն, որ ՅՕԳՄ երկու Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտեները կազմակերպական առումով միմյանցից բաժանվեցին, և եթե հետագայում որոշ ժամանակ շարունակում էին համագործակցել, ապա որպես ինքնուրույն կազմակերպություններ: Լեփսիուսն այդ իրողությունը աշխատանքների արդյունավետության բարձրացման առումով դրականորեն էր արժևորում. «Երկու կոմիտեների՝ կողք-կողքի ինքնուրույն գործունեությունը նպատակային էր այն առումով,- նշում էր նա,- որ կրկնակի աշխատանքի միջոցով կարելի էր հասնել շահագրգռությունների շատ ավելի մեծ մասշտաբների և դրանք նպատակաուղղել Հայաստանի կարիքների բավարարմանը: Այդպիսով ես հասել էի իմ մոտակա նպատակին»:⁹⁰

Լեփսիուսն, այնուամենայնիվ, իր հայանվեր աշխատանքների ընթացքում պետք է հակասությունների մեջ մտներ ոչ միայն պետական, այլև եկեղեցական իշխանությունների հետ: Դրա առաջին փաստն առարկայացավ 1896 թ-ի աշնանը, երբ Մագդեբուրգի վերադաս եկեղեցական իշխանությունը, իսկ այնուհետև նաև Բեռլինի ավագ եկեղեցական խորհուրդը մերժեցին նրա խնդրանքը՝ զեկուցումների համար շրջագայություններ կատարելու նպատակով իրեն վեցամսյա արձա-

89. Sbt'u Das Deutsche Hilfswerk für Armenien, անդ, էջ 328:

90. Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, էջ 6:

կուրդ հատկացնելու վերաբերյալ: Նա այլ հետևություն չկատարեց դրանից, բայց եթե հրաժարվել քահանայական ծառայությունից, բնականաբար նա աշխատավարձից, և իր գործունեությամբ անարգել զբաղվելու համար հոկտեմբերին տեղափոխվեց Բեռլին:⁹¹

Ինչևէ, ՉՕԳՄ-ի՝ առաջին կիսամյակի աշխատանքների ամփոփումը կատարվեց 1897 թ. հունվարի 13-14-ին Բրեմենում կայացած չորրորդ համաժողովում,⁹² որտեղ Բեռլինի և Ֆրանկֆուրտի կոմիտեների գործունեության վերաբերյալ Յոհ. Լեփսիուսի և Է. Լոհմանի զեկուցումներից և մի շարք հարցերի շուրջ կայացած քննարկումներից հետո կանոնակարգվեցին և վավերացվեցին նաև օգնության աշխատանքների կազմակերպման հետևյալ հիմնական սկզբունքները.

«1. Եթե մենք կամենում ենք արդյունավետ պայքարել Հայաստանում տիրող քաղցի և զրկանքների դեմ, նախ պետք է պահանջենք, որ վերջապես դադարեն հայերի հանդեպ կիրառվող հալածանքները, և այն գավառներում, որտեղ տեղի են ունեցել կոտորածներ, ստեղծվի խաղաղ իրադրություն: Եթե մենք այդ հարցում արդյունքի չհասնենք, մեր աշխատանքը կդառնա դանախան աշխատանք:

2. Մեր գործունեության ընթացքում պետք է առաջնորդվենք այն սկզբունքով, որ աշխատունակ և աշխատասեր, սակայն այսօր ընկճված հայ ժողովրդին ընծեռենք ինքնօգնության հնարավորություններ:

3. Հետևապես, մեր ջանքերը սկզբունքորեն պետք է նպատակաուղղված լինեն ոչ թե առանձին տառապյալների, այսինքն՝ առանձին որբերի վիճակը բարելավելուն, այլ պետք է օգնության ծեռք մեկնել ողջ ժողովրդին: Ջրկանքների դեմ պետք է պայքար ծավալել հենց այն շրջաններում, որտեղ դրանք կան, որպեսզի հին քրիստոնյա ժողովուրդը պահպանվի իր բնօրրանում:

4. Քաղցածներին և անօթևաններին սննդամթերքի, հագուստի և ան-

91. Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit von Dr. Johannes Lepsius“, 1918, էջ 82: Հմնտ. Deutschland, Armenien und die Türkei, 1895-1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv, München, 1998, էջ XII:

92. Բացի Ֆրանկֆուրտի և Բեռլինի կոմիտեներից, ժողովին մասնակցում էին նաև Հայաստանի շվեյցարացի բարեկամներն ու Կայզերվերթի, Բիլեֆելդի, Վեստֆալիայի, Հեսենի և այլ ենթակոմիտեների ներկայացուցիչներ: St'u Lepsius J., Mitteilungen des deutschen Hilfsbundes zur Linderung des Notstandes in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 91:

կողմնների բաժանումից բացի անհրաժեշտ է պատուհասված շրջաններում մարդկանց օգնել վերակառուցել իրենց տները, սերմացու և գործիքներ տրամադրել աշխատելու և եկամուտ ստանալու համար: Օգնությունը պետք է իրականանա և վերահսկվի եվրոպացիների կողմից:

5. Գերմանական օգնության միությունը ընտրում է հետևյալ ճանապարհը. մի քանի կենտրոնակայաններ, որտեղ արդեն որբեր են ընդունվել, պետք է զբաղեցնել գերմանական աշխատուժով և վերոնշյալ ակտիվ աշխատանքը նրա միջոցով իրականացնել շրջակա բնակավայրերում:

6. Քանի որ Թուրքիայի սահմանամերձ երկրներում ևս փախստականները գտնվում են ծայրահեղ կարիքի և թշվառության մեջ, հետևաբար նրանց ևս պետք է ցուցաբերել օժանդակություն:

7. Օգնությունը պետք է ցուցաբերվի արագ»:⁹³

Ինչպես համաժողովում արձանագրվեց, Բեռլինի կոմիտեն կես տարում կարողացել էր հայթայթել 239 000,⁹⁴ իսկ ֆրանկֆուրտինը՝ 219 000 մարկ: Ամբողջ՝ ներառյալ նաև ենթակոմիտեների կողմից հավաքված գումարը կազմում էր 631 000 մարկ, որն օգտագործվել էր բացառապես որբերի խնամքի և հայության կարիքների թեթևացման նպատակով:⁹⁵ Օգնությունն իրականացվում էր այդ շրջանում թերևս ամենահուսալի եղանակներից մեկով. դրամն ուղարկվում էր Կ. Պոլսում գտնվող Միջազգային օգնության կոմիտեին. որի պատվավոր նախագահն, ի դեպ, Անգլիայի դեսպանն էր, և այնուհետև վերջինիս կողմից Թուրքիայում ապրող վստահելի եվրոպացիների միջոցով առաքվում որբանոցներին:⁹⁶

Համաժողովն այնուամենայնիվ, հաշվի առնելով հայ ժողովրդի ծայրահեղ զրկալից դրությունը, հեռու էր նշված ցուցանիշները բավարար համարելուց. «Եթե խնդիրը վերաբերում է կես միլիոն մարդկանց զրկանքների վերացման և մի քանի հարյուր հազար այրիների

93. Անդ, էջ 92: Բեռլինի և Ֆրանկֆուրտի կոմիտեներն իրենց հետագա գործունեության ողջ ժամանակամիջոցում հավատարիմ մնացին այդ սկզբունքներին:

94. Բեռլինի կոմիտեն այդ գումարից 5000-ական մարկ հատկացրել էր Կալբերվերթի օգնության կոմիտեին և Երուսաղեմի միությանը՝ իրենց աշխատանքի հիմնադրման համար: Անդ, էջ 91:

95. Անդ:

96. Feigel U., Das evangelische..., էջ 79:

ու որբերի գոյատևման հարցին,- նշում էր այդ առթիվ Յոհ. Լեփսիուսը,- և եթե, օրինակ, միայն փոքրիկ Շվեյցարիան հավաքել է 600 000 ֆրանկ, մենք չենք կարող գոհ լինել Գերմանիայում կատարված դրամահավաքության արդյունքից»:⁹⁷

Աշխատանքների արդյունավետ կազմակերպման և, ըստ առկա տեղեկությունների, շուրջ 30 000-ի հասնող ծնողազուրկ և միանգամայն անօթևան երեխաներին հնարավորին չափ համամասնական օգնություն ցուցաբերելու նպատակով վճռվեց կատարել նաև աշխատանքային գոտիների բաժանում: Եթե անգլիացիներն ու ամերիկացիները աջակցություն էին ցուցաբերում էրզրումի, Բիթլիսի, Վանի և հարակից շրջանների տուժածներին, իսկ Սվասի վիլայեթը սպասարկվում էր շվեյցարական կոմիտեների կողմից, ապա Բեռլինի կոմիտեն ստանձնեց թուրք-պարսկական սահմանային շրջաններում և

97. Lepsius J., Mitteilungen des deutschen Hilfsbundes zur Linderung des Notsandes in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 91: Շվեյցարիայի հասարակայնությունը «Gazette de Lausanne», «Journal de Geneve» պարբերականների և մի շարք այլ քրիստոնեական լրատվամիջոցների միջոցով դեռ 1895 թ-ի աշնանը տեղեկացվեց համիդյան կոտորածների և դրանց հետևանքով Հայաստանում ստեղծված իրադրության վերաբերյալ, որի արդյունքում ի հայտ եկան հայ ժողովրդին օգնություն ցուցաբերելու՝ քազմաթիվ նախաձեռնություններ: 1896 թ-ի սկզբին Բեռնի ավետարանական ընկերության «Brosamen» օրաթերթի աշխատակիցների ուժերով ստեղծվեց առաջին օգնության կոմիտեն, որը ձեռնամուխ եղավ հանգանակությունների կազմակերպմանը: Շուտով օգնության կազմակերպման առավել ընդգրկուն նախաձեռնություն ի հայտ եկավ՝ Նոյեմբուրգում, որտեղ մի շարք եկեղեցական այրերի, մասնավորապես քահանա Էդուարդ Ռոսելեթի ջանքերով այդ քաղաքի եկեղեցական համաժողովում կազմավորվեց Հայ ժողովրդի օգնության մի կոմիտե պրոֆ. Գեորգ Գոդթեի նախագահությամբ: Կոմիտեն օգնության կոչերի և հանգանակությունների հետ մեկտեղ օրաթերթերի և առանձին բրոշյուրների տարածման միջոցով ձեռնամուխ եղավ նաև հայ ժողովրդի ողբերգությունների վերաբերյալ հասարակայնության իրազեկումն ըստ հնարավորին ընդլայնելու գործին, ինչը շուտով լավագույնս արդյունավորվեց, և արդեն 1896 թ-ի վերջին վերոնշյալ ընկերություններից զատ օգնության կոմիտեներ էին ստեղծվել նաև Ժնևում, Լոզանում, Ֆրայբուրգում, Բազելում, Ցյուրիխում և Արևելյան Շվեյցարիայում: Վանում 1896 թ-ի հուլիսի 14-22-ին, և Կ. Պոլսում օգոստոսի 25-28-ին տեղի ունեցած նոր կոտորածները Շվեյցարիայում դարձյալ և էլ ավելի ուժգին բորբոքեցին հասարակական կրթերը, որի արդյունքում ծայր առան բողոքի բազմաթիվ պոռթկումներ: Դրանցից ամենանշանակալիցը 1896 թ-ի սեպտեմբերի 7-ին Լոզանում, «Hotel de Ville»-ում այդ քաղաքի համալսարանի ձեկ-

տոր, աստվածաբանության պրոֆ. Ե. Կոմբեի նախագահությամբ տեղի ունեցած ժողովն էր, որտեղ, ի դեպ, ի թիվս այլոց առանձնապես վարակիչ ելույթներով աչքի ընկավ «Gazette de Lausanne»-ի խմբագիր, Յոհ. Լեփսիուսի «Ղայաստանը և Եվրոպան...» գրքի թարգմանիչ (ֆրանսերենով), ճանաչված լրագրող Ալբերտ Բոննարդը, և որը ոչ միայն շվեյցարական մամուլում, այլև եվրոպական բազմաթիվ այլ հեղինակավոր օրաթերթերում մեծ արձագանք և մանրագնին լուսաբանում ստացավ: Ժողովում ձևավորվեց Եվեյցարիայի բոլոր կուսակցությունները և դավանամքները ներկայացնող՝ 40 անձից բաղկացած մի կոմիտե, որի առաջադրանքը պետք է լիներ ողջ շվեյցարական ժողովրդին հայկական կոտորածների դեմ զանգվածային բողոքի մղել և Բունդեսռաթին գրավոր միջնորդություն ներկայացնել շվեյցարացի ժողովրդի բողոքն ու կամքը եվրոպական մեծ տերություններին ներկայացնելու համար: Այդ համաժողովի առավել կարևոր արդյունքներից մեկը հանդիսացավ տեղական օգնության կոմիտեների պատգամավորների՝ 1896 թ-ի սեպտեմբերի 15-ին Բեռնում տեղի ունեցած համաժողովը, որտեղ դարձյալ պրոֆ. Գ. Գոդեթի նախագահությամբ ստեղծվեց «Ղայաստանի օգնության շվեյցարական կոմիտեների համաժողով» ընկերությունը, ինչը հնարավորություն ընձեռեց միասնացնել զանազան ընկերությունների գործունեությունը: Եվս 3 օր անց, սեպտեմբերի 18-ին, սկսվեց զանգվածային ստորագրահավաք հայկական կոտորածների հանդեպ շվեյցարական ժողովրդի բողոքը Բունդեսռաթին ներկայացնելու համար: Արժե անշուշտ հիշատակել, որ հետագա ամիսներին ընկերությունը հավաքեց ընդհանուր թվով 433080 ստորագրություններ, որոնք 1897 թ-ի մարտի 4-ին մի ընդարձակ պատվիրակության միջոցով ներկայացվեցին երկրի դաշնային նախագահ դո. Դոյխերին: Վերջինս իր մարտի 9-ի պատասխանում դրվատանքով արտահայտվելով հայ ժողովրդին օգնության ցուցաբերման շվեյցարացի ժողովրդի վճռականության մասին և հույս հայտնելով, որ բողոքի այդ զանգվածային ցույցն իր արդյունքն ու արժեքը կստանա նաև երկրի սահմաններից դուրս, այնուհանդերձ արձանագրում էր, որ չեզոք երկրի կարգավիճակը Եվեյցարիային թույլ չէր տալիս միջամտել օտար պետությունների գործերին: Չնայած, այսպիսով, ստորագրահավաքն իր բաղձալի արդյունքը չտվեց, այնուամենայնիվ այն մեծ և անուրանալի նշանակություն ունեցավ օգնության աշխատանքների կազմակերպման հարցում հասարակայնության մասնակցությունն ընդլայնելու հարցում: «Ղամաժողովը» սեպտեմբերի 29-ին կայացած՝ իր առաջին նիստում վճռեց նաև սոսկական դրամական առաքումների փոխարեն Ղայաստանում ձեռնամուխ լինել որբախնամ և այլ օգնության աշխատանքների նպատակային կազմակերպմանը, որոնք հետագայում ծավալվեցին Սվասում և այլ վայրերում: Ինչևէ, հայ ժողովրդին ցուցաբերվող շվեյցարացի բարեկամների օգնության աշխատանքները, որոնցում ներգրավվեցին Լեոպոլդ Ֆավլոը, Թեոդոր Վիգերը, Դիլդե Վիթցեմանը, Կարլ Մեյերը և բազում այլ երախտավոր գործիչներ, և որոնք, ըստ իրադրության, կազմակերպական, ծավալային և այլ փոփոխություններով անընդմեջ շարունակվեցին նաև հետագա տասնամյակներին, ինչպես շուտով կտեսնենք, զգալիորեն արդյունավորվեցին նաև դր. Յոհ. Լեփսիուսի և նրա ընկերության հետ սերտ համագործակցությամբ: Եվեյցարացի բարեկամների հայանվեր ձեռնարկումների մասին առավել հանգամանալից իրազեկում ունենալու համար տե՛ս Mejer K., Armenien und die Schweiz, Bern, 1974:

Բուլղարիայում կուտակված փախստականների և որբերի խնամքը, իսկ Ֆրանկֆուրտի կոմիտեն որոշեց իր գործունեությունը կենտրոնացնել Խարբերդի (Խարպութ) շրջանում:⁹⁸ Մնացած տարածքներում օգնության աշխատանքները պետք է իրականացնեին հայերի մյուս՝ ոչ գերմանացի բարեկամները:

Հասարակական շրջանների աջակցության ընդլայնման և համապատասխանաբար աշխատանքների հրապարակային լուսաբանման համար Լեփսիուսը բնականաբար կարիք ուներ սեփական լրատվական միջոցների: Ուստի նա 1897 թ-ի սկզբին Բեռլինում հիմնեց «*Der Christliche Orient*» ամսագիրը, որի միջոցով տեղեկություններ էին հաղորդվում օգնության աշխատանքների ընթացքի մասին, հրապարակվում էին քաղաքական վավերագրեր, ականատեսների վկայություններ 1895-96 թթ. կոտորածների վերաբերյալ, հաշվետվություններ և այլ բազմաժանր նյութեր Հայաստանում և հարևան երկրներում տեղի ունեցող նորագույն իրադարձությունների, հայոց պատմության, եկեղեցու, մշակույթի, Հայկական հարցի և այլ թեմաների վերաբերյալ:⁹⁹ Պարբերականի էջերում հանդես էին գալիս նաև Բեռլինի կոմիտեի՝ դրսում գտնվող աշխատակիցները՝ ամբողջացնելով օգնության աշխատանքների և Հայաստանում կատարվող իրադարձությունների լուսաբանումը:

Զնայած Լեփսիուսն իր առաջնահերթ և կարևորագույն անելիքը համարում էր հայ ժողովրդի օգնության գործը, որին և նվիրվեց անընացորդ կերպով, այնուամենայնիվ մահնեղական շրջաններում քրիստոնեական քարոզչության կազմակերպման սկզբնական ծրագիրը (որի նպատակով նա հիմնադրել էր ԳԱԱ-ն) շարունակում էր մնալ նրա շահագրգռությունների կիզակետում: Ուստի, ինքնին հասկանալի է, որ պարբերականում որոշակի տեղ էին զբաղեցնում նաև

98. Անդ:

99. SIn Das Blutbad von Arabkir, „Der Christliche Orient“ 1897, էջ 6-17; J. Rendel Harris und Helen B. Harris, Briefe vom Schauplatz der letzten Massacres in Armenien, անդ, էջ 302-312; Nachrichten über das Hilfswerk an den Notleidenden in Armenien, անդ, էջ 47-51; Fischer H., Das Kloster hl. Thaddäus, անդ, էջ 510-513; Die französischen Gelbbücher und die Zustände in der Türkei 1893-197, անդ, էջ 251-261; Armenisches Lied, անդ, էջ 384-385; Diplomatische Aktenstücke zur armenischen Frage, անդ, էջ 66-73; Die armenische Frage in den letzten 20 Jahren, անդ, էջ 481-505 և այլն:

այդ ոլորտին առնչվող հրապարակումները:¹⁰⁰

«*Der Christliche Orient*»-ը, սակայն, իր հրատարակության մեկ տարվա ընթացքում սպասված չափով հանրամատչելի չդարձավ, ուրի հիմնական պատճառը թերևս պատմագիտական նյութերի և քաղաքական փաստաթղթերի չափազանց մեծ ծավալն էր:¹⁰¹ Ուստի այդ պարբերականի փոխարեն Լեփսիուսը 1898 թ-ի սկզբին հիմնեց մի նոր պատկերազարդ ամսագիր «*Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes*» վերնագրով, որը նվիրվեց բացառապես օգնության աշխատանքների պրոպագանդանը: Իսկ ինչ վերաբերվում էր կրոնական և «մահմեդական միսիայի» խնդիրներին, ապա դրանց լուսաբանման նպատակով հիմնվեց մեկ այլ ամսագիր ևս՝ «*Das Reich Christi*»-ն: Ընդ որում, չնայած առաջին պարբերականը համարվում էր երկրորդի հավելվածը, սակայն տպագրվում էր անհամեմատ ավելի մեծ տպաքանակով և թե որպես հավելված, թե առանձին տարածվում հասարակայնության մեջ:¹⁰²

«*Das Reich Christi*»-ն աստվածաբանության և մահմեդական միսիայի թեմատիկայի առանձնացմամբ հնարավորություն ընձեռեց ընդլայնել օգնության աշխատանքների քարոզչության ծավալը և երկու պարբերականները առավելագույնս համապատասխանեցնել իրենց ընթերցողների պահանջներին: Նրանք ունեին իրենց որոշակի առաջադրանքները, որոնք իրար ոչ միայն չէին հակասում, այլև, ընդհակառակը, կոչված էին փոխադարձաբար համալրելու միմյանց: «*Das Reich Christi*»-ն, - նշում էր այդ առթիվ Յոհ. Լեփսիուսը,- աստվածաբանության, մահմեդականների ավետարանականացման և միսիայի բնագավառներից կրնդգրկի հարցերի մի որոշակի ոլորտ և միա-

100. St'ü Zeller, *Der Islam in seinem Verhältnis zum Christentum*, „*Der Christliche Orient*“, 1897, էջ 108-120, 155-172, 212-222; Pastor von Bergmann, *Die Gefahren der Mohammedaner-Mission*, անդ, էջ 57-60 և այլն:

101. Համենայն դեպս, այդ տեսակետն էր արտահայտում Շեֆերը՝ նշելով, որ քաղաքական փաստաթղթերի առատությունը խոչընդոտում էր քարոզչության ընդլայնումը «ժողովրդի պարզ, անձնագրի շրջաններում»: St'ü Schäfer R., *Geschichte...*, էջ 18:

102. Schäfer R., *Geschichte...*, էջ 18: „*Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes*“ ամսագրի տպաքանակն, ի դեպ, հասնում էր մոտ 6000-ի: St'ü Zeller, *Dringende Bitte um Gaben zu dem Bau unseres Waisenhauses in Choi*, „*Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes*“, 1899, էջ 107:

Ժամանակ կշարունակի հետամուտ լինել «*Der Christliche Orient*»-ում մինչ այժմ ներկայացված առանձնահատուկ նպատակներին»:¹⁰³

Ինչևէ. ՅՕԳՄ-ի գործունեության առաջին 12 ամիսները ցույց տվեցին, որ ներդրումների և կատարված աշխատանքների ծավալի առումով առաջնությունը պատկանում էր Բեռլինի կոմիտեին, որը նշված ժամանակահատվածում ունեցել էր 390 000 մարկի դրամական եկամուտ, այն դեպքում, երբ Ֆրանկֆուրտի կոմիտեի հասույթները կազմում էին 360 000 մարկ, իսկ մյուս կոմիտեները նրանց շատ էին գիջում:¹⁰⁴ Միաժամանակ նույն ժամանակահատվածում գերմանական որբանոցներում հավաքագրված ընդհանուր թվով 1350 որբերի կեսից ավելին՝ շուրջ 700-ը, խնամվում էր Բեռլինի կոմիտեի կողմից:¹⁰⁵ Վերջինիս եկամուտների գոհացուցիչ ցուցանիշներ արձանագրվեցին նաև հաջորդ տարիներին: Եթե 1896 թ-ին դրանք կազմում էին 133 859, 69 մարկ, ապա 1897 թ-ին գանձարկը հոսեց 305 206, 97, 1898 թ-ին 181 213, 89, իսկ 1899 թ-ին 213 351, 40 մարկ:¹⁰⁶

Իսկ ինչ վերաբերում էր որբանոցներում գտնվող երեխաների թվային հարաբերակցությանը, ապա 1900 թ-ի հունվարի տվյալներով Ուռհայի որբանոցում խնամվում էին 300, Դիարբեքիում 120, Խոյում 120, իսկ Ռուսչուկում 20 հայ որբեր: Ազգությամբ ասորի ևս 100 երեխաներ գտնվում էին Ուրմիայի որբանոցում:¹⁰⁷

Յուրաքանչյուր երեխայի խնամքի համար տարեկան ծախսվում էր 100 մարկ, որ հաստատագրվել էր հաշվի առնելով ամերիկյան որբանոցների փորձառությունը:¹⁰⁸ Այդ գումարները հայթայթվում էին կոլեկտիվ հանգանակությունների կամ առանձին անհատների վճարումների հիման վրա, որոնք այնուհետև համարվում էին իրենց հովանավորյալների «հոգեծնողները»: Գերմանացի բարեգործների շրջանում կային այնպիսիները, որոնք տասնամյակներ շարունակ անխզելիորեն կատարում էին իրենց վճարման հանձնառությունը:¹⁰⁹

103. Տե՛ս „*Der Christliche Orient*“, 1897, գլխաշապիկը:

104. Տե՛ս *Das Deutsche Hilfswerk für Armenien*, „*Der Christliche Orient*“, 1897, էջ 328:

105. Schäfer R., *Geschichte...*, էջ 21:

106. Տե՛ս *Revisionsbericht*, „*Der Christliche Orient*“, 1908, էջ 87:

107. Schäfer R., *Geschichte...*, էջ 29:

108. Lepsius J., *An die Pflegeeltern unserer Kinder*, „*Der Christliche Orient*“, 1900, էջ 59:

109. Schäfer R., *Geschichte...*, էջ 21:

Ընկերության պարբերական մամուլը բարեկամներին կանոնավոր կերպով տեղեկություններ էր հաղորդում մասնաճյուղերի գործունեության և երեխաների վերաբերյալ՝ հրատարակելով նաև լուսանկարներ: Մեծ նշանակություն էր տրվում նաև առանձին բարեկամների և նրանց կողմից խնամվող երեխաների ուղղակի կապերի զարգացմանը. որ տեղի էր ունենում հիմնականում փոստային հաղորդակցության միջոցով: Պարբերականների էջերում մեծ տեղ էր հատկացվում նման թղթակցությունների հրապարակմանը, որոնք որք և միայնակ երեխաների համար հոգեբանական ամրակայման, իսկ նրանց «հոգեծնողների» համար բարոյական վարձատրման յուրօրինակ միջոց էին հանդիսանում: Նման նամակները բնականաբար ծառայում էին նաև որպես լրացուցիչ տեղեկատվական աղբյուր որբանոցի առօրյայի և հիմնախնդիրների վերաբերյալ՝ նպաստելով բարեկամների շրջանի ընդլայնմանը:¹¹⁰ Այդ առումով մեծ արդյունք էին տալիս նաև ընկերության աշխատակիցների հանդիպումները եկեղեցական համայնքների հետ, որոնց ընթացքում ընթերցվում էին զեկուցումներ, և տարվում էր լայն բացատրական աշխատանք: Արժե նշել նաև, որ բոլոր նվիրատվությունները, որոնք ԳԱԱ-ն ստանում էր, անմիջապես ցուցակավորվում և պարբերականներում հրապարակվում էին, այնպես որ յուրաքանչյուր նվիրատու կարող էր հավաստիանալ, որ իր առաքումը ծառայելու էր իր նպատակին:

Յոհ. Լեփսիուսի և նրա գործընկերների ծավալուն հրապարակախոսական աշխատանքը հասարակական կարծիքի ձևավորման առումով նշանակալից պտուղներ էր տալիս, ինչը վկայում էին նաև վերոնշյալ մուտքագրված գումարները, և, ինչպես Լեփսուսն էր 1899 թ-ի մարտին ընդգծում, Գերմանիայում հասարակական տրամադրությունները բավականաչափ փոխվել էին հոգուտ Յայաստանի: «Եթե մեր գործունեության առաջին տարում, - նշում էր նա, - հասարակական շահագրգռությունները պետք է նվաճվեին, ապա ներկայումս առնվազն վերացել է այն տեսակետը, թե Արևելքը մեզ չի վերաբերվում»:¹¹¹

110. St'u Unsere Waisen, „Der Christliche Orient“, 1903, էջ 30-31: Ինչպես շուտով կ'լուսաբանվի, ընկերության գրասենյակում մի առանձին բաժանմունք զբաղվում էր այդ թղթակցությունների կազմակերպմամբ:

111. St'u Konferenz des Hilfsbundes für Armenien am 14. März 1899, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 43:

Ասվածն ավելի հստակ կարծևորվի, եթե նկատի առնենք, թե որպիսի աննպաստ քաղաքական իրադրությունում էր զարգանում Լեփսիուսի և նրա բարեկամների հայանվեր գործունեությունը. իրադրություն, որ հատկանշվում էր Թուրքիայում տնտեսաքաղաքական ազդեցության ընդլայնման Գերմանիայի կառավարող շրջանների նկրտումների ակտիվացմամբ և համապատասխանաբար նաև այդ երկրի հետ բարեկամական հարաբերությունների ամրապնդման աննախադեպ բարձր տեմպերով:

Վիլիելմ II կայսեր՝ 1898 թ-ի հոկտեմբերին և նոյեմբերին կատարած ճանապարհորդությունը դեպի Կ. Պոլիս, Պաղեստին և Դամասկոս և Դամասկոսում նրա ունեցած ելույթը, որտեղ նա դրվատանքով էր խոսում սուլթանի հետ իր բարեկամության մասին ու իր հովանավորությունը խոստանում աշխարհի 300 միլիոն մահմեդականներին,¹¹² բնութագրում էին այն մեծ կարևորությունը, որ նա տալիս էր Թուրքիայի հետ իր երկրի հարաբերությունների զարգացմանը: Նրա ելույթը Գերմանիայի հասարակական շրջաններում առաջ բերեց կրքերի երկակի շիկացում. և եթե հայերի բարեկամներն այն դժգոհությամբ ու ցատկոտ ընդունեցին, ապա քրիստոնեական բարոյականությունը պետական շահերին ստորադասող շրջանները, ինչպես և զանգվածային լրատվության միջոցների ճնշող մեծամասնությունը հանդես էին գալիս Գերմանիայի արտաքին քաղաքականության պաշտպանության ելակետից:¹¹³ «Լրջմիտ քրիստոնյաների շրջանում այդ բարեկամությունն անկասկած միշտ անըմբռնելի մնացնշում էր այդ առթիվ Ռ. Շեֆերը.- մինչդեռ այն քաղաքականապես և տնտեսապես շահագրգռված շրջաններում փառաբանվում էր»:¹¹⁴

Նման իրադրությունը Լեփսիուսից և նրա գործընկերներից պահանջում էր օգնության գործը շարունակելու և հայ ժողովրդի բարեկամների շրջանն ընդարձակելու համար ոչ միայն լայն տեղեկատվական գործու-

112. Mirbach E. F., Die Reise des Kaisers und der Kaiserin nach Palästina, Berlin, 1899, էջ 407:

113. Feigel U., Das evangelische..., էջ 84-85:

114. Schäfer R., Geschichte..., էջ 23: Այդ հարցում, ի դեպ, շատ ավելի միանշանակ էր եղել Շվեյցարիայի երկրամասային եկեղեցիների դիրքորոշումը, որոնք հայկական կոտորածների պատճառով հրաժարվել էին իրենց ներկայացուցիչներին ուղարկել կայսերը ուղեկցելու համար և բավարարվել էին՝ առաքելով միայն մի գրավոր ուղերձ: Sbv Feigel U., Das evangelische..., էջ 85:

Նեուբյուն ծավալել, այլև պայքար մղել քաղաքական շահերով առաջնորդվող ապակողմնորոշիչ լրատվության դեմ և կոմիտեի գործունեությունը պաշտպանել հրապարակային հարծակումներից: Այդ առումով թերևս արժե հիշատակել քաղաքագետ և հրապարակախոս պաստոր Ֆրիդրիխ Նաումանի տեղեկագրերը,¹¹⁵ որոնք միտում էին վարկաբեկել հայ ժողովրդին, նույնիսկ արդարացնել 1895-96 թթ. կոտորածները և արժանի հակահարված ստացան Պ. Ռոիրբախի, Շթյուկերի և այլոց կողմից:¹¹⁶

Հայաստանի օգնության գերմանական միության դեմ կատարվող հարծակումների և հակահայկական քարոզչության առումով բնութագրական էր նաև «*Kölnische Zeitung*» լրագրի մի սենսացիոն տեղեկատվության պատճառով 1899 թ-ի գարնանն առաջացած բանավեճը: Վկայակոչելով կաթոլիկ քարոզիչների գործունեության դեմ Կ. Պոլսի հայոց պատրիարքի՝ Բ. Դռանն ուղղված բողոքագիրը (որի հիման վրա թուրքական կառավարությունը Բեբեկի որբանոցի տնօրենին մեղադրանք էր ներկայացրել)՝ թերթը քննադատում էր ՅՕԳՄ-ի գործունեությունը՝ նշելով, որ այն հարուցում է թուրքական կառավարության դժգոհությունը և վտանգում Գերմանիայի շահերն Արևելքում: Ըստ այդմ «*Kölnische Zeitung*»-ը պահանջում էր կասեցնել միության գործունեությունը, լուծարել որբանոցները և դեռևս չծախսված գումարներն օգտագործել Գերմանիայում բարեգործական նախաձեռնությունների համար:¹¹⁷

Լեփսիուսը հրապարակավ հանդես եկավ այդ հրապարակման դեմ՝ Միության Բեռլինի կենտրոնական կոմիտեի անունից սպառնիչ կերպով հերքելով հոդվածագրի դատողությունները: Հերքման մեջ, որը նախ տպագրվեց «*Reichsbote*»-ում, իսկ այնուհետև «*Aus der Arbeit des armenischen Hilfswerkes*» պարբերականի մայիսի համարում, մատնանշվում էր, որ նշված բողոքը ուղղված է եղել կաթոլիկ քարոզիչների դեմ, մինչդեռ ՅՕԳՄ-ը մշտապես վայելել էր ոչ միայն Թուրքիայի

115. Ֆ. Նաումանը կայսեր ճանապարհորդության ընթացքում ուղեկցել էր նրան և վերադարձից հետո իր կողմից հրատարակվող «*Hilfe*» ամսագրում տպագրեց իր ճանապարհորդական տեղեկագրերը: Անդ, էջ 87:

116. Անդ, էջ 89:

117. Sten Erklärung des Deutschen Hilfsbundes für Armenien, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 59:

քրիստոնյա և մահմեդական բնակչության, այլև կառավարության համակրանքը: Լեփսիուսն իր պատասխանում վերստին հիշեցում էր կատարում պրուսական Գերագույն սինոդի վերոնշյալ հռչակագրի մասին. որից մի հատված դարձյալ ներկայացվում էր ընթերցողի ուշադրությանը, իսկ այնուհետև, պարզաբանելով Յայաստանում տիրող իրադրությունը և Միության աշխատանքների հիմնական ուղղվածությունը. նա հիմնավորում էր դրանց կարևորությունը: «Մենք համոզված ենք,- նշում էր Լեփսիուսը,- որ մեր բարեսիրական գործունեության դեմ ուղղված հարձակումները մեր համակիրների մոտ հաջողություն չեն գտնի, և ողջ ավետարանական եկեղեցում Արևելքի քրիստոնյաների համար զարթոնքի կոչված շահագրգռությունները միայն կաշխուժանան և ավելի եռանդագին կծավալվեն...»:¹¹⁸

Լեփսիուսը 1899 թ-ի դեկտեմբերից ձեռնամուխ եղավ նաև մի շարք վարչակառուցվածքային փոփոխությունների. որոնք նա անհրաժեշտ էր համարում նոր մարտահրավերների պայմաններում աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար:¹¹⁹ Կազմակերպության գրասենյակը, որ մինչ այդ գտնվում էր իր բնակարանում,¹²⁰ նա տեղափոխեց արևմտյան Բեռլին (Լյուքսբուրգի 5)՝ դե-

118. Անդ, էջ 60-61:

119. Schäfer R., *Geschichte...*, էջ 28:

120. 1899 թ-ի ապրիլին Լեփսիուսի ընտանիքը և նաև կազմակերպության գրասենյակը (որը գտնվում էր Լեփսիուսի տանը) Վեսթմոնից տեղափոխվել էին Բեռլինի Լիխտեռֆելդ ամառանոցային արվարձանը: Տե՛ս անդ, էջ 26:

121. Անդ, էջ 29: Մինչ այդ ընկերության գործունեության սկզբնավորման և ընդլայնման հետ կապված՝ թղթակցական, կազմակերպական և մյուս բոլոր մեծածավալ գրասենյակային աշխատանքները կատարում էր հիմնականում Յոհ. Լեփսիուսի կինը՝ Մարգարետ Լեփսիուսը (ծնվ. 1867 թ-ի հուլիսի 29-ին Նազարեթում) որը ոչ միայն ամուսնու «աջ ձեռքն» էր, այլև նրա մեծ ոգեշնչողն ու անմնացորդ աջակիցը հայօգնության աշխատանքներում: Մ. Լեփսիուսի փխրուն առողջությունը, սակայն, երկար չդիմացավ այդ ծանրաբեռնվածությանը, որին զուամարվում էր նաև վեց մանկահաս երեխաների խնամքը, և ծանր հիվանդանալով տուրբերկույրոզով՝ նա 1898 թ-ի հոկտեմբերի 17-ին մահացավ: Տե՛ս Lepsius M. R., *Die Nachkommen...*, էջ 124: Երկու տարի անց՝ 1900 թ-ին Լեփսիուսն ամուսնացավ Ալիսե Բրոյնինգի հետ (ծնվ. 1871 թ-ի հոկտեմբերի 5-ին Շտուտգարթում), որից ունեցավ ևս վեց զավակ: Ա. Բրոյնինգի քույրն, ի դեպ, ամուսնացած էր Լեփսիուսի աներորդի՝ արդեն հիշատակված Ֆրիդրիխ Ցելերի հետ: Անդ, էջ 125-126:

կավարունը հանձնելով Ռ. Շեֆերին:¹²¹ Գրասենյակի որբերի բաժանմունքի ղեկավարությունը ստանձնեց իշխանուհի Էլիզաբեթ ֆոն դեր Գոյոբենը. որը զբաղվում էր գլխավորապես երեխաների և նրանց հոգեծնողների միջև թղթակցությունների փոխանակմամբ: Թողարկվեց և բազմացվեց նաև լուսանկարների մի ստվար շարք մասնաճյուղերում տարվող աշխատանքների վերաբերյալ. որը զգալիորեն ընդլայնեց քարոզչության զարգացման հնարավորությունները:¹²²

Միաժամանակ «*Aus der Arbeit des armenischen Hilfswerkes*» ամսագրի փոխարեն 1900 թ-ի հունվարից դարձյալ սկսեց կանոնավոր լույս տեսնել «*Der Christliche Orient*» պարբերականը, որն արդեն հավելված չէր, այլ ինքնուրույն ամսագիր և հրատարակվում էր ավելի մեծ ծավալով: Այդ փոփոխությունն, ինչպես տեղեկացնում էր Լեփսիուսը, պայմանավորված էր իր ընկերության հեռանկարային ծրագրերի բազմազանությամբ, որոնք չէին սահմանափակվում միայն օգնության աշխատանքներով: «Մեր միսիայի պարբերականի անվան առումով,- այդ առթիվ պարբերականի առաջին թողարկման առաջնորդողում նշում էր նա,- ես վերադարձել եմ 1897 թ-ին իմ կողմից հրատարակված «*Der Christliche Orient*» պարբերականին և այդպիսով նաև նրա միջոցով հետապնդվող նպատակներին. որոնք չեն սահմանափակվում միայն Հայաստանի օգնության աշխատանքով և պետք է իրականացնեն նաև գաղափարներ, որ մենք նախանշել ենք հայկական շարժումից առաջ ...»:¹²³

Լեփսիուսն, անշուշտ, նկատի ուներ իր սկզբնական մահմեդական շրջաններում ավետարանական քարոզչության զարգացման գաղափարը, որն արդեն Ա. Ամիրխանյանցի և Յ. Ավետարանյանի միջոցով սկզբնավորվել էր Բուլղարիայում. և որը նա հույս ուներ երբևէ դարձնել իր գործունեության հիմնական ուղորտներից մեկը: Քանի որ, սակայն, ժամանակի և իրադրության թելադրանքով օգնության աշխատանքները հետագայում ևս շարունակեցին առաջնային մնալ, ուստի նոր պարբերականը բովանդակային առումով նույնությամբ փոխարինում էր նախորդին, սակայն ավելի մեծ ծավալով և արդեն ոչ թե որպես հավելված, այլ որպես անկախ պարբերական:

122. Schäfer R., Geschichte..., էջ 30:

123. Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, էջ 3:

1900 թ-ի մայիսի 11-ին ՅՕԳՄ-ի Բեռլինի կոմիտեի վարչության նիստում վճռվեց նաև կազմակերպությանը (որը մինչ այդ համարվում էր բարեգործական ընկերություն) միսիոներական ընկերության բնույթ հաղորդել՝ այն վերանվանելով «Գերմանական առաքելություն Արևելքում», իսկ նախկին «Չայաստանի օգնություն» անվանումը դարձնել ենթանուն:¹²⁴ Որոշումը, ինչպես նշվում էր ընկերության տեղեկություններում, աշխատանքային ոլորտում որևէ փոփոխություն չէր նախատեսում, այլ ընդամենը նպատակ ուներ ընկերության անվանումը համապատասխանեցնել նրա գործունեության բնույթին, որն օգնության աշխատանքներից բացի ընդգրկում էր նաև մահմեդական աշխարհի ավետարանականացման և հին քրիստոնյա եկեղեցիների հետ համագործակցության ոլորտները:¹²⁵ «Մեր առաջին պարտականությունը,- տեղեկացնում էր այդ առթիվ Լեփսիուսը,- մեր որբերի, մեր այրիների, մեր հիվանդների և մեր աղքատների համար սկսված գործը շարունակելն է... Սակայն դրանից զատ մենք պետք է կրթենք, ուսուցանենք, հետազոտենք, գրենք, տպագրենք, տարածենք, մեր դպրոցները բարելավենք, ուսուցիչներ, քարոզիչներ պատրաստենք, Աստվածաշունչը թարգմանենք, Արևելքի, իսլամի համար քրիստոնեական գրականություն ստեղծենք, մեր քրիստոնյաներին իրազեկում տանք այդ՝ այնքան մոտիկ և այնքան անծանոթ աշխարհի վերաբերյալ... և Արևելքին տանենք Արևմուտքի իմաստության և գիտելիքների հարուստ գանձերն ու բարիքները»:¹²⁶

Ընկերությունն այդպիսով վերականգնեց իր նախնական անվանումը և բաժանվելով ՅՕԳՄ-ից՝ դարձավ բացարձակապես ինքնուրույն: Նրա նախագահն, ինչպես նախկինում, շարունակում էր մնալ Ա. ֆոն Բեռնշտորֆը, տնօրենն ընտրվեց Յոհ. Լեփսիուսը, գործավար իշխանուհի է. ֆոն դեր Գրյոբենը, գանձապահ՝ վաճառական Կոզել-շաթցը, իսկ հաշվապահ Ռ. Շեֆերը: Ձևավորվեց նաև ընկերության վարչությունը, որի կազմում ընդգրկվեցին օր. Մարիա ֆոն Դյորինգը, պաստոր Իդելերը, պաստոր Թ. Յելինգհաուզը,¹²⁷ զինվորական ա-

124. Lepsius J., Deutsche Orient-Mission, անդ, էջ 81:

125. Անդ:

126. Անդ, էջ 83:

127. Պաստոր Յելինգհաուզը 1903 թ-ի սկզբից վարում էր նախագահի տեղակալի պարտականությունները: Տես „Der Christliche Orient“, 1903, գլխաշապիկը:

վագ քահանա Շտրաուսը, դր. Պ. Ռոհրբախը¹²⁸ պաստոր ֆրիդրիխ

128. Դր. Պատվ Ռոհրբախը (հայտնի հրապարակախոս, լրագրող և ճանապարհորդ) ծնվել է 1869 թ-ի հունիսի 29-ին Իրզեմում: 1887-88 թթ. նա Դորպատի համալսարանում ուսանել է պատմություն և աշխարհագրություն, այնուհետև իր ուսումը շարունակել աստվածաբանության բնագավառում և 1888 թ-ին Ստրասբուրգում հանձնելով ավարտական քննությունը՝ ստացել աստվածաբանի ակադեմիական կոչում: 1888 թ-ին նա դարձավ ավետարանական-սոցիալական կոնգրեսի գլխավոր քարտուղարը, 1891 թ-ին ստանձնեց նաև «Die Zeit» քաղաքական շաբաթաթերթի գլխավոր խմբագրի պարտականությունները և նույն տարում Բեռլինում պաշտպանելով իր դոկտորական ատենախոսությունը՝ ստացավ փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Դեռ ուսանողական տարիներին ծանոթ լինելով Կարապետ Տեր-Մկրտչյանի և այլ հայ հոգևորականների հետ՝ Ռոհրբախը նրանց միջոցով ճանաչել էր Հայաստանը և դարձել հայ-գերմանական կապերի ընդլայնման ջատագովներից մեկը: Հայ եկեղեցու բարենորոգչությանը նպաստելու նպատակով նա մի շարք այլ բարեկամների հետ դեռ 1894 թ-ին հիմնադրեց «Das notwendige Liebeswerk» կազմակերպությունը, որի միջոցով բազմաթիվ հայ հոգևորականներ ուսանեցին գերմանական համալսարաններում՝ հետազայում մեծ ներդրում ունենալով հայ եկեղեցու բարենորոգչության խմբում: Պ. Ռոհրբախը անձնական սերտ կապեր ուներ նաև Յոհ. Լեփսիուսի հետ, որն ի դեպ մկրտել էր նրա որդուն: Ռոհրբախը 1897-1902 թվականների և 1909 թ-ի ընթացքում ձեռնարկել է ընդհանուր թվով հինգ հետազոտական ճանապարհորդություն դեպի Հայաստան: Հրատարակել է, ի թիվս այլոց, «Թուրանից և Հայաստանից. հետազոտություններ Ռուսաստանի համաշխարհային քաղաքականության վերաբերյալ», «Ժնջի կարիք ունի հայ եկեղեցին», «Հայ եկեղեցու ներքին հիմնախնդիրները», «Հայկական բարենորոգչական ձգտումների արտաքին դժվարությունները», «Կովկասից Սիջերկրական ծով. հարսանելան և հետազոտական ճանապարհորդություն Հայաստանով», «Հայաստան» և Հայաստանի իրադրության լուսաբանմանը նվիրված բազմաթիվ այլ աշխատություններ: 1903 թ-ին Ռոհրբախը Գերմանիայում հայտնի դարձավ իր «Գերմանիան համաշխարհային ազգերի շարքում» գրքով: Նա իր ժամանակի մեծ ժողովրդականություն վայելող քաղաքական մեկնաբաններից էր և ի թիվս այլ աշխատությունների գրել է նաև «Գերմանական միտքը աշխարհում» և «Աշխարհի քաղաքական տեսություն» գրքերը: 1903-1906 թթ. նա նշանակվեց հարավային Աֆրիկայի գերմանական հատվածի՝ բնակեցման գործի կայսերական կոմիսար, իսկ 1914 թ-ին դարձավ ԱԳԽ-ի կառույցում ստեղծված՝ նորահիմն արտասահմանյան ծառայության կենտրոնի մասնի քարտուղարը՝ զուգահեռաբար ստանձնելով նաև «Das größere Deutschland» ամսագրի (հետագայում՝ «Deutsche Politik») հրատարակչի պարտականությունները: Strü Deutsche Biographische Enzyklopädie, Herausgegeben von Walther Killly und Rudolf Vierhaus, Bd. 8, München, 1999, էջ 371: Յմնտ. Hacik Rafi Gazer, Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhundert, Göttingen, 1996, էջ 29-30:

Ցելերը¹²⁹ և գրավաճառ Վարնեկը:¹³⁰

ԳԱԱ-ի հայանվեր առաքելությունը սկիզբ առավ և ծավալվեց համիդյան կոտորածներից արյունաքամ հայության ամենատարբեր հատվածներում: Նախքան, սակայն, այդ աշխատանքների լուսաբանմանն անցնելը, մենք կկամենայինք այստեղ անդրադառնալ այն հիմնական առանձնահատկությանը, որի շնորհիվ ընկերությունը Յայաստանում, ի տարբերություն բարեգործական աշխատանքներ վարող այլ կազմակերպությունների, մշտապես մեծ սեր և համարում էր վայելում. չնայած այն բանին, որ որոշ կազմակերպություններ, ինչպես օրինակ ՅՕԳՄ-ի ֆրանկֆուրտի կոմիտեն, ամերիկյան «American Board» ընկերությունը և այլն. ոչ պակաս ներդրումներ և համապատասխանաբար նաև բարեգործական աշխատանքներ են իրականացրել: Մյուս կազմակերպությունները, որպես կանոն, մարդասիրական աշխատանքներին զուգահեռ ձգտում էին հայ հոգևոր-մշակութային կյանքում ձեռք բերել որոշակի ազդեցության ոլորտներ, մասնավորապես թե որբանոցներում և թե բնակչության շրջանում վարում էին նաև ակտիվ քարոզչություն՝ ջանալով լուսավորչական համայնքների ներսում ձևավորել նոր՝ բողոքական կամ կաթոլիկ համայնքներ, ինչն առաքելական եկեղեցու և համայնքների կողմից սուր դիմադրության ու հակամարտությունների պատճառ էր դառնում: Մինչդեռ Լեփսիուսն ու ԳԱԱ-ն, ինչպես դիպուկ կերպով նշում էր Ռ. Շեֆերը, իրենց ելակետը համարում էին ոչ թե ավետարանի քարոզումը, այլ «ավետարանի պահանջների իրագործումը»:¹³¹

Քանի որ ընկերությունն իր նյութական միջոցների զգալի մասը

129. Ֆ. Ցելերը Լեփսիուսի աներորդին էր: Նա ծնվել է Նազարեթում և իր պատանեկությունն անցկացրել ավետյաց երկրում: Երկար տարիներ քահանա է աշխատել Բիզենտոնում՝ Ֆրիզդորֆի հարևան համայնքում, 6 տարի ղեկավարել է Մազդեբուրգի քաղաքային միսիան և 3 տարի Ցեխլենդորֆի ավետարանական դիակոնների միությունը: Տես Lepsius J., Friedrich Zeller, „Der Christliche Orient“, 1909, էջ 78-79:

130. Տես Die Generalversammlung der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1901, էջ 38: Վարնեկը վարչության կազմում մնաց մինչև 1903 թ-ը: Փոխարենը 1903 թ-ի սկզբին վարչության կազմում ընդգրկվեցին երեք նոր անձնավորություններ և՛ օր. Ա. ֆոն Մյուլլերը, պաստոր Սամուել Քելերը և պաստոր Քլայնը: Տես „Der Christliche Orient“, 1903, գլխաշապիկը:

131. Schäfer R., Geschichte..., էջ 27:

հայթայթում էր գերմանական բարեպաշտ շրջանների նվիրատվություններից, որոնք այդ խնդրի հանդեպ անտարբեր չէին կարող լինել, հակառակորդների կողմից ԳԱԱ-ի հանդեպ ոչ բարյացակամ հասարակական կարծիք ստեղծելու նպատակով նման «խայծի» օգտագործումը բացառելու և միաժամանակ քարոզիչների գործունեության վնասարար նշանակությունն ըստ հարկի պարզաբանելու նպատակով Լեփսիուսը հարկադրված էր պարբերաբար հետևողականորեն հիմնավորել քարոզչության հարցում իր որդեգրած սկզբունքները:¹³² Նախ քարոզիչների ծեռնարկումները ժամանակավրեպ էին և հակասում էին օրվա հրատապ պահանջներին: «Քաղցածներին,- ընդգծում էր Լեփսիուսը,- ցրտից սառած և թալանված մարդկանց, որբերին և այրիներին, որոնք անպաշտպան կերպով նման անմխիթար և անհույս թշվառության են մատնվել, պետք է նախ ոչ թե ավետարանը տալ, այլ հաց, հագուստ և աշխատանք»:¹³³ Մյուս կողմից, Արևելքում քարոզչության ավանդական և դոգմատիկ ըմբռնումները Լեփսիուսի համոզմամբ ինքնանպատակ էին և քննություն բռնել չեն կարող, քանի որ չէին նպաստում հավատի ամրապնդման կարևորագույն նպատակին:

132. Լեփսիուսն այդ հարցի վերաբերյալ իր տեսակետներն առաջին անգամ հետևողականորեն շարադրեց դեպի Պարսկաստան, Թուրքիա և Բուլղարիա կատարած իր Նոր ութամսյա (1899 թ-ի ապրիլ-դեկտեմբեր ամիսներին) ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, որ նա ձեռնարկել էր իր ընկերության մասնաճյուղերն այցելելու, ինչպես նաև այդ երկրներում գործող մյուս կազմակերպությունների աշխատանքներին հանգամանալից ծանոթանալու նպատակով: Մասնավորապես վերջինը նա խիստ անհրաժեշտ էր համարում, իր իսկ վկայությամբ, անհարկի նրցակցությունից խուսափելու և միաժամանակ ճգրտելու համար այն ուղորտները, որտեղ իր ընկերության գործունեությունը կարող էր առավելագույնս նպատակային լինել: Անդ: «Իմ պարտականությունն էր,- այդ առթիվ գրում էր նա,- նախ և առաջ ծանոթանալ այլ ընկերությունների աշխատանքին, որպեսզի մեր գործունեությունը չդառնա նեո մյուսների մարմնի վրա, այլ օրինություն մյուսների աշխատանքի համար: Տե՛ս Lepsius J., Reisebericht von Dr. Lepsius, „Aus der Arbeit des armenischen Hilfswerkes“, 1899, էջ 156: Ճանապարհորդության ընթացքում հասու դառնալով հայկական շրջաններում այլ կազմակերպությունների կողմից իրականացվող քարոզչական գործունեությանն ու դրա արատավոր հետևանքներին՝ վերադարձից հետո նա հանդես եկավ այդ գործելակերպի հրապարակային քննադատմամբ և հարցի վերաբերյալ իր դիրքորոշման մանրամասն և համակողմանի պարզաբանմամբ: Տե՛ս Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, էջ 6-8:

133. Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, էջ 4:

տակին: Նրանք անտեսում էին Արևելքի «ներքին զարգացման» և հոգևոր-եկեղեցական կյանքի աշխուժացման պահանջները, որոնք այլ և շատ ավելի համապարփակ էին, քան որևէ եկեղեցու տեսադրույթների մերկ քարոզչությունն էր: Քարոզիչները պետք է մշտապես հիշեն, նշում էր Լեփսիուսը, որ Աստծո կողմից Արևելք են ուղարկվել ոչ թե որպես «որևէ դավանանքի կամ եկեղեցու սուրհանդակներ», այլ հանձնարարություն ունենալով քրիստոնյա եղբայրներին իրենց դժվարին ժամին մխիթարել և նեցուկ դառնալ խոսքով ու գործով: Այդ խոսքն ազդեցիկ դարձնելու, այն է՝ Ավետարանն Արևելքում վերակենդանացնելու և քրիստոնյա եղբայրներին հավատ ու կորով ներշնչելու համար Լեփսիուսի համոզմամբ նախ անհրաժեշտ էր համագործակցության. փոխադարձ սիրո և վստահության պայմաններում վերակենդանացնել և ամրապնդել հին քրիստոնյա եկեղեցիները:¹³⁴ Մինչդեռ քարոզիչների գործելակերպն, ընդհակառակը, խզելով այդ եկեղեցիների հետ համագործակցության բոլոր եզրերը՝ պառակտում և ջլատում էր համայնքները: Հետևապես «Արևելքում կատարվելիք աշխատանքը,- ընդհանրացման կարգով նշում էր նա,- որին բոլոր մյուսներից առաջ կոչված է ավետարանական Գերմանիան, ո՛չ ավետարանականացման և ո՛չ էլ այդ իմաստով միսիոներական կարող է լինել: Այն պետք է լինի *հոգևոր* աշխատանք, որը հին եկեղեցիների կրթական և քրիստոնեական մակարդակը կբարձրացնի...: Միայն նա, ով պատմության մեջ Աստծո ճանապարհները չգիտի, կարող է հավատալ, թե անգլիական, ամերիկյան կամ գերմանական քրիստոնեության անգույն պատճենումը կարող է ինչ-որ ազդեցություն գործել Արևելքի ներքին զարգացման վրա»:¹³⁵

Լեփսիուսի համոզմամբ, դա փաստարկում էր նաև ամերիկացի միսիոներների օրինակը, որոնց ուժերով Ավետարանի քարոզչությունն արդեն հասել էր իր հնարավոր առավելագույն արդյունքին, և նոր քարոզչությունը կարող էր վերածվել միայն անօգուտ մրցակցության: Այն չափով, որչափ գերմանացի բողոքականներն առնչվում էին ամերիկյան քարոզիչների հետ, նրանց փոխհարաբերությունը պետք է կրեր համագործակցական բնույթ, առանձնապես այն բնագավառներում,

134. Անդ, էջ 7:

135. Անդ: Տեքստում կատարված ընդգծումը հեղինակիցն է:

որտեղ դրանք կաղում էին: Այդ բնագավառներից կարևորագույնը Լեփսիուսը համարում էր ամերիկյան կրթության համակարգը. որի մեթոդական դրվածքը, նրա համոզմամբ, խիստ թերի էր. քանի որ օտարացնում էր քրիստոնյաներին սեփական ազգային արժեքներից: ¹³⁶

Փաստորեն, նրբորեն բացառելով քարոզչության անհրաժեշտությունը, Լեփսիուսը միաժամանակ քննադատում էր այն բացասական հետևանքները, որ ուներ ամերիկյան քարոզիչների կրթահամակարգը՝ արևելյան քրիստոնյաներին օտարացնելով իրենց ազգային արժեքներից: Ուստի ԳԱԱ-ն և Արևելքում գործող ցանկացած այլ ընկերություն. ընդգծում էր նա. իր առաջին պարտականությունը համարելով նյութական օգնության կազմակերպումը. միաժամանակ պետք է ջանար համակողմանի «հոգևոր» աշխատանքի միջոցով ավետարանը և հավատը Արևելքում կենդանի և ազդեցիկ դարձնել: Այդ հոգևոր աշխատանքը, որի պահանջով նա հանդես էր գալիս, հետապնդելով բացառապես լուսավորական նպատակներ, այն է՝ «ամրապնդել հին եկեղեցիները», «կրթել, ցուցումներ տալ, հետազոտել, գրել, հրատարակել, տարածել, դպրոցները բարեկարգել, ուսուցիչներ պատրաստել..., Արևելքին հաղորդակից դարձնել Արևմուտքի իմաստության գանձերին և փորձին», ¹³⁷ ոչ մի կապ չուներ նոր համայնքների ձևավորման քարոզիչների վնասարար գործելակերպի հետ: «Արևելքում, ընդհանրացման կարգով նշում էր Լեփսիուսը, մեր աշխատանքում բոլոր պարագաներում պետք է խուսափել քարոզչության որևէ փորձից կամ նույնիսկ միտումից և հրաժարվել քրիստոնյաների շրջանում համայնքների ձևավորման ցանկացած գործունեությունից, եթե մենք չենք կամենում ավելի քանդել, քան կառուցել: Մեր աշխատանքը պետք է հին քրիստոնեական եկեղեցիների հանդեպ, որտեղ նրանք դեռ գոյություն ունեն, լինի նույնքան անկեղծ և անկանխակալ, բարե-

136. Անդ:

137. Lepsius J., *Deutsche Orient-Mission, Der Christliche Orient, 1900, էջ 83*: Այդ վերաբերում էր մասնավորապես այն շրջաններին, որտեղ դրա կարիքը առանձնապես մեծ էր, նշում էր Լեփսիուսը, իսկ այնտեղ, որտեղ եկեղեցին, հավատը և ավետարանը կենդանի ու ամուր էին, միսիաներն այլ անելիք չունեին, քան «դրանով ուրախանալ և ձեռք մեկնել բոլորին, ովքեր մեզ հետ Աստծո և նրա որդի Դիսուսի ընդհանրությամբ կապված են, ինչ եկեղեցու կամ դավանանքի էլ որ նրանք պատկանելիս լինեն»: Անդ, էջ 82:

կամական և օգնության պատրաստ, ինչպես բողոքական համայնքների հանդեպ: Քանի որ մենք բարոյական իրավունք չունենք լուսավորչական ծնողների որբացած երեխաներին օտարացնել իրենց եկեղեցուց, նրանց հանդեպ մեր առաջադրանքը սահմանափակվում է քրիստոնեական-բարոյական դաստիարակությամբ և ուսուցմամբ, որով մենք կարող ենք քրիստոնեության առաջադիմության համար ավելին անել, քան ուղղակի քարոզչությամբ»: 138

ԳԱԱ-ն, ինչպես շուտով կ'լուսաբանվի, իր երկարամյա գործունեության ընթացքում մշտապես հավատարիմ մնաց իր առաջնորդի գաղափարական սկզբունքներին: Այն հայության մեջ երբեք քարոզչական գործունեություն չծավալեց, այլ իր բոլոր հնարավորություններն ի սպաս դրեց հայ ժողովրդին և եկեղեցուն զորավիգ լինելուն:



Ուռհայի որբանոցի խոհանոցում



ԳԵՐՄԱՆ ԽՐԻՍՏԵ
իր տիկնոջ՝
ԲԵՐՏԱ ՎԵՐՆԵՐԻ հետ



ՅԱԿՈԲ ԿՅՈՒՆՅԼԵՐ

138. Lepsius J., Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit, „Der Christliche Orient“, 1900, tğ 6:



ՄԱՍՆԱԳՅՈՒՂԵՐԸ

2.1 Ուռհայի մասնաճյուղը

2.1.1 Որբախնամ աշխատանքները և երեխաների կրթության ու դաստիարակության հիմնարար սկզբունքները

Ուռհա քաղաքը 1895 թ-ի դեկտեմբերի 28-29-ին դարձել էր սարսափազդու կոտորածների թատերաբեմ, որոնց զոհ դարձան ավելի քան 10 000 հայեր:¹³⁹ Կոտորածներից հետո քաղաքում մնացել էին շուրջ 12 000 այրիներ և որբեր, որի պատճառով և այն ժամանակակիցների կողմից հաճախ անվանվում էր Այրիների քաղաք: Ինչպես արդեն նշվել է, Յոհ. Լեփսիուսը դեռ իր 1896 թ-ի ամառային ճանապարհորդության ընթացքում, տեղեկանալով այդ քաղաքի նախճիրը վերապրած հայության անասելի ծանր դրության մասին, ամերիկացի քարոզչուհի օր. Կ. Շատուկի միջոցով այնտեղ երկու վարձակալված տներում մի գերմանական որբանոց էր բացել, որտեղ սկզբնապես խնամքի էին վերցվել 50 որբեր: Հետագա ամիսներին օր. Շատուկը Լեփսիուսի ցուցումների հիման վրա շարունակեց երեխաների հավաքագրումը, որոնց թիվը տարեվերջին հատեց 200-ի սահմանագիծը:¹⁴⁰

Լեփսիուսն արագորեն հավաքագրեց և Ուռհա ուղարկեց նաև սեփական աշխատակիցների, որոնք պետք է այնտեղ իրականացնեին օգնության աշխատանքները: 1897 թ-ի փետրվարին Ուռհա մեկնեցին նրա առաջին օգնականները՝ Ֆրանց Էքարտը¹⁴¹ և օր. Պաուլի-

139. Sbn Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 271: Նրանցից 3000-ը մորթվել և հրո ճարակ էին դարձել քաղաքի լուսավորչական մեծ եկեղեցում, որտեղ ապաստանել էին փրկություն գտնելու հույսով: Անդ: 140. Անդ:

141. Ֆ. Էքարտը ծնվել է 1873 թ-ի հունիսի 14-ին Գրայցում, ստացել ուսուցչի մասնագիտություն և նախքան Լեփսիուսի՝ Հայաստանի օգնության գործում ներգրավվելը ուսուցչական գործունեություն էր վարում Ֆրիդրիխ դպրոցում: Sbn Lepsius J., Franz Eckart, „Der Orient“, 1919, էջ 148:

նե Պատրուկին (Լյուբեմից): Նրանք նախ մեկնեցին Երուսաղեմ, որտեղ նրանց միացավ նաև տեղական լեզուներին տիրապետող մի գերմանացի երիտասարդ Չայնրիխ Ֆալշերը, և միասին մարտի 25-ին հասնելով Ուռհա՝ ծեռնամուխ եղան իրենց հանձնառություններին:¹⁴² Տեղի հայերի հետ նրանց առաջին շփումները խիստ տպավորիչ էին. «Ես ինձ շատ լավ եմ զգում հայերի մեջ,- գրում էր Պ. Պատրուկին իր՝ 1897 թ-ի մայիսի 13-ի նամակում:- Նրանք ազնիվ ժողովուրդ են: Բոլորը, որոնց մենք մինչ այժմ ծանոթացել ենք, փառահեղ մարդիկ են, և մենք նրանց մեջ հետք անգամ չենք տեսնում այն տգեղ հատկանիշներից, որ նրանց Գերմանիայում այնքան հաճախ վերագրում են: Նրանք շատ քրիստոնեական են, համեստ և ջանասեր և երջանիկ, որ նրանց օգնություն է ցուցաբերվում»:¹⁴³

Եթե հայերի կողմից նորեկները ջերմ ընդունելության էին արժանանում, ապա քաղաքի թուրք բնակչությունն ու կառավարական շրջանները նրանց սկզբից ևեթ թշնամանքով և մեծ կասկածամտությամբ դիմավորեցին: Ջարդերի ընթացքում մոլեգնող մահմեդական կրոնական մոլեռանդությունը և ազգայնամուլական տրամադրությունները դեռ չէին հանդարտվել: Չէր նվազել նաև երկրի «ճերքին թշնամու»՝ «հեղափոխական» հայերի դեմ նրանց մեջ դեռ կոտորածների շրջանում բորբոքված ատելությունը: Ընդ որում, ինչպես էքարտն էր իր տեղեկություններում ընդգծում, դրանք սոսկ ամբոխավարական տրամադրություններ չէին. թուրքական կառավարությունը նույնպես խիստ «նյարդային» էր այն ամենի հանդեպ, ինչ կապ ուներ հայերի և Չայաստանի հետ: Չայաստան բառն անգամ խիստ արգելքի տակ էր: Այն բոլոր քարտեզները, որտեղ այդ անունը կար, բռնագրավվում էին, իսկ եթե հյուպատոսական միջամտությունների շնորհիվ հնարավոր էր դառնում դրանք վերահրատարակել, ապա առանց այդ անվան:¹⁴⁴ Ուստի պատահական չէ, որ էքարտն ու իր բարեկամները, որոնք հեղափոխական հայերի որբերին ու այրիներին հովանավորողի համարում էին ստացել, առաջին իսկ օրից խիստ հսկողության տակ վերց-

142. St'u Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 271:

143. Անդ, էջ 333:

144. Eckart F., Dr. Fischer, „Der Christliche Orient“, 1908, էջ 21:

վեցին: «Եթե մենք մի տուն զնեինք, նշում էր տարիներ անց էքարտը, ապա այդ պետք է համարվեր զորանոց պրուսական զինված ուժերի համար, և եթե պատի մեջ պատուհան բացեինք, ապա այդ կարող էր համարվել միայն հրակնատ: Երբ գործիքներով լի առաջին սնդուկները հասան Ուռնա, ոստիկանության կոմիսարները խուզարկեցին տան բոլոր անկյունները և բացեցին սնդուկները՝ ենթադրելով այնտեղ հրազեն ու զինամթերք գտնել...: Այն, ինչ նրանց մեջ մեր հանդեպ խորշանք էր հարուցում, չար հոգու զգայունակությունն էր: Թուրքերի մեծ մասի համար չար խիղճը կարծես փշալար լիներ ճանապարհի վրա, որը նրանց վիրավորում էր, երբ կաննում էին առնչվել մեզ հետ, և նմանապես բարդացնում մեր շփումները նրանց հետ»:¹⁴⁵

Մահմեդական շրջաններում շարունակ զրպարտություններ էին հորինվում էքարտի և նրա գործընկերների մասին, որոնք քաղաքական երանգավորում ունենալով՝ հղի էին անկանխատեսելի վտանգներով: «Այդ կիսավայրենի մարդկանց մոտ ամբոխային կրքերն առաջանում են ինչպես ծնահյուսեր, և հաճախ մի չնչին առիթ է հարկավոր ամենասարսափելի հետևանքների համար», -նշում էր նա:¹⁴⁶

Այնուամենայնիվ, հայ ժողովրդի հանդեպ ստանձնված առաջադրանքի կատարման և Արևելքում հաստատապես հիմնավորվելու համար անհրաժեշտ էր գործել շրջահայեցորեն և վստահություն ձեռք բերել նաև մահմեդականության շրջանում, ինչն անշուշտ կարող էր հնարավոր լինել միայն տևական շփումների և օգնության աշխատանքների կարևոր բաղկացուցիչ մասը կազմող՝ արդյունաբերական արտադրության և բուժսպասարկման զարգացման միջոցով, որոնք, ինչպես շուտով կտեսնենք, լայն ծավալում ստացան:¹⁴⁷

Ուռնայում էքարտի և նրա աշխատակիցների առաջին անելիքը դարձավ որբանոցի տարածքի ընդլայնումը. այդ նպատակով հայկական թաղամասում վարձակալվեցին 5 նոր շենքեր, որոնք, հնա-

145. Անդ, էջ 20:

146. Անդ: էքարտն այդ դիտողությունը կատարում էր՝ անդրադառնալով այն զրպարտությանը, թե «զերմանացի նորեկները ստորգետնյա թունել են բացել և գաղտնի կապ ստեղծել քաղաքի ամերիկացի միսիոներների հետ»: Անդ:

147. Մասնավորապես վերջինը, անկախ կրոնական և ազգային պատկանելությունից, բոլորի համար մատչելի լինելով՝ կարող էր որոշիչ դեր խաղալ մահմեդականների հետ փոխհարաբերությունների կանոնավորման հարցում:

րավորությունը ընծեռելով ավելացնել որբերի քանակը, կարող էին որոշ ժամանակ բավարարել հաստատության պահանջները: 1898 թ-ի հունիսին այնտեղ Բեռլինի կոմիտեի խնամքի տակ էին գտնվում 261,¹⁴⁸ իսկ 1899-1900 թվականներին 300 որբեր:¹⁴⁹

Հարածուն թանկացումներն ու գործազրկության աճը, սակայն, շարունակ նոր և չնախատեսված խնդիրներ էին առաջադրում Ուռնայի որբանոցին: Քաղաքն ավելի և ավելի էր սուզվում աղքատության և հուսահատության գիրկը:¹⁵⁰ Վարակիչ հիվանդությունների, վատ սննդի և բնակարանային պայմանների պատճառով մեծանում էր այրիների և անհայր երեխաների թիվը. ուստի որբանոցը ձգտում էր օգնության ձեռք մեկնել ամենակարիքավորներին՝ բազմանդամ անհայր ընտանիքներից մեկ կամ երկու երեխաների վերցնելով իր խնամքի ներքո:¹⁵¹ Քանի որ առանց այդ էլ նեղ և անհարմարավետ դարձած շենքերում այդ խնդրի իրագործումն անհնար էր. որբանոցը 1900 թ-ի մայիսին տեղափոխվեց քաղաքի հին քարավանատունը, որը տարածքային շատ ավելի լայն հնարավորություններ ուներ հաստատության հետագա ընդլայնման համար:¹⁵² Ըստ այդմ հաստատության սաների թվաքանակը շարունակեց ավելանալ՝ 1901 թ-ին հասնելով 400-ի, իսկ 1902 թ-ին՝ պահպանվելով 310-ի սահմանագծի վրա:¹⁵³ Երեխաների այդ հոծ զանգվածի խնամքն ու դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար ՉԼԱ-ն կատարեց նաև անձնակազմի համալրում՝ 1903 թ-ին հոկտեմբերի 4-ին Ուռնա առաքելով դանիուհի օր. Կարեն Յեպեին:¹⁵⁴ Աշխա-

148. Stü Urfa (Türkei), „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 89:

149. Schäfer R., Unter Witwen und Waisen, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 130: Հմնտ. Schäfer R., Geschichte..., էջ 29: Ի դեպ, նույն ժամանակահատվածում քաղաքի ամերիկյան որբանոցի երեխաների թիվը հասնում էր շուրջ 180-ի: Անդ:

150. Jeppe K., Erziehung der Waisenkinder, „Der Christliche Orient“, 1912, էջ 151:

151. Անդ, էջ 152:

152. Eckart F., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1900, էջ 128: Նոր համալիրը քաղկացած էր մի ընդարձակ բակի շուրջ շրջանաձև տեղաբաշխված՝ հիմնականում միահարկ տներից: Stü In den beiden Urfabildern, „Der Christliche Orient“, 1902, էջ 111:

153. Stü „Der Christliche Orient“-ի 1901-1902 թթ. տարեգրքերի գլխաշապիկները:

154. Stü Verschiedenes, „Der Christliche Orient“, 1903, էջ 192: Կ. Յեպեն ծնվել է 1876 թ-ի հուլիսի 1-ին Դանիայի Գիլինգ գյուղաքաղաքում: Ծննդավայրի հանրակրթ-

տանքների այդ պատասխանատու ոլորտի համար թերևս անհնար էր ավելի նպատակահարմար անձնավորություն գտնել. քան Յեպեն էր, որն անսպառ նվիրումով ծեռնամուխ եղավ իր գործին՝ ժամանակակցի բնութագրմամբ «ամենքի համար» դառնալով «ամեն ինչ»:¹⁵⁵

Անելիքները շատ էին: Առանձնապես դժվար էր վերջին շրջանում ընդունված երեխաների դաստիարակությունը, քանի որ նրանք ֆիզիկապես թույլ և հյուծված լինելուց բացի զուրկ էին նաև կենսուրախության և ինքնավստահության բնական մղումներից և «սարսափում էին կյանքից»: Ուստի անհրաժեշտ էր տևական խնամքի միջոցով նրանց ֆիզիկապես կազդուրել և միաժամանակ, որպեսզի այդ խնամքը «օրինության» փոխարեն «անծօք» չդառնար, և որբերն ի վիճակի լինեին հետագայում ինքնուրույն ապրել. նրանց կազդուրել նաև «հոգեպես», այն է՝ «ներշնչել վստահություն իրենց և իրենց ապագայի նկատմամբ» և զարգացնել կամային հատկանիշները:¹⁵⁶ Հուսալքության, ընկճվածության և անզորության ախտանիշներից երեխաների ձերբագատումը, Յեպեի համոզմամբ, կարող էր կատարվել նպատակասլաց աշխատանքային դաստիարակության միջոցով. որ միաժամանակ կնպաստեր նրանց մեջ կարգապահության և պատասխանատվության արմատավորմանը: Ուստի որբանոցի առօրյան կազմակերպվում էր այդ հանգամանքների խստագույն հաշվառմամբ՝ հիմնված խաղի և աշխատանքի զուգամիասնության վրա. որտեղ յուրաքանչյուրն ուներ իր ա-

թական դպրոցը եզրափակելուց հետո նա գերազանցությամբ ավարտեց նաև Օրդրուպի լատինական դպրոցը, որտեղ այնուհետև անցավ ուսուցչական աշխատանքի: Հայ ժողովրդի բարեկամ, Հայաստանի օգնության դամիական կոմիտեի անդամ Ազե Մեյեր Բենեդիկտսենի գեկուցումների միջոցով իրազեկ դառնալով հայկական կոտորածների և վերապրած հայության զրկալից դրության մասին՝ Յեպեն 1903 թ-ի գարնանը վճռեց մեկնել այնտեղ և նվիրվել հայ ժողովրդի վերբերի ամոքմանը: Իր որոշումը նա հաղորդեց Բենեդիկտսենին և նրանից տեղեկանալով, որ Յոհ. Լեփսիուսը Ուռնայի որբանոցի համար մի ուսուցչուհի էր որոնում, դիմեց Լեփսիուսին ու ստանալով նրա համաձայնությունը՝ մեկնեց Ուռնա: St'u Sick I. M., Karen Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, 1929, էջ 32; 65-67:

155. Անդ, էջ 79:

156. Jeppe K., Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 192-193:

ռանձին պարտականություններն ու անելիքները:¹⁵⁷ Ընդ որում նրանց միշտ հանձնարարվում էին փոփոխական աշխատանքներ, որպեսզի «միտքը, ձեռքը և ֆիզիկական ուժը» համամասնորեն զարգանային: «Այժմ մեր առաջադրանքն է դաստիարակել մարդիկ,- նշում էր Կ. Յեպեն,- որոնք կհարգեն աշխատանքը և այն իրենց ներքին մղումով կկատարեն խղճմտորեն: Այդ դժվար խնդիր է և պահանջում է մեծ համբերություն ...: Անհրաժեշտ է հոգ տանել, որ երեխաները միշտ աչքի առջև ունենան ջանասեր և խղճմիտ մարդկանց, քանի որ լավ օրինակը դաստիարակության բոլոր միջոցներից կարևորագույնն է: Այնուհետև հետզհետե ամրապնդվում է նաև թույլ մարմինը, և մտավոր ունակությունները, որոնք միանգամայն անխնամ և ավելի անտեսված էին, քան մարմինը, արթնանում են: Աննկատ. ինչպես ծառը այգում, աճում է մի առողջ, կենսուրախ երեխա, որը հետագայում գործուն, ներդաշնակորեն զարգացած անձնավորություն է դառնում և կարող է աշխարհում տեղ զբաղեցնել»:¹⁵⁸

Յեպեի համոզմամբ, որք երեխաների ներդաշնակ հոգեկան ներաշխարհի ձևավորման հարցում մեծ կարևորություն ուներ նրանց մեջ արմատավորված միայնության հոգեբանական բարդույթի հաղթահարումը: Ուստի իր և հաստատության կարևորագույն պարտականություններից մեկը նա մշտապես համարում էր երեխաների և նրանց հոգեծնողների միջև ուղղակի կապերի ամրապնդումը:¹⁵⁹ Դեռ որբանոցի հիմնադրման առաջին տարիներից երեխաները Ծննդյան տոների առթիվ նվերներ էին ստանում իրենց հոգեծնողների կողմից: Այդ սկզբնապես ինքնաբուխ կերպով դրսևորվող իրողությունը հաջորդ տարիներին վերածվեց կայուն ավանդույթի. այնպես, որ նվերների տեսականին որոշարկվում էր ըստ երեխաների նախասիրությունների և կարիքների վերաբերյալ: Յեպեի կողմից նախապես հոգեծնողներին ուղարկված տեղեկությունների:¹⁶⁰

Նվերներից ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ նաև նրանց

157. Անդ, էջ 158-159: «Մենք հոգ ենք տանում,- նշում էր Կ. Յեպեն,- որ նույնիսկ անենափոքրիկ երեխան ունենա մի պարտականություն, մի ինչ-որ բան, որ նրանից կպահանջվի, և որը նա իրավունք չունի չկատարել կամ մասամբ կատարել»: Անդ, էջ 156:

158. Անդ, էջ 160:

159. Jeppe K., Von den Geschenken und Briefen und von ihrem Wert als Erziehungsmittel, „Der Christliche Orient“, 1914, էջ 67:

160. Անդ, էջ 66:

միջև նամակագրության զարգացումը. քանի որ այդպիսով, ինչպես Յեպեն էր ընդգծում, երեխաները հաղորդակից էին դառնում «սիրո ակունքներին», նրանց մեջ արթնանում էին հարցեր, և «այնուհետև նրանք զգում են, որ իրենց ետևում կա մարդկանց մի մեծ շրջան, որոնք սիրով և նվիրվածությամբ իրենց ուսերի վրա տանում են մեր ողջ տունը: ...Երբ որևէ մեկը դրանը իր բերանից խնայում է կամ այլ կերպ առանձնահատուկ սեր է դրսևորում երեխայի հանդեպ, ապա երեխայի սրտում նույնպես հորդում է սիրո մի սեփական հոսանք: Սեր ոչ միայն օտար մարդկանց հանդեպ, ոչ, սեր որբանոցի իր քույրերի և եղբայրների կամ սեփական հարազատների հանդեպ»:¹⁶¹

Միաժամանակ մեծ կարևորություն էր տրվում նաև երեխաների անհատականության և նախաձեռնողականության անկաշկանդ զարգացմանը, որի համար նրանց հատկացվում էր բավականաչափ ազատ ժամանակ և տարածք: Երեխաների մեջ ճիշտ և ժամանակին ինքնուրույնություն ձևավորելը Յեպեն համարում էր որբանոցի կարևորագույն խնդիրներից մեկը: Նրա համոզմամբ, անհրաժեշտ էր վաղօրոք սկսել նրանց ազատ թողնել. որպեսզի նրանք ուժեր հավաքեին հետագայում «միայնակ գոյատևելու համար», սակայն մյուս կողմից նաև «նրանց անուր բռնել», որպեսզի «չչեղվեին ճանապարհից»:¹⁶² Եվ, որ ամենաուշագրավն է. բոլոր պայմանները ստեղծված էին երեխաների լիարժեք ազգային ինքնագիտակցության ձևավորման համար: Յեպեն և իր գործընկերները այդ խիստ կարևոր էին համարում առաջնորդվելով հայ ժողովրդի հանդեպ որբանոցի և առհասարակ ԳԱԱ-ի ստանձնած մեծ և անշահախնդիր առաքելության գիտակցումով: «Մենք նրանց վերցրել ենք որպես մարդիկ դաստիարակելու համար, որոնք Աստծո օգնությամբ պետք է դառնան իրենց ժողովրդի լույսը և աղը,- նշում էր Յեպեն: - ... Մենք մեր հիմնական խնդիրը պետք է համարենք այս ժողովրդի զրկանքների մեջ նրա հետ լինել և նրա համար պատրաստել հնարավորին չափ լավ և գործուն մարդիկ, որոնք այնուհետև, յուրաքանչյուրն իր տեղում կկարողանան շարունակել մեր աշխատանքը»:¹⁶³

161. Անդ, էջ 67-68:

162. Jeppé K., Unsere früheren Zöglinge, „Der Christliche Orient“, 1912, էջ 106:

163. Harnack A., Wo bleiben unsere entlassenen Waisen Kinder?, „Der Christliche Orient“, 1913, էջ 147:

Երեխաների առօրյան հազեցած էր հայոց պատմության հերոսապատում էջերի, ազգային հերոսների վառ օրինակների ոգեշնչումով: Ավագ տղաներն, օրինակ, հիմնել էին մի դասախոսական ընկերություն. որը կազմակերպում էր հաճախակի հավաքություններ հայ ժողովրդի պատմական անցյալի և արդի իրավիճակի հետ կապված զանազան խնդիրների քննարկման համար: Ինչպես նշում էր Կ. Յեպեն իր «Մեր տղաների հոգևոր կյանքից» վերնագիրը կրող հոդվածում, այդ քննարկումների հիմնական նպատակը հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր դրության հաղթահարման ուղիների որոնումն էր:¹⁶⁴ Հավաքություններում բարձրաձայն ընթերցվում կամ ասուներգվում էին հատվածներ հայ դասական գրականությունից. լուսաբանվում էին շաբաթվա կարևորագույն իրադարձությունները և այլն: Ավելի կրտսեր երեխաները հիմնել էին մի երգեցողության ընկերություն, որտեղ նրանք սովորում էին հայրենասիրական երգեր և այնուհետև դրանք կատարում որբանոցի իրենց ընկերների համար: Այդ միջոցառումների կազմակերպման դրդումները երեխաները ստացել էին Կ. Յեպեից, սակայն դրանք իրականացնում էին բացառապես սեփական ուժերով և մտահղացումներով:¹⁶⁵

Որբանոցի տնօրինությունը նրանց համար հիմնել էր նաև մի փոքրիկ գրադարան, որտեղ պահվող շաբաթթերթից մեկը նախատեսված էր ավագների, իսկ մյուսը՝ լի պատկերազարդ և հետաքրքիր պատմություններով, կրտսերների համար:¹⁶⁶ Փաստորեն, որբանոցի ղեկավարության կողմից խիստ մեծ կարևորություն էր տրվում երեխաների մեջ ազգային և համամարդկային մտահոգությունների ձևավորմանը: «Մենք իրավունք ունենք ասել,- նշում էր այդ առթիվ Կարեն Յեպեն.- որ մեր երեխաները որբանոցում եղած ժամանակ, ինչպես և այնտեղից հեռանալուց հետո բարձրին են ձգտում: Նրանք չենք գոհանում միայն նրանով, որ ապրելու համար անհրաժեշտ ամեն բան ունեն. այլ փորձում են նաև ինչ-որ բան անել ուրիշների համար, առաջին հերթին իրենց ժողովրդի և իրենց խեղճ հայրենիքի, որն այդքան խորն ընկղմվել է թշվառության մեջ: Եվ մենք հավատում ենք և հույսով ենք, որ նրանք

164. Jeppe K., *Aus dem geistigen Leben unserer Jungen*, „Der Christliche Orient“, 1911, էջ 150-151:

165. Անդ, էջ 151:

166. Անդ:

կաջակցեն նրան ոտքի կանգնեցնելու և արժանավայել գոյություն սկսելու հարցում: Դրանում մեզ օգնում է ամենակարող Աստված»: ¹⁶⁷

4. Յեպեն միանշանակորեն անթույլատրելի էր համարում նաև կրոնական քարոզչությունը լուսավորչական ծնողների երեխաների և հայ բնակչության շրջանում. հանգամանք, որ պայմանավորված էր ոչ միայն այդ հարցում ԳԱԱ-ի որդեգրած դիրքորոշմամբ, այլև սեփական փորձառությանը: Քաջ գիտակցելով հայ ժողովրդի համախմբման և ազգային ինքնության պահպանման հարցում առաքելական եկեղեցու ունեցած պատմական և այժմեական նշանակությունը նա հասու էր նաև այն վնասակար հետևանքներին, որ ուներ քարոզիչների գործունեությունը: Յեպեի համոզմամբ դա առանձնապես կործանարար էր հայերի համար, որոնց՝ ազգության և կրոնի ըմբռնումները այն աստիճան սերտ էին միահյուսված, որ մեկի կորուստը պատճառ էր դառնում նաև մյուսի կորստյանը: Այդ վկայում էր նաև Ուռհայի լուսավորչական և բողոքական համայնքների օրինակը. «Բողոքական հայերը պոկվել են անցյալից և պատմությունից,- նշում էր Յեպեն.- նրանք մասն են բույսերի, որոնք դեռ խորը արմատներ չեն նետել: Ցանկացած հողը նրանց պոկում և տանում է իր հետ: Հոգեբանական անառողջ այլակերպումները, որոնք հաճախ շողոքորթության կերպարանք են ստանում, նրանց մեջ շատ ավելի մեծ ավերածություններ են գործում. քան լուսավորչականների...»: ¹⁶⁸

Մյուս կողմից, Յեպեի համոզմամբ, արևմտյան եկեղեցիները նաև բարոյական իրավունք չունեին հայ առաքելական եկեղեցուց հավատացյալներ կորզել, քանի որ վերջինս իրականում ոչ միայն «անշնչացած» չէր, ինչպես ընդունված էր կարծել եվրոպայում, այլև նույնիսկ նորագույն շրջանում, անհավատալի ծանր պայմաններում կարողացել է դիմակայել և տոկալ. այլ կերպ ասած՝ ապացուցել իր կենսունակությունը և պատմության մեջ հաստատել իրեն: Թե անցյալում և թե նոր շրջանում այդ եկեղեցու հավատացյալները նահատակության այնպիսի օրինակներ են ցույց տվել, որպիսին այլ ժողովուրդների մեջ դեռ տեսնված չէր: Մի քննություն, որն, ըստ Յեպեի, իրենք՝ եվրոպական եկեղեցիները դեռևս չէին հանձնել: «Մենք իրավունք չունենք մոռանալ,- նշում էր նա,- որ հայերը Քրիստոսի համար նահատակվում

167. Jeppe K., Ein Besuch im Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 187:

168. Jeppe K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1909, էջ 4:

էին, երբ մենք դեռ մորթու մեջ փաթաթված՝ Օդինին կամ Թորին զոհեր էինք մատուցում: Եվ հավանաբար մենք պետք է մի փոքր ավելի զգույշ խոսենք «մեռած» լուսավորչական եկեղեցու մասին: Քանի որ նահատակները քրիստոնեական եկեղեցու ամենակենդանի զավակներն են: Ինչպե՞ս կարող էր մեռած մայրը այդպիսիներին աշխարհ բերել»: ¹⁶⁹

Յետևությունը բնականաբար մեկն էր. հայության համախմբման հարցում եկեղեցին ուներ խիստ կարևոր նշանակություն, որի պատճառով և ի շահ հայ ժողովրդի իրագործվող բարեգործական նախաձեռնությունների հիմքում պետք է առկա լիներ նաև նրա եկեղեցու անրապնդման ձգտումը. հանգամանք, որ անհամատեղելի էր միաժամանակ և բարեգործությամբ և քարոզչությամբ զբաղվող կազմակերպությունների գործունեությանը: Ընդ որում, Յեպեն այդ դիտարկում էր ոչ միայն մարդասիրական, այլև համաշխարհային քրիստոնեության շահերի տեսանկյունից: «Մենք, նշում էր նա, շարունակ քարոզիչներ ենք ուղարկել հեթանոսների մոտ: Մենք հառաչում ու հեծում ենք, որ իսլամն այնքան շատ քրիստոնյա համայքներ է կործանել, իսկ մի քրիստոնյա ժողովրդի, որն իր կրոնի համար պայքարել և տառապել է, թողել ենք, որ դանդաղ մահանա: Եթե մենք այդ ժողովրդին պաշտպանեինք և զորացնեինք, ապա այժմ կունենայինք մի ամուր ամրոց իսլամի դեմ»: ¹⁷⁰

Ուստի, ինքնին հասկանալի է, որ որբանոցում եկեղեցական տոները նշվում էին ըստ հայ առաքելական եկեղեցու տոնացույցի: Երեխաներն ստանում էին ընդհանուր քրիստոնեական դաստիարակություն: Նրանք ընթերցում և ունկնդրում էին ավետարանի պատմությունները, հարցերի և պատասխանների միջոցով մեկնաբանում դրանք, ուսանում Յիսուսի կյանքը և գործերը՝ միաժամանակ սովորելով նաև շարականներ: Իսկ ինչ վերաբերում էր նրանց եկեղեցական պատկանելությանը, ապա եթե բողոքական ծնողների երեխան ցանկանար հաճախել առաքելական եկեղեցի, նա այդ կարող էր անել: Նմանապես նաև լուսավորչական ծնողների երեխան կարող էր այցելել բողոքական եկեղեցի, սակայն նրանցից ոչ ոք որբանոցում ապրելու ընթացքում իր եկեղեցուց հրաժարվելու իրավունք չուներ: ¹⁷¹ Ոչ վերջին հաշ-

169. Sick I. M., Karen Jeppe..., էջ 89:

170. Jeppe K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1909, էջ 8:

171. Անդ, էջ 4-6:

վով դրանով էր պայմանավորված այն մեծ վստահությունը, որ որբանոցն ուներ թե լուսավորչական և թե բողոքական հայ համայնքներում:

Ինչ վերաբերում էր երեխաների դպրոցական կրթությանը, ապա թուրքական կառավարությունը որբանոցին արգելել էր հիմնել սեփական դպրոց,¹⁷² և երեխաները սկզբից ևեթ հարկադրված էին հաճախել Ուռհայի բողոքական հայ համայնքի դպրոցը, որ գտնվում էր քաղաքի ամերիկյան ընկերության ազդեցության ներքո և հետևապես ուներ նաև անգլո-ամերիկյան ուղղվածություն:¹⁷³ Որբանոցի ղեկավարությունը սկզբնապես հարկադրված էր այդ փաստի հետ համակերպվել՝ հուսալով, որ կկարողանար կառավարությանը դրդել փոխելու դիրքորոշումը:¹⁷⁴ Վերջինս, սակայն, այդ հարցում անդրդվելի մնաց նաև հետագայում, ուստի երեխաների կրթությամբ խիստ մտահոգված՝ Կ. Յեպեն վճռեց, շրջանցելով պաշտոնական արգելքը, նրանց գեթ մի մասի դպրոցական դասընթացը կազմակերպել որբանոցում: 1904 թ-ին 25 երեխաների պարապմունքները տեղի էին ունենում որբանոցում:¹⁷⁵ Հետագայում նրանց թիվը շարունակ ավելանում էր, և արդեն 1907 թ-ին որբերի մեծ մասն ուսանում էր հաստատության դպրոցում, որտեղ մշտական աշխատանքի էին ներգրավվել երեք հայ ուսուցչուհիներ, իսկ բողոքական հայերի դպրոցը հաճախում էին միայն 26 երեխաներ:¹⁷⁶

Կ. Յեպեն ուշագրավ նորամուծություններ կատարեց նաև դասավանդման մեթոդիկայի բնագավառում՝ հասնելով մեծ հաջողությունների: Տեղական, նաև ամերիկյան ընկերություններին պատկանող դպրոցներում տարրական ուսուցման, այն է՝ գրելու և կարդալու հրմտությունների զարգացման համար սովորաբար պահանջվում էր

172. Jeppe K., Die Erziehung im Waisenhaus zu Urfa, „Der Christliche Orient“, 1904, էջ 98:

173. Rohrbach P., Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 82:

174. «Որբան ավելի ենք մենք ճանաչում լեզուն և պայմանները,- նշում էր Ֆ. Էքարտը 1898 թ-ին,- այնքան ավելի ճնշող է դառնում մեզ համար այն հանգամանքը, որ մենք ինքներս չենք կարող կազմակերպել մեր երեխաների դասավանդումը: Ամեն դեպքում, հենց որ ի վիճակի լինենք՝ ինքներս դասավանդել և վերահսկել նաև տեղացիների դասավանդումը, մեր գործը կլինի հիմնել դպրոցներ»: Տե՛ս Eckart F., Etwas, was noch zu wünschen übrig läßt, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 176:

175. Jeppe K., Die Erziehung im Waisenhaus zu Urfa, „Der Christliche Orient“, 1904, էջ 98:

176. Eckart F., Das Schulwesen in Urfa und die Entwicklung unserer deutschen Schule, „Der Christliche Orient“, 1907, էջ 61-62:

երեք տարի. և արդյունքում շատ քիչ ժամանակ էր մնում դասավանդման հետագա միջին և բարձր աստիճանների համար: Այնտեղ երեխաները մեծ դժվարությամբ էին կարողանում անգիր սովորել հայոց այբուբենի տառերն ըստ մաշտոցյան անվանումների և այնուհետև յուրացնել դրանք: Մինչդեռ Կ. Յեպեն ներմուծեց պատկերային ընթերցման ու հեգելու մեթոդը, որն ունեցավ շատ մեծ հաջողություն:¹⁷⁷ Եվ արդյունքում՝ միջին ընդունակություններ ունեցող երեխաները մեկ տարում կարողանում էին ոչ միայն վարժ կարդալ, այլև գրել, ինչի համար նախկինում պահանջվում էր 3-4 տարի: «Նոր մեթոդը ամերիկացիների և հայերի կողմից արագորեն այնքան լայն ճանաչում ստացավ,- նշում էր դր. Ռոհրբախն իր 1911 թ-ի հրապարակումներից մեկում,- որ հեռավոր վայրերից բազմաթիվ ուսուցչուհիներ այցելում էին մեր որբանոցի դպրոցը դրան ծանոթանալու և այդ եղանակով դասավանդելու համար: Բազմաթիվ քաղաքներից ու գյուղերից հայտնվեցին համայնքների ղեկավարներ, դպրոցում կատարեցին ազատ ունկնդրում և մեզանից խնդրեցին ուսուցչուհիներ: Ներկայումս այդ մեթոդն այն աստիճան լայն տարածում է ստացել, որ նրա միջոցով տեղի է ունենում դասավանդման գործի ընդհանուր վերածնալը: Այն սկսել է օգտագործվել նաև թուրքերենի համար: Մենք պետք է ձգտենք, որ մեր որբանոցը հայ մանկավարժական ուժերի, ամենից առաջ տարրական դպրոցների ուսուցչուհիների պատրաստման համար դառնա սերմնացան, իսկ դրա համար այլ բան հարկավոր չէ, քան պահպանել այն, ինչն արդեն կա»:¹⁷⁸

Այսպիսով, դառնալով 14-15 տարեկան երեխաներն ավարտում էին տարրական դպրոցը, որից հետո նրանք, ովքեր ցածր կամ միջին առաջադիմություն էին ցուցաբերել, որբանոցում ուսանում էին զանա-

177. Երեխաներին ցույց էին տրվում պատկերազարդ տախտակներ: Պատկերների ներքևում, որոնք իրենցից ներկայացնում էին երեխաներին ծանոթ և սիրելի առարկաներ, գրված էին դրանց անվանումները: Այնուհետև ուսուցչուհին նրանց հարցնում էր, թե ինչ էին նշանակում այդ պատկերները, և նրանք պետք է այդ անուններն այնքան դանդաղ արտաբերեին, որ բոլոր հնչյունները լսվեին: Իսկ հետո նրանց ցույց էին տրվում համապատասխան տառերը: Այդ եղանակը հնարավորություն էր ընձեռում 17 պատկերների միջոցով ներկայացնել հայկական այբուբենի բոլոր հնչյուններն ու տառերը: Sten Rohrbach P., Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 82: 178. Անդ, էջ 82-83:

զան արհեստներ կամ հատուկ նախապատրաստական դասընթաց անցնելով ներգրավվում աշխատանքի գորգագործական ֆաբրիկայում: Իսկ օժտված երեխաներին թույլատրվում էր մի քանի տարի ևս դպրոց հաճախել, որից հետո, եթե հոգեժնողները համաձայնում էին շարունակել դրանական հատկացումները, նրանք ուղարկվում էին Այնթապի կամ Խարպուբի ամերիկյան վարժարանները բարձրագույն կրթություն ստանալու համար:¹⁷⁹ Կ. Յեպեն որբանոցի օժտված աղջիկների միջավայրից էր ընտրում ապագա մանկավարժներին. որոնք, իհարկե, ավարտել էին նաև վարժարանը:¹⁸⁰ Ուսումն ավարտելով նրանք այնուհետև աշխատանքի էին նշանակվում որբանոցում կամ ուղարկվում այն դպրոցները, որոնք որբանոցից մանկավարժներ էին խնդրել:¹⁸¹ Այդ կերպ Յեպեի՝ դասավանդման նոր մեթոդը շարունակում էր տարածում ստանալ, և շուտով, ինչպես վկայում էր Ուռուհայի ամերիկացի քարոզչուհի Կ. Շատուկը, Ուռուհայի, Սևերեկի, Գառնուշի, Ադիամանի և այլ շրջանների դպրոցներում ոչ մի ուսուցչուհի աշխատանք չէր ստանում, եթե դրան ծանոթ չէր:¹⁸²

Զնայած մասնագետների պահանջարկն անհամեմատ ավելի արագ տեմպերով էր աճում, քան որբանոցը կարող էր բավարարել, այնուամենայնիվ դժվարը միայն սկիզբն էր. «Որքան էլ փոքր է այն, ինչ մենք մեր համեստ միջոցներով կարող ենք անել,- նշում էր Յեպեն իր նամակներից մեկում,- և որքան էլ մեծ է այս երկրում դպրոցը զարգացնելու անհրաժեշտությունը, մենք. միևնույն է, չենք վիստվում... Քանի որ ավելի լավ ձևով չենք կարող նպաստել ժողովրդի դաստիարակությանը, քան հիմնավորապես և խնամքով առանձին անհատներ դաստիարակելով: Այնուհետև ամեն բան կընթանա այնպես, ինչպես երբ քար ես նետում ջրի մեջ, և ալիքները վազում են չորս կող-

179. Jeppe K., Die Erziehung im Waisenhaus zu Urfa, „Der Christliche Orient“, 1904, էջ 99:
 180. 1907 թ-ին դասավանդող բոլոր թվով 3 ուսուցչուհիներն այդ վարժարանն ավարտած՝ որբանոցի նախկին սաներ էին: St'u Eckart F., Das Schulwesen in Urfa und die Entwicklung unserer deutschen Schule, „Der Christliche Orient“, 1907, էջ 62:
 181. Իխզա Թաթոյանն, օրինակ, աշխատում էր Գառնուշի դպրոցում: Մեկ ուրիշը՝ Աննա Աբաջյանն, աշխատանքի էր նշանակվել Այնթապի իզական դպրոցում: St'u Jeppe K., Wo bleiben unsre entlassenen Waisenkinder?, „Der Christliche Orient“, 1913, էջ 152-153: Դմնտ. Jeppe K., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1910, էջ 35:
 182. Jeppe K., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1910, էջ 34:

մը: Նրանք շատ ուրիշ մարդկանց էլ են ողողում...»: ¹⁸³

Յեպեն միանգամայն իրավացի էր, քանի որ պահանջարկն այնուամենայնիվ իր բավարարման ուղիները գտավ, և այն դպրոցներն ու համայնքները, որոնց որբանոցը չէր կարող ուսուցիչներ տրամադրել, իրենք էին սեփական թեկնածուներին ուղարկում այնտեղ կատարելագործման համար: ¹⁸⁴ Այդ կերպ դպրոցներին օգնություն ցուցաբերելու հնարավորությունները բազմապատկվեցին՝ ըստ Յեպեի պատկերավոր բնութագրման, հիշեցնելով Աստվածաշնչյան իրողությունը: «Այս հարցում նույնպես փաստարկվեց.- նշում էր նա,- որ Աստծո կամքով հինգ հացը և երկու ձուկը հինգ հազար մարդու կերակրում են...»: ¹⁸⁵

Չարկ է նշել, որ չնայած Կ. Յեպեն մեծ կարևորություն էր տալիս երեխաների լիարժեք դաստիարակությանը, այնուամենայնիվ հաճախակի էին նաև այն դեպքերը, երբ երեխաները հաստատությունից հեռանում էին ավելի վաղ, քան նախատեսված էր: Այդ վերաբերում էր հիմնականում նրանց, ովքեր հարազատներ ունեին, որոնք, ժամանակի ընթացքում բարելավելով իրենց տնտեսական պայմանները, խնդրում էին երեխաներին վերադարձնել: Լինում էին նաև դեպքեր, երբ որբերի՝ ամիսներ և տարիներ շարունակ անհետ կորած հայրերը հանկարծ հայտնվում էին և ցանկանում վերցնել իրենց երեխաներին: Նման դիպվածներն առանձնապես շատ էին Ադանայի կոտորածներից հետո, որտեղ սովորաբար Ուռհայից և այլ վայրերից բազմաթիվ տղամարդիկ էին մեկնում աշխատանք որոնելու նպատակով: ¹⁸⁶

Չատկանշական է, որ Յեպեն նշված դեպքերում երբեք կանոնական մոտեցում չէր դրսևորում: Եթե, օրինակ, երեխայի հարազատները «վատ մարդիկ» էին և վստահություն չէին ներշնչում, ապա նրան վերադարձնելու առանձնապես մեծ ցանկություն չէր դրսևորվում: Նման դեպքերում իր ճակատագրի ընտրությունը թողնվում էր երեխային, և եթե վերջինս վճռեր մնալ որբանոցում (ինչպես և նման դեպքերում հիմնականում լինում էր), ապա նրան ոչ ոք, նույնիսկ

183. Անդ, էջ 37:

184. Անդ, էջ 36:

185. Անդ, էջ 34:

186. Jeppe K., *Wo bleiben unsre entlassenen Waisenkinder?*, „Der Christliche Orient“, 1913, էջ 147-148:

ծնողներն այնտեղից չէին կարող բռնի հեռացնել:¹⁸⁷

Երեխաներից ոմանք. աշխատունակ դառնալով, որբանոցից համեմատաբար շուտ էին հեռանում իրենց հիվանդ և անաշխատունակ հարազատներին օգնելու դրդապատճառով: Պատահում էր նաև, որ որոշ ընտանիքներ որդեգրման նպատակով որբանոցից երեխա էին խնդրում, ինչը սովորաբար չէր մերժվում:¹⁸⁸ Յեպեն նման դեպքերում առաջնորդվում էր այն ելակետով, որ «Քանի դեռ ժողովուրդն իր որբերի համար կարող է հոգ տանել, մենք չպետք է այդ անենք: Նա այդ հարցում անառարկելիորեն ունի առաջնագույն իրավունքն ու պարտավորությունը»:¹⁸⁹ Այնուամենայնիվ որևէ երեխայի որդեգրման համար որբանոցը բավական երկար փորձաշրջան էր առաջարկում, և եթե նոր միջավայրում համատեղ կյանքի առաջին շրջանում ի հայտ էր գալիս անհամապատասխանություն, ապա երեխան դարձյալ ետ էր վերցվում:¹⁹⁰

Ուշագրավ է, որ Յեպեն կարողանում էր հեռացած երեխաներին մշտապես պահել իր տեսադաշտում՝ հարկ եղած դեպքում կարողանալով որպես խորհրդակից և օգնական միշտ կանգնել նրանց կողքին: Երբեմն նրա աներևույթ ներկայությունն այնքան հմտորեն էր տնօրինում հեռացած երեխաների ճակատագիրը, որ վերջիններս այդ մասին երբևէ չէին տեղեկանում: Օրինակ, չնայած հազվադեպ, սակայն լինում էին նաև անհանդուրժելի հակումներ և հատկանիշներ ունեցող երեխաներ, որոնց հարկ էր լինում հաստատությունից հեռացնել մյուսներին «վտանգի չենթարկելու համար»: Կարծելով, թե մատնվել են բախտի քմահաճույքին՝ այդ երեխաներն այնուհետև գործադրում էին բոլոր ջանքերը սեփական ծանապարհը հարթելու համար և Յեպեի անտեսանելի աջակցությամբ որպես կանոն միշտ կարողանում էին հաջողության հասնել: Միայնակ բախումը իրականության հետ և «սեփական ուժերով» ձեռք բերված հաջողությունները կոփում և վերափոխում էին նրանց, մինչդեռ նրանք անտեղյակ էին, որ շարունակ գտնվել են հոգատար հսկողության ներքո: «Մեր տղաները երբեք չեն իմանա, որ մեր ձեռքն էր նրանց դրսում պահում,-

187. Անդ, էջ 151:

188. Անդ, էջ 151-152:

189. Անդ, էջ 151:

190. Անդ, էջ 152:

նշում էր Յեպեն,- և որ մենք նախապես գիտեինք այն «երջանիկ դիպվածի» մասին, որը նրանց արդեն առաջին գիշերը օթևան ստեղծեց և հաջորդ օրը թույլ տվեց նաև աշխատանք գտնել»:¹⁹¹ Նման դեպքերում իրողությունն առհասարակ գաղտնի էր պահվում մի կողմից հեռացած տղաներին սեփական ուժերի հանդեպ ինքնվստահություն ներշնչելու, և մյուս կողմից որբանոցում մնացած սաների մեջ պատասխանատվության զգացումն արթուն պահելու նպատակով: Իսկ հեռացած երեխաների փոխարեն որբանոց էին ընդունվում անօգնական վիճակում գտնվող այլ երեխաներ, որոնց նախկինում անհնար էր եղել ընդունել հաստատություն: Նախատեսված ժամկետից շուտ հեռանալու վերոնշյալ դեպքերը երեխաների ընդհանուր զանգվածի մեջ մեծ թիվ չէին կազմում, և որբանոցի սաները մեծ մասամբ կյանք էին մտնում որպես հասուն մարդիկ և կատարելապես տիրապետելով որևէ մասնագիտության:

Ինչևէ, չնայած հաստատությունն ըստ անհրաժեշտության և հնարավորությունների շարունակում էր նոր երեխաներ ընդունել, սակայն ժամանակի հետ 1895-96 թթ. կոտորածների վերքերը սկսում էին սպիանալ. կարիքները՝ նվազել, և տարիների ընթացքում մեծացող ու կյանք մտնող երեխաների հետ նվազում էր նաև որբանոցի երեխաների թվաքանակը: Այդ ավելի ցայտուն կարող են վկայել վիճակագրական տվյալները: Եթե 1901 թ-ին որբանոցում խնամվում էին 400, իսկ 1902-1904 թվականներին 310 երեխաներ,¹⁹² ապա 1905 թ-ին այնտեղ կային 235,¹⁹³ իսկ 1911 թ-ին ընդամենը 150 որբեր:¹⁹⁴ Այդ տարվա դրությամբ հաստատությունում մեծացել ու կյանք էին մտել շուրջ 1000 երեխաներ:¹⁹⁵

Որբանոցը հեռացած երեխաների հետ սերտ կապեր էր պահպանում նաև հետագայում: Զանազան տոնական միջոցառումներ առիթ

191. Անդ, էջ 150:

192. Տնս „Der Christliche Orient“, 1902, գլխաշապիկը: Նախորդ տարիների տվյալներն արդեն որոշակիորեն լուսաբանվել են:

193. Feigel U., Das evangelische..., էջ 118:

194. Rohrbach P., Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 82: Մյուս տարիների վերաբերյալ վիճակագրական տվյալներ չեն հաղորդվում:

195. Անդ, էջ 82:

էին դառնում, որ նրանք դարձյալ հավաքվեն նույն հարկի տակ: Չնայած շատերը գտնվում էին այլ հեռավոր վայրերում, և ընտանիք կազմած որբուհիներն առավելապես հարկադրված էին բավարարվել միայն նամակագրական կապով, սակայն ամենքն ունեին այն ըմբռնումը, որ իրենց մանկության տունը հարկ եղած դեպքում միշտ բաց էր իրենց առջև:¹⁹⁶ Յեպեն մեծ կարևորություն էր տալիս երեխաների մեջ այդ գիտակցության ամրակայմանը. «Մենք նրանց արտաքին և ներքին կյանքում ունենք միևնույն խնդիրը,- նշում էր նա իր՝ «Մեր նախկին սաները» հոդվածում:- Նրանք պետք է ինքնուրույն դառնան և իրենց բույնը լքեն, սակայն նրանց տունը նրանց համար միշտ պետք է բաց լինի: Նրանք պետք է ունենան այն զգացումը, որ պատկանում են այդ տանը և որ ցանկացած ժամանակ կարող են այնտեղ ապաստան գտնել»:¹⁹⁷

Որբանոցային կրթության և դաստիարակության մեծ համբավը, որպես կանոն, չափահաս դարձող որբուհիների համար ստեղծում էր երկրպագուների հոծ բազմություն: 1908-1909 թթ-ին այնտեղ տեղի ունեցան առաջին ամուսնությունները, որոնք հետագայում ավելի և ավելի հաճախակի էին դառնում:¹⁹⁸ Իսկ 1913 թ-ին, ինչպես տեղեկացնում էր Յեպեն, որբանոցն ապրում էր «նշանադրությունների, հարսանիքների, թոռնիկների մթնոլորտում»: Հաստատության բոլոր չափահաս աղջիկներն արդեն նշանված էին: Տղաները նույնպես արդեն սկսել էին ամուսնանալ և սովորաբար իրենց հարսնացուներին ընտրում էին որբանոցից:¹⁹⁹ Ուշագրավ է, որ չնայած այդ ամուսնությունները հանգեցնում էին հաստատության բնակիչների թվաքանակի նվազեցմանը, այն որպես տուն՝ ոչ առարկայական իմաստով, համապատասխանաբար շարունակ մեծանում էր: Համեմայն դեպս, այդ ըմբռնումն ունեին թե «տանտերերը» և թե նրանց մեծացող ու հեռացող «զավակները»: «Նման երիտասարդ ընտանիքներն, անկասկած, պատկանում են մեզ,- նշում էր Կ. Յեպեն,- նրանք մեր ծառի նոր

196. Որբանոցի հետ երեխաներն այնքան էին կապված, որ հաճախ, նույնիսկ իրենց համար ստեղծված լավագույն պայմանների դեպքում չէին կամենում բաժանվել նրանից: Sten Eckart F., Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1910, էջ 25:

197. Jeppe K., Unsere früheren Zöglinge, „Der Christliche Orient“, 1912, էջ 106:

198. Անդ, էջ 103:

199. Jeppe K., Wo bleiben unsre entlassene Waisenkinder, „Der Christliche Orient“, 1913, էջ 154:

ընծյուղներն են, և մենք մեզ զգում ենք որպես մի ընտանիք, որտեղ ուրախությունն ու հոգսն ընդհանուր են»:²⁰⁰




Ունեհայի որբանոցի դեղատանը



ԱՆԴՐԵԱՍ ՖԻՇԵՐ

Ունեհայի որբանոցի տեսարանը բակից



200. Jeppe K., Unsere früheren Zöglinge, „Der Christliche Orient“, 1912, էջ 108:

2.1.2 Մասնաճյուղի արտադրական ձեռնարկությունները

Ֆ. Էքարտը և Պ. Պատրունկին Ուռհայի անպաշտպան այրիների նյութական դրության բարելավման ամենահեռանկարային ծանապարհը համարում էին նրանց համար աշխատապայմանների ստեղծումը կամ, այլ կերպ ասած, ինքնօգնության հանգեցնող օգնությունը, որի իրականացման լավագույն եղանակը նրանց համոզմամբ հայ կնոջ ավանդական զբաղմունքներից մեկի՝ գորգագործության զարգացումն էր:²⁰¹ Ուստի Ֆ. Էքարտը 1897 թ-ի ապրիլի 13-ի իր նամակում ներկայացնելով արտադրության այդ ճյուղի հեռանկարները՝ թույլտվություն էր խնդրում Ուռհայում համապատասխան ձեռնարկություն հիմնելու համար:²⁰² Բեռլինից ստանալով դրական պատասխան՝ նա և նրա գործընկերներն անցան գործի վարձակալվեց մի ընդարձակ ազարակ. որը կարող էր մի քանի հարյուր հոգու աշխատատեղ ապահովել, կատարվեցին հաստոցների տեղադրումները և 1897 թ-ի մայիսին արտադրամասը սկսեց գործել:²⁰³ Ակզբնապես պատրաստվում էին սովորական գորգեր, սակայն նախատեսվում էր անցնել Ջնյուռնիայի նշանավոր գորգերի արտադրությանը:

Լեփսիուսին և իր բարեկամներին բնականաբար մտահոգում էր ոչ միայն այրիներին, այլև Ուռհայի գերմանական և ամերիկյան որբանոցների սաներին հետազայում աշխատանքով ապահովելու խնդիրը, որոնց ընդհանուր թիվը 1898 թ-ի ամռան սկզբին հասնում էր 500-ի:²⁰⁴ Գորգագործության ընդլայնումը կարող էր նաև այդ տեսանկյունից որոշիչ դեր խաղալ: Ելնելով դրանից, ինչպես և հաշվի առնելով արտադրության զարգացման համար ձեռնարկությունը եվրոպական զարգա-

201. Stü Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 274: Չնայած որ. Շատունկն արդեն ցուցաբերել էր նման նախաձեռնությունը բազմաթիվ կանանց ներգրավելով մետաքսագործության, սավանների, քաշկինակների և տնայնագործական այլ առարկաների պատրաստման մեջ, սակայն գորգագործություն, որպես այդպիսին, Ուռհայում փաստորեն դեռ գոյություն չուներ: Անդ: 202. Անդ:

203. Schäfer R., Geschichte..., էջ 16:

204. Stü Urfa (Türkei), „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 89:

ցած տեխնոլոգիական միջոցներով վերազինելու անհրաժեշտությունը՝ Լեփսիուսը վճռեց Ֆրիզդորֆում գտնվող իր սեփական գորգագործական ֆաբրիկան տեղափոխել Ուռհա և հաստատել այնտեղ:²⁰⁵

1898 թ-ի ապրիլի 4-ին ֆաբրիկայի հաստոցները և ողջ գույքը հինգ հոգուց բաղկացած մի անձնակազմի հետ միասին ծովային ճանապարհով առաքվեցին Ուռհա:²⁰⁶ Նրանցից երեքը՝ գծագրուհի Էմմա Գայթները (Յետազայում Ֆ. Էքարտի կինը), մանածագործ Կարլ Պուլստը և վերջինիս օգնական Կարլ Օտտոն, որոնք մինչ այդ աշխատել էին Ֆրիզդորֆի ֆաբրիկայում, պետք է ղեկավարեին արտադրության վերակազմակերպումը, մասնագիտությամբ վաճառական Ռիխարդ Շեֆերը պետք է իր օգնությունը ցուցաբերեր Ֆ. Էքարտին, իսկ խմբի մյուս անդամը՝ օր. Մարթա Պրոբսթը. նախատեսված էր իգական որբանոցներից մեկը ղեկավարելու համար:²⁰⁷ Մայիսի 5-ին հասնելով Ուռհա նրանք ձեռնամուխ եղան ֆաբրիկայի վերակառուցմանը. որ տեղավորված էր մի շենքի չորս մեծ դահլիճներում:²⁰⁸ Հիմնվեցին նաև մանածագործարան և ներկատուն: Հունքի սկզբնական պաշարների գնման և ֆաբրիկայի գործարկման համար Բեռլինի կոմիտեն նրանց տրամադրեց որոշակի կապիտալ, և ամռանը, Ուռհայում տիրող ծայրահեղ աղքատության ու սովի պայմաններում այն սկսեց շահագործվել:²⁰⁹

Ֆաբրիկայի գործարկումը մեծ օգնություն էր քաղաքի չքավոր հայերի համար: «Մեր այրիների համար դա մեծ թեթևացում եղավ,- գրում էր Ռ. Շեֆերը,- և հույսը կրկին արթնացավ: Բազմաթիվ տարիքավոր և երիտասարդ կանայք, որոնք միանման ծեր էին երևում, սկսեցին աշխատել գորգերի վրա: Մռայլ դեմքերը դարձյալ դարձան ուրախ, և հանկարծակի աչքի զարկեց, որ շատ կանայք այլևս 40-50 տարեկան չէին, ինչպես այդ թվում էր, այլ ընդամենը 20: Նաև ուրախ ծիծաղեցի և լիաբուռ կերպով թնդում: Կարծես մի փոքրիկ պետություն է ստեղծվել»:²¹⁰

205. Անդ: Հմնտ. Lepsius J., 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, էջ 111:

206. Stü Urfa (Türkei), „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 90:

207. Անդ, էջ 89:

208. Schäfer R., Geschichte..., էջ 21:

209. Անդ, էջ 22:

210. Schäfer R., Unter Witwen und Waisen, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 130: Ինչ վերաբերում է վերոհիշյալ խմբի անձնակազմին, ապա Կ. Օտտոն ֆաբրիկայի գործարկումից հետո եզրափակելով իր աշխատանքի մեկ

Տրիգլորֆի հաստոցները մեծ նվաճում էին ֆաբրիկայի համար, բանի որ հներն ավելի աշխատատար լինելով հանդերձ անհամեմատ նվազ արտադրողականություն ունեին: Արտադրության ընդլայնմանը զուգահեռ մեծանում էր վաճառահանման շուկան, իսկ 1898 թ-ի ամռանը սկսեցին կատարվել նաև առաջին արտահանումները: Ինչպես տեղեկացնում էր էքսպորտն իր 1898 թ-ի նոյեմբերի 8-ի նամակում, նշված օրվա դրությամբ Անգլիայում արդեն վաճառվել էին 930 մարկ արժողությամբ գորգեր:²¹¹ 1898 թ-ի ամռանը արտադրանքի առաջին նմուշներն առաքվեցին նաև Գերմանիա, որտեղ դրանց սպառմամբ զբաղվում էր Բեռլինի կոմիտեն:²¹² Վերջինիս միջոցով մի շարք մեծ քաղաքներում կազմակերպվեցին վաճառահանման շուկաներ, իսկ 1898 թ-ի սեպտեմբերի 1-ին Բեռլինում բացվեց նաև հայկական գորգերի և այլ ձեռագործ աշխատանքների մի մշտական ցուցահանդես, որ կանոնավոր գործեց նաև հաջորդ տարիներին:²¹³ Գորգերի իրացումը կազմակերպելու հարցում բնականաբար մեծ էր խաղում ընկերության պարբերական մամուլը. որի միջոցով տեղեկություններ էին հաղորդվում վաճառահանվող գորգերի մասին, և տրվում այն հասցեները, որտեղ կարելի էր դրանք ձեռք բերել:²¹⁴

Ֆաբրիկայի արտադրանքի տեսականու ընդլայնման առումով կարևոր նշանակություն ունեցավ Ֆ. էքսպորտի 1900 թ-ի գարնանը

տարվա պայմանագրային ժամկետը՝ 1899 թ-ին վերադարձավ Գերմանիա: Մեկ տարի անց (1900 թ-ին), նմանապես իր պայմանագրային պարտավորությունների կատարումից հետո վերադարձավ նաև Կ. Պոլստը: Ծանր հիվանդության պատճառով Մ. Պորոստը նույնպես 1899 թ-ի աշնանը ստիպված եղավ աշխատանքից հրաժարվել և Ռ. Շեֆերի ուղեկցությամբ նոյեմբերին վերադարձավ Գերմանիա: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 26: Նրանց հետ Ուռհա գործուղված մյուս անձնավորությունը է. Գայթները, ամուսնանալով Ֆ. էքսպորտի հետ՝ աշխատանքի անցավ գորգի ֆաբրիկայում: Ցավոք, սակայն, նրան վիճակված չէր երկար կիսել իր ամուսնու ժամրաբեռնվածությունը, և 1900 թ-ի դեկտեմբերին, ծանր հիվանդանալով, նա մահացավ: Տե՛ս Franz Eckart, „Der Christliche Orient“, 1919, էջ 44:

211. Eckart F., Das Industrierwerk in Urfa, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 9:

212. Տե՛ս P., Industriehaus, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1896, էջ 96:

213. Տե՛ս Nachrichten, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 135: Դմնտ. Schäfer R., Geschichte..., էջ 16:

214. Lepsius J., Die Teppich-Manufaktur, „Der Christliche Orient“, 1913, էջ 211:

կատարված այցը գորգագործության հայտնի կենտրոններ Ջնյուռնիա և Աշաղ քաղաքները, որտեղ, ծանոթանալով աշխատագործընթացներին, նա սերտ կապ հաստատեց նաև Ջնյուռնիայի անգլիացի հայտնի գործարանատեր Սիդնեյ Լաֆոնտենի հետ:²¹⁵ Վերջինիս հետ համագործակցությունն արդյունավորվեց ոչ միայն փորձի փոխանակման, այլև արտադրանքի իրացման բնագավառում, քանի որ համաձայնություն ձեռք բերվեց Ուռհայի արտադրանքը մատչելի գներով Ջնյուռնիայում վաճառքի հանելու վերաբերյալ:²¹⁶ Այդ կերպ ի հայտ եկավ սպառման մի նոր հեղինակավոր շուկա, և ավելի ոյուրին դարձավ արտադրության հետագա ընդլայնումը, որի կարևորությունը Ուռհայի հայերի համար դժվար էր գերազանահատել: «Վերջին շրջանում այնքան շատ աղքատ կանայք և աղջիկներ են դիմել աշխատանքի համար, որ հաճախ ինձ համար խիստ դժվար է նրանց մերժելը.- գրում էր Էքարտը 1900 թ-ին:- Նրանց զրկանքներն այնքան մեծ են, որ լեզուն չի ենթարկվում բացասական պատասխան տալու: Եվ այնուամենայնիվ մինչև վերջին տեղը զբաղված է... Հաջողվում է մեկին վերցնել, անմիջապես վազելով գալիս են 50-ը, 60-ը, որոնց անուններն ամիսներ և տարիներ ի վեր մեր ցուցակներում կան, խնդրում են, աղերսում ու տխուր հեռանում...»:²¹⁷

Հարկ է, այնուամենայնիվ, նշել, որ չնայած ֆաբրիկայի կարևորությունն ինչպես Ուռհայի չքավոր հայության, այնպես էլ որբանոցի սաների համար միանգամայն ակնբախ էր, այն հանգամանքը, որ առևտրական և ըստ այդմ շահույթ հետապնդող ձեռնարկությունները գերմանական քարոզչական և բարեգործական ընկերությունների պրակտիկայում ընդունված չէին, Գերմանիայի հասարակական որոշ շրջաններում պատճառ էր դառնում ֆաբրիկայի նշանակության թյուր մեկնաբանումների: Ուստի, քանի որ ԳԱԱ-ի բարեկամների շրջանում դեռ 1900-1901 թվականներին սկսեցին ի հայտ գալ մտահոգություններ այն առումով, որ օգնության աշխատանքների նպատակով հատկացվող դրամն օգտագործվում էր առևտրական ձեռնարկության գոր-

215. St'u Eckart F., *Reise nach Smyrna und Aschag*, „Der Christliche Orient“, 1900, էջ 141-144:

216. Eckart F., *Aus Urfa*, անդ, էջ 128:

217. Eckart F., *Reise nach Smyrna und Aschag*, անդ, էջ 144:

ծունելության համար. որպիսին համարվում էր Ուռհայի գորգի ֆաբրիկան,²¹⁸ Լեփսիուսը վճռեց այն ընկերությունից բաժանել: Ըստ այդմ նա 1901 թ-ի ապրիլին ֆաբրիկան ժամանակավորապես փոխանցեց իր անձնական հաշվի վրա՝ բնականաբար ստանձնելով նաև դրա հետ կապված ողջ ռիսկը, իսկ 1904 թ-ի աշնանն այն հանձնեց իր իսկ նախածեռնությամբ ստեղծված Գերմանական արևելյան առևտրաարդյունաբերական ՍՊԸ-ի տնօրինությանը:²¹⁹ որով ընկերության բարեկամների մտահոգությունները բավարարում ստացան. իսկ ֆաբրիկան անարգել շարունակեց գործել: Չնայած վերոնշյալ փոփոխությունից հետո ձեռնարկության աշխատանքների վերաբերյալ ընկերության կողմից այլևս կանոնավոր տեղեկատվություն չէր հրապարակվում, սակայն պահպանված կցկտուր տեղեկություններից պարզ է դառնում, որ իրավականորեն դադարելով ԳԱԱ-ին պատկանել, բայց շարունակելով մնալ որբանոցի տնօրեն Ֆ. Էքարտի ղեկավարման ներքո՝ այն նույնությամբ և հետևողականորեն շարունակել է ծառայել որբանոցի և հայ բնակչության կարիքների բավարարմանը:²²⁰ Բավական է միայն նշել, որ եթե ֆաբրիկան իր գործունեությունը սկսեց 100 աշխատատեղով,²²¹ ապա 1898 թ-ի վերջին այնտեղ մշտական աշխատանքով ապահովվել էին 200,²²² 1900 թ-ին

218. St'u Mitteilung des Vorstandes an die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1908, էջ 85: «Գերմանական միսիոներական շրջաններում այն ժամանակ դեռ պատշաճ ըմբռնում չէր ցուցաբերվում միսիայի միջոցներով «օգնության» արդյունաբերության զարգացման կարևորության հարցում. գրում էր այդ առթիվ Ռ. Շեֆերը:՝ Սակայն Լեփսիուսը և նրա միսիան առաջնորդվում էին այն սկզբունքով, որ անօգնական այրիներին կարճաժամկետ ողորմության փոխարեն անհրաժեշտ էր տևական աշխատանք տալ: St'u Schäfer R., Geschichte..., էջ 37:

219. St'u Mitteilung des Vorstandes an die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1908, էջ 86: Ընկերության համատեղերը, ինչպես տեղեկացվում էր ԳԱԱ-ի տեղեկություններից մեկում, Հայաստանի օգնության աշխատանքներում ներգրավված գերմանացի և շվեյցարացի մի շարք բարեկամներ էին, որոնց անձնամուկները, սակայն, չեն նշվում: St'u Lepsius J., Die Teppich-Manufaktur, „Der Christliche Orient“, 1913, էջ 211:

220. Schäfer R., Geschichte..., էջ 37:

221. Schäfer R., Unter Witwen und Waisen, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 130:

222. Feigel U., Das evangelische..., էջ 118:

300.²²³ 1908 թ-ին 500.²²⁴ իսկ 1913 թ-ին ավելի քան 600²²⁵ ջուլիակու-
հիներ և մանածագործուհիներ: Նրանց համալրումը կատարվում էր ոչ
միայն քաղաքի գործազուրկ այրիների, այլև որբանոցի ավագ սանուհի-
ների միջոցով, որոնց թիվը 1908 թ-ին հասել էր 50-ի:²²⁶

Ուշագրավ է, որ որբանոցն իր ավագ դուստրերին ֆաբրիկայում
աշխատանքի տեղավորելու նպատակով նախապես կազմակերպում
էր 2-4 ամսվա դասընթացներ, որոնց ծախսերը հոգում էր ֆաբրի-
կան,²²⁷ իսկ հաճախ էլ, երբ որբանոցը նյութական կարիքի մեջ էր
հայտնվում, ֆաբրիկան տրամադրում էր անտոկոս և անժամկետ փո-
խառույթուններ:²²⁸ Դաշնակցային այդ փոխհարաբերությունը տարի-
ների ընթացքում անուրանալի կարևոր դեր ունեցավ Ուռնիայում ԳԱԱ-
ի հայանվեր աշխատանքների լիարժեք կազմակերպման համար:

Մասնաճյուղի արդյունաբերական աշխատանքներն, այնուամենայ-
նիվ, միայն գորգի ֆաբրիկայով չէին սահմանափակվում: Երբ Ուռնիայի որ-
բանոցը 1900 թ-ի մայիսին տեղափոխվեց քաղաքի հին քարավանատու-
նը, այնտեղ ի հայտ եկան հնարավորություններ նաև այնպիսի կարևոր
արտադրամասերի ստեղծման համար, ինչպիսիք էին, օրինակ, կաշեգոր-

223. Schäfer R., Geschichte..., էջ 29

224. Eckart F., Zehn Jahre Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 25:

225. Lepsius J., Die Teppich-Manufaktur, „Der Christliche Orient“, 1913, էջ 211:
Չատկանշական է, որ եթե բանվորուհիների գերակշիռ մասն աշխատում էր ֆաբրի-
կայի շենքում, ապա ոմանց համար ստեղծվել էին հնարավորություններ աշխա-
տանքը տանը կատարելու համար: Դա ամենայն հավանականությամբ թելադրված
էր նրանց առանձնահատուկ ընտանեկան պայմաններով: 1908 թ-ին, օրինակ, հիշա-
տակված 500 բանվորուհիներից մոտ 150-ը աշխատում էր տանը: Տե՛ս Eckart F.,
Zehn Jahre Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 25: Ֆաբրիկան, ի
դեպ, ուներ նաև մեծաքանակ սեզոնային աշխատողներ, որոնց մասին այլ՝ ավելի
մանրամասն տվյալներ չեն հաղորդվում:

226. Eckart F., Zehn Jahre Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 25:

Չնայած ֆաբրիկայի բանվորուհիների աշխատավարձի չափի վերաբերյալ ստույգ
տեղեկություններ չեն պահպանվել, այնուհանդերձ Ֆ. Էքարտի՝ 1908 թ-ի տեղեկու-
թյուններից մեկից կարելի է կրահել, որ այն կազմում էր շաբաթական 2 մարկ: Ինչ-
պես էքարտն էր վկայում, այդ գումարը բավարարում էր ավելի քան երկու հոգու
ընկանոն գոյության համար: Անդ, էջ 24:

227. Անդ, էջ 25:

228. Անդ, էջ 26:

ծարանը, կոշկակարանոցը, մանածագործարանը, ատաղծագործարանը, փականագործական արհեստանոցը, լցակարման արհեստանոցը, կարի արտադրամասը, հացաթխարանը, վարսավիրանոցը և այլն:

Այդ արտադրամասերի հիմնումով լուծուն կգտնեին մի շարք կարևոր հիմնահարցեր: Նախ հնարավոր կլիներ սեփական ուժերով բավարարել հաստատության հագուստեղենի, կոշկեղենի, կահույքի և այլ անհրաժեշտ առարկաների պահանջները այդ կերպ դրամի տնտեսումից զատ ապահովելով նաև որակական կողմը.²²⁹ և բացի այդ երեխաների մեջ կարմատավորվեին արհեստագործական հմտություններ²³⁰ նրանց ապագայում հնարավորություն ընձեռելով ինքնուրույն հոգալ իրենց ապրուստը և միաժամանակ նպաստելով նրանց «առողջ» բարոյահոգեբանական նկարագրի ձևավորմանը, հանգամանք, որ ընկերությունը համարում էր երեխաների հանդեպ իր ստանձնած կարևորագույն հանձնառություններից մեկը. «Միսիայի արդյունաբերության զարգացմամբ, արհեստագործական ձեռնարկությունների, արդյունաբերական արտադրության և գյուղատնտեսական փորձակայանների հիմնման միջոցով մենք կարող ենք մեր որբանոցներում աճող աշխատուժերը ինքնուրույն դարձնել և միաժամանակ պահել իրենց դաստիարակների քրիստոնեական ազդեցության տակ: Աշխատանքը է և կմնա քրիստոնեական նկարագրի ձևավորման անփոխարինելի դպրոցը»:²³¹

Եթե գորգի ֆաբրիկան հատկապես կարևոր նշանակություն ուներ աղջիկների մասնագիտացման հարցում, ապա մյուս ձեռնարկությունները նույն դերը պիտի ունենային տղաների համար. ուստի որբանոցի տեղափոխումից հետո սկսվեցին արհեստանոցների հիմնման աշխատանքները: 1901 թ-ի ապրիլին ատաղծագործական արհեստանոցը

229. Ֆ. Էքարտին և իր բարեկամներին այդ առումով առանձնապես ոգևորում էր Վալդի դր. Նոյնդլիի ղեկավարությամբ գործող ամերիկյան որբանոցի օրինակը, որտեղ «ոչինչ չէր զնվում» և հաստատությանն անհրաժեշտ բոլոր պարագաները (ներառյալ նաև կարմիր ֆեսերը) պատրաստվում էին սեփական ձեռնարկություններում: «Եթե նույնիսկ մենք մեզ այժմ դեռ իրավունք չենք վերապահում ֆեսեր արտադրել,- նշում էր Էքարտը 1901 թ-ին,- ապա մնացած բաներում պետք է հետևենք այդ մարդու գերազանց սկզբունքներին»: Sten Eckart F., Industrie und Handwerk in Urfa, „Der Christliche Orient“, 1901, էջ 48:

230. Lepsius J., Die Handwerksbetriebe des Waisenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 4:

231. Lepsius J., Rückblick und Ausblick, „Der Christliche Orient“, 1902, էջ 147:

ղեկավարելու համար իր կնոջ հետ Գերմանիայից Ուռհա մեկնեց ատաղձագործ վարպետ Օտտո Կամինը:²³² Նրանց միացավ նաև Ֆ. Էքարտի եղբայրը Բրունո Էքարտը, որն այնուհետև որպես գծագրող ներգրավվեց ֆաբրիկայի աշխատանքներում:²³³ Կարճ ժամանակ անց Ուռհա ուղարկվեցին ժամանակակից գործիքներ և սարքավորումներ, որից հետո հյուսնարանի գործունեությունը մտավ իր հունի մեջ:²³⁴

Մյուս ձեռնարկությունների ղեկավարման համար հրավիրվեցին տեղացի հայ վարպետներ,²³⁵ իսկ 1902 թ-ին արդյունաբերական աշխատանքներին աջակցելու նպատակով իր ընտանիքի հետ Ուռհա մեկնեց մասնագիտությամբ վաճառական Վիլլի Ջեգերը, որը մինչ այդ աշխատում էր ընկերության Բեռլինի գրասենյակում:²³⁶

Ինչևէ, աշխատանքներն սկսվեցին գրանցելով մեծ հաջողություններ: Երեխաների ուսուցումն ուրախալի արդյունքներ տվեց արհեստագործության բոլոր ճյուղերում, և նրանցից շատերը կարճ ժամանակում կատարելապես տիրապետեցին իրենց մասնագիտությանը դառնալով ինքնուրույն արհեստագործներ: Արդեն 1901 թ-ին, օրինակ, ատաղձագործական աշխատանքների մեծ մասը կատարվում էր ավագ տղաների միջոցով: Նրանք էին մատակարարում նաև հաստատության կոշիկի ամենամյա քանակահին, որ տարեկան կազմում էր մոտ 700 զույգ, ինչպես և կարի արտադրամասում օգտագործվող ողջ կտորեղենը:²³⁷ Թելի և կտորեղենի պատրաստումից ընդհուպ մինչև պատրաստի ար-

232. Stü Das Waisenwerk, „Der Christliche Orient“, 1901, էջ 46:

233. Անդ:

234. Camin O., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1903, էջ 111-112:

235. Eckart F., An die Pflegeeltern unserer Urfa´er Waisenkinder, „Der Christliche Orient“, 1902, էջ 22: Նրանց անունները մեծ մասամբ չեն նշվում: Հայտնի է միայն, որ կարի արտադրամասի և վարսավիրանոցի ղեկավարումը ստանձնել էր որբանոցի աշխատակից Հովհաննես Էֆենդու կինը՝ Թումա խանումը, որը քաղաքում լավագույն դերձակուհու համբավ էր վայելում: Stü Jeppe K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 178:

236. Schäfer R., Geschichte..., էջ 42: Վ. Ջեգերն Ուռհայում գործեց մինչև 1909 թ-ը, որից հետո վերադարձավ Գերմանիա: Stü Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1909, էջ 170:

237. Eckart F., An die Pflegeeltern unserer Urfa´er Waisenkinder, „Der Christliche Orient“, 1902, էջ 23:

տաղրանքի թողարկումն ընկած բոլոր գործընթացները տեղի էին ունենում Ուռհայի արտադրամասերում. իսկ հարկ եղած դեպքում իր օժանդակությունն էր բերում նաև գորգագործական ֆաբրիկան:

Ինչ վերաբերում էր ավագ աղջիկներին, ապա նրանք նույնպես որբանոցի տնօրինության որոշմամբ պետք է հաջորդաբար հմտանային ձեռքի աշխատանքներում: Այդ առումով առաջին տեղում անշուշտ գորգագործությունն էր, որին հաջորդում էին կարի արտադրամասը, լցակարման բաժանմունքը (հագուստներ և այլն նորոգելու համար), խոհանոցը, փուռը, լվացքատունը, հիվանդախնամության բաժանմունքը և այլն:²³⁸ Որբանոցի սաներն արագ տիրապետում էին նշված մասնագիտություններին ի վիճակի լինելով այնուհետև միայնակ զբաղվել դրանցով: Օրինակ, 1901 թ-ին որբանոցի ամենօրյա օգտագործման ավելի քան երեք ցեներներ հացը թխվում էր միայն աղջիկների ուժերով:²³⁹ Կարի արտադրամասի երեխաները բավարարում էին հաստատության հագուստեղենի բոլոր պահանջները, որոնք կազմում էին տարեկան 700 վերնագզետ, 700 վերնաշապիկ, 700 անդրավարտիք, 350 իրանակալ և այլն:²⁴⁰ Բացի այդ, արտադրամասն ապահովում էր նաև անձեռոցիկների, սեղանի սփռոցների, մահճակալների ծածկոցների, հատակի ծածկույթի և նման այլ կենցաղային առարկաների մատակարարումը:²⁴¹

Արհեստանոցները շարունակ ընդարձակվում էին, բնականաբար ավելանում էր նաև նրանցում ընդգրկված երեխաների թվաքանակը, և ևս երկու տարի անց, 1903 թ-ին, ինչպես տեղեկացնում էր Լեփսիուսը, Ուռհայի որբանոցի արհեստագործական ձեռնարկությունների

238. Eckart F., *Industrie und Handwerk in Urfa*, „Der Christliche Orient“, 1901, էջ 48:

239. Անդ, էջ 180:

240. Eckart F., *An die Pflegeeltern unserer Urfa´er Waisenkinder*, „Der Christliche Orient“, 1902, էջ 22:

241. Eckart F., *Industrie und Handwerk in Urfa*, „Der Christliche Orient“, 1901, էջ 49: Այդ ամենի շնորհիվ դեռ 1901 թ-ին աշխատանքից ազատվեցին ուսուցչուհին, լվացարարուհի կանանց կեսը, խոհարարուհիները, և հնարավորություն ստեղծվեց կատարել զգալի ֆինանսական տնտեսումներ: Տես Eckart E., *Aus Urfa*, անդ, էջ 180: Որբանոցի ղեկավարությունը մտադիր էր հիմնել նաև մետաքսագործությունը, և 1906 թ-ից սկսվեցին շերամարուծության աշխատանքները: Տես Jeppe K., *Das Waisenhaus in Urfa*, „Der Christliche Orient“, 1908, էջ 176: Համապատասխան հողամասի և սեփական հումքի քացակայության պատճառով, սակայն, այդ հաջողություն չունեցավ:

հետ կապված՝ առաջնագույն ծրագիրն արդեն իրագործվել էր. երեխաների բուլոր կարիքներն արդեն բավարարվում էին սեփական ուժերով. և բացի այդ ստեղծվել էին բուլոր հնարավորություններն ըստ ունակության և նախասիրության նրանց արհեստագործական ուսուցմը կազմակերպելու համար: ²⁴²

Արհեստանոցների նշանակությունը, սակայն, այդքանով չէր սահմանափակվում: Դրանք պետք է շարունակեին ընդլայնվել նպաստելով որբանոցի մասնակի, իսկ հետագայում նաև լիարժեք նյութական անկախությանը, քանի որ այլապես, ինչպես Յեպեն էր նշում. նվիրատվությանը ապրող հաստատությունը չէր կարող «հաստատուն ապագա» ունենալ: ²⁴³ Արտադրության ընդլայնումը բնականաբար պետք է դրդեր դուրս գալ շուկա, որ հնարավոր էր մրցակցության արգելքները հաղթահարելու դեպքում: Տեղացի արհեստագործները սովորաբար ձգտում էին թողարկել հնարավորին չափ էժանագին ապրանքներ իհարկե, այդ պարագայում անտեսելով դրանց որակական կողմը: Կ. Յեպեն և իր գործընկերները, սակայն, այն համոզմանն էին, որ լավագույն ապրանքը ժամանակի ընթացքում դառնում է ամենագնայունը, և առաջնահերթ նշանակություն էին տալիս արտադրանքի որակային ցուցանիշներին: Եթե նույնիսկ այն այդ պատճառով պետք է ավելի թանկ վաճառվեր, այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեց փորձը, դժվարը միայն սկիզբն էր:

Որբանոցի արտադրանքը քաղաքի թե քրիստոնյա և թե մահմեդական բնակչության մեջ այնպիսի մեծ համբավ ձեռք բերեց, որ 1903 թ-ից սկսեցին նույնիսկ պատվերներ ստացվել: ²⁴⁴ Շուկայի ընդլայնմանը զուգահեռ տեղի էր ունենում նաև արտադրության ընդարձակում: Երեք տարվա ընթացքում՝ 1905-1908 թվականներին. օրինակ, մանածագործական արտադրանքը գրեթե եռապատկվեց: ²⁴⁵ Այդ զարգացման հետևանքով 1906 թ-ին ձեռնարկությունները կարողացան ինքնաձայնասածակմամբ որբանոցից ֆինանսապես անկախանալ, իսկ տարեվերջից հաստատությանը նույնիսկ մեծաքանակ

242. Lepsius J., Die Generalversammlung der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1904, էջ 17:

243. Տե՛ս Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 119:

244. Camin O., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1903, էջ 112:

245. Jeppe K., Das Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 176:

նյութական օգնություն ցուցաբերել:²⁴⁶ 1906-1907 թվականներին այն կազմեց շուրջ 6000 մարկ,²⁴⁷ որից 3000-ը գոյացել էր միայն 1907 թ-ի առաջին կիսամյակի ընթացքում:²⁴⁸ Եվս հինգ տարի անց, 1912 թ-ին, բացի զանազան օժանդակություններից նրանք հատուցում էին որբանոցի շենքի վարձավճարի մի մասը (մոտ 600 մարկ), տնային կառավարչի աշխատավարձը (800 մարկ), և արտադրությունում ընդգրկված երեխաների դպրոցական պարապմունքների ծախսերը (մոտ 100 մարկ):²⁴⁹ Դժվար է գերազնահատել այդ աջակցության կարևորությունը, եթե նկատի առնվի, որ որբանոցում անհրաժեշտաբար կատարվող ծախսերը հաճախ գերազանցում էին ԳԱԱ-ի կողմից հաստատությանը հատկացվող միջոցները:

Արժե նշել, որ որբանոցի օրինակը, որն, առանձնապես կաշվե և գործվածքային արտադրանքի բնագավառում, որևէ մրցակից չուներ,²⁵⁰ վարակիչ ազդեցություն ունեցավ նաև տեղացի արհեստագործների համար՝ նրանց նույնպես դրդելով աշխատել որակի առաջնահերթության սկզբունքով: «Վերջին տարիներին,-նշում էր այդ առթիվ Կ. Յեպեն,- մենք մեծագույն ուրախություն ապրեցինք՝ տեսնելով, որ տեղացի արհեստագործները հետևում են մեր օրինակին և սկսում են նույն ճանապարհով գնալ: Դեռ ամեն ինչ չէ, որ հարթ է ընթանում, քանի որ ավելի հեշտ է արտադրությունը անկման հասցնել, քան այն բարելավել, և նրանց կրթությունն էլ սահմանափակ է: Սակայն այն, որ նրանք տեսել են այդ ուղին, որ նրանց համար արդեն պարզ է, որ ոչ թե խաբեությամբ, այլ միայն խղճմիտ աշխատանքով կարող են իրենց թշվառ դրությունից դուրս գալ, այդ արդեն իսկ շատ

246. Lepsius J., Unsere Waisenhäuser, անդ, էջ 16:

247. Տե՛ս Die Generalversammlung der Deutschen Orient-Mission, անդ, էջ 91:

248. Eckart F., Zehn Jahre Arbeit in Urfa, անդ, էջ 22:

249. Jeppe K., Die Handwerksbetriebe des Waisenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 6: Արտադրական ճյուղերից ամենաեկամտաբերը մանածագործությունն էր: Անդ, էջ 7:

250. Դա տեղական արհեստագործներին երբեմն մղում էր այնպիսի արտառոց ձեռնարկումների, ինչպիսին օրինակ տեղի էր ունեցել Դիարբեքիում: Այնտեղ, ինչպես վկայում էր Պ. Ռոիրբախը, մի տեղական կաշեգործարան սկսել էր իր արտադրանքի վրա ամրացնել «Ուռնա» կեղծ պիտակը: Տե՛ս Rohrbach P., Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 84:

է, և դրա համար մենք պետք է շնորհակալություն հայտնենք Աստծուն: Թող նրանք քայլ առ քայլ առաջանան»: ²⁵¹

Հատկանշական է, որ բացի որբանոցի սաներից ձեռնարկություններում նաև Ուռհայի ունեզուրկ բազմանդամ հայ ընտանիքներից էին աշխատողներ ներգրավվում, որոնց Յեպեն ջանում էր հնարավորինս բարձր աշխատավարձեր հատկացնել: 1909 թ-ի ընթացքում, օրինակ, այդ ընդհանուր թվով 16 աշխատողներից յուրաքանչյուրը շաբաթական ստանում էր 30 պիաստր, որ կազմում էր մոտավորապես 4 մարկ՝ լիուլի ապահովվելով նրանց ընտանիքների գոյությունը: ²⁵²

Ինչևէ, վերոնշյալ ուրախալի առաջընթացը, որ հնարավոր դարձավ գլխավորապես Կ. Յեպեի բանիմաց ղեկավարման և վերահսկողության շնորհիվ, խոստանում էր տարիների ընթացքում ձեռնարկությունները վերածել մի հզոր արտադրական համալիրի, ²⁵³ սակայն մոտալուտ պատերազմն այդ հնարավորությունն է չիք դարձրեց:



Ուռհայի որբանոցի սաներն աշխատանքի պահին

251. Jeppe K., Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 195:
252. Jeppe K., Der pädagogische Wert der Handwerksbetriebe des Waisenhauses, „Der Christliche Orient“, 1910, էջ 84:

253. «Արհեստանոցները նույնպես իրենց ծաղկման համար պարտական են Յեպեին, նշում էր դր. Ռոիրբախը, որը տարիների փորձառության միջոցով պատրաստվածությունը բերել է մեծ բարձրության վրա և վերահսկել, որ երբեք, նույնիսկ շուկայական աննպաստ իրադրության դեպքում արտադրությունը չչեղվի բարձր որակի և հաստատուն գների սկզբունքից: Դրանով այդ արտադրամասերն այնպիսի հիմքերի վրա են դրվել, որ բավականաչափ կապիտալի ներդրման դեպքում կարող են վերածվել շահութաբեր մեծ ձեռնարկությունների»: Տն՝ս Rohrbaeh P., Bericht aus Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 84:

2. 1. 3. Բուժսպասարկման աշխատանքները

Ուռհայուն Լեփսիուսի և նրա ընկերության հաջորդ ծեռնարկումը դարձավ բուժսպասարկման կազմակերպումը, որի կարիքն ուներ ոչ միայն որբանոցն, այլև քաղաքի և շրջակա բնակավայրերի բնակչությունը,²⁵⁴ և որը պետք է մատչելի լիներ թե քրիստոնյաների և թե մահմեդականների համար: ԳԱԱ-ի կողմից վերջին հանգամանքը կարևորվում էր, մասնավորապես, մահմեդական աշխարհին քրիստոնեական մարդասիրությանը և բարոյախոսության արժեքներին հաղորդակից դարձնելու, այլ կերպ ասած՝ անուղղակի, սակայն ներգործուն «քարոզչություն» ծավալելու առումով:²⁵⁵ Այդ նպատակով 1897 թ-ի մայի-

254. St'u Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 333-334: Ուռհայուն ոչ մի բժշկական հաստատություն չկար, այլ միայն մի հայ բժիշկ՝ Այնթապի բժշկական դպրոցի շրջանավարտ Աբրահամ Աթաբյանը, որը միայնակ անկարող էր բավարարել բնակչության կարիքները: St'u Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, անդ, էջ 418:

255. ԳԱԱ-ի համոզմամբ սիրո, անձնվիրության և մարդասիրության դրսևորման միջոցով քրիստոնեությունն ավելի կենդանի և առարկայականորեն էր ներկայացնում մահմեդականությանը, քան այդ կարող էր անել որևէ քարոզչությունը, և այդ կերպ ընկալելի էին դառնում նաև իսլամի հանդեպ նրա առավելությունները: Հատկապես Թուրքիայում, որտեղ առանց այդ էլ անկարելի էր ուղղակի քարոզչություն ծավալել, դա ձեռք էր բերում առանձնահատուկ մեծ նշանակություն: Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 138-140: «Ինչպե՞ս կարող են նրանք քրիստոնյաների հանդեպ հարգանք տածել,- նշում էր այդ առթիվ Ա. Ֆիշերը,- եթե վերջիններս Քրիստոսի պատվիրանները չեն կատարում: Ինչպե՞ս կարող է մի մեռած քրիստոնեություն նրանց մեջ տենչանք արթնացնել Քրիստոսի կողմից ծանուցված ավետիսի հանդեպ: Մենք պետք է կենդանի քրիստոնեություն ցուցադրենք, այնպես որ մահմեդականները համակվեն և միմյանց ասեն. Մահմեդն ավելի այնտեղ է...»: Անդ, էջ 138: Հարկ է անշուշտ նկատի առնել, որ կազմակերպության հայանապատ գործունեությունը և մահմեդական շրջաններում քրիստոնեության տարածման ձգտումներն առանձին ու ինքնաբավ նկարագիր չունեին, այլ սերտորեն փոխալսյանավորված էին միմյանցով, քանի որ ԳԱԱ-ն Թուրքիայում քրիստոնեության տարածումը համարում էր այնտեղ ապրող քրիստոնյա ժողովուրդների անվտանգության ամենահեռանկարային երաշխիքներից մեկը: St'u Lepsius J., Die politische und religiöse Wiedergeburt des Orients, „Der Christliche Orient“, 1908, էջ 149:

սի վերջին ընկերությունն Ուռհա առաքեց շվեյցարական գերմանուհի բժշկուհի օր. Յոզեֆինա Յյուրխերին. որը գործիքներով, դեղորայքով և այլ անհրաժեշտ պարագաներով հուլիսի 3-ին հասավ այնտեղ ու ձեռնամուխ եղավ իր պարտականություններին:²⁵⁶

Հուլիսի 22-ին կատարվեց կլինիկայի բացումը, որ տեղավորված էր այդ նպատակով վարձակալված մի շենքում ²⁵⁷ և հավասարապես ծառայում էր բոլոր կարիքավորներին՝ անկախ ազգությունից և կրոնից: Ընդ որում աղքատները և գործազուրկները սպասարկումն ու դեղորայքը անհատույց էին ստանում: Աշխատանքով ապահովված, սակայն ոչ ունևոր հիվանդները վճարում էին դեղորայքի մասնակի արժեքը, իսկ հարուստները վճարումը կատարում էին ըստ եվրոպական գների:²⁵⁸ Վճարման այդ սկզբունքը հնարավորություն էր ընձեռում զգալիորեն հատուցել նաև անվճար սպասարկման ծախսերը: Օրինակ, ինչպես Յյուրխերն էր տեղեկացնում իր նամակներից մեկում, առաջին 32 վիրահատվածներից վճարում էին կատարել միայն երկուսը, որով հատուցվել էր մյուս վիրահատությունների համար ծախսված վիրակապերի ամբողջ արժեքը:²⁵⁹

Կլինիկայի գործունեության միայն առաջին յոթ շաբաթներին տեղի ունեցավ 2022, այսինքն օրական միջին հաշվով 48-50 բժշկական տեսակցություն, որոնց ընթացքում հետազոտվեցին և սպասարկվեցին 644 հիվանդներ: Կատարվեց նաև 32 հիվանդների վիրահատություն, որոնցից երկու երրորդը հայեր էին, իսկ մեկ երրորդը թուրքեր և այլազգիներ: Ինչ վերաբերում էր գերմանական և ամերիկյան որբանոցների երեխաներին, ապա նրանք երկու շաբաթը մեկ անգամ ենթարկվում էին բժշկական ստուգման, իսկ խնամքի տակ վերցվող նոր որբերը նախապես տարվում էին կլինիկա առողջական վիճակի ստուգման համար:²⁶⁰

256. Zürcher J., Die deutsche Klinik in Urfa, անդ, 1897, էջ 417:

257. Շենքի գնումը, ինչպես տեղեկացվում էր հետագայում, նախապահարմար չէր լինի, քանի որ կառավարությունը կասկածամտությամբ և բռնամանքով էր վերաբերվում Ուռհայում հաստատված օտարերկրացիներին, մինչդեռ վարձակալումն ավելի հեշտ կլիներ՝ տպավորություն ստեղծելով, որ նրանց գործունեությունը ժամանակավոր քնույթ էր կրում: Տե՛ս Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 27:

258. Տե՛ս Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 475-476:

259. Անդ, էջ 476:

260. Անդ:

3. Յյուրիսերի թարգմանչի և օգնականի պարտականությունները կատարում էր Ա. Աթարյանը, որն, ի դեպ, հայերենից բացի տիրապետում էր նաև թուրքերեն, քրդերեն և արաբերեն լեզուներին,²⁶¹ իսկ Սարգիս անունով մի երիտասարդ ներգրավվել էր որպես դեղագործ:²⁶² Նրանց ուժերով աշխատանքն անընդմեջ շարունակվեց նաև տարվա հաջորդ ամիսներին, և չնայած դրանց վերաբերյալ բավարար վիճակագրական տեղեկություններ չեն պահպանվել, այնուամենայնիվ այն փաստը, որ մինչև 1897 թ-ի վերջը կատարվել է 11970 բժշկական տեսակցություն,²⁶³ թույլ է տալիս ենթադրել, որ համաճարակը պետք է բազապատկված լինեմ նաև մյուս ցուցանիշները:

3. Յյուրիսերի գործունեությունն Ուռհայում տևեց շուրջ յոթ ամիս: Տարեվերջին նա և Ֆալչերը անուսնացան և 1898 թ-ի սկզբին սեփական ցանկությամբ հեռացան այնտեղից:²⁶⁴ Նրանց մեկնումից հետո կլինիկայի աշխատանքները ժամանակավորապես շարունակեց Ա. Աթարյանը,²⁶⁵ իսկ 1898 թ-ի աշնանը ԳԱԱ-ի առաջարկով հաստատության ղեկավարումը ստանձնեց Բազելի քաղաքային հիվանդանոցի բժիշկ, ազգությամբ գերմանացի դր. Յերման Խրիստը, որը հոկտեմբերի վերջին թուրքական դիպլոմ ստանալու համար մեկնեց Կ. Պոլիս, իսկ դեկտեմբերի 22-ին արդեն Ուռհայում էր ձեռնամուխ լինելով իր հանձնառություններին:²⁶⁶ Չնայած Ա. Աթարյանն, ինչպես նախկինում,

261. Christ H., Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1900, էջ 70:

262. Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 28:

263. Տն՝ Սբ՝ Մեջ (Türkei), „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 89:

264. Անդ: Յ. Յյուրիսերը 1898 թ-ը անցկացրեց Չալեպում, իսկ այնուհետև մեկնեց Այնթապ, որտեղ ժառանգության մտավ տեղի ամերիկյան հիվանդանոցում: Մեկ տարի այնտեղ աշխատելուց հետո, 1899 թ-ին նա մեկնեց Բեյրութ, իսկ մարտին Կ. Պոլիս թուրքական բժշկական դիպլոմ ստանալու համար, ինչը, սակայն, նրան չհաջողվեց, քանի որ Թուրքիայում կամանց մման դիպլոմներ չէին հատկացնում: Նրա մասին այլ տեղեկություններ գրեթե չեն պահպանվել: Տն՝ Meyer K., Armenien und die Schweiz, Bern, 1974, էջ 253:

265. Տն՝ Սբ՝ Մեջ (Türkei), „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 89:

266. Der gegenwärtige Stand und die Aufgaben unseres Hilfswerkes, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 31: Հմմտ. Meyer K., Armenien..., էջ 61: Հարկ է նշել, որ օտարերկրացի բժիշկները Թուրքիայում գործել կարողանալու համար պարտավոր էին ունենալ թուրքական դիպլոմ, քանի որ թուրքական օրենքն արգե-

շարունակում էր օգնականի, քարզանչի և դեղագործի իր ծառայությունը, այնուամենայնիվ շուտով աշխատանքների ծանրաբեռնվածության պատճառով նոր օգնականի կարիք նույնպես զգացվեց, և դր. Խրիստի առաջարկով Լեփսիուսն Ուռհա առաքեց Բազելի հիշյալ հիվանդանոցի հիվանդապահ Յակոբ Կյունցլերին, որն իր աշխատանքն այնտեղ սկսեց 1899 թ-ի դեկտեմբերին:²⁶⁷

Դր. Խրիստի առաջնահերթ մտահոգությունը հիվանդների ստացիոնար բուժման կազմակերպումն էր, քանի որ, նրա համոզմամբ, «խրոնիկական տառապանքների» մատնված՝ հայ ընտանիքների մեծ մասը զուրկ էր հետվիրահատական շրջանում հիվանդին խնամելու հնարավորությունից, ինչը նույնիսկ ոչ ծանր հիվանդությունների դեպքում հանգեցնում էր մահվան, և բացի այդ Ուռհայում որևէ այլընտանքային հիվանդանոց չկար, իսկ ամենամերձակա՝ Այնթապի հիվանդանոցը գտնվում էր երեք օրվա հեռավորության վրա, որից, բնականաբար, հիվանդներն օգտվել չէին կարող:²⁶⁸ Ուստի վիրահատվածներին որոշ ժամանակ կլինիկայում պահելու նպատակով

լում էր այնտեղ օտար դիպլոմներով բժկական գործունեությամբ զբաղվել: Այն, թե այդ օրերն էր իրականում որքան ինքնանպատակ էր, վկայում էր նաև դր. Խրիստի օրինակը, որն ընդհանուր հաշվով 7 թույն տևող քննության, ինչպես և դիպլոմը ստանալու համար հարկադրված եղավ Կ. Պոլսում սպասել շուրջ մեկ ամիս: «Երեք համազգեստավոր էֆենդիներ՝ քեյեր կան նույնիսկ փաշաներ, որոնք այնտեղ նստած դահլիճ էին խաչտուն և ծխում էին, ինձ գլխի շարժումով հրավիրեցին նստել աթոռի վրա: Նրանցից յուրաքանչյուրը մի քանի հարց տվեց: ...Ամենադժվարն այդ պարոններից հասկանալն էր, որոնց հարցերը հետևյալն էին. «Որո՞նք են վրա հասած մահի նշանները: ...Ինչպե՞ս կարելի է ճանաչել ոսկորի կոտրվածքը...»: Անդ, էջ 60:

267. Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 29: 3. Կյունցլերը ծնվել է 1871 թ-ի մարտի 8-ին Շվեյցարիայում, գերմանացի որմնադիրի ընտանիքում: Վաղ պատանեկությունից որպես հիվանդապահ աշխատանքի անցնելով Բազելի քաղաքապետական հիվանդանոցում նա այնտեղ էլ ծանոթացել էր բժիշկ Դ. Խրիստի հետ, որին այնուհետև շարունակեց աշխատակցել Ուռհայում: Տե՛ս Ալեմետտին Ի., Փափա Զիւնցլեր եւ հայերը, Անթիլիաս, 1999, էջ 21-25: 268. Christ H., Aus der Stadt Abrahams, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 113: Դ. Խրիստի տեղեկագրերը լի էին Ուռհայի հայության՝ զոկալից դուրս գալու վկայություններով. «Դայ ժողովրդի տառապալից դրությունը, որի համար մեք այստեղ եկանք, այժմ ճգնաժամային փուլից դարձյալ թևակոխել է խրոնիկական փուլը»,- նշում նա իր նամակներից մեկում: Տե՛ս անդ, էջ 112: «Դայ ժողովրդի ծանր դրությունն իմ տեսակցությունների ընթացքում խիստ տպավորիչ է առարկայանում,- գրում էր նա

ժամանակավորապես հիվանդանոցի վերածվեցին սպասարահն ու վիրահատարանը,²⁶⁹ իսկ որոշ ժամանակ անց քաղաքի կենտրոնում երեք տարի ժամկետով վարձակալվեց մի շենք, և 1900 թ-ի հունիսի 5-ին հիվանդանոցն ու կլինիկան տեղափոխվեցին այնտեղ:²⁷⁰

Քանի որ հաստատության համբավը և համապատասխանաբար նաև հիվանդների հոսքը շարունակ մեծանում էր, և որոշ ժամանակ անց դարձյալ ի հայտ եկավ ընդլայնման անհրաժեշտությունը,²⁷¹ 1901 թ-ին նախատեսվել էր գնել քաղաքի հյուսիսային հատվածում, որբանոցին հանդիպակաց վայրում գտնվող մի ընդարձակ տարածք այն մի նոր, ընդարձակ հիվանդանոցի շինարարությանը հատկացնելու համար:²⁷² Ծրագիրը չիրականացավ, քանի որ կառավարությունը հրաժարվեց վավերացնել գնման գործարքը,²⁷³ ուստի վճռվեց քաղաքի արվարձաններից մեկում ձեռք բերել մի տուն հաստատությունն այնտեղ փոխադրելու համար: Տունը, որն իրենից մի կիսակառույց էր ներկայացնում և ուներ նաև ընդարձակ հողամաս, մասնաձյուղի տնօրինությունը գնեց և ձևակերպեց մի տեղացի հայի՝ Կարապետ Իմիրձյանի անունով՝ նրա հետ կնքելով այսպես կոչված՝ վարձակալման պայմանագիր:²⁷⁴ Այնուհետև, 1903 թ-ի հոկտեմբերին

մեկ ուրիշ անգամ:- Այն զանգառները, որոնց պատճառով նրանք գալիս են, ապրած սարսափների, կարիքների, աղքատության և թանկացումների հետևանք են: ...Նրանք դեռ ամենևին չեն հանգատացել աղետից հետո»: Տե՛ս Christ H., Deutsche Klinik in Urfa, անդ, էջ 45-46:

269. Christ H., Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1900, էջ 74:

270. Künzler J., Die Missionsklinik in Urfa, անդ, 1901, էջ 8:

271. Künzler J., Dreißig Jahre..., էջ 18: Եննքն ուներ միայն երկու հիվանդասենյակ երեքական մահճակալներով: Տե՛ս Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 29:

272. Lepsius J., Bitte der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1901, էջ 101:

273. Օտարերկրացիների կողմից տների և հողամասերի սեփականացման համար Թուրքիայում անհրաժեշտ էր ունենալ հատուկ ֆերման, որը, հսկառակ գործարքված հյուպատոսական միջանորություններին, ՉԱԼ-ին տարիներ շարունակ չէր հատկացվում: Հողամասի գնման պաշտոնական ձևակերպումը կատարվեց միայն 1911 թ-ի հոկտեմբերին, մասնաձյուղի տնօրինության 9 տարվա անդուլ ջանքերից, բազմաթիվ դիմումներից և թղթակցություններից հետո: Տե՛ս Künzler J., Missionsspital Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 190:

274. Künzler J., Dreißig Jahre..., էջ 18:

սկսվեց կառույցի ընդլայնման շինարարությունը, իսկ 1904 թ-ի մարտին ողջ հաստատությունը, ներառյալ նաև դեղատունն ու կլինիկան, տեղափոխվեցին այնտեղ:²⁷⁵ Նորակառույցի չորս ընդարձակ սենյակներ, որտեղ նախատեսված էր տեղավորել 12-14 հիվանդների, ծառայում էին որպես հիվանդանոց,²⁷⁶ իսկ մյուս՝ թվով ութ սենյակները վերածվեցին կլինիկայի, դեղատան և բնակարանների:²⁷⁷

Տարածքի ընդլայնումը հնարավորություն ընձեռեց ընդլայնել նաև աշխատանքներն ու համապատասխանաբար սպասարկող անձնակազմը, և եթե նախկինում հիվանդանոցում պահվող հիվանդների խնամքն իրականացվում էր նրանց ազգականների կողմից,²⁷⁸ ապա 1902 թ-ից այդ գործը կատարում էին հիվանդապահուհիները, որոնք ընտրվում էին Ուռհայի հայ համայնքից կամ որբանոցից:²⁷⁹

Դր. Խրիստը նույնպես իր գործունեությունը սկսեց համաձայն նախկինում որդեգրված սկզբունքների. «Կլինիկայում, որն առաջին հերթին ծառայում է հայ այրիներին և որբերին, սպասարկվում են նաև թուրքեր, արաբներ և քրդեր, ընդ որում չքավորները անվճար,- նշվում էր ԳԱԱ-ի տեղեկատվության մեջ: - Վճարում է նա, ով կարողանում է վճարել»:²⁸⁰ Դա բնականաբար վերաբերում էր նաև հիվանդանոցին և դեղատանը: Ինչպես տեղեկացնում էր դր. Խրիստն իր 1899 թ-ի օգոստոսի 12-ի հաշվետվության մեջ, իր կողմից սպասարկված հիվանդ այցելուների գերակշռող մասը՝ 85 տոկոսը, հայեր էին, 10 տո-

275. Տե՛ս Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 31:

276. Այնուամենայնիվ հիվանդանոցի գերծանրաբեռնվածության պատճառով հետագայում այնտեղ տեղավորված հիվանդների քանակը հազվադեպ էր իջնում 20-ից: Տե՛ս Künzler J., Urfa-Spital, „Der Christliche Orient“, 1910, էջ 207:

277 1907 թ-ին շենքում կառուցվեցին նաև նկուղ և լվացքատուն, որի շնորհիվ հնարավոր դարձավ կանոնավոր կերպով լվանալ հիվանդների սպիտակեղենը: Տե՛ս Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1907, էջ 130:

278 Christ H., Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1900, էջ 74:

279. 1902 թ. հիվանդանոցում աշխատանքի ընդունվեց առաջին հիվանդապահուհին՝ Աննա Տաչյանը: Տե՛ս Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 30:

280. Տե՛ս Der gegenwärtige Stand und die Aufgaben unseres Hilfswerkes, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 31:

կոսը ասորիներ, իսկ 5-ը թուրքեր. արաբներ ու քրդեր, չնայած այն բանին, որ մահմեդականները կազմում էին քաղաքի բնակչության ավելի քան երկու երրորդը:²⁸¹ Եթե հաշվի առնենք, որ այդ հարաբերակցությունը եական փոփոխություններ չկրեց նաև հաջորդ տարիներին,²⁸² ապա պարզ կլինի. թե հաստատությունը որպիսի կենսական նշանակություն ուներ տարածաշրջանի հայության համար: «Հայերու մեծամասնութիւնը.- գրում էր ուռհաբնակ ժամանակակից Յովսեփ Ալահայտոյանը.- կը ստանար ծրի դարմանում և ծրի դեղ, շատ քիչերէն կը ստացուէր չնչին վարձատրութիւն մը: Իսկ թուրքերուն մեծամասնութիւնը և հարուստ հայերը պարտավոր էին վճարել»:²⁸³

281. Christ H., Bericht des Herrn Dr. Christ über seine ärztliche Tätigkeit in Urfa, անդ, էջ 145: Սովորաբար արաբները և քրդերն ավելի մեծ վստահություն էին տածում եվրոպացի բժիշկների նկատմամբ, քան թուրքերը, որոնք նրանց օգնությանը դիմում էին հիմնականում հիվանդության բարդացումից հետո, հաճախ անհուսալի վիճակում: Տե՛ս Christ H., Bericht des Herrn Dr. Christ über seine ärztliche Tätigkeit in Urfa, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 148:

282. Տե՛ս աղյուսակում ներկայացված՝ ամբողջական վիճակագրական տվյալները, էջ 115-116:

283. Ալեքսանյան Ա., Դիւցազնական Ուրֆան եւ իր Հայորդիները, Բեյրութ, 1955, էջ 508: Անխտրականության սկզբունքի գերակայությունը հարկադրում էր սպասարկել բոլորին, նաև նրանց, որոնց ձեռքերը թաթախված էին անմեղ հայերի արյունով, չնայած հաճախ նույնիսկ Հիսուսի պատվիրաններն անգոր էին թվում անձնակազմի՝ նման դեպքերում առաջացող հոգեկան երկվությունը հաղթահարելու համար: Դերվիշների շեյխն, օրինակ, որն 99 հայ երեխաների սպանել էր իր սեփական ձեռքերով, հիվանդանոց էր տարել իր հիվանդ դատերը, որն այնտեղ բուժում ստացավ: Մեկ ուրիշ «հաճելի արտաքինով, քաղաքավարի» այցելու կոտորածի ժամանակ կազմակերպել էր Ուռհայի լուսավորչական եկեղեցու հրդեհումը, որի ժամանակ կենդանի այրվել էին փրկության հույսով այնտեղ հավաքված՝ շուրջ 3000 հայեր, հիմնականում կանայք և երեխաներ: Տե՛ս Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 139: «Մենք ուզում ենք հավատալ, որ նրանք ինչ-որ չափով հաղորդակից են դառնում Քրիստոսի ոգուն,- նշում էր այդ առթիվ Ֆ. Էքարտը,- որը մեզ պատվիրում է սիրել և բարիք պարգևել թշնամուն, նրանց, ովքեր մեզ ատում են: Սակայն որքա՛ն ծանր պետք է լինի հայերի համար, երբ նրանք հանդիպում են իրենց ծնողների, ամուսինների, քույրերի և եղբայրների կամ երեխաների դահիճներին, որոնք հավանաբար այդ եղեմնազործությունը կատարել են նրանց այքերի առաջ: Չպե՞տք է արդյոք դարձյալ կատաղի ատելությունը և վրեժխնդրության ծարավը համակի նրանց: «Սիրեք Չեր թըշնամիներին...»: ինչպիսի՞ մեծահոգի պահանջ: Մենք երբեմն հավատում ենք դրան, երբ

Պարբերաբար բռնկվող մալարիայի և այլ համաճարակների դեմ պայքարի նպատակով տարեկան ծախսվում էր մոտ 12 կգ յոդ-կալիում և 4-6 կգ խինին, որի ձեռքբերման համար ԳԱԱ-ի կողմից հատկացվում էր ավելի քան 1000 մարկ:²⁸⁴ Բժշկական անձնակազմը գործում էր խիստ լարված: Էքստրը, Կյունցլերը և դր. խրիստը եկեղեցիներում ու դպրոցներում կարդում էին նաև դասախոսություններ համաճարակների դեմ պայքարի միջոցառումների մասին, որ նույնպես էական արդյունքներ էր տալիս:²⁸⁵ Հոգատար խնամքի և աչալուրջ բժշկական հսկողության շնորհիվ որբանոցի երեխաները չնչին բացառություններով գերծ մնացին համաճարակներից: Այնտեղ գրացվեց խլերայի մեկ, իսկ տիֆի 6 դեպք, որոնցից միայն մեկը ավարտվեց մահով:²⁸⁶ «Մաքրությունը, կարգապահությունը, նպատակային սնուցումը և լավ հագնվածքը նրանց դարձրել են մի գունդ, որը նույնիսկ բժշկական աչքերին է հրճվանք պատճառում»,- այդ առթիվ նշում էր դր. խրիստը:²⁸⁷

Առավելագույն արդյունավետության հասնելու համար կատար-

ներում ենք մի հակառակորդի: Սակայն այդ ողբան չնչին և աննշան է նման ապրումների դիմաց: Ինչպիսի՞ր աստվածային ուժ է անհրաժեշտ հայերին սաստիկ դառնությունից և մահմեդականների հանդեպ ատելությունից դեպի ամեն բան ներող սիրո թագավորությունը տանելու համար: Եթե մենք կարողանայինք այդ հարցում օգնել, եթե մենք մեր գործերով կարողանայինք քարոզել այդ...»: Անդ, էջ 140: Հիվանդանոցի մահմեդական այցելուների մեջ լինում էին նաև այնպիսիները, որոնք կոտորածների ժամանակ փրկել էին առանձին հայերի կյանքը: Այդպիսիներին սպասարկում էին երախտագիտությամբ և ըստ հնարավորին նվազագույն գներով: Տե՛ս անդ, էջ 139:

284. Christ H., Die Missions-Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1902, էջ 54: 1900 թ-ի ամռանը մեծ տարածում էր ստացել ծաղկախտը, աշնանը մոլեգնում էր մալարիան, 1901 թ-ի գարնանը ծայր առավ տիֆի համաճարակը, իսկ 1903 թ-ի օգոստոսին Ուռհայում բռնկվեց քոլերայի համաճարակ, որն, ինչպես նախորդները, շարունակվեց մի քանի ամիս: Տե՛ս Klinik in Urfa 1900, „Der Christliche Orient“, 1901, էջ 52: Հմնտ. Künzler J., unsere Klinik in Urfa, անդ, 1904, էջ 69-70:

285. Քոլերայի համաճարակին քաղաքում զոհ դարձան 400 մարդ, որոնց մեծագույն մասը 330-ը, մահմեդականներ էին: Այնուամենայնիվ կլինիկայում սպասարկված ընդհանուր թվով 90 հիվանդներից միայն 12-ն էին մահմեդականներ: Նրանցից 68-ը հայեր էին, իսկ 10-ը ասորիներ: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 47: Հմնտ. Dschebedschian A., Die Cholera in Urfa, էջ 16:

286. Klinik in Urfa 1900, „Der Christliche Orient“, 1901, էջ 50:

287. Christ H., Bericht des Herrn Dr. Christ über seine ärztliche Tätigkeit in Urfa, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 148:

վում էր աշխատանքի ըստ հնարավորին համամասն բաշխում: Բավականաչափ տիրապետելով հայերեն և թուրքերին լեզուներին՝ դր. Խրիստը 1900 թ-ից գործում էր առանց թարգմանչի, որի շնորհիվ Աբրահամը հնարավորություն ստացավ զբաղվել բացառապես դեղատան աշխատանքներով, իսկ Կյունցլերը կատարում էր վիրակապություններն ու լվացումները, ինչպես և վերահսկում կարգ ու կանոնի պահպանումը հիվանդանոցում:²⁸⁸ Աշխատանքների բնույթն ու ծավալն ավելի ակնառու դարձնելու նպատակով արժե նշել, որ, օրինակ, միայն 1899 թ-ի առաջին կիսամյակի ընթացքում դեղատանը պատրաստվել է 3709 դեղատոմս, որոնցից լրիվ կամ մասնակի վճարվել է միայն 968-ը: Դր Խրիստն այդ ժամանակամիջոցում ունեցել է 3760 բժշկական տեսակցություն, քաղաքում և շրջակա բնակավայրերում կատարել 364 այցելություն և 3823 ակնաբուժական գործողություն,²⁸⁹ 89 անգամ այցելել է որբանոց, կատարել է 135 վիրահատություն, որոնցից 33-ը թմրանյութի օգնությամբ, 58 պատվաստումներ, ուռուցքաբուժական նշանակության 1030 վիրակապություն և այլ գործողություններ, ականջների, ստամոքսի և միզուղիների 393 լվացումներ և ողողումներ և այլն:²⁹⁰

Չնայած բնակչության կարիքները շատ ավելի մեծ էին, քան բուժանձնակազմն իր նույնիսկ այդ բավականաչափ խոսուն ցուցանիշներով կարող էր բավարարել, այնուամենայնիվ անհնար էր նշված աշխատանքների նշանակությունը գերազնահատել: «Չաճախ այցելելով թշվառ բնակարանները,- նշում էր դր. Խրիստը,- որոնք հազիվ

288. Տե՛ս Aus der ärztlichen Arbeit, „Der Christliche Orient“, 1901, էջ 72:

289. Խոսքը վերաբերվում էր, մասնավորապես, Ուռուցքային տարիներ շարունակ մեծ տարածում ստացած Տրախոմա եզիպտական հիվանդությանը, որի զարգացումը հանգեցնում էր կուրացման, և որը պահանջում էր խիստ երկարատև բուժում: Բուժանձնակազմի հետևողական աշխատանքի շնորհիվ այդ հիվանդությամբ որբանոց ընդունված երեխաներն առանց բացառության առողջանում էին: Դիվանդության զարգացումը կանխելու համար մեծ չափի աշխատանքներ էին տարվում նաև բնակչության շրջանում: Տե՛ս Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 21:

290. Christ H., Bericht des Herrn Dr. Christ über seine ärztliche Tätigkeit in Urfa, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 149-150, Տարվա ամբողջական և հետագա տարիների ցուցանիշները տե՛ս ենթագլխի վերջում ներկայացված գծապատկերում:

թե համապատասխանեն այդ անվանը. տեսնելով մեր այցելուների և խնամյալների կերպարանքները՝ զգում ենք, որ թշվառությունն այնքան մեծ է, այնքան հսկայական, որ ինքներս մեզ ստիպված ենք ասել. «Ուրիշ ի՞նչ կարող է լինել մեր աշխատանքը, եթե ոչ մեկ կաթիլ ջուր շիկացած քարի վրա: Սակայն հենց այդ համեմատությունն է մեզ կորով ներշնչում: Մի կաթիլն անշուշտ նկատելի չի սառեցնում տաքացած քարը. այն թշուրմ է, գոլորշանում, սակայն տեղ է նախապատրաստում երկրորդ կաթիլի համար, որն ավելի դանդաղ է գոլորշանում, իսկ մի երրորդը նույնիսկ կարող է ընկնել և մնալ: Թող այդպես լինի նաև մեր աշխատանքի հետ»:²⁹¹

Դր. Խրիստին, սակայն. վիճակված չէր երկար մնալ Ուռնիայում: Նրա կնոջ՝ Բերտա Վերների ծանր հիվանդությունը շուտով նրան հարկադրեց ընդհատել աշխատանքը և 1903 թ-ի ապրիլի 30-ին վերադառնալ Շվեյցարիա:²⁹² Չնայած նա հույս ուներ շուտով դարձյալ վերադառնալ, սակայն կնոջ առողջական դրությունն այդ չթույլատրեց,²⁹³ ուստի այլ ելք չէր մնում. քան նրա փոխարեն մի նոր եվրոպացի բժիշկ առաքել Ուռնիա: Մինչ այդ կկատարվեր, այնտեղ սպասարկման աշխատանքը դարձյալ առժամանակ շարունակեց Ա. Աթարյանը,²⁹⁴ իսկ 1903 թ-ի հուլիսից՝ մի հայազգի բժիշկ՝ Այնթապի ամերիկյան հիվանդանոցի նախկին աշխատակից դր. Ավետիս Չեփեջյանը, որը. սակայն. այնտեղ մնաց միայն մեկ տարի, քանի որ 1904 թ-ի հուլիսին կատարելագործման նպատակով մեկնեց Շվեյցարիա:²⁹⁵ Երկու ամիս անց, 1904 թ-ի սեպտեմբերին Բեյրութում դեղագործի դիպլոմ ձեռք բերելու նպատա-

291. Christ H., Die Missions-Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1902, էջ 56:

292. Künzler J., Jahresbericht der Missionsklinik in Urfa 1903, „Der Christliche Orient“, 1904, էջ 69: Նրանց հետ ժամանակավորապես Շվեյցարիա մեկնեց նաև Կյունցլերը, որը մալարիայի պատճառած տենդից ապաքինվելու նպատակով որոշել էր իր արձակուրդն անցկացնել հայրենիքում: Անդ:

293. Անդ: Երկարատև հիվանդությունից հետո Բ. Վերները 1905 թ-ի դեկտեմբերի 1-ին մահացավ: Ինչ վերաբերում է Գ. Խրիստին, ապա նա իր գործունեությունն այնուհետև շարունակեց Շվեյցարիայում, որտեղ 1949 թ-ի սեպտեմբերի 28-ին կնոջց իր մահկանացուն: Sbu Meyer K., Armenien..., էջ 243:

294. Sbu Mitteilungen, „Der Christliche Orient“, 1903, էջ 96:

295 Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 31:

կով 10 ամսով (մինչև 1905 թ. հուլիս ամիսը) իր ծառայությունն ընդհատեց նաև Ա. Աթարյանը,²⁹⁶ և կլինիկան հոկտեմբերին հանձնվեց մեկ այլ հայ բժշկի՝ Եղիա Արոյանի տնօրինությամբ。²⁹⁷ որը Կյունցլերի, մի դեղագործի²⁹⁸ և հիվանդապահուհու հետ շարունակելով աշխատանքները դարձավ ըստ էության վերջին ժամանակավոր պաշտոնավարողը。²⁹⁹ Հաստատության համար եվրոպացի բժիշկ գտնելու ուղղությամբ ԳԱԱ-ի ձեռնարկած ջանքերը 1905 թ-ի սկզբին պսակվեցին հաջողությամբ. այդ առաքելությունը վիճակվեց Բազելի քաղաքային հիվանդանոցի ասիստենտ-բժիշկ Անդրեաս Ֆիշերին。³⁰⁰ որը հունվարին թուրքական դիպլոմ ձեռք բերելու նպատակով մեկնեց Կ. Պոլիս, իսկ ևս երեք ամիս անց՝ ապրիլի 2-ին արդեն Ուռհայում էր։³⁰¹

Նրա ղեկավարությամբ կլինիկան. հիվանդանոցն ու դեղատունը դարձյալ շարունակեցին անխափան գործել նվաճելով բարձր բնագծեր³⁰² և պահպանելով բարեգործական սպասարկման գերակայության սկզբունքը: Ավելին, բնակչության տնտեսական պայմանների վատթարացումը. աղքատության և կարիքների շարունակական աճը, ինչպես իր «Խրոնիկական կարիք Ուռհայում» հոդվածում նշում էր Յ. Կյունցլերը, արգելում էին ստանալ նույնիսկ դեղատան մեծաքանակ

296. Անդ, էջ 32: Հմմտ. Vischer A., Bericht der Klinik in Urfa über das Jahr 1905, „Der Christliche Orient“, 1906, էջ 67:

297. Տե՛ս Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1905, էջ 50:

298. Դեղագործը, որի անունը Գարեգին էր, հաստատությունում աշխատեց 1904 թ-ի հոկտեմբերից մինչև Ա. Աթարյանի վերադարձը: Անդ: Հմմտ. Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 32:

299. Künzler J., Freude in Urfa, „Der Christliche Orient“, 1905, էջ 86:

300. Դր. Ա. Ֆիշերը ծնվել է 1877 թ-ի սեպտեմբերի 18-ին Բազելում: Նա այդ քաղաքի համալսարանում ուսանել էր վիրաբուժություն և օրթոպեդիա և մինչև Ուռհա մեկնելը որպես ասիստենտ-բժիշկ աշխատում էր Բազելի քաղաքային հիվանդանոցում: Տե՛ս Meyer K., Armenien..., էջ 152-153:

301. Տե՛ս Aus unseren Stationen, անդ, էջ 7: Հմմտ. Künzler J., Freude in Urfa, „Der Christliche Orient“, 1905, էջ 85: Ե. Արոյանը Ֆիշերի առաջարկությամբ շարունակեց աշխատել որպես ասիստենտ-բժիշկ՝ հիմնականում զբաղվելով այցի հիվանդություններով, սակայն ծնռանը, երբ կլինիկայի նյութական դրությունը վատթարացել էր, հարկ եղավ նրան ազատել աշխատանքից: Անդ, էջ 86: Հմմտ. Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 32:

302. Տե՛ս ընդհանուր վիճակագրական տվյալները ենթազխի վերջում ներկայացված գծապատկերում:

ծախսերի դիմաց ակնկալվող նվազագույն եկամուտները:³⁰³ Եթե առաջին տարիներին դեղորայքի մոտ երկու-երրորդը ծրի էր հատկացվում, իսկ 1902 թ-ին լրիվ կամ մասնակի վճարվում էր դեղատոմսերի երեք-քառորդը, ապա հաջորդ տարիներին, հատկապես 1909 թ-ից դրանք դարձյալ մեծ մասամբ հատկացվում էին անվճար կարգով:³⁰⁴

Շաբաթվա ընթացքում երեք օր պարտադիր կերպով տրամադրվում էր անվճարունակ այցելուների ընդունելությանը, որոնք միայն մեկ անգամ, գրանցման ժամանակ, վճարում էին 4-5 պֆեննիգ:³⁰⁵ Նրանք ուլքեր կարող էին ավելին վճարել, 1,80 մարկով, ըստ բժշկի ունեցած ազատ ժամանակի և հնարավորությունների, կարող էին նրա հետ տեսակցել ցանկացած ժամանակ:³⁰⁶ Այդպիսիները մեծ մասամբ ունևոր թուրքերը կամ հեռավոր վայրերից եկած արաբներն էին, որոնք, սակայն, սպասարկման բնագավառում այլ արտոնություններ չունեին: «Աղքատ և հարուստ մեզ մոտ նույն ընդունելությունն են ստանում,- նշում էր դր. Ֆիշերն իր հաշվետվություններից մեկում,- Հարուստները ցանկանում են մեզ մոտ առանձնահատուկ վերաբերմունք ստանալ և գերադասվել, սակայն մենք այդ չենք ուզում և չենք կարող»:³⁰⁷ Բնականաբար այդ իրավիճակում հաստատությունը չէր

303. Künzler J., Chronischer Notstand in Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 109: ՊԼՈՒ-ի աշխատակիցների համոզմամբ այդ ճգնաժամի բուն դրդապատճառը հայ ազգաբնակչության հյուժման և բնաջնջման համիդյան քաղաքականությունն էր: «Երկրի բնակչությունը չի կարող ավելին անել ծախսերի հատուցման համար, քան մինչև այժմ,- նշվում էր, օրինակ, ընկերության 1908 թ-ի հրապարակումներից մեկում,- քանի որ այն ժամանակից ի վեր, երբ հայերը՝ բնակչության հիմնական աշխատող և վաստակող հատվածը, բազում հազարներով մորթվեցին, դրությունը դարձել է անմխիթարական»: St'u Mitteilungen, „Der Christliche Orient“, 1908, էջ 15:

304. 1911 թ-ի մայիսին, օրինակ, դեղատան հատկացրած 900 դեղատոմսերից մասնակի վճարվել է միայն մեկ քառորդը: St'u Künzler J., Chronischer Notstand in Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 109:

305. Künzler J., Orientalisches aus der ärztlichen Praxis in Urfa, „Der Christliche Orient“, 1902, էջ 95:

306. Vischer A., Bericht der Klinik in Urfa über das Jahr 1905, „Der Christliche Orient“, 1906, էջ 72:

307. St'u Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1907, էջ 137:

կարող եսկան շահույթներ ունենալ և հարկադրված էր հիվանդանոցային ու վիրաբուժական մեծ ծախսեր պահանջող ժառանգությունները կատարելիս մշտապես հենվել ԳԱԱ-ի և նրա բարեկամների նյութական աջակցության վրա: Ընկերության հատկացումներից բացի հաստատությանը տևականորեն նյութական օգնություն էին ցուցաբերում նաև Ռոստոկի և Պոտսդամի կարի միությունները,³⁰⁸ Բեռլինի հյուսիսային օգնության միությունը, Քյոնիգսբերգի արևելապրուսական մարզային միությունը և այլ կազմակերպություններ:³⁰⁹ Հարկ է սակայն, ընդգծել, որ ԳԱԱ-ին բուժապասարկման բնագավառում մեծագույն աջակցությունը ցուցաբերվեց շվեյցարացի բարեկամների կողմից: Ընկերության մասնաճյուղերում շվեյցարացի և դանիացի աշխատակիցների ընդգրկումը, ինչպես արդեն որոշակիորեն պարզ է դարձել, նպաստում էր այդ երկրների բարեկամների հետ համագործակցության և կապերի ամրապնդմանը:³¹⁰ Դեռ դր. Խրիստի ծառայության շրջանում Բազելի բարեկամները զգալի նյութական օժանդակություն էին ցուցաբերում Ուռհայի կլինիկային:³¹¹ Այդ ավանդույ-

308. Ռոստոկի միությունը, օրինակ, Ազնես Ռենեկեի ղեկավարությամբ ամեն տարի հիվանդանոցին առաքում էր մեծաքանակ սպիտակեղեն և զանազան այլ պարագաներ: St'u Vischer A., Ein Dankeswort, „Der Christliche Orient“, 1911, էջ 24:

309. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 14:

310. ԳԱԱ-ն նույնպես էապես կարևորում էր այդ իրողությունը շվեյցարացի բարեկամների հետ համագործակցության սերտացման հարցում. «Մեզ առանձնահատուկ ուրախություն է պատճառում,- նշված էր, օրինակ, ԳԱԱ-ի 1905 թ-ի տեղեկագրերից մեկում,- որ դր. Խրիստի հաջորդը դարձյալ շվեյցարացի է, և մենք այդ համարում ենք երաշխիք այն բանի, որ կպահպանվի նաև մեր շվեյցարացի բարեկամների սերը Ուռհայի մեր աշխատանքների հանդեպ...»: St'u Lepsius J., Die Deutsche Orient-Mission, „Der Christliche Orient“, 1905, էջ 8:

311. Նրանք 1903 թ-ին Ուռհայի մասնաճյուղին նվիրեցին 10410,70 շվեյցարական ֆրանկ կլինիկա հիմնելու համար, և արդեն հիշատակված կիսակառույցի գնումն ու ընդարձակումը, որի համար ներդրված ծախսերը կազմեցին 12400 մարկ, հնարավոր դարձավ այդ աջակցության շնորհիվ: St'u Schäfer R., Geschichte..., էջ 49: Հմնտ. Rechnungsbericht der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1905, էջ 94:

թը շարունակվեց նաև դր. Ֆիշերի նշանակումից հետո,³¹² իսկ 1908 թ-ին, երբ Բազելում հիմնվեց Ուռհայի բժշկական բարեգործական աշխատանքների բարեկամների միությունը,³¹³ համագործակցությունը ստացավ նաև ծրագրային-կազմակերպական բնույթ: Միությունը, ինչպես նշված էր վերջինիս հիմնադիր ժողովում հեռարձակված կոչում, ծրագրել էր զանազան նյութական օժանդակություններից բացի սեփական միջոցներով Ուռհայում պահել նաև երկրորդ եվրոպացի բժշկին, քանի որ «դրա կարիքը շատ մեծ էր», իսկ մինչ նրա առաքումը բավարարվել էր. Ֆիշերին մի տեղացի օգնական տրամադրելով:³¹⁴ «Մենք կարող ենք նյութական օգնություն ցուցաբերել.- նշված էր այդ կոչում,- որպեսզի լուծվեն այն նոր խնդիրները, որ շատ դժվար կլինեն ԳԱԱ-ի համար: Մենք այդ առումով մտածում ենք մոտակա տարիներին շինարարություն ձեռնարկելու անհրաժեշտության մասին, որը կարող է նպաստել մասամբ արդեն անտանելի և սանիտարական առումով մտահոգիչ դարձած հիվանդանոցի տարածքային պայմանները բարելավելուն: Բացի այդ կօգնենք նաև դեղորայքի և վիրակապային նյութերի հայթայթման հարցում, և եթե հնարավոր լինի, կամենում ենք նաև օգնել, որ այս տարի մի ասիսիտենտ մեկնի Ուռհա: Այդ տեսանկյունից կարող է հասկանալի լինել. որ Ուռհայի իրականությունը ճանաչող մի փոքրիկ հասարակական շրջանում ծագել է Ուռհայի բժշկական բարեգործական աշխատանքների բարեկամների միություն հիմնելու գաղափարը»:³¹⁵

Շվեյցարացի 15 հեղինակավոր բժիշկների և մտավորականների կողմից ստորագրված այդ կոչը որոշակիորեն նոր ծավալուն համագործակցության սկիզբ դարձավ: 1908 թ-ից միությունը միջոցներ տրամադրեց երկրորդ բժշկի աշխատատեղի ստեղծման համար, որն, ինչպես շուտով կտեղեկացվի, հատկացվեց Մ. Հադիդյանին, իսկ

312. Շվեյցարացի բարեկամները 1905 թ-ի վերջին Ուռհա առաքեցին մեծաքանակ սպիտակեղեն և այլ հիվանդանոցային պարագաներ: Sten Vischer A., Dank und Bitte aus dem Spital in Urfa, „Der Christliche Orient“, 1905, էջ 191-192: Արդեն տեղեկացվել է նաև Ռ. Պֆիստերերի մեկամյա գործուղման մասին:

313. Sten Mitteilungen, „Der Christliche Orient“, 1908, էջ 15-16:

314. Անդ, էջ 15: Հմնտ. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, անդ, էջ 170:

315. Կոչի ամբողջական տեքստը տե՛ս Mitteilungen, „Der Christliche Orient“, 1908, էջ 14-15:

1910 թ-ի հունիսից Ա. Արուհայթյանին: 1908-09 թթ. ԳԱԱ-ի և շվեյցարացի բարեկամների համատեղ ծախսերով կառուցվեց նաև դր. Ֆիշերի առանձնատունը,³¹⁶ որի շնորհիվ հիվանդանոցում ազատվեցին մի քանի սենյակներ, և եթե դրանցից երկուսը որպես բնակարան հատկացվեցին դր. Հադիդյանին ու իր ընտանիքին, ապա մյուսները տրամադրվեցին հիվանդանոցին՝ զգալիորեն նպաստելով սպասարկման ընդլայնմանն ու բարելավմանը:³¹⁷ Այդ միջոցառումների նշանակությունն ավելի տեսանելի դարձնելու համար արժե թերևս նըշել, որ եթե 1908 թ-ի սեպտեմբերից 1909 թ-ի հուլիսն ընկած ժամանակահատվածում հիվանդանոցում սպասարկվել էր 177 այցելու, ապա հաջորդ տարվա նույն ժամանակահատվածում նրանց թիվը հասավ 281-ի:³¹⁸ Բացի այդ հնարավոր դարձավ հարուստ այցելուներին բարձր վճարման դիմաց հատկացնել առանձին սենյակներ (որտեղ նրանք կարող էին միշտ իրենց հարազատներով շրջապատված լինել), ինչը զգալի շահույթներ բերեց հիվանդանոցի գանձարկւղին:³¹⁹ 1908 թ-ից դր. Ֆիշերն ի դեմս իր կնոջ՝ Գերտրուդ Ֆիշերի, ունեցավ մի նոր երախտավոր օգնական ևս, որը գործում էր հիմնականում վիրահատարանում՝ մեծ աջակցություն ցուցաբերելով նաև բժշկական այցերի և տեսակցությունների ընթացքում:³²⁰

316. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 170: Բարեկամների միությունն այդ նպատակին հատկացրեց 1000, իսկ Բազելի «Der Christliche Reichsbote»-ի խմբագրությունը՝ 500 ֆրանկ, որի շնորհիվ հաջողվեց 1909 թ-ի ամռանը շենքի կառուցումն ավարտել, և նույն տարվա աշնանը բժիշկն իր ընտանիքի հետ տեղափոխվեց այնտեղ: Անդ: Հմմտ. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1909, էջ 170:

317. Անդ:

318. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1910, էջ 160 (Ամբողջական ցուցանիշները տե՛ս ենթադիտի վերջում ներկայացված գծապատկերում):

319. Անդ:

320. Դր. Ֆիշերը 1908 թ-ի փետրվարին ծանր հիվանդանալով տիֆով՝ հարկադրված եղավ կազդուրման նպատակով վերադառնալ Բազել, որտեղ և ծանոթացավ իր ապագա կենակցի՝ Գերտրուդ Օրիի հետ (ծնվ. 1881 թ-ի նոյեմբերի 8-ին): Նրանց ամուսնությունը տեղի ունեցավ 1908 թ-ի հոկտեմբերի 15-ին, որից հետո նրանք միասին դարձյալ մեկնեցին Ուռհա: Տե՛ս Meyer K., Armenien..., էջ 251:

Հվեյցարացի բարեկամների աջակցությամբ 1909 թ-ին գնվեց նաև հիվանդանոցին կից հողակտորներից մեկը՝ հատկացվելով մի ընդարձակ հիվանդասրահի կառուցմանը:³²¹ Կառուցումը, որ նույն-պես հիմնականում շվեյցարացիների միջոցներով կատարվեց, վերջ-նականապես ավարտվեց 1912 թ-ին՝ զգալիորեն ընդլայնելով հի-վանդանոցային սպասարկման հնարավորությունները:³²² Նրանք նյութական օգնություն էին ցուցաբերում նաև կլինիկայի, հիվանդա-նոցի և դեղատան վերազինման հարցում: 1908 թ-ին, օրինակ, Բազե-լի դիակոնների ընկերության օգնությամբ հիվանդանոցը համալրվեց սպիտակեղենով:³²³ Նույն տարում Բազելի երիտասարդ վաճառա-կանների միության քաղաքացիական հիվանդանոցի կանանց վիրա-բուժական բաժնի և որոշ անհատների կողմից դր. Ֆիշերին ուղարկ-վեց 886,50 ֆրանկ հատկացվելով բժշկական սարքավորումների ու դեղորայքի հայթայթմանը:³²⁴ 1909 թ-ին Բազելի «Der Christliche Reichsbote» պարբերականի խմբագրությունից 1500 ֆրանկ ուղարկ-վեց Ադանայում սպանված քահանաների այրիների և որբերի հա-մար,³²⁵ և բացի այդ ևս 800 ֆրանկ հատկացվեց հիվանդանոցի կա-

321. Այդ հողատարածքը, որ երկար ժամանակ է, ինչ անախորժությունների պատ-ճառ էր դարձել, թերևս գնվեց հարկադրաբար: Տարածքի թուրք սեփականատերը կաննում էր այնտեղ մի բարձրահարկ շենք կառուցել, որը հիվանդանոցին կարող էր վնասել: Դր. Ֆիշերն այդ ձեռնարկումը արգելելու համար հարկադրված էր դիմել դատարանի միջամտությանը: Դատավարության ընթացքում ամերիկյան միսիայի աշխատակից, անգլիացի Գրաքեյի և տեղացի մի հեղինակավոր հայի (որի անունը, ցավոք, չի հիշատակվում) միջամտությամբ թուրք սեփականատերը համաձայնեց այդ տարածքը 900 մարկ գումարով զիջել հիվանդանոցին: Այդ գումարը հնարավոր եղավ վճարել Բազելի բարեկամների օգնությամբ: Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1910, էջ 166:

322. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 13:

323. Künzler J., Urfa-Spital, „Der Christliche Orient“, 1910, էջ 207:

324. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1909, էջ 168:

325. Խուսըը վերաբերում է հյուսիսային Սիրիայի և հյուսիսային Միջագետքի բողոքա-կան հոգևորականների ամենամյա հավաքույթին մասնակցելու համար Ադանա ու-ղարկված 22 քահանաներին, որոնք կոտորածի ժամանակ սպանվեցին: Stb Vischer A., Was Urfa in den Revolutionstagen erlebte, անդ, էջ 84: Ուշագրավ է, որ եթե 1908

թ-ի ամռանը սուլթանի դեմ երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության տարած հաղթանակը և հուլիսին հաստատված սահմանադրությունը հայ ժողովրդի գերմանացի բարեկամներին որպես կանոն համակել էր հախուռն ոգևորությամբ ստեղծելով այն պատրանքը, որ վերջապես Թուրքիայում վերանալու էր կրոնական և ազգային խտրականությունը, և ստեղծվում էին հայ ժողովրդի բարգավաճման հնարավորություններ, ապա Լեվիսիուսը, ցուցաբերելով զարմանալի հեռատեսություն, չէր շտապում կիսել այդ ոգևորությունը. «Թուրքիայի մոտ և հեռու ապագայի վերաբերյալ մեր տեսակետը պետք է վերապահ լինի,- նշում էր նա իր «Արևելքի քաղաքական և կրոնական վերածնունդը» հոդվածում:- Համաշխարհային պատմության մեջ դարձյալ տեղի ունեցավ մի իրադարձություն (Նա նկատի ուներ սուլթանական իշխանության տապալումը - Ա. Հ.), երբ ամեն բան այլ կերպ ընթացավ, քան որևէ մեկը կկռահեր, ուստի պետք է ընդունել, որ ապագայում նույնպես ամեն բան այլ կերպ կընթանա, քան որևէ մեկը կարող է կռահել: Անիրաժեշտ է նոր փաստերից սովորել առանց հին փորձառությունների մոռանալու»: Տե՛ս Lepsius J., Die politische und religiöse Wiedergeburt des Orients, „Der Christliche Orient“, 1908, էջ 144-145: Իր տեսակետը նա հիմնավորում էր այն փաստարկով, որ իսլամը Թուրքիայում շարունակում էր մնալ պետական կրոն, իսկ նրա ոգուն խորթ էին սահմանադրությամբ ներմուծված գաղափարները, և բացի այդ նա խիստ կասկածելի էր համարում, թե այնտեղ ապրող ժողովուրդների մեջ արմատավորված թշնամության, ռասայական ատելության և կրոնական հավատալքների հիշողությունը կարող էր մեկ օրում վերանալ: Անր, էջ 146-147: Ինչպես որոշ ժամանակ անց պարզվեց, նրա կանխատեսումները միանգամայն ճիշտ էին: 1909 թ-ի ապրիլի 13-ին այսպես կոչված՝ պահպանողականներն ու սուլթանի կողմնակիցները Կ. Պոլսում կառավարության դեմ խռովություն բարձրացրեցին՝ դուրս գալով զինված պայքարի, իսկ մեկ օր անց՝ ապրիլի 14-ին, ծայր առավ Ադամայի հայության զանգվածային կոտորածը, որը շարունակվեց մի քանի օր, և որին, ըստ Գերմանիայում հրատարակված աղբյուրների, զոհ դարձավ ավելի քան 20 հազար մարդ: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 62: Հմնտ. Feigel U., Das evangelische... էջ 142: Պ. Ռոիրբախի համոզմամբ սպանդի զոհերի թիվը հասնում էր 25 000-ի: Տե՛ս Rohrbach P., Die Wahrheit über Adana, „Der Christliche Orient“, 1909, էջ 146: Չնայած թուրքական կառավարությունը պաշտոնապես ծանուցումներ էր կատարում, որ հայերն անմեղ էին, և որ կոտորածները կազմակերպվել էին «հին թուրքերի և մահմեդական հոգևորականների» կողմից, այնուամենայնիվ, նշում էր Ռ. Շեֆերը, ոչ ոքի համար կասկածի ենթակա չէր, որ «կառավարությունն արյունահեղությունը գեթ կարող էր կանխել, եթե անգամ այն նա չէր կազմակերպել»: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 62: Այդ տեսակետն, ի դեպ, հաստատվում էր նաև Պ. Ռոիրբախի հետազոտություններով, որը ԳԱԱ-ի հանձնարարությամբ սպանդից կարճ ժամանակ անց մեկնել էր Ադամա իրադրությունների վերաբերյալ ստույգ տեղեկություններ ձեռք բերելու նպատակով: Նա, ի դեպ, այցելել էր նաև Տարսուս և այն բոլոր շրջանները, որտեղ տեղի էին ունեցել կոտորածները և վերադարձից հետո իր տպավորություններն ամփոփեց մի ընդարձակ հոդվածում, որը «Նշմարտությունը Ադամայի վերաբերյալ» վերնագրով լույս տեսավ պարբերականի 10-րդ համարում: Տե՛ս Rohrbach P., Die Wahrheit über Adana, „Der Christliche Orient“, 1909, էջ 145-159: Կոտորածներից հետո ավերված բնակավայրերում ի հայտ

րիքների բավարարմանը:³²⁶ Մեծ թիվ էին կազմում նաև շվեյցարացի անհատներից ուղարկվող գումարները: Դրանց զգալի մասը հատկացվում էր նաև ունեզուրկ հիվանդներին և նրանց ընտանիքներին տարբեր եղանակներով օգնելու նպատակին: «Որքա՞ն շատ հիվանդներ է ունեցել բժիշկը,- նշում էր Յ. Կյունցլերն իր «Խրոնիկական կարիք Ուռուհայում» հոդվածում,- որոնց նա բուժման համար անհրաժեշտ կաթը հայթայթելու նպատակով նաև դրամ, իսկ կազդուրվելու ընթացքում նաև սնունդ պետք է տար, առանց որի նրանց փրկությունը

էին եկել բազմաթիվ անօթևան որբեր և այրիներ, որոնց անհրաժեշտ էր հնարավորինս շուտ օգնության ձեռք մեկնել, ուստի կազմակերպությունը որոշում ընդունեց Ադանայում հավաքագրել 50 որբերի և տեղափոխել Ուռուհայի որբանոցը: Դրա կատարումը ՊԱԱ-ն հանձնարարեց Ֆ. Էքարտին և Կ. Յեպեին՝ ձեռնամուխ լինելով նրանց խնամքի համար անհրաժեշտ միջոցների հայթայթմանը և ըստ այդմ բազմաթիվ հրապարակումներով լուսաբանելով եղբրական իրադարձություններն ու դրանց հետևանքները: Տես *Die letzte Bluttat des alten Regiments in der Türkei*, անդ, էջ 65; *Die jüngsten Christenschlächtereien in den Wilajets Adana und Aleppo*, անդ, էջ 66-68; *Die Bluttaten in Adana und Tarsus*, անդ, էջ 123-125; *Von den Mördern der Christen in Adana*, անդ, էջ 180-181 և այլն: Քանի որ, սակայն, արտասահմանյան երկրներից և թուրքական կառավարության կողմից աղետյալներին հատկացվող օգնությունը գրեթե բացառապես ուղարկվում էր Ադանա, մինչդեռ հարևան Անթակիայի (Անտիոք) շրջանը մնացել էր տեսադաշտից դուրս, էքարտը և Յեպեն որոշեցին որբերի հավաքագրումը և հնարավոր մյուս օգնության աշխատանքները ծավալել այդ շրջանում, որտեղ բոլոր տղամարդիկ զոհվել էին, իսկ որբ երեխաները տեղավորվել էին միայն ժամանակավոր կացարաններում: Տես *Lepsius J., Antiochia-Kinder*, „*Der Christliche Orient*“, 1910, էջ 54: Ըստ այդմ Ուռուհայի որբանոցը ձմեռնամուտի նախաշեմին մոտ 1000 մարկ ընդհանուր արժեքով սեփական արտադրության կտորեղեն, հագուստներ և կոշիկներ առաքեց Անթակիա՝ քաժանելով այնտեղի կարիքավորներին: Անդ, էջ 53: Հմնտ. *Rohrbach P., Bericht aus Urfa*, „*Der Christliche Orient*“, 1911, էջ 84: 1910 թ. սկզբին մեծաքանակ հագուստեղեն ուղարկվեց նաև Քեսաբ, որը գտնվում էր Անթակիայից 36 մղոն հեռավորության վրա և կոտորածների ընթացքում հիմնովին կողոպտվել էր: Տես այդ մասին Յ. Լեփսիուսի տեղեկությունը, „*Der Christliche Orient*“, 1910, էջ 76: Քեսաբում տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ տես *Trowbridge R., Die Plünderung von Kessab*, անդ, էջ 50-53 և 72-76: 1909-10 թթ. ձմռանը անհրաժեշտ թվով հովանավորներ ի հայտ եկան նաև որբերի համար, և արդեն մարտի 23-ին Անթակիայից 30 երեխաներ տեղափոխվեցին Ուռուհայի որբանոցը, իսկ Լա մի քանի շաբաթ անց նրանց թիվը համալրվեց՝ հասցվելով 50-ի: Տես *Lepsius J., Antiochia-Kinder*, անդ, էջ 54: Հմնտ. *Schäfer R., Geschichte...*, էջ 62:

326. *Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa*, անդ, էջ 168:

անհնար կլիներ: Մենք շնորհակալ ենք Տիրոջը, որ նա, առանձնապես Շվեյցարիայի սիրելի բարեկամների միջոցով, երկու տարի շարունակ ուղարկել է հարյուրավոր ֆունտեր, որոնք ծառայել են բացառապես ծայրահեղ գրկանքների մեղմացմանը»: ³²⁷ «Գերմանիայի մեր բարեկամները,- նշվում էր մեկ այլ հրապարակման մեջ,- մեզ ամենից ավելի ուղարկում էին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր հիվանդանոցի գործունեության համար, իսկ Շվեյցարիայի բարեկամներն ուղարկում էին սովը մեղմելու միջոցներ»: ³²⁸

Փաստորեն բացի այն, որ Ուռհայուն ԳԱԱ-ի բժշկական հաստատությունների աշխատանքները իրականացվում էին հիմնականում շվեյցարացի աշխատակիցների միջոցով, դրանց նյութական հովանավորության և բնակչության կարիքների մեղմման հարցում ևս շվեյցարացի բարեկամները մեծ և արժեքավոր ծառայություններ մատուցեցին: ԳԱԱ-ի հետ նրանց համագործակցությունը, ինչպես շուտով կտեսնենք, արդյունավետ կերպով շարունակվեց նաև հետագայում:

Ինչևէ, դր. Ֆիշերը ևս իր բոլոր հնարավորություններով նյութական օգնություն էր ցուցաբերում նաև չքավոր այցելուների ընտանիքներին, ընդհուպ մինչև սննդամթերքի բաժանումը: ³²⁹ Ընտանիքների՝ հիվանդ կերակրողների կյանքի պահպանումը համարվում էր կարևորագույն գերխնդիր, որի համար ջանքեր չէին խնայվում. «Դր. Ֆիշերը և Կյունցլերը առավուտից ուշ գիշեր աշխատում են աղքատ հիվանդներին օգնություն ցուցաբերելու համար,- նշում էր այդ առթիվ Կ. Յեպեն իր՝ «*Basler Volksboten*»-ին ուղղված մի նամակում,- և անում են շատ ավելին, քան կարելի է բժշկից սպասել: Նրանք աղքատներին ոչ միայն ծրի դեղորայք են տրամադրում կամ վիրահատում են, այլև հաճախ նրանց ուտելիք են տալիս և առհասարակ իրենց ուժերի ներածին չափով ամեն ինչ անում ընտանիքի կերակրողին պահելու համար, քանի որ եթե այդ ջանքերը չլինեին, ապա երեք այնպիսի որբանոց, ինչպիսին մերն է, չէին բավականացնի Ուռհայի

327. Künzler J., Chronischer Notstand in Urfa, „Der Christliche Orient“, 1911, էջ 109:

328. Vischer A., An die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1910, էջ 168:

329. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1910, էջ 159:

անհայր երեխաներին ընդունելու համար»:³³⁰

Դր. Ֆիշերի և նրա անձնակազմի գործունեությունը խիստ կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն Ուռուհայի, այլև, ինչպես շուտով կ'լուսաբանվի. ողջ տարածաշրջանի հայության համար: Այն մեծապես արդյունավորվեց նաև 1911-12 թթ. քաղաքում բռնկված համաճարակների դեմ պայքարի հարցում: Խոլերայի, կապույտ հագի և կարմրուկի զարգացման այդ աննախադեպ ծանր շրջանում, շարունակելով դր. Խրիստի կողմից ստեղծված ավանդույթը Ֆիշերը և Կյունցլերը եկեղեցիներում և այլ հավաքատեղիներում բնակչության առջև հանդես էին գալիս նաև համաճարակների դեմ պայքարի միջոցառումներին վերաբերող զեկուցումներով, որոնք ունեցան կարևոր կազմակերպական նշանակություն: Նրանց համատեղ ջանքերով քաղաքում համաճարակների պատճառած վնասը հասցվեց նվազագույնի,³³¹ իսկ որբանոցի երեխաները. բացառությամբ մի դեպքի (որն ավարտվեց մահով), զերծ մնացին դրանցից:³³²

Սպասարկման ծավալն առկա կարիքներին առավելագույնս համապատասխանեցնելու նպատակով Ֆիշերը կատարեց նաև մի շարք համալրումներ, որոնք խիստ կարևոր նշանակություն ունեցան աշխատանքների ընդլայնման³³³ և արդյունավետության բարձրացման հարցում. 1905 թ-ին ստեղծվեց դեղագործի օգնականի աշխատատեղը,³³⁴ միաժամանակ ընդլայնվեց հիվանդապահուհիների

330. Jeppe K., Aus dem Waisenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 192: Այնուամենայնիվ, եթե որևէ չքավոր բազմամդամ ընտանիքում հայրը մահանում էր, ապա երեխաներից երկուսը թողնվում էին մոր խնամքին, իսկ մյուսներն ընդունվում էին որբանոց: Ինչպես Յեպեն էր 1912 թ-ին տեղեկացնում, որբանոցի սաների կազմն այդ շրջանում հիմնականում համալրվում էր այդպիսի երեխաներով: Ամդ:

331. Քաղաքում խոլերայից մահացավ 150 մարդ: St' u Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 22:

332. Jeppe K., Ein Todesfall im Waisenhaus zu Urfa, անդ. էջ 70:

333. St' u ենթագլխի վերջում ներկայացված՝ ընդհանուր վիճակագրական տվյալները:

334. 1905-1914 թվականներին հաջորդաբար դեղագործի օգնական աշխատեցին չորս տեղացի երիտասարդներ՝ Մկրտիչը (1905-08 թթ.), Գրիգորը (1908-10 թթ.), Դովսեփը (1910-13 թթ.) և Թորոսը (1913 թ-ից): St' u Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 166: Դմմտ. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 157:

անձնակազմը, որտեղ 1914 թ-ի դրությամբ ընդգրկվել էին 7 երիտասարդ աղջիկներ,³³⁵ և որոնց 1905 թ-ից իր եռամդուն օգնությունն էր ցուցաբերում նաև Յ. Կյունցլերի կինը՝ Էլիզաբեթ Բենդերը:³³⁶

1907 թ-ին դր. Ֆիշերի ծանրաբեռնվածությունն այնքան էր մեծացել, որ նրա նախկին գործընկերներից մեկը Բազելի հիվանդանոցի ասիստենտ-բժիշկ Ռիկո Պֆիստերերը, նրան օգնելու նպատակով ապրիլին սեփական նախաձեռնությամբ մեկ տարով մեկնեց Ուռիա,³³⁷ իսկ նրա վերադարձից հետո, 1908 թ-ին հիվանդանոցում աշխատանքի ընդունվեց մի հայ բժիշկ Մ. Հադիդյանը:³³⁸ Վերջինս այնտեղ աշխատեց երկու տարի, և 1910 թ-ի հունիսին, երբ անհատական գործունեություն վարելու համար Ուռիայից հեռացավ, նրան փոխարինեց ուռիաբնակ երիտասարդ Արմենակ Աբուհայաթյանը, որը ԳԱԱ-ի աջակցությամբ Բեյրութում ստացել էր բժշկագիտական կրթություն և երկար տարիներ իր անխոնջ ներդրումը բերեց սպասարկման աշխատանքներում:³³⁹

335. Ա. Տաշյանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով 1905 թ-ին նրան օգնական նշանակվեց որբանոցի սան Մարիամ Դեմիրճյանը, իսկ 1908 թ-ին ևս մի տեղացի աղջիկ Օվսաննա անունով: 1909 թ-ին աշխատանքների ընդլայնման պատճառով հարկ եղավ ընդունել չորրորդ հիվանդապահուհուն՝ Կուբսի Կյուպեյանին: 1910 թ-ին Մ. Դեմիրճյանն ամուսնանալով Գրիգորի հետ՝ ծառայությունից հրաժարվեց, և նրա պարտականությունները հանձնարարվեցին Հռիփսիմե Ալահոյոյանին, իսկ 1911 թ-ին աշխատանքի ընդունվեց նաև 5-րդ հիվանդապահուհին՝ Խաթուն Դեզիրմենջյանը: 1912 թ-ին Հռիփսիմեն ամուսնության պատճառով ծառայությունից հեռացավ, և նրա փոխարեն ընդունվեցին երկու նոր աղջիկներ՝ Ալմաստը և Մարիամը: Իսկ 1914 թ-ին նրանց անձնակազմը համալրեց որբանոցի նախկին սանուհիներից մեկը՝ Եղիաքեթը: Stü Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 166: Հմմտ. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, անդ, 1910, էջ 160: Հմմտ. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, անդ, 1911, էջ 135: Հմմտ. Künzler J., Bilder aus der ärztlichen Mission in Urfa, անդ, 1912, էջ 90-91: Հմմտ. Vischer A., Bericht über die Tätigkeit des Krankenhauses in Urfa, անդ, 1915, էջ 4:

336. Նրանց ամուսնությունը տեղի ունեցավ 1905 թ-ին: Է. Բենդերը, որ գերմանուհի էր, սակայն ծնվել և մեծացել էր Արևելքում, ամուսնությունից առաջ մի շտապանդական հիվանդանոցում հիվանդապահության դասընթացներ էր անցել՝ ձեռք բերելով հիվանդապահուհու դիպլոմ: Stü Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 32: Հմմտ. Lepsius J., Daheim und draußen, անդ, 1905, էջ 125:

337. Stü Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1907, էջ 129: Հմմտ. Künzler J., Missionsklinik und Spital in Urfa 1897-1907, „Der Christliche Orient“, 1908, էջ 33:

1907 թ-ի դեկտեմբերին բուժանձնակազմի և Կ. Յեպեի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու, մասնավորապես աղքատների և հիվանդների շրջանում բարեգործական աշխատանքներով զբաղվելու և դպրոցի վերահսկողությունն իրականացնելու համար ԳԱԱ-ի և դանիացի բարեկամների փոխհամաձայնությամբ Ուռհա մեկնեց նաև դանիուհի օր. Էլզա Կյերսգարդը,³⁴⁰ որին, սակայն, դժբախտաբար վիճակված չէր այնտեղ երկար գործել: Նրա ուժերը, չդիմանալով աշխատանքների ծանրաբեռնվածությանը, կարճ ժամանակում այնքան սպառվեցին, որ կազդուրվելու համար նա 1909 թ-ի փետրվարին իր ցանկությամբ տեղափոխվեց հիվանդանոց՝ փորձելով մասնակցել վիրահատությունների անցկացմանը և վիրակապումներին:³⁴¹ Ցավոք, սակայն, այդ ևս չընպաստեց նրա առողջության բարելավմանը, և 1909 թ-ի մայիսին մի ուժեղ տենդից գամվելով անկողնում՝ հուլիսի 17-ին նա մահացավ:³⁴² Ինչևէ, հատկանշական է, որ եթե սկզբնական շրջանում կառավարությունն ու մահմեդական բնակչությունը, ինչպես արդեն հիշատակվել է, թշնամանքով և կասկածամտությամբ էին վերաբերվում ԳԱԱ-ի Ուռհայի մասնաճյուղի գործունեությանը, ապա մի քանի տարի անց իրադրությունը միանգամայն փոխվել էր: «Մեր աշխատանքը ոչ միայն աղքատներ

338. Հադիոյանն իր բժշկագիտական կրթությունը ստացել էր Բեյրութի ամերիկյան վարժարանում, որից հետո որպես բժշկի օգնական երեք տարի աշխատել Այնթապի ամերիկյան հիվանդանոցում: Տե՛ս Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1909, էջ 168:

339. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, անդ, 1910, էջ 160: Ա. Արուհայթյանը Ուռհայի բողոքական հայ համայնքի քահանայի որդին էր, որը սպանվել էր Ադանայի կոտորածների ընթացքում: Անդ: 1912 թ-ին մոլեզմող համաճարակների դեմ պայքարի միջոցառումների ընդլայնման անհրաժեշտությամբ հիվանդանոցում աշխատանքի ընդունվեց նաև երկրորդ հայ բժիշկը՝ Տիրան Դասարյանը, որը, սակայն, իր ծառայությունը վարեց մեկ տարի՝ այնուհետև Սևերեկում անցնելով ինքնուրույն գործունեության: Տե՛ս Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 157:

340. Տե՛ս Mitteilungen, „Der Christliche Orient“, 1908, էջ 16: Նրա ճանապարհածախսը ստանձնել էր Հայաստանի օգնության դանիական կոմիտեն: Անդ:

341 Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1909, էջ 169:

342. Օր. Կյերսգարդը մահացավ Հալեպում, կլիմայափոխության նպատակով մեկ այլ՝ ավելի կազդուրիչ վայր տեղափոխվելու ճանապարհին: Անդ:

րի և հիվանդների մոտ է ճանաչում գտնում, այլև կառավարության,- տեղեկացնում էր դր. Ֆիշերը 1912 թ-ին: -... Այժմ շատ քչերը կլինեն, որ մեզ անվստահությամբ են նայում և մեր մեջ տեսնում օտարների, որոնք բարորությունն օգտագործում են որպես պատրվակ ազդեցություններ ձեռք բերելու կամ քաղաքական ինչ-ինչ նպատակների համար»:³⁴³

Բազմաթիվ հիվանդներ նույնիսկ ամենահեռավոր վայրերից շաբաթներ և ամիսներ ճանապարհ կտրելով գալիս էին Ուռնիա հիվանդանոցում բուժվելու նպատակով: Դր. Ֆիշերը և իր գործընկերներն ամենուր մեծ համարում և հեղինակություն էին վայելում: «Ուռնիայի գերմանական հիվանդանոցի համբավը տարածված է ողջ Միջագետքում,- նշում էր Յոհ. Լեփսիուսը 1913 թ-ին,- և շուտով Եփրատի և Տիգրիսի միջև այլևս որևէ քաղաք չի լինի, որն իր հիվանդներին մեզ մոտ չի ուղարկել»:³⁴⁴

Մահմեդական շրջաններում տրամադրությունների այդ բեկումը պետք է նպաստեր նաև դր. Ֆիշերի գործունեության ընդլայնմանը: Գերմանական հիվանդանոցի օրինակը դեռ 1906 թ-ին իշխանություններին դրդել էր հանդես գալ համապատասխան նախաձեռնությամբ՝ ԳԱԱ-ի կլինիկայի մերձակայքում կառուցելով մի շքեղ հիվանդանոց,³⁴⁵ որը. չնայած կառավարությունից նյութական մեծ աջակցություն էր

343. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 26-27: Չնայած դրան, մահմեդականները բուժապաստարկման ողջ ժամանակամիջոցում մշտապես փոքրամասնություն էին կազմում: Տե՛ս ենթագլխի վերջում ներկայացված վիճակագրական տվյալները:

344. Lepsius J., Briefe aus der Türkei, անդ, էջ 204:

345. Vischer A., Bericht der Klinik in Urfa über das Jahr 1905, „Der Christliche Orient“, 1906, էջ 90: Այն, որ հիվանդանոցի կառուցման համար խթան էր ծառայել գերմանական հաստատության գործունեությունը, վկայում էր նաև դր. Ֆիշերը. «Քանի որ մենք արդեն մի քանի տարի մեր կլինիկան գործարկում էինք,- նշում էր նա,- մի կրքոտ մութեսարլոֆ ամաչեց, որ գերմանացիները միայնակ պետք է հոգ տանեն քաղաքի հիվանդների համար, և կառուցեց մի կառավարական հոսպիտալ»: Տե՛ս Vischer A., Briefe aus der Türkei, „Der Christliche Orient“, 1913, էջ 206: Ուշագրավ է նաև, որ նոր հիվանդանոցը նույնպես գործում էր բարեգործության սկզբունքներով՝ ունեզուրկ հիվանդներին, անկախ ազգային պատկանելությունից, ցուցաբերելով ծրի բուժապաստարկում: Տե՛ս Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, անդ, էջ 168: Դմմոս. Aufruf für den Neubau eines deutschen Krankenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 88:

ստանում,³⁴⁶ սակայն ոչ միայն չկարողացավ գերմանական հաստատության հետ մրցել, այլև բավարար քանակի հիվանդների բացակայության պատճառով միայն մասնակիորեն էր գործում. այն դեպքում, երբ ԳԱԱ-ի հիվանդանոցը մշտապես ծանրաբեռնված էր այցելուներով:³⁴⁷ Բացի այդ, առաջին տարիներին այնտեղ տեղի ունեցան բազմաթիվ մահացություններ,³⁴⁸ և որովհետև քաղաքում վստահություն վայելող այլ վիրաբույժ չկար, 1912 թ-ին Ուռհայի կառավարությունը դր. Ֆիշերին խնդրեց ստանձնել նաև թուրքական հիվանդանոցի ղեկավարումն ու վիրահատությունների կատարումը: Ելնելով այն հանգամանքից, որ ԳԱԱ-ի հիվանդանոցում արդեն կային երկու փորձառու բժիշկներ, և բացի այդ այնտեղ տարածքային պայմաններն այլևս չէին բավարարում հիվանդների լիարժեք սպասարկման համար, դր. Ֆիշերը նպատակահարմար գտավ առաջարկն ընդունել:³⁴⁹ Այդպիսով ԳԱԱ-ի հիվանդանոցի և կլինիկայի աշխատանքներն ամենևին չնվազեցին, իսկ թուրքական հիվանդանոցում կատարվող վիրահատությունների թվաքանակն էապես ավելացավ: 1912 թ-ի սեպտեմբերից մինչև 1913 թ-ի հուլիսն ընկած ժամանակամիջոցում, օրինակ, երկու հիվանդանոցներում դր. Ֆիշերը և իր գործընկերները կարողացան կատարել 1186 վիրահատություն. մի ցուցանիշ, որն օգնության աշխատանքների սկզբից ի վեր դեռ իր նախադեպը չէր ունեցել:³⁵⁰

Կառավարությունն այնուհանդերձ կամենում էր, որ հիվանդանոցն ունենար իր սեփական վիրաբույժը: Այդ պաշտոնը մի քանի անգամ

346. Künzler J., Bilder aus der ärztlichen Mission in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 99:

347. Eckart F., Zehn Jahre Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1908, էջ 23:

348. Vischer A., Briefe aus der Türkei, „Der Christliche Orient“, 1913, էջ 207:

349. Նա պարտավորություն ստանձնեց վիրահատությունները կատարել շաբաթվա երեք օրերի ընթացքում, իսկ հրատապ դեպքերում անհապաղ և առանց հետաձգումների, և բացի այդ նաև վերահսկել հիվանդանոցը: Այդ ամենի համար նա ստանում էր լրացուցիչ վարձատրություն: Տե՛ս Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 27:

350. Թուրքական հիվանդանոցում դր. Ֆիշերին օգնում էին մի հայ բժիշկ և դարձյալ հայ հիվանդապահուհիները: Տե՛ս անդ, էջ 28: Այդ, ի դեպ, պայմանավորված էր այն հանգամանքով, որ մահմեդական կանայք հիվանդապահությամբ չէին զբաղվում դա համարելով «սորուկների և անհավատների աշխատանք»: Տե՛ս Vischer A., Briefe aus der Türkei, անդ, էջ 205:

առաջարկվեց դր. Ֆիշերին,³⁵¹ և նրա հրաժարումից հետո 1914 թ-ի հունվարին հատկացվեց Կ. պոլսեցի մի երիտասարդ հույն բժշկի:³⁵² Այսպիսով, այդ հիվանդանոցում դր. Ֆիշերի գործունեությունը շարունակվեց մինչև 1914 թ-ի հունվարը, որից հետո նա դարձյալ վերադարձավ իր հիմնական աշխատավայրը:

Ուռնիայում երկրորդ հիվանդանոցն ունեցավ նաև այն նշանակությունը, որ դր. Ֆիշերը և նրա անձնակազմը կարճատև արձակուրդի կազմակերպման հնարավորություն ստացան, ինչը նրանց ուժերի վերականգնման համար խիստ անհրաժեշտ էր:³⁵³ Հանգստի ժամանակամիջոցը, սակայն, բուն իմաստով դարձյալ չէր կարող արձակուրդ համարվել. քանի որ օգտագործվում էր տնային ծանր հիվանդների բուժման, դեղորայքի, վիրակապային նյութերի և գործիքների համալրման, հաշվետվությունների և տարվա ընթացքում կուտակված այլ թղթակցությունների շարադրման, հիվանդանոցային սպիտակեղենի լվացման և աշնանային աշխատանքների նախապատրաստման առումով կարևոր այլ միջոցառումների իրականացման նպատակով:³⁵⁴ «Շատ քիչ օրեր էին լինում, երբ դիակոնը կամ բժիշկը, մի հիվանդապահուհի կամ երեքը միաժամանակ առավոտյան մի քանի ժամ չաշխատեին,- նշում էր դր. Ֆիշերն իր տարեկան հաշվետվություններից

351. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, անդ, էջ 168:

352. Vischer A., Aus Mardin, „Der Christliche Orient“, 1914, էջ 59:

353. Տարվա ամենաշոգ շրջանում (հուլիսի կեսից մինչև սեպտեմբերի երկրորդ շաբաթը) հիվանդանոցն իր գործունեությունը դադարեցնում էր, և հրատապ դեպքերում հիվանդներն ապավինում էին թուրքական հիվանդանոցին, որն, ինչպես նշվեց, նույնպես գործում էր քարեգործական սկզբունքներով: Տե՛ս Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 13: Կ. Յեպեն լեռներում, քաղաքից մոտ երկու ժամվա հեռավորության վրա գնել էր մի խաղողի այգի, որտեղ երբեմն այցելելով՝ կարողանում էր իր փոքր-ինչ կազդուրվել: Դր. Ֆիշերը ՉԱԱ-ին պատկանող՝ արդեն հիշատակված հողամասում կառուցել էր մի բնակարան, որը նրա համար ծառայում էր որպես ամառանոց, իսկ 1912 թ-ին խնամող անձնակազմի համար շվեյցարացի բարեկամների նյութական աջակցությամբ գնվեց մեկ այլ այգի, որով փաստորեն ամառանոցային հիմնախնդիրն ամբողջովին լուծվեց: Տե՛ս Künzler J., Das Ferienheim des Urfa-hospitals, „Der Christliche Orient“, 1912, էջ 170-171:

354. Vischer A., Bericht über die ärztliche Arbeit in Urfa, „Der Christliche Orient“, 1913, էջ 13-14:

մեկում.- և ես կարող եմ մատների վրա հաշվել այն օրերը, երբ մեկ կամ մի քանի հիվանդների համար քաղաքում ծիով չեմ պտտվել»:³⁵⁵

Հարկ է նշել, որ չնայած 1904 թ-ին Ուռնայի բժշկական հաստատությունների շենքային պայմանները բավականաչափ բարելավվեցին. բայց դա խնդրի վերջնական լուծում չէր կարող համարվել: Ուրպես բնակարան կառուցված այդ շենքը հիվանդանոցի և կլինիկայի համար անհարմարավետ էր:³⁵⁶ և բացի այդ 1907 թ-ից դարձյալ չէր բավականացնում բազմաթիվ այցելուներին սպասարկելու համար: Չնայած այդ խոչընդոտը հաղթահարելու նպատակով բակում կանգնեցվել էին վրաններ, որտեղ տեղավորվում էին դրսում մնացած հիվանդները,³⁵⁷ սակայն դրանք նույնպես հաճախ այն աստիճան ծանրաբեռնված էին, որ բազմաթիվ հիվանդներ հարկադրված էին լինում օրեր և շաբաթներ շարունակ սպասել իրենց հերթին: Նախկինում, երբ իշխանությունները թշնամաբար էին տրամադրված մասնաճյուղի հանդեպ, նշված շենքը նույնիսկ մեծ ձեռքբերում էր համարվում. սակայն հետագայում, երբ իրադրությունը փոխվեց, հնարավոր դարձավ խորհել նաև պայմանների բարելավման մասին: Դեռ 1907 թ-ին ԳԱԱ-ն այդ համարում էր մոտ ապագայի՝ իր կարևորագույն անելիքներից մեկը: Հիվանդանոցի շենքի վրա երկրորդ հարկաբաժնի կառուցման երկար սպասված թույլտվությունը ստանալուց հետո սկզբնապես որոշվեց խնդիրը լուծել այդ եղանակով,³⁵⁸ սակայն որոշ ժամանակ անց ծրագիրը փոխվեց, և վճռվեց բժշկական հաստատությունների, ինչպես նաև անձնակազմի բնակարանների համար կառուցել մի նոր համալիր շինություն՝ այդ նպատակին հատկացնելով քաղաքի հյուսիսային հատվածում 1902 թ-ին դր. Խրիստի կողմից գնված հողակտորը: Դա կարող էր լինել հարցի լավագույն և մի-

355. Անդ, 1913, էջ 13:

356. Այնտեղ բոլոր հիվանդասենյակներն, օրինակ, ունեին առանձին ելք դեպի բակ, որի պատճառով վիրահատված հիվանդները հարկադրված էին վիրահատարանից տեղափոխվել բակով՝ հաճախ քամու, անձրևի կամ ձյան միջով: Հիվանդասենյակներում չկար նաև քակարար լուսավորություն: St'u Aufruf für den Neubau eines deutschen Krankenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 89:

357. Künzler J., Großer chronischer Platzmangel im Spital in Urfa, „Der Christliche Orient“, 1907, էջ 102:

358. Անդ:

ակ հեռանկարային լուծումը, որի դեպքում միայն, ինչպես ԳԱԱ վարչությունն էր նշում, հաստատություններն ի վիճակի կլինեին բավարարել բնակչության հարածուն պահանջները, կատարել ինքնաձախսածակում և բացի այդ պատրաստ լինել Բաղդադի երկաթուղու շինարարությանը ընդլայնվող «առաջադրանքների» կատարմանը: «Մենք պետք է նաև այն մասին մտածենք, որ շուտով Ուռհայի մոտակայքում կսկսվեն Բաղդադի երկաթուղու աշխատանքները.- տեղեկացնում էր ԳԱԱ-ի վարչությունն այդ առթիվ 1912 թ-ին հրապարակված իր կոչերից մեկում: Մենք պետք է պատրաստ լինենք հիվանդանոցի կարիք ունեցող աշխատողներին մեզ մոտ ընդունել: Մենք, բացի այդ, պետք է հաշվի առնենք, որ երկաթուղու կառուցումից հետո ավելի շատ եվրոպացիներ կգան ճանապարհորդության և կապրեն այստեղ: Նրանց համար նույնպես մեր հոսպիտալը հարկ եղած դեպքում պետք է տեղ ունենա:... Եթե դիտենք այլ, օրինակ անգլիական և ամերիկյան միսիանների հիվանդանոցները, ապա պարզ կլինի, որ դեռ հանգստանալու իրավունք չունենք, քանի դեռ մենք էլ մի հարմարավետ հիվանդանոց չունենք»:³⁵⁹

1913 թ-ին Կ. Պոլսի գերմանական դեսպանության միջնորդությամբ ստացվեց Բ. Դռան թույլտվությունը նոր հիվանդանոցի կառուցման համար,³⁶⁰ և աշխատանքները կարող էին սկսվել:³⁶¹ 1913 թ-ին, հիմնականում շվեյցարացի բարեկամների նյութական աջակցությամբ սկսվեց Կյունցլերի տան շինարարությունը, որն ավարտվեց 1914 թ-ին:³⁶² 1913 թ-ի հունիսի 15-ին, Գերմանիայի կառավարության հոբելյանական տարելիցի օրը Ուռհայում հանդիսավոր կերպով կատարվեց նաև հիվանդանոցի հիմնաքարի տեղադրման արարողությունը,³⁶³ որին, ինչպես տեղեկացնում է դր. Ֆիշերն իր՝ «Ուռհայի

359. Stü Aufruf für den Neubau eines deutschen Krankenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1912, էջ 89-90:

360. Vischer A., Briefe aus der Türkei, „Der Christliche Orient“, 1913, էջ 202:

361. Դեռ 1910 թ-ին Ֆիշերն այդ հողակտորի հարավային հատվածում իր համար մի երկհարկանի տուն էր կառուցել, որի մերձակայքում նախատեսված էր կառուցել Կյունցլերի բնակարանը և մյուս շենքերը: Stü Vischer A., Briefe aus der Türkei, անդ, էջ 207:

362. Անդ: Հմնտ. Künzler J.; Künzler E., Das neue Diakonenhaus in Urfa, „Der Christliche Orient“, 1914, էջ 38-39:

363. Vischer A., Briefe aus der Türkei, „Der Christliche Orient“, 1913, էջ 208:

Որ հիվանդանոցի հիմնադրումը» հողվածում, մասնակցում էին նաև բազմաթիվ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ և հոգևորականներ, ինչպես օրինակ Ուռհայի նահանգապետը, քաղաքի կառավարիչը և ողջ կառավարական ատյանը, մահմեդական հոգևորականության առաջնորդը (մուֆտին), քրիստոնեական միությունների ներկայացուցիչները և այլն:³⁶⁴ Նախատեսված էր 1914 թ-ի գարնանը սկսել նաև նորակառույցի շինարարությունը,³⁶⁵ ինչը, սակայն, մոտալուտ պատերազմի և ծայր առած ողբերգական իրադարձությունների պայմաններում չիրականացավ:

Ինչևէ, ԳԱԱ-ի հաստատությունների բժշկական առաքելությունն ունեցավ խիստ կարևոր նշանակություն համիդյան կոտորածներից արյունաքան հայության ապաքինման համար: Միայն առաջին տասը տարում, օրինակ, սպասարկվեցին շուրջ 30 հազար հիվանդներ, որոնց ճնշող մեծամասնությունը հայեր էին: Իսկ այն փաստն, օրինակ, որ 1900-1907 թվականներին հիվանդանոցային խնամքի տակ գտնվել են 780 հիվանդներ, մինչդեռ միայն 1912 թ-ին նրանց թվաքանակը հասնում էր 600-ի, կարող է հուշել, թե աշխատանքի զարգացումն ու ընդլայնումը որքան արագ էր տեղի ունենում:³⁶⁶ Ստորև պատկերված աղյուսակներում ներկայացնում ենք Ուռհայի բժշկական հաստատություններում 1899-1914 թթ. կատարված աշխատանքների հիմնական վիճակագրական տվյալները:³⁶⁷

364. Vischer A., Grundsteinlegung des neuen Krankenhauses in Urfa, անդ, էջ 154: Մասնակիցների կողմից հորեյանի առթիվ նաև մի շնորհավորական հեռագիր հղվեց Գերմանիայի կայսերը: Տե՛ս Vischer A., Briefe aus der Türkei, անդ, էջ 211: 365. Անդ, էջ 208:

366. Rohrbach P., Deutsche Arbeit in Mesopotamien, „Der Christliche Orient“, 1912, էջ 115: Ամբողջական վիճակագրական տվյալները տե՛ս ներքոբերյալ գծապատկերներում:

367. 1912-13 թթ. աշխատանքային տարվա վիճակագրական տվյալներում ներկայացված 1186 վիրահատություններից 779-ը դր. Ֆիշերն իր հայ օգնականի հետ միասին կատարել է ԳԱԱ-ի հիվանդանոցում, իսկ 407-ը Ուռհայի թուրքական հիվանդանոցում: 1905 թ-ից հետո որքանոցում կատարված այցելությունների թիվն այլևս չի նշվում: Ա՛զատ սյունակներում նշումներ չեն կատարվել համապատասխան տվյալների բացակայության պատճառով:

ԱՊՐԵՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՐԵՆ ՏԱՐԻՆԵՐԸ (1895-1914 թթ.)

Տարեթիվ	Կլինիկայում տեսակցություն օտարի թիվը	Մասնավոր տեսակցությունների թիվը	Կլինիկայում պատասխանող համախորուն թիվը		Բժշկի կատարած այցելի թիվը		Վիրահատությունների թիվը		Պատրաստված դեղատոմսերի թիվը		Հիվանդանոցի այցելուների թիվը			Գրկ. խնամքի օրերը
			Ընդամենը	Այդ թիվում	Քառաբլուճ	Որբանոցում	Ընդհանուր	Քրիստոնյա	Ընդհանուր	Անվճար	Ընդհանուր	Քրիստոնյա	թուրք. ջուրդ. արաբ.	
1899	137	1342	2107	1607 հայ	695	227	176		6696	4564				
1900	117	1615	2047	1585 հայ	717	236	384		6267	4747	20	17	-.3.-.	240
1901	135	1551	2459	1937 հայ	1375	210	377		8396	6274	35	29	1. 2. 3.	533
1902	134	1692	3152	2398 հայ	1406	128	482	364	9083	5289	98	67	10. 11. 12.	1413
1903	134	1842	2334	1841 հայ	2523	55	350	233	6105	2155	72	46	9. 6. 11	1037
1904	150	1084	2897	2211 թր.	1685	78	469	267	5866	1640	93	51	10.17. 14.	1165



Նախայի որբանոցի հիվանդանոցի խնամող անձնակազմը



ԷԼՁԱ ԿՅԵՐՍՍԱՐԴ



ՖՐԱՆՑ ԷԱՐՏՏԸ
 մի խումբ որբ
 երեխաների հետ

Տարեթիվ	Կ.-ում ստի- տարկված միջակերտ նրանցի		Միջ ակերտացի նրանցի		Միջակերտ պղնձ	Միջակերտ նրանցի		Պատրաստ ված միջակերտ նրանցի		Գիմահաճուցի այցելուների թիվը			Գիմ- իջ քի օրերը
	Ընդամու կյր թվում քիստում	Ընդամու կյր թվում	Մյր թվում	Գիմահա- ճուցի թիվը		Ընդամու կյր թվում	Մյր թվում	Ընդամու կյր թվում անձան	Մյր թվում	Ընդամու կյր թվում	Թուրք. քուրդ. արաբ.	Ընդամու կյր թվում	
1905	3476	2590	335	85 հայ		443	246 հայ	6218	1032	113	55 հայ	10.30. 6.	1574
1906	3208	2429	258	66 հայ		711		7128	1315	160	90 հայ	14. 21. 17.	
1907 հունիսի 1- 1907 հուլիսի 1.	2346	1766	229	69 քր.						115	66 հայ	12. 14. 14.	
1907 սեպտ.- 1908 հուլիս	2570	1991	278			308		4731	723	150	94 քր.	10. 34. 11.	2100
1908 օգ.- 1909 հուլ.	3134	2238	296	59 հայ	120	452	236 հայ	4479	575	177	75 հայ	20.31. 23.	
1909 սեպտ.- 1910 հուլիս	3514	2811	471	130 քր.	452	737	526 քր.	7334	2151	281	179 քր.	29. 52. 21.	
1910 սեպտ.- 1911 հուլիս	3596	3017	337	77 քր.		536		7026	2547	240	158 քր.	23. 46. 14.	
1911 թ. սեպտ.- 1912 հուլիս	4419	3659	343	76 քր.	316	801	582 քր.	7969	2679	307	210 քր.	28. 54. 15.	4580
1912 սեպտ.- 1913 հուլիս	4735	4018	461	179 քր.	795	1186	628 հայ	8085	2229	337	242 քր.	40.42. 13.	5365
1913 սեպտ.- 1914 հուլիս	4647	3846	576	190 քր.	150	946		6172	1944	339	217 քր.	40.60. 19.	

2.2. Խոյի և Ուրմիայի մասնաճյուղերը

1896-97 թթ. խիստ ծանր վիճակում էին գտնվում նաև այն տասնյակ հազարավոր հայ և ասորի փախստականները, որոնք կոտորածների ընթացքում կարողացել էին թուրքիայի սահմանները հատել և անցնել հարևան երկրներ:³⁶⁸ Քանի որ մեծաքանակ փախստականներ էին հավաքվել նաև Պարսկաստանում, հատկապես Սալմաստի և Ուրմիայի շրջաններում, Բեռլինի կոմիտեն վճռեց իր փրկարար գործունեությունը ծավալել նաև այնտեղ: Ըստ այդմ, Դավիթ Իսմայել անունով մի ասորի ուսուցչի, որի հետ Լեփսիուսն ուներ անձնական ծանոթություն, հանձնարարվեց այցելել կարիքի գոտիները և վատթարագույն վիճակում գտնվող փաստականներին ցուցաբերելով առաջին օգնություն՝ միաժամանակ որբանոցային խնամքի վերցնելու նպատակով հավաքագրել հայ և ասորի որբ երեխաների:³⁶⁹

Դ. Իսմայելը նախ այցելեց Թավրիզ և Սալմաստ, որտեղ համապատասխանաբար կային 3000 և 5000 փախստականներ, և հիվանդներին ու առավել ծանր դրության մեջ գտնվող մարդկանց հազուստեղեմ, վերականգնել ու որոշ քանակությամբ դրամ հատկացնելուց հետո³⁷⁰ մարտին մեկնեց Ուրմիա՝ ասորի փախստականների հիմնական հավաքատեղին՝ այնտեղ շարունակելով իր օգնության աշխատանքները:³⁷¹ «Ուրմիայում կան 10000 փախստականներ,- այնտեղից տեղեկացնում էր նա,- և դեռ այդքան էլ կլինեն Ուրմիայի և պարսկական սահմանի միջև: Եթե Դուք կամենում եք նրանց համար ինչ-որ հիմնավոր բան անել, ապա հնարա-

368. Մեծ թիվ էին կազմում հատկապես Վանի շրջանի փախստականները, որտեղ, ըստ Բեռլինի կոմիտեի տվյալների, կոտորածներին զոհ էր գնացել մոտ 20000 մարդ: Տե՛ս Urumia, „Der Christliche Orient“, 1897, էջ 279:

369. Տե՛ս Das deutsche Hilfswerk für Armenien, անդ, էջ 331: Դ. Իսմայելին այդ նպատակով հատկացվել էր 11000 մարկ: Տե՛ս Urumia, անդ, էջ 280:

370. Անդ, էջ 279-280:

371. Խոսքը վերաբերում էր Թուրքիայի քրդական շրջաններում ապրող մոտ 20000 նեստորիանական ասորիներին, որոնք 1895-96 թթ. քրդերի դեմ երկարատև պայքարից հետո ի վերջո դիմեցին փախուստի՝ կուտակվելով հիմնականում Պարսկաստանի Ուրմիայի շրջանում: Անդ:

վորին չափ շուտ այստեղ պետք է մի գերմանացի գա: ... Ես մինչև այժմ այցելել եմ 8000 փախստականների և միայն փոքրիկ օգնություն եմ կարողացել ցուցաբերել: Կարիքը շատ մեծ է, իսկ իմ հնարավորությունները՝ չնչին»:³⁷²

Դ. Իսմայելի՝ այդ տեղեկության հիման վրա վճռվեց որբանոցի հիմնումը կատարել Ուրմիայում, որտեղ նա սկսել էր որբերի հավաքագրումը:³⁷³ Այդ առաջադրանքը հանձնարարվեց պաստոր Չանս Ֆիշերին, որն իր կնոջ և երկու օրիորդների՝ քույրեր Մարիա և Մարգարետ Պաուլատների հետ միասին մայիսի 1-ին Բեռլինից ճանապարհվելով Պարսկաստան երկու ամիս անց արդեն Ուրմիայում էր:³⁷⁴ Այնտեղ իրադրության մանրագին ուսումնասիրությունից հետո նա նպատակահարմար համարեց մեկ որբանոցով չբավարարվել, ինչն անշուշտ խորապես կշռադատված էր:

Չայ փախստականները, հիմնականում կենտրոնացված լինելով Սալմաստի շրջանում, Ուրմիայում մեծ թիվ չէին կազմում,³⁷⁵ և բացի այդ այնտեղ արդեն հիմնվել և գործում էին մի շարք բարեգործական հաստատություններ, մինչդեռ Սալմաստի շրջանում քրդերի վայրագությունների և ոչ վերջին հաշվով նաև հայ «հեղափոխականների» վերաբերյալ ամենուր, նաև Եվրոպայում տարածված լուրերի պատճառով դեռ ոչ մի ընկերություն այնտեղ մուտք չէր գործել:³⁷⁶

372. Անդ:

373. Անդ:

374. Schäfer R., Geschichte..., էջ 15: Գ. Ֆիշերը ճանապարհին էջմիածնում այցելեց նաև ամենայն հայոց կաթողիկոսին, որը նրան խոստացավ իր աջակցությունը ցուցաբերել և Պարսկաստանում գտնվող հնագույն քրիստոնեական հաստատություններից մեկը՝ Ս. Թադևոսի վանքը տրամադրեց նրան: Stín Das deutsche Hilfswerk für Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 331:

375. Fischer H., Aus unserer Arbeit in Persien, անդ, էջ 422:

376. Անդ: Դրանց ելությունը պարզաբանելու համար նշենք, որ Սալմաստում գործում էին մի շարք հայկական զինված խմբեր, որոնք իրենց առջև խնդիր էին դրել հայ բնակչությանը պաշտպանել քրդական ցեղերի հարձակումներից: Նրանք Պարսկաստանի մահմեդական շրջաններում մեծ սարսափ էին տարածել, որից օգտվելով, սակայն, թուրքական իշխանությունները դարձյալ շահարկում էին «հայ հեղափոխականների» հայտնի խաղաքարտը: Որոշակիորեն պարզ էր նաև այդ ամենի ենթատեքստը. Թուրքիայի սահմանի մոտ հայ փախստականների մեծաքանակ կուտակումները անհամապատասխան էին պատճառում այդ երկրի կառավարությանը, որն, օգ-

Իրադրությանը տեղում ծանոթանալու և այդ լուրերի իսկությունն անձամբ ստուգելու նպատակով Հ. Ֆիշերն իր աշխատակիցների հետ մեկնեց Սալմաստ, որտեղ կարճ ժամանակում կարողացավ համոզվել, որ «հայ հեղափոխականների» առասպելը թուրքական իշխանությունների «ինտրիգային» քարոզչության հետևանքն էր և իրականությանը չէր համապատասխանում: «Այն, ինչ այդտեղ հայերի հեղափոխական ձգտումների վերաբերյալ փսփաում են, ես համարում եմ սին հերյուրանք՝ հորինված Թուրքիայի պատվին,- գրում էր նա՝ կոմիտեին ուղղված իր նամակներից մեկում:- Արդյո՞ք հանցագործությունը, որն այդ մարդկանց եվրոպայի աչքերում այնպես դատապարտելի է դարձնում, ր կարծես խոսքը վերաբերվում է անարխիստների և ռմբարկուների, այն է, որ նրանք ներգաղթող փախստականներին լեռներում փոքր-ինչ ընդառաջ են գնում՝ նրանց օգնելու և քրդերի հարձակումներից փրկելու համար: Կամ գուցե այն, որ նրանցից ոմանք որսորդական հրացաններ ունեն: Այդ դեպքում ես էլ եմ հեղափոխական, և նմանապես նաև ամեն ոք Պարսկաստանում, ով այդպիսի զենքեր կարող է գնել, քանի որ բոլորն էլ դրանցից ունեն»:³⁷⁷

տրվելով Պարսկաստանի կառավարության թուլությունից և թողությունից՝ ջանում էր հայկական տարրին սահմանագոտում ապրող մահմեդական բնակչության միջոցով թուլացնել և ոչնչացնել: Դա հնարավոր կլիներ միայն այն դեպքում, եթե զենք կրելը հայերին արգելվեր, և ամենայն հավանականությամբ Թուրքիայի ազդեցությամբ էր պայմանավորված, որ, չնայած Պարսկաստանի կառավարությունը հայ փախստականներին թշնամաբար չէր ընդունում, սակայն նրանց արգելված էր օտտրվել այդ երկրի քաղաքացիների բազմաթիվ տարրական իրավունքներից, որոնցից էր նաև զենք կրելու իրավունքը: Տե՛ս Paulat M., *Meine Erlebnisse in Persien*, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 63: Եթե այդ հանգամանքը չլիներ, և հայերը նույնպես զենք կրելու իրավունք ունենային, ապա հիշյալ խաղաքարտն այդքան լայնորեն չէր կարող շահարկվել, քանի որ նրանց ինքնապաշտպանական գործունեությունը միանգամայն բնական և երկրի օրենքներին հարիր կհամարվեր: Հարկ է նշել, որ այդ տարիներին ի թիվս այլոց Խոյուն և Պարսկաստանի մյուս հայաբնակ հյուսիսային շրջաններում գործում էին Նիկոլ Դումանը, Չարվատար Հակոբը, Դարյալազյազցի Խեչոն, Կոստի Համբարձումյանը, Սարբազ Խեչոն, Դաշնակցական Խեչոն և բազում այլ հայ քաջորդիներ, որոնց անուններն ընդմիջտ մնացել են դարազլխի հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Տե՛ս Ռուբին, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատոր, Թեհրան, 1982, էջ 264-315:

377. Fischer H., *Aus unserer Arbeit in Persien*, „Der Christliche Orient“, 1897, էջ 423:

Համապատասխանաբար որոշում կայացվեց Սալմաստում նույնպես մի առանձին մասնաճյուղ բացելու մասին: Ըստ այդմ Հ. Ֆիշերն ու իր աշխատակիցները նախ գնեցին մեծաքանակ հաց և հազուստ՝ բաժանելով սովահար մարդկանց: Այնուհետև բոլորովին անօթևանների համար Կալասար գյուղում վարձակալվեցին երկու աղքատանոցներ, որոնց կից հիմնվեց նաև մի հիվանդանոց՝ հանձնարարվելով մի հայ բժշկի տնօրինությամբ:³⁷⁸ Բացի այդ, ունեզուրկ կանանց համար ստեղծվեց մի կարի արտադրամաս, որտեղ բավարար աշխատավարձով, հերթափոխային կարգով օրական աշխատում էին 40-50 կանայք՝ այդպիսով ի վիճակի լինելով իրենց ընտանիքների համար հոգ տանել: Իսկ այնուհետև սկսվեց որբերի հավաքագրման և որբանոցի կազմավորման գործը, որ գտնվում էր նմանապես Կալասարում վարձակալված մի երկհարկանի շենքում:³⁷⁹

Այսպիսով, 1897 թ-ի ամռանը Ուրմիայում հիմնվեց մի ասորական, իսկ Սալմաստում (Կալասար)՝ հայկական որբանոց, որի ժամանակավոր ղեկավարումը Հ. Ֆիշերի ցուցումով ստանձնեց Ուրմիաբնակ հայ փախստական Միհրան Բաղդասարյանը:³⁸⁰ Այնտեղ ընդունվում և խնամվում էին հիմնականում 4-13 տարեկան երեխաներ, որոնց թիվը 1898 թ-ի սկզբին հասնում էր մոտ 30-ի:³⁸¹

Ինչպես, սակայն, հետագա ամիսներին պարզ դարձավ, Կալասարը,

378. Անդ: Դժվար էր գերազնահատել այդ միջոցառումների նշանակությունը անասելի զրկանքների և սովի մատնված՝ Սալմաստի հայ փախստականների համար. «Թշվառությունը, որ մենք այնտեղ տեսանք, անհավատալի մեծ էր, գրում էր Մարգարետ Պաուլատը: - Ամեն օր հոծ խմբերով մեզ մոտ փախստական կանայք էին գալիս իրենց երեխաների հետ, բոլորը զրեթե մերկ կամ ցնցոտիների մեջ... Ջառանյալ ծերեր և հիվանդ տղամարդիկ, որոնք խնդրում էին հագուստ և հաց»: Տե՛ս Paulat M., *Meine Erlebnisse in Persien*, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 62:

379. Անդ, էջ 26:

380. Տե՛ս Unser Waisenhaus zu Kalassar, in Salmas, Persien, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 26: Վերջինս լիազորված էր վերահսկելու նաև երկու աղքատատներն ու հիվանդանոցը, որտեղ սեպտեմբերի 25-ի դրությամբ 15 մարդ գտնվում էր բժշկական հսկողության տակ: Տե՛ս Baghdasarian M., *Aus unserer Arbeit in Persien*, „Der Christliche Orient“, 1897, էջ 574:

381. Տե՛ս Unsere Waisenkinder in der Türkei, Persien und Bulgarien, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 9: Հմնտ. Das Waisenhaus in Choi, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 78:

ապահովագրված չլինելով Թուրքիայի տարածքում գտնվող քրդական ցեղերի ավազակային հարձակումներից, որբանոցի համար հեռանկարային վայր չէր կարող լինել,³⁸² որի պատճառով և օրակարգ մտավ հաստատության շուտափույթ տեղափոխման խնդիրը: Պրա իրագործումը վիճակվեց ընկերության Պարսկաստանի մասնաճյուղերի նոր ղեկավար պաստոր Էդուարդ ֆոն Բերգմանին, որը մեկնելով այնտեղ՝ հուլիսից ծեռնամուխ էր եղել իր հանձնառությունների կատարմանը:³⁸³

Կալասարի որբանոցի համար մի ավելի ապահով վայր գտնելու նրա որոնումներն ի վերջո եզրափակվեցին Խոյի ընտրությամբ, որ չնայած մեծ մասամբ մահմեդականներով էր բնակեցված, սակայն ուներ առանձին հայկական թաղամաս և շրջապատված էր բացառապես հայկական գյուղերով:³⁸⁴ Քանի որ նախատեսված էր որբանոցում

382. Sbu Aus Persien, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 124:

383. Schäfer R., Geschichte..., էջ 22: Պաստոր ֆոն Բերգմանը նախքան Պարսկաստան մեկնելը քարոզչական գործունեություն էր վարում Բաքվում աշխատակցելով Թիֆլիսի սինոդի միաբանությանը: Sbu Lepsius J., Reisebriefe von Dr. Johannes Lepsius, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 123: Գ. Ֆիշերի վերաբերյալ հետազայում այլևս տեղեկություններ չհաղորդվեցին: Ամենայն հավանականությամբ, կատարելով որբանոցների հիմնման իր պարտականությունը, նա այնուհետև վերադարձել էր Գերմանիա:

384. Ընտրության հիմնավորվածությունն ավելի պարզ կդառնա, եթե նկատի առնվի դրա նախապատմությունը. Պարսկաստան գալուց հետո հետո Ֆոն Բերգմանը ստույգ աղբյուրներից իրազեկվեց, որ Խոյի շրջանի՝ մեկ տարի առաջ թուրքերի կողմից կողոպտված և ավերված հայկական գյուղերում սովամահությունից խուսափելու համար մի շարք (շուրջ 15) հայ ընտանիքներ մահմեդականություն էին ընդունել: Նմանապես հայտնի էր դարձել, որ այնտեղ գտնվող քաղաքիվ որբերի մահմեդականները վերցրել և պահում էին իրենց մոտ: Խոյի հայերին կրոնափոխման նոր հուսանատ քայլերից ետ պահելու համար նա մեկնեց այնտեղ և գործազուրկ տղամարդկանց քածանեց անձնագրեր, ճանապարհաձախս և մեկ թուման լրացուցիչ գումար, որպեսզի նրանք աշխատելու համար կարողանան մեկնել Ռուսաստան: Բերգմանը համոզված էր, որ նրանք այդ դեպքում ի վիճակի կլինեին հոգալ իրենց ընտանիքների ապրուստը: Այնուհետև նա վճռեց Խոյում մնացած որբերին հավաքել և տեղափոխել Կալասարի որբանոց, ինչը, սակայն, տեղի բնակիչների կողմից հանդիպեց որոշակի ընդդիմության: Նրանցից շատերը համաձայնում էին որբերին տալ միայն այն դեպքում, եթե հաստատությունը հիմնվեր Խոյում: Ուստի, երբ հասունացավ Կալասարի որբանոցի տեղափոխման հարցը, Բերգմանի ընտրությունը կանգ առավ Խոյի վրա: Sbu Aus Persien, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 124:

խնամառության վերցնել ոչ պակաս, քան 100 երեխայի, իսկ խոյուն համապատասխան տարածք ունեցող որևէ տուն չկար, Բերզմանը, խուսափելով վարձակալման ընդունված եղանակից, գնեց մի ընդարձակ հողամաս շենքի կառուցումն այնտեղ անձամբ իրականացնելու համար:³⁸⁵ Չնայած մահմեդական հոգևորականության դիմադրությանը,³⁸⁶ նրան հաջողվեց կառավարությունից ստանալ նաև շինարարության թույլտվությունը և սկսել այն: Կառուցումը կատարվում էր ըստ հնարավորին արագ, առանց նույնիսկ այդ մասին ժամանակին Բեռլինի կոմիտեին իրազեկ պահելու կամ հարցնելու. քանի որ անհնար էր ասել, թե մահմեդական հոգևորականության ընդդիմության պարագայում «իշխանությունների բարեհաճությունը որքան կշարունակվեր»:³⁸⁷ 1899 թ-ի ամռան վերջին նորակառույցը հիմնականում պատրաստ էր և սեպտեմբերի 9-ին բնակեցվեց մինչև այդ արդեն հավաքագրված երեխաներով. որոնց թիվը Կալասարից բերված 30 որբերի հետ միասին հասնում էր 136-ի:³⁸⁸

100 երեխայի բնակության համար նախատեսված որբանոցը նրանց անհամեմատ ավելի մեծ այդ թվակազմին համապատասխանեցնելու նպատակով հիմնական շենքին կից հաշվված օրերի ընթացքում կառուցվեցին նաև երեք այլ օժանդակ շինություններ, որոնցից մեկը հատկացվեց ախոռների, շտեմարանների և ծառայողների բնակարանների, իսկ մյուսները՝ խոհանոցի, ճաշասրահի, հացաթխման, լվացատան և այլ տնտեսական նպատակների համար:³⁸⁹

385. Անդ, էջ 126: Գողամասը գնվեց 1600 մարկով, իսկ շինարարությունն, ըստ Բերզմանի հաշվարկների, պետք է արժենար ոչ ավել, քան 6000 մարկ: Անդ:

386. Խոյի մուլեռանդ մուլլաներն ու շեյխերը թշնամանքով ընդունեցին որբանոցի հիմնման փաստը և բողոքագիր ուղարկեցին Թեհրան՝ հայտարարելով, որ օտարերկրացիների ներկայությունը «ճշմարիտ հավատը վտանգում է»: Նրանք սպառնում էին նույնիսկ հարձակվել որբանոցի վրա: Տե՛ս Das Waisenhaus in Choi, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 79:

387. Bergmann von, Unsere Arbeit in Persien, „Der Christliche Orient“, 1900, էջ 19:

388. Տե՛ս Das Waisenhaus in Choi, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 78: Զմնտ. Bergmann von, Unsere Arbeit in Persien, „Der Christliche Orient“, 1900, էջ 19: Ուշագրավ է, որ շենքի բնակեցումից տառաջիորդն մի քանի օր անց որբանոցի շինարարության հարցում բարեհաճորեն տրամադրված խոյի, Սալմաստի և Ուրմիայի գլխավոր նահանգապետ Իկբալի Մյուլկն աշխատանքից հեռացվեց, ինչը, փաստորեն, արդարացնում էր ֆոն Բերզմանի շտապողականությունը: Անդ:

389. Տե՛ս Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes, 1899, էջ 157:

Հաշվված շաբաթների ընթացքում կատարվեց նաև մասնաճյուղի աշխատակազմի առաջին համալրումը: Այդ նպատակով Լեփսիուսի հետ նրա՝ 1899 թ-ի ճանապարհորդության ընթացքում Պարսկաստան մեկնեցին պաստոր Յոհաննես Արքշատը, օր. Մաթիլդե Գարդիաուզենը և օր. Մանյա Զենգելմանը:³⁹⁰ Մայիսի 27-ին, երբ նրանք հասան Խոյ,³⁹¹ Արքշատը ստանձնեց մասնաճյուղի ընդհանուր ղեկավարումը, օր. Գարդիաուզենը տեղավորվեց աշխատանքի որբանոցում, իսկ Մ. Զենգելմանը տեղափոխվեց Ուրմիա այնտեղի որբանոցում աշխատելու համար:³⁹²

Այդ աշխատաբաժանումը, սակայն, շուտով դարձյալ փոփոխման ենթարկվեց, քանի որ պ. Արքշատը ծանր հիվանդության պատճառով 1899 թ-ի ամռանը հարկադրված եղավ վերադառնալ Գերմանիա:³⁹³ Ուստի Բերգմանի առաջարկով նրա պարտականությունները, այն է՝ Խոյի որբանոցի ղեկավարությունը ստանձնելու համար Ուրմիայից դարձյալ Խոյ տեղափոխվեց օր. Զենգելմանը,³⁹⁴ իսկ վերջինիս փոխարեն Ուրմիայի որբանոցում աշխատելու համար 1900-ի նոյեմբերի 7-ին ԳԱԱ-ի կողմից այնտեղ ուղարկվեց Աննա Ֆրիդեմանը:³⁹⁵

Վերոնշյալ համալրումներն, ի դեպ, կարևորվեցին ոչ միայն մասնաճյուղի աշխատակազմի ձևավորման, այլև այն ծանր իրավիճակի թելադրանքով, որը ստեղծվել էր Ուրմիայի, Վանի և Սալմաստի միջև ընկած շրջանների հայ բնակչության համար: 1899 թ-ին համիդեական քրդերի դաժան հետապնդումների պատճառով նշված տարածքների հայ և ասորի բնակիչները մեծ հոսքով փախչում էին դեպի Ռու-

390. St'u Mitteilungen, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 59: Թիֆլիսում նրանց միացան նաև Սովսես Ներսիսյանը և Զելենե Լազարը (ազգությամբ չատիչ), որոնցից առաջինը պաստոր Բերգմանի կողմից իրավորվել էր Խոյի որբանոցի դպրոցում, իսկ երկրորդը՝ խոհանոցում աշխատելու համար: St'u Lepsius J., Reisebriefe von Dr. Johannes Lepsius, անդ, էջ 124:

391. Անդ, էջ 125:

392. St'u Erdbeben in Choi, „Der Christliche Orient“, 1900, էջ 56: Մ. Ներսիսյանին հանձնարարվեց թարգմանչի պարտականությունը, մինչև գերմանացի աշխատակիցները հայերենին կտիրապետեին: St'u Lepsius J., Reisebericht von Dr. Lepsius, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 158:

393. Bergmann von, Unsere Arbeit in Persien, „Der Christliche Orient“, 1900, էջ 19:

394. Անդ:

395. Schäfer R., Geschichte..., էջ 36:

ասատան, և քանի որ ռուսական սահմանային կետից անցնելու թույլ-տվություն էին ստանում միայն ասորիները, մերժված հայերը վերադառնում էին Խոյ ծայրահեղ գրկալից վիճակում պաշարելով որբանոցը:³⁹⁶ Բերգմանը հարկադրված էր տղամարդկանց ցույց տալ Սալմաստի ճանապարհը, որտեղ նրանք փորձում էին իրենց հայրենակիցների օգնությամբ օթևան և վաստակ գտնել, իսկ մինչ այդ կկատարվեր, նրանց կանանց և երեխաների խնամքը ժամանակավորապես ստանձնեց որբանոցը: Բերգմանը նրանց համար կարողացավ ստեղծել աշխատանքի և վաստակի որոշ հնարավորություններ,³⁹⁷ իսկ ցրտերն ընկնելուց հետո նրանց օթևան տվեց նաև որբանոցի շենքում բոլորովին որբ երեխաներին ներգրավելով որբանոցի սաների կազմում: Դժվար է գերագնահատել այն օգնությունը, որ որբանոցն այդ շրջանում ցուցաբերեց հայ փախըստականներին, որոնց թվաքանակի վերաբերյալ, ցավոք, ստույգ տեղեկություններ չեն հաղորդվում: «Կանայք գալիս էին ոտքերի վրա ցրտից գոյացած ուռուցքներով,- նկարագրում էր նա,- հիվանդ և անօգնական: Ես չէի կարող ինձ թույլ տալ՝ նրանց ասել՝ հեռացեք, ես միայն ձեր որբերի համար միջոցներ ունեմ: Հիմա նրանք գրեթե մի շաբաթ է՝ ինձ մոտ են և դեռ ի վիճակի չեն ուտել առանց որովայնի սուր ցավերի»:³⁹⁸

Մասնաճյուղի առաջին տարիները լի էին նաև փորձություններով. 1900 թ-ի մարտի 6-ին տեղի ունեցավ ուժգին երկրաշարժ, որ քաղաքում մեծ ավերածություններ գործեց՝ զգալի վնասներ պատճառելով նաև որբանոցի նորակառույցին: Երբ ԳԱԱ-ի միջոցներով շենքը հիմնականում վերանորոգված էր,³⁹⁹ մեկ ուրիշ ստորգետնյա ցնցման պատճառով, որ տեղի ունեցավ նույն թվականի սեպտեմբերի 13-ին, այն նորից հայտնվեց վթարային վիճակում:⁴⁰⁰ իսկ որոշ ժամանակ անց՝ զարմանք. ենթարկվեց մասնակի փլուզման, որին դարձյալ հե-

396. Bergmann von, *Unsere Arbeit in Persien*, „Der Christliche Orient“, 1900, էջ 22:

397. Որբանոցի համար պատրաստի ապրանքներ (հատակի ծածկույթ, գործվածքեղեն և այլն) գնելու փոխարեն նա գնում էր հումք և այն պատրաստելու աշխատանքը համապատասխան վճարման դիմաց հանձնարարում այդ կանանց: Անդ, էջ 24:

398. Անդ:

399. Henselmann M., *Erdbeben in Choi*, „Der Christliche Orient“, 1900, էջ 56-57:

400. Henselmann M., *Neues Erdbeben*, անդ, էջ 158:

տևեցին նորոգման ծախսաշատ աշխատանքները:⁴⁰¹

Այուս կողմից, սկզբնական շրջանում շարունակվում էին թշնամանքի ցույցերը մահմեդական կրոնավորների շրջանում. որոնք, փորձելով ամեն կերպ միջամտել հաստատության ներքին գործերին, չէին խուսափում նույնիսկ բացահայտ առճակատումներից:⁴⁰² Բարեբախտաբար այդ առթիվ Յենգելմանի՝ քաղաքագլխին ուղղված բողոքները հասան իրենց նպատակին, և վերջինս նրան հատկացրեց որբանոցի անվտանգության ապահովման մի գրավոր հրամանագիր տրամադրելով նաև երկու հսկիչ,⁴⁰³ այլապես, ինչպես հուշում էին հետագա զարգացումները, մահմեդականների վարքագիծը կարող էր անկանխատեսելի հետևանքներ ունենալ:⁴⁰⁴

Այնուամենայնիվ ժամանակն իր դերը կատարում էր. 1900 թ-ի վերջին այդ տրամադրությունները տեղի էին տալիս, իսկ որբանոցի համբավը քաղաքում նկատելիորեն աճում էր: Ուշագրավ է, որ այդ պայմանավորված էր առավելապես քաղաքի անօգնական հիվանդ բնակիչներին և նրանք թվում նաև որոշ մահմեդականների՝ Մ. Յենգելմանի ու նրա գործընկերների կողմից կատարված՝ դեղորայքի հատկացումներով. «Քանի որ մենք ունեզուրկ հիվանդ մահմեդականներին կարողացել ենք օգնել, ազգաբնակչության սրտում լավ տեղ ենք նվաճել»,- նշում էր Մ. Յենգելմանն իր նամակներից մեկում:⁴⁰⁵ Այդ հանգամանքը բնականաբար վկայում էր ինչպես Ուոհայում, այնպես էլ Խոյում բուժասպասարկման աշխատանքների կազմակերպման կարևորության մասին,⁴⁰⁶ և չնայած ԳԱԱ-ն սկզբից

401. Անդ:

402. Մուլլաները և շեիդները շարունակ գալիս էին այնտեղ՝ պահանջելով թույլ տալ շենքը խուզարկել: Արգելքի հանդիպելով՝ նրանք ծեծում էին որբանոցի ծառաներին և փորձում զանազան վիճաբանություններ ստեղծել: Տե՛ս Briefe aus Choi, „Der Christliche Orient“, 1900, էջ 135:

403. Անդ:

404. Դրա վկայությունն էր 1901 թ-ի փետրվարի 23-ի դեպքը, երբ որբանոցի վրա տեղացին կրակահերթեր: Մ. Յենգելմանը, նրա աշխատակիցներն ու երեխաները միայն երջանիկ պատահականությամբ մնացին անվնաս: Տե՛ս Gnädige Bewahrung von Fr. Henselmann, „Der Christliche Orient“, 1901, էջ 39:

405. Տե՛ս Briefe aus Choi, անդ, 1900, էջ 140:

406. Տե՛ս Henselmann M., Briefe aus Choi, „Der Christliche Orient“, 1900, էջ 158: Դնձտ. Henselmann M., Gefahr und Bewahrung in Choi, անդ, 1901, էջ 87:

Լեթ այդ մտադիրությունն ուներ,⁴⁰⁷ այնուհանդերձ հաստատության այլ ավելի հրատապ կարիքների բավարարման անհրաժեշտությամբ դա պետք է առժամանակ հետաձգվեր:

Ինչևէ, որբանոցում համալրումները շարունակվում էին: Ուսումնաարտադրական նպատակներով արհեստագործությունը զարգացնելու համար ԳԱԱ-ի կողմից 1901 թ-ի զարմանը Խոյ ուղարկվեց գերմանացի ատաղծագործ Յերման Շուբերտը,⁴⁰⁸ իսկ տարեվերջին նրան փոխարինեց նմանապես ատաղծագործ Մաքս Շյունեմանը, որն, ինչպես շուտով կտեսնենք, իր երկարամյա գործունեությամբ խիստ մեծ դեր խաղաց մասնաճյուղի ուսումնաարտադրական կյանքում:⁴⁰⁹

1902 թ-ի փետրվարին ԳԱԱ-ի հանձնարարությամբ Պարսկաստանի մասնաճյուղերի տեսչական վերահսկողությունը ստանձնեց պաստոր Դետվիգ ֆոն Օյրցենը, որը նույն ամսի 27-ից անցավ իր հանձնառություններին:⁴¹⁰ Նրա նշանակումից կարճ ժամանակ անց՝ մարտի 15-ին, Մ. Յենգելմանն առողջության վերականգնման նպատակով ծառայությունից հրաժարվեց և վերադարձավ Գերմանիա,⁴¹¹ որի պատճառով և, մինչև որբանոցի համար նոր ղեկավար կգտնվեր, այդ պարտականությունը հանձ-

407. Sbn Lepsius J., Bitte der Orientmission, „Der Christliche Orient“, 1901, էջ 101:

408. Մայիս ամսից արդեն մոտ մեկ տասնյակ երեխաներ նրա մոտ սովորում էին ատաղծագործություն: Բացի այդ նա երեխաներին հետ մարմնակրթության և զժագրության դասեր էր անցկացնում, իսկ նրա կինը սովորեցնում էր գործել և կարել: Sbn Henselmann M., Gefahr und Bewahrung in Choi, „Der Christliche Orient“, 1901, էջ 85-86:

409. Schünemann M., Industrie- und Handwerk-Schule der Deutschen Orient-Mission in Khoi, „Der Christliche Orient“, 1905, էջ 66: 1902 թ-ին զնվեց նաև որբանոցին կից մի ընդարձակ հողամաս, որը նախատեսվում էր օգտագործել մթերքների արտադրության նպատակով՝ ոչուրացնելով հաստատության սննդամատակարարման գործը: Sbn Mitteilungen, „Der Christliche Orient“, 1902, էջ 80: Բացի այդ, որբանոցն ուներ նաև սեխի հողամաս և հացահատիկի մի փոքր դաշտ, որի բերքը բավարարում էր հաստատության 1 ամսվա պահանջները: Sbn Henselmann M., Briefe aus Choi, „Der Christliche Orient“, 1900, էջ 157:

410. Sbn Mitteilungen, „Der Christliche Orient“, 1902, էջ 32: ԳԱԱ-ն Դ. ֆոն Օյրցենին, որը մինչ այդ Գերմանիայում նախագահում էր ուսանողների միսիոներական միությունը, քաջատեղյակ էր դուրանին, արաբերեն ու թուրքերեն լեզուներին, հանձնարարվել էր ուսումնասիրել նաև մահմեդական շրջաններում քարոզչության կազմակերպման հնարավորությունները: Անր: Չմնտ. Schäfer R., Geschichte..., էջ 41:

411. Sbn Mitteilungen, „Der Christliche Orient“, 1902, էջ 80:

նարարվեց Օյրցենին, իսկ նրան օգնելու համար ԳԱԱ-ի միջնորդությամբ ժամանակավորապես այնտեղ հաստատվեց նաև Ֆրանկֆուրտի կոմիտեի աշխատակից օր. Պաուլինե Պատրունկին:⁴¹² Այդ անորոշ իրադրությունը, սակայն, երկար չշարունակվեց: Ամռանը ԳԱԱ-ի առաջարկով որբանոցի ղեկավարությունը ստանձնեց Աննա Հառնակը,⁴¹³ որը 1902 թ-ի օգոստոսի 2-ին արդեն խոյուն էր և ողջ նվիրումով ձեռնամուխ լինելով մասնաճյուղի գարգացմանն ու բարգավաճմանը՝ դարձավ որբանոցի մեծագույն երախտավորներից մեկը:⁴¹⁴

Որբանոցի սաների կրթությունը պատշաճ կազմակերպելու համար համալրումներ կատարվեցին նաև դպրոցում. քանի որ Մ. Ներսիսյանը բոլոր անհրաժեշտ առարկաները դասավանդել չէր կարող, 1900 թ-ի հուլիսին նրա հետ միասին դպրոցում աշխատելու նպատակով Էջմիածնից խոյ հրավիրվեց մի այլ հայ ուսուցիչ ևս՝ Սահակը, որ մայրենիից բացի գերազանց տիրապետում էր նաև գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն, ռուսերեն և հունարեն լեզուներին:⁴¹⁵ իսկ փոքր-ինչ ավելի ուշ՝ սեպտեմբերի 28-ին դպրոցում աշխատանքի նշանակվեց նաև Սկրտիչ անունով մի սալմաստցի հայ, որը տիրապետում էր ռուսերեն, մասամբ նաև գերմաներեն լեզուներին:⁴¹⁶

Ինչպես Ուռհայում, խոյի որբանոցում նույնպես երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպվում էր հայ ազգային և եկեղեցական ավանդույթների հիմքի վրա՝ գերծ քարոզչության կամ դավանափոխության որևէ միտումից: Այդ հարցում ԳԱԱ-ի որդեգրած սկզբունքներն արդեն, ինչպես հարկն է, պարզաբանվել են, սակայն ուշագրավ է, որ

412. Պ. Պատրունկին դեպի Վան ձեռնարկած իր ճանապարհորդության ընթացքում այդ օրերին գտնվում էր խոյում: Անդ:

413. Harnack A., Reiseberichte, „Der Christliche Orient“, 1902, էջ 183: Ա. Հառնակը մինչ այդ քարոզչական գործունեություն էր ծավալել հարավային Աֆրիկայում, անդ:

414. Անդ: Ինչ վերաբերում էր Օյրցենին, ապա ԳԱԱ-ն 1905 թ-ի մայիսի 4-ին քարոզչության ծավալման նպատակով պարսկական Ջրդստանում (Սաուջբուլադ) հիմնեց մի մասնաճյուղ՝ այն հանձնելով նրա տնօրինությանը: Օյրցենն այնտեղ գործեց մոտ չորս տարի, մինչև 1909 թ-ի ապրիլի կեսերը, որից հետո, չպարզաբանված դրդապատճառներով, իր դիմումի համաձայն ազատվեց ծառայությունից: Stü Schäfer R., Geschichte..., էջ 63:

415. Stü Briefe aus Choi, „Der Christliche Orient“, 1900, էջ 139:

416. Henselmann M., Aus Choi: Անդ, էջ 188:

Ա. Չառնակի և իր աշխատակիցների «ոչ քարոզչական» աշխատառճը պայմանավորված էր ոչ միայն նշված սկզբունքներին հավատարիմ մնալու անհրաժեշտությամբ, այլև ուներ ինքնուրույն, սեփական փորձառությամբ ամրակայված դրդումներ: Այդ էր, թերևս, պատճառը, որ նրանք հաճախակի հանդես էին գալիս ծավալուն հրապարակումներով՝ ըստ ամենայնի հիմնավորելով հայ առաքելական եկեղեցու հավատացյալների և որբանոցի երեխաների շրջանում քարոզչության իրականացման անթույլատրելիությունը: Այդ առումով առանձնապես բնութագրական է Դետվիգ ֆոն Օյրցենի 1903 թ-ին հրատարակված «Մեր որբ երեխաների եկեղեցական պատկանելությունը» հոդվածը, որտեղ նա խնդիրը դիտարկում էր ամենատարբեր տեսանկյուններից:⁴¹⁷ «Գերմանական պետական օրենքները Գերմանիայում արգելում են կաթոլիկ ծնողների որբացած երեխաներին ավետարանական եկեղեցում դաստիարակել,- նըշում էր նա,- ուրեմն ինչու՞ պետք է այդ թույլատրելի լինի հայ քրիստոնյաների որբերի հանդես: Առավել ևս, երբ այդ դեպքում երեխաները պետք է պատկանեն մի եկեղեցու, որի խնամքն ու հոգատարությունը հետազայում երբեք չեն վայելելու: Չէ՞ որ Պարսկաստանում, ինչպես Արևելքի մյուս երկրներում, գերմանական ավետարանական եկեղեցի չկա, և նրանք կորբանան նաև եկեղեցու առումով»:⁴¹⁸

Անշուշտ, այդ հարցի ամենապարզունակ պատասխանը կլիներ այն, որ հարկավոր էր հիմնել ավետարանական եկեղեցիներ՝ դրանց համար պատրաստելով ուսուցիչներ և քահանաներ: Օյրցենի համոզմամբ, սակայն, այդ նույնպես արդարացի չէր լինի: «Չնայած հայ առաքելական եկեղեցին կարծրացած է,- նշում էր նա այդ առթիվ,- և պահպանել սովորույթներ, ուսմունքներ և այլն, որոնց հետ մենք որպես ավետարանական քրիստոնյաներ չենք կարող համաձայնել, սակայն միթե՞ իրավունք ունենք որպես մրցակիցներ հանդես գալ նրա դեմ, որը, չնայած իր բոլոր թուլություններին և հիվանդություններին, կոտորածների ժամանակ հազարավոր քրիստոնյա նահատակներ է ի հայտ բերել»:⁴¹⁹

Այսպիսով, Օյրցենը, ինչպես Ուռհայում Յեպեն, ընդդիմանում էր

417. Oerzen D. von, Die kirchliche Stellung unserer Waisenkinder, „Der Christliche Orient“, 1903, էջ 177-181:

418. Անդ, էջ 177:

419. Անդ, էջ 178:

հայ եկեղեցու «անկենդանության» վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետներին, քանի որ անկենդան եկեղեցուց նահատակներ դուրս գալ չէին կարող: Ավելին, հայ եկեղեցու բարեփոխության ձգտումները և այն հանգամանքը, որ հայ հոգևորականներից շատերն էին մեկնում Գերմանիա աստվածաբանություն ուսանելու համար,⁴²⁰ հուշում էին, որ այդ եկեղեցին ուներ վերանորոգության նախադրյալներն ու անհրաժեշտ ներուժը և միջամտության կարիք չէր զգում:⁴²¹ Բացի այդ, նշում էր Օյրցենը, այն ոչ միայն չի բռնանում խղճի ազատության վրա, այլև «անհավատալի համբերատար է» և նույնիսկ իր հավատացյալներին չի արգելում մասնակցել այլ եկեղեցիների ժամերգություններին, այնպես որ «սովորական անհատը, եթե նա մի քիչ քրիստոնեական համբերատարություն և սեր է սովորել, հայ առաքելական եկեղեցում ոչ միայն կարող է պահպանել իր ավետարանական հավատը, այլև գործել նրա համար»:⁴²² Չետևապես, Օյրցենի համոզմամբ, սխալ էր որևէ եկեղեցու վերաբերյալ կարծիքներ կազմել՝ հենվելով միայն նրա արարողակարգի ձևային տարբերությունների վրա: Նման ընկալումները կարող էին հանգեցնել թյուրիմացությունների, քանի որ «ձևերը և ելությունը տարբեր իրողություններ են»:⁴²³

Օյրցենն իր տեսակետները հիմնավորելու համար վկայակոչում էր Մ. Լուբերին, որը, որքան էլ անողոք էր կաթոլիկ եկեղեցու մոլորությունների հանդեպ, այնուամենայնիվ պահպանեց հին կաթոլիկ եկեղեցու ուսմունքի և արարողակարգի բազմաթիվ տարրեր և այնքան ժամանակ հանդուրժեց դրանց գոյությունը, մինչև ինքնաբերաբար դուրս կընդվելին:⁴²⁴ Նա իր տեսակետները հաստատում էր՝ վկայակոչելով նաև

420. Նկատի ունի Կարապետ Տեր-Մկրտչյանին, Գարեգին Չոլսեփյանին, Երվանդ Տեր-Մինասյանին և մյուս հայ հոգևորականներին, որոնք «Das Notwendige Liebeswerk» կազմակերպության աջակցությամբ ուսանել էին գերմանական համալսարաններում: Տե՛ս Hacı Rafi Gazer, Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche Im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen, 1996:

421. Oerzen D. von, Die kirchliche Stellung unserer Waisenkinder, „Der Christliche Orient“, 1903, էջ 178:

422. Անդ, էջ 181:

423. Անդ, էջ 180:

424. Անդ:

ամերիկացի քարոզիչների օրինակը, որոնց գործունեությունն այլ արդյունք չէր ունեցել. քան համայնքների պառակտումը:⁴²⁵

Այսպիսով, Խոյի մասնաճյուղը նույնպես միանշանակորեն անթույլատրելի էր համարում քարոզչության իրականացումը առաքելական եկեղեցու հավատացյալների մեջ: Ի տարբերություն Արևմտյան Հայաստանում և Պարսկաստանի հայաշատ վայրերում գործող այլ ընկերությունների, նրանք որբախնամ աշխատանքի հետ մեկտեղ իրենց հիմնական առաքելությունը համարում էին Արևելքում կրթության և լուսավորության տարածումը, որ պետք է կատարվեր դպրոցի միջոցով: Եվ որ առանձնապես ուշագրավ է, նրանց համոզմամբ Արևելքի զարգացման պատմական առաքելությունը պետք է իրականացներ ոչ այլ ոք, քան հայ ժողովուրդը: Թուրքերը և մյուս մահմեդական ժողովուրդները, միանգամայն անտարբեր լինելով կրթության և լուսավորության հանդեպ, որևէ դեր չէին կարող խաղալ Արևելքի զարգացման հարցում: «Թուրքերը,- նշում էր այդ առթիվ Ա. Հառնակը,- աշխարհում միակ ժողովուրդն են, բացառությամբ հոտենտոտների և Ավստրալիայի նեգրերի, որոնց գիտակցությանը մինչև այժմ դեռ չի հասել իրենց երեխաներին պատշաճ կրթություն տալու անհրաժեշտությունը»:⁴²⁶

Մյուս կողմից, նրա համոզմամբ, հայերից բացի ուրիշ ոչ ոք, նույնիսկ Արևելքի մյուս քրիստոնյա ժողովուրդներն ի վիճակի չէին իրականացնել այդ դժվարին առաքելությունը: «Պարսկաստանի և Ասիական Թուրքիայի բացման և մշակութային զարգացման համար,- ընդգծում էր Հառնակը,- որն այժմ սկսվելու է կամ ավելի շուտ ճանապարհաչինությամբ և սահմանադրության ներմուծմամբ արդեն սկսվել է, հայերը պետք է կատարեն զլխավոր աշխատանքը, քանի որ նրանք խելք և նկարագիր ունեն, մինչդեռ հույներն ու ասորիները խելք ունեն, սակայն ընդգծում նկարագիր ոչ: Մեր առաջադրանքն է հայերին դրա համար նախապատրաստել, այսինքն սկզբում երիտասարդության համար պատրաստել գործուն քրիստոնյա ուսուցիչներ»:⁴²⁷

Որբանոցի ղեկավարության կողմից դպրոցի հանդեպ ցուցաբերվող ջերմ հոգատարությունն ու ուշադրությունը պայմանավորված էր նաև

**425. Harnack A., Aus der Arbeit in Khol, „Der Christliche Orient“, 1913, էջ 100:
427. Անդ:**

նրա՝ վերոնշյալ մեծ առաքելության գիտակցությամբ: Դպրոցի աշխատանքներն անձամբ վերահսկում էր Ա. Հառնակը, որը միաժամանակ այնտեղ դասավանդում էր կրոն, պատմություն, աշխարհագրություն և հետազայում նաև թվաբանություն առարկաները:⁴²⁸ Իսկ 1904 թ-ի դեկտեմբերին նրան օգնելու համար Խոյ մեկնեց օր. Մետա Շուլենբուրգը:⁴²⁹ Նրանք որբանոցում 1905 թ-ին հիմնեցին նաև մի մանկապարտեզ, որտեղ նախադպրոցական տարիքի երեխաները խաղերից զատ սովորում էին նաև զեղեցիկ երգեր ու աստվածաշնչյան հետաքրքիր պատմություններ:⁴³⁰ և որտեղ բացի հաստատության սաներից ընդգրկվեցին նաև մերձակա հայ ընտանիքների երեխաները. նախածեռնություն, որ այդ ընտանիքների ծնողների կողմից ընդունվեց խանդավառությամբ՝ համարվելով «մեծ բարեգործություն»:⁴³¹

1903 թ-ին Հառնակը մի փոքրիկ դպրոց էր բացել նաև հարևան Շորաֆ գյուղում՝ այն պահելով իր մշտական հսկողության ներքո:⁴³² Նա հաճախ դրամական օգնություն էր ցուցաբերում նաև Խոյի հայկական դըպրոցին, առանձնապես այն ժամանակ, երբ ծնողները չէին կարողանում վճարել, և այն կանգնում էր փակվելու վտանգի առաջ:⁴³³ Այդ փաստերն ակնառու վկայությունն էին այն բանի, որ նա չէր բավարարվում որբանոցով, այլ ձգտում էր կրթության հնարավորություններ ստեղծել նաև դրսի երեխաների ու երիտասարդների համար: «Մենք պետք է հասնենք այն բանին,- ի հաստատումն դրա նշում էր նա,- որ մեր բարեգործությունը, այն է՝ լավ քրիստոնեական դաստիարակությունը և կրթությունը, տրամադրենք ոչ միայն որբերին, այլևս մյուսներին: Այլապես այստեղի երեխաների համար որբ լինելը կդառնա արտոնություն, քանի որ նույնիսկ ամեն-

428. Harnack A., Rußland in Persien, „Der Christliche Orient“, 1912, էջ 72-73:

429. Տե՛ս Aus unseren Stationen, „Der Christliche Orient“, 1905, էջ 5:

430. Harnack A., Aus der Arbeit in Khoi, „Der Christliche Orient“, 1913, էջ 99: Մանկապարտեզում (այն երբեմն կոչվում էր նաև փոքրիկների դպրոց) դասավանդումը հանձնարարվել էր որբանոցի երկու շնորհալի սանուհիների՝ Նազուլին և Գայանեին: Տե՛ս Schulerburg M. v. d., Aus der Schule in Khoi, ամր, 1905, էջ 101:

431. Harnack A., Aus der Arbeit in Khoi, „Der Christliche Orient“, 1913, էջ 99:

432. Այդ դպրոցում աշխատանքի էր ընդունվել որբանոցի «փեսացուներից» մեկը: Ամր:

433. Sachar Garabedian, Khoi und unsere Arbeit, „Der Christliche Orient“, 1912, էջ 33:

նաօժտված երեխաները մնում են առանց դաստիարակության»:⁴³⁴

Հառնակին այդ հարցում լրացուցիչ խթան էր ծառայում նաև այն հանդուհը, որ այդ կերպ հնարավոր կլիներ երիտասարդների շրջանում հաստատության ազդեցությունը մեծացնել՝ նպաստելով նրանցում տարածում ստացած այնպիսի «հիվանդությունների» վերացմանը, ինչպիսիք էին «մատերիալիզմը, աթեիզմը» և այլն, և փոխարենը նրանց տալով քրիստոնեական դաստիարակություն:⁴³⁵ Նշված վնասակար աշխարհայացքների դեմ պայքարն, ըստ Հառնակի, առավել մեծ չափով պետք է կազմակերպվեր հայ բնակչության մեջ, քանի որ, ինչպես նշվեց, նրա հանդգամբ միայն հայերն էին ի վիճակի իրականացնելու Արևելքի զարգացման բացառիկ առաքելությունը: Այդ նպատակով նա հաճախ հյուրընկալում էր շրջակայքում ապրող բազմաթիվ երիտասարդների և նրանց համար կազմակերպում երեկոներ, որտեղ «լավ և օգտակար» գրքեր էին ընթերցվում ու քննարկվում:⁴³⁶

Այսպիսով, Հառնակը որբանոցի նշանակությունը կարևորում էր ոչ միայն որբերի խնամքի, այլև բնակչության շրջանում լուսավորության տարածման և կրոնական գիտակցության ամրակայման առումով ի դեմս հաստատության երեխաների տեսնելով ապագա «սերմնացաններին»:⁴³⁷ «Մենք պետք է միշտ աչքի առաջ ունենանք ողջ ժողովրդի ապագան,- նշում էր այդ առթիվ Հառնակը,- և յուրաքանչյուր երեխայի դաստիարակենք այնպես. որ նա իր ուժերին ու ունակություններին համապատասխան իր միջավայրին օգտակար լինի»:⁴³⁸

434. Harnack A., Arschak Simonjan, „Der Christliche Orient“, 1912, էջ 118: Հատկանշական է, որ Հառնակը հատուկ հոգատարություն էր դրսևորում դրսի՝ առանձնապես օժտված երեխաների համդեպ: Օրինակ, 1910 թ-ին տեղեկանալով կարանջալու օյուղում ապրող մի այդպիսի տղայի՝ Արչակ Սիմոնյանի մասին՝ նա մեկնում է այնտեղ և նրան հայրական տանից տեղափոխում որբանոց: Չնայած Արչակը ծնողներ ուներ, այնուամենայնիվ նա տարիներ շարունակ կարողացավ որբանոցում կանոնավոր խնամք և նպատակային կրթություն ստանալ: Անդ:

435. Harnack A., Nachrichten aus Stationen, „Der Christliche Orient“, 1908, էջ 71:

436. Sachar Garabedian, Khoi und unsere Arbeit, „Der Christliche Orient“, 1912, էջ 33:

437. Harnack A., Ist es nötig, daß wir unsere Waisenarbeit aufrecht erhalten?, „Der Christliche Orient“, 1914, էջ 79-80:

438. Harnack A., Bitte um Pflegeeltern für neuaufgenommene Waisenkinder, անդ, էջ 54:

Ա. Չառնակի գործունեությունը ջերմ գնահատանքի էր արժանանում ոչ միայն հայ բնակչության, այլև եկեղեցու կողմից: Դրա ակնառու վկայությունն էր այն, որ 1911 թ-ին Թավրիզի արքեպիսկոպոսը դիմեց նրան խնդրելով ստանձնել նաև Խոյի դպրոցի վերահսկողությունը: Չառնակի հանձնարարությամբ այդ պարտականությունն ավելի քան մեկ տարի կատարում էր նրա օգնական Ջաքար Կարապետյանը,⁴³⁹ իսկ այնուհետև, երբ դպրոցը նյութական պայմանների սղության հետևանքով փակվեց, ընդառաջելով ծնողների խնդրանքին, Չառնակը կրթօջախի բոլոր ընդհանուր թվով 50 երեխաներին թույլատրեց հաճախել որբանոցի դպրոցը:⁴⁴⁰ Ընդ որում, շատերը տարեկան 2 թուման կամ 8 մարկ կազմող ուսման վարձը վճարում էին միայն մասնակիորեն, իսկ շատերն էլ, որոնց պայմաններն այդ թույլ չէին տալիս, ամենևին չէին վճարում:⁴⁴¹ հանգամանք, որ բոլոր ցանկացողներին հնարավորություն էր ընձեռում ուսանել դպրոցում:

Այսպիսով, չնայած նախկինում ևս դրսից մեծ քանակությամբ երեխաներ էին հաճախում որբանոցի դպրոցը,⁴⁴² սակայն 1912 թ-ից այն փաստացիորեն դարձավ Խոյի հայ համայնքին սպասարկող միակ կրթօջախը: 1913 թ-ին այնտեղ սովորում էին 77 երեխաներ, որոնցից 49-ը դրսից էին, իսկ 28-ը՝ որբանոցից:⁴⁴³ Դա հաստատության կողմից իրավամբ համարվում էր խոստումնալից սկիզբ հետագայում ողջ տարածաշրջանի երիտասարդության կրթության և դաստիարակության գործում էական ներդրում կատարելու համար: «Մեր այժմյան հաջողությունն ինձ համար միայն սկիզբ է,- նշում էր Ա. Չառնակը,- որից հավանաբար կզարգանա մի կրթական հաստատություն, որ ժամանակի ընթացքում մեզ այս տարածաշրջանների համար աշխատուժ կմատակարարի»:⁴⁴⁴

439. Sachar Garabedian, *Khoi und unsere Arbeit*, „Der Christliche Orient“, 1912, էջ 33:

440. Անդ. Դմնտ. Harnack A., *Rußland in Persien*, „Der Christliche Orient“, 1912, էջ 72-73:

441. Harnack A., *Aus der Arbeit in Khoi*, „Der Christliche Orient“, 1913, էջ 99:

442. 1910 թ-ին նրանց թվաքանակը հասնում էր 20-ի: Sbu Harnack A., *Deutsche Arbeit in Persien*, „Der Christliche Orient“, 1910, էջ 148:

443. Harnack A., *Aus der Arbeit in Khoi*, „Der Christliche Orient“, 1913, էջ 99: Դպրոցն ուներ երեք գեղեցիկ կահավորված դասասենյակներ: Անդ:

444. Անդ, էջ 100:

Ինչևէ, տարիների ընթացքում որբանոցում խնամվող երեխաների թվաքանակը նկատելիորեն նվազում էր: Եթե 1900-1901 թվականներին այնտեղ կային 120 երեխաներ, իսկ 1902-1905 թվականներին 89,⁴⁴⁵ ապա 1910 թ-ին նրանց թիվն իջել էր 35-ի,⁴⁴⁶ սակայն չնայած դրան դպրոցի հեղինակությունն ու համբավը շարունակ ընդլայնվում էր:⁴⁴⁷ Այն իր հաջողությունների համար առաջին հերթին պարտական էր Հառնակին և մյուս դասավանդող ուժերին, որոնք 1909 թ-ից հիմնականում համալրվում էին որբանոցում մեծացած երեխաներով:⁴⁴⁸

445. Bergmann von, *Unsere Arbeit in Persien*, „Der Christliche Orient“, 1900, էջ 25: Հմնտ. Feigel U., *Das evangelische...*, էջ 118:

446. Harnack A., *Deutsche Arbeit in Persien*, „Der Christliche Orient“, 1910, էջ 148: Մյուս տարիների վերաբերյալ ճշգրիտ տվյալներ չեն պահպանվել: Որբանոցի սաների թվաքանակի նվազումը պայմանավորված էր որբ և անպաշտպան երեխաների թվի նվազեցմամբ: Հաստատությունն այլապես ձգտում էր իր դռները միշտ բաց պահել ծայրահեղ կարիքի մեջ գտնվող երեխաների առջև: Տե՛ս Aus Choi, անդ, 1911, էջ 123: Հմնտ. Sachar Garabedian, *Vom Waisenhaus in Khol*, անդ, էջ 167 և այլն:

447. Դպրոցը Խոյուն և շրջակայքում այնպիսի մեծ համբավ էր ձեռք բերել, որ 1913 թ-ին մի շարք հարուստ և ազդեցիկ մահմեդականներ դիմեցին Հառնակին խնդրելով իրենց համար ևս մի դպրոց հիմնել: Քանի որ դա մահմեդական քնակչության հետ շփումների և միաժամանակ լրացուցիչ նյութական եկամուտների հնարավորություն էր ընձեռում, Հառնակը փորձեց նրանց ընդառաջել, սակայն վերջիններս անհրաժեշտ նախաձեռնողականություն չդրսևորեցին, որի պատճառով ձեռնարկումը ձախողվեց: Ի վերջո, նրանցից մի քանիսը վճռեցին իրենց երեխաներին ուղարկել որբանոցի դպրոցը, բայց տարիքի անհասպատասխանության պատճառով հիմնականում մերժվեցին: Ընդունվեցին միայն երկու մահմեդական երեխաներ՝ ուսմանը զուգահեռ ձեռք բերելով նաև որբանոցում քնակվելու հնարավորություն: Տե՛ս Harnack A., *Aus der Arbeit in Khol*, „Der Christliche Orient“, 1913, էջ 100-101:

448. Դպրոցում, ինչպես արդեն նշվեց, սկզբնապես դասավանդում էին երկու ուսուցիչներ՝ Սահակը և Մկրտիչը: 1907 թ-ին նրանց փոխարինեց Թուրքիայից եկած մի երիտասարդ՝ Մարգարը, որը, սակայն, 1912 թ-ի ուստարվա սկզբին հարկադրված էր հիվանդության պատճառով ծառայությունից ազատվել: Նրան հաջորդեց Խիկար անունով մի այլ երիտասարդ, որն ավարտել էր Թիֆլիսի Նեբուսիայան դպրոցը և բավականաչափ տիրապետում էր ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և իտալերեն լեզուներին: 1909 թ-ից դասավանդում էին նաև Ջ. Կարապետյանը, որբանոցի նախկին սան Նապոլեոն Թորոսյանը և նմանապես այդ հաստատությունից դուրս եկած երեք աղջիկներ: Տե՛ս Harnack A., *Aus der Arbeit in Khol*, „Der Christliche Orient“, 1913, էջ 99-102: Հմնտ. Harnack A., *Rußland in Persien*, „Der Christliche Orient“, 1912, էջ 73: 1913 թ-ին այնտեղ գործում էր ա-

Դպրոցական պարապմունքներին զուգահեռ մեծ ուշադրություն էր դարձվում նաև երեխաների արհեստագործական հմտությունների զարգացմանը: Եթե աղջիկները դեռ Մ. Հենզելմանի ղեկավարության շրջանում սովորում էին կարել և գործել,⁴⁴⁹ և այդ ավանդույթը հետագայում շարունակվեց նաև Ա. Հառնակի կողմից,⁴⁵⁰ ապա տղաների պարագայում կյանքի կոչվեցին ավելի ընդգրկուն մտահոլացումներ:

Ինչպես Ուռհայում, Խոյի մասնաճյուղում ևս արհեստագործության զարգացումն առաջին հերթին կարևորվում էր մեծացող երեխաներին ապագայում ինքնուրույն գոյատևման հնարավորություն ընձեռելու առումով: Նպատակային զարգացման դեպքում դա կարող էր որբանոցի համար նաև եկամտի աղբյուր⁴⁵¹ և բացի այդ մահմեդական շրջանների հետ օգտավետ շփումների կամ այլ կերպ ասած՝ անուղղակի «քարոզչության» միջոց դառնալ: «Պարսկաստանում,- նշում էր այդ առթիվ Մ. Շյունեմանը,- որտեղ միսիոները մեծ դրժվարությամբ է կարողանում բռնագրոսիկ քաղաքավարության, կեղծիքի և ստի դիմակը, բնածին փակվածության և կեղծավորության պատնեշը հաղթահարելով՝ մերձենալ մարդկանց հոգուն, արհեստագործի համար առկա է մի լռին և ըստ այդմ ավելի ներգործուն ասպարեզ... Արհեստագործի առաջադրանքը դառնալ լուռ և մշտական քարոզիչ, պետք է իրականացվի նաև մեր արհեստանոցներում»:⁴⁵²

ռարկաների քաշխման հետևյալ կարգը. Խիկարը դասավանդում էր հայոց լեզու, թվաբանություն, հայոց պատմություն, քնագիտություն, երգեցողություն, զծագրություն և ռուսաց լեզու: Կրոնի, ընդհանուր պատմության, աշխարհագրության և օտար լեզուների դասավանդումն իրականացնում էր Ա. Հառնակը: Մյուս առարկաները, որոնք անվանապես չեն հիշատակվում, ուսուցանում էին որբանոցի նախկին սանուհիներ Վարդանուշը, Գոդինան և Սիզանույշը, իսկ 1914 թ-ին նրանց կազմը համալրեց չորրորդ որբուհին՝ Կատարինան: St'us Harnack A., *Aus der Arbeit in Khoi*, „Der Christliche Orient“, 1913, էջ 102: Հմմտ. Harnack A., *Bilder aus dem muhammedanischen Leben*, անդ, 1914, էջ 91:

449. Gardthausen M., *Neues Erdbeben*, „Der Christliche Orient“, 1900, էջ 159:

450. Harnack A., *Bericht aus Khoi*, „Der Christliche Orient“, 1910, էջ 203-204:

451. Schünemann Max, *Tischlereibericht aus Choi*, „Der Christliche Orient“, 1902, էջ 169:

452. Schünemann M., *Industrie- und Handwerk-Schule der Deutschen Orient-Mission in Khoi*, „Der Christliche Orient“, 1905, էջ 70-71:

Նախ անհրաժեշտ էր պարզել, թե որքանոցում ո՞ր ճյուղերը պետք է զարգացվեին, քանի որ մոլեռանդ մահմեդական երկրում, ինչպիսին Պարսկաստանն էր, քրիստոնյաները զրկված էին որոշ արհեստներիով զբաղվելու հնարավորությունից՝ չունենալով համապատասխան շուկա: Քանի որ մահմեդականները պիղծ էին համարում այն ամենը, ինչին դիպչում էր քրիստոնյաների ձեռքը, մասնավորապես, եթե առկա էր խոնավության գործոնը, այսինքն, եթե առարկան պատրաստման ընթացքում կարող էր խոնավանալ կամ թրջվել,⁴⁵³ վճռվեց առաջնությունը տալ չոր փայտի հետ կատարվող աշխատանքներին, կահագործությանը և պայտագործությանը:⁴⁵⁴

Ամիսներ շարունակ Մ. Շյունենանը ջանադրաբար հայերեն էր սովորում, որպեսզի կարողանար հաղորդակցվել երեխաների հետ և ղեկավարել նրանց: Քիչ ժամանակ չպահանջվեց նաև տեղական կլիմայական պայմաններին, փայտի առանձնահատկություններին և շուկայի պահանջներին ծանոթանալու համար:⁴⁵⁵ Այդ բոլոր դժվարությունները, սակայն, կարճ ժամանակում հաղթահարվեցին, և աշխատանքը մըտավ իր բնականոն հունը: Խոյից դուրս, մասնավորապես Ուրմիայում և Թավրիզում շուկա ձեռք բերելու համար Շյունենանը նախագծեց և կազմակերպեց այնպիսի կահագործական առարկաների արտադրություն, որոնք հնարավոր էր մաս-մաս տեղափոխել և վերահավաքել այնտեղ: Այդ ձեռնարկումն ունեցավ մեծ հաջողություն, և արդեն երկրորդ տարում Թավրիզից սկսեցին ուղարկվել պատվերներ:⁴⁵⁶

453. Մահմեդականները քրիստոնյաների ձեռքով պատրաստված կոշիկներ չէին հագնում, քանի որ պատրաստողի ձեռքը դիպել էր խոնավ կաշվին և այն «աղծել»: Նմանապես անմաքուր էին համարվում նաև քրիստոնյաների պատրաստած մթերքները, ձեռագործերը (որոնք իբրև թե պատրաստվել են խոնավացած մատներով) և այլն: Նույնիսկ հյուսնագործական առարկաները լաքապատման և ողորկման դեպքում պիղծ էին համարվում, քանի որ մահմեդականների կարծիքով դրանց խոնավ մակերևույթին կարող էր խառնված լինել քրիստոնյաների քրտինքը: Անդ, էջ 66:

454. Անդ:

455. Անդ, էջ 66: Թե այդ որքան կարևոր էր, կարող էր հուշել Ուրմիայի աներիկացի քարոզիչների օրինակը, որոնց՝ արհեստագործական արտադրություն հիմնելու փորձը տեղական պայմաններին անծանոթ լինելու պատճառով ձախողվել էր: Անդ:

456. Անդ, էջ 67:

Առաջին հաջողություններին զուգահեռ կատարվում էր գործիքների, հաստոցների համալրում, և աշխատանքն ավելի լայն ընթացք էր ստանում⁴⁵⁷ հնարավորություն ընձեռելով մեծացնել նաև աշակերտների թվաքանակը: Եթե 1902 թ-ի սկզբին Մ. Շյունեմանն իր գործունեությունը սկսեց որբանոցի չորս տղաների հետ, իսկ տարեվերջին նրանց թիվը հասավ 5-ի, ապա 1903 թ-ին նրա մոտ աշակերտում էին 9 երեխաներ. և ևս մեկ տարի անց՝ 15-ը:⁴⁵⁸

Որբանոցի արհեստագործական ձեռնարկությունը կարճ ժամանակում մեծ համարում ստացավ ոչ միայն Խոյուն, այլև Թավրիզում, Ուրմիայում և այլուր,⁴⁵⁹ և չնայած այն հետզհետե ընդլայնվում և ավելի ու ավելի եկամտաբեր էր դառնում (1904 թ-ին այն ունեցավ շուրջ 1000 մարկ զուտ եկամուտ), սակայն ի վիճակի չէր բավարարել շատ ավելի արագ տեմպերով աճող՝ շուկայական պահանջարկը: 1905 թ-ին, օրինակ, ընդունվեցին 4000 մարկի պատվերներ, մինչդեռ եռապատիկ ավելին Մ. Շյունեմանը հարկադրված էր մերժել համապատասխան տարածքի, նյութատեխնիկական բազայի և մասնագիտական ուժերի բացակայության պատճառով:⁴⁶⁰ Աշակերտների մեծ մասը 1905 թ-ին դեռ գտնվում էր ուսուցման փուլում և ինքնուրույն չէր կարող աշխատել: Բացի այդ, նրանց թիվն էականորեն ավելացնելու հնարավորություն ևս չկար, քանի որ դրա

457. Արհեստանոցներն, օրինակ, ՊԱԱ-ի կողմից 1902 թ-ին համալրվեցին 1000, 1903 թ-ին՝ 2200, իսկ 1904 թ-ին ևս 2200 մարկ արժողությամբ շարժական գույքով: Անդ, էջ 69:

458. Անդ:

459. Դրան էապես նպաստեց նաև 1904 թ-ի հոկտեմբերի 7-ին կազմակերպված ցուցահանդեսը՝ «թամաշա-խանան», որի նպատակն էր ցուցադրել որբերի կատարած աշխատանքները, և որի համար Խոյի քաղաքագլուխը հատկացրել էր կառավարության շենքի սրահը: Պարսկաստանում աննախադեպ այդ միջոցառումը, որին մասնակցում էր ավելի քան 400 մարդ, ունեցավ մեծ հաջողություն: Ցուցադրվող ապրանքները հիմնականում վաճառվեցին, և որբանոցին ուղղվեցին բազմաթիվ նոր պատվերներ: Ցուցահանդեսի համբավն այնքան մեծ տարածում էր ստացել, որ հաջորդ օրերին մասնագիտական օգնություն ստանալու խնդրանքով որբանոց էին գալիս բազմաթիվ տեղացի վարպետներ, որոնց ցանկությունը սիրով բավարարվում էր: St'u Schünemann M., Tamaschah-Chana, „Der Christliche Orient“, 1904, էջ 183-184:

460. Schünemann M., Industrie- und Handwerk-Schule der Deutschen Orient-Mission in Khoi, „Der Christliche Orient“, 1905, էջ 69:

համար բացակայում էին աշխատատարածքն ու սարքավորումները:⁴⁶¹

Թե Շյունեմանը և թե ԳԱԱ դեկավարությունն այդ հիմնահարցի լուծման համար միայն մեկ ճանապարհ էին տեսնում. որքանոցի մոտակայքում գնել մի հողամաս և այնտեղ կառուցել նոր՝ ընդարձակ ձեռնարկություններ՝ զինելով նորագույն սարքավորումներով և հաստոցներով: Այդ ամենն, ըստ նախնական հաշվարկների, արժեր մոտ 30 000 մարկ, սակայն քանի որ ԳԱԱ-ն նման հատկացում կատարելու հնարավորություն չուներ, ելքը համարվում էր փոխառության կատարումը:⁴⁶² 1905 թ-ի ամռան սկզբին այդ ձեռնարկի իրականացմանը կազմակերպական ընթացք տալու համար հիմնվեց «Պարսկաստանում միսիայի արդյունաբերության կազմակերպման հատուկ կոմիտե», որի կազմում ի թիվս այլոց ընդգրկվեցին նաև ԳԱԱ-ի տնօրեն Յոհ. Լեփսիուսը, Դ. ֆոն Օյրցենը և Գերմանական արևելյան առևտրա-արդյունաբերական ՍՊԸ-ի կառավարիչ Կ. Ռուբիչունգը:⁴⁶³ Իսկ ձեռնարկությունների գործունեության կազմակերպումն ու վերահսկողությունը հանձնարարվեց վերոնշյալ առևտրական ընկերությանը: Եթե հաշվի առնենք, որ հաշվված ամիսներ առաջ նույն ընկերության տնօրինությանն էր հանձնվել նաև Ռուհայի գորգագործական ֆաբրիկան, ապա կարելի է ենթադրել, որ նոր նախաձեռնությունը նույնպես պայմանավորված էր համանման արդեն պարզաբանված շարժառիթներով:

Ինչևէ, քանի որ այդպիսով ձեռնարկությունները դադարում էին իրավականորեն ԳԱԱ-ի ենթակայության տակ գտնվել, վերջինս դրանց վերաբերյալ այլևս տեղեկություններ չիրապարակեց (այդպես էր նաև Ռուհայի ֆաբրիկայի պարագայում): Հայտնի է միայն, որ սկզբնապես նախատեսված էր աշխատատեղեր ստեղծել 30 երեխայի համար, և այդ նպատակի համար անհրաժեշտ 30000 մարկը, 1000-ական մարկի փոխատվության տեսքով ստանալ 30 փոխատուներից:⁴⁶⁴ Իսկ հուլիսի դրությամբ 30 փո-

461. Անդ:

462. Անդ, էջ 70: Այդ ծրագրի իրականացման դեպքում ձեռնարկություններն ի վիճակի կլինեին ոչ միայն ինքնուրույն գոյատևել, այլ ունենալ շահույթներ: Տե՛ս Lepsius J., Daheim und draußen, անդ, էջ 127:

463. Տե՛ս այդ մասին ընկերության ծանուցումը, „Der Christliche Orient“, 1905, էջ 71-72:

464. Schönemann M., Industrie- und Handwerk-Schule der Deutschen Orient-Mission in Khoi, անդ, էջ 67:

խատուներից յոթը արդեն գտնվել էին, և դրամի հայթայթումն ակտիվորեն շարունակվում էր:⁴⁶⁵ Հայտնի է նաև, որ ընդլայնվող աշխատանքներում Շյունենանին օգնելու նպատակով ամռանը Խոյ էր առաքվել երկրորդ ատաղձագործ վարպետը՝ Ռոսները, որի հետ ձեռնարկությունների զինման համար ուղարկվել էին նաև մեծ քանակությամբ սարքավորումներ:⁴⁶⁶

Ամենայն հավանականությամբ, սակայն, արհեստագործության զարգացման այդ ծրագիրը չի իրագործվել, իսկ եթե կատարվել է, ապա միայն մասնակիորեն և ոչ նախատեսված ժամկետներին, քանի որ Պարսկաստանի ներքաղաքական իրադրության ապակայունացման պայմաններում այդ խիստ անհավանական էր, իսկ 1907-08 թվականներին, ինչպես տեղեկացնում էր Լեփսիուսն իր հրապարակումներից մեկում, այդ երկրում ծավալվող հեղափոխական պայքարի և համապատասխանաբար նաև քաղաքներում երթևեկության և առևտրի դադարեցման հետևանքով որբանոցի ձեռնարկությունները բոլորովին չէին գործում:⁴⁶⁷

Խոսքը վերաբերում է Պարսկաստանում «Ժողովրդի ներկայացուցիչների» սահմանադրական ընդդիմադիր կուսակցության կողմից շահի կառավարության դեմ սկսված սուր պայքարին, որի նպատակն էր զավթել իշխանությունը:⁴⁶⁸ Արյունահեղ կուսակցական պայքարը կարճ ժամանակում տարածվեց երկրի բոլոր շրջաններում, և արդեն 1908 թ-ին Թավրիզում, Սպահանում, Շիրազում, Քերմանշահում, Սազենդերայում, Աստրաբադում, Լարստանում և Պարսկաստանի այլ խոշոր կենտրոններում կազմվել էին ինքնուրույն ժամանակավոր կառավարություններ, որոնք այլևս շահին չէին ենթարկվում: Խոյը, որ հարում էր հեղափոխականներին, բնականաբար նույնպես հայտնվեց պատերազմական իրավիճա-

465. Rubitschung C.; Lepsius J., Helfft suchen!, անդ, էջ 105:

466. Lepsius J., Daheim und draußen, անդ, էջ 128:

467. St'ü Generalversammlung der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1908, էջ 90:

468. Harnack A., Unruhen in Persien, „Der Christliche Orient“, 1907, էջ 147: 1906 թ-ին պարսիկ ժողովրդի ծավալած պայքարը հանգեցրել էր երկրում սահմանադրության հռչակման, քայքայ հաջորդ տարում նոր միապետ Մահմեդ Ալին վերացրեց նորաստեղծ մեջխը և միապետական գործերով ճնշեց հեղափոխական շարժումները: Ատրպատականի մայրաքաղաք Թավրիզը, սակայն, այնուհետև նորից պարզեց ապստամբության դրոշը, և նոր արյունահեղ պայքար վերսկսվեց: Տե՛ս Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2001, էջ 343-344:

կում հարկադրված լինելով դիմագրավել կառավարամետ Մակուի գորագնդերի հարծակմանը: Եվ քանի որ Մակուի սարդարի կոչով Խոյի դեմ պատերազմում ավարառության և թալանի հույսով նրան միացան նաև շրջակայքում ապրող քրդերը, Խոյի հայ բնակչության և նաև որբանոցի համար ստեղծվեց անվերահսկելի և խիստ վտանգավոր իրավիճակ:⁴⁶⁹

Միաժամանակ ներկուսակցական այդ պայքարը, կենտրոնախույս ուժերի հաջողությունները և այդպիսով ստեղծված ընդհանուր անարխիան առիթ դարձան, որ Թուրքիան նույնպես գործուն քայլեր ձեռնարկի Պարսկաստանի հյուսիսային հատվածում նոր տարածքներ ձեռք բերելու ուղղությամբ: Օգտվելով այդ հանգամանքից՝ Թուրքիան 1907 թ-ին գրավեց Ուրմիայի և Սաուչբուլաղի միջև ընկած քրդաբնակ տարածքները,⁴⁷⁰ որի հետևանքով քրդերը, լքելով իրենց բնակավայրերը, ներխուժեցին հարևան մահմեդական և քրիստոնյա գյուղերը: Ինչպես տեղեկացվում էր ԳԱԱ-ի կոչերից մեկում, արդեն 1908 թ-ի ապրիլին նրանք Խոյի, Սալմաստի և Ուրմիայի շրջակայքում ավերել էին բազմաթիվ թուրքական գյուղեր, բնակչությանը կոտորել և թալանել՝ մեծ սպառնալիք դառնալով նաև նըշված քաղաքների համար:⁴⁷¹ Քրդերի ավերումն ու թալանն էլ ավելի մեծ չափերի հասան տարեվերջին: 1908 թ-ի դեկտեմբերից մինչև 1909 թ-ի մայիս ամիսը Խոյի շրջակայքում նրանց կողմից հիմնահատակ ավերվել էին մոտ 6 տասնյակ թուրքական գյուղեր:⁴⁷²

Այն փաստը, որ սարդարի և նրան միացած քրդերի գործողությունները հիմնականում ուղղված էին թուրք բնակչության դեմ, ուներ իր ուրույն պատճառները: Չնայած հայերը Խոյում և տարածաշրջանում թվաքանակով շատ ավելի քիչ էին, քան թուրքերը, պարսիկները կամ քրդերը, սակայն համարվում էին բնակչության ամենաուժեղ տարրը, քանի որ, ինչպես տեղեկացնում էր Յառնակը, կռվում անգերազանցելի էին և «իրենց քաջության շնորհիվ ամենուր սարսափ էին տարածել»:⁴⁷³ Խոսքն անշուշտ վերաբերվում էր այնտեղ գտնվող մի շարք հայկական զինված խմբերին, որոնք չնայած զերծ էին պատերազմող կուսակցություններից որևէ մեկին հարելու մտքից և նպատակ ու-

469. Անդ:

470. Schäfer R., Geschichte..., էջ 56:

471. Stiu Generalversammlung, „Der Christliche Orient“, 1908, էջ 69:

472. Harnack A., Erretung, „Der Christliche Orient“, 1909, էջ 100:

473. Անդ, էջ 101:

Նեին միայն ապահովել հայ բնակչության անվտանգությունն ու սահմանափակվել ինքնապաշտպանությամբ, այնուամենայնիվ Խոյին սպառնացող ընդհանուր թշնամու քրդերի դեմ համատեղ պայքարը նպաստում էր նրանց և թուրքերի մերձեցմանը, և, ինչպես Հառնակն էր վկայում, Խոյի և շրջակայքի թուրք բնակչությունը փոքրաթիվ հայ հեղափոխականների պաշտպանության ներքո իրեն ավելի ապահով էր զգում «սպառնացող քրդական հորդանների» դեմ, քան հարյուրավոր և հազարավոր պարսիկ ապստամբների:⁴⁷⁴

Հատկանշական է, որ պատերազմող երկու կուսակցություններն էլ իրենց հաղթանակի բանալին տեսնում էին հայերի ձեռքում, ուստի ջանում էին նրանց հետ դաշնակցել, իսկ եթե այդ անհնար էր, ապա պահպանել գեթ չեզոք հարաբերություններ: Այդ իսկ պատճառով, ինչպես բազմիցս նշում էր Ա. Հառնակը, Մակուի գորաբանակի ղեկավարները շարունակ հայտարարություններ էին կատարում այն մասին, որ նրանք հայերի դեմ ոչինչ չունեն. այլ կամենում են միայն պատժել «թուրք խռովարարներին», և այդ բանակում այն համոզումն էր իշխում, որ Խոյը վաղուց իրենց ձեռքում կլիներ, եթե «մեկ ոյուժին հայ հեղափոխականներն իրենց դեմ չկռվեին»:⁴⁷⁵

474. Harnack A., Wandlungen in Persien, „Der Christliche Orient“, 1910, էջ 12: «Այդ պայքարի, հուզումների և վտանգների մեջ տեղի ունեցավ թռչջային փոփոխություն մահմեդականների և քրիստոնյաների փոխհարաբերության մեջ, -նշում էր նա: - Հայերը վճռական առավելություն ունեին. նրանք հուսալիորեն պաշտպանված էին իրենց հեղափոխականների միջոցով, որոնց համարձակությունը ողջ երկրում հռչակված էր և երկյուղ էր ներշնչում, և կառավարության կողմից, հավանաբար քաղաքական դրդապատճառներով, մեծագույն հարգանքի էին արժանանում: Նրանք մեծ մասամբ սահմանափակվում էին ինքնապաշտպանությամբ»: Անդ, էջ 29-30:

475. Harnack A., Erretung, „Der Christliche Orient“, 1909, էջ 101: Ինչպես վկայում էր Հառնակը, Աարդարն անձամբ ևս այնպիսի մեծ երկյուղ ուներ հայերից, որ «բանտարկյալի պես ապրում էր մի փոքրիկ սենյակում, որտեղ ոչ ոք իրավունք չուներ մտնել»: Եւ նույն պատճառով առանձնակի «ջերմությամբ» հոգ էր տանում նաև Մակուում գտնվող 12 խոյեցի հայ ատաղձագործների անվտանգության համար, իսկ «Մակուի երկու հայ բնակիչների, որոնց մասին նա գիտեր, որ նրանք որպես լրտեսներ շրջում էին Մակուի, Խոյի և Սալմաստի շրջաններում, նվիրեց նույնիսկ մեկական մաուզեր»: Անդ: Այդ մասին բնութագրական տեղեկություններ են հաղորդում նաև հայկական արքայությունները: «Երկիրը կարծես հայու աշխարհ լինէր և ամոր տիրապետողները՝ ֆեոդալները, -զրում էր Ռուբենը: Տե՛ս Ռուբեն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատոր, Թեհրան, 1982, էջ 284: Խոյում գործող հայ մարտիկների և նրանց սիրականների մասին ավելի մանրամասն տես Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2001:

Ինչևէ, չնայած հայերը չեզոք և ինքնապաշտպանական դիրքորոշում էին որդեգրել, և չնայած 1908 թ-ին նրանց մարտունակության շնորհիվ հայկական գյուղերը (Ցեղավար, Շորաֆ, Դիզա, Կարանջալու և այլն) հիմնականում զերծ էին մնում Մակուի գնդերի և նրանց դաշնակցած քրդերի ասպատակություններից, այնուամենայնիվ Խոյի անկումը կարող էր ճակատագրական լինել նաև հայերի համար: Քաղաքի գրավման վտանգն առավել ակնառու դարձավ 1909 թ-ի սկզբին, երբ Մակուի քրդական ջոկատներն արագորեն առաջանում էին դեպի Խոյ:⁴⁷⁶ Կասկած չկար, որ նրանց ներխուժման դեպքում նույնիսկ որբանոցը չէր խնայվի: Ուստի Զառնակը մարտի 1-ին դիմեց Թեհրանի գերմանական ներկայացուցչությանը՝ խնդրելով նրա միջնորդությունը, որպեսզի Պարսկաստանի կառավարությունը Խոյի գրավման դեպքում Սարդարին պարտավորեցներ հոգ տանել որբանոցի անվտանգության մասին: Գերմանիայի ներկայացուցիչն իր հերթին այդ նամակի հիման վրա դիմեց Պարսկաստանի ԱԳ նախարարին, շահի գնդերի հրամանատարին, ինչպես և շահի կողմնակից քուրդ առաջնորդներին՝ խնդրելով համապատասխան հրամաններով ապահովել Խոյի և Ուրմիայի որբանոցների անվտանգությունը:⁴⁷⁷

Այդ միջոցառումները, սակայն, հազիվ թե որևէ ազդեցություն գործեին քուրդ խուժանի վրա, և որբանոցն ամեն օր ապրում էր մշտական երկյուղի մեջ: Ի վերջո, 1909 թ-ի մարտի 13-ին հեղափոխականները և նրանց հետ միասին Խոյի պաշտպանության համար կռվող հայերը քաղաքի մատույցներում քրդերից պարտություն կրեցին, և ողջ բնակչությունը մատնվեց խուճապի:⁴⁷⁸ Քաղաքի արվարձանային հայաբնակ թաղամասերի բնակիչները, լքելով իրենց տները, հոծ զանգվածով դիմում էին դեպի միակ համեմատաբար հուսալի վայրը՝ որբանոց, որը նրանց առջև լայնորեն բացել էր իր դռները: Զսկա կառույցի բոլոր սենյակները, նաև հիվանդասենյակը, մառանն ու արհեստանոցը հաշվված ժամերի ընթացքում լցվեցին հայ փախստականներով: Զառնակը նրանց էր հատկացրել նաև իր սեփական բնակարանը: «Ես շաբաթներ ի վեր այդ իրադրության համար նախապատրաստվել էի,- տեղեկացնում էր Ա. Զառնակն իր մարտի 18-ին թվագրված նամակում:- Թե քանի մարդու ենք մենք ա-

476. Klein, Khol bedroht, անդ, էջ 63:

477. Անդ, էջ 64:

478. Lepsius J., Khol bedroht, անդ, էջ 71-72:

պաստան տվել, ես ճշգրիտ չեմ կարողացել հաշվել: Մակերեսային հաշվարկներով այդ թիվը տատանվում է 300-400-ի միջև»:⁴⁷⁹

Բարեբախտաբար, սակայն, անբացատրելի պատճառներով քրդերը քաղաք չմտան, այլ առժամանակ անբացան Խոյի թուրքաբնակ արվարձաններից մեկում և 14 օր հետո, ավերելով ու թալանելով Խոյի շրջակա գյուղերը, հեռացան:⁴⁸⁰

Քրդերի դեմ լիարժեք հակակշիռ ստեղծվեց և քրդական ներխուժումների վտանգը վերացավ միայն 1912 թ-ի սկզբին, երբ ռուսական բանակը Պարսկաստանի հյուսիսային մի շարք այլ շրջանների հետ միասին գրավեց նաև Խոյը, և այնտեղ հաստատվեց կատարյալ խաղաղություն:⁴⁸¹ Իսկ մինչ այդ Խոյի իրադրությունը Պարսկաստանի ներքաղաքական անկայունության հետևանքով մշտապես շարունակում էր մնալ ծայրաստիճան լարված:⁴⁸²

Այսպիսով, որբանոցը ոչ միայն որբերի օթևան և կրթօջախ էր, այլև

479. Անդ, էջ 72:

480. Harnack A., Errettung, անդ, էջ 99-100:

481. Harnack A., Rußland in Persien, „Der Christliche Orient“, 1912, էջ 71:


482. 1908 թ-ի հուլիսի 15-ին սահմանադրականները գրավեցին նաև երկրի մայրաքաղաքը՝ Մահմեդ Ալիին հարկադրելով հրաժարական տալ: Պարսկաստանի նոր շահ նշանակվեց 9-ամյա թագաժառանգ Ահմեդ Միրզան: Մահմեդ Ալին, սակայն, կարճ ժամանակ անց իր կողմը գրավելով նաև մի քանի քրդական ցեղերի, հրահրեց մի նոր պատերազմ, որ ձգվեց մինչև 1911 թ-ի վերջը՝ ավարտվելով սահմանադրականների հաղթանակով: Տե՛ս Wegener, Chronik der wichtigsten politischen Ereignisse in der Türkei und Persien, անդ, էջ 190: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 74: Հատկանշական է, որ քանի որ 1895-96 թթ կտորածներից հետո Խոյում կազմակերպության ստանձնած բարեգործական պարտավորությունները տասը տարվա ընթացքում հիմնականում կատարվել էին, Լեփսիուսը և ՊԱԱ-ի վարչությունը 1906 թ-ի վերջին խորհում էին օգնության աշխատանքներն այնտեղ սահմանափակելու և մասնաճյուղերը հետզհետե լուծարելով՝ Պարսկաստանի տարածքը «American Board» կազմակերպությանը զիջելու մասին: Տե՛ս Generalversammlung, „Der Christliche Orient“, 1907, էջ 119-120: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 55: Պարսկաստանում իրադրության ապակայունացման հետևանքով, սակայն, այդ խնդիրն օրակարգից դուրս մղվեց: Ավելին, ՊԱԱ-ն, գիտակցելով ստեղծված իրավիճակի լրջությունը, ձգտում էր ըստ հնարավորին ընդլայնել հաստատությանը ցուցաբերվող նյութական աջակցությունը: Տե՛ս Lepsius J., Unsere Waisenhäuser, „Der Christliche Orient“, 1908, էջ 16: Հմմտ. Generalversammlung, անդ, էջ 69:

վտանգի ու կարիքի դեպքում պատասպարան խոյի ու շրջակա գյուղերի հայության համար, իսկ առավել ծանր տարիներին այն շտապ օգնություն դարձավ նաև ունեզուրկների և հիվանդների համար՝ առանց կրոնական և ազգային խտրականության նրանց ևս ցուցաբերելով բժշկական և այլ համակողմանի օգնություն:⁴⁸³ Այդ աշխատանքների ծավալն ընկալուն դարձնելու համար բավական է միայն նշել, որ 1908 թ-ի սեպտեմբերից մինչև 1909 թ-ի փետրվար ամիսը ընդհանուր թվով 700 հիվանդներ շուրջ 1700 անգամ Հառնակից ստացել են բուժօգնություն և դեղորայք:⁴⁸⁴ «Ջերմաչափերով և ամենաանհրաժեշտ դեղորայքով զինված՝ ես իմ չափափաս աղջիկների հետ գնում էի տները, որտեղ հիվանդներ էին պառկած, - նշում էր Հառնակը,- միևնույն է՝ հայեր, թե մահմեդականներ...»:⁴⁸⁵

Աղքատները և հիվանդները որքանոցից պարբերաբար ստանում էին նաև սննդամթերք ու դրամ: Չնայած այդ մասին որոշակի վիճակագրական տվյալներ չեն հաղորդվում, բայց մարդասիրական այդ օգնությունն ուներ խիստ լայն ընդգրկում, առանց որի ժամանակակից վկայությամբ հարյուրավոր մարդիկ կդատապարտվեին սովահարության:⁴⁸⁶



**ՄԵԼՔՈՆ
ՔՐԻՇՉՅԱՆ**



**ԱՔՐԱՀԱՍ
ԱՄԻՐՆԱՆՅԱՆՑ**

483. 1908 թ-ից խոյում ոչ մի բժիշկ չկար, ուստի բոլոր հայ և մահմեդական հիվանդները դիմում էին որքանոցին, որը նրանց բոլոր հնարավոր միջոցներով օգնություն էր ցուցաբերում: Stejn Harnack A., Bilder aus dem muhammedanischen Leben in Persien, „Der Christliche Orient“, 1913, էջ 35: Հմմտ. Harnack A., Errettung, „Der Christliche Orient“, 1909, էջ 102:

484. Անդ: Այդ հիվանդների մոտ կեսը մահմեդականներ էին:

485. Harnack A., Bilder aus dem muhammedanischen Leben in Persien, „Der Christliche Orient“, 1913, էջ 35:

486. Sachar Garabedian, Khoi und unsere Arbeit, „Der Christliche Orient“, 1912, էջ 32-33:

2.3. Վառնայի մասնաճյուղը

1896 թ-ի դեկտեմբերին հայ ավետարանական քահանա Աբրահամ Ամիրխանյանը⁴⁸⁷ Բեռլինի կոմիտեի հանձնարարությամբ մեկնեց Ռուսիա և Բուլղարիա՝ այնտեղ գտնվող հայ փախստականների դրությանը ծանոթանալու և օգնության կազմակերպման համար առաջարկներ ներկայացնելու նպատակով:⁴⁸⁸ Բուխարեստում տեղեկանալով, որ այնտեղ փախստականները մեծ թիվ չէին կազմում (ընդամենը 250 մարդ), նա պատրաստեց բոլոր կարիքավորների և հիվանդների ցուցակը և քաղաքի գերմանացի քահանա դր. Ֆլիչի առաջարկով նրանց հանձնելով տեղի գերմանացիների հովանավորությանը⁴⁸⁹ դեկտեմբերի 31-ին մեկնեց Բուլղարիա՝ փախստականների հիմնական հանգրվանավայրը:

Աննկարագրելի թշվառությունն ու զրկանքները, որոնց նա այնտեղ ամեն քայլափոխի հանդիպում էր, վկայում էին օգնությունն օր առաջ սկսելու անհրաժեշտությունը: «Այստեղ միմյանց վրա լցված են բազմաթիվ փախստականներ,- գրում էր Ամիրխանյանց՝ ամբողջացնելով Ռուսչուկ քաղաքի ավելի քան 2000 փախստականների ճամբարից ստացած իր տպավորությունները,- թշվառ, ցնցոտիների մեջ, առանց անկողինների, կեղտոտ և սովահար, հյուծված, հուսահատ դեմքերով, հույսի և հեռանկարի ոչ մի նշույլ: Նրանք հարյուրներով նստած են այնտեղ, ոչինչ չեն անում և ոչինչ չասող աչքերը սևեռում են սրա կամ նրա վրա: Նրանց տեսքը, շարժումներն անկենդան և անզույն են»:⁴⁹⁰

487. Ա. Ամիրխանյանը ծագումով Ղարաբաղից էր և հայերենից բացի վարժ տիրապետում էր թուրքերեն, պարսկերեն և գերմաներեն լեզուներին: Կովկասում և Ռուսաստանում ավետարանական քարոզչությամբ զբաղվելու պատճառով նա Պետերբուրգի եկեղեցական սինոդի կողմից արքայազն էր Ռուալ, որտեղից կարողանալով հեռանալ Ֆինլանդիա՝ մինչև ՉԱԱ-ի հետ համագործակցությունը բնակություն էր հաստատել այնտեղ: Տե՛ս Abraham Amirchanjan, „Der Christliche Orient“, 1900, էջ 100-102:

488. Տե՛ս Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, անդ, էջ 281:

489. Amirchanjan A., Briefe aus Rumänien und Bulgarien, անդ, էջ 87:

490. Անդ: Խոսքը վերաբերում էր Ռուսչուկից երկու կմ հեռավորության վրա գտնվող փայտե բարաքներին, որոնք նախկինում կառուցվել էին խոլերայով տառապող հիվանդներին մեկուսացնելու համար, իսկ հետագայում կառավարության կողմից տրամադրվեցին քաղաքում և շրջակայքում գտնվող փախստականներին:

Ռուսչուկի ճամբարականներին ցուցաբերելով առաջին օգնությունը⁴⁹¹ Ամիրխանյանցն իր շրջագայությունը շարունակեց Վառնայում և Շուսլայում, որտեղ համապատասխանաբար կային 6000 և 2000 փախստականներ, և նրանց ևս հատկացնելով որոշ քանակությամբ դրամ՝ մեկնեց Պրավադի, այնուհետև Բուրգաս և Պլովդիվ, որից հետո վերադարձավ Գերմանիա:⁴⁹²

Նրա տեղեկությունների հիման վրա Բեռլինի կոմիտեն վճռեց իր նոր որբանոցը հիմնել փախստականների ամենամեծ կենտրոնում՝ Վառնայում, և Ա. Ամիրխանյանցը, ստանալով այդ իրագործելու հանձնարարականը՝ դարձյալ վերադարձավ Բուլղարիա: Նրա բացակայության ընթացքում քաղաքում գործող միակ բարեգործական կազմակերպությունը՝ Կ. Պոլսի ամերիկյան աստվածաշնչային ընկերության մասնաճյուղը, սպառելով իր նյութական հնարավորություններն, արդեն լուծարվել էր,⁴⁹³ և նա փախստականներին գտավ անհամեմատ ավելի թշվառ դրության մեջ, քան նախկինում էր: «Շուրջ բոլորը մարդիկ են սողում. նիհար, ինչպես սովերներ,- գրում էր նա ապրիլին Վառնայից: Նրանց մկանները անհետացել են: Նրանց դեմքը գունատ և դեղնավուն է դարձել: Նրանց հագուստը լրիվ պատառոտված է...»:⁴⁹⁴

Նրա նախաձեռնությամբ մայիսի 12-ին տեղի ունեցավ որբանոցի բացումը. որը գտնվում էր երկու վարձակալված տներում, և որտեղ խնամքի տակ վերցվեցին ընդհանուր թվով 280 երեխաներ:⁴⁹⁵ Միաժամանակ փախստականներին հետագա գոյատևման հնարավորություն ընձեռելու համար ձեռնարկվեցին նաև առաջին անհրաժեշտության այլ միջոցառումներ. մասնավորապես մայիսի 2-ին հիմնվեց մի հասա-

491. Ամիրխանյանցը նրանցից շատերին հատկացրեց կոշիկներ և բացի այդ զմեջ մոտ 100 քառ. մ. կտորեղեն, կոճակներ, ասեղներ, դերձան և կանանց պատվիրելով հագուստներ կարել՝ դրանք բաժանեց ամենակարիքավորներին: Անդ, էջ 89:

492. Amirchanjanz A., Briefe aus Bulgarien, „Der Christliche Orient“, 1897, էջ 134: Հմնտ. Amirchanjanz A., Briefe aus Bulgarien, անդ, էջ 184:

493. Տե՛ս Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, անդ, էջ 282:

494. Անդ:

495. Schäfer R., Geschichte..., էջ 15: Հմնտ. Berichte über das deutsche Hilfswerk in Armenien, „Der Christliche Orient“, 1897, էջ 283: Որբանոցում երեխաների խնամքի վերահսկողությունը իրականացնում էր Ա. Ամիրխանյանցի դուստրը՝ Էլիզա Ամիրխանյանցը: Անդ:

րակական ճաշարան, որտեղ 10 պֆենիգով կարելի էր լիարժեք սնունդ ստանալ, իսկ մեկ շաբաթ անց մի նման ճաշարան հիմնվեց նաև Շուսլայում:⁴⁹⁶ Այդ թեկուզև չնչին գներն ամենաաղքատ փախստականներին ևս մատչելի դարձնելու համար նրանց բաժանվեց դրամ, իսկ հետո քայլեր ձեռնարկվեցին նաև նրանց ինքնուրույն վաստակի հնարավորություն տալու ուղղությամբ: Շատ փախստականներ Ա. Ամիրխանյանցից ստացան գյուղատնտեսական գործիքներ և այգիներում աշխատելով՝ օրական վաստակում էին 2-3 ֆրանկ:⁴⁹⁷ Մյուսները զինվում էին այլ աշխատանքների համար անհրաժեշտ պարագաներով՝ այդ կերպ ի վիճակի դառնալով հոգալ իրենց և իրենց ընտանիքների ապրուստը: «Ես մարդկանց հարցնում եմ, թե նրանք կուզենա՞ն իր մեջքի վրա պտտելով՝ նավթ վաճառել,- գրում էր Ա. Ամիրխանյանցն իր՝ մայիսի 15-ի նամակում:- Դրական պատասխանի դեպքում նրանք անմիջապես նավթ են ստանում: Մեկը կոշիկի կաղապարներ պատրաստել գիտի, բայց փայտ չունի, և ես այդ գնում եմ նրա համար: Մյուսների համար կաշի են գնել, և նրանք հնակարկատությամբ վաստակում են իրենց օրահացը: Մեկը չորացված ձուկ է տանում շուկա, մյուսը՝ բանջարեղեն, մեկ ուրիշը՝ ծխախոտ և այլն: Երբեմն միայն 10-15 մարկ է հարկավոր մի տղամարդու օրական 1-2 ֆրանկով իր ընտանիքը պահելու հնարավորություն տալու համար, երբեմն, սակայն, ըստ աշխատանքի բնույթի, 30, 40, 60 և 80 ֆրանկ: Շատերի համար կոշիկի քսուք և խոզանակներ են գնել, և նրանք փողոցում կոշիկ են մաքրում՝ կարողանալով կերակրել իրենց ընտանիքներին...»:⁴⁹⁸

Իսկ ինչ վերաբերում էր համեմատաբար կրտսեր տարիքի տղաներին, ապա Ա. Ամիրխանյանցը վճռեց նրանց արհեստներ ուսուցանել՝ այդ նպատակով փախստականների շարքերից հավաքագրելով թիթեղագործության, ատաղձագործության, կոշկակարության, դերձակության և գրաշարության մեջ հմուտ մեկական վարպետների: Նրանցից յուրաքանչյուրին կցվեց 10 հոգուց բաղկացած մի խումբ, որոնց ապրուստի, սննդի և հագուստի բոլոր ծախսերը ունսան ողջ ժամանակամիջոցում ստանձնեց Ամիրխանյանցը:⁴⁹⁹ Իր ցանկալի լուծումը ստացավ

496. Անդ, էջ 283-284:

497. Անդ:

498. Անդ:

499. Անդ, էջ 281-282:

նաև որբանոցի երեխաների և փախստականների բուժապասարկման խնդիրը, որ դր. Լոհմանի ամառանոցի ասիստենտ բժշկուհի, հայազգի օր. Մելիք-Բեգլարյանի առաջարկությամբ հանձնարարվեց նրան:⁵⁰⁰

Ինչևէ, որքան էլ նշված միջոցառումները կարևոր և մեծանշանակ էին, այնուամենայնիվ փախստականների ավելի քան վեց հազարանոց բանակի դրության բարելավումը շարունակ հարկադրում էր նոր և ավելի արդյունավետ ուղիներ որոնել, ուստի կատարված աշխատանքներին ծանոթանալու և ապագայի անելիքները համատեղ որոշարկելու նպատակով 1897 թ-ի հուլիսին մեկ շաբաթով Վառնա մեկնեց նաև Յոհ. Լեփսիուսը:⁵⁰¹

Վառնայում վերոնշյալ ամերիկյան ընկերության գործունեության լուծարումից հետո փակման սպառնալիքի տակ էին գտնվում նաև նրա կողմից հիմնված երկու աշխատասրահները, որտեղ 75 աղջիկներ զբաղված էին արևելյան նուրբ գործածքների պատրաստմամբ: Հավատարիմ այն սկզբունքին, որ մարդկանց դրության բարելավման ամենաարդյունավետ միջոցը աշխատատեղերի ստեղծումն էր, Լեփսիուսը վճռեց այդ արտադրամասերն ամեն զնով պահպանել և, հանձն առնելով Բեռլինում համապատասխան շուկա գտնել, նա այնտեղ աշխատող բանվորուհիներին մի քանի խոշոր պատվերներ տվեց՝ կատարելով նաև նախնական վճարումներ: «Այն, ինչի կարիքը այդ աղքատ և աշխատասեր ժողովուրդն ունի, ողորմությունը չէ,- գրում էր նա,- այլ աշխատանքը: Ո՞վ կարող է հազարավոր մարդկանց տևականորեն կերակրել: Անհնար է: Ո՞վ կարող է նրանց աշխատանք գտնել: Այդ ավելի դժվար խնդիր է ... Հավանաբար տղամարդկանց հետզհետե կհաջողվի, եթե նույնիսկ ոչ Վառնայում, ապա այլ վայրերում զբաղմունք գտնել: Կանանց, աղջիկների և մեծացող երեխաների համար, սակայն, ինչ-որ կերպ հարկավոր է աշխատանք ստեղծել»:⁵⁰²

Քաղաքի հայերի հետ Լեփսիուսի ունեցած դրամատիկ և տպավո-

500. Տե՛ս Das deutsche Hilfswerk für Armenien, անդ, էջ 331-332:

501. Անդ, էջ 332:

502. Lepsius J., Ein Besuch in Varna, անդ, էջ 378:

րիչ շփումները⁵⁰³ վերստին և նորովի փաստեցին այն նախնական ըմբռնումները, որ նա ուներ հայ ժողովրդի բացառիկ ներուժի և ունակությունների վերաբերյալ: «Ով կտեսնի այդ երեխաներին իրենց նուրբ և ինտելիգենտ դեմքերով,- նշում էր նա այդ առթիվ,- և կնկատի նրանց օժտվածությունը, միայն դժգոհությամբ կվերաբերվի այն նախատինքներին, որոնք ուղղվում են հայ ժողովրդի հասցեին: Եթե մի ռասա իր բնական հատկանիշներով կոչված է դառնալու բարձր մշակույթի կրող, ապա դա հայկականն է: Եթե նրա բարոյական զարգացումը համաքայլ չի եղել բնականին, ապա այդ կարելի է բացատրել միայն թուրքիայի դարավոր ճնշմամբ և կողոպտիչ պետական ու տղնտեսական հարաբերություններով»:⁵⁰⁴

Չքավորության, սովի և հիվանդությունների դեմ պայքարը ուժերի մեծագույն լարումով շարունակվեց նաև 1897 թ-ի աշնանը և ծմռանը:⁵⁰⁵ Ընդ որում այդ ամիսներին հարկ եղավ նույնիսկ անցնել սննդի ամենօրյա բաշխման պրակտիկային, որի միջոցով իրենց գոյությունը պահպանում էին 300-400 մարդիկ: Զուգահեռաբար որբանոցում խնամքի տակ գտնվող երեխաների թիվը հասցվեց 300-ի, որոնցից միայն մեկ քառորդն էին որբեր:⁵⁰⁶ Մյուսները սերում էին ծայրահեղ արքատության մեջ գտնվող ընտանիքներից, որտեղ նրանց համար հոգ տանել չէին կարող: Ուշագրավ է, որ Բեռլինի կոմիտեի՝ այդ քայլը պայմանավորված էր երեխաների ոչ միայն ֆիզիկական, այլև բարոյական փրկության մտահոգությամբ: «Այդ ծանր զրկանքների շրջանում մենք պետք է ջանանք, որ նրանք բարոյական անկման չենթարկվեն,- նշում էր Լեփսիուսը: - Հավանաբար մի քանի ամսից, երբ մեզ կհաջողվի աշխատանքի ավելի լայն հնարավորու-

503. Նրա ժամանման լուրը անմիջապես տարածվեց ողջ քաղաքում, և առաջին իսկ օրից նրան հետևում էր օգնություն հայցող մարդկանց մի մեծ բազմություն: Առավոտյան, երբ նա արթնանում էր, դուռը պատված էր մարդկանցով, որոնք այնտեղ հերթապահել էին նաև ամբողջ գիշեր... Եվ այնուամենայնիվ, ինչպես վկայում էր Լեփսիուսը, հարկադրաբար խնդրարկուի դեբում հայտնված այդ մարդկանց մուրացիկի հոգեբանությունը շարունակում էր օտար լինել. «Շատերը ձեռքը մեկնելու պահին թեքում էին իրենց դեմքը... մեկընդմեջ մի հյուժված կերպարանք ծնկի էր իջնում իմ ձեռքը համարուելու համար, որից ես չէի կարողանում պաշտպանվել...»: Անդ, էջ 381:

504. Անդ, էջ 381:

505. Անդ, էջ 526:

506. Անդ, էջ 380:

թյուններ ստեղծել, կկարողանանք մեր աշխատանքը սահմանափակել այնքան, որ միայն որբերին կխնամենք»:⁵⁰⁷

Աշնանը և ծմռանը Բուլղարիայում մուլեգնող համաճարակների շրջանում կենսականորեն կարևոր նշանակություն ունեցավ նաև դր. Մելիք-Բեգլարյանի գործունեությունը, որը մինչև տարեվերջ 9027 բժշկական տեսակցությունների ընթացքում կարողացավ սպասարկել 3816 հիվանդների:⁵⁰⁸ Հիվանդությունների դեմ նրա հետևողական պայքարի շնորհիվ, որն արդյունավորվում էր Բեռլինից ուղարկված մեծաքանակ խիմիկի և այլ արժեքավոր դեղորայքների օգտագործմամբ. համաճարակների զարգացումը կասեցվեց, և հազարավոր մարդիկ փրկվեցին անխուսափելի թվացող մահից:⁵⁰⁹

Բուլղարահուսթյան՝ այդ սպառնալից ճգնաժամային դրությունը 1898 թ-ի գարնանը սկսեց մեղմանալ, որին զուգահեռ նվազում էր նաև որբանոցի երեխաների թվաքանակը: Պարզ դարձնելու համար, թե այդ որբան արագ էր տեղի ունենում, կարելի է միայն նշել, որ 1898 թ-ի սկզբին հաստատությունում մնացել էին ընդամենը 6 տասնյակ երեխաներ:⁵¹⁰ Իրադրության այդ փոփոխությունները պայմանավորված էին ոչ միայն օգնության աշխատանքների արդյունավետությամբ, այլև, ինչպես դիպուկ կերպով նշում էր Ռ. Շեֆերը, այն փաստով, որ «Եվրոպական հողի վրա, բնականոն պետական և տնտեսական հարաբերությունների պայմաններում փախստական հայերը զարմանալի արագ էին մուտք գործում աշխատանքային կյանք, և ընտանիքի՝ իրենց ցայտուն ըմբռնողությամբ նույնիսկ հեռավոր ազգականները, հենց որ սնունդ և բնակարանային պայմաններ էին ձեռք բերում, որբացած երեխաներին տանում էին իրենց ընտանեկան միջավայրը...»:⁵¹¹ Այդ ամենից զատ, սակայն, կար մի այլ լրացուցիչ նախադրյալ ևս. 1898 թ-ի սկզբին փախստականների շրջանում ի հայտ եկան հայրենիք վերադառնալու և այնտեղ վերաբնավորվելու ցանկություններ, որոնք, համահունչ լինելով հայությանն իր բնօրրանում հա-

507. Անդ:

508. Տե՛ս դր. Մելիք Բեգլարյանի նամակը, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 23:

509. Անդ:

510. Տե՛ս Unsere Waisenkinder in der Türkei, Persien und Bulgarien, անդ, էջ 9:

511. Schäfer R., Geschichte..., էջ 21:

մախմբելու Բեռլինի կոմիտեի նպատակներին, վերջինիս կողմից նյութական և բարոյական մեծ աջակցություն գտան: Ստանալով մարդկանց վերադարձը կազմակերպելու հանձնարարական և դրամ դր. Մելիք-Բեգլարյանն ու նրա գործընկերները, չնայած թուրքական հյուպատոսության կողմից հարուցվող արգելքներին, կարողացան փետրվարին հայրենիք ուղարկել առաջին թվով 48 փախստականներին, որոնք առանց բացառության միայնակ կանայք էին:⁵¹²

Չետագայում, երբ հաջողվեց թուրք հյուպատոսի դիմադրությունը հաղթահարել, այդ գործընթացն ավելի արագացավ, և արդեն զարմանք, ինչպես Ա. Ամիրխանյանցն էր իր մայիսի 16-ի նամակում տեղեկացնում, օրական 4. Պոլիս էին մեկնում 100-150 փախստականներ, որոնց բոլորի ճանապարհածախսը հոգում էր Բեռլինի կոմիտեն:⁵¹³ Եթե նկատի առնենք, որ վերադարձի ցանկություն հիմնականում արտահայտում էին սոցիալապես ամենաանապահով փախստականները, ապա պարզ կդառնա, թե դա որպիսի բեռնաթափում էր նշանակում օգնության աշխատանքների համար: Ուստի հաշվի առնելով նոր զարգացումները՝ Լեփսիուսը, որ դեռ 1897 թ-ի վերջին ծրագրել էր Վառնայում գնել մի հողամաս և տրամադրել մի սեփական ընդարձակ որբանոցային համալիրի շինարարությանը,⁵¹⁴ այդ մտքից հրաժարվեց, իսկ 1999 թ-ին, տեղեկանալով Ռուսչուկի գերմանական համայնքի ղեկավար

512. Տե՛ս „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 24: Թուրք հյուպատոսը, ինչպես իր նամակներից մեկում տեղեկացնում էր Մելիք-Բեգլարյանը, սկզբում կատեգորիկ կերպով հրաժարվում էր փախստականներին վերադարձի թույլտվություն տալ, իսկ այնուհետև դր. Բեգլարյանի և իր աշխատակիցների ակտիվ միջամտությունից հետո համաձայնեց թույլատրել միայն միայնակ կանանց: Չնայած այդ ժամանակ վերադարձի դիմում էին կատարել 138 փախստականներ, սակայն տղամարդկանց, ինչպես նաև անուսին կամ 12 տարեկանից մեծ արու զավակ ունեցող այրի կանանց համար թույլտվություն ձեռք բերել չհաջողվեց: «Նա նստած էր այնտեղ,-պատմում էր Մելիք-Բեգլարյանը,- կարմիր, բորբոքված աչքերով, սպառնալից, ինչպես դահիճ: Խեղճ կանայք՝ զունատ, թույլ, հյուժված, գալիս էին: Նրանց ձեռքերը այնպես էին դողում, որ չէին կարողանում անգամ քացել այն կտորը կամ թուղթը, որի մեջ իրենց անձնագիրն էին դրել:... Քարը կիռզվեք, քայք թուրքը մնում էր համր»:

513. Amiranhanjanz A., Aus Warna und Burgas, անդ, էջ 111:

514. Lepsius J., Ein Besuch in Varna, „Der Christliche Orient“, 1897, էջ 381:

պաստոր Թեոդոր Վանգեմանի որբախնամ ծեռնարկումների մասին,⁵¹⁵ որբանոցը տեղափոխեց այնտեղ հանձնելով նրա ղեկավարմանը:⁵¹⁶ Եվս երկու տարի անց՝ 1901 թ-ի հոկտեմբերին, Թ.Վանգեմանը պատրաստակամություն հայտնեց միայնակ հոգալ նաև որբերի խնամքի ծախսերը, ուստի քանի որ բուլղարահայության սոցիալական դրությունն արդեն բավականաչափ կայունացած էր, Լեփսիոսն ու իր գործընկերները նպատակահարմար գտան իրենց բարեգործական աշխատանքներն այնտեղ դադարեցնել և որբանոցն իր ողջ գույքի հետ միասին հանձնեցին նրան:⁵¹⁷

Այսպիսով, Բուլղարիայում մոլեզունդ համաճարակների և սոցիալատնտեսական սուր ճգնաժամի տարիներին Բեռլինի կոմիտեն անգերազնահատելի կարևոր դեր ունեցավ այնտեղ հանգրվանած բազմահազար հայ փախստականների գոյապահպանման, իսկ 1898 թ-ից նաև նրանց հայրենադարձությունը կազմակերպելու հարցում: Եվ միայն այն փաստը, որ այդ ողջ ժամանակամիջոցում փախստականների շրջանում սովամահության որևէ դեպք չգրանցվեց,⁵¹⁸ պերճախոս վկայությունն էր այն բանի, թե օգնության աշխատանքները որքան արդյունավետ և հետևողականորեն էին վարվում:⁵¹⁹

515. Թ. Վանգեմանը սեփական նախաձեռնությամբ հավաքել և իր տանը խնամում էր մի քանի հայ որբերի: Տե՛ս „Der Christliche Orient“, 1901, էջ 102:



516. Տե՛ս Der gegenwärtige Stand und die Aufgaben unseres Hilfswerkes, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 32:

517. Տե՛ս Mitteilung, „Der Christliche Orient“, 1901, էջ 196: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 38:

518. Amirchanjanz A., Was in Bulgarien not thut, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 10:

519. Ինչ վերաբերում է Ա. Ամիրխանյանցին, ապա նա, վաղուց մտադիր լինելով զբաղվել մահմեդական շրջաններում ավետարանական քարոզչությամբ, որբանոցը Ռուսչուկ տեղափոխելուց հետո մնաց Վարնայում և Բեռլինի կոմիտեի հովանավորությամբ այնտեղ սկսեց վարել ակտիվ քարոզչական գործունեություն: Տե՛ս Lepsius J., Das deutsche Gemeinde-, Waisen- und Missionshaus in Rustschuk, „Der Christliche Orient“, 1901, էջ 103: Լեփսիոսն այդ աշխատադաշտն ընդլայնելու նպատակով 1900 թ-ի նոյեմբերի 7-ին Բուլղարիա ուղարկեց նաև Յոհաննես Ավետարանյանին, որն ազգությամբ թուրք էր, սակայն մկրտվելով՝ փոխել էր իր անունը: Տե՛ս անդ, 1900, էջ 102: Նրանց համատեղ գործունեությունը, զխաակորապես Ավետարանյանի շնորհիվ, Գերմանիայում մեծ նյութական աջակցություն ստացավ, որից զայթակրվելով՝ Ա. Ամիրխանյանցը վճռեց կոմիտեի հետ իր կապերը խզել՝ փորձելով նույնը համոզել նաև Ավետարանյանին: Երբ վերջինս դրան չհամաձայնեց, Ամիրխանյանցը փորձեց ստեղծել մի առանձին քարոզչական ընկերություն,

ԳԱԱ-ի՝
Ուռիայի մասնաճյուղի
գորգագործական
ֆաբրիկան



ԱՆԴՐԵԱՍ ֆոն
ԲԵՆՆԵՏՈՐՅ



ԷՄՍԱ ԳԱՅԹՆԵՐ



ՈՐՐՈՒԿՆԵՐ



ԿՈՐԻՆԱ ՇԱՏՈՒԿ

չայց մնալով միայնակ՝ ի վերջո հրաժարվեց նաև այդ մտքից: St'u Schäfer R.,
Geschichte..., էջ 36: Իսկ ընկերության գործունեությունն այդ ոլորտում Ավետարանյանի
չիջողով չադունակվեց նաև հաջորդ տարիների ընթացքում:

2.4. Դիարբեքիրի և Թալասի մասնաճյուղերը

Ըստ առկա վիճակագրական տվյալների, Դիարբեքիրի շրջանում 1895 թ-ի կոտորածներից հետո կային 5349 որբեր և այրիներ, այդ թվում 365 ամբողջովին ծնողազուրկ երեխաներ, ուստի Բեռլինի կոմիտեն վճռեց իր գործունեությունը ծավալել նաև այնտեղ:⁵²⁰ Որբանոցի բացումը, որտեղ նախատեսված էր սկզբնապես ընդունել 100 որբերի,⁵²¹ հանձնարարվեց Ֆ. Էքարտին, որը 1898 թ-ի օգոստոսի 22-ին մեկնեց այնտեղ և վարձակալեց մի ընդարձակ տուն՝ կատարելով նաև առաջին անհրաժեշտության կահույքի գնման ու տեղադրման աշխատանքները:⁵²² Իսկ հոկտեմբերի սկզբին իր ընտանիքի հետ Դիարբեքիր հասավ որբանոցի ղեկավարը՝ պաստոր Բեհնիշը՝ իսկույն ևեթ ծեռնամուխ լինելով որբերի հավաքագրման գործին:⁵²³

1899 թ-ի փետրվարի դրությամբ որբանոցում արդեն հավաքվել էին 80 երեխաներ, որոնց գումարվում էին նորերը:⁵²⁴ Ինչպես տեղեկացվում էր կոմիտեի պարբերականի փետրվարյան համարում, նախատեսված էր նրանց թիվը 100-ի հասցնելուց հետո այնտեղ հիմնել նաև Ուռ-հայի կլինիկայի և գորգագործական ֆաբրիկայի մասնաճյուղեր:⁵²⁵ այդպիսով, ինչպես Ուռհայում, որբանոցը դարձնելով բնակչության լայն շերտերին ծառայող արտադրական և բարեգործական կենտրոն: Ցավոք, սակայն, Դիարբեքիրում դա բոլորովին էլ դյուրին չէր...

Եթե քաղաքի և շրջանի հայերը որբանոցի հիմնման փաստը խանդավառությամբ ընդունեցին,⁵²⁶ ապա կառավարությունը՝ ծայրահեղ թըշնամանքով և անհանդուրժողությամբ. այն աստիճան, որ նահանգապետ

520. Տե՛ս Die Lage in Armenien, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 89:

521. Աճդ:

522. Տե՛ս այդ մասին Ֆ. Էքարտի տեղեկությունը: Աճդ, էջ 172-173:

523. Տե՛ս Der Gegenwärtige Stand und die Aufgaben unseres Hilfswerkes, անդ, 1899, էջ 31:

524. Աճդ:

525. Աճդ:

526. Schäfer R., Geschichte..., էջ 22:

Բալի փաշան 1898 թ-ի դեկտեմբերի 28-ին պ. Բեհնիշին հրավիրելով իր նոտ՝ նրան կարգադրեց երեխաներին անհապաղ դուրս հանել և հաստատությունը փակել:⁵²⁷ Պ. Բեհնիշը հարկադրված էր նրանց տեղավորել հայկական ընտանիքներում, որտեղ նրանք մինչև իրադրության հստակեցումը պարբերաբար նյութական օգնություն էին ստանում:⁵²⁸

Միաժամանակ ծայր առան տևական բանակցություններ իշխանությունների հետ, որոնց ընդհանուր առմամբ որևէ արդյունք չտվեցին: Ընդհակառակը, նահանգապետը 1899 թ-ի հունիսին արձակեց մի նոր հրաման նահանգի երեք բնակավայրերում՝ Պալուում, Չնքուշում և Դիարբեքիրում գործող գերմանական և ամերիկյան որբանոցները փակելու վերաբերյալ:⁵²⁹ Ընդ որում, ուշագրավ է, որ գերմանական հաստատությունների հանդեպ իշխանությունների դիրքորոշումը շատ ավելի կարծր էր, քան մյուսների:⁵³⁰ Այդ էր վկայում այն փաստը, որ եթե ամերիկյան որբանոցները Կ. Պոլսի ամերիկյան և անգլիական դեսպանների միջամտությունից հետո դարձյալ վերաբացվեցին,⁵³¹ ապա գերմանականն այդ հնարավորությունը չունեցավ: Տեղեկանալով իր բողոքի հիման վրա գերմանական դեսպանի կողմից կատարած միջամտության մասին և ենթադրելով, որ եթե մյուս որբանոցները վերաբացվել են, ապա գերմանականը նույնպես կարող է գործել, պ. Բեհնիշը փորձեց սեփական նախաձեռնությամբ երեխաներին դարձյալ հավաքել որբանոցում: Դա, սակայն, արգելվեց բռնի ուժի գործադրման միջոցով, որի արդյունքում նրա երկու հայ օգնականները ձերբակալվեցին, իսկ նրան սպառնացին երկրից արտաքսել:⁵³²

527. Bähnisch, Die Schließung des deutschen Waisenhauses in Diarbekir, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 46:

528. Անդ:

529. Անդ, էջ 98:

530. Դրա պատճառներն այդպես էլ մնացին անհայտ: Պալուում իշխանությունները հացափառանքն արգելեցին նույնիսկ տեղի գերմանական որբանոցի տնօրենին հաց վաճառել՝ այդպիսով վերջինիս զրկելով որբ երեխաներին և ունեզուրկ հայ ընտանիքներին օգնելու հնարավորությունից: Sten Angriffe auf die deutschen Waisenhäuser in der Provinz Diarbekir, անդ, 1899, էջ 99: Կարելի էր ենթադրել, որ այդ որբանոցի ղեկավարը կամ աշխատակիցները ինչ-որ արարք էին թույլ տվել, որը թուրքերին գրգռել և անվստահություն էր սերմանել գերմանացիների գործունեության նկատմամբ: Նման բան, սակայն, ինչպես նշվում էր Դիարբեքիրից ստացված տեղեկատվության մեջ, տեղի չէր ունեցել: Անդ:

531. Անդ, էջ 98:

532. Անդ:

Իրավիճակը հետագա ամիսներին շարունակում էր մնալ ծայրաստիճան լարված. չնայած պ. Բեհնիշը Կ. Պոլսի գերմանական դեսպանության նոր միջամտության շնորհիվ ծնռանը կարողացավ երեխաների մի մասին (մոտ 40 հոգու) դարձյալ հավաքել որբանոցում, սակայն նրանց այնտեղ երկար չկարողացավ պահել: Իշխանությունների պահանջով նրանք դարձյալ որբանոցից հեռացվեցին՝ տեղավորվելով ընտանիքներում, իսկ պաստոր Բեհնիշի թարգմանիչը բանտարկվեց:⁵³³ Ոստիկանների մշտական հսկողությունը հաստատության ղեկավարին արգելում էր նույնիսկ կանոնավոր կապ պահպանել դրսում գտնվող երեխաների հետ:⁵³⁴

Այդ կնճռոտ խնդիրը լուծելու նպատակով Յոհ. Լեփսիուսն իր 1899 թ-ի ապրիլին ձեռնարկված ճանապարհորդության ընթացքում⁵³⁵ մեկնեց նաև Դիարբեքի՝ որբանոցի վերաբացման կապակցությամբ անձամբ բանակցությունների մեջ մտնելով նահանգապետի հետ: Բանակցությունները, որոնք, Լեփսիուսի վկայությամբ, տեղի էին ունեցել բարեկամական մթնոլորտում, ընդհանուր առմամբ խոստումնալից էին թվում, քանի որ, ինչպես Լեփսիուսն էր այդ առթիվ նշում, երկուստեք հաջողվել էր «բոլոր ցանկություններին բավարարում տալ»:⁵³⁶

Այնուամենայնիվ պ. Բեհնիշն իր տևական բողոքարկումներով այլևս վալիի համակրանքը չէր վայելում, և այնտեղ նրա հետագա մնալը հազիվ թե նպաստեր իշխանությունների հետ բնականոն հարաբերությունների ձևավորմանը, ինչն այնքան անհրաժեշտ էր գործի համար: Ելնելով դրանից, ինչպես և ծանր հիվանդությամբ տառապող իր երեխայի և կնոջ բուժումը Եվրոպայում իրականացնելու համար նա Բեռլինի կոմիտեին ներկայացրեց հրաժարական, որի հիման վրա 1900 թ.-ի փետրվարի սկզբին ազատվեց իր ծառայությունից:⁵³⁷ Մինչև նրան հիմնական փոխարինող կգտնվեր, կազմակերպության հրահանգով Ուռհայից Դիարբեքի մեկնեց Յ. Կյունցլերը, որն այնտեղ մնաց մոտ ե-

533. Անդ, էջ 122:

534. Անդ:

535. Այդ մասին տե՛ս նաև այս աշխատության 66-րդ էջում:

536. Lepsius J., *An die Pflegeeltern unserer Kinder*, „Der Christliche Orient“, 1900, էջ 58:

537. Անդ: Հմմտ. Künzler J., *Dreißig Jahre Dienst im Orient*, Basel, 1933, էջ 14:

րեք ամիս՝ այդ ընթացքում պարբերաբար սնունդ և դրամ մատակարարելով ընտանիքներին պահ տրված երեխաներին:⁵³⁸

Ի վերջո, 1900 թ-ի գարնանը Դիարբեքի ուղարկվեց Խոյի և Ուրմիայի մասնաճյուղերի փորձառու ղեկավար պաստոր Էդուարդ ֆոն Բերգմանը, որը, կարողանալով հաջողությամբ լուծել Պարսկաստանի որբանոցների հետ կապված հիմնահարցերը, հույս էր ներշնչում, որ ի վիճակի կլիներ հարթել նաև Դիարբեքի կնճռոտ խնդիրը:⁵³⁹ Մայիսի 14-ին հասնելով Դիարբեքի⁵⁴⁰ ֆոն Բերգմանը, սակայն, տեղի իշխանություններից խիստ սառը և թշնամական ընդունելություն ստացավ⁵⁴¹ հարկադրվելով ապրել տնային բանտարկություն հիշեցնող պայմաններում: Նրա դռան առջև մշտապես կանգնեցվել էր մի ոստիկան, և այն դառը փորձի հիման վրա, որ նրա նախորդին ծառայող հայերը դատապարտվել էին երկարաժամկետ բանտարկության, ոչ ոք չէր համարձակվում մուտք գործել նրա մոտ:⁵⁴² Իսկ եթե այնուամենայնիվ որևէ մեկը համարձակվեր այցելել, ապա դա կարգելվեր ոստիկանական պահակակետի կողմից:⁵⁴³ Ազատ ելունուտի իրավունք ունեցող՝ նրա միակ այցելուները ֆրանսիական և անգլիական հյուպատոսներն էին, իսկ միակ զբաղմունքը ընթերցանությունը, որ, սակայն, նույնպես գերծ չէր արգելքներից, քանի որ զբաքնությունը, ջանալով խոչընդոտել Բերգմանի կապն իր հայրենիքի հետ, ամիսներ շարունակ արգելում էր ուղարկել նրան հասցեագրված փոստն ու

538. Künzler J., *Dreißig Jahre...*, էջ 15:

539. Տե՛ս Diarbekir, „Der Christliche Orient“, 1900, էջ 107: Ղմմտ. Lepsius J., Eduard von Bergmann, անդ, էջ 145:

540. Diarbekir, „Der Christliche Orient“, 1900, էջ 107:

541. «Այստեղի նահանգապետն օտարականների և քրիստոնյաների թշնամին էտեղեկացնում էր նա իր առաջին նամակներից մեկում: - Լուրեր են պտտվում, որ նա հայերի նոր ջարդեր է նախապատրաստում: Նա տարբեր ձևեր է որոնում օտարականներին այստեղ մնալը ըստ հնարավորին անցանկալի դարձնելու և մյուս կողմից հայերին ցույց տալու համար, որ օտարներն անգոր են, և որ հայերը նրանցից որևէ ակնկալիք չեն կարող ունենալ»: Տե՛ս Aus Briefen von Eduard v. Bergmann, „Der Christliche Orient“, 1900, էջ 169:

542. Անդ:

543. Այդ առումով կարող է խիստ բնութագրական լինել հետևյալ դիպվածը. Ֆոն Բերգմանն իր տանը մի անգամ կարիճ նկատեց և նրանից ազատվելու համար փորձեց դրսից որևէ մեկին կանչել իր մոտ, սակայն այդ ոստիկանի կողմից արգելվեց: Անդ, էջ 170:

լրագրերը: «Ինձ հաճախ ասել են, որ Թուրքիայում կյանքն ավելի լավ է, քան Պարսկաստանում,- գրում էր նա իր՝ մայիսի 29-ի նամակում:- Դա ճիշտ չէ: Պարսկաստանում տիրում է մամուլի ազատություն, և ոստիկանական ճնշում ամենևին չկա: Այստեղ յուրաքանչյուր անգամ քաղաքից դուրս գալը պետք է օրինականացնել ոստիկանությունում»: 544

Պաստոր ֆոն Բերգմանին վիճակված չէր նման պայմաններում երկար տոկալ: 1900 թ-ի ամռանը նա հիվանդացավ տիֆով, և չնայած նրան բուժօգնություն ցույց տալու նպատակով Ուռհայից բժիշկ ուղարկվեց, սակայն հիվանդի դրությունն արդեն դարձել էր անհուսալի, և 1900 թ-ի սեպտեմբերի 26-ին նա վախճանվեց: 545

Չնայած իրադրության ողջ անհուսալիությանը, Լեփսիուսը Բերգմանի մահից հետո ևս չհամակերպվեց Դիարբեքիի մասնաճյուղից հրաժարվելու մտքի հետ, քանի որ նրա համոզմամբ, եթե տեղի տրվեր «նենգ խորամանկությանը», որով թուրքական իշխանությունները կամենում էին աշխատանքն այնտեղ վիժեցնել, ապա դա Թուրքիայի մյուս վայրերում գտնվող մասնաճյուղերի համար նույնպես կարող էր վատ հետևանքներ ունենալ: 546 Մասնաճյուղի վերաբացման համար, սակայն, պետք էր ընտրել մեկ ուրիշ՝ ավելի արդյունավետ ճանապարհ, քան մինչ այդ կատարված ձեռնարկումներն էին: Ուռհայի փորձառությունը հուշում էր, որ մահմեդական շրջանների հետ շփումների, փոխըմբռնման և վստահության մթնոլորտի ստեղծման ամենարդյունավետ միջոցը բուժսպասարկման զարգացումն էր, որը, եթե Ուռհայում բնակչության անվճարունակության պատճառով շարունակ մեծ ծախսեր և ներդրումներ էր պահանջում, ապա «հարուստ» Դիարբեքիում կարող էր նույնիսկ լրացուցիչ եկամտի

544. Անդ: Այդ նամակն, ի դեպ, տեղ է հասել վեց ամիս ուշացումով և տպագրվել պարբերականի նոյեմբեր-դեկտեմբերի համարում:

545. J. Ehmman, Eduard von Bergmann, „Der Christliche Orient“, 1900, էջ 166:

546. Lepsius J., Aertzliche Mission in Diarbekir, անդ, 1900, էջ 180: Լեփսիուսը մասնաճյուղի պահպանումն անհրաժեշտ էր համարում նաև մահմեդական շրջաններում քարոզչության կազմակերպման իր ապագա ծրագրերի իրականացման առումով, որի համար նրա համոզմամբ այդ քաղաքը ռազմավարական կարևոր նշանակություն ուներ: «Իննդիրը վերաբերում է Թուրքիայում միսիայի կարևորագույն հենակետերից մեկին, որը Քրդաստանի և Յուսիսային Միջագետքի բանալին է, -նշում էր նա 1900 թ-ին: - Այդ շրջաններում գերմանական միսիոներական աշխատանքի ապագան կախված է այն բանից, որ մենք Դիարբեքիի մեր մասնաճյուղը չկորցնենք»: Անդ:

աղբյուր դառնալ կամ գոնե հատուցել ներդրված ծախսերը:⁵⁴⁷

Մինչ բժշկական աշխատանքների մեկնարկումն ու իրադրության բարելավումը որբանոցի գործունեությունը⁵⁴⁸ անհրաժեշտաբար պետք է դարձրեցվեր, ուստի այդ հարցի կարգավորման նպատակով 1901 թ-ի հունվարի 12-ին Ֆ. Էքարտի ուղեկցությամբ Դիարբեքիր մեկնեց Պատու Ռոհրբախը:⁵⁴⁹ Ընտանիքներին պահ տրված 120 երեխաներից ոմանց անունները, ինչպես տեղեկացնում էր Ռոհրբախն այնտեղից գրված իր տեղեկագրերից մեկում, դեռ նախկինում ֆոն Բերգմանի կողմից հանվել էին ցուցակներից այլևս կարիքավոր չլինելու պատճառով, իսկ մնացյալի մեծ մասին և հատկապես 12 տարեկանից փոքր երեխաներին նա անհրաժեշտ համարվեց տեղափոխել Ուռհա:⁵⁵⁰

Ցավոք այդ տեղափոխումն անվերադարձ էր, և բուժապասարկումն ամենևին էլ ակնկալված ստրատեգիական արդյունքը չունեցավ... Այն հանձնարարվեց գերմանացի բժիշկ դր. Նաբին,⁵⁵¹ որը 1901 թ-ի սեպտեմբերի 26-ին հասնելով Դիարբեքիր՝ ձեռնամուխ եղավ կլինիկայի հիմնմանն ու աշխատանքների մեկնարկմանը:⁵⁵² Չնայած սկիզբն արդյունավետ էր, և, ինչպես տեղեկացնում էր դր. Նաբը, հաստատությունը կարճ ժամանակում կարողացավ մահմեդական շրջաններում մեծ պահանջարկ և համարում ձեռք բերել,⁵⁵³ այնուհանդերձ կառավարությունը

547. Անդ, էջ 179-180:

548. Բերգմանի մահից հետո, մինչև որբանոցի լուծարումը Լեփսիուսի խնդրանքով որբերի խնամքը ժամանակավորապես ստանձնել էր անգլիական հյուպատոսության աշխատակից պաստոր Կ. Մ. Թոմասը: Տե՛ս Thomas K. M., Aus Diarbekir, „Der Christliche Orient“, 1901, էջ 35:

549. Rohrbach P.; Eckart F., Diarbekir, „Der Christliche Orient“, 1901, էջ 52-53:

550. Rohrbach P.; Eckart F., Diarbekir, „Der Christliche Orient“, 1901, էջ 53: Ցավոք, թե փոխադրված և թե Դիարբեքիրում մնացած երեխաների թվաքանակի մասին ճշգրիտ տվյալներ չեն հաղորդվում: Ինչ վերաբերում է վերջիններին, ապա 1903 թ-ի մի տեղեկագրում նշվում է, որ նրանցից շատերը ետ էին վերցվել իրենց հարազատների և ազգականների կողմից, քանի որ վերջիններիս նյութական պայմաններն արդեն հնարավորություն էին ընձեռում նրանց ինքնուրույն խնամել: Տե՛ս Mitteilungen, „Der Christliche Orient“, 1903, էջ 96:

551. Նաբը հետագայում դարձավ Կ. Պոլսի գերմանական հիվանդանոցի գլխավոր բժիշկը: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 38:

552. Künzler J., Zu den Anfängen der Klinik in Diarbekir, „Der Christliche Orient“, 1901, էջ 192:

553. Naab I. P., Aus Diarbekir, „Der Christliche Orient“, 1902, էջ 36:

1902 թ-ին արգելեց կլիմիկայի (նախկինում որբանոցի) շենքն օգտագործել հիվանդների ստացիոնար բուժման նպատակներով, որի հետևանքով աշխատանքի ընթացքը բավականին դանդաղեց, իսկ բժիշկը հարկադրված էր հիվանդներին այցելելու համար ամեն օր մեկնել քաղաք:

1904 թ-ի դեկտեմբերին դր. Նաբին օգնելու նպատակով Դիարբեքի ռուլարկվեց մի բուժաշխատող և՛ Բրունո Բյոթխերը,⁵⁵⁴ որը, սակայն, 1905 թ-ից ստիպված եղավ միայնակ շարունակել բուժսպասարկման գործը, քանի որ դր. Նաբն. իր եղբոր մահվան պատճառով մեկնելով Գերմանիա, այլևս Դիարբեքի չվերադարձավ:⁵⁵⁵ Իսկ երկու տարի անց, 1907 թ-ին, երբ այնտեղ կլիմիկայի պահպանման անհեռանկարայնությունն այլևս կասկած չէր հարուցում, այն հանձնվեց Ուռհայի աշխատակիցների տնօրինությանը:⁵⁵⁶ Այդպիսով Դիարբեքի մասնաճյուղը մեկընդմիջտ դադարեցրեց իր գործունեությունը, իսկ նրա վերջին աշխատակիցը Բ. Բյոթխերը, սկզբում ներգրավվեց Ուռհայի կլիմիկայի անձնակազմում, սակայն կարճ ժամանակ այնտեղ աշխատելուց հետո, դեռ տարին չավարտված, այնտեղից հեռացավ ամենայն հավանականությամբ վերադառնալով Գերմանիա:⁵⁵⁷

Ինչ վերաբերում է Թալասի մասնաճյուղին, ապա, ինչպես արդեն նշվել է, Լեփսիուսը 1896 թ-ին Թալասում (Կեսարիա) հավաքագրել էր 50 որբերի և ժամանակավորապես հանձնել այնտեղ գտնվող ամերիկացի քարոզիչներին: Երեխաները նրանց մոտ հաճախում էին դպրոց և միաժամանակ հմտանում արհեստագործության, մասնավորապես գորգագործության, ատաղձագործության և կոշկակարության բնագավառներում:⁵⁵⁸

Բեռլինի կոմիտեի դրամով և ամերիկացի քարոզիչների ձեռքով խրանավող այդ երեխաներին, սակայն, վիճակված չէր գերմանական որբանոցում մեծանալ: 1898 թ-ի վերջին, երբ կոմիտեն կամենում էր նրանց խնամքը բացառապես իր ուժերով իրականացնել և սեփական որբանոցի հիմնման համար նույնիսկ մի ընդարձակ շենք էր այնտեղ վարձակա-

554. Schäfer R., *Geschichte...*, էջ 50:

555. Անդ, էջ 52:

556. Անդ, էջ 56:

557. Künzler J., *Missionsklinik und Spital in Urfa 1897-1907*, „Der Christliche Orient“, 1908, էջ 35:

558. Wingate H. K., *Aus Kaiserie*, „Der Christliche Orient“, 1897, էջ 575:

լել,⁵⁵⁹ որբերի ամերիկացի խնամակալները հանդես եկան որբանոցն ամբողջովին իրենց փոխանցելու խնդրանքով:⁵⁶⁰ Ըստ այդմ Բեռլինի կոմիտեն, որը միանգամայն զոհ էր նրանց կատարած աշխատանքից, 1899 թ-ի փետրվարին վճռեց այդ մասնաճյուղից հրաժարվել փոխարենն ընդլայնելով իր մյուս որբանոցների երեխաների թվաքանակը: Թալասի գերմանական որբանոցն, այսպիսով, գոյատևեց մինչև 1898 թ-ի վերջը, որից հետո հանձնվեց ամերիկացիների խնամակալությանը:⁵⁶¹

Ինչևէ, Թուրքիայում, Պարսկաստանում և Բուլղարիայում վերոնշյալ մեծածավալ աշխատանքների կատարումը հնարավոր դարձավ Գերմանիայում Լեփսիոսի և իր ընկերության կողմից իրագործվող համակողմանի կազմակերպական և տեղեկատվական գործունեության միջոցով, որի շնորհիվ ապահովվեց գերմանական հասարակական շրջանների աջակցությունն օգնության աշխատանքներին, և որը, սակայն, ինչպես ստորև կպարզաբանվի, գերծ չէր նաև դժվարին փորձություններից:



Պիարբեքիի որբանոցի շենքը



ՊԱՌԼ
ՌՈՅՐԱՆ



ՋԵՅՄՍ
ԳՐԻՆՖԻԼԴ

559. Տե՛ս Kaiserie, անդ, էջ 278: Ծրագրվել էր նաև ամենամոտ ժամկետում գերմանական աշխատուժ ուղարկել Թալաս: Տե՛ս Das deutsche Hilfswerk für Armenien, անդ, էջ 329:

560. Տե՛ս Der gegenwärtige Stand und die Aufgaben unseres Hilfswerkes, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 31:

561. Անդ:



ՄԱՆՅԱ ԲԵՆՁԵԼՄԱՆ
իդ երկու սամեդի հետ



ԱՆՆԱ ԳԱՐՆԱԿԸ (ԿԵՆՏՐՈՆՈՆԸ) ԽՈՅԻ ՈՐԲԱՆՈՑՈՆԸ

ԷՈՆԱՏ
ԼՈՐՄԱՆ



ԱՆԴՐԵԱՍ ՖԻՇԵՐՆ ԻՐ ՏԻԿՆՈՑ՝
ԳԵՐՏՐՈՒԴ ՕՐԻԻ ԻՏԵՆ

**§ 3. ԳՎԱ-Ի ԿՎՉՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԵՎ ՅՐԱԿՊԱՐԱԿԱԿԵՆՈՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ**

1900-ական թվականների սկզբից ԳԱԱ-ի եկամուտները սկսեցին նկատելիորեն նվազել, և արդեն 1900 թ-ի սկզբին ընկերությունն ուներ 30 000, իսկ տարեվերջին 50 000 մարկի ճեղքվածք:⁵⁶² որ շարունակում էր աճել նաև հետագայում՝ 1902 թ-ի վերջին կազմելով 80 000,⁵⁶³ իսկ 1904 թ-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 96 132,75 մարկ:⁵⁶⁴ Այդ իրողությունը թերևս պայմանավորված էր ոչ թե օգնության աշխատանքների նկատմամբ հասարակական շահագրգռությունների նվազմամբ, այլ այն աստվածաբանական բանավեճերով, որ Լեփսիուսն ունեցավ Հանրակցական շարժման ներկայացուցիչների հետ:⁵⁶⁵

Դրանց համար առիթ ծառայեց 1900 թ-ի օգոստոսի 9-13-ը Այգեմախում կայացած 10-րդ քրիստոնեական ուսանողական համաժողովը, որտեղ Լեփսիուսի «Ինչպե՞ս ենք մենք նոր մարդիկ դառնալու» գեկուցումը և մասնավորապես վերծննդի ու մկրտության հարցերին վերաբերող նրա տեսակետները սուր տարածայնություններ հարուցեցին Հանրակցական շարժման ներսում:⁵⁶⁶ Եվ չնայած

562. Schäfer R., Geschichte..., էջ 37:

563. Անդ, էջ 41:

564. St'u Rechnungsbericht der Deutschen Orient-Mission über das Vereins-Jahr 1903, „Der Christliche Orient“, 1904, էջ 19:

565. Օգնության աշխատանքների նյութական միջոցները հիմնականում գոյանում էին Հանրակցական շարժման և Ավետարանական միության աջակցության շնորհիվ: St'u Lepsius R. M., Die Nachkommen..., էջ 121:

566. Schäfer R., Geschichte..., էջ 32: Լեփսիուսն այն գաղափարն էր զարգացնում, որ վերածնունդն այլ բան չէր նշանակում, քան հավատի գալ, մինչդեռ նրա հակաակորդները պնդում էին, որ վերածննդի միջոցով տեղի են ունենում հոգեբանական կարևոր փոփոխություններ: St'u Feigel U., Das evangelische..., էջ 126:

չարժման որոշ անդամներ Լեփսիուսի հայացքների հետ համամիտ էին,⁵⁶⁷ սակայն ստվար մեծամասնության կողմից դրանք սուր քննադատության ենթարկվեցին, որի հետևանքով և նրանց միջև ի հայտ եկավ փոխհարաբերությունների նկատելի խզում:⁵⁶⁸ Որոշ ժամանակ անց Աստվածաշնչի տեքստի վերաբերյալ Լեփսիուսի կատարած նոր քննական հետազոտությունների հետևանքով⁵⁶⁹ այդ ճեղքվածքն այն աստիճան խորացավ, որ Լեփսիուսը 1901 թ-ին համաձայնեց Չանրակցական շարժման միջոցառումներին մասնակցել միայն այն դեպքում, եթե վերջինս վերանայեր իր հայեցակետը վերածննդի հարցի վերաբերյալ,⁵⁷⁰ ինչը, սակայն, տեղի չունեցավ:

Այնուհետև, 1902 թ-ի մայիսի 26-28-ը Լեփսիուսն Այգենախում հիմնեց մի համաժողով, որը պետք է այսպես կոչված՝ «պոզիտիվ» աստվածաբանության հիմքի վրա նպաստեր Չանրակցական շարժման, եկեղեցու և գիտական աստվածաբանության միջև փոխըմունման ամրապնդմանը⁵⁷¹ և միաժամանակ գիտական հակազդում ցուցաբերեր դարասկզբին մեծ տարածում ստացած քննական աստվածաբանության կրոնա-պատմական դպրոցի հանդեպ, որը բանավեճեր էր ստեղծում Քրիստոսի անձի և հարության վերաբերյալ ավետարանիչների կողմից ավանդված տեղե-

567. Schäfer R., Geschichte..., էջ 34:

568. Անդ:

569. Չանրակցական շարժման ներկայացուցիչները և նրանց թվում նաև Ֆրանկ-Ֆուրտի կոմիտեի ղեկավար պաստոր Է. Լոհմանը, նախատեսել էին կատարել Աստվածաշնչի տեքստի վերանայում էլքերֆելդի թարգմանության հիման վրա, որն այդ ժամանակ մեծ համարում ուներ: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 34: Լեփսիուսը, սակայն, ելնելով սեփական հետազոտությունների արդյունքից, իր մտահոգությունն արտահայտեց նախաձեռնության վերաբերյալ՝ այդ թարգմանությունը քննադրելով որպես «դիվետանտ և անորակ» աշխատություն: Տե՛ս Feigel U., Das evangelische..., էջ 126: Նա նախազուշացնում էր, որ նման թարգմանության վրա հիմնված քննությունը կարող էր ծախսողման հանգեցնել: Չեռնարկումը հաջողություն չունեցավ, քանի որ, ինչպես Լեփսիուսն էր նախազուշացնում, այն անտեսում էր պատմական ուսումնասիրությունների արդյունքները: Սակայն այդ առթիվ Լեփսիուսի ունեցած սուր քննադատական ելույթներն էլ ավելի խորացրեցին ճեղքվածքը նրա և հանրակցական շրջանների միջև: Անդ:

570. Տե՛ս „Das Reich Christi“, 1901, էջ 378:

571. Feigel U., Das evangelische..., էջ 126:

կոթյունների վերաբերյալ:⁵⁷² Համաժողովը, որի առաջին նստաշրջանին ներկա էին 398 մասնակիցներ, այնուամենայնիվ, ակնկալվող արդյունքները չտվեց: Նրա մասնակիցների թիվը հետագա տարիներին շարունակ նվազում էր, մինչև որ այն վերջնականապես դադարեց գործել:⁵⁷³

Լեփսիուսի և Հանրակցական շարժման փոխհարաբերությունները վերջնականապես խզվեցին նրա մի հողվածից հետո, որը լույս տեսավ 1903 թ-ին «Das Reich Christi»-ում:⁵⁷⁴ Այնտեղ նա իր մտահոգությունն էր արտահայտում Աստվածաշնչի հանդեպ գերմանացի ժողովրդի հավատի նվազման կապակցությամբ և շարժմանը մեղադրում էր աստվածաբանության հանդեպ անտարբեր լինելու մեջ՝ անուղակիորեն նրան ևս մեղավոր համարելով այդ հարցում:

Լեփսիուսի՝ թե այդ և թե մյուս հրապարակումները կրթոտ քննադատության էին ենթարկվում Հանրակցական շարժման կողմից: Դրանք հատկապես սուր դրսևորվեցին 1903 թ-ի օգոստոսին Բլանկենբուրգում կայացած՝ Ավետարանական միության 18-րդ համաժողովում, որին Լեփսիուսը չէր հրավիրվել:⁵⁷⁵ Նրան բնութագրում էին որպես մի անձնավորության, որն Աստվածաշունչը խեղաթյուրում և մարդկանց «նենգորեն» մոլորեցնում էր:⁵⁷⁶ Նույնիսկ ի հայտ էին գալիս նրան նզովքի ենթարկելու կոչեր:⁵⁷⁷ Եվ չնայած Լեփսիուսը վճռականորեն պաշտպանվում էր՝ հերքելով իր հասցեին ուղղված մեղադրանքները,⁵⁷⁸ սակայն գերակայող մղտայնությունների դեմ պայքարը նրան հաջողություն չբերեց, իսկ Լեփսիուսի նախկին բարեկամներից շատերը դադարեցին աջակցել նրան, բնականաբար նաև նրա հայանվեր աշխատանքներին, ինչն էլ պատճառ դարձավ նշված ֆինանսական ճեղքվածքի առաջացմանը:

572. Schäfer R., Geschichte..., էջ 40: Այդ ըմբռումները և հատկապես Քրիստոսի հարության վիճարկումը, ինչպես նշում էր Շեֆերը, մահմեդական աշխարհում պարարտ հող էր գտնում՝ օգտագործվելով որպես զենք քարոզիչների գործունեության դեմ: Ամր:

573. Feigel U., Das evangelische..., էջ 126:

574. Տե՛ս „Laboremus“, „Das Reich Christi“, 1903, էջ 1-6:

575. Feigel U., Das evangelische..., էջ 127:

576. Տե՛ս „Das Reich Christi“, 1904, էջ 5:

577. Feigel U., Das evangelische..., էջ 127:

578. Lepsius J., Ein menschlicher Tag, „Das Reich Christi“, 1904, էջ 1-36:

Դրա խորացմանը նպաստեցին նաև 1899-1901 թթ. Թուրքիայում և Պարսկաստանում տեղի ունեցած տևական երաշտներն ու համապատասխանաբար կատարվող թանկացումները, որոնց արդյունքում հացահատիկի և առաջին անհրաժեշտության մյուս մթերքների գներն այնտեղ գրեթե եռապատկվեցին, և ըստ այդմ բարձրացան նաև երեխաների տարեկան խնամքի ծախսերը՝ յուրաքանչյուրի համար նախկին 100 մարկի փոխարեն կազմելով 150-180 մարկ:⁵⁷⁹

Ինչևէ, քանի որ ՉԱԱ-ի գործունեության երկրորդ տարում նրա տրամադրության տակ դեռ բավականաչափ միջոցներ կային, լրացուցիչ ներդրումների հաշվին հաջողվեց այդ անցումը հաղթահարել,⁵⁸⁰ ինչը, սակայն, 1900 թ-ին դարձավ խիստ խնդրական: Միակ ելքը նոր նյութական աղբյուրների հայթայթումն էր կամ, այլ կերպ ասած, բարեկամների թվի ընդլայնումը, որ կարող էր իրագործվել բացառապես արդյունավետ քարոզչական գործունեության միջոցով: Ուստի պատահական չէ, որ Լեփսիուսն իր պարբերականում բարեկամներին կոչ էր անում լայն բացատրական աշխատանքներ ծավալել նվիրատուների քանակն ընդլայնելու և ընկերությունը ճգնաժամից դուրս բերելու համար: «Եթե դուք, սիրելի բարեկամներ,- նշում էր նա 1900 թ-ին,- ինչպես ես, ձեր սեփական աչքերով տեսնեիք հազարավոր ընտանիքների երջանկության փլուզումն ու նրանց տառապանքները և այնուհետև անհույս իրադրության անապատի մեջ կարողանայիք մտնել մեր որբանոցների օազիսները, կըմբռնեիք, թե որքան կարևոր է ոչ միայն այդ փոքրիկ օազիսները զրկանքների հարձակումից պաշտպանել, այլև, եթե հնարավոր է, շարունակ նոր հատվածներ կորզել անապատից, օգնել փլուզվածը կառուցելու, ցան ու ցիդ սփռվածը հավաքելու, կորցրածը փրկելու, և կզգայիք նաև, թե մենք որքան ենք ուրախանում ամեն մի փոքրիկ ընձյուղով, որն, ավերչի ոտքի տակ կոխկրտված, կրկին վեր է ձգվում և սկսում է բողբոջներ արձակել»:⁵⁸¹

Աշխատանքների վերաբերյալ լրատվությունն ընդլայնելու նպատակով Լեփսիուսը 1903 թ-ին հիմնեց մի նոր պարբերական ևս, որը կոչվում էր «*Ex Oriente Lux*», և որտեղ հրապարակումների հետ մեկտեղ ներկա-

579. Lepsius J., *An die Pflegeeltern unserer Kinder, „Der Christliche Orient“*, 1900, էջ 59:

580. Անդ:

581. Անդ, էջ 60:

յազվում էր նաև լուսանկարների մեծ ընտրամի:⁵⁸² Բացի այդ, նույն թվականին նա հիմնեց նաև մեկ այլ պատկերազարդ մանկական ամսագիր, որը կոչվում էր «*Der Stern der Weisen*» և նախատեսված լինելով գերմանացի փոքրիկ ընթերցողների համար՝ դարձյալ ընդարձակ տեղեկատվություն էր մատակարարում հայ որբերի, Արևելքի առօրյայի և մասնաճյուղերի աշխատանքի մասին:⁵⁸³

Բարեկամների շրջանն ընդլայնելու համար, Լեփսիուսի համոզմամբ, մեծ կարևորություն ուներ եկեղեցական համայնքների հետ հանդիպումների կազմակերպումը. քանի որ որևէ համայնք զոհաբերություններ չէր կարող կատարել «մի բանի համար, որի մասին ոչինչ չէր լսել»:⁵⁸⁴ Մյուս կողմից, դա կարող էր համայնքներին նախաձեռնողականություն հաղորդել՝ «պասիվ նվիրատուներին» մղելով ակտիվ կազմակերպական գործունեության: «Շատ տարածված սխալ է,-նշում էր նա,- երբ կարծում են, թե միսիոներները և նաև հայրենիքում գտնվող՝ միսիայի ղեկավարները իսկական և սոսկական աշխատողներն են, որոնց համայնքը պետք է ապահովի. աղոթի նրանց գործի համար և տա, տա, տա: Իրականում ճիշտ հակառակն է: Իսկական աշխատողը համայնքն է, իսկ միսիոներները և միսիայի ղեկավարները նրանց ծառայող մարմինները: Ուստի կարևոր է, որ համայնքները տեղեկանան աշխատանքի և կարիքների, անհանգըստությունների և հույսերի, առաջադրանքների և հնարավորությունների մասին: Այդ ժամանակ նրանց կողմից ոչ միայն մեծաքանակ նվիրատվություններ կստացվեն, այլև հոգևոր և նյութական ուժեր, առանց որոնց միսիոներները կլինեն անուժ և անդամալույծ: Ուստի լավ միսիոներական հավաքը սրտի մեծ ուրախություն է»:⁵⁸⁵

Համայնքներում կազմակերպվող հավաքույթներին տեղեկատվական աջակցություն ցուցաբերելու համար ընկերության կողմից պարբերաբար հրատարակվում էին թռուցիկներ և անվճար կերպով առաքվում բոլոր ցանկացողներին:⁵⁸⁶ Բացի այդ, համայնքների ցան-

582. «*Ex Oriente Lux*»-ը հրատարակվեց միայն 1903 թ-ին:

583. Այդ ամսագիրը լույս ընծայվեց մինչև 1908 թ-ը:

584. *Stü Missionsfest und Missionsfeste der Deutschen Orient-Mission*, „*Der Christliche Orient*“, 1906, էջ 121:

585. Անդ, էջ 119:

586. *Stü* այդ մասին, „*Der Christliche Orient*“, 1909, էջ 64:

կության դեպքում ՉԱԱ-ն նրանց տրամադրում էր զեկուցողներ, որոնք ունկնդիրներին ներկայացնում էին Արևելքի իրականությունը, աշխատանքների ընթացքը, հիմնախնդիրները և այլն: Չնայած սովորաբար զեկուցումներն իրականացնում էին որոշակի անձինք, սակայն հարկ եղած դեպքում այդ գործով զբաղվում էին նաև ՉԱԱ-ի մյուս աշխատակիցները, վարչության անդամները և դիպվածաբար Գերմանիայում գտնվող մասնաճյուղերի աշխատակիցները:⁵⁸⁷

Հատկանշական է, որ «*Der Christliche Orient*» պարբերականը, որի տարեկան բաժանորդագինը կազմում էր 1,50 մարկ, կանոնավոր նվիրատվություններ կատարող բարեկամներին առաքվում էր անվճար կերպով: Նվիրատվությունների նվազագույն չափերը կանոնարկելու և միաժամանակ բարեկամների շրջանը որոշակիորեն ընդլայնելու նպատակով ՉԱԱ-ն 1903 թ-ի սկզբից հանդես եկավ նաև անդամակցության առաջարկով, ըստ որի տարվա ընթացքում նվազագույնը 10 մարկ առաքող բարեկամները կարող էին սեփական ցանկությամբ դառնալ ընկերության անդամներ:⁵⁸⁸ Ըստ այդմ, պարբերականը բոլոր անդամներին, ինչպես նաև տարեկան 3 մարկ կամ ավելի վճարումներ կատարող բարեկամներին դարձյալ առաքվում էր անհատույց կերպով:⁵⁸⁹

Այդ միջոցառումների շնորհիվ հաջողվեց որոշակիորեն կրճատել ճեղքվածքը, որը 1905 թ-ի վերջին արդեն կազմում էր 17677,64 մարկ:⁵⁹⁰

587. Sten Verschiedenes, „Der Christliche Orient“, 1903, էջ 192: ՉԱԱ-ն իր պարբերականներում հաճախակի համայնքներին կոչ էր անում կազմակերպել հավաքույթներ՝ պատրաստակամություն հայտնելով նրանց հատկացնել զեկուցողներ: Sten Missionsfest und Missionsfeste der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1906, էջ 121: Հմնտ. Kleine Mitteilungen, անդ, 1909, էջ 95-96: Հմնտ. Kleine Mitteilungen, անդ, 1910, էջ 15-16: Ձեկուցումների պարտականությունը սովորաբար հանձնարարվում էր առանձին՝ վստահելի և հեծտորական ծիրք ունեցող անձանց, որոնք կոչվում էին շրջիկ զեկուցողներ: Նրանցից էր, օրինակ, Ռիխարդ Վեգները, որը մինչ այդ Հենրիկենդորֆում աշխատել էր որպես քարոզչի օգնական: Sten Mitteilung des Vorstandes, „Der Christliche Orient“, 1909, էջ 95: Գերմանիայում մշտապես ՉԱԱ-ի աշխատանքների կարևոր բաղկացուցիչ մասը կազմող շրջիկ զեկուցումները մեծ նշանակություն ունեին ընկերության և քնակամաբար նաև հայ ժողովրդի բարեկամների շրջանն ընդլայնելու հարցում:

588. Sten „Der Christliche Orient“, 1903, գլխաշապիկը:

589. Sten „Der Christliche Orient“, 1904, գլխաշապիկը:

590. Sten Generalversammlung, „Der Christliche Orient“, 1907, էջ 119:

իսկ 1906 թ-ին՝ 20 000 մարկի մի փոխառության միջոցով վերջնականապես փակվեց:⁵⁹¹ Չնայած հետագա տարիներին այլևս մեծ պակասորդներ չէին գոյանում, և զուգահեռաբար հաջողվում էր նաև մարել կազմակերպության պարտքերը,⁵⁹² այնուամենայնիվ ԳԱԱ-ի ֆինանսատնտեսական դրությունը ընդհուպ մինչև 1914 թ-ը շարունակում էր մնալ լարված:⁵⁹³ Այդ տևական անբարենպաստ կացությունը թելադրված էր ոչ միայն արդեն հիշատակված պատճառներով, այլև, ինչպես շուտով կպարզաբանվի, ԳԱԱ-ի ներսում տեղի ունեցող մի շարք իրադարձություններով, որոնք կազմակերպության շահերից չէին բխում և զգալի վնաս հասցրեցին նրա հեղինակությանն ու աշխատանքներին:

1905 թ-ի ապրիլի 11-ին ԳԱԱ-ի գրասենյակը հրատարակչության հետ միասին Բեռլինից տեղափոխվեց Գրոս-Լիխտերֆելդ՝ տեղավորվելով այնտեղ վարձակալված մի շենքում:⁵⁹⁴ Գրեթե զուգահեռաբար մի շարք փոփոխություններ տեղի ունեցան նաև ընկերության անձնակազմում. Է. Ֆոն Գոյբենը, չկարողանալով տեղափոխվել Գրոս-Լիխտերֆելդ, 1906 թ-ի սկզբին հեռացավ ծառայությունից:⁵⁹⁵ Հանրակցական շարժման և այլ աստվածաբանական հոսանքների հետ առաջացած գաղափարական ներհակության թելադրանքով և շարունակ ընդարձակվող աշխատանքի պահանջները բավարարելու նպատակով ԳԱԱ վարչությունը 1904 թ-ի նոյեմբերի 17-ին իր կազմը համալրեց՝ ներգրավելով ևս չորս անձանց՝ աստվածաբանության դր. Կեսլերին

591. Անդ:

592. Եթե 1906 թ-ին ԳԱԱ-ի ընդհանուր պարտքը կազմում էր 165000 մարկ, ապա 1910 թ-ին այն մոտ կիսով չափ կրճատվել էր՝ կազմելով 85000 մարկ: Պարտքի մարումը շարունակվում էր նաև հաջորդ տարիներին: Տե՛ս An die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1910, էջ 158:

593. 1910 թ-ի դրությամբ մասնաճյուղերի ամենամանրաժեշտ կարիքների քակարարման համար կազմակերպությանն օրական անհրաժեշտ էր 5-600 մարկ: Տե՛ս Kleine Mitteilungen, անդ, էջ 15:

594. Schäfer R., Geschichte..., էջ 50: 1904 թ-ին Գրոս-Լիխտերֆելդում վարձակալված շենքում ԳԱԱ-ն հիմնել էր մի ուսումնական հաստատություն ռուս ավետարանական քարոզիչների կրթության և վերապատրաստման նպատակով: Լեւիսիուսը նույնպես արդեն տարիներ ի վեր ապրում էր այնտեղ: Տե՛ս անդ, էջ 49-50: Գրասենյակի տեղափոխումը ամենայն հավանականությամբ պայմանավորված էր նաև այդ հանգամանքով:

595. Անդ, էջ 54: Նրան շնորհվեց ԳԱԱ-ի պատվավոր անդամի կոչում: Անդ:

(գերագույն եկեղեցական վարչության անդամ), պաստոր Տիլիխին (քահանա Բեռլինի Բեթղեհեմի եկեղեցում), պաստոր Բրոնիշին (Գրոս-Լիխտերֆելդի տարածքի հիվանդանոցի քահանա) և պաստոր Մայն-հոֆին (Բեռլինի արևելագիտության ֆակուլտետի դոցենտ):⁵⁹⁶ Ելնելով տնօրենից ծանրաբեռնվածությունը նվազեցնելու անհրաժեշտությունից՝ նշված նիստում վճռվեց նաև պաստոր Մարտին Վիլդեին նշանակել ԳԱԱ-ի տեսուչ՝ օժտելով նաև Լեփսիուսի բացակայության դեպքում նրան փոխարինելու իրավունքով:⁵⁹⁷

Համալրված վարչությունը կարծես թե պետք է կարողանար ավելի արդյունավետ գործել ընկերության առջև ծառայած ֆինանսական հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ, սակայն այդ ոչ միայն տեղի չունեցավ, այլև 1905 թ-ին ԳԱԱ-ի ներսում առաջացավ խիստ լարված մթնոլորտ, որը զգալիորեն վնասեց նաև նրա հեղինակությանը: Գանձապահ Մայնհոֆը, ելնելով ԳԱԱ-ի տնտեսական ծանր վիճակից, առաջադրել էր խնայողության մի կոշտ ծրագիր, որ վերաբերվում էր ինչպես բուն կազմակերպությանը, այնպես էլ մասնաճյուղերին: Նա առաջարկում էր, օրինակ, հրաժարվել որբուհիներին ամուսնացնելիս նրանց օժիտ տալու ավանդույթից, Գերմանիայից երեխաներին առաքվող նվերների համար կատարվող ծախսերը ձևակերպել մասնաճյուղերի հաշվեկշռի վրա, մասնաճյուղերում կատարվող գերածախսերի դեպքում դրսի աշխատակիցներին ենթարկել պատասխանատվության և այլն: Քանի որ, սակայն, Արևելքի իրականությունում աշխատելիս անհնար էր խուսափել գերածախսերից, և նմանապես անընդունելի էին նաև մյուս պահանջները, ծրագիրը մասնաճյուղերում առաջ բերեց ընդհանուր ընդվզում և վրդովմունք, որի պատճառով (Լեփսիուսի ակտիվ միջամտությամբ) վարչությունը 1906 թ-ի փետրվարին այն չեղյալ համարեց:⁵⁹⁸

596. Lepsius J., Erweiterung des Vorstandes der D.O.M., „Der Christliche Orient“, 1904, էջ 179: Մայնհոֆին հանձնարարվեցին զանազապի պարտականությունները: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 50:

597. Տե՛ս Berufung des Missions-Inspektors P. Wilde, „Der Christliche Orient“, 1904, էջ 180: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 50:

598. Schäfer R., Geschichte..., էջ 53:

Առժամանակ անց, երբ Լեփսիուսը 1906 թ-ի մարտի 10-ին Կահիրե մեկնեց այնտեղ կայանալիք՝ քարոզչական ընկերությունների միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով (նա այնտեղից վերադարձավ միայն հուլիսի 14-ին),⁵⁹⁹ նրա բացակայության ընթացքում ԳԱԱ-ում առանց նրա հետ համաձայնեցման ընդունվեցին մի շարք որոշումներ,⁶⁰⁰ և բացի այդ պլանավորվել էր Լեփսիուսին դրդել զբաղվելու միայն աստվածաբանական աշխատանքով, այն է՝ Բեթելի աստվածաբանական դպրոցում ուսուցչի պաշտոն առաջարկելով նրան հեռացնել կազմակերպության ղեկավարման գործից:⁶⁰¹ Իր լրումն այդ ամենի, Լեփսիուսի բացակայության ժամանակ Պարսկաստանի մասնաճյուղերում գոյացած 16 000 մարկի մի պակասորդ ԳԱԱ վարչության կողմից ձևակերպվել էր որպես յուրացում կամ այլ կերպ ասած՝ «ոչ ապացուցելի ծախս», որը կարող էր եապես վտանգել ընկերության հասարակական վարկը: Խնդրի պարզաբանման նպատակով Լեփսիուսի պահանջով հրավիրվեց մի երդվյալ տեսուչ, և քանի որ վերջինիս ստուգումներն ապացուցեցին, որ հիշյալ պնդումն անհիմն էր, նշված ձևակերպումը վերացվեց:⁶⁰²

Այդ ամենի հիման վրա, Լեփսիուսի պնդմամբ, Մայնհոֆը հոկտեմբերին հրաժարական տվեց, և նրա փոխարեն 1907 թ-ի սկզբին վարչության կողմից գանձապահ ընտրվեց Բեռլինի գերմանական բանկի աշխատակից Վիլհելմ ֆոն Դրեսկին:⁶⁰³ Վերջինս մի քանի ամիս անց՝ հունիսի 30-ին, առողջական դրդապատճառներով նույնպես հարկադրված եղավ ծառայությունից հրաժարվել,⁶⁰⁴ և 1907 թ-ի հուլիսի 1-ին կայացած՝ ԳԱԱ-ի գլխավոր ժողովում վճռվեց կազմակերպության տարեկան

599. Նա այդ ճանապարհորդության ընթացքում այցելեց նաև Բուլղարիայի և Ռուսիայի մասնաճյուղերը: Անդ, էջ 54:

600. Օրինակ, Դիարբեքիր էր ուղարկվել մի նոր բժիշկ՝ դո. Պրիթցելը: Մեկ ուրիշը՝ պատուր Ռայնեկեն ուղարկվել էր Խոյ մահմեդականների շրջանում քարոզչություն ծավալելու համար և այլն: Անդ, էջ 54: Գնմտ. Generalversammlung, „Der Christliche Orient“, 1907, էջ 119:

601. Schäfer R., Geschichte..., էջ 54: «Լեփսիուսի բացակայության ընթացքում միսիան իր ճանապարհից շեղվել էր,- նշում էր այդ առթիվ Ռ. Շեֆերը,- և նա ստիպված էր այն կրկին դարձի բերել»: Անդ:

602. Անդ:

603. Sbu Mitteilungen, „Der Christliche Orient“, 1907, էջ 32:

604. Sbu Dresky W. von, An den Vorstand der Deutschen Orient-Mission, անդ, էջ 125:

ֆինանսական հաշվարկների և հաշվեկշռի ստուգումը հանձնարարել երկու հոգուց բաղկացած մի հանձնաժողովի՝ պաստոր Ցելերին և պաստոր Բլայնին:⁶⁰⁵ 1907 թ-ի ապրիլին իր ծառայությունից հրաժարվեց նաև Մ. Վիլդեն, որի փոխարեն ոչ ոք չընտրվեց. և Լեփսիուսը միայնակ ստանձնեց ընկերության ղեկավարման և այդպիսով նաև մասնաճյուղերի գործունեության վերահսկման հանձնառությունը:⁶⁰⁶

Տիաճ միջադեպերն այնուամենայնիվ այդքանով չսպառվեցին: 1908 թ-ին դարձյալ սկսեցին լուրեր պատվել ԳԱԱ-ի գանձարկղում իբրև թե կատարված «յուրացումների» մասին, որոնք հերքելու նպատակով Լեփսիուսը դարձյալ հիմնովին ստուգման ենթարկեց ընկերության 1896-1907 թվականների հաշվեմատյանները:⁶⁰⁷ Չնայած վերստուգիչների կողմից ևս որևէ սխալ և յուրացում չհայտնաբերվեց,⁶⁰⁸ այնուամենայնիվ այդ գրապարտությունները նույնպես զգալի վնաս հասցրեցին կազմակերպության հեղինակությանը:

Լեփսիուսն իր ողջ եռանդը ներդրեց այդ հերյուրանքները հրապարակայնորեն դատապարտելու համար: Հանրությանն ուղղված իր ուղերձներում նա կոչ էր անում պահպանել զգոնություն և բացահայտել նման գրապարտությունների հեղինակներին նրանց դատական պատասխանատվության ենթարկելու համար: «Քանի որ մենք հիմք ունենք վերջին ամիսներին մեր եկամուտների նվազումը կապված տեսնել նշված բանբասանքների տարածման հետ,- նշում էր նա,- խնդրում ենք ԳԱԱ-ի բարեկամներին առավել վճռականաբար ներկայացնել մեր գործունեությունը և իրենց անձնագոհությամբ դարձյալ փոխհատուցել այն վնասը, որ չար գրապարտությունները և թեթևամիտ բանբասանքները հասցրել են մեր գործին»:⁶⁰⁹

Ինչևէ, այդ դժվարին տարիներին Լեփսիուսին վիճակված էր նաև զրկվել այնպիսի բարեկամներից, որոնք անդավաճան նվիրումով կապված էին նրա հետ և դժվարին պահերին սատարում էին նրան: 1907 թ-ի

605. Անդ, էջ 124:

606. St'u Mitteilungen, անդ, 1907, էջ 32:

607. Schäfer R., Geschichte..., էջ 58:

608. ԳԱԱ-ի հաշվեմատյաններում ի հայտ եկավ միայն 1,10 մարկի սխալ, անդ, էջ 58:

609. St'u Mitteilung des Vorstandes an die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1908, էջ 87:

ապրիլի 21-ին 63 տարեկան հասակում վախճանվեց ԳԱԱ-ի երկարամյա նախագահ, Լեփսիուսի հավատարիմ զինակից Ա. ֆոն Բեռնշտորֆը:⁶¹⁰ Նրա փոխարեն ընկերության նոր նախագահ ընտրվեց կառավարության գաղտնի ավագ խորհրդական ֆոն Վրոխենը, որը 1908 թ-ի հունվարի 1-ից անցավ իր պարտականությունների կատարմանը:⁶¹¹

1908 թ-ի մայիսի 15-ին հայտնի աստվածաբան և հումանիստ, աստվածաբանության դր. պաստոր ֆոն Բոդելշվինգն ընտրվեց կազմակերպության պատվավոր անդամ:⁶¹² Եկեղեցական շրջաններում մեծ հեղինակություն վայելող այդ անձնավորությունը նախկինում ևս հաճախ էր իր աջակցությունը ցուցաբերել հայ որբերի համար կազմակերպվող հանգանակություններին: Նա Լեփսիուսի հետ ուներ ջերմ փոխհարաբերություններ և մշտապես խրախուսում էր նրա և ԳԱԱ-ի հայանվեր գործունեությունը:⁶¹³ Ցավոք, սակայն, նրան նույնպես վիճակված չէր երկար ապրել, և 1910 թ-ի գարնանը նա վախճանվեց՝ «մահվան մահճից վերջին անգամ իր սրտաբուխ մաղթանքները, սերն ու վստահությունը»՝ հղելով ԳԱԱ-ին:⁶¹⁴

Փոքր-ինչ ավելի վաղ, 1909 ապրիլի 25-ին վախճանվեց նաև ԳԱԱ-ի հիմնադիր անդամ Ֆ. Ցելերը: Ի դեմս նրա Լեփսիուսը կորցրեց ոչ միայն իր սիրելի ազգականին, այլև հավատարիմ ընկերոջը, զինակ-

610. «Թե ես անձամբ որքան եմ պարտական իշխան Բեռնշտորֆին,- նշում էր Լեփսիուսն իր սրտառուչ մահախոսականում,- կարող է միայն նա ըմբռնել, ով գիտակցում է այն բազում դժվարությունները, բացահայտ ու գաղտնի թշնամության չափը, որի հետ մեր աշխատանքն այստեղ և դրսում պետք է պայքարեր... Քանի որ աստվածաբանական-գաղափարական ընդդիմության պատճառով քչերը չէ, որոնք եթե նախկինում մեր գործին աջակցում էին և մեր աշխատանքի քարեկաններն էին, դարձան թռչ-ճամիներ: Ինչպես մենք մեր կյանքում լավագույնը մեր համոզմունքների համար մղդ-վող պայքարին ենք պարտական, այդպես և մարդկանց ազնվագույն հատկանիշները բացահայտվում են հենց նման պայքարում: Հավատարմությունը, որն իշխան Բեռնշտորֆն այդ թուր տարիներին իմ և իմ գործի հանդեպ ցուցաբերել է, կմնա իմ կյանքի ամենաբանկազին մասունքներից մեկը»: Stbu Lepsius J., Graf Andreas von Bernstorff, „Der Christliche Orient“, 1907, էջ 65-66:

611. Schäfer R., Geschichte..., էջ 57: Հմմտ. Den Mitgliedern und Freunden, „Der Christliche Orient“, 1908, էջ 37:

612. Schäfer R., Geschichte..., էջ 58:

613. Stbu Lepsius J., Vater Bodelschwingh, „Der Christliche Orient“, 1910, էջ 70-71:

614. Stbu Die Hauptversammlung, անդ, էջ 66:

ցին ու խորհրդատուին, որը Չայաստանի օգնության աշխատանքների սկզբնավորումից և ԳԱԱ-ի հիմնադրումից հետո միշտ եղել էր ընկերության վարչության անդամ և անձնվիրաբար ծառայել նրա մեծ գործին:⁶¹⁵ Նա իր այդ հավատարիմ բարեկամների կորուստը շուտով էլ ավելի ցավազին կերպով պետք է զգար, քանի որ կազմակերպության ներսում, որն, ի դեպ, 1908 թ-ի մարտի 20-ին իր նստավայրը Գրոս-Լիխտերֆելդից տեղափոխել էր Պոտսդամ,⁶¹⁶ փոխհարաբերությունները վերստին սրվեցին:

Նոր հակասությունների հիմքը դրվեց Ֆ. Ցելերի մահից կարճ ժամանակ անց, 1909 թ-ի մայիսի 3-ին, երբ վարչության անդամ պաստոր Քլայնը, որը մինչև այդ զբաղվում էր Ռուսաստանում քարոզչության կազմակերպման հարցերով, ընտրվեց ԳԱԱ-ի երկրորդ տնօրեն, իսկ հուլիսից դարձավ նաև «*Der Christliche Orient*» պարբերականի համահրատարակիչ՝ միաժամանակ ստանձնելով գանձապահի պաշտոնը և պրոպագանդայի ու շրջիկ զեկուցումների կազմակերպման պարտականությունները:⁶¹⁷

615. «Նա մանկուց ծանոթ էր Արևելքին,- նշում էր Լեփսիուսն իր մահախոսականում: -Այնպես որ նրա պարզ և հստակ դատողությունները Արևելքում մեր գործի համար մշտապես մեծ արժեք ունեին: Ավելի քան որպես աշխատակից, նա ինձ համար ընկեր և եղբայր էր, ոչ պակաս նաև այն ժամանակներում, երբ մյուսները մեզ լքում էին և դավաճանում մեր գործին:... Նրա անունը միշտ կապված կմնա ԳԱԱ-ի հետ»: Տե՛ս Lepsius J., Friedrich Zeller, „Der Christliche Orient“, 1909, էջ 79:

616. Տե՛ս Den Mitgliedern und Freunden, „Der Christliche Orient“, 1908, էջ 37: Ընկերության հետ այնտեղ մշտական բնակության մեկնեց նաև Լեփսիուսը: ԳԱԱ-ի վարչությունն այդ ժամանակ բաղկացած էր հետևյալ անձանցից. դր. Լեփսիուս (տնօրեն), քահանա Տիլիխ (նախագահի տեղակալ), Պ. Ֆլայշման, սուպերինտենդենտ Յենդլեր, դր. Իրմեր, պաստոր Քլայն, օր. Ա. ֆոն Մյուլլեր, պաստոր ֆոն Օյրոցեն, դր. Ռոիրբախ, զինվորական ավագ քահանա Շտրաուս, պաստոր Ցելեր: Կազմակերպության նոր հանգրվանը, որ հասցեն էր՝ Große Weinmeisterstraße 50, դարձավ ըստ էության ամենահաստատունն ու վերջինը: Իր բազմադյան ընտանիքի հետ վերջնականապես Պոտսդամում հաստատվեց նաև Լեփսիուսը, որի առանձնատունը գտնվում էր գրասենյակից ոչ հեռու՝ Große Weinmeisterstraße 45 հասցեում: Անը: Ղմտ. Deutschland, Armenien und die Türkei, 1895-1925. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv, München, 1998, էջ XIII:

617. Lepsius J., Der Grüne Tisch, Potsdam, 1920, էջ 81: Ինչպես Շեֆերն է վկայում, Այդ տեղի ունեցավ առաջին տնօրենի՝ Լեփսիուսի ծանրաբեռնվածությունը քեթևացնելու և նրան նաև գիտական աշխատանքով զբաղվելու հնարավորություն ընձեռելու նպատակով: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 59:

Լեփսիուսի և Քլայնի փոխհարաբերությունները, սակայն, շուտով կտրուկ կերպով սրվեցին, քանի որ վերջինս ակնհայտորեն ձգտում էր սեփականել նաև առաջին տնօրենի լիազորություններն ու պաշտոնը՝ այդ նպատակով փորձելով իր կողմը գրավել կազմակերպության մյուս անդամներին ևս: Բանը հասավ նրան, որ Քլայնի դրոշմամբ նախագահը 1910 թ-ի հունվարի 11-ին գումարեց վարչության մի միստ. որին Լեփսիուսը չէր հրավիրվել,⁶¹⁸ իսկ հաջորդ օրը՝ հունվարի 12-ին, նախագահի մոտ Քլայնի և վարչության երեք այլ անդամների մասնակցությամբ դարձյալ տեղի ունեցավ մի հավաքույթ, որտեղ Լեփսիուսին առաջարկվեց դիմում ներկայացնել, որ Քլայնն այդուհետ միայնակ դառնա տնօրեն, իսկ իրեն՝ Լեփսիուսին առաջարկվում էր զբաղվել սոսկ աստվածաբանական խնդիրներով:⁶¹⁹

Լեփսիուսն, իհարկե, Քլայնի և նրա կողմնակիցների պահանջը մերժեց՝ իր հերթին պահանջելով վերականգնել կազմակերպության ղեկավարության կանոնադրական գործունեությունը, համապատասխան գընահատական տալ երկրորդ տնօրենի հակականոնադրական վարքագծին, իսկ գանձապահի պարտականությունները հանձնարարել մեկ ուրիշ անձնավորության: Չնայած նրա պահանջը վարչության կողմից ընդունվեց, այնուամենայնիվ դա չնպաստեց լարվածության թուլացմանը, և Քլայնը, որ վարչությունում որոշակի ազդեցություն ուներ, չէր պատրաստվում իր դիրքերը զիջել: Ի վերջո հակամարտության հանգուցալուծման համար առիթ ծառայեց մեկ ուրիշ իրադարձություն:

Ավետարանյանը և նրա կողմից հավատափոխված երկու թուրք մոլլաները՝ Ահմեդ Քեշաֆը և Մուհամեդը, 1909 թ-ի ամռանը մոլեռանդ մահմեդականների հետապնդումներից խուսափելով, Բուլղարիայից հարկադրաբար վերադարձան Գերմանիա:⁶²⁰ Նպատակահարմար գտնելով նրանց հետագա գործունեությունն առժամանակ կազմա-

618. Lepsius J., Der Grüne Tisch..., էջ 83:

619. Եթե Լեփսիուսը հրաժարվեր դիմում ներկայացնել, ապա, ըստ Քլայնի, դա պետք է պահանջեր վարչությունը: Իսկ եթե Լեփսիուսն այն դարձյալ մերժեր, ապա հավաքույթի մասնակիցները սպառնում էին վարչությունից դուրս գալ: Անդ, էջ 83:

620. Բուլղարիայում նրանց կատարած հրապարակումները նրանց դեմ զրգռել էին ֆանատիկ մահմեդականներին, որոնք նրանց սպանելու որոշում էին կայացրել: St'u Schäfer R., Geschichte..., էջ 64:

կերպել Գերմանիայում ԳԱԱ վարչությունը 1909 թ-ի հունիսի 15-ի նիստում որոշում էր կայացրել մահմեդական շրջաններում գործող քարոզիչների պատրաստման նպատակով Պոտսդամում ստեղծել մի գիտաուսումնական կենտրոն և նշված՝ նախկին մահմեդականների ներգրավել այդ հաստատության աշխատանքներում:⁶²¹

Շուտով, սակայն, պարզ դարձավ, որ կենտրոնի գործունեության, ինչպես և առհասարակ մահմեդական շրջաններում քարոզչության զարգացման հարցում Լեփսիուսի և Քլայնի դիրքորոշումները միանգամայն տարբեր էին:⁶²² Ինչն առանձնապես ցայտուն դրսևորվեց 1910 թ-ի հունվարի 12-ի ժողովում, որտեղ Քլայնի կողմից Ավետարանյանի ու նրա երկու ընկերների հասցեին թույլ տրվեցին նաև «կոշտ և վիրավորիչ» արտահայտություններ:⁶²³ Քանի որ դա վարչության անդամների մեծամասնության կողմից հակազդում չստացավ, Ավետարանյանը մարտի 4-ին հայտարարեց ընկերությունից իր դուրս գալու մասին:⁶²⁴ Իսկ հաջորդ օրը՝ մարտի 5-ին, հրաժարական տվեց նաև Լեփսիուսը, որն ի դեմս Ավետարանյանի այդ քայլի տեսնում էր մահմեդականների ավետարանականացման իր երկարամյա ծրագրերի տապալումը:⁶²⁵

Մի քանի օր անց, մարտի 11-ին նախագահի բնակարանում կազմակերպված ժողովում (որին Լեփսիուսը դարձյալ հրավիրված չէր) երկրորդ տնօրենը հրապարակեց կազմակերպությունն առանց Լեփսիուսի ղեկավարելու՝ իր ցանկությունը: Ժողովի մասնակիցներից շատերը, սակայն, դա անընդունելի համարելով՝ որոշեցին նույնպես հրաժարական տալ և այդպիսով Լեփսիուսին նոր վարչություն ձևավորելու հնարավորություն ընձեռել:⁶²⁶ Ի վերջո, նպատակահարմար գտնվեց հակասությունների ա-

621. Անդ, էջ 65: Նախատեսված էր կենտրոն հրավիրել երիտասարդ աստվածաբանների և բանասերների և նրանց հաղորդել գիտելիքներ արևելյան լեզուների ու մահմեդական կրոնի առանձնահատկությունների վերաբերյալ: Տե՛ս An die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1910, էջ 157-158:

622. Կենտրոնի բացումը տեղի ունեցավ նոյեմբերի 15-ին: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 64:

623. Lepsius J., Der grüne Tisch..., էջ 84:

624. Տե՛ս Vorstand der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1910, էջ 65:

625. Անդ:

626. Lepsius J., Der Grüne Tisch..., էջ 84:

մենատեսանելի շարժառիթը՝ մահմեդական շրջաններում քարոզչական գործունեության ընդլայնման խնդիրը լուծել կազմակերպության ընդհանուր ժողովում քվեարկության միջոցով: Քվեարկությունը, որ տեղի ունեցավ ապրիլի 8-ին, 11-10 ձայների հարաբերությամբ ավարտվեց հօգուտ Քլայնի և իր կողմնակիցների: Սակայն այնտեղ տեղ էին գտել կեղծիքներ, և քանի որ Լեփսիուսին հաջողվեց դրանք բացահայտել, արդյունքները ճանաչվեցին անվավեր:⁶²⁷

Նոր քվեարկություն այնուամենայնիվ տեղի չունեցավ: Դրա փոխարեն խնդրի կարգավորմամբ զբաղվելու համար ստեղծվեց երկու կողմերի և բարեկամ շրջանների վստահված անձանցից բաղկացած մի հաշտարար հանձնաժողով, որն ուսումնասիրելով տեղի ունեցած իրադարձությունները պահանջեց, որ Քլայնը հրաժարական տա, և մայիսի 24-ին կազմակերպության ղեկավարումը դարձյալ հանձնեց Լեփսիուսին:⁶²⁸ Քլայնի փոխարեն Լեփսիուսի հետ պարբերականի համահրատարակիչ դարձավ Ավետարանյանը, իսկ անսաթերթը վերանվանվեց «*Der Christliche Orient und die Mohammedaner - Mission*»:⁶²⁹ Այնուհետև կատարվեց նաև վարչության անդամների նոր ընտրություն,⁶³⁰ իսկ մայիսի 29-ին Լեփսիուսն ընտրվեց ԳԱԱ-ի առաջին նախագահ՝ հաջորդափոխելով 1908 թ-ի ապրիլից այդ պաշտոնում գտնվող ֆոն Վրոխսենին:⁶³¹ Երկրորդ նախագահ

627. Մասնավորապես, Քլայնին կողմ էին քվեարկել նաև երկու անձանոթներ, որոնք ձայնի իրավունք չունեին: Բացի այդ, Քլայնը իր հետ բերել էր նաև հինգ հոգու, որոնք ընդհանուր ժողովի բացումից մի փոքր առաջ մուծելով տարեկան անդամավճարը՝ պաշտոնապես դարձան կազմակերպության անդամներ քվեարկությանը մասնակցելու իրավունք ձեռք բերելու համար: Անդ, էջ 85-86:

628. Հանձնաժողովում ընդգրկվել էին պաստոր դր. Յուլիուս Ռիխտերը, քահանա Ռյոդենբերը, Յոհ. Լեփսիուսը, Քլայնը, դր. ֆոն Ռոհլենը, վաճառական Հեննինգսը, Նեիրինգը, դր. Ռյոմերը, Ա. Վ. Շրայբերը և Թրիտելվիցը: Տե՛ս Mitteilungen, „Der Christliche Orient“, 1910, էջ 106:

629. Երբ Ավետարանյանը 1911 թ-ին քարոզչական գործունեությամբ զբաղվելու համար դարձյալ վերադարձավ Բուլղարիա, Լեփսիուսը դարձավ պարբերականի միակ հրատարակիչը: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 72:

630. Lepsius J., Der Grüne Tisch..., էջ 87:

631. Schäfer R., Geschichte..., էջ 66: Տնօրենի՝ խիստ աշխատատար պարտականություններից Լեփսիուսի հրաժարումը հիմնականում պայմանավորված էր Պոտսդամի գիտաուսումնական կենտրոնի գործունեության կազմակերպման համար բավականաչափ ժամանակ հայթայթելու անհրաժեշտությամբ: Տե՛ս An die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1910, էջ 158:

նշանակվեց Ռյոդենբերքը, իսկ տնօրենի պաշտոնը հանձնաժողովի առաջարկով հոկտեմբերի 1-ից ստանձնեց մինչ այդ Գյոսների միսիոներական ընկերության աշխատակից քահանա դր. Ռյոմերը, որն այն վարեց մինչև 1913 թ-ի հունվարի 1-ը և այնուհետև, պահպանելով իր անդամակցությունը ԳԱԱ-ի հոգաբարձությանը, դարձյալ անցավ քահանայական գործունեությանը:⁶³²

Եզմաժամի հետևանքով փաստորեն պարզ դարձավ, որ կազմակերպության կանոնադրությունը չէր ապահովում կառավարման համակարգի անվտանգությունը, ուստի Լեփսիուսի առաջարկով ԳԱԱ-ի՝ 1910 թ-ի հոկտեմբերի 31-ի գլխավոր ժողովում այն ենթարկվեց որոշակի փոփոխությունների:⁶³³ Մասնավորապես ձևավորվեց հոգաբարձություն, որն իր գործունեությունը սկսեց հետևյալ կազմով. դր. Յոհ. Լեփսիուս (առաջին նախագահ), սուպերինտենդանտ Վալտեր Ռյոդենբերք (երկրորդ նախագահ), դր. Ռյոմեր (տնօրեն), Յեննինգս (գանձապահ), պրոֆ. դր. Անդրեաս, պաստոր Ավետարանյան, ճարտարապետ Յանս Բեռնոուլի, դր. Ադոլֆ Դայսման, դր. Յոլֆելդտ, պրոֆ. դր. Էդվարդ Լեհման, կոնսիստորիալ ասեսոր Նեիրինգ, դր. Պաուլ Ռոիրբախ, հրատարակիչ Սարաֆին և պաստոր Վինկլեր:⁶³⁴ Իսկ 1912 թ-ին ստեղծվեց նաև առանձին կառավարման հանձնաժողով, որի կազմում երկու նախագահներից՝ Լեփսիուսից և Ռյոդենբերքից բացի մտնում էին նաև տնօրենն ու գանձապահը:⁶³⁵ 1913 թ-ի հունվարի սկզբին, երբ դր. Ռյոմերը տնօրենի պաշտոնից հրաժարվեց, կազմակերպության ծախսերը կրճատելու նպատակով որոշվեց նաև աշխատանքներն այնպես բաշխել, որ տնօրենի պարտականությունները կատարվեն որպես զուգահեռ աշխատանք: Դրանք հանձնարարվեցին երկ-

632. Schäfer R., Geschichte..., էջ 67:

633. Անդ, էջ 66:

634. Տես An die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1910, էջ 157: Հմնտ. Schäfer R., Geschichte..., էջ 70: Մինչև 1914 թ-ը հոգաբարձությունը աշխատում էր գրեթե նույն կազմով: Բացառություն էին կազմում միայն Յանս Բեռնոուլին և գանձապահ Յեննինգսը, որոնք 1913 թ-ին հեռացան: Վերջինիս փոխարինեց Վալտեր Լյուրսենը: Տես Das Kuratorium der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1913, էջ 20:

635. Schäfer R., Geschichte..., էջ 77: Հանձնաժողովն իրականացնում էր մասնավորապես գործարքների ղեկավարումը: Տես An die Freunde der Deutschen Orient-Mission, „Der Christliche Orient“, 1910, էջ 157:

րորդ նախագահ Ռյոդենբերգին:⁶³⁶

Ինչևէ. մենք փորձեցինք այս ճգնաժամային շրջանի իրադարձությունները փոքր-ինչ մանրամասն ներկայացնել, որպեսզի պարզ դառնա, թե կազմակերպության ներսում ինչպիսի մեծ խոչընդոտներ պետք է հաղթահարվեին բնականոն աշխատանքային առօրյան վերականգնելու համար: Չնայած հակամարտության վերջին զարգացումների համար շարժառիթ ծառայեց իսլամական շրջաններում քարոզչության զարգացման խնդիրը, և իրականում այնպես էր ստացվել, որ Լեփսիուսի հակառակորդներն այն մերժելով՝ ապրիլի 8-ին քվեարկում էին միայն Չայաստանի օգնության աշխատանքներով զբաղվելու օգտին, սակայն այդ հիմքեր չի ընձեռում Քլայնին և նրա կողմնակիցներին համարել հայանվեր գործունեության ավելի արմատական կողմնակիցներ, քանի որ հակամարտության միակ դրոպապատճառը քվեարկության դրված խնդիրը չէր: Այն ավելի վաղ էր հասունացել, քան երևան եկավ, և բացի այդ Քլայնի պայքարը զուտ գաղափարական դրդումներ չուներ, որովհետև զերծ չէր շահարկումներից ու կեղծումներից: Մյուս կողմից, չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ մահմեդական շրջաններում քարոզչության ակտիվացման՝ Լեփսիուսի ծրագրերը միայն կրոնական և աստվածաբանական դրդումներ չունեին... Նա մահմեդականների ավետարանականացումը համարում էր նաև նրանց մեջ ապրող քրիստոնյաների հալածանքների դադարեցման և կյանքի ու ունեցվածքի ապահովման կարևորագույն գրավականներից մեկը: «Չայաստանի օգնության աշխատանքների ընթացքում ձեռք բերված փորձառությունն ամրապնդեց մեր համոզմունքը, որ Արևելքի քրիստոնյա ժողովուրդների ներքին և արտաքին կարիքները չեն կարող վերացվել առանց մահմեդական կրոնը, ատելության և հալածանքների, ֆանատիզմի արմատները վերացնելու, - նշում էր այդ առթիվ Լեփսիուսը: - Մահմեդական շրջաններում մեր քարոզչական աշխատանքը, որ հիմնվում է պ. Ավետարանյանի տասնամյա գործունեության վրա, մահմեդական սեմինարի հիմնադրմամբ ձեռք բերեց շատ ավելի ընդգրկում նշանակություն... Եկել է իսլամի հիմքերը սասանելու և իսլամի ժողովուրդներին ավետարանը տանելու ժամանակը»:⁶³⁷

636. Sb'u Mitteilung, „Der Christliche Orient“, 1912, tք 200:

637. Lepsius J., Mitteilungen, „Der Christliche Orient“, 1910, tք 66-67:

ԳԱԱ-ի պատմության մեջ այդ աննախադեպ ծանր իրադրության առաջացման համար, անշուշտ, կային այլ նախադրյալներ ևս, զորօրինակ, կազմակերպության որոշ ազդեցիկ այրերի մահը (որոնք Լեփսիուսի հավատարիմ բարեկամներն էին), ստեղծված իրավիճակի հանդեպ նախագահի և վարչության մի շարք անդամների սկզբունքային դիրքորոշման բացակայությունը և այլն: Չնայած այն ի վերջո ստացավ իր ճշմարիտ և արդարացի լուծումը, սակայն զգալի վնաս հասցրեց կազմակերպության հեղինակությանը⁶³⁸ պատճառ դառնալով նաև օգնության աշխատանքների համար կատարվող նվիրատվությունների նվազմանը:

Չարկ է նաև նշել, որ չնայած ճգնաժամին հաջորդող վերադասավարումները հնարավորություն էին ընձեռում անարգել զբաղվել վերոնշյալ կենտրոնի աշխատանքներով, բայց այդ հարցում էական հաջողություններ չգրանցվեցին: Կենտրոնի այցելուների թիվը խիստ փոքր էր, որի պատճառով 1910 թ-ին, դեռ երկրորդ ուսումնական կիսամյակը չլրացած այն փակվեց:⁶³⁹ Մահմեդական շրջաններում քարոզչության կազմակերպման ուղորտում համագործակցելու՝ 16 000 պաստորների ուղղված ԳԱԱ-ի կողմ նույնպես էական արդյունքներ չտվեց:

Ինչ վերաբերում էր օգնության աշխատանքներին, ապա, ինչպես արդեն պարզաբանվել է, մեծ լարման և ջանքերի համակենտրոնացման շնորհիվ հաջողվեց դրանք անխափան կերպով շարունակել: Ստորև ներկայացնում ենք գերմանական մարկով հաշվարկված ԳԱԱ-ի եկամուտների և ծախսերի հիմնական վիճակագրական տվյալները մինչև 1914 թ-ը:⁶⁴⁰

638. Այդ հարցում մեծ դեր խաղաց նաև այն, որ ընդհանուր ժողովից կարճ ժամանակ առաջ Քլայնը մի շարք զանգվածային լրատվամիջոցներում հրապարակել էր վարչության անդամների հրաժարականի փաստը՝ այն մեկնաբանելով որպես առաջին տնօրենի դեմ ուղղված գործողություն: Քլայնի այդ քայլը հակասում էր նաև կազմակերպությունում ստեղծված ճգնաժամը հասարակությունից ըստ հնարավորին գաղտնի պահելու՝ մարտի 11-ի ժողովում ընդունված համաձայնությանը: Տե՛ս Lepsius J., Der Grüne Tisch..., էջ 84-85:

639. Schäfer R., Geschichte..., էջ 71: Ավետարանյանն այնուհետև վերադարձավ Բուլղարիա այնտեղ քարոզչական գործունեությամբ զբաղվելու համար: Անդ:

640. Տե՛ս „Der Christliche Orient“-ի 1897-1914 թթ. տարեգրքերը: 1896-1901 թթ. ինչպես նաև 1905 թ-ի շահույթների և ծախսերի վերաբերյալ այլ վիճակագրական տվյալներ չկան: Ամբողջությամբ բացակայում են նաև 1910 թ-ի վիճակագրական տվյալները: «Կառավարման և պրոպագանդայի ծախսեր» սյունակում մասնավոր-

ՍՈՍԵՆՈՒԹՅԱՆ ՍՈՍՅՆ ՏԱՐԻՆԵՐԸ (1895-1914 թթ.)

Տարի	Մուտք		Ելք							
	Ընդհանուր	Փոխառություններ	Ընդհանուր	Մասնաճյուղեր	Կատարված և պրոպագանդայի ծախսեր	Փոխառությունների կամ պարտքերի փակում	Փոխառությունների սուկուրներ	Սահմանափակ շրջաններում բաժանումներ	Կրթության ծախսեր	Գրքերի և տպագրության ծախսեր
1896	133859,69		122722,21							
1897	305206,97		304431,87							
1898	181213,89		188604,06							
1899	2133514,40		209025,26							
1900	288030,94		288030,94							
1901	186678,15		186678,15							
1902	190606,02	43500	190606,02	130918,88	33420,09	6310	2453,01			
1903	170714,35	30500	170714,34	106089,60	35798,55	15225,25	4177			1323,35
1904	176225,16		176225,16	98608,27	39373,25		3670,78	9454,42		2623,69
1905	144918,50		144918,50							
1906	175342,83	20000	175342,83	95500	30818,30	13177,64	5370,80	3366,39		

Տարի	Մուտք		Ելք							
	Ընդհանուր	Մասնաճյուղերում ստացված եկամուտներ	Ընդհանուր	Մասնաճյուղերին			Կատարված և պրոպագանդային ծախսեր	Ռուս-ուս, Բուլ-ուս և Ան-ուս ընդհանուր ծախսեր	Պարտքերի փոխումները և սուկուրային վճարումներ	Կրթության ծախսեր
				Ուտիա	Խոյ	Ուրփա				
1907	206563,82	24877,89	206563,82	49874,81	12122,76	14533,98	25287,32	24317,26	2410,80	
1908	191204,28	15299,18	191204,28	54957,34	12966,16	11292,82	33441,54	26196,33	20124,07	
1909	186099,81	14445,08	186099,81	46608,77	9615,29	16231,74	37196,36	26342,03	18873,57	
1911	179479,23	18619,85	179479,23	52555,35	9250,69	13302,86	53108,68	17528,67	5214,10	
1912	168200,90	19767,64	168200,90	51900,19	9756,45	13546,98	42367,03	13153,45	5203,45	
1913	157423,67	19688,26	157423,67	49136,51	10257,24	10669,53	35780,56	15556,18	4493,51	

ապես արձանագրված են գրասենյակային աշխատանքների, աշխատավարձերի, վարձակալությունների, բռուցիկների և պարբերականների հրատարակության, շրջիկ զեկուցումների համար կատարված ծախսերը: Այդուսակներում ներայացված չեն գույքային, բռնափոխադրումների, փոստային առաքումների և այլ կողմնակի ծախսերի վիճակագրական տվյալները: Տարեկան հաշվետվություններում ներկայացված 1896-1907 թթ. շահույթների և ծախսերի վիճակագրական տվյալները որոշ չափով տարբերվում են 1908 թ-ին կատարված տեսչական ստուգումների արդյունքներից: Տե՛ս Revisionsbericht, „Der Christliche Orient“, 1908, էջ 88: Մենք, այնուամենայնիվ, ճիշտ համարեցինք հիմք ընդունել աշվետվություններում արձանագրված տվյալները:



ԿԱՐԵՆ ՅԵՊԵՆ իր մի խումբ
ազատագրյալների հետ



ՏԻՎ ԳԵՐՄԱՆԱ - ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

20-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբում Թուրքիայի համար ստեղծվել էր խիստ ծանր իրադրություն: Իտալիայի և Բալկանյան երկրների դեմ պատերազմում Թուրքիայի կրած պարտությունները, Ալբանիայում ու արաբական երկրներում ծայր առած անջատողական շարժումները և վերջապես վերստին մեծ պետությունների քաղաքական օրակարգում հայտնված Հայկական հարցը⁶⁴¹ սպառնում էին այդ երկիրը հասցնել

641. Ազգային ազատագրական շարժումների այդ թոհ ու քոհում վերստին օրակարգ մտավ նաև հայկական բարեփոխումների հարցը, որոնք 1878 թ-ի Բեռլինի պայմանագրից հետո շարունակ խոտազվել և մնացել էին անկատար, և որոնց իրագործման հարցում հայերից զատ զգալի շահագրգռվածություն էին դրսևորում նաև եռյակ համաձայնության պետությունները (առաջին հերթին Ռուսաստանը): Ռուսական դիվանագիտության խրախուսանքով Գևորգ V. կաթողիկոսը 1912 թ-ի հոկտեմբերի 2-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ցարական կառավարությանը՝ խրնդրելով միջամտել և աջակցել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը վերստին արծարծելու համար: Միաժամանակ նա 1912 թ-ի նոյեմբերի 10-ին հատուկ կոնդակով Պողոս Նուբար փաշային լիազորեց պաշտպանելու հայկական դատը եվրոպական պետությունների մոտ, իսկ 1913 թ-ի հունվարի 14-ին նրան աջակցություն ցուցաբերելու համար կազմվեց և նրա տրամադրության տակ դրվեց նաև մի հայկական կոմիտե: Այդ կոմիտեի հետ համագործակցելու և նրան անհրաժեշտ նյութերը տրամադրելու համար մեկ այլ կոմիտե ստեղծվեց նաև Կ. Պոլսում եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի նախագահությամբ: 1913 թ-ի ապրիլի 25-ին Լոնդոնում տեղի ունեցավ սիյուռքահայ կոմիտեների և արտերկրի հայակողմ կազմակերպությունների ներկայացուցիչների մի հավաքույթ, որին մասնակցում էր նաև Յոհ. Լեխիուսը: Հավաքույթի ընթացքում կազմվեց և այնուհետև տեղություններին ներկայացվեց բարեփոխումների հայկական կողմի ծրագիրը, որի համաձայն հայկական վեց վիլայթները (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Սվաս և Խարբերդ) վերակազմվում էին առանձին նահանգի՝ հանձնվելով Օսմանյան կայսրության հպատակ՝ մի քրիստոնյայի կամ, որ ավելի գերադասելի էր, մի եվրոպացու ղեկավարմանը, որը պետք է նշանակվեր 5 տարի ժամկետով: Տե՛ս Ամառյան Հ., Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.),

լիակատար կազմալուծման, ուստի պատահական չէ, որ Գերմանիայի արտաքին քաղականությունը առաջնորդվում էր մի կողմից իր հին դաշնակցի հետ բարիդրացիական հարաբերությունները շարունակելու, իսկ մյուս կողմից՝ նրա հնարավոր փլուզման դեպքում տարածաշրջանում սեփական տնտեսաքաղաքական և մշակութային ազդեցությունը պահպանելու ձգտումով: Բնականաբար այդ դեպքում նրան անհրաժեշտ կլինեին մեկ ուրիշ դաշնակից, իսկ ավելի լավ, քան հայ ժողովուրդը, այդ դերը ոչ ոք չէր կարող կատարել: Հայկական բարեփոխումների հարցում Գերմանիայի դիրքորոշումը գրեթե նույն կերպ էր մեկնաբանում նաև Մանդելշտամը. «Հայկական հարցի վերաբերյալ Գերմանիայի որդեգրած տակտիկական- մշում էր նա,- իրենից ներկայացնում էր մի տևական հավասարակշռում թուրքերի և հայերի միջև: Մի կողմից Գերմանիան կամենում էր հանդես գալ որպես Թուրքիայի անշահախնդիր բարեկամ..., մյուս կողմից նա նախագգում էր Օսմանյան կայսրության մոտակա փլուզումը և կամենում շահել հայերի համակրանքը»:⁶⁴²

Հետևապես պատահական չէ, որ Գերմանիայում հայերի վերաբերյալ ավանդաբար իշխող տեսակետները 1913 թ-ին ենթարկվում էին արմատական վերափոխման: Գերմանիայի պետական լրատվամիջոցները և պաշտոնական մամուլը կարճ ժամանակում հեղեղվեցին հայ ժողովրդի մասին գովեստներով և գնահատանքներով, և, որ չափազանց ուշագրավ է, այդ գովեստներում չէին թերանում նույնիսկ ավանդաբար թուրքամետ կողմնորոշում ցուցաբերած գործիչները:⁶⁴³

Նոր-Նախիջևան, 1915, էջ 73-74: Հմմտ. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980, էջ 170-171: Բնութագրական է, որ ի թիվս մյուս մեծ պետությունների, բարեփոխումների հարցում որպես շահագրգիռ կողմ հանդես եկավ նաև Գերմանիան, ինչն անշուշտ պատահական չէր: Արտաքին աննպաստ քաղաքական իրադրությունը, Իտալիայի և Բալկանյան երկրների դեմ պատերազմում Թուրքիայի կրած պարտությունները սպառնում էին այդ երկիրը հասցնել լիակատար փլուզման, և Գերմանիան, այդ փաստի հետ հաշվի նստելով, հարկադրված էր խորհել իր տնտեսաքաղաքական ազդեցությունը պահելու այլընտրանքային միջոցների մասին, որոնք, բնականաբար, ուղղակիորեն պետք է առնչվեին հայկական բարեփոխումներին:

642. Անդ, էջ 152:

643 Թուրքամետ դո. էռնստ Յեկն, օրինակ, կոչ էր անում հայերին մերժեցնալ, քանի որ նրանք Արևելքում ունեին խիստ կարևոր տնտեսական նշանակություն: St'u Jäck E., Der aufsteigende Halbmond, Berlin, 1933, էջ 111: Նաև ուրիշները, որոնք մինչ այդ երբևէ հայանպաստ դիրքորոշում չէին ցուցաբերել, հայերին

Այդ ինքնաբուխ չէր և բնականաբար իր դրողունները ստանում էր կառավարության կողմից: Դեռ 1913 թ-ի հունվարին Գերմանիայի ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալ Ցիմերմանը Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին հրահանգում էր, որ գերմանական կառավարությունը հայկական բարեփոխումների վերաբերյալ կայանալիք բանակցությունների ընթացքում չպետք է չեզոք դիրքորոշում գրավեր, այլ ելնելով թուրքիայում իր տնտեսական շահերից՝ պետք է ակտիվորեն մասնակցեր դրանց: Վանգենհայմն իր հերթին հավաստելով, որ թուրքիայի տրոհման դեպքում հայերին մեծ ապագա էր սպասվում՝ առաջարկում էր, որ գերմանական մամուլը հայերի հանդեպ ավելի բարեկամական դիրքորոշում որդեգրեր, քան մինչ այդ կար: «Գերմանական մամուլը,- գրում էր նա 1913 թ-ի փետրվարի 24-ին,- պետք է հրաժարվի հայկական ամեն բանի հանդեպ իր մինչայժմյան հերքողական դիրքորոշումից և չափավոր ու լրջմիտ կեցվածքով իր շահագրգռվածությունը դրսևորի հայերի ցանկությունների հանդեպ»:⁶⁴⁴

Այսպիսով, պաշտոնական Գերմանիան արտահայտում էր նույն գաղափարները, որոնք նախկինում պրոպագանդվում էին հայ ժողովրդի բարեկամների կողմից: Վերջիններս այդ փաստն այնպիսի խանդավառությամբ ընդունեցին, որ, օրինակ, Մ. Ռադեն *«Die Christliche Welt»* պարբերականում առաջարկում էր հավաքել ստորագրություններ և ուղարկել Գերմանիայի կառավարությանը՝ կոչ անելով ըստ հնարավորին ակտիվ հանդես գալ հայերի օգտին:⁶⁴⁵ Հայանպաստ հրապարակումներով էին հանդես հանդես գալիս նաև հայ ժողովրդի մյուս բարեկամները, ինչպես

գովարանում էին որպես Առաջավոր Արևելքի ամենաօժտված, աշխատասեր և մշակութապես զարգացած ժողովուրդը: «Եթե Արևելքն այժմ պետք է բացվի,-նըշվում էր „Die Handelshochschule München“-ում,- ապա եվրոպային այնտեղ անհրաժեշտ կլինի մի մշակութային տարր, որն այդ բացմանը կօժանդակի և իր ուժերը կնվիրաբերի դրան: Այդ մշակութային տարրը հայն է... Հայկական հարցը լուծվելու է ոչ թե թուրքական կառավարության, այլ Բաղդադի երկաթուղու և Փոքր Ասիայում եվրոպական մշակույթի մյուս առաջավոր պոստերի միջոցով»:
St'u Feigel U., Das evangelische..., էջ 152:

644. Die Große Politik der Europäischen Kabinette 1871-1914, Berlin, 1927, Bd. 38, էջ 13:

645. Feigel U., Das evangelische..., էջ 153:

օրինակ էվալդ Շթիրը,⁶⁴⁶ Պաուլ Ռոիրբախը և այլն: Առանձնապես մեծ և երախտաշատ հրապարակախոսական աշխատանք ծավալեց նաև դր. Յոհ. Լեփսիուսը տպագրելով հողվածների մի ամբողջ շարք, որտեղ լուսաբանվում էին Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը, Հայկական հարցի առաջացման և զարգացման պատմությունը, կատարվում էին քաղաքական իրադրության վերլուծություններ և այլն:⁶⁴⁷

Լեփսիուսի համոզմամբ քաղաքական զարգացումների թելադրանքով մոտ ապագայում Արևելքի կարևորագույն խնդիրը դառնալու էր Հայկական հարցը, որի լուծումը բախտորոշ նշանակություն ուներ ողջ Օս-

646. Քահանա է. Շթիրն ի փվս Պ. Ռոիրբախի, Մ. Ռառեի և այլոց 1898 թ-ին եղել է «Անհրաժեշտ օժանդակություն» («Das notwendige Liebeswerk») ընկերության հիմնադիր անդամներից մեկը, որի նպատակն էր աջակցել հայ եկեղեցու բարենորոգմանը, և որի միջոցով բազմաթիվ հայ հոգևորականներ հնարավորություն ստացան ուսանել զերմանական համալսարաններում՝ այնուհետև դառնալով հայ եկեղեցու և մշակույթի անվանի երախտավորներ (Կարապետ Տեր-Մկրտչյան, Երվանդ Տեր-Մինասյան, Գարեգին Հովսեփյան, Արտաշես Աբեղյան և այլք): 1908 թ-ի ապրիլ-մայիս ամիսներին Շթիրն այցելեց Հայաստան՝ հանդիպելով Գերմանիայում ուսանած հայ աստվածաբաններին: «Die Christliche Welt» և այլ պարբերականներում նա հրատարակել է բազմաթիվ հողվածներ, որոնցում կարևորել է Գերմանիայում սովորող հայ ուսանողների ուսման կազմակերպման և նյութական աջակցության խնդիրները, արծարծել է հայ եկեղեցու բարենորոգությանը, Հայաստանի իրադրությանը և հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին առնչվող կարևոր հարցադրումներ, զորօրինակ, «Միթե՞ մեր կայսրը ոչինչ չունի ասելու», („Die Christliche Welt“, 1896), «Անհրաժեշտ օժանդակությունը», („An die Freunde“, 1904), «Հայ եկեղեցու բարենորոգության շարժումը» („Die Christliche Welt“, 1908), «Հայաստանից» („Das notwendige Liebeswerk“, 1909), «Էքմիածնի բարենորոգության հարցը» („Das notwendige Liebeswerk“, 1910), «Պատրիարքարանի ճգնաժամի հաղթահարումը» („Das notwendige Liebeswerk“ 1910), «Հայ եկեղեցու բարենորոգությունը», („Die Christliche Welt“, 1910), «Բարձրացող կիսալուսինը» („Deutsch-Armenische Blätter“, 1911), «Հայերի վիճակը Թուրքիայում», („Deutsch-Armenische Blätter“, 1911) և այլն: ՏնՆ Ղազարյան Խ. Ր., Բարենորոգչական նախածեռնությունները հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, էքմիածին, 1999: Հմտ. Հայկականություն-Վրիակահանություն, Երևան, 2001, էջ 114-115: **647.** ՏնՆ Lespsius J., Die Ursachen des Zusammenbruchs, „Der Christliche Orient“, 1913, էջ 1-6; Lespsius J., Die Zukunft der Türkei, անդ, էջ 37-60 և 73-86; Lespsius J., Briefe aus der Türkei, անդ, էջ 109-115 և 198-211; Lespsius J., Die armenischen Reformen, անդ, էջ 177-181, 214-219 և այլն:

մանյան կայսրության համար:⁶⁴⁸ Վերջինս, նշում էր նա, պետք է ձգտեր ընդունել և իրականացնել հայկական բարեփոխումները, այլապես մերժման դեպքում հարկադրված կլիներ վաղ թե ուշ Հայաստանը զիջել Ռուսաստանին և այդպիսով դատապարտվել ամբողջական մասնատման, քանի որ Հայաստանը հանդիսանում էր թուրքիայի «կմախքը»:⁶⁴⁹ «Այն, որ Ռուսաստանը կարող է թուրքահայաստանը նվաճել և միացնել Ռուսահայաստանին, այնքան հավանական է, որ կարելի է գրեթե զարմանալ, որ դեռ փաստ չի դարձել»,- նշում էր Լեփսիուսը 1913 թ-ին:⁶⁵⁰ Իսկ եթե բարեփոխումներն ընդունվեին, ապա թուրքիան փլուզումից կխուսափեր. և բացի այդ կստեղծվեին հայ ժողովրդի կենսապահովման ու միաժամանակ նաև տարածաշրջանի մշակութային զարգացման բոլոր անհրաժեշտ նախադրյալները:

Այդ առումով արժե հիշատակել, որ Լեփսիուսն աներկբայորեն մերժում էր առկա «կրոնական և ռասայական» փոխհարաբերությունների պայմաններում «իսլամական մշակութային պետության» առաջացման հնարավորությունը թուրքիայում. հարցադրում, որ Գերմանիայի որոշ հասարակական շրջաններում դարձել էր քննարկումների առարկա՝ ստանալով որոշակի հնչեղություն: Հանգամանալից քննության ենթարկելով գեներալ Ֆելդմարշալ բարոն ֆոն դեր Գոլթցի «Թուրքական կայսրության ուժն ու թուլությունը» հոդվածը, որտեղ այդ հարցադրումը խիստ ընդգծում էր, Լեփսիուսը նշում էր, որ արդեն հարյուրամյակներ ի վեր իսլամական մշակույթ գոյություն չունեի, և որ այն պատկանում էր միայն վաղ անցյալին:⁶⁵¹ Եթե թուրքիան կարող էր դառնալ մշակութային երկիր, ապա, նրա համոզմամբ, միայն քրիստոնեական մշակույթի զարգացման միջոցով, և բնականաբար այդ հարցում նույնպես կարևորագույն դերը վիճակված էր հայերին:

Այսպիսով, Լեփսիուսի համոզմամբ ոչ միայն թուրքիայի հետագա «քաղաքական գոյության», այլև նրա՝ «մշակութային պետություն» դառնալու հարցում վճռական դերը պատկանում էր հայ ժողովրդին: Իսկ նրան այդ առաքելությունը կատարելու, հարևանների դարավոր

648. Lepsius J., Die Zukunft der Türkei, անդ, էջ 85:

649. Անդ, էջ 46: Հմմտ. Lepsius J., Die armenischen Reformen, անդ, էջ 219:

650. Lepsius J., Die Zukunft der Türkei, անդ, էջ 77:

651. Անդ, էջ 80:

հալածանքներից ձերբազատելու և խաղաղ ու ստեղծարար գոյություն ապահովելու համար հույժ անհրաժեշտ էր բարեփոխումների շուտափույթ իրականացումն, առանց որոնց ոչ մի օժանդակություն տևական և արժանատի արդյունք չէր կարող տալ: «Ով պայքարում է մի հիվանդության դեմ, չպետք է բավարարվի այստանձանները բուժելով, այլ պետք է հիվանդության օջախը վերացնի,- նշում էր Լեփսիուսն իր «Չայկական բարեփոխումները» հոդվածում:- Մի քաղաք, որտեղ տիֆի համաճարակներ են տիրում, չպետք է մխիթարվի իր լավ հիվանդանոցներով և բարեգործական հաստատություններով, այլ պետք է ձգտի լավ ջուր հայթայթել և այդպիսով վերացնել չարիքի աղբյուրը: Այդ է պատճառը, որ Չայկական հարցի քաղաքական կողմը շատ է հետաքրքրում մեզ, որ սկզբից ի վեր մեր առաջադրանքն ենք դարձրել պայքարել հայկական կարիքների դեմ: Քանի որ չարիքի աղբյուրը կարող է վերացվել միայն քաղաքական բարեփոխումներով, որոնք քրիստոնյա հայերին կշնորհեն նույն իրավունքները, ինչպիսիք ունեն մահմեդականները, և ավագակ քրդերի ու կառավարության անհրաժ պաշտոնյաների դեմ կերաշխավորեն կյանքի և սեփականության ապահովություն»:⁶⁵²

Լեփսիուսն, այնուամենայնիվ, Չայկական բարեփոխումների հարցում եվրոպական մեծ տերությունների ցուցաբերած շահագրգռությունների դրդապատճառն իրատեսորեն համարում էր ոչ թե մշակութային, կրոնական, մարդասիրական կամ բարոյական մղղումներն, այլ ամենից առաջ տնտեսական շահերը: «Այն, որ 100 000 մարդկային կյանքեր Չայաստանում ոչնչացվում են, եվրոպային չի հետաքրքրում,-նշում էր նա իր հրապարակումներից մեկում,- սակայն եվրոպական 100 000 ֆունտ դրամը, որ ներդրված է Չայաստանում, անշուշտ, եվրոպայի կողմից պաշտպանություն կգտնի: Այդ է Չայաստանի հույսը: Որևէ ուրիշը չկա»:⁶⁵³

Ինչևէ, 1913 թ-ի հունիսի սկզբին Լեփսիուսը ձեռնարկեց իր նոր ճանապարհորդությունը դեպի Թուրքիա: Հունիսի 11-ի առավոտյան, երբ նա հասավ Կ. Պոլիս, Թուրքիայի մեծ վեզիր Մահմուդ Շեքերը

652. Lepsius J., Die armenischen Reformen, անդ, էջ 177:

653. Lepsius J., Die Zukunft der Türkel, անդ, էջ 82:

սպանվել էր վարձու մարդասպանների կողմից:⁶⁵⁴ Վերջինս, ի դեպ, ասիական Թուրքիայի համար նախագծել էր բարեփոխումների մի պլան, ըստ որի երկիրը պետք է բաժանվեր վեց հատվածների. որոնցից յուրաքանչ-յուրում պետք է նշանակվեր մի գլխավոր տեսուչ բարեփոխումները կյանքի կոչելու և դրանց իրականացումը, ինչպես և ողջ վարչատարածքային կառավարումը վերահսկելու նպատակով:⁶⁵⁵ Բ. Դուրը. նախատեսելով տեսուչներ հրավիրել Եվրոպայից, այդ նպատակով համապատասխան անձանց ուղարկելու խնդրանքով դիմել էր Անգլիային:⁶⁵⁶ Ռուսաստանը, սակայն, որը դեմ էր այդ նախագծին և անգլիացի տեսուչների հրավիրմանը, մայիսին Կ. Պոլսի եվրոպական երկրների դեսպաններին դրդեց կազմակերպել մի համաժողով բարեփոխումների վերջնական ծրագիր նշակելու և հաստատելու նպատակով: Արդեն համապատասխան նախագծեր էին պատրաստվել նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և ՀՀԴ-ի կողմից: Ինչպես արդեն հիշատակվել է, ամենայն հայոց կաթողիկոսի պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան նույնպես ապրիլի 25-ին Լոնդոնում կայացած հայկական համաժողովում ներկայացրել էր բարեփոխումների մի ամփոփ նախագիծ:

Ռուսաստանն այդ նախագծերի հիման վրա, որոնք հիմնական կետերում միմյանց համապատասխանում էին, կազմեց բարեփոխումների իր ամբողջական ծրագիրը այն ներկայացնելով դեսպանների համաժողովին:⁶⁵⁷ Վերջիններս, սակայն, և մասնավորապես Գերմա-

654. Նրա սպանությունը կազմակերպվել էր կենտրոնախույս ուժերի կողմից, ամենայն հավանականությամբ պետական հեղաշրջման նպատակով, ինչը, սակայն, չհաջողվեց քանի որ բանակը գտնվում էր երիտթուրքերի ձեռքում: Stén Schäfer R., *Geschichte...*, էջ 80:

655. Lepsius J., *Die armenischen Reformen*, „Der Christliche Orient“, 1913, էջ 217: 656. Անդ:

657. Անդ, էջ 217-218: Համաժողովը սկսվեց հուլիսի 3-ին և ավարտվեց սեպտեմբերի 3-ին: Այդ նախագծի համաձայն, որը կազմել էր Կ. Պոլսի ռուսական դեսպանության առաջին թարգման Անդրե Ն. Մանդելշտամը, նախատեսվում էր Թուրքիայի առավել հոծ հայ ազգաբնակչություն ունեցող վեց վիլայեթները (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Սվաս և Խարբերդ), բացառությամբ միատարր մահմեդական բնակչություն ունեցող սահմանային տարածքների, որոնք միայն 1878 թ-ին էին միացվել հայկական վիլայեթներին այնտեղ ապրող հայ բնակչությանը փոքրամասնական դարձնելու նպատակով, վերակազմել մի նահանգի, որը պետք է ղեկավարվեր մեծ տերությունների համաձայնությամբ նշանակված մի նահանգապետի կողմից: Stén Mandelstam A., *Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechts*, Berlin, 1931, էջ 147:

նիան տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության ամրապնդումը թույլ չտալու նպատակով վճռականապես ընդդիմացան ռուսական ծրագրի հիմնադրույթներին՝ առաջարկելով քննարկման համար հիմք ընդունել բարենորոգումների թուրքական ծրագիրը:⁶⁵⁸

Օգոստոսի 1-ին, երբ Լեփսիուսն Ուռհայից վերադարձավ Կ. Պոլիս, բանակցող հիմնական կողմերի՝ գերմանական և ռուսական պատվիրակությունների միջև այն աստիճան սուր հակասություն էր առաջացել, որ բարեփոխումների ծրագիրը կարող էր տապալվել, բայց Լեփսիուսի հետևողական միջամտության շնորհիվ ի վերջո հաջողվեց հասնել փոխադարձ համաձայնության, և օգոստոսի 24-ին, երբ նա Կ. Պոլսից վերադարձավ, բանակցությունները հիմնականում ավարտվել էին:⁶⁵⁹

1914 թ-ի սկզբին Թուրքիան նույնպես ներկայացրեց իր համաձայնությունը բարեփոխումների փաթեթի վերաբերյալ, որը հունվարի 26-ին ստորագրվեց բանակցությունների մասնակից բոլոր երկրների կողմից:⁶⁶⁰ Նախատեսված էր Թուրքիայի հայկական շրջաններում պահել երկու գլխավոր տեսուչներ, որոնցից մեկը՝ հոլանդացի գեներալ Վեստենենկը (նախկինում հոլանդական Յնդկաստանի նահանգապետ) պետք է հաստատվեր Երզրումում, իսկ երկրորդը՝ նորվեգացի Մայոր Յոֆը, Բիթլիսում: Երկուսն էլ իրավասու էին վերահսկել տեղական իշխանությունների գործունեությունը և բարեփոխումների իրականացումը:⁶⁶¹ Բացի այդ նրանց պետք է ենթարկվեին տեղական զինված ուժերը, իսկ համիդեական միավորումները որպես այսպես կոչված «պա-

658. Վանգեհայյան այդ առթիվ Պերմանիայի կանցլերին ուղարկված՝ իր 1913 թ.-ի օգոստոսի 1-ի նամակում նշում էր հետևյալը. «Ռուսաստանը կամենում է Հայաստանի ինքնավարությունը, ռուսական քաղաքականությունը անտարբեր է բարեփոխումների հարցում: Նա Հայաստանի ինքնավարությունը դիտում է որպես մի քալ դեպի Կ. Պոլիս տանող ճանապարհին»: Տե՛ս Feigel U., Das evangelische..., էջ 154:

659. Lepsius J., Die armenischen Reformen, „Der Christliche Orient“, 1913, էջ 218: Բանակցությունների ընթացքում Լեփսիուսի դերը բարձր էր գնահատում նաև Վանգեհայյան ԱԳՆ-ի պետքարտուղար ֆոն Յագոլվին ուղղված իր՝ 1913 թ-ի օգոստոսի 8-ի նամակում: Տե՛ս Die Große Politik der Europäischen Kabinette 1871-1914, Berlin 1927, Bd. 38, էջ 120:

660. Սարուխանյան Ն., Հայկական հարցը մինչսորհրդային հայ հայ հասարակական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997, էջ 130:

661. Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 342-357:

հետաային ուժեր» պետք է լուծարվեին:⁶⁶²

Բարեփոխումների իրականացմամբ առաջանում էին նաև հայ ժողովրդի հետ համագործակցության և մշակութային կապերի զարգացման լայն հեռանկարներ, ուստի պատահական չէ, որ Լեփսիուսը և հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամները ձգտում էին գործուն քայլեր ձեռնարկել հայ-գերմանական փոխհարաբերությունների սերտացման և մշակութային կապերի ամրապնդման ուղղությամբ: Այդ ձգտումները համապատասխանում էին նաև Գերմանիայի արտաքին տնտեսաքաղաքական շահերին, ինչը թույլ էր տալիս ակնկալել լայն հասարակական շրջանների աջակցությունը: «Պետք է հուսալ,- նշվում էր ԳԱԱ-ի պարբերական մամուլի հրապարակումներից մեկում,- որ վատթարագույն խոչընդոտները կվերացվեն, և հայ ժողովրդին հնարավորություն կընձեռվի մշակութապես և տնտեսապես բարգավաճել. շատ ավելի մեծ չափերով, քան մինչև այժմ եղել է: Գերմանիան, որի դիվանագիտական ներկայացուցչությունը մեծ աջակցություն է ցուցաբերել բարեփոխումների ծրագրին, այդ հարցում անմիջականորեն շահագրգռված է: Նա Փոքր Ասիայում կատարած իր մեծ տնտեսական ձեռնարկումներով, որոնք մասամբ տեղի են ունեցել հիմնականում հայաբնակ շրջաններում, մասամբ էլ անմիջականորեն հարում են այդ շրջաններին, հարկադրված է ավելի սերտ հարաբերություններ պահպանել հայերի հետ, որոնք այդ բոլոր տարածքներում տնտեսական և մշակութային կյանքի կրողն են»:⁶⁶³

1914 թ-ի հունիսի 12-ին ԳԱԱ-ի հոգաբարձությունը որոշում ընդունեց Ուոհայում ստեղծել ուսուցիչների պատրաստման մի գերմանահայկական ուսումնական կենտրոն՝ նախատեսելով այդ նպատակի համար տարեկան հատկացնել 25 000 մարկ:⁶⁶⁴ Իսկ ևս մի քանի օր անց Լեփսիուսի նախաձեռնությամբ Բեռլինում ստեղծվեց Գերմանահայկական ընկերությունը, որի հիմնադիր նիստը տեղի ունեցավ հունիսի 16-ին, և որը պետք է հետապնդեր հետևյալ նպատակները. 1) Ստեղ-

662. Տե՛ս այդ մասին Վանգենհայմի նամակը Բեքման-Յոլվեգին. *Die Große Politik der Europäischen Kabinette 1871-1914*, Berlin, 1927, Bd. 38, էջ 160-161:

663. Տե՛ս *Aufruf zur Begründung der „Deutsch-Armenischen Gesellschaft“*, „Der Christliche Orient“, 1914, էջ 101:

664. Schäfer R., *Geschichte...*, էջ 83:

ծել արդարացի, անկողննակալ կարծիք Գերմանիայում հայ ժողովրդի և հայերի մեջ գերմանացի ժողովրդի վերաբերյալ: 2) Ջարգացնել ամբողջական իմացություն համաշխարհային մշակույթում հայ ժողովրդի մատուցած ծառայությունների և հայ մշակույթի զարգացման համար գերմանացի ժողովրդի ցուցաբերած ծգտումների վերաբերյալ: 3) Օժանդակություն ցուցաբերել գերմանացիների և հայերի անձնական կապերի զարգացման հարցում, առանձնապես այն հայերի, որոնք սովորում են Գերմանիայում:⁶⁶⁵

Այդ նպատակների իրագործման համար ընկերությունը նախատեսում էր կատարել հետևյալ աշխատանքները. «1) Հայաստանի իրադրության վերաբերյալ ճշմարիտ տեղեկատվության մատակարարում գերմանական մամուլին: 2) Մի երկլեզվյան ամսագրի լույսընծայում, որը ծանոթություն կտա հայ մշակույթի մասին և գերմանական մշակույթի համար ճանապարհ կհարթի դեպի Հայաստան: 3) Արժեքավոր հայերեն գործերի թարգմանում գերմաներեն, իսկ գերմաներեն գործերը՝ հայերեն: 4) Գերմանիայում հայագիտական գրադարանի հիմնադրում հայոց լեզվի, հայ մշակույթի և պատմության ուսումնասիրության համար: 5) Հայկական դպրոցներում գերմաներեն լեզվի դասավանդման խրախուսում: 6) Գերմանիայում սովորող հայ ուսանողների համար տեղեկատվական կենտրոնի հիմնում և գերմանական ընտանիքների հետ նրանց շփումների ընդլայնում:⁶⁶⁶

Ընկերության հիմնադիր անդամներն էին դր. Լեփսիուսը, պրոֆ. դր. Յ. Մարկվարտը, պրոֆ. դր. Մ. Ռադեն, դր. Պ. Ռոհրբախը, քահանա Է. Շթիրը, դր. Ջ. Գրինֆիլդը, դր. Դարբինյանը, դր. Հայրանյանը, դր. Մուրադյանը և դր. Շահբազյանը:⁶⁶⁷ Առաջին նախագահ ընտրվեց Լեփսիուսը, երկրորդ նախագահ՝ Գրինֆիլդը, իսկ Շթիրը ստանձնեց գործավարի պարտականությունները:⁶⁶⁸ Ընկերությանն անդամակցելու համար հաստատուն անդամավճար նախատեսված չէր, և այդ որոշումը կայացվել էր այն նպատակով, որպեսզի, ինչպես Լեփսիուսն էր նշում, «հայ ժողովրդի

665. Aufruf zur Begründung der „Deutsch-Armenischen Gesellschaft“, „Der Christliche Orient“, 1914, тз 102:

666. Անդ:

667. Անդ:

668. Schäfer R., Geschichte..., тз 84:

հնարավորին չափ շատ բարեկամներ անդամակցեն ընկերությանը և կարողանան իրենց սերն ու համակրանքը ցուցաբերել ժողովուրդների ընտանիքի այդ խորթ երեխայի հանդեպ»:⁶⁶⁹

Ընկերության կողմից հունիսի 16-ին հրապարակվեց համագործակցության մի կոչ, որը Գերմանիայի հասարակական շրջաններում լայն արձագանք գտավ, և բազմաթիվ նոր բարեկամներ, այդ թվում նաև գիտության, արվեստի և մշակույթի ակնառու գործիչներ պատրաստակամությամբ հայտնեցին զորավիզ լինել կազմակերպության աշխատանքներին:⁶⁷⁰ Յուլիսի 1-ին գերմաներեն և հայերեն լեզուներով հրատարակվեց նաև ընկերության «*Mesrop*» երկամսյա պարբերականի առաջին համարը, որտեղ ամփոփված էին Լեփսիուսի, Ռոհրբախի, Գրինֆիլդի հոդվածները և գրական, հրապարակախոսական այլ նյութեր:⁶⁷¹

Համաշխարհային պատերազմը, սակայն, ի չիք դարձրեց այդ ծրագրերի իրականացումը: «*Mesrop*» ամսագրի երկրորդ համարը, որ տպարանում արդեն գրեթե պատրաստ էր, լույս չընծայվեց: Հայկական բարեփոխումները նույնպես դեռ չիրագործված՝ մեծ տերությունների քաղաքական օրակարգից դարձյալ դուրս մղվեցին, և երկու տեսուչները, որոնք արդեն մեկնել էին Թուրքիա, պատերազմի բռնկումից հետո ետ ուղարկվեցին:⁶⁷² Բարեփոխումների, խոստումնալից ապագայի փոխարեն հայ ժողովրդին սպասվում էր անօրինակ ողբերգությունների, նախճիրի և օրհասական մաքառումների մի շրջան:

669. Lepsius J., Rückblick und Ausblick, „Der Christliche Orient“, 1914, էջ 105-106:

670. Նրանց թվում էին Հանս Դելբրյուքը, Թոմաս Մանը, Ռուդոլֆ Էուքենը, Ֆրիդրիխ Նաումանը, Կարլ Ֆրիդրիխ Լեհման-Հաուպտը, Յոզեֆ Ստրոֆգուվսկին, Ռիխարդ Դեհմելը և ուրիշներ: Տե՛ս Aufruf zur Begründung der Deutsch-Armenischen Gesellschaft, անդ, էջ 102-104:

671. Տե՛ս «*Mesrop. Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft*», Berlin, 1914:

672. Künzler J., Im Lande des Blutes und der Tränen, Potsdam, 1921, էջ 2: Հմնտ. Feigel U., Das evangelische..., էջ 157:

Դաջվածքով հայուհիներն
ազատագրումից հետո
(մահմեդականների կողմից
տուժանգված հայ կանանց դեմքի
խարանուճը նպատակ ուներ կանխել
նրանց փախուստը):



Հալեպի հայ փախստականների ճամբարում



ՅՈՐԱՆՆԵՍ ԼԵՓՈՒՄՍԻ
Խոր անդամազանգյալները



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ
ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

(1914-1918 թթ.)



ՄԱՍՆԱԳՅՈՒՂԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

1.1. Խոյի և Ուրմիայի որբանոցների փակումը

Չնայած Պարսկաստանը պատերազմին չէր մասնակցում և համարվում էր չեզոք երկիր, այնուամենայնիվ անմասն չմնաց պատերազմական իրադարձություններից: Դեռ աշխարհամարտի բռնկումից առաջ երկրի հյուսիսային հատվածում, նաև Խոյում դրության տերը ռուսական կազակային զորամասերն էին, և քաղաքը փաստորեն ապրում էր ռազմական իրադրության պայմաններում, պատերազմում Թուրքիայի հավանական ներգրավումից հետո մարտական գործողությունների թատերաբեմ դառնալու տազնապներով: Ճակատագիրը չխնայեց նաև ԳԱԱ-ի պարսկաստանյան մասնաճյուղերին. 1914 թ-ի սեպտեմբերի 2-ին ռուսական հյուպատոսը կարգադրեց Խոյի որբանոցը փակել՝ այդ պատրվակելով անգլիական բանկում հաստատության ունեցած պարտքով:⁶⁷³ Չնայած Ա.Յառնակի հարցապնդումների միջոցով պարզ դարձավ, որ բանկը նման պահանջ էր առաջադրել, և այնուհետև որբանոցի կառավարչուհու և Թավրիզի գերմանական հյուպատոս Վիլիելմ Լիտենի կողմից հիշյալ իրամանի կապակցությամբ բողոքներ ուղղվեցին ռուսական, ամերիկյան գլխավոր հյուպատոսներին և Խոյի պարսիկ նահանգապետին, այնուամենայնիվ դրանք էական արդյունք չտվեցին:⁶⁷⁴ Հաջողվեց միայն կարճ ժամանակով պահպանել երեխաների բնակության սենյակները և հետաձգել նրանց վտա-

673. Քանի որ Գերմանիայի հետ կապը խզված էր, և այնտեղից օգնություն չէր կարող ստացվել, Ա. Յառնակը անգլիական բանկից վարկ էր վերցրել, և ըստ ռուսական կողմի, վերջինս պարտքը չվերադարձնելու պատճառով պահանջել էր որբանոցը փակել: Stéu Harnack A., Die Schließung unseres armenischen Waisenhauses in Khoi durch die Russen, անդ, էջ 168-169:

674. Անդ, էջ 169:

րունը, իսկ հաստատության մնացած տարածքները, ներառյալ Ա. Հառնակի բնակարանը հիշյալ օրը ևեթ բռնագրավվեցին: Որբանոցի շարժական գույքը կուտակվեց մի քանի սենյակներում, որոնք պաշտոնապես կրնքվեցին,⁶⁷⁵ իսկ Ա. Հառնակը, ժամանակավորապես ապաստանելով մի հյուղակում, հաջորդ օրը տեղագրվեց փոփոխությամբ ձեռնամուխ եղավ երեխաներին որբանոցից դուրս բերելու և վստահելի հայ ընտանիքներին հանձնելու գործին:⁶⁷⁶ Մի քանի օրում որբանոցն արդեն իսպառ դատարկված էր: «Պատերն առանց երեխաների տխուր էին...- նշում էր նա հետադարձ հայացքով:- Սակայն ես ուզում էի դիմանալ: Եթե ինձ հանգիստ թողնեին, ես լավագույն տարբերակը կհամարեի մնալ: Մնալու դեպքում կարող էի մեր տունը պաշտպանել հետագա ավերումներից, հետևել երեխաներին, հավանաբար դարձյալ հայերի համար բացել իմ տան դռները, եթե բանն իրոք հասներ ռուս-թուրքական պատերազմին: Այլապես ամեն ինչ ծանր և տխուր էր: Մարդ իրեն պատկերանում էր որպես ժանտախտով հիվանդ: Ռուսների հանդեպ երկյուղից ոչ ոք չէր համարձակվում ինձ մոտ գալ: Միայն ուշ երեկոյան, երբ արդեն մութ էր, սա կամ նա ինձ այցի էին գալիս: Այդ ժամանակ ճանաչվում էին իսկական բարեկամները, և ես ի ուրախություն ինձ պետք է ասեմ, որ, բացառությամբ որոշ դեպքերի, հայերը շատ լավ պահեցին իրենց»:⁶⁷⁷

Ա. Հառնակի համար, սակայն, անհնար էր մնալ Խոյուն, առավել ևս, երբ նրա հասցեին արդեն հնչում էին լրտեսության մեղադրանքներ:⁶⁷⁸ Նրան կարգադրվեց մեկնել Թավրիզ, և, մեծ դժվարությամբ կարողանալով վերստին տիրանալ իր անձնական իրերին, նա սեպտեմբերի 15-ին իր երկու հայ ուսուցչուհիների հետ մեկնեց այնտեղ տեղավորվելով գերմանական հյուպատոսությունում:⁶⁷⁹ Հոկտեմբերի վերջին, երբ Թուրքիան նույնպես մտավ պատերազմի մեջ, Թավրիզի գերմանական գաղութի դրությունը բարդացավ: Նրա անդամները, այդ թվում նաև Հառնակը հարկադրված հովանավորության խնդրանքով դիմեցին ամերիկյան հյու-

675. Դա այնքան արագ տեղի ունեցավ, որ Հառնակը չհասցրեց վերցնել նույնիսկ իր անձնաանիրաժեշտ անձնական իրերը: Անդ, էջ 169-170:

676. Հատկանշական է, որ հայ բարեկամներն այդ օրերին նրան միայնակ չէին թողնում և օգնում էին իրենց բոլոր հնարավորություններով: Անդ, էջ 170:

677. Անդ:

678. Անդ, էջ 169:

679. Անդ, էջ 174:

պատոսությանը և վերջինիս միջամտությամբ ստանալով հայրենիք վերադառնալու թույլտվություն՝ մեծ զրկանքների և փորձությունների ենթարկվելով՝ նոյեմբերին մեկնեցին Գերմանիա:⁶⁸⁰

Նույն ճակատագրին արժանացավ նաև Ուրմիայի ասորական որբանոցը, որի գերմանացի աշխատակիցները՝ Ա. Ֆրիդեմանը և օր. Ռիխտերը, նոյեմբերի 4-ին երեխաներին ազատ արձակելով՝ Ուրմայից վերադարձան Գերմանիա:⁶⁸¹

Պարսկաստանում գործող խիստ զրաքննության պայմաններում բնականաբար անհնար էր այնտեղից փոստային կապով տեղեկություններ ուղարկել Գերմանիա, և ԳԱԱ-ն խոյի որբանոցի փակման մասին առաջին տեղեկությունը ստացավ Ա. Զառնակի՝ Բուլղարիայով ուղարկված հետևյալ հակիրճ և սրտառուչ հաղորդագրության միջոցով. «Ես այժմը Թավրիզի գերմանական հյուպատոսությունում եմ: Խնդրում եմ պրն. դր. Լեփսիուսին տեղեկացրեք, որ որբ երեխաները լավ պահված են: Ես իմ պոստը կամավոր չեմ լքել: Մեր իրերը մի քանի սենյակներում փակվել և կնքվել են, մնացածը վերցվել է կազակների կողմից...»:⁶⁸²

Կազակերպության վարչությունն այնուհետև (դեկտեմբեր ամսին) բողոքներ հղեց Գերմանիայի ԱԳՆ-ին և Թեհրանի գերմանական դեսպանությանը՝ չեզոք երկրում «ռուսական իրամանով» գերմանական որբանոցների փակումը և կանանց ու երեխաների ներկալումն ու բռնի վտարումը դատապարտելով որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ:⁶⁸³ Դրանք, սակայն, որևէ արդյունք չէին կարող տալ, և խոյի որբանոցը ռուսական իշխանությունների կողմից հատկացվեց կազակներին որպես զորանոց:⁶⁸⁴ Ինչ վերաբերում է Ա. Զառնակին,

680. Harnack A., Unfreiwillige Heimkehr, „Der Christliche Orient“, 1915, էջ 19-20:

681. Friedemann M., Das Mutter-Annem-Buch, Potsdam, 1927, էջ 154-155: Ա. Ֆրիդեմանն իր մեկնումից առաջ կարողացավ միայն 4 որբի տեղավորել ընտանիքներում, իսկ մյուսները դարձյալ մնացին միայնակ և անօթևան: Տե՛ս Brief aus Urmia von unserem Waisenmädchen Sultä Temris, „Der Christliche Orient“, 1915, էջ 93:

682. Տեղեկությունը թվագրված էր՝ 1914 թ-ի հոկտեմբերի 15: Տե՛ս Nachrichten von den Stationen, „Der Christliche Orient“, 1914, էջ 144:

683. Տե՛ս Nachricht, անդ, էջ 174:

684. Տե՛ս Nachrichten von den Stationen, անդ, էջ 144-145:

ապա Գերմանիա վերադառնալուց հետո նա աշխատանքի նշանակվեց ռազմամթերքի արտադրության ֆաբրիկաներից մեկում՝ զբաղվելով այնտեղ աշխատող բանվորուհիների սոցիալական ապահովության խնդիրներով:⁶⁸⁵ Միաժամանակ նա ջանում էր տեղեկություններ հայթայթել Խոյի հայերի և որբանոցի երեխաների մասին՝ հուսալով պատերազմից հետո դարձյալ վերադառնալ այնտեղ և շարունակել իր առաքելությունը: Երթևեկության և փոստային կապի բացակայության հետևանքով, սակայն, պատերազմի տարիներին նրան չհաջողվեց որոշակիորեն հավաստի տեղեկություններ հայթայթել. իսկ հետագայում ուշացմամբ ստացված կցկտուր լուրերը, որոնք որպես կանոն հրատարակվում էին «*Der Christliche Orient*»-ում, հուսալքող էին:

1919 սկզբին հայտնի դարձավ, որ Խոյի որբանոցը հիմնահատակ թալանված և ավերված էր,⁶⁸⁶ իսկ 1920 թ-ի սկզբին ստացվեց տեղեկություն այն մասին, որ 1917 թ-ին Խոյի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը թուրքերի և քրդերի կողմից գրեթե ամբողջովին կոտորվել էր:⁶⁸⁷ Ա. Հառնակը մեծ ջանքերի գնով 1921 թ-ին կարողացավ նամակագրություն հաստատել իր երկու նախկին սանուհիների՝ Շողակաթ Բադայյանի⁶⁸⁸ և Թելլի Օհանյան-Գրիգորյանի⁶⁸⁹ հետ, որոնք հաստատեցին այդ տեղեկությունները: Իրազեկվելով, որ Խոյի, Ուրմիայի և Սալմաստի հայերի վերջին մնացորդները կուտակվել էին Թավրիզում, Հառնակը 1920-21 թթ. գործի դրեց իր ողջ հրապարակախոսական եռանդը նրանց դրության ողբերգականությունն ահազանգելու և օգնության միջոցներ հայթայթելու նպատակով:⁶⁹⁰ Այդ ջանքերը, սակայն, որևէ արդյունք չունեցան, քանի որ, ինչպես շուտով կլուսաբանվի, Գերմանիայում տիրող սոցիալ- տնտեսական ճգնաժամի պայմաններում համապատասխան միջոցներ չգոյացան, և ԳԱԱ-ն, հակառակ իր մեծ ցանկությանը, այլևս հնարավորություն

685. Տն՝ *Aus Briefen unserer Mitarbeiter*, „*Der Christliche Orient*“, 1917, էջ 39-40:

686. Harnack A., *Aus Persien*, „*Der Christliche Orient*“, 1919, էջ 7:

687. Harnack A., *Brief an die Pflegeeltern der Khoier Waisenkinder*, „*Der Christliche Orient*“, 1921, էջ 2:

688. Harnack A., *Nachrichten aus Persien*, անդ, էջ 63:

689. Տն՝ *Briefe aus Persien an Frä. Harnack*, „*Der Christliche Orient*“, 1922, էջ 25:

690. Harnack A., *An die Pflegeeltern der Khoier Waisenkinder*, „*Der Christliche Orient*“, 1921, էջ 21-22: Հմն. Harnack A., *Nachrichten aus Persien*, անդ, էջ 63:

չունեցավ վերսկսել իր գործունեությունը Պարսկաստանում: Իսկ ինչ վերաբերում էր այնտեղ գտնվող ընկերության սեփականությանը, ապա չնայած այդ երկրի կառավարությունը պաշտոնապես ստանձնել էր ինչպես Խոյի, այնպես էլ Ուրմիայի որբանոցների ու նրանց ունեցվածքի պահպանման պատասխանատվությունը,⁶⁹¹ բայց դա իրականում որևէ արդյունք չունեցավ, և ԳԱԱ-ին երբևէ վնասների հատուցում չկատարվեց:

1.2. Ուռհայի մասնաճյուղը

Չնայած Ուռհայի որբանոցը գտնվում էր երկրի խորքում և պատերազմի գոտուց բավականին հեռու, սակայն այն շատ շուտ զգաց աշխարհամարտի հետևանքները: Փոստային կապի խզման հետևանքով պատերազմի առաջին վեց շաբաթներին Ուռհայից ուղարկված տեղեկություններն այդպես էլ Գերմանիա չհասան, իսկ հետագայում էլ, եթե հասնում էին, ապա մեծ ուշացումներով և արդեն մասամբ կամ ամբողջովին հնացած:⁶⁹² Երկաթուղային կապի և բանկային համակարգի գործունեության խաթարման հետևանքով փակվեցին նաև դրամի առաքման ճանապարհները, և որբանոցն ու նրա բուժհաստատություններն ամբողջովին զրկվեցին ԳԱԱ-ի նյութական աջակցությունից՝ հայտնրվելով խիստ ծանր դրության մեջ:⁶⁹³ Եթե այլ պայմաններում նման ծանր կացությունը կարելի էր ժամանակավորապես մեղմել վարկերի կամ փոխառությունների միջոցով, ապա պատերազմի բռնկումից հետո այդ նույնիսկ թուրքիայում դարձել էր անհնար, քանի որ երկրում հայտարարված հետակայման (Mortatorium) պատճառով անորոշ ժամանակով

691. Harnack A., Die Schließung unseres armenischen Waisenhauses in Khol durch die Russen, „Der Christliche Orient“, 1914, էջ 172-174:

692. Անդ, էջ 142: Իրավիճակը նույնն էր նաև Գերմանիայից ուղարկվող նամակների և հաղորդագրությունների պարագայում: Ինչպես եքարտն էր նշում իր՝ մարտի 5-ի նամակում, կազմակերպության առաջին ցուցումներն Ուռհայում ստացվել էին 7 ամիս ուշացումով՝ 1915 թ-ի փետրվարի վերջին: Տե՛ս Eckart F., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1915, էջ 47:

693. Տե՛ս Nachrichten von den Stationen, „Der Christliche Orient“, 1914, էջ 143-144:

կասեցվել էին նաև բանկային բոլոր գործառնությունները:⁶⁹⁴

Բարեբախտաբար, 1914 թ-ի գարնանը մասնաճյուղին հաջողվել էր վաճառել Դիարբեքիի որբանոցի և կլինիկայի շենքը և դրանից գոյացած միջոցներով փակել բոլոր պարտքերը: Բացի այդ պատերազմի բռնկումից անմիջապես առաջ շվեյցարական Բարեկամների միությունից ստացվել էր մի դրամական նվիրատվություն, որի մի մասը դեռ պահպանվել էր և դեռ կարճ ժամանակ գոյատևելու հնարավորություն էր ընձեռում:⁶⁹⁵ Չնայած ստեղծված իրավիճակում դա էական դեր չէր կարող ունենալ, այնուամենայնիվ մասնաճյուղի աշխատակիցների մեջ նահանջի և բարոյալքման տրամադրություններ ի հայտ չեկան, և վճռվեց ամեն զնով դիմանալ:

Երբ պատերազմը սկսվեց, որբանոցում արձակուրդներ էին, և այն երեխաներն, ովքեր հարազատներ կամ բարեկամներ ունեին, ժամանակավորապես տեղափոխվել էին նրանց մոտ:⁶⁹⁶ Պատերազմի բռնկումից հետո ստեղծված նյութական կացության թելադրանքով վճռվեց նրանց արձակուրդն առժամանակ երկարաձգել՝ խնամքի տակ պահելով միայն որբանոցում մնացած մի քանի տասնյակ բուրդովին միայնակ երեխաներին:⁶⁹⁷ Շուտով, սակայն, անհրաժեշտ համարվեց կրճատել նաև նրանց թվաքանակը. մի շարք ընտանիքներ պատրաստակամություն հայտնեցին մեկական փոքրահասակ երեխաների մշտապես ընդունել իրենց մոտ: Հասունությանը մոտեցող բազմաթիվ աղջիկների համար ի հայտ եկան փեսացուներ, իսկ ավագ տղաներից շատերն աշխատանք ձեռք բերելով՝ հեռացան:⁶⁹⁸ Այդ հարկադիր զտումից հետո որբանոցում մնացին 20 որբեր, որոնց՝ ծնուն և գարնան ծախսերը հոգալու համար վաճառվեց որբանոցում ազատված ամբողջ շարժական գույքը:⁶⁹⁹

Ինչ վերաբերում էր բուժասպասարկման աշխատանքներին, ապա վճռվեց դրանք ամեն զնով շարունակել. եթե նույնիսկ սպասարկող անձ-

694. Sick I. M., Karen Jeppe..., էջ 107:

695. Vischer A., Bericht über die Tätigkeit des Krankenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1915, էջ 4:

696. Jeppe K., Das Schicksal unseres Waisenhauses im Weltkriege, „Der Christliche Orient“, 1918, էջ 48:

697. Անդ: Հմմտ. Sick I. M., Karen Jeppe..., էջ 107:

698. Jeppe K., Das Schicksal unseres Waisenhauses im Weltkriege, „Der Christliche Orient“, 1918, էջ 49:

699. Անդ, էջ 49-50:

նակազնը պետք է կրճատվեր: Ա. Ֆիշերը 1914 թ-ի մայիսին իր ընտանիքի հետ մեկնել էր Շվեյցարիա արձակուրդն այնտեղ անցկացնելու նպատակով: Պատերազմի բռնկումից հետո նա որպես զինվորական բժիշկ զորակոչվեց շվեյցարական բանակ,⁷⁰⁰ իսկ 1915 թ-ի սկզբին ծառայությունից ազատվելով՝ այնուամենայնիվ, իր պարտքը համարեց պատերազմի ընթացքում «մնալ հայրենիքի տրամադրության տակ» և չվերադարձավ Ուրիա:⁷⁰¹ Հիվանդանոցը և կլինիկան փաստորեն մնացին Ա. Աբուհայթյանի ղեկավարման ներքո, որին հաջողվեց, խուսափել զինվորական ծառայությունից և, իշխանություններից ստանալով Ուռիայում մընալու թույլտվություն: Կյունցլերի օգնությամբ շարունակել իր գործունեությունը:⁷⁰² Ղա հնարավոր էր միայն ծախսերի առավելագույն սահմանափակման դեպքում, որի պատճառով հարկ եղավ վեց աշխատակիցների՝ երեք հիվանդապահուհու, խոհարարի օգնականուհուն, գնորդին և ծառային աշխատանքից ազատել, և սեպտեմբերի 2-ին հիվանդանոցն ու կլինիկան վերաբացվեցին:⁷⁰³

Նոր պայմաններում բնականաբար պետք է բարձրանային նաև այցելուներից կատարվող գանձումները, և աղքատների՝ նախկինում սովորական դարձած անհատույց սպասարկումն այլևս «նույն առատածեռությամբ» չէր կարող կատարվել՝ թույլատրվելով միայն խիստ հրատապ դեպքերում: Բնակչությունը դրան ըմբռնունով էր վերաբերվում՝ հասկանալով, որ հաստատությունները որևէ աջակցություն չունեին և հարկադրված էին ապավինել սեփական եկամուտներին:⁷⁰⁴ Չնայած այդ ամենին,

700. Vischer A., Bericht über die Tätigkeit des Krankenhauses in Urfa, „Der Christliche Orient“, 1915, էջ 3:

701. Անդ:

702. Vischer A., Aus Urfa-Klinik, „Der Christliche Orient“, անդ, էջ 57: Կյունցլերն իր ընտանիքի հետ արձակուրդը Գալիլեայի լեռներում անցկացնելու համար մեկնել էր Սաֆեդ: Լսելով պատերազմի լուրը՝ նա անմիջապես մեծ դժվարությունների գնով կարողացավ վերադառնալ Ուռիա: Տե՛ս Künzler J., Im Lande..., էջ 1-2:

703. Künzler J., Vom Missionshospital in Urfa, „Der Christliche Orient“, 1915, էջ 7: Ինչպես Ուռիայից տեղեկացվում էր, վերոնշյալ անձանց աշխատանքից ազատելիս նկատի էր առնվել, որ նրանք «իրենց ապրուստը նաև հետագայում կարողանային հոգալ»: Այդ մասին, սակայն, լրացուցիչ մանրամասներ չեն հաղորդվում: Տե՛ս Vischer A., Bericht über die Tätigkeit des Krankenhauses in Urfa, անդ, էջ 5:

704. Անդ:

ԳԱԱ-ի հիվանդանոցի և կլինիկայի եկամուտները նախկինի համեմատ է-ապես նվազեցին, ինչն ուներ իր որոշակի պատճառները: Մորիլիզա-ցիայի և ռազմական ուժերի տեղաշարժերի պատճառով ճանապարհները հիմնականում փակ էին, և դրսից այլևս չէր կարող հիվանդների մեծ հոսք տեղի ունենալ:⁷⁰⁵ Եվ եթե նկատի առնվի, որ Ուռհայի բնակչությունը մեծ մասամբ անվճարունակ էր, ու հիմնական եկամուտները գոյանում էին դրսից եկող հիվանդների հաշվին, ապա պարզ կդառնա, թե որքան ծանր պայմաններում էր գործում այդ աշխատաճյուղը:⁷⁰⁶ Այնուամենայնիվ այդ չնչին եկամուտների և նաև ձեռնարկությունների արտադրանքի վաճառ-քից գոյացող հասույթների միջոցով, ինչպես վկայում էր Ֆ. Էքարտը, հնա-րավոր եղավ առժամանակ գոյատևել:⁷⁰⁷

Ծայրահեղ կարիքից դուրս գալու հարցում մեծ նշանակություն ունե-ցավ նաև Հալեպի գերմանական հյուպատոս Ռոսլերի կողմից 1914 թ-ի հոկտեմբերին օգնության կարգով որբանոցին հատկացված մի կանխա-վճար, որի չափի վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել:⁷⁰⁸

ԳԱԱ-ի կողմից 1914 թ-ի օգոստոսին Ուռհայի մասնաճյուղին կատարված դրամական փոխանցումները միայն 1915 թ-ի մարտին, յոթ ամիս ուշացումով տեղ հասան՝ հաստատություններին հնարավորություն ընձեռելով մարել նախորդ ամիսներին գոյացած՝ մոտ 800 մարկ կազմող պարտքերը:⁷⁰⁹ Զանի որ անհնար էր դրամն ուղղակի առաքել Ուռհա, այն փոխանցվում էր Հալեպի առևտրական տան ղեկավար Ցոլինգերին, որն

705. Անդ, էջ 7:

706. Չնայած Ուռհայի թուրքական հիվանդանոցը հատկացվել էր բացառապես զին-վորականների կարիքներին, այնուամենայնիվ ԳԱԱ-ի հիվանդանոցին ևս վիճակված էր մասամբ զինվորական հոսպիտալի ծառայություններ կատարել, որ բնականաբար լրացուցիչ անհատույց ծանրաբեռնում էր ստեղծում: Հիվանդանոցում մի քանի մահ-ճակարներ մշտապես դրվել էին բանակի տրամադրության տակ, և շատերն էին այն-տեղ խնամք և բուժում ստանում: Անդ, էջ 57:

707. Անդ, էջ 50:

708. Schäfer R., Geschichte..., էջ 86: «Այժմ նույնպես, նշում էր Էքարտն իր՝ մարտի 5-ին թվագրված նամակում,՝ առաջին յոթ պատերազմական ամիսներից հետո Դուք մեղ աշ-խատանքը կգտնեք, չնայած պայմաններին համապատասխան սահմանափակված, սակայն կենդանի և պատրաստ ձեռք զարկելու այն առաջադրանքներին, որ մեզ կհանձ-նարարի ապագան»: Տն՝ Eckart F., Aus Urfa, „Der Christliche Orient“, 1915, էջ 48:

709. Vischer A., Aus Urfa-Kilnik, անդ, էջ 57:

ընկերության կողմից լիազորվել էր վստահելի անձանց միջոցով այն ուղարկել Ուռնայի հասցեատերերին:⁷¹⁰ Չնայած կարճ ժամանակ անց նույն ճանապարհով նվիրատվություններ ստացվեցին նաև շվեյցարացի բարեկամներից,⁷¹¹ այնուամենայնիվ հաստատությունների ֆինանսական դրությունը շարունակում էր մնալ ծայրահեղ լարված: «Սենք մեր գործունեությունը ամենածայրահեղ կերպով սահմանափակել ենք և շուտով ստիպված կլինենք այն լրիվ դադարեցնել. եթե դուք մեզ դրամական փոխանցումներ չկարողանաք կատարել ...»- գրում էր Էքարտը 1915 թ-ի մայիսի 10-ի՝ իր նամակում: - Խնդրում եմ՝ մեզ հեռագրեք կամ գրեք, թե արդյոք հույս կա՞ հաստատության մնացորդը պահպանելու:»⁷¹²

Վերահաս արհավիրքների և ողբերգական իրադարձությունների քառսում, սակայն, այդ և նման հարցադրումներն այլևս անտեղի դարձան: Ծայր էր առել հայոց մեծ եղեռնը,⁷¹³ և նրանց անկեղծ բարեկամները հավատարմությամբ ու անվեհերաբար, իրենց ուժերի գերա-

710. Sick I. M., Karen Jeppe..., էջ 123:

711. Vischer A., Aus Urfa-Klinik, „Der Christliche Orient“, 1915, էջ 57: Ի թիվս այլոց, մեծ օգնություն ցուցաբերեց նաև Ուռնայի՝ Բարեկամների միությունը՝ դր. Ֆիշերի միջոցով Ցուլինգերին ուղարկելով 1000 ֆրանկ: Անդ, էջ 58:

712. Տե՛ս Aus Urfa Waisenhaus, անդ, էջ 58-59:

713. Համաշխարհային պատերազմն, ինչպես հայտնի է, երիտթուրքական կառավարության համար հարմար առիթ դարձավ հայ ժողովրդի տեղահանման և բնաջնջման միջոցով Հայկական հարցից ազատվելու համար: Նրանց այդ դիտավորությունը որոշակիորեն ի հայտ եկավ դեռ 1915 թ-ի փետրվարի սկզբին, երբ քանակում ծառայող հայ զինվորները զանգվածային կերպով զինաթափվում էին՝ ներգրավվելով շինարարական գումարտակներում, և հայազգի քոլոր ծառայողները հեռացվում էին իրենց զբաղեցրած պաշտոններից: Իսկ ապրիլի 15-ից, երբ էնվերի, Թալեաթի և Նազըմի կողմից ստորագրվեց Անատոլիայի քոլոր վիլայեթներից ու Կիլիկիայից հայերի տեղահանման ու բնաջնջման մասին հրամանը, եղերական իրադարձությունները սրընթաց ծավալում ստացան: Ապրիլին ծայր առավ Ձեյթունի հայության զանգվածային տեղահանումն ու աքսորը դեպի Կոնիա և Արաբիա: Ապրիլի 24-ին և 25-ին Կ. Պոլսում դավադրության կազմակերպման մեղադրանքով ձերբակալվեցին 650 հայ մտավորականներ, որոնք աքսորի ճանապարհին սպանվեցին: Իսկ ևս մի քանի օր անց, Վանի հերոսական ինքնապաշտպանության օրերին գործի դրվեց Արևմտյան Հայաստանի ողջ հայ բնակչության տեղահանման և աքսորի ծրագիրը: Տե՛ս Արզումանյան Մ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969, էջ 317: Հմմտ. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 287; 294: Հմմտ. Feigel U., Das evangelische..., էջ 183:

գույն լարումով գործի լծվեցին՝ կատարելու «սամարացու» ծառայությունը: Մենք ստորև կփորձենք փոքր-ինչ հանգամանալից անդրադառնալ միայն այն իրադարձություններին, որոնք այդ ժամանակամիջոցում տեղի ունեցան Ուռհայում:

Ապրիլյան մի գիշեր ձերբակալվեցին քաղաքի բոլոր հայ ուսուցիչները, որից հետո դասալիքների ու զենքի հայտնաբերման պատրվակով հայկական թաղամասում սկսվեցին լայնածավալ խուզարկություններ:⁷¹⁴ Մայիսի կեսին քաղաքի 18 ամենահեղինակավոր հայ ընտանիքներն աքսորվեցին Ուռհայից 150 կմ հեռավորության վրա. Եփրատի ափին գտնվող Ռակա քաղաքը: Մի քանի օր անց, սակայն, տղամարդիկ այնտեղից դարձյալ ետ բերվելով՝ նետվեցին բանտերը, և թաքցված զենքի հայտնաբերման պատրվակով սկիզբ առան նրանց ամենօրյա դաժան խոշտանգումները:⁷¹⁵ Ձերբակալվածների թիվը շարունակ աճում էր: Երկարատև ժամը խոշտանգումներից հետո նրանք խմբերով տարվում էին Դիարբեքիրի ուղղությամբ և ճանապարհին գազանաբար սպանվում ուղեկցող ոստիկանների կողմից:⁷¹⁶ Արդեն որոշակիորեն պարզ էր, որ վաղ թե ուշ այդ դժբախտների ճակատագրին պետք է արժանան Ուռհայի բոլոր հայերը:⁷¹⁷ «Քրիստոնյաները ահ ու սարսափի մեջ էին, - նշում էր Բրունո Էքարտը,- իսկ թուրքերի մոլեգին կատաղությունն օրեցօր աճում էր: Անեծքներն ու մոլեռանդ սպառնալիքները սաստկանում էին: Մենք ցավով էինք տեսնում, թե ինչպես էին իրենց քաղաքակիրթ համարող թուրքերը հայիոյանքներ տեղում հայերի գլխին: Թվում էր, թե թուրք հրոսակներն անհամբերությամբ էին սպասում կոտորածներին»:⁷¹⁸

Մասնաճյուղի աշխատակիցները ջանում էին անել առավելագույնը Ուռհայի հայերին հալածանքներից ազատելու համար: «Սամարացու» առավել վառ մարմնավորումը դարձավ Կ. Յեպեն, որն Ուռհայի հայ համայնքի ղեկավար վարդապետ Արտավազդ Կալենդեռյանի հետ սերտ համագործակցությամբ ջանում էր ապավեն լի-

714. Künzler J., Im Lande..., էջ 11:

715. ԱՄՊ, էջ 12:

716. Melkonjan M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 15:

717. Ուռհայի հայ քնակիչների թիվը հասնում էր շուրջ 15000-ի: Stin Künzler J., Im Lande..., էջ 66:

718. Eckart B., Meine Erlebnisse in Urfa, Potsdam, 1922, էջ 3:

Նել հայությանը: Ընդ որում եթե վարդապետը փորձում էր հայերի համար անվտանգության երաշխիքներ ձեռք բերել կաշառքի և ազդեցիկ կապերի միջոցով, ապա Յեպեն առաջին ձերբակալություններից հետո կատարվող անօրինակամտությունների վերաբերյալ շարունակ տեղեկություններ էր հղում Չալեպի ամերիկյան և առանձնապես գերմանական հյուպատոսներին՝ նրանց հորդորելով և աղերսելով իրենց ազդեցությունը գործադրել հայությանը սատար կանգնելու համար:⁷¹⁹ Ռուսերից ստացվող պատասխանները, սակայն, հուսահատեցուցիչ էին. «Մենք չենք կարող միջամտել Թուրքիայի ներքին գործերին».- նշում էր գերմանացի դիվանագետը:⁷²⁰

Ապրիլի վերջին Կյունցլերը բժավոր տիֆով հիվանդացել և գամված էր անկողնուն, երբ Ա. Կալենդերյանը դիմեց նրան խնդրելով անձամբ մեկնել Չալեպ և այնտեղի եվրոպացի հյուպատոսներին տեղեկացնել Ուռհայի հայության ծանր դրության մասին:⁷²¹ Փոքր-ինչ ապաքինվելուց հետո նա շտապեց մեկնել և հունիսի կեսին հասնելով Չալեպ՝ գերմանացի հյուպատոսին խնդրեց միջոցառումներ ձեռնարկել Ուռհայի հայերին բնաջնջումից փրկելու համար: «Ես խնդրեցի նրան.- նշում էր Կյունցլերը.- իր բոլոր հնարավորությունները գործադրել հանուն գերմանացիների բարի համբավի հայ ժողովրդի կործանումը կանխելու համար՝ ընդգծելով, որ եթե դա տեղի չունենար, ողջ քաղաքակիրթ աշխարհը Գերմանիային կմեղադրեր հայ ժողովրդի սպանդին մեղսակից լինելու համար»:⁷²²

719. Melkonjan M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 15:
720. Անդ: Այդ, իհարկե, չէր նշանակում, թե Ռուսերն անձամբ կատարվող ոճրագործությունների հանդեպ հաշտվողական դիրքորոշում էր որդեգրել: Նա այն գերմանացի դիվանագետներից մեկն էր, որոնք, հանգամանալից ներկայացնելով իրադարձությունների բուն պատկերը և ըստ ամենայնի մերկացնելով երիտթուրքական կառավարության նողկալի դիտավորությունները, փորձում էին նաև դեսպանությանն ու կառավարությանը դրդել՝ հակազդելու դրանց, ինչը, սակայն, ինչպես հայտնի է, տեղի չունեցավ: Տես Lepsius J., Deutschland und Armenien..., ի թիվս այլոց, թիվ 27, 66, 75, 76, 79, 103, 120, 121, 125, 134, 137, 140 արձանագրությունները: Գնձտ. Լեթսսեթյի Ա., Ածյիհեթեթ ձիթիհ ծ ճե-
նծեթ ձծյի հ Օծծծծե (1913-1919)...., ի թիվս այլոց, 198-199, 205-206, 221-225, 229-234, 280-282, 283-284, 346-347 էջերում ամփոփված արձանագրությունները:

721. Künzler J., Im Lande..., էջ 12:

722. Անդ:

Կյունցները հանդիպեց նաև այդ օրերին հատուկ հանձնարարությամբ Գալեպոն գտնվող բարոն Մաքս ֆոն Օպենհայմին, որի հետ նա ուներ անձնական ծանոթություն, բայց վերջինս ահազանգի հանդեպ առհասարակ ուշադրություն չցուցաբերեց:⁷²³ Իր հանդիպումներն ավարտելով ավստրիական և ամերիկյան հյուպատոսություններում պատգամախոսն ի վերջո, հուլիսի սկզբին ձեռնունայն վերադարձավ Ուռհա:⁷²⁴

Յուրիսի վերջին քստորյալ հայերի առաջին շարասյուները հասան Ուռհա. նախ գեթունցիները, ապա Խարպութի, Էրզրումի և մյուս շրջանների բնակչությունը:⁷²⁵ Ուռհան, որ հյուսիսից՝ Սվասի, Էրզրումի և Մամուրեթ Ու Ազիզի տարածաշրջաններից եկող հարյուր հազարավոր քստորյալների՝ դեպի Միջագետքի անապատները տանող ճանապարհին վերջին կայանավայրն էր, ամիսներ շարունակ ողողված էր թշվառ տարագիրների բազմություններով:⁷²⁶ Աքստորյալները, որոնք որպես կանոն միայն կանայք և երեխաներ էին,⁷²⁷ անասելի տառապանքների ուղի էին անցել՝ Ուռհա հասնելով ծայրահեղ հյուծված, սովահար և ընկճված վիճակում: Նրանք այնտեղ կարճ ժամանակով իջևանում էին քաղաքի քարավանատներում, որից հետո պետք է շարունակեին իրենց ճանապարհը դեպի հյուսիս՝ Դիարբեքի ռազմաբաժնի և կամ էլ դեպի անապատները: Առաջին ռազմաբաժնի մեկնողները, ժամանակակիցների վկայությամբ, քաղաքի դարպասներից դուրս գալով՝ զանգվածաբար սրի էին քաշվում, իսկ ովքեր քշվում էին դեպի Գալեպ, դեռ կարող էին իրենց գոյությունը երկարաձգելու հույս ունենալ:⁷²⁸

Ուռհա հասնելով՝ նրանցից շատերը փորձում էին փախչել դեպի հայկական թաղամաս կամ ապաստան գտնել օտարերկրացիների մոտ, ինչն, իհարկե, միայն շատ քչերին էր հաջողվում, և այդ քչերը,

723. «Չնայած բարոնն արդեն տարիներ ի վեր ինձ անձնապես ծանոթ էր,- նշում էր Կյունցները հետադարձ հայացքով.- սակայն ոչ որպես հայերի բարեկամ»: Անդ, էջ 13: 724.. Անդ:

725. Գահուճեան Ե., Յուշեր Ուրֆայի 1915 թ. հերոսամարտի ու հետագա իրադարձություններու մասին, Երևան, 1995, էջ 21:

726. Künzler J., Im Lande..., էջ 27:

727. Տղամարդիկ տեղահանումից հետո առանձնացվել և զանգվածաբար մորթվել էին: Տե՛ս անդ, էջ 15: Գմմտ. Melkonian M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 16:

728. Künzler J., Im Lande..., էջ 15-16:

բնականաբար, իրենց հետ տանում էին նաև սեփական զարհուրելի ապրումների և տառապանքների պատմությունը: «Նրանք այնպիսի բաներ էին պատմում,- նշում էր Կյունցլերը,- որ աչքերիդ առաջ սարսափելի զագրելիությամբ առարկայանում էր անասելին, որի համար լեզուն բառեր չունի: Նրանք հազարներով միաժամանակ տեղահանվել էին, սակայն այդ հազարներից միայն փոքրիկ խմբեր էին հասնում Ուռուհա: Այդ ընդհանուր կանոն էր բոլոր շարասյուների համար: Եվ աքսորյալների յուրաքանչյուր շարասյուն մեզ տեղեկացնում էր այնպիսի հրեշավոր տառապանքների և ապրումների մասին, որոնք անհնար էր ուղեղում տեղավորել»: ⁷²⁹

Ձեյթունցի հայերի մի բազմություն իջևանեց նաև ԳԱԱ-ի որբանոցի շենքի առաջին հարկում: ⁷³⁰ Երբ զինվորները նրանց վաղ առավոտյան դարձյալ հարկադրեցին ճանապարհը շարունակել, տիրեց ընդհանուր հուսահատություն: «Նրանք ուտելու ոչինչ չէին ստացել,- պատմում էր Յեպեի կենսագիրը,- և իրենց հագուստներն էլ երկար ժամանակ չէին կարողացել լվանալ: Նրանց ոտքերը վիրավոր և ուռած էին, իսկ կոշիկները՝ պատառոտված: Նրանք չէին ուզում մեկնել, և զինվորներն անխնա հարվածում էին նրանց»: ⁷³¹

Կ. Յեպեն իր բոլոր ջանքերը գործի դրեց՝ դժբախտ տարագիրների մեկնումը զոհե մեկ օրով ուշացնելու համար: Այդ մասին իշխանությանն ուղղված՝ նրա համառ խնդրանքները բավարարում ստացան, և սկսվեց օգնության տենդագին աշխատանքը: Տարագիրներին բաժանվեց հաց և տաք սնունդ: Կոշկակարանոցում զբաղված արհեստավորները հավաքում էին ամենավատ վիճակում գտնվող կոշիկները և նորոգում: Կանայք երեխաների հետ միասին հնարավորություն ստացան լվանալ իրենց հագուստները, վիրակապել վերքերը, և «թարմացած ու հանգստացած»՝ նրանք ուշ երեկոյան շարունակեցին իրենց ճանապարհը: ⁷³²

729. Անդ, էջ 27: «Շատ կանայք,- պատմում էր մեկ ուրիշ ժամանակակից,- ճանապարհին ծննդաբերել էին և իրենց երեխաներին մետել գետը, կամ իրենք էլ նրանց հետ մնացել էին ընկած: Նրանց մեջ կային հիվանդներ ու ծերեր, որոնք հազիվ թե կարողանային շարունակել ճանապարհը, սակայն չնայած դրան շարունակում էին քշվել անվերջ ճանապարհներով...»: Sick I. M., Karen Jeppe..., էջ 112:

730. Melkonjan M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 16:

731. Sick I. M., Karen Jeppe..., էջ 111:

732. Անդ:

Ամիջապես հետո, սակայն, որբանոցի շենքում իջևանեցին նոր բազմություններ՝ ծայրահեղ անօգնական վիճակում:⁷³³ Կ. Յեպեին հաջողվեց նրանց ամենօրյա այցելություններ կատարելու թույլտվություն կորզել և անարգել ծեռնամուխ լինել օգնության գործին: Անքուն ու անդադար նա շրջում էր դժբախտների մեջ՝ բաժանելով սնունդ և սպեղանիներ և նույնիսկ միանգամայն ուժասպառ վիճակում համառորեն մերժելով հանգիստ առնելու՝ իր մերձավորների հորդորները: Ինչպես կարող էր հանգստանալ, երբ իր իսկ բառերով «այդ դժբախտները պետք է գոնե մեկ մարդ ունենային», որը նրանց կարող էր մխիթարել և օգնել:⁷³⁴ Չնայած նա օրվա ընթացքում հասցնում էր կերակրել միայն երեք հարյուր հոգու, մինչդեռ որբանոցի շենքում կուտակվածների թիվը վեց հազարից չէր իջնում,⁷³⁵ այնուամենայնիվ քաղցից «գազանացած մարդկանց» նրա ցուցաբերած օգնությունը զերգանահատել հնարավոր չէր: Նույն եռանդով նա իր փրկչական գործը շարունակեց նաև այն բանից հետո. երբ շուտով իշխանությունների պահանջով իր օգնականների և դեռ իր մոտ մնացած 13 որբերի հետ ստիպված եղավ որբանոցի շենքն ազատել՝ տեղափոխվելով դր. Ֆիշերի առանձնատունը:⁷³⁶

Կյունցլերը նույնպես իր բոլոր հնարավորություններն ի սպաս էր դրել

733. «Նրանք այլևս կենդանի մարդիկ չեն ...»,- նշում էր Յեպեի կենսագիրը,- ոչ, նրանք ստվերներ են: Ստվերների աշխարհն իր վրեժն է լուծել և դուրս թքել իր բոլոր բնակիչներին: Մի մեծ քարավանատան մեջ, որ նախկինում որբերի ուրախ բնակատեղին էր, շուրջ երկու հազար կանայք և երեխաներ կուտակվեցին՝ արնակարմիր աչքերով և դատարկ հայացքներով, խռոչված այտերով, վիրավոր ոտքերով, առանց հագուստների, առանց անկողիների... Մի քանիսը ճանապարհին ընկել էին: Նրանք նույնպես ներս են սողում, և բոլոր կողմերից ծայր է առնում անդադար, խռպուտ մի շշուճ. «Ջու՛ր, հա՛ց»: Անդ, էջ 117:

734. Melkonjan M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 16:

735. Jeppe K., Das Schicksal unseres Waisenhauses im Weltkrieg, „Der Christliche Orient“, 1918, էջ 57:

736. Melkonjan M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 16: երեխաներից բացի նրա հետ այնտեղ տեղափոխվեցին նաև իր որդեգիրները՝ որբանոցի նախկին սաներ Միսաքը և Լուիզան, մի ծառայող Ալեքսան անունով, հաստատության հին աշխատակցուհիներից մեկը, որի անունը Աննա էր, Գառնուշցի մի կին՝ Մարիամը, մի փոքրիկ երեխա, որին Լուիզան էր իր հետ վերցրել, և որբանոցի արհեստավոր կաշեգործ Խաչիկը իր մոր, հարսնացուի և քույր ու եղբայրների հետ: Որբանոցի մյուս աշխատողները ապաստանել էին գորգի ֆաբրիկայի շենքում: Տե՛ս Sick I. M., Karen Jeppe..., էջ 123:

աղետյալներին օգնելու համար: Հուլիսի սկզբից հիվանդանոցի բուր սենյակները լցվեցին հիվանդ աքսորյալներով, որոնց եռանդուն օգնություն էր ցուցաբերվում,⁷³⁷ և բացի այդ հիվանդներով զբաղեցվեց նաև հիվանդանոցի հարևանությամբ գտնվող ամայի շենքերից մեկը:⁷³⁸ Միաժամանակ նա կարողացավ աքսորյալներից չորս երիտասարդ աղջիկների ընդգրկել հիվանդանոցի խնամող անձնակազմում՝ մի կողմից այդ եղանակով նրանց աքսորից ետ պահելու և մյուս կողմից բազմապատկված աշխատանքն արագ հաղթահարելու նպատակով:⁷³⁹

Մեծ եղեռնը վերապահություններ չուներ, և այդ պարզ դարձավ հատկապես այն ժամանակ, երբ օգոստոսի սկզբին Ուռհայի մոտերքում սպանվեցին հայ պառլամենտականներ Գրիգոր Չոիրապը և Վարդգեսը (Հովհաննես Սերենգյուլյան):⁷⁴⁰ Ուռհայից հեռացող աք-

737. Künzler J., Bericht über den Betrieb unseres Hospitales und der Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1916, էջ 57:

738. Անդ, էջ 58:

739. Անդ, էջ 57: Եվ այնուամենայնիվ, որքան էլ մեծ էր Յեպեի և Կյունցլերի նվիրումը, դեպի մահ գնացող հարյուր-հազարավորներին նրանք փրկել չէին կարող: Ուռհան և շրջակայքը ամեն օր ծածկվում էին աքսորյալների դիերով, և եթե քաղաքի փողոցներից նրանք հավաքվում ու հողածածկ էին արվում, ապա դրսում սպանվածներն ու սովամահ եղածներն այդ քախտն էլ չունեին: «Եթե նույնիսկ երբեմն սպանվածները հավաքվում և թաղվում էին, ապա դա այնքան թերի էր կատարվում, որ վայրի գազանները դարձյալ կարողանում էին դիակները հանել և հոշոտել,- պատմում էր Կյունցլերը:- Շարունակ հանդիպում էին արյունածածկ վայրեր, որտեղ մարդիկ էին մորթվել...»: Որպես կանոն շարասյուների մշտական ուղեկիցն էր նաև բժավոր տիֆը, որը ժամանակակիցների վկայությամբ «ամբողջ բազմությունների տապալում էր ճանապարհներից՝ ազատելով հետագա տառապանքներից»: Տես Künzler J., im Lande..., էջ 38: Հմտ. Künzler J., Berichte über das Notstandswerk in Urfa, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 119:

740. Նրանց սպանությունից անմիջապես հետո մահվան վկայական կազմելու համար այնտեղ ուղարկվեց Ուռհայի քաղաքային բժիշկը: Ըստ նրա կողմից կազմված արձանագրության, երկու քարձրաստիճան այրերը մահացել էին տիֆից: Տես Künzler J., im Lande..., էջ 14:

ստրյալների յուրաքանչյուր բազմության հետ մոտենում էր նաև քաղաքի հայության օրհասական պահը:⁷⁴¹

1915 թ.-ի օգոստոսի 19-ին հայկական թաղամասում խուզարկության ընթացքում կատարվող մի բռնարարի ժամանակ ոստիկանների վրա տեղացին կրակոցներ, որին ի պատասխան նշված բարձրաստիճան կոմիտեականների հրահանգով սկսվեց Ուռհայի հայերի առաջին

741. Օգոստոսին Ա. Կալենդերյանը դարձյալ դիմեց Կյունցլերին՝ նրան խնդրելով մեկնել Եվրոպա և փորձել այնտեղից օգնություն ուղարկել: «Ես ամենից առաջ կզնայի հայ ժողովրդի հավատարիմ բարեկամ դր. Լեփսիուսի մոտ.- նշում էր Կյունցլերը.- քանի որ եթե եվրոպայում որևէ մեկը կարող էր այդ առումով ինչ-որ բան անել, ապա այդ նա էր...»: Չունենալով, սակայն, համապատասխան դրամ և միաժամանակ վստահ չլինելով, որ իշխանություններն իրեն թույլ կտան երկրից հեռանալ՝ նա հարկադրված էր այդ մտքից հրաժարվել: Տե՛ս Künzler J., Im Lande..., էջ 16: Այդ մտահոգության համար Կյունցլերն անշուշտ հիմքեր ուներ, քանի որ դեռ հունիսին Պաղեստինից, Լիբանանից և Սիրիայից 500 եվրոպացիներ ուղարկվել էին Ուռհա և ներկայվել այնտեղ: Տե՛ս Feigel U., Das evangelische..., էջ 198: Եթե նույնիսկ, սակայն, Կյունցլերի մեկնումը հաջողվեր, ապա այդ հազիվ թե որևէ արդյունք տար, քանի որ դեպքերը չափազանց արագորեն հաջորդեցին միմյանց: Դեռ հունվարից այնտեղ գործող ռազմական դատարանը հուլիսին փոխարինվել էր մեկ ուրիշով, որի անձնակազմը համալրվեց քաջառապես դրսից եկած թուրք պաշտոնյաներով: Փոփոխության համար շարժառիթ էր ծառայում այն մտավախությունը, որ ուռհաբնակ թուրքերը տեղացի հայերի հանդեպ կարող էին կարեկցանք և զիջողամտություն ցուցաբերել: Օգոստոսի 10-ին Ուռհայում հայտնվեցին նաև երիտթուրքական կոմիտեի անդամներ Ահմեդ Ջևադ և Խալիլ բեյերը (Վերջինս, ի դեպ, Էմվերի հորեղբորորդին էր և երիտթուրքական կառավարությունում վարել էր արդարադատության և ԱԳ նախարարի պաշտոնները: Տե՛ս Էքարտ Բ., «Ապրածս օրերը Ուռհայում», Երևան, 1990, էջ 13), որոնք տղամարդկանց կոտորածները և կանանց ու երեխաների աքսորը կազմակերպելու հանձնարարությամբ շրջում էին ողջ Անատոլիայով: Այնտեղ նրանց առաջին գործը եղավ «աքսորել» քանտերում գտնվող հայերին, և չնայած հայ համայնքից վերցված մի մեծ կաշառքի դիմաց (շուրջ 60 000 ֆրանկ) նրանք խոստացել էին քանտարկյալներին ճանապարհել Գալեպի, այլ ոչ թե Դիարբեքիի ուղությամբ, վերջիններս ուղարկվեցին դեպի Դիարբեքի և ճանապարհին, Ուռհայից ոչ հեռու անխափր սրի քաչվեցին: Նրանց թվում էր, ի դեպ, նաև Ա. Կալենդերյանը, որը ձերբակալվել էր Կյունցլերի հետ իր հիշյալ հանդիպումից կարճ ժամանակ անց: Տե՛ս Sick I. M., Karen Jeppe..., էջ 121: Օգոստոսի կեսին զանգվածաբար մորթվեցին նաև Ուռհայի մոտակայքում, Ճանապարհների վրա աշխատող շինարարական գունդերտակները, որոնցում ներգրավված էին ի թիվս այլոց 1000 ուռհաբնակ տղամարդիկ: Տե՛ս Künzler J., Im Lande..., էջ 17: Մահվան օղակը հետզհետե ավելի էր սեղմվում Ուռհայի հայ համայնքի շուրջը, և երբ տեղահանվեցին նաև հարևան Ադիադանի շրջանի հայ ընտանիքները, պարզ դարձավ, որ շուտով հերթը հասնելու էր Ուռհային:

կոտորածը:⁷⁴² Թուրք գազազած անբոխն, ավարտելով շուկայում և փողոցներում գտնվող հարյուրավոր հայերի սպանողը, ուշ երեկոյան շարժվեց դեպի հայկական թաղամաս և ընկրկեց ու վերադարձավ միայն այնտեղից հնչող կրակոցներից հետո:⁷⁴³ Երեք օր անց ԳԱԱ-ի հիվանդանոցում հայտնվեցին բազմաթիվ վիրավոր կանայք. որոնց Կյունցլերն իր օգնականների հետ ցուցաբերեց անհրաժեշտ բուժօգնություն: Տղամարդիկ, չնայած հաջորդ օրը կառավարության կողմից կատարված անվտանգության հավաստիացումներին. հայկական թաղամասից և իրենց թաքստոցներից դուրս չէին գալիս:⁷⁴⁴

Ստեղծված իրավիճակում արժանավոր մահը քստորից և կառափումից գերադասելով՝ նրանք որոշեցին դիմել ինքնապաշտպանության: Նրանց ղեկավար Մկրտիչ Յոթնդրայոյանը, ընկերների հետ ծալոված մեկնելով Հալեպ, կարողացավ այնտեղից բերել մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Պատրաստվեցին նաև ամուր բարիկաղներ, և սեպտեմբերի 29-ի գիշերը, մի ոստիկանական խուզարկության ժամանակ սկսվեց առճակատումը:⁷⁴⁵ Չնայած հայերի դեմ հրահրվեցին նաև մոտակայքում ապրող քրդերը, և բացի այդ թուրք զինվորական ուժերը Հալեպից խոշոր համալրումներ ստացան, սակայն հայկական թաղամասի վրա կազմակերպված գրոհները շարունակ ծախողվում էին թուրքական կողմին պատճառելով մեծ կորուստներ:⁷⁴⁶

Հայերը գրավել էին իրենց թաղամասի արվարձանների՝ ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող բոլոր շենքերը և ունենա-

742. Անդ, էջ 22:

743. Անդ, էջ 24: Ըստ Հալեպի գերմանական հյուպատոս Ռուլերի՝ օգոստոսի 28-ին Կ. Պոլիս ուղարկված տեղեկության, կոտորածի ընթացքում զոհվել էր 200 հայ: Տե՛ս Lepsius J., Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919, էջ 143:

744. Künzler J., Im Lande..., էջ 26: Կոտորածից հետո բազմաթիվ հայեր ապաստանել էին նաև եվրոպացիների տներում: Կյունցլերի և էքարտի բնակարանները նույնպես լի էին փախստականներով: Անդ:

745. Անդ, էջ 39:

746. Ապստամբությունը ճնշելու համար հոկտեմբերի 4-ին 6000 զինվորներով և հրետանիներով Ուռհա եկավ Հալեպի զինվորական պարետ Ֆահրի փաշան: Տե՛ս Sick I. M., Karen Jeppe..., էջ 135: Մ. Մեքոնյանի տեղեկության համաձայն նրա զինվորների թիվը հասնում էր շուրջ 10 000-ի: Տե՛ս Meikonjan M., Karen Jappes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 30:

լով մեծ տեսադաշտ անվրեպ գնդակահարում էին շրջակայքում հայտնըվող բոլոր թուրքերին:⁷⁴⁷ Երկու կողմերի համար կարևոր դիրքային նշանակություն ունեւր նաև գորգի ֆաբրիկայի շենքը, որ գտնվում էր հայկական և թուրքական թաղամասերի սահմանագծին, և որտեղ նշված կոտորածից հետո ապաստանել էին մոտ 1000 հայեր՝ մեծ մասամբ կանայք և երեխաներ:⁷⁴⁸ Ապստամբներն, ինչպես վկայում էր ժամանակակիցը, նպատակ ունեւին գրավել նաև այդ շենքը, և երբ նրանց մտադրությունը հայտնի դարձավ Ֆ. Էքարտին, վերջինս վճռեց այն նախօրոք հանձնել թուրքական կողմին:⁷⁴⁹

Ֆահրի փաշան շենքը գրավելու՝ Էքարտի խնդրանքի կատարումը հետաձգեց հաջորդ օրը: Ինչ վերաբերում էր այնտեղ ապաստանած հայերին, ապա ֆաբրիկայի հանձնման նախօրեին Ֆ. Էքարտի եղբոր՝ Բ. Էքարտի միջոցով այդ մասին տեղեկացվելով նրանց մեծագույն մասը գերադասեց գիշերը պատուհաններից դուրս գալով՝ տեղափոխվել հայկական թաղամաս:⁷⁵⁰ Իսկ հաջորդ օրը ֆաբրիկայի շենքը գրավվեց թուրքական ջոկատների կողմից: Այնտեղ մնացած մոտ 400 հայերը, մեծ մասամբ ֆաբրիկայում աշխատող կանայք և երեխաներ, տեղափոխվեցին ԳԱԱ-ի որբանոցի շենքը, իսկ յոթ տղամարդիկ, նրանց թվում նաև որբանոցի աշխատակիցներ Պետրոսը և Յովհաննեսը նետվեցին բանտ:⁷⁵¹ Գեներալը մերժեց նրանց իր սեփական տանը տեղավորելու՝ Էքարտի խնդրանքը՝ պատրվակելով, որ հարցաքննության միջոցով դեռ անհրաժեշտ էր փաստել նրանց անմեղությունը, և չնայած նա Էքարտին խոստացավ ապահովել ձերբակալվածների անվտանգությունը, սակայն այդ բնականաբար տեղի չունեցավ, և մի քանի օր անց դաժան խոշտանգումներից հետո նրանք

747. «Մուսուլմանների ողջ ֆանատիզմը,- գրում էր Կյունցլերը,- պետք է զրգովեր նաև այն բանից, որ ոչ մի մոլլա չէր կարողանում բարձրանալ իր միմարեթի վրա ընդունված կարգով աղոթքի կանչելու համար, քանի որ այդ անելու դեպքում մի որևէ հայի նպատակասլաց գնդակը կմարեր նրա կյանքի լույսը»: Sick I. M., Im Lande..., էջ 40:

748. Անդ, էջ 41:

749. Անդ: Էքարտի այդ արարքի շարժառիթների և հետևանքների լուսաբանումը մենք կկատարենք փոքր-ինչ ավելի ուշ:

750. Künzler J., Im Lande..., էջ 42:

751. Sick I. M., Karen Jeppe..., էջ 136:

զնդակահարվեցին:⁷⁵² Ինչևէ, մարտերի ընթացքում շարունակ ավելանում էր թուրք վիրավորների թիվը: Նրանց բուժման համար հիվանդանոցային տեղեր ապահովելու նպատակով թուրքական հիվանդանոցից բոլոր հայ հիվանդներն արտաքսվեցին այնուհետև տեղավորվելով ԳԱԱ-ի հիվանդանոցում: Երբ մի քանի օրից, սակայն, պարզ դարձավ, որ թուրքական հիվանդանոցն այլևս ի վիճակի չէր վիրավորներին տեղավորել, Կյունցլերին կարգադրվեց իր հիվանդանոցը ևս հիվանդներից ազատել և տրամադրել բանակի կարիքներին: Հետևելով հրամանին՝ նա իր բոլոր հայ հիվանդներին մինչև առճակատման ավարտը տեղափոխեց կոտորածի ժամանակ սպանված մի հայի բնակարանը՝ նրանց հետագա բուժումն ու խնամքը կազմակերպելով այնտեղ:⁷⁵³

Պաշարված հայերը, որոնք ժամանակակիցների վկայությամբ ապահովված էին սննդի մեծ պաշարով և ջրով (թաղամասում կային բազմաթիվ ջրհորներ), դեռ երկար կարող էին պահել իրենց անառիկ դիրքերը, և ինչպես մարտերի ընթացքում պարզ դարձավ, նույնիսկ թուրքական բանակի հրետանիները նրանց համար մեծ վտանգ չէին ներկայացնում:⁷⁵⁴ Սակայն երբ մարտերից մեկի ժամանակ նրանց առաջնորդը՝ Սկրտիչը զոհվեց, ծայր առավ ընդհանուր բարոյալքում: Ի վերջո, մարդկանց մեծ մասը ցանկություն հայտնեց հանձնվել՝ հուսալով այդ կերպ իր կյանքը փրկել, և հոկտեմբերի 16-ին ապստամբները, պայքարը դադարեցնելով, անձնատուր եղան:

Այդ անսպասելի շրջադարձը ցնցող ազդեցություն գործեց ԳԱԱ-ի աշխատակիցներից շատերի վրա, առանձնապես Կ. Յեպեի, որը հույս ուներ «հայկական թաղամասի այդ անառիկ բարձունքի վրա Թուրքիային տեսնել հայերից հաղթված»:⁷⁵⁵ Իր հուսախաբությունը չէր կարող թաքցնել նաև Կյունցլերը, որը նույնպես հայերի անձնատուր լինելու համար ոչ մի հիմք չէր տեսնում: «Կասկած չկար, որ որոշ չափով ամուր միասնություն ցուցաբերելու դեպքում հայերը թուրքե-

752. Künzler J., Im Lande..., էջ 51: Կյունցլերը փորձեց նրանցից զոհն մեկին՝ առողջական ծանր վիճակում գտնվող Հովհաննեսին փոխադրել հիվանդանոց, բայց այդ մասին զեներալին ուղղված նրա միջնորդությունը մերժում ստացավ: Անդ:

753. Անդ, էջ 45: Հիվանդների անկողիների հարցը լուծվեց ֆարիկայում մնացած անկողիների տեղափոխման միջոցով: Անդ:

754. Անդ, էջ 42:

755. Sick I. M., Karen Jeppe..., էջ 115:

րին դեռ ամիսներ շարունակ կդիմագրավեին,- նշում էր նա:- Սակայն հայերի դժբախտությունը՝ նրանց անմիաբանությունը, դարձավ նրանց ճակատագիրը և թուրքերի օգնականը: Կարդանք այդ այնքա՞ն ինտելիգենտ ժողովրդի պատմությունը: Երբեք համախմբված միասնություն չի եղել: Շվեյցարացիների նշանաբանը՝ «Մեկը բոլորի համար, բոլորը մեկի», նրանք չեն ճանաչում»:756

Անձնատուր լինելուց հետո տղամարդկանց մեծ մասը, քաղաքից դուրս բերվելով, զանգվածաբար ոչնչացվեց թուրքերի և քրդերի կողմից, իսկ մյուսներն ուղարկվեցին բանտ և հաջորդ օրերին ծանր խոշտանգումներից հետո ռազմական դատարանի որոշմամբ կախաղան հանվեցին:757 Ինչ վերաբերում է կանանց և երեխաներին, ապա նրանք, մինչև տղամարդկանց հետ հաշվեհարդարը կավարտվեր, արգելափակվեցին երեք մեծ շենքերում, որտեղ Յեպեն, Կյունցլերը և նրա կինը նրանց ամեն օր սնունդ էին մատակարարում:758

Որքան էլ մեծ էր բոլոր դժբախտներին սնունդով ապահովելու՝ նրանց ցանկությունը, այնուամենայնիվ բազմահազար սովահար մարդկանց բավարարելն անհնար էր: Միայն Յեպեն օրական երկու-երեք անգամ ավանակի վրա բարձված ուտելիք էր տանում դատապարտվածներին՝ կարողանալով ամեն օր հոգ տանել շուրջ 250 մարդու համար:759 Երբ, սակայն, ուժերի անօրինակ լարումով նա փորձում էր օգտակար լինել նաև մյուսներին, հարկ էր լինում դիմել զինվորների օգնությանը: «Նրանք հասել էին այն աստիճանին, որ ինչպես վայրի գազաններ հարձակվում էին, հենց որ ուտելիքի հոտ էին առնում... Առաջին օրը Կարենը տեսավ, թե ինչպես են նրանք հարձակվում մի սատկած և կիսով չափ նեխած ավանակի վրա, պատառոտում նրան և ազահաբար խժռում...»:760

756. Künzler J., Im Lande..., էջ 48: Մարտերի ընթացքում թուրք սպանվածների քիվը հասնում էր մոտ 100-ի: Տե՛ս Künzler J., Dreißig Jahre..., էջ 67:

757. Sick I. M., Karen Jeppe..., էջ 136: Տղամարդկանցից միայն մեկին՝ ԳԱԱ-ի հիվանդանոցի բեռնակիր Զակորին հաջողվեց հրաշքով փախչել և ծանր վիրավոր վիճակում հասնել Կյունցլերի բնակարանը: Վերջինս նրան տեղավորեց հիվանդանոցում, որտեղ Զակորը կարճ ժամանակում ապաքինվեց: Տե՛ս Künzler J., Im Lande..., էջ 48: Դետագայում, սակայն, նա ևս հարկադրված եղավ բռնել աքսորի ճանապարհը: Անդ, էջ 63:

758. Անդ, էջ 50:

759. Sick I. M., Karen Jeppe..., էջ 146:

760. Անդ:

Կյունցլերը նույնպես իր ուժերի ներածին չափով հոգ էր տանում այնտեղ գտնվող վիրավորների և հիվանդների համար, տրամադրում դեղորայք, կատարում վիրակապումներ և այլն: Առճակատման ավարտից հետո նա հիվանդանոցը դարձյալ տրամադրեց հայ հիվանդներին ու փախըտականներին. որտեղ տասնյակ դժբախտներ կարողացան առժամանակ ապաստան գտնել:⁷⁶¹ Որքան էլ, սակայն, օգնությունը մեծ լիներ, թշվառության ծովում այն միայն մի կաթիլ էր:⁷⁶² Իսկ 1915 թ-ի նոյեմբերի երկրորդ կեսին ծայր առավ նաև Ուռհայի հայերի աքսորումն ուղեկցվելով աննկարագրելի սարսափներով:⁷⁶³ Այդ ճակատագիրն ունեցան նաև օգոստոսի 19-ի կոտորածներից հետո օտարերկրացիների տներում և հաստատություններում ապաստանած հարյուրավոր հայերը: Բացառություն չկազմեցին նույնիսկ հիվանդները, որոնք խնամվում էին ԳԱԱ-ի հիվանդանոցում և Կյունցլերի կողմից հիվանդանոցի վերածված տանը:⁷⁶⁴ Այն տղամարդիկ, որոնք թաքնվել էին ամերիկյան որբանոցի շենքում, անմիջապես կախվեցին. իսկ գերմանական հիվանդանոցում, Կյունցլերի և Ֆ. Էքարտի տներում ապաստանածները «գորակոչվեցին»: Համեմայն դեպս, այդպիսին էր նրանց վերաբերյալ հաղորդված միակ պաշտոնա-

761. Jeppe K., *Unsere Arbeit nach der Katastrophe*, „Der Christliche Orient“, 1919, էջ 4-5: Հմմտ. Künzler J., *Bericht über die letzte Arbeit des deutschen Missionshospitales in Urfa*, անդ, էջ 27:

762. Ժամանակակիցների հուշերը լի են տառապանքների և սարսափների անօրինակ պատկերներով: «Ծծկեր մանուկները խմբերով կիտված էին քակում և հառաչալից իրենց վերջին էին սպասում.- պատմում էր Կյունցլերը.- Ոչ բոլոր մայրերը քաջություն ունեին նրանց նետելու մեծ ջրավազանը: Եվ չնայած դրան, այն պեսք է ամեն առավոտ դատարկվեր մեռած կանանցից ու երեխաներից...»: Տե՛ս Künzler J., *Dreißig Jahre...*, էջ 70:

763. «Անմոռանալի են նրանց մասին պատմող տեղեկությունները.- գրում էր Ի. Մ. Ջիկը.- անմոռանալի ոչ միայն նրանց ծանր ողբերգության, դառը տառապանքների, այլ ավելի շուտ նրանց հերոսականության, կամավոր ինքնազոհաբերման և մահվան ճանկերում նրանց ցուցաբերած ուժի պատճառով, որոնց մասին վկայում են տեղեկությունները: Այն թագավորական ճեմնակ թռչունների մի հսկա երան էր, որը գիշերով մեկնեց այն աշխարհը, և որի՝ կարուսի երգը դեռ արձագանքում է նրության մեջ»: Տե՛ս Sick I. M., *Karen Jeppe...*, էջ 138:

764. Künzler J., *Im Lande...*, էջ 60-63: Միայն հիվանդանոցից դուրս քերվեցին և արտովեցին շուրջ 70 կանայք և երեխաներ: Տե՛ս Künzler J., *Bericht über die letzte Arbeit des deutschen Missionshospitales in Urfa*, „Der Christliche Orient“, 1919, էջ 27:

կան տեղեկությունը:⁷⁶⁵

Սարսափների այդ քառուսմ այնուամենայնիվ կային մարդիկ, որոնք անձնվիրաբար շարունակեցին իր փրկարար առաքելությունը նույնիսկ այն ժամանակ, երբ այդ արդեն կատարելապես անհնար էր թվում: Ադախիսին էր Բ. Էքարտը, որը, տեղյակ լինելով ֆաբրիկայի ջրհորում թաքնված մի քանի հայերի մասին, չնայած շենքում թուրք զինվորների մշտական առկայությանը, շաբաթներ շարունակ նրանց սնունդ էր մատակարարում, իսկ հետագայում օգնեց նաև դիմել փախուստի:⁷⁶⁶ Այդախիսին էր նաև Կարեն Յեպեն...

Նրա մոտ ապաստանող մարդկանց թիվն օրեցօր շարունակ ավելանում էր՝ օգոստոսին հասնելով 30-ի:⁷⁶⁷ Մեկուսի, արվարձանային վայրում գտնվող այդ տանը նա երեխաներին սկսեց դասավանդել գերմաներեն լեզու՝ ջանալով նրանց համար ստեղծել ըստ հնարավորին խաղաղ և բնականոն առօրյա:⁷⁶⁸ Խաբուսիկ խաղաղություն, որն, իհարկե, երկար չէր կարող տևել: Երբ ապստամբությունը ճնշվեց, և սկսվեց աքսորը, թաքնված հայերին հայտնաբերելու նպատակով քաղաքում ծայր առան խուզարկություններ: Առանձնակի հետևողականությամբ որոնվում էր քահանա Գարեգին Ոսկերչյանը, որն իր ընտանիքով պատսպարվել էր Յեպեի տանը: Ուստի վերջինս նպատակահարմար գտավ նրան հեռացնել ու թաքցնել մերձակա այգիներից մեկում՝ ապահովելով սննդով:⁷⁶⁹ Այնուամենայնիվ կասկած չունենալով, որ ոստիկանները շուտով կհայտնըվեին նաև իր տանը, և այդ դեպքում մյուս՝ թվով տասը տղամարդկանց այլևս փրկություն չէր լինի, Կ. Յեպեն նրանց հանձնարարեց հատակի տակ փորել մի ստորգետնյա խռոչ վտանգի դեպքում այնտեղ պատրու-

765. Künzler J., *Das armenische Hilfswerk in Urfa und Umgebung*, „Der Orient“, 1919, էջ 34:

766. Künzler J., *Im Lande...*, էջ 97: Հմմտ. Էքարտ, Բ., «Ապրածս օրերը Ուռհայում», Երևան, 1990, էջ 50-56: Բ. Էքարտն, ի դեպ, 1916 թ-ին ուղարկվեց ծառայության Բաղդադի երկաթուղու շինարարությունում, որտեղ մնաց մինչև պատերազմի ավարտը: Տե՛ս Lepsius J., Franz Eckart, „Der Orient“, 1919, էջ 147:

767. Sick I. M., Karen Jeppe..., էջ 130: Նրանցից 10-ը տղամարդիկ էին:

768. Անդ, էջ 130:

769. Melkonjan M., *Karen Jappes schwerste Zeit*, „Orient im Bild“, 1936, էջ 31:

պարվելու համար:⁷⁷⁰ Նրա հույսը, որ երեխաները և կանայք, գտնվելով գերմանական որբանոցի պաշտպանության ներքո, կկարողանային արքայից խուսափել, ցավոք, չարդարացավ, և կարճ ժամանակ անց կատարված խուզարկությունից հետո, չկարողանալով հայտնաբերել թաքնըված տղամարդկանց, ոստիկաններն իրենց հետ տարան այնտեղ գտնվող երեխաներին ու կանանց:⁷⁷¹

Նկատի առնելով նոր խուզարկությունների հավանականությունը՝ Յեպեն այնուհետև իր տանից տղամարդկանց ուղարկեց Տեր-Փարեզինի թաքստավայրը, որտեղ նրանք միասին մնացին մինչև աշնան վերջը:⁷⁷² Ինչպես հետագա օրերը ցույց տվեցին, դա միանգամայն հիմնավորված էր, քանի որ Տեր-Փարեզինին հայտնաբերելու նպատակով նրա տանը մանրագնին խուզարկությունները կրկնվեցին բազմաթիվ անգամներ:⁷⁷³ Նրան ի հայտ բերելու համար գործի էր դրվել ոստիկանների և լրտեսների մի ամբողջ բանակ, և «վտանգավոր թշնամու» համարում ստացած քահանան, ծանր վիճակից ելք չգտնելով, միաժամանակ իր պատճառով մյուս փախստականներին չվտանգելու համար նոյեմբերի սկզբին իր կնոջ հետ միասին ինքնասպանություն գործեց:⁷⁷⁴

Աշնան ցրտերն ընկնելուց հետո փախստականները դարձյալ վերադարձան Յեպեի բնակարանը՝ ամեն օր, առավոտից մինչև ուշ գիշեր մնա-

770. Sick I. M., Karen Jeppe..., էջ 130: Նրանց թվում էր նաև մի տասնչորսամյա պատանի, որին Յեպեն կարողացել էր աքսորականների ճամբարից աննկատ իր մոտ տանել և թաքցնել: Անդ, էջ 149:

771. Melkonjan M., Karen Jappes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 47: Նրանց թվում աքսորի ճանապարհը բռնեց նաև Յեպեի որդեգիր դուստր Լուիզան, որին, սակայն, մի քանի օր անց հաջողվեց կաշառքով ետ քերել և, հակառակ բոլոր հետապնդումներին, հուսալիորեն թաքցնել: Անդ, էջ 48: Յեպեն նոյեմբերի 3-ին Լուիզային ամուսնացրեց իր մյուս որդեգրի՝ Միսաք Մելքոնյանի հետ: Անդ, էջ 11:

772. Անդ, էջ 47: Յեպեն նրանց հետ կապ էր պահպանում Միսաքի միջոցով, որը, ծախված որպես թուրք, գիշերային ժամերին այցելում էր նրան և հոգում սննդի տեղափոխման հարցը: Բոլոր ծախյալներն իրենց մոտ պահում էին Յեպեից ստացած որոշ քանակությամբ թույն, որպեսզի թուրքերի ձեռքը կենդանի չընկնեին: Անդ:

773. Անդ:

774. Melkonjan M., Karen Jappes schwerste Zeit, „Orient im Bild“, 1937, էջ 14: Նրա երեխաները շարունակեցին մնալ Յեպեի մոտ: Անդ, էջ 26:

լով այնտեղ փորված ապաստարանում:⁷⁷⁵ Խուզարկությունները շարունակվում էին, և հայտնաբերվելու ամենօրյա երկյուղով լի մռայլ և հոգեմաշ ամիսները հաջորդում էին միմյանց, երբ ներխուժեց մի նոր թշնամի ևս՝ վարակիչ տիֆը: Յեպեն հարկադրված էր ստանձնել նաև հիվանդապահուհու պարտականությունը և բազմաթիվ անքուն գիշերներից հետո ի վերջո կարողացավ բուրդին ապաքինել: Անձամբ, սակայն, նա այլևս ի վիճակի չէր դիմանալ տևական անասելի լարվածությանը, և ուժասպառ նյարդերը տեղի տվեցին: Երեք շաբաթ շարունակ նա գտնվում էր բացարձակապես անզիտակից վիճակում,⁷⁷⁶ իսկ երբ այնուհետև վերստացավ իր գիտակցությունը, այլևս չունեի շարժման նախկին ազատությունը: Նյարդերի ապաքինման և կազդուրման համար նրան անհրաժեշտ էր երկարատև հանգիստ, ինչի մասին այդ օրերին անհնար էր նույնիսկ երազել:

Ինչևէ, ժամանակն անցնում էր, և 1917 թ-ի աշնանը թվում էր, թե վտանգը արդեն սկսել է մեղմանալ, երբ կառավարությունը որոշում ընդունեց բռնագրավել Յեպեի բնակարանը՝ պահանջելով այն 24 ժամում ազատել: Գերթական այդ փորձությունը փախստականների և Յեպեի համար կործանարար կլիներ, եթե պատահականությունն օգնության չհասներ: Այդ օրերին իր դասակով Ուռհայում էր գտնվում մի գերմանացի մայր, որին Յեպեն առաջարկեց բնակվել իր տանը: Մայրը սիրով ընդունեց առաջարկը և տեղափոխվեց այնտեղ՝ ոստիկաններին արգելելով տան հանդեպ որևէ ոտնձգություն կատարել: Քանի որ, սակայն, երաշխավորված չէր, թե նա դեռ որքան այնտեղ կմնա, Յեպեն իր «ընտանիքի» հետ 1918 թ-ի փետրվարին մեկնեց այգիներում գտնվող իր ամառանոցը, որտեղ նրանք մի լեզգի շնիխի թաքուն աջակցությամբ կարողացան դիմակայել մինչև աշուն:⁷⁷⁷ Իսկ աշնանը, երբ կառավարությունը կենդանի մնացած հայերին այլևս նախկին «հետևողականությամբ» չէր հետապնդում, եկավ բաժանման պահը: Յեպեն բոլոր տղամարդկանց ուղարկեց երկաթուղու շինարարությունում աշխատելու, իր երկու որդեգիրներին՝ Միսաքին ու

775. Անդ, էջ 27:

776. «Մենք այն տպավորությունն ունեինք, որ նրա նյարդերն ամբողջովին սպառվել են,- պատմում էր Մ. Մելքոնյանը:- Նա կարծես կորցրած լիներ իր բանականությունը: Դաճախ վեր էր թռչում անկողնուց... Դաճախ չէր գիտակցում, թե ինչ է անում, և խառնաշփոթ, անհասկանալի մտքեր էր արտաբերում»: Անդ, էջ 37:

777. Սահակեան Ա., Դիւցազնական Ուռհան եւ իր հայրողիները, Բնյուս, 1955, էջ 975-976: Գմնտ. Melkonjan M., Karen Jappes schwerste Zeit, „Orient im Bild“, 1938, էջ 10:

Լուիզային ժամանակավորապես հանձնեց մի քուրդ առաջնորդի պաշտպանությանը և Կյունցլերի ուղեկցությամբ մեկնեց Եվրոպա ... 1921 թ-ին կրկին վերադառնալու համար:⁷⁷⁸

4. Յեպեն, Յ. Կյունցլերը և Բ. Էքարտն այսպիսով անձնուրացաբար և հաճախ անհավատալի խիզախումների գնով փորձում էին օգնել աքսորյալներին և թեթևացնել նրանց տառապանքները: Ինչ վերաբերում էր, սակայն, Ֆ. Էքարտին, ապա նրա վերաբերյալ ժամանակակիցների տեսակետները միանշանակ չէին, և հայկական շրջաններում առավելապես տիրապետում էր այն կարծիքը, որ նա հարել է թուրքական կողմին՝ դավաճանելով այն առաքելությանը, որի համար ուղարկվել էր Ուռհա: Քանի որ դրա համար ոչ առանց հիմքի վկայակոչվում էր գորգի ֆաբրիկան թուրքական բանակին հանձնելու փաստը՝ մենք ստորև կփորձենք փոքր-ինչ հանգամանալից անդրադառնալ այդ խնդրին:

Ֆաբրիկայի շենքը, որ պայքարող երկու կողմերի համար ստրատեգիական մեծ նշանակություն ուներ, ինչպես տեղեկացնում էր Կյունցլերը, թուրքերի կողմից գրավվեց այդ առթիվ Էքարտի կատարած խընդրանքի հիման վրա: «Այդ համալիրի գրավումը պետք է երկու կողմերի համար էլ մեծ նշանակություն ունենար,- նշում էր Կյունցլերը: - Հայերը ևս սկզբում մտադրություն ունեին ֆաբրիկան գրավել, որի տանիքներից կարելի էր տեսադաշտում ունենալ ողջ մուսուլմանական թաղամասը, առավել ևս, որ Ֆաբրիկայի դահլիճներում կային նրանց ազգակիցներից շուրջ 1000 մարդ: Ֆաբրիկայի ղեկավարին՝ պրն. Էքարտին տեղեկացվել էր հայերի դիտավորության մասին: ... Եվ նա ծանր սրտով վճռեց թուրքական կառավարությանը խնդրել ֆաբրիկան գրավել, նախքան հայերը կգային նույնն անելու...»:⁷⁷⁹

Զնայած Կյունցլերը թափանցիկ ակնարկ էր կատարում նաև Ֆ. Էքարտին համակած երկվության մասին և նշում. որ նա, համոզված լինելով, որ թուրքերին կհաջողվեր ճնշել ապստամբությունը, այդ որոշումը կայացրել էր ֆաբրիկան ռմբակոծությունից, իսկ պայքարի ավարտից հետո նաև թալանից փրկելու նպատակով,⁷⁸⁰ այնուամենայնիվ շենքի հանձնման փաստը, ցավոք, պահի համակած թուլության հետևանք չէր, այլ վկա-

778. Անդ:

779. Künzler J., Im Lande..., էջ 41:

780. Անդ:

յում էր կառավարության հայաջինջ քաղաքականության հետ համակերպվելու՝ էքարտի կողմնորոշման մասին: Դա հաստատվում էր նաև հետագայում հաղորդված այլ տեղեկություններով: Մասնավորապես հայտնի է, որ Յեպեն իր մոտ մարդկանց թաքցնելու հանգամանքը Ֆ. էքարտից պահում էր խիստ զաղտնի, իսկ մի անգամ, երբ հսկչի թերացման պատճառով դա վերջինիս կողմից բացահայտվեց, Յեպեն և նրա պաշտպանյալների համար կարող էր ունենալ անենածանր հետևանքները. «Միս Եփփեն ամիսեն ավելի էր, որ գամուած կը մնար անկողին...»: պատմում էր նրա պաշտպանյալներից մեկը՝ Պետրոս Տեր-Պետրոսյանը: - Այդպիսի օր մըն էր, ես եւ Գեորգը իր մօտ էինք, երբ յանկարծ սենեակէն ներս մտավ ծանօթ հեր էքարտը, մենք քարացանք այդ վայրկեանին: Էքարտը հիւանդոտեսի եկած էր: Դժուարաւ բարձրացանք մեր տեղէն և դուրս ելանք սենեակէն: ... էքարտին մեկնելէն վերջ, վազեցինք Միս Եփփէին մոտ եւ զայն գտանք բոլորովին զգայագիրկ վիճակի մէջ: Բարեբախտաբար շուտով Քիւնցլէրը հասաւ ու ներարկումներով սթափեցուց զայն: Պարզուեցաւ, որ էքարտը քանի մը օր պայմանաժամ տուած է Միս Եփփէին, որ մեզ յանձնէ կառավարութեան: էքարտը պատճառաբանած էր, որ ամբողջ գերմանական միսիոնը իր պատճառաւ պիտի վտանգուի, ու իրենք իբրեւ թուրքոյ դաշնակից պարտաւոր են դէմ չերթալ թուրքերու քաղաքականութեան: Այս հանդիպումէն վերջ, երբ միս Եփփէն քիչ մը ինքզինք գտաւ, Միսաքին ըսած էր. եթէ էքարտը անգամ մըն ալ իր տունը մտնէ, գնդակի բաժին մը ընէ զայն»:⁷⁸¹

Զնայած պատերազմի վերջին շրջանում, երբ աքսորն ավարտվել էր, և եղեռնը վերապրած՝ հայության մնացորդներն այլևս նախկին մեթոդներով չէին հետապնդվում, Ֆ. էքարտը դարձյալ մասնակից դարձավ նրանց ցուցաբերվող օգնության աշխատանքներին,⁷⁸² այնուամենայնիվ հայկական շրջաններում նա ձեռք էր բերել հանցակցի համարում, որն, ինչպես շուտով կտեսնենք, պատերազմից հետո նրա համար դարձավ ճակատագրական:

Ինչևէ, ճակատագիրը չխնայեց նույնիսկ ԳԱԱ-ի հիվանդանոցի հայ աշխատակիցներին: Դեղագործ Ա. Աթարյանը, որը ձերբակալվել

781. Սահակեան Ա., Դիւցազնական Ուռհան եւ իր հայրորդիները, Բեյրութ, 1955, էջ 971-972:

782. Künzler J., Im Lande..., էջ 13-14:

եր դեռ հունիսի 9-ին, օգոստոսի 12-ին բանտում սպանվեց:⁷⁸³ Չերբակավեցին նաև դեղագործի օգնական Յովսեփը և (նոյեմբերին) բժիշկ Ա. Աբուհայաթյանը:⁷⁸⁴ Չարդարացան գեթ նոր հիվանդապահուհիներին փրկված տեսնելու՝ Կյունցլերի հույսերը, որոնք նույնպես բռնի միացվեցին քսոսոյալների շարասյանը:⁷⁸⁵ Հիվանդանոցում մնացին միայն չորս նախկին հիվանդապահուհիները, որոնց օգնությամբ նա կարողացավ շարունակել բուժապասարկման աշխատանքները:⁷⁸⁶ Դա, սակայն, երկար չտևեց. 1916 թ-ի հունիսին այն պատճառաբանությամբ, որ Կյունցլերը բժշկի դիպլոմ և հետևաբար բժշկական գործունեություն վարելու իրավունք չունեն, մի թուրք տեսչի կարգադրությամբ ԳԱԱ-ի բժշկական հաստատությունները (կլինիկան, դեղատունը, հիվանդանոցը և վիրահատարանը) փակվեցին:⁷⁸⁷ Ըստ Կյունցլերի, հիվանդանոցը, որը 1915 թ-ի հուլիսից մինչև 1916 թ-ի հունիս ամիսը օթևան էր տվել շուրջ 500 հայ քսոսոյալ կանանց և երեխաների, ստացել էր հայերի թաքստարանի համարում և իրականում փակվեց այդ պատճառով:⁷⁸⁸

Ինչևէ, չնայած որոշ ժամանակ անց, հուլիսին, իշխանությունների կարգադրությամբ հիվանդանոցը վերաբացվեց, սակայն արդեն զինվորական հոսպիտալի կարգավիճակով՝ տրամադրվելով բացառա-

783. Անդ: Հմմտ. Künzler J., Bericht über den Betrieb unseres Hospitals und der Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1916, էջ 57:

784. Künzler J., Bericht über die letzte Arbeit des deutschen Missionshospitals in Urfa, „Der Christliche Orient“, 1919, էջ 26-27:

786. Անդ: Խոսքը վերաբերում է Աննա Տաշչյանին, Կուբսի Կյուպեյանին, Խաթուն Դեզիրմենջյանին և Հռիփսիմե Ալահայտոյանին: Տե՛ս Künzler J., Bericht über die letzte Arbeit des deutschen Missionshospitals in Urfa, „Der Christliche Orient“, 1919, էջ 28:

785. Künzler J., Bericht über den Betrieb unseres Hospitals und der Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1916, էջ 58:

787. Künzler J., Im Lande..., էջ 73: Հատկանշական է, որ մեկ օր անց, երբ քաղաքի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը դեղորայքի կարիք ուներ, դեղատունը բացվեց և ամիջապես դարձյալ փակվեց: Տե՛ս Nachrichten, „Der Christliche Orient“, 1916, էջ 3:

788. Տե՛ս Briefe von Bruder Künzler aus Urfa, „Der Christliche Orient“, 1919, էջ 16: Կյունցլերը միաժամանակ նախազգուշացվեց, որ նա ևս կարժանանար հայերի ճակատագրին, եթե շարունակեր նրանց աջակցություն ցուցաբերել: Անդ:

պես հիվանդ և վիրավոր զինվորականների բուժմանը:⁷⁸⁹ Նրանց խընամքն իրականացվում էր հիվանդապահուհիների կողմից, իսկ Կյունցլերն անձամբ դրան որևէ մասնակցություն չէր ցուցաբերում:⁷⁹⁰ Նոր ուղիներ որոնելով բնակչության սպասարկման իր նախկին գործունեությանը վերադառնալու համար:

Առիթը կայացավ 1916 թ-ի ամռան սկզբին, երբ դր. Աբուհայթյանը երջանիկ պատահականությամբ կալանքից ազատվելով՝ վերադարձավ Ուռհա, և այդպիսով Կյունցլերը դարձյալ ասիստենտի կարգավիճակով աշխատելու հնարավորություն ստացավ:⁷⁹¹ Վերջինս կարողացավ կարճ ժամանակում դր. Ֆիշերի տանը ստեղծել բուլոր պայմանները՝ կլինիկայի, դեղատան և վիրահատարանի գործունեությունն այնտեղ փոխադրելու համար և դեռ ամռանն իր աշխատանքները վերսկսեց Նոր «հիվանդանոցում»:⁷⁹² Այդ թերևս կատարվեց խիստ ժամանակին, քանի որ Կյունցլերը շուտով պետք է կանգներ մի Նոր գերխնդրի առջև, որն այդուհետ պետք է դառնար նրա «գլխավոր առաջադրանքը»: 1916 թ-ի հուլիսից, երբ հայ ժողովրդի տեղահանումն ու աքսորն արդեն փաստացիորեն ավարտվել էր,⁷⁹³ բազմաթիվ կանայք և աղջիկներ, որոնք շարասյուններից ետ էին ընկել կամ փախչելով՝ ապաստանել աքսորաճանապարհի մերձակա գյուղերում, հետզհետե սկսեցին վերադառնալ մոտակա քաղաքները, և այդ թվում նաև Ուռհա:⁷⁹⁴ Վերադարձողների հոսքն առանձնապես մե-

789. Künzler J., Bericht über den Betrieb unseres Hospitals und der Klinik in Urfa, „Der Christliche Orient“, 1916, էջ 58:

790. Տե՛ս Berichte unserer Mitarbeiter, „Der Christliche Orient“, 1917, էջ 61:

791. Künzler J., Im Lande..., էջ 75:

792. Անդ: Համարվելով զինվորական ծառայության մեջ՝ Աբուհայթյանը ոչ թուրքական հաստատությունում աշխատելու իրավունք չուներ: Ուստի նա ստանձնել էր հիմնականում տեսչական վերահսկողությունը, իսկ աշխատանքը գրեթե ամբողջությամբ ծանրացել էր Կյունցլերի վրա: Անդ:

793. Աքսորյալների վերջին շարասյունն Ուռհայով անցավ 1916 թ-ի հունիսին: Նրանք Բաղդադի երկաթուղու շինարարությունում աշխատող հայերն էին, մի քանի հազար մարդ, որոնք Ուռհայից ոչ հեռու՝ Վերանչեհիլում զանգվածաբար սրի քաշվեցին: Անդ, էջ 76:

794. Անդ, էջ 86-87: Շատ երիտասարդ աղջիկներ և կանայք, որոնք փախչելով՝ ծառայության էին մտել մահմեդականների տներում, 1916-17 թթ. աշնանն ու ձմռանը ծայր սառած սովի պատճառով ծառայությունից հեռացվեցին և քնակամարադ պետք է մեկնեին մեծ քաղաքները: Տե՛ս J., Aus der Arbeit, „Mitteilungen aus der Arbeit...“, 1917, էջ 1:

ծացավ 1916-17 թթ. ծնռանը և գարնանը, երբ Դեր էս Ջորի մոտ գտնվող Ռակա արքայապալատից, որտեղ 1916 թ-ի սկզբին դեռ 20 000 արքայալուծներ կային, առավել աշխատունակ կանայք և երեխաները (թվով 300 ընտանիք) կառավարության որոշմամբ դարձյալ տեղափոխվեցին Ուռհա ծանապարհաշինության մեջ աշխատելու համար: Իշխանությունները հույս ունեին նրանց օգնությամբ տարածաշրջանում կասեցնել նաև արհեստագործության սպառնալից անկումը:⁷⁹⁵ Աքսորը հաղթահարած այդ դժբախտները գտնվում էին անասելի ծանր վիճակում. «Նրանք մուրացիկի պես աղքատ են,- նշում էր Կյունցլերը,- նրանց պակասում է նույնիսկ ամենաանհրաժեշտը, հաճախ զուրկ են անգամ որևիցե հագուստից...»:⁷⁹⁶

Գոյատևման միջոցներ գտնելու հույսով վերադառնալով քաղաք նրանք, սակայն, հարկադրված էին նոր դաժան հուսախաբություններ ապրել. քանի որ օրենքից դուրս հայտարարված ժողովրդի մնացորդների հետապնդումը շարունակվում էր նույն հետևողականությամբ: Այս անգամ, սակայն, արքայի փոխարեն գործի էր դրվել բռնի մահմեդականացման մեքենան, որից խուսափել քչերին էր հաջողվում: Մահմեդական կրոնի ընդունումը իշխանությունների կողմից ներկայացվում էր որպես հայերի ֆիզիկական կյանքի ապահովագրման միակ պայմանը, և որ ամենաուշագրավն է, այն կատարվում էր հարկադիր «կամավորության» սկզբունքով: «Իհարկե, դա նշանակում է, որ բոլոր հայերը կամավոր մահմեդական են դառնում.- նշում էր Կյունցլերն իր տեղեկություններից մեկում.- քանի որ նրանք պետք է մի դիմում ներկայացնեն, որտեղ արտահայտում են մահմեդական դառնալու՝ իրենց ցանկությունը: Իսկ եթե այդ չեն անում, նրանց սպառնում են տաժանակիր աշխատանքով և նոր արքայով: Դա կատարվում է ոչ միայն Ուռհայում, այլև այլ վայրերում, որտեղ դեռ հայեր կան»:⁷⁹⁷

Կյունցլերի վկայությունները հնարավորություն են ընձեռում հստակ պատկերացնել, թե թուրքական կառավարությունն արքային

795. Künzler J., Berichte über das Notstandswerk in Urfa, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 119:

796. Sbu Aus Briefen unserer Mitarbeiter, „Der Christliche Orient“, 1917, էջ 51:

797. Künzler J., Berichte über das Notstandswerk in Urfa, „Der Orient“, 1919, էջ 65: Կյունցլերի այս տեղեկությունն ուղարկվել է 1917 թ-ի հուլիսի 4-ին, սակայն գրաքննության արգելքների պատճառով այն հրատարակվեց միայն պատերազմից հետո: Տես անդ, էջ 64-ի ծանոթագրությունը:

հաջորդող շրջանում որքան մեծ հետևողականությամբ էր իրականացնում կենդանի մնացած հայերի, մասնավորապես որբ երեխաների մահմեդականացման և թուրքացման իր քաղաքականությունը: Հալեպում, օրինակ, մի շվեյցարուհի երկու տուն վերածել էր որբանոցների, որտեղ նրա միջոցով հավաքվել և խնամվում էին բազմաթիվ հայ որբեր: 1917 թ-ի մարտին այդ տները կալանվեցին, և երեխաները բռնի տեղափոխվեցին Անատոլիայի թուրքական որբանոցները, որոնք արագորեն հիմնվել էին մի կողմից թուրքիային որբախնամ պետության համարում բերելու, իսկ մյուս կողմից հայ երեխաներին թուրքացնելու նպատակով:⁷⁹⁸ Ուշագրավ է. որ երբ քսոսոյալների համակենտրոնացման ճամբարներում համատարած մահացության հետևանքով ի հայտ եկան բազմաթիվ ծնողազուրկ երեխաներ, մի թուրքական որբանոց հիմնվեց նաև Ուռհայի մերձակայքում, որտեղ հավաքագրվեցին 1000 հայ որբեր. այդ թվում բազմաթիվ նորածիններ: Նրանց բոլորին տրվեցին մահմեդական անուններ, իսկ դաստիարակությունը կատարվում էր թուրքերենով և մահմեդական կրոնի սկզբունքներով:⁷⁹⁹ Բարեբախտաբար, սակայն, թուրքական որբանոցներն ի վիճակի չէին «պատսպարել» բոլոր որբերին...

Ի թիվս եղեռնը վերապրած հազարավոր այլ հայերի, հարկադրված մահմեդականություն ընդունեցին նաև Ռակայից Ուռհա տեղափոխված 300 հայ ընտանիքները:⁸⁰⁰ Կրոնափոխությունն իհարկե ընձեռում էր սոսկ գոյատևման իրավունք, մինչդեռ անօթևան, սովահար և հուսալքված մարդկանց գոյատևումն անհնար էր առանց կանոնավոր նյութական աջակցության. մի առաջադրանք, որի լուծմանն իրենց ողջ ուժերով նվիրվեցին Կյունցլեր ամուսինները: «1916 թ-ի հուլիս ամսից,- նշում էր Յ.


798. Անդ, էջ 65:

799. Առժամանակ անց մի համաճարակի հետևանքով այդ երեխաների մեծ մասը մահացավ, իսկ 1917-18 թթ. ձմռանը, երբ մուլեզնում էր սովը, կառավարությունը ստիպված էր դռն կենդանի 200 երեխաների մեծ մասին ազատ արձակել՝ այնտեղ թողնելով միայն 20 հոգու, որոնք «լավ մահմեդականներ» դառնալու հույսեր էին ներշնչում: 1918 թ-ի դեկտեմբերին իշխանությունները հարկադրված էին մնացած երեխաներին և ազատ արձակել, որոնք այնուհետև տեղափոխվեցին Կյունցլերի կողմից հիմնված որբանոցը: Stb u Künzler J., Im Lande..., էջ 64-65:

800. Künzler J., Berichte über das Notstandswerk in Urfa, „Der Orient“, 1919, էջ 65:

Կյունցլերը.- մեր գլխավոր առաջադրանքը դարձավ մեր քաղաքում հայտնվող կանանց և երեխաներին օգնության ցուցաբերումը»:⁸⁰¹

Եթե նկատի առնենք. թե որպիսի արագությամբ էր վերադարձողների թիվն աճում. կարող է պարզ դառնալ. թե որքան ծանր էր ստեղծված իրավիճակը: Եթե. օրինակ. միայնակ և անապաստան որբերի թիվն Ուռհայում 1916 թ-ի հոկտեմբերի 10-ի դրությամբ 380 էր, ապա դեկտեմբերին այն հասել էր արդեն 750-ի:⁸⁰² 1917 թ-ի հունվարին այնտեղ կային 1300, մարտին 2028. մայիսին 2518, իսկ հուլիսին շուրջ 2600 որբ երեխաներ:⁸⁰³ Առանց շուտափույթ օգնության նրանք կդատապարտվեին սովամահության:



ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՎՈՒՔԶՅԱՆՆ իր տիկնոջ՝
ՌՈՒԹ ԴԵՄԻՏԻ և զավակների հետ


ԿԱՐԵՆ ՅԵՊԵԻ որդեգիր ՄԻՍԱԲ ՄԵԼԵՐՈՆՅԱՆԸ
հասուն տարիքում

801. Künzler J., Im Lande..., էջ 87:

802. Sbu Nachrichten aus dem Hilfswerk, „Der Christliche Orient“, 1917, էջ 11: Զննմ. Lepsius J., Aus der Arbeit, „Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius“, 1918, էջ 55:

803. Schäfer R., Geschichte..., էջ 97:

2. ՊԱՏԵՐԿՉՄԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.
ՊԱՅՔԱՐ ԲՆԱԶՆԱԿՈՂ
ՀԱՅՈՒԹՅԱՆԸ ԶՈՐԱԿԻԳ
ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Համաշխարհային պատերազմի բռնկումն ինչպես այլոց, այնպես էլ հայերի գերմանացի բարեկամների համար միանգամայն անսպասելի էր և չնայած գնահատումների ու մեկնաբանությունների բազմազանությամբ, նրանց մեջ առանձնակի ոգևորություն չառաջացրեց: Ինչ վերաբերում է Լեփսիուսին, ապա նա սկզբնապես, պատերազմի հիմնական մեղքը վերագրելով Անգլիային, Գերմանիայի մասնակցությունը համարում էր անխուսափելի, պարտադրված և հետևապես արդարացի: Ուստի պատահական չէ, որ պատերազմի առաջին օրերին տպագրված նրա հոդվածները հատկանշվում էին պատերազմի անհրաժեշտության ըմբռնումով և Գերմանիայի հաղթանակին զորավիզ լինելու հայրենասիրական մղումներով: «Մենք պարտավոր ենք հաղթել և կհաղթենք,- նշում էր նա իր «Պատերազմի թուցիկ» վերնագիրը կրող կոչում:- Այդ պարտավորվածությունը ընդհանուր ոչինչ չունի թե սլավոնական դաժանության և թե անգլիական մանր չարչիական ոգու հետ: Այդ պարտավորվածությունը կատեգորիկ հրամայական է, որ Մարտին Լութերի ժողովուրդը... իրավունք չունի կործանվել ռուսական բարբարոսության և ֆրանսիական ազատամտության կողմից...»:⁸⁰⁴

Լեփսիուսը սկզբնական շրջանում դրականորեն էր գնահատում նաև Թուրքիայի և Գերմանիայի ռազմական զինակցության փաստը՝ այդ կարևորելով ինչպես իր ընկերության մասնաճյուղերի պահպանման ու զարգացման, այնպես էլ հաղթանակից հետո Թուրքիայում գերմանական լեզվի և մշակույթի ներթափանցումն ակտիվացնելու և այդպիսով եվրոպական երկրների լեզվամշակութային ոլորտների մինչպատերազմյան աննպաստ ծավալային հարաբերակցությունն ի նպաստ գերմանականի վերափոխելու առումով,⁸⁰⁵ իսկ այն հան-

804. Lepsius J., Kriegs-Flugblatt, „Der Christliche Orient“, 1914, էջ 120-ի և 121-ի միջև: «Պատերազմը մեզ համար ոչ վրեժխնդրության ակտ է, ոչ ավազակային հարձակում և ոչ էլ զործարք,- նշում էր նա մեկ ուրիշ անգամ,- այլ սուրբ պարտականություն, գերմանական ազգի, գերմանական մշակույթի և Գերմանիայի համաշխարհային հեղինակության պահպանման պարտականությունը: Տե՛ս Lepsius J., Unsere Waffenbrüderschaft mit der Türkei, „Der Christliche Orient“, 1915, էջ 25:

805. Ըստ Լեփսիուսի կողմից հրապարակված վիճակագրական տվյալների, Թուրքիայի դպրոցներում 70000 աշակերտ սովորում էր ֆրանսերեն, իսկ 50000 աշակերտ՝ անգլերեն: Գերմաներեն էր սովորում միայն 5000 աշակերտ: Տե՛ս Lepsius J., Die Türkei im Kriegszustande, „Der Christliche Orient“, 1914, էջ 157:

գամանքը, որ Թուրքիայում 1914 թ-ի նոյեմբերի 14-ին սրբազան պատերազմ էր հայտարարվել, նրա կարծիքով առաջին հերթին թելադրված էր այդ երկրի՝ «հայրենասիրության գաղափարին անհաղորդ» մահմեդական ժողովուրդներին մեկ ընդհանուր դրոշի տակ համախմբելու անհրաժեշտությամբ:⁸⁰⁶

Պատերազմական իրավիճակի առաջացմամբ, սակայն, ի հայտ եկան նաև բազմաթիվ նոր հիմնահարցեր, տազնապներ ու մտահոգություններ կապված ԳԱԱ-ի և նրա մասնաճյուղերի գործունեության հետ: Պատերազմի սկզբից ևեթ մասնաճյուղերի հետ կանոնավոր հաղորդակցությունը խզվեց, և միաժամանակ ընկերության եկամուտներն այն աստիճան նվազեցին, որ անհնար էր նույնիսկ նվազագույն չափով ապահովել մասնաճյուղերի նյութական մատակարարումները: 1914 թ-ի օգոստոս ամսին, օրինակ, ԳԱԱ-ի օրական եկամուտները նվազել էին ավելի քան 10 անգամ:⁸⁰⁷ Նվազման գործընթացը շարունակվեց նաև հետագայում, և պատերազմի առաջին տասն ամիսներին կազմակերպության գանձարկը հոսեց ընդամենը 39 000 մարկ:⁸⁰⁸

Փոքրաթիվ նվիրատվությունները բավարարում էին միայն ընկերության առօրյա ամենամահրաժեշտ ծախսերը հոգալու համար, և այդուհանդերձ Լեփսիուսը ստեղծված իրավիճակի հետ հաշտվելու միտում չէր ցուցաբերում: Նրա համոզմամբ ոչ մի արհավիրք, նույնիսկ պատերազմը չպետք է կարողանար արգելել ԳԱԱ-ի մեծ առաքելությունը, որի աշխատաճյուղերի պահպանումը նա նոր իրավիճակում ևս իր ընկերության կարևոր առաջադրանքն էր համարում: «Առաջին զոհերն այժմ պատ-

806. Lepsius J., Unsere Waffenbrüderschaft mit der Türkei, „Der Christliche Orient“, 1915, էջ 30:

807. Lepsius J., Kriegs-Flugblatt, „Der Christliche Orient“, 1914, էջ 120-ի և 121-ի միջև:

808. Schäfer R., Geschichte..., էջ 87: Ինչ վերաբերում է 1914 թ-ի աշխատանքային տարվա ցուցանիշներին, ապա դրանք կազմում էին 107802 մարկ: Հաջորդ երկու տարիներին (1915-16 թթ.) ընկերությունը համապատասխանաբար ունեցել է 92826 և 86063 մարկ եկամուտ: Տե՛ս Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 91: Ի դեպ, ԳԱԱ-ի հրապարակումներից մեկում նշվում է, որ կազմակերպությունը 1915 թ-ին ունեցել է 93826 մարկ եկամուտ: Տե՛ս Auszüge aus den „Allgemeinen Missions-Nachrichten“, „Der Christliche Orient“, 1917, էջ 15-ի ծանոթագրությունը: Մենք, սակայն, հիմք ենք ընդունել առաջին տեղեկությունը, որը հաղորդվել է Լեփսիուսի կողմից:

կանում են հայրենիքին,- նշում էր Լեփսիուսը:- Բայց չնայած այդ ամենին, պետք է դեռ այնքան բան մի կողմ մնա, որ մենք թույլ չտանք, որ մեր միսիայի գործը տապալվի: Մենք մեր կարիքներն առավելագույնս կսահմանափակենք. և ինչը կարող է սպասել, պետք է սպասի: Սակայն մեր աշխատանքի հիմքերը պետք է պահպանվեն, որպեսզի, երբ Աստված գերմանական զենքին կնվիրի աշխարհի խաղաղությունը, մենք կրկնակի ուժով կարողանանք դրանց վրա կառուցումը շարունակել»: 809

Հաշվված ամիսների ընթացքում, սակայն, պատերազմը պետք է ցույց տար իր իրական դեմքը, և Լեփսիուսը պետք է բախվեր գերխնդիրների, որոնք արմատապես հեղաշրջելու էին պատերազմի և թուրք դաշնակցի վերաբերյալ նրա սկզբնական ըմբռնումները: Ծայր էր առել արևմտահայության ծրագրված տեղահանումն ու աքսորը, որի վերաբերյալ առաջին ահազանգը ինչպես նրա, այնպես էլ հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամների համար դարձավ Կ. Պոլսի գերմանական դեսպան Հանս Ֆրայխեր ֆոն Վանգենհայմի կողմից 1915 թ-ի մայիսի 31-ին ԱԳՆ-ին ուղղված հետևյալ հեռագիրը (որի պատճենը ԱԳՆ-ն ուղարկել էր նաև Լեփսիուսին): 810 «Հայկական լրտեսության դեմն առնելու և նոր հայկական զանգվածային ապստամբությունների կանխման նպատակով էնվերֆաշան նպատակադրվել է, պատերազմական դրությունն օգտագործելով, հայկական դպրոցների մի զգալի մասը փակել, հայերի փոստային հաղորդակցությունն ընդհատել, հայկական թերթերը փակել և այժմ

809. Lepsius J., Kriegs-Flugblatt, „Der Christliche Orient“, 1914, էջ 120-ի և 121-ի միջև:

810. Անշուշտ, որքան էլ թուրքական կառավարությունը ջանում էր քողարկել հայ ժողովրդի բնաջնջման՝ իր քաղաքականությունը, աշխարհը եղբրական իրադարձություններին անտեղյակ մնալ չէր կարող: Դեռ 1915 թ-ի մայիսի 24-ին «Agence Havas» լրատվական գործակալությունը հաղորդագրություն տարածեց այն մասին, որ «Հայաստանի թուրք ու քուրդ բնակչությունը օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ նաև հովանավորությամբ մեկ ամիս ի վեր հայերի զանգվածային կոտորածներ են սկսել...», իսկ երկու օր անց, մայիսի 26-ին, Անտանտի տեղությունների կողմից մարդու իրավունքները ոտնահարելու առնչությամբ Թուրքիային բողոքներ ուղղվեցին: Տե՛ս Lepsius J., Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1919, էջ 200: Հմմտ. Feigel U., Das evangelische..., էջ 190: Այդ իրադարձությունների վերաբերյալ լուրերը, սակայն, Գերմանիա թափանցեցին զգալի ուշացումով, և Լեփսիուսն ու իր գործընկերները երիտթուրքական կառավարության հայաջինջ ծրագրի մասին, թեկուզև մասնակիորեն, առաջին անգամ իրազեկվեցին հիշյալ հեռագրի միջոցով: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 88:

ապստամբած հայկական կենտրոններից բոլոր ոչ միանշանակ անմեղ ընտանիքներին վերաբնակեցնել Միջագետքում: Նա թախանձագին խնդրում է, որ մենք այդ հարցում նրան չխանգարենք: Թուրքերի այդ միջոցառումներն, իհարկե, մեզ թշնամի ամբողջ աշխարհում դարձյալ մեծ հուզումների տեղիք կտան և նաև կշահարկվեն մեր դեմ: Միջոցառումներն, անշուշտ, մեծ խստություն են նաև հայ ազգաբնակչության համար: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մենք իրավունք ունենք դրանք իրենց ձևի մեջ մեղմել, սակայն ոչ հիմնովին արգելել: Ռուսաստանից սնվող հայկական սադրանքները մեծ չափերի են հասել՝ սպառնալով Թուրքիայի գոյությանը: Խնդրում եմ դր. Լեփսիուսին և գերմանա-հայկական կոմիտեներին համապատասխանաբար հայտնեք, որ Թուրքիայի քաղաքական և ռազմական իրավիճակում ցավոք նշված միջոցառումներից խուսափել հնարավոր չէ...»: ⁸¹¹

Լեփսիուսի նախաձեռնությամբ ԳԱԱ-ի և Գերմանա-հայկական ընկերության կողմից անմիջապես մի գրություն ուղարկվեց դեսպանին, որտեղ նրան կոչ էր արվում «զսպել հայերի դեմ ձեռնարկվող գործողությունները»: ⁸¹² Ինչ վերաբերում էր հետագա քայլերին, ապա դրանք հնարավոր էր որոշակիացնել միայն իրադարձությունների ծավալին և ընթացքին ստույգ իրազեկ դառնալուց հետո, ուստի պատահական չէ, որ Լեփսիուսն իր հաջորդ պարտականությունը համարեց մեկնել Թուրքիա՝ անձամբ իրազեկվելու այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների մասին: Նրա ցանկությունն ԱԳՆ-ում գտավ անհրաժեշտ աջակցություն, և պետքարտուղարի տեղակալ Արթուր Ցիմերմանը դեսպանին հրահանգեց Թուրքիայի ՆԳ նախարար Թալեաթից թույլտվություն ըստանալ Լեփսիուսի ճանապարհորդության համար: ⁸¹³

Դա այնուհանդերձ այնքան էլ հեշտ չէր, քանի որ ոչ միայն Բ. Դուռը, այլև դեսպանն անձամբ նույնպես ամենևին շահագրգռված չէին, որ Լեփսիուսը

811. Lepsius J., Deutschland und Armenien..., էջ 79:

812. Schäfer R., Geschichte..., էջ 88: Ուշագրավ է, որ Լեփսիուսը նամակում փորձել էր ընդգծել նաև դեսպանի կողմից ակտիվ միջամտության ցուցաբերման քաղաքական անհրաժեշտությունը՝ դա հիմնավորելով «Թուրքիայի շահերով», որը պետք է ձրգտեր «շահել կովկասյան հայերի համակրանքը» և բացի այդ մեղմ մոտեցման միջոցով ձեռք բերել նաև իր քրիստոնյա հպատակների վստահությունը: Անդ:

813. Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“, 1919, էջ 22:

մեկներ թուրքիա, ուստի պատահական չէ, որ Կ. Պոլսից ստացված պատասխանը բացասական էր:⁸¹⁴ Լեփսիուսը, սակայն, համառորեն շարունակում էր պնդել թուրքիա մեկնելու անհրաժեշտությունը: Վկայակոչելով ԶԳԴ Սոֆիայի կենտրոնական գրասենյակից աքսորի և մահապատիժների վերաբերյալ իր ստացած վերջին լուրերը⁸¹⁵ նա իրավամբ այն համոզմունքն էր արտահայտում, որ հեռագրի տեղեկություններով անհնար էր իրականության մասին կատարել ստույգ կռահումներ: «Դեսպանին կարծես թե պարզ չէ ենվեր փաշայի որոշման նշանակությունը,- նշում էր նա ԱԳՆ-ում:- Ջանգվածային ապստամբություններ կանխելու համար աքսորում են ոչ թե «ընտանիքների», որոնք «միանշանակ անմեղ» չեն, այլ զանգվածների: Իսկ զանգվածների աքսորումը նշանակում է զանգվածային կոտորածներ: Այդ գիտի ամեն ոք. ով ծանոթ է թուրքիայի ներքին պայմաններին, որոնց ներքո տեղի են ունենում նման աքսորումները...»:⁸¹⁶

Ուղևորության թույլտվությունը ծեռք բերելու և այդ նպատակով ԱԳՆ-ի աջակցությունն ապահովելու համար Լեփսիուսը բնականաբար ձրգտում էր օգտագործել քիչ թե շատ ծանրակշիռ բոլոր և այդ թվում նաև Գերմանիայի քաղաքական շահերից բխող հիմնավորումները, ուստի հունիսի 6-ին Ա. Ցիմերմանի կողմից Վանգենհայմին ուղարկվեց երկրորդ հեռագիրը. «Դր. Լեփսիուսը կամենում է այդտեղ գալ ոչ թե Բ. Դռան վրա ճնշում գործադրելու, այլ հայերին կողմնորոշելու նպատակով,- նշում էր այնտեղ պետքարտուղարի տեղակալը:- Ես պատրաստ է մեկնել զավառները տեղի հայ առաջնորդներին թուրքական կառավարության հանդեպ լռյալ փոխհարաբերությունների անհրաժեշտության պարզաբանման համար: Այցը կունենա հանգստացուցիչ ազդեցություն տեղի հայերի վրա: Խնդրում են, հեռագրով տեղեկացրեք. Դուք դրա հետ համաձայն եք»:⁸¹⁷

814. Ցիմերմանի հանձնարարականի առնչությամբ Վանգենհայմի կողմից ուղարկված հեռագրային պատասխանը, որն ԱԳՆ-ում կրել է 1268 թվահամարը, ցավոք մեր կողմից ուսումնասիրված աղբյուրներում բացակայում է: Ցիմերմանի կողմից դեսպանին ուղղված հաջորդ հունիսի 6-ի հեռագրի բովանդակությունը, սակայն, որին մենք ստորև կանդրադառնանք, հուշում է, որ այդ պատասխանը բացասական է եղել, և որ դեսպանն ակնհայտորեն այն մտավախությունն է ունեցել, թե Լեփսիուսն իր այցի ընթացքում կարող էր փորձել Բ. Դռան վրա ճնշում գործադրել:

815. Lepsius J., Deutschland und Armenien..., էջ 85:

816. Lepsius J., Der Todesgang..., էջ V:

817. Նեճաճեյի Ա. «ԱՅԻՐԱՅԵՑ ԸՄՈՒՆ Ե ԸՏՈՐԵՑ ԵՅԻՐ Ե ՕՃՈՃԵՑ (1913-1919)», էջ 179:

Լեփսիուսի մեկնման առնչությամբ Բ. Դռան և դեսպանի դիրքորոշումը, սակայն, չափազանց հստակ և միանշանակ էր հիշյալ պատճառաբանությանը ևս անմիջապես տեղի չտալու համար: «Բ. Դռան արդեն ամբողջությամբ ի կատար ածվող միջոցառման պարագայում,- տեղեկացնում էր դեսպանն իր հունիսի 9-ի պատասխան հեռագրում,- որը զանազան ստուգապես հաստատված փաստերի միջոցով հիմնավորված է թվում, դր. Լեփսիուսի ժամանումը չափազանց ուշացած կլինի, և նրա ջանքերն արդյունք չեն ունենա: Դրանից զատ, ես այդ այցն առավել ևս այն նկատառումով եմ համարում անժամանակյա, որ դր. Լիպարիտի գործունեությունը ևս դեռ չի պարզաբանվել,⁸¹⁸ և որ այն (նկատի ունի Լեփսիուսի ուղևորությունը - Ա. Յ.) կարող է Բ. Դռանը վրդովել, որը, ինչպես ցույց է տալիս նախնական հավաստի զննությունը, միանգամայն դեմ է այդ այցելությանը: Բացի այդ, ես իմ ուժերի ներածին չափով անում եմ ամեն բան, որ-

818. Հիշյալ անձնավորության մասին փոքր-ինչ իրազեկում տալու համար հարկ է նշել, որ դեռ 1914 թ-ի նոյեմբերին, Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց գրեթե անմիջապես հետո, ծգտելով նպաստել այն բանին, որ արևմտահայությունը պատերազմի ընթացքում անպայմանորեն հանդես գար Թուրքիայի կողմում, Գերմանիայի արտգործնախարարությունը Գերմանա-հայկական ընկերությանն առաջարկել էր այդ նպատակով բացատրական աշխատանքներ տանել հայ քաղաքական և եկեղեցական ազդեցիկ շրջաններում: Ընկերությունը համաձայնեց առաջարկն ընդունել այն պայմանով, եթե գերմանական կառավարությունը խոստանար, որ ընդմիջված հայկական բարեփոխումները պատերազմից հետո կիրառործվեն: Հավաստիացումն ստանալով՝ ընկերությունը (ԱԳՆ-ի կողմից հատկացված լրացուցիչ անձնագրով և նաև նախարարության նյութական միջոցների հաշվին) 1914 թ-ի վերջին Թուրքիա գործուղեց իր վարչության անդամ դր. Լիպարիտ Նազարյանցին, որը պետք է հանդիպումներ ունենար Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և ՀՀԴ ղեկավարների հետ այդ հարցում նրանց կողմնորոշելու նպատակով: Տե՛ս ԽԹԹԹԹԹԹ Ը., ԱՕԻԿԹԹԹԹ ԱԹՕԻԿ Թ ԶԱԹԹԹԹ Թ ՕՕԹԹԹԹ (1913-1919)...., էջ 162-163: Հմտ. Feigel U., Das Evangelische..., էջ 210: Հմտ. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, Dezember 1939, էջ 4: Լ. Նազարյանցը, որն ընկերության կողմից տրված քննազոտումն անհայացվել էր որպես «վատահելի, գերմանոֆիլ ուղղվածություն ունեցող, հարգված հայ փաստաբան», որը եղել էր նաև ընկերության հիմնադիր անդամներից մեկը, 1915 թ. հունվարի սկզբին ժամանեց Կ. Պոլիս և այնտեղ մնալով մինչև փետրվարի վերջը՝ այնուհետև մեկնեց Սոֆիա, որից հետո, ապրիլի սկզբին, դարձյալ վերադառնալով Կ. Պոլիս (Կ. Պոլսում գտնված ժամանակամիջոցում նա մշտապես կապ էր պահպանում դեսպանության հետ՝ պարբերաբար ներկա-

յացնելով գրավոր և բանավոր զեկույցներ՝ նույն ամսի 8-ին այնտեղից կրկին մեկնեց: Տես ՆժճՅԻՅԵՅԻ Ա. « ԱՃԻՅԻՌՅԻՅԻ ԵՄԻՃԻՑ ԵՄ ԵՄԻՃԻՅԻ ԵՄԻՃԻՅԻ ԵՄԻՃԻՅԻ (1913-1919)..., էջ 175-176: Ընդ որում, ուշագրավ է, որ չնայած դեսպանությունը կարծում էր, թե Լ. Նազարյանցը վերադարձել էր Գերմանիա (անդ, էջ 175), սակայն, ինչպես ցույց էին տալիս հետագայում Սոֆիայի հյուպատոսությունից ստացված տեղեկությունները, նա դարձյալ մեկնել էր Սոֆիա և մայիսի 22-ի դրությամբ գտնվում էր այնտեղ: Անդ, էջ 177: Դր. Նազարյանցի գործունեության մանրամասների և արդյունքների մասին որևէ ստույգ տեղեկություն չի հաղորդվել: Հայտնի է միայն, որ նա դեսպանության կողմից վստահություն չի վայելել և որ մասնավորապես Սոֆիայում մնալու ժամանակամիջոցում գտնվել է գաղտնի հրկուկության ներքո, որի արդյունքները, թեև ուզեց անտեսել լուրջ փաստական հիմքերի, դրդել են նրան համարել «ռուսական լրտես»: «Երեկ ես «Գրանդ Հոթել» ռեստորանում դարձյալ տեսա Լիպարիտին մի հայուհու հետ,- մայիսի 22-ին դեսպանությունում ուղղված իր նամակում տեղեկացնում էր Սոֆիայի գերմանական հյուպատոսության քարտուղար Նայերտը,- որը հայտնի է որպես ռուսական լրտես, և մի տիկնոջ, որն ակներևաբար Շվեյցարիայից ոչ վաղուց այստեղ եկած ռուսական լրտես է: Ինքը Լիպարիտը, երկու տարբեր կողմերից բնութագրվել է որպես ռուսական լրտես: Եթե նույնիսկ Լիպարիտի՝ հիշյալ անձանց հետ լինելը չի կարող ուղղակիորեն նրա նկատմամբ կասկած հարուցել, ես կարծում եմ, որ ամեն դեպքում չի կարելի խուսափել այն հարցադրումից, որ ըստ նկարավորին ստուգվի, թե արդյոք Լիպարիտը դեռ շարունակ իրավունք ունի՝ ԿԳԼ-ի կողմից հատկացված անձնագիր ունենալ»: Անդ, էջ 177-178: Նայերտի տեղեկությունների հանդեպ ցուցաբերելով «կառուցողական» դիրքորոշում՝ դեսպանը դրանք հունիսի 1-ին ուղարկեց կանցլերին՝ կից գրությամբ նրան ներկայացնելով նաև Լ. Նազարյանցի փաստաթղթերը ետ վերցնելու նպատակահարմարության վերաբերյալ՝ իր նկատառումները, և բացի այդ նույն օրը Լեթ Սոֆիայի գերմանական հյուպատոսությանը հրահանգեց շարունակել նրան գաղտնի հսկողության տակ պահել և սկզբնապես զանազան պատճառաբանություններով նրանից վերցնել այն գերմանական փաստաթղթերը, որոնց գործածելիության ժամկետը լրացել էր: «Նրա՝ դիպվածաբար թույլ տված արտահայտություններից կարելի է եզրակացնել, որ նա ռուսահպատակ է,- գրում էր Վանզենհայմը:- ... Իրադարձությունները, որոնց մասին հաղորդել է հյուպատոսության քարտուղար Նայերտը, թելադրում են զգուշանալ, և ես նրա հայեցողությանն եմ թողնում աննկատ կերպով շարունակել դիտումները: Նրա՝ ելքի իրավունք ընձեռող գերմանական փաստաթղթերի առնչությամբ հանձնարարվում է սկզբնապես այլևայլ պատշաճ պատրվակներով ետ վերցնել այն անձնագրերը, որոնք նրա հետագա գործունեության համար այլևս անհրաժեշտ չեն, և որոնց ժամկետը համապատասխանաբար լրացել է»: Անդ, էջ 175-177: Լեփսիուսի այդ առնչությամբ Վանզենհայմի կողմից կատարված հիշատակությունը վերաբերում էր ահա այդ անձնավորությանը, որի ճակատագրի կամ հետագա գործունեության մասին, ցավոք, որևէ այլ տեղեկություն մեր կողմից ուսումնասիրված փաստաթղթերում չի պահպանվել:

պեսզի մեղմեն Բ. Դռան չափազանց խիստ միջոցառումները»⁸¹⁹

Զնայած Լեփսիուսի ուղևորության հարցում իր որդեգրած՝ ակն-հայտ բացասական դիրքորոշմանը, Վանգենհայմն այնուհանդերձ երկար ընդդիմանալ չկարողացավ, և հունիսի վերջին Լեփսիուսին թույլտվությունը հատկացվեց այն նախազգուշացումով, որ Թուրքիայի ՆԳ նախարար Թալեթի կողմից նրան արգելվում էր Կ. Պոլսից հեռանալ:⁸²⁰ Զանի որ, սակայն, Լեփսիուսը մտադիր չէր ձեռնունայն սպասել, մինչև մեկնման թույլտվությունը կհատկացվեր, նա իրեն հասած տեղեկությունների հիման վրա դեռ հունիսի 16-ին մի նամակ առաքեց ԱԳՆ-ին՝ տեղեկացնելով, որ հակառակ դեսպանի հաղորդման, Թուրքիայում հայության տեղահանումն ու աքսորումը ստացել էր զանգվածային բնույթ և ծավալում:⁸²¹ Իսկ հունիսի 22-ին Գերմանա-հայկական ընկերության կողմից, իր ստորագրությամբ նա մի ընդարձակ ուղերձ հղեց ԱԳՆ-ին, որտեղ ներկայացնելով հայ ժողովրդի՝ արդեն տեղահանված հատվածների ողբերգական դրությունը⁸²² և

819. Անդ, էջ 179-180: Դեսպանի հավաստիացումը սուս դիվանագիտական դեմագոգիա էր, քանի որ նա, ինչպես շուտով պարզ կդառնա, երբևէ այդ «միջոցառումները» մեղմելու՝ որևէ գործնական քայլ չցուցաբերեց:

820. «Դայ պատրիարքը,- նշում էր դեսպանն այդ առթիվ իր՝ հունիսի 23-ին ԱԳՆ-ին ուղարկված հեռագրում,- դր. Լեփսիուսի ճանապարհորդությունն այստեղ ուրախությամբ կողջունի: Այն կարող է նաև նպաստավոր ներգործություն ունենալ մեր հանդես անբարյացկամորեն տրամադրված հայկական շրջանների վրա: ՆԳ նախարարն ամեն դեպքում այդ առումով որևէ հաջողություն չի ակնկալում և ցավում է, որ չի կարող դր. Լեփսիուսին թույլատրել ճանապարհորդել դեպի երկրի խորքը, սակայն նշում է, որ նա ազատորեն կարող է այստեղ գալ: Եթե վերջինս այդ պայմաններում ճանապարհորդությունը կձեռնարկի, պետք է առանձնահատուկ զգուշությամբ հանդես գա և մասնավորապես հետևի կայսերական դեսպանության ցուցումներին»: St'v Lepsius J., Deutschland und Armenien..., էջ 89: Հմմտ. Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke..., թիվ 93 արձանագրությունը:

821. St'v Микаэлян В. « Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)...., էջ 187:

822. Լեփսիուսն այդ առավել ըմբռնելի դարձնելու համար ներկայացնում էր նաև փաստացի օրինակներ: «Տավրոսի [եռների և Ջեյթունի՝ մոտավորապես 27000 բնակիչներից,- նշում էր նա,- արական բնակչությունն աքսորվել է Դեր էս Ջորի՝ Եփրատի շոգ ցածրադիր վայրերը, արաբական բեովիմական ցեղերի մոտ (500 կմ դեպի հարավ-արևելք), իսկ կասաջ, աղջիկները, երեխաները, ընդհակառակը, տեղափոխվել են Անգորայի շրջանը (500

միանշանակորեն հերքելով այդ միջոցառման ռազմաստրատեգիական անհրաժեշտությունը «վկայակոչող» թուրքական պաշտոնական տեսակետները նա հայտարարում էր, որ թուրքական կառավարությունը, պատերազմական իրադրությունն օգտագործելով, փաստացիորեն ձեռնամուխ էր եղել հայ ժողովրդի զանգվածային բնաջնջմանը, և որ տեղահանվածների թիվն արդեն հասել էր շուրջ 200 000-ի: «Ինչպես ես արդեն տեղեկացրել եմ իմ հունիսի 16-ի նամակում, խոսքը վերաբերում է ոչ թե առանձին ընտանիքների վերաբնակցմանը, այլ Անատոլիայի շրջանների և Կիլիկիայի հայ բնակչության մեծ խմբերի զանգվածային աքսորմանը տարբեր տարածքներ, հատկապես Միջագետք: Այդ միջոցառումները չեն կարող ռազմական պատճառներով արդարացվել..., քանի որ խնդիրը մեծ մասամբ վերաբերում է այն շրջաններին, որոնք գտնվում են Անատոլիայի խորքում, ռազմական գործողությունների գոտուց հեռու:... Այն հայտորեն փորձ է կատարվում, պատերազմի ընձեռած իրավունքների ներքո քողարկվելով և օգտագործելով մուսուլմանների՝ սրբազան պատերազմի միջոցով բորբոքված կրքերը, ուժգին կերպով կրճատել կայսրության քրիստոնյա բնակչությանը և դեպի կլիմայապես անընպաստ ու ոչ անվտանգ սահմանամերձ տարածքները բռնի տեղահանման միջոցով կորստյան դատապարտել նրան»:⁸²³

Երիտթուրքերի հետին նպատակների բացահայտման հետ մեկտեղ Լեվիսիուսը Գերմանական կառավարությանը վճռական միջամտության դրդելու նպատակով անհրաժեշտ էր համարում պարզաբանել նաև այն վտանգավոր հետևանքները, որ ունենալու էին այդ ոճրագործությունները Գերմանիայի համար: Հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը, նշում էր նա, բխում էր Անտանտի շահերից, քանի որ հայ ազգային շրջաններում բորբոքվելու էր ատելությունը թուրքերի հանդեպ: Մյուս կողմից այն խոչընդոտելու էր նաև Թուրքիայի տնտեսական զարգացման միջոցով այդ երկրի վրա Գերմանիայի ազդեցության ամրապնդումը, քանի որ Թուրքիայի տնտեսությունը հիմնականում գտնվում էր «հայերի ուսե-

կմ դեպի հյուսիս - արևելք): Այսպիսով, տղամարդիկ իրենց ընտանիքներից բաժանվել են հազար կմ տարածությամբ: Փոխադրման ժամանակ երիտասարդ աղջիկներին բռնությամբ հատիչտակել և տարել են թուրքական հարեմները, մոաուլմանական գյուղերում կանանց վրա ֆիզիկական բռնություններ են գործադրել...»: Անդ, էջ 188:

823. Անդ, էջ 187-188:

րի վրա»։ Բացի այդ, հայության բնաջնջման իրողությունը թշնամի երկըր-
ներում կօգտագործվեր որպես գեներ Գերմանիայի դեմ և միաժամանակ
մեծ վրդովմունք կհարուցեր գերմանական ավետարանական եկեղեցա-
կան շրջաններում. հանգամանք, որ գերմանական կառավարությունը
չէր կարող անտեսել։ Եվ վերջապես թուրքիայում, որտեղ «կառավարու-
թյունը վաղուց գործում է տեռորիստական սկզբունքներով», անհնար էր,
որ բնաջնջման քաղաքականությունը տեռորիզմի չնդեր նաև հալածվող-
ներին։ Իսկ եթե հաշվի առնվեր այն հանգամանքը, որ թուրքական կառա-
վարության դեմ կար «ուժեղ և վտանգավոր» ընդդիմություն, որպիսին Ան-
տանտի հետ շահերի զգալի ընդհանրություն ունեցող լիբերալների միու-
թյունն էր, ապա, ինչպես նշում էր Լեփսիուսը, Գերմանիայի շահերը պա-
հանջում էին բացառել այդ ընդդիմության հետ թուրքիայի ներքին քաղա-
քականության հանդեպ նախկինում լոյալ դիրք որդեգրած հայերի միա-
վորումը, որ կարող էր տեղի ունենալ հայ ժողովրդի բնաջնջման երիտ-
թուրքերի քաղաքականության հետևանքով։⁸²⁴

Ուշագրավ է, որ Լեփսիուսի ուղերձը և այնտեղ կատարված հա-
մակողմանի բացահայտումները, որոնց մասին ԱԳՆ-ը ակնհայտորեն
իրազեկել էր նաև դեսպանությանը, Վանգեմհայմի կողմից այն աս-
տիճան մեծ անհամաձայնությամբ և դժկամությամբ էին ընդունվել, որ
նա դարձյալ ջանում էր նախարարությանը դրդել ետ վերցնել Լեփսի-
ուսին հատկացված թույլտվությունը։ «Յայկական հարցի շուրջ դր.
Լեփսիուսի ելույթին վերաբերող հաղորդումը,- նշում էր դեսպանն
ԱԳՆ-ին ուղղված իր՝ հուլիսի 2-ին հեռագրում,- հարկադրում է երկյու-
ղել, որ այս պահին նրա ժամանումն այստեղ, առանձնապես հայերի
ծանր դրությանը ծանոթանալու հետևանքով, մեզ կարող է մեծ անա-
խորժություններ պատճառել և վնասել մեր հետագա՝ ավելի կարևոր
շահերը։ Ձեռնարկված հարկադիր միջոցառումներից թուրքիայի
հրաժարման կամ դրանց մեղմացման միջոցով ռուսահայերին իր
կողմը թեքելու հնարավորության վերաբերյալ նրա տեսակետը ես
համարում եմ ուտոպիա։ Նմանապես և ես կասկածում եմ, թե նրան կը-
հաջողվի տեղի հայերին հանդարտեցնել, քանի որ թուրքական կա-
ռավարությունը հաստատունորեն տրամադրված է այդ միջոցառում-
ներն իրականացնել և վերջին օրերին նաև ձեռնամուխ է եղել դրանց։

824. Անդ, էջ 188-189:

Այդ պատճառով ես Ձեր հայեցողությանն եմ թողնում լրջորեն տար-
համոզել դր. Լեփսիուսին այդ ուղևորությունն իրականացնելուց»:⁸²⁵

Դեսպանի նախագգուշացումները, սակայն, իրենց նպատակին
չհասան, քանի որ ոչ ոք և ոչինչ չէր կարող համոզել Լեփսիուսին փո-
խել իր մտադրությունը: «Լեփսիուսը մեկնում է երկուշաբթի օրը և
10-14 օրից կլինի այդտեղ,- տեղեկացնում էր Ա. Ցիմերմանը հուլիսի
4-ին դեսպանին ուղարկված հեռագրում:- Քանի որ նա ձեռնարկել է
բոլոր պատրաստությունները և պայմանավորվածությունները, նրան
ետ պահելու փորձը հաջողություն չունեցավ: Նա այնուամենայնիվ
խոստացավ ժամանելուն պես ներկայանալ կայսերական դեսպա-
նությանը և խստորեն հետևել նրա ցուցումներին»:⁸²⁶

Ինչևէ, չնայած Թուրքիայի ՆԳ նախարար Թալեաթի կողմից Լեփսի-
ուսին արգելվում էր այցի ընթացքում Կ. Պոլսից դուրս գալ, այնուամե-
նայնիվ Թուրքիայի իրադրությանը ստուգապես իրագել դառնալու հա-
մար այդ էլ լիուլի բավական էր:⁸²⁷ Նա սկզբում այցելեց Բագել և ԺՆՆ՝
հայերի շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով իր մտադրության
մասին, այնուհետև Բուխարեստով մեկնեց Սոֆիա, որտեղ ՅՅԴ դեկա-
վարները նրան առատ տեղեկություններ տրամադրեցին Թուրքիայում
կատարվող իրադարձությունների վերաբերյալ:⁸²⁸ Այդ ամենին ծանո-
թանալուց հետո Լեփսիուսի համար արդեն պարզ դարձավ, որ ծայր էր
առել հայ ժողովրդի ծրագրված բնաջնջումը, և որ այլևս անհնար էր շա-
բաթներ ի վեր կատարվածը ետ շրջել: Նա միայն հույս էր փայփայում,
որ իրեն տրված տեղեկությունները կարող էին չափազանցված լինել, և
որ գոնե արևմտյան ու կենտրոնական վիլայեթների հայությանը հնա-
րավոր կլիներ քստրից ետ պահել:⁸²⁹

Լեփսիուսը հուլիսի 24-ին հասավ Կ. Պոլիս և այնտեղ մնալով երեք շա-
բաթ՝ փորձեց ըստ հնարավորին մանրամասն տեղեկություններ հայթայ-
թել քստրի ընթացքի և հետևանքների վերաբերյալ:⁸³⁰ Չնայած գերմա-

825. Անդ, էջ 189-190:

826. Անդ, էջ 190:

827. Lepsius J., *Der Todesgang...*, էջ VI:

828. Անդ, էջ VI-VII:

829. Lepsius J., *Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915*, „Der Orient“, 1919, էջ 23:

830. Lepsius J., *Der Todesgang...*, էջ VIII:

նական դեսպանությունում նրան հյուպատոսական տեղեկագրերին ծանոթանալու հնարավորություն չտրվեց, այնուամենայնիվ դեսպանության աշխատակիցների բանավոր տեղեկությունների,⁸³¹ գավառներից եկած օտարերկրացիների, երկրի ներսում մասնաճյուղեր ունեցող օտարերկրյա կազմակերպությունների, եվրոպացի և ամերիկացի քարոզիչների տրամադրած նյութերի շնորհիվ նա բավական հստակ պատկերացում կազմեց եղբրական իրադարձությունների վերաբերյալ:⁸³² Այդ առումով մեծ նշանակություն ունեցան նաև նրա հանդիպումները հայոց Ջավեն պատրիարքի և բազմաթիվ այլ տեղացի հայերի հետ, որոնք, հակառակ իրենց սպառնացող վտանգին, չվարանեցին կապ հաստատել Լեփսիուսի հետ:⁸³³ Մեծ ծառայություն մատուցեց նաև Կ. Պոլսի ամերիկյան դեսպան Յ. Մորգենթաուն, որը, շրջանցելով իր պաշտոնական իրավունքները, Լեփսիուսին հնարավորություն տվեց աչքի անցկացնել ամերիկյան հյուպատոսներից ստացված մեծաքանակ տեղեկագրերը. այն, ինչ գերմանական դեսպանությունը հրաժարվել էր անել:⁸³⁴

Լեփսիուսը փորձեց հանդիպում ունենալ նաև ռազմական նախարար Էնվերի հետ, ինչը նրան հաջողվեց օգոստոսի 10-ին:⁸³⁵ Էնվերի վրա մարդկայնորեն ներգործելու անհնարիությունը գիտակցելով հանդերձ նա այնուամենայնիվ նախարարի հետ հետ մեկծամյա զրույցի ընթացքում գործադրեց իր բոլոր հնարավորությունները բնաջնջվող ժողովրդին փրկելու համար: Ի պատասխան Թուրքիայի բարոյական վարկի կործանման վերաբերյալ Լեփսիուսի նախազգուշացմանը, նախարարը երկարաշունչ ճառերով փորձում էր հիմնավորել «պատերազմական իրավիճակի թելադրանքով հեղափոխական տարրերի դեմ» միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը: Այն հարցին, թե արդյոք ապացույցներ կա՞ն Կ. Պոլսի ձերբակալված հայ մտավորականների հակապետական գործունեության վերաբերյալ, հետևեց խուսափողական մի պատաս-

831. Հատկանշական է, որ Վանգենհայմը Լեփսիուսի այցի ողջ ժամանակամիջոցում «հիվանդության պատճառով» Կ. Պոլսից բացակայում էր: Sten Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“, 1919, էջ 23:

832. Անդ:

833. Լեփսիուսը մշտապես գտնվում էր ոստիկանների հսկողության տակ: Անդ, էջ 24:

834. Անդ:

835. Schäfer R., Geschichte..., էջ 89:

խան. «Դրա կարիքը մենք չունենք: Մենք ինքներս հեղափոխությամբ ենք եկել այստեղ և գիտենք, թե նման բաներն ինչպես են արվում»:⁸³⁶ Նմանապես անարդյունք էր նաև տնտեսության ապագայի վերաբերյալ արտահայտված մտահոգությունը: «Ողջ Անատոլիայում մեծ և փոքր առևտուրը զրեթե բացառապես հայերի ձեռքում է,- ընդգծում էր Լեփսիուսը: - Նրանք արևելյան մարզերում լավագույն հողագործներն են, և ողջ Անատոլիայում արհեստավորների դասը բաղկացած է զրեթե միայն նրանցից: Հայերը պետության ստամոքսն են: Դուք այն այժմ հանում եք և կարծում, թե մյուս անդամները՝ թուրքմենները, քրդերը, լազերը և չերքեզները կստանձնեն նրա ֆունկցիաները: Դա մոլորություն է»:⁸³⁷ Էնվերն այդ անշուշտ չէր կարող չընդունել, սակայն այդ նրան չէր անհամաձայնացնում. «Կարող է այդպես է,- պատասխանեց նա:- Մենք պատերազմից հետո թույլ ստամոքս կունենանք: Մենք կկազդուրվենք...»:⁸³⁸

Ի վերջո նորից անդրադառնալով աքսորյալ կանանց և երեխաների դրությանը՝ Լեփսիուսը խնդրեց իրեն հնարավորություն տալ մարդասիրական օգնություն կազմակերպելու նպատակով մեկնել գավառները: Էնվերն իհարկե նրա խնդրանքը մերժեց՝ իր հերթին կատարելով մի այլ առաջարկ. օգնության դրամը հանձնել իրեն և իրեն էլ վստահել այդ գործի կազմակերպումը: «Եթե ես թույլ տամ, որ օտարները հայերին օգնություն ցուցաբերեն,- ի հիմնավորումն դրա նշում էր նա,- ապա նրանք չեն դադարի իրենց հույսը դնել օտարների միջամտության վրա,- ... Հայերը պետք է իրենց բարեգործներին տեսնեն միայն մեր մեջ»:⁸³⁹

Լեփսիուսն անշուշտ դրան համաձայնել չէր կարող՝ համոզված լինելով, որ դրամն այդ դեպքում հոսելու էր թուրք պաշտոնյաների գրպանը կամ ծառայելու էր այլ նպատակների: Իր առաքելությունը տեսնելով ձախողված՝ նա փորձեց փրկել մահապարտներից զոհն մեկին՝ Գերմանա-հայկական ընկերության հիմնադիր անդամ, բժըշկագիտության և փիլիսոփայության դոկտոր Հայրանյանին, որը պատերազմից փոքր-ինչ առաջ Բեռլինից մեկնել էր Հայաստան և աքսորի օրերին ձերբակալվել: Էնվերը խոստացավ Հայրանյանի «գոր-

836. Lepsius J., *Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915*, „Der Orient“, 1919, էջ 26:

837. Անդ:

838. Անդ:

839. Անդ, էջ 27:

ծին» ծանոթանալ և նրա դեմ ծանրակշիռ փաստարկների բացակայության դեպքում կատարել Լեփսիուսի խնդրանքը, այն է՝ Չայրանյանին ազատել և ուղարկել Գերմանիա: Վերջինս, սակայն, ինչպես առժամանակ հետո պարզվեց, բանտում սպանվել էր:⁸⁴⁰

Ինչևէ, Էնվերի հետ հանդիպումից հետո Լեփսիուսն այլևս Կ. Պոլսում անելիքներ չունեւր և վերադարձավ ճանապարհին Սոֆիայում դարձյալ հանդիպելով ՅՅԴ գրասենյակի ներկայացուցիչներին, որոնք նրան տրամադրեցին նոր մեծաքանակ տեղեկություններ վերջին իրադարձությունների մասին:⁸⁴¹ Սեպտեմբերի 18-ին հասնելով Բեռլին նա համոզվեց, որ ԱԳՆ-ն արդեն բավականաչափ տեղյակ էր հայ ժողովրդի բնաջնջման թուրքիայում իրականացվող քաղաքականությանը, սակայն դիվանագիտական հորդորներից զատ այլ, ավելի կոշտ միջամտություն կատարելու մտադրություն չունեւր: Չանգվածային աքսորը կասեցնելու համար Թուրքիայի վրա ուժգին ճնշում գործադրելու՝ Լեփսիուսի պահանջը նույնպես դրական արձագանք չգտավ: «Ի՞նչ պետք է մենք անենք,- ի պատասխան նշում էր Ցիմերմանը:- Թուրքիայի հետ մեր միությունը պահպանվում է Թալեաթի, Էնվերի և Խալիլի վեց ձեռքերի մեջ: Եթե այդ երեքը խելքի չեն գալիս, մեզ մնում է միայն հրաժարվել դաշինքից: Իսկ այդ մենք չենք կարող անել»:⁸⁴²

Լեփսիուսին այլ բան չէր մնում անել. քան Գերմանիայում, որտեղ «մամուլն արտատպում էր միայն թուրքական ստահող պաշտոնական տեղեկությունները», ստեղծել ճիշտ հասարակական կարծիք և փորձել նր-

840. Անդ, էջ 28:

841. Անդ, էջ 29:

842. Lepsius J., Der Todesgang..., էջ XXII: Այդ տեսակետը թերևս Թուրքիայի ներքին քաղաքական իրադրության հանդեպ Գերմանական կառավարող շրջանների որդեգրած չեզոք և հանդուրժողական դիրքորոշումն արդարացնելու՝ ամենահեղինակավոր «հիմնավորումն» էր: «Ես կարող եմ միայն ասել, որ մենք արել ենք ամեն բան, ինչ կարող էինք,- ռայխստագի պատգամավորների առջև իր՝ 1916 թ. սեպտեմբերի 29-ի ելույթում նշում էր ԱԳՆ-ի պետքարտուղար Ֆոն Յագովը:- Ամենաճայրահեղը, որ մեզ դեռ մնում էր, Թուրքիայի հետ դաշինքի խզումը կլիներ: ... Թուրքերը մեզ կարևոր ծառայություններ են մատուցում՝ պաշտպանելով մեր հարավ-արևելյան դիրքային թևը: Դուք ինձ հետ կհամաձայնեք, որ մենք չենք կարող այնքան հեռու գնալ, որ թուրքերի հետ, որոնց մենք Չայկական հարցի վերաբերյալ մեր տևական նախազգուշացումներով խիստ անտրամադիր ենք դարձ-

րել, նաև մեր դաշինքը խզենք»: Stéu Lanne P., Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts, München, 1977, էջ 146: Հմնտ. Lepsius J., Deutschland und Armenien..., էջ 294: Եղբրական իրադարձությունները կասեցնելու հարցում պաշտոնական Գերմանիայի «անկարողության» այդ և նման պատճառաբանությունները, սակայն, եթե նույնիսկ փորձենք ընդունել, որ քիչ թե շատ անկեղծ համոզումից էին բխում (Ի վերջո, ինչպես արդեն որոշակիորեն լուսաբանվեց, Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմի կողմից Բեռլին ուղարկվող տեղեկագրերը կառավարությանը, որն առանց այդ էլ պատերազմական իրադրության թելադրանքով գերզգայունակորեն էր վերաբերվում գերմանա-թուրքական դաշինքի պահպանման խնդրին, այլ հետևությունների հնարավորություն չէին ընձեռում), այնուամենայնիվ իրատեսական համարվել չէին կարող: Ինչպես վկայում էր մայիսի 31-ի հեռագիրը, Էնվերը լրջորեն հաշվի էր նստում այն հանգամանքի հետ, որ Գերմանիան կարող էր արգելել հայ ժողովրդի տեղահանումը, մինչդեռ դեսպանին ոչ այնքան տեղահանվող ժողովրդի ճակատագիրն էր մտախոգում, որքան Օրինակ, 1915 թ-ի հուլիսի 7-ին կանցլերին ուղղված իր նամակում,- ես անհրաժեշտ եմ համարել Բ. դառն ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ մենք հայ բնակչության աքսորին միայն այն չափով ենք հավանություն տալիս, եթե դրանք թելադրված են ռազմական նկատառումներով և ծառայում են ապստամբությունների կանխարգելմանը, և որ, սակայն, այդ միջոցառումների իրագործման ժամանակ աքսորյալներին անհրաժեշտ է պաշտպանել թալանից և կոտորածներից: Այդ հարցապնդումներին անհրաժեշտ շեշտադրում տալու համար ես դրանք կազմել եմ գրավոր հուշագրի ձևով, որը ես այս ամսի 4-ին անձամբ հանձնել եմ մեծ վեզիրին»: Stéu ինտերն. ցանցում Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke..., թիվ 106 արձանագրությունը, <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>: Նամակին կից հավելվածում տես նաև հուշագիրը: Անդ: Ուշագրավ է, որ Վանգենհայմը հարկ եղած դեպքում նույն նկատառումով էր հիմնավորում նաև երիտթուրքերի ոճրագործությունների վերաբերյալ պատմող նյութերի առաջունն ԱԳԵ-ին՝ դրանք համարելով ապագայում Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ ի հայտ եկող մեղադրանքները հերքելու փաստարկներ: «Եթե ես վերջին շրջանում այդ իրադարձությունների մասին Ձերդ Գերագանցությանը ավելի մանրամասն եմ տեղեկացրել,- նշում էր նա Բեթման-Հոլվեզին ուղղված իր՝ 1915 թ-ի հուլիսի 16-ի նամակում (կից առաքելով նաև փոխյուլապատոս Կուկիոֆի՝ Սամսունի դեպքերի մասին պատմող տեղեկագիրը),- ապա դա տեղի է ունեցել փոխյուլապատոս Կուկիո-

Ֆի կողմից նույնպես կարևորված այն հանգամանքի հաշվառումով, որ մեր թշնամիները հետազայում մեզ դրանցում որոշակի մեղսակցություն կվերագրեն: Նրա տեղեկությունների հիման վրա մենք ի վիճակի կլինենք թշնամի աշխարհին, առանձնապես մամուլի միջոցով ցանկացած ժամանակ ապացուցել, որ մենք մըշտապես դատապարտել ենք թուրքական կառավարության չափազանց հեռուն գնացող միջոցառումները և շատ ավելի՝ նաև տեղական մարմինների անկարգությունները»: Տե՛ս Мукоевлян В., Армянские вопрос и ցеноцид армян в Турции (1913-1919)...., էջ 194-195: Ինչևէ, ինչպես ապացուցում են Վանզենհայմի վերոնշյալ տեղեկագրերը, նա անձնապես ևս միանգամայն անտարբեր էր հայ ժողովրդին վիճակված ողբերգությունների հանդեպ, և եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դեսպանները, արտաքին քաղաքականության ամնիջական իրազորոժները լինելուց զատ, որոշակի ներդրում ունեն նաև այդ քաղաքականության ձևավորման հարցում, ապա Վանզենհայմի պաշտոնավարությունը հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին կարելի էր համարել ճակատագրի հերթական դաժան խաղը: Այդ ամձնավորության ամենաուշագրավ գնահատականներից մեկը թերևս տվել է Յ. Մորզենթաուն. «Չենց որ առաջին լուրերը կոստանդնուպոլիս հասան, ինձ համար պարզ էր, որ հայերին օգնելու ամենաճիշտ ձևը ոճրագործությունների դադարեցումն էր, որը հնարավոր կլիներ բոլոր երկրների ներկայացուցիչների վճռով թուրքական կառավարությանը կոչ անելու դեպքում: Մարտ ամսի վերջին ես այցելեցի Վանզենհայմին: Սակայն ինձ պարզ դարձավ հայերի հանդեպ նրա ատելությունը: Նա սկսեց հայերին ամեն առիթով դատապարտել: Նա ենվերի ու Թալեաթի նման Վանի դեպքերի մեջ ապատամբություն էր տեսնում: Նրա կարծիքով հայերը միայն դավաճան մակաբույծներ էին: «Ես կօգնեմ սիոնիստներին, բայց ինչ էլ որ լինի, հայերին չեմ օգնի,- ասաց նա»: Տե՛ս Morgenthau H., Ambassador Morgenthau's story, Garden-City-New York, 1918, էջ 370: Չմձտ. Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 215-216: Իսկ այն, թե ինքը՝ Մորզենթաուն, որքան դատապարտելի էր համարում հայերի ճակատագրի հանդեպ գերմանական դեսպանի անտարբերությունը, վկայում էր նաև հետևյալ դրվագը, որով, ի դեպ, միաժամանակ պարզաբանվում են Վանզենհայմի հանկարծահաս մահվան հանգամանքները. 1915 թ-ի աշնանը նրանք մի հանդիպում ունեցան Կ. Պոլսի ամերիկյան դեսպանությունում, որի ժամանակ Մորզենթաուն հայերի կոտորածները կըրտու կերպով կերպով բնութագրեց որպես «երկինք աղաղակող հանցագործություն»՝ դատապարտելով դրանց հանդեպ դեսպանի ցուցաբերած անտարբերությունը. «Կրկին խօսեցանք տարագրություններուն վրայ: Գերմանիա ատոնց պատասխանատու չէ, ըսաւ Վանկէնհայմ: Դուք կրնաք յաւիտեան պնդել ատոր վրայ, պատասխանեցի, բայց ո՛չ մէկը չպիտի հաւատա: Աշխարհ շարունակ պատասխանատու պիտի նկատէ Գերմանիան. այդ ոճիրներուն մեղքը մշտնջենապէս ձեր դատապարտությունը պիտի ըլլայ: ... Ես չեմ պնդեր, որ Գերմանիա պատասխանատու է այդ ջարդերուն՝ այն իմաստով, որ ինք եղած է անոնց դրդիչը: Բայց Գերմանիա պատասխանատու է այն իմաստով որ՝ ինք կարող էր ջարդերը դադրեցնել և չգործածեց այդ

ուժը: Եւ միայն Ամերիկա եւ ներկայի ձեր թշնամիները չեն, որ ձեզ պատասխանատու պիտի բռնեն: Օր մը գերման ժողովուրդն է, որ ձեր կառավարութիւնը հաշիւի պիտի կանչէ: ... Այս տեսակ ոճիրներու աղաղակը մինչեւ երկինք կը բարձրանայ...: Թիւրքիայի ներքին գործերու ներկայ վիճակին մէջ չպիտի միջամտեն, պատասխանեց Վանկենհայմ: Տեսայ որ՝ անօգուտ էր նիւթը աւելի երկար ծծօնել: Գորովանք է մարդկային զուրթ զուրկ մարդ մըն էր ան. զգուանքով երեսն անդին դարձուցի: Վանկենհայմ ոտքի ելաւ. մեկնելու. Տցուելուն պէս՝ շունչը բռնուեցաւ եւ յանկարծ ծունկերը կթուտեցան: Ցատկեցի եւ զինքը բռնեցի ճիշդ այն պահուն՝ երբ իյնալու վրայ էր: Պահ մը բոլորովին շլմորած մնաց, ցնորած կերպարանքով մը ինձի կը նայեր. յետոյ անմիջապէս ինքզինքը ժողվեց եւ իր հաւասարակշռութիւնը վերագտաւ: ... Երկու օր ետքը, ճաշասեղան նստելու ատեն կաթուածի հարուած մը կունենայ: Վեր՝ իր անկողինը կտարուի, բայց ալ գիտակցութիւնը չի վերագտնէր: Դոկտեմբերի 24-ին, պաշտոնապէս ծանուցուեալ ինձի, թէ Վանկենհայմ մեռած էր: Վանկենհայմէն իմ վերջին յիշատակս եղաւ ան, երբ դեսպանը ամերիկեան դեսպանատունի իմ գրասենյակս նստած, բացարձակապէս կը մերժէր որկիցէ ազդեցութիւն բանեցնել՝ ազգի մը ջարդուիլը արգիլելու համար: Ինք այն միակ մարդն էր՝ որ կրնար դադրեցնել այդ ոճիրները, և իր կառավարութիւնը՝ այդ բանին կարող միակ կառավարութիւնը, բայց Վանկենհայմ շատ անգամներ ըսած էր ինձի. «Մեր միակ նպատակակէտն է այս պատերազմը շահիլ»: Մորզենթաուի և Վանգենհայմի գրույցի ամբողջական տեքստին ծանոթանալու համար տե՛ս Մորզենթաու Դ., Ամերիկայն դեսպան Դենրի Մորզենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 317-320: (Եթէ նկատի առնենք, որ Վանգենհայմը մահացել է 1915 թ-ի հոկտեմբերի 23-ին, ապա այդ հանդիպումը տեղի է ունեցել հոկտեմբերի 21-ին): Ինչէ՛ւ, մեծ խորագագացության կարիք չկա գիտակցելու համար, որ հիշյալ պատճառաբանություններն, ըստ որոնց երիտթուրքերի ոճրագործությունների արգելման նպատակով՝ Գերմանիայի կողմից կատարվող որևէ ազդու միջամտություն կարող էր վտանգել թուրք-գերմանական դաշինքը, միանգամայն սնանկ էին: Այդ պարզորոշ վկայում էր մաս հաջորդ դեսպանը՝ կոմս Վոլֆ-Մետեմիխը, որը Կ. Պոլսում իր պաշտոնավարությունը սկսելով 1915 թ-ի նոյեմբերի 15-ից՝ ի տարբերություն իր նախորդի, փորձեց իր բոլոր հնարավորությունները գործադրել դեռ կենդանի աքսորյալների օգնելու և երիտթուրքերի հայասպանող քաղաքականությունը կասեցնելու համար, չնայած այն արդեն թևակոխել էր իր վերջին փուլը: «... Նաև մեր մամուլը պետք է վրդովմունք արտահայտի հայերի հալածանքների հանդեպ և դադարի թուրքերին քծնել.- ըշում էր նա 1915 թ-ի դեկտեմբերի 7-ին կանցլեր Բ. Դուլվեգին ուղղված իր զեկուցագրում: - Այն, ինչ նրանք անում են (նկատի ունի Թուրքիայի ռազմական գործողությունները - Ա. Դ.) մեր գործն է, մեր սպաներն են, մեր հրանոթները, մեր դրամը: Առանց մեր օգնության այդ փքված գորտը կփռվի: Մենք ամենևին կարիք չունենք այդքան երկյուղած վերաբերվել թուրքերին: Նրանք հեշտությամբ չեն կարող անցնել մյուս կողմը և խաղաղություն կնքել: Անգլիական կառավարությունն *այժմյան* իշխանավորների հետ հեշտությամբ պայմանագիր չի կնքի: Այդ ավելի շուտ հնարավոր կլինի Ջեմալի հետ, եթե նա (ինչը բացառված չէ) ենվերին դուրս մղեր: Անգլիա-

կան կառավարությունը տարիներ ի վեր փորձում է ենվերին տապալել: Չափազանց անհավանական է, որ նա այժմյան իշխանավորների հետ սեպարատ հաշտության ձգտի: Առավել ևս անհավանական է, որ նա էնվեր փաշային օգտագործի ընդհանուր խաղաղության հաստատման փորձերում: Դրա համար նա ունի հարյուրավոր այլ բաց ճանապարհներ: Հայկական հարցում հաջողություն ունենալու համար մենք պետք է թուրքական կառավարությանը երկյուղ ներշնչենք հետևանքների հանդեպ: Եթե մենք, ռազմական նկատառումներից ելնելով, չհամարձակվենք ավելի վճռականորեն հանդես գալ, ապա մեզ այլ բան չի մնա, քան հետագա անարդյունք բողոքների հետ մեկտեղ, որոնք ավելի չարացնում են, քան օգուտ տալիս, դիտել, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում սպանող» (ընդգծումները հեղինակինն են - Ա. Յ.): Տե՛ս ինտերնետ. ցանցում Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung..., <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>, թիվ 209 արձանագրությունը: Գերմանա-թուրքական դաշինքի լուծարման՝ վերոնշյալ պատճառաբանությունների սնանկությունը գործնականում իր փաստարկումը ստացավ նաև զեներալ Լիման ֆոն Սանդերսի միջոցով, որը 1916 թ-ի նոյեմբերին զենքի գործադրման սպառնալիքով թուրքական իշխանություններին արգելեց աքսորել Ձմյուռնիայի հայությանը՝ դա հիմնավորելով հենց նույն ռազմաստրատեգիական նկատառումներով, որոնց քաղաքական շահարկմամբ երիտթուրքերն իրականացնում էին հայության արտոն ու բնաջնջումը: «Նոյեմբերի 10-ի առավոտյան ես 5-րդ բանակի շտաբի պետին՝ գնդապետ Քյազիմ բեյին ուղարկեցի վալիի մոտ,- նշում էր այդ առթիվ զեներալը դեսպանությանն ուղղված իր տեղեկագրում,- և կարգադրեցի նրան ասել, որ ես այլևս չեի հանդուրժելու նման զանգվածային ձերբակալությունները և փոխադրումները, որոնք, կատարվելով թշնամու սպառնալիքի տակ գտնվող մի քաղաքում, մուտք էին գործում ռազմական տարածաշրջան, իսկ եթե այնուամենայնիվ ոստիկանությունն այդ միջոցառումները շարունակեր, ապա ես իմ ենթակալության տակ գտնվող զորամասերի միջոցով դրանք արգելելու էի: Ես վալիին մինչև կեսօր ժամանակ տվեցի վճիռ կայացնելու համար: Ձմյուռնիայում հրամանատարող զեներալ, պրուսական գնդապետ Թրոմբերին, որն արդեն իրազեկ էր իրադրությանը, ես մայր Պրիդզեի միջոցով ծանուցեցի վերոնշյալի և անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մոտավորապես կեսօրվա ժամը 1, 30-ին մայր Քյազիմ բեյը վալիի մոտից (որը Բուռնաբադում էր) վերադարձավ և ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու փոխադրումները կանգնեցվել էին և այլևս տեղի չէին ունենալու»: Տե՛ս Lepsius J., Deutschland und Armenien..., թիվ 307 արձանագրությունը: Այդ միջադեպի վերաբերյալ այլ տեղեկություններ ստանալու համար տե՛ս անդ, թիվ 306 արձանագրությունը: Հմմտ. Vierbücher H., Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915, Hamburg, 1930, էջ 75: Հմմտ. Lepsius J., Der Prozeß Teilirian-Talaat, „Der Orient“, 1921, էջ 70: Եթե միայն այդ բարձրաստիճան զինվորականը սեփական նախաձեռնությամբ կարողացավ դա անել, ապա որքան մեծ գործ կարող էր կատարել զերմանական կառավարության ազ-

ղեցիկ ճշումը: Հատկանշական է, ի դեպ, որ գեներալ-լեյտենանտ Լիման Ֆոն Սանդերսը, որը մինչև Թուրքիա մեկնելը Կասեւում գտնվող 22-րդ դիվիզիայի հրամանատարն էր, ժամանակակիցների վկայությամբ իր պաշտոնակիցների շըրջանում ուներ մի կողմից կարգապահ, ինքնավստահ, ուղղամիտ, մյուս կողմից մանրախնդիր, մեծամիտ, անտակտ և ընդհանուր առմամբ դիվանագիտական վարվեցողության հմտությունների զուրկ անձնավորության համարում: Տե՛ս Tamcke M., Armin T. Wegner und die Armenier, Hamburg, 1996, էջ 44: Ուստի պատահական չէ, որ երբ նա, ընդունելով Թուրքիայում գերմանական ռազմական միսիան ղեկավարելու վերաբերյալ 1913 թ-ի հունիսի 15-ին կայսեր կողմից կատարված առաջարկը, մեկնեց Թուրքիա (մեկնումից առաջ, հոկտեմբերի 27-ին, նա հանդիպեց կայսերը, որը նրան խստով պատվիրեց Թուրքիայի ներքին քաղաքականությանը չխառնվել և զբաղվել բացառապես իր զինվորական պարտականություններով: «Արդյոք երիտթուրքերը, թե հին թուրքերն են իշխանության ղեկի մոտ կանգնած, Չե՞զ համար պետք է միևնույն լինի,- նշել էր այդ առթիվ Վիլհելմ 2-րդը:- Դուք միայն բանակի հետ գործ ունեք: Թուրքական սպայակույտին գերծ պահեք քաղաքականությունից: Քաղաքականությամբ զբաղվելը նրա անձնամեծ սխալն է»: Տե՛ս Liman von Sanders O., Fünf Jahre Türkel, Berlin, 1920, էջ 11), դեսպան Վանգենհայմն այդ փաստն ընդունեց մեծ անհանգստությամբ՝ վրդովված արձանագրելով, որ Ռազմական միսիայի ղեկավարի պաշտոնի համար բոլոր հավանական թեկնածուների միջից ընտրվել է քաղաքականապես ամենամալպիտանը: Տե՛ս Wallach J. L., Anatomie einer Militärhilfe – die preussisch-deutschen Militärmissionen in der Türkei 1835-1939, Düsseldorf, 1979, էջ 137: Ուշագրավ է նաև, որ Լ. Ֆոն Սանդերսի նշանակումից հետո ինչպես դեսպանության, այնպես էլ Թուրքիայի ռազմական նախարարության հետ՝ Ռազմական միսիայի փոխհարաբերություններում տևականորեն մեծ լարվածություն ստեղծվեց, և որ մասնավորապես վերջին իրողությունն առավելապես պայմանավորված էր Էնվերի և գեներալի փոխհարաբերություններում մշտապես առկա անձնական լարվածությամբ: Տե՛ս Tamcke M., Armin T. Wegner..., էջ 45: Իրադրությունը «շտկելու» նպատակով Վանգենհայմը ձգտում էր Լ. Ֆոն Սանդերսին փոխարինել ֆելդմարշալ Կոլմար Ֆոն դեր Գոլթցի միջոցով, որը դեռ նախկինում՝ 1883-1895 թվականներին որպես ռազմական կրթության կազմակերպիչ լայն գործունեություն էր վարել Թուրքիայում՝ 1885 թ-ից ստանձնելով նաև Օսմանյան կայսրությունում Գերմանիայի Ռազմական միսիայի ղեկավարի պարտականությունները, իսկ 1896 թ-ին որպես թուրքական մարշալ վերադառնալով Գերմանիա՝ նա հետագայում կայսրի կողմից ստացել էր ֆելդմարշալի տիտղոս և 1909-1913 թվականներին դարձյալ ռազմիցս մեկնել էր Թուրքիա այդ երկրի ռազմական պատրաստվածությունն ամրապնդելու նպատակով: Անդ, էջ 46: Դեսպանի ջանքերը հաջողությամբ պսակվեցին, և 72-ամյա Ֆոն դեր Գոլթցը, որն այդ ժամանակ գլխավոր նահանգապետի պարտականություններն էր կատարում Բելգիայում, 1914 թ-ի դեկտեմբերին մեկնեց Կ. Պոլիս: Քանի որ, սակայն, դեսպանն անկարող էր Ռազմական միսիայի գործող ղեկավարին՝ Լ. Ֆոն Սանդերսին պաշտոնանկ անել, նա ձգտում էր հնարավորինս սահմանափակել նրա ազդեցության

ուղորտները, և պատահական չէ, որ ֆոն դեր Գոլթցը, որը ղեկտնմքերի 12-ին արդեն Թուրքիայում էր, առանց Ռազմական միսիայի ենթակայության ներքո դրվելու 1915 թ-ի փետրվարին նշանակվեց թուրքական ռազմական գլխավոր շտաբի խորհրդական և քացի այդ ապրիլին ստանձնեց 1-ին, իսկ աշնանը 6-րդ բանակի, ներառյալ նաև Պարսկաստանում ու Աֆղանստանում տեղակայված զերմանական զինված ուժերի գլխավոր հրամանատարի պարտականությունները: Տե՛ս Kießling H. von, Mit Generalfeldmarschall von der Goltz Pascha in Mesopotamien und Persien, Leipzig, 1922, էջ 16, 18-20: Դմտ. Tamcke M., Armin T. Wegner..., էջ 46: Թուրքական ազդեցությունը ֆելդմարշալի վրա, այնուամենայնիվ, այն աստիճան ակնհայտ էր, որ, ինչպես վկայում էին ժամանակակիցները, առժամանակ անց նրա հանդեպ անվստահություն առաջացավ նույնիսկ Կ. Պոլսի զերմանական ղեկավար շրջաններում, որտեղ նա ձեռք էր բերել «թուրքացած» անձի համարում: «Ծեր զորավարին,- նշում էր Դ ֆոն Կիսլինգը,- առաջին հերթին այն բանի համար էին պախարակում, որ նա կատարելապես թուրքացել էր և չէր կարողանում թուրքական ընչաքաղցության հանդեպ զերմանական շահերը պաշտպանել»: Տե՛ս Kießling H. von, Mit Generalfeldmarschall..., էջ 109: Այդ անվստահության հետևանքով հաճախակի զերմանացի զինվորականներ էին ուղարկվում Բաղդադ՝ նրա մասին տեղեկագրեր պատրաստելու համար, և քացի այդ, որպես զերմանական շտաբի պետ նրան կցվեց նաև զեներալ մայոր Գերոլդ Ֆոն Գլայխը, որի տեսակետները հաստատում էին վերոնշյալը. «Զերմանական քարծրագույն զինվորական հրամանատարությունն այն տեսակետին էր, որ թուրքերի ազդեցությունը ֆելդմարշալի վրա ավելի մեծացել, քան նվազել էր: Իմ հետագա տպավորությունները տեղն ու տեղը հաստատեցին այդ կարծիքը»: Տե՛ս Gleich G. von, Vom Balkan nach Bagdad, Berlin, 1921, էջ 73: Եթե ֆելդմարշալին թուրքական ազդեցություն էր վերագրվում նույնիսկ Գերմանիայի շահերը պաշտպանելու հարցում, ապա որքան մեծ պետք է լիներ այդ ազդեցությունը հայ ժողովրդին վերաբերող խնդիրներում: Այս ամենը նկատի առնելիս կարող է հասկանալի լինել, որ, ինչպես 1918 թ-ին տեղեկացնում էր «Deutsch-Armenische Korrespondenz»-ը, ֆոն դեր Գոլթցը նույնիսկ կողմնակից է եղել հայ ժողովրդի տեղահանման ծրագրին (Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ..., էջ 222), չնայած ակնհայտորեն առանց իրազեկ լինելու երիտթուրքերի թուն դիտավորություններին: Եվ եթե ֆելդմարշալն ընդիուպ իր սեփական հրաժարականի հեռանկարով 1915 թ-ի ղեկտնմքերին կարողացավ կանխել Մոսուլի, ինչպես և այնտեղ գտնվող՝ Բաղդադի հայերի տեղահանությունը, այնուամենայնիվ դա շատ էր զիջում նրան, ինչ կարող էր արվել: Ի դեպ, վերոհիշյալը փոքր-ինչ ավելի հանգամանալից ներկայացնելու համար հարկ է նշել, որ երբ 1915 թ-ի ղեկտնմքերին որոշում կայացվեց Մոսուլում գտնվող հայերին դեպի Եփրատ ուղարկելու մասին, ֆոն դեր Գոլթցը «ռազմական տեսանկյունից այդ՝ ամենևին չարդարացված միջոցառման» հարցում ընդդիմացավ տեղական իշխանություններին: «Խնդիրը ձգվեց համարյա մի ամբողջ ամիս,- նշում էր ժամանակակիցը,- և ֆելդմարշալը սկզբում կարողացավ հասնել միայն այն բանին, որ հայերը Մոսուլում առժամանակ այլ ցուցումի

սպասեին: Երբ մինչև հունվարի կեսը Կ. Պոլսից ոչ մի ցուցում չեկավ, ֆելդմարշալը, ելնելով իր՝ գերագույն հրամանատարի իրավունքներից, Մոսուլի վալիին արգելեց հայերին տեղահանել: Վալին նորից այդ մասին տեղեկություն ուղարկեց Կ. Պոլիս: Մինչև հունվարի 27-ը պատասխան չստացվեց: Ապա մի տեղեկություն եկավ այն մասին, որ կառավարությունը շարունակում է պնդել տեղահանման անհրաժեշտությունը: Դրանից հետո ֆելդմարշալը հեռագրով ամսիջապես հրաժարական ներկայացրեց: Միայն այդ ժամանակ էնվեր փաշան մի գաղտնի հեռագրով պատասխանեց, որտեղ հավաստիացնում էր, որ Մոսուլի հայերը կմնան այնտեղ, և ի միջի այլոց, սակայն, ֆելդմարշալին հայտնում էր, որ նրա՝ գերագույն հրամանատարի լիազորությունները նրան իրավունք չեն ընձեռում միջամտել թուրքական կայսրության ներքին գործերին»: Տե՛ս Lepsius J., Deutschland und Armenien, թիվ 224 արձանագրությունը (Ֆոն դեր Գոլթցը, ի դեպ, հիվանդանալով բժավոր տիֆով, մահացել է Կութ էլ Ամարայի մոտ, 1916 թ-ի ապրիլի 19-ին: Հիվանդության շրջանում, մասնավորապես ապրիլի 8-15-ը ընկած ժամանակամիջոցում նրան խնամել է նաև Արմին Վեգները: Տե՛ս Tacke M., Armin T. Wegner..., էջ 59): Էնվերի այդ նախագուշացումն, իհարկե, իրավականորեն միանգամայն անհիմն էր, քանի որ, եթե նկատի առնենք, որ հայ ժողովրդի տեղահանման ծրագիրը երիտթուրքական կառավարողների կողմից պատճառաբանվում էր բացառապես ռազմաստրատեգիական պատրվակներով, ապա կասկած չի կարող հարուցել, որ Թուրքիայում գտնվող գերմանական բարձրաստիճան գիմվորականությունը, նույնիսկ Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու՝ գերմանական կառավարության որդեգրած միանշանակ դիրքորոշման դեպքում ռազմաստրատեգիական նկատառումներով ամենևին չարդարացվող այդ ծրագիրը մեծ մասամբ կամ անբողբոջի արգելելու՝ քուլոր հնարավորություններն ուներ, և պատահական չէ, որ ինչպես ֆոն դեր Գոլթցը Մոսուլի, այնպես էլ Լիման ֆոն Սանդերսը Զմյուռնիայի հայերի աքսորման վերոհիշյալ արգելքները հիմնավորում էին հենց ռազմաստրատեգիական նկատառումներով: Երիտթուրքական հիշյալ պատճառաբանությունների սնանկությունն իր փաստարկումն ըստ հարկի ստացել է նաև գերմանական մի շարք հյուպատոսների և այլ դիվանագետների կողմից, որոնք, հանգամանալից ներկայացնելով եղերական իրադարձությունների գնույթը, ծրագրայնությունը, ընթացքն ու հրեշավոր ենթատեքստը և հերքելով հայ ժողովրդի տեղահանման ստրատեգիական «հիմնավորումները», հաճախ նաև իրենց անթաքույց անհամաձայնությունն էին արտահայտում ռճրագործությունների նկատմամբ Գերմանիայի ցուցաբերած անտարբերության և իրողությունները կոծկելու՝ գերմանական մանուլի որդեգրած քաղաքականության հանդեպ: «Իմ մինչայժմյան հեռագրային և գրավոր տեղեկատվությամբ,- նշում էր, օրինակ, Գալեպի հյուպատոս Վ. Ռուլերը կանցլերին ուղղված՝ 1915 թ-ի հուլիսի 27-ի իր տեղեկագրում,- կարելի է փաստարկված համարել, որ թուրքական կառավարությունը փաստացի և հնարավոր հայկական խարդավանքների դեմ հիմնավորված պաշտպանական միջոցառումների սահմաններն էսպես խախտել է և ավելի շուտ իր կարգադրություններով, որոնց իրագործումը, նաև կանանց ու երեխաների դեմ, նա ամենախիստ և ամենադաժան ձևով պարտավորեցրել է իշխանություններին, գիտակցաբար նպատակադրվել է հայ ժո-

ղովրդի հնարավորին չափ մեծ զանգվածների այնպիսի միջոցներով բնաջնջելու, որոնք փոխ են առնված հնարարից, սակայն անպատվաբեր են մի կառավարության համար, որն ուզում է դաշնակցած լինել Գերմանիայի հետ: Կասկած լինել չի կարող, որ նա մտադրվել է քառյակի հետ պատերազմի մեջ գտնվելու առիթն օգտագործել հնարավորին չափ քիչ փակ հայ համայնքներ թողնելու միջոցով ապագայում Գայակական հարցից ազատվելու համար: Նա փոքրաթիվ մեղավորների հետ զոհաբերել է ամենեղների բազմությունները: ...Թուրքական կառավարությունն իր միակզամայն անմեղ հայ հպատակներին պատերազմի գոտուց հեռացնելու անհրաժեշտության պատրվակով հազարներով և տասնյակ հազարներով քշել է անապատ՝ բացառություն չանելով ոչ հիվանդների, ոչ հղիների և ոչ էլ զորակոչված զինվորների ընտանիքների համար... ոչինչ չի ձեռնարկել նրանց մեջ բռնկված համաճարակների դեմ, կանանց այնպիսի զրկանքների և հուսահատության մեջ է նետել, որ նրանք իրենց ծովեր և նորածին երեխաներին նետել են ճանապարհի վրա, իրենց՝ հասունության մոտեցող աղջիկներին վաճառել են, իսկ շատերն էլ իրենց փոքրիկ երեխաների հետ նետվել գետը: Նա նրանց մատնել է ուղեկցող զորախմբի կամայականություններին և այդպիսով անարգանքների ու անպատվության, մի զորախմբի, որը տիրացել է աղջիկներին և վաճառել նրանց: Նա նրանց նետել է բերվիմների ձեռքը, որոնք նրանց կողոպտել և առևանգել են: Նա տղամարդկանց մեկուսի վայրերում անօրինաբար ոչնչացրել է և իր զոհերի դիերը կեր դարձրել շներին ու գիշատիչ թռչուններին: Նա իրև թե «աքսորավայր» ուղարկված պատգամավորներին սպանել է, քանտերից ազատել է կալանավորներին, հազցրել նրանց զինվորի համազգեստ և ուղարկել այն վայրերը, որտեղով պետք է անցնեին աքսորյալները: Նա հավաքագրել է չեքոբեզ կամավորների և նրանց ուղղել հայերի վրա ... Գնարավոր չէ՞ր գեթ այսօր կասեցնել հետագա սարսափները և գոնե փրկել Գալեպի վիլայեթի ծովափնյա տարածքների հայերին, որոնց աքսորումը դեռ առջևում է: ... Միթե՞ Բելլանը, Սուկուկը, Քեսաբը և մյուս շրջանները պատերազմական գոտի են: Միթե՞ այնտեղ կանանց և երեխաների ներկայությունը վտանգավոր է, չէ՞ որ բոլոր տղամարդիկ զորակոչվել են...»: Տե՛ս Lepsius J., Deutschland und Armenien..., էջ 110-111: Գմմտ. թեմային առնչվող մյուս հյուպատոսական տեղեկագրերը Յոհ. Լեփսիուսի «Deutschland und Armenien...» և Վ. Միքայելյանի «Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)....» ժողովածուներում: Այդ առթիվ, ելնելով իր իսկ կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներից, ուշագրավ դիտողություն է կատարում նաև Վ. Միքայելյանը. «Այսպես կոչված՝ «հայկական ապստամբությունների», «լրտեսության» և «խռովությունների» աղերսով և գերմանացի դիվանագետներն արտահայտել են իրենց կարծիքը,- նշում է նա:- Նրանք բոլորը մխտում են թուրքական կողմի մեղադրանքները, գտնում, որ դրանք զուտ արոպագանդիստական միտվածություն ունեն արդարացնելու համար հայերի դեմ գործված բռնություններն ու կոտորածները: Նրանք անվարան փաստարկում էին այն իրողությունը, որ պատժիչ ջոկատներն ու քարոզարարները դեկավարվում էին երիտթուրքական Ջեմիետի (կոմիտե) որոշմամբ և պարտավոր էին անառարկելիորեն կատարել այն»: Տե՛ս Միքայելյան Վ., Գայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հաղորդագրություններում, «1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր» հոդվածների ժողովա-

ծու, Երևան, 1995, էջ 28: Ինչևէ, արևմտահայության բնաջնջման՝ երիտթուրքական ծրագրի հիմնական մասը, փաստորեն, իրագործվեց աշխարհամարտի «բարենըպաստ» իրադրության «ամենաբարենպաստ» շրջանում, երբ Թուրքիայում գերմանական բարձրագույն դիվանագիտական ներկայացուցչությունն ի դեմս Վանզենհայմի այդ ծրագրին հակազդելու՝ գեթ անձնական նպատակամղվածություն չուներ, իսկ առավել ազդեցիկ զինվորական ղեկավարությունն ի դեմս ֆոն դեր Գոլթցի կոշտ հակազդման համար բավականաչափ ինքնուրույն չէր: Եվ այդ այն աստիճան միանշանակ էր, որ մինչև իսկ հյուպատոսների և այլ դիվանագետների բազմաթիվ ահազանգերը ոչինչ չկարողացան փոխել: Չնայած հաջորդ դեսպանը՝ Վ. Մետեռնիխսն, ի տարբերություն Վանզենհայմի, վճռակամորեն հանդես եկավ ոճրագործությունների դեմ փորձելով համապատասխան դիրքորոշում ձևավորել նաև կառավարության մոտ, այնուամենայնիվ հայ ժողովրդի տեղահանման և բնաջնջման գործընթացն արդեն հիմնականում ավարտվել էր, և նրա միջամտություններն, այլևս անկարող լինելով կասեցնել իրենց անպատժելիության համոզումը ստացած երիտթուրքերի քաղաքականությունը, պատճառ դարձան Բ. Դռան հետ նրա փոխհարաբերությունների վատթարացման, որի հետևանքով, թուրքական կողմից գերմանական կառավարությանն ուղղված բողոքների հիման վրա նա ետ կանչվեց: «Թուրքիայի հանդեպ Մետեռնիխսը սկզբից ևեթ որոշակի համակրանք չդրստորեց,- գրում էր Կ. Պոլսում Ավստրո-Պրուսիայի դեսպանության կցորդ Յոզեֆ Պոմյանկովսկին,- և առավել քննադատական դիրքորոշում ընդունեց: Նրա համար խիստ անհաճ էր լռությամբ հանդուրժել հայերի բնաջնջման թուրքական ծրագիրը: Ի նպաստ հայկական մախճիրի զոհերի նրա բազմիցս կատարվող միջամտությունները, սակայն, հաջողության չհասան և այնպես պրտորեցին նրա հարաբերությունները թուրքական կառավարության հետ, որ արդեն 1916 թ-ի ամռանը նրա համագործակցությունը Բ. Դռան հետ դարձավ անհնար: Կ. Պոլսի գերմանական շրջանները նույնպես գոհ չէին Մետեռնիխսից և ձգտում էին գաղտնի զեկուցագրերով թուլացնել նրա դիրքերը Բեռլինում, ինչը կարճ ժամանակում լիովին հաջողվեց: 1916 թ-ի սեպտեմբերին էնվերը պաշտոնապես պահանջեց ետ կանչել կոմս Մետեռնիխսին, որը և ի կատար ածվեց: Յոկտեմբերի 3-ին Մետեռնիխսը մեկնեց...»: Տե՛ս Pomiankowski J., Der Zusammenbruch des ottomanischen Reiches, Wien, 1928, էջ 176: Ինչևէ, առաջին աշխարհամարտում թուրք-գերմանական ռազմաքաղաքական փոխառնչությունների համալիր ուսումնասիրության դեպքում, որի հնարավորությունը մենք այստեղ չունենք, բազմաթիվ հարցեր կարող են գտնել իրենց հնարավորինս հավաստի պատասխանը: Այն հանգամանքը, սակայն, որ Գերմանիան կարող էր առանց դաշինքը վտանգելու կանխել կամ կասեցնել հայոց ցեղասպանությունը, թերևս կասկածի ենթակա չէ: Այլ խնդիր է, անշուշտ, որ իրադարձությունների հանդեպ Թուրքիայում գտնվող գերմանական դիվանագիտական շրջանների դիրքորոշումը միատեսակ չէր, և որ, առանձնապես սկզբնական շրջանում, դեսպանությունից ստացվող տեղեկատվությունը կառավարությանն իրատեսական եզրահանգումների հնարավորություն չէր ընձեռում:

րա օգնությամբ ճնշում գործադրել քաղաքագետների վրա:⁸⁴³ Եւ սեպտեմբերին մեկնեց Բագել և ժնն և հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամներին տեղեկացնելով իր հետազոտությունների արդյունքների մասին նրանց տրամադրեց նաև իր մոտ գտնվող փաստաթղթերի մի մասը:⁸⁴⁴ «Basler Nachrichten» օրաթերթի սեպտեմբերի 16-ի համարում նա հրատարակեց նաև «Մի ժողովրդի բնաջնջումը» վերնագրով մի ամստորագիր հոդված,⁸⁴⁵ որտեղ ամփոփ կերպով ներկայացնելով իր դիտարկումների արդյունքները՝ միաժամանակ տեղեկացնում էր, որ գերմանական կառավարությունն այդ ամենին քաջատեղյակ էր, մերժում էր ոճրագործությունը, սակայն անգոր էր դրանք արգելելու:⁸⁴⁶ Ինչպես տեղեկացվում էր այդ առթիվ Բագելի գերմանական գլխավոր հյուպատոսի Բեռլին ուղարկած հաղորդագրության մեջ, հոդվածն այնտեղ ահռելի սենսացիա էր առաջացրել:⁸⁴⁷ Ավելին, քանի որ շվեյցարական թերթերը ստացվում էին նաև Գերմանիայում, հոդվածն այնտեղ նույնպես բազմաթիվ ընթերցողներ գտավ, և երբ գերմանական զանգվածային մամուլի հրատարակիչների կողմից կառավարությանը նշված հրապարակման վերաբերյալ դիրքորոշում ցուցաբերելու պահանջներ ուղղվեցին, վերջինիս համար ստեղծվեց բավականին աննպաստ կացություն:⁸⁴⁸

Բեռլինն այդ իրավիճակում հարկադրված էր ընդառաջել առաջատար մամուլի ղեկավարների հետ տեղեկատվական հանդիպում ունենալու՝ Լեփսիուսի ցանկությանը, և հոկտեմբերի 5-ին նա ռայխստագի շենքում զանգվածային մամուլի ներկայացուցիչների առջև հանդես եկավ մի ընդարձակ զեկույցով:⁸⁴⁹ Ներկայացնելով արևմտահայության ողբերգական դրությունը՝ հռետորն իր ելույթում մեկ անգամ ևս սուր քննադատության ենթարկեց գերմանական կառավարության անվճռականությունը՝

843. Lepsius J., Der Todesgang..., էջ XIX:

844. Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“, 1919, էջ 31:

845. Lepsius J., Der Todesgang..., էջ XXIV: Հմմտ. Meyer K., Armenien..., էջ 106:

846. Stür Trumper U., Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton, 1968, էջ 221:

847. Անդ: Հմմտ. Meyer K., Armenien..., էջ 106:

848. Feigel U., Das evangelische..., էջ 214: Գերմանիայում մամուլի մի ղեկավար աշխատող, ի դեպ, այն համոզմունքն էր հայտնել, որ հոդվածի առանձին հատվածներ ուղղակի թարգմանություն են մի ֆրանսիական քննադից: Stür Lepsius J., Der Todesgang..., էջ XXIV:

849. Անդ, էջ XXIV: Հմմտ. Feigel U., Das evangelische..., էջ 214:

նշելով, որ հայ ազգաբնակչության բնաջնջմամբ վերանում էր նաև Գերմանիայի տնտեսական և մշակութային ազդեցությունը Թուրքիայի վրա, և այդպիսով Գերմանիան իր սեփական մեղքով դառնում էր ոչ թե Թուրքիայի «պարոնը», ինչին նա իրականում արժանի էր, այլ նրա «ծառան»:⁸⁵⁰

Յետևաբար, ըստ Լեփսիուսի, Գերմանիան իր իսկ տնտեսաքաղաքական և մշակութային շահերից ելնելով պետք է վճռականորեն հանդես գար ի պաշտպանություն հայ ժողովրդի: Լեփսիուսը կոչ արեց նաև ծեռնպահ մնալ Թուրքիայի ներքին իրադրության վերաբերյալ «կեղծ և գունազարդված տեղեկատվություն» իրապարակելուց, ինչը նրա համոզմամբ էապես կվնասեր Գերմանիայի բարոյական վարկն աշխարհում:⁸⁵¹

Զնայած ելույթն ունկնդիրների կողմից կրքոտ բանավեճերի տեղիք տվեց և ընդհանուր առմամբ հակասական գնահատանքների արժանացավ:⁸⁵² այնուամենայնիվ այն կառավարությանն այնքան էր անհանգրստացրել, որ հաջորդ օրը նույն շենքում կազմակերպվեց մի մեծ մամլո համաժողով, որտեղ ԱԳՆ-ի հռետորը Լեփսիուսի տեսակետները որակում էր իբրև «չափազանցված», թուրքական միջոցառումները բնութագրում սոսկ որպես «Ամտանտի խառնակիչ գործունեության արձագանք» և հավաստիացնելով, որ գերմանական կառավարությունը ձգտում էր հայերի համար դիվանագիտական ճանապարհով հնարավոր ամեն բան անել միսիոներական ընկերություններին կոչ էր անում Չայկական հարցի հովանավորչության գործիք չդառնալ:⁸⁵³ «Չայկական կոտորածների մասին,- մասնավորապես նշվում էր լրագրողներին տրված հրահանգում,- պետք է ասել հետևյալը. Թուրքիայի հետ մեր բարեկամական հարաբերությունները նրանց ներքին գործերի պատճառով ոչ միայն չպետք է վտանգվեն, այլև ներկա ծանր պահին նույնիսկ չպետք է քննվեն: Այդ իսկ պատճառով առժամանակ պետք է պարտավորություն համարել լռելը:

850. Trumpener U., *Germany and the Ottoman Empire...*, էջ 223:

851. Lepsius J., *Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915*, „Der Orient“, 1919, էջ 31:

852. Եթե օրինակ, Ուլշտայնի հրատարակչության տնօրեն Բեռնհարդը Լեփսիուսի տեսակետներին համակարծիք էր, ապա սոցիալ-դեմոկրատ Յուլիուս Կալիսկին զրուցում էր, որ Լեփսիուսը իրականությունը շատ էր սևացրել, և եթե անգամ հայերը հեռացվեին, ապա նրանց դեռը կարող էին ստանձնել հրեաները: Նմանապես հակասական էին նաև մյուս կարծիքները: Sbr'u Feigel U., *Das evangelische...*, էջ 214:

853. Անդ, էջ 214-215:

Չետազայում, եթե արտերկրի կողմից գերմանական մեղսակցության պատճառով ուղղակի մեղադրանքներ ի հայտ կգան, անհրաժեշտ կլինի հարցը մեծ զգուշությամբ և վերապահությամբ դիտարկել և պնդել, որ թուրքերը հայերի կողմից ուժգին գրգռվել էին»:⁸⁵⁴

Լեփսիուսը, սակայն, որոշակիորեն իր նպատակին հասել էր, քանի որ նրա ելույթից հետո մամուլը թուրքիայի ներքին իրադրության վերաբերյալ իր գնահատականներում դրսևորում էր նկատելի զրսպվածություն:⁸⁵⁵

Ինչևէ, Լեփսիուսը վճռել էր թուրքիայում քրիստոնյաների բնաջնջման քաղաքականության դեմ ակտիվ քայլեր ձեռնարկելու և արքայալուսնեին օգնություն ցուցաբերելու համար կազմակերպել նաև Գերմանիայի ավետարանական եկեղեցուն, ինչը, չնայած այլ համգամանքներում, նա արդեն մի անգամ արել էր: Այդ նպատակով նա հոկտեմբերի 15-ին Արևելքում գործող բոլոր միսիոներական ընկերություններին հրավիրեց Բեռլին՝ նրանց իրազեկելով իր ճանապարհորդության արդյունքների և ձեռք բերված նյութերի վերաբերյալ:⁸⁵⁶ Արդյունքում հավաքույթի մասնակիցները 50 ստորագրությամբ մի ընդարձակ ուղերձ հղեցին կանցլեր Բեթման-Յոլվեգին, որտեղ ամփոփ կերպով ներկայացնելով Հայաստանում տիրող իրադրությունը և իրենց մտահոգությունն արտահայտելով հայ ժողովրդի ողբերգական վիճակի ու Հայկական հարցի առնչությամբ՝ նրան կոչ էին անում ոչ թե «երևութային», այլ «իսկական և ազդեցիկ միջոցառումներ» ձեռնարկել Միջագետքի տափաստաններում գտնվող՝

854. Vierbücher H., Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat..., էջ 78: Ֆիրյուխտերն, ի դեպ, նշում է, որ մամուլը համաժողովը տեղի է ունեցել հոկտեմբերի 7-ին: Չետևելով նրան՝ այդ տեսակետն է արտահայտում նաև Արտեմ Օհանջանյանը: Տե՛ս Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ..., էջ 227: Չենվելով այդ մասին մամուլում հրապարակված տեղեկությունների վրա, սակայն, Ու. Ֆայգելը նշում է, որ միջոցառումն իրականացվել է Լեփսիուսի գեկույցի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 6-ին: Տե՛ս Veigel U., Das evangelische..., էջ 214-215: Զանի որ երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է նույն համաժողովին, և աղբյուրներում երկրորդ միջոցառման մասին որևէ հիշատակություն չի կատարվում, մենք առավել հավաստի համարեցինք վերջին տեղեկությունը:

855. Տե՛ս այդ մասին իր՝ Լեփսիուսի վկայությունը. Lepsius J., Der Todesgang..., էջ XXIV:

856. Schäfer R., Geschichte..., էջ 89:

հարյուր հազարավոր կանանց և երեխաներին սովամահությունից կամ սպանդից փրկելու և դեռ չաքսորված հայերի տեղահանությունը կանխելու նպատակով: Միաժամանակ կոչի հեղինակները խնդրում էին այլ երկրների քրիստոնյաներին նույնպես աղետյալներին օգնություն և պաշտպանություն ցուցաբերելու հնարավորություն ընծեռել:⁸⁵⁷ «Մեր ժողովրդի դիմադրունակության ուժը խիղճն է,- նշվում էր ուղերձում,- որով մենք բոլորս դիմում ենք Աստծուն մեր զենքի հաղթանակի համար: Այդ համերաշխությունը և բերկրանքը սպառնում է սասանվել, երբ հայտնի է դառնում, որ մեր այլահավատ դաշնակցի կողմից մեր հարյուր-հազարավոր հավատակիցներ անհիմն և անիմաստ կերպով հետապնդվում են, և մեր կողմից հնարավորը չի արվում նրանց փրկության համար»:⁸⁵⁸

Լեփսիուսի դրդմամբ հոկտեմբերի 29-ին Գերմանիայի կաթոլիկների համաժողովի կենտրոնական կոմիտեի միսիաների հանձնաժողովի կողմից նույնպես մի համանման ուղերձ հղվեց Բ. Յուլվեգին:⁸⁵⁹ Վերջինիս՝ նոյեմբերի 12-ին հաջորդած պատասխանը, սակայն, իր ընդհանուր հավաստիացումներով առավել դիվանագիտական ժեստի տպավորություն էր թողնում. «Կայսերական կառավարությունը, ինչպես մինչև այժմ, այդպես նաև ապագայում միշտ իր առաջնագույն պարտականություններից մեկը կհամարի իր ազդեցությունը գործադրել, որ քրիստոնյա ժողովուրդներն իրենց հավատի պատճառով չհետապնդվեն: Գերմանացի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ ես, այդ սկզբունքով առաջնորդվելով, կանեմ ինձանից կախված ամեն բան ձեր կողմից արտահայտված մտահոգություններն ու բաղձանքները նկատի առնելու համար: Կ. Պոլսի կայսերական դեսպանությանը ես տեղեկացրել եմ ձեր դիմումի բովանդակության մասին»:⁸⁶⁰

Զնայած կանցլերի պատասխանը նշված հարցերի շուրջ կառավարության դիրքորոշման որևէ փոփոխություն չէր արձանագրում, այնուամենայնիվ Լեփսիուսը տեղի տալու միտք չուներ: Ընդհակառակը, նա իր

857. Lepsius J., Deutschland und Armenien..., էջ 187:

858. Անդ, էջ 186: Կոչը ստորագրողների թվում էին այնպիսի ականավոր գիտնականներ և գործիչներ, ինչպես օրինակ, Ա. Ֆոն Չառնակը, Գ. Չաուսլայթերը, Յ. Ռիխտերը, Է. Շթիրը, Ֆրիդրիխ Լոֆսը, Ա. Վ. Շրայթերը և այլն:

859. Lepsius J., Der Todesgang..., էջ XXIV:

860. Lepsius J., Deutschland und Armenien..., էջ 198:

պարտքն էր համարում ըստ հնարավորին մեծացնել հասարակական ճընշումն՝ այդ համարելով իշխանություններին ակտիվ քայլերի մղելու միակ գրավականը: Ուստի պատահական չէ, որ երբ զանգվածային լրատվության միջոցներն ու եկեղեցին արդեն բավականաչափ իրազեկ էին Հայաստանում կատարվող իրադարձություններին, նա վճռեց իր տեղեկությունները մատչելի դարձնել լայն հասարակական շրջաններին: Այդ կերպ Լեփսիուսը մտադիր էր նաև թուրքական պաշտոնական լրատվության դեմ ստեղծել ուժեղ հակազդեցություն և բացի այդ ավետարանական համայնքներին դրդել հայ աքսորյալներին օգնելու նպատակով կատարել մեծածավալ հանգամանակություններ, որոնք «կհամապատասխանեին կարիքի մեծությանը»:⁸⁶¹ Լեփսիուսը ջանում էր այդ գերխնդիրն իրագործել թե՛ ընդհատակյա ճանապարհներով և թե՛ բացահայտ լրատվության՝ առկա հնարավորությունների օգտագործման միջոցով: Նախ անդրադառնանք նրա բացահայտ տեղեկատվական գործունեությանը, որ իրագործվում էր իր իսկ կողմից խմբագրվող՝ «*Der Christliche Orient*» ամսագրի միջոցով:

Պարբերականի՝ 1915 թ-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարում նրա և Ռյոդենբերքի ստորագրությամբ հրապարակվեց մի օգնության կոչ, որտեղ բավական թափանցիկ վկայություն էր կատարվում Հայաստանում ստեղծված իրադրության վերաբերյալ. «Մեր բարեկամներն այնտեղ... մեծ միջոցների կարիք ունեն տասնյակ հազարավոր աքսորվող կանանց և երեխաներին օգնելու համար, որոնք անցնում են Ուռհայով: Մեր առաջադրանքները, նույնիսկ եթե դրանք ամենածայրահեղ կարիքի մեղմացման են վերաբերվում, տասնապատիկ անգամ ավելի մեծ են, քան Աբդուլ Համիդի մեծ կոտորածից հետո: Արդյոք հնարավոր կլինի՞ դեռ կենդանի հայ քրիստոնյաների կյանքը պահպանել, գիտի միայն Աստված: Մեր պարտքն է, սակայն, անել այն, ինչ կարող ենք»:⁸⁶²

Այս հրապարակումը, որտեղ բարեկամներին կոչ էր արվում «մեծագույն ջանքեր գործադրել» օգնության միջոցների հայթայթման համար, դարձավ առաջին ահագանգը «*Der Christliche Orient*»-ում: Պարբերականի համար 1915 թ-ին ստեղծվել էր չափազանց բարդ իրավիճակ: Տարվա առաջին համարի թողարկումից հետո այն թրթի դեֆիցիտի հետևանքով, որի բաշխու-

861. Lepsius J., *Der Todesgang...*, էջ XXVI:

862. St'u Hilferuf!, „*Der Christliche Orient*“, 1915, էջ 73:

նը կատարվում էր իշխանությունների կողմից. հարկադրված էր տպագրվել երկու ամիսը մեկ անգամ. ինչը մեծ դժվարություններ էր հարուցում օպերատիվ լրատվության իրականացման համար: Մյուս կողմից, Լեփսիուսը հարկադրված էր պարբերականը հրատարակելիս ցուցաբերել մեծ զգոնություն գրաքննության կողմից նրա արգելումը բացառելու համար. քանի որ այդ դեպքում կվնասվեր նաև օգնության աշխատանքների պրոպագանդան: Ամենամեծ խոչընդոտը, սակայն, այն էր, որ Ուռհայից ուղարկվող թղթակցությունները, ճանապարհին գրաքննության կողմից ստուգման և «սրբագրման» ենթարկվելով, տեղ էին հասնում հիմնովին կամ մեծ մասամբ անընթեռնելի (կտրատված կամ ջնջված) վիճակում: Դրա ցայտուն վկայություններից մեկն, օրինակ, Յ. Կյունցլերի 1915 թ-ի դեկտեմբերի 4-ի ներքոհիշյալ նամակն էր. «Յոսպիտալի անձնակազմի համար այս անգամ ամառային արձակուրդներ չեղան: Այնուհետև եկավ նոյեմբերյան չար ամիսը, որի մասին ես այստեղ հակիրճ ուզում եմ տեղեկացնել: (Դետևոդ տեղեկությունը գրաքննության կողմից հանվել է: Երկրորդ էջը շարունակվում է նախադասության կեսից)⁸⁶³ ... հիվանդներ: Ո՞վ պետք է բժիշկների բացակայության պարագայում աղքատներին հոգ տանի: Ո՞վ, եթե ոչ ձեր եղբայր Յակոբը...»:⁸⁶⁴

Եվ այնուհանդերձ նույնիսկ այն նվազագույնը, որ հասնում էր տեղ, որոշակի պատկերացում էր տալիս հայ ժողովրդի մեծ ողբերգության մասին: Ջորջինակ. «...Վերջին առաքումից ես երկու օր 50 մարկի հաց եմ բաժանել անհայրենիքներին: Սովահարներն ինձ գրեթե կտորկտոր էին անում, այնպես որ ստիպված էի պաշտպանվել: Ցավ կույրերի կույր ղեկավարներին, որոնք հազարներին նետեցին դժբախտության մեջ...»:⁸⁶⁵ Եվ կամ «... Իմ կյանքի ամենածանր ամիսն է, որ իմ ետեվում է գտնվում: Այստեղի ամերիկյան միսիոների համար չափազանց ծանր էր, և նրա նյարդերը դավաճանեցին ...»:⁸⁶⁶

863. Այդ միջանկյալ պարզաբանումը կատարված է խմբագրության կողմից:

864. St'u Nachrichten, „Der Christliche Orient“, 1916, էջ 3-4:

865. St'u Aus Urfa, „Der Christliche Orient“, 1915, էջ 77: Այս տողերն ամենայն հավանականությամբ պատկանում են Կ. Յեպեին:

866. St'u Nachrichten, „Der Christliche Orient“, 1916, էջ 3: Այս հատվածը քաղվել է Կյունցլերի 1915 թ-ի նոյեմբերի 19-ի նամակից: Խոսքը վերաբերում է Ուռհայում գտնվող ամերիկյան որբանոցի տնօրեն Լեսլիին, որը, չկարողանալով տանել հայերի ողբերգությունը, ինքնասպան եղավ: St'u Künzler J., Bericht über die letzte Arbeit des deutschen Missionshospitales in Urfa, անդ, 1919, էջ 27:

Ուշագրավ է, որ գրաքննությունից ըստ հնարավորին խուսափելու համար Ուռուհայի աշխատակիցները փորձում էին իրողությունները ներկայացնել ակնարկներով՝ հաճախ կիրառելով նաև գաղտնալեզվի մեթոդը: Օրինակ, գրելով «Հարյուրավոր քաղցածներ փախչում էին միսիայի հաստատությունը, ամենաաղքատների մեջ մեր բժշկական գործունեությունը ահռելի չափեր է ընդունում» նախադասությունը՝ հեղինակը նախապես հարկ էր համարում ընդգծել, որ Գերմանիայում գիտեն, թե ովքեր են «քաղցածները» և «ամենաաղքատները»:՝⁸⁶⁷ Այդ և նման թղթակցությունների հրապարակման ժամանակ խըմբագրությունն իր հերթին ընթերցողներին խորհուրդ էր տալիս ճշմարտությունը որոնել «տողերի արանքում»:՝⁸⁶⁸

Այնուամենայնիվ, պետք է ասել, որ թղթակիցների տեղեկությունների աղճատմամբ պայմանավորված լրատվական դեֆիցիտը Լեփսիուսի կողմից պարբերաբար կատարվող պարզաբանումներով հասցվում էր նվազագույն չափերի, չնայած, իհարկե, այդ պարզաբանումները ևս հիմնականում պետք է փաստագրական բնույթ ունենային: Օրինակ, Կյունցլերի՝ նոյեմբերի 19-ի հիշյալ թղթակցությունը հրապարակելիս նա կից գրությամբ տեղեկացնում էր, որ Ուռուհայի հայկական թաղամասը ավերված, իսկ քրիստոնյա ազգաբնակչության մեծագույն մասը սպանված կամ աքսորված էր:⁸⁶⁹ «Մեր ընթերցողները,- նշում էր խմբագրականը մեկ այլ անգամ,- այս կցկտուր տեղեկություններից կարող են նկատել, որ հիմնական խնդիրը գրաքննության պատճառով միշտ հարկադրաբար շրջանցվում է: Չնայած մեր տեղեկություններն ավելի քան բավական են իրադարձությունների վերաբերյալ ամբողջական պատկերացում ունենալու համար, սակայն քանի որ գրաքննությունը թույլ չի տալիս դրանք հրապարակել, մեր բարեկամները ստիպված են համբերել, մինչև մենք այդ մասին ավելին կկարողանանք ասել: Մեր ընթերցողները կարող են հանդիպել լինել, որ եթե մենք նույնպես ստիպված ենք լռել, ապա ան-

867. Schäfer R., Geschichte..., էջ 88:

868. St'u Nachrichten, „Der Christliche Orient“, 1916, էջ 3: Ղմսն. Künzler J., Berichte über das Notstandswerk in Urfa, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 119, ծանոթագրությունը:

869. Nachrichten, „Der Christliche Orient“, 1916, էջ 3:

գործ չենք, և որ իրենց նվիրատվությունները երբեք այնքան անհրաժեշտ չեն եղել, որքան այժմ»:⁸⁷⁰

Այնուամենայնիվ, եթե պարբերականը գրաքննության պատճառով չէր կարող տեղեկություններ հաղորդել աքսորի բնույթի և իրականացման եղանակների վերաբերյալ, ապա դրա ծավալը և հետևանքներն ընթերցողներին անհայտ չմնացին: Այդ առումով հատկապես մեծ դեր խաղաց Լեփսիուսի «Յեռացում դեպի Սիրիա» հոդվածը, որ տպագրվեց պարբերականի 1915 թ-ի վերջին համարում: Թուրքիայի հայաբնակ բոլոր վիլայեթներում «Յայ ժողովրդի բնօրրանում» արդեն ոչ մի հայ չկար, տեղեկացնում էր Լեփսիուսը: Ովքեր այլևս ճանապարհին չէին, գտնվում էին Դեր էս Ջորի և Մոսուլի միջև ընկած տափաստաններում: «Քացարձակապես միջոցներից զուրկ մի քանի հարյուր հազար մարդկանց մի մուրացկան ժողովուրդ, որի չորս հինգերորդը երեխաներ և կանայք են. ճամբարել է Միջագետքի անապատի եզրին, առանց իմանալու, թե ինչպես է ծմռանը գոյատևելու: Թուրքիայի հայ ժողովուրդը դարձել է պատերազմի զոհը»:⁸⁷¹

Փաստագրական տեղեկատվությունը շարունակվեց նաև հետագայում: Եթե անգամ ընդունվեր, որ Թուրքիայի հայ բնակչության առավելագույնը մեկ երրորդը մահմեդականացման և փախուստի միջոցով կարողացել էր աքսորից խուսափել, նշվում էր ԳԱԱ-ի վարչության 1916 թ-ի սկզբին հրապարակված կոչում, ապա շուրջ 1 200 000 մարդ աքսորվել էին: Նրանց մի մասը դեռ գտնվում էր ճանապարհներին, իսկ մոտ 600 000-ը, որոնք պետք է հասած լինեին Միջագետքի անապատները, դատապարտված էին այնտեղ քաղցից և հիվանդություններից մահանալու:⁸⁷² Ընդգծելով, որ արևելյան գավառների բնակիչներից «աքսորավայր են հասել միայն կանայք և երեխաները», և այդպիսով նաև համապատասխան կռահումների հնարավորություն ընձեռնելով վարչությունը կոչ էր անում համախմբել ջանքերը «աննկարագրելի զրկանքների» ենթարկված աքսորյալներին օգնելու համար:⁸⁷³

870. Անդ, էջ 4:

871. Lepsius J., Die Wegführung nach Assyrien, „Der Christliche Orient“, 1915, էջ 90-91:
872. Sieu Hilferuf zur Linderung unbeschreiblicher Not, „Der Christliche Orient“, 1916, էջ 1-2: Չնայած այդ բլերն ամբողջական չէին և չէին էլ կարող լինել, սակայն հնարավորություն էին ընձեռում բավականին հստակ պատկերացում կազմել տեղի ունեցածի վերաբերյալ:

873. Անդ:

Լեփսիուսը, սակայն, ձգտում էր ոչ միայն փաստերն արձանագրել, այլև պարզաբանել դրանց ներքին շարժառիթները. հանգամանք, որ նրա համոզմամբ ի վերջո հանգեցնում էր թուրք դաշնակցի վերաբերյալ գոյութուն ունեցող տեսակետների վերանայման անհրաժեշտությանը: Եթե թուրքիան, նշում էր Լեփսիուսը, մինչև պատերազմն «ազգային» պետություն էր, ապա այժմ ձգտում էր «իսլամի հիմքի վրա» վերակազմվել մի միասնական մահմեդական պետության: Դա բնականորեն հանգեցնում էր քրիստոնյա տարրերի մեկուսացմանը, որոնք այնտեղ հանդիսանում էին եվրոպական մշակույթի հիմնական կրողը: Առավել վտանգված քրիստոնյա տարրի՝ հայերի պարագայում նշված մեկուսացումը կատարվեց համատարած տեղահանման և աքսորի ճանապարհով: Հետևաբար աքսորի կազմակերպումն ուներ ոչ թե «ստրատեգիական» դրդապատճառներ, ինչպես ներկայացվում էր թուրքական պաշտոնական լրատվության կողմից, այլ «ներքին քաղաքական»: Լեփսիուսի համոզմամբ, այդպիսով մեծ պատասխանատվություն էր ծանրանում թուրքիայի դաշնակցի՝ քրիստոնյա Գերմանիայի վրա, որի պատվո պարտքն էր ամեն ջանք գործադրել «աքսորի ամենը զոհերին» փրկելու համար:⁸⁷⁴

Լեփսիուսը մանրագնին և մեծ հետևողականությամբ էր հերքում աքսորը «ստրատեգիական» շարժառիթներով պայմանավորող տեսակետները, քանի որ թուրքիայի հակահայկական քարոզչությունը, որը մեծ շրջանառություն ուներ նաև Գերմանիայում, հենվում էր այդ կեղծիքի վրա: Նա առնվազն անլուրջ էր համարում աքսորի հարցում Շապին Գարահիսարի և Վանի դիմադրության շահարկումները, քանի որ երկու դեպքում էլ հայերի պայքարը զուտ ինքնապաշտպանական նպատակներ ուներ, և բացի այդ առաջինը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ աքսորն արդեն սկսվել էր: Նմանապես անհիմն էին նաև հայերի դասալքության և դավաճանության վերաբերյալ տարածում ստացած տեսակետները: «Լրտեսության կամ դասալքության առանձին դեպքերը,- նշում էր նա,- որոնք բնականաբար ի հայտ են գալիս պատերազմի բոլոր օջախներում, իսկ թուրքիայում ինչպես հայերի, նմանապես նաև արաբների, քրդերի և թուրքերի մեջ, ունեն մասնավոր և տեղական նշանակություն, որոնց պատճառով չի կարելի ողջ ազգին պատասխանատվություն վերագրել»:⁸⁷⁵ Բացի այդ,

874. Lepsius J., Die Wegführung nach Assyrien, „Der Christliche Orient“, 1915, էջ 91:

875. Անդ, էջ 90:

նշում էր Լեփսիուսը, փաստերը ցույց են տալիս, որ «հայերն ընդհանուր առմամբ արիաբար և հավատարմորեն են ծառայել թուրքական բանակում, ինչը 1915 թ-ի փետրվարին վկայել է նաև ռազմական նախարար Էմվեր փաշան»:⁸⁷⁶

Աքսորի ստրատեգիական անհրաժեշտությունը վկայակոչող՝ թուրքական տեսակետների հերքմանը զուգահեռ Լեփսիուսը միաժամանակ սուր քննադատության էր ենթարկում այն գերմանական լրատվամիջոցներին, որոնք կապկելով նշված տեսակետները՝ նպաստում էին հասարակայնության ապակողմնորոշմանը: Օրինակ, Շերիֆ փաշայի և նրա թուրք կուսակիցների կողմից կառավարության դեմ դեռ պատերազմից առաջ կազմակերպված հեղաշրջման փորձն, ըստ մի շարք գերմանական օրաթերթերի, կապված էր մի «մեծ հայկական դավադրության» հետ:⁸⁷⁷ «*Wiener neue freie Presse*», «*Neues Stuttgarter Tagesblatt*», «*Leipziger Tagesblatt*» և մյուս օրաթերթերում ազատ շրջանառություն էր կատարում նաև Կ. Պոլսից 1915 թ-ի հունիսին ստացված այն ստահոդ տեղեկատվությունն, ըստ որի հայերը Վանի վիլայեթում «կոտորել էին» 150 000 մահմեդականների:⁸⁷⁸ Գերմանական մամուլի հրապարակումներում այդ «փաստն» օգտագործվում էր նույնիսկ որպես լուրջ հիմնավորում հայկական կոտորածների արդարացման համար: «Ովքեր հայկական կոտորածներից բողոքում են,- նշված էր. օրինակ, հրապարակումներից մեկում,- մոռանում են, որ դրանից առաջ, ինչպես ապացուցված է, 150 000 մահմեդականներ դարձել են հայերի զոհը»:⁸⁷⁹

Լեփսիուսը սուր քննադատությամբ էր անդրադառնում իրականությունը խեղաթյուրող այդ հրապարակումներին. «Մամուլում հաճույքով են ասում «ինչպես ապացուցված է», երբ այդ մասին փաստեր չունեն,- հայտարարում էր նա: - Այդ 150 000 կոտորվածների արձագանքը շարունակ դողանջում է գերմանական մամուլում: Ով նման կոտորածներ է հորինում, դրանք վերագրում դժբախտ հայերին, «ինչպես ապացուցվածից» է խոսում, երբ ոչինչ ապացուցված չէ, ստանձնում է նույն մեղքը, որը մենք մշտապես վերագրում ենք

876. Անդ:

877. Անդ, էջ 93:

878. Անդ, էջ 92:

879. Անդ:

Անտանտի մամուլին: ... Եթե որևէ մեկն ավելի լավ տեղեկացված չէ, քան մեր մամուլը, ավելի լավ է լռի»:⁸⁸⁰

Հատկանշական է, որ Գերմանիայում նրա հրապարակումներից ավելորդված հասարակական կարծիքը հանդարտեցնելու նպատակով թուրքական կառավարությունը 1916 թ-ին հրատարակեց մի «Կարմիր գիրք» այսպես կոչված հայկական ապստամբությունների մասին, որն անշուշտ իր նպատակին կհասներ, եթե արժանի հակահարված չստանար: Եվ այն չուշացավ. Լեփսիուսն այդ առթիվ հրատարակեց և առաքեց մի գաղտնի թռուցիկ, որը կրում էր «Ի պարզաբանումն հայերի կարծեցյալ ապստամբությունների» վերնագիրը, և որտեղ ամբողջականորեն մերկացվում էին թուրքական հրապարակման կեղծիքներն ու նենգ միտումները:⁸⁸¹ Կարճ ժամանակ անց, 1916 թ-ի նոյեմբերին նա որպես գաղտնի թռուցիկ վերահրատարակեց և առաքեց նաև փոքր-ինչ ավելի վաղ սեպտեմբեր ամսին «*Der Christliche Orient*»-ում հրատարակված իր «Թուրքիայում օգնության գործի մասին» հոդվածը, որը մանրամասն տեղեկություններ հաղորդելով տեղի ունեցած ոճրագործությունների և հայ քաղաքացիների ողբերգականորեն ծանր դրության մասին օրգանապես լրացնում էր նախորդին:⁸⁸² Թռուցիկները, մեծ տպաքանակով առաքվելով գերմանական ամենաբազմազան հասարակական շրջաններին, հնարավորություն ընձեռեցին կանխել այն թյուրիմացությունները, որ կարող էին առաջանալ թուրքական հրապարակման հետևանքով:

Հակահայկական քարոզչության դեմ Լեփսիուսի պայքարն ուղեկցվում էր նաև հայ ժողովրդի պատմական առաքելության, նրա մշակութային արժեքների և ազգային առանձնահատկությունների արժևորմամբ ու վերագնահատմամբ՝ այդպիսով ստանալով նաև կրոնա-մշակութային և տնտեսա-քաղաքական հիմնավորում: Այդ առումով առանձնակի հիշատակության է արժանի դր. Հերման Խրիստի «Հայերի տնտեսական և մշակութային նշանակությունը» ընդարձակ հոդվածը, որը

880. Անդ, էջ 92-93:

881. Schäfer R., *Geschichte...*, էջ 94:

882. Ուշագրավ է, որ եթե դեռ սեպտեմբերին Լեփսիուսը կարողացել էր այդ հոդվածն իր պարբերականում հրատարակել, ապա երկու ամիս անց, երբ այն թռուցիկի տեսքով առաքվեց, ենթարկվեց բռնագրավման: Եթե նույնիսկ դրա տպաքանակի մեծ մասն արդեն առաքված լինելով՝ բռնագրավումից խուսափեց, այնուամենայնիվ այդ փաստն ինքնին վկայում էր, թե գրաքննությունը որքան կամայախանորեն էր գործում: Անդ:

տպագրվեց «*Der Christliche Orient*» պարբերականի՝ 1916 թ-ի 7-9-րդ համարներում:⁸⁸³ Հեղինակը, որն, ինչպես հայտնի է, երկար տարիներ բժշկական գործունեություն էր վարել ԳԱԱ-ի Ուռնայի մասնաճյուղում և լայն շփումներ ունեցել Արևելքի գրեթե բոլոր քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների հետ, այդ իրապարակմամբ նպատակ էր հետապնդում փաստել հայ ժողովրդի անփոխարինելի դերն ու նշանակությունը ողջ Արևելքի տնտեսական և մշակութային զարգացման հարցում. մի խնդիր, որ գերմանական պաշտոնական տեղեկատվության կողմից բնութագրվում էր որպես Գերմանիայի հետպատերազմյան արևելյան քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը:

Եթե Գերմանիան իր առջև նպատակ էր դրել աջակցել Առաջավոր Ասիայի տնտեսական զարգացմանն, ապա, ըստ հեղինակի, պետք է նախ պարզեր, թե Արևելքի բնակչության ո՞ր տարրի վրա կարող էր հենվել: Որքան էլ մեծ էին թուրքերի հետ կապված հույսերը, այնուամենայնիվ հողվածագրի համոզմամբ նրանք այդ հարցում Գերմանիային դաշնակից չէին կարող լինել: «Թուրքը որքան հմուտ է իրեն պատերազմում դրսևորում,-նշում էր նա,- այնքան անպիտան է, ըստ մեր արևմտյան ըմբռնումների, իր երկրի տնտեսական վերակառուցման համար»:⁸⁸⁴

Այլ էր իրավիճակը հայերի պարագայում: Հայ ժողովրդի անցյալի և ներկայի թուուցիկ քննությունն անգամ, ըստ հողվածագրի, հնարավորություն էր ընձեռում կատարել կռահումներ նրա «եվրոպական նրկարագրի», առանձնահատուկ օժտվածության և տաղանդի մասին. «Հնագույն ինքնատիպ գրական լեզուն և դեռ չորրորդ հարյուրամյակի սկզբին Տրդատ թագավորի և Գրիգոր պատրիարքի օրոք ընդունված քրիստոնեությունը,- նշում էր նա,- վկայում են այդ ժողովրդի բարձր մտավոր ունակությունները, որը կազմավորվել է նախապատմական շրջանում հին խալդեերի և հնդգերմանական եկվորների միախառնման միջոցով, և որի տեսակը շատ ավելի եվրոպական է, քան ա-

883. St'v Christ H., „Die wirtschaftliche und kulturelle Bedeutung der Armenier“, „Der Christliche Orient“, 1916, էջ 35-44:

884. Անդ, էջ 37: Թուրքերն ի բնե թուրանական տափաստանային քոչվորներ էին, նշում էր Խրիստը, որոնց «բնական իդեալը» Թուրանն էր: Զարգացման եվրոպական ըմբռնումները նրանց մշտապես մնում էին խորթ և անհասկանալի: Բացի այդ, նրանք զուրկ էին նաև այն մտավոր ներուժից, որ անհրաժեշտ էր Արևելքում եվրոպական չափանիշներին համապատասխան զարգացում ապահովելու համար: Անդ, էջ 37-38:

րևելյան»:⁸⁸⁵ Խրիստի համոզմամբ այդ ապացուցվել է դեռ միջնադարում ի դեմս հայերի և Բարբարոսայի ու խաչակիրների միջև ստեղծված ամուր կապերի, և փաստագրվում էր նաև ներկայում ի դեմս այն բազմազան արդյունավետ շփումների, որ նրանք ունեին եվրոպացիների հետ:

Հիմնավորելով, որ Արևելքի զարգացման պատմական առաքելությունը կարող էր իրագործել միայն հայ ժողովուրդը՝ Խրիստն ահազանգ էր հնչեցնում այն մեծ ողբերգության առնչությամբ, որ ապրել էր արևմտահայությունը, և որը դեռ շարունակվում էր՝ սպառնալով բնաջնջել նաև անապատներում կուտակված դեռ կենդանի հարյուրհազարավորներին: Մի ողբերգություն, որի համար, ինչպես ցույց էր տալիս Հայկական հարցի պատմությունը, առաջին հերթին մեղավոր էր եվրոպան... Քանի որ, ըստ հողվածագրի, այն ոչ այլ ինչ էր, քան Հայկական հարցի ամուլ զարգացումների բնական հետևանքը:⁸⁸⁶

Հ. Խրիստի կարծիքով, սակայն, դեռ ուշ չէր կատարված սխալն ուղղելու և դատապարտված ժողովրդին փրկելու համար: Հայերի «տնտեսական ազատագրումը» նա համարում էր սկզբնական և ամենաիրատեսական քայլը, ըստ որի Գերմանիայի միջամտությամբ հարկավոր էր կատարել «վիլայեթների մի նոր, հայերի պահանջներին համապատասխանող բաժանում»⁸⁸⁷ և հայ ժողովրդին տալ տնտեսական ինքնակառավարման հնարավորություն: Այդ հարցում Գերմանիան պետք է ստանձներ «առաջնորդի» դերը, նշում էր հողվածագիրը, քանի որ այդ էին պահանջում նրա հետպատերազմյան շահերն Արևելքում: Այլապես, եթե հայ ժողովրդի բնաջնջումը չկասեցվեր, ապա, նրա խորին համոզմամբ, ոչ միայն Գերմանիայի տնտեսական ծրագրերը կծախողվեին, այլև Առաջավոր Ասիայի բոլոր երկրները կդատապարտվեին կործանման: «Եթե Գերմանիան իրոք մտադիր է Անատոլիայի համար մինչև Բաղդադ և Մեկկա ար-

885 Անդ, էջ 35-36: «Չկան ծառայություններ,- նշում էր Խրիստը,- որոնք հայերը չկարողանան կատարել օտարի համար:- Վերջինիս համար նրանք անփոխարինելի են նաև այն պատճառով, որ գիտեն արևելքում գործածվող բոլոր լեզուները և որպես կանոն նաև մեկ կամ մի քանի եվրոպական լեզուներ:... Իբրև ամենակարողներ, բոլոր թամբերի վրա հմուտ, կանգնած են նրանք հաճախ անօգնական եկվորների կողքին»: Տե՛ս „Der Christliche Orient“, 1916, էջ 40:

886. Անդ, էջ 43:

887. Համիդի օրոք երկրի արևելյան վիլայեթներն այնպես էին սահմանագծվել, որ նրանցից ոչ մեկում հայերը մեծամասամբություն չկազմեն: Խրիստն այդ բնութագրում էր որպես «երկրի բարգավաճման համար վնասակար, երթևեկության համար խոչընդոտիչ միջոցառում»: Անդ:

ոյունավետ երկաթուղային ցանց կառուցել,- նշում էր Խրիստոն իր եզրափակիչ խոսքում,- եթե նա կամենում է կիլիկյան հարթավայրում, Ադանայի մոտ արհեստական ոռոգում իրականացնել և եթե համարձակվի վերականգնել Միջագետքի ոռոգման հին համակարգը, որտեղի՞ց է ուզում ավելի լավ աշխատուժ ձեռք բերել, քան հայերն են, ինչպե՞ս կարող է առանց նրանց գործուն աջակցության այդ ամենը գլուխ բերել: Թուրքերն ապշած դիտելու են. Ալլահ քերիմ: Մինչդեռ հայերը ձեռք կմեկնեն և կշարունակեն, մինչև աշխատանքը կավարտվի: Թող Աստծո ձեռքը, ուրեմն, իրադարձություններն այնպես ղեկավարի, որ այդ դժվարին նպատակն իրականացվի: Այլապես Առաջավոր Ասիայի համար բացարձակապես միևնույն է, թե պատերազմում վիճակահանությունն ինչպես կավարտվի: Քանի որ, այսպես թե այնպես, այդ երկրները կկործանվեն այն մարդկային ուժերի բացակայության պատճառով, որոնք կոչված են և ի վիճակի են նրանց վերակառուցման համար աշխատելու»:⁸⁸⁸

Լեփսիոսի հիշյալ տեղեկատվական գործունեությունը զգալիորեն արդյունավորվեց՝ նպաստելով բարեկամների թվի ընդլայնմանը և նույնիսկ այդ ծանր իրադրությունում ապահովելով զանազան շրջանների նյութական և, ըստ հանգամանքների, նաև քաղաքական աջակցությունը: Դրա վկայությունն էր, օրինակ, Խաղաղության կողմնակիցների գերմանական ընկերության՝ 1915 թ-ի նոյեմբերին Լայպցիգում կայացած համաժողովը, որը, տեղեկացված լինելով Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին, իր համակրանքն ու համերաշխությունն արտահայտեց հայ ժողովրդին՝ պատրաստելով կառավարությանն ուղղված մի ուղերձ, որտեղ վերջինիս կոչ էր արվում վտանգված հայությանը սատարելու համար իր ազդեցությունը գործադրել դաշնակից Թուրքիայի վերա:⁸⁸⁹ Դրա խոսուն վկայությունը դարձավ նաև հայ ժողովրդի աքսորի և բնաջնջման վերաբերյալ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Կարլ Լիբկնեխտի՝ 1916 թ-ի հունվարի 11-ին ռայխստագում կատարած հարցապնդումը, որում նա վկայակոչում էր Լեփսիոսի կողմից հաղորդված տեղեկությունները, և որը, զգալի իրարանցում

888. Անդ, էջ 44:

889. Feigel U., *Das evangelische...*, էջ 227: Առաքումից առաջ, սակայն, ուղերձի հարցադրումը բավականին «թուլացվեց», քանի որ ժողովին ներկա գտնվող ոստիկանության ներկայացուցիչը հայտարարեց, որ սկզբնական բովանդակությամբ ուղերձի առաքումը չէր կարող թույլատրել: Անդ:

առաջացնելով խորհրդարանում, սակայն առանց սպառիչ բավարարում ստանալու՝ խորհրդարանի նախագահի միջամտությամբ առկախվեց։⁸⁹⁰

Ինչևէ, 1916 թ. սկզբին Լեփսիուսը ծրագրել էր նաև Սիրիայում և Միջագետքում գտնվող հայ աքսորյալներին օգնություն ցուցաբերելու նպատակով մի արշավախումբ ուղարկել Թուրքիա։ Այդ նպատակով ՉԱԱ-ի կողմից կատարված դիմումը, սակայն, մինչև իսկ դեսպան Մետեռնիխի ակտիվ միջնորդությունից հետո հանդիպեց Բ. Դռան անվերապահ մերժմանը։ «ՉԱԱ-ի կողմից պլանավորված՝ օգնության արշավախմբի հարցն այստեղ ներկայացվել է Բ. Դռանը,- այդ առթիվ իր ապրիլի 28-ի տեղեկագրում նշում էր դեսպանը։ - Ընդ որում

890. Ուայխտագի արձանագրությունում այդ մասին կատարվել է հետևյալ տղազրույունը. «*Լիբկնեխտ*.-Պարոն ռայխսկանցլերին արդյոք հայտնի՞ է, որ այժմյան պատերազմի ժամանակ դաշնակից թուրքական կայսրությունում հայ բնակչությունը հարյուր-հազարներով իր բնականավայրերից տեղահանվել և բնաջնջվել է։ Դաշնակից թուրքական կառավարության մոտ ի՞նչ քայլեր է պարոն ռայխսկանցլերը ձեռնարկել պատշաճ հատուցում իրականացնելու, Թուրքիայում հայ բնակչության մնացորդի դրությունը մարդավայել դարձնելու և նման ոճրագործությունների կրկնումն արգելելու համար: *Նախագահ*.-Հարցմանը պատասխանելու համար խոսքը տրվում է ԱԳ-ի քաղաքական բաժանմունքի ղեկավար, կայսերական դեսպանորդ պրն. դր. ֆոն Շթումին: *Ֆոն Շթում*. - Պարոն ռայխսկանցլերին հայտնի է, որ Բ. Դուռը որոշ ժամանակ առաջ մեր հակառակորդների խռովարար մեքենայություններից դրված՝ թուրքական կայսրության որոշակի տարածաշրջաններում հայ բնակչությանը տեղահանել է և նրանց նոր բնակատեղիներ է հատկացրել: Այդ միջոցառումների որոշակի այլազդեցությունների պատճառով գերմանական և թուրքական կառավարությունների միջև տեղի է ունենում մտքերի փոխանակություն: Այլ մանրամասներ չեն կարող տեղեկացվել: *Լիբկնեխտ*. - Ես խոսք եմ խնդրում հարցումն ամբողջացնելու համար: (Աշխուժություն): *Նախագահ*. -Հարցումն ամբողջացնելու համար ձայն ունի պարոն պատգամավոր դր. Լիբկնեխտը: *Լիբկնեխտ*. - Պարոն ռայխսկանցլերին արդյոք հայտնի՞ է, որ պրոֆեսոր Լեփսիուսն ուղղակիորեն խոսել է թուրքահայերի բնաջնջման մասին...: (Նախագահի զանգահարությունը: Դռետորը փորձում է շարունակել իր խոսքը: Բացականչություններ. «Լռություն, լռություն»): *Նախագահ*. - Պարոն պատգամավոր, դա մի նոր հարցում է, որը ես չեմ կարող թույլատրել»: Տե՛ս Liebknecht K., *Gesammelte Reden und Schriften*, Bd. VIII, Berlin, 1966, էջ 438-439: Հատկանշական է, որ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան Լիբկնեխտի ելույթից հետո շտապ միստ զումարեց այդ հարցը քննարկելու համար, ինչը, սակայն, ընթացք չստացավ, քանի որ կուսակցության աջցենտրիստական ղեկավարությունը ելույթի համդեպ ընդունեց քննարկատական և դատապարտող դիրքորոշում: Տե՛ս Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 529:

ես ընդօժել եմ. որ հիշյալ ընկերությունն այդ հարցում սոսկ մարդասիրական նպատակներ ունի... և բացի այդ, որ ընկերության անդամների թվում կան բազմաթիվ ազդեցիկ և հեղինակավոր անձինք, ինչպես և, վերջապես, որ պրն. Լեփսիուսն անցյալ տարի անձամբ եկել է այստեղ և, ի միջի այլոց, էնվեր փաշայի հետ զրույցի միջոցով առիթ է ունեցել իրազեկվել Հայկական հարցի մասին: Բ. Դուռը պատասխանեց վճռական մերժմամբ և այն էլ այն հիմնավորմամբ, որ թուրքական կառավարությունը չի կարող օտարների կողմից օգնության որևէ ակցիա թույլատրել, քանի որ այդպիսով արտերկրի հետ կապված՝ հայերի հույսերը կամրապնդվեն...»: ⁸⁹¹

Այդպիսով մեկ անգամ ևս փաստվեց այն իրողությունը, որ հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ գերմանական կառավարության անտարբերության պայմաններում անհնար էր ոչ միայն հակազդել հայության ծրագրված բնաջնջման գործընթացին, այլև իրագործել արդյունավետ օգնության աշխատանքներ դեռ կենդանի քստրյալներին փրկելու նպատակով: Լեփսիուսն ի նպաստ հայ ժողովրդի կառավարությանն ակտիվ միջամտությունների մղելու միակ հուսալի ճանապարհը, ինչպես արդեն նշվել է, համարում էր հասարակական ճնշման ուժգնացումը: «*Der Christliche Orient*»-ը, սակայն, գրաքննության պայմաններում հասարակության իրազեկման՝ նախանշված նըպատակին ըստ հարկի ծառայել չէր կարող, ⁸⁹² ուստի պատահական չէ, որ նա վճռեց դիմել ստեղծված իրավիճակում ամենահամարձակ և ազդու միջոցին. այն է՝ իր հավաքած տեղեկություններն առանձին գրքով հրատարակել և առաքել Գերմանիայի ավետարանական քահանայություններին, ԳԱԱ-ի բարեկամներին ու մյուս՝ առավել ազդեցիկ հասարակական շրջաններին: ⁸⁹³ Առաքումը պետք է կատարվեր գաղտնի, քանի որ այլապես կծախտողվեր: ⁸⁹⁴

1915 թ-ի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Լեփսիուսը Ռ. Շեֆերի

891. Տես Lepsius J., *Deutschland und Armenien....*, էջ 257-258:

892. Բացի այդ, պարբերականը 1917 թ-ի հունիսից դադարեցրեց իր հայամկեր տեղեկատվական գործունեությունը, քանի որ, ինչպես շուտով կլուսաբանվի, այն այլևս Լեփսիուսի ենթակայության ներքո չէր գտնվում:

893. Lepsius J., *Meine Mission*, „Mittellungen...“, 1918, էջ 50:

894. Անդ:

հետ միասին զբաղված էր իր նյութերը հրատարակության նախապատրաստելու գործով.⁸⁹⁵ Հսկայածավալ մի աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ էր կատարել նյութերի ժամանակագրական համակարգում, նրանց համակցել նաև հայ և գերմանացի բարեկամներից շարունակ ստացվող նոր տեղեկությունները, հարյուրավոր գրառումներից ստեղծել «փաստերի փոխկապակցված պատկեր» և առանձին ենթագլխով լուսաբանել նաև «մեղքի գործունը»:⁸⁹⁶

Երբ գիրքն արդեն պատրաստ էր, ի հայտ եկան նոր չկանխատեսված խոչընդոտներ, քանի որ ոչ մի հրատարակիչ չէր համարձակվում այն տպագրել: «Բազմաթիվ հարցումներից հետո, - նշում էր Լեփսիուսը, - պարզվեց, որ հրատարակչությունները, որոնց ես դիմում էի, չէին կամենում զբաղվել նման նրբին հարցով: Շարվածքը և ձեռագրերն այստեղ-այնտեղ ուղարկելը տևեց բազմաթիվ շաբաթներ...»:⁸⁹⁷ Ի վերջո, երկարատև որոնումներից հետո այդ առաջադրանքը ստանձնեց քրիստոնյա-պահպանողական «*Der Reichsbote*» պարբերականի հրատարակչությունը, և 1916 թ-ի գարնանն աշխատությունը՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» վերնագրով 20500 տպաքանակով պատրաստ էր առաքման,⁸⁹⁸ երբ դարձյալ խոչընդոտներ առաջացան... այս անգամ արդեն ԳԱԱ-ում:⁸⁹⁹

Երբ հայտնի դարձավ, որ աշխատության շարվածքի, թղթի և հրատարակության ծախսերը հնարավոր էր հատուցել մասնավոր անձանց օժանդակությամբ, ԳԱԱ-ի հոգաբարձությունը մարտի 9-ին կայացած նիստում որոշեց ստանձնել նրա առաքումը՝ հոգալով նաև

895. Schäfer R., Geschichte..., էջ 89:

896. Lepsius J., Der Todesgang..., էջ XXIV-XXV:

897. Անդ, էջ XXVI: Մի հրատարակչություն համաձայնեց տեղեկագիրը տպել, բայց մի քանի շաբաթ անց նրա տերը հայտնեց, որ հրաժարվելու էր տպագրությունից, եթե Լեփսիուսը նախապես ամբողջ շարվածքը գրաքննությանը ցույց չտար: «Քանի որ այն ժամանակ դեռ նախագրաքննություն չկար, - այդ առթիվ զավեշտով նշում էր Լեփսիուսը, - ես հիմքեր չունեի գառանը գայլին պահ տալու»: Անդ:

898. Stü Lepsius J., Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.

899. Lepsius J., Der Todesgang..., էջ XXVI: Ի դեպ, Լեփսիուսի «Armenien und Europa...» աշխատությունը հրատարակվել էր նույն հրատարակչության կողմից:

դրա համար անհրաժեշտ մոտ 4000 մարկ կազմող ծախսերը:⁹⁰⁰ Աշխատությունը, սակայն, արդեն տպագրության մեջ էր, երբ հոգաբարձության մի շարք անդամներ փոխեցին իրենց դիրքորոշումը, որի պատճառով հիշյալ որոշումը մարտի 31-ի նիստում չեղյալ հայտարարվեց:⁹⁰¹ Փոփոխությունը նիստի արձանագրությունում պատճառաբանվում էր այսպես կոչված այն «վնասակար հետևանքների» մտահոգությամբ, որ Լեփսիուսի աշխատությունը «կարող էր ունենալ Արևելքի քրիստոնյաներին ցուցաբերվող ներկա և ապագա օգնության աշխատանքների համար»:⁹⁰² Պաթետիկ ձևակերպմամբ սքողված այդ քայլի դրդապատճառներին մենք կանդրադառնանք փոքր-ինչ ավելի ուշ: Իսկ հոգաբարձության նոր դիրքորոշումն ամեն դեպքում անփոփոխ մնալով՝ վերջնականապես վավերացվեց հունիսին կայացած նիստում: Այդ նիստի սկզբում, նախքան բանակցություններն սկսելը Լեփսիուսը հայտարարեց, որ պատրաստ էր անձամբ ստանձնել հրապարակման պատասխանատվությունը, եթե հոգաբարձությունը դեմ էր ԳԱԱ-ի կողմից այդ պատասխանատվությունը ստանձնելուն: Ի պատասխան Ռյոդենբերը Լեփսիուսին առաջարկեց տեղեկագրից հանել աշխատության երկրորդ հատվածը («Մեղքի գործոնը»)՝ պատրաստակամություն հայտնելով կազմակերպության անունից առաքել միայն առաջին մասը («Փաստերը»):⁹⁰³ ԳԱԱ-ի տրևորները, որը դեռ մարտին պատրաստ էր «ստորագրել» տեղեկագրի ներքո, այժմ ակնհայտորեն դեմ էր երկրորդ հատվածում թուրքիայի հետ Գերմանիայի զինակցության առնչությամբ Լեփսիուսի կատարած քննական պարզաբանումներին: Եվ այնուամենայնիվ հոգաբարձությունում նա միակ առարկողը չէր: Պրոֆ. Ադուֆ Դայսմանն, օրինակ, չնայած շարադրանքի «հուսալիությանը» չէր կասկածում, բայց քանի որ ի վիճակի չէր «նյութերը լրացուցիչ կերպով ըստուգել», հրաժարվեց տեղեկագրի համար պատասխանատվություն ստանձնել: Հոգաբարձության մյուս անդամը՝ դր. Կարլ Աքսենֆելդը, համոզված էր, որ տեղեկագրի հրապարակումը թուրքիայում գործող

900. Lepsius J., *Meine Mission*, „Mittellungen aus der Arbeit...“, 1918, էջ 50:

901. Schäfer R., *Geschichte...*, էջ 91:

902. Անդ:

903. Lepsius J., *In eigener Sache*, „Mittellungen aus der Arbeit...“, 1918, էջ 130:

բոլոր գերմանական միսիոներական ընկերությունների համար կարող էր «ճակատագրական» լինել: Դր. Ռոիրբախը, որն ի դեպ մարտի 31-ի նիստում հանդես էր ելել հօգուտ տեղեկագրի առաքման, շարունակում էր մնալ իր տեսակետին: Նա առաջարկեց նույնիսկ տեղեկագիրը տարածել չեզոք արտասահմանում՝ նշելով, որ գերմանացիների կողմից իրողությունների անկեղծ լուսաբանման փաստը կնպաստեր Գերմանիայի բարոյական վարկանիշի բարձրացմանը հայկական կոտորածների պատասխանատվությունը նրա վրա բարդող հակառակորդների մոտ: Ինչ վերաբերում էր տպագրման և առաքման պատասխանատվությանը, ապա Դայսմանի պնդումները նրա մոտ հարուցել էին որոշ անվճռականություն, որի հետևանքով նա առաջարկեց, որ Լեփսիուսն անձամբ ստանձներ այդ պատասխանատվությունը:⁹⁰⁴ Ի վերջո նիստում որոշվեց չեղյալ համարել տեղեկագրի առաքման ծախսերը հատկացնելու վերաբերյալ՝ գարնանը կայացած համաձայնությունը և առաքումը թողնել Լեփսիուսի անձնական պատասխանատվության ներքո:⁹⁰⁵

Լեփսիուսը, միայնակ կարողանալով հայթայթել առաքման միջոցները, իսկույննեթ ձեռնամուխ եղավ այդ գործին:⁹⁰⁶ Նրան, ի թիվս այլ բարեկամների, օգնում էր նաև դր. Մարտին Նիպագեն:⁹⁰⁷ Գործն ըստ հնարավորին արագ ավարտելու համար նա ներգրավել էր նույնիսկ իր երեխաներին: «Նախքան ոստիկանությունը կգար Հայաս-

904. Անդ:

905 Անդ: Հոգաբարձության երկու անդամներ՝ գանձապահ Վ. Լյուրսենը և պաստոր Վինկլերը նիստին չէին մասնակցում:

906. Ինչպես հետագայում պարզ դարձավ, առաքման՝ շուրջ 4000 մարկ կազմող ծախսերը ստանձնեց քոյուսելարնակ հարուստ հայերից մեկը՝ «Մարյան եղբայրներ» ֆիլմայի ներկայացուցիչ Արմենակ Սարյանը: Տե՛ս Լեփսիուսի նամակն՝ ուղղված Ա. Սարյանին. Гольц Г.; Корхмазян Р. С., Доктор Иоганнес Лепsius. Страницы Жизни, см. «Страны и народы Ближнего и среднего Востока», т. XII, Ерван, (1985), էջ 125:

907. Schäfer R., Geschichte..., էջ 93: Մ. Նիպագեն մասնագիտությամբ ուսուցիչ էր և դասավանդում էր Հալեպի գերմանական դպրոցում, երբ սկսվեց հայերի տեղահանությունը: Չկարողանալով ողբերգությունները հանդուրժել և լռել, նա լքեց իր ծառայությունը և վերադարձավ Գերմանիա, որտեղ, սակայն, հակառակ իր բոլոր ջանքերին, ոչ ոքի մոտ անհրաժեշտ ընթրնում չգտավ: Ի վերջո նրան խորհուրդ տվեցին հանդիպել Լեփսիուսին: Վերջինիս առաջարկությամբ նա

տանում կատարված սարսափելի իրադարձությունների մասին պատմող գիրքը բռնագրավելու,- հիշում էր Լեփսիուսի դուստր Վիլլան,- մենք սպիտակեղենի զանբյուղով լի բազմաթիվ փոքրիկ փաթեթներ տարանք փոստ, իսկ վերջում շատ փաթեթներ առանձին-առանձին նետեցինք Պոտսդամի տարբեր փոստարկղերի մեջ»:⁹⁰⁸

Հուլիսի ընթացքում աշխատության 20 000 օրինակներ ուղարկվեցին Գերմանիայի քահանայական ծառայություններին և ԳԱԱ-ի բարեկամներին, իսկ ևս 500-ը Ռայխստագի, Վյուրտեմբերգի երկրամասային պառլամենտի պատգամավորներին և գերմանական ամենաիեղինակավոր թերթերի խմբագրություններին:⁹⁰⁹ Լեփսիուսն այնպես էր հաշվարկել, որ Գերմանիայի բոլոր ավետարանական քահանայությունները ստանային աշխատությունը՝ «նրա միջոցով մի՛ թուրքական ստահող հեռագրերով ամենևին չկաշառված կարծիք ձեռք բերելով փաստերի վերաբերյալ»:⁹¹⁰ Գրքի օրինակները փոստային փաթեթավորմամբ որպես փակ, գաղտնի առաքում ուղարկվում էին գանազան վստահված անձանց, որոնք իրենց հերթին համաձայն կից հանձնարարականի դրանք տարածում էին համայնքներում:⁹¹¹ Միայն Ռայխստագի և Վյուրտեմբերգի 191 պատգամավորների համար կատարված առաքումը, թերևս, անհաջողությամբ պսակվեց, քանի որ ուղարկված օրինակները տեղ չհասնելով՝ բռնագրավվեցին:⁹¹² Բարեբախտաբար այդ դեպքը միակն էր, և Լեփսիուսն ըստ

մի տեղեկագիր պատրաստեց և ուղարկեց ռայխստագի պատգամավորներին: Չնայած այն հետազայում զրաքննության կողմից բռնագրավվեց, այնուամենայնիվ մեծ տարածում գտավ, երկու անգամ վերահրատարակվեց՝ հայտնի դառնալով նաև Թուրքիայում, որտեղ կառավարությունը նրան մահվան դատապարտեց: Անդ, էջ 93-94: Տեղեկագրի բովանդակության վերաբերյալ մանրամասն իրազեկում ունենալու համար տե՛ս Niepage M., Ein Wort an die berufenen Vertreter des deutschen Volkes, Potsdam, 1916: Հմմտ. Niepage M., Eindrücke eines deutschen Oberlehrers aus der Türkei, Potsdam, 1919:

908. Feigel U., Das evangelische..., էջ 221:

909. Lepsius J., Der Todesgang..., էջ XXVII:

910. Lepsius J., Was hat man den Armeniern getan?, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 115:

911. Schäfer R., Geschichte..., էջ 93:

912. Լեփսիուսն այդ մասին իրազեկվեց 1919 թ-ի ապրիլին, որից հետո միայն պահված օրինակները նրա միջամտությամբ ուղարկվեցին հասցեստեղծերին: Տե՛ս Lepsius J., Der Todesgang..., էջ XXVII:

ելության հասցրեց իրականացնել իր հանդուգն ձեռնարկը:

Երբ գրքի առաքումն արդեն ավարտվել էր, Լեփսիուսը, տարբեր կողմերից նախազգուշացումներ ստանալով⁹¹³ և միաժամանակ իր շաքարախտը բուժելու նպատակով, օգոստոսին մեկնեց Յուլանդիա:⁹¹⁴ Նա այդ քայլին գնաց նաև քաջ գիտակցելով, որ հայրենիքում այլևս չէր կարող հայ ժողովրդի համար ազատ գործել. «Իհարկե,- այդ առթիվ նշում էր Շեֆերը,- գրաննությունն այնքան խիստ էր, որ Լեփսիուսին հարկադրաբար կլռեցնեին և այդ կերպ կկարողանային նրան արգելել ժամանակին հանդես գալ հայ ժողովրդի համար: Այդ կանխելը և միաժամանակ հայրենիքին ծառայել կարողանալը անվիճելի հիմքեր էին նրա՝ Յուլանդիա մեկնելու համար»:⁹¹⁵

Բնականաբար արտերկրում ևս Լեփսիուսի հայանվեր գործունեությունը պետք է իրագործվեր առանց ԳԱԱ-ի աջակցության, որի հետ հակասությունները շարունակ խորանում էին: Քանի որ դրանց բուն դրդապատճառների պարզաբանումը հենքային նշանակություն ունի հետագա զարգացումների և փոխառնչությունների համակողմանի գնահատման համար, մենք ստորև այդ խնդրին փոքր-ինչ համազամանակից կանդրադառնանք:

Հոգաբարձությունը թե 1916 թ-ի հունիսին և թե հետագայում իր քայլը հիմնավորում էր այն պատճառաբանությամբ, որ աշխատության տարածումը հայ ժողովրդի համար կարող էր «բացասական հետևանքներ» ունենալ:⁹¹⁶ Մահվան դատապարտված հարյուր-հազարավոր արքայալների լռության միջոցով «օգնելու» մտայնությունը 1916 թ-ին բավական տարածված խաղաքարտ էր դարձել Թուրքիայի ներքին քաղաքականության և հայոց եղեռնի հանդեպ հաշտվողական դիրք գրաված քաղաքական գործիչների ձեռքում: Իր թուրքամետ կողմնորոշմամբ հայտնի դր. Էռնստ Յեկն, օրինակ, 1916 թ-ի օգոստոսին Գերմանա-հայ-

913. Goltz H., Zwischen..., էջ 875:

914. Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104:

915. Schäfer R., Geschichte..., էջ 92: Դա հետագայում անուղղակիորեն հաստատում էր նաև Լեփսիուսը՝ նշելով, որ Յուլանդիայում նա կարողացել է «շատ կապեր ստեղծել», որոնք իրեն «հայրենիքում հասանելի չէին կարող լինել»: Տե՛ս Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104:

916. Stü Zur Klärung, „Der Christliche Orient“, 1918, էջ 17:

կական ընկերության ներկայացուցիչներին՝ Ռոհրբախին, Շթիրին և Գրին-Ֆիլդին առաջարկում էր հայանպաստ քարոզչությունը դադարեցնել, որովհետև այդ հայերին ավելի վնաս, քան օգուտ կբերեր:⁹¹⁷ Փոխարենը նա խոստանում էր հայ աքսորյալներին օգնելու նպատակով ձեռք բերել մեծաքանակ նյութական միջոցներ, դյուրացնել ընկերության հաղորդակցությունը հայ ժողովրդի՝ արտերկրի բարեկամների հետ, և բացի այդ երաշխիքներ էր տալիս, որ մամուլում վերջ կտրվեր հակահայկական հրապարակումներին: Ընկերության նշված անդամները, ելնելով խոստացված հեռանկարներից, առժամանակ համաձայնեցին Յեկի առաջարկին:⁹¹⁸

1916 թ-ի սեպտեմբերի վերջին Լեփսիուսը նույնպես դր. Ռոհրբախից ստացավ մի գրություն, որտեղ «Շթիրի, դր. Գրինֆիլդի, և դր. Յեկի հետ կայացած քննարկման հիման վրա» նրան առաջարկվում էր «Չայկական հարցը մինչև պատերազմի վերջը բացարձակ լռության մատնել»:⁹¹⁹ Միաժամանակ վերոնշյալ անձինք պատրաստակամություն էին հայտնում պատերազմի ընթացքում զեկուցումներ չկարդալ Չայկական հարցի վերաբերյալ, դադարեցնել այդ թեմայով շրջաբերականների, բրոշյուրների և այլ տպագիր նյութերի առաքումը և մյուս հայանվեր գործիչներին նույնպես դրդել միանալ իրենց:⁹²⁰ Լեփսիուսն անվերապահորեն մերժեց առաջարկը՝ պատասխանելով, որ իր խիղճն իրեն «արգելում է միանալ լռելու այդ կամավոր հանդիսավոր երդումին»:⁹²¹

ԳԱԱ-ի հոգաբարձությունը նույնպես չէր թաքցնում, որ տեղեկագրի առաքման վերաբերյալ իր դիրքորոշումը մշակելիս հաշվի էր առել նաև այլ՝ հեղինակավոր անձանց տեսակետները: «Հոգաբարձությունը,- նշվում էր ԳԱԱ-ի մի հայտարարության մեջ,- ելնում էր այն կըռոտադատունից, որ մի կողմից ի վիճակի չէր լրացուցիչ ստուգել մեղքի

917. *Sb'u Austrittserklärung von Dr. Lepsius, „Mitteilungen aus der Arbeit...“*, 1918, էջ 147-148: Գնմտ. Feigel U., *Das evangelische...*, էջ 222:

918. *Sb'u Verschiedenes, „Mitteilungen aus der Arbeit...“*, 1918, էջ 151: Յեկի խոստումներն, իհարկե, չիրականացվեցին:

919. *Lepsius J., Austrittserklärung von Dr. Lepsius, անդ, էջ 147-148:*

920. *Անդ, էջ 148:*

921. *Անդ: Այդ առումով, ի դեպ, քննադատական է նաև Լեփսիուսի դուստրերից մեկի տեղեկությունը. «...Նա ռուսացքով հարվածեց սեղանին, ինչը սովորաբար նրան հատուկ չէր, և քարծրագոչ ու վրդովված ասաց իր կնոջը. «Եթե ես այդ աննմ, սրիկա կլինեմ»:* *Sb'u Goltz H., Zwischen...*, էջ 872:

գործոնը, և մյուս կողմից պատերազմի ժամանակ մեղավորության հարցի քննարկումը ինչպես ԳԱԱ-ի հետագա գոյությունը կվտանգեր, այնպես էլ հայ ժողովրդի համար պատճառ կդառնար նոր վտանգների և ճնշումների... Գերմանիայի առաջնորդող միսիոներականները մեր դիրքորոշումն իրավացի համարեցին...»: ⁹²²

Հոգաբարձությունը փաստորեն դրդումներ էր ստացել նաև այլ անձանց կողմից, որոնց հայանպաստ «պրոպագանդան» ձեռնտու էր: Ավելին, նա ստանձնել էր նաև պարտավորություններ... Վերոնշյալ «քարոզարշավը» չէր կարող շրջանցել ԳԱԱ-ն, և Լեփսիուսն անկասկած իրավացի էր Ռոհրբախի նամակից եզրակացնելով, որ հոգաբարձությունն ընդունել էր Յեկի և նրա համախոհների պահանջները: ⁹²³ Այդ փաստարկվեց նաև փոքր-ինչ ավելի ուշ, երբ հայտնի դարձավ, որ հոգաբարձությունը Հայկական հարցը մինչև պատերազմի ավարտը լռության մատնելու իր դիրքորոշման մասին պարզաբանում էր ներկայացրել նաև ԱԳԼ-ին: ⁹²⁴

Այնուամենայնիվ, ի տարբերություն Գերմանա-հայկական ընկերության, ԳԱԱ-ի դիրքորոշումը գաղափարական և սկզբունքային ելակետեր չուներ: Եթե առաջինը զիջման գնաց մտնելով երևակայական «խոստումնալից» գործարքի մեջ և փորձելով այդ կերպ առավելագույնս օգտակար լինել հայ ժողովրդին, ապա ԳԱԱ-ի մասին նույնն ասել անհնար է: Լռությամբ հայ ժողովրդին ծառայություն մատուցելու՝ հոգաբարձության հիմնավորումն անկեղծ համոզումներից չէր բխում, քանի որ այլպես նա չէր բավարարվի պատասխանատվությունն իրենից վանելով և կփորձեր առհասարակ ընդդիմանալ տեղեկագրի տարածմանը, ինչը տեղի չունեցավ. «Ոչ ոք, նույնիսկ սուպ.

922. Տե՛ս „Meine Mission“, „Der Christliche Orient“, 1918, էջ 31: Լեփսիուսը նույնպես վկայում էր, որ Ռյոդենբեքին այդ դիրքորոշմանը մղել էր նրա քննակալ, պալատական քարոզիչ Էռնստ ֆոն Դրիանդերը: Տե՛ս Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 129:

923. Lepsius J., Austrittserklärung von Dr. Lepsius, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 148:

924. Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104: Այդ տեղեկությունն, ի դեպ, հաստատում էր նաև Ռ. Շեֆերը՝ նշելով, որ «ԳԱԱ-ն ԱԳԼ-ին խոստացել էր հայ ժողովրդի դրության վերաբերյալ մինչև պատերազմի ավարտը լռություն պահպանել»: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 97:

Ոյտղենքերն այդ նիստումն չցանկացավ խոչընդոտել իմ տեղեկագրի առաքումը, դեռ չխոսեմք այն մասին, որ չփորձեց ինձ վրա ճնշում գործադրել,- հետադարձ հայացքով նշում էր Լեփսիուսը:- ...Ողջ բանակցության ընթացքում միայն մեկ հարց դարձավ քննարկման առարկա, թե ով պետք է ստանձնի առաքման և դրա հետ կապված հավաքումների և օգնության միջոցառումների պատասխանատվությունը, ԳԱԱ-՞ն, թե՞ ես»:⁹²⁵

Հոգաբարձության դիրքորոշումը թելադրված չէր նաև կույր «օրինապաշտության» և քաղաքացիական պարտքի թյուրմբռնման հանգամանքներով (ինչպես կարող է թվալ առաջին հայացքից), քանի որ այլապես հոգաբարձությունը ջանքեր չէր գործադրի իր դիրքորոշումն արհեստականորեն հարմարեցնել հայ ժողովրդի շահերին. մի «հիմնավորում», որը հետագայում Լեփսիուսի կողմից անխնա ծաղրի ենթարկվեց: «Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ամերիկայի մամուլը վաղուց լի էր մի ողջ քրիստոնյա ժողովրդի զանգվածային սպանդի դեմ բողոքառվող բողոքներով,- նշում էր նա:-...Պապը սուրբ կրթով բողոքում էր Թուրքիայում քրիստոնյաների հալածանքների դեմ: Բոլոր չեզոք երկրներում աշխատում էին օգնության կոմիտեներ... Ամերիկան հարյուր հազարավոր դուլարներ էր ուղարկում օվկիանոսից այն կողմ: Միայն Գերմանիայում կային եկեղեցականներ և միսիոներներ (իմ սեփական միսիայում), որոնք «հավատում» էին, որ եթե իրենց գլուխները թաղեն ավազի մեջ և իմ բերանին կողպեք դնեն, հայ ժողովրդին այդ կերպ իրականում լավ ծառայություն կմատուցվեր»:⁹²⁶

Եզրակացությունը թերևս միակն է. երբ նախագահի գործունեությունը չէր հակասում երկրում գործող օրենքներին, հոգաբարձությունը նրա հետ էր և մասնակցում ու իր աջակցությունն էր ցուցաբերում նրա բոլոր նախաձեռնություններին: Երբ, սակայն, իրադրությունը փոխվեց, և հարկ եղավ ընտրություն կատարել գրաքննության արգելքների և խղճի, պետական քարոզչության պահանջների և բարոյականության միջև, Լեփսիուսը մնաց միայնակ: Տեղեկագրի առաքման հարցում հոգաբարձության որդեգրած դիրքորոշումը պայմանավորված էր բացառապես նախագահի հանդուգն ձեռնարկի պատասխանատվությու-

925. Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 131:

926. Անդ, էջ 134-135:

նից և դրա հնարավոր տիպի հետևանքներից խուսափելու կամ այլ կերպ ասած՝ սեփական անվտանգության ապահովման ցանկությամբ: Ես-ի գերակայության այդ փաստն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, անխուսափելիորեն պետք է հանգեցնե՞ր բարոյալքման:

Հոգաբարձությունը մերժել էր նաև տեղեկագրի հիման վրա կատարվող նվիրատվությունները ԳԱԱ-ի գանձարկղին փոխանցելու և հայ աղետյալներին համատեղ ուժերով «պլանավորված օգնություն» կազմակերպելու Լեփսիուսի առաջարկը:⁹²⁷ Ուստի վերջինս հարկադրված էր իր անունով բացել մի նոր բանկային հաշվի համար և իր տեղեկագրի հասցետերերին կից գրությամբ առաջարկել իրենց նվիրատվություններն ուղարկել այդ հասցեով:⁹²⁸ Լեփսիուսին իր «անհատական նախաձեռնության» հետ կապված աշխատանքներում օգնելու նպատակով հոգաբարձության համաձայնությամբ ԳԱԱ-ի շրջիկ զեկուցող Ռ. Շեֆերը դրվեց նրա տրամադրության տակ:⁹²⁹ Վերջինս հեռախոսային և նամակագրական սերտ կապ պահպանելով նախագահի հետ՝ նրա ցուցումներով կազմակերպեց լայն տեղեկատվական գործունեություն: Գերմանիայում կատարելով զանազան շրջագայություններ՝ նա զեկուցումներ էր կարդում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ և միաժամանակ առաքում կամ բաժանում մեծաքանակ թռուցիկներ, որոնք նույնպես տեղեկատվական մեծ նշանակություն ունեին: Օգնության կազմակերպումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով Լեփսիուսը նույնքերին այդ գործում ներգրավեց նաև իր եղբորը՝ պրոֆ. Բեռնհարդ Լեփսիուսին՝ նրան նշանակելով իր աշխատանքների պատասխանատու ներկայացուցիչ իր բացակայության ընթացքում:⁹³⁰

927. Lepsius J., *Meine Mission*, անդ, էջ 50:

928. Lepsius J., *Geschäftliches*, անդ, էջ 47:

929. Lepsius J., *Meine Mission*, անդ, էջ 50:

930. Schäfer R., *Geschichte...*, էջ 95: Բ. Լեփսիուսը ծնվել է 1854 թ-ի փետրվարի 3-ին Բեռլինում: Նա մասնագիտությամբ քիմիկոս էր և իր ուսումնառությունն անցկացնելով Բեռլինի, Ստրասբուրգի և Գյոթինգենի համալսարաններում՝ 1880 թ-ին պաշտպանել է իր դոկտորական թեզը: Աշխատել է քիմիական արդյունաբերության բնագավառում՝ ղեկավարելով մի շարք խոշոր գիտաարտադրական ձեռնարկություններ: Վարել է նաև ակտիվ հասարակական գործունեություն: 1907-09 թթ. եղել է Գերմանիայի քիմիական արդյունաբերության շահերի պաշտպանության միության առաջին

Ինչևէ, քանի որ ԳԱԱ-ի բարեկամները չէին կարողանում հասկանալ, թե ինչու հանգանակությունները կազմակերպության անունով չէին կատարվում, հոգաբարձությունը, որոշակի պարզաբանում կատարելու անհրաժեշտությունից դրդված, 1916 թ-ի հոկտեմբերի 2-ին հրապարակեց մի հայտարարություն այն մասին. որ ընկերությունն աջակցում և հավանություն էր տալիս Լեփսիուսի կողմից ձեռնարկված գործին, և որ «կարևոր հիմքեր» կային այդ գործն ըստ հնարավորին լռելյայն կատարելու համար:⁹³¹ Այդ ժամանակ հունիսի նիստում ձեռք բերված «փոխըմբռնումը» դեռ պահպանվում էր, և բնականաբար հոգաբարձությունը պետք է ձգտեր բարեկամների շրջանում «թյուրիմացությունների» տեղիք չտալ, որոնք անկասկած բացասաբար կանդորադառնային կազմակերպության եկամուտների և հեղինակության վրա: Հատկապես այն փաստը, որ Լեփսիուսի աշխատությունն արդեն մեծ ուշադրություն էր գրավել՝ հայտնի դառնալով նույնիսկ Կ. Պոլսում,⁹³² կարող էր եական ազդակ ծառայել նման մտահոգության համար:

Հայկական հարցի վերաբերյալ լռելու պարտավորություն ստանձնած հոգաբարձությունը, սակայն, շուտով հարկադրված էր հանդիմանել, որ Լեփսիուսի գործունեությունը պետության կողմից լուրջ արգելքների չէր ենթարկվում: ԱԳՆ-ն միայն մեկ անգամ, 1916 թ-ի նոյեմբերի 23-ին իր մտահոգությունն արտահայտեց Լեփսիուսի հայանպաստ գործունեության վերաբերյալ, սակայն վերջինիս գրավոր և բանավոր պարզաբանումներից հետո այլևս առարկություններ չկատարվեցին:⁹³³ Նրան չխոչընդոտեց նաև կառավարության 1916 թ-ի մարտի 16-ի որոշումը, որով արգելվում էր առանց պետական կոմիսարի հատուկ թույլտվության Գերմանիայում բարեգործական նպատակներով հանգանակություններ կատարել: ԱԳՆ-ին ուղղված նրա դիմումը պաշտպանություն գտավ, և

նախագահը, իսկ 1912-27 թթ. Գերմանական քիմիական ընկերակցության պատվավոր գլխավոր քարտուղարը: Հրատարակել է մի շարք աշխատություններ, որոնց թվում երկու խոշորածավալ ուսումնասիրություն Գերմանիայի քիմիական արդյունաբերության վերաբերյալ: Տե՛ս Lepsius M. R., Die Nachkommen..., էջ 81-82:

931. Տե՛ս Bekanntmachung, „Der Christliche Orient“, 1916, էջ 33:

932 Հոգաբարձության կողմից այդ փաստն արձանագրվեց հայտարարության ընդունման օրը, հոկտեմբերի 2-ին կայացած նիստում: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 94:

933. Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 84:

պահանջվող թույլտվությունը հատկացվեց:⁹³⁴

Լեփսիուսի անձնական հասցեով կատարվող նվիրատվություններն օրեցօր ավելի և ավելի էին աճում: 1916 թ-ի հուլիսի 15-ից մինչև նոյեմբերն ընկած ժամանակամիջոցում նա ստացավ և Ուռհա ուղարկեց շուրջ 30 000 մարկ,⁹³⁵ այն դեպքում, երբ ԳԱԱ-ն շարունակ ավելի էր սուզվում ֆինանսական ճգնաժամի մեջ: Նվիրատվությունները, կազմակերպությանը շրջանցելով, հոսում էին դեպի Լեփսիուսը, և արդեն 1916 թ-ի հոկտեմբերին հոգաբարձությունը ստիպված էր խոստովանել, որ իր միջոցներն ամբողջովին սպառված էին:⁹³⁶ Չնայած Լեփսիուսին առաքվող դրամը վերջին հաշվով փոխանցվում էր ԳԱԱ-ի Ուռհայի աշխատակիցներին և իրացվում նրանց կողմից, այնուամենայնիվ հոգաբարձությունն իր նյութական ծանր վիճակը հաղթահարելու այլ ելք չէր տեսնում, քան խոչընդոտել և արգելել նախագահի գործունեությունը: Առավել ևս, որ դա քաղաքական նկատառումներով թելադրվում և հովանավորվում էր նաև զանազան ազդեցիկ ուժերի, զորօրինակ Եկեղեցական ավագ խորհրդի կողմից: Վերջինս նույնպես ԳԱԱ-ից պահանջում էր Լեփսիուսի «թռուցիկների առաքման դեմ ձեռք առնել վճռական միջոցներ» և ճնշել հայերի օգտին կատարվող նրա «պրոպագանդան»:⁹³⁷

Նոր լարվածությունն ակնհայտ դարձավ դեռ նոյեմբեր ամսին, երբ ԳԱԱ-ի տնօրեն Ռյոդենբեքն առանց նախապես Լեփսիուսին կամ նրա պատասխանատու ներկայացուցչին դիմելու Շեֆերից պահանջեց տեղեկատվություն տալ Լեփսիուսի հասցեով ստացված և իրացված գումարների մասին, որոնց պատճառով, ըստ նրա համոզման, «ԳԱԱ-ի եկամտի աղբյուրները փակվել էին»:⁹³⁸ Չնայած դա Ռյոդենբեքի իրա-

934. Անդ:

935. Schäfer R., Geschichte..., էջ 94:

936. Անդ:

937. Տե՛ս Austrittserklärung von Dr. Lepsius, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 150: Եկեղեցական ավագ խորհուրդն, ինչպես արդեն հիշատակվել է, Լեփսիուսի հայանպաստ գործունեության հանդեպ նույն անհանդուրժողությունն էր ցուցաբերել նաև համիդյան կոտորածների ժամանակ, որի պատճառով Լեփսիուսը վայր էր դրել իր քահանայական ծառայությունը:

938. Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 88: Նա այդ ոչ օրինական քայլին դիմեց՝ օգտվելով այն հանգամանքից, որ Շեֆերը հանդիսանում էր կազմակերպության հաստիքային ծառայողը:

վունքների մեջ չէր մտնում, սակայն ավելորդ վեճերի տեղիք չտալու համար Շեֆերը չընդդիմացավ նոյեմբերի 11-ին տնօրենին ներկայացնելով մի քաղվածք հոկտեմբերի 31-ի հաշվետվությունից:⁹³⁹ Միաժամանակ նա գրավոր դիմեց ԳԱԱ-ի երկրորդ նախագահ Ռոհրբախին խնդրելով հոգաբարձության կողմից համապատասխան որոշում ընդունել Լեփսիուսի անհատական գործունեության հանդեպ սնան միջամտությունները հետազայում կանխելու համար:⁹⁴⁰

Շեֆերի դիմումն ընթացք չստացավ, իսկ տնօրենը 1917 թ-ի փետրվարի 26-ին կատարեց հաջորդ քայլը՝ աշխատավարձի պահման սպառնալիքով նրան արգելելով թռուցիկներ տարածել և առհասարակ համագործակցել Լեփսիուսի հետ: Տնօրենն այդպիսով կոպտորեն խախտում էր ոչ միայն հոգաբարձության կողմից հոկտեմբերի 2-ին կատարված պաշտոնական պարզաբանումը, ըստ որի ԳԱԱ-ն «աջակցում և հավանություն էր տալիս Լեփսիուսի նախածեռնությանը», այլև Շեֆերին Լեփսիուսի տրամադրության տակ դնելու վերաբերյալ հոգաբարձության կայացրած որոշումը: Չնայած դրան, հոգաբարձությունը չընդդիմացավ դրան և ընդհակառակը, ապրիլի 30-ին հավանություն տվեց նրա վարքագծին՝ Շեֆերին հետին թվով, հունվարի 1-ից զրկելով իր աշխատավարձից:⁹⁴¹ Այդ այլ նպատակ չունեղ, քան Լեփսիուսի գործունեությունը կաթվածահար անել, նրան զրկել իր աջ ձեռքից, որը նրա ցուցումներով իրականացնում էր հայ ժողովրդի «օգնության գործի» քարոզչությունը, վարում գրասենյակային աշխատանքները և գրեթե ամեն օր թղթակցում էր նրան:

Եթե նկատի առնենք, որ կառավարության նոր՝ 1917 թ-ի փետրվարի 15-ի որոշմամբ բարեգործական նպատակներով կատարվող քարոզչությունը և հավաքումները դարձյալ արգելվել էին թույլատրելի համարվելով միայն հատուկ արտոնությունների հատկացման դեպքում, ապա պարզ կլինի, թե որքան ծանր իրադրություն էր ստեղծվել Լեփսիուսի և Ռ. Շեֆերի համար:⁹⁴² Թույլտվություն ստանալու նպա-

939. Անդ, էջ 89:

940. Անդ:

941. Անդ, էջ 90:

942. Lepsius J., *Mitteilungen*, „Mitteilungen aus der Arbeit...“, 1917, էջ 12: Որոշումը հրապարակվեց և գործադրվեց մարտ ամսից: Անդ:

տակով ՆԳ նախարարությանն ուղղված՝ Լեփսիուսի դիմումը մերժվեց, և վերջինս հարկադրված էր ապրիլից իր գործունեությունը Գերմանիայում ժամանակավորապես սահմանափակել ապավինելով հուլանդացի և շվեյցարացի բարեկամների աջակցությանը:⁹⁴³

Այնուամենայնիվ նույնիսկ այդ օրերին, երբ ԳԱԱ-ն անգիջում պայքար էր սկսել Լեփսիուսի դեմ, վերջինս դեռ չէր կորցրել իր ընկերության նկարագիրը վերականգնելու և իր ժամանակավոր «մասնավոր նախաձեռնությունը» հետազայում, իրադրության նորմալացումից հետո ԳԱԱ-ին ենթարկելու հույսերը: Ուստի զարմանալի չէ, որ ԳԱԱ-ի նյութական ծանր դրությունը սաստիկ մտահոգում էր նաև նրան, և եթե այդ մտահոգությունից դրդված՝ Լեփսիուսը 1916 թ-ի դեկտեմբերին պատրաստակամություն էր հայտնել իր «օգնության ֆունդից» կազմակերպությանը կանխավճարներ տալ, ապա 1917 թ-ի առաջին ամիսներին նա սեփական նախաձեռնությամբ այդ ի կատար ածեց ԳԱԱ-ի փոխարեն վճարելով Շեֆերի և առաջին նախագահի (այսինքն իր) աշխատավարձերը:⁹⁴⁴ Նրա այդ քայլը, սակայն, ԳԱԱ-ում ոչ միայն համապատասխան ըմբռնում չգրտավ, այլև ապրիլ ամսին Ռյոդենբերգի և գանձապահ Վ. Լյուրսենի ստորագրությամբ հրապարակվեց մի հայտարարություն այն մասին, որ ԳԱԱ-ի եկամտունների նվազումը պայմանավորված էր Լեփսիուսի գործունեությունը պրոպագանդող թռուցիկներով, որոնք «տարածվում էին առանց կազմակերպության գիտության և ցանկության»:⁹⁴⁵

«Սրտագին հնդրանքում» (այդպես էր վերնագրված հայտարարությունը) միաժամանակ նշվում էր, թե Լեփսիուսը նախապես պարտավորվել էր իր անհատական հավաքումները սահմանափակել միայն մեկ կոչով, որից հետո հանգանակությունները դարձյալ պետք է հոսեին ԳԱԱ-ի գանձարկղ, սակայն շարունակ թռուցիկներ առաքե-

943. Անդ, էջ 12-13: Լեփսիուսը 1917 թ-ի սեպտեմբերին կառավարությանն ուղղված իր նամակում տեղեկացնում էր, որ 1917 թ-ի մարտից հարկադրված է եղել Գերմանիայում իր գործունեությունը 5 ամիս շարունակ իսպառ դադարեցնել: Այդ տեղեկությունը թերևս կատարվել է իրավիճակի թելադրանքով, քանի որ, ինչպես իրադարձությունների հետագա ընթացքն էր թույլ տալիս կռահել, Շեֆերը հայանպաստ քարոզչությունը, անշուշտ սահմանափակ չափերով, շարունակում էր նաև կառավարության արգելքից հետո, մեծ ռիսկի և վտանգի պայմաններում:
944. Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 92:
945. St'u Herzliche Bitte, „Der Christliche Orient“, 1917, էջ 28-29:

լով նա իբրև թե խախտել էր այդ պայմանավորվածությունը:⁹⁴⁶

Այդ հայտարարությամբ փաստորեն կոնֆլիկտը դուրս եկավ հետկուլիսային փուլից՝ ստանալով հրապարակային հնչեղություն: Լեփսիուսը մայիսի 22-ին հոգաբարձությանն ուղղված իր պատասխանում սպառիչ կերպով հերքեց իր հասցեին ուղղված մեղադրանքները:⁹⁴⁷ Նրա հերքումը, սակայն, պարբերականում չտպագրվեց:⁹⁴⁸ Ավելին, չնայած նշված մեղադրանքները բացահայտորեն հակասում էին առաջին նախագահի գործունեության հանդեպ հոգաբարձության ստանձնած և 1916 թ-ի հոկտեմբերի 2-ին նրա կողմից վերահաստատված հանձնառությունների, վերջինս 1917 թ-ի հունիսի նիստում հավանություն տվեց հայտարարությանը:⁹⁴⁹ Հոգաբարձությունում հրապարակման հանդեպ որոշ և թերևս բավական անվճռական ընդդիմություն ցուցաբերեց միայն դր. Ռոհրբախը. «Սրտագին խնդրանքը,- տեղեկացնում էր նա Լեփսիուսին,- հրապարակվել է առանց իմ գիտության. և եթե ես նախապես տեքստին ծանոթ լինեի, կամ նրա լույս տեսնելը կխանգարեի, կամ հոգ կտանեի մի ավելի մեղմ շարադրանքի մասին»:⁹⁵⁰ Նման երկդիմի առարկությունն իհարկե հոգաբարձությանը չէր կարող հարկադրել վերանայել իր դիրքորոշումը:

Հայտարարության միջոցով ԳԱԱ-ի ֆինանսական դրությունը չբարելավվեց. 1917 թ-ին այն ունեցավ միայն 73104 մարկի եկամուտ,⁹⁵¹ մինչդեռ Լեփսիուսի հասցեով կատարվող նվիրատվություններն առժամանակ զգալիորեն նվազեցին: Ըստ Լեփսիուսի մոտավոր հաշվարկների, հինգ ամսում նրա «օգնության ֆոնդին» պատճառվել էր մոտ 120 000 մարկի վնաս:⁹⁵²

946. Անդ:

947. Lepsius J., *Der grüne Tisch, Potsdam, 1920, էջ 7-9:*

948. Այն, նախատեսված լինելով տպագրման համար, բավականին կոռեկտ և զուսպ էր շարադրված: Լեփսիուսը ձգտել էր միայն կանխել իր գործունեության վերաբերյալ թյուրիմացությունների առաջացումը և խուսափել էր հայտարարության հանդեպ սեփական դիրքորոշումն արտահայտել «ԳԱԱ-ին շխայտառակելու» և այդպիսով նրա նյութական դրությունն առավել չծանրացնելու համար, քանի որ, ինչպես նշվել է, դեռ հույս ուներ իր կազմակերպությանը «դարձի բերել»:^{Տե՛ս անդ, էջ 23:}

949. Lepsius J., *Meine Mission, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 52:*

950. Lepsius J., *In eigener Sache, անդ, էջ 94:*

951. *Sb'u Zur Klärung, „Der Christliche Orient“, 1918, էջ 17:*

952. Lepsius J., *Der grüne Tisch..., էջ 23:*

Ինչևէ, Լեփսիուսի գործունեությունը խափանելու ակտիվ քայլերը շարունակվում էին: Հոգաբարձությունը, առանց նույնիսկ նրա հետ համաձայնեցման փորձ կատարելու, Ռյոդենբերցին փոխանցեց պրոպագանդայի կազմակերպման, մասնաճյուղերի աշխատանքի ղեկավարման և «*Der Christliche Orient*»-ի գլխավոր խմբագրի պարտականությունները, որոնք մինչ այդ պատկանում էին առաջին նախագահին:⁹⁵³ Այդպիսով Լեփսիուսին մնում էին միայն հոգաբարձության և կառավարման հանձնաժողովի նախագահի լիազորությունները, որոնք նա իր բացակայության պատճառով չէր կարող իրականացնել: Ի լրումն այդ ամենի, հոգաբարձության կազմում կատարվեցին նաև մի շարք համալրումներ, որոնք այլ նպատակ չունեին, քան ամբողջովին մեկուսացնել Լեփսիուսին. «Սուպ. Ռյոդենբերցի դրդմամբ հոգաբարձությունն ինձ զրկեց իմ «*Der Christliche Orient*» պարբերականի պատասխանատու խմբագրի իրավունքից, որպեսզի ես Հայաստանի վերաբերյալ այլևս ոչինչ չկարողանամ հրատարակել,-հետադարձ հայացքով հետագայում նշում էր Լեփսիուսը: - Ի վերջո, իմ թիկունքում հոգաբարձության կազմում ներգրավվեց ինձ գրեթե անծանոթ մարդկանց մի ստվար քանակություն, այնպես որ ես փաստորեն այլևս իմ կողմից հիմնադրված միսիայի ղեկավարը չլի: Եթե ես այդ ճնշումներին տեղի տայի, ապա պետք է հարկադրվեի իմ Հայաստանի օգնության գործը դադարեցնել...»:⁹⁵⁴

Ուշագրավ է, որ վերոնշյալ միջոցառումներից կարճ ժամանակ անց, հունիսի 15-ին հոգաբարձությունը դիմեց Լեփսիուսին՝ առաջարկելով իր գործունեությունը ենթարկել ԳԱԱ-ին:⁹⁵⁵ Առաջարկի ենթատեքստը Լեփսիուսի համար ակնհայտ էր. ԳԱԱ-ն դիտավորություն ուներ ոչ թե սեփականել նրա գործունեությունը, այլ միայն կանխել այն, քանի որ նրա պատճառով ԳԱԱ-ի եկամտի աղբյուրները «փակվում էին»: Ուստի նա միանշանակորեն մերժեց առաջարկը:

Ի վերջո, գիտակցելով, որ Լեփսիուսի գործունեությունն անհնար էր ձախողել առանց նրան Շեֆերի աջակցությունից զրկելու, հոգաբարձությունը հունիսի 18-ին Շեֆերին հանձնարարեց մեկնել դասախոսական շրջագայությունների և իր ճանապարհորդական ծրագիրն

953. Lepsius J., In eigener Sache, „Mittellungen aus der Arbeit...“, 1918, էջ 90:

954. Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104:

955. Lepsius J., In eigener Sache, „Mittellungen aus der Arbeit...“, 1918, էջ 91:

ու զեկուցումների թեմաները ներկայացնել տնօրենին:⁹⁵⁶ Դա դարձավ վերջին և վճռական ազդակը. Լեփսիուսը, որքան էլ այդ նրա համար ծանր էր, հարկադրված էր մեկընդմիջտ հրաժարվել իր ընկերությունից:⁹⁵⁷ «Մի միսիա,- հայտարարում էր նա իր հրաժարականում, որը կամենում է լռությամբ շրջանցել մի քրիստոնյա ժողովրդի մահը, որի համար նա 20 տարի գործել է, և 100000-ավոր անմեղ կանանց ու երեխաների սովահարության դեպքում փորձում է իր հիմնական առաջադրանքը մի ինչ-որ այլ բանում տեսնել, քան նրանց փրկությունն է, այլևս այն միսիան չէ, որը ես հիմնադրել եմ»:⁹⁵⁸

Լեփսիուսի հրաժարականի հայտարարությունը և այդ առթիվ կատարված ընդարձակ հիմնավորումը ԳԱԱ-ի կողմից երկար ժամանակ արծազանք չստացան: Միայն երկու ամիս անց, սեպտեմբերի 3-ին, հոգաբարձությունը Ռոհրբախի միջոցով դիմեց Յուլանդիայում գտնվող մի ընդհանուր բարեկամի⁹⁵⁹ հարցնելով, թե արդյոք նախագահը հակված չէր՝ հրաժարվել իր վճռից:⁹⁶⁰ Լեփսիուսն անտեղի համարեց մտնել միջնորդավորված բանակցությունների մեջ, առավել ևս, երբ, ինչպես ցույց էր տալիս կատարված բանավոր հարցապընդումը, հոգաբարձությունը հրաժարականի առթիվ նրա կատարած հիմնավորումները քննարկելու մտադրություն չուներ:⁹⁶¹ Այնուամենայնիվ նա պատրաստ էր հրաժարականը ետ վերցնել և իր գործունեությունը ենթարկել ԳԱԱ-ին, պայմանով, եթե հոգաբարձությունը հրաժարական տար:⁹⁶² Վերջինս, սակայն, դրան չհամաձայնեց՝ վըս-

956. Անդ:

957. «Ինձ իմ բոլոր պարտականություններից զրկում են,- գրում էր նա հետագայում,- ինձ հարկադրում են լռել և կտրում են իմ «աջ ձեռքը», իմ աշխատանքը սպանում են և միաժամանակ ինձ կոչ են անում այն ենթարկել ԳԱԱ-ին: Կամենում էի ես հանուն դժբախտների, որոնց ծառայում էի, փրկել իմ Գործը, այդ դեպքում ինձ մնում էր միայն մի ելք՝ միսիայից դուրս գալ»: Անդ:

958. Lepsius J., *Meine Mission*, անդ, էջ 53:

959. Նրա անունը չի հիշատակվում:

960. Lepsius J., *In eigener Sache*, անդ, էջ 94:

961. «Եթե հոգաբարձությունը լրջորեն մտադիր էր կամուրջ կառուցել,- այդ առթիվ նշում էր նա,- ապա դրա միակ հնարավոր ճանապարհն իմ պարզաբանումներից պատասխանելն էր»: Անդ:

962. Schäfer R., *Geschichte...*, էջ 98:

տախ լինելով, որ կազմակերպությունը կկարողանար գոյատևել նաև առանց առաջին նախագահի: Ի վերջո, հրաժարականից մոտ չորս և կես ամիս անց, նույնքերի 19-ին հոգաբարձությունը Լեփսիուսին տեղեկացրեց, որ նա Լեփսիուսի ԳԱԱ-ից բաժանվելը, «եթե նույնիսկ մեծ ցավով», այնուամենայնիվ համարում էր «փաստ»: ⁹⁶³

Հուլիսի 1-ին, երբ Լեփսիուսը ներկայացրեց իր հրաժարականը, ընկերությունից դուրս եկավ նաև Ռ. Շեֆերը, ⁹⁶⁴ իսկ աշնանը հրաժարական տվեց ԳԱԱ-ի երկրորդ նախագահ և հոգաբարձության անդամ դր. Պ. Ռոհրբախը: ⁹⁶⁵ Կոնֆլիկտի ընթացքում հաճախ տատանումներ և անվճռականություն դրսևորելով հանդերձ նա այնուամենայնիվ Լեփսիուսի հեռանալուց հետո ավելորդ համարեց մնալ այնտեղ: ⁹⁶⁶ 1918 թ-ի հուլիսի 1-ին կազմակերպության հետ իր կապերը

963. Lepsius J., *Der grüne Tisch...*, էջ 40-41:

964. Lepsius J., *Persönliches, „Mitteilungen aus der Arbeit...“*, 1917, էջ 4:

965. Lepsius J., *In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“*, 1918, էջ 93:

966. Գերմանիայում ներկայումս էլ մեծ համբավ և ժողովրդականություն վայելող այդ հրապարակախոսի և հասարակական գործչի վերոնշյալ քայլը նույնպես բնութագրվում էր երկու կողմերի միջև մի «միջին» ճանապարհ ընտրելու միտումով: Իր հրաժարականը նա հոգաբարձությանը քացատրել էր այն հանգամանքով, որ «Լեփսիուսի հետ իր անձնական փոխհարաբերության առումով իրեն մեղավոր կհամարեմ, եթե շարունակեի ԳԱԱ-ին հավատարիմ մնալ»՝ միաժամանակ, սակայն, ավելացնելով, որ այլևս չէր կարողանալու աշխատել նաև Լեփսիուսի հետ: Տե՛ս Zur Klärung, „Der Christliche Orient“, 1918, էջ 19: Հմնտ. „Meine Mission“, անդ, էջ 35: Ստեղծված շիկացած և անհաշտելի իրադրությունում խուսանավման մեծան վարքագծի դրսևորումը, քնականաբար, պատճառ դարձավ ոչ միայն ԳԱԱ-ի, այլև Լեփսիուսի հետ Ռոհրբախի փոխհարաբերությունների նկատելի սառեցման, որի հետ, ինչպես նշվել է, մինչ այդ նա սերտ զաղափարակցություն և անձնական բարեկամություն ուներ: Այնուամենայնիվ Ռոհրբախի կողմից 1916 թ-ի օգոստոսի 15-ին Մ. Ռադեին ուղարկված և 1919 թ-ին հրապարակված նամակներից մեկը վկայում է, որ նա, քաջ իրազեկ լինելով հայության հանդեպ գործադրված ոճրագործություններին և կասկած իսկ չուենալով Լեփսիուսի տեղեկագրի ճշմարտացիության հարցում, մեծան անդրեմ ու անսկզբունքային դիրքորոշում ցուցաբերեց միայն այն պատճառով, որ, ինչպես հոգաբարձությունը, պարտավորություն էր ստանձնել նշված ոճրագործությունների վերաբերյալ պատերազմի ընթացքում «լռություն պահպանել»: Ստորև ամբողջությամբ ներկայացնում ենք այդ նամակի բովանդակությունը, որտեղ պարզորոշ արտացոլված է նաև Ռոհրբախի ներքին պայքարը Ռոհրբախի դեմ, և այն հոգեբանական երերումներն ու երկվությունը, որ նա ապրել էր «լռելու» որոշումը կայացնելիս. «Ես այսօր հայտարարել եմ, որ դուրս եմ գա-

խզեց Լեփսիուսի հավատարիմ բարեկան և ընկեր պաստոր Ավետարանյանը, որը Բուլղարիայում վարում էր ավետարանական քարոզչությունը:⁹⁶⁷ Կարճ ժամանակ անց ԳԱԱ-ից դուրս եկան նաև ընկերության շվեյցարացի աշխատակիցներ դր. Ֆիշերը, Յ. Կյուլցելերն, Ինչպես և դանիացի աշխատակցուհի Կ. Յեպեն, որոնք համապատաս-

լիս Գերմանա-թուրքական ըկերությունից (Ռոհրբախը եղել էր նաև Գերմանա-թուրքական ընկերության հիմնադիրներից մեկը - Ա. Դ.): Առաջիկա օրերին դու Նիպագեի գերքից մի քանի օրինակ կստանաս (խոսքը վերաբերում էր դր. Մ. Նիպագեի «Մի գերմանացի ավագ ուսուցչի տպավորությունները Թուրքիայից» գրքին): Բովանդակությունը սարսափելի է, այնպես որ ես այլ կերպ չեմ կարող, քան վերջին, մի ներքին գերմանա-թուրքական միասնության վերաբերյալ մինչև այժմ դեռ տանջալիորեն և ծանր խղճով ամրակայված կամուրջը քանդել: Ես, իհարկե, պատերազմի ընթացքում հասարակության մեջ լռելու եմ և պետք է լռեմ, սակայն ես Նիպագեի նամակը գաղտնի կտարածեմ և, հենց որ Հայկական հարցը հասարակության մեջ դարձյալ կարողանա քընճարկվել, կտամ իրադարձությունների մի նկարագրություն ճշմարտությանն այնպես հավատարիմ, որքան ես այն կարող եմ ապացուցել՝ հետևյալ պահանջով. քանի դեռ թուրքերն այդ առնչությամբ չեն ապաշխարում, գերմանական անունն աշխարհում պետք է համարվի անարգված, և ոչ Արևելքում, ոչ էլ Արևմուտքում, գերմանական «մաքուր խիղճ» չի կարող լինել: Ես համոզված եմ և այդ պարզ տեսնում եմ այցերիս առաջ, որ թուրքերի այժմյան հայկական քաղաքականությունը Թուրքիայի մահվան պատճիճն է: Երբ այդ իրողությունները իրապարակայնորեն հայտնի դառնան, այլևս հնարավոր չի լինի մեզ կողք-կողքի ցույց տալ թուրքերի հետ: Դա նշանակում է, որ թուրքերը մինչ այդ են հարկադրված պատժի և հատուցման: Ես առնվազն իմ ամբողջ ուժով հանդես կգամ այդ բանի համար, և օրը պետք է գա, երբ կընդունեմ դրա անհնարինությունը, և այդ ժամանակ ինձ համար միակ հետևությունը կկատարեն ու կդադարեն քաղաքական ինստիտուտ գերմանացի լինել: Մի հայրենիքի համար, որը նման սուկայի ոճրագործությունը հանդուրժում է, ես նաև հետագայում չեմ դադարի գործել, սակայն աշխարհի առջև այլևս չեմ կարողանա նրան պատկանել: Ես գիտեմ, որ դու իմ տեսակետին օբյեկտիվորեն հավանություն չես տա, սակայն դու այն սուբյեկտիվորեն կհասկանաս»: Տես Aus der Presse, „Der Orient“, 1919, էջ 128: Պատերազմից հետո, երբ Գերմանիայում դարձյալ ի հայտ եկավ խոսքի ազատությունը, Ռոհրբախը շարունակեց գործել Գերմանա-հայկական ընկերությունում, սկզբում որպես վարչության անդամ, իսկ Լեփսիուսի մահից կարճ ժամանակ անց, 1927 թ-ի ապրիլի 27-ին դարձավ նախագահը (տես Mitteilungen der Deutsch-Armenischen Gesellschaft, 1939, Nr. 12, էջ 11) և մինչև իր մահը (նա վախճանվել է 1956 թ-ի հուլիսի 20-ին Լանգեն-բուրգում) մնաց այդ պաշտոնում՝ մեծ ներդրում ունենալով կազմակերպության աշխատանքներում:

967. Lepsius J., Dr. Lepsius` Orient-Mission, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 101:

խանաբար ներգրավվեցին Հայ ժողովրդի օգնության շվեյցարական և դանիական կոմիտեներում:⁹⁶⁸ Այդպիսով ԳԱԱ-ն զրկվեց ոչ միայն իր հիմնադրից և առաջին նախագահից, այլև բազմաթիվ հին և փորձառու աշխատակիցներից, որոնք անփոխարինելի ներդրում էին ունեցել նրա քսանամյա գործունեության ընթացքում:⁹⁶⁹

Հարկ է նշել, որ ընկերության հոգաբարձությունն այնուհանդերձ չբավարարվեց իր առաջին նախագահի հրաժարականով: Կազմակերպության ֆինանսական դրությունը շարունակում էր մնալ ծայրահեղ ծանր. այն դեպքում, երբ Լեփսիուսն իր «Օգնության գործի» համար ստանում էր անհամեմատ ավելի մեծ եկամուտներ: Բացի այդ, բարեկամներից սկսեցին տեղալ բազմաթիվ հարցումներ պառակտման և դրա պատճառների վերաբերյալ, և եթե Լեփսիուսը սահմանափակվեց իր հրաժարականի փաստն արձանագրելով մի հակիրճ տեղեկությամբ,⁹⁷⁰ ապա ԳԱԱ-ն վճռեց իրադրությունն օգտագործել Լեփսիուսի անձի վարկաբեկման և նրա գործունեության վերաբերյալ բացասական հասարակական կարծիք ստեղծելու նպատակով: Կազմակերպության պարբերականի՝ 1918 թ-ի առաջին համարում ԳԱԱ-ի կառավարման հանձնաժողովի և հոգաբարձության կողմից հայտարարվեց, որ Լեփսիուսը հոգաբարձության հետ ունեցած՝ «տեսակետների ծանրակշիռ տարբերության» հետևանքով ԳԱԱ-ից բաժանվել էր, և «փոխըմբռնման հասնելու»՝ ԳԱԱ-ի «բազմաթիվ փորձերն» իբրև թե ձա-

968. Lepsius J., Orient-Mission, „Der Orient“, 1924, էջ 33-34:

969. Լեփսիուսը ԳԱԱ-ից բաժանվելիս պահանջեց հատուցել իր և Շեֆերի՝ 1917 թ-ի աշխատավարձերը, որոնք նա կազմակերպությանն օգնելու նպատակով ժամանակավորապես վճարում էր իր օգնության ֆոնդի միջոցների հաշվին: Հատկանշական է, որ ԳԱԱ-ն Շեֆերի աշխատավարձը հրաժարվում էր վճարել և տեղի տվեց միայն վեց ամիս անց, երբ Լեփսիուսն իր պահանջը ներկայացրեց փաստաբանի միջամտությամբ և դատական գործի հարուցման սպառնալիքով: Տե՛ս Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 92:

970. Lepsius J., Persönliches, „Mitteilungen aus der Arbeit...“, 1917, էջ 4: Լեփսիուսի համոզմամբ, իրադրությունը դեռ աննպաստ էր պարզաբանումներ կատարելու համար: «ԳԱԱ-ից իմ բաժանվելու պատճառների վերաբերյալ հրապարակային որևէ պարզաբանում պատերազմի ավարտից առաջ հնարավոր չէ, նշում էր նա 1917 թ-ի դեկտեմբերին, - քանի որ այնտեղ պետք է հարցեր շոշափվեն, որոնք հրապարակումը կարգելի գրաքննության կողմից: Տե՛ս Lepsius J., Verwaltung des Hilfswerkes, անդ, էջ 14:

խողվել էին:⁹⁷¹ Ի լրումն դրա, հաջորդ համարում տպագրվեց մի ընդարձակ «տեղեկագիր», որտեղ հոգաբարձությունն իր տեսանկյունից փորձում էր հասարակայնությանը պարզաբանումներ տալ հակամարտության սկզբնավորման և ընթացքի մասին:⁹⁷² Ավելորդ է ասել, թե որքան մենգափոխված էին ներկայացվում փաստերը, և որքան ծանր մեղադրանքներ էին հրամցվում Լեփսիուսին այդ արշավի ընթացքում, որ տենդագին փութկոտությամբ շարունակվեց նաև հաջորդ համարներում: Ներկայացվում էր իրավասությունների և պարտավորությունների մի հսկա փաթեթ, որոնք Լեփսիուսն իբրև թե խախտել էր իր հայանվեր գործունեության ընթացքում: Մյուս կողմից, նրա հայանպաստ պրոպագանդան, հայոց եղեռնի վերաբերյալ տեղեկագրի և թուղիկների առաքումը բնութագրվում էր որպես հայ ժողովրդի շահերին հակասող գործունեություն: «Այն, որ հայերը թուրքական կառավարությանն ուղղված մեղադրանքների հետևանքով, որոնք դր. Լեփսիուսն իր տեղեկագրում և շարունակաբար գաղտնի թուղիկներում բարձրացնում էր, միշտ նոր ծնշումների և հալածանքների ենթարկվեցին, անվիճելի փաստ է և բազմիցս հաստատվել է Թուրքիայի պայմանները ճանաչող անձնավորությունների կողմից»,- նշվում էր, օրինակ, պարբերականի 7-9-րդ համարների թողարկման մեջ:⁹⁷³

Քանի որ խնդիրը վերաբերում էր հասարակայնության կողմնորոշմանը, որ վճռական նշանակություն ուներ աշխատանքների ապագայի համար, Լեփսիուսը չէր կարող այդ հարձակումներն անտեսել: Ուստի նա անցավ կրքոտ ինքնապաշտպանության՝ հիմնովին և մեկ առ մեկ հերքելով իր հակառակորդների մեղադրանքները: Ծայր առավ մի տենդագին բանավեճ, որը շարունակվեց ամիսներ, և որի ընթացքում նա չէր մոռանում նաև իրեն հատուկ հզոր և սպանիչ ծաղրը: «ԱԳՆ-ն,- նշում էր նա վերոհիշյալ մեղադրանքի առթիվ,- որն իսկապես հիմք ուներ հաշվի առնելու մեր թուրք զինակցի զգայունակությունը..., ինձ հավաքումների թույլտվությունը տվեց: Թուրք պաշտոնյաները մի

971. St'u An unsere Missionsfreunde!, „Der Christliche Orient“, 1918, էջ 3: ՉԼԱ-ն «բազմաթիվ փորձեր» ասելով՝ անկասկած նկատի ուներ Լեփսիուսին սեպտեմբերի 3-ին բանավոր և միջնորդավորված կերպով կատարված ոչ պաշտոնական հարցումը, որի մասին արդեն հիշատակել ենք:

972. St'u Zur Klärung, „Der Christliche Orient“, 1918, էջ 16-20:

973. St'u „Meine Mission“, անդ, էջ 32:

աչքը փակում էին, երբ իմ կողմից հավաքված փողերը բաժանվում էին, և որք երեխաները գերմանական պաշտպանության ներքո պաշտպանում էին իրենց գոյությունը: ԳԱԱ-ի տնօրենը, սակայն, կառավարությանն ավելի բարեկամ, քան ինքը՝ կառավարությունը, և ավելի թուրք, քան իրենք՝ թուրքերը, արգելում է իմ թռուցիկների առաքումը և անում ամեն բան իմ բարեգործությունը խափանելու համար»: ⁹⁷⁴

Լեփսիուսը մեղադրանքները հերքում էր ամենայն հետևողականությամբ՝ ի ցույց հանելով ոչ միայն կեղծիքն ու զրպարտությունն, այլև դրանց ենթատեքստում թաքնված անմաքուր միտումները: «Կրկնակի ստորություն է, - նշում էր նա իր «ոչ օրինական» գործունեության դեմ կատարվող մեղադրանքների առթիվ,- որ մի արդարացի վեճ, որը տեղի է ունենում այս համաշխարհային պատերազմի ամենամեծ ողբերգության ենթատեքստում, ուզում են թաղել իրավասությունների վերաբերյալ տարածայնությունների փաստաթղթային պատահողմունք»: ⁹⁷⁵

Ինչևէ, գիրքն արդեն առաքված, իսկ հեղինակն արտասահմանում էր, երբ Թուրքիայի դեսպանն այդ մասին տեղեկանալով՝ սեպտեմբերի 9-ին հանդես եկավ ԱԳՆ-ին ուղղված բողոքով: Իր դժգոհությունը հայտնելով այն առթիվ, որ «Հայկական հարցին վերաբերող ամենաստոր բրոշյուրներից մեկը» «լի կեղծ զրպարտություններով», հնարավոր է եղել Գերմանիայում տարածել նա պահանջեց դրա դեմ միջոցառումներ ձեռնարկել և նաև կասեցնել Լեփսիուսի հայանպաստ «ազիտացիան»: ⁹⁷⁶ ԱԳՆ-ի պետքարտուղարի տեղակալ Ցիմերմանն ի պատասխան դեսպանին տեղեկացրեց, որ աշխատությունն օգոստոսի 7-ին բռնագրավվել էր: Նա ամենայն հավանականությամբ նկատի ուներ պատգամավորներին ուղարկված օրինակների բռնագրավումը, որի մասին Լեփսիուսը տեղյակ չէր: Սակայն այն, որ նա և իր մերձավորները տեղյակ չէին նաև բռնագրավման որոշմանը, ⁹⁷⁷ թույլ է

974. Lepsius J., In eigener Sache, „Mittellungen aus der Arbeit...“, 1918, էջ 135:

975. Stb'ú Austrittserklärung von Dr. Lepsius, անդ, էջ 150: ԳԱԱ-ի հարձակումներից անմասն չմնալով՝ Շեֆերը նույնպես հարկադրված եղավ մտնել բանավեճի մեջ՝ պարզաբանումներ տալով իր հասցեին կատարված զրպարտությունների վերաբերյալ: Stb'ú Schäfer R., Erklärung von Herrn Richard Schäfer, անդ, էջ 142-145:

976. Lepsius J., Der Todesgang..., էջ XXVII:

977. Lepsius J., Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“, 1919, էջ 32:

տալիս ենթադրել, որ կառավարությունը դրանով հետևողականորեն զբաղվելու մտադրություն չի դրսևորել: Գուցե այդ հարցում որոշակի դեր էին խաղում նաև ԱԳՆ-ի և մասնավորապես Ցիմերմանի հետ Լեփսիուսի ունեցած կապերը... Այսպես թե այնպես, «*Der Reichsbote*»-ի հրատարակչությանը ևս գրքի բռնագրավման մասին երբևէ գրավոր պաշտոնական տեղեկություն չուղարկվեց:⁹⁷⁸ Բնութագրական էր նաև սեպտեմբերին ԳԱԱ-ի գրասենյակում կատարված ոստիկանական այցը. «Մի ոստիկան եկավ ԳԱԱ և հարցուփորձ արեց դր. Լեփսիուսի մի աշխատության մասին, որը պետք է բռնագրավվեր: Նրան տվեցին իմ բնակարանի հասցեն: Չանգահարեց և լսեց, որ ես այնտեղ չեմ: Տեղեկացավ իմ գրասենյակի մասին և ինձ այնտեղ նույնպես չգտավ: Նայեց շուրջը՝ իմանալու. թե դեռ արդյոք իմ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին»-ի օրինակներ չկային: Նա ոչինչ չգտավ և կրկին մեկնեց՝ թողնելով մի գրություն այն մասին, որ իմ գիրքը բռնագրավված է»:⁹⁷⁹

Լեփսիուսը Հոլանդիայում շարունակեց իր համակողմանի հայամվեր գործունեությունը՝ միաժամանակ Թուրքիայի իրադարձությունների վերաբերյալ իրագեկ հասարակական կարծիք ձևավորելու համար հանդես գալով բազմաթիվ, հիմնականում անստորագիր հրապարակումներով:⁹⁸⁰ Նա կարողացավ կապեր հաստատել այդ երկրի ազդեցիկ քաղաքական գործիչների հետ՝ նրանցից ևս մեծ աջակցություն ստանալով: Նրա նախաձեռնությամբ շուտով այնտեղ հիմնվեց մի կազմակերպություն՝ Հայաստանի օգնության նիդեռլանդական կոմիտեն, որը թարգմանեց և հոլանդերեն հրատարակեց Լեփսիուսի «Տեղեկագիրը»:⁹⁸¹ Նա այնտեղից կարողացավ կապ հաստատել նաև Եվրոպայում գտնվող հայ նշանավոր գործիչների, մասնավորապես Պողոս Նուբար փաշայի և նրա

978. Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 136:

979. Անդ, էջ 135-136: Այդ գրությունն, ի դեպ, նույնպես պաշտոնական կնիքով վավերացված չէր: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 93:

980. Տե՛ս Goltz H., Zwischen..., էջ 876:

981. Անդ: Այդ աշխատությունը Եվրոպայում ամենայն կաթողիկոսի պատվիրակ Պողոս Նուբար փաշայի քարտուղարի՝ Աղաթոն բեյի կողմից 1918 թ-ին թարգմանվեց և հրատարակվեց նաև ֆրանսերեն: Տե՛ս Гольца Г.; Корхмазян Р. С., Доктор Иоганнес Лепсиус. Страницы Жизни, см. „Страны и народы Ближнего и среднего Востока“, т. XII, Ереван, (1985), էջ 121:

աշխատակիցների, ինչպես և անգլիացի հայանվեր գործիչ, անգլո-հայկական ընկերության հիմնադիր լորդ Ջեյմս Բրայսի հետ: Վերջինս, ի դեպ, արդեն հրատարակել էր իր «Կապույտ» գիրքը, որ վերաբերում էր հայ ժողովրդի տեղահանությանը, և երկու երախտավոր այրերը կարողացան նաև նաև նյութերի փոխանակություն կատարել:⁹⁸²

Լեփսիուսը Հոլանդիայում գործում էր նաև գերմանական կառավարության համար ԱԳՆ-ի ցուցումով պարբերաբար հավաքելով և Բեռլին ուղարկելով պատերազմական իրադարձությունների և խաղաղության վերաբերյալ անգլիական և հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները,⁹⁸³ վարում էր գրական-աստվածաբանական գործունեություն և միաժամանակ Շեֆերի միջոցով կազմակերպում հայ աղետյալների օգնության աշխատանքները նաև Գերմանիայում: Ընդ որում, ԱԳՆ-ի համար կատարվող վերոնշյալ արժեքավոր ծառայությունը գոյատևման հաստատուն միջոցներից զրկված գործչին ոչ միայն կանոնավոր եկամուտ ապահովեց, որով նա կարողացավ իր բազմանդամ ընտանիքի ապրուստը հայթայթել,⁹⁸⁴ այլև հնարավորություն ընձեռեց բավականաչափ ազատություն վայելել պատերազմի ընթացքում իր հայանվեր գործունեությունը Շեֆերի միջոցով Գերմանիայում շարունակելու համար, հանգամանք, որ հաստատվում էր նաև Լեփսիուսի կողմից հետագայում հրապարակված մի տեղեկության մեջ. «Ես Հոլանդիայում գործում էի որպես տեղեկատու՝ անգլիական և հոլանդական մամուլի վերաբերյալ լրատվություն ուղարկելով ԱԳՆ-ի ռազմական ծառայությանը,- նշում էր նա: - Այդ ծառայությունն ինձ հնարավորություն տվեց իմ գերմանացի աշխատակից Ռ. Շեֆերի օգնությամբ իմ Հայաստանի օգնության գործը, գերազանցապես Ուռհայի իմ բարեկամների միջոցով, շարունակել մինչև պատերազմի ավարտը»:⁹⁸⁵

982. Goltz H., Zwischen..., էջ 876:

983. Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 105:

984. ԳԱԱ-ից բաժանվելով՝ Լեփսիուսը մինչև 1917 թ-ի դեկտեմբեր ամիսը զոդկվեց գոյատևման հաստատուն նյութական միջոցներից, և նրան ֆինանսական օգնություն էին ցուցաբերում հարուստ հայ բարեկամները, մասնավորապես Բոյոտսելուն բնակվող՝ Արմենակ Մարյանը և «Comite' arme'nien de La Haye»-ի նախագահ Մ. Միհրդատյանը: Դեկտեմբերից, երբ նա սկսեց աշխատել նաև ԱԳՆ-ի համար, ստանում էր աշխատավարձ, որը նպաստեց նրա նյութական դրության կանոնավորմանը: Տե՛ս Goltz H., Zwischen..., էջ 876:

985. Lepsius J., Orient-Mission, „Der Orient“, 1924, էջ 34:

Լեփսիուսը կարողացավ ճեղքել թուրքական գործակալությունների և նրանց կապկող գերմանական լրատվամիջոցների կողմից կազմակերպված լրատվական շրջափակումը Հայաստանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ: Նրա շուրջ համախմբվեցին բազմաթիվ հասարակական շրջաններ, որոնց նյութական աջակցությամբ նա Ուռհայի իր վաղեմի աշխատակիցների միջոցով ձեռնամուխ եղավ եղեռնից մազապուրծ, 1916 թ-ի վերջից Թուրքիայի մեծ քաղաքներում դարձյալ ի հայտ եկող հազարավոր հայ որբերի և այրիների փրկության գործին:⁹⁸⁶

Արդեն հիշատակված նիդեռլանդական կոմիտեն պարբերաբար մեծաքանակ գումարներ էր հավաքում և առաքում Ուռհա, որտեղ դրանք Լեփսիուսի վաղեմի աշխատակիցների միջոցով ծառայեցվում էին աքսորից հետո ի հայտ եկած հազարավոր որբերի և այրիների օգնության նպատակին:⁹⁸⁷ Արտերկրի բարեկամների հետ համագործակցությունն ակտիվացնելու նպատակով, անշուշտ, Լեփսիուսի գիտությամբ և ցուցումներով, գործուն քայլեր էր ձեռնարկում նաև Գերմանա-հայկական ընկերությունը: 1916 թ-ի հոկտեմբերին է. Շֆիրը, իսկ 1917 թ-ի հունիսին Ջ. Գրինֆիլդը մեկնեցին Բագել և ժնև:⁹⁸⁸ Չնայած այնտեղ նրանց գործունեության մասին ստույգ տեղեկություններ չկան, սակայն այդ շրջանում և այնուհետև ևս շվեյցարացի բարեկամների կողմից կատարվող մեծածավալ օժանդակությունը կարող է որոշ կռահումների տեղիք տալ: 1915 թ-ի հոկտեմբերից մինչև 1920 թ-ի վերջը նրանց նյութական օգնության ընդհանուր ծավալը կազմում էր ավելի քան կես միլիոն ֆրանկ:⁹⁸⁹ Շվեյցարիայում բոլոր հոգևորականներին ուղարկվել էր մի բրոշյուր, որը կրում էր «Նյութեր ի պարզաբանումն 1915-16 թվականներին հայերին վիճակված ճակատագրի» վերնագիրը:⁹⁹⁰

Լեփսիուսը միաժամանակ ջանում էր վերականգնել նաև իր՝ կառավարության 1917 թ. փետրվարի 15-ի որոշմամբ արգելված գոր-

986. 1917 թ-ի հուլիսին Ուռհայում արդեն կային ավելի քան 2600 որբ երեխաներ, որոնք օգնության բացակայության դեպքում կդատապարտվեին սովամահության: St'u Schäfer R., Geschichte..., էջ 97:

987. Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 141:

988. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, Dezember 1939, էջ 6:

989. Feigel U., Das evangelische..., էջ 225:

990. Meyer K., Armenien..., էջ 107-108:

ծունեությունը Գերմանիայում: Երբ Գերմանիայի ՆԳ նախարարությունը մերժեց հայ որբերին օգնելու նպատակով պրոպագանդա և հանգանակություններ կազմակերպելու՝ Լեփսիուսի խնդրանքը, նա դիմեց կանցլերին և կարողացավ նրանից ստանալ պահանջվող թույլտվությունը:⁹⁹¹ 1917 թ-ի օգոստոսի 23-ին ստացվեց նաև Պատերազմական իրավիճակում բարեգործական օգնությունների կանոնավորման կոմիսարի համապատասխան հրամանագիրը,⁹⁹² որով Լեփսիուսն ազատվեց վերոնշյալ որոշմամբ պարտադրված իրավական արգելքներից:

Բարեկամների հետ հինգ ամիս շարունակ խզված կապը վերականգնելու և աշխատանքների վերակազմակերպման համար անհրաժեշտ լրատվություն ապահովելու նպատակով, չնայած թղթի ձեռքբերման դժվարություններին,⁹⁹³ Լեփսիուսը հիմնեց մի նոր երկամսյա պարբերական, որ կոչվում էր «*Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius*», և որի առաջին համարը լույս տեսավ 1917 թ-ի նոյեմբերին: Այդ համարում նա հայերի գերմանացի բարեկամներին տեղեկացնում էր իր նոր հասցեն և բանկային հաշվի համարը, որտեղ պետք է փոխանցվեին հայության համար կատարվող նվիրատվությունները: Քանի որ նա առողջական դրդապատճառներով դեռ պետք է շարունակեր մնալ Յուլանդիայում, նվիրատվությունների անդորրագրումը նրա հանձնարարությամբ կատարում էր «Չայաստանի օգնության գործի» քարտուղար Ռ. Շեֆերը, իսկ հաշվետվությունները պետք է ներկայացներ Գերմանա-հայկական ընկերության գանձապահը:⁹⁹⁴ Օգնության աշխատանքների կազմակերպման Լեփսիուսի նոր աշխատանքային խմբում Շեֆերից բացի ընդգրկվել էին նաև Ավետարանյանը, պաստոր Պաուլ Ֆլայշմանը և պրոֆ. Զիգմունդ-Շուլցը:⁹⁹⁵ այրեր, որոնք որոշ ժամանակ անց պետք է դառնային ԳԱԱ-ի նախկին նախագահի նոր ընկերության հիմնական կորիզը:

991. Lepsius J., *Mitteilungen*, „*Mitteilungen aus der Arbeit...*“, 1917, էջ 12:

992. Անդ:

993. Երկրում տիրող թղթի սակավության պատճառով դրա բաշխումը կատարվում էր իշխանությունների կողմից: Sbu Schäfer R., *Geschichte...*, էջ 99:

994. Lepsius J., *Geschäftliches*, „*Mitteilungen aus der Arbeit...*“, 1917, էջ 3:

995. Dr. Lepsius Armenisches Hilfswerk. *Jahresrechnung 1917*, „*Mitteilungen aus der Arbeit...*“, 1918, էջ 78.

Արժեքերուս նշել. որ չնայած Լեփսիուսը կառավարությունից բարեգործական հավաքումների թույլտվությունը ստացել էր, այնուամենայնիվ գրաքննության պայմաններում խոչընդոտվում էր նաև նրա նոր պարբերականի տեղեկատվությունը: Այդ որպես կանոն շարունակվեց ընդհուպ մինչև պատերազմի ավարտը: «Մենք մեր բարեկամներին սիրով կներկայացնեինք մեր ստացած տեղեկությունները աղետալից վիճակի և օգնության աշխատանքների վերաբերյալ...»- նշում էր Լեփսիուսը 1917 թ-ի վերջին: «Սակայն դրանք հասկանալի պատճառներով հրապարակման ենթակա չեն»:⁹⁹⁶ Եվ կամ՝ «Վերջին տեղեկագիրը մեզ հանձնվեց միայն այն նախապայմանով, որ մենք այն չհրապարակենք, քանի որ բնականաբար այնտեղ կան բաներ, որոնք միայն պատերազմից հետո կարող են հրապարակվել ...»:⁹⁹⁷

Չնայած այդ ամենին, Լեփսիուսին հաջողվում էր բարեկամներին պարբերաբար տեղեկություններ հաղորդել աշխատանքի հիմնական ուղղությունների և ծավալի մասին և միաժամանակ «տողերի արանքում» ըմբռնելի դարձնելով կարիքի մեծությունն ու իրադրության ողբերգականությունը՝ ապահովել օգնության աշխատանքների շարունակականությունը: «Կարիքն այն աստիճան ահռելի է, - նշում էր նա իր հրապարակումներից մեկում, որ մենք պարտավոր ենք աշխատել մեր ուժերի գերագույն լարմամբ գեթ ամենաանհրաժեշտ պահանջները բավարարել կարողանալու համար»:⁹⁹⁸ Եվ կամ՝ «Ես կարիք չունեմ կրկնել, թե որքան ահռելի է օգնության կարիք ունեցողների քանակը: Մեզ ամենից ավելի ցավ է պատճառում բազմահազար լքված երեխաների ճակատագիրը... Աղետազին խնդրում են բոլորին, ովքեր կարիքի մեծության մասին պատկերացում ունեն, չմոռանալ օգնելու պարտականությունը. որն առաջին հերթին ծանրանում է մեզ՝ գերմանացիներիս վրա. քանի որ միայն մենք ենք ի վիճակի օգնել»:⁹⁹⁹

Լեփսիուսն իր օգնության աշխատանքների առաջնահերթ նպատակը համարում էր թուրքիայում եղեռնը վերապրած անտերունջ և անօթևան հայ կանանց ու երեխաների խնամքի կազմակերպումը

996. Lepsius J., Aus der Arbeit, անդ, էջ 55:

997. Անդ:

998. S'ü Mitteilung, անդ, էջ 54:

999. Lepsius J., Dr. Lepsius' Orient-Mission, անդ, էջ 101:

մինչև պատերազմի ավարտը. «Ներկայումս միայն մեր հիմնական աշխատանքային դաշտում¹⁰⁰⁰ հավաքվել են 2700 երեխաներ, - նշում էր նա պարբերականի 1917 թ-ի ղեկտեմբերի համարում. - որոնք իրենց փոքրիկ բերանները բաց են արել հաց ստանալու համար և առանց սննդի սովամահ կլինեն: ... Մեր օգնության գործի նպատակն է հնարավորին չափ շատ աղետոյալների, առանձնապես երեխաների կենդանի պահելը»:¹⁰⁰¹

Լեփսիուսի հասցեով կատարվող նվիրատվությունները շարունակ ավելի էին աճում: 1916 թ-ի հուլիսից մինչև ղեկտեմբեր նա ունեցավ 46 835,65 մարկի եկամուտ, որից 36 555 մարկ առաքվեց Ուռհա, 802,50 մարկ Բուլղարիա, իսկ 3 870,88 մարկ հատկացվեց պրոպագանդայի նպատակներին:¹⁰⁰² 1917 թ-ի եկամուտների ընդհանուր ծավալը կազմեց 202 542,30 մարկ, որից 173376,37 մարկ ուղարկվեց Ուռհա, 6757,06 մարկ հատկացվեց պրոպագանդայի նպատակներին, իսկ 8699, 64 մարկ գրասենյակային ծախսերին և աշխատավարձերին:¹⁰⁰³ Արժե քերևա նշել, որ եթե 1916 թ-ի նշված եկամուտները գոյացել էին բացառապես գերմանացի բարեկամների նվիրատվությունների միջոցով, ապա 1917 թ-ին Լեփսիուսին մեծ օժանդակություն էին ցուցաբերել նաև արտասահմանյան բարեկամները. եկամտի մոտ կեսը՝ 94956,61 մարկ ստացվել էր Գերմանիայի, իսկ մնացյալն արտերկրի բարեկամների կողմից:¹⁰⁰⁴

1000. Նա նկատի ուներ Ուռհան:

1001. Lepsius J., Mitteilungen, „Mitteilungen aus der Arbeit...“, 1917, էջ 13:

1002. Տե՛ս Dr. Lepsius Armenisches Hilfswerk. Jahresrechnung 1916, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 76-77:

1003. Տե՛ս Dr. Lepsius Armenisches Hilfswerk. Jahresrechnung 1917, անդ, էջ 78-79: Ուռհա ուղարկվող դրամն օգտագործվում էր գրեթե բացառապես անօրևան հայ որբերի և կանանց խնամքի, բուժսպասարկման և տարաբնույթ այլ աջակցությունների կազմակերպման համար:

1004. Անդ, էջ 78: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 99: Լեփսիուսի գործունեությունը Գերմանիայում շարունակ ավելի և ավելի լայն հասարակական հնչեղություն էր ձեռք բերում՝ ստանալով ոչ միայն նյութական, այլև բարոյական աջակցություն: Այդ էր վկայում այն փաստը, որ հաշվի առնելով Արևելքի քրիստոնյաների համար նրա իրականացրած երկարամյա վիթխարածավալ գործունեությունը՝ 1917 թ-ի հոկտեմբերի 31-ին գերմանական եկեղեցու բարեմորոգության 400-ամյա տարելիցի կապակցությամբ Բեռլինի համալսարանի կողմից նրան շնորհվեց աստվածաբանության դոկտորի գիտական աստիճան: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 99:

Ուրախալի ցուցանիշներ գրանցվեցին նաև 1918 թ-ին: Նրա օգնության գործի տարվա եկամուտների ընդհանուր ծավալը կազմեց 494448,49 մարկ, որից Գերմանիայի ներդրումը կազմում էր 47056,58 մարկ, շվեյցարացի բարեկամներինը՝ 157184,39 մարկ, իսկ ամերիկացիներինը՝ 50838,36 մարկ: Նվիրատվությունների մեծագույն մասնաբաժինը՝ շուրջ 238590 մարկ, ստացվել էր Շվեդիայից:¹⁰⁰⁵ Որբերի և այրիների մեծացած կարիքներին գեթ նվազագույն բավարարում տալու համար, սակայն, տարվա ընթացքում հարկ եղավ ծախսել ավելին՝ 528694,57 մարկ, որի պատճառով առաջացավ 34264,08 մարկի դեֆիցիտ:¹⁰⁰⁶ Նշված գումարների մեծագույն մասը՝ շուրջ 424000 մարկ առաքվեց Ուռիա, իսկ 50836,36 մարկ Ռակա՝ 1915 թ-ի մեծագույն արքրատեղիներից մեկը, որտեղ դեռ որոշ քանակությամբ հայեր կային: Համապատասխանաբար 9409,35 մարկ հատկացվեց պրոպագանդայի նպատակներին և ևս 29428, 45 մարկ՝ գրասենյակային ծախսերին ու աշխատավարձերին:¹⁰⁰⁷ Այդ ամենից զատ, Լեփսիուսը կարողացավ 1918 թ-ին զանազան նվիրատուներից և հասարակական շրջաններից հայթայթել 50000 մարկ արժողությամբ դեղորայք, բժշկական սարքավորումներ, վիրակապային նյութեր և փստահանման միջոցներ, որոնք նա ղեկտեմբերի 13-ին ուղարկեց Արևելյան Հայաստան, որտեղ կուտակվել էին բազմահազար որբեր, և տիրում էին սովն ու համաճարակները:¹⁰⁰⁸ Այդ մեծ հաջողություններն անկասկած Լեփսիուսի համակողմանի տեղեկատվական գործունեության արդյունքն էին, որի շնորհիվ հասարակությունն իրազեկ դարձավ հայ ժողովրդի դեմ իրականացված ոճրագործությանը և նրա անլուր տառապանքներին: Ինչպես վկայում էր Ռ. Շեֆերը, նվիրատուները հիմնականում այն հասարակական շրջաններն ու անհատներն էին, որոնց առաքվել էր Լեփսիուսի «Տեղեկագիրը»:¹⁰⁰⁹ Հասարակայնու-

1005. Schäfer R., Jahresrechnung des Armenischen Hilfswerkes pro 1918, „Der Orient“, 1919, էջ 126:

1006. Անդ, էջ 127: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 103:

1007. Schäfer R., Jahresrechnung des Armenischen Hilfswerkes pro 1918, „Der Orient“, 1919, էջ 127:

1008. Lepsius J., Not und Hilfe, անդ, էջ 134:

1009. Schäfer R., Geschichte..., էջ 99:

թյանը ճշմարտությունն իրագրելու և օգնության աշխատանքներում ներգրավելու հարցում մեծ դեր ունեին նաև «Der Christliche Orient»-ում, «Mitteilungen...»-ում և արտերկրի մամուլում հրատարակված՝ Լեփսիուսի հոդվածները, ինչպես և Շեֆերի միջոցով պարբերաբար գերմանական հանրությանն առաքվող՝ նրա գաղտնի թուղիկները:¹⁰¹⁰

Ինչևէ, Ուռուհայում Լեփսիուսի աշխատակիցներից միակը, որին իր չեզոք երկրի (Շվեյցարիա) քաղաքացիության շնորհիվ հաջողվեց մնալ նախկին ծառայության մեջ և վայելել համեմատաբար լայն ազատու-

1010. 1917 թ-ի սեպտեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում, օրինակ, միայն թուղիկների միջոցով գոյացած եկամուտը կազմել էր 13550,21 մարկ: Տե՛ս Lepsius J., In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 132-133: Հետազոտողների շրջանում, ի դեպ, երբեմն հարցադրումներ են ի հայտ եկել այն առթիվ, թե ինչո՞ւ էր պայմանավորված պատերազմի տարիներին կառավարության կողմից Լեփսիուսի հայանվեր գործունեության հանդեպ ցուցաբերված հանդուրժողականությունը, եթե այլոց դեպքում դա քաջակայուն էր: Ուլրիխ Տրումպեներն, օրինակ, իր անթաքույց զարմանքն է արտահայտում այն առթիվ, որ կառավարությունը հարկադրաբար չէր լռեցնում «անցանկալի պաստորին», որն ի ցույց էր հանում Գերմանիայի դաշնակցի ոճրագործությունները և ԱԳՆ-ի համար ստեղծում ծանր կացություն: Տե՛ս Trumpener U., Germany and the Ottoman Empire..., էջ 220: Բնականաբար ի հայտ են եկել նաև միանգամայն տարբեր մեկնաբանություններ: Ի պարզաբանումն այդ հարցադրման վկայակոչվել է, օրինակ, այն հանգամանքը, որ Լեփսիուսը կառավարության համար անհայտ անձնավորություն չէր, ավելին, դեռ 1913-14 թթ. հայկական քարեփոխումների հարցում կառավարության հետ լայնորեն համագործակցելով՝ ուներ մեծ հեղինակություն և բացի այդ ԱԳՆ-ի մի շարք ներկայացուցիչների հետ զտնվում էր անձնական սերտ փոխհարաբերությունների մեջ. հանգամանքներ, որոնք չէին կարող իրենց դերը չխաղալ նաև այդ ծանր տարիներին ստեղծված իրադրությունում: Տե՛ս Гольм Г.; Корхамзян Р. С., Доктор Иоганнес Лепсиус. Страницы Жизни..., էջ 123: Նաև տեսակետներ են երևան եկել, որ կառավարությունը Լեփսիուսի հայանվեր գործունեությունը չէր արգելում, քանի որ երկու տարի անց չէր կարողանա ամենուր, նաև թշնամի երկրներում անձնուրաց հայանվեր գործչի համարում և ըստ այդմ անմնացորդ վստահություն վայելող Լեփսիուսին հանձնարարել Չայկական հարցի առնչությամբ գերմանական դիվանագիտական փաստաթղթերի հրապարակումը: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 92: Վերոնշյալ պարզաբանումներն, անշուշտ, միանգամայն իրատեսական են և ամենայն հավանականությամբ որոշակիորեն նպաստել են Լեփսիուսի հայանվեր գործունեության հանդեպ կառավարության մոտ հանդուրժողական դիրքորոշում ձևավորելու հարցում: Նմանապես կարելի է հիշատակել, որ ինչպես արդեն լուսաբանվել է, Դուլանդիայում

թյուն, Յ. Կյունցլերն էր:¹⁰¹¹ Ուստի նա էլ պետք է ստանձներ թե Լեփսիուսի և ԳԱԱ-ի և թե շվեյցարացի ու ամերիկացի բարերարների կողմից Ուռհա առաքվող նյութական միջոցների տնօրինման և օգնության աշխատանքների կազմակերպման ողջ պատասխանատվությունը:

ԱԳՆ-ի համար կատարվող Լեփսիուսի ծառայությունը նույնպես եապես նպաստում էր այն բանին, որ նա իր աշխատակցի միջոցով Գերմանիայում կարողանար անարգել շարունակել հայօգնության աշխատանքները: Այդ և նման քաջատրությունները, սակայն, իրատեսական լինելով հանդերձ, վերոնշյալ հարցադրման համար սպառիչ հիմնավորում ծառայել չեն կարող, քանի որ, մեր հանդգամք, հարցադրումը միանգամայն խոցելի և սխալ է: Այնտեղ անտեսվում է այն հանգամանքը, որ, ինչպես արդեն ըստ ամենայնի լուսաբանվել է, հայօգնության աշխատանքների շարունակման միևնույն խոչընդոտները հավասարապես վիճակված էին ամենքին, սակայն դրանք հաղթահարելու՝ անօրինակ կամք և վրճառականություն կարողացավ ցուցաբերել միմիայն Լեփսիուսը: Նմանապես կարելի էր նաև հակադիր հարցադրումը կատարել: Արդյո՞ք կառավարությունը հարկադրված չէր լինի հանդուրժել նաև այլոց գործունեությունը, եթե նրանք, ինչպես Լեփսիուսը, չհամաձայնեին տեղի տալ պետական քարոզչության պահանջներին, օժտված լինեին դիմագրավման նույն վճռականությամբ և նրա պես շարունակեին հետևել խղճի և քարոյականության ծայնին: Եվ եթե ոչ, ապա ի վերջո, ինչպես Լեփսիուսը, նրանք նույնպես ունեին ընդհատակյա գործունեության և կամ աշխատանքից ու բոլոր եկամուտներից հրաժարվելու զնով չեզոք արտերկիր մեկնելու և այնտեղ անձնացորդ այդ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը (չէ՞ որ պատերազմի տարիներին Լեփսիուսի հայանվեր փրկարար աշխատանքները նյութապես հովանավորվում էին գերազանցապես արտերկրի քարեկամների կողմից, որոնց նվիրատվությունները զգալիորեն գերազանցում էին Գերմանիայում կատարված հանգանակությունների արդյունքները): Մի ճանապարհ, որը, սակայն, Լեփսիուսից գատ ոչ ոք չփորձեց օգտագործել: Նման հարցադրումը սխալ է, քանի որ դրանում նույն զուգահեռի վրա են դիտարկվում Լեփսիուսը և հայօգնության աշխատանքներում ներգրավված բոլոր մյուս գործիչները, մինչդեռ խնդիրը վերաբերում է ոչ այնքան կառավարության կողմից Լեփսիուսի և այլոց հանդեպ ցուցաբերված «խտրական» վերաբերմունքին, որքան ստեղծված իրադրության հանդեպ վերջիններիս կողմից ցուցաբերված տարաբնույթ մոտեցումներին ու դիրքորոշումներին:

1011. 1917 թ-ին զինվորական ծառայության էր կանչվել նաև Ֆ. Էքարտը՝ ստանձնելով Ուռհայի՝ զինվորական հագուստների պատրաստման հաստատության ղեկավարությունը: Տե՛ս Künzler J., Im Lande..., էջ 96: Գմնտ. Schäfer R., Geschichte..., էջ 99:



ՕՐԿԱՐԿՐ ԱՇԽԱՏԱԿՆԵՐՆ ՈՒՌՅՎՅՈՒՄ 1916-18 ԹԹ.

Ինչպես արդեն նշվել է, 1917 թ-ի հուլիսին Ուռհայում հավաքվել էին բազմաթիվ այրիներ և ավելի քան 2700 որբ և անօգնական երեխաներ, որոնց խնամքի բացակայության դեպքում սպառնում էր սովամահություն: Ողջ քաղաքով մեկ ցրված երեխաներին հավաքելու և որբանոց հիմնելու մասին մտածել իսկ չարժեր, քանի որ թուրքական կառավարությունն այդ թույլ չէր տա:¹⁰¹² Ուստի Կյունցլերը սկզբում հարկադրված էր բավարարվել՝ նրանց առձեռն ապրուստի համար պարբերաբար դրան հատկացնելով:¹⁰¹³

Չնայած այդ շրջանում ցուցաբերված օգնության վերաբերյալ կանոնավոր վիճակագրական տեղեկություններ չեն հաղորդվում, սակայն առանձին տվյալներ հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմել գրկանքների մեծության և օգնության ծավալների վերաբերյալ: Միայն ապրիլ ամսին, օրինակ, Կյունցլերը որբերի համար ծախսեց շուրջ 123 000 պիաստեր, որ համարժեք էր 30 000 մարկին:¹⁰¹⁴ Բոլոր երեխաներին իր տեսադաշտում ունենալու և անհրաժեշտ վերահսկողություն ապահովելու համար նա նրանց ցուցակագրել էր և դրամի բաշխումը կատարում էր համաձայն իր ցուցակների:¹⁰¹⁵ Օգնությունը սկզբնա-

1012. Künzler J., Im Lande..., էջ 87: Երեխաների մեծ մասը դեռ մայրեր ունեւ, իսկ շատերն էլ հանձնվել էին այն կանանց խնամքին, որոնց հաջողվել էր ժամանակավոր օրևան ձեռք բերել: Տե՛ս Lepsius J., Aus der Arbeit, „Mittellungen aus der Arbeit...“, 1918, էջ 55:

1013. Künzler J., Im Lande..., էջ 87:

1014. Տե՛ս Aus Briefen unserer Mitarbeiter, „Der Christliche Orient“, 1917, էջ 51:

1015. J., Aus der Arbeit, „Mittellungen aus der Arbeit...“, 1917, էջ 2:

կան շրջանում դրամական միջոցների սղության հետևանքով ցուցաբերվում էր գերազանցապես որբերին, իսկ այրիները հարկադրված էին հիմնականում սեփական ուժերով հայթայթել իրենց ապրուստը:¹⁰¹⁶ Նրանց աշխատանքի հնարավորություններն էապես նվազեցին 1917 թ-ի սկզբին, երբ Ռակայից մեծ քանակությամբ հայեր բերվեցին Ուռհա, և բացի այդ թանկացումների հետևանքով Ուռհայում և շրջակա բնակավայրերում բազմաթիվ արաբներ ազատ արձակեցին իրենց մոտ ապաստան գտած կամ աշխատանքի տեղավորված կանանց:¹⁰¹⁷ Բնականաբար, Կյունցլե-րը հարկադրված էր նյութական վաստակի ուղիներ որոնել նաև նրանց համար: 1917 թ-ի գարնանը առավել ծանր վիճակում գտնվող գործազուրկ կանայք նրա հանձնարարությամբ կատարեցին մոտ 15 000 մուրբ և բարձրարվեստ ասեղնագործություններ, սակայն պատերազմական իրավիճակում շուկաների բացակայության և հետագա ամիսներին տեղի ունեցող թանկացումների հետևանքով այդ աշխատանքը ոչ շահավետ դառնալով՝ դադարեցվեց:¹⁰¹⁸ Նույնպիսի վախճան ունեցան նաև Ուռհայում մետաքսաորդերի բուժման և մետաքսագործության զարգացման՝ Կյունցլեի ջանքերը,¹⁰¹⁹ ուստի նա հարկադրված էր բավարարվել ծայրահեղ կարիքի մեջ գտնվողներին հիմնականում դրամական օգնություն ցուցաբերելով: Զուգահեռաբար Կյունցլեից հայթայթում և բաշխում էր նաև այլուր, այլ կենսամթերքներ, հիվանդներին ցույց էր տալիս բուժ-պասարկում, տրամադրում դեղորայք և այլն:¹⁰²⁰ Կարիքավորներն ըստ հնարավորին ապահովվում էին նաև հազուստներով: «Մեր տունը կարծես աղավնատուն լինի,- նշված էր Ուռհայից ստացված տեղեկագրերից մեկում:- Մերկերը զալիս են և դարձյալ հագնված հեռանում»:¹⁰²¹ Եթե նկատի առնենք, որ պատերազմի վերջին տարիներին Թուրքիայում գնե-րի աճին զուգահեռ տեղի էր ունենում նաև բանկոտների արժեզրկում,

1016. Զաղաքի բնակչության շրջանում առկա՝ սպասուհիների մեծ պահանջարկը նրանց ապահովում էր որոշակի աշխատանքով և ապրուստադրամով: St'u Künzler J., *Das armenische Hilfswerk In Urfa und Umgebung*, „Der Orient“, 1919, էջ 35:

1017. Անդ:

1018. Անդ:

1019. Անդ:

1020. Lepsius J., *Aus der Arbeit*, „Mittellungen aus der Arbeit...“, 1918, էջ 55-56:

1021. St'u Nachrichten aus dem Hilfswerk, „Der Christliche Orient“, 1917, էջ 11:

այն դեպքում, երբ Գերմանիայից և այլ երկրներից օգնության դրամը հիմնականում մուտք էր գործում բանկնոտների տեսքով, ապա պարզ կլինի, թե նշված աշխատանքը որքան մեծ ծախսեր էր պահանջում:¹⁰²²

Կյունցլերն իր փրկարար աշխատանքների իրականացման համար Լեփսիուսից զատ մեծաքանակ գումարներ էր ստանում նաև չեզոք երկրներից, մասնավորապես Շվեյցարիայից և Ամերիկայից, ուրոնք, զերծ լինելով պատերազմի ավերիչ ազդեցություններից, ունեին անհամեմատ ավելի մեծ նյութական ռեսուրսներ: Ստորև, սակայն, մենք կփորձենք մանրամասն ներկայացնել միայն Լեփսիուսի դրամական առաքումների բաշխման համամասնականությունը:

1916 թ-ի երկրորդ կեսին և 1917 թ-ին Լեփսիուսի կողմից Ուռհա ուղարկված գումարներից 121626,97 մարկ հատկացվեց որբ երեխաների սննդի մատակարարմանը, 11300,25 մարկ՝ կարիքավորների հագուստի, օթևանի հայթայթմանը և օգնության այլ միջոցառումների կազմակերպմանը: Բացի այդ 2337,50 մարկ ծախսվեց խինիճի ձեռքբերման համար, իսկ 5034,84 մարկ տրամադրվեց որպես աշխատավարձ Ուռհայի աշխատակիցներին: Նշված ժամանակահատվածում 13000,92 մարկ հատկացվեց նաև թաշկինակների արտադրության ստեղծման, 1412,12 մարկ մետաքսի որդերի բազմացման, իսկ 246,20 մարկ գորգագործության զարգացման նպատակով:¹⁰²³

Գրեթե նույն համամասնությամբ բաշխվեցին նաև 1918 թ-ին Ուռհա ուղարկված դրամական միջոցները. 392786,31 մարկ ծախսվեց այնտեղի որբերի և կարիքավորների սննդի, 49961, 07 մարկ կարիքավորների օթևանի և հագուստի հայթայթման նպատակով, 12354,07

1022. 1917 թ-ի երկրորդ կեսին, օրինակ, բանկնոտային չորս մարկը համապատասխանում էր մեկ արծաթե մարկին: Ըստ այդմ 1 կգ ցորենի այսուրև արժեք 11 մարկ, իսկ 1 անդրավարտիքը և վերնաշապիկը՝ շուրջ 20 մարկ: Բանկնոտների արժեզրկումը մեծ չափերով շարունակվեց նաև 1918 թ-ին: Stiu Lepsius J., *Aus der Arbeit, „Mitteilungen aus der Arbeit...“*, 1918, էջ 55: Հմմտ. Künzler J., *Berichte über das Notstandswerk in Urfa*, անդ, էջ 120: Հմմտ. Künzler J., *Im Lande...*, էջ 102:

1023. Stiu Dr. Lepsius Armenisches Hilfswerk. *Jahresrechnung 1917*, „*Mitteilungen aus der Arbeit...“*, 1918, էջ 79: 1917 թ-ին Լեփսիուսի կողմից Ուռհա ուղարկված գումարների մի մասը՝ 54967,57 մարկ, ծախսվել է 1918 թ-ին: Ուստի այդ գումարը հաշվարկված է 1918 թ-ին կատարված ծախսերում: Stiu Schäfer R., *Jahresrechnung des Armenischen Hilfswerkes pro 1918*, „*Der Orient*“, 1919, էջ 127:

մարկ հատկացվեց աղքատ ընտանիքներին որպես փոխառություն, իսկ 18310.21 մարկ որպես աշխատավարձ Ուռհայի աշխատակիցներին: Բացի այդ, 2518.20 մարկ ծախսվեց Ուռհայում թաշկինակների արտադրության զարգացման, 205.90 մարկ մետաքսաորդերի բազմացման նպատակով, 50838.36 մարկ տրամադրվեց Ռակայում գտնվող հայերի օգնության կազմակերպմանը, իսկ 415 մարկ ուղարկվեց Բուլղարիա՝ այնտեղ ապաստանած հայերին սնունդ, հագուստ և դեղորայք բաշխելու համար:¹⁰²⁴

Օգնության աշխատանքների կազմակերպման հարցում Կյունցլերին օգնում էին ոչ միայն նրա՝ Շվեյցարիայի քաղաքացիությունը, այլև մեծ փորձառությունը և կառավարության ու հեղինակավոր մահմեդական շրջանների հետ նրա ունեցած անձնական կապերը: Սակայն չնայած այդ ամենին, նա նույնպես զերծ չէր խոչընդոտներից: Հայերը շարունակում էին համարվել օրենքից դուրս, և նրանց օգնության ցուցաբերումը հղի էր մեծ վտանգներով, ուստի Կյունցլերը սկզբում փորձում էր օգնության աշխատանքներն ըստ հնարավորին գաղտնի իրականացնել: «1916 թ-ի սկզբին ես որբերին գաղտնի օգնություն եմ ցուցաբերել. հիմնականում փողով: Ընդ որում, ես ինձ նաև երկրից արտաքսման ռիսկին եմ ենթարկում, քանի որ երիտթուրքերի ծրագրում հայերի բնաջնջումն էր: Այդ միտումը երևան եկավ նաև 1916 թ-ի սկզբին: Մնացորդը պետք է ոչնչանար: Յուրաքանչյուր ոք, ով կօգներ մնացորդի հետագա ապրելուն, համարվում էր կիսով չափ դավաճան: Ես 1916 թ-ի մարտին հանկարծակի ոստիկանական հարցաքննության ենթարկվեցի այդ առնչությամբ...»: ¹⁰²⁵

Զնայած Կյունցլերի ջանքերին, մեծածավալ օգնության աշխատանքներն անհնար էր իրականացնել՝ գաղտնիության սկզբունքը պահպանելով, ուստի շարունակ ավելի էին մեծանում նրա դեմ հարուցվող պետական խոչընդոտները: 1917 թ-ի ամռանն, օրինակ, նրանից բռնագրավվելով՝ բանակին տրամադրվեց ավելի քան կես տոննա հացահատիկ, որ նա նախատեսել էր բաժանել հայ սովյալներին: ¹⁰²⁶ 1917 թ-ի վաղ գարնանը, երբ Կյունցլերին հանձնարարվել

1024. Անդ:

1025. Künzler J., *Berichte über das Notstandswerk in Urfa*, *անդ*, *տ* 65:

1026. Lepsius J., *Aus der Arbeit*, „*Mitteilungen aus der Arbeit...*“, 1918, *տ* 56: Դմնտ. Künzler J., *Berichte über das Notstandswerk in Urfa und Umgebung im Jahre 1917/18*, „*Der Orient*“, 1919, *տ* 92:

եր նաև Ռակայի համակենտրոնացման ճամբարի բնակիչներին օգնության կազմակերպումը:¹⁰²⁷ Նա կարողացավ այնտեղ երկու անգամ բարեհաջող կերպով դրամ և հագուստեղեն ուղարկել, իսկ ապրիլին ամծամբ մեկնել Ռակա՝ այնտեղ դեռ կենդանի մնացած 6000 հայերին բաժանելով դրամ և սննդամթերք:¹⁰²⁸ Օգոստոսին, սակայն, երբ Կյունցլերն իր թվով երկրորդ այցն էր կատարում այդ քաղաքավայրը, Ռակայում ռազմական ուստիկանության կողմից հինգ օր շարունակ ենթարկվեց տնային կալանքի, որն անկասկած շատ ավելի կերկարեւր, եթե օգնության չգար պատահականությունը:¹⁰²⁹

Կառավարությունը և մահմեդական բնակչությունը շարունակ ավելի մեծ դժգոհությամբ էին հետևում Կյունցլերի հայօգուտ աշխատանքներին. հանգամանք. որ որոշակի հակազդում չստանալու դեպքում կարող էր ունենալ ծանր հետևանքներ: Եվ միջոցը գտնվեց: 1916 թ-ի ծնունդը զանազան «ստրատեգիական» պատրվակներով տեղահանվել և դեպի հարավ էին քարտուկվել նաև Էրզրումի և Բիթլիսի վիլայեթների՝ ընդհանուր թվով մոտ 300000 քուրդ բնակիչները, որոնք առժամանակ պետք է մնային Ուռհայի, Այնթապի և Մարաշի շրջաններում, իսկ 1917 թ-ի ամռանը իրենց ճանապարհը շարունակեին դեպի Կոնիա: Չնայած, ի տարբերություն քարտույլ հայերի, կտրականապես արգելված էր քրդերի հանդեպ որևէ կողմնակի բռնություն գործադրել, այնուամենայնիվ սովամահությունը զանգվածային կոտորած էր սկսել նաև նրանց շարքերում:¹⁰³⁰

1027. Մինչ այդ Ռակայի հայերին օգնություն էր ցուցաբերում Հալեպի ամերիկյան հյուպատոսը: Տե՛ս Künzler J., *Das armenische Hilfswerk in Urfa und Umgebung*, „Der Orient“, 1919, էջ 35:

1028. Künzler J., *Im Lande...*, էջ 82:

1029. Այնուամենայնիվ Կյունցլերին հաջողվեց իր տարած սննդամթերքն ու դրանք բաժանել Ռակայի սովյալներին: Տե՛ս անդ, էջ 82-86: Երբ Կյունցլերը 1918 թ-ի հունվարին Ռակա ուղարկեց իր թվով հինգերորդ օգնությունը, շուրջ 10000 մարկ, այնտեղ մնացել էին ընդամենը 1000 քարտույլներ: Ճամբարաբնակների թվի այդ կտրուկ նվազումն ուներ երկու հիմնական պատճառներ. 1917 թ-ի երկրորդ կեսին Ռակայից բազմաթիվ քարտույլներ ուղարկվեցին զանազան այլ վայրեր տաժանակիր աշխատանքի, և բացի այդ՝ մեծ էր նաև համաճարակներից և քաղցից մահացողների թիվը: Տե՛ս Künzler J., *Berichte über das Notstandswerk in Urfa und Umgebung im Jahre 1917/18*, „Der Orient“, 1919, էջ 91:

1030. Künzler J., *Im Lande...*, էջ 80:

1916 թ-ի ղեկատնաբերին Կյունցլերը մեկնեց Զալեայ՝ տեղի գերմանական և ամերիկյան հյուպատոսներից օգնություն խնդրելով Ուռհայի սովահար քրդերի համար: 1917 թ-ի փետրվարի կեսին հյուպատոսները նրան ուղարկեցին մոտ 1000 ֆունտ ստեռլինգ, որով նա հացահատիկ գնեց և բաժանեց քրդերին:¹⁰³¹ Այդպիսով փաստարկելով իր գործունեության զուտ մարդասիրական բնույթը՝ Կյունցլերը կարողացավ շարունակել իր աշխատանքները: «Վաղ առավոտից մինչև ուշ երեկո նրա դռները չէին փակվում,- հետագայում հետադարձ հայացքով նշում էր Յեպեն:- Այնտեղ մշտական անց ու դարձ էր, և երբ ներս էիր մտնում, միշտ կանանց մի մեծ խումբ նստած էր այնտեղ, որոնք իրենց սրտում մի կարիք ունեին, և որոնց օգնություն էր ցուցաբերվում: Պարզապես զարմանալի էր, որ նրա համբերությունն ու նյարդերը դիմանում էին, և դա հնարավոր էր, քանի որ հանձին իր կնոջ նա ուներ մի գերազանց հենարան»:¹⁰³²

Կյունցլերին հաջողվում էր պարբերաբար որոշ գումարներ ուղարկել նաև Բիրեջիկ և Ադիաման և դրանք գերմանացի սպաների միջոցով բաժանել այնտեղ գտնվող հայերին: Նրա միջոցով երկու ծիաբեռ հագուստ ուղարկվեց նաև Սուրուջի ճանապարհների վրա աշխատող՝ կիսամերկ և ցնցոտիավոր բազմաթիվ կանանց ու երեխաներին:¹⁰³³ Ըստ հնարավորին դրամական օգնություն էր ցուցաբերվում նաև Ուռհայի շրջակա գյուղերում գտնվող չքավոր հայերին:

Օգնության աշխատանքներում ինչպես արդեն նշվեց, իր անփոխարինելի ներդրումն էր բերում նաև Կյունցլերի կինը, որը բազմաթիվ որբերի ասորական ընտանիքներում տեղավորելուց հետո, չնայած որբանոցի ստեղծման պաշտոնական խիստ արգելքներին, 1917 թ-ին համարձակվեց նաև գաղտնի կերպով երկու տներ վարձել և դրանք լցնել որբ երեխաներով:¹⁰³⁴ «Երբ ոստիկանությունն ինձ հարցնում էր, թե արդյոք ես որևէ տեղ որբանոց չեի՞ պահում, ես ինձ անտեղյակ էի ձևաց-

1031. Անդ, էջ 81:

1032. Jeppe K., *Unsere Arbeit nach der Katastrophe*, „Der Christliche Orient“, 1919, էջ 4:

1033. Künzler J., *Das armenische Hilfswerk in Urfa und Umgebung*, „Der Orient“, 1919, էջ 35:

1034. Անդ, էջ 36:

նում,- նշում էր այդ առթիվ Յ. Կյունցլերը,- իսկ իմ կնոջը հանուն պատշաճության նրանք այդ չէին կարող հարցնել»:¹⁰³⁵ Այդ գաղտնի որբանոցներն անընդմեջ գործեցին մինչև պատերազմի ավարտը: Կյունցլերի կինը միաժամանակ իր հովանավորության տակ էր վերցնում Ուռհա փախչող այն հայ կանանց և աղջիկներին, որոնք մինչև այդ բռնի կերպով պահվել էին մահմեդականների տներում: Նույնիսկ մահմեդական ամուսինների հարցումների և սպառնալիքների դեպքում նրանք այլևս չէին վերադարձվում: Փախստականներին մի քանի օր իր մոտ պահելուց հետո Կյունցլերի կինը նրանց արաբի կամ քրդի հագուստներում քողարկելով՝ իր մահմեդական գործակալուհիների միջոցով ուղարկում էր Չալեպ, որտեղ նրանք հայտնվում էին անվտանգության մեջ: Այդ ճանապարհով նա կարողացավ մինչև պատերազմի ավարտը հարյուրավոր հայուհիների փրկել մահմեդական ստրկությունից:¹⁰³⁶

Չարկ է նշել, որ հայերին ցուցաբերվող օգնության գործում իր որոշակի մասնակցությունն էր բերում նաև Ֆ. Էքարտը: 1915 թ-ին Ուռհայի գորգագործական ֆաբրիկայում ապաստանած հայերն այնտեղ թողել էին մեծաքանակ հագուստներ, որոնք Էքարտը 1916-17 թթ. ձմռանը տրամադրեց հարյուրավոր կարիքավոր հայերի: Իսկ 1917-18 թթ. ձմռանը, երբ երկրում սով էր սկսվել, նա իր ղեկավարությանը հանձնված թուրքական զինվորական հագուստների պատրաստման հաստատությունում աշխատանքի տեղավորեց բազմաթիվ հայ կանանց՝ նրանց հնարավորություն ընձեռելով սեփական վաստակով ապահովել իրենց գոյությունը:¹⁰³⁷ «Պրն. Էքարտը և իր կինը նույնպես շատ բան արեցին,- նշում էր Կ. Յեպեն,- շատ քաղցածների կերակրեցին և մերկերի հագցրեցին:... Նա աշխատատեղեր է ստեղծել նաև քաղաքի բազմաթիվ աղքատների համար: Մասնագործուհիների մի ամբողջ բանակ նշանակվեց աշխատանքի, և շատ ուրիշներ նույնպես զբաղմունք գտան»:¹⁰³⁸

1035. Künzler J., Im Lande..., էջ 88:

1036. Անդ:

1037. Անդ, էջ 96: Չմնտ. Jeppe K., Unsere Arbeit nach der Katastrophe, „Der Christliche Orient“, 1919, էջ 6: Այդ հաստատությունն, ի դեպ, տեղավորված էր ԳԱԱ-ի որբանոցի շենքում (որը նախկինում քարավանատուն լինելով՝ հայտնի էր «Խան» անունով) և գործում էր նրա արտադրամասերի բազայի վրա: Անդ:

1038. Jeppe K., Unsere Arbeit nach der Katastrophe, „Der Christliche Orient“, 1919, էջ 6:

Էքսպոզիցիոն կարողանում էր որոշակի մասնակցություն ունենալ նաև Կյունցլերի կողմից իրականացվող ընդհանուր բարեգործական աշխատանքներում: Այդ էին վկայում ԳԱԱ-ին ուղղված նրա մամակները կամ ավելի ճիշտ՝ այդ մամակների մնացորդները, քանի որ գրաքննության պատճառով դրանք տեղ էին հասնում մեծ մասամբ խուզված և աղճատված վիճակում: «Պրն. Կյունցլերի միջոցով... .. ինձ Ձեր հանձնարարականով հանձնվեց 6607 պիաստեր,- գրում էր նա իր տեղեկագրերից մեկում: - Ես այն օգտագործում եմ կարիքավորների համար... Թե որքան վատ է այստեղ մարդկանց վիճակը, Դուք կարող եք կռահել, եթե նկատի առնեք, որ վերոնշյալ գումարը չի բավականացնում նույնիսկ 60 կգ. ալյուրի համար.....»: ¹⁰³⁹

1917 թ-ի աշնանը ոչ ուռնիաբնակ այրիների մի մասն իրենց երեխաների հետ միասին, առանց պաշտոնական թույլտվության ճանապարհ ընկան դեպի իրենց հարազատ բնավայրերը՝ հույս ունենալով այնտեղ գտնել իրենց կորած հարազատներին: Նրանցից շատերը Կյունցլերից և Էքսպոզիցիոնից ստացան մի փոքրիկ դրամագլուխ ճանապարհի ծախսերը հոգալու համար: Չնայած այդ «փախստականներից» ոմանք, ճանապարհին բռնվելով, ետ ուղարկվեցին, սակայն շատերն այլևս չվերադարձան: ¹⁰⁴⁰ Ամռան վերջին Ուռնիայից որոշ քանակությամբ կանայք և երեխաներ կառավարության կողմից փոխադրվեցին նաև Բիրեջիկ և Սերուզ ճանապարհաշինության մեջ աշխատելու համար: Այդ գործընթացների հետևանքով Ուռնիայում որբերի թվաքանակը որոշ չափով նվազեց: 1917 թ-ի նոյեմբերին հասնելով 1500-ի, սակայն կարճ ժամանակ անց, մահմեդականների մոտից փախչող և Ուռնիայում ապաստան որոնող փախստական կանանց ու երեխաների թվաքանակի ավելացման հետևանքով դարձյալ բարձրացավ՝ 1918 թ-ի հունվարին կազմելով 1900: ¹⁰⁴¹ Բնականաբար նրանք, ինչպես և իրենց նախորդները, Ուռնիա հասնելով՝ ապավինում էին բացառապես

1039. St'u Aus Briefen unserer Mitarbeiter, „Der Christliche Orient“, 1918, էջ 36-37: Տեքստի բազմակետերը վկայում են, թե գրաքննությունը որքան ջանասիրաբար է «աշխատել» տեղեկագրի վրա:

1040. Künzler J., Berichte über das Notstandswerk in Urfa und Umgebung im Jahre 1917/18, „Der Orient“, 1919, էջ 90:

1041. Անդ:

Կյունցլերի և Էքարտի աջակցությանը, որը, որքան էլ մեծածավալ, այնուամենայնիվ հնարավորություն էր ընձեռում բավարարել միայն ծայրահեղ կարիքները: Իրադրությունը հատկապես ծանր էր 1917 թ-ի երկրորդ կեսին և 1918 թ-ին, երբ մի կողմից սովը և մյուս կողմից բանկոտների արժեզրկումը հասել էր իր գագաթնակետին:¹⁰⁴²

Կյունցլերի՝ այդ շրջանում գրված նամակները լի էին տագնապի և ահազանգի շեշտադրումներով. «Նոր հագուստների մասին այլևս հնարավոր չէ մտածել: Բոլորը հաց են ճշում: Մեկ երեխայի համար 1 կգ. այլուրը կբավարարի առնվազն 3-5 օր... Մենք ամիսը մի անգամ 2000 որբերից յուրաքանչյուրին մեկական կգ. այլուր էինք բաժանում: Ավելի լավ էր 20 երեխաների վիճակը, որոնց մենք գաղտնի տեղավորել էինք մի փոքրիկ վարձված տանը... Ինչպիսի ազահությամբ էին քաղցածները նետվում իրենց տրված այլուրի վրա... Թղթով մեկ տոննա ցորեն զնելու համար անհրաժեշտ էր 12 000 մարկ... որոշ չափով օգնություն և գումար կարողացա ուղարկել նաև շրջակա շատ գյուղեր, որտեղ դեռ հայության մնացորդներ են գտնվում... Այժմ հնարավոր չէ թշվառությունը նկարագրել: Ամռան սկզբին ես նաև մեկ անգամ մի ձիաբեռ հագուստ տարա Սուրուջի հարթավայրում աշխատող՝ գրեթե մերկ կանանց համար... Ստավորական ժողովրդի այդ դժբախտ մնացորդների դրության բարելավում կարելի է սպասել միայն պատերազմից հետո... Մեր նշանաբանն է օգնել, որքան հնարավոր է»:¹⁰⁴³

Հնարավոր առավելագույնին հասնելու համար Կյունցլերը ջանքեր էր խնայում: Նրա առօրյան հագեցած էր նյութական աղբյուրների որո-

1042. Պատերազմի տարիներին սննդամթերքի զանգվածային աճը հետևյալ տվյալների միջոցով կարող է ակնհայտ դառնալ. եթե 1915 թ-ի աշնանը 160 կգ հացահատիկն արժեր 10 ֆրանկ, ապա 1918 թ-ի գարնանն այն հասել էր 3200 ֆրանկի, եթե վճարումը կատարվում էր բանկոտներով, և 650 ֆրանկի, եթե այն կատարվում էր ոսկով: Նմանապես եթե պատերազմի առաջին տարում մեկ օկա (1225 գ.) միսն արժեր 60 պֆենիգ, ապա 1918 թ-ին այն վաճառվում էր 16 ֆրանկով: Կարագի նույն քանակությունը համապատասխանաբար 3 ֆրանկից հասել էր 50 ֆրանկի, մոտ 400 անգամ թանկացել էր նաև նավթը: Տե՛ս Künzler J., Im Lande..., էջ 102: 1043. Künzler J., Berichte über das Notstandswerk in Urfa und Umgebung im Jahre 1917/18, „Der Orient“, 1919, էջ 91: Կյունցլերի՝ 1918 թ-ի սկզբին ուղարկած այս նամակը նույնպես գրաքննության պատճառով չէր հրատարակվել և սպագրվեց միայն զինադադարի հաստատումից հետո:

նուններով, նրա տեղեկագրերը և նամակները լի էին օգնության սրտակեղեք կոչերով: «Մենք կարիք ունենք փողի, շատ փողի,- գրում էր նա 1917 թ-ի հուլիսի 4-ի իր նամակում,- որքան շատ, այնքան լավ: Առժամանակ անհնար է մտածել որբերի դաստիարակության մասին: Այդ մասին, լավ թե վատ, հոգ է տանում խրոնիկական կարիքը... Ես չգիտեմ արդյոք Դանիայում, Շվեդիայում ու Նորվեգիայում հայության մնացորդների փրկության համար օգնության ակցիան ինչպե՞ս է կատարվում, և կամ կատարվո՞ւմ է, թե՞ ոչ: Կարո՞ղ եք ինչ-որ բան անել, որպեսզի նաև այդ երկրներում ավելին արվի, եթե այո, խնդրում եմ՝ արեք...»:1044

Ինչևէ, չնայած ծայրահեղ ճգնաժամային իրադրությանը, Կյունցլերի և նրա գործընկերների աշխատանքն, ինչպես հարկն է, ծառայեց իր նպատակին՝ եղեռնը վերապրած և Ուռուհայում հավաքված հազարավոր անտերունջ և անօթևան հայ որբերին ու կանանց պատերազմի տարիներին փրկելով սովամահությունից: Բացի այդ նրանք կարողացան զգալի նյութական աջակցություն ցուցաբերել նաև Ուռուհայի սանջակի մյուս վայրերում, ներառյալ Ռակայում գտնվող բազմաթիվ հայերին: Այդ ամենը հնարավոր դարձավ Լեփսիուսի նյութական աջակցության, ինչպես և Շվեյցարիայից ու Ամերիկայից կատարվող մեծաքանակ դրամական առաքումների շնորհիվ, որոնց ընդհանուր ծավալը պատերազմի տարիներին կազմեց 3 719 706 պիաստեր կամ մոտ 1,3 միլիոն շվեյցարական ֆրանկ:1045



ՅԱԿՈՒ ԿՅՈՒՆՑԼԵՐԸ և նրա տիկին ԷԼԻՋԱԲԵԹ ԲԵՆԴԵՐՆ
 իրենց հայ հովանավորյալների հետ

1044. Անդ, էջ 68:

1045. Künzler J., Im Lande..., էջ 88: Հմնտ. Briefe von Bruder Künzler aus Urfa, „Der Christliche Orient“, 1919, էջ 19:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԴՐ. ՅՈՐ. ԼԵԹՍԻՈՒՍԻ
ԵՎ ՆՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ
ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՏԱՆԱԿԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԵՏՈ
(1918 -1943 թթ.)



**ՀԱՅԱՆԿԵՐ ԳՈՐԾԻՉՆ
ՈՒ ՀՐԿՊԱՐԱԿԱԿԵՆՈՍԸ
ՀԵՏԶԻՆԱԴԴԱԴԱՐՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Զինադադարի հաստատմամբ Գերմանիայում գրաքննությունը վերացվեց, և Լեփսիուսն արդեն կարող էր ազատ և անկաշկանդ խոսել: Իր պարբերականի՝ 1918 թ-ի սեպտեմբեր-դեկտեմբերի համարում նա հրապարակեց մի ծավալուն հոդված «Ի՞նչ է կատարվել հայերի հետ» վերնագրով,¹⁰⁴⁶ որի առաջին՝ «խոսելու ժամանակը եկել է» հատվածում համալիր պարզաբանումներ էին կատարվում Մեծ եղեռնի ծավալի և հետևանքների վերաբերյալ: Հայ ժողովուրդը, նշում էր Լեփսիուսը, որը պատերազմից առաջ թուրքիայում հաշվվում էր մեկ և երեք քառորդ միլիոն, պատերազմի ժամանակ թուրքական կառավարության կողմից հայկական լեռնաշխարհի, Անատոլիայի, Կիլիկիայի և Միջագետքի իր բնակավայրերից անմնացորդ կերպով տեղահանվել է, իր ունեցվածքից զրկվել, աքսորվել արաբական անապատները և մասամբ ճանապարհին մորթվել, մասամբ աքսորի վերցնակետին հասնելով՝ «սիստեմատիկ կերպով» սովամահության է ենթարկվել: Նրա զոհերի թիվը գերմանական հյուպատոսների գնահատմամբ կազմում էր 1 միլիոն, որոնց մոտ կեսը՝ կանայք և երեխաներ: Բռնի իսլամ ընդունելով՝ թուրքական և քրդական հարեմներն են քարշ տրվել մեկ քառորդ միլիոն կանայք և աղջիկներ: Եվս մեկ քառորդ միլիոնը որպես մուրացիկներ փախել են Կովկաս: Անապատներում հավանաբար դեռ 150 000 մարդ կարող էին կենդանի լինել, որոնք նմանապես դատապարտված էին սովամահության, եթե ամեն

1046. St'u Lepsius J., Was hat man den Armeniern getan?, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 113-118:

նակարճ ժամկետում օգնություն չցուցաբերվեր:¹⁰⁴⁷

Զնայած հայ ժողովրդի բնաջնջման հարցում Գերմանիայի ուղղակի մեղսակցության խնդիրը պետք է պարզաբանվեր միայն դիվանագիտական փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, այնուամենայնիվ, Լեփսիուսի համոզմամբ, քրիստոնյա Գերմանիան գրեթե ոչինչ չէր արել՝ զործնականում հերքելու ողջ աշխարհի կողմից հնչող այն մեղադրանքները, որ նա եթե ոչ «դողման», ապա «հանդուրժողականության և փոքրոգի անգործունեության միջոցով» մեղսակից է դարձել մի ողջ քրիստոնյա ժողովրդի կործանման հարցում:¹⁰⁴⁸ «Այն ամենը, ինչ ես պատերազմի տասնապատիկ ծանրացուցիչ հանգամանքներում կարողացա անել,- նշում էր Լեփսիուսը,- իմ սեփական միսիոներական ընկերության մեքենայությունների հետևանքով շատ էր զիջում նրան, ինչ կարող էր արվել: Ոչ ոք կարողանալուց ավելի չպարտավորվեց...»: ¹⁰⁴⁹ Ընդհակառակը, ընդգծում էր նա, գերմանական զանգվածային մամուլի կողմից պատրաստվեցին հեշտորեն հավատ ներշնչող պատրվակներ. «անգլիական ստեր, դավաճանություն հայրենիքի շահերին. զինակցի հանդեպ զույգ աչքերը փակելու պարտավորվածություն: Բոլոր նրանք, ովքեր նման ամոթալի հիմնավորումներով իրենց խիղճը հանգստացրել են, այսօր այլևս ոչ մի պատրվակ չունեն»:¹⁰⁵⁰

Լեփսիուսի համոզմամբ, Գերմանիան գեթ զինադադարից հետո պետք է ապացուցեր, որ կամենում էր իրենից մաքրել մեղսակցության արատը, ուստի նրա հողվածի երկրորդ՝ «Օգնելու ժամանակը եկել է» վերնագիրը կրող հատվածը մի ազդու կոչ էր՝ ուղղված ողջ Գերմանիայի քրիստոնյաներին. «Արե՛ք, ինչ կարող եք, մեր ժողովրդին բեռնաթափե՛ք անասելի ոճրից: Մեր՝ քրիստոնյաների անուններն ազատե՛ք այն նախատինքից, որ մենք Արելի սպանության համար միայն Կայենի խոսքերն ունեինք: Դեռ ապրում է քստորված ժողովրդ-

1047. Աճռ, էջ 114: Լեփսիուսի կողմից հաղորդված տվյալները, բնականաբար, լրացուցիչ հնարավորություն են ընձեռում միանշանակորեն հերքելու արևմտահայության քվաքանակի վերաբերյալ հայկական աղբյուրների կողմից ներկայացված տեղեկությունները վիճարկող թուրք և այլ օտարազգի պատմաբանների տեսակետները:

1048. Աճռ, էջ 116:

1049. Աճռ:

1050. Աճռ:

դի մնացորդը, որին, կին և երեխայի հետ թվով 1,5 միլիոն, քչեցին անապատները: Տասնյակ հազարավորների դիերը, որոնց ճանապարհին սպանեցին, թունավորեցին օդը, վարակեցին Անատոլիայի և Միջագետքի թիկունքային ճանապարհները: Անապատի ավազը ծածկում է հարյուր հազարավոր սովամահ եղածների դիերը: Հավանաբար դեռ 150 հազար հյուծված կանայք, երեխաներ, զառամյալներ՝ մուրացիկների մի բազմություն, մահին ընդառաջ է գնում: Դա խըղճուկ մնացորդն է մի նախկինում ջանասիրությամբ և տոկուն աշխատանքով վեր խոյացած ժողովրդի, որն իր քրիստոնյա հավատը պահպանեց երկու հազարամյակ: Միթե՞ գեթ նրանք չպետք է իրավունք ունենան կենդանի մնալ: Միթե՞ տասնյակ հազարավոր աղջիկներն ու երեխաները, որոնց որպես հեշտ ավար քարշ տվեցին թուրքական քաղաքներն ու քրդական գյուղերը, ազատության իրավունք չունեն: Միթե՞ հարյուր հազարավոր քրիստոնյաների հարկադրված օտար հավատը պետք է շարունակի մնալ: Պե՞տք է, արդյոք, ողջ աշխարհը իրավացի դուրս գա այն հարցում, որ միայն Գերմանիան ոչ մի զգացում չունի քրիստոնյայի անվան և մարդկային արժանապավության նման նախատինքի հանդեպ: Եթե դուք մեղսակից չեք եղել, ապացուցեք, որ չեք կամենում մեղսակից դառնալ: Չեզ ցավ չեն՝ պատճառում տասնյակ հազարավոր որբերը: Արե՞ք, ինչ ձեր ուժերը թույլ են տալիս: Օգնե՞ք այդ թշվառ մնացորդին փրկել...»: ¹⁰⁵¹

Գրաքննության վերացումից հետո Լեփսիուսը վճռեց վերահրատարակել նաև իր «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» աշխատությունը: Մինչ այդ, սակայն, նա անհրաժեշտ էր համարում կատարել լրացուցիչ համեմատական քննություն իր աշխատությունում ամփոփված տեղեկությունների և գերմանական դեսպանության ու հյուպատոսությունների տեղեկագրերի միջև, որոնք նրան աշխատության առաջին հրատարակության ժամանակ մատչելի չէին եղել: Դրանց ուսումնասիրությունը Լեփսիուսը կարևորում էր նաև հայ ժողովրդի բնաջնջման հարցում Գերմանիայի ցուցաբերած պաշտոնական դիրքորոշմանը ծանոթանալու համար: ¹⁰⁵² Ուստի 1918 թ-ի

1051. Անդ, էջ 116-117:

1052. St'u Mitteilungen, „Der Orient“, 1919, էջ 40:

նոյեմբերի վերջին Հաագայից վերադառնալով Բեռլին ևս դիմեց ԱԳՆ-ի պետքարտուղար դր. Վիլհելմ Հայնրիխ Չուֆին՝ խնդրելով իրեն թուլլատրել ծանոթանալ ԱԳՆ-ի և Կ. Պոլսի գերմանական դեսպանության դիվանագիտական փաստաթղթերին: Դր. Չուֆը նրան ոչ միայն չմերժեց, այլև տեղեկացնելով Հայկական հարցի վերաբերյալ մի «ճերմակ գիրք» հրատարակելու՝ ԱԳՆ-ի մտադրությունը¹⁰⁵³ նշեց, որ վերջինս այդ գրքի հրապարակումից կիրաժարվեր, եթե Լեփսիուսն անձամբ ստանձներ Հայկական հարցի վերաբերյալ Գերմանիայի դիրքորոշումը պարզաբանելու առաջադրանքը: Լեփսիուսը համաձայնեց դր. Չուֆի առաջարկն ընդունել այն պայմանով, որ փաստաթղթերն իրեն ամբողջությամբ մատչելի դարձվեին, հրապարակման համար փաստաթղթերի ընտրությունը թողնվեր իր հայեցողությանը, և բացի այդ հրապարակումը տեղի ունենար ոչ թե ԱԳՆ-ի հանձնարարությամբ, այլ անձամբ իր կողմից՝ նախատեսվելով նաև գրավաճառանոցների համար:¹⁰⁵⁴ Եւ այդ պայմանների ապահովումը անհրաժեշտ էր համարում՝ իրեն և միայն իրեն վստահելով թուրքական կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացված մեծ ոճրագործության և այդ հարցում Գերմանիայի ցուցաբերած պաշտոնական դիրքորոշման պարզաբանումը: «Այսօր էլ ես իմ արտոնությունն եմ համարում դառնալ մի ժողովրդի դատապաշտպանը.- հայտարարում էր նա,- որը չնայած պատերազմի պատճառների մեջ չխճճվեց, սակայն նրա նգույալ բարբարոսության միջոցով տասնապատիկ անգամ ավելի տառապեց, քան աշխարհի ցանկացած այլ ժողովուրդ»:¹⁰⁵⁵

Լեփսիուսն, իր պայմանների ընդունման վերաբերյալ ԱԳՆ-ից համապատասխան հավաստում ստանալով, ձեռնամուխ եղավ փաստաթղթերի ուսումնասիրությանը և հրատարակության նախապատրաստման աշխատանքներին, որոնք տևեցին ավելի քան հինգ ամիս:¹⁰⁵⁶ Ժողովածուն, որը «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թվականներին. դիվանագի-

1053. ԱԳՆ-ն այդ որոշմանը հանգել էր հերքելու համար Անտանտի երկրների լրատվական միջոցներում շարունակ արժարժվող այն տեսակետը, որ հայ ժողովրդի տեղահանությունը և կոտորածները դրդել և կազմակերպել էր Գերմանիան:

1054. Անդ:

1055. Lepsius J., Was hat man den Armeniern getan?, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 118:

1056. Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1919, էջ 40:

տական փաստաթղթերի ժողովածու» վերնագրով լույս տեսավ 1919 թ-ի մայիսին, ամփոփում էր ոչ միայն գերմանական դիվանագիտական աղբյուրներից հաղորդված տեղեկությունները հայ ժողովրդի տեղահանման և քսորի վերաբերյալ, այլև այդ իրադարձությունների և առհասարակ Հայկական հարցի առնչությամբ Գերմանիայի դիրքորոշումը պարզաբանող բազմաթիվ կարևորագույն նյութեր. թվով 444 փաստաթուղթ, որոնք ընդգրկում էին 1913 թ-ի սեպտեմբերից մինչև 1918 թ-ի հոկտեմբերն ընկած ժամանակամիջոցը և լույս ընծայվեցին Լեփսիուսի հեղինակած ընդարձակ ներածության հետ միասին:¹⁰⁵⁷ Ժողովածուում լույս տեսած դիվագիտական փաստաթղթերի միջոցով, ինչպես հարկն է, լուսաբանվեցին և հանգամանալից փաստարկում ստացան հայ ժողովրդի հանդեպ իրագործված ոճրագործությունները, դրանց ծրագրայնությունը, ծավալը, նպատակներն ու իրականացման եղանակները: «Հրապարակված նյութերը ջախջախիչ հարված էին ուղղված թուրքական դահիճների դեմ, հայոց ցեղասպանության մահասարսուռ տեսարանների ըստ ամենայնի բացահայտում,- գրել է այդ առթիվ ակադ. Վ. Միքայելյանը: - Ժողովածուն քաղաքակիրթ աշխարհի առջև բացեց թուրքական ոճրագործությունների զարհուրելի պատկերը»:¹⁰⁵⁸

Բացառելու համար այնպիսի կասկածները, թե փաստաթղթերի հրատարակության հարցում կարող էր որոշակի միտում դրսևորված լինել, Լեփսիուսն այնպիսի ընտրություն էր կատարել, որով ապահովվում էր թղթակցությունների ժամանակագրական և ներքին բովանդակային շա-

1057. Stü Lepsius J., Deutschland und Armenien. Sammlung diplomatischer Aktenstücke, Potsdam, 1919: Ուշագրավ է, որ նախքան հունիսին այդ աշխատությունը Գերմանիայում երևան կգար, Լեփսիուսը դեռ մայիսի սկզբին հիսուն օրինակ ուղարկեց Վերսալի խաղաղության համաժողովին: Միաժամանակ նա Ավետիք Իսահակյանի միջոցով, որն անդամակցում էր Գերմանա-հայկական ընկերության վարչությանը, ժողովածուն ուղարկեց նաև համաժողովի հայկական պատվիրակությանը և բացի այդ ևս մի շարք օրինակներ առաքեց անգլո-հայկական ընկերության նախագահ լորդ Ջեյմս Բրայսին և հայ ժողովրդի՝ ժնկի ու Բագելի բարեկամներին: Stü Mukaelian B., Армянский вопрос и генциал армян в Турция (1913-1919)...., էջ 603: Դմմտ. Гольмц Г.; Коромазян Р. С., Доктор Иоганнес Лепsius..., էջ 126:

1058. Stü Միքայելյան Վ., Հովիաննես Լեփսիուս. քանկ և անմահ անուն, «Երկիր», 1998, ապր. 22-ի թող., էջ 7:

րունակականությունը: Փաստաթղթերը միաժամանակ այնքան «խոսուն» էին և այնքան ամբողջական էին ներկայացնում եղելությունները, որ Լեփսիուսն ավելորդ էր համարում կատարել լրացուցիչ մեկնաբանություններ: «Ես իմ առաջադրանքը չեմ համարել որևիցե առումով ստանձնել մեղադրողի, պաշտպանողի կամ դատավորի դերը,- նշում էր նա աշխատության ներածականում:- Ես համոզված էի. որ լավագույնս կծառայեմ ճշմարտությանը. եթե սահմանափակվեմ նրանով, որ թույլ տամ խոսել փաստաթղթերին, որոնցից յուրաքանչյուր ոք կարող է կարծիք կազմել փաստերի և մեղավորության հարցի վերաբերյալ»:¹⁰⁵⁹

Դիվանագիտական տեղեկագրերի ուսումնասիրությամբ Լեփսիուսի համար պարզ դարձավ, որ հայ ժողովրդի բնաջնջումը դրդելու և կազմակերպելու վերաբերյալ Գերմանիայի հասցեին Անտանտի մանուլում ի հայտ եկող մեղադրանքներն իրականությանը չէին համապատասխանում,¹⁰⁶⁰ և որ դրա կազմակերպման և իրականացման պատասխանատվությունը ծանրանում էր բացառապես երիտթուրքական կառավարության վրա: Չնայած դրան նա շարունակում էր իր հրապարակումներում ընդգծել, որ Գերմանիան կրում էր բարոյական պատասխանատվություն իր դաշնակցի արարքների համար և հետևաբար պետք է իրեն պարտավորված զգար ամեն ջանք գործադրել նեցուկ դառնալու հայ ժողովրդի դեռ կենդանի զավակներին: «Այդ ծրագրված զանգվածային սպանդի, մեկ միլիոն քրիստոնյաների սպանման հույաների հալածանքների պատմության մեջ դեռ իր նմանը չունեցող այդ խայտառակության ողբերգականը մեզ գերմանացիներին համար կայանում է նրանում,- նշում էր նա,- որ պատերազմի ժամանակ համաշխարհային քաղաքականության շրթայակցումը մեզ կարծես թե դարձրել է մեր զինակցի արյունախում ֆանատիզմի մասնակիցը: Չնայած փաստաթղթերը մեզ իրավունք են ընձեռում հերքել մեղսակցության այն մեղադրանքը, որ ողջ աշխարհի կողմից բարդվում է մեզ վրա, սակայն մեր խիղճը ճնշում է անուղղակի բարոյական պա-

1059. Lepsius J., Deutschland und Armenien..., ть VII:

1060. Stü Lepsius J., Ich bitte alle Leser dieser Zeitschrift, „Der Orient“, 1919, 1-ին էջին նախորդող կոչը: Այդ առնչությամբ տե՛ս նաև այս գրքի ներածության մեջ կատարված պարզաբանումները:

տասխանատվությունը մեր զինակցի հանցագործության համար: Մենք չենք կարող ետ բերել այն, ինչ կատարվել է, բայց գոնե պարտավոր ենք որպես բոլոր քրիստոնյա ժողովուրդներից առաջինը կենդանի պահել այն, ինչ դեռ մնացել է այդ նզովյալ արարքի զոհերից»: ¹⁰⁶¹ «Փաստագրական նյութերը.- նշում էր նա մեկ ուրիշ անգամ.- մեղավորության հարցը և հարյուր-հազարավոր կանանց ու երեխաների թշվառությունը, որոնք վերապրեցին կոտորածները, իմ հրապարակումներում աշխարհի աչքի առջև են: Ես սպասում եմ գթասրտության մեծ շարժում ավետարանական Գերմանիայում, որը նույնիսկ մեր սեփական զրկանքների պատճառով չի կարողանա խեղդվել»: ¹⁰⁶²

Փաստաթղթերի հրապարակմամբ հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ոճրագործություններն այն աստիճան հստակ էին պարզաբանված և փաստարկված, որ Լեփսիուսի համոզմամբ արդեն նույնիսկ «ամենաարմատական սկեպտիկը և թուրքասերը» չէր կարող «աչքերը փակել փաստերի ճշմարտացիության և սոսկալիության առաջ»: ¹⁰⁶³ Սակայն նա այրքանով սահմանափակվելու մտադրություն չունեւր և անընդմեջ, իր բոլոր հնարավորություններով շարունակում էր զարգացնել իր հայանվեր քարոզչությունը: Փաստաթղթերի ուսումնասիրությունը փաստեց, որ Լեփսիուսի 1916 թ-ի գարնանը հրատարակված՝ գաղտնի տեղեկագրի նյութերը միանգամայն համապատասխանում էին իրականությանը, ¹⁰⁶⁴ ուստի նա ձեռնամուխ եղավ այդ աշխատության վերահրատարակման գործին, որը «Հայ ժողովրդի մահուղին» վերնագրով լույս տեսավ 1919 թ-ին, փաստաթղթերի լույսընծայումից կարճ ժամանակ անց: ¹⁰⁶⁵ Աշխատության բովանդակությունը նոր հրատարակության մեջ որևէ փոփոխություն չէր կրել՝ համալրվելով միայն մի ներածությամբ, որտեղ հեղինակը

1061. Schäfer R., *Geschichte...*, էջ 104:

1062. Տե՛ս Lepsius J., *Ich bitte alle Leser dieser Zeitschrift, „Der Orient“*, 1919, 1-ին էջին նախորդող կոչը:

1063. Schäfer R., *Geschichte...*, էջ 104:

1064. «Ես փաստաթղթային նյութերի ուսումնասիրությունից հետո արդեն հանգել եմ այն համոզմանը.- նշում էր այդ առթիվ Լեփսիուսը.- որ գերմանական հյուպատոսական տեղեկագրերը հաստատում են այն ամենը, ինչ ես 1915 թ-ին տեսել և ապրել եմ և 1916 թ-ին իմ «Տեղեկագրում» հրապարակեցի»: Տե՛ս Lepsius J., *Was hat man den Armeniern getan?*, „*Mitteilungen aus der Arbeit...*“, 1918, էջ 118:

1065. Տե՛ս Lepsius J., *Der Todesgang des armenischen Volkes*, Potsdam, 1919.

ներկայացնում էր զրքի նախապատմությունը և նրա առաջին հրատարակության ու առաքման հարցում ի հայտ եկած խոչընդոտները:

1920 թ-ի փետրվարից Լեփսիուսը ԱԳՆ-ի առաջարկությամբ երկու այլ անձանց՝ պրոֆ. Ալբրեխտ Մենդելսոն-Բարթոլդիի և դր. Ֆրիդրիխ Թիմեի հետ միասին ձեռնամուխ եղավ նաև Գերմանիայի՝ 1882-1914 թթ. բոլոր դիվանագիտական փաստաթղթերի հրատարակմանը, որոնք կրում էին «Եվրոպական կաթինետների մեծ քաղաքականությունը 1871-1914 թթ» վերնագիրը և 40 ստվար հատորներով ներկայացնում էին Գերմանիայի արտաքին քաղաքականությունը վերոնշյալ շրջանում:¹⁰⁶⁶ Այդ հրապարակումն անկասկած պետք է համարել Լեփսիուսի նախորդ աշխատությունների տրամաբանական շարունակությունը, որտեղ նա տնօրինում էր Արևելքի, մասնավորապես Թուրքիայի, Ռուսաստանի ու Բալկանների բաժինը:

Լեփսիուսն իր հրապարակախոսական գործունեությունը շարունակում էր նաև թուրքիկների միջոցով, որոնք մեծ տպաքանակով հրատարակվում և առաքվում էին հանրությանը: Միայն 1919 թ-ի հունվար-մարտ ամիսներին, օրինակ, նա կարողացավ լույս ընծայել և առաքել չորս թուրքիկ:¹⁰⁶⁷ Ուշագրավ է, որ նրանք, ովքեր հետագայում ևս ցանկություն էին հայտնում տարածելու կամ զանազան միջոցառումների ընթացքում օգտագործելու նպատակով թուրքիկներ ունենալ, պատվիրման միջոցով ցանկացած ժամանակ և ցանկացած տպաքանակով կարող էին դրանք ստանալ Լեփսիուսի՝ օգնության աշխատանքների նոր գրասենյակից:¹⁰⁶⁸

1066 Sb'ü Die Große Politik der Europäischen Kabinette, Berlin, 1922-1927: Դմնտ. Lepsius J., Bitte um Mitarbeit, „Der Orient“, 1920, էջ 46: Լեփսիուսը քննականաբար ժողովածուում ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացրել է նաև Գայկական հարցին վերաբերվող փաստաթղթերը, որոնք տեղ են գտել 2-րդ, 9-րդ, 12-րդ և մի շարք այլ հատորներում:

1067. Դրանք ունեին հետևյալ վերնագրերը. «Կարելի՞ էր այդ մասին լռել», «Քրիստոնյա ժողովրդի կործանումը», «Կեմախ Բողազիի անծոքի հովտում», «Մի քրիստոնյա ժողովրդի մահվան ճանապարհը»: Sb'ü Zur Beachtung, „Der Orient“, 1919, էջ 47: Մինչ այդ, 1918 թ-ի վերջին առաքվել էր ևս մեկ թուրքիկ, որ կրում էր «Ի՞նչ են արել հայերի հետ» անվանումը: Sb'ü Zur Beachtung, „Mittelungen aus der Arbeit...“, 1918, էջ 152:

1068. Sb'ü Zur Beachtung, „Der Orient“, 1919, էջ 47: Լեփսիուսի գրասենյակի հասցեն էր՝ Պոստլանմ, Ռոնշտրասս 13: Անդ:

Տեղեկատվությունն էլ ավելի ընդլայնելու և բարեկամների հետ իր կապն ամրապնդելու նպատակով Լեփսիուսը 1919 թ-ի մայիսից իր՝ «Mitteilungen aus der Arbeit»-ը վերածեց ամենամսյա պարբերականի, որը կոչվում էր «Der Orient» և, ի տարբերություն նախորդի, տպագրվելով ավելի մեծ ծավալով անվճար առաքվում էր այն բոլոր բարեկամներին, ովքեր տարեկան նվազագույնը 10 մարկ նվիրատվություն էին կատարում:¹⁰⁶⁹

Նոր ամսագրում վիճակագրական տեղեկությունների, զանազան վերլուծությունների և օգնության աշխատանքների լուսաբանման հետ մեկտեղ ամբողջությամբ հրատարակվեցին նաև Ուռնայից ստացված և գրաքննության կողմից նախկինում արգելված տեղեկագրերը, որոնցում նորանոր մանրամասներով էին առարկայանում քսոտրի հետևանքներն ու այն վերապրած հայության օրհասական վիճակը: Թողարկման առաջին համարում Լեփսիուսն այն ընթերցողներին, որոնք կամենում էին «կիսել հայ ժողովրդի վերապրող հատվածի սարսափելի զրկանքները, կարեկցել հարյուր-հազարավոր աղքատ և սովահար, քսոտրյալ և փախստական այրիներին ու որբերին», կոչ էր անում իրենց բարեկամներին փոխանցել «Der Orient»-ի համարներն ու կից առաքվող թռուցիկները: Մասնավորապես քահանաներին նա խնդրում էր համայնքներում իրազեկել հայերի զրկանքները և թռուցիկների բաժանմամբ, ինչպես նաև պարբերականի տեղեկագրերի վերահրատարակմամբ նպաստել օգնության գործին:¹⁰⁷⁰

Ավետարանական համայնքների մասնակցությունն օգնության աշխատանքներին առավելագույնս ընդլայնելու նպատակով Լեփսիուսը 1919 թ-ի մայիսի 1-ին Գերմանիայի ավետարանական քահանաներին հղեց նաև մի ընդարձակ ուղերձ, որտեղ սրտառուչ տողերով ի մի բերելով հայ ժողովրդի ողբերգությունը՝ կոչ էր անում հիշել այն

1069. „Der Orient“-ի տարեկան բաժանորդագինն արժեք 10 մարկ: Այն բարեկամները, որոնք 10 մարկ և ավելի ամրամտվճար էին մուծում կազմակերպությանը, պարբերականը ստանում էին անվճար: Նշված զումարից ավելի փոքր ամրամտվճար մուծող բարեկամներին ուղարկվում էին միայն պարբերականի առանձին համարներ: Այլապես պարբերականի մեկ համարն արժեք 1 մարկ, իսկ զույգ համարները միասին 1,50 մարկ: Այդ սահմանափակումները թռուցիկների վրա չէին տարածվում: Ամր: 1070. Sten Lepsius J., Ich bitte alle Leser dieser Zeitschrift, „Der Orient“, 1919, 1-ին էջին նախորդող կոչը:

բարոյական պարտքն ու պատասխանատվությունը, որ նրանք ունեին հայերի հանդեպ: Քսաներորդ դարում աշխարհն ապրեց քրիստոնյաների՝ բոլոր ժամանակների մեծագույն հալածանքը, և Գերմանիան մնաց դրա «լուռ վկան», հայտարարում էր նա: «Այն օգնությունը, որ ես պատերազմի ժամանակ, հակառակ բոլոր խոչընդոտներին, իրականացրել եմ, անասելի թշվառության մեծության համեմատ չափազանց խղճուկ էր: Անհնար էր ավելի բարձր ծայնել, քան ես արեցի: Եթե նույնիսկ քարերն աղաղակեին, գրաքննությունը կլռեցներ նրանց... Այժմ, սակայն, երբ մարդկային սերը դարձյալ իրավունք ունի խոսել, Գերմանիան պետք է ապացուցի, որ իր սիրտն այս աշխարհի տառապանքների հանդեպ չի քարացել: Ուստի ես ձեզնից ակնկալում եմ, տյարք և եղբայրներ, որ դուք ձեր համայնքներին կասեք. «Դա տեղի է ունեցել: Մենք դա չկարողացանք խանգարել: Բայց մենք ամաչում ենք որպես քրիստոնյաներ, որ դաշնակցել ենք քրիստոնյաների արյունը հեղող ժողովրդի հետ... Մենք ամաչում ենք, որ երբ դեռ հնարավոր էր օգնել, օգնության պատրաստների ձեռքերը կապեցին և ականջ դրեցին ստրկական երկյուղին: Մենք հիմա այլ բան չենք կարող անել, քան դարձյալ ուղղել, ինչը դեռ կարելի է ուղղել, փրկել, ինչը դեռ կարելի է փրկել, և բոլոր ուժերով, որ մեր սեփական գրկանքների մեջ մեզ դեռ մնացել են, ձեռք զարկել եղբայրական ժողովրդի վերականգնմանը, որը դարձավ մուրացիկների բազմություն, քույր եկեղեցուն, որը փլատակների կույտի վերածվեց: Մենք այդ պարտք ենք Տիրոջն արժան լինելու, մենք այդ պարտք ենք մեր գերմանացի ժողովրդի կոխկորտված արժանապատվության վերականգնման համար... Միթե՞ շատ կհամարվեր, եթե յուրաքանչյուր ավետարանական համայնք հոգ տաներ գեթ մեկ հայ որբ երեխայի համար...»: ¹⁰⁷¹

Իր նոր առաջադրանքը՝ Մեծ եղեռնից մազապուրծ որբերի խնամքի կազմակերպումը ¹⁰⁷² հնարավորինս արդյունավետ իրագործելու նպատակով նա վճռել էր պատերազմի ավարտից հետո վերջնականապես ամրագրել և օրինականացնել իր նոր ընկերության «Դր. Լեփսի-

1071. Schäfer R., Geschichte..., էջ 104-105:

1072. Դայ որբերի ընդհանուր թվաքանակն այդ շրջանում, ըստ աներիկյան օգնության կոմիտեների տվյալների, հասնում էր շուրջ 250 000-ի: Տե՛ս Lepsius J., Armenien und die Mächte, „Der Orient“, 1920, էջ 39: Դմնտ. Lepsius J., Helft Kinder retten!, անդ, էջ 67-ին հաջորդող հատվածը:

ուսի արևելյան առաքելության»¹⁰⁷³ գործունեության իրավակաճանարհրական հիմքերը և իր անհատական «Օգնության գործը» հանճանարարել նրան: ԳԱԱ-ի հետ իր դառը փորճից ելնելով՝ նա մտադիր էր նոր կազմակերպության համար այնպիսի կառավարման համակարգ ստեղծել, որը ցանկացած իրավիճակում կապահովեր նրա գործունեության վերահսկելիությունը: Լեփսիուսի համոզմամբ դրա լավագույն ճանապարհը մեկն էր. կազմակերպության ղեկավարումն արտոնել դրսում գործող աշխատակիցներին, որոնք էլ պետք է կրեին դրա հետ կապված որջ պատասխանատվությունը: «Ես մնում եմ այն հաստատուն մտքին, որ դրսի աշխատողներն իրենք պետք է լինեն միսիան ղեկավարողները.- նշում էր նա 1918 թ-ի փետրվարի 16-ին Շեֆերին ուղղված իր նամակում,- և որ հոգաբարճությունը պետք է լինի միայն վերստուգիչ ատյան: Դրսի մեր աշխատակիցները դրան կհամաճայնեն: Իհարկե, ֆինանսավորումը պետք է ստանճնի հայրենական աշխատանքային հանճնաճողովը»:¹⁰⁷⁴

1919 թ-ի վերջին, սակայն, երբ Լեփսիուսը մշակում էր նոր կազմակերպության կանոնադրությունը, «դրսի» նրա երկու երկարամյա աշխատակիցները՝ Ֆ. Էքարտը և Յ. Ավետարանյանն այլևս կենդանի չէին,¹⁰⁷⁵ և բացի այդ Արևելքում որևէ գերմանական ընկերության գործունեության համար իրադրությունն այնքան աննպաստ էր, որ նա հարկադրված էր իր սկզբնական որոշումից հրաճարվել:¹⁰⁷⁶ Ընկերության ղեկավարումը Լեփսիուսը սկզբում հանճնարարեց երեք անճանց նախագահին, գլխավոր քարտուղարին և գանճապահին, որոնք պետք է ունենային նաև այն միայնակ ներկայացնելու լիազո-

1073. Լեփսիուսն այդ անվանումն ընտրել էր ճամանակավորապես՝ վստահ լինելով, որ պատերազմի ավարտից հետո հնարավոր կլիներ իր երկու ընկերությունները միավորել: Տե՛ս Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 105: Բացի այդ, գինադադարից հետո Արևելքում գերմանական կազմակերպությունների գործունեության համար ստեղծված աննպաստ իրադրությունն, անկասկած, պետք է դրդեր անվանման մեջ չհիշատակել ընկերության պետական պատկանելությունը: 1074. Schäfer R., Geschichte..., էջ 109: Լեփսիուսն այդ նպատակադրումն արտահայտում էր նաև իր՝ 1918 թ-ի հունվարի 28-ի նամակում: Անդ: 1075. Յ. Ավետարանյանը վախճանվեց 1919 թ-ի դեկտեմբերի 11-ին: Տե՛ս Lepsius J., P. Johannes Awetaranjan, „Der Orient“, 1920, էջ 3: 1076. Schäfer R., Geschichte..., էջ 109:

րություններ: Բացի այդ Լեփսիուսը կազմակերպության մեջ ընդգրկեց ևս յոթ անձանց, որոնք նշված երեքի հետ կազմում էին հոգաբարձությունը:¹⁰⁷⁷ Պոտտոդամի առաջին ատյանի դատարանում առաջին կանոնադրության գրանցման ժամանակ հոգաբարձությունը բաղկացած էր հետևյալ անձանցից. պրոֆ. Բեթ, քահանա Պաուլ Ֆլայշման, Կարլ Ֆյորստեր (գանձապահ), Մյուլլեր Բյուիլենթալ, պրոֆ. Կարլ Ֆրիդրիխ Լեհման-Չաուպտ, պրոֆ. դր. Բեռնհարդ Լեփսիուս, դր. Յոհաննես Լեփսիուս (նախագահ), Ռիխարդ Շեֆեր (գլխավոր քարտուղար), Զիգմունդ-Շուլց և պրոֆ. դր. Ալբերտ Վեկեսեր:¹⁰⁷⁸ Կանոնադրության վերջնական գրանցման ժամանակ, սակայն, որ տեղի ունեցավ 1921 թ-ի ապրիլի 26-ին,¹⁰⁷⁹ պարզվեց, որ իրավաբանորեն անհնար էր ղեկավարման խմբի անդամներին տալ կազմակերպությունը միայնակ ներկայացնելու իրավասություններ: Ուստի այդ իրավունքը հատկացվեց բացառապես նախագահին, որը միաժամանակ ստանձնեց նաև կազմակերպության մյուս աշխատակիցների լիազորությունների բաշխման պարտականությունը:¹⁰⁸⁰

«Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունը» իր գործունեությունը սկսեց Գերմանիայում շարունակ խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում: 1919 թ-ին ծայր էր առել գերմանական դրամի արժեզրկումը, որը շարունակ ավելի մեծ չափեր էր ընդունում: Հուլիսին մեկ շվեյցարական ֆրանկի դիմաց վճարվում էր չորս մարկ, այն ղեպքում, երբ նրա արժեքը սովորաբար կազմում էր 80 պֆենիգ:¹⁰⁸¹ Բնականաբար այդ մեծ հարված էր նաև օգնության աշխատանքներին, քանի որ գերմանական դրամով կատարվող նվիրատվությունները կորցնում էին իրենց նշանակությունը: 1919 թ-ին Լեփսիուսն ունեցավ 342781,51 մարկի եկամուտ, որից 223071,60 մարկ առաքվեց Ուռնա՝ ծախսվելով որբերի կարիքների համար, 39471,78 մարկ հատկացվեց կառավարման ծախսերին (աշխատավարձեր,

1077. Անդ:

1078. Անդ, էջ 109-110: Ա. Վեկեսերը Բադենի եկեղեցու ամենահեղինակավոր այրերից էր: Նա Մանհայմում, Գայդելբերգում և Կարլսրուհեում դասավանդել էր կրոն և բացի այդ եղել էր Բադենի երկրամասային եկեղեցու և ավետարանական ակադեմիականների միության ապոլոգետիկ կենտրոնի հիմնադիրն ու ղեկավարը: Տե՛ս „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 36:

1079. Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 105:

1080. Schäfer R., Geschichte..., էջ 110:

1081. Անդ, էջ 107:

գրասենյակային և փոստային առաքումների ծախսեր, ապահովագրություններ և այլն), իսկ 26605,54 մարկ՝ արոպագանդայի, մասնավորապես «*Der Orient*», «*Mitteilungen*» պարբերականների և թուղիկների հրատարակության, ինչպես նաև շրջիկ զեկուցումների համար կատարված ծախսերի հատուցմանը:¹⁰⁸²

1919 թ-ին Լեփսիուսը մտադիր էր Ուռհայում սեփական միջոցներով հիմնել մի նոր որբանոց: Այդ մասին նա տեղեկացրել էր նաև այնտեղ գտնվող՝ իր լիազոր ներկայացուցիչ Ա. Ֆիշերին, որը նրան այդ առթիվ գրում էր հետևյալը. «Եթե Դուք կամենում եք որբախնամ գործը շարունակել և, ինչպես Դուք եք գրում. մի սեփական որբանոց պահել, ապա անհրաժեշտ է դրա համար մեծ գումար հատկացնել: Ես դեռ չեմ կարող ասել, թե որբանոցի հիմնադրումը և գործարկումը որքան կարժենա: Հավանաբար Ձեզ կհաջողվի շուտով ավելի մեծ գումարներ փոխանցել: Հայերի զրկանքները երկրի ներսում պետք է որ անասելի լինեն...»:¹⁰⁸³

Լեփսիուսի մտադրությունը, սակայն, չէր կարող իրագործել, քանի որ խաղաղության գործընթացի ձգձգման հետևանքով Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը շարունակում էր գերմանական կազմակերպությունների գործունեության համար մնալ աննպաստ, և բացի այդ խորացող տնտեսական ճգնաժամի պայմաններում նրա եկամուտների շարունակական նվազումն այդ անհնար էր դարձնում: Ճգնաժամ, որի ընթացքում դրանը ձեռք բերելով ուռճացված թվային արժեքներ՝ գլխապտույտ արագությամբ շարունակում էր ուժազրկվել: Ուստի հասկանալի է, որ, ինչպես վկայում են նաև ներքորբերյալ վիճակագրական տվյալները, 1920-22 թթ. ընկերությունն առանձին որբանոցներ հիմնել չէր կարող, և օգնության աշխատանքները պետք է սահմանափակեր դեպի «աղետյալ գոտի» կատարվող դրամական առաքումներով:¹⁰⁸⁴

1082. Stü Jahresrechnung des armenischen Hilfswerks in Urfa und Umgebung, „Der Orient“, 1920, էջ 58-59:

1083. Lepsius J., Not und Hilfe, „Der Orient“, 1919, էջ 135:

1084. 1922 թ-ի եկամուտներից Թուրքիայի և Անդրկովկասի հայ փախստականներից և որբերին ուղարկվել է ևս 2 250 000 մարկի օգնություն, որը կոնկրետ չափաբաշխումների հաշվարկային տվյալների բացակայության պատճառով առկաակում ներկայացված չէ: Stü Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1922, „Der Orient“, 1923, էջ 25:

Տարե- թիվ	Մուտք		Ելք					
	Ընդհա- նուր	Ընդհա- նուր	Օգնություն Թուրքիայի հայերին	Օգնություն Կովկասի հայերին	Հատուկ ծախսեր և օգնություն- ներ	Կառավ. ծախսեր	Կառավ. ծախսեր	Ճեղքվածքի փակման ծախսեր
1920	148978, 72	148978, 72	54140, 35			43504, 97	26744,86	23288, 54
1921	224102, 62	224102, 62	968	70000	30419, 85	43571, 40	30642,73	16260, 30
1922	3376502,48	3376502,48	50000	77365, 50	142773, 95	256125,32	209656,30	

Գիտակցելով թուրքիայում որբանոցի ստեղծման անհնարինու-
թյունը Լեփսիուսն ու իր ընկերությունն, այնուհանդերձ, ամենևին
նտադրություն չունեին մեծ ձեռնարկներից հրաժարվել: Պողոս Նու-
բար փաշայի կողմից հիմնված Հայ բարեգործական միությունը 1922
թ-ին նախատեսել էր տարբեր երկրներում ստեղծել որբանոցներ
Արևելքի փախստականների ճամբարներում թափառական կյանք
վարող 50 000 անտերունչ որբերի օթևան և խնամք տրամադրելու
նպատակով:¹⁰⁸⁵ Քանի որ Գերմանիայում դրամի արժեզրկման
հետևանքով օտարերկրյա կապիտալի գնողունակությունը խիստ
բարձր էր, միությունը ծրագրել էր իր որբանոցներից մեկը հիմնել այն-
տեղ: Ծրագրի իրականացման համար Լեփսիուսի հետ համագոր-
ծակցության ուղիների մշակման և պայմանավորվածությունների
ձեռքբերման նպատակով միության ներկայացուցիչները 1923 թ-ին
սկզբին հանդիպեցին նրան: Սկիզբ առան նախնական բանակցու-
թյունները, որոնց արդյունքում վճռվեց Գերմանիայում ստեղծել մի
որբանոց այնտեղ ընդունելով 500 որբերի: Միությունը պարտավոր-
վում էր հատուցել երեխաների խնամքի ծախսերի մեծ մասը, իսկ
Լեփսիուսը ստանձնելու էր հաստատության կառավարման և երեխա-
ների ուսման ու դաստիարակության հետ կապված ծախսերը:¹⁰⁸⁶

Ծրագիրը, սակայն, չիրագործվեց, քանի որ ի հայտ եկավ որբերի
խնամքը խորհրդային Հայաստանում կազմակերպելու հնարավորու-

1085. Lepsius J., Unser Waisenhausplan, „Der Orient“, 1923, էջ 36:

1086. Անդ, էջ 36:

թյուն, որը երեխաների ազգային ինքնության պահպանման առումով թե միության և թե Լեփսիուսի կողմից ավելի նախընտրելի համարվեց: «Այնպիսի ազգի համար, ինչպիսին հայկականն է, որը վերջին տասնամյակի աղետի պատճառով ավելի քան կիսով չափ փոքրացավ, երեխաների ապազգայնացումը մնում է որպես մեծագույն վտանգ, մշում էր այդ առթիվ Լեփսիուսը: - Չնայած Գերմանիայում մի լավ դաստիարակության համակարգի ստեղծումը կարող էր դրան հակազդել, սակայն երկնքի չափ մեծ է տարբերությունը. արդյոք հայ երեխան հայկական հողի վրա՞, թե՞ արտասահմանում է մեծանում»: ¹⁰⁸⁷

Ելնելով այդ նկատառումից և միաժամանակ համոզված լինելով, որ Հայաստանի բնակչությունը կարող էր սեփական ուժերով իր համար ճանապարհ հարթել՝ Լեփսիուսը վճռեց իր նոր օգնությունը կազմակերպել այն շրջաններում, որտեղ հայերը գտնվում էին անհամեմատ ավելի ծանր վիճակում: «Այն բանից հետո, երբ Թուրքիան իր քրիստոնյա ազգաբնակչությանը ոչնչացրել կամ վտարել է, մենք հարկադրված ենք մեր աշխատադաշտը տեղափոխել ոչ թուրքական Արևելք,- այդ առթիվ մշում էր նա: - Հայաստանի հանրապետությունում, ներառյալ Կովկաս փախած թուրքահայերը, հաշվվում է մոտ 1 200 000 մարդ: Նրանք կարող են իրենց աշխատանքով իրենց կերակրել: Նմանապես նաև մյուս կովկասյան հանրապետություններում և Ռուսաստանում ապրող հայերը: Ոչ թուրքական Արևելքում և ամբողջ աշխարհում սփռված հայերը՝ հայկական սփյուռքը, հաշվվում է մոտ 800 000 հոգի: Նրանք առանց օտար օգնության չեն կարող գոյատևել»: ¹⁰⁸⁸

Այնուամենայնիվ Գերմանիայում ահագնացող տնտեսական ճգնաժամի պայմաններում Լեփսիուսի հիշյալ ծրագիրը նույնպես առժամանակ պետք է մնար անիրագործելի: Ավելին, 1922 թ-ից «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության» նյութական դրությունն այնքան վատթարացավ, որ լրջորեն վտանգվեց նաև նրա հետագա գոյությունը: Ծայր առավ մաքառումների մի ժանր շրջան, երբ նույնիսկ պարբերականի հրատարակությունը շարունակելու և այդպիսով բարեկամների հետ կապը պահպանելու համար անհրաժեշտ էր ծայրահեղ ջանքեր գործադրել: Ըստ հնարավորին կրճատվել էին բոլոր ծախսերը: Ծայ-

1087. Անդ:

1088. Lepsius J., Unsere 400 Waisenkinder, „Der Orient“, 1924, т9 74:

րահեղ խնայողության սկզբունքը գործում էր բոլոր բնագավառներում: Եթե, օրինակ, նախկինում նվիրատվությունները կազմակերպության կողմից հաստատվում էին համապատասխան անդորրագրերով, որոնք առանձին ծրարներով զանազան թուղիկների¹⁰⁸⁹ հետ միասին ուղարկվում էին նվիրատուներին, ապա փոստային ծախսերի և թղթի զների մեծացման հետևանքով անհրաժեշտ դարձավ ստացագրումները նվիրատուներին ուղարկել սովորական փոստային բացիկների միջոցով:¹⁰⁹⁰ Այդ պարագայում իհարկե այլևս հնարավոր չէր շարունակել թուղիկների առաքումը, որն այդուհետ կատարվում էր միայն բարեկամների կողմից ներկայացված հատուկ հայտերի դեպքում:¹⁰⁹¹ Քարոզչության ոլորտում դեռ 1920 թ-ին տեղի ունեցած այդ նահանջը 1921 թ-ին որոշակիորեն փոխհատուցվեց «հայերի զրկանքների» և օգնության անհրաժեշտության վերաբերյալ շրջիկ զեկուցումների հաճախականության մեծացմամբ, որոնք, իրականացվելով Դր. Լեփսիուսի ԱԱ-ի աշխատակիցների, մասնավորապես քարտուղար Վալտեր Ցիմերմանի և զլխավոր քարտուղար Ռ. Շեֆերի կողմից, լրացուցիչ նյութական եկամուտներ էին բերում կազմակերպությանը:¹⁰⁹²

Հայանվեր քարոզչության զարգացմանը նպաստում և որոշ եկամուտներ էր բերում նաև Հայաստանի և հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի վերաբերյալ ընկերության Տեմպել հրատարակչությունում հրատարակված աշխատությունների վաճառքը, որոնց մասին «*Der Orient*»-ում պարբերաբար կատարվում էին ծանուցումներ: 1921-22 թվականներին, օրինակ, այդ ցանկում ներկայացված էին,

1089. 1921 թ-ի դրությամբ Լեփսիուսն արդեն հրատարակել էր 7 թուղիկ, որոնք ցանկացած քանակությամբ տրամադրվում էին բարեկամներին տարածելու և համայնքներում կազմակերպվող հավաքություններում օգտագործելու նպատակով: *St'u Mitteilungen*, „*Der Orient*“, 1921, էջ 14:

1090. *St'u Quittungsleistung*, „*Der Orient*“, 1920, էջ 34:

1091. Անդ:

1092. Բրեմեդիաֆենի լիցեյի ուսուցիչ Վ. Ցիմերմանը, որը ճանաչում էր Արևելքը և իրազեկ էր հայության զրկանքներին, համայնքներում զեկուցումներ կարդալու համար կազմակերպությունում ընդգրկվել էր դեռ 1919 թ-ին: Մինչ այդ նա աշխատել էր նաև Ֆիլիպոպոլի գերմանական դպրոցում, որտեղ ակտիվ աջակցություն էր ցուցաբերել Ավետարանյանին նրա քարոզչական գործունեության ընթացքում: *St'u Vorträge*, „*Der Orient*“, 1919, էջ 131:

ի թիվս այլոց, դր. Պ. Ռոհրբախի «Չայաստան», պրոֆ. Լ. Չաուպտի «Չայաստանը նախկինում և այժմ», դր. Յ. Լեփսիուսի «Չայ ժողովրդի մահուղին» ու «Գերմանիան և Չայաստանը 1914-18 թթ.», դր. Մ. Նիպագեի «Մի գերմանացի ավագ ուսուցչի տպավորությունները Թուրքիայից», Յ. Կյունցլերի «Արյան և արցունքների երկրում» գրքերը:¹⁰⁹³

Ճգնաժամը դիմագրավելու հարցում, անշուշտ, առաջնահերթ կարևորություն ուներ նվիրատու բարեկամների թվաքանակի ընդլայնումը: Այդ խրախուսելու, ինչպես և նվիրատվությունների խիստ մտահոգիչ դարձած անկանոնությունը նվազեցնելու նպատակով 1921 թ-ի սկզբից այն բարեկամներին, ովքեր տարեկան նվազագույնը 20 մարկի վճարումներ էին կատարում, հնարավորություն էր ընձեռվում դառնալ կազմակերպության լիիրավ անդամներ՝ ի վավերացումն դրա ստանալով համապատասխան վկայականներ:¹⁰⁹⁴

1923 թ-ին գերմանական դրամի արժեզրկումը հասավ իր գագաթնակետին, որի հետևանքով Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունը հայտնվեց աննախադեպ ծանր նյութական դրության մեջ, և չնայած մուտքագրվող գումարները հասնում էին բիլիոնների, սակայն չէին բավարարում նույնիսկ կազմակերպության գոյատևման և կառավարման ու քարոզչության ծախսերը հոգալու համար: Տարվա ընթացքում այն ունեցավ 850 134 947 254 510, 21 մարկի ընդհանուր եկամուտ, որից 527 747 631 083 879, 21-ը կազմում էին հարկադրաբար վերցված և հետագայում մարման ենթակա վարկերը:¹⁰⁹⁵ Այդ գումարներից 327 730 352 494 332 մարկ հատկացվեց քարոզչության նպատակներին, 462 919 953 835 324, 16 մարկ կառավարման ծախսերի հատուցմանը: Բացի այդ տարեսկզբին, երբ մարկի գնողունակությունը դեռևս բավականին բարձր էր, 15 000 մարկով գնվեց զգալի քանակությամբ դեղորայք, որն իբրև օգնություն ուղարկվեց Բուլղարիայում գտնվող

1093. St'u Zu beziehen durch den Tempelverlag Potsdam, „Der Orient“, 1921, էջ 112: Հմմտ. անդ, էջ 148:

1094. St'u Mitteilungen, անդ, էջ 14:

1095. St'u Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1923, „Der Orient“, 1924, էջ 54:

հայ փախստականներին,¹⁰⁹⁶ իսկ 59 484 603 131 744, 05 մարկ հատկացվեց կազմակերպության կողմից հովանավորվող երկու ուսանողների կրթության և ապրուստի ծախսերի հատուցմանը:¹⁰⁹⁷

Այդ գումարների կիրառունակության մասին մոտավոր պատկերացում տալու համար արժե թերևս նշել, որ 1923 թ-ի վերջին. երբ արժեգրկումը կասեցվեց, և շրջանառության մեջ դրվեցին ոսկեդրամները, մեկ բիլիոն թղթադրամն արժեր մոտավորապես 1 ոսկեդրամ: Ստեղծված իրավիճակում բնականաբար խոսք անգամ լինել չէր կարող արտերկրում կանոնավոր օգնության աշխատանքներ վարելու մասին. ավելին, ընկերությունը հարկադրված էր գոյատևել միայն խնայողության խստագույն պայմաններում, որից չկարողացավ խուսափել նույնիսկ «*Der Orient*» պարբերականը: Ամբողջ տարվա ընթացքում այն ունեցավ միայն 2 հրատարակություն 44 էջ ընդհանուր ծավալով: Ընկերությունը հարկադրված էր նաև հրաժարվել 500 մարկից ավելի փոքր նվիրատվություններն անդորրագրելուց, իսկ անդամակցության տարեկան նվազագույն վճարը, որը դեռ 1922 թ-ին կազմում էր 20 մարկ, 1923 թ-ին փոխակերպվեց 1000 մարկի:¹⁰⁹⁸

Հատկանշական է, որ Լեփսիուսը, որ դեռ 1922 թ-ին հրաժարվել էր իր աշխատավարձից, 1923 թ-ին իր և իր ընտանիքի համար ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով հարկադրված եղավ վաճառել և դրամի վերածել նույնիսկ իր անձնական սեփականությունը:¹⁰⁹⁹ Կազմակերպության գանձարկղը չձանրաբեռնելու նպատակով, հետևելով Լեփսիուսի օրինակին, իր բնակարանը վաճառեց նաև

1096. Անդ: Հմմտ. Lepsius J., Dank, „Der Orient“, 1923, էջ 43:

1097. Խոսքը վերաբերում է վրացի գրական-հասարակական գործիչ Գեորգ Պերածեին, որը, 1921 թ-ի վերջին թիֆլիսաբնակ գերմանացի Ա. Լայսթի և Վրաստանի պատրիարք Ամբրոսիուսի հանձնարարագրերով մեկնելով Գերմանիա, հանդիպեց Լեփսիուսին և այնուհետև նրա հովանավորությամբ կարողացավ Գերմանիայում բարձրագույն կրթություն ստանալ: Տե՛ս Lepsius J., Ein neues Band mit Georgien, „Der Orient“, 1922, էջ 1-5: Լեփսիուսը միաժամանակ ստանձնել էր նաև մի թուրք երիտասարդի կրթության հովանավորությունը, որին նա մտադիր էր հետագայում ներգրավել մահմեդական շրջաններում քրիստոնեական քարոզչության ծավալման գործում: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 115:

1098. Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1923, էջ 23:

1099. Schäfer R., Geschichte..., էջ 115:

գլխավոր քարտուղար Ռ. Շեֆերը,¹¹⁰⁰ իսկ մյուս աշխատակիցները հարկադրված էին բավարարվել չափազանց ցածր աշխատավարձով: Նման դժվարին զոհողությունների գնով Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունը կարողացավ հաղթահարել ծանր ճգնաժամը և ոչ մեծ դեֆիցիտով քակոխել 1924 թ.:¹¹⁰¹

Ինչ վերաբերում է Լեփսիուսի նախկին ընկերությանը՝ ՉԱԱ-ին, ապա այնտեղ Լեփսիուսի և Ռոհրբախի հեռանալուց հետո համապատասխանաբար առաջին և երկրորդ նախագահներ ընտրվեցին պաստոր Վինկլերը և պաստոր Ուլրիխը, իսկ տնօրենի պարտականություններն, ինչպես նախկինում, շարունակում էր կատարել Ոյոդենբերը:¹¹⁰² Հոգաբարձության կազմում, բացի վերոնշյալ երեք անձերից, ներգրավված էին նաև Վ. Լյուրսենը (զանձապահ), պրոֆ. Դայսմանը, քահ. դր. Դիտրիխը, քահ. Ռ. Կյոգելը, Նեիրինգը, պաստոր դր. Ոյոմերը, քահ. Յ. Ջեգերը, քահ. Սթյուվեզանդը, քահ. դր. Վիլլետը և խորհրդական Վուբերտը:¹¹⁰³

Նոր նշանակումների միջոցով, սակայն, կազմակերպության նյութական դրությունը չբարելավվեց: Կորցնելով իր գաղափարական առաջնորդին և փորձառու աշխատակիցներից շատերին և մյուս կողմից անկարող լինելով դիմադրել երկրի տնտեսական կազմալուծման ու դրամի արժեզրկման մարտահրավերներին՝ այն շարունակ ավելի ու ավելի էր սուզվում ֆինանսական ճգնաժամի մեջ: Չնայած կազմակերպության 1917–1919 թթ. եկամուտների և ծախսերի վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալներ չեն հաղորդվում, սակայն առկա տեղեկություններն էլ բավական են նրա նյութական վիճակի մասին որոշակի պատկերացում կազմելու համար: 1917 թ-ին այն ունեցավ 73104 մարկի եկամուտ,¹¹⁰⁴ որից 11000 մարկ առաքվեց Ուռնիա:¹¹⁰⁵ Հայտնի է նաև, որ 1918 թ-ին 8000 մարկ հատ-

1100. Անդ:

1101. Դեֆիցիտը նոր դրամով կազմում էր 527, 76 մարկ: St'u Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1924, „Der Orient“, 1925, էջ 31:

1102. St'u An unsere Missionsfreunde!, „Der Christliche Orient“, 1918, էջ 4:

1103. St'u Das Kuratorium der Deutschen Orient-Mission, անդ, էջ 14:

1104. Անդ, էջ 17:

1105. St'u Herzliche Bitte, „Der Christliche Orient“, 1917, էջ 29:

կացվել էր Խոյի որբանոցի նախկին սաներ Ջավեն Թորոսյանի և Լևոն Աղայանի կրթության ծախսերին,¹¹⁰⁶ որոնք ուսում ստանալու նպատակով Ա. Համանակի օգնությամբ 1910 թ-ին Խոյից մեկնելով Պոտսդամ՝ ապավինել էին ԳԱԱ-ի աջակցությանը:¹¹⁰⁷

Կազմակերպությունը ոչ միայն ի վիճակի չէր շարունակել որբախնամ աշխատանքներն, այլև 1918 թ-ից իր գոյությունը պահպանելու համար ստիպված էր հիմնովին կրճատել աշխատավարձերն ու մյուս բնագավառներում կատարվող ծախսերը: Եթե, օրինակ, գրասենյակի աշխատակիցների թիվը (բացի տնօրենը) սովորաբար վեցից չէր իջնում, ապա 1918 թ-ից չնչին աշխատավարձով այնտեղ պահվում էին միայն երկու հոգի՝ քարտուղար Շախգեղիաները և գրավաճառ Ջաուբերը:¹¹⁰⁸ Չնայած «*Der Christliche Orient*»-ում շարունակ հրատարակվող օգնության խնդրանքներին և կոչերին, ճգնաժամը, ինչպես ցույց են տալիս ընկերության՝ ստորև ներկայացվող՝ 1920-21 թթ. եկամուտների և ծախսերի վիճակագրական տվյալները, շարունակեց խորանալ նաև հետագայում:¹¹⁰⁹ 1922 թ-ին ԳԱԱ-ի

Տարի	Մուտք		Ելք								
	Ընդհանուր	Ընդհանուր	Այդ թվում մասնաճյուղերից			Աշխատակիցների այրիներին	Կառավարման ծախսեր	Սաների կրթ. համար	Պրոպագանդ. ծախսեր	Պարտքերի մարում	
	Ռուբլի	Կոպեկ	Ռուբլի	Կոպեկ	Սոֆիա	Խոյ					
1920	155543,81	155543,81	10972	4950	3000	2700	7200	37186,16	9982,50	11115,80	10151,81
1921	132611,99	132611,99			4000	3300	4721	55396,29	12383	19992,15	500

1106. Roedenbeck, Als ein Bote des herzlichsten Dankes, „Der Chrstliche Orient“, 1919, էջ 3:

1107. Զ. Թորոսյանը ԳԱԱ-ի ծախսերով Պոտսդամի «Վիկտորիա» գիմնազիայում ուսանում էր բժշկագիտություն, իսկ Լ. Աղայանը Բեռլինի հյուսնագործական դպրոցում հմտանում էր հյուսնագործության մեջ: Տե՛ս Besondere Mitteilungen, „Der Christliche Orient“, 1917, էջ 29: ԳԱԱ-ն նպատակ ուներ Պարսկաստանում իր գործունեությունը վերականգնելուց հետո նրանց ներգրավել այնտեղ կազմակերպվող աշխատանքներում: Անդ:

1108. Տե՛ս Herzliche Bitte, „Der Chrstliche Orient“, 1918, էջ 21:

1109. Ֆիլիպոպոլ և Սոֆիա ուղարկվող գումարները հատկացվում էին մահմեդական շրջաններում ավետարանական քարոզչության աշխատանքներին, որոնք այնտեղ իրականացնում էր Ավետարանյանի նախկին գործընկեր, հայ ավետարանական Գրիգոր Գևորգյանը:

գործունեությունը սահմանափակվում էր միայն պարբերականի լույս ընծայմամբ և նշված ուսանողների կրթության ծախսերի հատուցմամբ,¹¹¹⁰ իսկ տարեվերջին դրությունն այնքան անհուսալի դարձավ, որ մեկընդմիջտ դադարեց նաև պարբերականի հրատարակությունը:¹¹¹¹

1922 թ-ի հուլիսի 3-ին, երբ Ռյոդենբեքն արդեն մահացել էր,¹¹¹² հոգաբարձության կողմից տնօրենի պարտականությունները հանձնարարվեցին քահանա Վինկլերին:¹¹¹³ Միաժամանակ հոգաբարձությունից հեռացած դր. Դիտրիխի, Նեիրինգի և Վոլբերտի փոխարեն այնտեղ ընդգրկվեցին երկու նոր անձինք՝ դր. Լութեմանը և Հանս Շպիգելհաուերը:¹¹¹⁴ Այդ վերջին տեղաշարժերը, սակայն, նույնպես ԳԱԱ-ի տնտեսական դրությունը չբարելավեցին: Իրավիճակից այլ ելք չգտնելով՝ հոգաբարձությունը շարունակ ավելի էր հակվում որևէ կազմակերպության միանալու մտքին. հանգամանք, որ 1921 թ-ին և այդուհետ էլ դարձավ նրա նիստերում քննարկվող հիմնական օրակարգային թեման:¹¹¹⁵ Թվում է, թե այդ առումով այլընտրանք չէր կարող լինել, և ԳԱԱ-ին ոչինչ չէր խանգարում միանալ իր հիմնադրի նոր ընկերությանը, առավել ևս: որ պատերազմից հետո Լեփսիուսը նույնպես մեծ ցանկություն ուներ միավորել իր երկու կազմակերպությունները: 1922 թ-ին անձամբ ցուցաբերելով նախաձեռնություն՝ նա պրոֆ. Դայսմանի միջոցով ԳԱԱ-ի հոգաբարձությանն առաջարկեց «հարթել հին ճեղքվածքը» և միանալ իր «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությանը»:¹¹¹⁶ Վերջինս, սակայն, Լեփսիուսի առաջարկը մերժեց և միավորման խնդրանքով դիմեց Ֆրանկֆուրտի կոմիտեին:¹¹¹⁷ ԳԱԱ-ի այդ քայլի դեմ Լեփսիուսի կատարած վճռական բո-

1110. *Sb'u Dank und Bitte, „Der Christliche Orient“*, 1922, էջ 45-46:

1111. Այն 1917 թ-ից հրատարակվում էր քառորդ տարին մեկ անգամ:

1112. Ռյոդենբեքը մահացել է 1922 թ-ի մարտի 14-ին: *Sb'u Superintendent Roedenbeck, „Der Christliche Orient“*, 1922, էջ 1:

1113. *Sb'u Mitteilung*, անդ, էջ 38:

1114. Անդ:

1115. Schäfer R., *Geschichte...*, էջ 108:

1116. Lepsius J., *Erklärung, „Der Orient“*, 1923, էջ 42:

1117. Անդ: Լեփսիուսի վաղեմի գործընկեր պաստոր Է. Լոհմանն այդ ժամանակ Ֆրանկֆուրտի կոմիտեից արդեն հեռացել էր, և այն այդ շրջանում նախագահում էր Ֆ. Շուկարդտը: *Sb'u Verschiedene Anfragen, „Der Orient“*, 1925, էջ 13:

ղոքարկումներն էական արդյունք չտվեցին: Վերջնական վճռի իրավունքը վերապահվեց Գերմանական ավետարանական միսիաների հանձնաժողովին, որը պաշտպանեց հոգաբարձության նախաձեռնությունը:¹¹¹⁸ Լեփսիուսը կարողացավ միայն ետ ստանալ իր նախկին կազմակերպության զրադարանն ու արխիվի մի մասը,¹¹¹⁹ իսկ ինչ վերաբերում էր Թուրքիայում և Պարսկաստանում գտնվող ԳԱԱ-ի անշարժ սեփականությանը և կազմակերպության բարեկամների անվանացուցակներին ու հասցեներին, ապա հոգաբարձությունը դրանք փոխանցեց Ֆրանկֆուրտի միությանը:¹¹²⁰

ԳԱԱ-ի վերջին հրապարակումը մի փոքրիկ թերթիկ էր, որն անվանազրված էր «*Der Christliche Orient, Jahrgang Okt/Dezbr. 1923*», և որը կազմակերպության անդամներին հրավիրում էր մասնակցելու 1924 թ-ի հունվարի 17-ին կայանալիք վերջին, եզրափակիչ ժողովին:¹¹²¹ Այդ օրից այն փաստացիորեն դադարեց գոյություն ունենալ:



ԲԵՈՆՂԱՐԴ ԼԵՓՍԻՍԻ



ԼԵՈՊՈՒԼԴ ԳԱԶՉՈՒԿ



ՅԵՆԻ ՅԵՆԱՆԸ

1118. Lepsius J., Erklärung, „Der Orient“, 1923, էջ 43:

1119. Schäfer R., Geschichte..., էջ 108:

1120. Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 105:

1121. Schäfer R., Geschichte..., էջ 109:



§ 2

**ՈՒՌՅՎՅԻ ՄՎԱՆՎՃՅՈՒՐԸ
ԶԻՆԱԴՂՎՐԻՉ ՅԵՏՈ**

Թուրքական ճակատում զինադադարի հաստատումից և Անտանտի ռազմական ուժերի ներխուժումից փոքր-ինչ առաջ, 1918 թ-ի հոկտեմբերի 22-ին, Ֆ. Էքարտը Գերմանիա վերադառնալու նպատակով ֆաբրիկան հանձնեց Կյունցլերի տնօրինությանն ու իր ընտանիքի հետ Ուռհայից հեռացավ նոյեմբերի 8-ին հասնելով Կ. Պոլիս:¹¹²² Իր երկու երեխաների հետ միասին հիվանդանալով մալարիայով՝ Էքարտը հարկադրված եղավ մի քանի շաբաթ մնալ Կ. Պոլսի հիվանդանոցում և երբ ապաքինվելուց հետո, դեկտեմբերի 31-ին նազ էր բարձրացել հայրենիք ճանապարհվելու համար, զինադադարի հանձնաժողովի պահանջով նրա մեկնումն արգելվեց: Կ. Պոլսի թերթերից մեկում նրա դեմ հրապարակվել էր մի մեղադրանք, որտեղ նշված էր, որ նա Ուռհայի հայերին մատնել էր թուրքական սրին, կողոպտել նրանց ունեցվածքը և բացի այդ «որպես գերմանական լրտես և քողարկված հրետանային կապիտան դեկավարել էր հայկական թաղամասի զընդակոծումը»:¹¹²³ Ամենայն հավանականությամբ այդ մեղադրանքի համար հիմք էր ծառայել Էքարտի կողմից 1915 թ-ին ֆաբրիկան և այնտեղ մնացած հայերին թուրքերին հանձնելու իրողությունը, որի շարժառիթներն արդեն բավականաչափ պարզաբանվել են:¹¹²⁴ Եվ այնուամենայնիվ այդ զգալապես ուռճացված մեղադրանքը նրա համար պետք է դառնար ճակատագրական:

1122. Անդ, էջ 101: Նա այնտեղ հանդիպեց նաև իր եղբորը՝ Բրունո Էքարտին, որը պատերազմի վերջին երկու տարիներին իր ծառայությունն անցկացրել էր Բաղդադի երկաթուղու շինարարությունում: Տե՛ս Lepsius J., Franz Eckart, „Der Orient“, 1919, էջ 147:

1123. Անդ:

1124. Տե՛ս այս աշխատության 91-92 էջերը:

Էքարտը հանձնաժողովի պահանջով ձերբակալվեց և ներկալվեց Սարմարայի Պրինկիպո կղզում:¹¹²⁵ Երբ նշված մեղադրանքները Լեփսիուսին հայտնի դարձան, նա գործի դրեց իր բոլոր ջանքերը Էքարտին փրկելու համար: Նրա խնդրանքով ԱԳՆ-ն հեռագրով Էքարտի պաշտպանությունը հանձնարարեց Կ. Պոլսի գերմանական ներկայացուցչությանը, և միաժամանակ դիմեց նաև այնտեղ գտնվող շվեդական պատվիրակությանն ու American Bible House կազմակերպության ներկայացուցչությանը՝ խնդրելով հոգ տանել Էքարտի համար, որը «երկու տասնամյակ ամերիկացի միսիոներների հետ աշխատել էր Ուռուհայում»:¹¹²⁶ Լեփսիուսը լրորդ Ջ. Բրայսի միջնորդությամբ Անգլիայի ԱԳՆ-ի միջոցով Կ. Պոլսի՝ Անտանտի հանձնաժողովին ուղարկեց նաև մի պաշտպանական նամակ: Սակայն նրա ջանքերը որևէ արդյունք չտվեցին, քանի որ իրադարձություններն անհամեմատ արագ զարգացան: 1919 թ-ի մարտին կղզուց փախչելու և հայրենիք վերադառնալու փորձ կատարելիս Էքարտը բուլղարա-թուրքական սահմանի մոտ հրազենով սպանվեց մի թուրք ոստիկանի կողմից:¹¹²⁷

Ինչևէ, զինադադարի հաստատումից և Անտանտի կողմից Կ. Պոլսի գրավումից հետո Թուրքիայի գավառներն ուղարկվեցին կարգադրություններ մահմեդականների տներում գտնվող բոլոր հայերին, ներառյալ նաև մահմեդականների հետ ամուսնացած կանանց ազատ արձակելու և հայկական համայնքներին հանձնելու վերաբերյալ:¹¹²⁸ Այդպիսով երկար փափազված ազատությունը վերջապես իրականություն էր դառնում ողջ մնացած հայերի համար, և շուտով մեծ քաղաքներում, այդ թվում նաև Ուռուհայում ի հայտ եկան հարյուրավոր նոր որբեր և այրիներ, որոնց թիվը շարունակ ավելանում էր: Քանի որ Ուռուհայում հայկական համայնք չկար, այնտեղ ազատ արձակվողները տարվում էին Կյունցլերի և նրա կնոջ մոտ, որոնք

1125. Lepsius J., Franz Eckart, „Der Orient“, 1919, էջ 147:

1126. Անդ, էջ 147-148:

1127. Անդ, էջ 148: Հայերի ունեցվածքի կողոպտման «փաստը» քացահայտելու նպատակով հանձնաժողովի կողմից բռնագրավվել էր նաև նրա ուղեքեռը, որը Կ. Պոլսում այդպես էլ անհետ կորավ: Այն հայտնաբերելու և վերադարձնելու նպատակով Լեփսիուսի ու Էքարտի ընտանիքի կողմից հետազայում ձեռնարկված բոլոր ջանքերն անցան ապարդյուն: Անդ:

1128. Künzler J., Im Lande..., էջ 104:

ստանձնում էին նրանց խնամքն ու վերահսկողությունը: Անասելի զըրկանքների բովով անցած, մեծ մասամբ տաժանակիր աշխատանքի միջոցով իրենց օրվա հացը վաստակած կանայք և երեխաները մահմեդականների տներից վերադառնում էին ծայրահեղ հյուժված և զըրկալից վիճակում, հաճախ զուրկ նույնիսկ ամենաանհրաժեշտ հագուստներից:¹¹²⁹ Ուռուի ամերիկյան հաստատությունը, որ զինադադարից հետո ներկայացուցչական իրավունքով հանձնվել էր Կյունցլերի տնօրինությանը, նրա նախաձեռնությամբ դարձյալ վերածվեց որբանոցի՝ իր դռները բացելով անօթևան որբերի և այրիների առջև:¹¹³⁰ Ինչ վերաբերում էր, սակայն, նրանց սննդի և հագուստի հայթայթմանը, ապա Կյունցլերին վիճակված էր հաղթահարել գրեթե անհնարինը, քանի որ զինադադարից հետո ոչ մի բանկ այլևս դրամ բաց չէր թողնում, և փաստորեն արտերկրից օգնության միջոցների առաքման ճանապարհներն ամբողջովին փակվել էին:¹¹³¹ Ֆ. Է. քարտն իր մեկնումից առաջ ֆաբրիկան հանձնել էր Կյունցլերի տնօրինությանը:¹¹³² Ուստի վերջինս նախ վաճառեց այնտեղ մնացած գորգերը և բուրդը, իսկ այնուհետև, երբ այդ միջոցները նույնպես սպառվեցին, մեկնեց Չալեպ՝ հուսալով այնտեղից դրամ ձեռք բերել: Այնտեղ ևս մնալով ձեռնունայն՝ Կյունցլերը վճռեց դիմել մի համարձակ քայլի. շվեյցարական մի բանկում նա դուրս գրեց 10000 ֆրանկի մի չեկ, որը տեղում էլ վաճառեց՝ համոզված լինելով, որ շվեյցարացի բարեկամների կողմից այդ գումարը երբևէ կհատուցվեր:¹¹³³ Այդ դրամով նա կարողացավ երեխաների մեծացող բազմության համար համար զգալի քանակությամբ հագուստներ, անկողնային պարագաներ և սննդամթերք հայթայթել:¹¹³⁴ 1919 թ-ի հունվարին, երբ

1129. Künzler J., *Dreißig Jahre...*, էջ 78:

1130. Künzler J., *Im Lande...*, էջ 103: Այդ որբանոցն իր գործունեությունը դադարեցրել էր դեռ 1915 թ-ի հոկտեմբեր ամսին, երբ այնտեղ պահվող որբերն աքսորվեցին, իսկ ամերիկացի քարոզիչ Լեսլին ինքնասպանություն գործեց: Անդ, էջ 55-56:

1131. Անդ, էջ 105:

1132. Անդ, էջ 103:

1133. Künzler J., *Dreißig Jahre...*, էջ 79: Հետագայում շվեյցարացիներն իրոք այդ գումարը հատուցեցին: Անդ:

1134. Künzler J., *Das armenische Hilfswerk in Urfa und Umgebung*, „Der Orient“, 1919, էջ 37:

Կյունցլերի միջոցները կրկին ամբողջությամբ սպառվել էին, նա Լեփ-սիուսից ստացավ 26000 մարկ՝ կարողանալով շարունակել իր փեր-կարար աշխատանքները,¹¹³⁵ իսկ փետրվարի վերջին, երբ ամբողջապես նրա խնամքին ապավինած որբերի և այրիների թվաքանակը հասել էր 600-ի, իսկ դրանք դարձյալ սպառվել, նա դիմեց Հալեպում տեղակայված անգլիական ստորաբաժանումների ղեկավարությանը և ստացավ 15000 ֆրանկ՝ հնարավորություն ձեռք բերելով ևս երկու ամիս շարունակել իր գործունեությունը:¹¹³⁶

Ուռհայում հայերի թիվն առանձնապես աճեց 1919 թ-ի մարտի երկրորդ կեսից, երբ անգլիական ջոկատները մտան այնտեղ, և մինչ այդ այլ վայրերում, հատկապես Հալեպում թաքնված բազմաթիվ ուռհաբնակներ համարձակվեցին դարձյալ վերադառնալ:¹¹³⁷ Անգլիացիներն իրենց հետ բերեցին նաև մեծաքանակ գումարներ, որոնք տրամադրում էին Կյունցլերին և նրա կնոջը: Այդ միջոցներով հնարավոր դարձավ որբերի խնամքից զատ օգնել նաև աղքատներին և բացի այդ բարձր աշխատավարձով հավաքագրելով հարյուրավոր կանանց և տղամարդկանց՝ ձեռնամուխ լինել քաղաքի՝ փլատակների վերածված հայկական թաղամասի վերականգնմանը:¹¹³⁸

Հատկանշական է, որ չնայած մահմեդականներին կարգադրվել էր ազատել իրենց տներում պահվող բոլոր հայերին, սակայն նրանք չէին շտապում հրամանին ենթարկվել: Հիմնականում ազատ էին արձակվում հիվանդները, ծերերն ու տկարները, իսկ մյուսները կարող էին փրկություն գտնել միայն փախուստի միջոցով:¹¹³⁹ Կյունցլերը և իր կինը, սակայն, մեծ կարևորություն էին տալիս ֆիզիկապես առողջ «բանտարկյալների» ազատագրմանը, քանի որ, ինչպես նշում էր Կյունցլերը, «միայն տկարներով հայ ազգը չէր կարող վերակենդանանալ»: Ուստի պատահական չէ, որ նրանք իրենց բոլոր հնարավորություններով նվիրվեցին ազատագրման գործին: Երբ, օրինակ, տեղեկություն էր

1135. Անդ:

1136. Künzler J., *Dreißig Jahre...*, էջ 81:

1137. Անգլիացիներն Ուռհա հասան մարտի 24-ին: Անդ էջ 84:

1138. Անդ, էջ 84-85: Հայկական թաղամասի 2300 տներից օգտագործման համար որոշ չափով պիտանի էին միայն 50-ը: St'u Künzler J., *Im Lande...*, էջ 108:

1139. Անդ, էջ 104:

ստացվում մահմեդականների տանը գտնվող որևէ հայուհու մասին, նրանք այդ անմիջապես իրազեկում էին ոստիկանությանը՝ խնդրելով իրենց առաջնորդել այնտեղ: Այնուհետև տվյալ անձը ոստիկանության ուղեկցությամբ տեղափոխվում էր որբանոցի հաստատություն:¹¹⁴⁰

Կյունցլերը շարունակ հարկադրված էր դիմակայել վերադարձած հայ կանանց, մասնավորապես փախստականների հանդեպ ձեռնարկվող մահմեդականների հետապնդումներին, ուստի իր պաշտպանյալների անվտանգությունն ապահովելու համար նա դիմեց քաղաքազխիհն խնդրելով որբանոցը հսկողության տակ վերցնել: Նրա խնդրանքը բավարարվեց, և մահմեդական «պահանջատերերն» այդուհետ հարկադրված էին գործ ունենալ շուրջօրյա հերթապահությամբ այնտեղ գործող ոստիկանական պահակակետի հետ:¹¹⁴¹

Ինչպես արդեն տեղեկացվեց, թե կանայք և թե որբերը սկզբնապես ապրում էին ամերիկյան որբանոցի շենքում: Որոշ ժամանակ անց, սակայն, այդ հաստատության տարածքն այլևս չէր բավականացնում մարդկանց ընդունելու համար, որի հետևանքով Կյունցլերի նախաձեռնությամբ 1919 թ-ի մարտին որբերով բնակեցվեց նաև քաղաքի մոտ գտնվող հայկական վանքը:¹¹⁴² Ուռհայում հավաքված հայերի հոգևոր-կրոնական պահանջների բավարարման համար Կյունցլերը կարողացավ կարգի բերել նաև կիսավեր բողոքական եկեղեցին, որտեղ 1919 թ-ի փետրվարին կայացավ առաջին ժամերգությունը:¹¹⁴³

Որբերին և այրիներին աշխատանքով ապահովելու համար

1140. Եթե որևէ մեկը մահմեդականների մոտ էր գնացել իր երեխաների հետ, ապա վերջիններս նույնպես անկախ իրենց ցանկությունից պարտավոր էին հետևել նրան: Անդ, էջ 105:

1141. Անդ: 1918 թ-ի նոյեմբերից Կյունցլերի համձնարարությամբ ամերիկյան որբանոցում երեխաների խնամքը ստանձնեցին Ուռհայի կենդանի մնացած փոքրաթիվ հայ տղամարդկանցից մեկը՝ Եփրեմ Դումնազյանը (որը նախկինում եղել էր քարոզիչ ասորական բողոքական եկեղեցում), և նրա կինը: Տե՛ս Briefe von Bruder Künzler aus Urfa, „Der Christliche Orient“, 1919, էջ 19:

1142. Մինչ այդ Կյունցլերը հարկադրված եղավ այդ՝ ամբողջովին թալանված և կիսավեր կառույցը դարձյալ վերանորոգել: Տե՛ս Künzler J., Im Lande..., էջ 109:

1143. Բողոքական եկեղեցին, պատերազմի տարիներին ծառայեցված լինելով որպես զորանոց, ավելի բարվոք վիճակում էր գտնվում, քան մեծ լուսավորչական եկեղեցին, որը հիմնականապես ավերված էր: Անդ, էջ 111:

Կյունցլերի ջանքերով վերանորոգվեցին և դարձյալ սկսեցին գործել մանածագործարանը և կոշկակարանոցը, իսկ բողոքական եկեղեցու շենքը վերածվեց դպրոցի, որտեղ դասավանդում էր Ալմաստ անու-
նով մի հայ կին:¹¹⁴⁴ Հաստատությունն իհարկե մեծ անելիքներ ուներ բնականոն մանկությունից և ընտանեկան դաստիարակությունից եր-
կար ժամանակ զուրկ մնացած երեխաներին դարձյալ կարգապա-
հությանն ընտելացնելու համար: «Ծանր աշխատանք էր պահանջ-
վում բոլոր վարենացած երեխաներին կրկին դպրոցին և կանոնա-
վոր կյանքին վարժեցնելու համար,- նշում էր Կյունցլերը: - Նրանք
թուրքերից սովորել էին անգործությունը և դրան նույնքան լավ էին
տիրապետում, որքան իրենց վարպետները: Մուսուլմանների տնե-
րում անցկացրած երեք-չորս տարիները չէին կարող իրենց ազդեցու-
թյունը չթողնել ընկալուն հայերի վրա, և ես վախեցնում եմ, որ այդ
վատ ազդեցությունը դեռ երկար կգոյատևի»:¹¹⁴⁵

Հետպատերազմյան առաջին ամիսները Կյունցլերի համար հատ-
կանշվեցին նաև տքնաջան բժշկական գործունեությամբ: Քանի որ
դր. Ա. Աբուհայաթյանը 1918 թ-ից գտնվում էր Հալեպում, իսկ քաղա-
քում այլ բժիշկ չկար, զինադադարից հետո հիվանդների սպասար-
կունը ծանրացել էր բացառապես Կյունցլերի վրա:¹¹⁴⁶ Բարեբախտա-
բար պատերազմի ավարտից փոքր-ինչ առաջ հիվանդանոցը վերա-
դարձվել էր նրան և կարող էր դարձյալ ծառայեցվել իր բուն նպատա-
կին,¹¹⁴⁷ իսկ 1919 թ-ին այն ԳԱԱ-ի կողմից, որը նյութական ծանր վի-
ճակում գրեթե ձևական գոյություն էր պահպանում, հանձնվեց Հայաս-
տանի օգնության շվեյցարական միությանը՝ ստանալով շվեյցարա-
կան հաստատության կարգավիճակ:¹¹⁴⁸

Ինչևէ, Կյունցլերը միայն 1919 թ-ի առաջին հինգ ամիսներին կլինի-
կայուն կարողացավ սպասարկել շուրջ 2000 այցելուների, հատկաց-
նել 3000 դեղատոմս և բացի այդ 250 հիվանդների սպասարկել հի-

1144. Անդ, էջ 110:

1145. Անդ:

1146. Անդ, էջ 122:

1147. Անդ, էջ 103:

1148. Künzler J., Dreißig Jahre..., էջ 116:

վանդանոցում կատարելով 100 վիրահատություն:¹¹⁴⁹ Ապրիլին երբ Ուռհա ժամանեցին ամերիկյան Կարմիր խաչի «Near East Relief» կազմակերպության ներկայացուցիչները, նա հնարավորություն ստացավ կրճատել իր ծանրաբեռնվածությունը և ամերիկյան որբանոցում իր խնամքի տակ գտնվող ավելի քան 500 որբերին հանձնելով նրանց¹¹⁵⁰ ամբողջովին նվիրվել բուժսպասարկմանը: Քանի որ Կյունցլերը դրա համար բժշկի դիպլոմ չուներ, թուրքական տեսչական մարմինների նոր հետապնդումներից խուսափելու նպատակով նա 1919 թ-ի ապրիլին հիվանդանոցը հանձնեց Ուռհայում գտնվող անգլիական ջոկատների զինվորական բժշկի վերահսկողությանը՝ այդ կերպ ապահովելով աշխատանքների շարունակումը:¹¹⁵¹ Իսկ մայիսին Հայաստանի օգնության շվեյցարական միության հանձնարարությամբ Ուռհա մեկնեց դր. Ա. Ֆիշերը, որ հունիսի 16-ին հասնելով այնտեղ՝ դարձյալ ձեռնամուխ եղավ սպասարկման գործին:¹¹⁵² Այդ հերթափոխը Կյունցլերին հնարավորություն էր ընձեռում մտածել նաև իր սեփական հանգստի մասին, և հունիսի 19-ին նա իր ընտանիքի հետ

1149. Künzler J., Bericht über die letzte Arbeit des deutschen Missionshospitales in Urfa, „Der Christliche Orient“, 1919, էջ 28: Դեղագործի պարտականությունները կատարում էր հիվանդանոցի նախկին դեղագործի աշակերտը՝ Թորոս Ջարեհը: Նրանից բացի Կյունցլերին օգնում էին նաև չորս հիվանդապահուհիները, որոնց մասին արդեն հիշատակվել է: Անդ:

1150. Künzler J., Dreißig Jahre..., էջ 85: NER-ը մեծագույն ներդրումն ունեցավ եղեռնը վերապրած հայ ժողովրդի վերջին բեկորների փրկության գործում: Բավական է նշել, որ այդ կազմակերպությունն իր օգնության ծրագրի առաջին վեց տարիների ընթացքում, 1919-1925 թթ., Թուրքիայում և հարևան երկրներում հիմնված իր ընդհանուր թվով 229 որբանոցներում հավաքել և խնամում էր ավելի քան 130000 որբերի, որոնց 75 տոկոսը դեռ տասը տարին չէր բոլորել: Միաժամանակ այն հինգ տարի շարունակ նյութական օգնություն ցուցաբերեց շուրջ 500000 փախստականների՝ նրանց համար ստեղծելով գոյատևման պայմաններ: Այդ վիթխարածավալ փրկարար աշխատանքների համար կազմակերպության կողմից ծախսված գումարը նշված ժամանակամիջոցում կազմում էր մոտ 100 միլիոն ԱՄՆ դոլար: Տե՛ս Schäfer R., Geschichte..., էջ 111: Հմնտ. Lepsius J., Herr Christoffel und das Near East Relief Work, „Der Orient“, 1925, էջ 75:

1151. Künzler J., Im Lande..., էջ 123: Հմնտ. Schäfer R., Geschichte..., էջ 106: 1919 թ-ի փետրվարից հիվանդանոցում դեղագործի պարտականությունները կատարում էր Գարեգին Թուրեջյան անունով մի հայ: Տե՛ս Briefe von Bruder Künzler aus Urfa, „Der Christliche Orient“, 1919, էջ 19

1152. Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1919, էջ 41:

միասին վերադարձավ Շվեյցարիա:¹¹⁵³ Քանի որ նրա մեկնումից հետո Ուռհայուն օր. Յոլմեսի ղեկավարությամբ գործող ամերիկյան օգնության կոմիտեն որբերի խնամքի հետ մեկտեղ ստանձնեց նաև բնակչության օգնության աշխատանքները, դր. Ֆիշերը, որն Ուռհայուն միաժամանակ դր. Լեփսիուսի լիազոր ներկայացուցիչն էր, ժամանակավորապես կոմիտեին տրամադրեց նաև ֆաբրիկայի շենքը, որտեղ վերջինս ձեռնամուխ եղավ դեռ Կյունցլերի կողմից վերահիմնված արհեստագործական արտադրության ընդլայնմանը:¹¹⁵⁴ Իսկ ինչ վերաբերում էր իրեն՝ Ֆիշերին, ապա նա պետք է զբաղվեր հիվանդանոցի աշխատանքներով՝ Շվեյցարիայից ստանալով իր աշխատավարձի և ընթացիկ ծախսերի համար անհրաժեշտ միջոցները:¹¹⁵⁵

Վերջնական խաղաղության ուշացմամբ պայմանավորված անորոշության պարագայում Թուրքիայի ներքաղաքական իրադրությունը շարունակ ավելի անկայուն էր դառնում՝ լուրջ սպառնալիքներ ստեղծելով քրիստոնյաների համար: 1919 թ-ի ամռանը և աշնանը Ուռհայուն դեռ հարաբերական խաղաղություն էր տիրում, և բրիտանական կայազորի ճնշմամբ թուրքական կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի մահմեդականների տներից հայերի ունեցվածքը դուրս բերվեր, և դեռ գերության մեջ գտնվող հայ որբերն ու կանայք վերադարձվեին իրենց հարազատներին, եթե այդպիսիք կային, իսկ եթե ոչ, ապա ամերիկյան որբանոցին:¹¹⁵⁶ Նոյեմբերի 1-ին, սակայն, Ուռհայուն տեղակայված անգլիական զինված ուժերին փոխարինեցին ֆրանսիական ջոկատները, որոնք 1920 թ-ի փետրվարից հարկադրված էին դիմագրավել քրդական ջոկատների հարձակումներին և երկու ամիս շարունակվող թեժ մարտերից հետո ապրիլին գլխավին ջախջախվեցին:¹¹⁵⁷ Չնայած Ուռհայի հայերն այդ

1153. Künzler J., *Dreißig Jahre...*, էջ 88: Հմմտ. Schäfer R., *Geschichte...*, էջ 106:

1154. Lepsius J., *Not und Hilfe*, „Der Orient“, 1919, էջ 135:

1155. Անդ, էջ 134 -135:

1156. Vischer A., *Bericht über die Tätigkeit im Spital Urfa*, „Der Christliche Orient“, 1920, էջ 59:

1157. Անդ, էջ 59-61: Ֆրանսիական ջոկատների դեմ թեժ պայքար էր սկսվել նաև Մարզվանում, Այնթապում և արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի ու Սիրիայի բազմաթիվ այլ շրջաններում: Տե՛ս անդ, էջ 68:

մարտերի ընթացքում չեզոք դիրք էին զրավել, և ֆրանսիացիների պարտությունից ու հեռանալուց հետո նրանց կառավարության կողմից տրվել էին ապահովության երաշխիքներ, սակայն մահմեդականների թշնամական տրամադրությունների սաստկացման պատճառով նրանք ապրում էին մշտական երկյուղի և խուճապի մեջ:¹¹⁵⁸ Մահմեդականների տներից հայ կանանց և հայապատկան ունեցվածքի ազատման մասին այլևս խոսք չիմել չէր կարող: Ընդհակառակը, հայերին սկսեցին պահանջներ ուղղվել հանձնված ունեցվածքը և կանանց վերադարձնելու վերաբերյալ: Իրավիճակը խիստ պայթյունավտանգ էր, որի հետևանքով հայերը կենտրոնացել էին բացառապես հայկական թաղամասում և փորձում էին ըստ հնարավորին ներփակ ու մեկուսի կյանք վարել՝ իրենց զրկելով նաև աշխատանքի և վաստակի բազմաթիվ հնարավորություններից:¹¹⁵⁹

Այսպիսին էր, ահա, Ուռհայում ներքաղաքական զարգացումների ընդհանուր պատկերը դր. Ֆիշերի գործունեության ամիսներին: Եվ չնայած նա պատերազմական իրադարձությունների ընթացքում շարունակ հարկադրված էր բուժօգնություն ցուցաբերել նաև ֆրանսիացի և թուրք վիրավորներին, այնուամենայնիվ միաժամանակ կարողացավ արդյունավետ գործունեություն ծավալել խաղաղ բնակչության, մասնավորապես հայերի համար: 1919 թ-ի հունիսից մինչև 1920 թ-ի մայիսի 30-ն ընկած ժամանակահատվածում կլինիկայում նրա կողմից սպասարկվեցին 9063 հիվանդներ, որոնցից 8002-ը անվճար, իսկ 1061-ը՝ լրիվ կամ մասնակի վճարումներով:¹¹⁶⁰ Նույն ժամանակամիջոցում հիվանդանոցում բուժում և խնամք ստացան 577 հիվանդներ, որոնցից 406-ը՝ միանգամայն անվճար: Նրանցից 344-ը հայեր էին, 64-ը ասորիներ, 128-ը մահմեդականներ (50 թուրք, 62 քուրդ, 12 արաբ), իսկ 41 հոգի պատկանում էին ֆրանսիական ջո-

1158. Անդ, էջ 61: Ուռհայում 1920 թ-ին կային 4 հազար հայեր, որոնք գրեթե բացառապես այրիներ և որբեր էին: Stü Die Räumung Urfas durch die Franzosen, „Der Orient“, 1920, էջ 32: Ըստ Ֆիշերի վկայության, նրանց մոտ կեսն ուռհարձակ էր, իսկ մյուսները սերում էին երզրումից, Սվասից և այլ շրջաններից, սակայն հնարավորություն չունենալով վերադառնալ իրենց հայրենի վայրերը՝ մնացել էին Ուռհայում: Stü Vischer A., Bericht über die Tätigkeit im Spital Urfä, „Der Christliche Orient“, 1920, էջ 63-64:

1159. Անդ, էջ 60-61:

1160. Անդ, էջ 62:

կատներին:¹¹⁶¹ Համապատասխանաբար կատարվեց 969 վիրահատություն, ընդ որում վիրահատվածների մեծ մասը՝ 580 հոգի, դարձյալ հայեր էին, 115-ը ասորիներ, 214-ը մահմեդականներ (90 թուրք, 103 քուրդ, 21 արաբ), իսկ 56-ը ֆրանսիական սպաներ և զինվորներ: Դեղատանը մինչև 1920 թ-ի հունվարի վերջը (մյուս ամիսների վիճակագրական տվյալները բացակայում են) պատրաստվեցին 7080 դեղատոմսեր: Բացի այդ, 247 հիվանդներ դր. Ֆիշերի կողմից սպասարկվեցին տնային այցերի միջոցով:

Մինչև 1920 թ-ի մայիսի վերջը 3960 հետազոտություններ և համապատասխան բուժումներ կատարվեցին նաև Ուռհայի ամերիկյան որբանոցում, որտեղ օր. Հոլմեսի և երկու այլ ամերիկացիների կողմից խնամվող երեխաների թիվը 1920 թ-ի զարմանը հասել էր 800-ի:¹¹⁶² Անձնակազմը, որի օգնությամբ նրան հաջողվեց հասնել նման բարձր ցուցանիշների, բաղկացած էր երկու բժիշկներից,¹¹⁶³ վեց հիվանդապահուհիներից, դեղագործից և նրա օգնականից, երկու խոհարարուհիներից, մի կարուհուց, մի գնորդից, մի դռնապանից, մի ծառայից և մի բեռնակրից, որոնք բոլորը, բացառությամբ վերջինի, հայեր էին:¹¹⁶⁴

Ինչպես ցույց են տալիս վերոնշյալ թվական տվյալները, դր. Ֆիշերի և նրա օգնականների կողմից սպասարկվող մարդկանց մեծագույն մասը հայեր էին, չնայած նրանք Ուռհայի բնակչության մեջ բացարձակ փոքրամասնություն էին կազմում:¹¹⁶⁵ Նրանցից շատերին, որոնք բնակարան և ապրուստի միջոցներ չունեին, ապաքինման և

1161. Անդ:

1162. Անդ: Հմմտ., անդ, էջ 67:

1163. Աղբյուրներում անվանապես հիշատակվում է միայն նրանցից մեկը՝ Դր. Բեշյանը: Տե՛ս Vischer A., 25 Jahre unter den Armeniern in Urfa, „Der Orient“, 1923, էջ 34-35:

1164. Vischer A., Bericht über die Tätigkeit im Spital Urfa, „Der Christliche Orient“, 1920, էջ 63:

1165. Մահմեդական այցելուների նվազ թվաքանակի պատճառը Ֆիշերի համոզմամբ քրիստոնյա բժիշկների և դեղագործների դեմ որոշ մահմեդական բժիշկների կողմից կատարվող պրոպագանդան էր: Մահմեդականների շրջանում այն կարծիքն էր տիրում, որ քրիստոնյա, մասնավորապես հայ բժիշկները, կոեծխընդությունից ելնելով, իրենց կվճասեն: Անդ:

կազդուրման ընթացքում հնարավորություն էր ընձեռվում ամբողջությամբ ապավինել հիվանդանոցային խնամքին, որն օր. Յոլմեսի և նրա գործընկերների, ինչպես և Հալեպի Հայոց ազգային միության ցուցաբերած նյութական աջակցության շնորհիվ կազմակերպված էր քավական պատշաճ մակարդակով:¹¹⁶⁶

Ինչևէ, Ֆիշերի գործունեությունը Ուռհայում երկար չտևեց: Տեղեկանալով, որ շվեյցարական օգնության կոմիտեի հանձնարարությամբ Կյունցլերը դարձյալ պատրաստվում էր վերադառնալ Ուռհա, և միաժամանակ երկյուղ կրելով, որ ֆրանսիական ջոկատների դեմ բոլբոքվող պատերազմական իրադարձությունների պայմաններում այլևս հնարավոր չէր լինի նախատեսելի ժամանակահատվածում Թուրքիայից հեռանալ՝ նա հիվանդանոցի վերահսկողությունը հանձնեց օր. Յոլմեսին և մայիսի 30-ին, օգտվելով մեկնման մի պատեհ հնարավորությունից, իր կնոջ հետ միասին վերադարձավ Շվեյցարիա:¹¹⁶⁷

Հայաստանի օգնության շվեյցարական միության կողմից հրահանգավորված լինելով Ուռհայի հիվանդանոցը լուծարել և ակնկալվող՝ անկախ Հայաստանում հիմնել մի նոր շվեյցարական որբանոց՝ Յ. Կյունցլերը 1920 թ-ի օգոստոսին դարձյալ վերադարձավ Ուռհա:¹¹⁶⁸ Մի կողմից, սակայն, Սևրի պայմանագրի ձախողումը և մյուս կողմից Ուռհայի 4000-5000 հայերի բուժսպասարկումն ապահովելու անհրա-

1166. Անդ, էջ 67-68:

1167. Անդ, էջ 59:

1168. Künzler J., Letzter Bericht über das Spital in Urfa, „Der Orient“, 1923, էջ 29: Ա. Ֆիշերն այնուհետև Մյունխենում և Վիեննայում վերապատրաստման դասընթացներ անցնելուց հետո Բազելում շարունակեց զբաղվել թշկական գործունեությամբ՝ զուգահեռաբար ակտիվորեն աշխատակցելով Հայերի շվեյցարացի բարեկամների միությանը: Բացի այդ նա 1928 թ-ի հոկտեմբերի 4-ից դարձավ Լիբանանի հայ կույր որբերի օգնության շվեյցարական միության նախագահը: Ուռհայում, սակայն, դր. Ֆիշերը ծեռք էր բերել մի թոքային հիվանդություն, որից երբևէ չկարողացավ ապաքինվել, և որի հարաճումն բարդացման հետևանքով 1930 թ-ի հունիսի 6-ին, 53 տարեկան հասակում նա Բազելում վախճանվեց: Ա. Ֆիշերի կինը՝ Գերտրուդ Ֆիշերը, որն ամուսնու հավատարիմ ուղեկիցն էր եղել նրա ողջ կյանքի ընթացքում և նրա հետ միասին նվիրվել հայության վերքերի ամօքմանը, նրա մահից հետո երկար ժամանակ գործում էր որպես Հայերի շվեյցարացի բարեկամների միության վարչության անդամ: Նա մահացել է 1968 թ-ի նոյեմբերի 16-ին: Տես Meyer K., Armenien..., էջ 150, 154 և 251:

Ժեշտությունը նրան դրդեցին հրաժարվել հաստատությունը լուծարելու մտքից և մնալով Ուռհայում դր. Բեշյանի օգնությամբ շարունակել սպասարկումը: Այդ իհարկե այնքան էլ դյուրին չէր, եթե նկատի առնենք, որ 1921 թ-ին շվեյցարական կոմիտեն Կ. Պոլսում մի նոր աշխատաճյուղ հիմնելու նպատակով հրաժարվեց ստանձնել Ուռհայի հիվանդանոցի բյուջետային ծախսերը, և այն մնաց առանց ֆինանսավորման:¹¹⁶⁹ Չնայած դրան, Կյունցլերն այնուամենայնիվ 1921 թ-ին կարողացավ ապահովել բուժսպասարկման աշխատանքների բնականոն ընթացքը՝ գրանցելով բավականին բարձր ցուցանիշներ: Տարվա ընթացքում հիվանդանոցում բուժում ստացան 531 հիվանդներ, որոնցից 341-ը քրիստոնյաներ էին, այդ թվում՝ 138-ը հայ որբ երեխաներ: Միաժամանակ տեսակցությունների ընթացքում սպասարկվեցին 7524 այցելուներ, որոնցից 5038-ը քրիստոնյաներ էին, իսկ 1066-ը մահմեդականներ: Համապատասխանաբար անվճար են սպասարկվել 4834 քրիստոնյաներ և 351 մահմեդականներ: Դեղատանը մասնակի կամ լրիվ վճարմամբ հատկացվել է 5534, իսկ միանգամայն անվճար՝ 3136 դեղատոմս. և բացի այդ 527 դեղատոմս անվճար հատկացվել է որբանոցում գտնվող որբերին:¹¹⁷⁰ Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, վճարումները մեծ մասամբ կատարում էին մահմեդականները, և այդ հնարավորություն էր ընձեռում հատուցել նաև անվճարունակ քրիստոնյաների բուժման համար կատարվող ծախսերը:

Ինչևէ, քանի որ շվեյցարացի բարեկամները դադարեցրել էին Ուռհայի բուժսպասարկման ֆինանսավորումը, Կյունցլերը և իր կինը 1922 թ-ի սկզբին աշխատանքի ընդունվեցին ամերիկյան NER (Near East Relief) կազմակերպության՝ Ուռհայի մասնաճյուղում, որտեղ Կյունցլերը վարում էր հաշվապահական գործերը, և բացի այդ կնոջ հետ միասին զբաղվում որբերի խնամքով:¹¹⁷¹ Նա համապատասխանաբար հիվանդանոցի շենքը մի մասը հատկացրեց ամերիկյան որբանոցի որբերի բուժսպասարկման նպատակին, իսկ մյուս սենյակները, բացի դեղատնից և վիրահատարանից, ժամանակավորապես բնակեցվեցին նոր որբերով, որոնց թիվը շարունակ ավելանում

1169. Künzler J., *Letzter Bericht über das Spital in Urfa*, „Der Orient“, 1923, էջ 29:

1170. *Sb'u Aus Urfa*, „Der Christliche Orient“, 1922, էջ 30:

1171. Անդ:

էր: Բնակության նպատակով որբերին հատկացվեց նաև դր. Ֆիշերի Ուռուխայուն գտնվող առանձնատունը: Այնտեղ տեղափոխվեցին հիմնականում ամերիկյան հաստատության այն երեխաները, որոնք որբանոցում տեղ չլիներու պատճառով ժամանակավորապես տեղավորվել էին վրանների տակ:¹¹⁷²

Ինչևէ, երկրի ներքին զարգացումները օրեցօր ավելի աննպաստ էին դառնում որբախնամ և բարեգործական աշխատանքների համար: Քենալական կառավարությունը 1921 թ-ից սկսեց բացահայտ արգելքներ հարուցել Թուրքիայում գտնվող քրիստոնեական քարոզչական և բարեգործական ընկերությունների առջև հարկադրելով նրանց երկրից հեռանալ:¹¹⁷³ Այդ իհարկե վերաբերում էր նաև այն կազմակերպություններին, որոնք զբաղվում էին բացառապես հայ որբերի խնամքով: Միաժամանակ մահմեդական շրջաններում շարունակ վերելք ապրող ազգայնական տրամադրությունների պայմաններում քրիստոնյաների համար ստեղծվել էր խիստ վտանգավոր և անկայուն իրադրություն: Մարզվանում, Մարաշում, Հաճնում և այլ վայրերում տեղի ունեցած Նոր կոտորածները վկայում էին, որ քրիստոնյաները նաև խաղաղության հաստատումից հետո Թուրքիայում անվտանգության երաշխիքներ ունենալ չէին կարող:¹¹⁷⁴ Որբախնամ ամենամեծ՝ Near East Relief կազմակերպությունը, բնականաբար, առաջինների թվում պետք է մտահոգված լիներ անկանխատեսելի հետևանքներով հղի այդ իրավիճակով:¹¹⁷⁵ Որբերի խնամքը շարունակելու համար այն առժամանակ հարկադրված եղավ համաձայնել կառավարության ներկայացրած պահանջներին և յուրաքանչյուր քրիստոնյա երեխայի դիմաց իշխանություններին վճարել նաև մեկ թուրք երեխայի խնամքի համար անհրաժեշտ ծախսերը:¹¹⁷⁶ Որոշ ժամանակ անց, սակայն, պարզվեց, որ այդ գումարները նախանշված

1172. Անդ: Դեղատունը դեռ շարունակում էր սպասարկել բնակչությանը, սակայն հիվանդանոցի գործունեությունը դադարեցվեց, քանի որ այն ոչ ոքի, նաև ամերիկյան կազմակերպության կողմից նյութական աջակցություն չստացավ: Անդ:

1173. Schäfer R., Geschichte..., էջ 110:

1174. Lepsius J., Herr Christoffel und das Near East Relief Work, „Der Orient“, 1925, էջ 71:

1175. Անդ, էջ 71: Հմնտ. Lepsius J., Unser Waisenhausplan, „Der Orient“, 1923, էջ 35:

1176. Lepsius J., Herr Christoffel und das Near East Relief Work, „Der Orient“, 1925, էջ 71:

նպատակին չէին ծառայում՝ յուրացվելով թուրք պաշտոնյաների կողմից: Քանի որ հայ որբերի խնամքն այդ կերպ չափազանց թանկ էր դառնում, և բացի այդ նրանց անվտանգությունը թուրքիայում երաշխավորված չէր, NER-ը 1922 թ-ի գարնանը վճռեց թուրքիայում իր խնամքի տակ գտնվող որբերին տեղափոխել ոչ թուրքական անվտանգ տարածքներ, մասնավորապես Յունաստան և Սիրիա:¹¹⁷⁷ Հաշվի առնելով Կյունցլերի փորձառությունը և լեզուների իմացությունը՝ ընկերությունը նրան առաջարկեց մասնակցել այդ ծեռնարկի իրականացմանը, որը և վերջինս ընդունեց: Ապրիլին, երբ կառավարությունը հայ կանանց և երեխաներին պաշտոնապես թույլատրել էր թուրքիայից հեռանալ, Կյունցլերը ծեռնամուխ եղավ իր նոր առաջադրանքի կատարմանը՝ մինչև նոյեմբեր իր կնոջ հետ միասին հաջողությամբ իրականացնելով Ուռհայի, Մարոփնի, Դիարբեքիի և Խարպութի՝ թվով 8000 որբերի տեղափոխումը Սիրիա:¹¹⁷⁸ Նրանք որբերին տեղափոխում էին մինչև Ուռհայից 90 կմ հեռավորության վրա գտնվող Սիրիայի սահմանը, որտեղից վերջիններս ամերիկացիների ուղեկցությամբ մեկնում էին Հալեպ:¹¹⁷⁹

Աշնանը, երբ թուրքիայում բոլոր քրիստոնյաներին թույլատրվեց արտագաղթել,¹¹⁸⁰ երկրի տարբեր շրջաններում, այդ թվում նաև Ուռհայում գտնվող՝ հայության վերջին մնացորդները նույնպես սկսեցին հեռանալ հարևան երկրներ: Եկավ նաև Ուռհայի հիվանդանոցի և կլինիկայի փակման ժամանակը, որը տեղի ունեցավ 1922 թ-ի հոկտեմբերի 1-ին:¹¹⁸¹ Այնուհետև Կյունցլերը և իր կինը, ընդունելով NER-ի կառույցում իրենց գործունեությունը շարունակելու առաջարկը, մեկնեցին Լիբանան և այնտեղ 1923 թ-ի փետրվարի 6-ից ստանձնեցին

1177. Անդ, էջ 72:

1178. Künzler J., Dreißig Jahre..., էջ 104: Հմմտ. Lepsius J., Unsre 400 Waisenkinder, „Der Orient“, 1924, էջ 75:

1179. Հիվանդները և թույլերը մեկնում էին ավտոմեքենայով, առողջ փոքրիկները՝ սայլերով, իսկ տասը տարեկան և ավելի մեծ երեխաները մինչև Ուռհա ընկած ճանապարհին անցնում էին ոտքով, իսկ Ուռհայից մինչև Սիրիայի սահմանը մասամբ ոտքով և մասամբ սայլերով: Sb'u Letzte Nachrichten aus Urfa, „Der Christliche Orient“, 1922, էջ 51: Հմմտ. Künzler J., Dreißig Jahre..., էջ 95-96:

1180. Künzler J., Letzter Bericht über das Spital in Urfa, „Der Orient“, 1923, էջ 30: 1181. Անդ:

Բեյրութից 25 կմ հեռու գտնվող մի լեռնային գյուղում՝ Ղազիրում հիմնված նոր որբամոցի ղեկավարումը, որտեղ հավաքվել էին շուրջ 1500 հայ երեխաներ:¹¹⁸² Ճակատագրի բերումով շուտով այնտեղ պետք է ուղղվեր նաև Լեփսիուսի նոր փրկարար առաքելությունը:

1924 թ-ին Լեփսիուսի ընկերության տնտեսական դրությունը նկատելիորեն կայունանում էր: «Der Orient»-ի հրատարակությունը զգալիորեն բարելավվեց. այն թողարկվում էր երկու ամիսը մեկ անգամ, տարեկան բաժանորդագինը կազմում էր 2 մարկ (նոր դրամով),¹¹⁸³ իսկ 1925 թ-ի երկրորդ կեսից՝ 2,40 մարկ:¹¹⁸⁴ Կազմակերպության տարեկան անդամավճարը նոր դրամով կազմում էր 20 մարկ: Անդամներ էին դառնում նաև այն բարեկամներն, ովքեր տարեկան 20 մարկ և ավելի նվիրատվություններ էին կատարում կազմակերպությանը:¹¹⁸⁵ Ֆինանսական ճգնաժամի հաղթահարմամբ, այնուամենայնիվ, արտերկրում օգնության աշխատանքների վերահիմնման բոլոր խոչընդոտները չվերացան: Թուրքահայ փախստականների և որբերի զանգվածները գտնվում էին Անտանտի տերությունների, մասնավորապես Ֆրանսիայի մանդատային տարածքներում, որտեղ գերմանական կազմակերպությունները նույնիսկ բարեգործական նպատակներով մուտք գործել չէին կարող:¹¹⁸⁶ Այդ արգելքի հաղթահարման ճանապարհը մեկն էր. միանալ մի՝ քաղաքական խոչընդոտներից զերծ միջազգային կազմակերպության և գործել նրա կառույցում:¹¹⁸⁷

Առիթը կայացավ 1924 թ-ի օգոստոսին, երբ ժնևում կազմակերպվեց NER-ի հերթական համաժողովը, որին մասնակցեց և զեկուցմամբ հանդես եկավ նաև Լեփսիուսը: Համաժողովի ընթացքում (որը տևեց օգոստոսի 28-31-ը) ծանոթանալով և կապեր հաստատելով NER-ի

1182. Künzler J., Ein Gedächtnis-Waisenhaus, „Orient im Bild“, 1928, էջ 65: Ուռհայի գորգի ֆարրիկայի շենքն այնուհետև թուրք խուժանի կողմից ենթարկվեց թալանի և որոշ ժամանակ անց պետության կողմից բռնագրավվեց: St'u Lepsius J., Unsre 400 Waisenkinder, „Der Orient“, 1924, էջ 75:
 1183. St'u Mitteilungen, „Der Orient“, 1924, էջ 31:
 1184. Lepsius J., An unsere Leser!, „Der Orient“, 1925, էջ 128:
 1185. St'u Mitteilungen, „Der Orient“, 1925, էջ 125:
 1186. Schäfer R., Geschichte..., էջ 111:
 1187. Անը:

ներկայացուցիչների հետ՝ նա վճռեց ստանձնել այդ կազմակերպության հովանավորության տակ գտնվող որբերի մի մասի խնամքը:¹¹⁸⁸

Ընտրությունը կանգ առավ Ղազիրի որբանոցի վրա, որը գտնվում էր Լեփսիուսի վաղեմի փորձառու աշխատակցի՝ Յ. Կյունցլերի ղեկավարության ներքո, և NER-ի հետ կայացած փոխադարձ պայմանավորվածության համաձայն այդ որբանոցում ապրող 450 երեխաները հանձնվեցին Դր. Լեփսիուսի անվան արևելյան առաքելության խնամակալությանը:¹¹⁸⁹ Վերջինս մասնավորապես պարտավորվում էր հոգալ երեխաների սննդի և հագուստի ծախսերը, որոնք կազմում էին որբանոցի ընդհանուր ծախսերի մոտ կեսը, իսկ ինչ վերաբերում էր մյուս՝ բուժսպասարկման, կառավարման և դասավանդման ծախսերին, ապա դրանք պետք է շարունակեր կատարել NER-ը:¹¹⁹⁰

Ինչևէ, այն, թե ընկերության գործունեությունը որքան շեշտակի էր առաջադիմում, կարող են վկայել Դր. Լեփսիուսի արևելյան առաքե-

Տարեթիվ	Երբ								
	Ընդհանուր	Որսի հայապահպան աշխատանքներից	Օգնություն այրիներից	Վրտակալի ծախսեր	Ղաստվածություն	Սեմինար	Կառավարման ծախսեր	Պրոպագանդայի ծախսեր	Մնացորդ
1924	28763, 71	4355, 20				1230, 02	7861, 64	12897, 65	1891, 24
1924	147470,03	33569,30	879,60	4361,43	315,80	2101,11	32020,38	64965,63	8101,76

1188. Lepsius J., Unsre 400 Waisenkinder, „Der Orient“, 1924, էջ 73: NER-ի կողմից խնամվող որբերի ընդհանուր թիվը 1924 թ-ին հասնում էր 60 000-ի: Անդ, էջ 74: 1189. Անդ, էջ 74-75: Սկզբնական շրջանում, ինչպես տեղեկացվել է, Ղազիրի որբանոցում խնամվում էին 1500 որբեր: Հետագայում նրանց մեծ մասը տեղափոխվեց այլ որբանոցներ, և 1924 թ-ին այնտեղ մնացել էին 450-ը, որոնցից 105-ը կույր երեխաներ էին: Անդ, էջ 75: 1926 թ-ի սկզբին առանձին տներում բնակվող այդ կույր երեխաների խնամքը ստանձնեցին շվեյցարացիները, և փաստորեն ստեղծվեց նաև կույրերի առանձին որբանոց, որը Լեփսիուսի ընկերության ենթակայության ներքո չէր գտնվում: Տե՛ս Künzler J., April-Bericht 1926 von unserem Waisenhaus, „Der Orient“, 1926, էջ 98:

1190. Hetzel G., Aus der Arbeit, „Orient im Bild“, 1928, էջ 30:

լուքյան՝ 1924-25 թթ. եկամուտների և ծախսերի հետևյալ՝ հիմնական վիճակագրական տվյալները:¹¹⁹¹

Հատկանշական է, որ 1925 թ-ի եկամուտները շուրջ 5 անգամ գերազանցում էին նախորդ տարվա ցուցանիշները: Այդ հնարավոր դարձավ Լեփսիուսի և նրա գործընկերների լայնածավալ տեղեկատվական գործունեության շնորհիվ: Մեծ դեր խաղաց, անկասկած, նաև նրանց բազմանյա փորձառությունն ու աշխատանքների ճիշտ կազմակերպումը: Եթե, օրինակ, 1924 թ-ի զուտ եկամուտը կազմում էր մոտ 28 000 մարկ,¹¹⁹² ապա 1925 թ-ին այդքան զումար հայթայթվեց միմիայն շրջիկ զեկուցումների միջոցով:¹¹⁹³ Ուստի պատահական չէ, որ Լեփսիուսը 1925 թ-ի վերջին վճռեց շրջիկ զեկուցողների թվաքանակն ավելացնել, և եթե 1925 թ-ին այդ գործը վարում էին միայն Լ. Ռեյերն ու Վ. Ցիմերմանը, ապա տարեվերջին նրանց միացան ևս հինգը՝ Վիլլի Ջեզերը, Լիզա Ռայնմյուլերը, պաստոր Ֆ. Շթախը, պաստոր Յոսթենը և Գեորգ Միթցները:¹¹⁹⁴ 1925 թ-ին հնարավոր եղավ 5 անգամ ավելացնել նաև քարոզչության նպատակներին հատկացվող ծախսերը. հանգամանք, որ շատ ավելի առատ «բերք» էր խոստանում ապագայի համար:

Այսպիսով, հաջողությամբ հաղթահարելով ծանր ճգնաժամի տարիները՝ Լեփսիուսը 66 տարեկան հասակում, սակայն իր նախկին ավյունով դարձյալ ձեռնամուխ եղավ համապարփակ փրկարար աշխատանքներին, որոնք, ինչպես շուտով կլուսաբանվի, միայն այդ որբանոցով չէին սահմանափակվում և լայն ու համակողմանի ծավալում գտան նաև տարագիր հայության մյուս մեծ հանգրվանում՝ Սիրիայում:

1191. Sbn Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1924, „Der Orient“, 1925, էջ 30-31: Հմնտ. Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1925, „Der Orient“, 1926, էջ 96: «Ելք» գլխամասի առաջին սյունակում բերված տվյալների առնչությամբ հարկ է նշել, որ 1924 թ-ի հատկացումները կատարվել են բացառապես Կ. Յեպեի՝ հայերի ազատագրման աշխատանքին աջակցելու նպատակով, և Ղազիրի որբանոցին հատկացումներ չեն կատարվել: Իսկ 1925 թ-ի ցուցանիշը ներառում է թե Յեպեի աշխատանքներին և թե Ղազիրի որբանոցին կատարված հատկացումները: Անդ:

1192. Sbn 361-րդ էջի աղյուսակային ցուցանիշները:

1193. Schäfer R., Zur Jahresrechnung, „Der Orient“, 1926, էջ 95:

1194. Sbn Mitteilungen, անդ, էջ 46: Հմնտ. Dr. Lepsius Orient-Mission, անդ, էջ 65:



§ 3

**ԼԵՓՍԻՍԻ
ԵՎ ՆՐՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1920-ՎԿՎՆ ԹՎՎԿՎՆՆԵՐԻՆ**

1920-ական թվականներին, հասարակայնության ուշադրությունը բևեռելով բազմահազար հայ որբերի աղետալի վիճակի և օգնության աշխատանքների անհրաժեշտության վրա, Լեփսիուսը համակ ուշադրությամբ էր հետևում նաև խաղաղության գործընթացի զարգացմանը. մի գործընթաց, որը պետք է բախտորոշ նշանակություն ունենար հայ ժողովրդի դեմ գործված ոճրագործությունների դատապարտման և տասնամյակներ շարունակ շահարկվող Հայկական հարցի լուծման առումով: Հատկանշական է, որ զինադադարից հետո այդ որջան էլ մոտ և անխուսափելի էր թվում, այնուամենայնիվ Լեփսիուսը չէր շտապում կիսել հայկական վեց վիլայեթների սահմաններում նոր Հայաստանի ստեղծման հայկական շրջաններում թևածող հույսերը: «Թե արդյոք փախստականների զանգվածներին երբևէ կվիճակվի՞ վերադառնալ Թուրքիայի հին հայկական գավառները, թե արդյոք հայերին տրված խոստումները, որ գոնե արևելյան Անատոլիայի՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիի, Տրապիզոնի և Սվասի մարզերը, հայկական Կովկասի հետ միանալով, պիտի դառնան մի անկախ Հայաստան, երբևէ կիրականանա՞ն, գիտեն միայն Փարիզի աստվածները», - գրում էր նա 1919 թ-ի վերջին:¹¹⁹⁵

Լեփսիուսի համոզմամբ Անգլիան շահագրգռված էր Թուրքիային իր ազդեցության տակ պահել և «շատ չմասնատել»: Միացյալ Նահանգներն իր հերթին ի նպաստ հայ ժողովրդի միջամտելու միտում

1195. Lepsius J., Not und Hilfe, „Der Orient“, 1919, էջ 134:

չէր դրսևորում: Այդ իրավիճակում նա իրատեսաբար կասկածելի էր համարում, թե հայերի ցանկություններն ամբողջությամբ կիրականանային, և վեց հայկական մարզերը կհատկացվեին նրանց: Այնուհանդերձ, Լեփսիուսի կարծիքով եթե նույնիսկ ոչ այդ մարզերն ամբողջությամբ, ապա գեթ նրանց «մեկ երրորդն» անպատճառ հատկացվելու էր փոքրիկ Յայաստանի հանրապետությանը, որն ի վիճակի չէր կերակրել իր տարածքում կուտակված հարյուր-հազարավոր փախստականներին ու որբերին և «չորջափակված իր նեղ սահմանների մեջ» սպասում էր խաղաղության վեհաժողովի որոշումների: Նա նկատի ուներ մասնավորապես Վանի վիլայեթի մի մասը, Բիթլիս քաղաքը, Մուշի հարթավայրը և որոշ հատվածներ Էրզրումի վիլայեթից Էրզրում քաղաքի հետ միասին:¹¹⁹⁶

Ի վերջո, մեկ և կես տարվա սպասումներից հետո, 1920 թ-ի օգոստոսի 10-ին կնքվեց Արի հաշտության պայմանագիրը,¹¹⁹⁷ որի 88-րդ հոդվածում նշված էր, որ «Թուրքիան Յայաստանը ճանաչում է որպես ազատ և անկախ պետություն, ինչպես այդ արդեն արել են դաշնակից տերությունները», իսկ հաջորդ՝ 89 հոդվածով Յայաստանի և Թուրքիայի սահմանների որոշման իրավունքը, ինչպես նաև Յայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու հարցի լուծումը վերապահվում էր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին:¹¹⁹⁸

ԱՄՆ-ի սենատը, սակայն, դեռ 1920 թ-ի մայիսի 24-ին ձայների 11:4 հարաբերակցությամբ մերժել էր դաշնակից տերությունների՝ Սան Ռեմոյի զագաթաժողովի կողմից ապրիլի 25-ին Վ. Վիլսոնին ուղղված առաջարկն այն մասին, որ ԱՄՆ-ն ստանձներ Յայաստանի մանդատը: Ուստի հասկանալի է, որ չնայած ԱՄՆ-ի նախագահի կողմից սահմանագծումը տեղի ունեցավ,¹¹⁹⁹ այնուամենայնիվ աշխարհաքաղաքական ուժերի նոր վերա-

1196. Lepsius J., Die armenische Republik, „Der Orient“, 1920, էջ 2:

1197. Եսայան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երեվան, 1965, էջ 95:

1198. Տե՛ս Der türkische Friedensvertrag, „Der Orient“, 1920, էջ 41: Պայմանագրի մասին մանրամասն տե՛ս Լազյան Գ., Յայաստան և Յայ դատը, Երևան, 1991, էջ 210-213:

1199. 1920 թ-ի նոյեմբերի 22-ին ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ սահմանագծման աշխատանքն արդեն կատարվել էր. Արևմտյան Յայաստանում պետք է ազատություն ստանար Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներից առանձնացված՝ 90 000 քառակուսի կմ կազմող մի տարածք, որ միանալով արդեն ազատագրված շրջաններին՝ կազմելու էր 161 370 քառակուսի կմ: Տե՛ս Mejer K., Armenien..., էջ 135: Հմմտ. Լազյան Գ., Յայաստան եւ Յայ դատը, Երևան, 1991, էջ 213: Սահմանագծման մանրամասները տե՛ս անդ, էջ 215-224:

ծնավորման պայմաններում, ինչպես հայտնի է, վիժեցվեց, և Հայկական հարցի մի շարք նոր քննարկումներից հետո, 1921 թ-ի մարտի 12-ին Անգլիան և Ֆրանսիան, թուրքիայի պնդմամբ պայմանագիրը վերանայելով, ընդունեցին մի նոր բանաձև՝ այսպես կոչված «Լոնդոնյան արձանագրությունը», որով Հայկական լեռնաշխարհը մնում էր թուրքիային, և հայերին «Ազատ ու անկախ Հայաստանի» փոխարեն թուրքիայի արևելյան սահմանագծի վրա նախատեսվում էր տրամադրել մի՝ որոշ ինքնավարություն ունեցող «Ազգային օջախ», որի սահմանները պետք է որոշվեին Ազգերի լիգայի կողմից կազմված մի հանձնաժողովի կողմից:¹²⁰⁰

Չնայած այդ բանաձևը հավանության արժանացավ նաև Ազգերի լիգայի՝ 1921 թ-ի սեպտեմբերին և 1922 թ-ի սեպտեմբերին ժնկում կայացած համաժողովներում: ինչպես նաև 1922 թ-ի մարտին Փարիզում կազմակերպված՝ մեծ տերությունների Արևելյան համաժողովում,¹²⁰¹ այնուամենայնիվ բազմաթիվ քննարկումներից հետո այն ի վերջո նույնպես մնաց անույլ, քանի որ մեծ տերություններից ոչ ոք չհամաձայնեց ստանձնել ընդունված որոշումների իրականացման նախաձեռնությունը: Ի վերջո, 1923 թ-ի հուլիսի 24-ին Լոզանում կրնքված պայմանագրով հիշյալ «Ազգային օջախի» գաղափարը նույնպես մերժվեց, և Հայկական հարցը մեծ տերությունների քաղաքական օրակարգից վերջնականապես դուրս եկավ:¹²⁰²

Լեփսիուսը հույսերի ու հուսախաբությունների այդ դաժան շրջապտույտում շարունակ հայ ժողովրդի հետ էր՝ հրապարակախոսի, վեր-

1200. Lepsius J., Das betrogene Armenien, „Der Orient“, 1921, էջ 53: «Foyer national» (ազգային օջախ) արտահայտությունը փոխառվել էր Պաղեստինի վերաբերյալ կազմված սիոնիստական ծրագրից, ըստ որի Պաղեստինը պետք է մնար արաբական տիրապետության ներքո: Անդ:

1201. St'u Die Bestimmungen des Vertrags von Sevres und die Beschlüsse des Völkerbunds bezüglich Armeniens, „Der Orient“, 1922, էջ 7: Հմնտ. *Aufruf an die Friedenskonferenz zu Lausanne!*, անդ, էջ 94: Հմնտ. *Die Lage in Armenien*, անդ, էջ 43:

1202. Lepsius J., Die armenische Frage in Lausanne, „Der Orient“, 1923, էջ 2: Հմնտ. Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Երևան, 2001, էջ 25:

լուծաբանի և անաչառ քննադատի իր անհատնում ավյունն ի սպաս դնելով նրա շահերի պաշտպանությանը: Ուշագրավ է, որ Սևրի պայմանագիրը համարելով Թուրքիայի՝ որպես մեծ տերության փլուզման անշրջելի վկայությունը¹²⁰³ նա այնուամենայնիվ մեծ խորագագուստանք նախագգուշացնում էր վաղօրոք ոգևորության չտրվել, քանի որ եթե ԱՄՆ-ն Հայաստանի մանդատը չստանձներ, ապա վերջինս ստիպված պետք է լիներ ապավինել ինքն իրեն և միայնակ, սեփական ուժերով տիրանալ իր տարածքներին. մի բան, որ եթե ոչ անհնար, ապա խիստ անհավանական էր: Ավելին, նշում էր նա իր «Հայաստանը և տերությունները» հոդվածում, եթե նույնիսկ Վիլսոնը որոշարկեր Հայաստանին տրվող տարածքների սահմանները, ապա հայերը դարձյալ հարկադրված պետք է լինեին դրանք զենքով նվաճել Թուրքիայից, եթե չէին կամենում «սահմանափակված մնալ Արարատի ստորոտի կովկասյան հանրապետության չափազանց նեղ տարածքում»:¹²⁰⁴

Լեփսիուսի համոզմամբ թե մոտ անցյալը և թե ներկան բավականաչափ հիմքեր ընձեռում էին այդ տեսակետի հիմնավորման համար: Ցարը նույնպես պատերազմի սկզբում խոստանում էր հայերին ազատագրել, սակայն, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, նրան Հայաստանը պետք էր առանց հայերի: Ռուսաստանի արտգործնախարար Լոբանովի կողմից ժամանակին արտահայտված այդ ըմբռնումը, Լեփսիուսի համոզմամբ, պատերազմից հետո որդեգրվել էր նաև բրիտանական քաղաքականության կողմից: Նա այդ առումով խիստ բնութագրական էր համարում բրիտանական համայնքների պալատում Հայկական հարցի առնչությամբ Լլոյդ Ջորջի ունեցած ելույթը. «ՂԺվարությունը կայանում է նրանում, որ այն մարզերում, որոնք մենք կամենում էինք տալ Հայաստանին, և որոնք նրա պատմական սահմաններին համապատասխանում են, այլևս հայկական բնակչություն չկա: Եթե մենք դրանք տանք նրան, ո՞վ կիրագործի մեր որոշումը: Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան... չեն ուզում իրենց ծանրաբեռնել դրանով: Մենք եվրոպայում զբաղված ենք և չենք կարող մեր գնդերը ջլատել հայերի համար տարածքներ գրավելու նպատակով, առավել ևս, որ գրավումը հեշտ չի լինի, քանի որ երկի-

1203. Lepsius J., Der türkische Friedensvertrag, „Der Orient“, 1920, էջ 32:

1204. Անդ, էջ 38:

որ առատ է լեռներով և կիրճերով: Հայաստանի հանրապետությունը, անշուշտ, կարող է իր սահմանները պաշտպանել, սակայն եթե մենք նրան ասենք՝ դուք ինքներդ ձեզ համար վերցրեք այդ տարածքները, նրանք դրա համար բավականաչափ ուժ չունեն...»:1205

Առավել ուշագրավն այն է, որ Լեփսիոսն այդ կանխատեսումները կատարում էր 1920 թ-ի ամռան սկզբին, պայմանագրի ստորագրումից դեռ ամիսներ առաջ: Ի փաստարկումն իր տեսակետների նա վկայում էր նաև փոքրիկ Հայաստանի հանրապետության օրինակը, որը եթե կարողացավ «թուրքերի, թաթարների և բուլղիկների» դեմ իրեն հաստատել, ապա դրա համար պարտական էր բացառապես «հայ զինվորների քաջությանը և իր դիվանագետների հմտությանը, որոնք վաղուց հասկացել են, որ դաշնակիցներից ոչ մի օգնություն սպասել չեն կարող»:¹²⁰⁶

1921 թ-ի մարտի 12-ի բանաձևի ընդունմամբ պարզ դարձավ, որ Լեփսիոսի վերապահությունները միանգամայն հիմնավոր էին, և «փոքր ազգերի ազատարարները», որոնք հայերին «ոսկու լեռներ» էին խոստանում, այժմ նրանց պահանջներին գեթ մասնակի բավարարում տալու մտադրություն չունեին: Ինչ վերաբերում էր Լոնդոնյան բանաձևով խոստացվող «Ազգային օջախին», ապա Լեփսիոսի հանդգամբ ոչ անկախ նման վարչատարածքային միավորի ստեղծումը և գոյատևումը Թուրքիայում անիրատեսական և անիրագործելի էր: «Ո՞վ պետք է հոգ տանի, որ Կովկասի սովահար 300-400 հազար հայ փախստականները ետ տարվեն իրենց այդ «հայրենիքը», - գրում էր նա իր՝ 1921 թ-ի մայիսին հրատարակված «Խաբված Հայաստանը» հոդվածում,- ոչ ոք: Թուրքերն անկասկած տեղի չեն տա: Ո՞վ նրանց այդ կհարկադրի: Ոչ ոք: Ուրեմն հայերը ստիպված

1205. Անդ, էջ 37: Մեծ Բրիտանիայի պատգամավոր Չորացի Ռումբոլդի, քահանա Կրաֆտ-Բոնարդի և Էդուարդ Նավիլեի՝ ժնևում կայացած մի զրույցից Հայկական հարցի առնչությամբ մեծ տերությունների հանցավոր անգործունեության «արդարացմանը» միտող՝ արծանահիշատակ հատված է ներկայացնում նաև Կ. Մեյերը. «Թուրքը տեղի է տալիս միայն ուժին, բայց մենք չենք կարող այդ նրան հարկադրել: Այսօր հայերի համար դարձյալ պատերազմ սկսելն անհնար է: Մենք չենք կամենում ուրանալ մեր ստանձնած պարտավորությունները, սակայն ի վիճակի չենք դրանք իրագործել: Մեզ այլ բան չի մնում, քան թուրքերի պահանջները բավարարել: Պարզ է. այդպիսով հայերը զոհաբերվում են: Տե՛ս Meyer K., Armenien..., էջ 142:

1206. Տե՛ս Lepsius J., Der türkische Friedensvertrag, „Der Orient“, 1920, էջ 37:

պետք է լինեն անծամբ նվաճել իրենց «Ազգային օջախը» (որը պետք է լինի թուրքական ենթակայության ներքո)»:¹²⁰⁷ Եթե, սակայն, հայերը նույնիսկ փորձեին դա անել, շարունակում էր իր միտքը զարգացնել Լեփսիուսը, ապա Անտանտն անկասկած այդ կհամարեր խաղաղության ոտնահարում, քանի որ անգլիացիները և ֆրանսիացիները կամենում էին թուրքերի հետ գործարքներ կատարել և իրականացնել իրենց «սուրբ երդումն» այն մասին, որ թուրքերն այլևս չպետք է իշխեն քրիստոնյա ազգերի վրա: Յետևաբար, ըստ Լեփսիուսի, մնան «օջախի» ստեղծումն անհնար էր, և թուրքերը շարունակելու էին երկիրն իրենց պահել, իսկ քրիստոնյաները՝ մնալ վտարանդի:¹²⁰⁸

Ստեղծված իրավիճակը Լեփսիուսին համակել էր նոր աղետների և հուսախաբությունների ծանր նախազգացումով: «Արդյո՞ք քրիստոնյաների խիղճը համաշխարհային պատերազմի պատճառով այն աստիճան է տկարացել և բթացել, որ իրավունքն ու մարդկայնությունը դարձել են դատարկ խոսքեր,- գրում էր նա իր 1922 թ-ի ամռանը հրատարակված «Quo usque tandem?» հոդվածում: - ...Արդյո՞ք «դաշնակից և միացյալ տերությունները», որոնք երաշխավոր են եղել Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանության համար, դրա ներքո իրոք այլ բան չեն հասկացել, քան մահմեդական գերեզմանափորների և քրիստոնյա զանգվածների գերեզմանների պաշտպանությունը...»:¹²⁰⁹

Յետագա ամիսները զարմանալի ճշգրտությամբ փաստեցին Լեփսիուսի՝ նաև այդ կանխատեսումները: Եվ այնուամենայնիվ նա Չայկական հարցի վերոնշյալ զարգացումների հանդեպ հայեցողական կեցվածք չէր որդեգրել, այլ գործադրում էր իր բոլոր ջանքերը անհավանականն իսկ հնարավոր դարձնելու և ընդունված որոշումների իրականացմանը հասնելու նպատակով: Նրա նախաձեռնությամբ, օրինակ, 1922 թ-ի նոյեմբերի 15-ին Բեռլինից 272 ստորագրություններով մի ընդարձակ կոչ հղվեց Լոզանի համաժողովին, որտեղ վերջինիս ուշադրությունը հրավիրվում էր աշխարհասփյուռ հայերի ծանր դրության, նրանց իրավունքների և խոստացված «Ազգային օջախի» ստեղծման անհրաժեշտության վրա:¹²¹⁰ «Նրանք այլևս չեն կարող տանել իրենց

1207. Lepsius J., Das betrogene Armenien, „Der Orient“, 1921, էջ 53:

1208. Անդ, էջ 53-54:

1209. Lepsius J., Quo usque tandem?, „Der Orient“, 1922, էջ 57:

1210. Stü Aufruf an die Friedenskonferenz zu Lausanne!, „Der Orient“, 1922, էջ 93-96:

տառապանքների բեռը, և մենք էլ մեր լուրջան բեռն այլևս չենք կարող տանել...- նշված էր այդ կոչում:- Այս հանդիսավոր պահին, երբ վտանգված է մի ողջ ազգի գոյատևումը, մեր ծայնը ոչ մի գնով չպետք է խեղդվի նյութական, քաղաքական շահերով տարված եսականության կողմից: Մենք ավելի շուտ համոզված ենք. որ այդ շահերը, ինչպես էլ դրանք հիմնավորված լինեն, միայն այն դեպքում կարող են իրավացի լինել. երբ իրավունքի և մարդկայնության համար կատարվող նախագուշացման կանչը անհետևանք չի կորչում: Այն, ինչ մենք հայերի համար պահանջում ենք, մի անկախ «Ազգային օջախ» է, որի անվիճելի իրավունքը այդ հնագույն ժողովուրդին այսօր ավելի, քան երբևէ, ունի: ... Մենք մեր ծայնը միացնում ենք բոլոր ազգերի՝ հայերի բարեկամների ծայներին այն պահանջով, որ հայ ժողովրդին օգնություն ցուցաբերվի՝ տիրանալու իր իրավունքին: ... Մենք չենք կարող հանդուրժել այն միտքը, որ հայ ժողովուրդը միակն է, որն իր միլիոնավոր զավակներին զոհաբերելուց հետո կարող է դարձյալ զրկված լինել իր իրավունքներից և ազատությունից»: 1211

Կոչի հեղինակները, որոնց թվում էին պրոֆ. Աղուֆ ֆոն Յառնակը, Արմին Վեգները, Թոմաս Մանը, Էվալդ Բանզեն, պրոֆ. Յոզ. Մարկվարտը, դր. Մարտին Նիպագեն, պրոֆ. Յուլիուս Ռիխտերը և բազում այլ համբավավոր գրողներ, եկեղեցականներ, մշակութային ու քաղաքական գործիչներ, Սևրի խաղաղության հետ կապված՝ «շատ ավելի մեծ սպասումներից» հետո «Ազգային օջախի» ստեղծումը համարում էին միակ և վերջին միջոցը, որը կարող էր աշխարհասփյուռ հայությանը հաստատուն ապագա և հայերին ու թուրքերին խաղաղ համագոյակցության հնարավորություն ընձեռել: Նրանք այդ կարևոր էին համարում նաև հարյուր հազարավոր որբերի ապագան ապահովագրելու առումով. որոնք ժամանակավոր կացարաններում սպասում էին խաղաղության հաստատմանը՝ «իրենց խնամքը և դաստիարակությունը նոր հայրենիքում ստանալու համար»: 1212

Ինչևէ, այդ սրտառուչ կոչը նույնպես անկարող եղավ հակազդել «նյութական շահերի» գերակայությանը: Լոզանում, ինչպես հայտնի է, «Ազգային օջախի» հետ կապված հայ ժողովրդի և նրա բարեկամների վերջին

1211. Անդ, էջ 93-95:

1212. Անդ, էջ 94:

հույսերը ևս հորս ցնդեցին, իսկ Հայկական հարցը մեծ տերությունների քաղաքականության օրակարգից վերջնականապես դուրս եկավ:¹²¹³

Լեփսիուսը Հայկական հարցի այդ տխրահռչակ «լուծման» և համաժողովի վերաբերյալ իր նկատառումներն ամբողջականորեն ներկայացրեց իր «Հայկական հարցը Լոզանում» և «Իրադրությունը Հայաստանում» հոդվածներում, որոնք հրատարակվեցին 1923 թ-ի սկզբին: Նրա համոզմամբ. Լոզանի համաժողովը ոչ այլ ինչ էր, քան տասնամյակներ ի վեր դիվանագետների «խաղազնդակը» և մեծ տերությունների «կռվախնձորը» դարձած Հայկական հարցի շահարկումների տրամաբանական ավարտը: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևելքի քրիստոնյաների «հովանավորներն» իրենց քաղաքական շախմատի տախտակի վրա հայ զինվորին շարունակ այս ու այն կողմ էին մղում, որպեսզի, երբ իրենց «եսական» շահը պահանջեր. նրան զոհաբերեին, նշում էր Լեփսիուսը: Եվ այդ զոհաբերման արարողությունը կատարվեց Լոզանում: Հայկական հարցի և հայ ժողովրդի ողբերգությունների պատմությունը Լեփսիուսի գնահատմամբ սպառիչ կերպով փաստում էր, որ մեծ տերությունների քաղաքագետները, «ճամարտակելով» քրիստոնեության և մարդասիրության մասին, իրականում հետապնդում էին միայն իրենց նյութական շահերը. քաղաքագետներ, նշում էր նա, որոնք «երբ մարդասիրությունից են խոսում, նկատի ունեն իրենց ֆինանսական գործարքները, իսկ երբ արդարությունից են խոսում՝ նավթը»:¹²¹⁴

Իր մեկ այլ «Շուռ տված խաչակրաց արշավանքը» հոդվածում սպանիչ ծաղրով ներկայացնելով հայ ժողովրդի հովանավորությունը ստանձնած տերությունների խոսքի և գործի հակասությանը՝ Լեփսիուսը 1895-1923 թթ. միջև ընկած ժամանակամիջոցում նրանց վա-

1213. «Համաժողովի ելքը է և կմնա անզոհացուցիչ,- նշում է Կ. Մեյերը,- քանի որ Լոզանի պայմանագիրը հենվում է այն կեղծիքի վրա, որ հայեր այլևս գոյություն չունեն: Այդպիսով այն ո՛չ խաղաղությանն է ծառայում, ո՛չ արդարությանը: Արդյունքում հայերի դրությունն այնքան ողբերգական դարձավ, որ հազիվ թե կարելի է պատկերացնել: Թուրքական լծի սարսափներին և հետպատերազմյան տարիների անապահովությանն այժմ հաջորդեցին անհայրենիք փախստականների տառապանքները...»: St'u Mejer K., Armenien..., էջ 143:

1214. St'u Die armenische Frage in Lausanne, „Der Orient“, 1923, էջ 3:

րած քաղաքականությունը բնութագրում էր որպես ութերորդ խաչակրաց արշավանք, որի կարգախոսը Արևելքի քրիստոնյաների պաշտպանությունն էր, սակայն նպատակն, ի տարբերություն նախկին խաչակրաց արշավանքների, «նավթահանքերի և քարածխի պաշարների» ազատագրումը: Ուստի նրա հանդգնամբ զարմանալի չէր, որ հայ ժողովրդի շահերի այդօրինակ «պաշտպանությունը» շարունակ հանգեցնում էր նրա դրության վատթարացմանը. մի գործընթաց, որն իր հանգուցալուծումը ստացավ աքսորի անապատներում և Լոզանում:¹²¹⁵ «Անտանտի կառավարությունների համար հավերժական խայտառակություն կմնա այն, որ նրանք, իրենց սանկցիաներով և վերահսկիչ հանձնաժողովներով քրիստոնյա Գերմանիայի հետ վարվելով *a la turca*, հաղթած թուրքիային թուլատրեցին իր քրիստոնյաներին օրենքից դուրս հայտարարել և աքսորների, կոտորածների ու վտարումների պատերազմում փորձված համակարգը մեծագույն մասշտաբներով շարունակել, մինչև ի վերջո անտանտի հավանությամբ քեմալականների կողմից ողջ Փոքր Ասիայի քրիստոնյա բնակչությունը վերացվեց»:¹²¹⁶

Այնուամենայնիվ Լեփսիուսն այն կարծիքին էր, որ թուրքիան իր հայահալած քաղաքականությամբ ինքնակամ դատապարտվեց տրևտեսական փլուզման, քանի որ նրա տնտեսության հիմնական լուծը կրում էին հայերը: Մինչդեռ վերջիններս իրենց բնածին տաղանդով դարձյալ կկարողանան ասպարեզ գտնել իրենց «անխոնջ աշխատասիրության համար», նշում էր նա, և այն աստիճան ամուր արմատներ նետել, որ միայն «Աստված գիտի, թե ով ավելի երկար կյանք կունենա, հայ ժողովուրդը, թե՞ նրա դահիճները»: Ավելին, Լեփսիուսի հանդգնամբ Հայկական հարցը Լոզանում ոչ թե լուծվել, այլ միայն առկախվել էր, և թուրքիան չկարողացավ օգտագործել նվազագույն կորուստներով այդ հարցից մեկընդմիջտ ազատվելու իրենց տրված պատմական հնարավորությունը, որի համար նա ապագայում ստիպված պետք է լիներ անհամեմատ ավելին հատուցել: «Թուրքիան հնարավորություն ուներ, Հայաստանի հանրապետությանը մի տարածք զիջելով կամ Կիլիկիայի մի մասում հայ փախստականների համար հայկական «Օջախ» ստեղծելով, նվազագույն կո-

1215. St'ü Lepsius J., Der umgekehrte Kreuzzug, „Der Orient“, 1922, էջ 98-101:

1216. Lepsius J., Unser Waisenhausplan, „Der Orient“, 1923, էջ 37:

րուստների գնով հայերին հաշտեցնել, - ընդգծում էր Լեփսիուսը,- իր գործած անհրավությունները որոշ չափով ուղղել և ամեն դեպքում Չայկական հարցից ընդմիջտ ազատվել: Սակայն նա այդ նպաստավոր առիթը չօգտագործեց: Չայկական հարցը հետաձգվել է, բայց չի վերացել, և այն ցանկացած ժամանակ դարձյալ ի հայտ կգա, երբ այս կամ այն պետությանն անհրաժեշտ կլինի Թուրքիայում նվաճումներ կատարելու համար այն օգտագործել որպես պատրվակ: Այդ ժամանակ կհիշեցվեն նաև Վիլսոնի սահմանները և հայկական ջարդերը: Քանի դեռ Չայկական հարցը լուծված չէ, այն շարունակ, ինչպես Դանոկյան սուր, կճոճվի Թուրքիայի գլխավերևում, մինչև վերջապես ասիական Թուրքիայի համար կդառնա նույնը, ինչ հունական կամ բուլղարական հարցն է եղել եվրոպական Թուրքիայի համար»: ¹²¹⁷

Ապագան անշուշտ պետք է փաստեր, թե որքան իրատես և արդիական էին Լեփսիուսի գնահատումներն ու կանխատեսումները, որը հետագայում շարունակում էր ակնդետ ուղեկցել հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին և նրա հետ միասին չհաշտվելով Լոզանի համաժողովի տխրահռչակ որոշումների հետ իր կարողությունն ի սպաս դնել նրան հետադուր ևս զորավիգ լինելու: Ըստ այդմ պարբերականը շարունակում էր իր էջերը լայնորեն տրամադրել արևմտահայության ապրած ողբերգությունների, ինչպես նաև սփյուռքում և խորհրդային Չայաստանում տիրող իրադրության լուսաբանմանը: ¹²¹⁸

Լեփսիուսի հրապարակախոսության հիշյալ շրջանն, իհարկե, չի կարող ամբողջանալ առանց հայտնի դատավարությանը նրա ունեցած մեծանշանակ մասնակցության լուսաբանման: 1921 թ-ի մարտի 15-ին Բեռլինում (Չարդենբերգի փողոցում) Սողոմոն Թեհլերյանի կողմից ատրճանակի կրակոցներով սպանվեց Թուրքիայի նախկին ՆԳ նախարար և մեծ վեզիր Թալեաթը: ¹²¹⁹ Սենսացիոն այդ իրադարձությունը, որը մեծ աղ-

1217. Տե՛ս Die Lage in Armenien, անդ, էջ 18-19:

1218. Տե՛ս Lepsius J., Krieg und Frieden, „Der Orient“, 1924, էջ 1-7; Th. W., Der Untergang von Hadjin, անդ, էջ 7-14; Die Lage in Armenien, անդ, էջ 37-48; Lepsius J., Das Ende des türkischen Kalifats, անդ, էջ 29-31; Abeghian A., Die Armenische Diasphora, անդ, էջ 65-69; Lepsius J., Herr Christoffel und das Near East Relief Work, „Der Orient“, 1925, էջ 70-78 և այլն:

1219. Տե՛ս Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, սղագրական զեկուցում, երևան, 1990, էջ 3:

մուկ հարուցեց ոչ միայն Գերմանիայում, այլև Թուրքիայում¹²²⁰ կախված դատական գործընթացի ելքից, կարող էր դառնալ բարոյական մեծ հաղթանակ և կամ հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին եապես վնասել նրա միջազգային վարկը: Այդ գիտակցում էր նաև Լեփսիուսը, որը, իրավական գաղտնի խորհրդական, դատապաշտպան Ադոլֆ ֆոն Գորդոնի միջնորդությամբ իբրև փորձագետ մասնակցելով դատավարությանը, իր բոլոր հնարավորությունները գործադրեց արդարությանը և Թեհլերյանին սատար լինելու համար:¹²²¹

Չունիսի 2-ին. երբ դատարանի նախագահը Լեփսիուսին խնդրեց իր եզրակացությունը ներկայացնել Թեհլերյանի և երկու հայ վկաների ներկայացրած տեղեկությունների հավաստիության վերաբերյալ, վերջինս հանդես եկավ մի ընդարձակ գեկույցով, որտեղ փաստերի շարադրանքին զուգահեռ մանրամասն պարզաբանումներ էին կատարվում նաև աքսորի իրականացման բուն շարժառիթների, բնույթի, ընթացքի և հետևանքների վերաբերյալ:¹²²² Թուրքիայի՝ 1 400 000 աքսորված հայերից միայն 10 տոկոսը կարողացավ հասնել աքսորավայր, նշում էր Լեփսիուսը, մինչդեռ 90 տոկոսը ճանապարհին սպանվեց կամ, բացառությամբ առևանգված կանանց և երեխաների, զոհ դարձավ քաղցին ու ճանապարհի զրկանքների: Ինչ վերաբերում էր աքսորավայր հասածներին, ապա նրանք ևս ոչնչացվեցին սովահարության և պարբերական կոտորածների միջոցով: «Երբ համակենտրոնացման ճամբարները նոր շարասյուններով էին լցվում,- նշում էր նա,- և մարդկանց բազմությունների համար այլևս տեղ չկար, նրանք խմբերով քշվում էին անապատները և այնտեղ մորթվում...»: ¹²²³ Այդ և նման փաստարկներով վերակերպավորելով զարհուրելի անցյալը՝ Լեփսիուսը կատարում էր նաև պարզաբանումներ Չայկական հարցի շահարկումների և մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի և

1220. Տե՛ս այդ մասին Ռ. Շեֆերի վկայությունը, Schäfer R., *Geschichte...*, էջ 114:

1221. Դատական նիստին ներկա էին բազմաթիվ վկաներ, այդ թվում գերմանացի սպաներ, հյուպատոսներ, Կարմիր խաչի ներկայացուցիչներ և մի շարք հայեր, որոնք ապրել էին եղեռնի սարսափները: Տե՛ս Lepsius J., *Der Prozeß Teillirjan-Talaat*, „Der Orient“, 1921, էջ 70:

1222. Տե՛ս „Gutachten von Dr. Johannes Lepsius“, անդ, էջ 88-95:

1223. Անդ, էջ 89:

Ռուսաստանի երկդիմի դիվանագիտական «խաղերի» վերաբերյալ, որոնց արդյունքում Թալեաթի և իր կուսակիցների կողմից ծրագրավորվեց և իրագործվեց հայ ժողովրդի բնաջնջումը:¹²²⁴ Իր ելույթից հետո Լեփսիուսը դատարանին ներկայացրեց նաև Թալեաթի կողմից աքսորի վերաբերյալ գաղտնի թուրքիայի մարզային իշխանություններին ուղարկված հեռագրերը,¹²²⁵ որոնք սպառիչ կերպով փաստում էին հայ ժողովրդի ծրագրավորված բնաջնջման և այդ հարցում Թալեաթի «հեղինակային» դերի վերաբերյալ՝ վկաների¹²²⁶ և անձամբ իր կողմից հաղորդված տեղեկությունները:

Լեփսիուսի փորձագիտական եզրակացությունն ունեցավ խիստ կարևոր նշանակություն այդ «արտասովոր» գործի շարժառիթների և ենթատեքստի վերաբերյալ դատարանին համալիր իրազեկում տալու առումով, և չնայած դատախազը համառորեն պահանջում էր Թեհլերյանին դատապարտել գնդակահարության, վերջինս երզվյալատենակալների որոշմամբ ազատ արձակվեց:¹²²⁷ Այդ աղմկահա-

1224. Անդ, էջ 92-95:

1225. Լեփսիուսն այդ հեռագրային հրամանները քաղել էր Արամ Անտոնյանի՝ 1920 թ-ին Փարիզում լույս տեսած՝ «Documents officiels concernant les Massacres Armeniens» աշխատությունից: Տե՛ս Erlasse von Talaat Pascha in Sachen der Deportation des armenischen Volkes. (Vorbemerkung), „Der Orient“, 1921, էջ 72:

1226. Լեփսիուսից բացի դատարանին ցուցմունքներ ներկայացրեցին նաև երկու հայ վկաներ և գեներալ Լիման Ֆոն Սանդերսը, որն, ինչպես արդեն լուսաբանվել է, 1916 թ-ին զենքի գործադրման սպառնալիքով թուրքական իշխանություններին արգելել էր աքսորել Զմյուռնիայի հայ բնակչությանը: Նրա ելույթը, սակայն, հիմնականում սահմանափակվում էր նրանով, ինչ նա իբրև զինվորական կարող էր հայտնել. որպես զինվորական նա Թալեաթի հրամանները չէր ստացել և փոխարենը հրահանգներ էր ստացել էնվերից, որոնք համարելով «անմիտ»՝ հիմնականում չէր կատարել: Տե՛ս Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, սղագրական զեկուցում, Երևան, 1990, էջ 107-111: Դմնտ. Lepsius J., Der Prozeß Teillirian-Talaat, „Der Orient“, 1921, էջ 70:

1227. Անդ: Պատմագիտության մեջ ավանդաբար գոյատևել է այն թյուրըմբռնումը, թե Բեռլինի դատարանը Ս. Թեհլերյանին ազատ է արձակել՝ ընդունելով նրա արարքի արդարացիությունը: Պրոֆ. Գ. Գոլթցն այդ տեսակետին նույնիսկ քաղաքական գունավորում է տալիս՝ նշելով, որ դատավարության «սենսացիոն» արդյունքում «մարդասպանը ազատ է արձակվում, և այդպիսով սպանվածը մեղավոր է ճանաչվում ցեղասպանության հարցում»: Տե՛ս Deutschland, Armenien und die Türkei 1895-1925: Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv, München, 1998, էջ XV: Պա, սակայն, իրականությա-

ըն չի համապատասխանում: Դատարանի վերջնական վճռի համար, ինչպես վկայում են ստույգ աղբյուրները, վճռորոշ նշանակություն ունեցավ դատական գործում ներգրավված հայտնի հոգեբույժներ պրոֆ. Յուզո Լիպմանի և պրոֆ. Էրմոնո Ֆյորստերի կողմից ներկայացված փորձագիտական եզրակացությունը, ըստ որի թեհիլերյանը տառապում էր այսպես կոչված «հոգեկան էպիլեպսիայով»: մի այնպիսի դեպքում, որով թեհիլերյանի արարքը որակվում էր ոչ թե դիտավորյալ, այլ, ըստ քրեական օրենսգրքի՝ 51-րդ պարագրաֆի, չկանխամտածված սպանություն: Հիշյալ հոգեբույժները հարկադրված էին իրենց եզրակացությունը հիմնավորել ամենայն մանրագնիությամբ, մղելով բազմաթիվ գիտական բանավեճեր և հերքելով դատավարությանը ներկա՝ այլ մասնագետների, մասնավորապես դր. Շթյորմերի և նրա համախոհների տեսակետը, համաձայն որի թեհիլերյանը տառապում էր միայն ֆիզիկական էպիլեպսիայով, այն է՝ մի հիվանդությամբ, որի դեպքում նշված պարագրաֆը չէր կարող գործել, և թեհիլերյանի արարքը, համաձայն քրեական օրենսգրքի 211-213 պարագրաֆների, պետք է դիտվեր որպես կանխամտածված սպանություն: Ի վերջո, սակայն, հաստատվեց Լիպմանի և Ֆյորստերի այնտղորդումը, որի հիման վրա մեղադրյալն ազատ արձակվեց: Տե՛ս Lepsius J., Der Prozeß Teillirjan-Talaat, „Der Orient“, 1921, էջ 71: Այդ ամենն, անշուշտ, չի նսեմացնում այն մեծ նշանակությունը, որ ունեցավ վկաների, մասնավորապես Լեփսիուսի տեղեկատվությունը դատական գործընթացում թախանջալի և Հայաստանում տեղի ունեցած եղերական իրադարձությունների վերաբերյալ բավականաչափ իրազեկում ապահովելու առումով: Հարկ է նշել, որ մեզանում բազմանշանակ հարցադրումներ և մեկնաբանություններ են ի հայտ եկել նաև դատարանում ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլթցի բացակայության առընդությամբ: Սասնավորապես Ստ. Ալաջաջյանը դատավարության սղագրական հաշվետվության հայերեն հրատարակության առաջաբանում դա պարզաբանում է դատավարությանը քաղաքական բնույթ չտալու և ֆոն դեր Գոլթցին, իբր թուրքական բանակի քսանամյա «մարզչի» և հայերի տեղահանության կողմնակցի, պատասխանատվությունից զերծ պահելու միտումով: «Եվ որպեսզի դատավարությանը ռազմաքաղաքական բնույթ չտրվի,- նշում է նա,- դատարան իրավիրված ֆոն դեր Գոլթցին... իրաժարվեցին կանչել: ... Ֆոն դեր Գոլցը գիտեր, որ քացի այս հեռագրերից, որոնք չնթերցվեցին, դատարանում էր գտնվում Հալեպի գերմանացի ուսուցիչներ-դոկտորներ Յյուլբերի, Շպիկերի և Նեպակեի՝ Ջեմալ փաշային ուղարկված նամակի պատճենը, նամակ, որտեղ նկարագրվում է աքսորյալների դժխեմ վիճակը 1919 թ-ին: Չկանչեցին ֆոն դեր Գոլցին, որպեսզի չասեն, թե՛ պարոն, տեսեք, ձեր առաջարկած տեղահանությանը հետևում է կոտորած, ջարդ, նախճիր, սպանդ, բնաջնջում, մի ողջ ժողովրդի ոչնչացում»: Տե՛ս Սողոմոն թեհիլերյանի դատավարությունը, սղագրական զեկուցում, Երևան, 1990, էջ 6-8: Առաջաբանի հեղինակը, սակայն, ակնհայտորեն իրազեկ չի եղել այն հանգամանքին, որ ֆոն դեր Գոլթցը դեռ պատերազմի ընթացքում, 1916 թ-ի ապրիլի 19-ին մահացել էր և իր մահից 5 տարի անց կազմակերպված դատավարությանը չէր կարող իրավիրվել կամ ներկա գտնվել: Տե՛ս Tammcke M., Armin T. Wegner und die Armenier, Hamburg, 1996, էջ 59:

րույց «գործը», որի ավարտին լարված սպասում էին թե աշխարհասփյուռ հայերը և թե նրանց բարեկամ ու թշնամի շրջանները, պետք է նշանավորվեր նաև որպես բարոյական մեծ հաղթանակ ողջ հայության համար:¹²²⁸ Ուստի պատահական չէ, որ Լեփսիուսը ձգտում էր ինչպես հարկն է՝ ապահովել դրա հրապարակայնությունը: «Der Orient»-ի 1921 թ-ի 6-րդ համարում նա հրատարակեց «Թեիլերյան-Թալեթ դատավարությունը» ծավալուն հոդվածը, որտեղ դատական գործընթացի լուսաբանման հետ մեկտեղ համակողմանի, մինչև իսկ կենսագրապատում տեղեկություններ էին հաղորդվում Թեիլերյանի և Թալեթի մասին, և վերջինիս հանցավոր անցյալի ու հայոց մեծ ողբերգության ֆոնի վրա պարզաբանվում էին նրա սպանության պատճառահետևանքային փոխառնչությունները:¹²²⁹ Նույն համարում նա հրատարակեց նաև աքսորի կապակցությամբ Թալեթի՝ տեղական իշխանություններին ուղարկված վերոնշյալ գաղտնի հեռագրերը:¹²³⁰ իսկ հաջորդ յոթերորդ համարում բազմաթիվ հայ աքսորյալների վկայությունների հետ մեկտեղ լույս ընծայվեց նաև Լեփսիուսի՝ դատարանում ներկայացված ծավալուն զեկուցումը:¹²³¹

Իր հրապարակումներով ձգտելով ձևավորել հնարավորինս իրազեկ հասարակական կարծիք՝ Լեփսիուսը հետևողականորեն հերքում էր Գերմանիայի այն տեսաբաններին, որոնք Թալեթի անձի հետ աշխարհի նոր վերածննդի հույսեր էին կապում: «Ասում են, որ Թալեթ փաշան նախապատրաստվել էր տեղափոխվել Անգորա՝ թուրքական հակակռավարական ուժերի նստավայրը կրկին ապագա թուրքական պետության մեծ վեզիրությունը ձեռք բերելու համար,- նշում էր նա իր հոդվածներից մեկում:- Դեռ շարունակ կան գերմանացի՝ սիրող քաղաքագետներ, որոնք Թուրքիայից՝ բրիտանական կայսրության իբրև թե ամենավտանգավոր թշնամուց սպասում են աշխարհի քար-

1228. Ի պաշտպանություն Թեիլերյանի ստացվում էին նաև նամակներ զանազան հայկական համայնքներից: Տե՛ս Ադիս Աբեբայի համայնքի ուղերձը: Տե՛ս Von den Quellen des blauen Nil, „Der Orient“, 1921, էջ 111:

1229. Lepsius J., Der Prozeß Teilirjan-Talaat, „Der Orient“, 1921, էջ 65-72:

1230. Տե՛ս Erlasse von Talaat Pascha in Sachen der Deportation des armenischen Volkes, անդ, էջ 72-80:

1231. Տե՛ս Gutachten von Dr. Johannes Lepsius, անդ, էջ 88-95:

տեզի վերածնունդ: ... Թալեաթի մահով ոչնչացավ անուղղելի թուրքա-սերների մեծ հույսը, քանի որ նա շարունակ համարվում էր «ուժեղ տղամարդ»: Ով այդ մարդուն դեռ չի ճանաչել, հայերի հալածանքների վերաբերյալ ստորև ներկայացվող հեռագրային հրամաններից կարող է տեղեկանալ այդ թուրք «ջենտլմենի» բուն եության մասին»:¹²³²

1924-26 թթ. Լեփսիուսի ուշադրությունը բևեռված էր նաև հայկական շրջաններին հուզող մի այլ խիստ կարևոր հարցի վրա: Թուրքական կառավարությունը պատերազմի ընթացքում տարագրված և բնաջնջված հայերի ունեցվածքի մի մասը դրամի վերածելով՝ ներդրել էր Բեռլինի պետական բանկում. ընդհանուր հաշվով 5 միլիոն թուրքական ֆունտ, որը զինադադարից հետո տեղափոխվեց Բրիտանիա և 1923 թ-ի նոյեմբերի 23-ին Փարիզում ստորագրված մի համաձայնագրով նախատեսվում էր օգտագործել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և ճապոնիայի քաղաքացիների՝ պատերազմի ընթացքում Թուրքիայում ունեցած կորուստները հատուցելու համար:¹²³³ 1925 թ-ի հունվարին, երբ այդ կորուստների հաշվառման նպատակով Փարիզում ձևավորվեց մի հանձնաժողով, Փարիզի Հայ փախստականների կենտրոնական կոմիտեն հանդես եկավ վերջինիս ուղղված՝ մի դիմումով, որտեղ փաստացիորեն հիմնավորվում էր այդ դրամազլխի բուն պատկանելությունը և կոչ էր արվում դրա գեթ մի մասը վերադարձնել աքսորը վերապրած հայերին և շուրջ 100 000-ի հասնող հայ որբերին:

Լեփսիուսը թե այդ կոչը և թե դրամազլխի առաջացման շարժառիթները փաստող վկայություններն ամբողջությամբ հրապարակեց նաև իր պարբերականում:¹²³⁵ միաժամանակ իր զորակցությունը հայտնելով ՀՓԿԿ-ին: Նրա համոզմամբ, այդ վկայություններից նույնիսկ միայն մեկը, որը կատարել էր Երզրումի վիլայեթի վալի Թախսին բեյը, լիուլի բավական էր հայկական կողմի պահանջն արդարացի համարելու և այն բավարարելու համար:¹²³⁶ Լեփսիուսն այն միաժամանակ

1232. Lepsius J., *Der Prozeß Teilirjan-Talaat*, անդ, էջ 66-67:

1233. *St'u Das Schicksal von 5 Millionen türkischen Pfund*, „Der Orient“, 1925, էջ 68-69:

1234. Անդ, 69-70:

1235. Անդ, էջ 68-70:

1236. Անդ, էջ 70: Խոսքը վերաբերում էր «Զումհուլյեթի»՝ 1924 թ-ի դեկտեմբերի 19-ի համարում Թախսին բեյի կողմից հրատարակված հետևյալ տեղեկությանը, ո-

արժևորում էր որպես հայ ժողովրդի զանգվածային տեղահանության և աքսորի մի նոր անառարկելի ապացույց, որը կարող էր օգտագործվել այն հերքելու ջանքեր կատարող նորագույն շրջանի թուրք պատմաբանների և քաղաքագետների դեմ: «Այդ 5 միլիոն թուրքական ֆունտի ճակատագիրն ունի կարևոր փաստագրական արժեք,- նշում էր նա իր մեկնաբանություններից մեկում,- որովհետև Թախսին բեյի նամակում հաստատվում է թուրքերի կողմից հայերի ազգային ունեցվածքի կողոպտումը, և բացի այդ խոստովանությունն է կատարվում նաև Թուրքիայի հայության զանգվածային աքսորի մասին, որն առանց այդ էլ փաստարկման կարիք չունի: Ցանկալի կլիներ, որ, ինչպես անմիջապես պատերազմից հետո էր, ազնիվ թուրքերը երիտթուրքական կառավարության անարգ գործերն ընդունեն և դրանով գեթ անձամբ իրենց մաքրեն համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն հանցագործության մեղսակցությունից»:¹²³⁷

Թուրք կեղծարարների դեմ պայքարը Լեւիսիոսին առարկայանում էր որպես ժամանակի ամենահրատապ պահանջներից մեկը: Այդ առումով նա իր առաջնագույն խնդիրը համարում էր հայ ժողովրդի հանդեպ գործված «ոճրագործությունների» նորագույն 1919-23 թվականներն ընդգրկող շրջանի լուսաբանումը, երբ արևմտահայության՝ եղեռնը վերապրած մնացորդները նույնպես հարկադրված եղան լքել իրենց պատմական հայրենիքը և փրկություն որոնել տա-

րը նա կատարել էր գողության մեղադրանքից խուսափելու համար. «Միջև աքսորման հրամանը երզրումի հայերն իրենց թանկարժեք քարերը և ոսկին անդորրագրերի դիմաց ավանդ էին տվել օտոմանյան բանկին: Աքսորից հետո ֆինանսների նախարարությունը օտոմանյան բանկից ետ պահանջեց այդ պահ տրված ունեցվածքը՝ վկայակոչելով «լքված ունեցվածքի» վերաբերյալ օրենքը: Երբ բանկը հրաժարվեց, սկսվեցին երկարատև բանակցություններ բանկի ղեկավարության և ֆինանսների նախարարության միջև, և ի վերջո նյութական երաշխիքների հիման վրա, որոնք ֆինանսների նախարարությունը տվեց, վճռվեց, որ հայերի՝ երզրումի օտոմանյան բանկում պահ տրված ողջ ունեցվածքը փոխանցվի ֆինանսների նախարարությանը: Դրա հետևանքով Ջեմալ բեյի՝ իրավասու զեներալի, միսրո Բալադյուրի՝ երզրումի բանկային բաժանմունքի ղեկավարի և Ջեւալ բեյի կողմից փաթեթները հատուկ կնիքով կնքվեցին, և Ջեմալ բեյը դրանք բերեց Կ. Պոլիս ու հանձնեց ֆինանսների նախարարությանը՝ վերցնելով մի ստացական, որը դեռ գտնվում է ինձ մոտ, և մի լուսանկար, որը ես պատրաստ եմ հրապարակել»: Անդ, էջ 69-70: 1237. Անդ, էջ 70:

րագրության մեջ: «Աքսորյալների ճակատագիրը, որոնք համակենտրոնացման ճամբարներից վերադարձան հայրենիք,- գրում էր նա դեռ 1923 թ-ին,- և հաղթող տերությունների կողմից բախտի քմահաճույքին մատնված հայերի վերջնական վտարումը թուրքիայից պատկանում է թուրքիայի պատմության և Եվրոպայի արևելյան քաղաքականության ամենասև գլուխների շարքին»:¹²³⁸

Իր նոր մտահղացումն իրագործելու համար Լեփսիուսը դեռ 1923 թ-ի վերջին մի ուղերձ հղեց հայ ժողովրդի «բոլոր բարեկամներին» և այդ փորձություններն ապրած հայերին՝ խնդրելով ներկայացնել վերոնշյալ շրջանին վերաբերվող՝ իրենց կատարած ուսումնասիրությունները, եթե այդպիսիք կային, ինչպես և կենսագրական տեղեկությունները, որոնք կարող էին հուսալի «ատաղծ» ծառայել իր ապագա աշխատության համար:¹²³⁹ Ուշագրավ է, որ չնայած նա նախորդ 1914-18 թթ. շրջանը համարում էր բավականաչափ լուսաբանված՝ նկատի ունենալով իր «Հայ ժողովրդի մահուղին» և «Գերմանիան և Հայաստանը» աշխատությունները, այնուամենայնիվ, չբացառելով, որ կարող էին նաև այդ շրջանի վերաբերյալ իր ուշադրությունից վրիպած նյութեր լինել, խընդրում էր դրանք ևս իրեն մատչելի դարձնել:¹²⁴⁰ «Ես երախտապարտ կլինեի, եթե կարողանայի ունենալ հնարավորին չափ լիարժեք նյութեր թուրքիայից հայության արտագաղթի ողջ պատմության վերաբերյալ,- տեղեկացնում էր նա իր վերոնշյալ կոչում:¹²⁴¹

Լեփսիուսն ուներ նաև այլ կարևոր ծրագրեր ու մտահղացումներ: Դեռ 1924 թ-ին նա նախատեսում էր բարեգործական աշխատանքներ ծավալել նաև Խորհրդային Հայաստանում, և, որ ոչ պակաս ուշագրավ է, Գերմանիայում հիմնել Հայկական ակադեմիա կամ այլ կերպ ասած՝ մի գիտաուսումնական կենտրոն հայ առաքելական և մյուս հին քրիստոնյա եկեղեցիներին աջակցություն ցուցաբերելու համար:¹²⁴² Այն պետք է ծառայեր մասնավորապես այդ եկեղեցիներին

1238. Lepsius J., Eine Bitte, „Der Orient“, 1923, էջ 41:

1239. Անդ:

1240. Անդ:

1241. Անդ: Լեփսիուսը նախատեսել էր այդ հաստատությունում, ի թիվս այլոց, աշխատանքի հրավիրել նաև դր. Մելքոն Քրիշչյանին: Stn Schäfer R., Geschichte..., էջ 118:

1242. Lepsius J., Orient-Mission, „Der Orient“, 1924, էջ 36:

պատկանող ուսանողների աստվածաբանական կրթության և վերապատրաստման, ինչպես և մահմեդական շրջաններում գործելու համար որակյալ քարոզիչներ պատրաստելու նպատակներին:¹²⁴³ Եթե նկատի առնենք, թե մինչև առաջին աշխարհամարտը հայ առաքելական և գերմանական ավետարանական եկեղեցիների համագործակցությունը որպիսի մեծ վերելք էր ապրում և որքան արգասաբեր էր հայ իրականության համար,¹²⁴⁴ ապա պարզ կդառնա, թե Լեփսիուսի ծրագիրը, հնարավորություն ընծեռելով շարունակել և զարգացնել այդ ավանդույթը, որքան հեռանկարային կարող էր լինել: Այդ կապի և նշանակության ըմբռնումով էր թելադրված այն հանգամանքը, որ Լեփսիուսը 1925 թ-ի վերջին «*Der Orient*»-ում լույս ընծայեց Ե. Շթիրի՝ «Հայ աստվածաբանները Գերմանիայում» հոդվածը, որտեղ հեղինակը մանրամասն տեղեկություններ էր հաղորդում Կ. Տեր-Մկրտչյանի և Գերմանիայում ուսանած մյուս հայ աստվածաբանների մասին զուգահեռաբար փորձելով ի մի բերել և արժևորել երկու եկեղեցիների համագործակցության հիմնական արդյունքները:¹²⁴⁵

Ցավոք, սակայն, մեծ հայամվեր գործչին վիճակված չէր իրականացված տեսնել իր այդ և վերոնշյալ՝ մյուս ծրագրերը: 1925 թ-ին նրա առողջական դրությունը սկսեց կտրուկ վատթարանալ՝ աշնանը (հոկտեմբերի 28-ին) հարկադրելով բուժման նպատակով մեկնել Իտալիայի Մերանո քաղաքը:¹²⁴⁶ Այդ շրջանում նրա մեծագույն բաղձանք-

1243. Անդ: Լեփսիուսը հույս էր տածում, որ երբևէ կկարողանար նաև վերականգնել քարոզչական աշխատանքը Բուլղարիայի և Պարսկաստանի մահմեդական շրջաններում, որը պատերազմից հետո նմանապես ընդհատվել էր: Չնայած այդ բնագավառում նրա լավագույն օգնականները՝ Ավետարանյանը և նրա կողմից մկրտված երկու թուրքերից մեկը՝ Ահմեդ Քեշաֆն, արդեն մահացել էին, սակայն նա հույս ուներ մյուս մկրտված թուրքի՝ Նեսիմի էֆենդիի (որն ապրում էր Պոտսդամում) և իր հետ կապի մեջ գտնվող մի՝ նույնպես Ավետարանյանի կողմից մկրտված պարսիկի միջոցով այդ գործը վերականգնել, մինչև վերոնշյալ կենտրոնում կպատրաստվեին նաև նոր քարոզիչներ: Տե՛ս անդ, էջ 34:

1244. Այդ համագործակցության շնորհիվ Գերմանիայում կրթություն ստացավ հայ հոգևորականների մի երախտավոր սերունդ, որն այնուհետև իրեն նվիրեց հայ առաքելական եկեղեցու նորացման և բարեփոխման գործին: Տե՛ս Hacı Rafi Gazer, *Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche Im ausgehenden 19. Und im ersten Drittel des 20. Jahrhunderts*, Göttingen, 1996:

1245. Stü Stier E., *Armenische Theologen in Deutschland*, „*Der Orient*“, 1925, էջ 115-118:

1246. Schäfer R., *Geschichte....*, էջ 118:

ներից մեկը նաև իր ընկերության նախկին «Գերմանական առաքելություն Արևելքում» անվան վերականգնումն էր, քանի որ, ինչպես արդեն նշվել է, վերջին անվանումն առաջադրվել էր միայն ժամանակավորապես, հետպատերազմյան իրադրության թելադրանքով և երկու ընկերությունների մոտալուտ միավորման ակնկալիքով: Մերանոում վերջնականապես անկողնուն գամվելով և զգալով իր մոտալուտ մահը, միաժամանակ իր բացակայությամբ այդ անվանափոխումը կանոնադրապես հնարավոր դարձնելու համար նա 1926 թ-ի հունվարի 22-ին հոգաբարձությանն իրազեկեց առաջին նախագահի պարտականություններից իր հրաժարման և իր ավագ եղբորը՝ պրոֆ. Բեռնհարդ Լեփսիուսին այդ պաշտոնում նշանակելու՝ իր ցանկության մասին հրահանգելով նաև փետրվարի 6-ին արտահերթ նիստ հրավիրել այդ փոփոխություններն ամրագրելու նպատակով:¹²⁴⁷ Լեփսիուսին, սակայն, վիճակված չէր կատարված տեսնել նույնիսկ իր այդ վերջին պատգամները. հիվանդության դեմ պայքարն այլևս անհնար էր դառնում, և 1926 թ-ի փետրվարի 3-ին Մերանոում նա վախճանվեց:¹²⁴⁸

Աշխարհասփյուռ հայերն անհուն կսկիծով և կորստի ցավով ընդունեցին Լեփսիուսի մահվան գույժը: Հուղարկավորության ժամանակ նրա պատգարակը շրջապատված էր, ի թիվս այլոց, նաև հայ որբերի և այրիների հոծ բազմությամբ: Հայաստանից և սփյուռքից տեղում էին բազում ցավակցական հեռագրեր, որոնց մի մասը հրատարակվում էր նաև «Der Orient»-ում,¹²⁴⁹ իսկ ապրիլի 6-ին Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության, Գերմանա-հայկական ընկերության և Բեռլինի հայ համայնքի միացյալ նախածեռնությամբ Բեռլինում տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ՝ նվիրված հանգուցյալի հիշատակին, որի ընթացքում լսված սրբատառուչ զեկույցները հրատարակվեցին նաև առանձին գրքով:¹²⁵⁰

1247. Անդ, էջ 120:

1248. St'u Pfarrer D. Dr. phil. Johannes Lepsius, „Der Orient“, 1926, էջ 1:

1249. Ամբողջությամբ հրատարակվեցին մասնավորապես պրեզիդենտ Ա. Խատիսյանի, եվրոպարենակ հայերի առաքելական պատվիրակ եպ. Բալաքյանի, ՅԲՄ-ի, ՅԳԴ Բեռլինի կոմիտեի, Վիեննայի և Համբուրգի հայկական համայնքների կողմից ստացված հեռագրերը: St'u Die armenischen Führer zum Tode von D. Dr. Johannes Lepsius, „Der Orient“, 1926, էջ 39-41:

1250. St'u Die Deutsch-Armenische Gesellschaft Berlin, „Der Orient“, 1926, էջ

121: Հանդիսության ժամանակ ելույթ ունեցան մասնավորապես դր. Ջ. Գրինֆիլդը, պրոֆ. Ա. Վեկսեբը, դր. Ա. Շրայքերը, Է. Շթիրը, պրոֆ. Ա. Ղայսմանը, դր. Պ. Ռոիրբախը

Ազուն էր համայն հայությունը: Ազուն էին նաև Լեփսիուսի գործընկերներն ու բարեկամները, որոնք, սակայն, լի էին իրենց գաղափարական առաջնորդի «Կյանքի գործը» հավատարմորեն շարունակելու վճռականությամբ: «Մեզ համար պարզ է մի բան,- նշված էր այդ առթիվ ընկերության կողմից բարեկամներին ուղղված՝ սրտառուչ կոչում. - այն գործը, որի հիմքը նա նախկինում երիտասարդ հավատի ուժով դրել է և բոլոր դժվարությունների ու զրկանքների, նաև պատերազմի տարիների զրկանքների մեջ փրկել, իրավունք չունի կործանվել: Մենք պարտք ենք Նրան, որը նրա սրտում դրել է ջերմ սերը ծանր փորձություն անցած հայ ժողովրդի և հավատը Արևելքի երկրներում Հիսուսի արքայական իշխանության հաղթանակի հանդեպ: Մենք, սակայն, պարտք ենք նաև նրանց, ովքեր դրսում ապավինել են մեզ, ավելի քան 250 որբ երեխաներին, որոնց հանդեպ մենք ստանձնել ենք հայրական և մայրական պարտականությունները, անթիվ հայ քրիստոնյաներին, որոնք մահմեդական ստրկության մեջ դեռ տառապում են և սպասում ազատության արշալույսին: Նրանց բոլորի աղերսագին աչքերն ուղղված են մեզ. «Մեզ մի մոռացեք, մեզ մի լքեք»... Այժմ, երբ մեր Առաքելությունը պետք է ամենածանր փորձությունը հաղթահարի, հավատարիմ եղեք մեզ: Գործը, որն այս ժամին որբացել է, ավելի անձկանոք կրեք, քան մինչև այժմ: Ձեր սիրով զորացրեք մեր և մեր աշխատակիցների արիությունը: Թույլ տվեք մեզ թանկագին մարդու հիշատակին ուխտել. ինչ որ նա տնկել է, մենք կամենում ենք հավատարմորեն խնամել»: ¹²⁵¹

Ընկերության նոր մեկնարկը սկսվեց մի շարք համալրումներով և

և Պ. Ֆլայշմանը: «Մարդիկ կան, որոնց մահն ապրողներին այնպես է ցնցում, որ թվում է, թե հողը նրանց ոտքերի տակ երեւում է, և երկինքը խավարել է,- գրում էր Լեփսիուսի հավատարիմ ընկերներից մեկը՝ Ա. Վեկեսերը: - ...Նրա հետ կյանքից հեռացավ ոչ միայն մեր ընկերության հիմնադիրն ու ղեկավարը, որի համար նա մինչև իր վերջին օրերն աշխատում էր, տագնապում, հուսում և աղոթում, այլև մի այր, որը տարիներ շարունակ եկեղեցական առաջնորդների առաջին շարքերում է կանգնել, համճարեղ աստվածաբան, վաստակած պատմաբան, բռնադատված հայ ժողովրդի պաշտպանն ու օգնականը և ռասայական ու ազգային ատելության կողմից նրա հանդեպ իրազորված ոճրագործությունների հրապարակային մեղադրողը»: Անդ: Հմնտ. Weckesser A., Zum Gedächtnis an Johannes Lepsius, „Der Orient“, 1926, էջ 34: 1251. Տե՛ս An unsere Freunde, „Der Orient“, 1926, էջ 2:

կառուցվածքային փոփոխություններով: Համաձայն Լեփսիուսի վերջին ցանկության, հոգաբարձությունը փետրվարի 6-ին հրավիրեց արտահերթ նիստ, որտեղ ընկերության առաջին նախագահ ընտրվեց Բ. Լեփսիուսը:¹²⁵² Բացի այդ հոգաբարձության կազմում ընդգրկվեցին բժշկագիտ. դոկտոր Վիլֆրիդ Ցելերը (Ֆրիդրիխ Ցելերի որդին) և Գուստավ Գրաուերը, որին գլխ. քարտուղար Ռ. Շեֆերի առաջարկությամբ հանձնարարվեց գանձապահի և հաշվեմատյանների լրացման գործը:¹²⁵³ Հոգաբարձությունն, այսպիսով, նոր մեկնարկային տարում բաղկացած էր հետևյալ 11 անձանցից. պրոֆ. Բեռնհարդ Լեփսիուս (նախագահ), Պաուլ Ֆլայշման (նախագահի տեղակալ), պրոֆ. Ալբերտ Վեկեսեր (նախագահի տեղակալ), Ռիխարդ Շեֆեր (գլխավոր քարտուղար), Գուստավ Գրաուեր (գանձապահ), պրոֆ. Բեթ, պրոֆ. Կարլ Ֆրիդրիխ Լեհման-Հաուպտ, Սյուլլեր Զյուլիլենբալ, դր. Ջիզմունդ-Շուլց, Կարլ Ֆյորստեր, դր. Վիլֆրիդ Ցելեր:¹²⁵⁴ Ինչ վերաբերում էր աշխատանքային հանձնախմբին, ապա այնտեղ ընդգրկվել էին վերոնշյալ աշխատակիցներից 5-ը՝ Պ. Ֆլայշմանը, Բ. Լեփսիուսը, Ռ. Շեֆերը, Ջ. Շուլցը և Վ. Ցելերը:¹²⁵⁵

Հավատարիմ իր առաջնորդի պատգամներին՝ հոգաբարձությունը հաջորդ՝ ապրիլի 6-ին կայացած նիստում վճռեց վավերացնել «Դր. Լեփսիուսի գերմանական առաքելություն Արևելքում» անվանումը, որտեղ ընդգծված էր նաև կազմակերպության ազգային պատկանելության հանգամանքը, և բացի այդ նրա գործունեության հիմնական ուղղվածությունը շեշտելու համար առդիր փակագծերում ավելացնել «Հայաստանի օգնության գործ» ենթատիտղոսը, որն առանձին կետով ամրագրվեց կանոնադրության մեջ:¹²⁵⁶ Ընկերությունն, այսպի-

1252. Տե՛ս Mitteilungen, անդ, էջ 60:

1253. Անդ:

1254. Dr. Lepsius Orient-Mission, անդ, էջ 96-ի և 97-ի միջև:

1255. Տե՛ս Mitteilungen, անդ, էջ 60:

1256. Տե՛ս ընկերության նոր կանոնադրությունը, որի գրանցումը Պոտսդամի առաջին ատյանի դատարանում տեղի ունեցավ 1926 թ-ի մայիսի 25-ին: Satzungen von Dr. Lepsius Deutsche Orient-Mission (Armenisches Hilfswerk), „Der Orient“, 1926, էջ 96-ի և 97-ի միջև: Նոր կանոնադրությունում կատարվեցին որոշ այլ՝ ոչ էական փոփոխություններ և, որոնք ունեին զուտ կազմակերպական նշանակություն և կազմակերպության ծրագրային նպատակներին ու գործունեության ուղղվածությանը չէին առնչվում: Անդ:

սով, այդուհետ կոչվում էր «Դր. Լեփսիուսի գերմանական առաքելություն Արևելքում (Հայաստանի օգնության գործ)»:

Նոր մեկնարկի շեմին կատարվեցին այլ համալրումներ ևս: Մասնավորապես երկու «*Der Orient*» և «*Für unsere kleinen Armenierfreunde*» պարբերականների խմբագրումը հանձարարվեց դր. Յոհ. Լեփսիուսի դստերը՝ Բրիգիտ Լեփսիուսին:¹²⁵⁷ Աշխատանքների կազմակերպման և վերահսկողության արդյունավետությունն ապահովելու նպատակով ստեղծվեցին նաև առանձին բաժիններ, որոնցից մեկը՝ որբախնամ և ազատագրման աշխատանքների բաժանմունքը, ղեկավարում էր Գերտրուդ Յեթցելը, ֆիլմերի բաժանմունքը՝ Նիկոլայ Վալտերը:¹²⁵⁸ Իսկ գիտական բաժինը, որը զբաղվում էր Հայաստանի և Կովկասի պատմության և հարակից, նաև տնտեսական ու լեզվական խնդիրների լուսաբանման հարցերով՝ միաժամանակ պարբերականներին ապահովելով համապատասխան թղթակցություններով, հատկացվեց դր. Մելքոն Քրիշչյանին:¹²⁵⁹ Վերջինիս, ի դեպ, խմբագրակազմին աշխատակցում էր նաև որպես խորհրդատու Արևելքին և մասնավորապես Հայաստանին առնչվող խնդիրներում:¹²⁶⁰

Առանձին բաժանմունք ստեղծվեց նաև որբերի և այրիների ձեռագործ աշխատանքների առաքման ու սպառման խնդիրներով զբաղվելու համար:¹²⁶¹ Գործուն քայլեր էին ձեռնարկվում նաև կազմակերպության անդամների թվաքանակն ընդլայնելու և բարեկամների հետ կապն ամրապնդելու նպատակով: 1926 թ-ին հոգաբարձություն-

1257. Տե՛ս Dr. Lepsius Orient-Mission, անդ, էջ 64-ի և 65-ի միջև: Բ. Լեփսիուսը ծնվել է 1901 թ-ի դեկտեմբերի 28-ին և մահացել 1976 թ-ի օգոստոսի 2-ին: 1921-26 թթ. նա գործում էր որպես իր հոր քարտուղարուհին՝ սկզբում նրան օգնելով Գերմանիայի՝ 1882-1914 թթ. դիվանագիտական փաստաթղթերի հրատարակման հարցում, իսկ այնուհետև նաև ընկերության գրասենյակում: Տե՛ս Lepsius M. R., Die Nachkommen..., էջ 144:

1258. Ն. Վալտերը ծնվել է 1901 հունվարի 4-ին Ռոստովում: 1925-34 թթ. նա ամուսնացած էր Բրիգիտ Լեփսիուսի հետ՝ նրա հետ միասին աշխատանքի անցնելով ընկերության գրասենյակում: Ամուսնալուծությունից հետո նրա ճակատագիրը մնացել է անհայտ: Մահվան տարեթիվը նույնպես հայտնի չէ: Անդ, էջ 145:

1259. Տե՛ս Dr. Lepsius Orient-Mission, „Der Orient“, 1926, էջ 64-ի և 65-ի միջև:

1260. Schäfer R., Unser Jahresheft, անդ, էջ 146:

1261. Տե՛ս Dr. Lepsius Orient-Mission, անդ, էջ 64-ի և 65-ի միջև:

նր վճռեց տարեկան անդամավճարը սահմանել 12 մարկ, իսկ նրանց, ովքեր տարեկան կատարում էին նվազագույնը 3 մարկի վճարում, տրամադրել «բարեկամ»-ի կարգավիճակ, որն, ինչպես անդամությունը, հաստատվում էր համապատասխան վկայականով:¹²⁶²

Արանք էին, ահա, այն հիմնական միջոցառումները, որոնք Լեփսիուսի մահից հետո իրականացվեցին նոր մեկնարկի անցնելու համար: Այն հաջողությամբ սկսվեց և համերաշխ համագործակցությամբ անընդմեջ առաջ ընթացավ շարունակ նվաճելով նորանոր բնագծեր: Կազմակերպությունը միշտ հավատարիմ մնաց իր որդեգրած հանձնառություններին, եթե նույնիսկ հետագայում իրագործված որոշ ենթակառուցվածքային փոփոխություններ ակնկալվող արդյունքները չտվեցին: Մասնավորապես, քանի որ նոր նախագահը աստվածաբանական կրթություն չուներ, իսկ մահմեդական շրջաններում քրիստոնեական քարոզչությունը շարունակում էր մնալ ընկերության ծրագրային նպատակներից մեկը, հոգաբարձությունը 1926 թ-ի դեկտեմբերին վճռեց ստեղծել նաև տնօրենի հաստիք, որը հատկացվեց քահանա դր. Պաուլ Շյուբցին:¹²⁶³ Բացի այդ, քարոզչության վերոնշյալ ծրագրի նախապատրաստումն ու իրականացումը դյուրացնելու և միաժամանակ օգնության աշխատանքների զարգացմանը չխտջնդոտելու նպատակով 1927 թ-ի սկզբին վճռվեց «*Der Orient*»-ը դարձնել երկամսյա պարբերական և հատկացնել քարոզչության ոլորտին առնչվող կրոնաեկեղեցական խնդիրների լուսաբանմանը, իսկ Հայաստանի օգնության աշխատանքների պրոպագանդան համար ստեղծել մի նոր ամենամսյա պատկերազարդ ամսագիր, որը կոչվեց «*Orient im Bild*», և որի առաջին համարը լույս տեսավ 1928 թ-ի ապրիլին:¹²⁶⁴ Եթե նկատի առնենք, որ Լեփսիուսը միևնույն նկատառումով դեռ 1924 թ-ից ցանկություն ուներ վերականգնել իր նախկին «*Das Reich Christi*» պարբերականի լույսընծայումը (որը ծախողվեց միայն ֆինանսական պայմանների անբավարարության պատճառով),¹²⁶⁵ ապա այդ ձեռնարկումը թերևս պետք է

1262. Տե՛ս *Mitteilungen*, անդ, էջ 94:

1263. Պ. Շյուբցն այդ պաշտոնում իր գործունեությունը սկսեց 1926 թ-ի դեկտեմբերի 15-ից: Տե՛ս „*Der Orient*“, 1927, էջ 1:

1264. Տե՛ս *An die geehrte Lesergemeinde!*, անդ, էջ 17:

1265. Տե՛ս *Mitteilung des Herausgebers*, „*Der Orient*“, 1924, էջ 16:

համարել նրա վերոնշյալ մտադրության իրականացումը:

Հարկ է նշել, որ կարճ ժամանակ անց առաջին նախագահի և տնօրենի միջև առաջացան որոշակի տարաձայնություններ՝ կապված «*Der Orient*» ամսագրի նոր կարգավիճակի հետ, որի հետևանքով դր. Շյուքը 1928 թ-ի աշնանը հրաժարվեց պարբերականի խմբագրի, իսկ ղեկտեմբերի վերջին նաև տնօրենի պարտականությունները:¹²⁶⁶ Գրեթե զուգահեռաբար, 1928 թ-ի աշնանն իր առաջին նախագահի պաշտոնից հրաժարվեց նաև Բ. Լեփսիուսը, որն այնուհետև շարունակեց մնալ հոգաբարձության կազմում:¹²⁶⁷ Նրա առաջարկով հոգաբարձության՝ հոկտեմբերի 30-ի նիստում նախագահ նշանակվեց Պաուլ Ֆլայշմանը, որը միաժամանակ ստանձնեց նաև տնօրենի պարտականությունները: իսկ հոգաբարձության անդամ Ա. Վեկեսերն ընտրվեց փոխնախագահ:¹²⁶⁸ Այդ ընտրություններն, ինչպես կարճ ժամանակ անց պարզվեց, միանգամայն նպատակային էին, և ի դեմս նրանց Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն ձեռք բերեց հմուտ «նավավարներ», որոնք ի վիճակի էին ընկերությանն առաջնորդել հետագա տասնամյակի բոլոր «փոթորիկների» միջով:

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն 1926 թ-ին և այդուհետ էլ իր քարոզչական ու կազմակերպական գործունեությունը շարունակեց նախկինում որդեգրված սկզբունքներով, որոնք արդեն բավականաչափ պարզաբանվել են: Պարբերականները շարունակում էին կանոնավոր կերպով լուսաբանել օգնության աշխատանքները: 1929 թ-ին հիմնվեց մի

1266. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, „Orient im Bild“, 1929, էջ 22: Տնօրենն այդ «պարբերականը համարում էր քացառապես գիտական օրգան Արևելքում տեղի ունեցող հոգևոր իրադարձությունների և արևմուտքի հետ դրանց փոխառնչությունների լուսաբանման համար...»,- նշվում էր այդ առթիվ խմբագրության կատարած պարզաբանման մեջ,- իսկ նախագահը, պաշտպանելով ավանդույթը, համոզեւ էր գալիս ամսագրի՝ որպես մեր միսիոներական ընկերության օրգանի նկարագրի պահպանման օգտին՝ ըստ այդմ պահանջելով առաջին հերթին ներկայացնել ընկերության շահերը: Այդ տեսակետին հարեցին նաև հոգաբարձության մյուս անդամները»: Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1928, էջ 191-192:

1267. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, „Orient im Bild“, 1929, էջ 22:

1268. Անդ: Հմնտ. Mitteilungen, „Der Orient“, 1928, էջ 191-192:

նոր ամսաթերթ և՛ «Der kleine Orient»-ը, որը 7000 տպաքանակով անվրճար առաքվելով ընթերցողներին՝ զգալիորեն նպաստեց տեղեկատվության ընդլայնմանը:¹²⁶⁹ Լայն ծավալում ստացան շրջիկ զեկուցումները, որոնց ընթացքում որպես կանոն ցուցադրվում էին նաև ֆիլմեր:¹²⁷⁰ Ընդ որում եթե դեռ 1925 թ-ին կազմակերպությունը հարկադրված էր բավականանալ միայն հրապարակում առկա փոքրաթիվ շարժանկարներով, որոնք կարող էին զեկուցումների հետ սոսկ մասնակի և միջնորդավորված կապ ունենալ, ապա 1926 թ-ի սկզբին հնարավոր դարձավ ձեռք բերել համապատասխան տեխնիկական միջոցներ սեփական նախածեռնությամբ և ուժերով շարժանկարներ պատրաստելու համար:¹²⁷¹ Առաջին երկու ֆիլմերը, որոնցից մեկը ներկայացնում էր Հալեպում իրականացվող փրկարար աշխատանքները, իսկ մյուսը՝ Ղազիրի որբանոցն ու Կյունցլեր ամուսինների գործունեությունը, պատրաստվեցին համապատասխանաբար ապրիլ և մայիս ամիսներին,¹²⁷² իսկ աշնանը և ծմռանը դրանց թիվը համալրվեց ևս երկուսով:¹²⁷³ Այդ աշխատանքը հետևողականորեն շարունակվեց նաև հետագայում, և մեկը մյուսի ետևից ի հայտ էին գալիս նոր շարժանկարներ, որոնք բազմացվելով և շրջանառության մեջ դրվելով խիստ կարևոր դեր ունեցան շրջիկ զեկուցումների, տեղեկատվական հավաքույթների և առհասարակ կազմակերպության հայանվեր քարոզչության արդյունավետության բարձրացման հարցում:¹²⁷⁴

1269. Schäfer R., *Mitteilungen*, „Orient im Bild“, 1929, էջ 47: Հմմտ. Schäfer R., *Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929*, „Orient im Bild“, 1930, էջ 31: «Orient im Bild»-ը լույս էր տեսնում 11000, իսկ 1929 թ-ին, երբ հիմնվեց նաև «Der kleine Orient» ամսաթերթը, 9000 տպաքանակով: Անդ: 1270. Խոսքն իհարկե վերաբերում է զարգացման սկզբնական փուլում գտնվող համր շարժանկարներին, որոնց կից ներկայացնում էին նաև տեքստային լուսաբանումներ:

1271. Տե՛ս *Mitteilungen*, „Der Orient“, 1926, էջ 45:

1272. Անդ:

1273. Այդ ֆիլմերից մեկը կոչվում էր՝ «Տեսնել նշանակում է հավատալ» և տևում էր մոտ մեկ ժամ: Մյուս ֆիլմերի անվանումները չեն հիշատակվում: Նշված՝ առաջին երեք շարժանկարների ընդհանուր տևողությունն, ի դեպ, կազմում էր 2 ժամ: Տե՛ս *Mitteilungen*, անդ, էջ 127: Հմմտ. *Mitteilungen*, անդ, էջ 175:

1274. Ֆիլմերը կրկնօրինակումից հետո կարող էին նաև վաճառվել կամ վարձակալության տրվել բոլոր ցանկացողներին: Տե՛ս *Mitteilungen*, „Orient im Bild“, 1928, էջ 60: 1927 թ-ին, բացի նշված ֆիլմերից, լայն տարածում ստացան նաև

Զնայած շրջիկ զեկուցումների և շարժանկարների քանակածավալային ընդլայնման պայմաններում թուուցիկների առաքման հաճախականությունը 1926-33 թթ. որոշ չափով նվազեց, սակայն այդ ուղղությամբ տարվող աշխատանքը նույնպես բավական արդյունավետ էր: Եթե 1921 թ-ին առաքվել էր ընդամենը 7,¹²⁷⁵ իսկ 1926 թ-ին 41 թուուցիկ,¹²⁷⁶ ապա 1929 թ-ին դրանց թիվը հասավ 51-ի,¹²⁷⁷ իսկ 1934 թ-ի դրությամբ հրատարակվել և առաքվել էին ընդհանուր թվով 54 թուուցիկներ:¹²⁷⁸ Թեմատիկ մեծ բազմազանությամբ հատկանշվող և անվըճար հասարակական շրջաններին առաքվող այդ թուուցիկները, որոնք նվիրված էին օգնության աշխատանքների հետ կապված առավել հրատապ խնդիրների լուսաբանմանը, սովորաբար նախապես հրատարակվում էին նաև պարբերականներից որևէ մեկում և կամ, եթե այդ տեղի չէր ունենում, ապա դրանց մասին (նմանապես պարբերականների միջոցով) կատարվում էր հրապարակային իրազեկում:¹²⁷⁹

Կազմակերպությունը հետևողականորեն շարունակում էր զբաղվել նաև իր հայ պաշտպանյալների պատրաստած ծեռագործերի իրացմամբ, որոնցից գոյացած եկամուտն իհարկե տրամադրվում էր օգնության գործին: Զեռագործերի վաճառահանումն ըստ հնարավորին ընդլայնելու նպատակով կազմակերպությունը հետևողականորեն զբաղվում էր դրանց գովազդմամբ՝ պարբերաբար նաև համայնքներին կոչ անելով տեղական հավաքույթների կամ տոների ընթացքում կազմակերպել ցուցահանդես-վաճառքներ:¹²⁸⁰ «Ինչու՞ հայ

«Փրկարար աշխատանքները Չալեպում», «Չայր Կյունցլերի որբերը Լիբանանում», «Չայաստան» և «Կովկասյան սերիա» ֆիլմերը: Sb'u Mitteilungen, „Der Orient“, 1927, էջ 26: Հմմտ. Wer einen Filmstosstoapparat besitzt, „Orient im Bild“, 1927, էջ 68: Չետագայում շրջանառության մեջ դրվեցին նոր ժապավեններ և, այդ թվում՝ «Չայերի զրկանքները և քրիստոնյաների օգնությունը» (թողարկված 1930 թ-ին):

1275. Sb'u Mitteilungen, „Der Orient“, 1921, էջ 14:

1276. Sb'u Mitteilungen, „Der Orient“, 1926, էջ 127:

1277. Sb'u Mitteilungen, „Orient im Bild“, 1929, էջ 88:

1278. Sb'u Mitteilungen, „Orient im Bild“, 1934, էջ 36:

1279 Sbu Aufruf! Was soll werden aus den heranwachsenden armenischen Waisenkindern?, „Orient im Bild“, 1928, էջ 59; An euch Christen, „Orient im Bild“, 1930, էջ 80; Wer soll die Lasten tragen?, „Orient im Bild“, 1933, էջ 15 և այլն:

1280. Sbu Im Namen einer Mutter, „Der Orient“, 1926, էջ 125-126: Հմմտ. Mitteilungen, անդ, էջ 127:

մայրերի կողմից պատրաստված թաշկինակներ կամ նրանց ջանասեր մատների այլ արտադրանքներ չգնենք, - նշվում էր հրապարակումներից մեկում:- Եթե դուք դրանք գնեք ձեր կամ ինչ-որ մեկի մորը նվիրելու և նրան ուրախացնելու համար, ապա կփրկեք մի թանկագին կյանք, մի փոքրիկ երեխայի կյանքը Մերծավոր Արևելքի սիրող և անձնագոհ մոր համար»:¹²⁸¹

Ինչ վերաբերում էր ընկերության կողմից կազմակերպված հանդիսավոր հավաքություններին և ամենամյա տոնակատարություններին, ապա դրանք որպես կանոն ուղեկցվում էին այդօրինակ ցուցահանդես-վաճառքներով, ինչպես և որբերի և այրիների զրկանքները և օգնության աշխատանքները պատկերող ֆիլմերի ցուցադրմամբ:¹²⁸² Գովազդումն ընդլայնելու հարցում անկասկած կարևոր դեր խաղաց նաև ձեռագործ աշխատանքների կատալոգի հրապարակումը, որը 1929 թ-ին առաքվեց բոլոր բարեկամներին՝ նրանց միջոցով շարունակելով շրջանառություն գործել համայնքներում և այլ հասարակական շրջաններում:¹²⁸³ Հատկանշական է, որ նոր բարեկամներ ձեռք բերելու և միաժամանակ ձեռագործ աշխատանքների գովազդման շրջանակներն ընդլայնելու նպատակով 1926 թ-ին որոշվեց պարբերաբար հրապարակել նաև հետաքրքրաշարժ խաչբառեր, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված թվով 50 մրցանակները բաղկացած էին հիմնականում ձեռագործերից և տարագիր հայերի զրկանքները ներկայացնող պատկերազարդ գրքույկներից:¹²⁸⁴

Ձեռագործերի իրացման և միաժամանակ գրահրատարակչական աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ընկերության նախաձեռնությամբ Պոտսդամում 1930 թ-ի հունվարի 1-ին հիմնվեց մի ֆիրմա, որը կոչվում էր «Missionshandlungen und Verlag (Լեփսիուս, Ֆլայշման և Գրաուեր)», և որի կառավարիչը դարձավ Ռ. Շեֆերը:¹²⁸⁵ Նոր ֆիր-

1281. *Sb'u im Namen einer Mutter, „Der Orient“, 1926, էջ 126:*

1282. *Sb'u Mitgliederversammlung, անդ, էջ 96-ի և 97-ի միջև: Հմմտ. Mitgliederversammlung, անդ, էջ 128-ի և 129-ի միջև և այլն:*

1283. *Sb'u „Orient im Bild“, 1929, էջ 61: Հմմտ. Schäfer R., Mitteilungen, „Orient im Bild“, 1930, էջ 48:*

1284. *Sb'u Mitteilungen, „Der Orient“, 1926, էջ 143:*

1285. *Sb'u Mitteilungen, „Orient im Bild“, 1929, էջ 94:*

ման, որին հանձնարարվեց նշված ոլորտների վերահսկումն ու ղեկավարումը, գործում էր որպես իրավանաբորեն անկախ կազմակերպություն, սակայն ծառայում էր բացառապես կազմակերպությանը՝ ըստ վերջինիս հետ կնքված պայմանագրի կազմակերպությանը փոխանցելով նաև իր ամբողջ հավելյալ եկամուտը:¹²⁸⁶

Ընկերության համալիր տեղեկատվական գործունեությունն, անշուշտ, չէր սահմանափակվում միայն պարբերական մամուլի և թուղթիկների թողարկմամբ: Ինչպես շուտով կլուսաբանվի, Տենպել հրատարակչությունում շարունակվում էր նաև հայ ժողովրդի ճակատագրին և պատմությանը նվիրված՝ առանձին ուսումնասիրությունների, մենագրությունների և այլ աշխատությունների հրատարակությունը, հանգամանք, որ անփոխարինելի նշանակություն ուներ թե օգնության աշխատանքներում հասարակայնությանն անցակցությունն ապահովելու և թե Հայկական հարցի այժմեականությունը պահպանելու հարցում: Ըստ այդմ պարբերականներում մեծ տեղ էր հատկացվում հայ ժողովրդի հետպատերազմյան ճակատագրի, Հայկական հարցի քաղաքական շահարկումների և Խորհրդային Հայաստանում ու սփյուռքում տիրող իրադրության համակողմանի լուսաբանմանը: Ընդ որում ուշագրավ է, որ դա հիմնականում իրագործվում էր հայ հրապարակախոսների ուժերով: 1926-30 թվականներին այդ բնագավառում առանձնապես ծանրակշիռ ներդրում ունեցավ դր. Մ. Քրիշչյանը՝ հրատարակելով բազմաթիվ արժեքավոր մենագրություններ, ուսումնասիրություններ և հոդվածներ:¹²⁸⁷ Ոչ պակաս արգասաբեր էին նաև նրա՝ հայ մշակութային արժեքների, մասնավորապես ժողովրդական երգերի և շարականների թարգմանությունները, որոնք 1928 թ-ին հրատարակ-

1286. Անդ:

1287. Տն՝ Krischtschian M., Vorderasien als weltpolitisches Problem, „Der Orient“, 1927, էջ 35-41; Նույնի, Die Orientpolitik der christlichen Mächte im Lichte der armenischen Tragödie, անդ, էջ 96-106; Նույնի, Europas Gewissen“ klagt Europa an, „Orient im Bild“, 1928, էջ 53-54; Նույնի, Das Nationalitätenproblem der Sowjet-Union, „Der Orient“, 1928, էջ 9-15, 38-45; Նույնի, Die Krisis des Islams, „Der Orient“, 1929, էջ 7-16; Նույնի, Türken und Armenier in Vergangenheit und Gegenwart, անդ, էջ 37-46, 69-79 և այլն: Մ. Քրիշչյանը 1931 թ-ին հրատարակեց նաև մի առանձին աշխատություն, որը կոչվում էր „Deutschland und die Ausrottung der Armenier in der Türkei: Տն՝ գրքի գրախոսականը. Besprechungen, „Der Orient“, 1931, էջ 64:

վեցին առանձին գրքով: 1288

Մ. Քրիշչյանի հետ մեկտեղ 1926-29 թթ. պարբերականների էջերում ակտիվ հրապարակախոսական գործունեություն էր ծավալում նաև մեկ այլ օժտված հայ հրապարակախոս՝ Զավեն Զրազդանը, որն ընթերցողներին հայտնի դարձավ իր «Հայաստան», «Արևելյան եկեղեցիներն իրենց ներկայի և ապագայի համար մղվող պայքարում», «Հայաստանին վերաբերող մանդատը» և մյուս՝ գերազանցապես Հայկական հարցին վերաբերվող հոդվածներով: 1289 Իսկ 1929 թ-ին ի դեմս Արտաշես Աբեղյանի¹²⁹⁰ ի հայտ եկավ մի նոր տաղանդավոր

1288. St'u Mitteilungen, „Orient im Bild“, 1928, էջ 32:

1289. St'u Sawen Hrasdan, Armenien, „Der Orient“, 1926, էջ 156-163; Նույնի, Die orientalischen Kirchen im Kampfe um Ihre Gegenwart und Zukunft, „Der Orient“, 1927, էջ 69-79; Նույնի, Das Mandat über Armenien, անդ, էջ 126-130; Նույնի, Die jüngste Türkei, „Der Orient“, 1926, էջ 72-77; Նույնի, Armenien. Schuld oder Wahrheit?, անդ, էջ 102-107; Նույնի, Die Sowjets und die Kirche in Armenien, անդ, էջ 131-132; Նույնի, Im Zeichen der Galgen, անդ, էջ 135-137 և այլն:

1290. Ա. Աբեղյանը ծնվել է 1878 թ-ի հունվարի 1-ին Աստապատ գյուղում (Երասխի ավիին): Տարրական և միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի գյուղում, Շուշիի թեմական դպրոցում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Էջմիածնի ճեմարանում: 1899-1900 թթ. դասավանդել է Շուշիի թեմական դպրոցում: Այնուհետև մեկնելով Գերմանիա՝ 1900-1904 թթ. ուսանել է Լայպցիգում, Բեռլինում և Մարբուրգում՝ Մարբուրգի համալսարանում ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այնուհետև վերադառնալով Թիֆլիս՝ 1905-1919 թթ. աշխատել է Ներսիսյան դպրոցում որպես ուսուցիչ, իսկ 1913-15 թթ.՝ նաև փոխտեսուչ՝ միաժամանակ դասավանդելով նաև տեղի Գովնանյան օրիորդաց վարժարանում: 1921-22 թթ. մեկնելով Կ. Պոլիս՝ դասավանդել է այնտեղի Եսայան վարժարանում: Սանկավարժական ողջ գործունեությանը զուգահեռ ակտիվորեն աշխատակցել է բազմաթիվ հայկական հանդեսների և այլ պարբերականների: 1922 թ-ից քնակություն է հաստատել Բեռլինում մինչև 1924 թ. դարձյալ ուսանելով տեղի համալսարանում: 1925 թ-ին պրոսական կրթության նախարարին ուղղված իր դիմումի հիման վրա նա Բեռլինի համալսարանին կից Արևելյան լեզուների ճեմարանի ծրագրում ներմուծեց հայերեն՝ այնտեղ նշանակվելով հայոց լեզվի դասախոս: Մինչև 1936 թ-ը նա մնացել է այդ պաշտոնում, այնուհետև, 1936-40 թթ. դասավանդել է վերակազմված արտասահմանագիտական ճեմարանում, իսկ 1940-45 թթ. համալսարանի նորակառույց արտասահմանագիտական ֆակուլտետում և փիլիսոփայության ֆակուլտետում: Ա. Աբեղյանը երկար տարիներ եղել է նաև Գերմանա-հայկական ընկերության փոխնախագահը՝ 1937-1944 թթ. դր. Պ. Ռոիրբախի հետ խմբագրելով նաև ընկերության «Հայաստան» պարբերականը: Պատերազմի տարիներին եղել է Բեռլինում հիմնված Հայ ազգային

հրապարակախոս ևս, որն այդ և հաջորդ տարիներին իր թեմատիկ մեծ բազմազանությամբ հատկանշվող հրապարակումներով զգալի ավանդ ունեցավ հայոց պատմության, մշակույթի և հոգևոր արժեքների լուսաբանման խնդրում:¹²⁹¹ Ընկերության պարբերական մամուլում հանդես եկող հայ հրապարակախոսների այդ ընտանիքը 1929-30 թթ. համալրեց նաև Վահան Ամատունին, որն առավելապես հանդես էր գալիս հայ եկեղեցուն, նրա պատմությանը և բարենորոգչական նախաձեռնություններին նվիրված հոդվածներով:¹²⁹²

Ինչևէ, քանի որ 1920-ական թվականներին զանազան շրջաններում դարձյալ սկսել էին դժգոհություններ ի հայտ գալ այն առնչությամբ, որ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն կատարում էր բացառապես մարդասիրական գործունեություն և ամենևին չէր զբաղվում հայկական կամ նույնիսկ մահմեդական շրջաններում ավետարանական քարոզչության իրականացմամբ,¹²⁹³ այդ և նման մտայնությունների դեմ պայքարը շարունակում էր մնալ ընկերության հրապարակախոսության օրակարգում: Հիշյալ տեսակետների քննարկման և հարցի առնչությամբ ընկերության դիրքորոշումը վերստին հիմնավորելու նպատակով Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն 1926 թ-ի սեպտեմբերի 27-ին կազմակերպեց մի համաժողով, որտեղ զեկուցումներով հանդես եկան Լիզա Ռեյերը և Վիլլի Ջեգերը, և որին ներկա էր ու իր գործուն մասնակցությունը

խորհրդի նախագահը՝ մեծ դեր ունենալով հայ ռազմագերիներին օգնելու և հայության ազգային շահերի պաշտպանության հարցում: Ա. Արեոյանը Գերմանիայի գրողների միության անդամ էր և աշխատակցել է Գերմանական բազմաթիվ պարբերականների՝ հրատարակելով հայ գրականությանը, լեզվին և մշակույթին նվիրված բազմաթիվ հոդվածներ: 1945 թ-ին նա տեղափոխվել է Վյուրտենբերգ, իսկ 1951 թ-ին քնակություն է հաստատել Մյունխենում՝ Բավարիայի կրթության նախարարի հրավերով տեղի համալսարանում դասավանդելով հայերեն (գրաբար և աշխարհաբար): Տե՛ս Հայկականություն-արիականություն, Երևան, 2001, էջ 107-109:

1291. Տե՛ս Abeghian A., Die neue Literatur der Ostarmerier, „Der Orient“, 1929, էջ 165-174; Նույնի, Armenische Fabeln, „Orient im Bild“, 1930, էջ 29; Նույնի, Die Armenier im Auslande, „Der Orient“, 1930, էջ 33-41; Նույնի, Lenktemur, անդ, էջ 55-56; Նույնի, Die armenische Frau, անդ, էջ 108-115 և այլն: 1292. Տե՛ս Amatuni W., Reformationsbestrebungen in der armenischen Kirche, „Der Orient“, 1929, էջ 50-53 և 79-81; Նույնի, Reformationsbestrebungen innerhalb der armenischen Kirche, „Der Orient“, 1930, էջ 20-25 և այլն:

1293. Տե՛ս Korrespondenz, „Der Orient“, 1926, էջ 31:

քերեց նաև օր. 4. Յեպեն: Համաժողովը, միանշանակորեն հերքելով հայ եկեղեցու «անկենդանության» վերաբերյալ դեռ գոյատևող ըմբռնումները, մեկ անգամ ևս փաստեց իր քննադատների՝ որպես կանոն այդ ըմբռնումների վրա խարսխված տեսակետների սնանկությունը: «Հենց միայն հայ եկեղեցու կյանքն ու կենսունակությունը,- այդ առթիվ նշում էր ընկերության պարբերականը,- ապացուցում են հարյուրամյակներով հաստատված այն փաստը, որ քրիստոնեության մեջ համախմբվածությունը, հակառակ բոլոր հալածանքներին, կյանքի գործոնն է, որն ապացուցվել է մարտիրոսությամբ: Մի եկեղեցի, մի ժողովուրդ, որը մեռնում է իր հավատի համար, մեռած չէ»: ¹²⁹⁴

Քանի որ, սակայն, հիշյալ մեղադրանքները չէին շտապում տեղի տալ, ընկերությունն իր համակողմանի պարզաբանումները շարունակեց նաև հետագայում: Հակադրվելով միսիայի հասկացողության հիշյալ կարծրացած ըմբռնումներին և հանգամանալից հերքելով դրանք՝ Թ. Շնայդերն իր «Կարեն Յեպեն որպես միսիոներուհի» հոդվածում Կ. Յեպեի փրկարար գործունեությունը բնութագրում էր որպես այն ճշմարիտ և աստվածահաճո «միսիան», որին պետք է նվիրվեր իսկական «միսիոները»: «Որոշ շրջաններ, որոնք միսիան առանց մկրտության և հեթանոսների դարձերի չեն կարող պատկերացնել,- նշում էր նա,- արդեն այն տեսակետն են արտահայտել, որ Լեփսիուսի Առաքելության աշխատանքը միսիոներական ընկերության անվանումը չի վաստակում, այլ միայն մարդասիրական բնույթ ունի: ...Այսօր յուրաքանչյուր խելացի միսիայի կարգախոսը պետք է լինի ոչ թե նոր դավանափոխությունների կատարումը, այլ նրանց վերածեռքբերումը, որոնք մեր մեղքով կորել են, նրանց պահպանումը, որոնց սպառնում է կործանումը...»: ¹²⁹⁵

Ավելին, «միսիայի» ավանդական ըմբռնումը Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի համոզմամբ այլևս չէր համապատասխանում ժամանակի պահանջներին, և նույնիսկ մահմեդական շրջանների ավետարանականացման պահանջները ինքնանպատակ ու ժամանակավրեպ էին ու կշարունակեին լինել այնքան ժամանակ, քանի դեռ առկա էր հալածված և առևանգված քրիստոնյաներին մահմեդականացումից փրկելու գերինդիոր: «Հավանաբար

1294. Stü Die Mitarbeiter-Konferenz, „Der Orient“, 1926 էջ 147:

1295. Schneider Th., Karen Jeppe als Missionarin, „Orient im Bild“, 1929, էջ 4:

առաջին հայացքից օտարոտի է թվում, որ մենք որպես ավետարանական միսիա մեր առաջադրանքը չենք համարում հայ ժողովրդի ներսում կամ հայ ժողովրդի մեզ վստահված երեխաների մեջ ավետարանական-եկեղեցական ուսմունքը «ներմուծելը»: Սակայն ավելի խորագնին կշռադատման դեպքում պարզ կդառնա, որ միսիայի գաղափարը չի նշանակվում քրիստոնյա հավատակիցներին մեկ այլ եկեղեցուց «բերել» սեփական եկեղեցին: ...Հայության փրկության գործը, որբերի խնամքն ու փրկագնման աշխատանքը հենց այն իմաստով է միսիոներական աշխատանք, որ արդեն գրավված տարածքը իսլամից դարձյալ խլվում է, և բացի այդ քրիստոնյա եկեղեցիների հյուծված անդամները ամրապնդվում են և քաջալերվում և ունակ դառնում դիմանալու»: 1296

Դր. Լեփսիոսի ԳԱԱ-ն իր ընդդիմախոսների մեղադրանքների սմանկությունը փաստարկում էր հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ գոյություն ունեցող թյուր տեսակետների հերքման միջոցով՝ ի ցույց հանելով դրանց անհեթեթությունն ու կանխակալությունը և մըշտապես նորովի հաստատագրելով նաև հայ լուսավորչական շրջաններում քարոզչության վարման անթույլատրելիությունը: «Մենք միշտ հրաժարվել ենք հայոց հին եկեղեցին բողոքականացնել, տեղեկացնում էր ընկերությունը 1929 թ-ին, որովհետև իրավունք չունենք պառակտել մի քրիստոնյա եկեղեցու, որը պատմության մեջ հնագույնն է, այլ պետք է ծառայենք նրան: Հին եկեղեցիների թուլությունները մեզ, իհարկե, հայտնի են, ինչպես հայտնի է նաև այն, որ այդ «թույլ» եկեղեցին մեկ և կես հազարամյակ է, ինչ իսլամի կենտրոնում դիմակայման և կենսունակության այնպիսի ուժ է ի հայտ բերել, որպիսին արևնոյան

1296. Schäfer R., Werden die armenischen Kinder konfirmiert?, „Orient im Bild“, 1929, էջ 71: Հայ լուսավորչական շրջաններում քարոզչության և դավանափոխման խնդրի հանդեպ ընկերության դիրքորոշումն այն աստիճան միանշանակ էր, որ դր. Շյուբցն, օրինակ, 1928 թ-ին Ղազիր կատարած իր այցելության ընթացքում հրաժարվել էր մկրտել լուսավորչական ընտանիքների երեխաներին բողոքական եկեղեցու կանոններով մկրտումը թույլատրելի համարելով միայն բողոքական ընտանիքների երեխաների համար: «Մենք ուշադրություն դարձրեցինք, որ միայն բողոքական հայերն իրենց երեխաներին բերեն մեզ մոտ մկրտելու, նշում էր նա, քանի որ մենք սկզբունքորեն մեզ իրավունք չենք վերապահում հայ լուսավորչական ծնողների երեխաներին մկրտել: Մենք հայ եկեղեցին համարում ենք ծագումով հավասարաբոց եղբայրական եկեղեցի և խնամքով խտաախում տալովորություն ստեղծելուց, թե մենք քրիստոնյաներու, քրիստոնյաների մեջ ուզում ենք միսիոներությամբ զսաղվել»: Sten Schütz P., Dr. Schütz in Ghahir, „Orient im Bild“, 1928, էջ 50:

ելեղեցիները դեռ պետք է ապացուցեն: ...Մենք պարտավոր ենք ակնածանք տածել այդ փաստի հանդեպ»:¹²⁹⁷

Այդ և նման այլ հրապարակումներով մերկացնելով քարոզչության կողմնակիցների գաղափարական սնանկությունն ու կանխելով այն թյուրիմացությունները, որ կարող էին ի հայտ գալ հիշյալ մեղադրանքների հետևանքով՝ Դր. Լեփիսիուսի ԳԱԱ-ն միաժամանակ համակ ուշադրությամբ էր հետևում նաև աշխարհում կատարվող այն իրադարձություններին կամ տեղեկատվական հրապարակումներին, որոնք առնչվում էին հայ ժողովրդին: Ընդ որում, այդ անդրադարձը չեզոք կամ հայեցողական բնույթ չունեի. դրանք ստանում էին իրենց սպառնիչ գնահատականը, և եթե մի դեպքում կազմակերպությունը հանդես էր բերում իր զորակցությունը,¹²⁹⁸ ապա մեկ այլ դեպքում հարկադրված էր ծառանալ կեղծիքների կամ զրպարտությունների դեմ: 1928 թ-ին, օրինակ, „Der Orient“-ը սուր քննադատությամբ էր անդրադառնում հայ փախստականներին գերմանական կառավարության կողմից կատարված մի նյութական հատկացման առնչությամբ «Berliner Börsen-Zeitung»-ի բողոքարկումներին՝ դրանցում տեսնելով «հակասեմիտական դիրքորոշում»:¹²⁹⁹ Սուր քննադատության էր ենթարկվում նաև Գերմանիայի որոշ շրջաններում շարունակ իշխող «թուրքոմանիան», որի հետևանքով փորձեր էին կատարվում

1297. Schäfer R., Werden die armenischen Kinder konfirmiert?, „Orient im Bild“, 1929, էջ 71:

1298. St'ü Internationale Konferenz des Hilfsverbandes für den Nahen Osten in Genf, „Der Orient“, 1926, էջ 147-150: Հմմտ. Die Rede von Dr. Nansen vor dem Völkerbund, անդ. էջ 42: Հմմտ. Die Zukunft der Armenier in Syrien, „Der Orient“, 1927, էջ 60: Հմմտ. Dr. Nansens Plan und die Weltmächte, անդ. 1928, էջ 89 և այլն: Պարբերականներն անդրադառնում էին նույնիսկ ամենափոքրիկ քարե-գործական նախաձեռնություններին, որն ապացուցում էր, թե որքան հետևողականորեն էր այդ կուրսն իրականացվում. զորոհմանակ «Մենք շնորհակալություն ենք հայտնում պարոն Դ. Սանդներին Բեռլինում գտնվող մի հայ փախստական այրու առամների հնգամգամյա սպասարկման համար».- գրում էր „Der Orient“-ը 1926 թ-ին: St'ü Mitteilungen, „Der Orient“, 1926, էջ 94: Եվ կամ «Մենք ուսումնատեղ ենք փնտրում 16 տարեկան մի հայ տղայի համար, որը հորը կորցրել է աքսորի ժամանակ... Հայտերը ներկայացնել մեր գրասենյակին»: Անդ:

1299. St'ü Eine Million Mark für die armenischen Flüchtlinge und eine Zuschrift, „Der Orient“, 1928, էջ 84:

հայ ժողովրդի ողբերգությունները ներկայացնել «Ժուռ» հայելու մեջ և նույնիսկ արդարացնել դրանք: «Մենք Գերմանիայում այժմ մի գիտակից քրիստոնեական քաղաքական կուսակցության հետ միասին ունենք նաև համապատասխան մամուլ,- գրում էր, օրինակ, «*Orient im Bild*»-ը՝ անդրադառնալով «*Das neue Sächsische Kirchenblatt*»-ում և «*Pfarramtspraxis*»-ում 1930 թ-ին լույս տեսած ապակողմնորոշիչ հրապարակումներին: Արդյո՞ք այն ի վիճակի չէ տալ այնպիսի տեղեկատվություն, որը զերծ կլինի թուրքոմանիայից և հանդես կգա ճնշված ու հալածված քրիստոնյա ժողովրդի իրավունքների համար»: 1300 Ընդ որում հակահայկական կեղծ լրատվության դեմ պայքարն արդյունավորվում էր նաև գաղափարակից շրջանների համագործակցությամբ և մասնավորապես ակտիվ տեղեկատվական փոխանակություններով: 1931 թ-ին, օրինակ, «*Orient im Bild*»-ում արտատպվեցին նաև «*Die Christliche Welt*» պարբերականի արծազանքները նշված հրապարակումների վերաբերյալ: «Այն բանի համար, նշում էր այնտեղ Է. Շթիրը,- որ նաև խոհեն շրջաններում են այդքան թյուր դատողություններ կատարվում հայերի ողբերգության մասին, կա միայն մեկ բացատրություն. թուրքոմանիան, որը պատերազմից ի վեր Գերմանիայում ակնհայտորեն դարձել է անբնաջնջելի... »: 1301

Այդ «թուրքոմանիայով» առաջնորդվող հրապարակումների սնանկությունն առավել տեսանելի դարձնելու համար պարբերաբար ներկայացվում էին փրկագնված երեխաների և այլ անձանց կենսագրությունները, որտեղ Մեծ եղեռնը շարունակ նոր և էլ ավելի սահմըկեցուցիչ կողմերով էր առարկայանում: 1302

1927-28 թվականներին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հրապարակախոսական տեսադաշտում էր նաև աքսորված հայերի ունեցվածքի բռնագրավումից գոյացած՝ 5 միլիոն ֆունտ ստեռլինգ դրամազլխի խընդիրը, որի մասին արդեն հիշատակել ենք: «Լավագույն աղբյուրնե-

1300. St'u Mitteilungen, „Orient im Bild“, 1931, էջ 47:

1301. Անդ:

1302. St'u Jeppe K., Seltsame Rettung, „Orient im Bild“, 1927, էջ 28-31: Դմնտ. Künzler J., Des Armeniers Kosrof schwerste Stunden, „Orient im Bild“, 1929, էջ 46: Դմնտ. Künzler J., Aug´ um Auge, Zahn um Zahn – oder – feurige Kohlen, անդ, 1929, էջ 53-54 և այլն:

րից տեղեկանում ենք,- նշվում էր 1927 թ-ին հրատարակված «Հայկական հարյուրավոր միլիոնների բանկային ունեցվածքը և Անգլիան» ակնարկում,- որ հայերի (ժամանակին ժամանակավորապես արգելակալանքի տակ դրված) նախկին բանկային ունեցվածքը հավասարազոր 5 միլիոն անգլիական ֆունտի կամ 100 միլիոն մարկի, Անտանտի կողմից բռնագրավված է և անգլիացիներին խոստացվել է որպես հատուցում թուրքիայում կորած անգլիական ունեցվածքի դիմաց: Մենք չգիտենք այդ ստույգ տեղեկություն է, թե ոչ, և դա պարզելու ակնկալիքով այն հանձնում ենք հասարակությանը»: ¹³⁰³

Առժամանակ անց կազմակերպությունը հայտարարում էր, որ այդ տեղեկությունը «ճիշտ է դուրս գալիս: Ոչ մի կողմից որևէ հերքում կամ ուղղում չի ստացվել: Թվում է, թե իրականում քաղաքականությունը և էթիկան ոչ մի կապ չունեն միմյանց հետ, եթե դա այսօրինակ տարրական իրավիճակում խափանվում է՝ հայերի միլիոնները թողնելով անգլիացիների ձեռքում»: ¹³⁰⁴

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն այդ միլիոնների ճակատագրին հետևում էր նաև հետազայում ձգտելով հետամուտ լինել դրանց գեթ մասնակի վերադարձմանը, ինչը սակայն, ինչպես հայտնի է, տեղի չունեցավ: ¹³⁰⁵

Ինչևէ, վերոնշյալ համալիր կազմակերպական և հրապարակախոսական գործունեությունն, ինչպես հարկն է, արդյունավորվեց, և ընկերությունը կարողացավ անընդմեջ շարունակել համապարփակ փրկարար աշխատանքները, որոնք, ինչպես արդեն նշվել է, 1924 թ-ից, Գերմանիայի տնտեսական սուր ճգնաժամի հաղթահարումից հետո մեկնարկվեցին տարագիր արևմտահայության երկու մեծ հանգրվաններում՝ Սիրիայում (Հալեպ) և Լիբանանում (Ղազիր):

1303. St'u Die Armenische Hundertmillionen-Bankguthaben und England, „Der Orient“, 1927, էջ 113:

1304. St'u Aus der Zeit, անդ, էջ 132:

1305. Բալդինը և Ազբուիթը,- տեղեկացնում էր ընկերությունը 1928 թ-ին,-, ... մի հուշագիր են հանձնել Մակդոնալդի կաբինետին, որով պահանջվում էր 5 միլիոն քուրքական ոսկե լիրայի (որը թուրքական կառավարությունը 1916 թ-ին որպես երաշխիք թողել էր Գերմանիայի պետական բանկում) գոնե մի մասը հատկացնել Նանսենի ծրագրին: Անհասկանալի է, թե ինչու այդ դիմումն իր նախտակին չհասավ»: St'u Armenien. Die Beschlagnahmung des armenischen Guthabens von fünf Millionen Pfund Sterling zugunsten englischer Interessen, „Der Orient“, 1928, էջ 25:

§ 4

**ՀԱՍՎՊԱՐԹԱԿ ԾՐԿԱՐԱՐ
ՎՇԽԱՏՎՆՔՆԵՐԸ
ՆՈՐ ՄՎԱՍՆՎՃՅՈՒՂԵՐՈՒՄ**

**4. 1. Մեծ եղեռնի ընթացքում
առևանգված հայ որբերի և
կանանց հայտնաբերման ու
ազատագրման աշխատանքները**

Աքսորի ընթացքում առևանգված և դեռ բռնի մահմեդականների տներում պահվող հայ կանանց ու երեխաների ճակատագիրը 1920 թ-ին Ազգերի լիգայում բուռն քննարկումների առարկա էր դարձել: Քանի որ նրանց պարագայում խնդիրը վերաբերում էր միջազգայնորեն դատապարտված և արգելված այնպիսի մի իրողության, ինչպիսին ստրկավաճառությունն էր, լիգան իրեն պարտավորված էր զգում գործուն քայլեր ձեռնարկել այդ դժբախտների փրկության նպատակով:¹³⁰⁶ Ըստ այդմ, այն իր 1920 թ-ի դեկտեմբերի 15-ի անդրամիկ նիստում վճռեց ստեղծել մի հանձնաժողով, որը մեկնելով Արևելք՝ պետք է ըստ հնարավորին մանրամասն տեղեկություններ հավաքեր նրանց վերաբերյալ:¹³⁰⁷ Հանձնաժողովը, որի կազմում էր Քենեդիից և էմմա Կուշմանից բացի ներգրավվեց նաև Լեփսիուսի երկարամյա

1306. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 21:

1307. S'n Maßnahmen des Völkerbunds zur Rettung der von Türken verschleppten armenischen Frauen und Kinder, „Der Orient“, 1922, էջ 9:

աշխատակից օր. Կարեն Յեպեն, Ազգերի լիգայի՝ 1921 թ-ի սեպտեմբերի 21-ի նիստում ներկայացրեց իր հետազոտության արդյունքներն, ըստ որոնց զինադադարին հաջորդող շրջանում 90 000 հայ որբեր մահմեդական գերությունից ազատագրվել և տեղավորվել էին որբանոցներում, իսկ շուրջ 73 000 երեխաներ և հազարավոր կանայք ու աղջիկներ դեռ գտնվում էին գերության մեջ:¹³⁰⁸

Ազգերի լիգան համապատասխանաբար իր սեպտեմբերի 23-ի նիստում ընդունեց որոշում փրկարար աշխատանքները սկսելու մասին, որոնց կազմակերպումը և իրականացումը հանձնարարվեց նըշված հանձնաժողովի անդամներին: Այդպիսով նրանք ստանում էին մի նոր՝ այսպես կոչված «Կառավարման մարմնի» կարգավիճակ՝ գործելով Ազգերի լիգայի կոմիսարի ենթակայության ներքո:¹³⁰⁹ Ճակատագրի բերումով Յեպեն պետք է դառնար նաև այդ նոր դժվարին առաքելության ոգին և հերոսը:

Անշուշտ, հեշտ չէր ստանձնել նման մեծ պատասխանատվություն, երբ Ազգերի լիգան. համաձայնելով հովանավորել որբերի և կանանց ազատագրումը, նրանց ճակատագրերի հետագա տնօրինման հարցում որևէ հանձնառություն չէր կամենում ստանձնել: Այն միտքը, որ դժբախտ մարդիկ մահմեդականների տներից դուրս բերվելուց հետո պետք է մատնվեին բախտի քմահաճույքին, Յեպեի մեջ հոգեկան մեծ երկվություն էր ստեղծել: «Նախնական հետազոտության արդյունքն այնպիսին էր, որ այստեղ մի ահռելի մեծ առաջադրանք իր լուծմանն էր սպասում, նշում էր նա հետադարձ հայացքով: -Նույնիսկ եթե բանտարկված հայերն ազատագրվեին, ապա նրանց փրկությունը միայն կիսով չափ կատարված կլիներ: Նրանց պետք էր նաև հնարավորություն ընձեռել, որ դարձյալ կարողանային իրենց ժողովրդի մեջ տեղ զբաղեցնել, այո, ամենաճիշտը կլիներ այն, որ այդ տեղը նրանց համար նախապես ստեղծվեր: Չէ՞ որ նրանք ամբողջությամբ խլված էին յուրայիններից, մեծ մասն այլևս որևէ մերձավոր չէր գտնի և կմատնվեր միայնության»:¹³¹⁰

Երբ, սակայն, Յեպեն ի դեմս հայերի դանիացի բարեկամների և

1309. Անդ:

1308. Անդ:

1310. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, Էջ 21:

Լեփսիոսի գտավ օգնականներ, որոնք պատրաստ էին զորավիզ լինել և նրա հետ ստանձնել պատասխանատվությունը, նրա մեջ ամրապնդվեց այն հույսը, որ համատեղ ուժերով հնարավոր կլիներ դժբախտ մարդկանց հետագա գոյատևման համար միջոցներ հայթայթել:¹³¹¹ Ուստի նա կարող էր կայացնել իր վճռը և ձեռնամուխ լինել փրկարար աշխատանքների կազմակերպմանը:

Լեփսիոսի հետ համագործակցության հեռանկարները պարզաբանվեցին 1921 թ-ի սկզբին (Չատիկից մեկ շաբաթ առաջ), երբ Յեպեն հիշյալ հանձնաժողովի կազմում Արևելք մեկնելիս Պոտոսդամում այցելեց նրան և իրազեկեց Ազգերի լիգայի նոր մտադրության մասին:¹³¹² Հատկանշական է, որ չնայած նախապես ծրագրվել էր աշխատանքները սկսել Կ. Պոլսի մերձակա՝ Անտանտի կողմից գրաված տարածքներում, սակայն Լեփսիոսի հետ հանդիպումից հետո Յեպեն վճռեց հնարավորության դեպքում հաստատվել Ուռհայում, իսկ եթե Թուրքիայի ներքին անկայունությունն այդ չթույլատրեր, ապա Հալեպում:¹³¹³ Ընտրությունն, անշուշտ, պատահական չէր: Ուռհան Լեփսիոսի և Յեպեի վաղեմի աշխատավայրն էր, և տարիների փորձառությունն ու ճանաչողությունն այնտեղ կարող էին խիստ օգտակար լինել: Իսկ Հալեպը նախընտրելի էր որպես ճանապարհների խաչմերուկ և հյուսիսային Միջագետքի բնական կենտրոն, որտեղ առևանգված կանանց և երեխաների թիվն, ըստ հավաստի տվյալների, պետք է խիստ մեծ լիներ, և որը միաժամանակ Ուռհայից հեռու չէր: Այդ ենթադրությունները հաստատվեցին նաև Յեպեի ճանապարհորդության ընթացքում կատարված նախնական հետազոտության արդյունքներով, ըստ որոնց միայն Սիրիայում և Միջագետքի հյուսիսային շրջաններում կային շուրջ 30 000 առևանգված կանայք և երեխաներ:¹³¹⁴

Թուրքիայում շարունակվող պատերազմական իրադրության և ներ-

1311. Sick I. M., Karen Jeppe..., էջ 193: Հայ ժողովրդի դանիացի քարեկամների կոմիտեն, որին անդամակցում էր Յեպեն, նրան խորհուրդ էր տալիս առաջարկն ընդունել՝ երաշխավորելով իր աջակցությունը: Անդ:

1312. Lepsius J., Mitteilung, „Der Orient“, 1921, էջ 62-63:

1313. Անդ:

1314. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 21:

քաղաքական անկայունության պայմաններում Ուռհան բնականաբար չէր կարող հենակետ դառնալ փրկարար աշխատանքների համար, և Յեպեն նպատակահարմար գտավ հաստատվել Չալեպում: Մահմեդականների մոտ գտնվող հայ կանանց և երեխաների ազատագրումը չափազանց բարդ խնդիր էր, քանի որ Ազգերի լիգան այդ նպատակով մահմեդական իշխանությունների վրա որոշակի դիվանագիտական կամ ռազմական ճնշում գործադրելու մտադրություն չուներ, և Յեպեն հարկադրված էր գործել միայնակ՝ ապավինելով սոսկ սեփական ուժերին և հնարամտությանը:¹³¹⁵ Նա հարկադրված էր նաև ըստ հնարավորին խուսափել մահմեդականների հետ առճակատումներից, ինչը զրեթե անհնար էր թվում, եթե հաշվի առնենք, որ Մեծ եղեռնից արդեն անցել էր յոթ տարի, և այդ ընթացքում ճանաչելով «հայկական ռասան», հայ կանանց և երեխաների «բնածին օժտվածությունը»՝ մահմեդականները չէին համակերպվի նրանցից հրաժարվելու մտքի հետ: «Որպես կանոն մահմեդական անուսինը հիացած է իր հայ կանանցով.- նշում էր այդ առթիվ Կ. Յեպեն.- քանի որ նրանք ավելի բարձր մարդկային տեսակ են իրենցից ներկայացնում, քան մահմեդական կանայք»:¹³¹⁶

Նրան, սակայն, բավականաչափ հայտնի էր հայ կնոջ «խորշանքը պարտադրված անուսնու հանդեպ», ուստի նա հույս ուներ, որ եթե կանանց արիություն ներշնչվեր և նաև ճանապարհին որոշ օգնություն ցուցաբերվեր, ապա նրանք առանց տատանվելու՝ կդիմեին փախուստի:¹³¹⁷ Յեպեի համոզմամբ, նույնը վերաբերում էր այն երեխաներին, ովքեր քսոսի ժամանակ եղել էին 5-12 տարեկան և դեռ չէին սնուցվել իրենց ազգային պատկանելությունն ու եղերական անցյալը: Այլ էր խնդիրը, սակայն, մանկահաս երեխաների պարագայում, ովքեր իրենց մայրերից խլվել էին օրորոցային տարիքում և ապրելով մահմեդականների մեջ՝ իրենց ազգային պատկանելության մասին գաղափար իսկ չուներին: Այդպիսիներին փրկելու հնարավորություն զրեթե չկար,

1315. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 21:

1316. Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 59:

1317. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 21:

քանի որ խիստ դժվար էր պարզել նրանց ինքնությունը, և բացի այդ նրանք կարող էին մահմեդական միջավայրից խլվել միայն ուժային միջոցներով, որոնք Յեպեն իր տրամադրության տակ չուներ։¹³¹⁸

Ինչևէ, չնայած վերոնշյալ բարդություններին, նա լիահույս էր, որ կկարողանար իր առաջադրանքն իրականացնել, և, որ ամենաուշագրավն է, նրա լավատեսությունը պայմանավորված էր գլխավորապես հայ ժողովրդի ազգային և բարոյահոգեբանական նկարագրի քաջատեղյակությամբ: «Ու՞մ գարմանք չի պատճառել հայերի ինքնապահպանման անհաղթելի բնագղը, որը նրանց ոչ միայն որպես անհատների, այլև շատ ավելի որպես ժողովրդի է հզորացնում,- նշում էր նա իր տեղեկագրերից մեկում: -Կարելի էր կանխատեսել, որ այն հսկայական ուժը, որը հայ ժողովուրդն իրեն հատկացված պոստում որպես մեր ռասայի, մեր մշակույթի, մեր կրոնի պիոներ Ասիային դեմ հանդիման պահպանել է, և որը վերջին տարիների անլուր իրադարձությունների ընթացքում ևս իր ազդեցիկությունը ի հայտ է բերել, այժմ նրանց միայնության մեջ նույնպես կպաշտպաներ մահմեդականներին բաժին դառնալուց»:¹³¹⁹

1922 թ-ի գարնանից հաստատվելով Չալեպում՝ Յեպեն այնտեղ հիմնեց մի այսպես կոչված՝ «փախստականների կացարան», որտեղ նրանք կարող էին առժամանակ ապրել, մինչև հոգ կտարվեր նրանց հետագա ճակատագրի մասին: Այն սկզբում բաղկացած էր Չալեպի կենտրոնում, հայկական ճամբարի մոտ կանգնեցված մի մեծ վրանից: Յետագայում, փախստականների թվի մեծացմանը զուգահեռ հարկ ե-

1318. Չնայած դրան, երբեմն տեղի էր ունենում նաև անհավատալին: Ինչպես վկայում էր Յեպեն, տարիներ շարունակ մահմեդական վրանում ապրած տղաները կամ աղջիկները, որոնք համոզված էին եղել, որ տվյալ ընտանիքի երեխաներն են, մի օր արթնանում էին երազից, իրենց զգում որպես հայեր և այդ պահից ձգտում դեպի իրենց ժողովուրդը: Տե՛ս անդ, էջ 22: Կամ, օրինակ, մի փոքրիկ աղջիկ մի հայկական ժամերգությունից այնպես էր ազդվել, որ սեփական նախածեռնությամբ վերադարձավ հայկական համայնքի գիրկը: Մեկ ուրիշ տղայի վրա նույնօրինակ ազդեցություն էր գործել Չալեպի հայկական եկեղեցու բակի տեսարանը: Նման դեպքերը, սակայն, մեծ թիվ չէին կազմում: Տե՛ս Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 61: 1319. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 22:

ղավ ընդլայնել նաև նրանց ընդունման համակարգը, և 1922 թ-ի վերջին վարձակալվեց մի տուն, որը շրջապատվեց վրաններով: Քանի որ, սակայն, վրանները տևական ապաստան չէին կարող դառնալ, և բացի այդ կարճ ժամանակից դարձյալ տարածքի ընդլայնման անհրաժեշտություն առաջացավ, Յեպեն 1923 թ-ին քաղաքից դուրս, զովասուն այգիներում վարձակալեց մի ընդարձակ հողամաս, որի վրա հիմնվեց նոր կացարանը:¹³²⁰ Այն բաղկացած էր մի մեծ փոխադրելի բարաքից, որն ուղարկել էր Լոնդոնի հայկական կարմիր խաչը,¹³²¹ և չորս համեմատաբար փոքր տներից, որոնք կառուցվեցին Յեպեի միջոցներով: Բացի այդ, փրկագնվող կանանց և օր. Յեպեի բնակության նպատակով հողամասի մոտակայքում վարձակալվեց մեկ ուրիշ տուն, որտեղ տեղավորվեցին նաև խոհանոցը, մառանները, լոգարանը և ճաշասենյակը:¹³²² Այդ ամբողջ համալիրը, որի ձեռքբերման համար ընդհանուր հաշվով ծախսվեց 26 800 մարկ, կարող էր տեղ ապահովել շուրջ 200 փախստականների համար¹³²³ և որպես ժամանակավոր կացարան լիովին բավական էր հարաճուն պահանջները բավարարելու համար: Հավաքագրելով մի շարք վստահելի գործակալների՝ Յեպեն 1922 թ-ին ձեռնամուխ եղավ փրկարար աշխատանքների կազմակերպմանը, որոնք ծավալվեցին Դեր Ես Չոր-Հասսիչե-Մարդին ուղղությամբ:¹³²⁴ Աշխատանքի արդյունավետության ապահովման և միաժամանակ «բանտարկյալների» փախուստը դյուրացնելու նպատակով նա այդ քաղաքներում հիմնեց գաղտնի գործակալություններ և հավաքակալաններ, որտեղ նրանք կարող էին ընդունվել, կազդուրվել և ստանալով սնունդամթերք ու դրամ՝ շարունակել իրենց ճանապարհը: Բացի այդ մի գոր-

1320. Կ. Յեպեն նոր տարածքն ընտրելիս հաշվի առավ այն հանգամանքը, որ փախստականների մեծ մասը գալու էր գյուղական վայրերից և հեշտությամբ չէր հարմարվի քաղաքային կյանքին: Տե՛ս Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 19:

1321. Բարաքը պարունակում էր մի մեծ դասասենյակ, մեկ սենյակ ուսուցիչների և երկու մնջարան տղաների համար, իսկ ձեղնահարկը ծառայում էր որպես աղջիկների մնջարան: Տե՛ս Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 18:

1322. Անդ:

1323. Անդ:

1324. Անդ, էջ 39:

ծակալություն ստեղծվեց նաև Ջարաբլուսում. որը խիստ կարևոր վայր էր Եփրատի գետանցի առունով, և որի առաջադրանքն էր թուրքիայից եկող հայերին օգնել անցնելու Սիրիայի տարածքը:¹³²⁵

Թուրքական քաղաքների հետ կապը հիմնականում պահպանվում էր ջորեպանների կամ որպես այդպիսին հանդես եկող գործակալների միջոցով,¹³²⁶ որոնք իրենց հերթին հայ «բանտարկյալների» և մասնավորապես հարեմներում գտնվող հայուհիների հետ հազորդակցվելու համար օգտվում էին այնտեղ անարգել մուտքի իրավունք ունեցող անձանց օրինակ, կույր երաժիշտների կամ լվացարարուհիների ծառայությունից,¹³²⁷ և ապա ձեռք բերելով համապատասխան պայմանավորվածություն՝ նրանց օգնում էին փախչել Չալեպ:¹³²⁸ Իսկ ինչ վերաբերում էր հավաքակայանների կամ այլ կերպ ասած՝ մասնաճյուղերի գործունեության վերահսկողությանն ու փոխադարձ կապի ապահովմանը, ապա Յեպեն այդ հանձնարարեց իր որդեգիր Մ. Մելքոնյանին, որը սկզբից ևեթ դարձավ նրա «աջ ձեռքը»:¹³²⁹ Չավաքակայանների հետ կապը պահպանելու, հետախուզումների և թույլ ու անառողջ հայուհիներին Չալեպ տեղափոխելու գործում անփոխարինների նշանակություն ուներ մի ամերիկուհու՝ Աննա Գիլպինի կողմից Կ. Յեպեին հատկացված ավտոմեքենան, որը հայտնի էր «Փրկարար մեքենա» կամ «Աննա-մեքենա» անվամբ:¹³³⁰

Ինչևէ, Յեպեի «պրոպագանդան անտեսանելի և աննկատ կերպով

1325. Անդ:

1326. Անդ:

1327. Hetzel G., An die Pflegeeltern unserer Waisen- und „Lösegeld“kinder, „Der Orient“, 1926, էջ 15:

1328. «Նրանք նրանց տեղեկացնում են փախուստի հնարավորության մասին և ժամադրում մի վայրում, որտեղ նրանք նշանակված ժամին պետք է լինեն, նշում էր Գ. Չեքցելը: - Գնալով այնտեղ՝ փախստականները ստանում են դրամ և ուտեստ և այնուհետև մեքենայով կամ երկաթուղով վտանգավոր գոտուց դուրս են բերվում ու հասցվում Չալեպի փախստականների ճամբարը: ... Կանանց և աղջիկների՝ սեփական նախաձեռնությամբ փախչելը նպատակային չէր լինի: Նրանք նորից կբռնվեին և իրենց փախուստի համար ծանր պատիժներ կկրեին»:

1329. Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, անդ, էջ 67:

1330. Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 19-20:

դրսում, տափաստաններում շրջում էր», և միայն 1922 թ-ի ամռան և աշնան ամիսներին 225 կանայք, տղաներ ու աղջիկներ, հետևելով օգնության կանչին, փախուստի դիմեցին և բարեհաջող հասան Հալեպ:¹³³¹ Նրանց ազատագրման համար ծախսվեց շուրջ 2300 ֆունտ ստեռլինգ (կամ 46000 մարկ), որից 600-ը կազմում էին նրանց ճանապարհածախսը. գործակալների և հավաքակալայանների աշխատանքների համար կատարված հատկացումները, իսկ 1700 ֆունտը՝ ճանապարհին նրանց հատկացված սննդի, հագուստի, բուժօգնության և հարակից մյուս ծախսերը:¹³³² Յուրաքանչյուր անձի-փրկության համար, այսպիսով, միջին հաշվով ծախսվում էր 6-7 ֆունտ ստեռլինգ կամ համապատասխանաբար 120-140 մարկ:¹³³³

Դեռ 1922 թ-ի առաջին ամիսներին պարզ դարձավ, որ Ազգերի լիգայի կողմից կատարվող դրամական հատկացումները չէին կարող բավարարել փրկարար աշխատանքների ծավալն ըստ հարկի ընդլայնելու համար: Ուստի Յեպեն ձգտում էր գործել հնարավորինս խնայողությամբ՝ դրա միակ ճանապարհը համարելով փախստականներին ինքնուրույն կյանքի նախապատրաստելու գործընթացի արագացումը:¹³³⁴ Բարեբախտաբար շատ դեպքերում հայտնվում էին ազգականներ, որոնք երեխաներին վերցնելով իրենց մոտ՝ ստանձնում էին նաև նրանց ապագայի պատասխանատվությունը: Այդ հարցում մեծ էր նաև Կ. Յեպեի երախտիքը, որն աջակցում էր փախստականների ազգականների որոնմանը և այդպիսիներին հայտնաբերելու դեպքում ապահովում կապը նրանց միջև:¹³³⁵ Եթե, սակայն, ոչ ոք չէր գտնվում, ապա պատասխանատվությունը ծանրանում էր Յեպեի վրա: Միայնակ փոքրիկ երեխաներին նա տեղավորում էր որբանոցում՝

1331. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 22:

1332. Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 34:

1333. Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 62:

1334. Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 34:

1335. Անդ, էջ 19: Հմմտ. անդ, էջ 34:

ստանձնելով նրանց խնամքը,¹³³⁶ իսկ մեծահասակներն անցնում էին ուսման և դաստիարակության մի հիմնային փուլ, որից հետո կարող էին սեփական աշխատանքով գոյատևել: Այդ հարցում առանձնապես մեծ էր դանիացի բարեկամների ներդրումը, որոնք տրամադրել էին ուսուցչի աշխատավարձը, հոգ էին տարել դասագրքերի և այլ դպրոցական պիտույքների համար, տղաներին արհեստագործության մեջ վարժեցնելու նպատակով ստեղծել էին հյուսնարան և կաշեգործարան, իսկ աղջիկների համար՝ համապատասխանաբար ասեղնագործության արհեստանոց:¹³³⁷ Նշված միջոցառումների նշանակությունն ավելի պարզ դարձնելու համար արժե նշել, որ 1923 թ-ի սկզբին վերոնշյալ 225 անձանց շուրջ կեսը Յեպեից այլևս նյութական կախվածություն չունեին,¹³³⁸ իսկ 1924 թ-ին միայն ասեղնագործական ձեռնարկությունում սեփական աշխատանքով իրենց վաստակն ապահովում էին ավելի քան 100 այրիներ և երիտասարդ աղջիկներ:¹³³⁹ Ձեռագործների մեծ մասը 1924 թ-ից Յեպեի կողմից պարբերաբար առաքվում էր Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության գրասենյակին, որն իրականացնում էր դրանց վաճառահանումը Գերմանիայում:¹³⁴⁰

«Փրկարար» կացարանից ինքնուրույն կյանք մտնող բոլորովին միայնակ կանանց և աղջիկների անվտանգությունն պահովելու նպատակով Յեպեն և Հալեպի հայ համայնքը միացյալ նախաձեռնությամբ հիմնեցին նաև մի վերստուգիչ գրասենյակ, որի ծախսերի մեծ մասը հատուցվում էր Յեպեի կողմից, և որը, համարվելով Ազգերի լիգայի ենթա-

1336. Անդ, էջ 19: Որքանոցը հիմնվել և պահպանվում էր դանիացի բարեկամների միջոցներով: Տե՛ս անդ, էջ 35:

1337. Անդ, էջ 19:

1338. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 23:

1339. Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 20:

1340. Տե՛ս Armenische Handarbeiten aus dem Orient, „Orient im Bild“, 1927, էջ 8: Հմմտ. Armenische Handarbeiten aus dem Orient, անդ, էջ 15: Հմմտ. Für den Salon und das gemütliche Wohnzimmer, „Orient im Bild“, 1928, էջ 12: Հմմտ. Armenische, reinsilberne Filigran-Schmucksachen (Handarbeit), „Orient im Bild“, 1929, էջ 24: Հմմտ. Echte orientalische Knüpfteppiche (Smyrnaknoten), „Orient im Bild“, 1930, էջ 16 և այլն:

կառույցը, կարողանում էր իր հովանավորյալներին մշտապես պահել իր տեսադաշտում:¹³⁴¹ Խառը բնակչություն ունեցող այնպիսի քաղաքում, ինչպիսին Հալեպն էր, այդ ձեռնարկումն անշուշտ խիստ կարևոր էր, և գրասենյակի հեղինակությունը կարճ ժամանակում տարածվեց ողջ քաղաքում նպաստելով նաև կանանց նախաձեռնողականության ընդլայնմանը. այն աստիճան, որ նրանք չէին խուսափում նույնիսկ այլապես մերժելի համարվող սպասուհիների աշխատանքից:¹³⁴²

Ինքնուրույն կյանք մտնող փախստականների անվտանգության պահպանման և միաժամանակ նրանց բարոյալքման վտանգից գերծ պահելու առումով ոչ պակաս կարևոր էր և այն, որ կացարանն իր դռները նրանց առջև երբեք չէր փակում, և որ նրանք միշտ ունեին «հարազատ տան» գիտակցությունը, որտեղ անհաջողության կամ կարիքի դեպքում դարձյալ կարող էին պատսպարվել: «Իհարկե, այդ լրացուցիչ ծախսերի տեղիք է տալիս,- նշում էր Յեպեն իր տեղեկագրերից մեկում,- բայց փոխարենը մեր երեխաներն ունեն անվտանգության զգացումը, որը գերազնահատելի հնարավոր չէ: Նրանք կվախենանային կացարանը լքել և ինչ-որ բան ձեռնարկել, եթե չիմանային, որ վերադարձի ճանապարհը միշտ բաց է: Եվ արդարև, դա հազվագյուտ է չարաշահվում: Մենք շատ զարմացած ենք, թե նրանք որքան ազնվորեն են փորձում կանգնել սեփական ոտքերի վրա»:¹³⁴³

Ինչևէ, 1924 թ-ին մահմեդական գերությունից ազատագրվեցին և Հալեպ տեղափոխվեցին ևս 250 մարդ,¹³⁴⁴ որոնցից 58-ը տասնչորս

1341. Jeppe K., Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, „Orient im Bild“, 1928, էջ 34:

1342. Անդ: «Մենք դա համարում ենք մի շատ ազդեցիկ ճանապարհ քրիստոնյա աղջիկներին պաշտպանելու և կարիքի մեջ գտնվողներին օգնելու համար»,- գրում էր այդ առթիվ Կ. Յեպեն: Անդ:

1343. Անդ: Ամփոփելով իր տարիների ձեռքբերումները՝ Յեպեն հետագայում կարող էր արձանագրել. «Մենք երբեք նրանցից որևէ մեկին չքողեցինք կարիքի մեջ: Նրանք կարողանում էին միշտ դիմել մեզ, երբ ինչ-որ բան ծուռ էր գնում...»: Անդ: 1344 Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 34: 1923 թ-ի փրկարար աշխատանքների վերաբերյալ ստույգ տվյալներ չեն պահպանվել, սակայն նախորդ տարվա և հաջորդ երկու տարիների տվյալների համեմատական քննությունը վկայում է, որ 1923 թ-ին ազատագրվածների քիվը հասնում էր մոտ 200-ի: Տե՛ս անդ: Հմմտ. Jeppe K., Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien, „Der Orient“, 1923, էջ 22: Հմմտ. Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 67 և 70:

տարեկանից փոքր երեխաներ էին, 112-ը՝ 14-18 տարեկան տղաներ, իսկ 80-ը երիտասարդ կանայք և աղջիկներ:¹³⁴⁵

Թե որքան հետևողականորեն էր Յեպեն զբաղվում իր պաշտպանյալների հետագա ճակատագրով, կարող են ցույց տալ հետևյալ վիճակագրական տվյալները. 1925 թ-ի ապրիլ ամսվա տվյալներով նրանցից 130-ը գտել էին իրենց հարազատներին և տեղափոխվել նրանց մոտ, 10 երեխաներ ընդունվել էին դանիական որբանոցը, 40-ը արհեստագործության մեջ հմտանալով՝ ինքնուրույն վաստակում էին իրենց ապրուստը, իսկ 70-ը դեռ գտնվում էին փախստականների կացարանում՝ Յեպեի խնամքի և հսկողության ներքո:¹³⁴⁶

Վերադարձողները մեծ մասամբ գտնվում էին ծանր առողջական վիճակում, ուստի մեծ ծախսեր էին կատարվում նաև նրանց ապաքինման ու կազդուրման համար: «Սարսափելի է տեսնել այն անխնայանությունը, որին զոհ է դարձել այդ խեղճ ժողովուրդը,- տեղեկացնում էր Կ. Յեպեն: - Նրանց աչքերը հաճախ շատ ծանր վիճակում են: Նրանց գլուխները ծածկված են վերքերով: Նրանք մալարիա և էլի շատ ուրիշ հիվանդություններ են տարել: Դա մեր աշխատանքի համար սովորական է, և մենք մեծ առաջադրանքներ ունենք՝ կապված նրանց բուժման, հատուկ սննդի և երկարատև խնամքի հետ»:¹³⁴⁷

1345. Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 35: Ուշագրավ է, որ վերոնշյալ 58 երեխաներից 48-ը 12-14 տարեկան էին, և միայն 10-ն էին 12 տարեկանից ավելի փոքր: Տե՛ս անդ, էջ 37: Նման երեխաներին հայտնաբերելը չափազանց դժվար էր, քանի որ, ինչպես արդեն նշվել է, վաղ մանկական տարիքից մեծանալով մահմեդական ընտանիքներում՝ նրանք ծուլվել էին մահմեդական միջավայրին և իրենց ազգային պատկանելության մասին պատկերացում չուներին: «Միայն մեծագույն պատահականության միջոցով են մնան երեխաները վերագտնվում,- նշում էր այդ առթիվ Յեպեն:- Հիմնականում նրանց պետք է համարել կորած...»: Տե՛ս անդ, էջ 38:

1346. Անդ, էջ 35:

1347. Անդ, էջ 38: «Մենք կարող ենք խնամել խեղճ արարածներին, և ի՛նչ մեծ ուրախություն է, երբ նրանք կազդուրվում են,- գրված էր մեկ այլ տեղեկագրում: - Այդ թղթվածները կարիք ունեն բժշկական սպասարկման և խնամքի: Եվ առիտսարակ ինչպիսի՛ս վիճակում է եկողների մեծ մասը: Մի երիտասարդ եղիայի մասին մենք լսում ենք. «Նա իր կյանքում դեռ ոչ մի անգամ չի լողացել: Դուք պետք է նրան տեսնեիք, երբ նա այստեղ գալուց հետո բաղնիք մտավ: Նրա փոքրիկ դեմքը ճառագում էր, և նա ասաց. «Ինչ հրաշալի է այստեղ, ինչպես երագում: Մի կին ինձ լվանում է, իսկ մեկ ուրիշը ջուր է լցնում ինձ վրա»: Տե՛ս Hetzel G., An die Pflegeeltern unserer Waisen- und

Միայն 1924 թ-ին, օրինակ, նրանց բուժման և դեղորայքի ձեռք բերման համար ծախսվեց ավելի քան երկու հարյուր ֆունտ ստեռլինգ, որով հնարավոր եղավ առողջացնել և կազդուրել նույնիսկ անհուսալի թվացող ծանր հիվանդներին:¹³⁴⁸

Յեպեի և նրա գործակալների քարոզչությունն արդեն 1924 թ-ին այն աստիճան լայն տարածում էր ստացել, որ փախուստի փորձեր էին կատարվում նույնիսկ Դիարբեքիից և Թուրքիայի այլ հեռավոր քաղաքներից:¹³⁴⁹ Իհարկե, այս դեպքում խոսքը վերաբերում էր միայն երիտասարդ տղաներին, որոնք ի վիճակի էին դիմագրավել հեռավոր ծանապարհների զրկանքներին և հաղթահարել վտանգները: Նման օրինակները, սակայն, միաժամանակ վկայում էին, թե նըշված և մյուս հեռավոր շրջաններում որքան մեծ պետք է լիներ նաև այն դժբախտների թվաքանակը, ովքեր ազատության էին ձգտում, սակայն առանց օգնության չէին կարող փախուստի դիմել: Յեպեն նրանց կարող էր ձեռք մեկնել միայն իր մասնաճյուղերի թվի մեծացման դեպքում, ինչը Ազգերի լիգայից հատկացվող խիստ սահմանափակ միջոցներով հնարավոր չէր իրագործել և մշտապես մնում էր նրա հիմնական մտահոգության առարկան:¹³⁵⁰ «Միթե՞ քաղաքա-

„Lösegeld“ kinder, „Der Orient“, 1926, էջ 15: «Նա մի թշվառ արարած է՝ այտուցված կրծքով, քանի որ արաքների կանայք նրան (նա արաքների մոտ հովիվ էր) հին, այրող ցնցոտիներ են հագցրել,- պատմում էր մեկ ուրիշ տեղեկագիր:- Այո, ինչպես են տեղ հասնում փրկվածները. ամբողջովին կեղտոտ և մակարույծ միջատների մեջ, ցնցոտիներով և սովահար: Ստրկության մեջ ավելի հարվածներ են եղել, քան հաց»: Անդ: 1348. Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 38: Հաստատության բժշկին մեծ աջակցություն էր ցուցաբերում մի հայ բժիշկ՝ Սիրիայում «Բժիշկների մեծ լույս» մականունը ստացած՝ դր. Ալթունյանը: Նա իր՝ նույնպես բժիշկ, Անգլիայում ուսանած որդու հետ միասին Հայկական հիմնել էր նորագույն սարքավորումներով հագեցած մի ժամանակակից հիվանդանոց, որը Սիրիայում իր նմանակը չուներ, և որն, ի դեպ, հանձն էր առել «ազատագրված» հայերի արյան հետազոտությունը կատարել անվճար: Հիվանդանոցում իրականացվում էին բազմաթմույթ հետազոտություններ և բարդ վիրահատություններ, որոնց շնորհիվ կյանք վերադարձան Յեպեի՝ նույնիսկ ամենածանր հիվանդները: Անդ: 1349. Անդ, էջ 36:

1350. «Եթե մեր քյուլջեն մեզ թույլ տար շատ մասնաճյուղեր հիմնել,- նշում էր նա իր՝ 1924 թ-ի հաշվետվության մեջ,- և դրանք ըստ հարկի դրամով ապահովել, ապա մենք կարող էինք շատերին ազատել»: Անդ:

կիրթ աշխարհի համար խայտառակություն չէ, որ այդ կանայք և երեխաները չկարողանան փրկվել միայն դրամի բացակայության պատճառով,- Նշում էր նա իր նամակներից մեկում:- Մենք այդ անլուր հանցագործության համար քիչ թե շատ համապատասխանատու ենք կամ առնվազն կղառնանք, եթե այդ խնդիրը չլուծենք, և Ազգերի լիգայի ջանքերը (որը նույնպես դրա համար միջոցներ չունի և հույսը դրել է քրիստոնեական բարեգործության վրա) վիժեցվեն»:¹³⁵¹

Հատկանշական է, որ Յեպեի այդ մեծ նվիրումը պայմանավորված էր ոչ միայն մարդասիրական նկատառումներով, այլև այն մեծ մշակույթի փրկության մղումով, որի կրողն էր հայ ժողովուրդը: Եվ պատահական չէ, որ նա իր տեղեկագրերում շարունակ փորձում էր այդ ըմբռնելի դարձնել նաև քաղաքակիրթ աշխարհին: «Մեր մեջ դեռ կան ընդարձակ շերտեր, որոնք պատրաստ են մեր հոգևոր արժեքների պահպանման համար մեծ զոհողություններ կատարել: Իսկ այդ դեպքում պետք է նաև մեր մեջ ինքնապահպանման բնազդն արթնանա: Չէ՞ որ մեր ռասայի, մեր եկեղեցու, մեր մշակույթի մի հատվածն է, որ այստեղ Ասիայի կողմից պարզապես ոչնչացվում է: Առաջադրանքի բնույթը կհասնի՞ արդյոք Եվրոպայի գիտակցությանը, այդ դեպքում նա այն կհամարի իրենը»:¹³⁵²

1925 թ-ին Յեպեին մասնակիորեն հաջողվեց իր մտադրությունն իրականացնել, և բեղվինաբնակ բնակավայրերի կենտրոնում Ռասուլ-Աինում հիմնվեց թվով 6-րդ հավաքակայանը:¹³⁵³ Ընտրությունը պատահական չէր, քանի որ 1916 թ-ին այդ քաղաքում և շրջակայքում սպանդի էին ենթարկվել աքսորը վերապրած 24 000 հայեր, իսկ հազարավոր հայ երեխաներ վաճառվել էին արաբներին ու թուրքերին:¹³⁵⁴ Եթե նույնիսկ վերջիններիս մեծ մասը հետագայում տարվել էր երկրի այլ հատվածներ, ապա Յեպեի հաշվարկներով քաղաքի շրջակայքում դեռ պետք է մնացած լինեին մոտ երկու հազար երեխա-

1351. Jeppe K., *Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?*, „Der Orient“, 1924, էջ 63:

1352. Jeppe K., *Vom Hilfswerk für die verschleppten armenischen Frauen und Kinder in Syrien und Nord-Mesopotamien*, „Der Orient“, 1923, էջ 22:

1353. Jeppe K., *Ein Jahr Rettungsarbeit*, „Der Orient“, 1926, էջ 67:

1354. *Stiu Karen Jappes Arbeit*, անդ, էջ 5:

ներ, ¹³⁵⁵ որոնց փրկությունը պետք է դառնար նորաբաց մասնաճյուղի հիմնական առաջադրանքը: Բացի այդ, Ռաս-Ուլ-Ալինը գտնվում էր ֆրանսիական ջոկատների վերահսկողության ներքո և երկաթուղային կապ ուներ Զալեպի հետ, ինչն իհարկե կարևոր նախադրյալ էր արդյունավետ գործունեություն ծավալելու համար: Յեպեն իր կանխատեսումներում չէր սխալվել, և նոր մասնաճյուղը մեծ դեր ունեցավ հետագա փրկարար աշխատանքներում:

1925 թ-ին ազատագրվեցին և Զալեպ տեղափոխվեցին ևս 300 հոգի, որոնց 30 տոկոսը կանայք և աղջիկներ էին, 30 տոկոսը 15 տարեկանից փոքր երեխաներ, իսկ մյուսները նշված տարիքը գերազանցող տղաներ: ¹³⁵⁶ Նրանց փրկությունն իրականացնելու համար ծախսվեց 2700 ֆունտ ստեռլինգ կամ յուրաքանչյուրի համար միջին հաշվով 9 ֆունտ ստեռլինգ: ¹³⁵⁷ Հատկանշական է, որ մինչև տարեվերջ նրանցից 200-ը Յեպեի աջակցությամբ կարողացան գտնել իրենց ազգականներին և տեղափոխվել նրանց մոտ, 30-ը դարձան միանգամայն ինքնուրույն, և 1926 թ-ի սկզբին կացարանում բնակվում էին միայն 80 փախստականներ: ¹³⁵⁸

Այսպիսով, փրկարար աշխատանքների առաջին չորս տարիների ընթացքում մահմեդական լծից ազատագրվեցին և իրենց ժողովրդի գիրկը վերադարձան ընդհանուր թվով 1100 հայեր, որոնցից 950-ի փրկությունն իրականացվել էր Յեպեին հատկացված նյութական միջոցներով, իսկ 150 հոգու ծախսերը հոգացել էին նրանց հարազատները: ¹³⁵⁹ Այդ ամենը հնարավոր դարձավ Յեպեի մեծ նվիրումի, նրա

1355. Անդ:

1356. Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, անդ, էջ 69:

1357. Անդ, էջ 67: 9 ֆունտ ստեռլինգը համարժեք էր 180 գերմանական մարկին: Անդ:

1358. Անդ, էջ 69:

1359. Անդ, էջ 70: Չնայած այդ 150 հոգու ազատագրումը կատարվել էր Յեպեի գործակալությունների միջոցով, սակայն դրա համար անհրաժեշտ դրամը տրամադրել էին նրանց հարազատները՝ միաժամանակ ստանձնելով նրանց հետագա ապրուստի և օրևանի ծախսերը: Այդ է պատճառը, որ Յեպեն նրանց անուններն իր ցուցակներում չի ընդգրկել և տեղեկություններ չի հաղորդել նաև իր հաշվետվություններում: Հայտնի է միայն, որ չորս տարիների ընթացքում այդ եղանակով ազատագրվել է 150 հոգի, այսինքն տարեկան միջին հաշվով 38 մարդ: Այդ տվյալները ներառված չեն նաև մեր վերոնշյալ ամենամյա վիճակագրական տեղեկություններում:

հովանավորների նյութական աջակցության (Ազգերի լիգայից հետո, ինչպես շուտով կտեսնենք, մեծագույն ներդրումն ունեցավ Յոհ. Լեփսիուսի ընկերությունը) և իհարկե նաև նրա հայ գործակալների անձնակեր աշխատանքի շնորհիվ, որը, ցավոք, զերծ չէր նաև կորուստներից. 1925 թ-ի նոյեմբերին վախճանվեց Յեպեի ամենաերախտաշատ գործակալներից մեկը՝ Գրիգոր աղան, որը գործում էր Դեր էս Ջորի շրջանում:¹³⁶⁰ Տարեվերջին վրեժխնդրությամբ համակված արարների կողմից սպանվեց նաև «Հասիչիեի հերոս»-ը՝ Վասիլ Սաբադը:¹³⁶¹ Նրանց փոխարինեցին նորերը:¹³⁶²

Փոփոխություններ կատարվեցին նաև մասնաճյուղերում. 1925 թ-ին թուրք-քրդական պատերազմի հետևանքով թուրքական սահմանն արգելափակվեց, և Ջարաբլուսի մասնաճյուղի գործունեությունը, որի նպատակն էր օգնության ձեռք մեկնել Թուրքիայից եկող փախստականներին, տարեվերջին փաստացիորեն հասավ իր ավարտին:¹³⁶³ Լուծարվեց նաև Դեր էս Ջորի մասնաճյուղը, քանի որ աշխատանքն այդ շրջանում համարվում էր ավարտված, և, ինչպես Յեպեն էր իր տեղեկագրերում մշում, այն արդեն «մաքուր» էր: Չնայած դրան, Գրիգոր աղայի այրին շարունակում էր մնալ այդ շրջանում իր անուսնու փոխանորդն ու Յեպեի նոր գործակալը՝ այլ վայրերից Տեր Ջոր եկող հայերին օգնելով շարունակել ճանապարհը դեպի Հալեպ:¹³⁶⁴ Նշված մասնաճյուղերի լուծարումը Յեպեին հնարավորություն տվեց մեծացնել մյուս մասնաճյուղերին կատարվող նյութական հատկացումները՝ ըստ հնարավորին ընդլայնելով նրանց գործունեությունը:

Մ. Մելքոնյանից բացի փրկարար աշխատանքներում Յեպեին մեծ աջակցություն էր ցուցաբերում նաև Լեոպոլդ Գազուկը, որը 1923 թ-ի մարտից դառնալով նրա անձնական քարտուղարը՝ ղեկավարում

1360. Տե՛ս Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, էջ 3:

1361. Անդ, էջ 3-4:

1362. Գործակալների մասին սովորաբար տեղեկություններ չէին հաղորդվում, ինչը բնականաբար պայմանավորված էր նրանց անձը չվտանգելու հանգամանքով:

1363. Անդ, էջ 5: Չնայած դրան, Յեպեն Ջարաբլուսի մոտակա՝ Բունբուս բնակավայրում շարունակում էր մի գործակալ պահել, որի խնդիրն էր հետազոտել Եփրատի այդ հատվածում, Հալեպից հյուսիս և արևելք ընկած շրջանը և հայերի հայտնաբերելու դեպքում օգնել նրանց դիմելու փախուստի: Տե՛ս Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, անդ, էջ 67:

1364. Անդ:

եր նաև քաղաքի աղքատներին և հիվանդներին ցուցաբերվող օգնության աշխատանքները:¹³⁶⁵ Բացի այդ, 1925 թ-ին դանիացի բարեկամների կողմից Հալեպ ուղարկվեց մի նոր օգնական և՛ օր. Յենի Յենսենը, որն այնտեղ ստանձնեց դպրոցի, ծեռնարկությունների և հիվանդանոցի վերահսկողությունը՝ Յեպեին հնարավորություն ընծեռելով ամբողջովին նվիրվել փրկարար աշխատանքներին:¹³⁶⁶

Ազատագրվող երեխաների մեծ մասը բնականաբար աքսորի ժամանակ եղել էին փոքրիկ մոտավորապես 5-6 տարեկան երեխաներ, որոնք փախուստի որոշում էին ընդունում ավելի բնազդի. քան հիշողության դրդումով: «Նրանց նախկին կյանքի հիշողությունը նրանց մեջ պահպանվում էր ինչպես մութ նախազգացում կամ կիսամոռացված երազանշում էր այդ առթիվ Կ. Յեպեն:- Նրանք հազիվ թե ի վիճակի էին հասկանալ այն մղումը, որ նրանց դրսում հանգիստ չէր տալիս և ի վերջո, մեծ մասամբ մեր գործակալների օգնությամբ դարձյալ տուն էր բերում»:¹³⁶⁷

Չնայած այդպիսիները հայտնաբերվելուց հետո որոշ ժամանակ փորձում էին համառորեն իրենց համարել մահմեդականներ, սակայն նրանցից շատերի դեպքում դա թյուրըմբռնման արդյունք չէր, և, ինչպես Յեպեն էր նշում, նրանց ծագման ուրացումը մեծ մասամբ պայմանավորված էր երկյուղով, քանի որ «նրանց ներշնչել էին, որ նրանք կսպանվեն, եթե իրենց ազգությունը խոստովանեն, քանի որ նրանցից շատերը տեսել էին, թե իրենց հարազատներն ինչպես են սպանվել, այնպես որ պետք է հավատալին, որ նույն ճակատագիրը սպասում էր նաև իրենց»:¹³⁶⁸

1365. Stú Der Geburtstag, „Orient im Bild“, 1929, էջ 46: Ավստրիացի, ազգությամբ լեհ Լ. Գազչուկը ծնվել է 1896 թ-ի նոյեմբերի 15-ին Վայսլիրխենում (Ավստրիա): Ատացել է էլեկտրոմեխանիկի մասնագիտություն և 1915 թ-ին զորակոչվել ռազմաճակատ, որտեղ երեք անգամ վիրավորվել է: Ջինադադարից հետո նա որպես էլեկտրոմեխանիկ աշխատանքի է անցել ամերիկյան բարեգործական կազմակերպություններում: 1919 թ-ին ղեկավարում էր լուսավորության հանգույցների աշխատանքը Կեսարիայում, Սվասում, Սամսունում և Խարպութում: 1921-1922 թթ. եղել է տրանսպորտային գործի ղեկավարը Խարպութում, իսկ 1923 թ-ից աշխատանքի անցավ Հալեպում օր. Կ. Յեպեի մոտ որպես քարտուղար և օգնական: Անդ:

1366. Stú Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, էջ 5-6:

1367. Stú Karen Jeppes neuester Bericht, „Orient im Bild“, 1927, էջ 65:

1368. Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 61:

Այդ երեխաների հոգում երկյուղը փարատելն ու փախուստի վճռականությունն ներշնչելը մեծ դժվարություն չէր ներկայացնում, և ինչպես 1924 թ-ին տեղեկացնում էր Կ. Յեպեն, փախստական հայերի մոտ կեսը պատկանում էր այդ խմբին: Իհարկե, կային և այնպիսիները, որոնք արդեն համոզմունքով դարձել էին մահմեդական և վայրի ֆանատիզմով էին վերաբերվում այդ հարցին: Սակայն այդ դեպքերից նույնպես քչերն էին անհույս, և այն տղաներն ու աղջիկները, որոնք 12 կամ 13 տարեկանում «համոզված» մահմեդականներ էին, հաշվված ամիսների կամ առավելագույնը 1-2 տարվա ընթացքում գալիս էին ճշմարիտ ըմբռնման գիտակցելով իրենց ազգային ու կրոնական պատկանելությունը:¹³⁶⁹ Դա բնականաբար ինքնին տեղի ունենալ չէր կարող և հնարավոր էր դառնում միայն Յեպեի կողմից կացարանում կազմակերպված հետևողական «հոգևոր կրթության» միջոցով:¹³⁷⁰ «Տուն գալը նրանց համար համանշանակ չէ «իրենց տանը գալուն», - գրում էր այդ մասին Յեպեն: - Ոչ միայն նրանց մայրենի լեզուն է գրեթե ամբողջովին մոռացվել և պետք է նորից ուսուցանվի, այլև պետք է սկսեն միանգամայն այլ կերպ ապրել: Նրանք գալիս են մի միջավայրից, որտեղ, օրինակ, արյուն թափելը դեռ համարվում է սուրբ պարտականություն, և որտեղ նրանց հիմնականում մահմեդական մտածելակերպն է դրոշմվել...»: ¹³⁷¹

Այդ «հոգևոր կրթության» հենքն, անշուշտ, կազմում էր լեզվի ուսուցումը, սակայն ուշագրավ է, որ ավելի ներգործուն, քան խոսքը, հայ ժողովրդական երգը և երաժշտությունն էին, որոնց ունկնդրումը, ինչպես վկայում էր Յեպեն, մեծագույն ազդեցությունն էր գործում ազգային արմատներից խլված հայրողիների վրա: «Չնայած բառերը մոռացվել են և հաճախ դանդաղ են գիտակցության մեջ վերականգնվում, - ընդգծում էր նա, - սակայն հին մեղեդիները և ծանոթ հընչյունները, որ նրանց հանդիպում են կացարանում և եկեղեցում, ող-

1369. Անդ, էջ 61-62:

1370. «Չեբրքել չենք կարող, որ մեզ համար մի փոքր դժվար է ազատագրվածներին երկար մեզ մոտ պահել, բայց մյուս կողմից ուրախ ենք, որ նրանք շատ շուտ չեն հեռանում: Մենք դրանով ավելի մեծ հնարավորություն ունենք հոգ տանելու նրանց հոգևոր կրթության մասին: Քանի որ շատ բաներից զուրկ են եղել, ինչը նորից պետք է վերադարձվի, և մուսխտղը պետք է քաղհանվի: *St'u Karen Jeppes neuester Bericht, „Orient im Bild“, 1927, էջ 65:*

1371. Անդ:

ջունում են նրանց որպես հին ծանոթներ և ամենաազդու ներգործությունն ունենում նրանց մեջ նախնական բնագոյներն արթնացնելու համար: «Հայը արթնանում է». ինչպես մենք ենք այդ անվանում: Դա նկատվում է նույնիսկ նրանց դեմքի արտահայտությունից...»: ¹³⁷²

Երեխաները ստանում էին նաև ընդգծված քրիստոնեական դաստիարակություն՝ ծանոթանալով Հիսուսի անձին, գործունեությանն ու պատվիրաններին: Վերջինիս հետ նրանց «մերձեցումն» ավելի առաքելայական և անմիջական դարձնելու համար կացարանի ընդհանուր հավաքությունների սրահը զարդարված էր Հիսուսի անձը պատկերող և աստվածաշնչյան մոտիվներով պատրաստված այլ նկարներով, որոնք, ինչպես վկայում էր Յեպեն, մեծ ազդեցություն էին գործում մահմեդական մտաընկալումներից նրանց ձերբազատելու համար: «Երբեմն նրանք փորձում են համբուրել նկարները,- նշում էր Յեպեն:- Դրանք շատ բարձր են կախված, այլապես ոչինչ այժմ մնացած չէր լինի: Երբ, սակայն, մեկն այդ նպատակով վեր է մագլցում, մենք նրան թույլ ենք տալիս դա անել: Այդ գործողությունը նրա հոգու երախտագիտության ճշմարիտ արտահայտությունն է: Նա սկզբում պետք է միայն Հիսուսին պաշտի, իսկ ավելի ուշ նաև կիմանա, որ ճշմարիտ ազատությունը ներքին ազատությունն է: Անշուշտ, մինչև այս 12 տարվա ընթացքում վայրենացած տղաներից ու աղջիկներից դարձյալ լիարժեք մարդիկ դուրս կգան, կպահանջվի երկար ժամանակ, համբերություն և մեծ սեր: Սակայն դա օրինյալ աշխատանք է...»: ¹³⁷³

Եթե նկատի առնենք, որ հայերեն ասված յուրաքանչյուր խոսք բոլորին հասկանալի դառնալու համար պետք է թարգմանվեր արաբերեն, քրդերեն կամ թուրքերեն, քանի որ երեխաները մեծ մասամբ հասկանում էին այդ լեզուներից միայն որևէ մեկը, ¹³⁷⁴ ապա պարզ կլինի, թե նրանց կրթումն ու դաստիարակությունը հատկապես առաջին անիսներին որքան դժվարություններ պետք է հաղթահարեր: Եվ այնուամենայնիվ դրանք հաղթահարվում էին, և կացարան մտնող յուրաքանչյուր հայորդի այնտեղից հեռանում էր միանգամայն պատրաստ նոր ինքնուրույն կյանք մտնելու համար:

1372. Անդ:

1373. Անդ:

1374. Անդ:

Ինչևէ, Յեպեն իր հայափրկիչ գործունեությունը միայն լիզայի կողմից հատկացված զուամարներով չէր կարող իրականացնել: Նրան օգնության ձեռք էին մեկնել նաև բազմաթիվ այլ կազմակերպություններ և անհատներ, ինչպես օրինակ, Լոնդոնի հայ կանանց միությունը, Լորդ մայորի ֆոնդը, Լոնդոնի *Bible Lands Missions Aid Society* ընկերությունը, *Imperial Mar Relief Fund* կազմակերպությունը, շվեյցարական օգնության միությունները և այլն:¹³⁷⁵ Այն ընկերությունը, սակայն, որը 1924 թ-ից մեծագույն նյութական ներդրումն ունեցավ այդ աշխատանքներում, Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունն էր:

Նոր առաջադրանքների իրագործման համար միջոցներ ձեռք բերելու նպատակով այն գործի դրեց իր բոլոր հնարավորությունները: Պարբերականը հեղեղված էր բարեկամներին ուղղված՝ օգնության կոչերով: Կանոնավոր կերպով լույս էին տեսնում Յեպեի և Կյունցլերի տեղեկագրերը: Պատրաստվում և առաքվում էին մեծաքանակ թռուցիկներ, որոնցից շատերը վերահրատարակվում էին նաև «*Der Orient*»-ում: «Ո՞վ ամսական մեկ մարկ կտա մահմեդական ստրկությունից մի քրիստոնյա աղջկա կամ տղայի փրկության համար,- նշված էր, օրինակ, «Փրկագին» վերնագիրը կրող թիվ 30 թռուցիկում: - Հազարավոր մարդիկ սպասում են իրենց ազատագրմանը: Ձնդանի դռները բաց են: Փրկարար աշխատանքը կազմակերպված է: Պակասում է միայն փողը...»:¹³⁷⁶ Բարեկամների աջակցությունը դյուրացնելու նպատակով յուրաքանչյուր համարում տպագրվում էր նաև մի անդորրագիր հետևյալ բովանդակությամբ. «Փրկագին: Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության գրասենյակին, Պոտսդամ: Մենք՝ ներքոստորագրյալներս, պատրաստակամություն ենք հայտնում միասին/անհատաբար, 120 մարկ ուղարկել մահմեդական ստրկությունից մեկ քրիստոնյա երեխայի փրկության համար: Վճարումը կատարվում է՝ մաս-մաս/ամսական/քառորդ տարին մի անգամ»:¹³⁷⁷ Անդորրագրում այնուհետև տեղ էր հատկացված անունների և ստորագրությունների համար, իսկ վերջում նշված էր կազմակերպության հասցեն:¹³⁷⁸

1375. Տե՛ս Karen Jeppes Arbeit, անդ, էջ 5:

1376 . Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei, „Der Orient“, 1924, էջ 59:

1377 . Անդ, էջ 58:

1378. Անդ:

Բարեկամներից, այսպիսով, պահանջվում էր միայն անդորրագիրն ամսագրից առանձնացնել և լրացնելով՝ ուղարկել ընկերությանը:

Լեփսիուսը բավականաչափ նյութական միջոցների հայթայթման համար գործի էր դրել իր՝ տաղանդավոր հրապարակախոսի ողջ ավյունն ու եռանդը՝ ձգտելով բորբոքել թե մարդասիրական և թե կրոնական նախանձախնդրությունները: «Աբդուլ Համիդի ժամանակ մենք հազարավոր այրիների և որբերի ենք կենդանի պահել և օգնել, որ մի նոր սերունդ մեծանա, - գրում էր նա 1925 թ-ին բարեկամներին ուղղված իր ուղերձներից մեկում: - Այժմ թշվառությունը տասն անգամ ավելի մեծ է, քան այն ժամանակ: Պե՞տք է մենք այդ հարցում մի կողմ կանգնենք և մյուս ժողովուրդներին թողնենք մեծ բարեգործությունը կատարել: Ոչ, նաև մեր մասին պետք է ասվի, որ նրանք արել են, ինչ կարողացել են...»:1379

Հակադրվելով մահմեդական շրջաններում քրիստոնեական քարոզչության վերականգնման Գերմանիայում ավանդաբար գոյատևող ձգտումներին՝ Լեփսիուսը դրանք համարում էր ժամանակավրեպ և անհիմաստ, այն դեպքում, երբ հնարավորություն էր առարկայացել փրկել տասնյակ հազարավոր քրիստոնյա կանանց, աղջիկների և երեխաների, որոնք դատապարտված էին մահմեդականացման: Այդ առաջադրանքը նա համարում էր մի յուրօրինակ քննություն, որի միջոցով գերմանացի քրիստոնյաները պարտավոր էին ապացուցել իրենց խոսքի և գործի համապատասխանությունը: «Այստեղ ոչ միայն հնարավորություն է առարկայանում հայ ժողովրդի հազարավոր զավակների պահպանել, այլև իսլամի դաշտից հարուստ բերք հավաքել, որն այլապես ոչնչանում է: - գրում էր նա 1924 թ-ին հրատարակված իր՝ «Փրկագին» վերնագիրը կրող կոչում: - Այստեղ կարող է պարզվել, թե արդյոք մեր միսիոներական սերը կարո՞ղ է ավելին անել, քան բարեպաշտ խոսքերն են, արդյոք այն իսլամի դեմ պայքարում կարո՞ղ է քրիստոնեական հավատի գործեր ի հայտ բերել: Յուրաքանչյուր ավետարանական համայնք պետք է հավաքի նվազագույնը 6-7 ֆունտ կամ 120-140 մարկ մի քրիստոնյա տղայի կամ աղջկա թուրքական և քրդական հարեմներից ու վրաններից ազատագրելու և իսլամի լծից փրկելու համար: Ես խնդրում եմ բոլորին, ովքեր ինձ հետ միասին ամոթի և խայտառակության զգացումով կհամակվեն, նվիրվել այդ առաջադրանքի

1379. Lepsius J., 1925, „Der Orient“, 1925, էջ 2:

կատարմանը և մեզ ըստ հնարավորին շուտ առդիր անդորրագրերի միջոցով գումար տրամադրել մահմեդական ստրկությունից մի քրիստոնյա երեխայի փրկության համար: ... Թո՛ղ Աստծո օգնությունն ուղեկցի մեր կոչին»: ¹³⁸⁰

Իր փրկարար և որբախնամ հանձնառությունների իրագործման համար միջոցներ հայթայթելու նպատակով Լեփսիուսն օգտագործում էր քարոզչության բոլոր հնարավոր եղանակները: Նա, ով հանձն էր առնում վճարել մեկ փրկագնի և կամ Ղազիրի մեկ որբ երեխայի տարեկան խնամքի համար պահանջվող ծախսերը, վճարման տարվա ընթացքում դառնում էր ընկերության անդամ՝ ստանալով համապատասխան վկայական և կանոնադրության մեկ օրինակ: ¹³⁸¹

Լայն ծավալում ստացան նաև շրջիկ զեկուցումները: 1924 թ-ին կազմակերպությունում ներգրավվեցին երկու նոր անձինք՝ Լիզա Ռեյերը և Վալտեր Տիմերմանը, որոնք ունեին մեծ հռետորական ծիրք և զբաղվելով բացառապես այդ գործով՝ այդ և հաջորդ տարիներին կարևոր ներդրում ունեցան նոր բարեկամների հավաքագրելու հարցում: ¹³⁸² Բացի այդ այն հոգևորականներին, ովքեր ցանկություն էին հայտնում իրենց համայնքներում փրկարար աշխատանքների վերաբերյալ զեկուցումներ կարդալ, տրամադրվում էին լուսանկարներ, տեսաժապավեններ և այլ ցուցադրական ու տեղեկատվական նյութեր: ¹³⁸³ 1925 թ. սկզբին այդ նպատակով արդեն բազմացվել և շրջանառության մեջ էր դրվել լուսանկարների մի ստվար շարք, որը կրում էր «Մի քրիստոնյա ժողովրդի կործանումը» անվանումը և ներկայացնում էր արևմտահայության աք սորի վերջին շրջանի ողբերգությունները: ¹³⁸⁴ «*Der Orient*»-ում հրատա-

1380. Lepsius J., „Lösegeld“, 1924, էջ 64:

1381. Schäfer R., Mitteilungen, „Der Orient“, 1925, էջ 46: Ղազիրում յուրաքանչյուր որբի մեկ տարվա խնամքի համար պահանջվող ծախսը կազմում էր շուրջ 240 մարկ: Ինչ վերաբերում էր «փրկագնման» աշխատանքներին, ապա մեկ հայի ազատագրման ծախսը կամ այլ կերպ ասած՝ մեկ փրկագինը 1924-25 թթ. կազմում էր 120-140 մարկ, իսկ 1926 թ-ից՝ միջին հաշվով 180 մարկ: Անդ: Հմնտ. Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 62: Հմնտ. Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 67:

1382. Տե՛ս Mitteilungen, „Der Orient“, 1924, էջ 56: Հմնտ. Mitteilungen, անդ, էջ 89: 1383. Տե՛ս Waisenkinder, „Der Orient“, 1925, էջ 13: Հմնտ. Schäfer R., Mitteilungen, անդ, էջ 46:

1384. Անդ:

րակվելուց հետո պարբերաբար մեծ թվաքանակով բազմացվում և հասարակական շրջաններին էին առաքվում նաև Յեպեի և Կյունցլերի տեղեկագրերը: Միաժամանակ Պոտսդամի Տեմպել հրատարակչությունում կազմակերպության միջոցներով հրատարակվում էին զանազան մենագրություններ և այլ աշխատություններ, որոնք հայտերի ներկայացման դեպքում առաքվում էին բոլոր ցանկացողներին:¹³⁸⁵

1924 թ-ից Լեփսիուսը ջանում էր գերմանացի քրիստոնյաներին դրդել մասնակցելու նաև «Ոսկե օրենք» կարգախոսի ներքո Արևելքի և այդ

1385. 1924 թ-ին արդեն հրատարակվել և վաճառքի էր հանվել մի մեծ ընտրանի, որն ընդգրկում էր հետևյալ աշխատությունները. Lepsius J., „Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke“, „Der Todesgang des armenischen Volkes.“; Künzler J., „Im Lande des Blutes und der Tränen“; Eckart B., „Meine Erlebnisse in Urfa“; Lehmann-Haupt Th., „Erlebnisse eines zwölfjährigen Knaben während der armenischen Deportationen“; Ein Muhammedaner, „Armenisches Märtyrertum“; „Der Prozeß Talaat Pascha“ (Ա. Վեզնրի առաջաբանով) և Niepage M., „Eindrücke eines deutschen Oberlehrers aus der Türkei“: Տե՛ս Der Tempel-Verlag in Potsdam, „Der Orient“, 1924, էջ 90: 1925 թ-ին այդ ցանկը համալրեցին ևս երկու՝ Լ. Ռեյերի „Was der Euphrat erzählt“ և Կ. Յեպեի „Erlöst vom Mohammedanismus“ գրքույկները: Տե՛ս Schäfer R., Mitteilungen, „Der Orient“, 1925, էջ 47: Իսկ հաջորդ՝ 1926 թ-ին դրանց զումարվեցին, ի թիվս այլ հրապարակումների, նաև „Johannes Lepsius zum Gedächtnis“ ժողովածուն, Կ. Յեպեի „Das Flüchtlingsheim in Aleppo“ գրքույկը, ինչպես և Յոզ. Մարկվարտի „Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation“ և Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի „Armenien einst und jetzt“ աշխատությունները, որոնցից վերջինի հրատարակությունն, ի դեպ, մինչ այդ շուրջ մեկ տասնամյակ քաղաքական դրդապատճառներով արգելված էր: Տե՛ս Tempel-Verlag Potsdam, „Der Orient“, 1926, էջ 128-ի և 129-ի միջև գտնվող հավելվածը: Հմնտ. անդ, էջ 176-ի և 177-ի միջև գտնվող հավելվածը: Հաջորդ տարիներին այդ շարքը շարունակ համալրվում էր նոր հրատարակություններով, որոնց թվում էին Ֆ. Նանսենի „Das betrogene Volk“ (1928), Ինգ. Մարիա Ջիկի „Karen Jefe im Kampf um ein Volk in Not“ (1930), Յ. Կյունցլերի „30 Jahre Dienst im Orient“ (1933) գրքերը և բազմաթիվ այլ հրապարակումներ: Տե՛ս Besprechungen, „Der Orient“, 1928, էջ 127-128: Հմնտ. Karen Jeppe, „Der Orient“, 1929, էջ 153: Հմնտ. Besprechungen, „Der Orient“, 1930, էջ 192: Հմնտ. Besprechungen, „Der Orient“, 1934, էջ 23 և այլն: Որպես կանոն ընկերության պարբերականներում մանրամասն գրախոսություններ էին ներկայացվում բոլոր նորանուն աշխատությունների վերաբերյալ. մի առաջադրանք, որ 1926-1933 թթ. հիմնականում իրականացնում էր Մելքոն Քրիշչյանը: Տե՛ս Besprechungen, „Der Orient“, 1928, էջ 127-128: Հմնտ., Besprechungen, „Der Orient“, 1929, էջ 31 և այլն:

թվում նաև հայ որբերի համար կատարվող ամենամյա միջազգային հանգանակությանը, որը տեղի էր ունենում դեկտեմբերի 7-ին:¹³⁸⁶ Գործը դյուրացնելու նպատակով նա 1924 թ-ի «Ոսկե Օրենքի» նախօրեին բարեկամներին անվճար առաքեց թուզիկներ և հանգանակության թերթիկներ, որոնք ըստ ցանկության լրացվում և ետ էին ուղարկվում:¹³⁸⁷ Նույնը տեղի էր ունենում նաև հաջորդ տարիներին, և միանշանակորեն պետք է ասել, որ Լեփսիուսը կարողացավ ավանդույթն արմատավորել Գերմանիայում, որն, ինչպես շուտով կտեսնենք, տարիների ընթացքում ընկերությանը բավական մեծ եկամուտներ բերեց:¹³⁸⁸

Իր հայանվեր պրոպագանդան միաժամանակ դպրոցներում և կիրակնօրյա կրթարաններում տարածելու նպատակով Լեփսիուսը 1925 թ-ին հիմնեց նաև մի ամենամյա մանկական պատկերազարդ պարբերական, որը կոչվում էր «Für unsere kleinen Armenierfreunde» («Հայերի մեր փոքրիկ բարեկամների համար») և պարունակում էր հետաքրքրիչ պատմություններ փախստական երեխաների և որբերի վերաբերյալ:¹³⁸⁹ Կազմակերպությունը զուգահեռաբար զբաղվում էր նաև Հալեպի և Ղազիրի հայ կանանց ու աղջիկների կողմից պատրաստված բարձրարվեստ ձեռագործերի վաճառքով, որոնք պարբերաբար Պոտսդամ էին առաքվում Յեպեի և Կյունցլերի կողմից:¹³⁹⁰ Այդ ասեղ-

1386. Stü Lepsius J., Weltkollekte für 60000 armenische Waisen Kinder, „Der Orient“, 1924, էջ 92: Ամերիկայում և Եվրոպայի քրիստոնյա երկրներում 1924 թ-ից գործող այդ հանգանակության էությունը հետևյալն էր. բոլոր ընտանիքներին կոչ էր արվում աստվածաշնչյան Ոսկե օրենքի կիրակի օրը՝ դեկտեմբերի 7-ին, կիրակնօրյա ճաշի փոխարեն բավարարվել մի պարզ ուտեստով, որպիսին տրվում էր որբանոցների երեխաներին, և խնայված զումարը նվիրաբերել որբերին: Անդ: Միջոցառումը որպես կանոն խիստ մեծ արդյունք էր տալիս: 1925 թ-ի հանգանակությանն, օրինակ, մասնակցեցին աշխարհի 51 երկրներ, և արդյունքը կազմեց մեկ մլն. դոլար: Stü Das internationale Essen der „Goldenen Regel“ in Genf, „Der Orient“, 1926, էջ 150:

1387. Lepsius J., Weltkollekte für 60000 armenische Waisen Kinder, „Der Orient“, 1924, էջ 93:

1388 Stü Aufruf, „Der Orient“, 1926, էջ 144: Հմնտ. Mitteilungen, „Orient im Bild“, 1930, էջ 80: Հմնտ. Schäfer R., Die Goldene Regel (7 Dezember), անդ, էջ 95 և այլն:

1389. Պարբերականը, որը հրատարակվեց մինչև ներառյալ 1926 թ-ը, ցանկացողներին առաքվում էր ինչպես առանձին հայտերի ներկայացման, այնպես էլ քաժանորդագրման միջոցով: Stü Kinderblatt, „Der Orient“, 1925, էջ 64:

1390. Stü Mitteilungen, „Der Orient“, 1924, էջ 89: Հմնտ. Mitteilungen, „Der Orient“, 1925, էջ 47: Հմնտ. „Mitteilungen“, անդ, էջ 108 և այլն:

նագործությունները, որոնց տեսականին խիստ բազմազան էր (սըփ-ռոցներ, թաշկինակներ, ժանյակներ, օձիքներ, շրջակարեր և այլն), Լեփսիուսի և իր աշխատակիցների հետևողական քարոզչության և գովազդների շնորհիվ Գերմանիայում արագորեն սպառվում էին՝ լրացուցիչ նյութական ներդրում բերելով օգնության աշխատանքներին:

Այդ բոլոր ջանքերն ինչպես հարկն է՝ արդյունավորվեցին, և Դր. Լեփսիուսի արևելյան առաքելությունը դեռ 1924 թ-ին կարողացավ ձեռնանուխ եղավ իր հանձնառությունների կատարմանը: Միայն 1924 թ-ի նյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ընկերությունը Հալեպի ազատագրման աշխատանքներին կարողացավ տրամադրել 4200,¹³⁹¹ իսկ 1925 թ-ի ընթացքում 24 300 մարկ:¹³⁹² Ուղարկված գումարները Յեպեի կողմից անմիջապես ծառայեցվում էին իրենց նպատակին: Դրանցով 1924 թ-ի վերջին ազատագրվեցին և Հալեպի «փրկարար կացարան» տեղափոխվեցին 31, իսկ 1925 թ-ի ընթացքում՝ 223 հայ պատանիներ, կանայք և աղջիկներ:¹³⁹³

1926 թ-ին Կ. Յեպեի և նրա գործակալությունների ուժերով մահմեդական ստրկությունից ազատագրվեցին 325, իսկ 1927 թ-ին ևս 275, այսինքն երկու տարիների հանրագումարային թվով՝ շուրջ 600 հայեր, որոնցից 297-ը՝ բացառապես Դր. Լեփսիուսի ՉԱՄ-ի նյութական միջոցներով:¹³⁹⁴ Այդպիսով մինչև 1927 թ-ի դեկտեմբերի 31-ը Յեպեի և նրա գործակալների կողմից ազատագրված հայերի ընդհանուր թվաքանակը հասավ 1700-ի, որոնցից 551-ի «փրկագինը» հատկացվել էր Լեփսիուսի կազմակերպության կողմից:¹³⁹⁵ Նրանց

1391. Stü Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 17:

1392. Stü Karen Jeppes Arbeit, „Der Orient“, 1926, էջ 5:

1393. Stü Jahresrechnung von Dr. Lepsius Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1924, „Der Orient“, 1925, էջ 31: Հմնտ. Schäfer R., Zur Jahresrechnung, „Der Orient“, 1926, էջ 95:

1394. Jeppe K., Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, „Orient im Bild“, 1928, էջ 33: Դր. Լեփսիուսի ՉԱՄ-ի միջոցներով 1926 թ-ին փրկագնվել է 140, իսկ 1927 թ-ին՝ 157 մարդ: Stü Schäfer R., Zur umstehenden Jahresrechnung 1926, „Der Orient“, 1927, էջ 31: Հմնտ. Schütz P., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1927, „Orient im Bild“, 1928, էջ 19: Հմնտ. Schäfer R., Geschichte..., էջ 123:

1395. Schäfer R., Zur umstehenden Jahresrechnung 1926, „Der Orient“, 1927, էջ 31: Հմնտ. Schütz P., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1927, „Orient im Bild“, 1928, էջ 19: Այդ 1700 ազատագրվածներից «փրկարար կացա-

ազատագրման ընդհանուր ծախսերը համապատասխանաբար կազմեցին 27201, 45 թուրքական ֆունտ, որից 9926,25 ֆունտը հատկացրել էր Ազգերի լիգան, իսկ մնացյալը՝ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն և հայ ժողովրդի մյուս բարեկամները,¹³⁹⁶ և բացի այդ ևս 24 270 թուրքական ֆունտ կամ շուրջ 440000 մարկ տրամադրվեց ազատագրվածների սկզբնական խնամքի, կրթության և դաստիարակության նպատակներին:¹³⁹⁷ Ինչ վերաբերում էր նրանց հետագա ճակատագրին, ապա 1927 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ նրանցից 110-ը դեռ գտնվում էին Յեպեի հովանավորության և խնամքի ներքո,¹³⁹⁸ 1134-ը գտել էին իրենց հարազատներին և տեղափոխվել նրանց մոտ, 342-ը դարձել էին միանգամայն ինքնուրույն և ապրում էին սեփական վաստակով, 66-ը փոխադրվել էին որբանոցներ կամ այլ բարեխնամ հաստատություններ, 10-ը մահացել էին, իսկ 38-ը անհետացել:¹³⁹⁹ Վերջիններիս մեծ մասը պատկանում էր այն երիտասարդների թվին, ովքեր իրենց՝ դեռ գերության մեջ գտնվող արյունակիցներին ևս Հալեպ փոխադրելու նպատակով ետ էին վերադառնում, և եթե շատերին հաջողվում էր այդ անել, ապա ոմանք, ովքեր չէին վերադարձել, ամենայն հավանականությամբ, բացահայտվելով սպանվել էին մահմեդականների կողմից:¹⁴⁰⁰ Իսկ ինչ վերաբերվում էր մահացության դեպքերին, ապա անկասկած կացարանում կազմակերպված խնամքը և որակյալ բժշկական սպասարկումն էին պատճառը, որ այդ

րանում» հանգրվանել և ըստ այդմ Յեպեի խնամքի և վերահսկողության հաշվեցուցակներում ընդգրկվել էին 1484-ը: Նրանցից 430-ը 15 տարեկանից փոքր երեխաներ էին, 463-ը այդ տարիքից մեծ կանայք և առջիկներ, իսկ 591-ը այդ տարիքից մեծ տղաներ: Տե՛ս Jeppe K., Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, անդ, էջ 33:

1396. Jeppe K., Ein Jahr Befreiungsarbeit in Syrien, անդ, էջ 33: 27201,45 թուրքական ֆունտը կազմում էր մոտավորապես 497786,535 գերմանական մարկ կամ 30003,199 անգլիական ֆունտ ստեռլինգ: Տե՛ս այդ տարադրամների արժեքային հարաբերակցությունը: Անդ:

1397. Անդ:

1398. Նրանցից 97-ը գտնվում էին Հալեպի «Փրկարար կացարանում», իսկ 13-ը նորահիմն հայկական գյուղում: Անդ, էջ 34:

1399. Անդ:

1400. Անդ, էջ 34-35:

թիվն ավելի մեծ չէր: «Պետք է իսկապես հրաշք անվանել, որ միայն 10-ն են մահացել,- գրում էր Յեպեն հետադարձ հայացքով,- եթե նկատի առնվի, որ նրանց մեծ մասը կամ մահվան ճիրաններում էր, երբ մեզ մոտ եկավ, կամ հիվանդության սաղմն այնքան զարգացած էր, որ մենք դրա դեմ ոչինչ չկարողացանք անել»: ¹⁴⁰¹

Ազատագրման այդ վտանգավոր և սխրալից գործն իրականացվեց ոչ միայն նյութական, այլև մարդկային մեծագույն զոհաբերությունների գնով: Յեպեի երկու հավատարիմ գործակալների՝ Գրիգոր աղայի և Վասիլի ողբերգական ճակատագրի մասին արդեն տեղեկացվել է: Տեական զրկանքների ընթացքում թոքախտով հիվանդանալով՝ 1927 թ-ին մահացան ևս երկուսը՝ Մուրադը և Եղիան: ¹⁴⁰²

Ինչևէ, 1927 թ-ը Ազգերի լիգայի հովանավորությամբ իրականացվող՝ ազատագրական աշխատանքների վերջին տարին էր, որի եզրափակմամբ փակվեցին նաև մասնաճյուղերը: Եվ Յեպեն, չնայած բազում դժբախտների հասանելի դարձած չլինելու կսկիծով, սակայն նաև իր հնարավորությունների առավելագույն օգտագործման գիտակցությամբ էր արժևորում կատարված աշխատանքը: «Մենք կարողացանք մեր մասնաճյուղերը հանգիստ խղճով փակել,- գրում էր նա իր տեղեկագրերից մեկում:- Մենք չենք երկյուղել ջանքեր թափելուց և ծախսեր կատարելուց: Նույնիսկ եթե ամենքին չենք հասել, ապա արել ենք այն ամենն, ինչ մեզ՝ որպես մարդկանց հնարավոր էր թվում»: ¹⁴⁰³

Յեպեն, այնուամենայնիվ, մտադիր չէր իր գործունեությունը դադարեցնել, քանի դեռ կարող էին նոր փախստականներ ի հայտ գալ: Այդ փաստվեց դեռ 1928 թ-ի հունվարին, երբ Թուրքիայից անօրինակ զորկանքների հաղթահարման գնով կարողացան Հալեպ հասնել 8 կանայք և աղջիկներ, որոնց այդ համարձակ ձեռնարկին մղել էր «Փրկարար կացարանում» օթևան և աջակցություն գտնելու հույսը: ¹⁴⁰⁴ Ուստի նա շարունակում էր բարեկամներին հեղեղել օգնության կոչերով և աղերսագրերով: «Մենք այժմ այլևս երկրով մեկ ճամփորդություններ

1401. Անդ, էջ 34:

1402. Անդ, էջ 33: Յեպեն այնուհետև կանոնավոր օգնություն էր ցուցաբերում նրանց ընտանիքներին:

1403. Անդ, էջ 33:

1404. Անդ, էջ 35:

կատարում կորած երեխաներին գտնելու համար,- նշում էր նա իր 1928 թ-ի նամակներից մեկում,- սակայն խնդրում ենք. օգնեք մեզ մեր դուռը բաց և մեր լույսը վառ թողնելու համար, որպեսզի նրանք կարողանան տան ճանապարհը գտնել»:¹⁴⁰⁵

Օգնությունը չուշացավ: Չնայած մասնաճյուղերը փակված էին, և «Փրկագնման գործը» պաշտոնապես համարվում էր ավարտված, սակայն այն չդադարեց: Գործակալները շարունակում էին տեմդագին որոնումները,¹⁴⁰⁶ և այն կազմակերպությունը, որը միայնակ ստանձնեց բոլոր հետագա «փրկագինների» վճարումը, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն էր: Վերջինիս նյութական միջոցներով 1928 թ-ի ընթացքում ազատագրվեցին և կացարան տեղափոխվեցին 67,¹⁴⁰⁷ 1929 թ-ին 29,¹⁴⁰⁸ իսկ 1930 թ-ին 58 հայորդիներ:¹⁴⁰⁹ Ընդ որում, 1930 թ-ի գարնանը նրանց հոսքը կտրուկ նվազեց, իսկ հուլիսից հետո արձանագրվեց ազատագրման միայն մեկ դեպք:¹⁴¹⁰ Այդ նվազումն օրինաչափ էր, քանի որ եղերական աքսորից արդեն անցել էր 15 տարի, և Յեպեն ու իր գործակալներն այլևս ոչ թե երեխաների հետ գործ ունեին, այլ հասուն մարդկանց, որոնք ոչ միայն օտարվել էին ազգային նկարագրից, այլև ամուսնական և այլ կապերով մերվել մահմեդական միջավայրին: Բացի այդ, նրանք արդեն ունեին կարծր համոզմունքներ կամ, ինչպես Յեպեն էր խորհրդանշաբար ընդգծում, «սեփական կամք», որի վրա ներազդելը շարունակ ավելի էր դժվարանում:¹⁴¹¹

Ինչևէ. 1930 թ-ի վերջին, երբ նոր փախստականներ այլևս ի հայտ չէին գալիս, և ազատագրված վերջին հայ աղջիկը դարձավ ինքնու-

1405. Անդ:

1406. Hetzel G., Flucht vor dem Islam, „Orient im Bild“, 1929, էջ 54:

1407. Stü Unsere Lösegeldarbeit liegt noch nicht still, „Orient im Bild“, 1928, էջ 65: Յմնտ. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1929, էջ 22:

1408. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, էջ 31:

1409. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21:

1410. Jeppe K., Schlußbericht über die Lösegeld-Befreiungs-Arbeit in Aleppo, անդ, էջ 41:

1411. Անդ էջ 42:

րույն, «Փրկարար կացարանն» իր դռները մեկընդմիջտ փակեց:¹⁴¹² Չնայած Յեպեն հետագայում իր հաստատություններից մեկում շարունակում էր մի սենյակ պահել հիվանդության և այլ պատճառներով վերստին իրեն ապավինող՝ նախկին սաների կամ նոր փախստականների ընդունման համար,¹⁴¹³ սակայն այդպիսիք այլևս ի հայտ չեկան, և 1931 թ-ից այդ աշխատանքը փաստացիորեն դադարեց:

Այսպիսով, Կ. Յեպեի՝ մոտ տասնամյա հայափրկիչ գործունեության ընթացքում մահմեդականների բնակավայրերից ազատագրվեցին և տևական խնամքից ու ուսումնառությունից հետո հայ ազգային-հավաքական կյանքում իրենց տեղը գրավեցին ընդհանուր թվով՝ 1900 կանայք, պատանիներ և աղջիկներ, որոնցից 705-ը դր. Լեփիուսի ԳԱԱ-ի նյութական միջոցներով:¹⁴¹⁴

4.2. Կ. Յեպեի և Դր. Լեփիուսի արևելյան առաքելության մյուս աշխատածյուղերը Հայկալում

Ազատագրվող հայորդիներից շատերը ժամանակին առևանգվել էին մահմեդական գյուղացիների կողմից, վարժվել գյուղական կյանքին և քաղաքային առօրյային հեշտությամբ չէին կարող հարմարվել:¹⁴¹⁵ Մյուս կողմից, Սիրիայի քաղաքներում տիրող համատարած գործազրկության պայմաններում նույնիսկ որակյալ մասնագետների համար նյութական վաստակի ապահովումը խիստ դժվար խնդիր էր: Երկիրը

1412. Անդ, էջ 41:

1413. Անդ:

1414. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, անդ, էջ 21: Կ. Յեպեն հայ ժողովրդին մատուցած իր ծառայությունների համար մեծ գնահատանքի արժանացավ նաև իր հայրենիքում՝ 1927 թ-ին Դանիայի թագավորի կողմից պարգևատրվելով ոսկե շքանշանով: St'ın Karen Jeppe erhielt die goldene Medaille, „Orient im Bild“, 1927, էջ 43:

1415. Jeppe K., Rettung aus muhammedanischer Sklaverei. Wer hilft dazu?, „Der Orient“, 1924, էջ 62:

տնտեսապես կազմալուծված էր, և դրա հետևանքներն առաջին հերթին զգալի էին դառնում մեծ քաղաքներում: Պատերազմից հետո Թուրքիայից առանձնանալով և զրկվելով Հայաստանն ու Անատոլիան Բաղդադի հետ կապող առևտրական ճանապարհներից Սիրիան իր հետամնաց գյուղատնտեսությամբ այլևս չէր կարող սնել Հալեպի և մյուս մեծ քաղաքների բնակչությանը: Կենսամթերքի հարածուն թանկացումները և համատարած գործազրկությունը խիստ սպառնալից էին դարձել նաև Հալեպի համար, որտեղ 1920-ական թթ. սկզբին անօրինակ ծանր պայմաններում հանգրվանել էին շուրջ 50 000 հայ փախստականներ:¹⁴¹⁶

Սիրիայի և նրա բնակչության ապագան, Յեպեի համոզմամբ, կախված էր այդ երկրում գյուղատնտեսության զարգացումից: Այդ տեսակետն իշխում էր նաև Եվրոպայի և մասնավորապես Ֆրանսիայի պետական շրջաններում:¹⁴¹⁷ Չարգացած երկրագործությանն անծանոթ արաբներից և վաչկատուն բեդվիներներից այդ հարցում որևէ ակնկալիք ունենալ հնարավոր չէր: Այլ էր խնդիրը հայերի պարագայում, որոնք, ինչպես Յեպեն էր նշում, ի վիճակի էին հարմարվել ժամանակակից գյուղատնտեսության պահանջներին և կարող էին ամենից շուտ Սիրիան «մեռյալ կետից դուրս բերել»՝ անձամբ ևս դուրս գալով իրենց ծանր վիճակից:¹⁴¹⁸ Հատկապես վերջին հեռանկարը Յեպեի համար առանձնահատուկ կարևորություն ուներ, քանի որ նրա համոզմամբ այլ կերպ հնարավոր չէր լինի պայքարել Հալեպի ճամբարաբնակ հայերի մեջ տիրող ընդհանուր բարոյահոգեբանա-

1416. Հայերի «ճամբարը» տեղավորված էր քաղաքից դուրս գտնվող մի քանի խարխուլ շենքերում և նրանց շուրջ կանգնեցված խրճիթներում ու վրաններում: Նրանց վերաբերյալ Յեպեի տեղեկությունները խիստ տպավորիչ էին. «Ավելորդ է ասել, որ յուրաքանչյուր ընտանիք այնքան տեղ չունի, որ գիշերը կարողանա մեկնվել,- տեղեկացնում էր նա 1924 թ-ին:- Որ նրանց խրճիթները ձմռանը խոնավ, իսկ ամռանը շիկացման աստիճան տաք են, ևս ինքնին հասկանալի է: Չնայած հայկական մաքրասիրությանը, սանիտարական պայմանների մասին նույնպես միայն չափավոր կեդպով է հնարավոր լինում հոգ տանել: Դա նպաստում է համաճարակների զարգացմանը, որոնց առաջին զոհերն իհարկե երեխաներն են: Անբավարար է նաև սնունդը, այնպես որ երեխաներն ամենևին դիմադրունակ չեն: Շատ տխուր վիճակ է: ...Հայերը նախածեռնող են և աշխատունակ, այլապես արդեն կործանված կլինեին»: Sbn Jeppe K., Die Armenier in Syrien, անդ, էջ 82-83:

1417. Jeppe K., Die Armenier in Syrien, անդ, էջ 84:

1418. Անդ:

կան ընկճվածության դեմ, որն ավելի սպառնալից և կործանարար էր, քան նյութական զրկանքները: Իր նկատառումը նա հիմնավորում էր պատմության մեջ փաստարկված այն ճշմարտությամբ, որ «Հայը կործանվում է միայն այն ժամանակ, երբ այլևս չի կարող հուսալ»: «Մի ժողովուրդ,- նշում էր նա իր տեղեկագրերից մեկում,- որը հարյուրամյակներ շարունակ պայքար է մղել իր հավատի համար, իր ուժը պահպանում է անսասան լավատեսության մեջ, որը հայերին ի սկզբանե հատուկ է եղել: Սակայն ոչինչ ավելի չի ճնշում իմ սիրտը, քան այն ազդեցությունը, որ ունեցել են վերջին տարիների բազմաթիվ, անտանելի ծանր հուսախաբությունները հայերի ներաշխարհի վրա: Նրանց հետ խոսելու կարիք չկա վտանգը նկատելու համար: Մարդկանց դեմքերի վրա հուսահատությունը տեսնում ես նույնիսկ փողոցում նրանց կողքով քայլելիս: Ողորմության միջոցով այժմ ոչընչի չես կարող հասնել: Մենք պետք է նրանց ապագա տանք...»:¹⁴¹⁹

Ելնելով նշված նկատառումներից, ինչպես և հայերի ու արաբների միջև «խաղաղ համագոյակցության» նախադրյալներ ստեղծելու նպատակով 1923 թ-ին կայացած Հայերի դանիացի բարեկամների միության համաժողովում որոշում ընդունվեց արաբական շրջաններից մեկում ստեղծել հայկական երկրագործական գաղութ:¹⁴²⁰ Միության շվեդական բաժանմունքը ստանձնեց այդ ձեռնարկի նյութական հովանավորությունը, իսկ իրագործումը վստահվեց Յեպեին որպես Ազգերի լիգայի պատասխանատու հանձնակատարի:¹⁴²¹

Յեպեի համար հեշտ չէր կատարել տարածքի ընտրությունը: Որոշ վայրերում, որտեղ մարդկանց անվտանգությունն ապահովված էր, բարձր էին հողի գները, իսկ այլ տարածքներում երաշխավորված չէր անվտանգությունը: Նրա երկվությունը լուծվեց 1923 թ-ի սկզբին, երբ հայերին համատիրության սկզբունքով¹⁴²² իր կալվածքներում բնա-

1419. Անդ, էջ 88:

1420. Անդ, էջ 85:

1421. Անդ:

1422. Համատիրության սկզբունքը հետևյալն էր. կալվածատերը բնակեցնում էր գյուղացիներին, նրանց սերմացու և դրամ էր տալիս լծկաններ ու զանազան գործիքներ գնելու համար: Գյուղացիները կատարում էին պահանջվող աշխատանքը, և քեղքահավաքից հետո եկամտի մեկ քառորդ մասը հատկացնում կալվածատիրոջը: Տե՛ս Künzler J., Reise nach dem Inneren Vorderasien, „Orient im Bild“, 1929, էջ 5:

կեցնելու խնդրանքով հանդես եկավ բեդվիմների պարագլուխներից մեկը՝ Չաջիմ փաշան, որն ի վիճակի էր իր սեփականությունն ու բնակիչներին պաշտպանել:¹⁴²³

1924 թ-ի գարնանը Եփրատից այն կողմ, Ռակայի և Թել-Աբիաթի միջև ընկած տարածքում կատարվեց գաղութի հիմնումը, որն անվանվեց Թել-Սամեն, և որի բնակիչների թիվն աշնանը հասավ 200-ի:¹⁴²⁴ Գրեթե անմիջապես հետո Յեպեն նախածռնեց նաև մեկ այլ գյուղի՝ Թել-Արմենի հիմնադրումը, որը գտնվում էր «Թել Սամենի» մերձակայքում, այդ գյուղից կես ժամվա հեռավորության վրա:¹⁴²⁵

Նոր գաղութներում հյուղերի կառուցման և բնակեցման համար յուրաքանչյուր ընտանիքի փոխարինաբար հատկացվում էր 200 մարկ կազմող մի գումար, որը մեծ մասամբ նորաբնակների առաջին բերքահավաքից հետո ետ էր վերադարձվում:¹⁴²⁶ Ճամբարականներից զատ այնտեղ բնակություն հաստատեցին նաև Յեպեի կողմից ազատագրված երիտասարդների մի մասը, որոնք այնուհետև սկսեցին ընտանիքներ կազմել հիմնականում իրենց բախտակից հայուհիների հետ: Թել-Սամենում տեղավորվեցին նաև ազատագրված ամենա-

Յեպեն անշուշտ ավելի ցանկալի էր համարում տարածքների գնումը, որի միջոցով հայերը կարող էին դառնալ լիիրավ սեփականատեր, բայց նրա համոզմամբ Սիրիայի ներքաղաքական իրադրությունը դրա համար դեռ բավականաչափ կայուն չէր: Տե՛ս Jeppe K., Die Armenier in Syrien, „Der Orient“, 1924, էջ 87:

1423. Jeppe K., Neues Leben für die Armenier in der Heimat Abrahams, „Orient im Bild“, 1930, էջ 78; 81-82:

1424. Jeppe K., Die Armenier in Syrien, „Der Orient“, 1924, էջ 86-87: Հմնտ. Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 39:

1425. Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 71: Հմնտ. Jeppe K., Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild“, 1928, էջ 3-4: Հմնտ. Hetzel G., Zu Misak nach Tineh, „Orient im Bild“, 1931, էջ 59: Հմնտ. Zum Tode Karen Jeppe, „Orient im Bild“, 1935, էջ 30: Գյուղերի հիմնման աշխատանքները կազմակերպեց և ղեկավարեց Մ. Մելքոնյանը: Տե՛ս Gaszczuk L., Im gesegneten Lande Mesopotamien, „Orient im Bild“, 1932, էջ 25-26:

1426. Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 71: Գյուղերի քոլոր բնակիչները երկու տարվա ընթացքում նյութապես միանգամայն անկախացան: Տե՛ս Jeppe K., Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild“, 1928, էջ 4:

փոքրիկ տղաները, որոնց ուսման համար հիմնվեց մի դպրոց: ¹⁴²⁷

Գյուղերի հիմնումից հաշվված ամիսներ անց, ինչպես և սպասելի էր, շրջանում երկրագործությունը թռիչքային վերելք ապրեց: Ինչպես ժամակակակիցն էր վկայում, շրջակա տարածքների տեսքն ամբողջովին փոխվեց, ի հայտ եկան «հրաշալի խնամված այգիներ», որպիսիք այդ վայրերում մինչ այդ տեսնված չէին: Միաժամանակ հայերի և տեղացի արաբների միջև ձևավորվեցին բարիդրացիական հարաբերություններ, և որ ամենակարևորն էր, նախկին հուսալքությունն այլևս չկար, և մարդիկ ապագային նայում էին «ուրախ ու վստահորեն»։ ¹⁴²⁸ «Որքա՜ն ուրախալի է, որ նրանք 1,5 տարի անցնելուց հետո ոչ միայն առատ սնունդ և հագուստ ունեն, այլև քսակում փող, գրում էր Յեպեն իր տեղեկագրերից մեկում: - Նրանցից շատերն արդեն կարողացել են նաև լծկաններ գնել...»: ¹⁴²⁹

Առաջին հաջողությունից ոգևորված՝ Յեպեն մտադիր էր հիմնել այլ գյուղավաններ ևս, սակայն 1925 թ-ին նա հարկադրված եղավ այդ առժամանակ հետաձգել իր բոլոր հնարավորությունները նպատակաուղղելով երաշտի, գործազրկության և աննախադեպ բանկացումների պայմաններում սովամահության դատապարտված ճամբարաբնակների փրկությանը: «Հալեպի ճամբարի խեղճ բնակիչները պարզապես այլևս ուտելու ոչինչ չունեն,- գրում էր նա 1925 թ-ին Լեփսիոսին ուղղված իր նամակներից մեկում: - Ամեն բան միավորվել է այդ թշվառ մարդկանց կործանելու համար, և ճամբարում արդեն սովահարություն է տիրում...»: ¹⁴³⁰

1427. Տե՛ս Karen Jappes Arbeit, „Der Orient“, 1926, էջ 6: Օգտվելով այն հանգամանքից, որ այդ գյուղերը գտնվում էին «բեդվիների երկրի» կենտրոնում, որտեղ առևանգված երեխաների և կանանց թիվն, ըստ նախնական հաշվարկների, պետք է խիստ մեծ լիներ, Յեպեն դրանք դարձրեց նաև փրկարար աշխատանքների հենակետ: Նրա կողմից թել Սամենում հիմնվեցին որոնման մի նոր գաղտնի գործակալություն և հավաքակայան, որոնք մեծ նշանակություն ունեցան հետագա փրկարար աշխատանքներում: Տե՛ս Jeppe K., Jahresbericht vom Flüchtlingsheim in Aleppo, „Der Orient“, 1925, էջ 39:

1428. Jeppe K., Die Armenier in Syrien, „Der Orient“, 1924, էջ 87: Հմմտ. Gaszczyk L., Im gesegneten Lande Mesopotamien, „Orient im Bild“, 1932, էջ 26:

1429. Տե՛ս Karen Jappes Arbeit, „Der Orient“, 1926, էջ 6:

1430. Անդ, էջ 7-8:

Օր. Յենսենի հետ ճամբարում տիրող իրադրությունը մանրագնին հետազոտելուց հետո Յեպեն 1925 թ-ի աշնանն այնտեղ հիմնեց մի խահանոց, որը մինչև հաջորդ տարվա գարնան սկիզբը ամենօրյա սնունդով ապահովեց 700 երեխաների:¹⁴³¹ Միաժամանակ նա ճամբարին կատարեց 100 ֆունտ ստեռլինգ նվիրատվություն ծծկեր երեխաներին կաթով ապահովելու համար: Բացի այդ նրա կողմից լրացուցիչ դրամական հատկացումներ էին կատարվում երեխաներ ունեցող ընտանիքներին, բաժանվում էին հազուստներ, կազմակերպվում էր ծրի բուժօգնություն և այլ ծառայություններ, որոնց համար միայն 1925 թ-ի ընթացքում ծախսվեց մոտ 250 ֆունտ ստեռլինգ:¹⁴³² Այդ աշխատանքները, սակայն, որոնք իրագործվում էին հիմնականում Ազգերի լիգայի խիստ սահմանափակ միջոցների հաշվին, չէին կարող բավարարել անասելի ծանր պայմաններում գտնվող Չալեսայի ճամբարականների դրությունը փոքրիշատե տանելի դարձնելու համար, որոնց թիվը 1926 թ-ին հասնում էր 17 հազարի:¹⁴³³ Անհրաժեշտ էին այլ ընդգրկուն և արմատական միջոցառումներ, և 1926 թ-ի աշնանը նրան օգնության հասավ նաև Դր. Լեփսիուսի ՉԱԱ-ն՝ ստանձնելով ճամբարի որբ կամ առնվազն հայրերից զրկված՝ թվով 100 երեխաների խնամքը:¹⁴³⁴

Ընկերության կողմից ստանալով որբերի հավաքագրման և խնամքի կազմակերպման հանձնարարականը՝ Յեպեն վճռեց գործել մի բուլորովին այլ դեռ իր նախադեպը չունեցող եղանակով, որ հնարավորություն էր ընձեռում օգնել նաև այրիներին, և, ինչպես կարճ ժամանակում պարզվեց, շատ ավելի արդյունավետ էր, քան որբանոցի ստեղծումը: «Ինձ ցավ էր պատճառում երեխաներին իրենց մայրերից բաժանելու և որբանոց փոխադրելու միտքը, -այդ առնչությամբ նշում էր նա:- Ոչ ոք և ոչինչ չի կարող փոխարինել մայրական սիրուն կամ սեփական տանը: Բաժանումը որքա՞ն պետք է տխրեց-

1431 . Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, անդ, էջ 70:

1432. Անդ:

1433. Անդ: «Այս տարվա թանկացումները,- գրում էր Յեպեն 1926 թ-ին,- միանալով գործազրկությանը, ճամբարի փախստականների գոյատևումը գրեթե անհնար են դարձրել: Sbu Jeppe K., Im Flüchtlingslager von Aleppo, „Orient im Bild“, 1927, էջ 21-22:

1434. Jeppe K., System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, էջ 2:

ներ նաև մայրերին, որոնք արդեն հաղթահարել էին անասելին: Նաև քույրերը և եղբայրները (որոնք բոլորը չէին կարողանա գալ որբանոց) պետք է մնային նեղության մեջ, մինչդեռ մյուսները խնամվելու էին: Այդ գաղափարն ինձ ամենևին դուր չէր գալիս: Այո, ես այն պարզապես չէի կարող ընդունել: «Ինչու՞ ես պետք է այդ անեի,- հարց էի տալիս ինքս ինձ,- եթե մենք որբանոցում երկու երեխայի համար պետք է ավելին ծախսենք, քան կարող է ծախսվել երեք երեխային իրենց մոր մոտ խնամելու դեպքում»:¹⁴³⁵

Յեպեն, այսպիսով, վճռեց երեխաների խնամքն իրականացնել նրանց մայրերի, իսկ եթե վերջիններս այլևս կենդանի չէին, ապա միայնակ այրիների միջոցով, որոնց և հանձնվեցին բացառապես որբ երեխաները:¹⁴³⁶ Ընդ որում, այդ պարտականությունը հանձնարարվում էր «լավագույններին», որոնք կարող էին նրանց խնամքն ու դաստիարակությունը պատշաճ կերպով իրականացնել:¹⁴³⁷ Յեպեն սուլայի խոհանոցից նրանց ամեն օր «առատ և լավ ճաշ» էր հատկացնում՝ յուրաքանչյուր ամիս հանձնելով նաև որոշակի գումար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար, և բացի այդ տրամադրում էր նաև երեխաների հագուստի, ուսման, ինչպես և ողջ ընտանիքի բուժսպասարկման ծախսերը:¹⁴³⁸

Քանի որ այրիների մեծ մասն ապրում էր ծայրահեղ խղճուկ և հակասանիտարական վիճակում գտնվող հյուղերում, որոնք որբանոցի պահանջներին չէին համապատասխանում, աշխատանքի մեկնարկումից հետո Յեպեի հաջորդ խնդիրը դարձավ նրանց բնակարանային պայմանների բարելավումը: Համեմատաբար բարեկարգ՝ փոքրաթիվ խրճիթները նրա միջոցներով վերանորոգվեցին և ընդարձակվեցին:¹⁴³⁹ Իսկ ինչ վերաբերում էր մյուս ընտանիքներին, ապա Յեպեն Հալեպի «Փրկարար կացարանի» մերձակայքում գնեց մի հո-

1435. Անդ:

1436. Schütz P., Frl. Jeppe's Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, էջ 56-57: Միայնակ այրիներից յուրաքանչյուրին միջին հաշվով հատկացվեցին 3-4 որբեր: Տե՛ս Jeppe K., Unsere Waisenarbeit in Aleppo im Jahre 1932, „Orient im Bild“, 1933, էջ 11:

1437. Jeppe K., System und Ziel der Waisenflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, էջ 2:

1438. Անդ, էջ 3:

1439. Անդ, էջ 2:

ղակտոր՝ այն հատկացնելով բնակարանների շինարարությանը:¹⁴⁴⁰ 1927 թ-ին այնտեղ վեր խոյացան առաջին նորակառույցները՝ բաղկացած 6-ական ընդարձակ սենյակներից, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված էր մեկ այրու և նրա երեխաների բնակության համար,¹⁴⁴¹ իսկ 1928 թ-ի առաջին կեսին արդեն պատրաստ էին 7 այդպիսի շենքեր, որտեղ բնակություն էին հաստատել 40 այրիներ 100 երեխաների հետ միասին:¹⁴⁴² «Այդ գաղութը մի իսկական «որբանոց» է, գրում էր Կ. Յեպեն,- այն միակ տարբերությամբ, որ այնտեղ ապրում են նաև մայրերը: Եվ ես կարծում եմ, որ թե՛ մայրերը, թե՛ երեխաներն ուրիշ ոչ մի տեղ ավելի երջանիկ չէին կարող լինել»:¹⁴⁴³

Փաստորեն Կ. Յեպեն որբախնամության իր առաջադրանքն իրականացրեց ոչ թե առանձին որբանոցի, այլ ընտանիքների հիմնման միջոցով՝ երեխաներին տրամադրելով մայրեր, իսկ մայրերին երեխաներ: Այդպիսով վերջիններիս խնամքն ու դաստիարակությունը ավելի նպատակային և վերահսկելի դարձավ, քան կարող էր լինել որևէ որբանոցում, և բացի այդ հնարավորություն ստեղծվեց որբանոցի համար հատկացված միջոցներով հոգ տանել նաև Չալեպի՝ ոչ պակաս անօգնական վիճակում գտնվող այրիների մասին, որոնք այլևս դրսում աշխատանք և վաստակ որոնելու անհրաժեշտություն չունեին: «Այրիներն ունեցան ընտանիք, իսկ որբերը՝ մայր,- նշում էր այդ առթիվ դր. Շյուլթցն իր տեղեկագրերից մեկում:- Այրիների խնդիրը լուծված է, լուծված է նաև որբերինը: Եվ այն էլ այնպիսի եղանակով, որը մեր ժամանակակից դաստիարակության իդեալին ավելի է համապատասխանում, քան մինչայժմյան պրակտիկան»:¹⁴⁴⁴

1440. Յեպեն հողամասը գնեց դանիացի մի բարեկամի կողմից իրեն կտակված գումարով: ԱՆդ, էջ 3:

1441. Նրանցից յուրաքանչյուրում կար նաև մի ընդհանուր նկուղ, խոհանոց և ճաշասենյակ: St'u Schütz P., FrI. Jeppe's Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, էջ 56-57:

1442. Schütz P.; Künzler J., Reise nach dem inneren Vorderasien, անդ, էջ 58:

1443. Jeppe K., System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, էջ 3:

1444. Schütz P., FrI. Jeppe's Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, էջ 56: Զգտելով օր առաջ շուտ որբերին և այրիներին օգնության հասնել՝ Յեպեն նոր «որբանոցի» իր ծրագիրն իրականացրեց առանց նախապես Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի

Իսկ որ առավել ուշագրավ է, նոր մեթոդը Յեպեին հնարավորություն ընձեռեց շուրջ կիսով չափ կրճատել որբերի խնամքի համար նախատեսված ծախսերը և այդ տնտեսման միջոցով «որբանոց» ընդունել անհամեմատ ավելի մեծ թվով երեխաների ու համապատասխանաբար նաև այրիների:¹⁴⁴⁵ Եթե սովորական որբանոցում (ինչպես օրինակ Ղազիրի հաստատությունում) յուրաքանչյուր երեխայի խնամքի տարեկան ծախսերը կազմում էին ոչ պակաս, քան 480 մարկ, ապա Չալեպի «ընտանեկան որբանոցում» այդ գումարը չէր գերազանցում 240 մարկի սահմանագիծը:¹⁴⁴⁶ Ուստի եթե Յեպեն 1927 թ-ի վերջին, համաձայն Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի ցուցումների, հավաքագրել էր միայն 100 որբերի,¹⁴⁴⁷ ապա 1928 թ-ին այդ թվակազմի համար նախատեսված միջոցներով նրա «որբանոցում» խնամվում էին 220,¹⁴⁴⁸ 1929 թ-ին 170,¹⁴⁴⁹ 1930 թ-ին 207,¹⁴⁵⁰ 1931 թ-ին 164,¹⁴⁵¹ 1932 թ-ին 173,¹⁴⁵² իսկ 1933 թ-ին 163 երեխաներ:¹⁴⁵³ Բացի այդ, կատարված խնայողությունների հաշվին նա

տնօրինության հետ համաձայնեցնելու, ապավինելով նրա այսպես կոչված՝ «հետին թվով» թույլտվությանը: Տե՛ս Jeppe K., System und Ziel der Waisenpflege in Aleppo, „Orient im Bild“, 1929, էջ 2: Այն բնականաբար չուշացավ. «Մենք Չալեպի մեր հոգեծնողներին տեղեկացնում ենք,- նշվում էր ընկերության 1929 թ-ի սկզբին քարեկամներին ուղղված մի շրջաբերականում,- որ մեր հոգաբարձությունը հետին թվով հավանություն է տվել օր. Յեպեի նախորդ տարվա փորձին և որոշել է որբախնամության այդ ձևը դարձնել մնայուն»: Տե՛ս Mitteilungen, անդ, էջ 8:

1445. Անդ: Հմնտ. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, անդ, էջ 22:

1446. Տե՛ս Mitteilungen, անդ, էջ 31:

1447. Schäfer R., Zur umstehenden Jahresrechnung 1926, „Der Orient“, 1927, էջ 31:

1448. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, „Orient im Bild“, 1929, էջ 22:

1449. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für das Jahr 1929, „Orient im Bild“, 1930, էջ 31:

1450. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21:

1451. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, էջ 11:

1452. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1932, „Orient im Bild“, 1933, էջ 14:

1453. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1934, էջ 11:

1929 թ-ին քանդելով հայկական ճամբարի ամենավատթար վիճակում գտնվող խրճիթները՝ դրանց տեղում կառուցեց մի ընդարձակ և հարմարավետ բնակելի շենք, որը կոչվեց «Լեփսիուսի տուն», և որտեղ բնակություն հաստատեցին այրիների և որբերի 5 ընտանիքներ:¹⁴⁵⁴

Դժվար է գերազնահատել այն նշանակությունը, որն ուներ Դր. Լեփսիուսի Գերմանական առաքելության որբախնամ գործունեությունը Հալեպի տարագիր հայության համար: «Ամենասարսափելին կլիներ որբ երեխաների վիճակը, եթե նրանք Գերմանիայից օգնություն չստանային,- գրում էր Յեպեն 1933 թ-ի ամռանը:- Որքան մեծ օրհնություն է Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի որբախնամ գործունեությունը Հալեպի փախստականների ճամբարի համար: Աստված թո՛ղ պահապան լինի, որպեսզի այն չդադարի, այլապես մի քանի հարյուր որբ երեխա պարզապես սովամահության կդատապարտվեն»:¹⁴⁵⁵ «Որբանոցի» կամ, ինչպես այն հաճախ կոչվում էր, «Որբերի և այրիների գաղութի» դպրոցահասակ երեխաները հաճախում էին մերձակա հայկական դպրոցները,¹⁴⁵⁶ և բացի այդ Յեպեի կողմից տրամադրված մանածագործական հաստոցների միջոցով հմտանում արհեստագործության մեջ:¹⁴⁵⁷ Թե դպրոցում և թե տանը նրանք մըշտապես գտնվում էին Յեպեի և նրա աշխատակիցների հոգատար հսկողության ներքո: «Մենք փորձում ենք, որքան հնարավոր է, փոխարինել մահացած հորը,- գրում էր այդ առթիվ Կ. Յեպեն իր 1933 թ-ի տեղեկագրերից մեկում,- ջանում ենք անել այն ամենը, ինչ նա իր ընտանիքի համար կաներ՝ թե նյութական և թե հոգևոր առումով: Մենք անշուշտ չենք կարող ամբողջությամբ փոխարինել նրա անձին և սիրուն, սակայն մյուս կողմից մեր օգնությունը և ուշադրությունը նրա զավակների հանդեպ գերազանցում են... Այնպես որ մեր որբերը խաղավայրերում կամ դպրոցում իրենց խնամված տեսքով մեծ մասամբ հեշտությամբ ճանաչվում են»:¹⁴⁵⁸

1454. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1930, էջ 31: Յմնտ. Jeppé K., Die Sahagian-Schule in Aleppo, „Orient im Bild“, 1932, էջ 35:

1455. Jeppé K., Die Lage der Armenier in Aleppo, „Orient im Bild“, 1933, էջ 45:

1456. Jeppé K., Die Sahagian-Schule in Aleppo, „Orient im Bild“, 1932, էջ 35:

1457. Schütz P., Frl. Jeppé’s Witwenkolonie bei Aleppo, „Orient im Bild“, 1928, էջ 57:

1458. Jeppé K., Unsere Waisenarbeit in Aleppo im Jahre 1932, „Orient im Bild“, 1933, էջ 11:

Հաջորդ և թերևս ոչ պակաս կարևոր առաքելությունը, որ ստանձնեց Դր. Լեփսիուսի ՉԱԱ-ն, Հալեպի ճամբարի առավել անապահով ընտանիքների երեխաների սնուցումն էր: Ընկերության միջոցներով 1929 թ-ին կյանքի կոչվեց այսպես կոչված՝ «Կերակրվող երեխաների» աշխատաճյուղը, որն նընդմեջ գործեց նաև հաջորդ տարիներին, և որի շրջանակներում հիշյալ երեխաները Կ. Յեպեի հիմնած խոհանոցում օրական մեկ անգամ առատ և որակյալ սնունդ էին ստանում: Ընդ որում յուրաքանչյուր երեխայի սնուցման ամսական ծախսերը կազմում էին 6-8 մարկ կախված սննդամթերքի տեղական գներից:¹⁴⁵⁹ Եթե նկատի առնվի, որ 1929-33 թվականների ընթացքում ամենօրյա տաք սնունդով այնտեղ ապահովված էին համապատասխանաբար 143,¹⁴⁶⁰ 162,¹⁴⁶¹ 129,¹⁴⁶² 150¹⁴⁶³ և 124 երեխաներ,¹⁴⁶⁴ ապա ակնհայտ կդառնա, թե այդ աջակցությունն ինչպիսի ծավալ և նշանակություն ուներ Հալեպի սովահար հայ ընտանիքների համար:

Հատկանշական է, որ Դր. Լեփսուսի ՉԱԱ-ն զուգահեռաբար շարունակում էր զարգացնել նաև ամենամյա իրեղեն նվիրատվությունների ավանդույթը, որոնք ծավալապես ընդլայնվելով՝ 1928 թ-ից դարձան Հալեպում և Ղազիրում իրականացվող օգնության աշխատանքների կարևոր բաղկացուցիչ մասը: Ընդ որում Հալեպում դրանք հավասարապես վերաբերվում էին թե «որբանոցային» և թե «կերակրվող» երեխաներին: Ըստ այդմ 1928 թ-ին հազուստեղենով և այլ անհրաժեշտ պարագաներով լի 11 ծանրոց ուղարկվեց Հալեպ, և ևս 7-ը Ղազիր, որոնց ընդհանուր քաշը կազմում էր 1865 կգ:¹⁴⁶⁵

1459. Gaszcyk L., Eine halbe Stunde im Flüchtlingslager, „Orient im Bild“, 1929, էջ 79: Հմնտ. Mitteilungen, „Orient im Bild“, 1931, էջ 40:

1460. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, էջ 31:

1461. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21:

1462. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, էջ 11:

1463. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1932, „Orient im Bild“, 1933, էջ 14: Ամբողջ տարվա ընացքում հաստատուն պահվող այդ թիվը տարեվերջին իջավ 132-ի: Անդ:

1464. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1934, էջ 11:

1465. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1928, „Orient im Bild“, 1929, էջ 22:

1929 թ-ին կատարվեց 4099 կգ իրեղեն առաքում, որից 3043 կգ-ը դեպի Չալեպ, իսկ 1056 կգ-ը Ղազիր:¹⁴⁶⁶ 1930 թ-ին Չալեպ և Ղազիր առաքվեցին համապատասխանաբար 21 և 5 ծանրոցներ, որոնց ընդհանուր քաշը 3682 կգ. էր:¹⁴⁶⁷ 1931 թ-ից այդ հատկացումները նախատեսվում էին բացառապես Չալեպի երեխաների համար, քանի որ Ղազիրի որբանոցի նոր բնակավայրը Քեսաբը, կանոնավոր երթևեկության գոտիներից հեռու էր:¹⁴⁶⁸ Ըստ այդմ 1931 թ-ին կատարվեցին ընդհանուր քաշով 2120 կգ.,¹⁴⁶⁹ իսկ 1933 թ-ին 2050 կգ.¹⁴⁷⁰ իրեղեն առաքումներ:¹⁴⁷¹ Դրանք, ի դեպ, կազմակերպության խնամառության ներքո գտնվող երեխաների կարիքների բավարարումից զատ հնարավորություն էին ընձեռում օժանդակություն ցուցաբերել նաև Չալեպի և Ղազիրի ունեզուրկ հայ ընտանիքներին զգալիորեն թեթևացնելով նրանց զրկանքները:¹⁴⁷² Ինչևէ. Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից Չալեպի որբ և անապահով երեխաների ու այրիների խնամքի ստանձնումը Կ. Յեպեին հնարավորություն ընձեռեց օգնության հասնել նաև ծանր սոցիալական պայմաններում գտնվող մյուս ճանբարաբնակներին, որոնց թվաքանակը 1928 թ-ին հասնում էր մոտ 15 000-ի:¹⁴⁷³ Մարդկանց այդ հոծ զանգ-

1466. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, էջ 31:

1468. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, էջ 11:

1467. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 22:

1469. Անդ:

1470. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1934, էջ 11:

1471. Ցավոք, 1932 թ-ին կատարված առաքումների մասին ստույգ տեղեկություններ չեն պահպանվել:

1472. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1929, „Orient im Bild“, 1930, էջ 31:

1473. «Դեռ չի կարելի ասել, թե իրավիճակը տանելի է,- նշված էր 1928 թ-ի նոյեմբերին Չալեպից ստացված տեղեկագրերից մեկում:- Փոքրիկ, հին, ժանգոտված նավթամաներով ծածկված 3500 կալե և փայտե հյուղերում բնակվում է 12000-12500 փախստական: Քամին, անձրևը և փոշին տանիքից ներս են խուժում: Մարդիկ մատնված են ցորտին և տապին: Նրանց «բնակարանները» բաղկացած են մի փոքրիկ խցից, որը միաժամանակ ծառայում է որպես խոհանոց, ճաշասենյակ և ննջարան: Շատ դեպքերում քաղնաթիվ ընտանիքներ ստիպված են միասին ապրել մի նման խցում: St'u Gaszcyk L., Die Zustände in den syrischen Flüchtlingslagern, „Orient im Bild“, 1929, էջ 7:

վածին ցուցաբերվող օգնությունը, որը սովորաբար կրում էր «Հիվանդ-ների և աղքատների խնամք» անվանումը և մինչև 1929 թ-ը տեղի էր ունենում ամերիկացի, դանիացի և շվեյցարացի բարեկամների միջոցներով, առաջին հերթին նպատակ ուներ պահպանել ընտանիքների կերակրողներին՝ այդպիսով կանխելով նոր որբերի ի հայտ գալը:¹⁴⁷⁴ Այդ առումով բնականաբար առաջնահերթ կարևորություն ուներ թերասընման և անբավարար բնակապայմանների հետևանքով մեծ տարածում գտած հիվանդությունների դեմ պայքարը, որին Յեպեն ծեռնամուխ եղավ բուժսպասարկման աշխատանքների միջոցով: Ընտանիքների կերակրողները հիվանդության դեպքում ապավինում էին Յեպեին, որը նրանց անհատույց բուժօգնություն էր տրամադրում: Ընդ որում հիվանդության հետևանքով անաշխատունակ դարձող հիվանդները բուժման ընթացքում ստանում էին համալիր խնամք՝ ապահովվելով նաև որակյալ սնունդով,¹⁴⁷⁵ և բացի այդ կանոնավոր կերպով սննդամթերք էր մատակարարվում նաև նրանց՝ այլապես սովահարության դատապարտված ընտանիքի անդամներին:¹⁴⁷⁶ Աշխատանքների ծավալի վերաբերյալ հրստակ պատկերացում տալու համար արժե նշել, որ 1927 թ-ի հունիսից մինչև 1929 թ-ի փետրվարը ընկած ժամանակահատվածում կլինիկայում կամ տնային պայմաններում բուժսպասարկում ցուցաբերվեց շուրջ 1000 հիվանդների, որոնց մեկ քառորդն իրենց ընտանիքի անդամների հետ միասին ապահովվել էին նաև սնունդով:¹⁴⁷⁷

1929-30 թվականներին այդ աշխատաճյուղին կարողացավ իր մեծ ներդրումը բերել նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն: 1929 թ-ի ընթացքում Կ. Յեպեի կողմից բուժսպասարկման ենթարկվեցին ընդհանուր թվով 868 հիվանդներ, որոնցից 167-ը գտնվում էին համալիր խնամքի ներքո:¹⁴⁷⁸ Նրանց բուժման ընդհանուր ծախսերը կազմեցին 579, 03

1474. Jeppe K., *Aus der Arbeit im armenischen Flüchtlingslager Aleppo*, անդ, էջ 44:

1475. Անդ:

1476. Անդ:

1477. Անդ: Յեպեն ծանրարում պահում էր մի հիվանդապահուհու, որն այնտեղ ապրելով՝ մշտապես հոգ էր տանում հիվանդների համար: Այդ մեծ կարևորություն ուներ՝ հնարավորություն ընձեռելով կանխել բազմաթիվ նոր հիվանդությունների առաջացումը կամ դրանք բուժել դեռ զարգացման սկզբնական փուլում: Անդ:

1478. Gaszczyk L.; Jeppe K., *Kranken- und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo 1930*, „Orient im Bild“, 1931, էջ 28: Հմմտ. Jeppe K., *Kranken- u. Armenfürsorge im armenischen Flüchtlingslager Aleppo*. 1 Januar bis 31 Dezember 1929, „Orient im Bild“, 1930, էջ 47:

թուրքական ֆունտ, որի գրեթե կեսը՝ 252 ֆունտ (4620 մարկ), հատկացվել էր Լեփսիուսի կազմակերպության կողմից:¹⁴⁷⁹ Վերջինիս աջակցությունը Յեպեին հնարավորություն ընձեռեց սպասարկման ծավալն ամբողջովին համապատասխանեցնել ճամբարի կարիքներին՝ այն կազմակերպելով ամենաարդյունավետ ժամկետներում: «Մենք հիվանդների համար միշտ պատրաստ ենք,- գրում էր նա 1929 թ.-ին.- ոչ ոք չի մերժվում և ոչ ոք կարիք չունի անտեղի սպասել»:¹⁴⁸⁰

Հաջորդ՝ 1930 թ-ին սպասարկվեցին 2187 հիվանդներ, որոնց բուժման համար ծախսվեց 882 թուրքական ֆունտ, և որոնցից համալիր խնամքի տակ էին գտնվում 406-ը:¹⁴⁸¹ Չնայած այդ տարվա տեղեկագրերում ներկայացվել են միայն աշխատանքի ընդհանուր վիճակագրական ցուցանիշները, և առանձին կազմակերպությունների, այդ թվում նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի չափաբաժնի վերաբերյալ տվյալներ չեն հաղորդվել, սակայն որոշ տեղեկություններից կարելի է կռահել, որ դրանք զգալիորեն գերազանցում էին նախորդ տարվա համամասնական ցուցանիշները: «Այս տարի,- նշված էր, օրինակ, ընկերության պարբերականի՝ 1930 թ-ի հունիսյան համարում,- այդ աշխատաճյուղին օգնելու համար մեզ դեռ միջոցներ չեն պակասել»:¹⁴⁸²

1931 թ-ից Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն այլևս չէր կարող էական մասնակցություն ցուցաբերել այդ աշխատանքներին՝ հարկադրված լինելով հասունացող համաշխարհային ճգնաժամի պայմաններում իր բոլոր ռեսուրսները նպատակաուղղել միայն իր միջոցներին ապավինած աշ-

1479. Անդ: ճամբարում առավել մեծ տարածում ունեին տուբերկուլյոզը, թրքերի բորբոսումը, աչքերի տրախոմա հիվանդությունը, դիզենտերիան, մալարիան և այլն: Անդ:

1480. Jeppe K., Aus der Arbeit im armenischen Flüchtlingslager Aleppo, „Orient im Bild“, 1929, էջ 44:

1481. Gaszczyk L.; Jeppe K., Kranken- und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo 1930, „Orient im Bild“, 1931, էջ 28:

1482. Տե՛ս Jeppe K., Kranken- u. Armenfürsorge im armenischen Flüchtlingslager Aleppo, „Orient im Bild“, 1930, էջ 47, ծան.-ը: 1930 թ-ից ռճատիզմով, հոդատապով և իշիասով տառապող հիվանդներն ուղարկվում էին Հալեպից 90 կմ հեռավորության վրա գտնվող, հանքային բուժիչ ջրերով հայտնի՝ Էլ Համամի առողջարանը, որտեղից մեծ մասամբ վերադառնում էին ամբողջովին ապաքինված: Տե՛ս Gaszczyk L., Unsere Kranken im Schwefelbad, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 19-20:

խատաճյուղերի պահպանմանը:¹⁴⁸³ Իսկ «Հիվանդների և աղքատների խնամքը», որն ուներ այլ հովանավորներ ևս, մեծ ջանքերի և որոշ սահմանափակումների գնով շարունակվեց նաև հաջորդ տարիներին:¹⁴⁸⁴

Ինչևէ, այն համագամանքը, որ նշված համապարփակ օժանդակությունների շնորհիվ հաջողվեց ճամբարականների դրությունը բավականաչափ կայունացնել, Յեպեին հնարավորություն էր ընձեռում դարձյալ ձեռնամուխ լինել նրանց տնտեսական լիարժեք անկախացման իր հիմնական ծրագրի իրագործմանը, որի օգտակարությունն արդեն գործնականում լիովին փաստարկվել էր: «Մենք մեր աշխատանքն այնքան ժամանակ չենք կարող համարել ավարտված,- նշում էր նա,- քանի դեռ հայ փախստականների մեծ մասին չենք տեղավորել հողի վրա»:¹⁴⁸⁵

Ըստ այդմ. 1928 թ-ի գարնանը նա Եփրատից այն կողմ ընկած լայնարձակ տափաստանում՝ Թել-Սամենից և Թել-Արմենից ոչ մեծ հեռավորության վրա, հիմնեց երրորդ հայկական գյուղը՝ Խարբ-Պետրոսը, որն ի տարբերություն նախորդների հիմնականում նախատեսված էր ազատագրված երեխաների բնակության համար, մասնավորապես նրանց, ովքեր չէին կարողանում ընտելանալ քաղաքային միջավայրին և միաժամանակ «ընդդիմանալ տափաստանի ձգողական ուժին»:¹⁴⁸⁶ Գյուղի հիմնման միջոցները հատկացվեցին Դր. Լեփսիոսի զԱԱ-ի կողմից, և դեռ գարնանն այնտեղ փոխադրվեցին 45 տղաներ, որոնք սկզբնական շրջանում Մ. Մելքոնյանի ղեկավարության և հսկողության ներքո ապրում և աշխատում էին մի ընդհանուր կացարանում:¹⁴⁸⁷ Ազատագրված, սակայն դեռ որոշակիորեն

1483. Stü Jeppe K., Kranken- u. Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo, 1931, „Orient im Bild“, 1932. էջ 27, ծան.-ը: Հմմտ. Jeppe K., Kranken- und Armenfürsorge im armenischen Flüchtlingslager von Aleppo im Jahre 1932, „Orient im Bild“, 1933, էջ 24, ծան.-ը:

1484. Անդ, էջ 23-24:

1485. Jeppe K., Ein Jahr Rettungsarbeit, „Der Orient“, 1926, էջ 71:

1486. Jeppe K., Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild“, 1928, էջ 3-4: Հմմտ. Gaszczyk L., Im gesegneten Lande Mesopotamien, „Orient im Bild“, 1932, էջ 26:

1487. Անդ: Գյուղում հաստատվեցին նաև մոտ երկու տասնյակ փախստական ընտանիքներ: Stü Jeppe K., Das Kolonisations-Unternehmen in Charb-Bedros, „Orient im Bild“, 1928, էջ 4:

մահմեդական միջավայրի ազդեցությունը կրող այդ երեխաների մեջ մայրենի լեզուն և պատմամշակութային արժեքների տարրական իմացությունն արմատավորելու նպատակով 1929 թ-ի սկզբին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի միջոցներով Խարբ-Պետրոս ուղարկվեց մի երիտասարդ ուսուցիչ՝ Խաչիկ Չակոբյանը, որն այնտեղ հիմնեց մի կիրակնօրյա դպրոց՝ մեծ ներդրում ունենալով գյուղի պատանի բնակիչների հայեցի դաստիարակության հարցում:¹⁴⁸⁸ Երկու տարի անց մեծացող տղաներին երկրագործության վարման ժամանակակից եղանակներին ծանոթացնելու և այդ կերպ նրանց տնտեսական անկախացումը դյուրացնելու նպատակով Կ. Յեպեն ավելի նպատակահարմար համարեց ուսուցչին հատկացված աշխատավարձով գյուղում մի գյուղատնտեսի պահել, ուստի նրա առաջարկով 1931 թ-ի սկզբին Խարբ-Պետրոս մեկնեց մասնագետ-գյուղատնտես Լուիզ Գարզանին,¹⁴⁸⁹ որն այնուհետև շուրջ երեք տարի իր գիտելիքներն ու փորձը նվիրաբերեց այդ և հարևան հայկական գյուղերի տնտեսական բարգավաճմանը:¹⁴⁹⁰ Բացի այդ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն զուգահեռաբար կարողացավ միջոցներ հատկացնել նաև բժշկի աշխատավարձի համար: Այդ պարտականությունը հանձնարարվեց դր. Զաքարիա Կիլեդյանին, որը 1929 թ-ի դեկտեմբերից ձեռնամուխ եղավ Խարբ-Պետրոսի և տարածքի մյուս՝ նաև մահմեդական գյուղերի բնակչության բուժսպասարկման աշխատանքներին:¹⁴⁹¹

Նշված միջոցառումների շնորհիվ գյուղի առօրյան արագորեն մտավ իր բնականոն հունը: Նրա երիտասարդ բնակիչներն, անցնե-

1488. Gasczyk L., Unser neuer Lehrer in Charb-Bedros, Chatschik Hagopian aus Aleppo, geb. 1898, „Orient im Bild“, 1929, էջ 80: Մի քահանայի կանոնավորացրի միջոցով ապահովվեց նաև գյուղի բնակիչների հոգևոր-եկեղեցական կարիքների քավարարումը: Տե՛ս Jeppe K., An die lieben Freunde, die bisher uns den Lehrer für unsere Dörfer unterhalten haben, „Orient im Bild“, 1932, էջ 3: 1489. Անդ: Չմնտ. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, անդ, էջ 11:

1490. Լ. Գարզանին իր հանձնառությունն ավարտեց ու վերադարձավ միայն 1934 թ-ին: Տե՛ս Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1934, էջ 11:

1491. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21:

լով կրթության և դաստիարակության նախապատրաստական փուլը, նմանապես «փրկագնված» աղջիկներից ընտրեցին իրենց կյանքի ուղեկիցներին և ստանալով հողամաս, տուն, անասուններ ու սերմացու՝ կարճ ժամանակում դարձան միանգամայն ինքնուրույն:¹⁴⁹² Նոր բնակավայրը 1931 թ-ին արդեն դարձել էր մի պատկառելի գյուղ, որի գերազանցապես ազատագրված տղաներից և աղջիկներից բաղկացած բնակիչների թիվը հասնում էր շուրջ 200-ի:¹⁴⁹³

Քանի որ, սակայն, ինչպես Թել-Սամեն և Թել-Արմեն գյուղերի, այնպես էլ Խարբ-Պետրոսի բնակիչները հողի սեփականատերեր չէին, իսկ տասնամյակի վերջին Սիրիայի ներքաղաքական իրադրությունը բավական նպաստավոր էր դա իրագործելու համար, Կ. Յեպեն և Մ. Մելքոնյանը վճռեցին հիմնել մի նոր գյուղ ևս, որի բնակեցումը պետք է կատարվեր հողի սեփականատիրության սկզբունքով, և որն այդպիսով պետք է հավակներ կենտրոնատեղի և հաստատուն հանգրվան դառնալ սիրիական գյուղաշխարհում սփռված բոլոր հայերի համար:¹⁴⁹⁴ Առանց հապաղելու նրանք անցան գործի, և 1930 թ-ի գարնանը Թել Աբիաթից Հալեպ տանող ճանապարհի վրա, Խարբ Պետրոսից հարավ ընկած մի ընդարձակ վայրում հիմնվեց թվով չորրորդ Թիմեհ գյուղը:¹⁴⁹⁵ որի բնակեցման սկզբնական փուլում պահանջվող ծախսերի մի զգալի մասը մոտ մեկ քառորդը, հատկացվեց Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից:¹⁴⁹⁶

Նշված գյուղերի միջոցով, այսպիսով, Կ. Յեպեն հանգրվան և հավաքատեղի ստեղծեց ոչ միայն «տափաստանի կարոտով» ապրող ազա-

1492. Gaszczyk L., Im gesegneten Lande Mesopotamien, „Orient im Bild“, 1932, էջ 28:

1493. Hetzel G., Zu Misak nach Tineh, „Orient im Bild“, 1931, էջ 59:

1494. Անդ: 1920-ական թթ. վերջին, հետևելով Յեպեի օրինակին, Հալեպի, Բեյրութի և Ալեքսանդրետի ճամբարներում գտնվող հայ փախստականների գյուղաբնակեցման ծրագրեր էր իրականացնում մաև Ազգերի լիգայի կողմից հովանավորվող Միջազգային աշխատանքային ծառայությունը, որի կողմից հիմնված գյուղերի բնակիչներն ունեին հողի սեփականատիրության իրավունք: Տե՛ս Schütz P.; Künzler J., Reise nach dem inneren Vorderasien, „Orient im Bild“, 1928, էջ 58: Հմտ. Künzler J., Reise nach Innerasien von Dr. Schütz und Jakob Künzler, անդ, էջ 45: Հմտ. Künzler J., Die Siedlungen für die Armenier, „Orient im Bild“, 1930, էջ 22:

1495. Hetzel G., Zu Misak nach Tineh, „Orient im Bild“, 1931, էջ 59:

1496. Տե՛ս Jeppe K., Die Dorfarbeit, trotz Hungers und Dürre gerettet, „Orient im Bild“, 1933, էջ 34, ծան.-ը: Այդ գումարը կազմում էր 282,67 ֆունտ ստեռլինգ: Անդ:

տագրված հայորդիների, այլևս գյուղատնտեսությամբ զբաղվելու ձեռնարկում ցուցաբերող ճանապարհանակների և առհասարակ սիրիական գյուղաշխարհում դեգերող այլ անօթևան հայերի համար: Ղա, ինչպես արդեն լուսաբանվել է, հնարավոր դարձավ գլխավորապես Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի նյութական աջակցության շնորհիվ, որն այդ ձեռնարկումները կարևորում էր ոչ միայն փախստականների սոցիալական պայմանների բարելավման, այլև առհասարակ հայ ժողովրդի խախտված «մասնագիտական հավասարակշռումը» վերականգնելու առումով:¹⁴⁹⁷

4.3. Որբախնամ աշխատանքները Ղազիրում

Որբախալի հաջողություններ արձանագրվեցին նաև նաև Ղազիրում, որտեղ, ինչպես արդեն տեղեկացվել է, Լեփսիուսի ընկերությունը դեռ 1924 թ-ին վճռել էր ստանձնել ամերիկյան NER կազմակերպության որբանոցում գտնվող 450 երեխաների խնամքը կամ, ավելի ստույգ, այդ խնամքի շուրջ կեսը՝ հագուստի և սննդի համար կատարվող ծախսերը: Եթե 1925 թ-ի մարտի դրությամբ ընկերության հայթայթած միջոցները բավարարում էին միայն 50 երեխայի կարիքները բավարարելու համար,¹⁴⁹⁸ ապա մայիսին այդ թիվը կրկնապատկվեց,¹⁴⁹⁹ հուլիսին հովանավորներով ապահովված էին 160,¹⁵⁰⁰ իսկ դեկտեմբերի 31-ի դրությամբ 320 որբ երեխաներ:¹⁵⁰¹ Կազմակեր-

1497. «Պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը քմնի դուրս եկավ մասնագիտական հավասարակշռությունից,- գրում էր Պ. Շյուբցը:- Գյուղական ազգաբնակչությունը գրեթե վերացավ, և մնացել են արիեստագործներն ու առևտրականները: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է, որ հայ ժողովրդի երեխաները դաստիարակվեն գյուղում դարձյալ հողի հետ կապվելու համար»: St'u Künzler J., *Reise nach dem inneren Vorderasien*, „Orient im Bild“, 1929, էջ 5:

1498. St'u Nochmals unsere Kinder, „Der Orient“, 1925, էջ 32:

1499. Schäfer R., *Mitteilungen*, անդ, էջ 47:

1500. St'u *Mitteilungen*, անդ, էջ 107:

1501. Schäfer R., *Zur Jahresrechnung*, „Der Orient“, 1926, էջ 95:

պուրյունն այդպիսով հնարավորություն ստացավ 1926 թ-ին ամբողջությամբ իր ուսերին վերցնել Ղազիրի որբանոցի երեխաների սննդի և հազուստի ծախսերը, որոնք տարեկան կազմում էին մոտ 240 մարկ:

Հաստատությունը, որի բնակիչները բացառապես աղջիկներ էին,¹⁵⁰² իրենից ներկայացնում էր մի ամբողջ համալիր՝ բաղկացած 17 շենքերից, որոնցից մեկը ծառայում էր որպես երեխաների բնակարան և ննջարան, մեկը ճաշասենյակ, մեկը դպրոց,¹⁵⁰³ երկուսը հիվանդանոց (խրոնիկական և սովորական հիվանդների համար), մեկը հատկացված էր հիվանդապահուհիների բնակության համար, իսկ մնացած շենքերում տեղավորված էին որբանոցի արդյունաբերական ձեռնարկությունները և պահեստները:¹⁵⁰⁴

Կյունցլերի ղեկավարության ներքո հաստատության սաների առօրյան կազմակերպվում էր խաղերի, ուսման¹⁵⁰⁵ և աշխատանքի զուգամիասնությամբ:¹⁵⁰⁶ Երեխաները ստանում էին հայեցի դաստիարակություն: Քանի որ նրանց մեծ մասը սերում էր լուսավորչական ընտանիքներից, որբանոցում եկեղեցական տոները նշվում էին ըստ լուսավորչական տոնացույցի:¹⁵⁰⁷ Ինչ վերաբերում էր եկեղեցական արարողություններին, ապա լուսավորչական երեխաների համար յուրաքանչյուր երրորդ կիրակի մի լուսավորչական քահանայի, իսկ բո-

1502. Künzler J., Die Waisenarbeit auf dem Libanon, „Der Orient“, 1924, էջ 77-78: 1924 թ-ի ապրիլի 1-ին NER-ը Ղազիր տեղափոխեց մեկ մինչ այդ Ղազիրից ոչ շատ հեռու գտնվող Մամուլթայն գյուղում պահվող՝ ընդհանուր թվով 105 հայկույր որբերին և որբուհիներին: Կույրերի որբանոցի հետագա խնամքը 1926 թ-ի փետրվարից առժամանակ մասնակիորեն, իսկ հետագայում, NER-ի գործունեության դադարեցումից հետո, ամբողջությամբ ստանձնեցին շվեյցարացի բարեկամները: Տե՛ս Meyer K., Armenien..., էջ 147-148:

1503. Դպրոցն ուներ 8 դասասենյակ և ընդհանուր թվով 9 ուսուցչուհիներ: Տե՛ս Über das Weihnachtsfest in Ghasir, „Orient im Bild“, 1927, էջ 7:

1504. Տե՛ս Aus dem Waisenhaus in Ghasir, անդ, էջ 39:

1505. Դպրոցում դասավանդման լեզուն հայերենն էր: Բացի հայոց լեզվից այնտեղ ուսուցանվում էր թվաբանություն, աշխարհագրություն, բնագիտություն, մարմնամարզություն, երգեցողություն, աստվածաշնչյան պատմություն, արաբերեն, անգլերեն և 1926 թ-ից մեկ ֆրանսերեն: Տե՛ս Über das Weihnachtsfest in Ghasir, „Orient im Bild“, 1927, էջ 7:

1506. Տե՛ս Aus dem Waisenhaus in Ghasir, անդ, էջ 44: Հմտ. Künzler J., Aus Ghasir, անդ, էջ 66:

1507. Künzler J., Das Weihnachtsfest in Ghasir 1926, „Der Orient“, 1927, էջ 20:

դրքական երեխաների համար նույն պարբերականությամբ մի բողոքական քահանայի կողմից կատարվում էր պատարագ:¹⁵⁰⁸ Ընդ որում երկու դավանանքներին պատկանող երեխաների միջև հոգեբանական անջրպետների առաջացումը կանխելու նպատակով նրանց հնարավորություն էր տրվել ըստ ցանկության մասնակցել թե լուսավորչական և թե եկեղեցական արարողություններին:¹⁵⁰⁹

Ինչ վերաբերում էր երեխաների արհեստագործական հմտությունների զարգացմանը, ապա NER-ը այդ նպատակով հաստատությանը կից ստեղծել էր կարուձևի ու մանածագործության արհեստանոցներ:¹⁵¹⁰ 1922 թ-ի աշնանը ստանձնելով որբանոցի ղեկավարությունը՝ Կյունցլերն այնտեղ NER-ի միջոցներով հիմնեց նաև մի զորագործական ֆաբրիկա, որը սկսեց գործել 1923 թ-ի մայիսից՝¹⁵¹¹ սկզբից ևեթ աչքի ընկնելով բարձրորակ արտադրանքով:¹⁵¹²

Իր վաղեմի փորձառությամբ գիտակցելով արհեստագործական այդ ճյուղի զարգացման օգտակարությունը՝ Կյունցլերը այնուհետև ձգտում էր ֆաբրիկան ընդարձակել այն դարձնելով որբանոցի խոշորագույն արտադրական ձեռնարկությունը: Դրանում բնականաբար շահագրգռված էին նաև որբանոցի հովանավորները, ուստի պատահական չէ, որ NER-ի և Դր. Լեվսիուսի ՊԱԱ-ի նյութական աջակցությամբ ձեռնարկությունը 1925 թ-ից սկսեց շեշտակի ընդլայնվել: Եթե 1924 թ-ի վերջին այնտեղ գործում էին 60 մանածագործական հաստոցներ,¹⁵¹³ ապա երկու տարի անց՝ 1926 թ-ին, այդ թիվը հասել էր 150-ի համապատասխանաբար աշխատանքով ապահովելով 150 ավագ և նրանց մոտ աշակերտող շուրջ 300 կուտսեր որբուհիների:¹⁵¹⁴ Մեծ արագությամբ էին աճում

1508. Künzler J., Noch etwas aus unserem Waisenhaus in Ghasir, „Der Orient“, 1926, էջ 78:

1509. Անդ:

1510. Künzler J., Die Waisearbeit auf dem Libanon, „Der Orient“, 1924, էջ 80:

1511. Անդ:

1512. Ֆաբրիկայի ղեկավարումը հանձնարարվեց Ուռհայի որբանոցի նախկին սան Զովհաննես Տաշչյանին, որը երկար ժամանակ աշխատել էր նաև Ուռհայի զորագործարանում և ուներ մեծ փորձառություն ու կազմակերպական ծիրք: Որպես կանոն գորգերը պատրաստվում էին ըստ նրա գծագրած նմուշների: Տե՛ս Waisen- und Industriearbeit in Ghasir, „Der Orient“, 1926, էջ 83-84:

1513. Künzler J., Die Waisearbeit auf dem Libanon, „Der Orient“, 1924, էջ 80:

1514. Տե՛ս Waisen- und Industriearbeit in Ghasir, „Der Orient“, 1926, էջ 83-84:

ճան արտադրանքի ծավալային ցուցանիշները: Եթե 1923-24 թվականներին ֆաբրիկան թողարկեց ընդամենը 50 գորգ, ապա 1925 թ-ին արտադրված գորգերի ընդհանուր քանակը հասավ 250-ի, 1926 թ-ին 1000-ի,¹⁵¹⁵ իսկ 1927 թ-ին այն հատեց 2000-ի սահմանագիծը:¹⁵¹⁶ Գորգերը մեծ մասամբ NER-ի միջոցներով ուղարկվում էին Ամերիկա, Անգլիա, Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա¹⁵¹⁷ և, իհարկե, նաև Գերմանիա, որտեղ դրանց իրացմամբ զբաղվում էր Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն: Ֆաբրիկայի հիմնումը և ընդլայնումը որբանոցի համար ունեցավ համակողմանիորեն կարևոր նշանակություն, մասնավորապես եթե նկատի առնենք, որ այնտեղ աշխատատեղերի զբաղեցումը ժամանակային սահմանափակումներ չուներ: Քանի որ Կյունցլերը և իր հովանավորները չափահաս դարձող և հաստատությունից դուրս եկող որբուհիների հետագա ճակատագրի հարցում շարունակում էին իրենց պատասխանատու համարել, ֆաբրիկայում նրանց աշխատատեղերը պահպանվում էին այնքան ժամանակ, քանի դեռ դրա անհրաժեշտությունը կար: Կյունցլերը վերոնշյալ 17 տներից երկուսը հատկացրել էր նրանց հետագա բնակության համար,¹⁵¹⁸ և տասնվեցամյա՝ արդեն չափահաս համարվող աղջիկները որբանոցի հաշվեցուցակներից դուրս գալով, սակայն շարունակելով բնակվել և աշխատել հաստատության տիրություն՝ փաստացիորեն մի կողմից կարողանում էին սեփական աշխատանքով հոգալ իրենց ապրուստը, իսկ մյուս կողմից շարունակում էին մնալ տնօրինության հսկողության ներքո այնքան ժամանակ, քանի դեռ ամուսնության կամ այլ դրդապատճառներով սեփական կամքով չէին հեռանում:¹⁵¹⁹ Այդ կերպ որբանոցի տնօրինությունը անուղղակիորեն դյուրացնում էր նաև նրանց ամուսնությունը, քանի որ որոշակի խնայողություն ունեցող աղջիկները, ինչպես ֆաբրիկայի բանվորուհիներն էին, գործազուրկ և չքավոր երիտասարդների համար ցանկալի հարսնացուներ էին համար-

1515. Künzler J., *Mai-Bericht*, անդ, էջ 102:

1516. Künzler J., *Aus der Arbeit. Dezember-Bericht aus Ghasir, 1927*, „Orient im Bild“, 1928, էջ 18: Հմնտ. Künzler J., *Reise nach Innerasien von Dr. Schütz und Jakob Künzler*, անդ, էջ 46:

1517. Տե՛ս *Waisen- und Industriearbeit in Ghasir*, „Der Orient“, 1926, էջ 84:

1518. Künzler J., *Aus dem Waisenhaus in Ghasir*, „Orient im Bild“, 1927, էջ 39:

1519. Künzler J., *Verlobung und Verheiratung der größeren Waisenkinder*, „Der Orient“, 1925, էջ 120:

վում:¹⁵²⁰ Եթե նկատի առնենք, որ Ղազիրի որբուհիներից շատերն արքայի տարիներին առևանգվել էին թուրքերի կամ արաբների կողմից և իրենց դեմքին կրում էին «ստրուկ քրիստոնյաների» ինքնությունը փաստող դաջվածքներ,¹⁵²¹ իսկ հայ երիտասարդները սովորաբար խուսափում էին ամուսնանալ այդպիսիների հետ,¹⁵²² ապա այդ նյութական «խթանիչի» նշանակությունը թերևս պետք է եապես կարևորվեր:

Ինչևէ, 1925 թ-ի աշնանն, ինչպես տեղեկացնում էր Կյունցլերը, արդեն ամուսնացել և հաստատությունից հեռացել էին 20 որբուհիներ, որոնց աշխատատեղերը հատկացվել էին որբանոցային տարիքից դուրս եկող նոր աղջիկների:¹⁵²³ 1926 թ-ից, սակայն, երբ Սիրիայի և Լիբանանի հայերը սկսեցին զանգվածային կերպով արտագաղթել դեպի Ֆրանսիա և Ամերիկա,¹⁵²⁴ և տեղաբնակ երիտասարդների թիվը կտրուկ նվազեց, դժվարացավ նաև որբանոցի սաների ամուսնության հանգամանքը:¹⁵²⁵ Իրավիճակն այնուհանդերձ փակուղային չէր, քանի որ նրանց օգնության շտապեց որբանոցում ձեռք բերված մասնագիտությունը. 1926 թ-ին երիտասարդ գորգագործուհի-

1520. Անդ, էջ 120: «Ինչպե՞ս ենք մենք մեր դուստրերի համար ամուսիններ գտնում,- գրում էր Կյունցլերն իր տեղեկագրերից մեկում:- ... Մենք ուշադրություն ենք դարձնում, որ մեր աղջիկներն ըստ հնարավորին լավ դաստիարակություն ստանան: Նաև նրանց, ովքեր արդեն սեփական ոտքերի վրա են կանգնած, սովորեցնում ենք խնայել, քանի որ եթե մի աղջիկ մի քանի հարյուր ֆրանկ խնայողություն ունի, ապա դա (Արևելքում նույնպես) երիտասարդների համար ձգողական ուժ ունի»: Անդ, էջ 119-120:

1521. Որբերի մեծ մասը կարողացել էր մահմեդականների տներից հեռանալ զինադադարից անմիջապես հետո, բրիտանական ստորաբաժանումների կողմից իրագործվող՝ առևանգված քրիստոնյաների ազատագրման գործողությունների ընթացքում: Տե՛ս Künzler J., An die Pflegeeltern der Ghasir-Waisen, „Der Orient“, 1926, էջ 41-42:

1522. Künzler J., Verlobung und Verheiratung der größeren Waisenkinder, „Der Orient“, 1925, էջ 119:

1523. Անդ, էջ 120:

1524. Ֆրանսիան միակ եվրոպական երկիրն էր, որը հայերին ընդունում և աշխատանքի հնարավորություններ էր ընձեռում: Տե՛ս Künzler J., Zum Jahresanfang in Ghasir, „Der Orient“, 1926, էջ 78:

1525. 1926 թ-ին տեղացի երիտասարդների հետ կարողացան ընտանիք կազմել միայն 6 աղջիկներ, իսկ 1927 թ-ին ընդամենը մեկը: Տե՛ս Künzler J., Ghasir-Waisenhaus-Monatsbericht für Dezember, „Der Orient“, 1927, էջ 25: Դմտ. Künzler J., Aus der Arbeit. Dezember-Bericht aus Ghasir, 1927, „Orient im Bild“, 1928, էջ 18:

ների համար ի հայտ եկավ ֆրանսիական մետաքսագործական ֆաբրիկաներում աշխատելու հնարավորություն, որի հիման վրա չափահաս աղջիկների ընդհանուր թվով 30 հոգուց բաղկացած առաջին երկու խմբերը տարվա երկրորդ կեսին մեկնեցին այնտեղ:¹⁵²⁶ Ֆրանսիայում ձեռք բերելով բարի համարում՝ նրանք մեկնման նախադրյալներ ստեղծեցին նաև մյուսների համար: Շայր առավ մի գործընթաց, որի՝ չորս տարիների արդյունքում, 1930 թ-ի հունվարի տվյալներով 120 որբուհիներ գտնվում էին Ֆրանսիայում, իսկ ևս 80-ը՝ Ամերիկայում:¹⁵²⁷ Առաջնորդվելով այն նկատառումով, որ Լիբանանի և Սիրիայի հյուծված հայկական համայնքներում աղջիկների ընտանիք կազմելու հավանականությունը փոքր էր՝ տնօրինությունը նրանց մեկնումը ոչ միայն չէր խոչընդոտում, այլև ընդհակառակը, ձգտում էր նպաստել դրան: «Մեր որբուհիներից 50-ը, բոլորն էլ 13-15 տարեկան, պետք է մեկնեն Մարսել,- գրում էր Կյունցլերը 1928 թ-ին:- Այնտեղ կա մի հայկական որբանոց, որը լավ դպրոցներ ունի, և որ ամենակարևորն է, ունի լավ կապեր, այնպես որ մեր բոլոր աղջիկներին կամուսնացնի երիտասարդ հայերի հետ: Չէ՞ որ նրանցից հազարավորներն են վերջին տարիներին մեկնել Ֆրանսիա և այժմ սպասում են իրենց ազգակցուհիներին նրանց հետ ընտանիք կազմելու համար»:¹⁵²⁸ Մեկնողներին լեզվական արգելքներից զերծ պահելու և նոր միջավայրին նրանց ընտելացումը դյուրացնելու նպատակով որբանոցի դպրոցում ընդլայնվեց նաև ֆրանսերեն և անգլերեն լեզուների ուսուցումը, այնպես որ դպրոցն ավարտելիս երեխաները հիմնականում տիրապետում էին այդ լեզուներին:¹⁵²⁹

Ինչպես կարճ ժամանակ անց պարզվեց, Կյունցլերի նկատառումները միանգամայն ճիշտ էին, և արտերկիր մեկնող աղջիկները որպես կանոն 1-2 տարվա ընթացքում ընտանիք էին կազմում իրենց ե-

1526. Künzler J., Mai-Bericht, „Der Orient“, 1926, էջ 101:

1527. Künzler E., Unsere früheren Waisenkinder, „Orient im Bild“, 1930, էջ 14:

1528. St'u Aus der Arbeit. Februar-Bericht von Ghasir, „Orient im Bild“, 1928, էջ 26:

1529. St'u Über das Weihnachtsfest in Ghasir, „Orient im Bild“, 1927, էջ 6:

Հմմտ. Künzler J., September-Bericht 1926 vom Ghasir-Waisenhaus, „Der Orient“, 1927, էջ 9-10:

րիտասարդ հայրենակիցների հետ:¹⁵³⁰

Որբանոցի սաների մեծ հոսունությունը հնարավորություն էր ըն-
ծեռում պարբերաբար կատարել նոր համալրումներ: Հեռացած աղ-
ջիկների փոխարեն 1926 թ-ի ամռանը որբանոց ընդունվեցին լու-
ծարման դատապարտված Սիդոնի ամերիկյան որբանոցի բոլոր
ընդհանուր թվով 155 երեխաները,¹⁵³¹ որոնց ճակատագիրն այլա-
պես անորոշ էր լինելու: Առժամանակ անց նրանց միացան ևս 50-ը
Երուսաղեմի որբանոցից:¹⁵³² Բացի այդ հաստատություն էին ըն-
դունվում նաև որբ կամ միածնող մանկահաս երեխաներ, որոնք սե-
րում էին Լիբանանի ծայրահեղ չքավոր հայ ընտանիքներից:¹⁵³³ Թե
երեխաների թվաքանակը տարիների ընթացքում ինչպես էր հաջոր-
դափոխվում, կարող են վկայել հետևյալ տվյալները. եթե 1924 և
1925 թվականներին նրանց ընդհանուր թիվը հասնում էր 450-ի (ո-
րոնք բոլորն էլ անչափահաս էին), ապա 1926 թ-ի սկզբին այնտեղ
կային 329 անչափահաս և 155 չափահաս աղջիկներ, որոնք որբանո-
ցի հաշվեցուցակներից դուրս էին գրվել, սակայն շարունակում էին
ապրել և աշխատել հաստատությունում:¹⁵³⁴ Այդ հարաբերակցությունը

1530. St'u Aus der Arbeit. Dezember-Bericht aus Ghasir, 1927, „Orient im Bild“, 1928, էջ 18: Կյունցլերը ուշագրավ մտահղացումներ էր հանդես բերում փորձելով ֆարրիկայի արտադրանքի միջոցով վարել նաև որբախնամ աշխատանքների պրո-
պագանդա: Օրինակ, 1926 թ-ին նա մի մեծ հայկական գորգ ուղարկեց ԱՄՆ-ի նա-
խագահ Կոլիդգեին, որը վերջինիս կողմից քերմ ընդունելության արժանացավ: St'u
Aus dem Orient, „Der Orient“, 1926, էջ 94: Հմմտ. Künzler J., Ghasir-Waisenhaus-
Monatsbericht für Dezember, „Der Orient“, 1927, էջ 25: 1928 թ-ին մեկ այլ գորգ ու-
ղարկվեց ԱՄՆ-ի այն քաղաքին, որը Ոսկե օրենքի շրջանակներում ամենամեծ հան-
գանակությունն էր կատարել (Քաղաքի անունը չի հիշատակվում): St'u Künzler J.,
Januar-Bericht von Ghasir, „Orient im Bild“, 1928, էջ 23:

1531. Künzler J., Noch etwas aus unserem Waisenhaus in Ghasir, „Der
Orient“, 1926, էջ 79: Հմմտ. Künzler J., Juli-Bericht von Ghasir, անդ, էջ 167:

1532. Künzler J., Julibericht vom Ghasir-Waisenhaus, անդ, էջ 168:

1533. Künzler J., Aus Ghasir, „Orient im Bild“, 1927, էջ 66: Հմմտ. Künzler J.,
Dezember-Bericht aus Ghasir, 1927, „Orient im Bild“, 1928, էջ 18: Նրանց
խնամքի ծախսերն ամբողջությամբ ստաժնում էր Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն, քանի
որ, ինչպես շուտով կ'ուսաբանվի, NER-ը իր որբանոցներում 1927 թ-ից այլևս
նոր երեխաների չէր ընդունում:

1534. Künzler J., Ghasir-Waisenhaus-Monatsbericht für Dezember, „Der Ori-
ent“, 1927, էջ 28:

համապատասխանաբար 1926 թ-ի հուլիսին կազմում էր 456/124,¹⁵³⁵ հոկտեմբերին 419/130,¹⁵³⁶ 1927 թ-ի սկզբին՝ 363/130,¹⁵³⁷ իսկ հոկտեմբերին՝ 216/116:¹⁵³⁸ 1927 թ-ի վերջին որբանոցային խնամքի տակ էին գտնվում ընդհանուր թվով դեռ 140 երեխաներ:¹⁵³⁹

Հաստատությունն, այսպիսով, իր սաների՝ չափահաս դառնալուց հետո ևս ծնողական հոգատարությամբ շարունակում էր զբաղվել նրանց ճակատագրով և հրաժեշտ էր տալիս միայն նրանց ինքնուրույն ապագան նախապատրաստելուց հետո: Թե այդ որբան հետևողականորեն էր կատարվում, կարող է վկայել այն փաստը, որ 1925-28 թվականների ընթացքում հաստատությունից ամբողջովին բաժանված՝ ամուսնացած կամ ինքնուրույն վաստակով ապրող որբուհիների ընդհանուր թվաքանակը հատում էր 1000-ի սահմանագիծը:¹⁵⁴⁰ Այդ ամենը հնարավոր դարձավ գլխավորապես գորգի ֆաբրիկայի շնորհիվ, որը, չնայած հիմնվել էր ամերիկացիների միջոցներով և պատկանում էր նրանց, այնուամենայնիվ իր գոյությամբ և հաջողություններով պարտական էր Ուռհայի՝ իր «նախահորը»: Կյունցլերն այն հիմնելիս առաջնորդվում էր Ուռհայի՝ իր փորձառության թելադրանքով:¹⁵⁴¹ Ուստի թերևս միանգամայն իրավացի էր դր. Շյուլթը՝ նշելով, որ «չնայած ֆաբրիկան պատկանում է ամերիկացիներին, սակայն մեր ընկերությունն իրավունք ունի իրեն համարել նրա տեխնիկական և հոգևոր հեղինակը»:¹⁵⁴²

Ամերիկյան կազմակերպության և Լեվիսիուսի ընկերության համա-

1535. Künzler J., Julibericht vom Ghasir-Waisenhaus, „Der Orient“, 1926, էջ 167:

1536. Künzler J., Oktober-Bericht 1926 vom Waisenhaus, „Der Orient“, 1927, էջ 21:

1537. Künzler J., Ghasir-Waisenhaus-Monatsbericht für Dezember, անդ, էջ 26:

1538. Künzler J., Oktober- und Novemberbericht aus Ghasir, „Orient im Bild“, 1928, էջ 10:

1539. Schäfer R., Geschichte..., էջ 123: Հմնտ. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1928, էջ 18: Ֆաբրիկայի աշխատակցուհիների թվաքանակի վերաբերյալ այլևս տեղեկություններ չեն հաղորդվում:

1540. Schütz P., Dr. Schütz in Ghasir, „Orient im Bild“, 1928, էջ 35:

1541. NER-ին պատկանող մյուս որբանոցներից ոչ մեկում գորգագործական ձեռնարկություն չկար: Գորգագործությունը միաժամանակ նորույթ էր նաև Լիբանանում, և այդ պատճառով Կյունցլերը 1928 թ-ի մայիսի 30-ին Լիբանանի կառավարության կողմից պարզաատրվեց պատվո շքանշանով: Տե՛ս անդ, էջ 51:

1542. Անդ:

գործակցությունն, այնուամենայնիվ, երկարատև լինել չէր կարող: NER-ը, որի տասնամյա վիթխարածավալ փրկարար գործունեությունը վճռորոշ դեր ունեցավ աշխարհասփյուռ՝ ավելի քան 100 000 հայ որբերի և արևելյան Հայաստանում կուտակված՝ շուրջ 500 000 փախստականների փրկության հարցում, 1927 թ-ին մոտենում էր իր պատմական առաքելության վախճանին:¹⁵⁴³ Սպառնելով իր նյութական ռեսուրսները՝ կազմակերպությունը 1927 թ-ից իր որբանոցներում ոչ միայն նոր երեխաների չէր ընդունում, այլև ձգտում էր մնացած որբերին ևս հնարավորինս շուտ ինքնուրույն դարձնելով՝ դրանք ամբողջությամբ լուծարել:¹⁵⁴⁴ Այդ բնականաբար չէր համատեղվում Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի ծրագրերին, որը նպատակ ուներ շարունակել իր որբախնամ գործունեությունը՝ դեռ «հուսահատ դրության մեջ» գտնվող հայկական ճամբարների որբ կամ միածնող երեխաներին «հավաստի կործանումից» փրկելու համար:¹⁵⁴⁵ Ուստի ճանապարհը մեկն էր՝ NER-ից բաժանվել և միայնակ ստանձնելով որբանոցի ծախսերն ու պատասխանատվությունը՝ սեփական ուժերով շարունակել աշխատանքը: 1928 թ-ին այդ տեխնիկապես իրագործելի էր, քանի որ Ֆրանսիական մանդատային տարածքում գերմանական կազմակերպությունների գործունեության համար նախկինում առկա արգելքները չկային, որոնց պատճառով ընկերությունը ժամանակին հարկադրված էր եղել իր գործունեությունը վերսկսել NER-ի կառույցում, և բացի այդ անկախանալով՝ այն ի վիճակի կլիներ «նյութական զրկանքների մեղմացումից» գատ հետամուտ լինել նաև մի երկրորդ կարևոր առաջադրանքի կատարմանը, որը NER-ի հետ համագործակցության և որբերի շարունակական հոսունության պայմաններում հարկադրաբար անտեսվում էր... «հետևողական դաստիարակությանը և հոգևոր խնամքին»:¹⁵⁴⁶ «Մենք՝ գերմանացիներս, հոգ ենք տանում մասնավորապես փոքրիկ երեխաների համար,- նշում էր այդ առթիվ դր. Շյուքը բարեկամներին ուղղված իր տեղեկագրերից

1543. Hetzel G., Die neuen Neun, անդ, էջ 30:

1544. Անդ: Հմմտ. Schäfer R., Geschichte..., էջ 123:

1545. Schütz P., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1927, „Orient im Bild“, 1928, էջ 18:

1546. Անդ:

մեկում,- որոնք ծնվում են Բեյրութի մեծ ճամբարի ճահճում և Հալեպում, և որոնց հայրերը կամ մայրերը կամ շատ ղեպքերում երկուսն էլ ճամբարի զրկանքներին զոհ են դարձել: Մենք մեր հայացքն ուղղել ենք մասնավորապես փոքրիկ տղաներին: Տարօրինակ ձևով այժմ ճամբարներում մեծ մասամբ տղաներ են ծնվում... Մենք հույս ունենք, որ կկարողանանք նրանց երկար տարիներ մեր դաստիարակության մեջ պահել՝ ֆիզիկապես և բարոյապես ծանր ցնցում ստացած ու արմատախիլ արված ժողովրդին դարձյալ տղամարդիկ տալու համար, որոնք իրենց մանկությունը և հասունության առաջին վճռորոշ տարիները քրիստոնյա տան զրկում և գերմանական կարգապահության մեջ են անցկացրել»:¹⁵⁴⁷

Ելնելով նշված նկատառումներից՝ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն NER-ի հետ կնքեց մի համաձայնագիր, որով որբանոցը 1928 թ-ի սեպտեմբերի 1-ից ամբողջովին փոխանցվում էր իր պատասխանատվության ներքո, և նույն օրը ևեթ այն անվանակոչելով դր. Լեփսիուսի անունով ստանձնեց նրա համալիր հովանավորությունը:¹⁵⁴⁸ Կյունցլերն այնուհետև նախընտրելով մտնել շվեյցարական կոմիտեի ծառայության մեջ՝ մեկնեց Բեյրութ, որտեղ նրան հանձնարարվեց կառուցել բնակարաններ Լիբանանի հայկական ճամբարների՝ առավել ծանր վիճակում գտնվող հայ ընտանիքների համար,¹⁵⁴⁹ իսկ հաստատության ղեկավարումը սկզբնապես հանձնարարվեց նրա քսանամյա դստերը՝ օր. Մարիա Կյունցլեբրին, որը բավարար չափով տիրապետում էր հայերենին:¹⁵⁵⁰

Նոր հանձնառությունն իր հետ բերում էր նոր հիմնախնդիրներ. եթե նախկինում Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն հոգում էր միայն որբերի սննդի և հագուստի ծախսերը, ապա որբանոցի անկախացմամբ դրանք կրկնապատկվում էին՝ յուրաքանչյուր որբի համար տարեկան կազ-

1547. St'u Schütz P., Dr. Schütz in Ghasir, անդ, էջ 35:

1548. Schütz P., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1927, անդ, էջ 18: Գնմտ. Künzler J., Ein Gedächtnis-Waisenhaus, անդ, էջ 65:

1549. St'u Mitteilungen, „Orient im Bild“, 1934, էջ 44: Կյունցլեր ամուսիններն այնուհետև մեծ և տևական ներդրում ունեցան Լիբանանի հայկական առողջարանի, հայ փախստականների բնակեցման, բնակչինարարության, ինչպես և ասորիների համար կազմակերպվող օգնության աշխատանքներում: Յ. Կյունցլերը վախճանվել է 1949 թ-ի հունվարի 15-ին Դազիրում, իսկ նրա կինը՝ Էլիզաբեթ Կյունցլերը՝ 1968 թ-ի հունվարի 17-ին Շեմլանում (Լիբանան): St'u Meyer K., Armenien..., էջ 245:

1550. Schäfer R., Geschichte..., էջ 123:

մեկով 480 մարկ:¹⁵⁵¹ Բացի այդ, երեխաների ավագ սերունդն արդեն հեռացել էր, և որբանոցում մնացել էին հիմնականում դեռ վաղ մանկական տարիքում գտնվող 106 որբեր՝ մեծ մասամբ տղաներ, որոնց գերակշիռ մասը սերուն էր Լիբանանի հայկական ճամբարներից:¹⁵⁵² Ծախսերի աճի և երեխաների սեռային կազմի փոփոխման պարագայում կազմակերպությունը որբանոցի հետագա ընդլայնման և հեռանկարային պահպանման համար կայուն նախադրյալներ ստեղծելու նպատակով բնականաբար պետք է ձգտեր հաստատության տրնտեսավարման բարելավման նոր, արդյունավետ ուղիներ որոնել. հանգամանք, որի համար որբանոցի նախկին արտադրական ձեռնարկություններն այլևս պիտանի չէին: Ուստի, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի համոզմամբ, լավագույն ճանապարհը մեկն էր. գնել մի՛ երկրագործության զարգացման համար պիտանի հողատարածք, երեխաներին տալ գյուղատնտեսական կրթություն և կապել հողի հետ:

Ս. Կյունցլերը, որն այդ ծրագրի իրականացման համար համապատասխան փորձ և կրթություն չուներ, 1929 թ-ի սեպտեմբերին մեկնեց Չալեպ՝ այնտեղ ներգրավվելով չափահաս որբերի դաստիարակության աշխատանքներում,¹⁵⁵³ իսկ որբանոցի ղեկավարումը Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հանձնարարությամբ ստանձնեց մասնագիտությամբ գյուղատնտես Անդրանիկ Կավուքչյանը, որն իր կնոջ գերմանուհի Ռուֆ Կավուքչյանի հետ միասին մեկնելով Ղազիր՝ 1929 թ-ի հոկտեմբերից անցավ իր պարտականությունների կատարմանը:¹⁵⁵⁴ Նրանց ջանքերով որբանոցի առօրյայում կարճ ժամանակում զգալի տեղա-

1551. St'u Mitteilungen, „Orient im Bild“, 1929, էջ 8:

1552. Նրանց թվում կային միայն 25 ավագ տղաներ, որոնք ընդունվել էին Անթիլիասի ամերիկյան որբանոցից, բացի այդ նաև 15 նմանապես ավագ հաշմանդամ երեխաներ, որոնք ի վիճակի չէին ինքնուրույն գոյություն վարել: St'u Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1929, էջ 22: Ամենակրտսեր թվով 54 երեխաների համար 1928 թ-ին գործում էր նաև մի մանկապարտեզ: St'u Künzler E., Von den Kindern in Ghasir, „Orient im Bild“, 1928, էջ 47: 1553. Künzler J., Jahresfeier in Ghasir am 1. Sept. 1929, „Orient im Bild“, 1929, էջ 86: 1554. Kavoukdjian A., Bericht aus Ghasir, „Orient im Bild“, 1930, էջ 39: Երեխաների թվաքանակը (106) անփոփոխ մնաց նաև 1929 թ-ին և 1930 թ-ի զարմանք: St'u Künzler E., Unsere früheren Waisenkinder, անդ, էջ 14: Հմմտ. Schäfer R., Mitteilungen, „Orient im Bild“, 1929, էջ 60:

շարժեր արձանագրվեցին: Ստեղծվեցին կարգապահության որոշակի կայուն սկզբունքներ, որոնք նախկինում բացակայում էին: Դպրոցում ուսումն արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծվեցին երկու ուժեղ և թույլ խմբեր, իսկ որբանոցի կարիքներն ապագայում ինքնուրույն հոգալու և միաժամանակ երեխաներին օժանդակ մասնագիտական կրթություն ապահովելու համար հիմնվեցին կոշկակարանոց, հյուսնարան, դերձականոց, դարբնոց, մեխանիկների արհեստանոց, հացթուխարան և մանածագործարան:¹⁵⁵⁵ Աշնանը ձեռք բերվեցին և երեխաների խնամքին հանձնվեցին նաև առաջին ընտանի կենդանիները (կովեր և ոչխարներ), որոնցից ստացվող բնամթերային եկամուտների շնորհիվ ծախսերը զգալիորեն կրճատվեցին:¹⁵⁵⁶ Ինչ վերաբերում էր, սակայն, կազմակերպության հիմնական ծրագրին, այն է՝ երեխաների մեջ զարգացնել երկրագործական հմտություններ և նրանց հողի հետ կապելու նպատակով գնել մի հողատարածք, ապա Ղազիրը դրա իրականացման համար նախընտրելի վայր չէր կարող լինել, քանի որ այնտեղ հողի և կենսամթերքների գները չափազանց բարձր էին:¹⁵⁵⁷ Այդ իսկ պատճառով Ա. Կավուքչյանը, որին լիազորվել էր կատարել տարածքի ընտրությունը, հունվարի 10-ին մեկնեց Յալեպ, որտեղ այցելելով Յեպեին նրա ընկերակցությամբ ուսումնասիրեց Յալեպի շրջակայքում գտնվող տարածքները:¹⁵⁵⁸ ապա ձեռնարկելով մի շարք այլ հետազոտական ճանապարհորդություններ ևս¹⁵⁵⁹ նա նպատակահարմար գտավ հաստատությունը հիմնել Քե-

1555. Kavoukdjian A., Von Ghasir nach Kessab-Bedrossieh, „Orient im Bild“, 1930, էջ 62: Հմնտ. Kavoukdjian A., Bericht aus Ghasir, անդ, էջ 39-40: Գորգագործարանից ձեռք բերվեց նաև մի հաստոց, որի միջոցով ավագ աղջիկները գորգագործություն էին սովորում: Անդ, էջ 39:

1556. Անդ, էջ 39-40:

1557. Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 47:

1558. Տե՛ս Mitteilungen, „Orient im Bild“, 1930, էջ 23:

1559. Ա. Կավուքչյանն այդ նպատակով հետազոտեց գրեթե ողջ Սիրիան՝ այդ երկրի հարավային՝ պաղեստինյան սահմանից հասնելով մինչև հյուսիսային Թուրքիայի սահմանը: Այդ ճանապարհորդությունների մի մասը նա կատարեց Յ. Կյունցլերի ուղեկցությամբ: Տե՛ս Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 47:

սարի շրջանում, մասնավորապես Մուսա լեռան հարևանությամբ՝ Սի-
ջերկրական ծովի ափին գտնվող Բեդրոսիե գյուղում:¹⁵⁶⁰

1930 թ-ի մարտին ստանալով կազմակերպության համաձայնու-
թյունը (այն կայացել էր փետրվարի 7-ին) Կավուքչյանը ապրիլի 10-
ին այնտեղ գնեց մոտ 15 հա մեծությամբ մի հողամաս¹⁵⁶¹ և անմիջա-
պես էլ մի խումբ շինարարների հրահանգելով սկսել որբանոցի շեն-
քի կառուցումը՝ վերադարձավ Ղազիր հաստատության տեղափո-
խումը նախապատրաստելու համար:¹⁵⁶²

Երբ վերաբնակեցման ծրագիրը Ղազիրում և հարևան շրջաններում
հայտնի դարձավ, որոշ երեխաների ազգականներ չհաշտվելով նրանց
հեռանալու մտքի հետ՝ նախընտրեցին նրանց որբանոցից դուրս բերել:
Չաշվի առնելով այն, որ նրանք հանձն էին առնում հոգալ այդ երեխանե-
րի խնամքը, և որ այդպիսով տեղեր էին ազատվում մոր, միանգամայն ա-
նօգնական որբերի համար՝ տնօրինությունը նրանց չառարկեց, և հունի-
սի 2-ին, երբ ավարտվում էր որբանոցի շենքերի վարձակալման ժամկե-
տը, երեխաների՝ 71 հոգուց բաղկացած անձնակազմը 9 ծառայողների և
որբանոցի ողջ շարժական գույքի հետ միասին Ղազիրից հեռացավ:¹⁵⁶³

1560. Ընտրությունը միանգամայն կշռադատված էր: Քեսարի՝ բացառապես հայաբնակ
շրջանում առկա էին որբանոցի տնտեսական քարգավաճման և երեխաների ազգային
ինքնության պահպանման ու հոգևոր-մշակութային կյանքի զարգացման բոլոր նախա-
դրյալները: 12 000 մարդուց բաղկացած և ավելի քան 600-ամյա պատմություն ունեցող
հայ համայնքը Սիրիայի պառլամենտում ուներ պատգամավորության մեկ մշտական
տեղ: Շրջանի պետական պաշտոնյաները, ինչպես օրինակ քաղաքազուխը, ոստիկան-
ները, փոստային ծառայողները հայեր էին: Բացի այդ այն իր անառիկության շնորհիվ
համեմատաբար ապահովագրված էր անցանկալի քաղաքական ցնցումներից և դրանց
հետևանքներից: Ինչ վերաբերում էր բնակլիմայական պայմաններին, ապա դրանք չա-
փազանց նպաստավոր էին գյուղատնտեսության զարգացման համար: Անդ, էջ 47-48:

1561. Kavoukdjian A., Aus Ghasir und Bedrossieh, „Orient im Bild“, 1930, էջ 54:

1562. Սկզբնապես որբանոցի անձնակազմը փետր է տեղավորվել հողամասին
մերձակա՝ երկու վարձակալված շենքերում: Տե՛ս Mitteilungen, անդ, էջ 23:

1563. Kavoukdjian A., Von Ghasir nach Kessab-Bedrossieh, անդ, էջ 62-63: Հմնտ.
Mitteilungen, անդ, էջ 63: Հմնտ. Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und
was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 53-54: Ծառայողների մի մասը նույնպես
չկամենալով տեղափոխվել մեծ քաղաքներից համեմատաբար հեռու ընկած գյուղական
շրջան և ներգրավվել երկրագործության մեջ՝ հրաժարական տվեց և մեկնեց Քեյրուս:
Անդ, էջ 54: Քեսարին ամենամերձակա քաղաքները Լաքսիհան և Անտիոքն էին, որոնք
գտնվում էին համապատասխանաբար 80 և 65 կմ հեռավորության վրա: Անդ, էջ 58:

Հունիսի 20-ին, սակայն, երբ նրանք արդեն Քեսաբում էին,¹⁵⁶⁴ հայտնի դարձավ, որ ֆրանսիական կառավարությունն արգելում էր ծովափնյա շրջաններում, բնականաբար նաև Բեդրոսիեում հիմնել որևէ գերմանական (թեկուզև որբախնամ) հաստատություն:¹⁵⁶⁵ Ուստի մինչև իրադրության հստակեցումը վճռվեց երեխաներին թողնել Քեսաբում, որտեղ բնակության և միաժամանակ դպրոցական աշխատանքների վերսկսման նպատակով նրանց վարձակալման կարգով հատկացվեց մի մեծ դպրոցի շենք:¹⁵⁶⁶

Քեսաբում որբանոցի առօրյան ընթացավ իր բնականոն հունով: Դպրոցի հետ մեկտեղ վերականգնվեցին նաև արհեստագործական ձեռնարկությունները,¹⁵⁶⁷ որոնք կարողանում էին ամբողջությամբ հոգալ որբանոցի կարիքները: Թե մոտավորապես ինչպես և ինչ չափերով, կարող են վկայել Ա. Կավուքչյանի հետևյալ տողերը. «1932 թ-ին մեր մանածագործարանում պատրաստվեց 1500 արշին (մոտ 1100 մետր) կտոր, որը դերձականոցում անմնացորդ իրացվեց: Դրա շնորհիվ յուրաքանչյուր երեխա ստացավ երկու նոր հագուստ բլուզի և սպիտակեղենի հետ միասին: Մեր տնայնագործուհին յուրաքանչյուր երեխայի համար պատրաստեց երկու սվիտեր և 6 զույգ գուլպա: Մեր կոշկակարն ամեն երեխայի մատակարարեց մեկ զույգ նոր կոշիկ և նաև նորոգեց հին կոշիկները...»:¹⁵⁶⁸

Երեխաները միաժամանակ զբաղվում էին Բեդրոսիեի հողամասի մշակությամբ,¹⁵⁶⁹ ինչպես և որբանոցի կենդանիների խնամքով, որոնց զխաքանակը շարունակ ավելանում էր, և եթե փոխադրման ժամանակ

1564. Անդ: Քեսաբը գտնվում էր Բեդրոսիեից 10 կմ հեռավորության վրա: Տե՛ս Kavoukdjian A., Von Ghasir nach Kessab-Bedrossieh, „Orient im Bild“, 1930, էջ 62:
1565. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1932, էջ 11:

1566. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21:

1567. Hetzel G., Besuch in Kessab, անդ, էջ 54:

1568. Kavoukdjian A., Unsere Kessab-Arbeit im Jahre 1932, „Orient im Bild“, 1933, էջ 12:

1569. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21: Հմնտ. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1932, էջ 11:

որբանոցն ուներ միայն 9 ընտանի կենդանիներ,¹⁵⁷⁰ ապա 1932 թ-ին արդեն ձևավորվել էր մի պատկառելի անասնապահական համալիր, որտեղ կային մասնավորապես 14 եզ, 2 ծի, 87 այծ, 35 խոզ, 4 կով, 1 երինջ, 3 հորթ, 1 ցուլ, 3 ոչխար և 1 ավանակ իր քուռակներով:¹⁵⁷¹

Երկրագործությունը և անասնապահական ֆերման որբանոցի սաների մեջ համապատասխան հմտություններ և փորձառություն զարգացնելուց զատ էապես նպաստում էին նաև հաստատության ծախսերի կրճատմանը. հանգամանք, որի նշանակությունը Սիրիայի՝ 1931-32 թթ. բռնկված ծանր տնտեսական ճգնաժամի,¹⁵⁷² ինչպես և Բեդրոսիեի հողամասի գնմամբ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի համար առաջացած դժվարին ֆինանսատնտեսական կացության պայմաններում դժվար էր գերազնահատել:

Հաստատությունը մեծ դեր ունեցավ նաև գյուղի բնակիչների կենսապայմանների բարելավման հարցում: Լուսավորչական եկեղեցին,¹⁵⁷³ որտեղ որպես կանոն հաճախում էին բոլոր երեխաները, Կավուքյանի նախաձեռնությամբ և աջակցությամբ կարճ ժամանակում վերանորոգվեց:¹⁵⁷⁴ Նրա գյուղատնտեսական գիտելիքները և փորձը լայն կիրառում էին գտնում նաև տեղի հայ համայնքում, որտեղ նա պարբերաբար հանդես էր գալիս դասախոսություններով:¹⁵⁷⁵ Տեղացիների համար ոչ պակաս կարևոր առաքելություն ուներ նաև նրա անձնվեր կինը՝ Ռուֆ Կավուքյանը, որի կողմից կիրառվող՝ երեխաների խնամքի և դաստիարակության նորագույն մեթոդները մեծ տարածում գտան Քեսաբում և շրջակա գյուղերում: «Որբերի մայրը» միաժամանակ անում էր ամեն հնարավորը գյուղաբնակ մայրերին նյութապես օգնելու համար: Նրա տեղեկագրերի հիման վրա Պոտոլամից Քեսաբ էին առաքվում հազուստներ,

1570. 2 կով, 3 խոզ, 1 ավանակ, 1 այծ և 2 ոչխար: Տե՛ս Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 54:

1571. Kavoukdjian A., Unsere Kessab – Arbeit im Jahre 1932, անդ, էջ 12:

1572. Անդ:

1573. Գյուղում կային նաև բողոքական և կաթոլիկ եկեղեցիներ: Տե՛ս Hetzel G., Besuch in Kessab, „Orient im Bild“, 1931, էջ 54:

1574. Անդ:

1575. Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 59:

կտորեղեն և երեխաների խնամքի համար անհրաժեշտ այլ պարագաներ, որոնք տեղ հասնելով՝ անմիջապես բաշխվում էին կարիքավոր ընտանիքներին:¹⁵⁷⁶ «Ես մեր որբախնամ գործի երկրորդ առաջադրանքը համարում եմ այն, գրում էր Ա. Կավուքյանը կազմակերպությանն ուղղված իր նամակներից մեկում,- որ մենք մեր աշխատանքով տեղացի հայերին ինքնօգնության և իրենց ընտանիքներին ավելի լավ օգնելու ճանապարհներ ցույց տանք և այդպիսով կարողանանք նպաստել սիրիաբնակ տառապյալ հայ ժողովրդի ընդհանուր բարօրությանը»:¹⁵⁷⁷

Չուգահեռաբար որբանոցը համալրվում էր նաև տեղացի երեխաներով: Եթե 1930 թ-ին նրանց ընդհանուր թիվը 71-ից չէր անցնում, ապա 1931 թ-ին սկզբին այն հասավ 89-ի,¹⁵⁷⁸ 1932 թ-ի սկզբին հաստատության խնամքի տակ էին գտնվում 105, տարեվերջին 116,¹⁵⁷⁹ իսկ 1933 թ-ին 125 երեխաներ:¹⁵⁸⁰

Ինչևէ, քանի որ Բեդրոսիեի կնճռոտ խնդիրը շարունակում էր անորոշ մնալ, Ա. Կավուքյանը 1931 թ-ին Քեսաբին մերձակա՝ Կայա -Փունար բնակավայրում վարձակալեց Քեսաբի «Ուսումնասիրաց» ընկերությանը պատկանող մի ընդարձակ՝ 4 քառակուսի կմ. մակերես ունեցող հողատարածք, որը կարող էր որբանոցի համար մշտական հանգըրվան ծառայել, իսկ ապագայում դառնալ սեփականություն:¹⁵⁸¹ Շուտով ստացվեց նաև ֆրանսիական մանդատային կառավարության

1576. Kavoukdjian R., Eine Not, der abzuhelpfen ist, „Orient im Bild“, 1930, էջ 94: Հմնտ. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21: Կարիքավոր ընտանիքներին մասհանում էր կատարվում նաև Ծննդյան տոների առթիվ որբանոցի երեխաներին ուղարկվող նվերներից: Տե՛ս Kavoukdjian A., Aus der Arbeit in Kessab, անդ, էջ 29:

1577. Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 59:

1578. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1930, „Orient im Bild“, 1931, էջ 21: Հմնտ. Kavoukdjian A., Aus der Arbeit in Kessab, անդ, էջ 29:

1579. Նրանցից 5-ը հաշմանդամներ էին: Տե՛ս Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1932, „Orient im Bild“, 1933, էջ 14:

1580. Schäfer R., Aufbau in Kaja Punar, անդ, էջ 42:

1581. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1931, „Orient im Bild“, 1932, էջ 11: Հմնտ. Schäfer R., Aufbau in Kaja Punar, „Orient im Bild“, 1933, էջ 42: Չմայած հողամասը վարձակալվեց 10 տարով, սակայն պայմա-

թույլտվությունը Կայա-Փունարում կառուցումներ կատարելու վերաբերյալ,¹⁵⁸² որով ավելի քան մեկ տարի շարունակվող անորոշությունն ավարտվեց, և ծայր առան շինարարության տենդագին աշխատանքները:¹⁵⁸³ 1933 թ-ի հունիսի 1-ին, երբ 1000 քառ. մետր տարածքի վրա կատարված շուրջ 4000 խոր. մետր կառուցապատման արդյունքում համալիրն արդեն կարող էր շահագործվել, սկսվեց տեղափոխման գործընթացը, իսկ ևս երեք ամիս անց՝ սեպտեմբերի 1-ին որբանոցն ամբողջովին հաստատվեց Կայա-Փունարում:¹⁵⁸⁴

Տեղափոխումից հետո Կավուքչյան ամուսինները ձեռնամուխ եղան նոր բնակավայրում տնտեսության զարգացման գործին: Արտադրողականության բարձրացման նպատակով նրանք արհեստագործական ձեռնարկությունները վերազինեցին Չերմանիայից բերված՝ մի շարք նորագույն սարքավորումներով:¹⁵⁸⁵ Տարածքի քարաշատ, անպիտան հատվածները վերածվեցին բերրի դաշտերի, որոնք հատուցում էին հաստատության՝ բանջարեղենի բոլոր պահանջները:¹⁵⁸⁶ Մացառուտները փոխարինվեցին պտղատու այգիներով:¹⁵⁸⁷ 1934 թ-ի գարնանը հիմնադրվեցին և զարգացվեցին տնտեսության երկու նոր ծյուղեր ևս՝ թռչնաբուծությունը և մեղվապահությունը,¹⁵⁸⁸

նագիրը հնարավորություն էր ընձեռում այն ցանկացած ժամանակ գնել և դարձնել սեփականություն: Ըստ այդմ պայմանագրում վավերացվեց նաև գնման արժեքը, որը հետագայում, ակախ գների փոփոխությունից, մնում էր հաստատուն: Տե՛ս Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, անդ, էջ 58: 1582. Hetzel G., Mitteilungen, „Orient im Bild“, 1932, էջ 12:

1583. Տե՛ս Mitteilungen, անդ, էջ 24:

1584. Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 58: Համալիրի շինարարությունը, որը քաղկացած էր որբանոցի երկհարկանի շենքից, կառավարման շենքից, մի արդյունաբերական կենտրոնից, դպրոցից և շտեմարանների ու անասնազոների համար նախատեսված հարակից շինություններից, վերջնականապես ավարտվեց մեկ տարի անց՝ 1934 թ-ի աշնանը: Տե՛ս Aus der Zeit, „Der Orient“, 1934, էջ 142:

1585. Kavoukdjian A., Von Kessab nach Kaja Punar – und was das bedeutet, „Orient im Bild“, 1933, էջ 59:

1586. Անդ, էջ 48:

1587. Պտղատու ծառերի թիվը 1933 թ-ին հասնում էր մոտ 2000-ի: Տե՛ս անդ, էջ 42:

1588. Kavoukdjian A., Aus der Walsenarbeit in Kaja Punar, „Orient im Bild“, 1934, էջ 19: Թռչնաբուծության զարգացումը հնարավոր դարձավ Չերմանիայից բերված մի ինկուբատորի շնորհիվ: Անդ:

իսկ անասնազխաքանակի ընդլայնման շնորհիվ որբանոցը 1934 թ-ի սկզբից ի վիճակի դարձավ ապահովել նաև իր մսի և կաթնամթերքի բոլոր պահանջները:¹⁵⁸⁹ 1933 թ-ի վերջին որբանոցի տնօրինությունը ստացավ նոր օգնականներ ևս. նոյեմբերի 16-ին իր կնոջ Սենտա Դեմնիցի հետ Կայա-Փունար մեկնեց Ռ. Կավուքչյանի եղբայրը՝ Պաուլ Գերհարդ Դեմնիցը: Երկուսն էլ, լինելով մասնագիտությամբ գյուղատնտես գերմանացիներ, նվիրումով և պատասխանատվությամբ գործի լծվեցին:¹⁵⁹⁰ Իսկ դեկտեմբերի վերջին նրանց միացավ Գերհարդ Շնայդերը, որը կազմակերպության հանձնարարությամբ պետք է զբաղվեր երեխաների վերաբերյալ տեղեկագրերի առաքման և ուսումնադաստիարակչական աշխատանքներով:¹⁵⁹¹ Դժվար է գերազնահատել այդ համալրումների կարևորությունը որբանոցի համար, հատկապես, երբ դրանք կատարվեցին իրոք ճակատագրական թվացող մի մեծ կորստի նախօրեին: Ծանր հիվանդությունից հետո, 1934 թ-ի հուլիսի 19-ին, իր կյանքի 30-րդ տարին չբոլորած՝ մահացավ որբանոցի կառավարչուհին և բոլոր երեխաների սիրելի «մայրը»՝ Ռութ Կավուքչյանը:¹⁵⁹²

Տքնաջան տարիներն ինչպես հարկն է՝ արդյունավորվեցին, և 1934 թ-ին Կայա-Փունարն իրենից ներկայացնում էր մի փոքրիկ «պետություն», որի բնակիչների ընդհանուր թիվը հասնում էր 195-ի,¹⁵⁹³ և որտեղ, ինչպես Գ. Շնայդերն էր նշում իր տեղեկագրերից մեկում, չկար որևէ աշխատանք, որ երեխաները չկարողանային կատարել:¹⁵⁹⁴ Չուզահեռաբար նրանք հաճախում էին նաև Կայա-Փունարի նորաբաց դպրոցը, որն ուներ բնագիտական և գյուղատնտեսական թեքում, և որի ընդհանուր թվով 6 դասարաններում 1934 թ-ին դասավանդում էին 5 ուսուցիչներ:¹⁵⁹⁵ Իսկ այդ տարվա ամռանը որբանո-

1589 . Kavoukdjian A., Aus der Arbeit in Kaja Punar, անդ, էջ 26:

1590. Stbu Mitteilungen, անդ, էջ 4:

1591. Անդ:

1592. Stbu Ruth Kavoukdjian heimgegangen, անդ, էջ 33:

1593. Schneider G., Reich Kaja Punar, „Orient im Bild“, 1934, էջ 31-32: Նրանցից 150-ը երեխաներ էին և այդ թվում 109-ը՝ որբ երեխաներ: Անդ, էջ 31:

1594. Անդ:

1595. Stbu Aus der Zeit, „Der Orient“, 1934, էջ 142:

ցը հրաժեշտ տվեց իր առաջին տասը «չրջանավարտներին», որոնցից 5-ը մեկնեցին իրենց ազգականների մոտ, իսկ 5-ը մնացին Կալա-Փունարում, սակայն արդեն որպես ինքնուրույն և բացառապես սեփական վաստակով ապրող երիտասարդներ: 1596

Ինչևէ. ինչպես Ղազիրի և Կայա-Փունարի, այնպես էլ Հալեպի՝ արդեն լուսաբանված համապարփակ օգնության աշխատանքները բնականաբար հնարավոր դարձան մեծաքանակ ֆինանսական ներդ-

Տարեթիվ	Մուտք					Ելք				
	ընդամուտ	Ղազիրում և Հալեպում օգնության աշխատանքներին	Հալեպում և Փունարում մեր շրջիկ գեյուրների համար	Այլ հատկացումներ	Կենսաթոշակներ և կենսաթոշակներ չիմ ապահովագր.	Այլ ծախսեր	Կատարված գումարներ	Պրոպագ. (թուղթեր, փայտեր, քարտեր, ֆիլմեր և այլն) ծախսեր	Մնացորդ	
1926	153663,75	60987,85	10228,72	1302,65	7000	1158,81	36461,48	25889,19	10635,05	
1927	184241,19	91486,34		1798,50	7353,25	12598,35	27234,33	27632,76	18138,66	

Տարեթիվ	Մուտք					Ելք				
	ընդամուտ	Ղազիրի (1930 թ.ից Քեսաբի) որբանոցի համար	Հալեպի որբանոցի համար	Հալեպի կրկազրծան աշխատանքներին	Այլ հատկացումներ Հալեպում և Փազիրում	Մահմ. շրջաններում քարոզչության համար	Այլ ծախսեր	Կատարված գումարներ	Պրոպագ. (թուղթեր, փայտեր, քարտեր, ֆիլմեր) ծախսեր	Մնացորդ
1928	198688,39	29090	51840	13140	6380,58		35683,61	21637,42	22274,20	18642,58
1929	188503,87	54869,49	45643,34	6570	1933,20		22989	23157,51	19805,09	13536,24
1930	194863,66	42207,64	57248,42	12630	14476,46	5248,15	20786,03	21328,37	12867,38	8071,21
1931	161397,88	30219,83	44877,80		1997,45	9268,20	21424,17	22621,03	13280,26	17709,14
1932	146479,49	31188,31	47066,26			6459	17696,74	19219,43	11958,95	12890,80
1933	126959,53	44126,98	31333,98			7932,28	13296,81	18387,14	11882,54	

1596. Hetzel G., Frohe Kunde, „Orient im Bild“, 1934, էջ 27-28: Ուշագրավ է, որ որբանոցում անվանակոչված երեխաների թվում կային և այնպիսիները, որոնք կրում էին Լեփսիուսյան ազգանունը: Տե՛ս ընկերության աշխատակցի տեղեկությունները Կլարա Լեփսիուսյանի մասին: St'u Schneider G., Aus Berichten über unsere armenischen Kinder, “Orient im Bild”, 1936, էջ 4:

րուսների միջոցով, որոնց վերաբերյալ հստակ իրազեկում տալու համար ստորև ներկայացնում ենք ընկերության 1926-33 թթ. եկամուտների և ծախսերի հիմնական վիճակագրական տվյալները: 1597



ՎԱՐԵՆ ՅԵՊԵԻ
փրկարար կացարանը

1597. Տե՛ս „Der Orient“ պարբերականի 1927 թ-ի և „Orient im Bild“-ի 1928-34 թթ. տարեգրքերում լույս տեսած՝ ընկերության տարեկան հաշվետվությունները: Աղյուսակների «Եկամուտներ» սյունակում ներառված են նաև նախորդ տարիների մնացորդային գումարները: «Այլ ծախսեր» սյունակում ներառված են կազմակերպության աշխատակիցների գործուղումների, սաների կրթության և այլ աջակցությունների, իսկ 1928 թ-ից՝ նաև կենսաթոշակների և կենսաթոշակային ապահովագրումների նպատակով կատարված ծախսերը: Ձեռագործերի և աշխատողությունների վաճառքից ստացված եկամուտը հստակ չափագրվել է միայն 1926-1927 թթ. տարեկան հաշվետվություններում: Ըստ այդմ 1926 թ-ին այն կազմել է 1999,12, իսկ 1927 թ-ին 2805,36 մարկ: Տե՛ս Jahresrechnung von Dr. Lepsius Deutsche Orient-Mission (Armen. Hilfswerk) für das Jahr 1926, „Der Orient“, 1927, էջ 32: Դմնտ. Jahresrechnung von Dr. Lepsius Deutsche Orient-Mission (Armen. Hilfswerk) für das Jahr 1927, „Orient im Bild“, 1928, էջ 19: Հաջորդ տարիների հաշվետվություններում այդ եկամուտները ներառված են ընդհանուր եկամտացուցանիշներում: Նույնը վերաբերում է նաև շրջիկ զեկուցումների միջոցով գոյացած եկամուտներին, որոնք 1930 թ-ի և հաջորդ հաշվետվություններում առանձին չեն չափագրվել: Հայտնի է միայն, որ 1927 թ-ին այդ եկամուտները կազմել են 6147, 72, 1928 թ-ին 8173, 82, 1929 թ-ին 8531, 18, իսկ 1930 թ-ին 1031, 06 մարկ: Տե՛ս անդ: Դմնտ. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1928, „Orient im Bild“, 1929, էջ 22: Դմնտ. Jahresrechnung der Dr. Lepsius Deutschen Orient-Mission (Armenisches Hilfswerk) für das Jahr 1929, „Orient im Bild“, 1930, էջ 30: Դմնտ. Jahresrechnung der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für das Vereinsjahr 1930, „Orient im Bild“, 1931, էջ 22: «Այլ հատկացումներ...» բաժնի՝ 1930 թ-ի գումարանշից (14476, 46 մարկ) 12685,25 մարկ հատկացվել է Բեդրոսիեի բնակեցման նպատակին: Անդ: Հարկ է նաև նշել, 1933 թ-ին ի հայտ եկավ նաև առաջին 7960, 79 մարկի պակասորդը, որը ներառված է այդ տարվա՝ 126959,53 մարկ կազմող ընդհանուր եկամտացուցանիշում: Տե՛ս Jahresrechnung der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für das Vereinsjahr 1933, „Orient im Bild“, 1934, էջ 12:

§ 5

**ՎՇԽԱՏԱԿՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՆԱՃԻՍՏԱԿԱԿՆ ԿԱՐՉԱԿԱՐԳԻ
ՊԿՅՄԱԿՆԵՐՈՒՄ
(1933-1943 ԹԹ.)**

**5.1. Ընկերության կազմակերպական
և քարոզչական գործունեությունը
Գերմանիայում 1933-1938 թթ.**

1933 թ-ին Գերմանիայում ազգայնական տրամադրությունների վերելքի և իշխանության գլուխ անցած՝ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ռասիստական ու հակասեմիտական գաղափարախոսության զարգացման պայմաններում դարձյալ մահամբեր ամպեր կուտակվեցին հայ ժողովրդի վրա: Չանգվածային լրատվության միջոցներում լայն շրջանառության մեջ էր դրվել հայերի և հրեաների ռասայական նույնականության տեսակետը, որ հղի էր անկանխատեսելի հետևանքներով: Ի պաշտպանություն այդ տեսակետի վկայակոչվում էին զանազան «ընդհանուր հատկանիշներ» և ոչ վերջին հաշվով նույնիսկ երկու ժողովուրդների պատմական ճակատագրերի միանմանությունը:¹⁵⁹⁸ Ուստի պատահական չէ, որ ինչպես Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի, այնպես էլ հայ ժողովրդի մյուս գերմանացի բարեկամների գերխնդիրը դարձավ այդ և նման ըմբռնումների դեմ

¹⁵⁹⁸ Sbn Die Armenier – keine Juden, „Orient im Bild“, 1933, էջ 32:

պայքարի ծավալումը: «Այն պնդումը, թե հայերը հրեաներ են, կեղծիք է: - նշվում էր կազմակերպության պարբերականում հրատարակված «Հայերը հրեաներ չեն» կոչում: - Եթե նման պնդումների հեղինակները բացեին մի հանրագիտարան, կտեսնեին հակառակը, այն, որ ... Հայերը պատմության մեջ հնագույն քրիստոնյա ժողովուրդն են: Նաև ռասայական առումով հայերը ոչ մի կապ չունեն հրեաների հետ, քանի որ նրանք սեմիտներ չեն, այլ հնդգերմաններ: Նրանց լեզուն նույնպես հնդգերմանական լեզվաճյուղ է: Մենք խնդրում ենք մեր բարեկամներին ամենուր պայքարել այդ պատմական կեղծիքի դեմ, թե հայերին պետք է դասել սեմիտների շարքում: Հայ ժողովուրդը գերմանացի ժողովրդի հետ դարեր շարունակ ունեցել է ամենաարժեքավոր մշակութային կապերը, իր ազգային եկեղեցու հետ միասին բազմադարյան պայքարի միջոցով պահպանել է իր քրիստոնեությունը: Ով պաշտպանում է այդ թյուր պնդումը, դրսևորում է պատմության անբավարար իմացություն և ստորացնում մի ժողովրդի, որը դեռ համաշխարհային պատմական առաքելություն ունի Արևելքի ապագայի համար»: ¹⁵⁹⁹

Կազմակերպության պարբերականներում մեկը մյուսի ետևից հրատարակվում էին ծավալուն ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատմական անցյալի և ազգաբանական, կրոնական ու լեզվամշակութային առանձնահատկությունների վերաբերյալ, որոնցով հիմնավորվում էր նրա պատկանելությունը արիական ռասային: ¹⁶⁰⁰ Ջուզահեռաբար վկայակոչվում էին նաև անցյալի ականավոր գիտնականների, գործիմակ Կարլ Ֆրիդրիխ Նոյմանի, պրոֆ. Հայնրիխ Յուրբշմանի, պրոֆ. Յոզ. Մարկվարտի և այլոց հետազոտություններն ու տեսակետները հայ ժողովրդի մասին: ¹⁶⁰¹ «Հայ ժողովրդի ներկային սփռվածությունն ամբողջ աշխարհում, - նշված էր Գերմանա-հայկական ընկերության և Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից հրապարակված հայտարարություններից մեկում, - պետք է պայմանավորել Թուրքիայի պետական տարածքից նրա բռնի վտարումով (1915-16 թթ.),

1599 Անդ:

1600. Sb'u Hetzel G., *Wie das älteste Christenvolk zu seinem Glauben kam, անդ, էջ 34-35 և 37; Die Zugehörigkeit der Armenier zur arischen Rasse (Mittellung der Deutsch-Armenischen Gesellschaft Berlin), անդ, էջ 38 և այլն:*

1601. Sb'u Rassentum der Armenier, „Der Orient“, 1933, էջ 65-66:

որն այլ նպատակ չէր հետապնդում. քան մշակութապես ավելի բարձր աստիճանի վրա կանգնած քրիստոնյա ժողովրդի և թուրքերին օտար ռասայի ոչնչացումը: ... Քանի որ արևմուտքում հրեականության ընթացման հետ կապված է մոզաիկ կրոնի ընկալումը, անհրաժեշտ է նշել. որ հայերը որպես հնդգերմաններ ոչ միայն ռասայով են հրեաներին օտար, այլև, որպես աշխարհում հնագույն քրիստոնյա ժողովուրդը, կրոնական տեսանկյունից ևս նրանց հետ ոչ մի ընդհանրություն չունեն»: ¹⁶⁰²

Այլ գաղափարակից կազմակերպությունների, մասնավորապես Գերմանա-հայկական ընկերության հետ սերտ համագործակցությամբ ամիսներ շարունակ ծավալվող այդ գրապայքարը, որում ներգրավվեցին նաև գիտական, կրոնական և քաղաքական այնպիսի մեծ հեղինակություններ, ինչպես օրինակ, պրոֆ. Կ. Ֆ. Լեհման-Յաուպտը, դր. Պ. Ռոհրբախը, պրոֆ. Յ. Ռիխտերը, Սաքսոնիայի դուքս պրոֆ. Ֆոն Մաքսը, Յ. Ֆոն Լերսը և այլն. հասավ իր ցանկալի նպատակին. գերմանական լրատվամիջոցներում հայերի և հրեաների ռասայական նույնացմանը միտող քարոզարշավը դադարեց, և 1933 թ-ի հուլիսի 3-ին Գերմանիայի ՆԳ նախարարի հրամանագրով հայերը «Մասնագիտական ծառայության վերականգնման օրենքին համապատասխան» դասվեցին արիական ժողովուրդների շարքում այդպիսով ապահովագրվելով պաշտոնավարման և այլ իրավունքների սահմանափակման օրենքներից, ինչպես և այլապես անխուսափելի դարձող ռասայական դաժան հետապնդումներից: ¹⁶⁰³

Այդ հաղթանակը մեկընդմիջտ ապահովագրելու և հետագայում այլևայլ նենգափոխումների ու կեղծումների հնարավորությունը բա-

1602. Sb'u Die Zugehörigkeit der Armenier zur arischen Rasse (Mitteilung der Deutsch-Armenischen Gesellschaft Berlin), „Orient im Bild“, 1933, էջ 38:

1603. Sb'u Schäfer R., Mitteilungen, „Orient im Bild“, 1933, էջ 51: Հմմտ. Армян-не-Армяны (сборник монографий), Санкт-Петербург, 1995, էջ 6: Լախարարի դեկրետի վերաբերյալ առաջին հրապարակային իրազեկումը, ինչպես թույլ է տալիս կրահել Պ. Ռոհրբախի տեղեկություններից մեկը, կատարվել է 1933 թ-ի օգոստոսի 31-ին ՆԳ նախարարության ռասայագիտության փորձագետի կողմից կատարված մի գրավոր տեղեկության միջոցով, իսկ սեպտեմբերի 29-ին նախարարի հանձնակատարի միջոցով տեղի է ունեցել հրամանագրի պաշտոնական հրապարակումը: Sb'u Armeniertum und Ariertum, Potsdam, 1934, էջ 42:

ցառելու նպատակով 1934 թ-ի սկզբին լույս ընծայվեց նաև «Armeniertum und Ariertum» («Հայկականություն և արիականություն») աշխատությունը՝ հանրությանը ներկայացնելով գիտական և փաստագրական համակողմանի հիմնավորումներով հայ ժողովրդի արիական պատկանելությունը փաստող 10 ծավալուն հոդվածներ՝ հեղինակված պրոֆ. Զ. Զ. Շայդերի,¹⁶⁰⁴ Է. Շթիրի, դր. Պ. Ռոհրբախի, Ռ. Շեֆերի, պրոֆ. Յ. Ստրոփգովսկու,¹⁶⁰⁵ Կ. Ռոթի,¹⁶⁰⁶

1604. Բեռլինի համալսարանի դասախոս, անվանի արևելագետ Զանս Զայնրիխ Շայդերը պրոֆ. Յոզ. Մարկվարտի աշակերտն էր և աշխատակցում էր վերջինիս կողմից այդ համալսարանում հիմնված իրանական և հայկական բանասիրության ամբիոնին դասավանդելով հայերեն (գրաբար)։ 1935 թ-ից նա վարում էր նաև համալսարանի կառույցում գործող Արևելյան լեզուների վարժարանի վերատեսչի պաշտոնը։ Տե՛ս Հայկականություն և արիականություն, Երևան, 2001, էջ 105:

1605. Արվեստի ավստրիացի պատմաբան, պրոֆ. Յոզեֆ Ստրոփգովսկին ծնվել է 1862 թ. մարտի 7-ին Բելսկո-Բիալայում (Լեհաստան)։ Ուսանել է Վիեննայում, Բեռլինում և Մյունխենում։ 1892-1909 թթ. դասավանդել է Գրայցում, իսկ 1892-1909 թթ. Վիեննայում, որտեղ հիմնել է արվեստի պատմության մի նոր ինստիտուտ և ստանձնել ռեկտորի պարտականությունները։ Իր դասախոսություններում նա անդրադարձել է Մերձավոր արևելքի, Զյուսիսային Աֆրիկայի, Իրանի, Հայաստանի, Փոքր Ասիայի արվեստների պատմությանը։ 1918 թ-ին լույս է տեսել Ստրոփգովսկու «Die Baukunst der Armenier und Europa» երկհատոր աշխատությունը։ Երկու անգամ՝ 1889 թ-ին և 1915 թ-ի աշնանը այցելել է Հայաստան։ Անձնական ծանոթություն է ունեցել Թ. Թորոմանյանի, Լ. Լիսիցյանի, Զ. Օհանջանյանի և այլ հայերի հետ, որոնք նրան հայ ճարտարապետության ուսումնասիրման հարցում մեծ աջակցություն են ցուցաբերել։ Վախճանվել է 1941 թ-ի հունվարի 2-ին Վիեննայում։ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 11, Երևան, 1985. , էջ 156:

1606. Կարլ Ռոթը ծնվել է 1866 թ-ին։ Զբաղվել է արևելյան և բալկանյան ժողովուրդների պատմության, մշակույթի և լեզուների ուսումնասիրությամբ։ Երկար տարիներ ուսուցչի և գրադարանապետի գործունեություն է վարել Մյունխենում և Բավարիայի այլ քաղաքներում։ Անդամակցել է Մյունխենի Գերմանական արևելագիտական ընկերությանը, ինչպես և Գերմանա-հայկական ընկերությանը՝ աշխատակցելով նաև ընկերության կողմից 1937-1944 թթ. լույս ընծայվող «Armenien» պարբերականին։ 1915 թ-ին լույս է տեսել Հայաստանին վերաբերող նրա առաջին աշխատությունը «Deutschland und Armenien» («Գերմանիան և Հայաստանը») վերնագրով։ Հայագիտական հոդվածներ և ուսումնասիրություններ է հրատարակել նաև զանազան այլ հանդեսներում ու պարբերականներում, իսկ 1926-27 թթ. լույս է ընծայել «Armenica» հայագիտական հանդեսը։ Վախճանվել է 1940 թ-ին Մյունխենում։ Տե՛ս Հայկականություն և արիականություն, Երևան, 2001, էջ 110-113:

3. ֆոն Լերսի, 1607 Սաքսոնիայի դուքս պրոֆ. ֆոն Սաքսի, 1608 Ա. Ա-

1607. Գրող, հրապարակախոս Յոհան ֆոն Լերսը (կեղծանունը՝ Մ. Թոմաս) ծնվել է 1902 թ-ի հունվարի 25-ին Վիթյուրեում (Մեկլենբուրգ-Ֆորպոմերն)։ Կրկում, Ռոստոկում և Բեռլինում ուսանել է իրավագիտություն և աշխատանքի անցել ԱԳՆ-ում որպես կցորդ։ 1929 թ-ին նա դարձավ նացիոնալ-սոցիալիստական կուսակցության անդամ և ստանձնելով «Wille und Weg» ամսագրի գլխավոր խմբագրի պաշտոնը՝ միաժամանակ կուսակցության հավաքություններում հանդես էր գալիս որպես հռետոր։ 3. ֆոն Լերսը երկրի ուսանողության մարզման ու դաստիարակման պետական կենտրոնի ղեկավարն էր, Բեռլինի քաղաքագիտության համալսարանի արտաքին կապերի բաժնի վարիչը, որտեղ միաժամանակ վարում էր դասախոսական գործունեություն, բացի այդ՝ Բեռլինի Կառավարման ակադեմիայի հետազոտական կենտրոնի ղեկավարը և «Գերմանականությունն արտերկրում» ընկերության նախագահության անդամ։ Նա ի քիվս այլ աշխատությունների գրել է «Հրեաները նայում են քեզ» (1933) աշխատությունը։ 1936 թ-ից ֆոն Լերսը պատմություն էր դասավանդելու Եմայի համալսարանում և միաժամանակ ստանձնել էր Գերմանիայի պրոպագանդայի նախարարության ռասայական հարցերի գծով պատասխանատու աշխատակցի պարտականությունները։ 1945 թ-ին նա Իտալիայով փախավ Արգենտինա, իսկ 1955 թ-ից իսլամականացվելով ապրում էր Եգիպտոսում։ Վախճանվել է 1965 թ-ի մարտին Կահիրեում։ Տե՛ս Deutsche Biographische Enzyklopädie, Bd. 6, München, 1999, 371:

1608. Ֆոն Մաքսը (Սաքսոնիայի դուքս) ծնվել է 1870 թ-ի նոյեմբերի 17-ին Դրեզդենում։ Սաքսոնիայի Գեորգ արքայի որդին ֆրայբուրգում և Լայպցիգում ուսանել է իրավագիտություն և տնտեսագիտություն, 1892 թ-ին ստացել դոկտորի գիտական աստիճան և 1893 թ-ից Այխշտետում շարունակել իր ուսումը աստվածաբանության բնագավառում։ 1893 թ-ին օժվել է քահանա (կաթոլիկ) և քահանայական գործունեություն վարել Լոնդոնում, Այխշտետում ու Նյուրնբերգում՝ որոշ ժամանակ անց, 1898 թ-ին Վյուրցբուրգում ստանալով աստվածաբանության դոկտորի գիտական աստիճան։ 1900 թ-ին նա որպես եկեղեցական իրավունքի և ծիսագիտության պրոֆեսոր մեկնել է Ֆրայբուրգ, որտեղ հիմնականում զբաղվում էր ուղղափառ և հին արևելյան եկեղեցիների ծիսակարգերով։ 1910-14 թթ. նա դասախոսական աշխատանքի անցավ Լեմբերգում, իսկ 1912-14 թթ. Բյուլոնում։ Արևելյան և արևմտյան եկեղեցիների երկխոսությունն առաջին հազարամյակի համաեկեղեցական ժողովների հիմքի վրա կառուցելու՝ իր պնդման հիման վրա նա Դոմոնի պատական իշխանության պահանջով տույժի ենթարկվեց, իսկ Բելգիայում գերմանացիների պատերազմի վարման վերաբերյալ մի դիտողությունից հետո 1916 թ-ին աքսորվեց Վերմորդրֆի դղյակը։ Նա միայն 1921 թ-ին վերադարձավ Ֆրայբուրգ և մինչև իր կյանքի վերջը հիմնականում զբաղվում էր արևելյի ժողովուրդների մշակութային, գրական արժեքների ուսումնասիրությամբ և քահանայական գործունեությամբ։ Մաքսի նախածեռնությամբ լույս է տեսել Ներսես Ասմրոնացու Առակաց և ժողովող գրքերի մեկնությունների գիտական հրատարակությունը գերմաներեն թարգմանության հետ մեկտեղ։ Վախճանվել է 1951 թ-ի հունվարի 12-ին Ֆրայբուրգում։ Տե՛ս Deutsche Biographische Enzyklopädie, Bd. 6, München, 1999, 490: Դմնտ. Դայլակա՛նություն և արիականություն, Երևան, 2001, 105-149

բեղյանի և Գ. Կլիմգեի¹⁶⁰⁹ կողմից:¹⁶¹⁰ Ընդ որում, եթե առաջինը խնդիրը քննարկում էր պատմաբանասիրական տեսանկյունից և ըստ արժանավայն գնահատելով «գերմանացիների հետ լեզվով, հավատով և մշակությամբ ցեղակից հայ ժողովրդի» «հնչյունների վերադարձության հարազատությամբ եվրոպական ժողովուրդների մեծ մասի գրելակերպը մեծապես գերազանցող» այբուբենն, ինչպես և 5-րդ դարից ի վեր ստեղծված «բովանդակային որակով ու լեզվաճական արտահայտչաձևերի կատարելությամբ» աչքի ընկնող պատմագրությունը՝ այն համոզումն էր արտահայտում, որ հայերն արևելյան մյուս ժողովուրդներից շատ ավելի վաղ և շատ ավելի ընդգրկում կապեր են ստեղծել «ժամանակակից արևմտյան գիտության և կրթության հետ», ապա Է. Շքիրը քննության էր ենթարկում գերմանա-հայկական մշակութային փոխառնչությունները: Յ. Ստրիգովսկին իր հոդվածում պարզաբանում էր հայկական ճարտարապետության առանձնահատկությունները՝ վկայակոչելով իր «Հայկական կառուցողական արվեստը և Եվրոպան» գիրքը, իսկ դուքս ֆոն Մաքսը՝ հայ եկեղեցու բնորոշ կողմերն ու «հայկական բարեպաշտությունը»: Ա. Աբեդյանն անդրադառնում էր հայ ժողովրդական բանասիրությունը՝ լուսաբանելով այնտեղ ի հայտ եկող՝ արևմտյան մշակութային տարրերը: Կարլ Ռոթը և Գերհարդ Կլիմգեն Ազգերի գաղթի տեսության դիրքերից պարզաբանումներ էին կատարում հայ մարդու «հոգեկան կերտվածքի յուրահատկությունների» վերաբերյալ: Հայերի արիական պատկանելությունը կասկածից դուրս էր համարում նաև Յոհանն ֆոն Լեբսը՝ վկայակոչելով Գյունտերի՝ «Ռասաների հետազոտությունը» և Յ. Լեփսիուսի «Հայ ժողովրդի մահուղին» գրքում տեղ գտած մի շարք նկարագրություններ: Իսկ Ռ. Շեֆերն իր հոդվածում լուսաբանում էր հայ ժողովրդի «անփոխարինելի նշանակությունը» Առաջավոր Ասիայի մշակութային վերելքի հարցում և ըստ այդմ կոչ էր անում արևմտյան քրիստոնեության այդ «արժեքավոր դաշնակցին» ապահովագրել Արևելքից սպառնացող բոլշևիզմի դեմ պայքարի համար:¹⁶¹¹

1609. Քահանա Գերհարդ Կլիմգեն այդուհետ ևս հանդես էր գալիս հայ եկեղեցուն և հոգևոր դասին վերաբերող մի շարք հրապարակումներով, որոնցից առավել ուշագրավ էր «Հայ եկեղեցու փոխառնչությունները եվրոպական եկեղեցիների հետ» հոդվածը: Տե՛ս Klinge G., Die armenische Kirche in ihrem Verhältnis zu den europäischen Kirchen, „Der Orient“, 1935, էջ 6-12:

1610. Տե՛ս Armeniertum und Ariertum, Potsdam, 1934, էջ 42:

1611. Անդ:

Հայերի պատկանելությունն արիական ռասային անվիճելի էր համարում նաև դր. Պ. Ռոհրբախը՝ դա կասկածի ենթարկող տեսակետներն անվանելով անհեթեթ և «ավելորդ»: «Եթե հայերը չպետք է արիներ լինեն, հայտարարում էր նա իր հողվածում, - ապա, միայն դրպես օրինակ նշելու համար անհրաժեշտ է ասել, որ չպետք է լինեն նաև իտալացիները»:¹⁶¹²

Այդ աշխատությունը, որի եզրափակիչ մասում տեղ էին գտել բազմաթիվ քաղվածքներ նաև Յ. Մարկվարտի, Յոհ. Լեփսիուսի, Հ. Հյուբշմանի, Ֆ. Ն. Ֆինկի, Ֆ. Նանսենի, Մ. Վագների և այլ ուսումնասիրողների ու հայագետների հետազոտություններից,¹⁶¹³ դարձավ հայ ժողովրդի գերմանացի բարեկամների այդ զորեղ համագործակցության պսակը, որը հայության համար նացիոնալ-սոցիալիզմի տարիներին ունեցավ անզերագնահատելի քաղաքական նշանակություն, և որի գիտական ու պատմամշակութային արժանիքներն իրենց արդիականությունը այսօր էլ չեն կորցրել:

Ինչևէ, 1930-ական թթ. սկզբին ծայր առած համաշխարհային տնտեսական ճգնաժամը և խորացող գործազրկությունը Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ից մեծագույն ջանքեր էին պահանջում նաև օգնության աշխատանքները շարունակելու և միաժամանակ միսիոներական ընկերություններին «ազգային ունեցվածքի վատնման» մեջ մեղադրող նացիոնալ-սոցիալիստական պետական հովանավորչությամբ ի հայտ եկած նոր թշնամական մտայնություններին դիմակայելու համար: Միսիոներական ընկերությունների վարկաբեկման այդ քարոզարշավը պարբերաբար ամրապնդվում էր նաև «գործով»: 1932 թ-ին ի հայտ եկան բարեգործական հանգանակությունների առաջին օրենսդրական սահմանափակումները, իսկ 1933 թ-ի սեպտեմբերի 29-ին բարեգործական օգնությունների կանոնավորման պրոսական պետական կոմիսարի հրամանագրով այն հանգանակությունները, որոնք «չէին ծառայում

1612. Անդ, էջ 42: Ռոհրբախն այդ համեմատությունը կատարում էր՝ նկատի ունենալով հայերի սևահերության հանգամանքը:

1613. Անդ, էջ 44-48: Գրքի հրատարակումից հետո Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն իր պարբերականներում հանդես էր գալիս գրախոսականներով և ծանուցումներով՝ ձգտելով աշխատությանը տալ ըստ հնարավորին մեծ հրապարակային հնչեղություն: Տես Fleischmann P., Neues von der deutsch-armenischen Gesellschaft, „Der Orient“, 1934, էջ 12: Հմնտ. Literatur, zu beziehen durch die Missionshandlung, Potsdam, Roonstr. 13, „Orient im Bild“, 1934, էջ 16: Հմնտ. Literatur, zu beziehen durch die Missionshandlung, Potsdam, Roonstr. 13, „Orient im Bild“, 1935, էջ 16 և այլն:

գերմանացի ժողովրդի ծննդային օգնության գործին», արգելեցին:¹⁶¹⁴ Չնայած որոշումը հոկտեմբերի 24-ին դարձյալ չեղյալ հայտարարվեց.¹⁶¹⁵ սակայն շուտով ի հայտ եկան նոր հրամանագրեր ևս, որոնցով վավերացված սահմանափակումները զրեթե համանշանակ էին վերոնշյալ արգելքին: Մասնավորապես 1934 թ-ի հուլիսի 3-ին հրապարակված օրենքով արգելվում էին տներում, փողոցներում, հրապարակներում և այլ հասարակական վայրերում կատարվող հանգանակությունները, բացառությամբ նրանց, որոնք իրագործվում էին եկեղեցում կրոնական միջոցառումների ժամանակ:¹⁶¹⁶ Այդպիսով ընկերությունները զրկվում էին իրենց եկամտի հիմնական աղբյուրներից՝ հարկադրվելով ապավինել եկեղեցական սրահներում կատարվող հավաքումներին, անդամավճարներին և կամավոր նվիրատվություններին:

Այդ սպառնալից իրավիճակում արդյունավետ համագործակցելու և հարկ եղած դեպքում առավել միասնաբար հանդես գալու նպատակով 1933 թ-ի հոկտեմբերին Առաջավոր Ասիայի երկրներում գործող գերմանական բոլոր ավետարանական միսիոներական և բարեգործական ընկերությունները, ներառյալ նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն, միավորվեցին մեկ ընդհանուր՝ «Քրիստոնեական գործ Արևելքում» կառույցում, որն ուներ բացառապես ներկայացուցչական նշանակություն և նրանց իրավունքներն ամենևին չէր նվազեցնում:¹⁶¹⁷ Չնայած նոր կառույցի և մասնավորապես նրա կազմում գործող Միսիոներական ընկերությունների խորհրդի¹⁶¹⁸ օրենսդրության շրջանակներում թույլատրված՝ մի շարք ինքնապաշտպանական ելույթներին և «Քրիստոսի վտանգված գործը» «չթուլացող սիրով և հավատարմությամբ» շարունակելու՝ հասարակությանն ուղղված ուղերձներին,¹⁶¹⁹ այնուամենայնիվ դրանք չէին կարող

1614. St'u Mitteilungen, „Orient im Bild“, 1933, էջ 64:

1615. Անդ:

1616. Schäfer R., Sammelverbot, „Orient im Bild“, 1934, էջ 42:

1617. St'u Kundgebung des Deutschen Evangelischen Missionsrats, անդ, էջ 35: Հմնտ. Christliches Orient-Werk, „Orient im Bild“, 1933, էջ 59:

1618. Կառույցը բաղկացած էր երկու ճյուղերից, որոնցից մեկում ընդգրկվել էին բարեգործական, իսկ մյուսում՝ միսիոներական ընկերությունները: Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն միացել էր երկրորդ խմբին: Անդ:

1619. St'u Die Tagung der Deutschen Evangelischen Missionen in Barmen, անդ, էջ 60: Հմնտ. Kundgebung des Deutschen Evangelischen Missionsrats, „Orient im Bild“, 1934, էջ 35: Հմնտ. Ein Wort der deutschen evangelischen Mission zur gegenwärtigen Stunde, անդ, էջ 45-46:

հակակշիռ դառնալ պետական քաղաքականության և շարունակ խըստացվող սահմանափակումների դեմ: 1934 թ-ի նոյնբերի 6-ին հրապարակվեց մի նոր օրենք, որով արգելվում էին հանգանակությունների կազմակերպման բոլոր տեսակի կոչերը, իսկ դրանց իրականացումը կախման մեջ էր դրվում տեղական իշխանությունների թույլտվությունից: Բացառություն էին կազմում միայն ժամերգությունների և այլ կրոնական արարողությունների ընթացքում կազմակերպվող հանգանակությունները և բարեկանների կամավոր նվիրատվությունները:¹⁶²⁰ Չնայած քարոզչության այդ աննախադեպ սահմանափակումը պրուսական ՆԳ նախարարի՝ 1935 թ-ի մարտի 27-ի որոշմամբ ենթարկվեց որոշ մեղմացումների,¹⁶²¹ սակայն 1937 թ-ի գարնանը ուժի մեջ մտավ մի նոր, հանգանակությունների կազմակերպումը միանգամայն կաթվածահար անող օրինագիծ, որով միսիոներական և բարեգործական ընկերությունների գոյությունը լրջորեն հարցականի տակ էր դրվում:¹⁶²² Ըստ այդ օրենքի հանգանակություններն արգելվում էին նաև եկեղեցական արարողությունների ժամանակ. բացառություն էին կազմում միայն «կանոնավոր» ժամերգությունները, որտեղ, սակայն, դրանց կազմակերպումը կախման մեջ էր դրվում տեղական իշխանությունների թույլտվությունից:¹⁶²³

Ավելորդ է ասել, թե այդ որոշումներն ինչպիսի ծանր հետևանքներ ունեին Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի աշխատանքների համար: Դրանց հաճախակի հերթագայությունը հնարավորություն չէր ընձեռում բավարար չափով օգտվել նույնիսկ թույլատրվող փոքրաթիվ հնարավորություններից, քանի որ, չնայած դրանք կազմակերպության պարբերականներում ինչպես հարկն է՝ լուսաբանվում էին,¹⁶²⁴ սակայն մշտապես փո-

1620. Sb'u Sammelverbot, „Orient im Bild“, 1934, էջ 48: Դմնտ. Sammelverbot, „Orient im Bild“, 1935, էջ 3:

1621. Sb'u Missionssammlungen, անդ, էջ 28:

1622. Sb'u Ministerialerlaß über die Neuordnung des Kollektenwesens, „Orient im Bild“, 1937, էջ 32:

1623. Անդ:

1624. Sb'u Sammelverbot, „Orient im Bild“, 1934, էջ 48: Դմնտ. Missionssammlungen, „Orient im Bild“, 1935, էջ 28: Դմնտ. Mitteilungen, „Orient im Bild“, 1936, էջ 48: Դմնտ. Ministerialerlaß über die Neuordnung des Kollektenwesens, „Orient im Bild“, 1937, էջ 32: Դմնտ. „Kollekten in „kirchlichen Versammlungsräumen“, „Orient im Bild“, 1938, էջ 8:

փոխվող նորմերի սահմաններում աշխատանքի վերակառուցումն անհամեմատ ավելի մեծ ժամանակ էր պահանջում: Մյուս կողմից մեծ թիվ էին կազմում նաև այդ փոփոխությունների վերաբերյալ բավարար իրազեկում չունեցող տեղական իշխանությունների կամայականությունները, որոնց պատճառով հաճախակի արգելվում և խոչընդոտվում էին նույնիսկ միանգամայն օրինական միջոցառումները:¹⁶²⁵

Ի լրումն վերոնշյալ արգելքների, 1934 թ-ի երկրորդ կեսից ի հայտ եկան նաև առաջին այսպես կոչված «դևիզային սահմանափակումները», որոնցով միսիոներական կամ բարեգործական նպատակներով Գերմանիայից կանխիկ դրամի արտահանումը փաստացիորեն արգելվեց:¹⁶²⁶ Դրանցով զբաղվելու համար Ավետարանական միսիաների խորհուրդը 1934 թ-ի սեպտեմբերին հիմնեց մի ներկայացուցչական մարմին կամ այլ կերպ ասած՝ «Միսիոներական դևիզային հաճանաժողով», որը լիազորված էր բանակցություններ վարել իշխանությունների հետ և չնայած կարողացավ հասնել այն բանին, որ խորհրդին անդամակցող ընկերությունների համար որոշ հատկացումներ թույլատրվեց, սակայն դրանք չափազանց չնչին և անբավարար էին աշխատանքների շարունակման համար:¹⁶²⁷ 1934 թ-ի հուլիսից դեկտեմբեր ընկած վեցամսյա ժամանակահատվածի համար, օրինակ, Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ին կատարվեց միայն 1258, 56 մարկի մասհանում, այն դեպքում, երբ այդ ժամանակամիջոցում մասնաճյուղերում աշխատանքները շարունակելու համար ընկերությանն անհրաժեշտ էր նվազագույնը 25000 մարկի ներդրումներ կատարել:¹⁶²⁸ Դևիզային որոշումները նույն խստությամբ շարունակեցին գործել նաև հետագա տարիներին՝ վերոնշյալ մյուս արգելքների հետ ստեղծելով մի իրավիճակ, որի հաղթահարումն այլևս կատարելապես անհնար էր թվում, և հարկ է նշել, որ միայն Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի անսպառ նվիրումի, հավատի և հանդուգն վճռականության շնորհիվ էր, որ դրանք նրա հայ պաշտպանյալների համար ճակատագրական չդարձան:

1625. Schäfer R., *Sammlungsschwierigkeiten*, „Orient im Bild“, 1936, էջ 4:

1626. Schäfer R., *Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission*, „Orient im Bild“, 1935, էջ 10-11:

1627. Անդ:

1628. Անդ:

Մինչև իսկ հիշյալ սահմանափակումների պայմաններում իր հայա-
 նվեր աշխատանքները շարունակելու համար ընկերությունը մշտապես
 հարկադրված էր դիմակայել նորանոր թշնամական մարտահրավերների,
 որոնց հեղինակները փորձում էին վիճարկել այդ աշխատանքների և նույ-
 նիսկ ընկերության գոյության անհրաժեշտությունը: Մասնավորապես
 1934-36 թվականներին մի շարք լրատվամիջոցներում առանձնակի լայն
 շահարկում էր ստացել այն տեսակետը, թե անհրաժեշտ է արգելել «գեր-
 մանական քրտինքի գրոշներն» արտասահման ուղարկող՝ այդ և մյուս
 կազմակերպությունների գործունեությունը, քանի որ դրանով «հայրենի-
 քին» նյութական վնաս էր պատճառվում:¹⁶²⁹ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն վատ-
 թարագույն հետևանքներով հղի այդ մեղադրանքներին արժանի հակա-
 հարվածներ էր տալիս՝ ի ցույց հանելով դրանց սնանկությունն ու հետին
 միտումները: Իր «Նրա գթասրտությունը դեռ վախճան չունի» հոդվածում,
 օրինակ, Պ. Ֆլայշմանը սուր սարկազմով էր անդրադառնում այդ քննա-
 դատներին՝ նրանց խորհուրդ տալով զբաղվել ծխախոտի կամ ալկոհոլի
 համար արտասահմանում կատարվող ներդրումներով, որոնք «հարյու-
 րապատիկ և հազարապատիկ» անգամ ավելի մեծ լինելով հանդերձ՝ հա-
 սարակական մտահոգության առարկա չէին դառնում:¹⁶³⁰ Ի հիմնավո-
 րումն դրա, իր մեկ այլ «Խոսք տնտեսավարների» հրապարակման մեջ
 նա ներկայացնում էր ճշգրիտ վիճակագրական տվյալներ ազգային
 եկամտի շուրջ 1/6-րդ մասը կազմող՝ ալկոհոլի և ծխախոտի համար կա-
 տարվող ներդրումների վերաբերյալ՝ այդպիսով փաստացիորեն ջախջա-
 խելով իր քննադատների տնտեսավարական դեմագոգիան:¹⁶³¹

Չանագան, այդ թվում պետական քաղաքականությանը տուրք
 տվող որոշ եկեղեցական շրջանների կողմից քննադատություններ
 էին տեղում նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի գործունեության «ոչ միսիո-

1629. Sб'u Mitteilungen, „Orient im Bild“, 1934, էջ 44: Գնմտ. Fleischmann P.,
 Seine Barmherzigkeit hat noch kein Ende! „Orient im Bild“, 1935, էջ 1:

1630. «Ի վերջո մեզ այն հին, մեր Առաքելության չափ հին և ամբողջովին բզկտված
 փաստարկը ուղղվեց, թե մեր սեփական ժողովուրդը քավականաչափ զրկանքներ
 ունի, և այդ պատճառով... պետք է դադարենք գերմանական քրտինքի գրոշներն ու-
 դարկել արտասահման, - նշված էր հրապարակման մեջ:՝ Մշտապես տարօրինակ
 է մնում, որ նույն մարդիկ, որոնք իրենց այդքան մտահոգված են ներկայացնում որևէ
 առաքելական նպատակով ծախսված պֆենիգի համար, նման մտահոգություն չեն
 դրսևորում, օրինակ, ծխախոտի համար արտերկիր մեկնող հարյուրապատիկ և հա-
 զարապատիկ ավելի մեծ գումարների առնչությամբ»:Անդ:

1631. Sб'u Ein Wort an die „Sparsamen“, „Orient im Bild“, 1936, էջ 4:

ներական» նկարագրի վերաբերյալ, որը նրանց ծառայում էր պատրդվակ ընկերության գոյության ամհրաժեշտությունը վիճարկելու համար: Ուստի պատահական չէ, որ այդ մշտապես մնում էր ընկերության մարտընչող հրապարակախոսության ամենաարդիական թեմաներից մեկը: Հենց միայն այն փաստը, նշում էր այդ առթիվ Պ. Ֆլայշմանն իր «40 տարվա միսիոներական աշխատանք Արևելքում» հոդվածում, որ առանց ընկերության աջակցության «հարյուրավոր հայ երեխաներ կկործանվեին». բավական էր, որպեսզի նրա գոյությունը արդարացվեր:¹⁶³² Նախագահի համոզմամբ դա շատ ավելի մեծանշանակ և աստվածահաճո առաքելություն էր, քան այն ավանդական «միսիոներությունը», որի դիրքերից փորձում էին հանդես գալ իր քննադատները: Դրա լավագույն հիմնավորումը տալիս էր նաև Աստվածաշունչը. «Գթասիրտ սամարացին մարդասպանների մեջ ընկածին չքարոզեց, այլ կապեց նրա վերքերը և տարավ ծածկի տակ,- գրում էր այդ առթիվ Պ. Ֆլայշմանը: Մեր միսիայի պատմությունը հենց այդ տեսանկյունից է շատ ուսանելի: Այն հիմնադրվեց որպես մահմեդական շրջաններում գործող միսիա և դարձավ բարեսիրական գործունեություն դժբախտ հայ ժողովրդի համար ... Այդ մեր Լեփսիոսի միսիայի փառքն է, որ մենք տասնամյակներ շարունակ հայերի մեջ աշխատելով՝ երբեք չենք փորձել նրանցից որևէ մեկին օտարացնել իր ազգային եկեղեցուց...»:¹⁶³³

Ուժգնացող հրապարակային հարձակումների դեմ Դր. Լեփսիոսի ԳԱԱ-ի ինքնապաշտպանական ելույթները հատկանշվում էին այդ ժամանակ նույնիսկ անթույլատրելի թվացող հավատի, սիրո և փորձությունների լեփսիոսյան դպրոցն անցած համարձակությամբ:

1632. Fleischmann P., 40 Jahre Missionsarbeit im Orient, „Orient im Bild“, 1935, էջ 33:

1633. Fleischmann P., Gehet hin und lehret alle Völker!, „Orient im Bild“, 1936, էջ 25:

Ի պատասխան քարոզչության խնդրի նորոտյա շահարկումներին, Դր. Լեփսիոսի ԳԱԱ-ն դեռ 1933 թ-ին վերստին լույս ընծայեց այդ առնչությամբ Լեփսիոսի կողմից կատարված պարզաբանումներից մեկը, որը մշտապես բնութագրական էր եղել ընկերության գործունեության համար. «Արևելքում կատարվելիք աշխատանքը, որին բոլոր մյուսներից առաջ կոչված է ավետարանական Գերմանիան, ո՛չ ավետարանականացման և ո՛չ էլ այդ իմաստով միսիոներական կարող է լինել: Այն պետք է լինի հոգևոր աշխատանք, որը հին եկեղեցիների կրթական և քրիստոնեական մակարդակը կբարձրացնի...: Միայն նա, ով Աստծո ճանապարհները պատմության մեջ չգիտի, կարող է հավատալ, թե անգլիական, ամերիկյան կամ գերմանական քրիստոնեության անգույն պատճենումը կարող է ինչ-որ ազդեցություն գործել Արևելքի ներքին զարգացման վրա: Տե՛ս անդ, 1933, էջ 13:

«Հարց է առաջադրվել, թե արդյոք մեր և մեզ նման կազմակերպությունները գոյության իրավունք ունեն, թե ոչ...,- գրում էր Պ. Ֆլայշմանը 1935 թ-ին:- Մենք այդ հանգիստ լսում ենք և զվարթ շարունակում մեր ճանապարհը: Մեր Յոհաննես Լեփսիուսն այն ժամանակ, 1895 թ-ին, նմանապես քիչ է եկեղեցական իշխանություններից թույլտվություն խնդրել, երբ վտանգված հայ քրիստոնյաների ճիչն Արևելքից հասավ այստեղ, և հարցը վերաբերում էր նրանց օգնելուն և փրկելուն: Նաև 20 տարի անց նա չանսաց պետական և եկեղեցական իշխանություններին, այլ պարզապես արեց այն, ինչին իրեն համարում էր կոչված: Այդպես և մենք կշարունակենք անել այն, ինչին մեզ համարում ենք կոչված: Աստծո գործերում կա մի ատյան, որի առաջ կշռադատող, խորհրդածող բանականության բոլոր առարկությունները պետք է համրանան...»: ¹⁶³⁴

Այդ աներեր վճռականությունը Դր. Լեփսիուսի ԳՎԱ-ին չլքեց նաև հետագայում, երբ նացիոնալ-սոցիալիստական պրոպագանդայով պայմանավորված գաղափարական հեղաբեկումները և զուգահեռաբար նաև ընկերության հայանվեր գործունեության դեմ ծավալվող քարոզարշավը աննախադեպ մեծ չափեր ընդունեցին: Վերջինս մշտապես գործում էր աստվածաշնչյան անձնագոհության ելակետով ուղեմիշ ունենալով իր հիմնադրի և առաջնորդի դասական օրինակը, չնայած անցնող յուրաքանչյուր ժամ հազեցած էր նաև երբևէ աշխատանքի վերջնական դադարեցման հարկադրանքի առաջ կանգնելու տագնապներով: «Եկան օրեր և ժամեր,- գրում էր Պ. Ֆլայշմանը դեռ 1935 թ-ին,- երբ մեզ կարող էր երկյուղը համակել, երբ մեզ թվում էր, թե բոլոր երկրային և սատանայական ուժերը միավորվել են մեր Տիրոջ միսիայի պատվիրանի դեմ, երբ մեզ առարկայացել էր հետևյալ հարցը. դեռ որքա՞ն կկարողանանք դիմանալ... Երբ, սակայն, ետ ենք նայում անցած ծանր տարվա վրա, շնորհակալության ջերմ զգացումն է մեր մեջ արթնանում: Նրա գթասրտությունը դեռ վախճան չունի: Կայա Փունարի մեր որբանոցը դեռ այնտեղ է ... Շարունակվում է նաև Հալեպի մեր որբախնամ աշխատանքը...»: ¹⁶³⁵

1634. Fleischmann P., 40 Jahre Missionsarbeit im Orient, „Orient im Bild“, 1935, էջ 33-34:

1635. Fleischmann P., Seine Barmherzigkeit hat noch kein Ende!, „Orient im Bild“, 1935, էջ 1:

Ինչ վերաբերում էր «մթին» ապագային, ապա ընկերությունն այն շարունակ մտահայում էր նոր մարտահրավերներին մինչև վերջին շունչը դիմագրավելու վճռականությամբ և նահատակության պատրաստ «առաքյալի» հանգստությամբ: «Ոչ ոք չգիտի, թե եկող տարին ինչ կրե-րի մեր ընկերությանը: ...Սակայն որքան էլ ծանր և լուրջ ժամանակ է մեզ սպասում, մեկ ճշմարտություն նորից ի հայտ կգա. այն, որ մասնավորա-պես նահատակության ժամանակները Հիսուսի եկեղեցու համար իսկա-կան օրհնության ժամանակներ էին: Թե արդյոք մենք իսկապես լրջո-րե՞ն ենք ընկալել Լուսբերի երգի վերջին տունը՝ «Վերցրեք մեր մարմի-նը», պարզ կդառնա միայն այն ժամանակ, երբ հավատի ամենաուժեղ փորձությանը կդիմանանք»: ¹⁶³⁶

Ընկերությունն իր հայանվեր գործունեության հրապարակային պաշտպանությունը հետևողականորեն շարունակեց նաև հաջորդ տարիներին: Այդ առումով թերևս առանձնակի հիշատակության է ար-ժանի Պ. Ֆլայշմանի՝ 1937 թ-ին հրատարակված՝ «Ինչու՞ ենք մենք դեռ շարունակ հոգ տանում հայ որբերի համար» հոդվածը, որտեղ նա 10 առանձին կետերով փորձում էր տալ այդ հարցի սպառիչ պատաս-խանը: ¹⁶³⁷ Ընդ որում ուշագրավ է, որ հոդվածում բարոյագիտական և քրիստոնեական-աստվածաշնչյան հիմնավորումների կողքին առանձին կետով վկայակոչվում էր նաև հայերի «ռասայական ցեղակ-ցության» հանգամանքը, որից գերմանացի ժողովրդի համար այս-պես կոչված՝ «առանձնահատուկ պարտավորություններ էին ածանց-վում»: ¹⁶³⁸ Այդ պարզաբանումներն ու հիմնավորումներն իրենց նորո-վի արտացոլումը գտան ստացան նաև 1938 թ-ին հրապարակված մի շարք այլ հոդվածներում: ¹⁶³⁹ Եվ այնուամենայնիվ անցնող յուրա-քանչյուր տարվա հետ ավելի և ավելի ընդգծուն էին դառնում նաև նացիոնալ-սոցիալիստական գաղափարների հաղթարշավով և օգ-նության աշխատանքների առկախման «աղետալի» նախազգաց-

1636. Ամդ, էջ 1-2:

1637. Fleischmann P., Warum wir uns immer der armenischen Waisen annehmen, „Orient im Bild“, 1937, էջ 23-24:

1638. Ամդ, էջ 23:

1639. Sb'u Fleischmann P., Gott ist Liebel, „Orient im Bild“, 1938, էջ 13; Fleischmann P., Durchhalten, ամդ, էջ 33 և այլն:

մամբ պայմանավորված ահազանգի և տագնապի շեշտադրումները, որոնց, սակայն, միշտ հաջորդում էր անվերապահ լավատեսությունը. «Արդյոք Աստծո՞ կամքն է, կարո՞ղ է Աստծու կամքը լինել, որ մենք մեր ծեռքը ետ քաշենք մեր սիրելի անհայր, անմայր և անհայրենիք երեխաների վրայից, որոնք մեզնով դրսում իրենց պաշտպանված են զգում, դադարեցնենք մի գործ, որն այդքան զոհաբերություններ է պահանջել և շարունակ կարողացել է բոլոր զրկանքները հաղթահարել: Սակայն միշտ, երբ նման երկյուղ է ուզում մեզ պատել, հառնում է մեր աչքի առջև Նա, որը մի ժամանակ փոթորկի ու ալիքների ճնշման տակ իր աշակերտներին ասել է. «Օ, դուք, թերահավատներդ, ինչու՞ եք այդքան վախկոտ»: ...Մենք շարունակելու ենք նրան ապավինել և երբեք չենք վհատվի»:¹⁶⁴⁰

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն չընկրկեց ստեղծված իրավիճակից և թույլատրելի բոլոր նույնիսկ ամենաչնչին հնարավորությունների օգտագործման և, որ առավել ուշագրավ է, օրենսդրական խոչընդոտների բավական հանդուգն ու հնարամիտ շրջանցումների գնով կարողացավ շարունակել իր հայանվեր աշխատանքները: Եթե, օրինակ, իշխանությունների կողմից բարեգործական և միսիոներական կազմակերպությունների հանդեպ տարբերակցված մոտեցումներ էին դրսևորվում, ապա ընկերությունը ձգտում էր հանդես գալ առավել մեղմ սահմանափակումների ենթակա կարգավիճակով:¹⁶⁴¹ Մեկ այլ դեպքում արգելքները շրջանցելու նպատակով բարեկամներին հրապարակայնորեն առաջարկվում էր նվիրատվությունները կատարել անդամավճարների անվան տակ: «Ամենագործնական ելքն այն կլինի, - նշված էր, օրինակ, 1934 թ-ի հուլիսի 3-ի արգելմանը վերաբերող պարզաբանման մեջ,- որ մեր բարեկամներն ընթացիկ ժամանակամիջոցում իրենց կանոնավոր նվիրատվություններն անվանանշեն որպես անդամավճարներ, իսկ մենք նրանց բոլորին կկարողանանք ընդգրկել անդամների ցուցակում: Մեր առաջադրանքներն իրականացնել կարողանալու համար մեր ընդհանուր սերը և զոհաբերման պատրաստակամությունը պետք է այդ ձևը ստանան»:¹⁶⁴²

1640. Fleischmann P., „Uns ist bange, aber wir verzagen nicht“, „Orient im Bild“, 1937, էջ 29:

1641. St'u Missionssammlungen sind erlaubt, „Orient im Bild“, 1934, էջ 19:

1642. Schäfer R., Sammelverbot, անդ, էջ 42-43:

Մամուլի, շրջիկ զեկուցումների, ֆիլմերի և թուղիկների միջոցով շարունակվեց նաև օգնության աշխատանքների պրոպագանդան:¹⁶⁴³ Ընդ որում առանձնահատուկ սահմանափակում չունեցող շրջիկ զեկուցումների հնարավորություններից առավելագույնս օգտվելու նպատակով բուն զեկուցողներից գատ այդ գործին լծվեցին նաև կազմակերպության մյուս աշխատակիցները:¹⁶⁴⁴ 1936 թ-ին պատրաստվեցին և շրջանառության մեջ դրվեցին նաև «Կայա Փունար, հայկական հայրենիք օտարության մեջ» և «Հալեպ, հնագույն քրիստոնյա ժողովրդի փրկության նավահանգիստը» ֆիլմերը, որոնք մեծ հաջողություն ունեցան նպաստելով բարեկամների շրջանի ընդլայնմանը:¹⁶⁴⁵

Նշված միջոցառումների շնորհիվ Պ. Լեփսիուսի ԳԱԱ-ն կարողացավ բարեկամների հետ իր կապը պահպանել և նրանց աջակցությամբ ձեռնամուխ լինել օգնության աշխատանքների շարունակմանը, եթե նույնիսկ դրա համար անհրաժեշտ էր դիմել մի շարք ծայրահեղ խնայողությունների. 1934 թ-ի հոկտեմբերին Բուլղարիայի մասնաճյուղը լուծարվեց:¹⁶⁴⁶ Դեկտեմբերի 31-ին ընդհատվեց նաև «Der kleine Orient» պարբերականի հրատարակությունը, որի բաժանորդներն այդուհետ ստանում էին «Orient im Bild»-ը,¹⁶⁴⁷ իսկ Կայա-Փունարի որբանոցային համալիրի շինարարությունը վերջնականապես ավարտելու համար 1934 թ-ի աշնանը վաճառվեց Բեդրոսիեի հողամասը:¹⁶⁴⁸

1643. Տե՛ս Unseren Freunden... „Orient im Bild“, 1937, էջ 12: Հմնտ. Gemeinde-Abende, „Orient im Bild“, 1936, էջ 40: Հմնտ. „Mitteilungen“, „Orient im Bild“, 1938, էջ 36:

1644. Անդ:

1645. Տե՛ս Mitteilungen, „Orient im Bild“, 1936, էջ 16: Հմնտ. Gemeinde-Abende, աճդ, էջ 40: Հմնտ. Aufführung der Kaja Punar-Filmreihe in Radebeul, „Orient im Bild“, 1937, էջ 32: Հիշատակված առաջին ֆիլմը քաղկացած էր 70, իսկ երկրորդը՝ 82 լուսանկարներից: Տե՛ս Gemeinde-Abende, „Orient im Bild“, 1936, էջ 40: Ֆիլմերը շրջիկ զեկուցումների ընթացքում օգտագործվելուց գատ անհատույց առաքվում էին նաև բուրդ ցանկացողներին: Անդ:

1646. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1935, էջ 11: Այն հիմնվել էր 1930 թ.-ի հոկտեմբերին Բուլղարիայի մահձեղական շրջաններում քրիստոնեական քարոզչություն իրականացնելու համար: Այնտեղ գործող քարոզիչ Հոպեն ետ կանչվեց Գերմանիա: Անդ:

1647. Տե՛ս Wichtige Änderung, „Orient im Bild“, 1934, էջ 48: Հմնտ. Mitteilungen, „Orient im Bild“, 1935, էջ 4:

1648. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, աճդ, էջ 11: Հողամասը վաճառվեց մի քնսարքի հայի: Տե՛ս Schneider G., Und wieder Bedrosieh..., „Orient im Bild“, 1936, էջ 39:

Ինչ վերաբերում էր դևիզային արգելքներին, ապա ընկերությանն այլ ելք չէր մնում, քան դրանը վերածել ապրանքի և կատարել ապրանքային առաքումներ, որոնց վերաբերյալ սահմանափակումներ չկային: Այդ դեպքում անշուշտ առաջանում էր լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն, քանի որ նույնատեսակ ապրանքները Սիրիայում կարող էին ավելի մատչելի գներով ձեռք բերվել, քան Գերմանիայում, և բացի այդ որոշակի հատկացումներ պետք է կատարվեին նաև դրանց առաքման համար: Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն, սակայն, իր հայ պաշտպանյալներին հասանելի դառնալու այլ հնարավորություն չունեի, և 1934 թ-ից մուտք գործող գումարները Հալեպ և Կայա-Փունար էին առաքվում գերազանցապես ապրանքների տեսքով, որոնց տեսականին խիստ բազմազան էր:¹⁶⁴⁹

Փորձություններով լի այդ տարիները ընկերության համար հատկանշավեցին նաև անձնակազմի կորուստներով և համալրումներով: 1934 թ-ի հոկտեմբերի 7-ին, 81 տարեկան հասակում վախճանվեց հոգաբարձության անդամ պրոֆ. Բ. Լեփսիուսը:¹⁶⁵⁰ 1935 թ-ի ապրիլի 26-ին, երկարատև հիվանդությունից հետո կյանքից հեռացավ նաև շրջիկ գեկուցող Լ. Ույնմյուլերը, որը վեց և կես տարի անընդմեջ իր ներդրումն էր բերել ընկերության հայանվեր աշխատանքներին:¹⁶⁵¹ Իսկ 1937 թ-ի հունվարի 1-ից վաստակած հանգստի անցավ գրասենյակի ղեկավարը Ռ. Շեֆերը:¹⁶⁵² Հեռացած աշխատակիցների փոխարեն ծառայության ընդգրկվեցին նորերը, որոնք հավատարմությամբ շարունակեցին նրանց գործը:

Արտաքին մարտահրավերներին համատեղ դիմակայելու անհրաժեշտությունը 1930-ական թթ. երկրորդ կեսին գերմանական միսիոներական ընկերություններին դրդում էր ամրապնդել ոչ միայն բազմակողմ, այլև երկկողմ կապերը: Խոշոր ընկերությունների հետ երկկողմ կապերի խորացումը և այդպիսով ի դեմս նրանց «նոր հեռակետերի» ձեռք բերումը մեծ կարևորություն ուներ հատկապես փոքր և միջին ընկերություններին:

1649. Ուղարկվում էին հազուստներ, կտորեղեն, կենսամթերք, դեղորայք, գյուղատնտեսական գործիքներ, շարժական գույք և մնացյալ ամեն բան, ինչի կարիքը Հալեպի և Կայա-Փունարի երեխաներն ունեին: Sb'u Schäfer R., *Sammelvebot*, „Orient im Bild“, 1934, էջ 43: Հմմտ. Schäfer R., *Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission*, „Orient im Bild“, 1935, էջ 11:

1650. Fleischmann P., *Professor Bernhard Lepsius*, „Orient im Bild“, 1934, էջ 42:

1651. Sb'u *Mitteilungen*, „Orient im Bild“, 1935, էջ 28:

1652. Sb'u *Mitteilungen*, „Orient im Bild“, 1937, էջ 4:

րի համար: Ելնելով այդ հանգամանքից հոգաբարձությունը 1936 թ-ի վերջին նպատակահարմար դիտեց առանձնացնել ընկերության տնօրենի և նախագահի՝ ժամանակավորապես համատեղված լիազորությունները՝ Պ. Ֆլայշմանին հանձնարարելով տնօրենի պարտականությունները. իսկ նախագահի հաստիքը տրամադրվեց Բեռլինի ավետարանական միսիոներական ընկերության ղեկավար այրերից մեկին՝ դր. Կնակին:¹⁶⁵³

Կատարվեցին մի շարք այլ կարևոր նշանակումներ ևս. 1937 թ-ի ամռանը կազմակերպության գրասենյակի ղեկավար նշանակվեց մասնագիտությամբ իրավաբան և տնտեսագետ Էդմունդ Մինկները, որն իբրև Բեռլինի միսիոներական ընկերության գործերի կառավարիչ երկար տարիներ աշխատելով արտերկրում՝ այդ ասպարեզում բավական հարուստ փորձ էր կուտակել:¹⁶⁵⁴ Ընդլայնվեց նաև հոգաբարձությունը, որի կազմում 1935 թ-ին ընդգրկվեցին պրոֆ. դր. Գ. Աշկեն, հարկային տեսուչ Պֆանշմիդտը և Լայբլինը:¹⁶⁵⁵ 1937 թ-ի սկզբին գրախանութի ղեկավարումը ստանձնելու համար հրավիրվեց մեկ այլ աշխատակից ևս՝ Յոհաննես Նուբցենը,¹⁶⁵⁶ իսկ 1938 թ-ին որպես շրջիկ գեկուցող աշխատանքի ընդունվեց երիտասարդ աստվածաբան, օժտված հռետոր Յելմուտ Մյուլերը՝ մեծ նպաստ բերելով քարոզչության հետագա զարգացման գործին:¹⁶⁵⁷

Դր. Լեփսիմուսի ԳԱԱ-ն իր պարբերականներում 1933 թ-ից հետո հետևողականորեն շարունակեց նաև հայոց պատմության և մշակույթի լուսաբանումը՝ այդ արժևորելով ոչ միայն երկու «ցեղակից ազգերի» մշակութային կապերի խորացման, այլև ստեղծված ծանր իրավիճակում օգնության աշխատանքներին հասարակական աջակցությունն առավելագույնս ապահովելու առումով: Այդ առթիվ թերևս ա-

1653. Fleischmann P., Jahresbericht 1936 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1937, էջ 19: Այդպիսով ընկերությունն իր ինքնուրույնությունից ամենևին չէր զրկվում: Նրա փաստացի ղեկավարումն, ինչպես նախկինում, իրականացնում էր Պ. Ֆլայշմանը, իսկ նոր նախագահական պոստն ուներ հիմնականում ներկայացուցչական նշանակություն՝ ի դեմս Բեռլինի միսիոներական ընկերության և նրա բարեկամների, նպաստելով նոր ազդեցիկ դաշնակիցների ձեռքբերմանը:

1654. Fleischmann P., Ein Willkommensgruß, „Orient im Bild“, 1937, էջ 32:

1655. Sbtu Mitteilungen, „Orient im Bild“, 1935, էջ 28: Հմմտ. Mitteilungen, անդ, էջ 48:

1656. Sbtu Mitteilungen, „Orient im Bild“, 1937, էջ 4:

1657. Sbtu Mitteilungen, „Orient im Bild“, 1938, էջ 36: Հմմտ. Unsere Vortragsreisen im Winterhalbjahr, „Orient im Bild“, 1939, էջ 32:

ռանձին հիշատակման է արժանի Գոթհարդ Յաչկեի՝ 1934 թ-ի հոկտեմբերին լույս տեսած «Հիշողություններ Արթուր Լայսթի մասին» հոդվածը, որտեղ հեղինակը, լուսաբանելով հայ մշակույթի հետ հայտնի գերմանացի հետազոտողի ունեցած երկարամյա փոխառնչությունները, ընթերցողին էր ներկայացնում նաև այն հայ գրողների «աստեղաբույլը», որոնք եղել էին Ա. Լայսթի ստեղծագործական ոգորումների առանցքը:¹⁶⁵⁸ Միաժամանակ թարգմանաբար գերմանացի ընթերցողին էին ներկայացվում նաև հայ գրական և բանահյուսական ստեղծագործություններ,¹⁶⁵⁹ ասույթներ և ասացվածքներ,¹⁶⁶⁰ Ներսես Շնորհալու,¹⁶⁶¹ Կոմիտաս կաթողիկոսի ստեղծագործությունները¹⁶⁶² և այլն:

Պարբերականներում մինչև այժմ էին հաջորդում ընկերության աշխատակիցների և բարեկամների կողմից հեղինակված բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից յուրաքանչյուրը նոր և ուրույն կողմերով էր լուսաբանում հայոց պատմական անցյալը և մշակույթի նվաճումներն ու առանձնահատկությունները: Գ. Հեթցելն, օրինակ, իր «Հայերը և Աստվածաշունչը» հոդվածում պարզաբանում էր Հայաստանում քրիստոնեության ընդունման և Աստվածաշնչի հայերեն թարգմանման պատմությունը՝ զուգահեռաբար ներկայացնելով «հնագույն» քրիստոնյա ժողովրդի մանրանկարչության ընտիր նմուշներ:¹⁶⁶³ Իսկ նույն տարում հրատարակված իր մեկ այլ՝ «Անին՝ 1001 եկեղեցիների քաղաքը» ծավալուն հոդվածում նա ներկայացնում էր Հայաստանի 10-14 դարերի հերոսական պատմությունը և կատարում ուշագրավ պարզաբանումներ այդ շրջանի հայ ճարտարապետության նվաճումների մասին:¹⁶⁶⁴

1658. Jäschke G., Erinnerung an Arthur Leist, „Der Orient“, 1934, էջ 108-109:

1659. St'u Aus den Liedern eines Einsamen, անդ, էջ 138-140: Հմնս. Armenisches Lied, „Orient im Bild“, 1937, էջ 24:

1660. St'u Aus der Spruchweisheit Bayezids, „Der Orient“, 1935, էջ 65:

1661. Hetzel G., Ani, die Stadt der 1001 Kirchen „bin bir killissee“, անդ, էջ 36:

1662. St'u Aus einem Hymnus des armenischen Katholikos Komitas, „Der Orient“, 1939, էջ 78:

1663. Hetzel G., Die Armenier und die Bibel, „Orient im Bild“, 1935, էջ 27:

1664. Hetzel G., Ani, die Stadt der 1001 Kirchen „bin bir killissee“, „Der Orient“, 1935, էջ 33-37: «...Նախկինում այնքա՛ն հրաշագեղ այդ քաղաքը նստած է իր ավերակների վրա և ողբում է ու ողբում,- գրում էր Գ. Հեթցելն իր եզրափակիչ տողերում: - Միթե՞ այստեղ ոչ ոք չկա, որ կարեկցի նրան և նրան արարող հայ ժողովրդին: Ե՞րբ է Մասիսը՝ Հայաստանն իր հովանու տակ պահող Արարատը, ուղարկելու իր ավետիսը. Անի՛, բավական է արտապես... Ե՞րբ, այո, Ե՞րբ»: Անդ, էջ 37:

Հրապարակվում էին ուշագրավ հետազոտություններ նաև հայ եկեղեցու անցած պատմական ուղու. նրա առանձնահատկությունների և հայ ու եվրոպական եվրոպական եկեղեցիների փոխառնչությունների պատմության վերաբերյալ.¹⁶⁶⁵ «Մենք այստեղ հաճախ ենք հանդիպում հայ քրիստոնյաների. բայց հազվադեպ ենք հաղորդակից դառնում հայկական քրիստոնեությանը,- նշում էր Պ. Ֆլայշմանն իր հոդվածներից մեկում: - Եվ հենց այդ է, որին արժե մեծ ուշադրություն նվիրել: Քանի որ դա նախ և առաջ մի ժողովրդի քրիստոնեությունն է, որն իրավամբ համարվում է հնագույն քրիստոնյա ժողովուրդը: Եվ բացի այդ դա մի քրիստոնեություն է, որն ամենասերտ կերպով միահյուսված է ազգայնության հետ, այնպես որ գոնե միջև այժմ մեկն առանց մյուսի հնարավոր չի եղել պատկերացնել: Վերջապես, ինչպես Արևելքի մյուս եկեղեցիները և հավանաբար շատ ավելի մեծ չափով, քան նրանք, այն իր ժամերգությունում և կառավարման ոլորտում կրում է հնագույն, մասամբ չափազանց արժեքավոր գանձեր, որոնք անհրաժեշտ են առաջին հարյուրամյակների քրիստոնեությունն ընկալելու համար»:¹⁶⁶⁶

Բնականաբար անաչառ գնահատման էր ենթարկվում նաև համաշխարհային քրիստոնեության համար հայ եկեղեցու ունեցած պատմական դերն ու նշանակությունը: «Հայ եկեղեցին հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ բառի բուն իմաստով գտնվում է մոր և մանկան փոխհարաբերության մեջ,- նշում էր Պ. Ֆլայշմանն իր վերոնշյալ հոդվածում: - Երեխան կարող է մտավորապես մորը վաղուց գերազանցած լինել, կարող է մոր տեսակետներից և սովորույթներից դժգոհ լինել, սակայն մայրը մնում է մայր...»:¹⁶⁶⁷

ԳԱՍ-ի հրապարակախոսության կիզակետում էր շարունակում մնալ նաև հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը՝ Մեծ Եղեռնը, որն իր զարհուրելի մանրամասներով վերստին առարկայացավ Կ. Յեպեի որ-

1665. Klinge G., Die armenische Kirche in ihrem Verhältnis zu den europäischen Kirchen, անդ, էջ 6-12; „Zum armenischen Bibeljubiläum“, անդ, էջ 86-89; Fleischmann P., Armenisches Kirchentum, „Der Orient“, 1937, էջ 57-60; Witzemann H., Das heilige Öl der gregorianischen Kirche, անդ, էջ 38-40; Fleischmann P., Vom armenischen Christentum, „Orient im Bild“, 1937, էջ 17-18; Loefner A., Die armenische Kirche in Ostgalizien, „Der Orient“, 1938, 45-51 և այլն:

1666. Fleischmann P., Armenisches Kirchentum, „Der Orient“, 1937, էջ 57:

1667. Անդ:

ղեգրի Մ. Մելքոնյանի կողմից հեղինակված հուշերում: Նրա և նրա բախտակիցների գրկանքներն ու Կ. Յեպեի փրկարար առաքելությունը վերապատմող ընդարձակ հուշապատում-հողվածաշարի հրապարակումը, սկսվելով 1936 թ-ի ապրիլից, ավարտվեց միայն 1938 թ-ի մարտին՝ երկու տարի շարունակ ընթերցողին իրագեկում տալով անպատիժ մնացած այդ ոճրագործության բնույթի, ընթացքի և հետևանքների մասին:¹⁶⁶⁸ Ի լրումն դրա, ընկերության «Der Orient» պարբերականում 1938 թ-ին ամբողջությամբ հրատարակվեց Էնվերի 1915 թ-ի մայիսի 27-ի հրամանը հայերի աքսորի իրականացման հարցում զինվորական ուժերի աջակցությունն ապահովելու վերաբերյալ:¹⁶⁶⁹ Լույս էին տեսնում էին այլ նյութեր ևս՝ իրենց հերթին նպաստելով թեմայի ամբողջացմանը:¹⁶⁷⁰ Չի կարելի, իհարկե, չնշել, որ պատմական թեմատիկան մշտապես ուղեկցվում էր Հայաստանի և սփյուռքահայության արդի հոգևոր-մշակութային կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները լուսաբանող տեղեկատվությամբ:¹⁶⁷¹

Ինչևէ, հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների հետևողական լուսաբանումը որոշակիորեն դարձավ նաև 1933-38 թթ. բազում մարտահրավերների դեմ դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից ծավալվող համալիր կազմակերպական և գաղափարական պայքարի անքակտելի մասը՝ վերոհիշյալ մյուս միջոցառումների հետ միասին ընկերությանը հնարավորություն ընձեռելով շարունակել իր փրկարար առաքելությունն ու պահպանել մասնաճյուղերը: Ստորև պատկերված առաջին աղյուսակում ներկայացնում ենք ընկերության 1934-38 թթ. եկամուտների և ծախսերի հիմնական վիճակագրական տվյալները, իսկ երկրորդում՝ մասնաճյուղե-

1668. Melkonian M., Karen Jeppes schwerste Zeit, „Orient im Bild“, 1936, էջ 15-16; անդ, էջ 26-27; անդ, էջ 30-31; անդ, էջ 47-48; „Orient im Bild“, 1937, էջ 11; անդ, էջ 13-14; անդ, էջ 26-27; անդ, էջ 37-38; „Orient im Bild“, 1938, էջ 10:
 1669. St'u Das Armeniergesetz vom 27. Mai 1915., „Der Orient“, 1938, էջ 58-59:
 1670 St'u Sick I. M., Avedis und Nisjan, „Orient im Bild“, 1937, էջ 32; Aus Mission und Kirche, „Orient im Bild“, 1939, էջ 7 և այլն:
 1671. St'u Armenien, „Der Orient“, 1934, էջ 46; Armenien, „Der Orient“, 1935, էջ 93; Syrien, „Der Orient“, 1936, էջ 93; Weidhaas H., Armenier in Polen, „Der Orient“, 1937, էջ 15-16; Armenien, անդ, էջ 19; Armenien, „Der Orient“, 1938, էջ 23; Loeffner A., Schließung des Klosters Etschmiadsin?, անդ, էջ 82-83; Schneider G., Aus dem heutigen Leben der armenischen Kirche, „Orient im Bild“, 1939, էջ 18-19; 22-23 և այլն:

րին կատարված ապրանքային հատկացումների չափերը: 1672

Տարեթիվ	Մուտք		Ելք						
	Ընդհանուր	Այդ թվում կապառու	Հայկաի որսային-մամ աշխատանքների համար	Կայա-Փունարի որսային աշխատանքների համար	Կարավարման ծախսեր	Պրոպագ. (բառացիներ, պարբերականներ, ֆիլմեր, շրջագրություններ և այլն)	Կենսաբանական և կենսաբանական ապահովագրություններ	Այլ ծախսեր (ուսումնական և այլն)	Նախորդ տարվա պահպանողի հատուցում
1934	101352,11	3920,92	21541,53	31203,94	19804,48	8165,72	5030,95	7644,70	7960,79
1935	97227,23	4820,73	23028,14	36926,57	19852,96	1184,05	3190	9124,59	3920,92
1936	107405,71	5655,21	26933,29	37558,97	20292,95	12081,03	3240	2478,74	4820,73
1937	93153,94	-	12922,70	25325,90	17260,19	7871,51	3240	20878,42	5655,21
1938	82120,51	-	10753,76	23392,94	19099,38	9796,46	3300	15777,97	-

Տարեթիվ	Ելք						Կայա-Փունարի և հայկա առաջված ապրանքների ընդհանուր քաշը
	Կայա-Փունար			Հայկա			
	Ընդհանուր գումարայինը	Այդ թվում ապրանքի տեսքով	Ապրանքային առաջումների քաշը	Ընդհանուր գումարայինը	Այդ թվում ապրանքի տեսքով	Ապրանքային առաջումների քաշը	
1934	31203, 94	1656	Չի հաղորդվում	21541, 53	5297	Չի հաղորդվում	9908 կգ.
1935	36926, 57	15584,19	Չի հաղորդվում	23028,14	9558,79	Չի հաղորդվում	48767 կգ.
1936	37558, 97	14240,91	34051 կգ.	26933,29	12548,96	6033 կգ.	40084 կգ.
1937	25325,90	3920,92	16767 կգ.	12922,70	8822,87	3135, 06 կգ.	19902,06 կգ.
1938	23392, 94	7987, 60	27938 կգ.	10753,76	9227,76	4854 կգ.	37165,76 կգ.

1672. Տե՛ս «Orient im Bild» ամսագրի համապատասխան տարեգրքերում ներկայացված ընկերության տարեկան հաշվետվությունները: 1934 թ-ի «Այլ ծախսեր» սյունակում ներառված են նաև Բուլղարիայում գործող մասնաճյուղին կատարված հատկացումները, որոնք կազմում էին 6863, 75 մարկ: Տե՛ս Jahresrechnung der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für das Vereinsjahr 1934, „Orient im Bild“, 1935, էջ 12:

5.2. Հայեպի և Կայա-Փունարի մասնաճյուղերը

1934-38 թթ. ստեղծված ծայրահեղ ծանր իրադրության հետևանքով Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի եկամուտները 1934 թ-ին նվազեցին 12,07 տոկոսով:¹⁶⁷³ Չնայած ընկերությունը մյուս միսիոներական և բարեգործական կազմակերպությունների համեմատ նվազագույն նյութական կորուստներն ունեցավ, ինչը պայմանավորված էր նշված արգելքների դեմ նրա ցուցաբերած հետևողական դիմակայությամբ, այնուամենայնիվ մասնաճյուղերին նախատեսվածից պակաս առաքվեց շուրջ 26 000 մարկ, որի հետևանքով Հայեպում աշխատանքների նախկին ծավալների պահպանումը դարձավ անհնար, և Կ. Յեպեն հարկադրված եղավ մշտական խնամքի տակ գտնվող երեխաների քվակազմը որոշ չափով կրճատել՝ համեմատաբար բարվոք պայմաններում գտնվող 46՝ այդ քվում 23 «կերակրվող» և 23 որբ (միածընող) երեխաների դուրս գրելով իր խնամացուցակներից:¹⁶⁷⁴ Փոխարենը, սակայն, ծայրահեղ խնայողությունների գնով նա Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հատկացումներից կարողացավ միջոցներ տնտեսել մի շարք այլ կարևոր ձեռնարկների համար: Դա վերաբերում էր մասնավորապես Թինեի դպրոցին, որը Յեպեն հիմնեց 1934 թ-ին՝ այնտեղ աշխատանքի նշանակելով մի հայ ուսուցչուհու:¹⁶⁷⁵ Բացի այդ, ընտանիքների հիվանդ կերակրողներին ապաքինման և կազդուրման առավել նպաստավոր պայմաններ տրամադրելու համար նա 1934 թ-ին կարողացավ Թինեիում կառուցել նաև մի առողջարանային համալիր: «Գյուղում մենք առողջարան ենք կառուցում,- գրում էր նա իր 1934 թ-ի հոկտեմբերի 11-ի նամակում:- Այն նախատեսված է հայրերի համար, որոնք այնքան մեծ անկում են ապրել, որ միայն հանգըստի և ուրախ միջավայրում իրականացվող շատ լավ խնամքի միջոցով

1673. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1935, էջ 11:

1674. Անդ:

1675. Jeppe K., Agnes Aharonjan, die Lehrerin für die Lösegeldarbeit in Tineh, անդ, էջ 7-8:

կարող են վերականգնվել: Ես միշտ այն կարծիքին եմ, որ երեխաներին ամենամեծ օգնությունն այն կլինի, եթե կարողանանք նրանց ծնողներին պահպանել: Կառուցել եմ նաև սենյակներ, որտեղ կարող են ամբողջ ընտանիքներ տեղավորվել...»: ¹⁶⁷⁶

Յեպենի իր մշտալարված գործունեության ընթացքում հարկադրված էր շարունակ ապրել նաև Գերմանիայի ներքաղաքական զարգացումներով պայմանավորված տագնապները, զարգացումներ, որոնք ամեն պահ կարող էին իր փրկարար աշխատանքների համար ճակատագրական լինել: Անօրինակ փորձություններ հաղթահարած նրա նյարդերը, սակայն, այլևս ի վիճակի չէին դիմագրավել նոր տագնապներին, և ծանր հիվանդությունից հետո՝ 1935 թ-ի հուլիսի 7-ին, 59 տարեկան հասակում նա վախճանվեց: ¹⁶⁷⁷

Կ. Յեպեի մահը ցնցող ազդեցություն գործեց ոչ միայն տարագիր հայերի, այլև նրանց գերմանացի բարեկամների վրա: Թվում էր, թե ի դեմս նրա կյանքից հեռացավ ոչ միայն Հալեպի «հայերի մայրը», ինչպես նրան սովորաբար կոչում էին իր պաշտպանյալները, այլև օգնության գործի «կենսական նյարդը», առանց որի այն այլևս չէր կարող շարունակվել: ¹⁶⁷⁸ «Երբ նրա ծանր հիվանդության առաջին լուրը հասավ մեզ, - գրում էր Պ. Ֆլայշմանը, - մենք սարսափեցինք և, քանի որ անթիվ հայ որբերի և այրիների համար կատարվող սիրո ծառայությունն առանց նրա անկարող էինք պատկերացնել, չէինք կարողանում հաշտվել բաժանման մտքի հետ ու կառչում էինք ամեն մի տեղեկությունից, որ մեզ թույլ էր տալիս հուսալ...»: ¹⁶⁷⁹

Այնուամենայնիվ Յեպեի փոխանորդի՝ Լ. Գազչուկի ու նրա օգնականների միջոցով աշխատանքներն առանց ընդհատման շարունակվե-

1676. Jeppe K., Brief Karen Jeppes, „Orient im Bild“, 1934, էջ 42:

1677. Sbiu Zum Tode Karen Jeppes, „Orient im Bild“, 1935, էջ 30: Հալեպի հայ համայնքը և եկեղեցին կամենում էին Կ. Յեպեի աճյունն անփոփել նրա «Որբերի և այրիների» գաղութի կենտրոնում գտնվող՝ Ս. Լուսավորչի եկեղեցում, սակայն ոչ հայտնի պատճառներով կառավարությունն այդ արգելեց, որի պատճառով նա թաղվեց գերեզմանատանը: Անդ: Հմմտ. Hetzel G., Die Unvergeßliche, „Orient im Bild“, 1937, էջ 5:

1678. Gaszczyk L., Menschen aus Tineh, „Orient im Bild“, 1934, էջ 34: Հմմտ. Zum Tode Karen Jeppes, „Orient im Bild“, 1935, էջ 30: Հմմտ. Gaszczyk L., Notruf aus Aleppo!, „Orient im Bild“, 1936, էջ 18:

1679. Fleischmann P., Karen Jeppe, „Orient im Bild“, 1935, էջ 29:

ցին:¹⁶⁸⁰ 1935 թ-ին ընկերության միջոցներով այնտեղ խնամվում էին 122 «որբանոցային» և 95 «կերակրվող», այսինքն ընդհանուր թվով 217 երեխաներ:¹⁶⁸¹ 1936 թ-ին այդ հարաբերակցությունը համապատասխանաբար կազմում էր 118 և 90:¹⁶⁸² Իսկ հաջորդ 1937-38 թվականներին խնամքի տակ էին գտնվում ընդհանուր թվով շուրջ 200 երեխաներ:¹⁶⁸³ «Ի մեծ ուրախություն ինձ կարող եմ ձեզ տեղեկացնել,- նշում էր Լ. Գազչուկը 1938 թ-ին ընկերությանն ուղղված իր նամակներից մեկում,- որ մեր բոլոր այրիներն ու երեխաներն առանց բացառության փայլում են և լավագույն առողջական վիճակում են գտնվում...»:¹⁶⁸⁴

Հատկանշական է, որ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի համար ստեղծված՝ այդ աննախադեպ ծանր իրադրությունում ևս Հալեպի օգնության աշխատանքները միայն նշված ոլորտներով չսահմանափակվեցին: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի և ըստ այդմ ուժգնացող գործազրկության ու քանկացումների հետևանքով 1930-ական թթ. երկրորդ կեսին ծայրաստիճան սպառնալից իրադրություն ստեղծվեց նաև այնտեղի ճամբարաբնակ հայերի համար: Դեռ 1935-36 թթ. ծնունդ ճամբարում արծանագրվեց հիվանդությունների կտրուկ աճ (մոտ 30 տոկոսով), որի հիմնական պատճառը խրոնիկական թերասնումն էր:¹⁶⁸⁵ Այդ զրկանքների դեմ պայքարելու՝ Գազչուկի և նրա գործընկերների վճռականությունը, սակայն, հարկադրված էր հաշվի նստել նաև նյութական նախադրյալների բացակայության փաստի

1680. Լ. Գազչուկին մեծ աջակցություն էր ցուցաբերում նաև նրա քույրը՝ Յոհանա Պարիթսին, որը 1934 թ-ին հաստատվելով Հալեպում Կ. Յեպեի հանձնարարությամբ ղեկավարում էր «փրկարար կացարանի» ձեռագործերի արտադրամասը: Այն նրա ջանքերով զգալիորեն ընդլայնվեց՝ աշխատատեղեր տրամադրելով շուրջ 200 փղրկազնված հայուհիների: Տե՛ս Gaszczyk L., Hin und zurück, „Orient im Bild“, 1935, էջ 35: Հմնտ. „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 43:

1681. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1936, էջ 18:

1682. Fleischmann P., Jahresbericht 1936 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1937, էջ 18:

1683. Gaszczyk L., Weitere Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1939, էջ 21: Չնայած նրանց տոկոսային հարաբերակցության վերաբերյալ ստույգ տվյալներ չեն հաղորդվում, սակայն այն ամենայն հավանականությամբ փոփոխություններ չի կրել:

1684. Տե՛ս „Ihn, Ihn laß tun und walten...“, „Orient im Bild“, 1938, էջ 22:

1685. Gaszczyk L., Notruf aus Aleppo!, „Orient im Bild“, 1936, էջ 17:

հետ: «Ես իմ 13 տարվա գործունեության ընթացքում դեռ երբեք այս-քան թշվառություն և զրկանք չեմ տեսել, բայց նաև դեռ երբեք այս-քան անօգնական չեմ եղել», - գրում էր նա 1935 թ-ի վերջին իր տեղեկագրերից մեկում:¹⁶⁸⁶

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն գործի դրեց իր բոլոր հնարավորությունները ճամբարականներին օգնելու նպատակով միջոցներ հայթայթելու համար: Պարբերականը հեղեղված էր օգնության կոչերով և Հալեպից ստացված ահազանգերով:¹⁶⁸⁷ «Հալեպում սննդմաթերքի և հագուստի են սպասում ոչ միայն մեր խնամքին վստահված մի քանի հարյուր երեխաները, - նշված էր ընկերության 1936 թ-ի սկզբին հրապարակված տեղեկություններից մեկում, - այլև դժբախտ այրիների, հիվանդների և մեր խնամքի տակ չգտնվող երեխաների մի մեծ զանգված. որոնք այս ծանր կանգնելու են անասելի զրկանքների առջև, եթե մենք, ինչպես նախորդ տարիներին, չդիմենք այնտեղ, ուր մեզ կանչում է թշվառության ծայնը: ... Մենք սրտազին խնդրում ենք մեզ այդ նպատակի համար նվիրատվություններ կատարել...»:¹⁶⁸⁸

Հրապարակումները լայն արձագանք գտան ընկերության բարեկամների շրջանում,¹⁶⁸⁹ որոնց կողմից կատարված հատկացումները դանիացի, շվեյցարացի և ամերիկացի բարեկամների ներդրումների հետ միասին Լ. Գազչուկին հնարավորություն ընձեռեցին ճամբարականներին մեծաքանակ օգնություն ցուցաբերել: Այն միաժամանակ մեկնարկվեց երկու սննդամատակարարման և բուժսպասարկման բնագավառներում: Ըստ այդմ տարեսկզբին Կ. Յեպեի «Որբերի և այրիների գաղութում» հիմնվեց մի խոհանոց, որտեղ հունվարի 17-ից մինչև ապրիլ ամիսը օրական մեկ անգամ տաք և սննդարար կերակուր էր բաժանվում ամենածանր վիճակում գտնվող մարդկանց:¹⁶⁹⁰ Ընդ որում, եթե մեկնարկման ժամանակ նրանց թիվը 150-ից չէր անցնում, ա-

1686. Gasczyk L., Regen, անդ, էջ 2:

1687. Անդ: Հմնտ. Gasczyk L., Notruf aus Aleppo, անդ, էջ 17-18: Հմնտ. Gasczyk L., „Bescher uns, Herr, das tägliche Brot“, „Orient im Bild“, 1937, էջ 11 և այլն:

1688. St'u In letzter Stunde!, „Orient im Bild“, 1936, էջ 37:

1689. Hetzel G., Hall und Widerhall..., անդ, էջ 24:

1690. Gasczyk L., Notruf aus Aleppo, անդ, էջ 17: Հմնտ. Gasczyk L., Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1938, էջ 6:

պա հաշվված օրերի ընթացքում այն բազմապատկվեց՝ մարտին հատելով 750-ի սահմանագիծը:¹⁶⁹¹ Խոհանոցը կանոնավոր կերպով գործեց նաև հաջորդ երեք տարիների ծմեռային ամիսներին զգալիորեն մեղմելով ճամբարականների դրությունն ու կանխելով թերասնամբ պայմանավորված հիվանդությունների հետագա զարգացումը:¹⁶⁹²

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի և դանիացի բարեկամների նյութական աջակցությամբ ուրախալի առաջընթաց արձանագրվեց նաև բուժսպասարկման բնագավառում: 1936 թ-ին ճամբարում անհատույց սպասարկվեցին 462, 1937 թ-ին՝ 853,¹⁶⁹³ իսկ 1938 թ-ին ոչ պակաս, քան 1692 հիվանդներ, որոնք բուրդն էլ, չնչին բացառություններով, կարողացան բուժվել և ապաքինվել:¹⁶⁹⁴ Այդ հնարավոր դարձավ ոչ միայն նպատակային բուժման, այլև տևական հոգատար խնամքի շնորհիվ, որ անհրաժեշտ էր ծանր հիվանդների վերջնական ապաքինման և կազդուրման համար: «Համատեղ ուժերով մեզ հաջողվեց ամենածանր հիվանդներին այնքան երկար պահել խնամքի տակ, մինչև նրանք աշխատունակ դարձան և դարձյալ կարողացան իրենց ընտանիքների համար հոգ տանել,- նշում էր Լ. Գազչուկն իր 1938 թ-ի հաշվետվության մեջ: - Այն փորձառությունը, որոնք մենք բազմաթիվ տարիների ընթացքում կուտակել ենք, մեզ հնարավորություն է տալիս տոկալ հիվանդությունների և զրկանքների դեմ պայքարում»:¹⁶⁹⁵

Եթե նկատի առնենք, որ 1938 թ-ին ճամբարում վտանգավոր հիվանդությունների հաճախականությունը շուրջ երեք անգամ ավելի բարձր էր, քան, օրինակ, 1932 թ-ին,¹⁶⁹⁶ ապա պարզ կդառնա, թե նըշված աշխատանքները որպիսի կենսական նշանակություն ունեին բուժման միջոցներից զուրկ ճամբարականների համար:¹⁶⁹⁷ Չնայած

1691. Gaszczyk L., Notruf aus Aleppo, „Orient im Bild“, 1936, էջ 17: Աննդարար ճաշի հետ նրանք ամեն օր ստանում էին նաև 300 գրամ հաց: Անդ:

1692. Gaszchutz L., „Bescher uns, Herr, das tägliche Brot“, „Orient im Bild“, 1937, էջ 12: Հմնտ. Minkner E., Von unserer Zusammenarbeit mit den Dänen in den Flüchtlingslagern Aleppos, „Orient im Bild“, 1938, էջ 47: Հմնտ. Gaszchutz L., Weitere Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1939, էջ 22:

1693. Gaszchutz L., Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1938, էջ 5:

1694. Gaszchutz L., Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1939, էջ 17-18:

1695. Անդ, էջ 17:

1696. Անդ:

1697. Առանձնապես տարածված հիվանդությունների թվում էին թոքերի քրոքումը, ռևմատիզմը, բրոնխիտը և դիզենտերիան: Անդ:

ինչպես աղքատախնամության, այնպես էլ բուժսպասարկման աշխատանքներում առանձին կազմակերպությունների, այդ թվում նաև Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի ներդրումների վերաբերյալ ճշգրիտ տվյալներ չեն հաղորդվում, և դրանք հիմնականում կատարված լինելով ապրանքային առաքումների տեսքով՝ համահաշվարկվել են ընկերության եկանուտների և ծախսերի՝ վերոբերյալ վիճակագրական տվյալներում, այնուամենայնիվ տեղեկագրերում արտացոլված որոշ՝ ոչ ամբողջական ցուցանիշներ կարող են ուշագրավ կռահումների տեղիք տալ: 1938 թ-ի բուժսպասարկման աշխատանքների համար, օրինակ, ծախսվել է ընդհանուր հաշվով 10675 մարկ,¹⁶⁹⁸ այն դեպքում, երբ նույն ժամանակամիջոցում Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից Հալեպ են առաքվել 3000 մարկ արժողությամբ դեղորայք և դեղագործական նյութեր, մի քանի հարյուր մարկի օժառ և այլ լվացամիջոցներ, 1250 մարկի հագուստ և բացի այդ կտրածածկման համար 300 մարկ արժողությամբ՝ 10 փաթեթով տանիքի ստվարաթուղթ, 340 մարկի՝ 16 կապ ցինկապատ թիթեղ և այլն:¹⁶⁹⁹ Եթե նկատի առնենք, որ առաքումների ծավալն ու տեսականին, ինչպես վկայում են վերոնշյալ աղյուսակային վիճակագրական տվյալները, նախորդ տարիներին ավելի բարձր էր եղել,¹⁷⁰⁰ ապա կարելի է արձանագրել, որ ընկերությունն, իր հիմնական աշխատաճյուղերից զատ, մյուս նվիրատուներից ոչ պակաս ներդրումներն է կատարել նաև աղքատախնամության և բուժսպասարկման ոլորտներում: Դա որոշակիորեն հաստատվում էր նաև Գազչուկի տեղեկություններով. «Մենք դեղորայքի համար հիմնականում պարտական ենք Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ին,- նշում էր նա 1939 թ-ին,- որը մեզ արդեն տարիներ ի վեր մատակարարում է տարբեր ֆիրմաների կողմից պատրաստված գերազանց դեղանյութեր: Դանիացի բարեկամներից մենք ստացանք խտացված ձկան յուղի մեծ քանակություն, որը բաժանում ենք հյուծված հիվանդներին և դպրոցականներին... Իսկ շվեյցարացի բարեկամների՝ Բեռնի կոմիտեին մենք պարտական ենք խտացված կաթի

1698. Անդ:

1699. Fleischmann P., „Seine Barmherzigkeit hat noch kein Ende“. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1938, անդ, էջ 14:

1700. Հայտնի է, օրինակ, որ 1936 թ-ին ընկերության կողմից Հալեպ է ուղարկվել 5780 մարկ արժողությամբ դեղորայք: Sbn Gaszczuyk L., „Bescher uns, Herr, das tägliche Brot“, „Orient im Bild“, 1937, էջ 11:

և «Ovomaltin»-ի կանոնավոր առաքումների համար, որոնք օգտագործվեցին թերասնված երեխաների և ծծկերների համար...»:1701

Ինչ վերաբերում է Կայա-Փունարի մասնաճյուղին, ապա դևիզային սահմանափակումների հետևանքով 1934 թ-ին հարկ եղավ մեկ քառորդով կրճատել նաև այնտեղի որբանոցի երեխաների կազմը,1702 իսկ մնացած թվով 90 որբերի համար գոյության կայուն պայմաններ ստեղծելու և բացի այդ հաստատությանը Գերմանիայի տրնտեսաքաղաքական նոր ցնցումներից հնարավորինս ապահովագրելու նպատակով մեծ թափ հաղորդվեց երկրագործության զարգացմանը: Ապրանքային առաքումների ազատությունն այդ թույլատրում էր. ուստի պատահական չէ, որ 1934-38 թվականները Կայա-Փունարում հատկանշվեցին իբրև տեխնիկական սպառազինման և գյուղատնտեսության տեղագին զարգացման տարիներ: Կենսամթերքներից, դեղորայքից, հագուստից, կահույքից և ուսումնական միջոցներից զատ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն Կայա-Փունար էր ուղարկում տառացիորեն ամեն բան, ինչը կարող էր նպաստել հաստատության տրնտեսական անկախացմանը. ժամանակակից գյուղատնտեսական գործիքներ, պարարտանյութ, հնձիչ, կալսիչ, շարքացան, ծղոտահար, մամլիչ, մրգաղաց, կարագ պատրաստող և այլ տիպի մեքենաներ, շարժիչներ, շինանյութ, հաստոցներ, տարբեր տիպի գութաններ, ջրհան կայան, հրկեզ շտեմարաններ, էլեկտրականություն արտադրող տուրբիններ համապատասխան խողովակաշարերով և այլն:1703 Այդ համալիր օժանդակության շնորհիվ, ինչպես վկայում էին Կայա-Փունարից ստացված տեղեկագրերը, կարճ ժամանակում այնտեղ թռիչքային վերելք ապրեցին թե երկրագործությունը և թե անասնա-

1701. Gaszczuyk L., Bilder aus unserer Arbeit in Aleppo, „Orient im Bild“, 1939, էջ 17:

1702. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1935, էջ 11:

1703. Kavoukdjian A., Ein Rückblick mit Dank, անդ, էջ 9: Հմնտ. Schäfer R., Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1936, էջ 19: Հմնտ. Fleischmann P., Jahresbericht 1936 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1937, էջ 18: Հմնտ. Fleischmann P., Jahresbericht für 1937 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Orient im Bild“, 1938, էջ 17: Հմնտ. Fleischmann P., „Seine Barmherzigkeit hat noch kein Ende“. Jahresbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission für 1938, „Orient im Bild“, 1939, էջ 14:

պահությունը.¹⁷⁰⁴ մի վերելք, որը խոստանում էր հաստատությանը լիարժեք տնտեսական անկախություն բերել, եթե տարածքի քաղաքական կայունությունը չխոչընդոտվեր...

Քեմալական թուրքիան Սիրիայի Ալեքսանդրետի սանջակի սեփականացումը դեռ 1936 թ-ից համարում էր իր արտաքին քաղաքականության առաջնագույն խնդիրներից մեկը.¹⁷⁰⁵ մի խնդիր, որ Քեմալի կառավարության պնդմամբ շարունակ բանակցությունների առարկա էր դառնում թուրքիայի և Սիրիայի մանդատային երկրի Ֆրանսիայի միջև: Ի վերջո, Փարիզը զիջեց՝ 1938 թ-ի հուլիսի 3-ին կնքված պայմանագրով՝ համաձայնելով սանջակի պառլամենտի պատգամավորական տեղերի կեսից ավելին հատկացնել թուրքերին և բացի այդ թուրքիային թույլատրել սանջակի հյուսիսում տեղակայել զինվորական ուժեր, որոնք թվով հավասար պետք է լինեին հարավում գտնվող ֆրանսիական զորաբաժնին (2500 մարդ): Այդպիսով Սիրիան մեկընդմիջտ տանուլ տվեց այդ տարածքը: Շուտով սանջակը հռչակվեց որպես Հաթայ անունով մի նորանկախ պետություն, որը ևս մի քանի ամիս անց, 1939 թ-ի գարնանը միացվեց թուրքիային:¹⁷⁰⁶

Ավելորդ է ասել, թե այդ նոր «քաղաքական առևտուրը» որպիսի աղետ էր մարզում ապաստանած ավելի քան 35 000 հայերի ուսմար, որոնք լքելով կամ չնչին գներով վաճառելով իրենց ունեցվածքը՝ խուճապահար սկսեցին փախչել դեպի Հալեպ և Լիբանան:¹⁷⁰⁷ Ինչ

1704. Kavoukdjian A., Aus Kaja Punar, „Orient im Bild“, 1935, էջ 25-26: Հմնտ. Landwirtschaftlicher Bericht aus Kaja Punar für März u. April 1936, „Orient im Bild“, 1936, էջ 28: Հմնտ. Kavoukdjian A., Allerlei Besuch und Weihnachten in Kaja Punar, „Orient im Bild“, 1938, էջ 9: Հմնտ. Demniz P. G., Ein Bericht von unserem landwirtschaftlichen Betrieb in Kaja Punar, „Orient im Bild“, 1939, էջ 4 և այլն:

1705. «Գլխավոր հարցը, որը ներկայումս մտահոգում է մեր ազգին,- նշվում էր Քեմալ աթաթուրքի՝ 1936 թ-ի նոյեմբերի 1-ի հայտարարության մեջ,- Ալեքսանդրետի և Անտիոքի շրջանի ճակատագիրն է, որն իրականում մաքուր թուրքական շրջան է: Դա միակ հիմնահարցն է մեր և Ֆրանսիայի միջև, որի հետ քարեկամությանը մենք մեծ նշանակություն ենք տալիս»: Sten Müller H., Orient-Missions-Freizeit in Potsdam, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 33:

1706. Անդ, էջ 33-34: Հմնտ. Meyer, Armenien..., էջ 169-170:

1707. Gaszczyk L., Die Sandjakfrage – neue Not für die Armenier!, „Orient im Bild“, 1938, էջ 33-34:

վերաբերում էր սանջակի հարավային սահմանեզրին և հարևան Քեսաբի շրջանի վարչական ենթակայության ներքո գտնվող Կայա-Փունարի կարգավիճակին. ապա այդ առթիվ թե Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի և թե Ա. Կավուքչյանի՝ գերմանական և սիրիական իշխանություններին ուղղված հարցումները շարունակ հավաստիացումներ էին ստանում, որ մտահոգվելու կարիք չկար, և որ որբանոցի տարածքը գտնվելով նախատեսվող սահմանից հարավ ընկած հատվածում՝ շարունակելու էր մնալ Սիրիայի տիրույթում:¹⁷⁰⁸ Այդ լավատեսությունը, սակայն, չարդարացավ: Որբանոցի ուժերով ծաղկուն այգեստանի վերածված այդ վայրը «չափազանց գրավիչ էր թուրքիայի ախորժակը չգրգռելու համար»,¹⁷⁰⁹ և 1939 թ-ի հուլիսի սկզբին, երբ պարզ դարձավ, որ այն նույնպես պետք է հատկացվեր Թուրքիային, որբանոցը հարկադրված էր իր բնավայրից հեռանալ:

Հաստատության շարժական գույքն ամբողջությամբ տեղափոխելու՝ Ա. Կավուքչյանի ջանքերը հաջողություն չունեցան: Կայա-Փունար ներխուժած թուրքական ջոկատներն արգելեցին քանդել կամ ապամոնտաժել տարածքի համար ստրատեգիական նշանակություն ունեցող խոշոր օբյեկտները, ինչպես օրինակ ջրհան կայանը, ջրազրծի խողովակները, մետաղյա շտեմարանները և այլն: Արգելվեց նաև Քեսաբից բեռնատար ավտոմեքենաներ բերել իրերը տեղափոխելու համար:¹⁷¹⁰ Փոխադրվեց միայն այն, ինչը թուրքական իշխանությունների կողմից թույլատրված տասնօրյա ժամանակամիջոցում հնարավոր էր ձիերով փոխադրել: Հուլիսի 22-ին տեղափոխումն ավարտված էր, և որբանոցի ողջ փրկված ունեցվածքը, ներառյալ անասնազխաքանակն ու սննդամթերքի պաշարները, փոխադրվել էին Կայա-Փունարից 3 կմ հեռավորության վրա գտնվող՝ սիրիական սահմանաներձ Եսկյորեն գյուղը, իսկ անձնակազմը ժամանակավորապես հանգրվանել էր Քեսաբում:¹⁷¹¹

Այդ ծանր պայմաններում որբանոցի ղեկավարությունն այլ ելք

1708. Fleischmann P., Was da draußen in Syrien vor sich ging, „Mittellungen an unsere Mitglieder und Freunde!“, 1941, էջ 51:

1709. Demniz P. G., Auf der Flucht, „Orient im Bild“, 1939, էջ 37:

1710. Անդ, էջ 38:

1711. Անդ:

չէր տեսնում, քան ձեռք բերել մի նոր տարածք և ընկերության օգնությամբ ամեն բան դարձյալ սկսել սկզբից: Տեղական իշխանություններն իրենց հերթին ևս նրան խոստացան այդ նպատակով Լիբանանում մի հողակտոր հատկացնել:¹⁷¹² սակայն վերահաս աղետներն ի չիք դարձրեցին նաև այդ ծրագիրը: 1939 թ-ի սեպտեմբերի 1-ին ազդարարվեց երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը, որով Սիրիան որպես ֆրանսիական մանդատային տարածք Գերմանիայի համար դարձավ թըշնամական երկիր, և գերմանական ընկերությունների, այդ թվում նաև Պր. Լեփսիոսի ԳԱԱ-ի հետագա գործունեությունն այնտեղ այլևս անհնար դարձավ: Ի լրումն դրա ամբողջովին խզվեց նաև ընկերության կապը մասնաճյուղերի հետ, որոնք հայտնվեցին կատարյալ մեկուսացման մեջ:

Որբանոցի աշխատակից Գ. Շնայդերը, որ 1938 թ-ի հոկտեմբերին մեկնելով Եվրոպա շրջիկ զեկուցումների միջոցով ձգտում էր Գերմանիայում, Անգլիայում և Շոտլանդիայում նոր բարեկաններ հավաքագրել,¹⁷¹³ վերադարձավ այն ժամանակ, երբ հաստատությունը Կայա-Փունարից տեղափոխվել էր: Օգոստոսի 3-ին հասնելով արդեն Թուրքիային հանձնված Անթակիա (Անտիոք) քաղաքը՝ նա փորձեց մեկնել Քեսաբ այնտեղ իր գործընկերներին միանալու համար: Այդ, սակայն, նրան չբույլատրվեց: Անտիոքում յոթ շաբաթ մնալով խիստ հսկողության ներքո և միայն մի հայ բարեկամի միջոցով ազատվելով ոստիկանության կողմից իրեն վերագրվող լրտեսության մեղադրանքից նա սեպտեմբերի վերջին կարողացավ ծանր փորձությունների գնով վերադառնալ Գերմանիա:¹⁷¹⁴

Ինչ վերաբերում էր որբանոցին և նրա մյուս աշխատակիցներին, ապա հաստատության ունեցվածքը պատերազմի բռնկումից հետո կալանվեց, իսկ Ա. Կավուքչյանն ու Դեմնից ամուսինները սեպտեմբերի 3-ին ձերբակալվելով տեղափոխվեցին Լաթակիա: Այնուհետև Պաուլ Դեմնիցը ուղարկվեց Բեյրութ՝ միանալով այնտեղ ներկայված գերմանացիների խումբին,¹⁷¹⁵ իսկ նրա կինը, նմանապես ներկայվածն ենթարկվելով, ուղարկվեց Սիրիայի Իդլիբ բնակավայրը, սակայն ծննդան այնտեղ հիվանդանալով

1712. Schneider G., Halbmond über dem Kreuz, անդ, էջ 42:

1713. St'u Aus Mission und Kirche, „Orient im Bild“, 1938, էջ 48:

1714. Schneider G., Halbmond über dem Kreuz, „Orient im Bild“, 1939, էջ 41-42:

1715. Fleischmann P., Was da draußen in Syrien vor sich ging, „Mittellungen an unsere Mitglieder und Freunde!“, 1941, էջ 51:

տիֆով՝ տեղափոխվեց Լաթակիայի հիվանդանոցը, որտեղ 1 ամիս մնալուց հետո Չալեպի հիշյալ բժշկի դր. Ալթունյանի միջնորդությամբ ներկայման ժամանաձևից ծոցում բնակություն հաստատեց նրա տանը:¹⁷¹⁶

Փոքր-ինչ այլ էր Ա. Կավուքչյանի ճակատագիրը: Այն հանգամանքը, որ նա սիրիական քաղաքացիություն ուներ, օգնեց նրան սեպտեմբերի 29-ին կալանքից ազատվել և մեկնել Քեսաբ, որտեղ նա հույս ուներ ետ ստանալ իր անձնական իրերը և որբանոցի ունեցվածքը:¹⁷¹⁷ Իշխանությունները նրան այդ թույլատրեցին, և ծայր առան գանգատարկումների և բողոքների երկարատև, հոգեճանաչ ամիսները: Որբանոցի տնօրենը ստիպված եղավ մեկնել Չալեպ, իսկ այնուհետև նաև Բեյրութ այնտեղ գտնվող վերահաս մարմիններին իր բողոքները ներկայացնելու համար, սակայն ապարդյուն:¹⁷¹⁸ Ի վերջո, 1940 թ-ի մարտի վերջին նա տեղեկացավ, որ Սիրիայի ֆրանսիական գլխավոր կոմիսարը կարգադրել էր որբանոցը լուծարել, իսկ որբանոցապատկան գույքը վաճառել:¹⁷¹⁹ Նորից ճանապարհվելով Չալեպ, այնտեղ ձեռք բերելով Քեսաբի կառավարչին ներկայանալու իրավունք և դարձյալ մեկնելով Քեսաբ՝ նա երկարատև բանակցություններից հետո կարողացավ ետ ստանալ միայն իր անձնական իրերը:¹⁷²⁰

Ա. Կավուքչյանը հնարավորություն ստացավ որբանոցի ունեցվածքի խնդրով զբաղվել միայն 1940 թ-ի օգոստոսի սկզբին, Սիրիայում պատերազմական իրադրությունն ավարտվելուց հետո: Չնայած նրա բողոքների հիման վրա Չալեպից կարգադրվեց որբանոցի ունեցվածքը վերադարձնել նրան, սակայն այն իրականում այլևս գոյություն չուներ, քանի որ ողջ գույքը, ներառյալ անասնազխաքանակը և նույնիսկ անասնակերն ու երեխաների սննդի պաշարները վաճառվել էին, իսկ այն, ինչ չէր վաճառվել, թալանվել էր էսկյորեն գյու-

1716. Անդ: Չմնտ. Von den Stationen, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 36:

1717. Fleischmann P., Was da draussen in Syrien vor sich ging, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1941, էջ 51:

1718. Անդ:

1719. Անդ:

1720. Անդ: Երկար ժամանակ մնալով անխնամ և բարձիթողի վիճակում՝ դրանք հիմնականում դարձել էին անպիտան: Տիկին Դեմնիցը ևս կարողացավ ետ ստանալ իր իրերը, որոնք նմանապես մեծ մասամբ արդեն խոտանելի էին: Անդ:

դի մահմեդական բնակիչների կողմից: 1721 Նվազել էր նաև Քեսաբում մնացած՝ որբանոցի երեխաների թիվը: Ա. Կավուքչյանն իր 1940 թ-ի օգոստոսի այցելության ժամանակ այնտեղ գտավ նրանցից միայն 14-ին: 1722 Մյուսները մասամբ տեղափոխվել էին իրենց ազգականների մոտ և մասամբ վաղաժամկետ անցել ինքնուրույն գոյության:

Կողոպտված ունեցվածքի վերադարձման կամ հատուցման տնօրենի բոլոր պահանջներն անցան ապարդյուն, 1723 ուստի նրան այլ ելք չէր մնում. քան Քեսաբում մնացած որբերին տեղափոխել Անթիլիասի կաթողիկոսարանին պատկանող՝ Բեյրութի որբանոցը 1724 և սեպտեմբերին, երբ Ֆրանսիայի հետ զինադադարի կնքումից հետո: Դեմնից ամուսիններն արդեն վերադարձել էին Գերմանիա, օգտվելով մի բարեպատեհ հնարավորությունից, նույնպես մեկնել այնտեղ: 1725

Ինչ վերաբերում է Հալեպի մասնաճյուղին, ապա տեղեկությունները, ցավոք, չափազանց կցկտուր են. քանի որ պատերազմի բռնկումից հետո Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն այլևս Հալեպի իր աշխատակիցների հետ անմիջական կապ ստեղծելու հնարավորություն չունեցավ: Ընկերությունը 1939 թ-ի սեպտեմբերից զրկվեց նաև ապրանքային առաքումներ կատարելու հնարավորությունից, և չնայած դրան, դեղորայքի վերջին առաքումն այնքան առատ էր եղել, որ, ինչպես նշվում էր Լ. Գազչուկի կողմից դանիացի

1721. Անդ, էջ 51-52: Որբանոցի ունեցվածքը վաճառվել էր չնչին գներով, ընդ որում որպես գնորդներ հիմնականում հանդես էին եկել աճուրդն իրականացնող պաշտոնյաները: «300 այծերը, բացառությամբ 30-ի, անհետացել էին,-նշվում էր այդ առթիվ հետագայում հրապարակված տեղեկագրերից մեկում:- 150 հավերճ ոչ մեկը չէր մնացել: Խոզերն այն կարգով էին աճուրդի հանվել, որ աճուրդն իրականացնող պաշտոնյան և գնորդը միևնույն անձն էին: 17 եզները վաճառվել էին 15 սիրիական ֆունտով (մոտ 49 մարկ): 7 կովերը արգելակալանքի վարիչը և նրա ընկերները բաժանել էին իրար մեջ: Չիերը վաճառվել էին 6 սիրիական ֆունտով. մի գումար, որով կարելի էր միայն մի սազ գնել... Նույնը տեղի էր ունեցել անասնակերի, երեխաների սննդամթերքի, կտորեղենի և կոշկակարանոցի կաշվի հետ: Չքացել էին նաև կարի մեքենաները...»: Անդ:

1722. Անդ, էջ 52:

1723. Անդ:

1724. Sb'ú Von den Stationen, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 36:

1725. Fleischmann P., Unseren Freunden, Geschäftsbericht 1940/1941 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, էջ 2:

բարեկամներին ուղարկված վերջին տեղեկություններից մեկում, հնարավորություն էր ընձեռել երեխաների և ունեզուրկ հայ բնակչության բուժ-սպասարկումն անընդմեջ շարունակել նաև 1939-40 թթ. ծնունդն ընթացքում:¹⁷²⁶ Այդպիսով Չալեպում Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի երկարամյա հայանվեր գործունեությունը հասավ իր խարկադրյալ ավարտին: Հակառակ հետազայում գործադրված ջանքերին, մասնաճյուղի հետ կապն սույլև չվերականգնվեց, և փաստորեն այլ բան չէր մնում, քան սպասել իրադրության դրական տեղաշարժերի և հուսալ, որ Լ. Գազուկը հայերի՝ ոչ գերմանացի բարեկամների օգնությամբ կշարունակեր աշխատանքները:¹⁷²⁷

5.3. Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ն երկրորդ աշխարհամարտի տարիներին

Իր հայանվեր առաքելությանը հավատարիմ մնալու՝ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի վճռականությունը չսասանվեց նույնիսկ պատերազմի բռնկումից և մասնաճյուղերի հետ հաղորդակցության հարկադիր խզումից հետո: «Մենք այլևս ոչինչ չենք կարող դուրս ուղարկել, ոչ փող, ոչ ապրանքներ,-գրում էր Պ. Ֆլայշմանը 1939 թ-ի հոկտեմբերին:-

1726. Sten Von unseren Stationen, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 6:

1727. Այդ հույսերն, անշուշտ, անհիմն չէին, քանի որ, չնայած Գերմանիայի կողմից 1940 թ. ապրիլի 9-ին Դանիայի նվաճումից հետո մասնաճյուղը զրկվեց նաև դանիացի բարեկամների աջակցությունից, այնուամենայնիվ, ինչպես թույլ են տալիս կռահել շվեյցարական աղքյուրներում պահպանված թռուցիկ տեղեկությունները, Լ. Գազուկը, Մ. Մելքոնյանն ու նրանց աշխատակիցները Չալեպում իրենց գործունեությունը չեն դադարեցրել, և այն շվեյցարացի բարեկամների հետ համագործակցության պայմաններում, թեկուզև սահմանափակ միջոցներով ու ծավալներով, հնարավոր է եղել շարունակել նույնիսկ պատերազմի տարիներին: Sten Meyer K., Armenien..., էջ 173-175: Ցավոք, սակայն, մասնաճյուղի գործունեության և նրա աշխատակիցների հետագա ճակատագրի վերաբերյալ այլ, ավելի մանրամասն տեղեկություններ չեն հաղորդվում:

...Մեզնից ոչ ոք չգիտի, թե ինչ կբերեն գալիք օրերն ու շաբաթները: Մենք գիտենք, սակայն. մի բան. մենք նրանցից չենք, ովքեր նահանջում են: Դարձյալ անհայրենիք դարձած երեխաների համար կատարվող բարեսիրական գործը մեզ համար մնում է որպես թանկագին կտակ: Արդյոք շուտով հնարավոր դառնա՞ր դրսի հետ կապը վերականգնել. արդյոք հայ ժողովրդի ոչ գերմանացի բարեկամներին կհաջողվի՞ Սիրիայում գտնվող մեր երեխաներին և նրանց խնամողներին մոտ ժամանակահատվածում օգնել... Այդ և դրա հետ կապված շատ այլ հարցեր մեզ անհայտ են, սակայն մենք չենք վախենում, եթե նույնիսկ աշխարհը կործանվի, և լեռները սուզվեն ծովի մեջ...: ¹⁷²⁸

Ստեղծված իրավիճակում բնականաբար Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի հիմնական խնդիրը պետք է դառնար բարեկամների հետ կապի պահպանումն իբրև ապագայում օգնության աշխատանքների վերսկսման հիմնական նախադրյալ: Ուստի պատահական չէ, որ ընկերության քարոզչական գործունեությունը բոլոր հնարավոր միջոցներով շարունակվեց: 1939 թ-ին շրջիկ զեկուցող Մյուլլերը մեծաքանակ շրջագայություններ կատարեց Հանովերում, Հռենոսի մարզում, Բավարիայում, Շլեզիայում և Սաքսոնիայում, որոնք արդյունավորվեցին բազմաթիվ հանդիպումներով և զեկուցումներով: ¹⁷²⁹ Այդ առաջադրանքին լծվեցին նաև Մինկները և Շնայդերը, որոնք գործում էին համապատասխանաբար Պոմերնի և Սաքսոնիայի մարզերում: ¹⁷³⁰ Տարվա ընթացքում նրանց կողմից սպասարկվեցին շուրջ 130 համայնքներ, և բացի այդ վաճառվեց նաև մեծաքանակ՝ 530 մարկ արժողության գրականություն: ¹⁷³¹ Հասարակայնության հետ ամենամսյա հանդիպումներ էին կազմակերպվում նաև ընկերության գրասենյակում, որտեղ զեկուցումներով հանդես էին գալիս Պ. Ֆլայշմանը, Գ. Շնայդերը, պաստոր Կյուլենը և այլ աշխատակիցներ ու բարեկամներ: ¹⁷³²

Իրադրությունը, սակայն, շարունակ ավելի աննպաստ էր դառնում

1728. Fleischmann P., Gott sitzt im Regimente, „Orient im Bild“, 1939, էջ 37:
1729. Fleischmann P., Jahresbericht 1939 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 23:
1730. Անդ:
1731. Անդ, էջ 23-24:
1732. Անդ, էջ 24:

նաև քարոզչության վարման համար: 1939 թ-ի աշնանը երևան եկան թղթի օգտագործման առաջին պետական սահմանափակումները, որոնցով փաստորեն անհնար դարձավ թե Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի և թե մյուս ընկերությունների պարբերականների հետագա գոյությունը: Ծայր առավ քույր ամսագրերի և թերթերի միաձուլման մի ընդհանուր գործընթաց, որից չկարողացավ խուսափել նաև «*Der Orient*»-ը: Չուլվելով երեք այլ գիտական ամսագրերի՝ այն նրանց հետ միասին վերածվեց մի միասնական պարբերականի:¹⁷³³ Ինչ վերաբերում էր «*Orient im Bild*»-ին, ապա ընկերությունը բարեկամների հետ կապը գեթ մասնակիորեն պահպանելու համար վճռեց 1940 թ-ից այն ժամանակավորապես փոխարինել մի փոքրիկ պարբերականով, որի լույսընծայումը նշված սահմանափակումներով չէր կարող խոչընդոտվել:

1939 թ-ի դեկտեմբերին լույս տեսավ «*Orient im Bild*»-ի վերջին համարը, որտեղ ընկերությունը դարձյալ հավաստում էր, հակառակ իրադրության բոլոր շրջադարձերին, իր գործունեությանը և սկզբունքներին հետադիմ ևս հավատարիմ մնալու իր անխախտ վճռականությունը. «Մեր գործը երբեք հանգամանքներից կախման մեջ չի լինի.- գրում էր այնտեղ Պ. Ֆլայշմանը: - ... Մենք ձեզ չենք լքի, սիրելի երեխաներ, նաև այս ժամին, երբ պատերազմը դարձյալ ձեր և մեր միջև բոլոր կամուրջները քանդել է, և դեռ չենք տեսնում, թե ինչպես պետք է դեպի ձեզ ճանապարհ գտնենք: Մենք մեր գործն այժմ ևս հանձնարարել ենք Նրան, որն ասել է. Ով իմ անունից մի այսպիսի երեխա ընդունի, նա կընդունի ինձ: ... Պատերազմը կարող է շատ մեծ արժեքներ ոչնչացնել, նաև շատ երիտասարդ կյանքեր, սակայն նրա մոլեգնությունն անգոր է մի սրբազան իշխանության հանդեպ. սիրո իշխանության, որն առանց հաշվի առնելու մարդկանց և ժողովուրդներին միմյանցից բաժանող արգելազծերը՝ իր ճանապարհն է գտնում դեպի բոլոր զրկվածները: ... Աստված Մեր է»:¹⁷³⁴

Նույն ներշնչանքով և վճռականությամբ էր հատկանշվում նաև 1940 թ-ի սկզբից հրատարակվող փոքրիկ պարբերականը, որ կրում էր «*Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!*» («Տեղեկություններ մեր անդամներին և բարեկամներին») վերնագիրը: «Տերը, որի ծառայության մեջ մենք մեզ գիտակցում ենք, մեզ չի լքի, - նշված էր նրա առաջին

1733. Անդ:

1734. Fleischmann P., Gott ist Liebe, „Orient im Bild“, 1939, էջ 41:

համարում: - ... Եվ մենք նրանցից չենք, ուլքեր նահանջում են: ... Մենք չենք հոգնի... Խոչընդոտները մեծ են, մասամբ շատ մեծ: Սակայն ավելի մեծ, քան բոլոր խոչընդոտները, Նա է, որի հանձնարարությամբ և անունով մենք գործում ենք: Եվ Նա այս մեծ խավարի մեջ մեզ ձայնում է. Դուք աշխարհի լույսն եք»:¹⁷³⁵

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ին ուղղված՝ պատերազմի անողոք մարտահրավերները, սակայն, շարունակվում էին սպառնալով ամբողջովին կազմալուծել ընկերությունն ու նրա գործունեությունը: 1939 թ-ի վերջին ռազմաճակատ ուղարկվեց գրասենյակի ղեկավար Է. Մինկները, իսկ այնուհետև նաև հոգաբարձության անդամներ Յ. Գ. Կորսեպիուսը և Պֆանշմիդտը:¹⁷³⁶ 1940 թ-ի մայիսին զորակոչվեց նաև ընկերության գրավաճառ Յ. Նուրցենը:¹⁷³⁷ 1940 թ-ի մայիսի 25-ին, 78 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց ընկերության փոխնախագահ Ա. Վեկեսերը:¹⁷³⁸ Նույն տարվա դեկտեմբերին ծակատ ուղարկվեց նաև գրասենյակի աշխատակից Գ. Շնայդերը, իսկ 1941 թ-ի հուլիսին նրան հետևեց շրջիկ զեկուցող Յ. Մյուլերը, որը մինչ այդ եռանդուն կերպով շարունակում էր ընկերության աշխատանքների պրոպագանդման և բարեկամների հավաքագրման գործը:¹⁷³⁹ Ի լրումն այդ ամենի, 1941 թ-ի փետրվարից արգելվեց նաև ընկերության վերջին «Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!» պարբերականի հրատարակությունը, որով ամբողջովին խզվեց առանց այն էլ կազմալուծված՝ պարբերական տեղեկատվական կապը բարեկամների հետ:

Ստեղծված իրավիճակում Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի գործունեությունն ամբողջովին կաթվածահար կլիներ, եթե 1941 թ-ին բարեկամ շրջաններից հայ ժողովրդի երկու նվիրյալներ՝ օր. Վալցը և պաստո-

1735. Fleischmann P., „Ihr seid das Licht der Welt“, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 2-3:

1736. Տե՛ս Aus der Heimatarbeit, անդ, էջ 7: Յ. Գ. Կորսեպիուսը 1941 թ-ի նոյեմբերի 8-ին, 32 տարեկան հասակում զոհվեց Դոնի Ռոստովի վրա կատարված մի հարձակման ժամանակ: Տե՛ս „Geschäftsbericht 1940/41...“, էջ 6:

1737. Fleischmann P., Unseren Freunden!, „Geschäftsbericht 1940/41...“, էջ 1:

1738. Տե՛ս Albert Weckesser, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 36:

1739. Fleischmann P., Unseren Freunden!, „Geschäftsbericht 1940/41...“, էջ 1:

Զմմտ. Fleischmann P., Aus dem Heimatdienst, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1941, էջ 56:

րուհի Շնայդերը չստանձնեին գրասենյակային աշխատանքները վարելու և այդպիսով բացակա այրերին գեթ մասնակի փոխարինելու պարտականությունը:¹⁷⁴⁰ Մեծ օգնություն դարձավ նաև Ա. Կավուբչյանը, որ վերադառնալով Գերմանիա դարձյալ մտավ ընկերության ծառայության մեջ: Պարբերականների արգելման պայմաններում բարեկամների հետ հաղորդակցության պահպանման միակ հնարավորությունը շրջիկ զեկուցումներն էին, որոնց և նպատակաուղղվեց Ա. Կավուբչյանի գործունեությունը: 1941 թ-ի սեպտեմբերին Բեռլինի, հոկտեմբերին Սաքսոնիայի, նոյեմբերին և դեկտեմբերին Բավարիայի երկրամասի համայնքների հետ նրա ունեցած տեղեկատվական հանդիպումները զգալի հաջողություն ունեցան նպաստելով հայանվեր տրամադրությունների և բարեկամների հետ ընկերության ունեցած գործուն կապերի պահպանմանը:¹⁷⁴¹

Այդ նպատակին էին ծառայում նաև Պոտսդամի գրասենյակում 1941 թ-ին պարբերաբար շարունակվող ամենամսյա հավաքույթները,¹⁷⁴² ինչպես և 1940 և 1941 թթ. կազմակերպված երկու համաժողովները, որոնք կրում էին «Studienfreizeit» անվանումը, և որոնց՝ թեմատիկ մեծ ընդգրկմամբ հատկանշվող զեկուցումներին ու քննարկումներին մասնակցում էին նաև բազմաթիվ բարեկամներ: Առաջին 1940 թ-ի հունիսի 3-5-ը կայացած համաժողովում Հայաստանին և հայ ժողովրդին նվիրված ելույթների թվում առանձնահատուկ հետաքրքրություն հարուցեց հատկապես պրոֆ. Յաշկեի՝ «Սանջակի քաղաքական նշանակությունը և հայերի զրկանքները» թեմայով զեկուցումը, իսկ երկրորդ՝ 1941 թ-ի հունիսի 10-12-ը կայացած համաժողովում՝ դր. Պ. Ռոիրբախի «Հայաստանը նախկինում և այժմ» ծավալուն զեկուցումը:¹⁷⁴³

1740. Fleischmann P., Unseren Freunden!, „Geschäftsbericht 1940/41...“, էջ 1-2:

1741. «Նրա աշխատանքի նշանակությունը մեզ համար կարճ ժամանակում նկատելի դարձավ,- գրում էր այդ առթիվ Պ. Ֆլայշմանը,- ... ոչ միայն մեզ հոսող առատ նվիրատվություններով, այլև առաջին հերթին նրան զեկուցումների հրավիրող խնդրագրերով: Հիրավի, շատ մեծ է տարբերությունն այն հարցում, թե զեկուցողն իր կարդացածը կամ լսա՞ծն է պատմում, թե՞ այն, ինչը նրա կյանքի մի հատվածը կամ ավելին, նրա կյանքի բովանդակությունն է»: Անդ, էջ 2:

1742. Անդ, էջ 3:

1743. Müller H., Orient-Missions-Freizeit in Potsdam, „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, 1940, էջ 33-34: Հմնտ. Fleischmann P., Unseren Freunden!, „Geschäftsbericht 1940/41...“, էջ 4-5:

Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կողմից փաստորեն արվում էր առավելագույնը խոչընդոտները հաղթահարելու և իրադրության դրական փոփոխությունների դեպքում օգնության աշխատանքների մեկնարկումը վերստին հնարավոր դարձնելու համար, մինչդեռ ներկան շարունակ ավելի անողոք, իսկ ապագան՝ մթին ու անորոշ էր դառնում:

Վերոնշյալ համաժողովն ավանդական դարձնելու և Պոտսդամից զատ այն նաև այլ քաղաքներում կազմակերպելու ընկերության ծրագրերը¹⁷⁴⁴ ցավոք չիրականացան, և 1941 թ-ի միջոցառումը դատապարտված էր դառնալու վերջինը: Ի դերև ելան նաև արգելված ամսագրերի փոխարեն առանձին գրքույկով մի հողվածաշար հրատարակելու և բարեկամներին առաքելու հույսերը: Չնայած պրոպագանդայի նախարարությունից թույլտվությունը ստացվել էր, և «Արևելքի աշխարհից» վերնագիրը կրող այդ գրքի շարվածքն ամբողջովին պատրաստ էր, սակայն հրապարակումը թղթի օգտագործումը սահմանափակող նոր որոշումների հետևանքով ձախողվեց:¹⁷⁴⁵ Ընկերությունը կարողացավ հրապարակել և բարեկամներին առաքել միայն մի փոքրիկ տեղեկագիր, որ կրում էր «*Geschäftsbericht 1940/1941 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission*» անվանումը, և որտեղ համառոտ ի մի էին բերվում նշված տարիների ձեռքբերումները:

Այդ իրավիճակում բնականաբար մեծ կարևորություն էր ձեռք բերում ընկերության գրախանութի գործունեությունը, որտեղ շարունակվում էր Տեմպել հրատարակչության հրատարակած գրքերի վաճառքը: 1940 թ-ին այն հասարակայնությանն առաջարկում էր ի թիվս այլ աշխատությունների դր. Յոհ. Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը...», «Հայ ժողովրդի մահուղին» և Հ. Միլխտոնյանի «Զրույցներ մի հայ քրիստոնյայի հետ» աշխատությունները,¹⁷⁴⁶ իսկ 1941 թ-ի փետրվարին, երբ Լեփսիուսի աշխատություններն արդեն սպառված էին, վաճառքի էին հանվել Մ. Քրիշչյանի «Գերմանիան և հայերի բնաջնջումը» և Պ. Ֆլայշմանի «Առաքելական ծառայություն մի քրիստոնյա նահատակ ժողովրդի համար» գրքերը:¹⁷⁴⁷

1744. Անդ, էջ 5:

1745. Անդ, էջ 5-6:

1746. *Sb'ü Nachrichten der Missionshandlung, „Mittellungen an unsere Mitglieder und Freunde!“*, 1940, էջ 44:

1747. *Sb'ü Unsere Buchhandlung, „Geschäftsbericht 1940/1941...“*, էջ 7:

Պայքարն ու մաքառումները շարունակվեցին նաև հետագայում... Ուլյն վճռականությամբ, սակայն շարունակ ավելի տկարացող ուժերով: 1942 թ-ը սկսվեց առանց Ա. Կավուբչյանի աշխատակցության, 1748 և իր հնարավորությունների ներածին չափով շրջիկ զեկուցողի պարտականություններին լծվեց նաև ընկերության նախագահ Պ. Ֆլայշմանը: Նշված տարիներին Դր. Լեփսիուսի գործունեությունը հատկանշվում էր մի կողմից բարեկամների հետ հաղորդակցության այլընտրանքային ուղիների որոնման և մյուս կողմից նոր համալրումների ջանքերով, որոնք վկայում էին ստեղծված ծանր իրադրությունում ևս չնահանջելու՝ ընկերության հաստատակամությունը: Այդ ջանքերը որոշակիորեն արդյունավորվեցին, երբ 1942 թ-ից ընդլայնվեցին նամակագրական կապերը ընկերության և նրա բարեկամների միջև, իսկ 1943 թ-ին հոգաբարձության կազմում ընտրվեց դր. Յոհ. Լեփսիուսի դուստրը օր. Վիոլա Լեփսիուսը: 1749


1943 թ-ին հրապարակվեց և բարեկամներին առաքվեց նաև՝ «*Geschäftsbericht 1942/1943 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission*» անվանումը կրող մի փոքրիկ տեղեկագիր, որը ոչ միայն վերջին երկու տարիների հաշվետվություն էր, այլև ընկերության կեսդարյա առաքելության զննահատում և այդ առաքելությանը այդուհետ ևս հավատարիմ մնալու հավաստագիր. «Մենք չգիտենք, թե դրսում՝ Սիրիայում, իրադրությունն ինչպես է կերպավորվելու,- նշված էր տեղեկագրում:- Այն, թե մենք երբ և ինչպես կկարողանանք աշխատանքը վերսկսել, կախված է պատերազմի ելքից: Մենք, սակայն, մեզ հետ դեպի անորոշ ապագա ենք տանում մի երրորդություն. բազում դժբախտ մանուկների զրկանք-

1748. Ա. Կավուբչյանի բացակայության պատճառների կամ նրա ճակատագրի վերաբերյալ, ցավոք, տեղեկություններ չեն հաղորդվում:

1749. Տե՛ս *Geschäftsbericht 1942/1943 der Dr. Lepsius` Deutschen Orient-Mission*: Վ. Լեփսիուսը ծնվել է 1907 թ-ի մայիսի 14-ին Բեռլին-Լիխտերֆելդում: 1916-19 թթ. ծնողների հետ մեկնել է Գոլանդիա: Ստացել է կազմարարի կրթություն, իսկ այնուհետև ավարտել Բեռլինի սոցիալական իգական դպրոցը՝ ստանալով երիտասարդական բարեգործական աշխատանքների կազմակերպչի մասնագիտություն: Աշխատակցել է մի շարք երիտասարդական և կրոնական բարեխնամ կազմակերպությունների: 1959 թ-ից տեղափոխվելով Կասել՝ այնտեղ որպես Կանանց միության նախագահ իր ներդրումն է բերել Սպիտակ Խաչի պարբերական մամուլի հրատարակության և թղթագրական աշխատանքներին: Այժմ ապրում է Նիստեռում (Կասելի մոտ): Տե՛ս Lepsius M. R., *Die Nachkommen...*, էջ 149:

ներից և կործանումից փրկած լինելու ուրախ գիտակցությունը, երկրորդ, այնտեղ դրսում, գերմանական սիրո և զոհաբերության հուշարձան կառուցած լինելու գիտակցությունը: Կարող եմ մեզ գերմանացիներիս, նաև մեր քրիստոնեությունը պախարակել, բայց սիրո այդ ծառայությունն անպատճառ կարժևորվի: Եվ վերջապես, երրորդ, ինչ էլ որ ապագան մեզ բերի, այդ առաքելությանը հավատարիմ մնալու վճիռը, քանի որ դա համահունչ է Նրա ոգուն, որն ասել է. «ես քաղցած էի, դուք ինձ կերակրեցիք, ես ծարավ էի, դուք ինձ ջուր տվեցիք...»: Եթե հիշենք քրդերի ճամբարներից հայ կանանց և երեխաների ազատագրումը, ապա Հիսուսի այդ խոսքը բառ առ բառ ուղեկից է եղել մեր գործունեությունը: Այդ մեզ թույլ է տալիս, չնայած բոլոր զրկանքներին և անորոշությանը, մնալ ուրախ և երախտապարտ...»: 1750

Տեղեկագիրը դարձավ Դր. Լեփսիուսի ԳԱԱ-ի կեսդարյա գոյության և անխոնջ հայանվեր գործունեության վերջին արձագանքը: Պատերազմում տեղի ունեցած մեծ բեկման, Գերմանիայի մեծացող ռազմական անհաջողությունների և երկրում ուժգնացող սոցիալ-տրնտեսական ճգնաժամի պայմաններում ընկերությունը 1943 թ-ից այլևս չկարողացավ իր գոյամարտը շարունակել և ծուլվեց Բեռլինի ավետարանական միսիոներական ընկերությանը:



ԿԱՐԵՆ ՅԵՊԵԻ «Որբերի և այրիների» գաղութը Հալեպում

1750. Տե՛ս „Geschäftsbericht 1942/1943...“:

ՎԵՐՁՎԲՎՆ

Դր. Յոհ. Լեփսիուսը ստեղծեց քրիստոնեական մարդասիրության և բարեգործության հզոր ավանդույթներ՝ դառնալով մարդկային կարիքների և զրկանքների հանդեպ սիրո, հավատի և անդուլ տքնանքի աստվածային պատգամի իրական հետևորդը: Որբախնամ, արտադրական, բժշկական և կրթական բազմաբնույթ աշխատանքների ծավալմամբ նա իր ընկերության հետ միասին անգերազնահատելի ներդրում ունեցավ համիդյան կոտորածների վերքերի սպիացման. Մեծ եղեռնից մազապուրծ հայության բեկորների փրկության և վերընծյուղման հարցում՝ միաժամանակ դառնալով հայ ժողովրդի ծայնն ու դատապաշտպանը ոչ միայն Գերմանիայում, այլև աշխարհի այն բոլոր ատյաններում, որտեղ հայկական հարցը դեռևս բարախում էր: Բավական է նշել, որ 1897-1913 թվականների ընթացքում ընկերությունը կարողացավ հայթայթել և իրացնել 3, 5 միլիոն, 1914-21 թվականներին 1,7 միլիոն, իսկ 1924-38 թվականներին շուրջ 2 միլիոն մարկ գումար:¹⁷⁵¹ Եթե հիշենք, օրինակ, որ յուրաքանչյուր որբ երեխայի տարեկան խնամքի համար ծախսվում էր 100, իսկ ամենաթանկ տարիներին՝ 160-180 մարկ, ապա պարզ կդառնա, թե որքան մեծ էր ներդրված կապիտալը, և որքան ծավալուն կատարված աշխատանքները: Թե այդ առաքելությունն ինչպիսի խոչընդոտների հաղթահարման գնով պետք է իրագործվեր, կարող է ակներև դառնալ, եթե նկատի առնենք այն քաղաքական իրադրությունն ու զարգացումները, որոնցում հայտնվեց հայ ժողովուրդը 19-րդ դարի վերջին տասնամյակին և 20-րդ դարի առաջին քառորդին: Աներևակայելի ջանքերի պարբերական մամուլի, հողվածների, ուղեգրությունների և այլ աշխատությունների հրատարակման, հավաքույթների, շրջիկ զեկուցումների կազմակերպման, թուղիկների և շրջաբերականների տարածման, նամակագրության, կարծ ասած բացահայտ և ընդհատակյա քարոզչության բոլոր հնարավոր միջոցների օգտագործմամբ Լեփսիուսն ու իր ընկերությունն այնուամենայնիվ կարողացան դիմակայել թուրք-գերմանական ռազմաքաղաքական դաշինքի

1751. Տե՛ս ընկերության պարբերականներում ներկայացված ամենամյա տարեկան հաշվետվությունները: Վերոնշյալ տվյալներում, ի դեպ, 1922-23 թթ. եկամուտները ներառված չեն, քանի որ այդ տարիներին գերմանական դրամն արժեզրկման գործընթացում էր: Ըստ այդմ ընկերությունը 1922 թ-ին ունեցել է 3 376 502, 48, իսկ 1923 թ-ին 850 134 947 254 510, 21 մարկ եկամուտ:

մարտահրավերներին, ճեղքել Գայաստանի շուրջ ստեղծված լրատվական շրջափակումը և հասարակայնությանն իրազեկելով ճշմարտությունը՝ ապահովել նաև նրա տևական ու գործուն մասնակցությունն օգնության աշխատանքներին: Ի հայտ եկավ բարեգործների և նվիրատուների մի հոծ բազմություն՝ տասնամյակներ շարունակ վիթխարածավալ նյութական աջակցություն ցուցաբերելով Լեփսիուսի և նրա ընկերության հայանվեր նախածեռնություններին: Ասպարեզ եկան նաև բազում անձնագրի անհատներ, որոնք մեկնելով «առաջին ճակատ» տևականորեն, իսկ շատերը նույնիսկ ցմահ նվիրվեցին հայ ժողովրդի վերքերի ամոքմանն ու նրա որբ, անօգնական զավակների փրկության գործին:

Զգտելով օգնության հասնել վտանգված ժողովրդի ըստ հնարավորին լայն շրջանների՝ ԳԱՍ-ն հիմնեց փրկարար մասնաճյուղերի մի ամբողջ ցանց՝ իր ներկայությունն ապահովելով ոչ միայն Արևմտյան Գայաստանում (Ուռնա, Թալաս, Դիարբեքի), այլև Գյուսիսային Պարսկաստանում (Խոյ) և Բուլղարիայում (Ռուսչուկ, Վառնա), որտեղ ծայրահեղ անմխիթար վիճակում հանգրվանել էին տասնյակ հազարավոր փախստականներ: Անհնար է գերազնահատել այն նյութական և բարոյական աջակցությունը, որ հայությանը ցուցաբերվեց այդ բախտորոշ և ողբերգական իրադարձություններով լի ժամանակաշրջանում: Ընկերության հատկացրած օթևանի, խնամքի, բուժսպասարկման և աշխատատեղերի միջոցով համիդյան կոտորածները վերապրած բազմահազար որբեր և միայնակ այրիներ փրկվեցին մոլեգնող սովի և համաճարակների պայմաններում այլապես անխուսափելի թվացող մահից: Ընդ որում, հատկանշական է, որ ի տարբերություն ԳՕԳՄ-ի Ֆրանկֆուրտի կոմիտեի և Գայաստանում գործող մյուս գերմանական ու եվրոպական կազմակերպությունների, Լեփսիուսն ու իր գործընկերները հայության մեջ երբեք քարոզչական գործունեություն չվարեցին: Իրենց առաջադրանքը համարելով ոչ թե «ավետարանի քարոզումն, այլ ավետարանի պահանջների իրագործումը»՝ նրանք մինչև իսկ հարկադրված էին պարբերաբար սուր գաղափարապայքար ծավալել այդ վիճարկող կամ քննադատող հասարակական և եկեղեցական մտայնությունների դեմ:

Այստեղ կկանենայինք մեկ անգամ ևս ամփոփ անդրադառնալ այն՝ արդեն բազմիցս ի հայտ եկած հարցին, թե որո՞նք էին Լեփսիուսի այդօրինակ անշահախնդիր հայանվեր գործունեության հիմնական շարժառիթները: Որպես պատասխան սովորաբար վկայակոչվել է Լեփսիուսի «մեծ սերը»՝ հայ ժողովրդի հանդեպ, մի հիմնավորում, որը, սակայն, թերի և միակողմանի է իրականությունն արտացոլելու համար, քանի որ խնդիրն ուներ շատ ավելի բազմաշերտ և ընդգրկուն մոտիվներ:

Օգնության աշխատանքների մեկնարկման նախօրեին, ինչպես արդեն

պարզաբանվել է. Լեփսիուսը Հայաստանը դեռ բնավ չէր ճանաչում և, եթե չհաշվենք երկու հայերի, որոնց հետ նա որոշ չափով ծանոթ էր, ապա հայկական շրջանների հետ որևէ շփում չէր ունեցել: Հայ ժողովրդին օգնություն ցուցաբերելու նրա վճիռը պայմանավորված էր մի կողմից անասելի գրկանքների դեմ պայքարելու՝ մարդասիրական մղումներով, և մյուս կողմից Արևելքի հալածվող քրիստոնյաներին սատարելու՝ արդեն իսկ իսլամին «մարտահրավեր» նետած քրիստոնյա գործչի շահագրգռություններով:

«Մարդասպանների մեջ ընկած ժողովրդին» ցուցաբերվող «սամարացու ծառայությունը», սակայն, հայկական շրջանների հետ շփումների և համապատասխանաբար հայ ազգային ֆենոմենի ճանաչողության ընթացքում Լեփսիուսի և նրա աշխատակիցների համար կարճ ժամանակում վերածեց՝ Արևելքի և առհասարակ մարդկության ապագայի համար կենսականորեն կարևոր նշանակություն ունեցող առաքելության, քանի որ ի դեմս հայ ժողովրդի նրանք հայտնագործեցին բացառիկ օժտվածության այն միակ կարող ներուժը, որ ի վիճակի էր ստանձնել և իրականացնել Արևելքի լուսավորման ու զարգացման գործը՝ դառնալով այնտեղ Գերմանիայի և Եվրոպայի հիմնական գործընկերը: «Պարսկաստանի և ասիական թուրքիայի բացման և մշակութային զարգացման հարցում,- ընդգծում էր ԳԱԱ-ի աշխատակիցը,- հայերը պետք է կատարեն զլխավոր դերը...»: ¹⁷⁵²

Ընկերության հրապարակախոսական հայեցակարգում մշտապես ընդգծվող այդ տեսադրույթի ¹⁷⁵³ հայության համար սպառնալիքներով և ողբերգություններով լի ժամանակաշրջանում ինքնին ածանցվում էր նաև հակադարձ հարցադրումը. մասնավորապես, թե որպիսի հետևանքներ կարող էր ունենալ հայ ժողովրդի հյուսիսային և ոչնչացման թուրքական կառավարության քաղաքականությունը: Պատասխանը բնականաբար մեկն էր. Արևելքի և Առաջավոր Ասիայի երկրների զարգացման արգելակումն ու ի վերջո նաև «կործանումը»:

ԳԱԱ-ն, որպես կանոն, մշտապես առաջնորդվում էր հայ ժողովրդի այդ բացառիկ առաքելության հստակ գիտակցումով՝ իր «օգնության գործ»-ը համարելով նաև հայությանն այդ առաքելությանը նախապատրաստելու և դրա իրագործումը հնարավոր դարձնելու նախադրյալ և ձգտելով «Արևելքի

1752. „Der Christliche Orient“, 1913, էջ 100:

1753. «Հայ ժողովուրդը,- նշվում էր մեկ այլ հրապարակման մեջ,- անկասկած կարող է համարվել ողջ Առաջավոր Ասիայի ամենաաշխատասեր և մշակութապես ամենաուսման ժողովուրդը... »: Անդ, 1913, էջ 220: «Նրանք միակ ժողովուրդն են,- գրում էր մեկ այլ ժամանակակից,- որն այս տարածաշրջանում իրեն դրսևորել է որպես մշակութային ժողովուրդ»: Անդ, 1908, էջ 117-118 և այլն:

ամենաօժտված ժողովրդին ապահովել այն դերը, որ վայել էր նրան»:¹⁷⁵⁴

Մեծ մարդասերը և մտածողը չէր հանդուրժում պետական-քաղաքական և այլ շահերով պայմանավորված և ոչ մի արգելք: Նա պատրաստ էր հրաժարվել այն ամենից, ինչ նրան կարող էր խանգարել իր սկզբունքներին հավատարիմ մնալ... եկեղեցական ծառայությունից, անձնական ունեցվածքից և նույնիսկ, ինչպես արդեն լուսաբանվել է, իր վաղեմի այն գործընկերներից, ովքեր հայօգնության աշխատանքների համար ստեղծված առավել աննպաստ իրադրություններում նրան հետևելու քաջություն չունեցան:

Հայաստանի օգնության «գործը» բացահայտ և ընդհատակյա կերպով շարունակվեց մինչև իսկ առաջին աշխարհամարտի տարիներին, գերմանա-թուրքական ռազմական դաշինքի և գրաքննության խստագույն արգելքների պայմաններում, և չնայած քաղաքական շահերի ու բարոյականության հարկադիր սահմանազատման՝ այդ շրջափուլում շատերը բարոյալքում և նահանջ ապրեցին, սակայն դա չխանգարեց, որպեսզի Լեփսիուսը, մինչև իսկ տարագրության և ծանրագույն զրկանքների գնով, իր հայանվեր առաքելությունը շարունակեր: «Իմ կյանքի շատ փորձառություններից ես կարողացա այն եզրակացությունը կատարել,- գրում էր նա իր կյանքի վերջալույսին,- որ երբեք վնասներ չես կրում, երբ պարզապես գործում ես ըստ քո համոզմունքի, և որ առանց մտահոգվելու ցանկացած «կյանքի գործ» կարող ես զոհաբերել, եթե ինքդ քեզ հավատարիմ մնալու այլ ճանապարհ չես տեսնում»:¹⁷⁵⁵

Այդ շրջանում նրանց գործունեությունը բնութագրվում էր մի կողմից հայ ժողովրդի բնաջնջումը կասեցնելու և այդ նպատակով Գերմանիայի կառավարությանն ակտիվ միջամտությունների դրդելու համար գերմանական ու եվրոպական ազդեցիկ հասարակական ուժերը համախմբելու, և մյուս կողմից՝ 1916 թ-ի վերջից Թուրքիայի մեծ քաղաքներում կոտակվող, արքորը վերապրած բազմահազար հայ որբերին և կանանց գոյատևման պայմաններ ստեղծելու ջանքերով: Այդ ամենը պետք է կատարվեր մի իրադրությունում, երբ երկրում գրաքննության ուղեկցությամբ իր հաղթարշավն էր կատարում Հայկական հարցը պատերազմի ընթացքում լռության մատնելու պետական քարոզչությունը: Դաժան էր խղճին և բարոյականությանը ծառայող անհատի բախումը պետական քարոզչության պահանջներին համարկերպված միջավայրի հետ: Նա առանձին ժամանակափուլերում հարկադրո-

1754. Der Orient, 1926, էջ 121:

1755. Lepsius J., Persönliches, „Der Orient“, 1925, էջ 105: Լեփսիուսն, այդ ասելով, նկատի ուներ նաև իր առաջին ընկերությանը՝ ԳԱԱ-ին, որին մինչև հայտնի պառակտումը նա սովորաբար անվանում էր իր «կյանքի գործը»:

ված էր նույնիսկ գրեթե միայնակ մնալ և Գերմանիայում սպառելով հասարակության իրազեկման՝ բացահայտ և ընդհատակյա բոլոր հնարավորությունները՝ մեկնել Դոլանդիա՝ այնտեղ ավելի անկաշկանդ լինելու, հայերի արտերկրի բարեկամների հետ համագործակցության ուղիներ մշակելու, և վերջապես սեփական ընկերության վերակազմման միջոցով «օգնության գործը» կազմակերպական նոր հիմքերի վրա դնելու համար:

Անգերագնահատելի է այն վիթխարի ծառայությունն ու վաստակը, որ ունեցան Լեփսիուսն ու նրա հավատարիմ ընկերները աշխարհամարտի տարիներին և այնուհետև ևս հայ աքսորյալների՝ դեռևս կենդանի մնացորդներին փրկելու և երիտթուրքերի ոճրագործությունները հրապարակայնորեն դատապարտելու հարցում:


Զինադադարից հետո, կարողանալով հաղթահարել Գերմանիայի տնտեսական ճգնաժամի սպառնալիքները, նա իր ընկերության հետ միասին շարունակեց փրկարար աշխատանքները, որոնք նախկին մասնաճյուղերի լուծարումից հետո վերակազմակերպվեցին արևմտահայության մնացորդների երկու մեծ հանգրվաններում՝ Սիրիայում և Լիբանանում: Ընդ որում, դրանք առանձին ուղրտներում սահմանափակված չէին, այլ նույնքան բազմաբնույթ ու բազմազան էին, որքան բազմազան էին նոր զրկանքները, որքանոցների հիմնում, մահմեդականների կողմից առևանգված երեխաների և կանանց ազատագրում, բուժսպասարկում, աշխատատեղերի ստեղծում, նյութական օգնություն չքավոր ընտանիքներին, բնակչինարարություն, աղքատախնամություն, նոր բնակավայրերի հիմնում, վերաբնակեցում... Այդ ամենին մշտապես ուղեկցում էր նաև մեկ այլ՝ հրապարակախոսական ճակատում Լեփսիուսի և նրա գործընկերների կողմից ծավալվող պայքարը, որի ընթացքում համաշխարհային հանրությանը ներկայացնելով Դայաստանում տեղի ունեցած իրադարձությունների բուն պատկերը՝ նրանք ջանում էին զորավիգ լինել դարձյալ միջազգային քննարկումների առարկա դարձած Դայակական հարցին:

Լեփսիուսն ի դեմս իր ընկերության ձևավորեց մի ամբողջ դպրոց, որն իր առաջնորդի մեծ գործը նրա վճռականությամբ և նվիրումով շարունակեց նաև նրա մահից հետո... նույնիսկ այնպիսի՝ վտանգաշատ և փակուղային թվացող ժամանակաշրջանում, երբ Գերմանիայում իշխանության գլուխ անցան նացիոնալ-սոցիալիստները, և համապատասխանաբար ի հայտ եկան բարեգործական ու միսիոներական կազմակերպությունների գործունեությունը կաշկանդող բազմաթիվ օրենսդրական արգելքները: Մինչև երկրորդ աշխարհամարտի սկիզբն անընդմեջ զարգացվող՝ համապարփակ օգնության աշխատանքներով, իսկ այնուհետև այդ աշխատանքների պահպանմանն ու շարունակմանը ձգտող՝ անօրինակ մաքառումներով հատկանշվող՝ ընկերության կենդարյա տարեգրության պատմությունը, բնականաբար, ունի ոչ

միայն պատմագիտական, պատմաբանասիրական և մշակութաբանական մեծ նշանակություն... Ներկայումս, երբ Հայաստանի անկախացմամբ հնարավոր է դարձել քաղաքական կաշկանդումներից ձերբազատել հայոց պատմության առայսօր դեռևս մութ մնացած էջերը, և Հայոց ցեղասպանության ու Հայկական հարցի արժարժումները դարձյալ թևակոխել են միջազգային օրակարգ, այն ձեռք է բերում նաև այժմեական քաղաքական մեծ հղմաձեռնություն:




Խարր Պետրոս



ՅՈՐԱՆՆԷՍ
ԼԵՓՍԻՈՒՄԻ
չիրիմը
Սևրանոյում

ԿԱՐԵՆ ՅԵՊԵՏԻ չիրիմը Հալեպում



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

Արխիվային նյութեր

1. ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ, Քաղվածքների ֆոնդ, ֆոնդ 102, գ. 40, քղթ. 56, 75:
2. Մաշտոցի անվ. Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ, քղթ. 18, վավ. 16, քղթ. 71, վավ. 276, քղթ. 167, վավ. 56:
3. Dr. Johannes-Lepsius-Archiv an der Martin-Luther Universität Halle-Wittenberg, z. Z. Franckeplatz 1, Haus 30, 06110 Halle, Postanschrift: 06099, Halle.
4. Nachlaß Martin Rade, Sig.: MS. 839. Archiv der Universitätsbibliothek Marburg (Nachlaß Rade). Philipps-Universität Marburg, Biegenstraße 10. D – 35032 Marburg.

Ինտերնետային փաստաթղթեր

Revidierte Ausgabe der von Johannes Lepsius 1919 unter dem Titel "Deutschland und Armenien" herausgegebenen Sammlung diplomatischer Aktenstücke, zusammengestellt und eingeleitet von Wolfgang Gust. Տե՛ս ինտերնետային ցանցում. <http://home.t-online.de/home/wolfgang.gust/dvita.htm>:

Փաստաթղթերի ժողովածուներ

- Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ և առաջարանով, Երևան, 1972:
- Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991:
- Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской

Германии. Сборник под редакцией В. Микаеляна, Ереван, 1995.
 Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. М. Г. Нерсисяна, второе дополненное издание, Ереван, 1966.
 Германские источники о геноциде армян. Сборник документов и материалов в 2-х томах под редакцией С. С. Степаняна, т. 1, Ереван, 1991.
 Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919.
 Der grüne Tisch, Sammlung von Aktenstücken über die Gründe meines Austritts aus der Deutschen Orient-Mission, Herausgegeben von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1920.
 Die Große Politik der Europäischen Kabinette 1871-1914, Hg. Lepsius, Johannes, Mendelssohn-Bartholdy, Albrecht, Thimme, Friedrich, Bd. 2, 9, 10, 12, 34, 38, Berlin, 1923-1927.
 A. Andonian. Documents officiels concernant les massacres Armeniens- Reproduction Photographique d'un grand nombre de documents. Paris, 1920.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և այլ գրականություն

Աղոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989:
 Ալեմետտին Ի., Փափա Քինցլեր եւ հայերը, Անթիլիաս, 1999:
 Ալուոնի Ս., Միլիոն մը հայերու ցարդի պատմությունը, Կ. Պոլիս, 1920:
 Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:
 - Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1982,
 Ամֆիտեատրով Մ., Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906:
 Անանուն Դ., Փորձության ժամին, «Գործ», 1917, ք. 1:
 Ավագյան Է., Ուրֆայի վերջին ահազանգը, Երևան, 1990:
 Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973:
 - Հայաստան 1914-1917, Երևան, 1969:
 - Նանսենը և Հայաստանը, Երևան, 1977:
 Արծրունի Գր., Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894:
 Ասոռն, Օսմանյան կայսրության անկման պատմությունը, Կ. Պոլիս, 1913:
 Բադայան Խ., «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1887 թ., Երևան, 1955:
 Բարխուդարյան Վ.; Ոսկանյան Վ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978:

- Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է հայոց
ցեղասպանությունը, Երևան, 1998:
- Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները,
Երևան, 1999:
 - Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմա-
կերպությունների կողմից (1984-1987), Երևան, 1999:
 - Ամերիկայի միացյալ նահանգները, հայոց ցեղասպանության դա-
տապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001:
 - Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման
և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Երևան, 2001:
- Բարսեղով Յ., Հայերի ցեղասպանության համար նյութական պատաս-
խանատվությունը, Երևան, 1999:
- Բյուրախ Ս., Արևելյան խնդիրը և հայկական հարցը, Կ. Պոլիս, 1919:
- Գաեուճեան Ե., Յուշեր Ուրֆայի 1915 թ. հերոսամարտի ու հետագա
իրադարձություններու մասին, Երևան, 1995:
- Գասպարյան Ե., Մեծ եղեռնը և Ֆրանսիան (1915-1918 թթ.), Երևան, 2000:
- Գեղամյան Ե., Պատմության դասերը, Բաքու, 1915:
- Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2001:
- Գուլյան Ս., Ինքնավար Հայաստան, Թիֆլիս, 1915:
- Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890-
են 1940), Փարիզ, 1947:
- Եղիայան Բ., Հայ կաթոլիկ և ավետարանական հարանվանության բա-
ժանումը ԺԹ դարում, Անթիլիաս, 1971:
- Ետայան Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը,
Երևան, 1965:
- Զավեն Արքեպս., Պատրիարքական հուշերու. վավերագրեր և վկայու-
թյուններ, Կահիրե, 1947:
- Զատիկյան Հ., Հայկական հարցը 1920 թ-ին և Սևրի պայմանագիրը:
Տե՛ս Հայրենիք և ժառանգություն, Երևան, 2001:
- Զոհրապ Գ., Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, Կ. Պոլիս, 1910:
- Էքարտ Բ., Ալլախու օրերը Ուրֆայում, Երևան, 1990:
- Թավադրյան Գ., Երազանքի ու տազնապանքի տարիներ 1908-1915,
Կահիրե, 1961:
- Թմիրյան Ա., Ջեսապ (1906-1946), Բեյրութ, 1956:
- Թումայան Կ., Պատմություն Արևելյան խնդրի և առաջնորդ հայկական
հարցի, հ. Ա-Բ, Լոնդոն, 1905:
- Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1989:
- Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան,

- Թիֆլիս, 1907:
- Գերմանիայի և Թուրքիայի տնտեսաքաղաքական փոխհարաբերությունները, Թիֆլիս, 1915:
- Լազյան Գ., Հայաստան եւ Հայ դատը, Երևան, 1991:
- Լեռ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915:
- Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1934:
 - Անցյալից, Թիֆլիս, 1925:
 - Հայ հայրենիքը, Թիֆլիս, 1915:
- Լրոյդ Ջ., Լրոյդ Ջորջի հռչակավոր ճառը և հայկական խնդիրը անգլիական խորհրդարանին մեջ, Կ. Պոլիս, 1919:
- Խորշոտյան Լ., Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977:
- Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, (19-րդ դարի 80-ական թթ.), Երևան, 1980:
- Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967:
 - Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 1-2, Երևան, 1982-1983:
- Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979:
- Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Երևան, 1990:
- Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977:
- Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երևան, 1980:
- Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985:
- Հարությունյան Բ., «Աշխարհագոյցը» և չորս Հայքերի խնդիրը, Երևան, 1997:
- Հարությունյան Ա., Ռուսական րանակի նահանջի և Վան-Վասպուրականի 1915 թ. մեծ գաղթի հարցի շուրջ, տե՛ս «Ժրգան-Նամե», հ. 37, 2001, էջ 10-11:
- Հուշամատյան Մեծ Եղեռնի, Բեյրութ, 1965:
- Ղազարյան Խ. Բ., Բարենորոգչական նախաձեռնությունները հայ առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Էջմիածին, 1999:
- Ղազարյան Հ., Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2001:
- Ղարիբջանյան Գ., Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Երևան, 1971:

Մանուչարյան Հ., Հայ քաղաքագիտական մտքի պատմության պարբերացման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», ք. 1, Երևան, 1999, էջ 61-69:

Մելիք-Կարազոյույան Գ., Գերմանական օգնության ընկերությունը Տաճկահայաստանի համար, Թիֆլիս, 1901:

Մելվան զադե Ռիֆաթ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծայրերը, Բեյրութ, 1938:

Միքայելյան Զ., Հեղափոխականի մտքերը, Երևան, 1990:

Միքայելյան Վ., Գերմանացի դիվանագետները հայոց ինքնապաշտպանական մարտերի մասին, Երևան, 1997:

- Հայոց ցեղասպանությունը գերմանացի դիվանագետների հատուկագրություններում: Տե՛ս «1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմության և պատմագրության հարցեր» հոդվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 21-35:
- Հովհաննես Լեփսիտու. քանկ և անմահ անուն, «Երկիր», 1998, ապր. 22-ի թող., էջ 7:

Մորզենթաու Հ., Ամերիկյան դեսպան Հենրի Մորզենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990:

Մարյան Չ., 1915 թվի ցեղասպանությունը և օսմանյան արխիվները, Անթիլիաս, 994:

Յակովրոս Հ. Տաշեան Վ., Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագիրներու համեմատ, Վիեննա, 1921:

Չերազ Մ., Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովեն, Կ. Պոլիս, 1878:

Չոպանյան Ա., Հայաստանը թուրքին լծի տակ, Բոստոն, 1918:

Պալասանյան Ս., Պատմություն հայոց, Թիֆլիս, 1895:

Պողոսյան Ս., Արևմտահայությունը ցեղասպանության շեմին, Երևան, 1997:

- Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1988:
- Թուրքերը թուրքերի մասին, Երևան, 2000:
- Հայկական հարցի և հայոց ցեղասպանության մատենագիտություն, Երևան, 2000:
- Պանթուրքիզմը երեկ և այսօր, Երևան, 1990:
- Պողոսյան, Կարո. Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2000:

Ռուբեն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատոր, Թեհրան, 1982:

Սահակեան Ա., Գիւցազնական Ուրֆան եւ իր հայտորդիները, Բեյրութ, 1955:

Սահակյան Ռ., Խուդավերդյան Կ., Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Երևան, 1995:

Սատուրի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ (1914-1918), Բոստոն, 1927:

- Թուրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918),
Բեյրութ, 966:
- Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության
մենզգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963:
- Սարտիսան, Ազգային խնդիրն ու սահմանադրությունը Թուրքիայում,
Թիֆլիս, 1901:
- Սարտիսանյան Ն., Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարա-
կական քաղաքական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997:
- Մերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937:
- Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Գահիրե, 1948:
- Միմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությու-
նը և քաղաքականությունը, Երևան, 1986:
- Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:
«Մոդոնոն Թեխերյանի դատավարությունը», սղագրական զեկուցում,
Երևան, 1990:
- Ստեփանյան Ս., Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը, Երևան, 1998:
Վերֆել Ֆ., Մուսա լեռան 40 օրը, Երևան, 1964:
- Տատրյան Վ., Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և
պատմագիտական քննարկումներով, Վաթերֆատն, 1995:
- Տեր-Պետրոսյան Հ., Ջեյմս Բրայս և հայերը, Կահիրե, 1975:
- Փափիազյան Ա., Ժամանակագրություն, Հայկական հարցը և Մեծ եղե-
նը (1876-2000), Երևան, 2000:
- Օհանջանյան Ա., 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ալստրի-
ական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997:

- Abeghian, Artasches, Geschichte Armeniens, Stuttgart, 1948.
- Akten des internationalen Dr. Johannes-Lepsius-Symposiums an der
Martin-Luther-Universität Halle-Wittenberg, Halle (Saale), 1987.
- Alp, Tekin, Türkismus und Pantürkismus, Weimar, 1915.
- Awetaranian, Johannes, Geschichte eines Mohammedaners, der Christ
wurde, Potsdam, 1930.
- Augustiny, W., Gehet hin in alle Welt, Gütersloh, 1962.
- Bamberg, F., Geschichte der orientalischen Angelegenheit im Zeitraume
des Pariser und des Berliner Friedens, Berlin, 1892.
- Banse, Ewald, Die Türkei, Braunschweig, 1916.
- Die Türken und wir, Weimar, 1917.
- Barckhausen, Joachim, Männer und Mächte am Bosphorus, Berlin, 1938.

- Baronigian, Armenag, Ein Stück Hölle auf Erden, Lößnitzgrund, 1921.*
- Bartov, Omer, Widerschein der Zerstörung. Krieg, Genozid und moderne Identität, s. „Zeitschrift für Genozidforschung“, Heft 1, Bochum, 1999, S. 46-70.*
- Bauer, Elizabeth, Armenien – Geschichte und Gegenwart, Luzern, 1979.*
- Bauer, Walter, Das Gewissen Europas, Gütersloh, 1947.*
- Baumer, Iso, Prinz Max von Sachsen und Armenien, Bremen, 1986.*
- Berkian, A. J., Zwischen Scheinobjektivität und Türkenliebe, s. „Armenisch-Deutsche Korrespondenz“, Mainz, 1985, S. 19-21.*
- Bernstein, Eduard, Die Leiden des armenischen Volkes und die Pflichten Europas, Berlin, 1902.*
- Beyschlag, Willibald, Die armenische Angelegenheit, s. „Deutsch-Evangelische Blätter“, 1896, S. 711-716.*
- Rezension von Lepsius, Armenien und Europa, eine Anklageschrift (Berlin, September 1896), „Deutsch-evangelische Blätter“, 1896, S. 776-795.*
- Blücher, Wipert von, Deutschlands Weg nach Rapallo, Wiesbaden, 1951.*
- Brandenburg, Erich, Von Bismarck zum Weltkrieg, 2. Auflage, Berlin, 1925.*
- Bratter, C. A., Die armenische Frage, Berlin, 1915.*
- Burt, Joseph, The People of Ararat, London, 1926.*
- Christoffel, Ernst, Zwischen Saat und Ernte, Berlin, 1933.*
- Churchill, Winston, Die Weltkrise 1911-1918, Zürich, 1947.*
- Degen, Walter, Zur Geschichte der gesetzlichen Behandlung der Christen im türkischen Staat des 19. Jahrhunderts, Zürich, 1917.*
- Delbrück, Hans, Krieg und Politik 1914-1918, Berlin, 1919.*
- Delfs, Hermann, Die Politik der Mächte beim Zerfall des Osmanischen Reiches, Kiel, 1954.*
- Deutsch-Armenische Gesellschaft, Armeniertum-Ariertum, Potsdam, 1934.*
- „Armenien“, Potsdam, 1919.*
- „Das armenische Problem“, Berlin, 1918.*
- Deutsche Biographische Enzyklopädie, Herausgegeben von Walther Killi und Rudolf Vierhaus, Bd. 6, 8, München, 1999.*
- Deutscher Hilfsbund, Skizzen und Bilder aus dem Orient, Dinglingen, 1899.*
- Armeniens Schicksal, Fankfurt, 1921.*
- „Deutschland, Armenien und die Türkei“, Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv, München, 1998.*
- Diedrich, Hans Christian, Johannes Lepsius, s. „Zeichen der Zeit“, Berlin, 1973, S. 424- 428.*
- Dieckerhoff, Luise, Deutschland – England und das Orient-Problem in*

- den neunziger Jahren, Münster, 1926.
- Djemat Pascha, Ahmed, *Erinnerungen eines türkischen Staatsmannes*, München, 1922.
- Dörner, Friedrich Karl, *Vom Bosphorus zum Ararat*, Mainz, 1984.
- Duda, Herbert W., *Vom Kalifat zur Republik*, Wien, 1948.
- Eckart, Bruno, *Meine Erlebnisse in Urfa*, Potsdam, 1922.
- Ehrhard, Albert, *Die orientalische Kirchenfrage*, Wien, 1899.
- Ehrhold, Käthe, *Flucht in die Heimat*, Dresden/Leipzig, 1937.
- Emin, Ahmed, *Die Türkei*, Gotha, 1918.
- Endres, Karl Franz, *Die Türkei*, München, 1916.
- Erb, Alfons, *Der Krieg gegen die Armenier*, s. „*Vom frohen Leben*“, 1932, S. 387-392.
- Erzberger, Matthias, *Erlebnisse im Weltkrieg*, Berlin, 1920.
- Feigel, Uwe, *Das evangelische Deutschland und Armenien*, Göttingen, 1989.
- Fischer, Heinz-Dietrich, *Pressekonzentration und Zensurpraxis im ersten Weltkrieg*, Berlin, 1973.
- Frech, Fr., *Der Kriegsschauplatz in Armenien und Mesopotamien*, Leipzig/Berlin, 1916.
- Freudenberger, Rudolf, *Christenverfolgungen*, s. „*Theologische Realenzyklopädie*“, Bd. 8, S. 37-40.
- Friedemann, Martha Anna, *Das Mutter-Annem-Buch*, Potsdam, 1927.
- Froberger, J., *Deutschland und die Türkei*, s. „*Deutschland und der Katholizismus*“, Bd. 2, Freiburg, 1918, S. 423-431.
- Gerlach, Hellmut von, *Die große Zeit der Lüge*, Charlottenburg, 1926.
- „*Das Verbrechen des Schweigens*“, herausg. von der Gesellschaft für bedrohte Völker, Göttingen, 1984.
- Giesl, Wladimir, *Zwei Jahrzehnte im Nahen Osten*, Berlin, 1927.
- Glasneck, Johannes, *Kemal Atatürk und die moderne Türkei*, Berlin, 1971.
- Gleich, Gerold von, *Vom Balkan nach Bagdad*, Berlin, 1921.
- Goltz, Colmar Freiherr von der, *Denkwürdigkeiten*, Berlin, 1929.
- Goltz, Hermann, *Zwischen Deutschland und Armenien*, s. „*Theologische Literaturzeitung*“, Berlin, (1983), S. 865-886.
- *Armenien gedenkt des „Anwalts der Armenier“*, s. „*Standpunkt*“, Berlin, (1981), S. 109-111; 162-166; 327-331.
- *Erinnerungen an den Vater*, s. „*Standpunkt*“, Berlin, (1976), S. 18-20.
- Gramm, Oskar, *Politik und Wehrpolitik bei Friedrich Naumann*, Würzburg/Aumühle, 1939.
- Grothe, Hugo, *Auf türkischer Erde*, Berlin, 1903.

- *Die Türken und ihre Gegner, Frankfurt, 1915.*
- *Der russisch-türkische Kriegsschauplatz, Leipzig, 1915.*
- *Deutschland, die Türkei und der Islam, Leipzig, 1914.*
- Guse, Felix, *Der Armenieraufstand 1915 und seine Folgen, s. „Wissen und Wehr“, 1925, S. 609-621.***
- Guyer-Zeller, *Der Türkenherrschaft Ende, Zürich, 1897.***
- Gust, Wolfgang, *Der Völkermord an den Armeniern – Die Tragödie des ältesten Christenvolkes der Welt, München, 1993.***
 - *Magisches Viereck. Johannes Lepsius, Deutschland und Armenien, s. im Internet: <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/GuidesView/MagischesViereckDe?OpenDocument..>*
- Hacik, Rafi Gazer, *Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen, 1996.***
- Hartmann, Martin, *Islam, Mission, Politik, Leipzig, 1912.***
- Hassert, Kurt, *Das Türkische Reich, Tübingen, 1918.***
- Heiser, Lothar, *Das Glaubenszeugnis der armenischen Kirche, Trier, 1983.***
- Heilmüller, Friedrich, *Aus 40 Jahren Dienst an Evangelium, Witten, 1950.***
- Helfferrich, Karl, *Die deutsche Türkenpolitik, Berlin, 1921.***
- Herrmann, Wilhelm, *Die Türken, die Engländer und wir deutschen Christen, Marburg, 1915.***
- Hetzel, Gertrud, *Vater Künzlers Waisen auf dem Libanon, Potsdam, 1928.***
- Hilte, *Die Orientalische Frage, Bern, 1896.***
- Hirschfeld, Magnus, *Sittengeschichte des Weltkrieges, Wien, 1930-31.***
- Hoffmann, Adolf, *Im türkischen Kerker, Berlin, 1897.***
- Hofmann, Tessa, *Armenier und Armenien-Heimat und Exil, Hamburg, 1994.***
 - *Der Völkermord an den Armeniern vor Gericht. Der Prozeß Talaat Pascha, Göttingen, 1980.*
- Holborn, Hajo, *Deutschland und die Türkei 1878-1890, Berlin, 1926.***
- Hopf, Alfred, *Unter Verfolgung und Trübsal, Meiningen, 1928.***
- Hovannissian, Richard, *Armenia on the Road to Independence 1918, Los Angeles, 1967.***
- Hünemann, W., *Geschichte der Weltmission, Luzern/München, 1960.***
- Hurwicz, Elias, *Die Orientpolitik der dritten Internationale, Berlin, 1922.***
- Jäckh, Ernst, *Der aufsteigende Halbmond, Berlin, 1933.***
 - *Die deutsch-türkische Waffenbrüderschaft, Stuttgart/Berlin, 1915.*
 - *Die Türkei und Deutschland, Berlin, 1916.*
 - *Die Türkei, Leipzig, 1918.*

- Jäschke, Gotthard, Der Freiheitskampf des türkischen Volkes, Berlin, 1932.*
 - *Johannes Lepsius, s. „Zeichen der Zeit“, Berlin, 1958, S. 447-450.*
- Jeppe, Karen, Aus dem Flüchtlingsheim in Aleppo, Potsdam, 1926.*
- Johannes Lepsius zum Gedächtnis, Potsdam, 1926.*
- Kampen, Wilhelm von, Studien zur deutschen Türkeipolitik in der Zeit Wilhelms II., Kiel, 1968.*
- Kawerau, Peter, Amerika und die Orientalischen Kirchen, Berlin, 1958.*
- Kießling, Hans von, Mit Generalfeldmarschall von der Goltz Pascha in Mesopotamien und Persien, Leipzig, 1922.*
- Koszyk, Kurt, Deutsche Pressepolitik im 1. Weltkrieg, Düsseldorf, 1968.*
- Kressenstein, Kress von, Mit den Türken zum Suezkanal, Berlin, 1977.*
- Krischtschian, Melkon, Deutschland und die Ausrottung der Armenier in der Türkei, Potsdam, 1930.*
- Krüger, Karl, Die Türkei, Berlin, 1951.*
- Küntzer, Abdul Hamid II. und die Reformation in der Türkei, Dresden/Leipzig, 1897.*
- Künzler, Jakob, Dein Volk ist mein Volk, Basel, 1939.*
 - *Im Lande des Blutes und der Tränen. Potsdam, 1921.*
 - *Dreißig Jahre Dienst am Orient, Basel, 1933.*
 - *Köbi. Vater der Armenier, Kassel, 1967*
- Lammeyer, Josef, Das französische Protektorat über die Christen im Orient, Erlangen, 1919.*
- Lanne, Peter, Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts, München, 1977.*
- Lehmann-Haupt, Carl Friedrich, Armenien einst und jetzt, 3 Bände, Berlin, 1910, 1926, 1931.*
- Lehmann-Haupt, Therese, Erlebnisse eines zwölfjährigen Knaben während der armenischen Deportation, Bremen, 1985.*
- Lepsius, Bernhard, Das Haus Lepsius, Berlin, 1933.*
- Lepsius, Carlpetar, Der Stammbaum von Peter Leps aus Wertlau, Düsseldorf, 1999.*
- Lepsius, Johannes, Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896.*
 - *Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.*
 - *Der Todesgang des armenischen Volkes, Potsdam, 1919.*
- Lepsius, Rainer M., Die Nachkommen von Richard und Elisabeth Lepsius, Weinheim, 1984.*

- Leupold, Erich, Die Außenpolitik in den bedeutendsten politischen Zeitschriften Deutschlands 1890-1909, Leipzig, 1933.*
- Liebknecht, K., Gesammelte Reden und Schriften, Bd. VIII, Berlin, 1966.*
- Liman von Sanders, Otto, Fünf Jahre Türkei, Berlin, 1920.*
- Lindow, E., Freiherr Marschall von Bieberstein als Botschafter in Konstantinopel, Berlin, 1934.*
- Lohmann, Ernst, Nur ein Leben, Schwerin, 1933.*
- Ludendorff, Erich, Meine Kriegserinnerungen, Berlin, 1919.*
- Luxemburg, Rosa, Gesammelte Werke, Bd. 1, Berlin, 1970.*
- Lübeck Konrad, Die christlichen Kirchen des Orients, Kempten, 1911.*
- Mandelstam, Andre, Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechts, Berlin, 1931.*
- Meibaum, Werner, Das publizistische Schaffen Paul Rohrbachs vor Ausbruch des 1. Weltkrieges, Marburg, 1955.*
- Marquart, Joseph, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Berlin, 1919.*
- Max von Sachsen, Prinz, Vorlesungen über die orientalische Kirchenfrage, Fribourg, 1907.*
- Meyer, Enno; Berkian Ara: Zwischen Rhein und Arax. 900 Jahre Deutsch-Armenische Beziehungen, Oldenburg, 1988.*
- Meyer, Erich, Deutsch-Evangelisch im Orient, Berlin, 1916.*
- Meyer, Karl, Armenien und die Schweiz, Bern, 1974.*
- Mirbach, Ernst Freiherr von, Die Reise des Kaisers und der Kaiserin nach Palästina, Berlin, 1899.*
- Mirbt, Carl, Die evangelische Mission Deutschlands unter dem Druck des gegenwärtigen Weltkrieges, Berlin, 1917.*
- Mittwoch, Eugen, Deutschland, die Türkei und der Heilige Krieg, Berlin, 1914.*
- Moltke, Helmuth von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835-39, Berlin, 1893.*
- Morgenthau, H., Ambassador Morgenthau's story, Garden-City-new York, 1918.*
- Mühlmann, Carl, Deutschland und die Türkei 1913-1914, Berlin, 1929.*
- Mühsam, Kurt, Wie wir belogen wurden, München, 1918.*
- Müller, Karl Hermann, Die wirtschaftliche Bedeutung der Bagdadbahn, Hamburg, 1917.*
- Münir, Orhan, Minderheiten im Osmanischen Reich und in der neuen Türkei, Köln, 1939.*
- Mussler, Wolhelm Julius, Die Türkei, Freiburg, 1929.*

- Nahmer, Ernst von der, Vom Mittelmeer zum Pontus, Berlin, 1904.*
Nansen, Fritjof, Betrogenes Volk, Leipzig, 1928.
Neill, Stephen, Geschichte der christlichen Mission, Erlangen, 1974.
Nickisch, Reinhard, Armin T. Wegner. Ein Dichter gegen die Macht. Grundlinien einer Biographie des Expressionisten und Weltreporters Armin T. Wegner (1886-1978), Wuppertal 1982.
Nicolson, Harold, Die Verschwörung der Diplomatie, Frankfurt, 1930.
Niepage, Martin, Ein Wort an die berufenen Vertreter des deutschen Volkes, Potsdam, 1916.
 - *Eindrücke eines deutschen Oberlehrers aus der Türkei, Potsdam, 1919.*
Nolde, Eduard, Reise nach Innenarabien, Kurdistan und Armenien, Braunschweig, 1895.
Nürnberg, Richard, Imperialismus, Sozialismus und Christentum bei Friedrich Naumann, s. „Historische Zeitschrift“, München, 1950, S. 525-548.
Oberhammer, Roman, Durch Syrien und Kleinasien, Berlin, 1899.
Oertzen, Detwig v., Ein Christuszeuge im Orient, Gießen, 1961.
Ohandjanian, Artem, „Franz Werfel: Die vierzig Tage des Musa Dagh“, Yerevan, 1997.
 - *Die Armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutschlands, Yerevan, 2001.*
Ondoukhanian, Azat, „Armenische Displaced Persons“ in Deutschland 1945-1953, s. „Armenisch-Deutsche Korrespondenz“, Berlin, 1998, Heft 4, S. 34-38.
Pietschman, Wictor, Durch kurdische Berge und armenische Städte, Wien, 1940.
Pomiankowski, Joseph, Der Zusammenbruch des ottomanischen Reiches, Wien, 1928.
Promptow, J., Durch das armenische Hochland, Leipzig, 1955.
Rathje, Johannes, Die Welt des freien Protestantismus, Stuttgart, 1952.
Renz, Alfred, Land um den Ararat, München, 1983.
Richter, Julius, Die Propaganda des Islam als Wegbereiterin der modernen Mission, s. „Missionswissenschaftliche Studien“, Berlin, 1904, S. 129-185.
Riemschneider, M., Das Reich am Ararat, Leipzig, 1965.
Rohrbach, Paul, In Turan und Armenien, Berlin, 1898.
 - *Im vorderen Asien, Berlin, 1901.*
 - *Vom Kaukasus zum Mittelmeer, Leipzig, 1903.*
 - *Armenien, Stuttgart, 1919.*
Rosenkranz, Gerhard, Die christliche Mission, München, 1977.
Roth, Karl, Armenien und Deutschland, Leipzig, 1915.

- Sachau, Eduard, Reise in Syrien und Mesopotamien, Leipzig, 1883.*
- Sanders, Wilm, Armenien, kleines Volk mit grossem Erbe, Hamburg, 1989.*
- Saupp, Norbert, Das deutsche Reich und die armenische Frage 1878-1914, Kjoln, 1990.*
- Schäfer, Richard, Der deutsche Krieg, die Türkei, Islam und Christentum, Leipzig, 1915.*
- *Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, 1932.*
- Schmidt, Kurt Dietrich, Christenverfolgungen, in: Evangelisches Kirchenlexikon, Bd. I, Göttingen, 1956.*
- Schmidt, Eberhard, Türkei, Berlin, 1985.*
- Schöllgen, Gregor, Stationen deutscher Außenpolitik. Von Friedrich dem Großen bis zur Gegenwart, München, 1994.*
- Schreiber, August, Der Islam und die evangelische Mission, Berlin, 1897.*
- Schütz Paul, Zwischen Nil und Kaukasus, München, 1930.*
- Schwede, Alfred Otto, Geliebte fremde Mutter, Berlin, 1974*
- Sick, Ingeborg Maria, Karen Jeppe im Kampf um ein Volk in Not, Stuttgart, 1930.*
- Simon, Gottfried, Die Welt des Islam und die Berührungen mit der Christenheit, Gütersloh, 1948.*
- Spanuth, Phölde, Armenien, Stuttgart, 1896.*
- Spörl, Gerhard, Die Türkei ist gut für Europa, in: „Die Zeit“, 1985, N. 18, S. 13.*
- Stamer, Lili, Die Landschaften Armeniens, Rostock, 1928.*
- Steinhaus, Kurt, Politische und soziale Grundlagen der türkischen Revolution, Frankfurt, 1969.*
- Stier, Ewald, Die Lage der Armenier, in: „Ethische Rundschau“, 1913, S. 157-160.*
- *Das deutsche Interesse an Armenien, in: „Das Deutschtum im Ausland“, Berlin, 1914, S. 77-83.*
- *Die Armenier und die europäische Kultur, in: „Noris“, N. 7, 1914, S. 38- 54.*
- Stürmer, Harry, Zwei Kriegsjahre in Konstantinopel, Lausanne, 1917.*
- Sydakoff, Bresnitz von, Abdul Hamid und die Christenverfolgungen in der Türkei, Berlin, 1896.*
- *Soll die Türkei geteilt werden?, Berlin, 1898.*
- Tamcke, Martin, Armin T. Wegner und die Armenier, Hamburg, 1996.*
- Ternon, Yves, Tabu Armenien, Frankfurt/Berlin, 1981.*
- Theodor, Gertrud, Friedrich Naumann oder der Prophet des Profits, Berlin, 1957.*
- Thimme, Anneliese, Hans Delbrück als Kritiker der Wilhelminischen*

- Epoche, Düsseldorf, 1953.
- Thoma, Hans, *Türkei*, Bern/Stuttgart, 1973.
- Toynbee, Arnold, *Die Gewalttätigkeiten in Armenien*, Lausanne, 1916.
- Trumpener, Ulrich, *Germany and the Ottoman Empire 1914-1918*, Princeton, 1968.
- Uhrenbecher, Werner, *Türkei*, Berlin, 1957.
- Umfrid, Otto, *Friede auf Erden*, Eßlingen, 1898.
- Valentin, Veit, *Deutschlands Außenpolitik vom Bismarcks Abgang bis zum Ende des Weltkrieges*, Berlin, 1921.
- Vambery, Hermann, *Sittenbilder aus dem Morgenlande*, Berlin, 1876.
- Vela, Wilhelm T., *Die Zukunft der Türkei im Bündnis mit Deutschland*, Leipzig, 1915.
- Vierbücher, Heinrich, *Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915*, Hamburg, 1930.
- Walker, Christopher, *Armenia*, London, 1980.
- Wagner, Moritz, *Reise nach Kolchis und nach den deutschen Colonien jenseits des Kaukasus*, Leipzig, 1850.
- Wegener, Hans L., *Der britische Geheimdienst im Orient*, Berlin, 1924.
- Wegner, Armin T., *Der Weg ohne Heimkehr*, Berlin, 1919.
- *Am Kreuzweg der Welten*, Berlin, 1982.
 - *Die Verbrechen der Stunde – die Verbrechen der Ewigkeit*, Hamburg, 1982.
 - *Fällst du, umarme auch die Erde*, Wuppertal, 1974.
 - *Im Hause der Glückseligkeit*, Dresden, 1926.
 - *Das Zelt*, Berlin, 1926.
- Werfel, Franz, *Die vierzig Tage des Musa Dagh*, Berlin-Wien-Leipzig, 1933.
- Wiedensfeld, Kurt, *Die deutsch-türkischen Wirtschaftsbeziehungen und ihre Entwicklungsmöglichkeiten*, München, 1915.
- Wiegand, Theodor, *Halbmond im letzten Viertel*, München, 1970.
- Wilhelm II., *Ereignisse und Gestalten*, Leipzig/Berlin, 1922.
- Winkler, Hedwig-Maria, *Lichtspur der Liebe*, Metzingen, 1981.
- Wolf, Günter, *Türkei*, Hamburg, 1962.
- Ziemke, Kurt, *Die neue Türkei*, Stuttgart, 1930.
- Zimmerer, H., *Die europäische Türkei und Armenien*, s. Hans F. Helmolt, *Weltgeschichte*, Bd. 5, Leipzig/Wien, 1905, S. 117-212.
- Zimmermann, Moritz B., *Illustrierte Geschichte des Orientalischen Krieges von 1876-1878*, Wien, 1878.

- Авакян А., Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999.
- Армяне-Арийцы (сборник монографий), Санкт-Петербург, 1995.
- Арируни Г., Экономическое положение турецких армян. Публичная лекция, прочитанная в Тифлисском ремесленном клубе 11 Мая 1879 г., Москва, 1880.
- Алимов А., Революция 1908 г. в Турции, см. в сборнике „Пробуждение Азии“, Москва, 1935.
- Веселовский Ю., Трагедия Турецкой Армении, Москва, 1911.
- Гольц Г.; Корхмазян Р. С., Доктор Иоганнес Лепсиус. Страницы Жизни, см. „Страны и народы ближнего и среднего Востока“, т. XII, Ереван, (1985), стр. 116-142.
- Дживелогов А., Будущее Турецкой Армении, Москва, 1911.
- Автономия Армении и русская интеллигенция, „Армянский вестник“, 1916, стр. 37-38.
- Ерицян А., Материалы для описания Турецкой Армении, Эрзерумский вилайет, Тифлис, 1884.
- Мнацаканян Г., Разрешение армянского вопроса, Москва, 1914.
- Милюков П., Воспоминания, Москва, 1991.
- Новичев А., Турция. Краткая история, Москва, 1965.
- Петросян Ю., Новые Османы и борьба за конституцию 1876 г. в Турции, Москва, 1958.
- Младотурецкое движение (вторая половина XIX – начало XX вв.), Москва, 1971.
- Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., Москва, 896.
- Саркисян Е., Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начала XX вв., Ереван, 1973.
- Степанян С., Армения в политике империалистической Германии, Ереван, 1975.
- Степанян С., Геноцид армян и пособничество кайзеровской Германии. Տն՛ի «1915 թ. հայոց ցեղասպանությունը. Պատմություն և ցեղասպանության հարցեր», հորիվածների ժողովածու, Երևան, 1995, էջ 47-64:

Թերթեր և ամսագրեր

- «Արարատ», Էջմիածին, (1895-1918):
 «Մշակ», Թիֆլիս, (1895-1920):
 „Der Christliche Orient“, Potsdam, (1897; 1900-1923):
 „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, Potsdam, (1898-1900):
 „Das Reich Christi“, Potsdam, (1898-1911):
 „Mitteilungen aus der Arbeit von D. Dr. Johannes Lepsius“, Potsdam, (1917-1918):
 „Der Orient“, Potsdam, (1919-1939):
 „Der kleine Orient“, Potsdam, (1929-1939):
 „Orient im Bild“, Potsdam, (1927-1939):
 „Der Stern der Weisen“, Potsdam, (1903-1908):
 „Ex Oriente Lux“, Potsdam, (1903):
 „Mesrop“, Berlin, (1914):
 „Für unsere kleinen Armenierfreunde“, Potsdam, (1925-1926):
 „Mitteilungen an unsere Mitglieder und Freunde!“, Potsdam, (1940-1941):
 „Geschäftsbericht 1940/41 der Dr. Lepsius Deutschen Orient-Mission“, Potsdam, (1941):
 „Geschäftsbericht der Dr. Lepsius Deutschen Orient-Mission 1942/1943“, Potsdam, (1943):
 „Sonnenaufgang“, Frankfurt/Main, (1900-1939):
 „Allgemeine Evangelisch-Lutherische Kirchenzeitung“, Leipzig, (1914- 1926):
 „Allgemeine Missionszeitschrift“, Berlin, (1914-1918):
 „Deutsche Evangelische Kirchenzeitung“, Berlin, (1896 –1917):
 „Die Christliche Welt“, Marburg, (1896-1933):
 „Evangelische Kirchenzeitung“, Berlin, (1896-1898):
 „Die Evangelischen Missionen“, Gütersloh, (1896-1899):
 „Die neue Zeit“, Stuttgart, (1896-1918):
 „Deutsch-Armenische Korrespondenz“, Berlin, (1918-1939):
 „Der neue Orient“, Berlin, (1897-1926):
 „Deutsches Protestantenblatt“, Bremen, (1896-1898):
 „Preußische Jahrbücher“, Berlin, (1895-1919):
 „Missions- und Heidenbote“, Neukirchen, (1896-1898):
 „Das notwendige Liebeswerk“, Marburg-Alten bei Dessau, (1908-1910):

Ա Ն Ձ Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Յ Ա Ն Կ



Աբաջյան, Աննա - 85.
Աբեղյան, Արտաշես - 202, 391, 392, 467.
Աբուհայաթյան, Արմենակ - 117,
123, 124, 218, 238, 239, 351.
Ազքյուլիթ, Չերքերթ - 397.
Աթարյան, Աբրահամ - 103, 105, 112,
113, 237.
Ալահայտոյան, Հոփսիսինե - 238.
Ալահայտոյան, Հովսեփ - 109.
Ալաջաջյան, Ստեփան - 375.
Ալեքսան - 225.
Ալթունյան - 409, 494.
Ալմաստ - 123, 351.
Աղայան, Լևոն - 343.
Աղաթոն քեյ - 304.
Ամատունի, Վահան - 392.
Ամբրոսիոս - 341.
Ամիրխանյանց, Աբրահամ - 65, 161,
162, 163, 167, 168.
Ամիրխանյանց, Էլիզա - 162.
Աննա - 225.
Անտոնյան, Արամ - 374.
Աշկե, Գ. - 479.
Աշկե, Մանֆրեդ - 33.
Ավետարանյան, Յոհաննես - 65,
168, 169, 191-196, 300, 307, 334,
339, 343, 380.
Արբշատ, Յոհաննես - 139.
Արոյան, Եղիա - 113.
Աքչամ. Թաներ - 15.

Բալաթյան - 381.
Բալադյուր - 378.
Բաղայան, Շողակաթ - 215.
Բալդվին, Սթենլի - 397.
Բալի - 171.
Բաղդասարյան, Միհրան - 136.
Բանզե, Էվալդ - 369.
Բարբարոս, Ֆրիդրիխ - 279.
Բարխուդարյան, Վլադիմիր - 33.
Բարոնիկյան, Արմենակ - 22-24.
Բեթ - 335, 383.
Բեթման-Հոլվեգ, Թեոֆիլ ֆոն, 207,
258, 269.
Բեհնիշ - 170-172.
Բենդեր (Կյունցլեր) Էլիզաբեթ - 123,
318, 319, 347, 349, 357, 359.
Բենեդիկտսեն, Ազե Մեյեր - 77.
Բեշյան - 355, 357.
Բեռնշտոթ, Անդրեաս ֆոն - 39, 43,
47, 66, 189.
Բեռնուլի, Հանս - 194.
Բեռնհարդ (հրատարակչության
տնօրեն) - 268.
Բերգման, Էդուարդ ֆոն - 137-140,
173-175.
Բերման - 47.
Բյոթներ, Բրունո - 176.
Բողեշվինգ, Ֆրիդրիխ ֆոն - 47, 189.
Բոննարդ, Ալբերտ - 57.
Բոնվեչ, Բերնդ - 33.
Բրայս, Ջեյմս - 305, 328, 347.
Բրոյնինգ, Ալիսե - 64.
Բրոնիշ - 186.

Գ

- Գազունկ, Լեոպոլդ - 412, 413, 485-489, 495, 496.
 Գայանն - 147.
 Գայթներ (եքարտ), Էմմա - 92, 93.
 Գարդիաուզեն. Մաթիլդե - 139.,
 Գարեգին (ղեղագործ) - 113.
 Գարգանհի, Լուիզ - 440.
 Գեորգ - տե՛ս Գևորգ.
 Գևորգ - 237
 Գևորգ Վ., կաթողիկոս - 199.
 Գիլպին, Աննա - 404.
 Գլայխ, Գերոլդ ֆոն - 263.
 Գյոպերտ, Օտտո - 18-20.
 Գյունտեր - 467.
 Գոդեթ, Գեորգ - 56, 57.
 Գոդինա - 151.
 Գոլթց, Կոլմար ֆոն դեր - 203, 262-264, 266, 375.
 Գոլթց, Յերման - 10, 12, 33, 50, 374.
 Գորդոն, Ադոլֆ ֆոն - 373.
 Գրացեյ - 118.
 Գրաուեր, Գուստավ - 383, 389.
 Գրիգոր (ղեղագործի օգն.) - 122, 123.
 Գրիգոր աղա - 412, 423.
 Գրիգոր Գևորգյան - 343.
 Գրիգոր Լուսավորիչ - 278.
 Գրինֆիլդ, Ջեյմս - 42, 208, 209, 288, 306, 381.
 Գրյոբեն, Էլիզաբեթ ֆոն դեր - 65, 66, 185.
 Գուստ, Վոլֆգանգ - 14, 15, 17, 18, 20-22, 24, 25, 30.

Դ

- Դայսման, Ադոլֆ - 194, 285, 342, 344, 381.

- Դաշնակցական խեչո - 135.
 Դարալագյազգի խեչո - 135.
 Դարբինյան, Ռուբեն - 208.
 Դեգիրմենցյան, Խաթուն - 123, 238.
 Դելբրյուք, Յանս - 209.
 Դեմմել, Ռիխարդ - 209.
 Դեմիրճյան, Մարիամ - 123.
 Դեմնից, Պաուլ Գերհարդ - 459, 495.
 Դեմնից, Սենտա - 459, 494, 495.
 Դիտրիխ - 342, 344.
 Դյորինգ, Մարիա ֆոն - 66.
 Դոյխեր - 57.
 Դրեսկի, Վիլհելմ ֆոն - 187.
 Դրիանդեր, Էմմա ֆոն - 289.
 Դուռնագյան, Եփրեմ - 350.
 Դուրյան, Եղիշե - 199.

Ե

- Եղիա (ազատագրված պատանհ) - 408.
 Եղիա (գործակալ) - 423.
 Եղիսաբեթ - 123.
 Եփսիե - տե՛ս Յեպե, Կարեն.

Զ

- Չավեն (պատրիարք) - 255.
 Չաուբեր - 343.
 Չեգեր. Յ. - 342.
 Չեգեր. Վիլլի - 98, 362, 392.
 Չիգմունդ-Շուլց - 307, 335, 383.
 Չիկ, Ինգեբորգ Մարիա - 28, 232, 419.
 Չոլֆ. Վիլհելմ Յայնրիխ - 327.
 Չոհրապ, Գրիգոր - 226.

Է

- Էլբերֆելդ - 180.
 Էնգել - 47.

Էնվեր - 11, 31, 220, 227, 246, 248,
255-262, 264, 266, 276, 282, 374, 482.
Էուքեն, Ռուդոլֆ - 209.
Էքարտ. Բրունո - 28, 98, 221, 229,
233, 236, 346.
Էքարտ. Ֆրանց - 31, 73-75, 83, 91-
98, 109, 110, 120, 170, 175, 216,
219, 220, 228, 229, 232, 236, 237,
312, 319, 320, 321, 334, 346-348.



Թաթոյան. Իխզա - 85.
Թալեաթ - 220, 247, 251, 254, 257,
259, 372, 374-377.
Թախսիմ - 377, 378.
Թամրազյան, Հրանտ - 33.
Թեխլեդյան, Սողոմոն - 31, 372-376.
Թիմե, Ֆրիդրիխ - 331.
Թորոմանյան Թ. - 465.
Թորոս Ջարեհ - 352.
Թորոս - 122.
Թորոսյան, Ջավեն - 343.
Թորոսյան, Նապոլեոն - 150.
Թրիտելվից - 193.
Թրոմեր - 261.
Թումա - 98.
Թումայան, Կարապետ - 42, 51, 52.
Թուրեքյան, Գարեգին - 352.



Իդելեր - 66.
Իմիրզյան, Կարապետ - 107.
Իսահակյան. Ավետիք - 328.
Իսմայել, Դավիթ - 133, 134.
Իրմեր - 190.



Լազար. Հելենե - 139.
Լայրլին - 479.
Լայսթ, Արթուր - 341, 480.
Լաֆոնտեն. Սիդնեյ - 94.
Լեհման. Էդվարդ - 194.
Լեհման-Հաուպտ, Կարլ Ֆրիդրիխ -
209, 335, 383, 419, 464.
Լեփսիուս. Բեռնհարդ - 291, 335,
381, 383, 386, 389, 478.
Լեփսիուս. Բրիգիտ - 384.
Լեփսիուս. Կարլպետեր - 33.
Լեփսիուս. Կարլ Ռիխարդ - 36.
Լեփսիուս. Մարգարետ - 64.
Լեփսիուս. Յոհաննես - 6-33, 36, 37,
39-54, 56-59, 61-71, 73, 77, 91, 92, 95,
99, 103, 106, 119, 120, 125, 133, 139,
154, 155, 159, 164, 165, 167, 168, 172,
174-177, 179-183, 185-196, 199, 202-
204, 206-209, 214, 227, 244-257, 265,
267-277, 280-312, 315, 322, 324-332,
334-342, 344, 345, 347, 349, 353, 360-
368, 370-386, 392-398, 400, 406, 412,
416-422, 424, 425, 429, 430, 432-442,
444, 445, 448-452, 456, 462, 463, 467-
474, 476-479, 482, 484, 486-490, 492,
493, 495-499, 501-508.
Լեփսիուս. Ռայներ - 33.
Լեփսիուս (Աչկե), Վիոլա - 33, 286, 502.
Լեսլի - 272, 348.
Լերս, Յոհանն ֆոն - 464, 466, 467.
Լիբկնեխտ, Կարլ - 49, 280, 281.
Լիպման, Հուգո - 375.
Լիսիցյան Լ. - 465.
Լիտեն, Վիլհելմ - 212.
Լյոյդ. Ջորջ - 366.
Լյուրսեն, Վալտեր - 194, 285, 295, 342.
Լյուքսեմբուրգ, Ռոզա - 49.
Լոբանով - 366.

Լոհման, Էռնստ - 39, 46, 47, 51, 54, 164, 180, 344.
 Լոֆս, Ֆրիդրիխ - 270.
 Լուիզա - 225, 234, 236.
 Լուսեր, Մարտին - 145, 244, 475.
 Լուսկեման - 344.

Լ

Խալիլ - 227, 257.
 Խաչիկ (արհեստավոր) - 225.
 Խատիսյան, Ալեքսանդր - 381.
 Խիկար - 150, 151.
 Խրիստ, Դերման - 105, 106, 108, 110-112, 115, 122, 128, 277-280.
 Խուրշուդյան, Լենդրուշ - 33.

Լ

Կալենդերյան, Արտավազդ - 221, 222, 227.
 Կալիսկի, Յուլիուս - 268.
 Կամին, Օտտո - 98.
 Կատարինա - 151.
 Կավուքյան, Անդրանիկ - 452-458, 492-495, 500, 502.
 Կավուքյան, Ռուբ - 452, 458, 459.
 Կարապետյան, Ջաքար - 149, 150.
 Կեսլեր - 185.
 Կիլեդյան, Ջաքարիա - 440.
 Կիսլինգ, Դանս ֆոն - 263.
 Կլինգե, Գերհարդ - 467.
 Կյերսզարդ, Էլզա - 124.
 Կյոզել, Ռ. - 342.
 Կյուլին - 497.
 Կյունցլեր, Մարիա - 451, 452.
 Կյունցլեր, Յակոբ - 28, 106, 110-113, 120-123, 129, 172, 218, 222-232, 236, 238-242, 272, 273, 300, 312-322, 340,

346-353, 356, 357, 359, 361, 387, 388, 416, 419, 420, 443-449, 451, 453.
 Կյուպեյան, Կուսի - 123, 238.
 Կնակ - 479.
 Կոզել - 36.
 Կոզելշաքց - 66.
 Կոլիդգե - 448.
 Կոմբե, Ե. - 57.
 Կոմիտաս (կաթողիկոս) - 480.
 Կորխմազյան Դեփսիսին - 10.
 Կորսեպիուս, Դ. Գ. - 499.
 Կրաֆտ-Բոնարդ - 367.
 Կրեմեր - 47.
 Կուլկոֆ - 258.
 Կուլշման, Էմմա - 398.

Կ

Հադիդյան, Մ. - 116, 117, 123, 124.
 Հակոբ - 231.
 Հակոբյան, Խաչիկ - 440.
 Համբարձումյան, Կոստի - 135.
 Համիդ, Աբդուլ - 37, 271, 279, 417.
 Հայրանյան - 208, 256, 257.
 Հաջիմ - 428.
 Հառնակ, Ադուլֆ ֆոն - 270, 369.
 Հառնակ, Աննա - 143, 144, 146-151, 156-158, 160, 212-215, 343.
 Հարիս, Ռենդել - 44.
 Հարությունյան, Բաբկեն - 33.
 Հաուսլայթեր, Գ. - 270.
 Հեթցել, Գերտրուդ 384, 404, 480.
 Հենդլեր - 190.
 Հենզելման, Մարիա - 139, 141, 142, 151.
 Հեննինգս - 193, 194.
 Հյուբեր - 375.
 Հյուբշման, Հայնրիխ - 463, 468.
 Հոլմեն - 353, 355, 356.
 Հոլֆելդտ - 194.
 Հոպե, Էռնստ Մաքս - 477.

Հովհաննես - 98, 229, 230.
Հովսեփ - 122, 238.
Հովսեփյան. Գարեգին - 145, 202.
Հոֆ - 206.
Հոֆման. Ադոլֆ - 42, 51.
Հրազդան, Զավեն - 391.



Ղազարյան, Խաչիկ - 33.
Ղասաբյան, Տիրան - 124.



Մահմեդ (հավատափոխված
մահմեդական) - 191.
Մահմեդ - 103.
Մահմեդ, Ալի - 155, 159.
Մայնհոֆ - 186, 187.
Մայսներ, Ակսել - 33.
Ման, Թոմաս - 209, 369.
Մանդելշտամ, Անդրե - 200, 205.
Մարգար - 150.
Մարիամ (հիվանդապապահուհի) - 123.
Մարիամ (գառնուշցի կին) - 225.
Մարկվարտ, Յոզեֆ - 208, 369, 419,
463, 465, 468.
Մաքս, ֆոն (Մաքսոնիայի դուքս)-
464, 466, 467.
Մելիք-Բեգլարյան - 164, 166, 167.
Մելքոնյան, Միսաք - 234, 235, 404,
412, 428, 439, 441, 482, 496.
Մեյեր, Կարլ - 57, 367, 370.
Մենդելսոն-Բարթոլոմի. Ալբրեխտ - 331.
Մետեռնիխ, տես Վոլֆ-Մետեռնիխ, ֆոն.
Միթցներ. Գեորգ - 362.
Միհրդատյանց, Ս. - 305.
Մինկներ, Էդմունդ - 479, 497, 499.
Միրզա, Ահմեդ - 159.

Միքայելյան, Վարդգես - 8, 9, 18, 29,
33, 265, 328.
Սկրտիչ (ուսուցիչ) - 143, 150.
Սկրտիչ (ղեղագործի օգն.) - 122.
Մյուլլեր, Ա. ֆոն - 68, 190.
Մյուլլեր, Դանիել - 33.
Մյուլլեր, Հելմուտ - 479, 490, 499.
Մյուլլ, Իկբալիլ - 138.
Մորգենթաու. Հենրի - 255, 259, 260.
Մսրյան, Արմենակ - 285, 305.
Մուրադ - 423.
Մուրադյան - 208.



Յագով, Գոթլիբ ֆոն - 206, 257.
Յաչկե, Գոթհարդ - 480, 500.
Յելինգհաուզ, Թ. - 66.
Յեկ, Էռնստ - 200, 287-289.
Յենսեն. Յենի - 413, 430.
Յեպե, Կարեն - 76-89, 100-102, 120-
122, 124, 127, 144, 221, 222, 224-226,
230, 231, 233-237, 272, 300, 318, 319,
362, 393, 399-416, 419-441, 453, 481,
482, 484-487.
Յոթնեղբայրյան, Սկրտիչ - 228, 230.
Յոսթեն - 362.



Նաբ - 175, 176.
Նազարյանց, Լիպարիտ - 249, 250.
Նազըմ - 220.
Նազլու - 147.
Նայերտ - 250.
Նանսեն, Ֆրիտյոֆ - 397, 419, 468.
Նավիլե, Էդուարդ - 367.
Նաուման, Ֆրիդրիխ - 63, 209.
Նեիրինգ - 193, 194, 342, 344.

Նեպակե - տե՛ս Նիպագե, Մարտին.
 Ներսիսյան. Մովսես - 139, 143.
 Նեսիմի - 380.
 Ներսես Շնորհալի - 480.
 Նիկոլ Դուման - 135.
 Նիպագե. Մարտին - 285, 300, 340, 369, 375.
 Նոյման, Կարլ Ֆրիդրիխ - 463.
 Նոյնուդս - 97.
 Նուբցեն, Յոհաննես - 479, 499.



Շահբազյան - 208.
 Շայդեր, Դանս Դայնրիխ - 465.
 Շատուկ, Կորինա - 44, 73, 85, 91.
 Շարմետտո. Պիեր - 48 .
 Շերիֆ - 276.
 Շեֆեր. Ուիլսարդ - 28, 45, 46, 48, 49, 59, 62, 65, 66, 68, 92, 93, 95, 119, 166, 181, 187, 190, 282, 287, 289, 291, 293-295, 297, 299, 301, 303, 305, 307, 310, 311, 334, 335, 339, 342, 373, 383, 389, 465, 467, 478.
 Շթախ, Ֆ. - 362.
 Շթիր, էվալդ - 29, 202, 208, 270, 288, 306, 380, 381, 396, 465, 467.
 Շթյուկեր, Ադոլֆ - 52, 63.
 Շթյուրմեր - 375.
 Շթում, Կարլ Ֆերդինանդ ֆոն - 281.
 Շյուբց, Պաուլ - 385, 386, 394, 432, 442, 449, 450.
 Շյունենման, Մաքս - 142, 151-155.
 Շնայդեր. Գերհարդ - 459, 493, 497, 499.
 Շնայդեր (պաստորուհի) - 500.
 Շնայդեր. Թ. - 393.
 Շաիգելհաուեր. Դանս - 343, 344.
 Շաիկեր - 375.
 Շարաուս - 67, 190.
 Շարյբեր. Ավգուստ Վիլհելմ - 193,

270, 381.
 Շուբերտ, Դերման - 142.
 Շուլենբուրգ. Մետա - 147.
 Շուլսարդտ, Ֆրիդրիխ - 344.
 Շևբեթ, Մահմուդ - 204.



Ոսկերչյան, Գարեգին - 233, 234.



Չարվատար Դակոր - 135.
 Չեփեջյան, Ավետիս - 112.



Պատրունկի, Պաուլինե - 74, 91, 143.
 Պարիքսի, Յոհանա - 486.
 Պաուլատ, Մարգարետ - 134, 136.
 Պաուլատ, Մարիա - 134.
 Պետրոս - 229.
 Պերաձե, Գեորգ - 341.
 Պողոս Նուբար փաշա - 199, 205, 304, 307.
 Պոնյանկովսկի, Յոզեֆ - 266.
 Պրիդգե - 261.
 Պրիքցել - 187.
 Պրոբսթ, Մարթա - 92.
 Պուլստ, Կարլ - 92, 93.
 Պֆանշմիդտ - 479, 499.
 Պֆիստերեր, Ռիկո - 116, 123.



Ջելալ - 378.
 Ջենալ փաշա - 260, 375.
 Ջենալ բեյ - 378.
 Ջևար, Ահմեդ - 227.



Ուադե. Մարտին - 29, 46, 47, 201, 202, 208, 299.
 Ուայնեկե - 187.
 Ուայնմյոլեր. Լիզա - 362, 478.
 Ռեյեր, Լիզա - 362, 392, 418, 419.
 Ռեկե, Էբերհարդ ֆոն դեր - 52.
 Ռենեկե, Ազնես - 115.
 Ռիխտեր (օրհորդ) - 214.
 Ռիխտեր, Յուլիուս - 193, 270, 369, 464.
 Ռիոտե - 24.
 Ռյոդենբերք. Վալտեր - 21, 22, 193-195, 271, 284, 289, 290, 293, 295, 297, 342, 344.
 Ռյոմեր - 193, 194, 342.
 Ռոթ, Կարլ - 465, 467.
 Ռոտհեն, ֆոն - 193.
 Ռոտրբախ, Պաուլ - 29, 31, 63, 67, 84, 101, 102, 119, 175, 190, 194, 202, 208, 209, 285, 288, 289, 294, 296, 298-300, 340, 342, 381, 391, 464, 465, 468, 500.
 Ռոսելեթ, Էդուարդ - 56.
 Ռոսլեր, Վալտեր - 18, 219, 222, 228, 264.
 Ռոսներ - 155.
 Ռուբիչունգ, Կ. - 154.
 Ռումբոլդ, Գորացի - 367.



Սահակ - 143, 150.
 Սահակյան. Արամ - 28.
 Սանդերս, Լիման ֆոն - 261, 262, 264, 374.
 Սանդներ, Դ. - 395.
 Սարաֆին - 194.
 Սարբազ Խեչո - 135.
 Սարգիս - 105.

Սթյովեզանդ - 342.
 Սիզանույշ - 151.
 Սիմոնյան, Արշակ - 148.
 Սիմոնյան, Հրաչիկ - 33.
 Ստեփանյան, Ստեփան - 8, 10, 11.
 Ստրոֆգովսկի, Յոզեֆ - 209, 465, 467.



Վազներ, Մորից - 468.
 Վալտեր, Նիկոլայ - 384.
 Վալց - 499.
 Վանգենման, Թեոդոր - 168.
 Վանգենհայմ, Հանս Ֆրայիեր ֆոն - 201, 206, 207, 246, 248, 250, 251, 253, 255, 258-260, 262, 266.
 Վանկլենհայմ - տե՛ս Վանգենհայմ, Հանս Ֆրայիեր ֆոն.
 Վասիլ Սաբադ - 412.
 Վարդանուշ - 151.
 Վարդգես (Հովհաննես Սերենգյուլյան) - 226.
 Վարնեկ - 68.
 Վեգեներ, Ռիխարդ - 184.
 Վեզներ, Արմին - 264, 369, 419.
 Վեկեսեր, Ալբերտ - 335, 381-383, 386, 499.
 Վեստենենկ - 206.
 Վերներ, Բերտա - 112.
 Վերֆել, Ֆրանց - 11, 31.
 Վիգեր, Թեոդոր - 57.
 Վիթցենման, Հիլդե - 57.
 Վիլդե, Մարտին - 186, 188.
 Վիլհելմ II - 40, 62, 262.
 Վիլսոն, Թոմաս Վուդրո - 364, 366, 372.
 Վինկլեր - 194, 285, 342, 344 .
 Վիուլետ - 342.
 Վուլբերտ - 342, 344.
 Վոլֆ-Մետեննիխ, ֆոն - 260, 266, 281.
 Վոլֆսկիլ, Վոլֆ ֆոն - 17.

Վորոնցով-Դաշկով - 199.
Վրոխեմ, ֆոն - 189, 193.

S

Տաշյան, Յակովբոս Յ. - 7.
Տաշչյան, Աննա - 108, 123, 238.
Տաշչյան, Հովհաննես - 444.
Տեր-Գարեգին - տես Ոսկերչյան,
Գարեգին.
Տեր-Մինասյան, Երվանդ - 145, 202.
Տեր-Մկրտչյան, Կարապետ - 67,
145, 202, 380.
Տեր-Պետրոսյան, Պետրոս - 237.
Տիլիխ - 186, 190.
Տրդատ - 278.
Տրումպեներ, Ուլրիխ - 311.

Տ

Տելեր, Սարգարետ - 36.
Տելեր, Վիլֆրիդ - 383.
Տելեր, Ֆրիդրիխ - 36, 64, 68, 188-
190, 383.
Տիմերման, Արթուր - 201, 247, 248,
254, 257, 303, 304.
Տիմերման, Վալտեր - 339, 362, 418.
Տյուրխեր, Յոզեֆինա - 104, 105.
Տոլինգեր - 219, 220.

T

Ուլրիխ - 342.

P

Քելեր, Սամուել - 68.
Քենալ, Մուստաֆա - 491.
Քենեդի - 398.

Քեչաֆ, Ահմեդ - 191, 380.
Քլայն - 68, 188, 190-193, 195, 196.
Քյազիմ - 261.
Քյուիլենթալ, Մյուլլեր - 335, 383.
Քրիշչյան, Մելքոն - 379, 384, 390,
391, 419, 501.

Օ

Օհանյան-Գրիգորյան, Թելլի - 215.
Օհանջանյան, Արտեմ - 269.
Օհանջանյան, Հ. - 465.
Օյրցեմ, Դետվիգ ֆոն - 142-145,
154, 190.
Օպենհայմ, Մաքս ֆոն - 223.
Օվսաննա - 123.
Օտտո, Կարլ - 92.
Օրդուխանյան, Ազատ - 33.

Ֆ

Ֆաբեր, Վիլհելմ - 42, 47.
Ֆահրի - 17, 228, 229.
Ֆալչեր, Հայնրիխ - 74, 105.
Ֆայգել, Ուվե - 12, 13, 44, 269.
Ֆավր, Լեոպոլդ - 57.
Ֆինկ, Ֆ. Ն. - 468.
Ֆիշեր, Անդրեաս - 103, 113, 114, 116-
118, 121-123, 125-127, 129, 130, 218,
220, 225, 239, 300, 336, 352-356, 358.
Ֆիշեր (Օրի), Գերտրուդ - 117, 356.
Ֆիշեր, Հանս - 134-137.
Ֆիրբյուխեր, Հայնրիխ - 269.
Ֆլայշման, Պաուլ - 190, 307, 335, 382,
383, 386, 389, 472-475, 479, 481, 485,
496-498, 500-502.
Ֆլիչ - 161.
Ֆյորստեր, Կարլ - 335, 383.
Ֆյորստեր, Էդմոնդ - 375.
Ֆրիդեման, Աննա - 28, 139, 214.

Տ Ե Ղ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Յ Ա Ն Կ



Աղանա - 43, 86, 118-120, 124, 280.
Աղիանան - 85, 227, 318.
Աղիս Արեբա - 376.
Ալբանիա - 199.
Ալեքսանդրեոս - 441, 491.
Ամասիա - 38.
Ամերիկա - 37, 260, 290, 315, 322, 420, 445-447.
ԱՄՆ - 352, 364, 366, 377, 448.
Այգեմախ - 23, 179, 180.
Այխաշտեոս - 466.
Այնթապ - 17, 85, 103, 105, 106, 112, 124, 317, 353.
Անատոլիա - 220, 227, 241, 252, 256, 279, 324, 326, 363, 426.
Անգլիա - 39, 52, 55, 93, 205, 244, 290, 347, 363, 365, 366, 373, 397, 409, 445, 493.
Անգորա - 42, 251, 376.
Անկարա - տե՛ս Անգորա.
Անթակիա - տե՛ս Անտիոք.
Անթիլիաս - 452, 495.
Անի - 480.
Անտիոք - 120, 454, 491, 493.
Աշաղ - 94.
Ասիա - 201, 207, 278-280, 371, 402, 410, 465, 467, 469, 506.
Աստապատ - 391.
Աստրաբաղ - 155.
Ավստրալիա - 146.
Ավստրո-Յունգարիա - 266.
Արաբիա - 220.
Արաբկիր - 38.
Արարատ - 366, 480.
Արգենտինա - 466.

Ար Յիսար - 38.
Աֆղանստան - 263.
Աֆրիկա - 67, 143, 465.



Բազել - 56, 105, 106, 113, 115, 116-118, 123, 254, 267, 306, 328, 356.
Բալկան - 199, 200, 331.
Բաղդադ - 129, 201, 233, 239, 263, 279, 346, 426.
Բայբուրդ (Բաբերդ) - 38
Բավարիա - 392, 465, 497, 500.
Բաքու - 137.
Բեբեկ - 63.
Բեդրոսիե - 454-457, 461, 477.
Բեթել - 51, 187.
Բեթղեհեմ - 186.
Բելգիա - 262, 445, 466.
Բելսկո-Բիալա - 465.
Բեյլան - 265.
Բեյրութ - 28, 105, 109, 112, 123, 124, 360, 441, 451, 455, 493-495.
Բեռլին - 22, 23, 36, 39, 42, 47, 51-56, 58, 60, 63, 64, 66, 67, 76, 91-93, 98, 115, 133, 134, 138, 161, 162, 164-168, 170, 172, 176, 177, 185-187, 199, 207, 256, 257, 258, 266, 267, 269, 291, 305, 309, 327, 343, 369, 372, 374, 377, 381, 391, 395, 465, 466, 479, 500, 502.
Բեռն - 56, 57, 489.
Բիզանդոս - 68.
Բիթլիս (Բաղեշ) - 38, 56, 199, 205, 206, 317, 363, 364.
Բիլեֆելդ - 54.
Բիրեջիկ - 318, 320.
Բլանկենբուրգ - 181.

Բոնն - 14.

Բրիտանիա - 367, 377.

Բրյուսել - 305.

Բուլղարիա - 33, 58, 65, 69, 161, 162, 166, 168, 177, 187, 191, 193, 196, 214, 300, 309, 316, 340, 380, 477, 483, 505.

Բուխարեստ - 161, 254.

Բունբուս - 412.

Բուռնաբադ - 261.

Բուրգաս - 162.

Գալիլեա - 218.

Գառմուշ - 85, 225.

Գերմանիա - 6, 8, 10, 11, 13-25, 28, 29, 32, 33, 36, 38-42, 44, 45, 48-53, 56, 61-63, 67, 70, 74, 93, 94, 98, 119, 121, 129, 130, 137, 139, 142, 144, 145, 158, 162, 168, 176, 177, 184, 186, 191, 192, 199-203, 206-209, 212, 214-216, 222, 244, 246, 248-250, 252, 253, 257-260, 262-270, 273, 275, 277-280, 282, 284-286, 289-292, 295, 299, 300, 303, 305, 307, 309-312, 315, 324-333, 335, 337, 338, 340, 341, 346, 371, 373, 376, 379, 380, 384, 391, 392, 395-397, 406, 417, 420, 421, 434, 445, 458, 462, 464-466, 471, 473, 477, 478, 485, 490, 493, 495, 496, 500, 501, 503, 504, 506-508.

Գյուրթերսլոհ - 42.

Գյոթինգեն - 12, 291.

Գյոսներ - 194.

Գիլինգ - 76.

Գրայց - 73, 465.

Գրայֆսվալդ - 36.

Գրոս-Լիխտերֆելդ - 185, 186, 190.

Դամասկոս - 62.

Դանիա - 76, 322, 425, 496.

Դեր էս Ջոր - 240, 251, 274, 403, 412.

Դիարբեքիր - 38, 60, 101, 170-176, 187, 199, 205, 217, 221, 223, 227, 359, 363, 409, 505.

Դիզա - 158.

Դոնի Ռոստով - 384, 499.

Դորպատ - 67.

Դրեզդեն - 23, 466.

Եգիպտոս - 41, 66.

Ենա - 466.

Եվրոպա - 6, 37, 39, 48, 57, 81, 134, 135, 172, 201, 204, 205, 227, 236, 279, 304, 366, 379, 410, 420, 426, 467, 493, 506.

Երասխ - 391.

Երզնկա - 38.

Երուսաղեմ - 36, 41, 55, 74, 448.

Եփրատ - 125, 221, 251, 263, 404, 412, 428, 439.

Չեյթուն - 17, 43, 220, 251.

Չմյունիա - 91, 94, 261, 264, 374.

Եգին (Ալցն) - 38.

Էլ Յամամ - 438.

Էջմիածին - 134, 143, 202, 391.

Էսկյորեն - 492, 494.

Էրզրում (Կարին) - 38, 56, 199, 205, 206, 223, 317, 354, 363, 364, 377, 378.

Էրլանգեն - 36.

Թ

Թալաս - 44, 170, 176, 177, 505.
Թավրիզ - 42, 133, 149, 152, 153, 155, 212-215.
Թել-Աբիաթ - 428, 441.
Թել-Արմեն - 428, 439, 441.
Թել-Սամեն - 428, 429, 439, 441.
Թեհրան - 138, 158, 214.
Թիմեհ - 441, 484.
Թիֆլիս - 137, 139, 150, 391.
Թուրքիա - 9, 17, 30, 39-43, 45, 49, 51, 55, 62, 69, 103, 105, 107, 119, 133-135, 137, 146, 150, 156, 165, 174, 177, 182, 199-206, 209, 212, 213, 216, 222, 230, 241, 244-249, 251-255, 257, 260, 262-264, 266, 268, 269, 274, 275, 277, 280, 281, 283, 284, 286, 287, 290, 300, 302-304, 306, 308, 314, 324, 326, 331, 336-338, 340, 345, 347, 352, 353, 356, 358, 359, 363-368, 371-374, 376-379, 397, 400, 404, 409, 412, 423, 426, 453, 463, 491-493, 506, 507.

Ժ

Ժնև - 42, 51, 56, 254, 267, 306, 328, 360, 365, 367.

Ի

Իրան - տե՛ս Պարսկաստան.
Իրզեն - 67.
Իտալիա - 199, 200, 290, 366, 377, 380, 466.

Լ

Լաթակիա - 454, 493, 494.
Լայպցիգ - 42, 280, 391, 466.

Լանգեմբուրգ - 300.
Լարստան - 155.
Լեհաստան - 465.
Լեմբերգ - 466.
Լիբանան - 227, 356, 359, 388, 397, 446-449, 451, 452, 491, 493, 508.
Լիխտերֆելդ - 64, 502.
Լյուսնիցգրունդ - 22.
Լյուբեն - 74.
Լյուքսգվուֆեր - 64.
Լոզան - 56, 365, 368-372.
Լոնդոն - 199, 205, 403, 416, 466.

Խ

Խարթ-Պետրոս - 439-441.
Խարպութ (Խարբերդ) - 38, 58, 85, 199, 205, 223, 359, 413.
Խոյ - 60, 133, 135, 137-143, 146, 147, 149-153, 155-160, 173, 187, 212-216, 343, 505.

Կ

Կահիրե - 187, 466.
Կալասար - 136-138.
Կայա-Փունար - 457-460, 474, 477, 478, 484, 490, 492, 493.
Կայզերվերթ - 54, 55.
Կասել - 262, 502.
Կարանջալու - 148, 158.
Կենախ Բողազի - 331.
Կեսարիա - 38, 43, 44, 176, 413.
Կիլ - 466.
Կիլիկիա - 43, 220, 252, 324, 353, 371.
Կոնիա - 220, 317.
Կովկաս - 67, 161, 199, 324, 338, 363, 367, 384
Կոստանդնուպոլիս - տե՛ս Կ. Պոլիս.
Կ. Պոլիս - 16, 17, 37, 39-43, 48, 55, 56.

62, 63, 105, 106, 113, 119, 129, 162,
167, 171, 172, 175, 199, 201, 204-206,
220, 228, 246, 248, 249, 251, 254, 255,
257-260, 262-264, 266, 270, 276, 292,
327, 346, 347, 357, 378, 391, 400.
Կուրք էլ Ամարա - 264.

Ր

Քաղաք - 327.
Քալեպ - 18, 105, 124, 219, 222, 223,
227, 228, 241, 264, 265, 285, 317-319,
348, 349, 351, 356, 359, 375, 387, 388,
397, 400-402, 404-407, 409, 411-413,
420-423, 425, 426, 429, 430-436, 438,
441, 451-453, 460, 474, 477, 478, 484-
487, 489, 491, 494-496.
Քալլե - 12, 28.
Քաճն - 358.
Քանթուրդ - 14, 381.
Քայաստան - 6, 10-13, 22, 23, 29, 38,
39, 42, 44-54, 56-58, 61, 63-66, 67, 68,
73, 74, 77, 95, 124, 146, 190, 195, 199,
202-204, 206, 208, 220, 246, 256, 269,
271, 280, 291, 297, 304, 306, 307, 310,
327, 337-340, 351-353, 450, 465, 480,
482, 500, 501, 505-509.
Քայաստանի հանրապետություն - 42,
338, 364, 367, 371.
Քանովեր - 14, 497.
Քասիչիե - 412.
Քարդենբերգ - 372.
Քարց - 36.
Քենիկենդորֆ - 184.
Քեսեն - 54.
Քոլանդիա - 22, 287, 298, 304, 305,
307, 311, 502, 508.
Քոենոս - 497.

Ղ

Ղազիր - 360-362, 387, 394, 397, 418,
420, 433, 435, 436, 442, 443, 446,
451-454, 460.

Ղ

Ճապոնիա - 377.

Ս

Սագդերուրդ - 53, 68.
Սագենդերա - 155.
Սալաթիա - 38.
Սամուրայն - 443.
Սակու - 156-158.
Սամուրեթ Ուլ Ազիզ - 223.
Սասիս - 480.
Սարաշ - 17, 38, 317, 358.
Սարբուրդ - 391.
Սարդին - 359, 403.
Սարգվան - 38, 51, 353, 358.
Սարմարա - 347.
Սարսել - 447.
Սեկլենբուրդ-Ֆորպոմերն - 466.
Սեկկա - 279.
Սերանո - 380, 381.
Սերսին - 44.
Սիջագետք - 118, 125, 174, 223, 247,
252, 269, 274, 280, 281, 324, 326, 400.
Սիջերկրական ծով - 67, 454.
Սյունիսեն - 36, 356, 392, 465.
Մոսուլ - 263, 264, 274.
Մուշ - 364.
Մուսա լեռ - 11, 31, 454.

Լ

Լազարեթ - 64, 68.
Լիստեն - 502.
Լյուրնբերգ - 466.
Լոյենբուրգ - 56
Լորվեգիա - 322.

Մ

Շապին Գարահիսար - 275.
Շիրագ - 155.
Շլեզիա - 497.
Շոտլանդիա - 493.
Շորաֆ - 147, 158.
Շվեդիա - 310, 322.
Շվեյցարիա - 56, 57, 62, 106, 112,
121, 218, 250, 306, 311, 315, 316,
322, 353, 356, 445.
Շտետին - 36.
Շոուտգարթ - 64.
Շումլա - 162, 163.
Շուշի - 391.

Չ

Չնքուշ - 171.

Պ

Պալու - 171.
Պաղեստին - 51, 62, 227, 365.
Պարսկաստան - 6, 33, 42, 69, 133-135,
137, 139, 142, 144, 146, 151-156, 158,
159, 173, 174, 177, 182, 187, 212, 214,
216, 263, 343, 345, 380, 465, 505, 506.
Պետերբուրգ - 161.
Պլովդիվ - 162.
Պոմերն - 497.

Պոտսդամ - 28, 115, 190, 192, 193,
286, 331, 335, 343, 456, 500, 501.
Պրավադի - 162.
Պրինկիպո - 347.

Ջ

Ջարաբլուս - 404, 412.

Ռ

Ռակա - 221, 240, 241, 310, 314,
316, 317, 322, 428.
Ռաս-Ռւ-Սին - 410, 411.
Ռոստոկ - 115, 466.
Ռումինիա - 161.
Ռուսաստան - 49, 67, 137, 161, 190,
199, 203, 205, 206, 247, 331, 338,
366, 374.
Ռուսչուկ - 60, 161, 162, 167, 168, 505.

Ս

Սալմաստ - 133-136, 138-140, 156,
157, 215.
Սամսուն - 258, 413.
Սաուչբուլաղ - 143, 156.
Սաքսոնիա - 464, 466, 497, 500.
Սաֆեդ - 218.
Սիրիա - 41, 118, 227, 274, 281, 353,
359, 362, 397, 400, 404, 409, 425, 426,
428, 441, 446, 447, 453, 454, 456, 478,
491-494, 497, 502, 508.
Սոֆիա - 248, 249, 250, 254, 257, 343.
Սպահան - 155.
Սվաս (Սեբաստիա) - 38, 56, 57,
199, 205, 223, 354, 363, 413.
Ստրասբուրգ - 67, 291.
Սուկլուկ - 265.

Սուրուզ - 318, 321.
Սևր - 356, 364, 366, 369.
Սևերեկ - 85, 124.

Ս

Վայսլիրխեն - 413.
Վան - 38, 56, 97, 133, 139, 143, 199,
205, 220, 259, 275, 276, 363, 364.
Վառնա - 161, 162, 164, 167, 505.
Վեսթենդ - 64.
Վեստֆալիա - 54.
Վերմսդորֆ - 466.
Վերսալ - 328.
Վիննա - 7, 356, 381, 465.
Վիթլուբե - 466.
Վիպրա - 36.
Վյուրտեմբերգ - 286, 392.
Վյուրցբուրգ - 466.

Տ

Տարսու - 43, 44, 119.
Տեր Ջոր - տե՛ս Դեր էս Ջոր.
Տիգրիս - 125.
Տյուբինգեն - 42.
Տրապիզոն - 38, 363, 364.

Տ

Ցեղավար - 158.
Ցեխլենդորֆ - 68.
Ցյուրիխ - 56.

Ո

Ուոհա - 11, 17, 28, 31, 38, 44, 60, 73-
77, 81, 83, 85, 86, 91-96, 98, 99, 101-
106, 108-113, 115-117, 120-130, 141,

143, 144, 151, 154, 170, 172, 174-176,
187, 206, 207, 216, 218-224, 226-228,
232, 233, 235-237, 239-242, 271-273,
278, 293, 305, 306, 309-320, 322, 332,
335, 336, 342, 346-350, 352-360, 400,
401, 444, 449.

Ուրալ - 161.

Ուրֆա - տե՛ս Ուոհա.

Ուրմիա - 6, 60, 133, 134, 136, 138, 139,
152, 153, 156, 158, 173, 212, 214-216.

Փ

Փարիզ - 363, 365, 374, 377, 491.

Ք

Քեսար - 120, 265, 436, 454-457,
492-495.
Քերմանշահ - 155.
Քյոլն - 466.
Քյոնիգսբերգ - 115.
Քրդստան - 143, 174.

Օ

Օսմանյան կայսրություն - 25, 199,
200, 262.
Օրդուս - 77.

Ֆ

Ֆրայբուրգ - 14, 56, 466.
Ֆրանկֆուրտ - 22, 29, 36, 39, 47, 50, 51,
53-55, 58, 60, 143, 180, 344, 345, 505.
Ֆրանսիա - 39, 290, 360, 365, 366,
377, 426, 445-447, 491, 495.
Ֆիլիպպուլ - 339, 343.
Ֆինլանդիա - 161.
Ֆրիզդորֆ - 11, 36, 37, 42, 68, 73,
92, 93.

Ներածություն.....6

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ (1895-1914 ԹԹ.)

§ 1. Ընկերության հիմնադրումը և աշխատանքների սկզբնավորումը.....36

§ 2. Մասնաճյուղերը.....73

§ 3. ԳԱԱ-ի կազմակերպական և հրապարակախոսական գործունեությունը Գերմանիայում.....179

§ 4. Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումը.....199

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՀՈՐՀԱՆՈՒՏՈՒՄ (1914-1918 ԹԹ.)

§ 1. Մասնաճյուղերի ճակատագիրը.....212

§ 2. Պատերազմի քննությունը. պայքար բնաջնջվող հայությանը գորավիզ լինելու համար.....243

§ 3. Փրկարար աշխատանքներն Ուոհայում 1916-18 թթ.313

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**ԴՐ. ՅՈՂ. ԼԵՓՍԻՈՒՄԻ ԵՎ ՆՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՅԵՏՈ**

§ 1. Հայանվեր գործիչն ու հրապարակախոսը
հետզինադադարյան առաջին տարիներին.....324

§ 2. Ուռհայի մասնաճյուղը զինադադարից հետո.....346

§ 3. Լեփսիուսի և նրա ընկերության տարեգրությունը
1920-ական թթ.....369

§ 4. Համապարփակ փրկարար աշխատանքները
նոր մասնաճյուղերում.....398

§ 5. Աշխատանքների կազմակերպումը նացիստական
վարչակարգի պայմաններում.....462

Վերջաբան.....504

Օգտագործված գրականության ցանկ.....510

Անձնանունների ցանկ.....526

Տեղանունների ցանկ.....534

ԱՇՈՏ ՆՈՐԱՅՐԻ
ՀԱՅՐՈՒՆԻ

Յ Ո Յ Վ Ն Ն Ե Ս
Լ Ե Փ Ս Ի Ո Ի Ս Ի
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Խմբագիր՝

Բ. Յ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համակարգչային ծնավորումը՝

«ՄԻՏՔ»

հրատարակչության

Գեղ. խմբագիր՝

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«Նաիրի» հրատարակչություն:

Ծավալը՝ 34 պայմ. տպ. մամուլ:

Չափսը՝ 60X 84 1/16:

Թուղթը՝ օֆսեթ N1, 70 գր/մ²:

Պատվեր՝ 17

Տպագրված է «Նաիրի»

հրատարակչության

տպարանում:

Երևան - 2002 թ.